81.54-5
Պ-23

ԱՐՏԱՇԵՍ ՊԱՊՈՅԱՆ
ԽԱՉԻԿ ԲԱԳԻԿՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԾԱՐԱՉՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ - 2003

491.54-5
Պ-23

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ՊԱՊՈՅԱՆ
ԽԱՉԻԿ ԲԱԴԻԿՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2003

ՀՏԴ 809.198.1 (07)
ԳՄԴ 81.2Հ g 73
Պ 235

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնի որոշմամբ:

Ձեռնարկի ներածության, բառակապակցության և պարզ նախադասության բաժինները գրել է Խ.Գ. Բադիկյանը, բարդ նախադասության բաժինը՝ Արտ. Հ. Պապոյանը:

Պ 235 Պապոյան Արտ.Հ., Բադիկյան Խ.Գ.
Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն (ներածություն, բառակապակցություն, պարզ և բարդ նախադասություններ): Ուս. ձեռնարկ, ԵՊՀ.- Եր.: Երևանի համալս. հրատ., 2003, 462 էջ:

Ձեռնարկը կազմված է «Ժամանակակից հայոց լեզու» դասընթացի նոր ծրագրին համապատասխան: Նրանում քննված են շարահյուսության տեսությանը վերաբերող ընդհանուր հարցեր, բառակապակցությունների, պարզ և բարդ նախադասությունների բառաքերականական և կառուցվածքային օրինաչափությունները և հարակից իրողություններ:

Ձեռնարկը շարադրված է հայագիտական և ընդհանուր լեզվաբանական ըմբռնումների ու ժամանակակից նվաճումների հաշվառմամբ, դրանց լույսի տակ: Ունի տեսական ու գործնական նշանակություն: Նախատեսված է ոչ միայն ուսանողների ու ասպիրանտների, այլև ընթերցող լայն հասարակայնության համար:

Պ $\frac{4602020100}{704(02)03}$ 2003թ.


ԳՄԴ 81.2Հ g 73

ԵՊՀ Գրադարան

SU0124975

ISBN 5-8084-0475-4

© Պապոյան Արտ. Հ., Բադիկյան Խ.Գ., 2003 թ.



ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

§ 1. Լեզուն լեզվական նյութական միավորների *համակարգ է* յուրահատուկ կառուցվածք, այսինքն՝ հնչյունների, բառերի, բառակապակցությունների և դրանցից կազմված նախադասությունների մի կանոնակարգված ամբողջություն: Այս առումով ճիշտ է լեզվի և շենքի համեմատությունը. ինչպես որ շենքի կառուցման համար շինանյութերի անհրաժեշտ տեսակներ են հարկավոր, և այդ շինանյութերը մշակող՝ տաշող, հղկող ու ձևավորող վարպետ, այնպես էլ որպես լեզվի շինանյութեր ծառայում են հնչյուններն ու բառերը, իսկ դրանց ձևավորման՝ նախադասություն ու խոսք կառուցելու վարպետի դերը կատարում է *քերականությունը*՝ իր երկու բաժիններով (ձևաբանություն և շարահյուսություն): Եթե *ձևաբանությունը* քերականական ուսմունք է լեզվի *անվանողական միավորների* բառերի ու նրանց ձևափոխությունների (քերականական կարգերի) մասին, ապա *շարահյուսությունը*, որը պատճենված է հունարենի sintacsis (կազմել, հյուսել) բառից, քերականական ուսմունք է լեզվի *հաղորդակցական միավորների՝ նախադասությունների* մասին:

Քանի որ *բառակապակցությունները*, որպես առանձին կառույցներ (բլոկներ), մտնում են նախադասության կազմի մեջ որպես նրա բաղադրիչներ, այդ հիմնավորումով էլ քննվում են շարահյուսության մեջ: Այսպիսով՝ շարահյուսությունը, որպես քերականության գիտաճյուղ, զբաղվում է նախադասությունների ու բառակապակցությունների կառուցվածքների ու տեսակների ուսումնասիրությամբ:

Քերականության այս բաժնին է վերաբերում նաև այն միջոցների ու եղանակների ուսումնասիրումը, որոնց շնորհիվ ձևավորվում է հաղորդման հիմնական միավորը՝ *նախադասությունը:* Նախադասությունը, որպես լեզվական ստորակարգության բարձունք, իր մեջ ներառում է լեզվական բոլոր միավորները՝ *հնչյունները, ձևույթները, բառերը* և *բառակապակցություններ-ը.* այդ բոլորը միասին, որպես ամբողջական կառույց, ծառայում են մի նպատակի՝ մտքերի ձևավորմանն ու հաղորդակցմանը:

ԼԵԶՎԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ ԵՎ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ

§ 2. *Լեզվական մակարդակները* լեզվի կառուցվածքի կարևորագույն դրսևորումներն են. դրանք լինում են՝

հնչույթային մակարդակ, որի միավորները *հնչույթներն* են,

ձևույթային մակարդակ, որի միավորները *ձևույթներն* են (հիմնական և երկրորդական),

բառային մակարդակ. սրա միավորները *բառերն* են՝ իրենց քերականական ձևույթներով,

շարահյուսական մակարդակ. սրա միավորները *բառակապակցություններն ու նախադասություններն* են,

վերշարահյուսական (տեքստային) մակարդակ. սրա միավորներն են՝ *ասույթը, պարբերույթը, խոսքը:*

ԼԵԶՎԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ: Քանի որ լեզուն ամբողջական համակարգ է, ուրեմն նրանում հանդես են գալիս լեզվական բոլոր կաղապարները: Կաղապարը լեզվի *կառուցվածքային միավոր է.* այն հատուկ է լեզվի *բառակազմական, ձևաբանական* և *շարահյուսական* մակարդակներին:

Բառային մակարդակում քննվում են լեզվի *բառակազմական կաղապարները* բառի հիմնական և երկրորդական բառակազմական ձևույթները, այսինքն՝ բառակազմական կաղապարները կազմվում են արմատներից, հոդակապից ու ածանցներից:

Ձևաբանական մակարդակում գործ ունենք *հիմք + վերջավորություն կաղապարի հետ.* ըստ որում, բառահիմքը կարող է լինել *պարզ* (ջուր-ը, ջր-ին, ջր-ից, ջր-ում, ջր-եր, ջր-եր-ից և այլն) և *բաղադրյալ* (ջրաման-ը, ջրաման-ից, ջրաման-ով, ջրաման-ներ-ից և այլն): Պետք է մեկընդմիշտ հիշել, որ *ածանցները* նույնպես մտնում են բառահիմքի մեջ (դժգոհության-ը, անընկերասիրություն-ից):

Ըստ վերջավորությունների քանակի պարունակության էլ հիմքը կարող է լինել *պարզ հիմք* (երբ ունի մեկ վերջավորություն) և *հարաբերական հիմք* (երբ ունի մեկից ավելի վերջավորություններ): Մեկից ավելի վերջավորությունները հիմքին միանում են հետևյալ հաջորդականությամբ՝ հոգնակերտ մասնիկներ, հոլովման ցուցիչներ և հոդեր (դասագրք-եր-ից-ս):

Բայական վերջավորություններն են՝ դերբայական ցուցիչները և խոնարհման վերջավորությունները (գր-ել, գր-ած, գր-ող,..., գր-ե-ցի, գր-ե-ցիր, գր-ե-ցինք և այլն):

Շարահյուսական մակարդակի կաղապարներն էլ կազմվում են *բառածևերից* իրենց ձևափոխություններով ու քերականական կարգերով:

Շարահյուսական մակարդակում մենք գործ ունենք հետևյալ կաղապարների հետ՝

ՈՐՈՇԻՉ + ՈՐՈՇՅԱԼ (խելացի ուսանող, խմելու ջուր, կարմիր վարդ, լավ մարդ):

ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ + ՀԱՏԿԱՑՅԱԼ (ծառի տերև, աշակերտի գիրք, գրքի կազմ):

ՍՏՈՐՈԳՅԱԼ +ԽՆԴԻՐ կամ ՊԱՐԱԳԱ (Երեխան *ցնցուղով* ջրում է *ծաղիկները:* Երեխան *վազելով տուն* գնաց):

Քանի որ նախադասությանը ամենից առաջ բնորոշ է *ստորոգման* քերականական կարգը, հետևաբար շարահյուսական հիմնական կաղապարն էլ ԵՆԹԱԿԱ + ՍՏՈՐՈԳՅԱԼ կաղապարն է (Գարունը եկավ: Եղանակը տաք է: Ձյունը ջուր դարձավ: Գարուն է:):

Շարահյուսական կաղապարները գործում են նաև *բառակապակցություններում*՝ ազատ և կայուն, վերաիմաստավորված և ոչ վերաիմաստավորված:

Շարահյուսական կաղապարը իր մեջ է ներառում լեզվական նշված բոլոր կաղապարները, որովհետև *բառը* մի կողմից *բառային միավոր է*, մյուս կողմից՝ *ձևաբանական* և *շարահյուսական միավոր*՝ խոսքի մաս և նախադասության անդամ: Այստեղից էլ՝ որպես շարահյուսության նվազագույն միավոր՝ ՇՆՄ, դիտվում է բառը, իսկ շարահյուսության առավելագույն միավոր՝ ՇԱՄ, նախադասությունը:

Հենց սրանով էլ արտահայտվում են լեզվական **մակարդակների փոխադարձ** կապն ու պայմանավորվածությունը:

Լեզվաբանական ավելի ուշ շրջանի աշխատություններում խոսվում է նաև նախադասությունից վերև գտնվող մեկ այլ մակարդակի մասին, որն արդեն անցնում է խոսքային մակարդակ և կոչվում է *վերշարահյուսական* կամ *խոսքաշարի* մակարդակ. այն կոչվում է նաև *տեքստային* մակարդակ: Ճիշտ է, նախադասությունը շարահյուսական առավելագույն միավոր է և ավարտուն միտք է արտահայտում, բայց նրա ինքնուրույնությունը խոսքի շղթայում՝ տեքստում, բացարձակ չէ. տեքստում ամեն մի նախադասություն իմաստային ու քերականական կապերի մեջ է իրեն նախորդող ու հաջորդող նախադասությունների հետ: Այս բանը կարելի է ցույց տալ ցանկացած բարդ նախադասության մեջ, ցանկացած պարբերությունում, որոնցից էլ կազմվում է տեքստը, ուրեմն և ցանկացած տեքստում: Այսպես՝ «Ձմռան մի գիշեր կար մի հարսանիք, Հրճվում էր անգուսպ ամբոխը գյուղի, Գյուղն էին իջել հովիվ պատանիք՝ Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի» (ՀԹ), «Երգում է Սարոն, ու չի կարենում Աղջիկը հանգիստ նստի վրանում» (ՀԹ):

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 3. Հայտնի է, որ մարդիկ հաղորդակցվում են նախադասությունների միջոցով, իսկ նախադասությունը բառ է կամ բառերի՝ քերականական որոշակի օրենքներով ու կանոններով կապակցված կառույց: Այդ կառույցն իրականանում է բառերի՝ իրար նկատմամբ ունեցած *հարաբերություններով* (ստորոգումային, համադասական և ստորադասական), *բառերի քերականական վերջավորությունների, հերթագայության, կապերի ու շաղկապների, շարադասության ու հնչերանգի միջոցներով*, ինչպես նաև բառերի *համաձայնության, խնդրառության և առդրության եղանակներով*: Նախադասության կազմության ամբողջ գործընթացին մասնակցող լեզվական այս բոլոր իրողությունները միասին վերցված կոչվում է *շարահյուսական կապակցություն*. այն ունի երեք դրսևորում՝ *ստորոգումային, համադասական և ստորադասական*:

1. *Ստորոգումային կապակցություն.* – Սա երկկազմ նախադասության հիմքն է. առանց ստորոգման նախադասություն չկա: *Ստորոգումը հատ-*

կանիչի վերագրումն է ենթակային, այսինքն՝ ենթակա + ստորոգյալ (Ձմեռն անցավ: Եկավ գարուն: Ոսկին մետաղ է: Աշուն է):

2. Համադասական կապակցություն. - Սա կապակցության այն տեսակն է, երբ նախադասության կամ բառակապակցության կազմում գտնվող լրացնող բառերը իրար նկատմամբ քերականական և իմաստային տեսակետից համազոր, համարժեք են, իրար չեն լրացնում: Դրանք առանձին-առանձին լրացնում են միևնույն գերադաս բառին: Սրանցում չկա բառերի գերադաս և ստորադաս հարաբերություն: Համադասական հարաբերությամբ սովորաբար կապակցվում են նույն խոսքի մասերը՝ ունենալով քերականական նույն ձևավորումը: Դրանք նախադասության համազոր անդամներ են, կապակցվում են շարահարությամբ՝ թվարկման հնչերանգով կամ համադասական շաղկապներով

Լավ ու *վատ* (օրեր շատ ենք տեսել):
(Ծաղկել ես) *սարում, անտառում, արտում... (ՎՏ):*

Սարեր ու ձորեր իրար երեսի նայում են, ժպտում ամպի մշուշով (ՎՄ):

Նախադասության մեջ մտնող համադաս անդամները կարող են լինել նաև *տարասեռ,* որոնք քերականորեն իրար համազոր չեն. արտահայտվում են տարբեր խոսքի մասերով, կամ ածականի տարբեր տեսակներով, շաղկապներով չեն միանում և չունեն թվարկման հնչերանգ, պատասխանում են նույն հարցին: Օրինակ՝ *«Քարե բարձր* պարսպի վրա նստած էին *երկու հոգնած տղաներ»: «Աշակերտական երկու փոքրիկ* պայուսակներ մնացել էին *հողե կանաչ թմբի վրա»:*

3. Ստորադասական կապակցության դեպքում կապակցվող բառերից մեկը քերականական և իմաստային տեսակետից գիտակցվում է որպես *գերադաս անդամ,* իսկ մյուսը (կամ մյուսները)՝ նրան ստորադաս անդամներ: Այսինքն՝ գոյություն ունի *լրացում + լրացյալի* հարաբերություն: Այս դեպքում կառույցը կարող է լինել *երկանդամ* (սիրո խոստովանություն, առաջին սեր, ալպիական մանուշակ, գյուղացի Համբո) և *բազմանդամ* (ծմռան պարզ գիշեր, գարնան արևի առաջին շողեր)[1]:

Թե՛ բառակապակցությունների մեջ և թե՛ նախադասության կազմում համադաս և ստորադաս կապակցությունները մեծ մասամբ հանդես են գալիս միասին: Նման կառույցը կարելի է կոչել *համակցված:* Եթե ստորադասական կապակցության մեջ դրանք կարող են առանձին հանդես գալ (գարնան բույր, համեստ աղջիկ, տխուր նայել), ապա համակցվածի մեջ անպայման ներկա է նաև համադասականը, որովհետև իրար համազոր անդամները առանձին-առանձին ստորադասվում են գերադասին, և առաջանում է *համադասական կապակցություն*՝ «Դադրած,բեզարած յա՛ր ջան, Ամպերն ելան, դե՛, արի՛» (Ավ.Իս.): «Հազրոն նստել է օջախի քարին, հիշում է կորած

[1] Պետք է հիշել, որ բազմակի ստորոգյալներ ունեցող նախադասությունները բարդ համադասական են՝ «Հնձվորը *բացեց* նախաղը, *հանեց* հացն ու պահիրը և *սկսեց* նախաճաշը»: Այստեղ կա երեք համադաս նախադասություն:

երկիրն ու հողը» (ՀՍ):

Առաջին նախադասության մեջ *դադրած, բեզարած* որոշիչները, որ համազոր են, առանձին-առանձին լրացնում են *յար* գերադաս անդամին, իսկ երկրորդ նախադասության մեջ *երկիր* և *հող* ուղիղ խնդիրները լրացնում են *հիշում էր* ստորոգյալին:

Համակցված կառույցները ավելի բնական են ու տարածված. դրանցում հաճախ հանդես են գալիս նման *ենթաստորադասական կապակցություններ:* Սրա էությունն այն է, որ կախման հարաբերության մեջ գտնվող լրացումն էլ իր հերթին լրացում է ունենում (ստացվում է *լրացման լրացում*): Այսպես՝ «Երևանի դրամատիկական թատրոնի երիտասարդ արտիստները թարմ ծաղիկներ մատուցեցին հյուրերին» (ԳԹ): Այսպիսով, նույն կառույցում կարող են լինել *առաջին* (երիտասարդ արտիստները), *երկրորդ* (թատրոնի երիտասարդ), *երրորդ (դրամատիկական թատրոնի), չորրորդ* (Երևանի դրամատիկական) կարգի լրացումներ:

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

§ 4. «Բառերը միասին մի խոսք կազմելու համար պետք է իրար հետ որոշ հարաբերությամբ կապակցվեն»,- գրում է Մանուկ Աբեղյանը: Իսկ լեզվական ի՞նչ միջոցներով են բառերը կապակցվում իրար հետ և խոսք (նախադասություն) կազմում: Այդ կապակցումը կատարվում է ինչպես բառերի ձևափոխությունների (հոլովման, խոնարհման, հերթագայության, հոգնակերտ և առկայացման վերջավորությունների շնորհիվ (սա կոչվում է ձևույթային), այնպես էլ քերականական հարաբերություններ արտահայտող բառերի՝ կապերի ու շաղկապների միջոցով (սա կոչվում է բառային), ինչպես նաև շարադասությամբ ու հնչերանգով:

§ 5. ՁԵՎՈՒՅԹԱՅԻՆ – Սրա տակ քննվում են՝ *թեքույթավորումը, հերթագայությունը*, ինչպես նաև *հոգնակերտ ու առկայացման ցուցիչները:*

Առանց հոլովման և խոնարհման բառերը չեն կարող իրար հետ կապակցվել և նախադասություն կազմել: Գոյականները, առարկայանիշ դերանունները և փոխանվանաբար գործածվող բառերը, ինչպես իրար (ու այլ բառերի), այնպես էլ բայերի հետ հարաբերությունների մեջ մտնելու համար պետք է անպայման ձևաբանական փոփոխությունների ենթարկվեն, ըստ որում այդ ձևափոխությունները կատարվում են բառերի՝ վերջավորություններ (թեքույթներ) ստանալով, ինչպես նաև ձայնավորների կամ երկհնչյունների հնչյունափոխությամբ. այս վերջինը կոչվում է *հերթագայություն:*

Ժամանակակից հայերենի հոլովման համակարգի համար Գ. Ջահուկյանը նշում է 18 թեքույթ՝ 10-ը վերջավոր, 8-ը հերթագայություն: Ահա դրանք.

Վերջավոր - Ա (աղջիկ + Ա), Ի (քաղաք + Ի, հայեր + Ի), Ո (սեր + Ո), ՈՒ (ձի + ՈՒ), ԱՆ (գարուն +ԱՆ), ԱՆՑ (մարդիկ + ԱՆՑ), ՅԱՆ (կորուստ + ՅԱՆ), ՈՋ (ընկեր +ՈՋ), ՎԱ (երեկ + ՎԱ), ՎԱՆ (մահ +ՎԱՆ):

Ներքագայություն . - ԱՅ >Ո (հայր > հՈՐ), (ը) > Ե (դուստԸր >դստեր), Ի>ՈՒ (գիՆի > գիՆՈՒ), ՈՒ > Ա (տՈՒՆ > տԱՆ), արյՈՒՆ > արյԱՆ), ՈՒ > ՎԱ (աՆՈՒՆ > աՆՎԱՆ), Ք > Ց (Վարդանանք > Վարդանանց, պապոնՔ > պապոնՑ), ՅՔ > ՆՑ (կանաՅՔ > կանանՑ):

Սրանց կարելի է ավելացնել նաև *Ի > ՎԱ (տարի > տարվա, Ի > ՎԻ (կաշվի, Ը >Ո (տեգԸր > տեգՈի)*:

Այս 21 ձևափոխությունները արդի հայերենում դրսևորվում են հիմնականում սեռական-տրական հոլովներում:

Եթե գոյականներն ու գոյականանիշ մյուս բառերը խոսքի մեջ հարաբերությունների մեջ մտնելու համար հոլովվում են, ապա բայերը խոնարհվում են: Հայերենի խոնարհման համակարգը բավականին հարուստ է: Բայերի եղանակային, դիմային, թվային ու ժամանակային վերջավորությունները հոլովական ձևերի նման նույնպես հանդես են գալիս որպես շարահյուսական հարաբերությունների արտահայտիչներ: Հայտնի է, որ նախադասության ձևավորմանը մասնակցում են *կախյալ* դերբայները (*անկատար, ապակատար, վաղակատար, ժխտական)* և օժանդակ բայերը. սրանք բայի *բաղադրյալ դիմավոր ձևերի համար:* Իսկ *պարզ դիմավոր ձևերը* կազմում են բայահիմքերով և բայական վերջավորություններով: Այդ վերջավորություններն են՝ *Սահմանականի* անցյալ կատարյալի պարզ բայերի համար՝ Ի, ԻՐ, (ՋՐՈ) ԻՆՔ, ԻՔ, ԻՆ, իսկ ածանցավոր և որոշ անկանոն բայերի համար՝ Ա, ԱՐ, ԱՎ, ԱՆՔ, ԱՔ, ԱՆ:

Ըղձական (ենթադրական և հարկադրական) բայերի համար՝ ապառնի – Մ, Ս, ՁՐՈ, Ե>Ի, ՆՔ, Ք, Ն: Անցյալ – (Ա) Ի, (Ա) ԻՐ, (Ա) Ր, (Ա) ԻՆՔ (Ա) Իք, (Ա) ԻՆ:

Հրամայական եղանակի համար՝ Ի՛Ր, Ա՛, ՈՒ և Ե՛Ք (անկանոն բայերի համար կան նաև այլ վերջավորություններ):

Արգելական հրամայականի համար՝ Ի՛Ր, Ա՛, Ա՛Ք, Ե՛Ք:

Հարկ է նշել, որ բայական վերջավորությունները նույնն են բայերի բոլոր տեսակների համար, այս դեպքում բայերի սեռն ու կազմությունը նշանակություն չունի:

Որպես շարահյուսական կապակցության *ձևույթային* միջոցներ են նաև հոգնակերտ մասնիկները՝ ԵՐ, ՆԵՐ, Ք, ԻԿ, ԱՅՔ և այլն և առկայացման ցուցիչները՝ Ը, Ն, Ս, Դ, հոդերը:

§ 5ա. ԲԱՌԱՅԻՆ – Այս տիպի մեջ են մտնում ԿԱՊԵՐՆ ու ՇԱՂԿԱՊՆԵՐԸ: Քերականական իմաստներ արտահայտող այս երկու խոսքի մասերը, որոնք անվանողական դեր չունեն և արտահայտում են բառերի ու նախադասությունների հարաբերություններ, նույնպես շարահյուսական կապակցության միջոցներ են: Առանց դրանց լիարժեք ու ծավալուն խոսք անհնար է կառուցել:

ԿԱՊԵՐ

§ 6. Կապերը *ստորադասական* կապակցման միջոցներ են, արտահայտում են կախման զանազան հարաբերություններ: Կապերը շարահյուսական հարաբերություններ են արտահայտում ոչ թե ինքնին, այլ հոլովական ձևերի հետ (*այգու մոտ*, գնացի *դեպի համալսարան, դասերից հետո* գնացինք գրադարան, *սխալներով հանդերձ* աշխատանքն ընդունվեց):

Այն բառը, որի ստորադասական հարաբերությունն արտահայտված է կապով, կոչվում է *կապի խնդիր:* Ըստ որում, կապի խնդիրներ են լինում ոչ միայն գոյականները (ինչպես բերված է օրինակներում, *այլև դերանունները* (*ինձ* համար, *քո* մասին, առանց *քեզ, նրա* հետ), գոյականաբար գործածվող ածականները (*Ուժեղի մոտ* միշտ էլ թույլն է մեղավոր: *Լավի ու գեղեցիկի համար* բոլորս ենք պայքարում), թվականները (*Առաջինի մասին* բոլորն են խոսում: *Հինգի համար* դա շատ կլինի) և այլն:

Շարահյուսական մակարդակում *կապի խնդիրը* չպետք է շփոթել *կապային խնդրի* հետ: Կապի խնդիրները պայմանավորված են կապերի իմաստներով (*այգու* մոտ, *քո* մասին), իսկ կապը և նրա խնդիրը, որ միասնաբար հանդես են գալիս որպես նախադասության մեկ անդամ (խնդիր կամ պարագա), կոչվում են *կապային խնդիր՝ այգու մոտ-* տեղի պարագա *քո մասին* - վերաբերության խնդիր:

Ըստ կազմավորման աստիճանականության կապերը լինում են 3 տեսակ. *իսկական* (սրանք չեն կարող հոդեր ստանալ և հոլովվել - *դեպի, մինչև, իբրև, բացի, համար, հանդերձ, անիսկական* (սրանք կարող են հոդեր ստանալ և հոլովվել – *տակ, վրա, ներս, դուրս, մոտ, դեմ...*) *և կապակցական բառեր* (սրանք որոշ գոյականներ, մակբայներ ու ածականներ են, որոնք, որոշ կապակցություններում զրկվելով իրենց նյութական իմաստներից, հարաբերության իմաստներ են արտահայտում: Բերենք մի երկու օրինակ՝ *«Ժամանակը* իր վախճանին կհասնի» (Ավ.Իս.) «Բանվորի *երեսից* քրտինք էր ծորում»: Այստեղ *ժամանակ և երեսից* բառերը գոյականներ են, բայց *«Ձմեռ ժամանակ* պետք է տաք հագնվել» և «Արամը տուժեց ընկերոջ *երեսից»*, այստեղ նույն բառերը կապերի դեր են կատարել՝ կապական բառեր են:

Շարահյուսական մակարդակում կապերի այդ տեսակները գրեթե իմաստային դեր չեն խաղում:

Շարահյուսության մեջ շատ կարևոր են կապերի *իմաստային* ստորաբաժանումները, որոնք ունեն նաև ոճական բազմազան կիրառություններ:

Իսկական, անիսկական կապերն ու կապական բառերը ստորաբաժանվում են իմաստային հետևյալ տեսակների՝

Տարածական - առաջ, առջև, դեմ, դիմաց, դուրս, ներս, ի վեր, ի վար, մեջ, միջև, մոտ, տակ, վրա, ներքև, վերև, շուրջ, քով և այլն:

Ժամանակային - անց, առաջ, ժամանակ, ի վեր, հետո, մինչև, միջև, միջոցին, նախքան, պահին, օրոք, սկսած, ընթացքում...

Վերաբերության - մասին, նկատմամբ, վերաբերմամբ, վերաբերյալ,

առթիվ, հանդեպ, հասցեին, գծով, ուղղությամբ և այլն:

Բացառման - առանց, բացի, դուրս, զատ, բացառությամբ...

Նպատակի – համար, հանուն, նպատակով, ի...

Հիմունքի - առթիվ, հետևանքով, շնորհիվ, հիման վրա, կապակցությամբ...

Պատճառի - պատճառով, երեսից, ձեռքից...

Փոխարինության - փոխարեն, փոխանակ, տեղ, տեղակ...

Համապատասխանության - ըստ, համաձայն, համապատասխան, համեմատ, հավասար...

Չևի –պես, նման, ինչպես, որպես, հանգույն, ոնց, ոնց որ...

Բացահայտման - իբրև, որպես, ինչպես:

Հակառակ հիմունքի և հակառակության - հակառակ, չնայած, դեմ, ընդդեմ, ի հեճուկս...

Միասնության – հետ, հանդերձ, միասին, զուգընթաց, համընթաց...

Չափի – չափ, ավել, ավելի, պակաս, քան, մինչև...

Շահի - հօգուտ, օգտին, համար, ի նպաստ...

Հիմառնության - հանձին, հանձինս, ի դեմս...

Նկատելի է, որ ըստ կիրառության նույն կապը կարող է շարահյուսական տարբեր հարաբերություններ արտահայտել՝ իր մեջ համատեղելով ի-մաստային տարբեր նշանակություններ:

Շարահյուսական մակարդակում կապերն իրենց կիրառություններով երբեմն նույնանում են *հոլովական թեքույթների* հետ՝ առաջ բերելով *շարահյուսական համանիշություն:* ՀՄՄՏ՝ գիրքը դրված է *սեղանի վրա - սեղանին: Գրքի մեջ* հետաքրքիր պատմվածքներ կան - *գրքում: Որսորդը պատմում էր իր որսի մասին – որսից: Ներկայացավ ռեկտորի կարգադրության համաձայն – կարգադրությամբ* և այլն:

Սակայն սա չի նշանակում, թե բոլոր կապերը հոլովական վերջավորություններին փոխարինելու արժեք ունեն. կապերի միայն մի փոքր մասն է համարժեք հոլովներին. դրանց մեծ մասը անփոխարինելի է: Օրինակներ. «Ամպի *տակից* ջուր է գալիս» (ՀԹ):

«Քանի քանիսն անցան քեզ պես, քեզնից *առաջ*, քո *առաջ*» (ՀԹ): «Կարծես ծիավորներ էին արշավում իրար *դեմ*, և սիմինդրի տերևը, *որպես* բեկված սուսեր, ընկնում էր քամու *առաջ*» (ԱԲ): Ինձանից *բացի* ոչ ոք չկար»: *«Առանց* քեզ չեմ գնա» և այլն:

Որոշ կառույցներում էլ կապերի կիրառությունը միայն *ոճական արժեք ունի, և* կառույցից կապերը հանելու դեպքում խոսքը չի տուժում: Ասվածը ցույց տանք օրինակներով. «Փորձում էր հասնել մինչև կանգառ» (փորձում էր կանգառ հասնել):

Գնում էր դեպի այգի (Գնում էր այգի): Եկել եմ համալսարան սովորելու համար (Եկել եմ համալսարան՝ սովորելու) և այլն: Բերված օրինակներում կապերով ձևերը ավելի են շեշտում, ընդգծում խնդիրներն ու պարագաները:

Ճիշտ է, որոշ կապերի ու թեքույթների շարահյուսական կիրառությու-

ների նույնացումներ կան, բայց դա չի նշանակում, թե դրանք նույն կարգի միավորներ են: Հոլովական թեքույթները բառեր չեն, այլ երկրորդական բառահարաբերական ձևույթներ, մինչդեռ կապերը բառեր են, հետևաբար՝ շարահյուսական նվազագույն միավորներ (ՇՆՄ):

ՇԱՂԿԱՊՆԵՐ

§ 7. Շաղկապները լեզվի շարահյուսական համակարգում այլ դեր են կատարում. դրանք շաղկապում են նախադասության անդամներ և նախադասություններ, բայց շաղկապների արժեքն ու դերը միայն դրանով չեն սահմանափակվում: Թե՛ համադասական և թե՛ ստորադասական շաղկապներն ունեն *իմաստային* բազմազան նրբերանգներ ու կիրառություններ: *Այսպես, բարդ համադասական* նախադասությունների իմաստային տարբերակումները (*միավորական, հակադրական, տրոհական, մեկնական*) կատարվում են շաղկապների շնորհիվ: Ավելի բազմազան են ստորադասական նախադասություններն ու նրանցում վճռական դեր խաղացող շաղկապները: Շաղկապների այս երկու տեսակները լայն կիրառություններ և իմաստային գործառույթներ ունեն նաև վերշարահյուսական՝ տեքստային, մակարդակում: Այստեղ դրանք կապակցում են ամբողջական նախադասություններ, պարբերություններ՝ առաջ բերելով ծավալուն խոսք ու ասույթ:

Ակնհայտ է, որ կապերն ու շաղկապները լեզվի ձևաբանական մակարդակում տարբեր խոսքի մասեր են, հետևաբար և շարահյուսական մակարդակում էլ տարբեր դեր են կատարում, քերականական տարբեր հարաբերություններ են արտահայտում: Սակայն նկատելի է, որ լեզվի պատմական զարգացման ընթացքում *խոսքի մասերի ներթափանցումներ* են տեղի ունենում, իսկ դա արդյունք է դրանց շարահյուսական կիրառությունների: Խոսքամասային փոխանցումները հատուկ են հայերենի գրեթե բոլոր խոսքի մասերին: Նշենք մի քանի կապերի ու շաղկապների համարժեքությունը, որոնց սահմանազատումը հնարավոր է միայն շարահյուսական մակարդակում: Այսպես՝ *փոխարեն, փոխանակ, մինչ, որպես, չնայած, հետո, քան* բառերը հավասարապես թե *կապ են* և թե *շաղկապ*: Ասվածը ցույց տանք օրինակներով:

Փոխանակ - որպես կապ ունի զիջման, փոխարինության իմաստ (*Փոխանակ* քննություններին պատրաստվելու Ծաղկածոր էիր գնացել): Նույն իմաստն ունի նաև շաղկապի դեպքում՝ (փոխանակ հետևեիր ծնողներիդ խորհրդին և ուսումդ ավարտեիր, թողեցիր համալսարանը և արտասահման գնացիր):

Փոխարեն (Քո փոխարեն ընկերդ տուժեց – կապ) և «*Փոխարեն* լսեիր եղբորդ, ինքնագլուխ վարվեցիր ու գործդ տապալեցիր»:

Մինչև (մինչ) կապերը տարածական, ժամանակային, երբեմն էլ չափի, աստիճանի իմաստ են արտահայտում. օրինակ՝ «Թամանյան դիվիզիան

հասավ *մինչև* Բեռլին» - տեղ, «Միջոցառումը շարունակվեց *մինչև* լուսաբաց» - ժամանակ:

Ժամանակի իմաստին զուգահեռ ունի նաև պայմանի իմաստ. օրինակ՝ *«Մինչև* համերգը կսկսվեր, ես ծանոթացա ծրագրին» - ժամանակ, իսկ *«Մինչև* ինձ ամեն ինչ ճիշտ չպատմես, քեզ սատար չեմ լինի» - պայման:

Շնայած կապն ունի հակառակ հիմունքի իմաստ (*Շնայած* սաստիկ ցրտին՝ երեխային դպրոց տարա): Նույն իմաստն ունի դրանով շաղկապված երկրորդական նախադասությունը (*Շնայած* սաստիկ ցուրտ էր, երեխային էլի դպրոց տարա):

Որպես բառը Վ. Տերյանի հետևյալ քառատողում գործածվել է թե՛ որպես *կապ* և թե՛ որպես *շաղկապ.*

Ուզում եմ վաղվա ցնծության գուշակ՝
Հայացքս նետած լուսեղեն հեռուն,
Վառել երգերս *որպես դրոշակ*
Ու մեռնել՝ *որպես հերոսն է մեռնում...*

Նման կիրառություն ունի նաև *ինչպես* բառը. այն մի դեպքում կապական կիրառություն ունի (Երկչոտ էր *ինչպես* եղջերուն), մի այլ դեպքում՝ դերանվան (Այնպես էր ճառում, *ինչպես* հարյուր տարվա հռետորը):

Հետո բառը նախապես *մակբայ* է եղել՝ ժամանակային իմաստով (Մենք գնացել էինք, նա *հետո* եկավ), հիմա այս բառը ավելի շատ հանդես է գալիս *կապի* դերում (ներկայացումից *հետո* այգի գնացինք), այն ունի նաև *շաղկապական* կիրառություն (Կոմիտասը նախ գնաց Փարիզ, *հետո* անցավ Շվեյցարիա):

Այսպիսով, դժվար չէ նկատել, որ խոսքամասային փոխանցումները հիմնականում կատարվում են շարահյուսական հիմունքով:

Շարահյուսական կապակցման միջոցներ են նաև *շարադասությունն ու հնչերանգը,* որոնք նախադասությունների ձևավորման և խոսք կառուցելու վճռորոշ գործոններ են:

ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

§ 8. Շարադասությունը կարևոր նշանակություն ունի լեզուների քերականական կառուցվածքում. բառերը, առանձին-առանձին վերցված, նախադասություն կառուցել չեն կարող: Միտք արտահայտելու համար անհրաժեշտ է բառերը կապակցել իրար հետ և դասավորել որոշակի կարգով: Բառերի դասավորության այդ կարգն էլ լեզվաբանության մեջ ընդունված է կոչել *շարադասություն:* Շարադասության այս դերը նկատվել է դեռ անտիկ աշխարհում, այն համարվել է *բան (նախադասություն) կազմելու արվեստ:*

Ավանդական քերականության մեջ դարեր շարունակ շարադասությունը դիտվել է որպես նախադասության մեջ *բառերի դասավորության կարգ:* Սակայն 20-րդ դարի 30-ական թվականներին, երբ սահմանազատվեցին

«խոսքի մաս» և « նախադասության անդամ» հասկացությունները, շարադասության հիմքում դրվեցին ոչ թե *բառերը,* այլ *նախադասության անդամները,* այստեղից էլ թերի պատկերացում կազմվեց շարադասության վերաբերյալ, և այդ թյուր կարծիքը շարունակվեց մինչև 60-70-ական թվականները: Ինչո՞ւմն էր թյուրիմացությունը: Բանն այն է, որ նախադասության կազմի մեջ մտնում են և վճռորոշ նշանակություն ունեն ոչ միայն լիիմաստ խոսքի մասերը, այլև *նախադասության անդամ չհանդիսացող բառերը* (*կապեր, շաղկապներ, վերաբերականներ, ծայնարկություններ,* ինչպես նաև *օժանդակ բայեր, մի* արգելական), որոնց գրաված տեղն ու արժեքը պակաս կարևոր չէ նախադասության համար: Այսպես օրինակ՝ «Ա՛խ, ափսոս, Անահի՛տ, դու և Արմենը իզուր չպայքարեցիք ոսկե մեդալի համար» տասնմեկ բառից բաղկացած այս նախադասության մեջ միայն 6-ն են նախադասության անդամ, 5-ը անդամներ չեն (ախ, ափսոս, և, իզուր, համար), բայց դրանց բացակայության կամ տեղափոխության դեպքում խոսողի վերաբերմունքը չէր արտահայտվի, կամ կխաթարվեր նախադասության իմաստը: Ահա այդ «տարբերակներից» մեկը՝ «Համար իզուր Անահիտ ոսկե մեդալի և Արմենը ախ դու ափսոս չպայքարեցիք»: Սա արդեն անկապակցություն է:

Շարադասությունը կարևոր նշանակություն ունի ոչ միայն նախադասություններում, այլև վճռորոշ դեր ունի նաև բառակապակցություններում:

Պետք է հատուկ ընդգծել, որ շարադասությունը բնորոշ է աշխարհի գրեթե բոլոր լեզուներին, և յուրաքանչյուր լեզու նախադասություններ կազմելու համար ունի բառերի դասավորության տվյալ լեզվին հատուկ օրենքներ ու կանոններ: Այս բոլորից ելնելով՝ շարադասությունը կարելի է սահմանել այսպես՝

Շարադասությունը յուրաքանչյուր լեզվի ներքին օրինաչափություններից բխող բառական միավորների դասավորության ընդունված կարգն է նախադասություններում և բառակապակցություններում, այն որպես շարահյուսական արտահայտման միջոց, իր դերով նպաստում է նախադասության մտքի և բառակապակցության իմաստի ձևավորմանը:

Շարադասությունը տարբեր լեզուներում տարբեր դրսևորումներ ունի. որոշ լեզուներում ունի *քերականական ավելի ակտիվ,* մյուսներում՝ համեմատաբար պասիվ դեր: Ըստ այդմ էլ շարադասությունը լինում է *կայուն և ազատ:*

Կայուն շարադասությունը բնորոշ է *անջատական տիպի* լեզուներին (անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, իսպաներեն, չինարեն, տիբեթերեն, ամերիկյան լեզուներ և այլն), որոնք չունեն թեքույթներ կամ քիչ ունեն, և որպես քերականական արտահայտման հիմնական միջոցներ հանդես են գալիս շարադասությունը և հնչերանգը:

Ազատ շարադասությունը հատուկ է *կցական ու թեքական* լեզուներին (հայերեն, սլավոնական լեզուներ, վրացերեն, թուրքերեն...): Այս տիպի լեզուներում շարադասությունը հիմնականում 3 գործառույթ ունի՝ *քերականական, իմաստային և ոճական:* Քննենք դրանք:

§ 9. Վ. Վինոգրադովի բնորոշմամբ՝ կցական ու թեքական տիպի լեզուներում շարադասությունը ոճական բազմապիսի դրսևորումների հետ նախադասության մեջ ամենից առաջ ստանում է *քերականական*, իսկ ապա *ոճական արժեք*[2]:

Այժմ տեսնենք թե շարադասությունը հայերենում քերականական ինչ դեր ունի:

1. *Շարադասության դերը բառերի շարահյուսական պաշտոններում.* ժամանակակից հայերենում քիչ չեն դեպքերը, երբ նախադասության մեջ եղած բառերի պաշտոնները որոշվում են շարադասությամբ. այսպես՝ հայերենում կան այնպիսի կառույցներ, որոնցում ենթական և ուղիղ խնդիրը պայմանավորված են իրենց գրաված տեղերով, փոխվեցին տեղերը, փոխվում են և պաշտոնները, այսպես՝ «*Կեցությունն է* որոշում *գիտակցությունը*» և «*Նպատակը* արդարացնում է *միջոցը*»: Երկու նախադասություններում էլ ստորոգյալներից առաջ դրվածները ենթականեր են, հետո դրվածները՝ ուղիղ խնդիրներ:

Շարադասության քերականական դերով են պայմանավորված նաև *բացահայտչի և բացահայտյալի* պաշտոնները: Բացահայտիչը միշտ դրվում է բացահայտյալից հետո, դրանց տեղափոխությունից անպայման առաջանում են նաև պաշտոնների փոփոխություններ: Օրինակ՝ Կոմիտասը՝ *հայ երգի վեհափառը*, սրբագործեց հայ երգը» և «Հայ երգի վեհափառը՝ *Կոմիտասը*, սրբագործեց հայ երգը»:

Այդպես էլ կայուն է *աստիճանական հատկացուցիչներ ունեցող* նախադասության հատկացուցիչների շարադասությունը: Այսպես՝ «ԵՊՀ-ի բանասիրական ֆակուլտետի դեկանի տեղակալի հայտարարության տեքստը փակցված է պատին»: Այստեղ հատկացուցիչներից ոչ մեկի տեղը հնարավոր չէ փոխել: Միայն կարելի է «պատին է փակցված» կառույցը բերել նախադասության սկիզբը, և ուրիշ ոչինչ:

Եթե նախադասության մեջ նույն *լրացյալն ունի և՛ որոշիչ և՛ հատկացուցիչ լրացումներ*, ապա քերականական անհրաժեշտ պահանջով հատկացուցիչը պետք է շարադասվի որոշիչից առաջ՝ «*Ուսանողի առաջին* պատասխանը չգոհացրեց դասախոսին»: Բոլորովին ուրիշ իմաստ ունի «*Առաջին ուսանողի* պատասխանը չգոհացրեց դասախոսին» նախադասությունը:

Նույնը կարելի է ասել նաև հատկացուցչին լրացնող որոշչի մասին. վերջինս անպայման պետք է նախադաս դիրք ունենա՝ «Պայծառ աստղերի լույսերը չէին թափանցում սաղարթախիտ ծառերի ստվերում» (*պայծառ և սաղարթախիտ* որոշիչների տեղերը չի կարելի փոխել):

---

[2] Տե՛ս Грамматика русского языка, том 2, Синтаксис, часть 1, под ред. *В.В. Виноградова. М.-Л.*1960. стр. 38.

2. Կայուն շարադասություն ունեն նաև հարցական և հարաբերական դերանուններով արտահայտված ենթակաները. դրանք միշտ դրվում են երկրորդական նախադասությունների սկզբում՝ «*Ով* Արարատ ունի սրտում, իր մայր լեզուն չի մոռանա» (ՀՇ) «*Ինչ* լինելու է, թող որ լինի միանգամից» (ՊՍ): «Ապրում են բոլոր նրանք, *ովքեր* քար են դնում քարի վրա» (ԳԹ): «*Ի՞նչ* էր նրա ցանկությունը, ոչ ոք չգիտեր»:

3. Քերականական պահանջով բազմակի ուղիղ խնդիրներ ունեցող նախադասությունն ունենում է *ենթակա + ստորոգյալ + ուղիղ խնդիր* կառուցվածք: Բավարարվենք թեկուզ մեկ օրինակով՝ «Վահրամ Փափազյանը երջանիկ զուգադիպությամբ իր մեջ խտացրել էր գրողին ու հոգեբանին, պատմաբանին ու գրականագետին, փիլիսոփային ու մտածողին» (ՍԱ):

4. Նախադասությունը *ենթակա + ստորոգյալ* կառուցվածք կունենա նաև՝

ա) եթե մի ենթակայի հետ թվարկվում են մի քանի ստորոգյալներ. օրինակ՝ «*Բայրոնը* սովորեց մագաղաթների լեզուն, կարդաց հայոց պատմությունը և սկսեց անգլերեն թարգմանել Խորենացուն ու Լամբրոնացուն» (ԳԹ):

բ) եթե ենթական ունի բազմանդամ լրացումներ՝ «Ռուս բազմաշնորհ բանաստեղծ և հայ ժողովրդի անկեղծ բարեկամ *Վալերի Բրյուսովը* նույնպես սովորեց հայերեն, թարգմանեց հայերենից, գերվեց հայերենով» (ԳԹ):

5. Քերականական պահանջով է պայմանավորված նաև *ուրիշի խոսքի հետ կապված հեղինակային խոսքի կառուցվածքը:* Եթե հեղինակի խոսքը նախորդում է ուրիշի ուղղակի խոսքին՝ ապա հեղինակային խոսքում ստորոգյալը ենթակայից հետո է գրվում. օրինակ՝ Ռոմեն Ռոլանը հայկական երաժշտության մասին *ասել է*. «Նրանք մելոդիկ այնպիսի հմայք ունեն, որ ձեր երկիրը երաժշտության տեսակետից դարձնում են խորհրդային մի Իտալիա»: Ընկերս ասաց՝ Վաղը չուշանաս:

Իսկ եթե հեղինակի խոսքը հաջորդում է ուրիշի ուղղակի խոսքին, հեղինակի խոսքում ստորոգյալը դրվում է ենթակայից առաջ: Օրինակ՝ «Հորս ու մորս ազգատոհմն էլ ի բնե ձայնեղ է եղել, - գրում է Կոմիտասը» (ՍԱ): – Վաղը «Ռիգոլետտոյի» պրեմիերան է, չուշանաք, - *նախազգուշացրեց* մաեստրոն:

Նման կառուցվածքի պատճառն այն է, որ հեղինակի խոսքը ուրիշի խոսքի հետ կապվում է *ստորոգյալի* միջոցով, դրա համար էլ միշտ մոտիկ է դրվում նրան: Նույնն է նաև անուղղակի խոսքի դեպքում (Հայրս *ասաց*, որ իմ և քո միջև անանց անդունդ կա: Լսելով Կոմիտասին, Ռոմեն Ռոլանը *գրում է*, որ իրեն քիչ է վիճակվել լսել այդքան դյութիչ ու բնական ձայն (ԳԹ):

6. Շարադասությունը վճռական դեր ունի նաև *բառերի խոսքամասային պատկանելության փոփոխության գործում:* Այսպիսի հատկությամբ օժտված են, սակայն, մի քանի *ածականներ, մակբայներ, անհնական կապերից ու կապական բառերից մի քանիսը,* ինչպես նաև *որոշ շաղկապներ ու վերաբերականներ:* Բերենք մի քանի օրինակ. *«Ուրախ* նժույգը խաղում

էր, ոստյուններ գործում» (Րաֆ.): Այստեղ *ուրախ* ածականը գործածվել է *ճժույգ* գոյականի հետ և *որոշչի* պաշտոնն է կատարել, սակայն եթե այն տեղափոխենք *խաղում էր* բայից առաջ, արդեն *ձևի պարագայի* պաշտոնն կկատարի և կվերածվի *մակբայի*: Այդպես էլ՝ «Անմիտ ծրագիր է, - *տխուր* ժպտաց Թումասը» (ԱԲ), (*տխուր*-ը ձևի պարագա է և *մակբայ*): Սակայն՝ «Անմիտ ծրագիր է, - ժպտաց *տխուր* Թումասը» (*տխուրը* որոշիչ է և *ածական*): Կամ՝ «Ձմռան մի գիշեր կար մի հարսանիք՝ հրճվում էր *անզուսպ* ամբոխը գյուղի» (ՀԹ): Այստեղ *անզուսպ* բառը եթե վերագրենք *ամբոխ* գոյականին, կլինի *ածական և որոշիչ*, իսկ եթե վերագրենք *հրճվում էր* բային, կլինի *մակբայ և ձևի պարագա*:

Այս երևույթը ավելի ակնառու է *երկփեղկված* իմաստ ունեցող խոսքի մասերի կիրառության դեպքում, երբ նրանց խոսքամասային պատկանելությունը միայն շարադասությամբ է պայմանավորված:

Նախ՝ *նոր* բառի մասին, որը հավասարապես և՛ ածական է, և՛ մակբայ, այսինքն՝ և՛ որոշիչ, և՛ պարագա: Ապա այդպիսի օրինակներ՝

Դու էլ գնա *նոր* սեր արա, էսպես է կարգն աշխարհի (ՀԹ) - որոշիչ:

Ամպերը դանդաղ, ուղտերի նման *նոր եմ* ջուր խմած՝ ծորից բարձրանում (ՀԹ): Այս նախադասության մեջ *նոր* –ը մակբայ է և ժամանակի պարագա: *Նոր* բառի երկփեղկվածությունը ցույց տանք նույն նախադասության շարադասական տարբերակում: «Ոմանք կարդում են *նոր* նամակները» (ԳՄ) և «Ոմանք *նոր եմ* կարդում նամակները»:

Այժմ՝ *հետո և առաջ* բառերի *կապ - մակբայ փոխանցումների մասին*: «Հանգավ վերջին ծրագը, ու բարաքը հանգստացավ *կարկուտից հետո* ծեծված արտի նման» (ԳՄ), և «Հանգավ վերջին ծրագը, ու *հետո* բարաքը հանգստացավ կարկուտից ծեծված արտի նման»: Առաջին նախադասության մեջ *հետո*-ն նյութական իմաստից զուրկ խոսքի մաս է և ձևավորել է ժամանակի պարագայի պաշտոնը, իսկ երկրորդում այն ունի նյութական իմաստ, մակբայ է և առանձին է դարձել ժամանակի պարագա: Այդպես էլ՝ *առաջ* բառը. «*Առաջ* ինձանից էիք խոսում» և «*Ինձանից առաջ* խոսում էիք»: Առաջինում ժամանակի մակբայ է, երկրորդում՝ կապ:

7. Շարադասության հետ կապված՝ նման փոփոխությունների կարող են ենթարկվել նաև շաղկապները. այսպես՝ *այլ* շաղկապը կարող է փոխակերպվել դերանվան՝ «Մարությանը չպատասխանեց, *այլ* ծոցից հանեց մի նամակ ու տվեց նրան» (այստեղ շաղկապ է), բայց «Մարությանը չպատասխանեց, ծոցից հանեց մի *այլ* նամակ ու տվեց նրան (այստեղ դերանուն է): Կամ՝ «Եվա էին կանչում նրա շուրթերը, *սակայն* Լիլիթ էր արձագանքում նրա հոգին», բայց՝ «Եվա էին կանչում նրա շուրթերը, Լիլիթ էր արձագանքում, *սակայն*, նրա հոգին»: Առաջին նախադասության մեջ *սակայն*-ը շաղկապ է, երկրորդում՝ *վերաբերական*:

8. *էլ* բառի խոսքամասային պատկանելությունը նույնպես պայմանավորված է շարադասությամբ. նախադասության մեջ, նայած ինչ դիրք ունի և ինչ խոսքի մասի հետ է հանդես գալիս, ըստ այդմ էլ որոշվում է նրա խոսքամասային պատկանելությունը. «Հիմա *էլ* արի ու այդ մարդուն պատաս-

խան տուր»: Այստեղ վերաբերական է: «Աքնածորում այժմ թավուտ անտառներ *էլ* կան»: Այստեղ շաղկապի արժեք ունի (նույնպես), ժխտական նախադասության մեջ այն մակբայի դեր է կատարում՝ «Աքնածորում թավուտ անտառներ *էլ* չկան» (այլևս):

9. Եղանակավորող բառերից մի քանիսը նույնպես կարող են փոխակերպվել այլ խոսքի մասերի: Նախադասությունների սկզբում դրա*նք վերաբերականներ* են, իսկ երբ բայերից առաջ կամ հետո են դրվում, *մակբայական* իմաստ են ձեռք բերում: Օրինակներ՝ *«Իմիջիայլոց*, Ազգային ժողովում այդ մասին խոսվել է» և «Ազգային ժողովում այդ մասին *իմիջիայլոց* է խոսվել»: *«Անկասկած*, ես կխոսեմ այդ մասին» և «Ես այդ մասին կխոսեմ *անկասկած*: «*Անտարակույս*, դեպքերի մասին կպատմի մասնակիցը» և «Դեպքերի մասին մասնակիցը *անտարակույս* կպատմի»:

Հիմնականում սրանք են շարադասության քերականական գործառույթները:

ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ

§10. Ինչպես ասվեց վերևում, կցական և թեքական լեզուներում շարադասությունը *քերականական* դերի հետ ունի նաև *իմաստատարբերակիչ* բազմազան դրսևորումներ:

1. Այստեղ է, որ պետք է խոսվի *նախադասության ակտուալ անդամատման* մասին, այսինքն՝ ԹԵՄԱՅԻ և ՌԵՄԱՅԻ[3] մասին՝ *ելակետի և միջուկի* մասին: Ի՞նչ են սրանք: *Միջուկը*, որը կոչվում է նաև *ռեմա*, ակտուալ անդամատմամբ նախադասության *բուն միտքը* կրող բառն է՝ նախադասության կամ հաղորդման *բուն նպատակը*, այսինքն տրամաբանական շեշտը կրող բառը: Դա սովորական նախադասության ստորոգյալն է, որը սովորական շարադասությամբ ենթակայից հետո է դրվում, առանձնապես շատ բան չի ընդգծում կամ շեշտում. այն որևէ բան է հաստատում կամ ժխտում:

Ելակետը, որը կոչվում է նաև *թեմա*, այն է, ինչը հայտնի է տվյալ իրադրության մեջ, ինչի մասին հաղորդվում է միջուկով: Այսինքն՝ թեման լսողին արդեն ծանոթ է, միջուկը՝ *ռեման*, այն նորն է, որը խոսողը ցանկանում է շեշտել, ընդգծել, լսողի ուշադրությունը դրա վրա հրավիրել: Իսկ միջուկի այդ ընդգծումը, շեշտումը կատարվում է բայի դիմավոր ձևերով, օժանդակ բայերով, շարադասության շրջումով և հնչերանգով:

Սովորական շարադասությամբ *միջուկը* առանձնապես չի շեշտվում, խոսողը հանդարտ հնչերանգով ինչ-որ բան է հաղորդում: Օրինակ՝ «Ընկերս Փարիզից այսօր մի նոր գիրք ստացավ»: Այստեղ սովորական հաղորդում է ինչ-որ դեպքի, եղելության մասին. ներկայացվում է միայն փաստը: Սակայն խոսքը միշտ այդպես միապաղաղ չի արտաբերվում, հաճախ հարկ

---

[3] Տե՛ս ***В. Матезиус***, О так называемом актуальном членении предложения ("Пражский лингвистический кружок"), Москва,1967, стр. 239-245:

է լինում նախադասության մեջ առանձնացնել, ընդգծել այն, ինչի վրա խոսողը ցանկանում է հրավիրել լսողի ուշադրությունը: Ահա այդ նպատակով էլ խոսքի շղթայում ընդգծվում, շեշտվում է այն բառը, որը դառնում է հաղորդման *միջուկը՝ ռեման, նորը:* Այդ նպատակով էլ խոսողը խոնարհված բայը կամ օժանդակ բայը դնում է հենց այդ միջուկից հետո՝ ընդգծելով այն: Բերված նախադասությունը կարելի է ներկայացնել մի քանի առումներով՝ որպես միջուկ դարձնելով ցանկացած բառ, նախադասության ցանկացած անդամ: Այսպես՝ «*Այսօր* ստացավ ընկերս Փարիզից մի նոր գիրք» (և ոչ թե երեկ կամ երկու օր առաջ): «Այսօր *ընկերս* ստացավ Փարիզից մի նոր գիրք» (և ոչ թե ես կամ ուրիշը): «Այսօր ընկերս *Փարիզից* ստացավ մի նոր գիրք») և ոչ թե Լոնդոնից կամ մի այլ տեղից): «Այսօր ընկերս Փարիզից մի նոր *գիրք* ստացավ» (և ոչ թե ծանրոց) և այլն: Ուրեմն նույն նախադասության տարբերակներում խոսքի միջուկները տարբեր են. մի դեպքում այն *Փարիզն է*, մյուս դեպքում՝ *այսօրը*, երրորդ դեպքում՝ *ընկերս*, չորրորդ դեպքում՝ *գիրքը* և այլն, որոնք շեշտվել են *ստացավ* բայի շնորհիվ: Իսկ եթե *ստացավ* բայը դրվի *նոր* բառից հետո, *նոր*-ը ոչ միայն հանդես կգա միջուկի դերում, այլև կփոխի իր խոսքամասային պատկանելությունը՝ ածականից վերածվելով մակբայի, կփոխվի նաև նրա պաշտոնը. որոշիչը կդառնա պարագա:

Այժմ *օժանդակ բայի մասին.* եթե նախադասության ստորոգյալն արտահայտված է ոչ թե պարզ, այլ բաղադրյալ դիմավոր ձևերով, ուրեմն միջուկի ընդգծման, *նորը՝ ռեման,* շեշտելու համար մեծ դեր է խաղում օժանդակ բայը՝ «Երեխաները իրենց ճիչերով տակն ու վրա էին անում ողջ թաղը» և «Երեխաներն էին իրենց ճիչերով տակն ու վրա անում ողջ թաղը»: Իսկ եթե նախադասության ստորոգյալն *անվանաբայական* է, այդ դերը կատարում է հանգույցը՝ «Կոմիտասը մեր երգարվեստի մելոսն է» և «Կոմիտասն է մեր երգարվեստի մելոսը»:

Օժանդակ բայի կամ հանգույցի ժխտական ձևերը նույնպես միջուկն ընդգծելու նույն դերն ունեն: Դա լավ է երևում նույն նախադասության հետևյալ տարբերակներում՝ «Ես երեկ *քննություն* չեմ հանձնել» (*ստուգարք* եմ հանձնել): «Երեկ *ես* չեմ հանձնել քննություն, (հանձնել է *ընկերս*): «Ես *երեկ* չեմ հանձնել քննություն» (հանձնել եմ *նախորդ օրը):*

2. Շարադասությունը վճռական նշանակություն ունի նաև նախադասությունների բնույթների փոփոխության հարցում: Այսպես՝ եթե պատմողական նախադասության կազմում կան հարաբերական դերանուններ (*երբ, ինչ, ով, ում* և այլն), որոնք օժանդակ բայից կամ հանգույցից հեռու են, դրանց մոտ շարադասվելիս անպայման փոխում են նախադասության բնույթը՝ այն վերածելով, դարձնելով *հարցական բնույթի:* Համեմատենք հետևյալ նախադասությունները.

ա) Երբ քեզ հետ են ընկերներդ: Երբ քեզ մենակ ես զգում:
և Ե՞րբ են քեզ հետ ընկերներդ, Ե՞րբ ես քեզ մենակ զգում:

բ) Ում ցանկանում ես, ընտրի՛ր: Ում վիճակվել է, թող գնա՛
և Ո՞ւմ ես ցանկանում, ընտրիր: Ո՞ւմ է վիճակվել, թող գնա

գ) Ինչ հնարավոր է, կանեմ: Ինչ պահանջվում է, կատարի՛ր:

և Ի՞նչ է հնարավոր, կանեմ: Ի՞նչ է պահանջվում, կատարի՛ր:

Ակնհայտ է, որ ոչ թվակիր նախադասությունները առանց հարցական հնչերանգի արտաբերվել չեն կարող, և այդ ամենը կատարվել է ամենազոր շարադասության շնորհիվ:

3. Շարադասությունը իմաստային կարևոր դեր է կատարում նաև բարդ նախադասությունների համակարգում: Թերևս սակավ դեպքերում, երկրորդական նախադասությունների տեղափոխությունը, գլխավորից առաջ շարադասվելու դեպքում, փոխվում է երկրորդականի իմաստն ու բնույթը: Օրինակ՝ «Կաշխատեմ, որ հիմնարկը վերաբացվի» (այստեղ երկրորդականի բնույթը նպատակի պարագա է՝ «Կաշխատեմ, որպեսզի հիմնարկը վերաբացվի», բայց այն անցնելով գլխավորից առաջ, փոխվում է նրա իմաստը և բնույթը՝ «Որ հիմնարկը վերաբացվի, կաշխատեմ»: Այս դեպքում երկրորդականի բնույթը պայմանի պարագա է (Հիմնարկը բացվելու դեպքում կաշխատեմ):

4. Պակաս ուշագրավ չէ նաև շարադասության հետևյալ դերը. այն հաճախ *համադասական* կառույցները փոխակերպում է *ստորադասականի:* Բերենք հետևյալ օրինակները՝ «Լսարանում շոգ էր, բաց էինք արել լուսամուտները» (համադասական է): Բայց՝ «Բաց էինք արել լուսամուտները. լսարանում շոգ էր» (ստորադասական է, որովհետև կարելի է ավելացնել *քանի որ* կամ որովհետև շաղկապները): Նույնն են նաև «Աղջիկը նրան դուր եկավ. պայմանավորվեց ու ժամադրվեց» և «Արձակուրդիս ժամանակը լրանում էր. Ծաղկաձորից տուն վերադարձա»:

ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՈՃԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ

§ 11. Հայտնի է, որ ոճաբանական գրականության մեջ լայն առումով խոսվում է ոճերի երկու տեսակների մասին՝ *տպագիր կամ գրքային* (публичный), *խոսակցական կամ կենցաղային* (разговорный)[4]: Սրանցից յուրաքանչյուրն իր հերթին ենթարկվում է ստորաբաժանումների: Դրանցից ամեն մի տեսակը իր բնագավառի յուրահատուկ պահանջների թելադրանքով օգտագործում է լեզվաարտահայտչական մի որոշ կարգի՝ իրեն հատուկ միջոցներ, և այդ յուրահատուկ պահանջներով է հաճախ պայմանավորվում նախադասություն կազմող միավորների՝ *բառերի տեղը նախադասության մեջ:* Ոճաբանության մեջ ավելի հաճախ խոսվում է *սովորական և շրջուն* շարադասության (инверсия) մասին:

Սովորական շարադասության դեպքում ենթական դրվում է ստորոգյալից առաջ, որոշիչն ու հատկացուցիչը՝ իրենց լրացյալներից առաջ, իսկ բացահայտիչը՝ միայն բացահայտյալից հետո, պարագաները, ըստ իրենց բնույթի, և՛ նախադաս են դրվում, և՛ ետադաս:

---

[4] Տե՛ս *А.Н. Гвоздев*, Очерки по стилистике русского языка, М., 1965, стр. 19-39:

Սակայն եթե գրավոր ու բանավոր խոսքում գործածվեր նախադասության անդամների միայն նշված կարգը, ապա խոսքը կլիներ միապաղաղ, անհետաքրքիր, կզրկվեր կենդանությունից ու հուզականությունից և առանձին բառեր շեշտելու հնարավորությունից: Ահա թե ինչու խոսքի մեջ (հատկապես գեղարվեստական խոսքում) հաճախ փոխվում է խոսքի սովորական ձևը, և սովորական շարադասությունը փոխվում է *շրջունի:*

Շարադասության նշված ձևերից լեզվի տարբեր ոճեր տարբեր չափով են օգտագործվում: Այսպես՝ *վարչագործառական, գիտական, հրապարակախոսական* ոճերում մեծ ուշադրություն է դարձվում շարադրանքի տրամաբանական կողմին, զգալի տեղ է տրվում լեզվի ինտելեկտուալ տարրերին (տերմիններ, հասկացություններ, անվանումներ), և այս ոճերին հատուկ է *սովորական շարադասությունը,* սրանցում պակաս է նաև հուզականությունն ու զգացմունքայնությունը, և այսպիսի ոճերը բնութագրվում են *չոր* ածականով: Մինչդեռ *գեղարվեստական ոճը* շատ է տարբերվում նշված ոճերից: Այստեղ նախադասության անդամների *ազատ տեղաշարժ* կարելի է կատարել, *շրջուն շարադասությունը սրա էությունն է:* Շրջունությունը նոր նրբերանգներ է հաղորդում խոսքին, այն դարձնում է վառ ու պատկերավոր: Շրջումով առանձին բառեր նախադասության մեջ նոր կշիռ ու լիցք են ստանում: «*Հակառակ սովորական շարադասության՝ շրջումը հաճախ այնպիսի իմաստային ու ոճական նրբություններ է հայտնաբերում նախադասության մեջ, որ սովորական շարադասությամբ չի զգացվում. նախադասությունը լիցքավորվում է քնարական շնչով, հուզարտահայտչական խորությամբ, մելոդիկ երաժշտությամբ և համաչափ կշռույթով*»[5]:

«*Շրջուն շարադասության դեպքում արտահայտությունն ավելի կենդանի ու երաժշտական է դառնում*»[6], - հատուկ ընդգծում է Սանուկ Աբեղյանը:

Ասվածը կարելի է ցույց տալ բազմաթիվ օրինակներով, մանավանդ պոեզիայում: Օրինակ, մի՞թե Վահան Միրաքյանի «Լալվարի որսը» սքանչելի պոեմը այնքան քաղցրահնչյուն, երաժշտության չափ հոգեպարար ու հյութեղ կլիներ, եթե հեղինակը իր խոսքը չոճավորեր շրջուն շարադասությամբ: Նա իր պոեմն սկսում է արևածագի և բնության զարթոնքի հրաշալի նկարագրությամբ. պատկերն ավելի նկարչագեղ ու շարժուն դարձնելու նպատակով նա մերթ շեշտել է ստորոգյալները՝ դրանք դարձնելով նախադասության *միջուկ,* շարադասել է ենթականերից առաջ, մերթ էլ *միջուկ* է դարձրել որոշիչները՝ դրանք շարադասելով որոշյալներից հետո: Ահա այդ պատկերը.

Ծագում է մանուկ արևը գարնան
Կովկաս լեռների ծյունե պատնեշից,
Զարթնում են մեկ-մեկ սարեր *աննման*
Ձմռան անվրդով քնի մշուշից:

---

[5] *Վ. Առաքելյան,* Հայերենի շարահյուսություն, հ. Ա, Ե., 1958, էջ 458-459:

[6] *Ա. Աբեղյան,* Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 532:

Սակայն ասվածից ու բերված օրինակից բոլորովին էլ չի հետևում, թե սովորական շարադասության դեպքում խոսքը զրկված է լինում հուզականությունից, քնարականությունից ու կենդանությունից: Դա արդեն շնորհքի հարց է. նայած թե գեղագետը, բանաստեղծը, գրողն ու խոսողը ինչպիսի բառապաշար ունի, խոսք կառուցելու, լեզվի հնարավորություններից օգտվելու ինչպիսի վարպետություն ու շնորհք:

Այս նկատառումով քննենք Ե.Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության մի քանի նախադասությունների շարադասությունը և ցույց տանք, որ մեր լեզվում *ուղիղ և շրջուն* շարադասությունները հանդես են գալիս *գիրկընդխառն*, միասին ծառայում են միևնույն նպատակին՝ ոճավորելու խոսքը, այն դարձնելու ավելի հնչեղ ու գեղագիտական.

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,
Մեր հին սազի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում:

Այս նախադասությունների շարադասությունը թեև սովորական է (ոչ մի շրջում չկա), բայց որոշիչներն ու հատկացուցիչները այնքան խոսուն են, այնքան արտահայտիչ, և դրանց տեղերը այնքան կայուն են, որ իրենց լրացյալների հետ ծուլվելով, շատ կուռ ու արտահայտիչ իմաստ են ստացել, ենթակայի նախադաս գործածությունն էլ խիստ պատճառաբանված է: Ինչպես տեսնում ենք, սովորական շարադասությամբ էլ խոսքը այնքան արտահայտիչ է, այնքան քնարական, որ բավական է փոխել նախադասության անդամներից մեկի շարադասությունը (այն դարձնել շրջուն), որ թուլանա երկտողի թե՛ հուզական և թե՛ ոճաիմաստային կարողությունը: Բավական է այստեղ շրջել թեկուզ մեկ որոշիչ, և բանաստեղծությունը կկորցնի իր հմայքը:

Սակայն, եթե Չարենցն իր բանաստեղծությունը կառուցեր նախադասությունների միայն սովորական շարադասությամբ, ապա այն կլիներ միապաղաղ ու ձանձրալի, չէր ունենա այն մեղադայությունը, ինչ որ ունի: Ահա թե ինչու իր լեզվի քաղցրությունն ու հմայքը իմացող արվեստագետը բանաստեղծության հաջորդ տողերում արդեն դիմում է *շրջուն շարադասության:* Այս դեպքում էլ նա իր խոսքը այնքան վարպետորեն է կառուցում, որ ետադաս որոշիչներից ոչ մեկի տեղը հնարավոր չէ փոխել: Շեշտելով հատկապես ետադաս որոշիչները՝ բանաստեղծը դրանով ընդգծել է որոշյալների հատկանիշները և խոսքը դարձրել ավելի ազդու, ավելի նպատակասլաց.

Սիրում եմ մեր երկինքը *մուգ*, ջրերը *ջինջ*, լիճը *լուսե*,
Արևն *ամռան ու* ձմեռվա վիշապածայն բուքը վսեմ...

Այս որոշիչների նախադաս գործածության դեպքում խոսքը նման ներգործուն ուժ ու հուզականություն չէր ունենա:

Շարունակության մեջ արդեն, որոշիչները թողնելով իրենց տեղերում, Չարենցը դիմել է հատկացուցիչների շրջուն շարադասության՝ այս դեպ-

քում էլ ասույթի *միջուկ* դարձնելով ուղիղ խնդիրները՝ ավելի ընդգծելով *երգերը, գրքերը և վերքերը*՝

Ուր էլ լինեմ – չեմ մոռանա ես ողբածայն *երգերը մեր*,
Չեմ մոռանա աղոթք դարձած երկաթագիր *գրքերը* մեր...

Եթե առաջին քառատողում ընտրել է ենթակայի և ստորոգյալի սովորական շարադասություն, ապա այստեղ ետադաս ստորոգյալով հատկապես ընդգծել է *բառ* ուղիղ խնդիրը՝ (...արևահամ *բառն* եմ սիրում): Երրորդ քառատողում բանաստեղծը, շրջելով ենթակայի և ստորոգյալի տեղերը, նպատակ է ունեցել հատկապես ընդգծելու իր անսահման և երբեք չքուլացող սերը մեր ժողովրդի ստեղծած ու նրան պատկանող հոգևոր գանձերի նկատմամբ:

Հասկանալի է, որ խոսքը գունագեղ ու պատկերավոր դարձնելու գործում շարադասության հետ վճռական դեր ունեն նաև *տրամաբանական շեշտն ու հնչերանգը*. այս երեքը միասին ծառայում են միևնույն նպատակին:

Ճիշտ է, մեր լեզվի շարադասությունը հնարավորություն է ընձեռում միևնույն նախադասությունը արտահայտել բազմաթիվ տարբերակներով, որոնց հետևանքով էլ առաջանում են ոճական տարբերություններ, բայց դա բոլորվին էլ չի նշանակում, թե նախադասություն կազմող բառերը կարելի է ցանկացածի չափ տեղաշարժել: Նման տեղաշարժեր կարելի է կատարել 3-4 նյութական խոսքի մասերից կազմված նախադասություններում, ինչպես՝ «Ծառերը ծաղկեցին գարնանը»: Սա կարելի է շարադասել 6 տարբերակով, իսկ «Լուսաբացին նա բարձրացավ կախաղան» նախադասությունը՝ 24 տարբերակով, որոնց մի մասը միայն տեսական արժեք կունենա: Նման տարբերակների թիվը կարելի է հաշվել մաթեմատիկական հետևյալ բանաձևով 1 x 2= 2, 1 x 2 x 3 =6, 1 x 2 x 3 x 4=24, 1 x 2 x 3 x 4 x 5 = 120 և այլն:

Շարադասական տարբերակների ամենամեծ թիվն ստացվում է այն դեպքում, երբ նախադասության ստորոգյալն արտահայտված է բայի պարզ ժամանակաձևերով, և նրա կազմում չկան նյութական իմաստից զուրկ խոսքի մասեր: Օրինակ, եթե «Ծառերը ծաղկեցին գարնանը» նախադասությունն ունի 6 տարբերակ, և բոլորն էլ կիրառելի են, ապա «Ծառերը ծաղկել են գարնանը» 4 բառերից բաղկացած նախադասությունը երբեք 24 տարբերակ ունենալ չի կարող, քանի որ *են* օժանդակ բայը երբեք նախադասության սկզբում չի կարող շարադասվել:

Նշենք նաև, որ հատկապես բանաստեղծները ավելի հաճախ շրջուն շարադասությանն են դիմում բանաստեղծությունը հանգավորելու, ռիթմավորելու և ներդաշնակություն ստեղծելու նպատակով: Ահա Հ.Թումանյանի մի քառատողը, որտեղ առաջին երկու տողերը կառուցել է *ստորոգյալ- ենթակա*, իսկ վերջին երկու տողերը՝ *ենթակա - ստորոգյալ* շարադասությամբ:

Չէ, *չի լռել* Սեծ Շոթայի
Երգի *ձեռը* կաթոգին,

Ու դարավոր *ցավն* ամեհի,
Չի խորտակել էն հոգին:

Իսկ Համո Սահյանը հանգավորումը կատարել է ուղիղ խնդիրների նախադաս ու ետադաս գործածությամբ.

Իմ պապը *տնկել է*
Մեր գյուղի *շիվերը,*
Իմ պապը *պայտել է*
Մեր գյուղի *ձիերը:*

Իմ պապը մեր գյուղի
Պատերը շարել է,
Եվ բոլոր *կամերը*
Մեն-մենակ *քարել է*[7]*:*

ՀՆՉԵՐԱՆԳ

§12. Շարահյուսական կապակցության միջոցներից մեկն էլ հնչերանգն է. նրա միջոցով է ձևավորվում և իրական տեսք ստանում նախադասությունը: Հնչերանգը խոսքը տարրալուծում է արտասանական ավելի փոքր միավորների և ընդհակառակը՝ ավելի փոքր միավորները ծուլում է ավելի մեծ միավորների մեջ:

1. *Հնչերանգը հաղորդակցային երևույթ է և քերականորեն չի նշույթավորվում.* այն արտահայտվում է ձայնային տարբեր ելևէջումներով ու դադարով: Բանավոր խոսքը հնչական խոսք է, որն իրականանում է արտասանական տարբեր հնչերանգներով: Այդ հիմնավորումով է, որ նույն բառը, բառակապակցությունը կամ նախադասությունը տարբեր հնչերանգներով արտաբերելիս տարբեր իմաստներ է ստանում՝ մի դեպքում՝ *աղերսանք* ու *խնդրանք,* մյուս դեպքում՝ *արհամարհանք* ու *արգահատանք,* մեկ այլ դեպքում՝ *զգվանք* ու *ծողկանք,* չորրորդ դեպքում՝ *հարցում, զարմանք* ու *հեգնանք, հրաման ու կարգադրություն,* ինչպես նաև՝ *նախազգուշացում* ու *սաստում, հաստատում ու ժխտում* և այլն: Հնչերանգի այս դերը նկատի ունենալով է, որ անգլիացի հայտնի դրամատուրգ Բեռնարդ Շոուն ասել է. «ԱՅՈ բառը կարելի է արտաբերել 50, ՈՉ-ը՝ 500 եղանակով»: Ճիշտ է, սրանում չափազանցություն կա, բայց անառարկելի է, որ ցանկացած բառ կամ արտահայտություն կարող է տարբեր հնչերանգներով տարբեր, նույնիսկ իրար բոլորովին հակադիր վերաբերմունք արտահայտել: Օրինակ՝ *ապրես* բառով կարելի է արտահայտել և՛ գովեստ (*Ապրե՛ս, լավ* ես աշխատել), և՛ գոհունակություն (*Ապրե՛ս,* օգնեցիր ինձ), և՛ խնդրանք (*Ապրե՛ս,* մի բաժակ ջուր տուր), և նախատինք (*Ապրե՛ս,* մի հատ էլ խփի՛ր), և պարսավանք (*Ապրե՛ս,* մորդ վերջին դրամը տարար) և այլն: Այդպես էլ՝ *աչքդ լույս* արտահայտության տարբեր հնչերանգներով կարելի է և՛ բարեմաղթանք արտահայտել (*Աչքդ լույս,* Շուշին ազատագրվեց), և քամահրանք *(Աչքդ լույս,* եղբորս

[7] Նախադասության անդամների շարադասության և նրանց քերականական, իմաստային և ոճական արժեքների մասին խոսվելու է իրենց տեղերում՝ կապված նախադասության անդամների հետ:

պաշտոնից ազատեցին, շատ էիր բամբասում): Կամ ՀԱ բառի տարբեր հնչերանգներով կարելի է արտահայտել *հարցում, ժխտում, հաստատում, հեգնանք, սպառնալիք, արհամարհանք, խնդրանք, պահանջ* և այլն:

Հնչերանգի հորինվածքը բարդ է. այն կազմված է ձայնի տոնի, հնչյունի ուժգնության ու տևողության, տեմպի, տակտի ու ռիթմի, ինչպես նաև մեղեդայնության և տրամաբանական շեշտի համադրություններից:

2. Հնչերանգի բաղադրիչ տարր է նաև *դադարը*, ինչպես՝ «Այդ մասին պատմեց հենց ինքը՝ *Աղաբալյանը*» (և... *աղա Բալյանը*): Դադարն առաջանում է բնախոսական, հոգեբանական և տրամաբանական հիմնավորումներով: Ասվածը լավագույնս հաստատում են ժողովրդական հետևյալ ասույթները. «Գնդակահարել *չի՛ կարելի, ազատե՛լ» և «Գնդակահարե՛լ,* չի՛ կարելի ազատել»: Այդպես էլ՝ *«Սովորի՛ր հորդ պես,* հիմար մի լինի՛ր» և «*Սովորի՛ր,* հորդ պես հիմար մի լինիր»: Ակնհայտ են տրամաբանական հակասությունները, որոնք բանավոր խոսքում արտահայտվել են միայն ամենազոր *հնչերանգով,* իսկ գրավոր խոսքում իմաստային այդ հակադրությունները արտահայտվել են կետադրական նշանների օգնությամբ, որոնք Անտոն Չեխովը համեմատել է *երաժշտական նոտաների* հետ:

Բերված օրինակներն էլ վկայում են, որ հնչերանգը խոսողի վերաբերմունքն է արտահայտում, որով և ձևավորվում են նախադասությունների հնչերանգային տիպերը՝ *պատմողական, հարցական, հրամայական, ըղձական և բացականչական:* Ինչ խոսք, դրանցում դեր ունեն նաև բայի եղանակներն ու սպասարկող բառերը, բայց բանավոր խոսքում դրանք իրականանում են միայն հնչերանգով: Այստեղ էլ տեղին է հիշել Միխայիլ Լերմոնտովի հետևյալ պատկերավոր ասույթը. «Սառը տառերով դժվար է զգացմունքներ արտահայտելը»:

Այսպիսով՝ խոսքի համար ամենաբնորոշը *չեզոք* հնչերանգն է, որը հատուկ է հատկապես *պատմողական* նախադասություններին, *բացականչական ու ըղձական* նախադասություններով արտահայտվում են իղձ, ցանկություն, տենչանք, բերկրանք, հիացմունք, զարմանք, սարսափ, վիշտ, հիասթափություն, հանդիմանություն, կարոտ, աղերսանք, դժկամություն և այլն, *հարցականով* հարցում, սպասելիք, երկմտություն, հաստատում, հիասթափություն և այլն, *հրամայականով*՝ հրաման, հորդոր, պահանջ, կամք, կոչ, սաստում, խնդրանք, քաջալերանք և այլն: Ահա թե ինչու բանավոր խոսքը գրավորի համեմատությամբ ավելի կենդանի ու արտահայտիչ է՝ *հնչերանգի շնորհիվ:* Հնչերանգը, թեև քերականորեն նշույթավորված չէ, բայց ինքնուրույն հնչյունական միավոր է և տարբերակում է քերականական իմաստներ, այսինքն՝ *քերականական արտահայտության միջոց է:* Այն նաև *ստորոգման կառուցվածքային ուրույն միջոց է հատկապես միակազմ նախադասությունների համար*[8]*:*

---

[8] Տե՛ս *Հ. Պետրոսյան,* Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 384-385:

§ 13. Հնչերանգի հետ սերտորեն առնչվում է նաև տրամաբանական շեշտը, որը փաստորեն նախադասության հնչերանգի ամենաբարձր տոնն է. այն ունկնդրի ուշադրությունը բևեռում է խոսքի առանցքի՝ *միջուկի*, մտքի կենտրոնի վրա: Խոսքում հնչերանգն ու տրամաբանական շեշտը հանդես են գալիս միասնաբար և ձևավորում են թե՛ երկկազմ և թե՛ միակազմ նախադասությունները: Այս երկուսի միասնական դրսևորումը ցույց տանք անգլիացի բանաստեղծ Շելլիի «Բարի գիշեր» բանաստեղծության տրամաբանական ընթերցմամբ, որով իսկապես հիմնավորվում է այդ բարեմաղթանքի իսկական իմաստը.

Բարի գիշեր: Օ՜, ո՛չ: Չէ՞ որ այդ խոսքերով
Չենք միանա, այլ կանջատվենք մի ողջ գիշեր,
Ե՛կ, սիրելի՛ս, դեռ միասին մնանք սիրով՝
Այդ ժամանակ դա կլինի *բարի գիշեր:*

Թեկուզ և մենք երազներում մեկտեղ լինենք՝
Մենակ գիշերն արդյոք ինչպե՞ս բարի կոչեմ.
Թե չմաղթես *բարի գիշեր* դու ինձ երբեք՝
Այդ ժամանակ դա կլինի *բարի գիշեր:*

1. Տրամաբանական շեշտը նախադասության մեջ կայուն տեղ չունի. այն կարող է դրվել նախադասության ցանկացած անդամի, նույնիսկ անդամ չհանդիսացող բառերի վրա: Նրա տեղը հիմնականում պայմանավորված է նախադասության բնույթով: Սովորական շարադասություն ունեցող նախադասության *տրամաբանական շեշտը սովորաբար դրվում է ստորոգյալի* վրա, իսկ եթե խոսողը ցանկանում է շեշտել, ընդգծել նախադասության ենթական կամ մեկ այլ անդամ, այդ դեպքում ստորոգյալը կամ միայն օժանդակ բայը կամ հանգույցը տեղափոխում է այն բառից հետո, որի վրա խոսողի ուշադրությունն է հրավիրվում: Օրինակ՝ Ավ. Իսահակյանի հետևյալ միտքը մի սովորական հաղորդում է՝ «Ես ձեզ ասում եմ՝ կգա ոգու սով»: Փորձենք ԵՄ օժանդակ բայը տեղափոխել *ես* ենթակայից հետո, անմիջապես կշեշտվի *ես-ը,* և տրամաբանական շեշտը կընկնի նրա վրա՝ «*Ես եմ* ձեզ ասում՝ կգա ոգու սով» (և ոչ թե մեկ ուրիշը): Իսկ եթե ԵՄ-ը տեղափոխենք *ձեզ*-ից հետո, տրամաբանական շեշտը կընկնի *ձեզ*-ի վրա, և կստացվի, որ Իսահակյանը հատուկ մեզ է դիմել՝ *«Ես ձեզ եմ ասում» (և ոչ թե ուրիշներին):*

2. *Նշենք նաև, որ հարցական, հրամայական, բացականչական* նախադասություններում տրամաբանական շեշտը համընկնում է հարցում, հրաման և բացականչություն արտահայտող բառերի բառային շեշտի հետ՝ ուժեղացնելով դրանց արտաբերումը: Հարցական նախադասություններում տրամաբանական շեշտի տեղը ազատ է. այն կարող է ցանկացած բառի վրա դրվել: *«Կոմիտա՞սը* Փարիզում արժանացավ առաջին կարգի մրցանակի» (թե՞ մեկ ուրիշը), «Կոմիտասը *Փարիզո՞ւմ* արժանացավ առաջին

կարգի մրցանակի» (թե՞ ուրիշ քաղաքում), «Կոմիտասը Փարիզում *առաջի՞ն* կարգի մրցանակի արժանացավ» (թե՞ երկրորդ):

Ահա սխալ հնչերանգային հարցականի մի օրինակ.

- Օ՜, պարո՛ն Քլինքոն, Դուք ձե՞ր կոշիկներն եք մաքրում:

- Այո՛, իսկ դուք ո՞ւմ կոշիկներն եք մաքրում:

3. Արգելական հրամայականի դեպքում տրամաբանական շեշտը *Մի* արգելականի վրա է ընկնում. «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին» (ՎՏ): «Մի՛ խոսեցնի մեզ դրանից...» (ՀԹ): «Ինձ մոտ մի՛ *նստիր*», մեկ ուրիշ հնչերանգով՝ «Ինձ մոտ մի *նստի՛ր*» դրական իմաստ կունենա:

Ժխտական նախադասություններում նույնպես տրամաբանական շեշտը գրեթե միշտ ընկնում է ժխտական դերանունների կամ հատկապես ժխտական խոնարհման բայերի վրա, իսկ եթե դրանք միասին են հանդես գալիս նույն նախադասության մեջ, ապա երկուսն էլ շեշտվում են, ըստ որում՝ ավելի ուժեղ շեշտվում է ժխտական բայը.

Ոչ ոք ըսավ՝ հե՛գ տղա, արդյոք *ինչո՞ւ* կմխա... (ՊԴ):

Իմ կարոտած սրտի համար *ոչ մի* ուրիշ հեքիաթ *չկա* ... (ԵՉ):

Իմ մահով *ոչինչ չի փոխվի* կյանքում

Եվ *չի պակասի* աշխարհում *ոչինչ (ՀՄ):*

Թումանյանի պալատում ով քեֆի *չի նստել,*

Նա *չի տեսել դեռ խնդում,* Աշխարի *չի տեսել* (ՎՏ):

4. Եթե անհրաժեշտ է լինում ավելի սաստկացնել գործողությունը, այդ դեպքում խոսողը, գրողը սովորաբար դիմում է *կրկնակի* ժխտման միջոցին, որտեղ տրամաբանական շեշտը նույնպես զորեղ միջոց է. նման դեպքում նախադասությունը կրկնակի շեշտ է ստանում, ըստ որում ավելի զորեղը լինում է առաջին ժխտումն արտահայտող բառի շեշտը (չե՛մ կարող չասել, չե՛ս կարող չգնալ), երկրորդ ժխտումը համեմատաբար ավելի թույլ շեշտով է արտաբերվում: Օրինակներ. «Ես չեմ կարող այդ մասին չխոսել» (այսինքն՝ անպայման պիտի խոսեմ): «Դու չես կարող դասի չգնալ, որովհետև ստուգողական եք գրելու» (պիտի գնաս): «Հնարավոր չէր չմիջամտել այդ գործին» (պետք է անպայման միջամտել):

5. Իսկ երբ ժխտական նախադասության կազմում հանդես են գալիս *ինչպե՞ս, ինչո՞ւ* հարցական դերանունները, տրամաբանական շեշտն ընկնում է այդ դերանունների վրա և ավելի սաստկացնում դրական գործողության անհրաժեշտությունը՝ «Ինչպե՞ս չպատասխանել այդ հոդվածին. չէ՞ որ դրանով կարևոր հարց է լուծվում» (ուրեմն անպայման պետք է պատասխանել), կամ «Ինչո՞ւ չգնամ այդ նիստին, կարևոր հարցեր են առաջ քաշվելու» (ուրեմն գնալը անհրաժեշտ է):

6. Եթե նախադասության կազմում կան *կոչականներ,* տրամաբանական շեշտն ընկնում է կոչականների վրա, եթե կոչականն ունի նախադաս լրացում, շեշտն անցնում է այդ լրացման վրա.

Որդի՛ս, մի բանի պիտի հավատաս, Թեկուզ ունայնի, որ ահ ունենաս (ՀՇ): Դեպի վե՛ր, սարն ի վե՛ր, *քաջասի՛րտ զինվոր* (Հ.Հովհ.): Սաքո՛, Սաքո՛, մեզ մոտ արի՛ (ՀԹ):

Իսկ եթե կոչականների հետ գործածվում են բացականչական բառեր,

բարեմաղթանքի արտահայտություններ, հրամայական եղանակի բառեր, նորից նախադասությունը կրկնակի շեշտեր է ստանում՝ «Ողջո՜ւյն ձեզ, ով ուրա՜խ, ազա՜տ, Անցա՜ծ օրեր իմ մանկության» (ՀԹ): «Վա՜յ,վա՜յ, Մոսի՜ ջան, ինձ մի՜ սպանիր» (ՀԹ):

7. Նշենք նաև տրամաբանական շեշտի ու հնչերանգի համատեղ կիրառման մի հետաքրքիր դեպք.

Երբեմն *նույն բառը* տվյալ նախադասության մեջ, ըստ արտասանության եղանակի, կարող է դիտվել մի դեպքում *կոչական,* մյուսում՝ *լրացում.*

«Բարև կուտամ, չես առնի, Ոտքիդ կոխած հողն եմ, յա՛ր,
Սիրտս, *անխի՛ղճ,* մի ճմլի, Չ՞է որ միջին դուն ես, յա՛ր (Ավ.Իս.):

Այստեղ *անխիղճ* բառը *կոչական* է, ունի շեշտ և տրոհված է, բայց եթե այն արտասանենք անշեշտ և առանց տրոհման, կընկալվի որպես *ձևի պարագա՝* «...սիրտս *անխիղճ մի ճմլի...»:*

Կամ՝ *«Ուստա՛,* Սկրտիչը քեզ է կանչում» (այստեղ կոչական է), իսկ մեկ այլ արտաբերմամբ դառնում է *գոյական որոշիչ՝ «Ուստա Սկրտիչը* քեզ է կանչում»: Նույնն է նաև «Պարո՛ն, Հակոբն այսօր շուտ գնաց»: Առանց շեշտի և ստորակետի *պարոնը* նույնպես կդառնա *գոյական որոշիչ՝* «Պարոն Հակոբն այսօր շուտ գնաց»:

8. Հնչերանգն ու տրամաբանական շեշտը կարող են փոխել նաև նախադասության անդամները. «Կնոջ համբույրին *էլ* չեմ հավատա» (այլևս), և «Կնոջ *համբույրին էլ* չեմ հավատա» (նույնպես չեմ հավատա): Կամ՝ «Երեխան գնում էր՝ *երջանիկ մոր* ձեռքը բռնած» կարելի է երկու իմաստով արտաբերել՝ *որոշիչ և ձևի պարագա:* Նույնն է նաև՝ *«Խաղով տարված* երեխաները չնկատեցին դասղեկի ներս մտնելը»:

9. Ասենք նաև, որ տրամաբանական շեշտի և հատկապես հնչերանգի շնորհիվ հաճախ նախադասության մեջ նախորդ բառի վերջին վանկի բաղաձայնը «թռիչք է կատարում» և միանում հաջորդ բառի ձայնավորով սկսվող առաջին վանկին, և դրանով ավելի է թեթևանում բառակապակցության ու նախադասության արտաբերումը. օրինակ՝

Հայոց աշխարհ, հայոց երկիր, հայոց հող,
Այս աշխարհում քո կրծքի վրա ապրեմ թող (ՍԿ):

Այստեղ *հայոց* բառի վերջին *ց* բաղաձայնը հեշտությամբ «ցատկում» և միանում է *աշխարհ* բառի *ա* և *երկիր* բառի *ե* ձայնավորների հետ, և տողն ավելի թեթև է արտասանվում՝

Հայո ցաշխարհ, հայո ցերկիր, հայոց հող...

Նկատելի է, որ նույն *ց-ն հող* բառի *հ* բաղաձայնին չի միանում (ուրեմն նման «թռիչք» բաղաձայնների հետ չի կատարվում, ինչպես՝ Հայոց վիշտը անհուն մի ծով...» (ՀԹ):

Այսպիսով, դժվար չէ նկատել, որ հնչերանգն ու տրամաբանական շեշտը սերտորեն առնչվում են իրար հետ և շարադասության հետ միասին ձևավորում են նախադասությունը և բացահայտում նրա իմաստային նրբերանգները:

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

§ 14. Նախադասություն և խոսք կառուցելու համար միայն շարահյուսական կապակցության միջոցները դեռ բավական չեն. այդ նպատակին են ծառայում նաև շարահյուսական կապակցության *եղանակները*, իսկ դրանք 4-ն են՝ *համաձայնություն, առդրություն, խնդրառություն (կառավարում) և շարահարություն ու զոդում:*

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

§ 15. Համաձայնությունը կապակցման այն եղանակն է, որի դեպքում նախադասության (բառակապակցության) *գերադաս* բառը (անդամը) պահանջում է, որ *ստորադաս* բառը (անդամը) իրեն համապատասխանի երկուսի համար ընդհանուր քերականական կարգերով՝ *դեմքով, թվով, հոլովով:*

Այս դեպքում կապակցության անդամներից մեկը ստանում է մյուսի քերականական հատկանիշները կամ ձևը:

Ի տարբերություն գրաբարի, ռուսերենի, անգլերենի, ֆրանսերենի և ուրիշ լեզուների՝ ժամանակակից հայերենի համաձայնության շրջանակները բավականին նեղացել են. այստեղ համաձայնում են միայն *ենթական ու ստորոգյալը* և *բացահայտիչն ու բացահայտյալը:*

Ժամանակակից հայերենում *ենթական ու ստորոգյալը* համաձայնում են *թվով*՝ (Ծառը ծաղկեց: Ծառերը ծաղկեցին): Դիմանիշ դերանուններով արտահայտված ենթակաների դեպքում համաձայնում են նաև *դեմքով* (Մի հավք զարկի ես մի օր: Մի հավք զարկեցիր դու մի օր: Մի հավք զարկեց նա մի օր):

Այստեղ հարց է առաջանում. եթե համաձայնությունը գերադաս և ստորադաս անդամների կապակցություն է, ապա *ենթակա-ստորոգյալ* հարաբերության մեջ ո՞րն է այդ ստորադասական կապը, չէ՞ որ դրանք համազոր անդամներ են: Այդ հարցի պատասխանը տալիս է Մ.Աբեղյանը. չմոռանանք, որ նա նախադասության կենտրոնը բայ-ստորոգյալն է համարում: Մյուս լրացումները, դրանց թվում նաև *ենթական* համարում է բայի լրացում[9]:

Արդի հայերենում համաձայնությունը ամբողջությամբ դրսևորվում է բացահայտչի և բացահայտյալի միջև. այստեղ բացի թվային ու դիմային համաձայնությունից, առկա է նա *հոլովական համաձայնությունը,* որը Մ.Աբեղյանը կոչում է *ներունակությամբ զուգորդում*: «Այն ժամանակ Գյոթեն՝ խոսքի արքան, ճանապարհից ելավ ակնածանքով» (ՆՋ): «Երեխաները ուրախ բացականչություններով ողջունեցին մեզ՝ զբոսաշրջիկներիս» (ԳԹ):

---

[9] Տե՛ս *Մ.Աբեղյան,* նշվ.աշխ., էջ 395:

§ 16. Առդրական կապակցության դեպքում լրացումը փոփոխություն չի կրում գերադաս անդամի իմաստային կամ քերականական հատկանիշների պահանջով. *լրացումը կախման մեջ չէ գերադաս անդամից,* դրանք հարաբերության մեջ են մտնում *առանց քերականական կախվածության,* առանց ձևային փոփոխության, այլ սոսկ իրենց իմաստով: Առդրության դեպքում լրացնող անդամը ոչ մի հոլով չի ուենում և չի լինում կապային, այսինքն՝ լրացումն արտահայտվում է *չթեքվող խոսքի մասերով:* Բերենք առդրական կապակցության հնարավոր դեպքերը:

Առդրություն՝ *ածականով* (ալպիական բուսականություն, գեղեցիկ աղջիկ, կարմիր մեխակ):

Թվականով (հինգերորդ շարասյուն, քսանհինգ ուսանող, երկուական գիրք):

Չհոլովվող դերանուններով (այս գիրքը, ինչքան ծաղիկներ, ինչպիսի հայացք):

Մակբայներով (արագ վազել, դանդաղ խոսել, բարեկամաբար վերաբերվել):

Հարակատար դերբայով (ծաղկած ծառ, հոգնած բանվոր, մաշված գիրք):

Ենթակայական դերբայով (ձայնագրող մեքենա, խոսող ծուկ, երգող թռչուն):

Համակատար դերբայով (գրելիս չշտապել, կարդալիս սխալվել, ուտելիս չխոսել):

Առդրական *լրացյալները* կարող են լինել՝

Գոյականներ (խելացի պատասխան, հարգված մարդ, առաջին կուրս, այսքան ծաղիկ, երգող թռչուն, արագ ընթացք:

Ածականներ (արտակարգ խելոք, չափազանց բարձր, անչափ սիրելի, միշտ գրավիչ):

Թվականներ (մոտավորապես տասը, համարյա երեսուն, շուրջ հարյուր, գրեթե հազար):

Դերբայներ (հապճեպ կազմակերպել, կրկին ողջունել, դարձյալ համոզել, քիչ խոսել, չափազանց հոգնած, շատ աշխատող):

Մակբայներ (չափազանց դանդաղ, բավականին արագ, համարյա բարեկամաբար):

Որոշ դերանուններ (համարյա բոլորը, գրեթե յուրաքանչյուրը, այս ամենը):

Առդրության դեպքում չպետք է մոռանալ մի կարևոր հանգամանք. *դա շարադասության դերն է:* Ժամանակակից հայերենում սովորաբար լրացումը դրվում է լրացյալից առաջ (բացի բացահայտչից), շատ դեպքերում, եթե փոխվում է լրացման տեղը, այն արդեն դառնում է այլ գերադաս անդամի լրացում. այսպես՝ *«Խելացի* երեխայի պատասխանը դուր եկավ բոլորին» և «Երեխայի *խելացի* պատասխանը դուր եկավ բոլորին»: Առաջին նախադա-

սության մեջ *խելացի* որոշիչը լրացրել է *երեխա* գերադաս անդամին, իսկ երկրորդում՝ *պատասխան* գերադաս անդամին: Այդպես էլ՝ *«Առաջին* երեխայի պատասխանը գոհացուցիչ չէր» և «Երեխայի *առաջին* պատասխանը գոհացուցիչ չէր»:

Ժամանակակից հայերենում առդրությունը հատուկ է

1. *Որոշիչ + որոշյալ* կապակցություններին (*Բարծր* ծառի *դեղնած* տերևները թափվում էին *ասֆալտապատ* մայթերին ու *ցեխոտ* փողոցներին):

2. *Ստորոգյալ + պարագա (Շատ* էին խոսում, *Բարծր* էին երգում: *Դանդաղ* էին քայլում: *Հուզված* էր երգում):

ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆ (ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՎԱՐՈՒՄ)

§ 17. Խնդրառությունը, նույնն է նաև՝ կառավարումը կամ վարումը, շարահյուսական ստորադասական կապակցության այն եղանակն է, որի դեպքում լրացումը (ստորադաս անդամը) գերադաս անդամի թելադրանքով դրվում է որևէ հոլովով կամ ձևավորվում է կապերի միջոցով՝ «Խոսում էին Լոռվա հին-հին քաջերից» (քաջերի մասին), «Գիրքը դրված է սեղանին (սեղանի վրա»): «Ձուկը լողում է ջրում» (ջրի մեջ):

Եթե խնդրառությունը արտահայտված է հոլովածևերով, կոչվում է անմիջական, իսկ եթե արտահայտված է կապերով, կոչվում է միջնորդավորված կամ կապային:

Հատուկ նշելի է, որ կառավարման կապակցման եղանակը հատուկ է ոչ միայն բայերին, այլև այլ խոսքի մասերի, եթե դրանցում կա կախվածության հարաբերություն՝ արտահայտված հոլովածևերով, ինչպես՝ մսով կարկանդակ, քանով ապուր, մետաքսից զգեստ, քարից տուն, պողպատից ամուր, կամքից թույլ, բնավորությամբ ուժեղ: Խնդրառական եղանակով են կապակցվում նաև բայանուն գոյականների լրացումները՝ ինչպես՝ հանդիպում այգում, առևանգում հարեմից, զրույց որևէ թեմայով, հարցում ընկերներից և այլն:

Հատկացուցիչ-հատկացյալի կապակցությունը նույնպես խնդրառություն է, քանի որ հատկացուցիչն արտահայտվում է սեռական-տրական հոլովով (ուսանողի գիրքը, երեխայի պատասխանը, նկարչի կտավը):

Խնդրառական կապը ավելի ակնառու է հատկապես այն դեպքում, երբ հատկացուցիչն արտահայտում է խնդրային հարաբերություն. այս դեպքում հատկացյալը անպայման բայանուն է լինում, ավելի ակտիվություն է ցուցաբերում, և գործողությունն անցնում է հատկացուցիչ առարկայի վրա, օրինակ՝ պլանների ծախողում, հարցերի լուծում, բնակարանի կահավորում և այլն:

Մ.Աբեղյանը նույնպես հատկացուցիչ-հատկացյալի կապակցության մեջ վարման՝ կառավարման (խնդրառական) եղանակ է տեսնում: Ուրեմն՝ հատկացուցիչ-հատկացյալի կապակցության եղանակը առդրությունը չէ, ինչպես դիտում են որոշ լեզվաբաններ:

Այժմ տեսնենք, թե ինչով է պայմանավորված խնդրառությունը:

ա) Խնդրառության համար ամենից առաջ կարևոր նշանակություն ունի բառի քերականական՝ խոսքամասային իմաստը: Օրինակ՝ գոյականով արտահայտված գերադաս անդամը սովորաբար առնում է որոշչային լրացումներ, բայով արտահայտված գերադաս անդամը՝ խնդիր ու պարագա լրացումներ: Այսինքն՝ լրացման քերականական ձևը կախված է լրացյալի խոսքամասային իմաստից. գերադաս բառի խոսքամասային իմաստը փոխվելիս փոխվում է նաև նրա լրացման ձևը, երբեմն էլ պաշտոնը. այսպես՝

խնամել երեխային (այգին) → երեխայի (այգու) խնամքը,

վերանորոգել բնակարանը → բնակարանի վերանորոգումը:

Այստեղ զուգորդության տարբերակի գերադաս անդամները բայեր են՝ իրենց խնդիր լրացումներով:

բ) Բայի *բառային իմաստը* նույնպես կարևոր է խնդրառության համար. այս դեպքում գերադաս բառի (բայի) բառիմաստով է պայմանավորված ստորադաս բառի ձևը, երբեմն էլ՝ պաշտոնը: Սա շատ լավ երևում է հատկապես *բազմիմաստ* բառերի դեպքում: Միևնույն բառը, տարբեր իմաստներով գործածելիս, տարբեր ձևի լրացումներ է ընդունում, թեև նրա խոսքամասային իմաստը չի փոխվում: Օրինակ՝ *աշխատել-ը* չեզոք սեռի բայ է. այն պահանջում է ներգոյականով տեղի պարագա՝ (աշխատել դպրոցում), գործիականով և տրականով ժամանակի պարագա (աշխատել գիշերով, ամռանը), *հիմունքի պարագա (աշխատել ըստ կարգադրության)*, կարող է նաև *ուղիղ խնդիր* պահանջել («*Դաց* աշխատելու համար ինձ գցեցի Բաքու» - Շիրվ.):

Պաշտպանել բայը մի քանի խնդիրներ ու պարագաներ է պահանջում (ի՞նչը, ումի՞ց, ինչո՞վ, ինչպե՞ս), այդպես էլ՝ *ուղարկել* բայը մի քանի խնդիրներ ու պարագաներ է պահանջում (ծանրոցն ուղարկել, Երևանից ուղարկել, ինքնաթիռով ուղարկել, Մոսկվա ուղարկել, եղբոր միջոցով ուղարկել, երկու օր հետո ուղարկել, սիրով ուղարկել և այլն): Ինչպես կտեսնենք ներքևում, այսպիսի խնդրառությունը կոչվում է *թույլ խնդրառություն*, որովհետև նույն գերադաս բառը մի քանի ստորադաս լրացումներ է ընդունում):

գ) Խնդրառության հետ կապված է նաև բառի *ներխոսքամասային* իմաստը, որն այս դեպքում կախված է բայի ներքին իմաստից՝ *սեռից*. հայտնի է, որ *ներգործական* սեռի բայերը հիմնականում *ուղիղ խնդիրներ* են պահանջում (չի բացառվում նաև այլ լրացումներ ստանալը), բայց ուղիղ խնդիր լրացում ստանալը այդ բայերի անկապտելի պահանջն է (սիրել *երեխային - երկիրը*, հարգել *մեծերին - կարգուկանոնը*, մշակել *այգին*, վերանորոգել *բնակարանը*, ուղղել *սխալը*, ջրել *ծառերը*, կարդալ *գիրքը* և այլն): Մի շարք բայեր կան, որոնք բացառական հոլովով դրվող լրացումներ են պահանջում (խուսափել, հեռանալ, անջատվել, փախչել, բաժանվել, խորշել զզվել), բայեր էլ կան, որ տրական հոլովով լրացումներ են պահանջում (մոտենալ, դիպչել անդրադառնալ, նայել, հանգել, կպչել հասնել և այլ):

Այստեղ արդեն գործ ունենք *ուժեղ խնդրառության* հետ, որի դեպքում բայի՝ այս կամ այն հոլովով լրացում ստանալը պարտադիր է, *թույլի դեպքում* այդ պարտադրանքը չկա:

ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆ

§ 18. Քանի որ խնդրառությունը առաջին հերթին հատուկ է բայերին, նախ խոսենք բայական խնդրառության մասին: Այն լինում է *ուժեղ և թույլ*:

ՈՒԺԵՂ ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆ կոչվում է այն խնդրառությունը, որի դեպքում լրացյալը՝ բայը, պահանջում է որոշակի հոլովով կամ կապով ձևավորված խնդիրներ:

Ուժեղ խնդրառությամբ են պայմանավորված՝

ա) *Ներգործական* սեռի բայերը, որոնց խնդիրները դրվում են ուղղական-հայցական և տրական-հայցական հոլովներով (հարգել *ընկերոջը*, մշակել *հողը*, դատապարտել վատ *արարքը*):

բ) *Կրավորական* սեռի բայերը, որոնց խնդիրները դրվում են բացառական և գործիական հոլովներով (սիրվել *ընկերներից*, հարգվել *բարեկամներից*, կոտրվել *քամուց*, ծածկվել *ծյունով*, շրջապատվել *երեխաներով*):

գ) *Պատճառական 3Ն ածանց* ունեցող բայերի խնդիրները նույնպես դրվում են ուղղական-հայցական և տրական-հայցական հոլովներով (հեռացնել մարզիկին → գնդակը, մոտեցնել երեխային → աթոռը, աշխատեցնել բանվորին → մեքենան):

դ) Ուժեղ խնդրառությունը պայմանավորված է նաև բայերի իմաստներով. քանի որ *հեռանալ*, *անջատվել*, *բաժանվել*, *փախչել*, *հիասթափվել* և նման բայերի մեջ կա *անջատման* իմաստ, դրա համար էլ այդ բայերը պահանջում են *բացառականով* դրվող խնդիրներ, իսկ *մոտենալ*, *դիպչել*, *հանգել*, *կպչել*, *անդրադառնալ*, *նայել*, *հասնել* և նման բայերը իմաստով հանգման խնդիրներ են պահանջում, դրանց լրացումներն էլ դրվում են *տրական* հոլովով (մոտենալ երեխային մեքենային, նայել ընկերոջը ծառին):

ե) Ուժեղ խնդրառություն ունեն նաև որոշ կապային խնդիրներ՝ խոսել ըստ օրենքի, խոսել, պատմել, զրուցել → *գործի մասին*, բարկանալ տղայի վրա:

Ասվել է, որ խնդրառությունը հատուկ է նաև *ածականներին*, *գոյականներին*, *առարկայանիշ* դերանուններին, գոյականաբար գործածված բառերին:

զ) Ուժեղ խնդրառություն են պահանջում նաև որոշ *ածականներ*, որոնց խնդիրները դրվում են դրանց արտահայտած իմաստների պահանջով: Օրինակ՝ *ուրախ և հպարտ* ածականները խնդիրներ են պահանջում *գործիական* հոլովով (ուրախ հաջողությամբ, հպարտ գործով), *ազատ* ածականը խնդիր է պահանջում *բացառական* հոլովով (հոգսերից ազատ):

է) Որոշ *գոյականներ* նույնպես լրացումներ են պահանջում որոշակի հոլովներով (*քարից* ցանկապատ, *հողից* կացարան, *համով* երեխա, *ջինսով* աղջիկ):

ը) *Բայանուն գոյականները* նույնպես տարբեր հոլովներով լրացումներ են պահանջում (զեկուցում *համագումարին*, հանդիպում *համալսարանում*):

բ) Ուժեղ խնդրառությամբ է օժտված նաև հայերենի կապերի մեծ մասը: Օրինակ՝ ուղղական-հայցական հոլովով խնդիրներ են պահանջում *ի, առ, դեպի, մինչև, իբրև, նախքան* կապերը, սեռական-տրականով՝ *մոտ, վրա, դիմաց, մասին, ներքո, շուրջ, նկատմամբ, համուն, օգտին, ըստ* և այլն, բացառականով՝ *բացի, զատ, հեռու, առաջ, հետո, սկսած, ի վեր, վերև, ներքև և այլն:*

ժ) Որոշ հարադրավոր բայեր նույնպես ուժեղ խնդրառություն են պահանջում (*ձեռք տալ, գլուխ տալ, աչք տալ, երես տալ* (տրական), ձեռք քաշել, հեռու մնալ (բացառական) և այլն:

ԹՈՒՅԼ ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆ. Թույլ խնդրառության դեպքում լրացյալը չէ, որ թելադրում է լրացման (խնդրի) հոլովը, ձևը, այսինքն՝ լրացումը դրվում է ոչ թե լրացյալի պարտադիր պահանջով, այլ ըստ տվյալ կապակցության (նախադասության) ձևավորման բովանդակության ու պահանջի: Օրինակ՝

Գարունդ հայերեն է գալիս,
Ձյուներդ հայերեն են լալիս,
Հայերեն են հորդում, ջրերդ (ՀՍ):

Այստեղ *գալիս է, հորդում են, լալիս են* բայ-ստորոգյալները կարող են մի քանի խնդիրներ ու պարագաներ պահանջել (ինչո՞վ են գալիս, ինչպե՞ս են գալիս, ե՞րբ են գալիս, ո՞ւր են գալիս և այլն), նույնը կարելի է նաև մյուս բայերի մասին ասել, այսինքն՝ այդ բայերի խնդրառությունը թույլ է, ոչ պարտադիր:

Վահան Տերյանի հետևյալ նախադասության մեջ, թվում է, թե *իջնել* բայը ուժեղ խնդրառություն պիտի ունենա, որովհետև պահանջում է տեղի պարագա՝ «Մարգերում *իջավ* թովիչ կիսամութ», սակայն այս բայը ուժեղ խնդրառություն չունի, որովհետև միայն ներգոյականով դրվող տեղի պարագայի խնդրառություն չէ, որ պահանջում է, քանի որ *կիսամութի իջնելը* պահանջում է նաև բացառականով խնդիր (ինչի՞ց) կամ գործիականով (ինչո՞վ) կամ ինչի՞ վրա, ինչպե՞ս և այլն:

Բայերից կախված ժամանակային խնդրառությունը նույնպես թույլ է. օրինակ՝ նա աշխատեց ամռանը - երեկվանից – մի տարի– երկու ժամով և այլն:

Թույլ խնդրառության մասին Գ.Ջահուկյանը գրում է. «Թույլ կոչվում է այն կառավարությունը, որի դեպքում լրացյալների հոլովական ձևավորումը ավելի շատ կախված է նրանց գործառությունից, շարահյուսական դերից ու պաշտոնից, այսինքն՝ լրացյալի և լրացման զուգորդումը ազատ բնույթ է կրում, լրացյալը կարող է զուգակցվել տարբեր հոլովների ու կապվող խնդիրների հետ. *գնալ* //ընկերներով//տուն//քաղաքից»[10]:

Ճիշտ են նկատել շատ ուսումնասիրողներ, որ ուժեղ և թույլ խնդրառությունների մեջ *հինական պարիսպ չկա,* որ դրանք որոշ իմաստով պայ-

[10] Տե՛ս *Գ.Ջահուկյան,* նշվ. աշխ., էջ 424-425:

մանական են և շատ դեպքերում որոշակիորեն չեն սահմանազատվում: Որ իսկապես ուժեղ և թույլ խնդրառությունները հարաբերական հասկացություններ են, երևում է նաև արդեն բերված օրինակներից, սակայն բերենք ևս մեկ օրինակ: Այսպես՝ *հեռանալ* բայն ունի ուժեղ խնդրառություն, որովհետև իր բայական իմաստով բացառական հոլովով անջատման խնդիր կամ տեղի պարագա է պահանջում (հեռանալ *ընկերոջից* → *քաղաքից*), բայց չէ՞ որ նույն բայը պահանջում է նաև կապական խնդրառություն (հեռանալ *դեպի սարերը* → *մինչև նշված սահմանագիծը*), բացի դրանից, այն պահանջում է նաև միջոցի խնդիր կամ ձևի պարագա (հեռանալ *մեքենայով*, հեռանալ *ոտքով*), պահանջում է նաև ժամանակի պարագաներ՝ տարբեր հոլովներով (հեռանալ *գիշերով* → *ցերեկը* → *երկու շաբաթով*), ինչպես նաև միասնության պարագա (հեռանալ *ընկերներով* → *ընկերոջ հետ*), և այսպես կարելի է բազմաթիվ օրինակներով ցույց տալ, որ խնդրառության *ուժեղ* կամ *թույլ* լինելը պետք է որոշել տվյալ գերադաս անդամի (այս դեպքում՝ բայի) *առաջնային իմաստով*: Այսպես՝ պատճառական ածանց ունեցող բայերն ունեն ուժեղ խնդրառություն, որովհետև նախ պահանջում են *ուղիղ խնդիր*, թեև կարող են ունենալ նաև բազմաթիվ այլ խնդիրներ ու պարագաներ՝ *խմեցնել կաթ* (ո՞ւմ, ինչո՞վ, ե՞րբ, որտե՞ղ, ինչպե՞ս, ինչքա՞ն և այլն):

Խնդրառությունը սերտորեն կապված է նաև *արժույթի հետ*.

ԱՐԺՈՒՅԹ

§ 19. *Ի՞նչ է արժույթը*: Արժույթը մտնում է խնդրառության տիրույթի մեջ և հիմնականում հատուկ է բային: Նախ ասենք, որ արժույթի գաղափարը լեզվաբանության մեջ մտցրել է կառուցվածքային լեզվաբանության հիմնադիր, Պրագայի լեզվաբանական դպրոցի անդամ Լ.Տենիերը: Նա արժույթ ասելով հասկանում է բայի կապակցելիությունը ենթակայի և խնդիրների հետ: Հայ լեզվաբանության մեջ արժութի գաղափարը ներմուծել է Գ.Ջահուկյանը: Ըստ նրա՝ արժույթը որոշում է *բայի էությունը*, այսինքն՝ բայը ինչ հարաբերության մեջ կարող է մտնել ենթակայի, խնդիրների ու պարագաների հետ: Նա արժույթը սահմանում է այսպես՝ *«Արժույթը բայի կապակցելիությունն է ենթակայի, խնդիրների ու պարագաների հետ»*[11]: Եվ բայերի հետ կապակցված միավորների բնույթից ելնելով էլ նա բայերին վերագրում է հետևյալ հատկանիշները.

ա) ենթակա ստանալը կամ չստանալը:

բ) ստորոգելի կամ ստորոգելիական խնդիր՝ վերադիր ստանալը կամ չստանալը:

գ) խնդրառություն (տարբեր տիպի խնդիրներ) ստանալը կամ չստանալը, ըստ որում, սրա մի դրսևորումը կլինի *անցողականությունն և անանցո-*

[11] *Գ.Ջահուկյան*, նշվ. աշխ., էջ 466-467:

դականություն՝ ուղիղ խնդիր ստանալը կամ չստանալը:

դ) պարագառություն (տարբեր տիպի պարագաներ ստանալը կամ չստանալը):

Ըստ բայերի հետ կապվող տարբեր բնույթի միավորների (լրացումների) քանակի էլ, Ջահուկյանը բայերը բաժանում է մի քանի արժույթների.

1. *Զրոարժույթ* կամ *արժույթազուրկ* բայերը *միադիմի* բայերն են, որոնք ենթականեր էլ չեն ստանում՝ *ամպել, աննշմարել, մթնել, ցրտել, լուսանալ, ծյունել*, սրանց թվում են նաև բայական որոշ զուգորդումներ՝ *շոգ անել, ցուրտ անել, աննշմարև գալ, ծյուն դնել, մութն ընկնել, կայծակին տալ* և այլն: Ջահուկյանը սրանց ոճական տարբերակներ է համարում հետևյալ բաղադրյալ ձևերը՝ *շոգ է → շոգում է → շոգ է անում, տաք է → տաքանում է → տաք է անում, աննշմարև է → աննշմարևում է → աննշմարև է գալիս → աննշմարև է մաղում, մութ է → մթնում է → մթնեց → մութն ընկավ:*

2. *Միարժույթ են*՝

ա) վերացական բայերը, որոնք ստորոգելիական վերադիրների հետ ստորոգյալներ են դառնում՝ *եմ, դառնալ, թվալ, համարվել, հանդիսանալ, ձևանալ, մնալ, լինել, երևալ, կոչվել, առաջադրվել* (խելոք ձևանալ, պատգամավոր առաջադրվել, մարդ մնալ, գոլորշի դառնալ: «Այն օրվանից դրա համար կոչվեց *Աղթամար*» (ՀԹ):

բ) Միարժույթ են նաև մի շարք չեզոք սեռի (անանցողական) բայեր, որոնք կունենան հետևյալ մասնակաղապարները. *Բայ+տրական հոլովով գոյական* (ենթարկվել օրենքին, հնազանդվել ծնողներին, ընտելանալ ցրտին), *Բայ+բացառական* ամաչել ընկերներից, դժգոհել օրենքներից, փախչել բանտից), *Բայ+ գործիական* (տարվել ընկերներով, զբաղվել մի գործով, հրճվել երեխաներով), *Բայ +ներգոյական* (թերանալ իր գործում, խարխափել խավարում, հմտանալ սպորտում):

Նշված մասնակաղապարների հետ կարող են հանդես գալ նաև *կապեր*, ինչպես՝ *հաշտվել մեկի հետ, բարկանալ մեկի վրա, խուսափել մեկից, խոսել նրա մասին և այլն:*

գ) *Միարժույթ* են նաև մի շարք ներգործական սեռի (անցողական) բայեր, որոնց մասնակաղապարը կլինի՝ *Բայ+ուղիղ խնդիր* (հարգել մեծերին, սիրել եղբորը → արվեստը, կարդալ հոդվածը, խմբագրել թերթը):

3. *Երկարժույթ բայերը* սովորաբար պետք է պահանջեն 2 լրացում՝ տարբեր հոլովներով. այդ բայերը կարող են լինել թե՛ չեզոք և թե՛ ներգործական սեռի: Նախ բերենք չեզոք (անանցողական) բայերի օրինակներ՝ հետևյալ մասնակաղապարներով. *Բայ+գործիական+տրական (վերարկուով պառկել մահճակալին, քարով խփել շանը): Բայ+բացառական+գործիական (քաղաքից հեռանալ մեքենայով, վերևից իջնել պարանով):*

Ներգործական (անցողական) բայերի մասնակաղապարներ՝ *Բայ+ուղիղ խնդիր + մատուցման խնդիր (գիրքը նվիրել ուսանողին, նամակը հանձնել տիրոջը): Բայ+ուղիղ խնդիր+բացառական (շագանակներ հանել կրակից, մարդուն փրկել աղետից), Բայ+ուղիղ խնդիր+գործիական (կաղինը ատամով կոտրել, նամակը մատիտով գրել)*: Բայ + ուղիղ խնդիր + ներ-

գոյական, (*նման* մեջ *կապով*), օրինակներ՝ բաժակն ընկղմել *ջրում (ջրի մեջ)*, գդալը դնել *ափսեում (ափսեի մեջ)*:

4. *Եռարժույթ բայերը* պահանջում են 3 լրացումներ, որոնք կունենան բազմաթիվ մասնակաղապարներ. (*կաթը բաժակով խմեցնել երեխային, նամակը փոստով ուղարկել ընկերոջը, քրտինքը երեսից սրբել սրբիչով* և այլն:

Սրանցից բացի, խոսվում է նաև *բազմարժույթ* բայերի մասին, որոնք կարող են ստանալ 4,5,6 լրացումներ:

Սակայն, ինչպես ասվեց *ուժեղ և թույլ* խնդրառությունների մասին, որ *դրանք լիարժեք լինել գրեթե չեն կարող*, նույնը պետք է ասել նաև բայերի արժույթների վերաբերյալ, որ այդ արժեքները այնքան էլ կայուն չեն, մանավանդ, որ *պարագաառությունը* նույնպես մտնում է խնդրառության մեջ: Թեև ասվածի վերաբերյալ օրինակներ բերվել են, բայց բերենք ևս երկուսը.

Ջերմակալելը միարժույթ բայ է, բայց այն կարող է ունենալ մի քանի լրացումներ՝ «Կեսգիշերին հանցագործին ձերբակալել գնացքում՝ գողություն անելիս»: Կամ *հանելը* երկարժույթ բայ է (մեխը աքցանով հանել), մինչդեռ մեխը կարելի է նաև շրջանակից զգուշությամբ հանել և այլն:

Եզրակացությունը պարզ է. *բայական արժույթների վերաբերյալ նման դասակարգումներն ու սահմանազատումները խիստ հարաբերական են*, և լավագույն դեպքում կարելի է բայերը դասել *զերոարժույթ և բազմարժույթ* դասակարգումներով:

ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶՈՂՈՒՄ

§ 20. Շարահյուսական այս կապակցությունը կարելի է թե՛ *միջոց* համարել և թե՛ *եղանակ*: Ռ.Իշխանյանը այն դիտում է որպես եղանակ: Այս եղանակը պարզ նախադասության մեջ բառերի և բարդ նախադասությունների բաղադրիչների կապակցությունների հարաբերությունն է: Այդ կապակցությունը երկու հարաբերությամբ է տեղի ունենում. մի դեպքում՝ *զոդվածով*, մյուս դեպքում՝ *շարահարությամբ*:

Զոդվածով կապակցության դեպքում նախադասության համազոր անդամները իրար հետ կապվում են համադասական շաղկապներով. սա ամենատարածված եղանակն է, որը հատուկ է ինչպես գեղարվեստական, այնպես էլ գիտական ոճերին: Ահա երկու օրինակ.

> Մանուշակներ ոտքերիս ու շուշաններ ձեռքերիս,
> Ու վարդերը այտերիս, ու գարունը կրծքիս տակ,
> Ու երկինքը հոգուս մեջ, ու արևը աչքերիս,
> Ու աղբյուրները լեզվիս՝ սարից իջա ես քաղաք... (ՀՇ):

Ֆիզիկան ու քիմիան բնական գիտություններ են:

Թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքում քիչ չեն հանդիպում նաև այնպիսի նախադասություններ ու կապակցություններ, որոնցում համազոր, հա-

մադաս անդամները զուգորդվում են առանց շաղկապների. այս եղանակը *շարահարությունն է*, նման համազոր անդամները արտաբերվում են թվարկման հնչերանգով. այսպես՝

...Ծաղկել ես սարում, անտառում, արտում... (ՎՏ):

Օտար, ամայի ճամփեքի վրա Իմ քարավանս մեղմ կողողանջե...(Ավ.Իս.):

Նշելի է, սակայն, որ լեզվին ավելի հարազատ է, երբ այս երկու եղանակները միասին են հանդես գալիս նույն նախադասության մեջ, մանավանդ, երբ իրար կողքի լինում են մի քանի համադաս անդամներ, նրանցից վերջինը սովորաբար լինում է զոդվածով.

Ջուգել ես նորից դաշտ, անտառ ու լեռ... (ՎՏ):

Քո երգերի մեջ գութանի վար է,
Ծիրանի ծառ է ու խնկի ծառ,
Սիրավոր լոր է ու Սոնա յար է,
Թուխ այտի խալ է ու ծնկի ծալ (ՀՍ):

Ասվեց, որ շարահարությամբ ու զոդվածով կապակցվում են նաև բարդ նախադասությունների առանձին բաղադրիչները: Բերենք մի երկու օրինակ՝ մանրամասնությունները թողնելով «Բարդ նախադասություն» բաժնին: «Սութն ընկավ, և աստեղը հալվեցին»: «Գարունը եկավ, հավքերը եկան, Սարեր ու ձորեր ծաղիկներ հագան» (ՀԹ):

«Էլի գարուն կգա, կբացվի վարդը,
Սիրեկանը էլի յարին կմնա,
Կփոխվեն տարիքը, կփոխվի մարդը,
Բլբուլի երգը էլի սարին կմնա» (ԵՉ):

ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 21. Շարահյուսական մակարդակի միավորներ են նաև բառակապակցությունները, որոնք մի դեպքում հանդես են գալիս նախադասության կազմում, որպես նրա մի բաղադրյալ անդամ, մյուս դեպքում՝ որպես առանձին, ինքնուրույն բառական միավորներ՝իբրև բաղադրյալ տերմիններ, անվանումներ, բնութագրումներ վերնագրեր, ցուցանակներ:

Երկու կամ ավելի լիիմաստ, ստորադասական հարաբերություն ունեցող, նախադասության մեջ մեկ անդամի դեր կատարող, անվանական արժեք ունեցող բառախումբը կոչվում է բառակապակցություն:

Սահմանումից որոշակիորեն երևում է, որ

ա) Բառակապակցությունը միաբառ լինել չի կարող. այն կազմված է լինում երկու (ծիրանի ծառ, աքիլլեսյան գարշապար) կամ ավելի բառերից (Երևանի պետական համալսարան, Ազգային ժողովի նախագահի պաշտոնակատար) բառերից, հետևաբար ըստ կազմության կոչվում է *պարզ՝ երկանդամ և բազմանդամ:*

բ) Բառակապակցություն կազմող միավորները պետք է լինեն *նյութական* բովանդակություն ունեցող խոսքի մասեր. կապերը, շաղկապները, վերաբերականներն ու ձայնարկությունները բառակապակցության անդամներ չեն համարվում:

գ) Բառակապակցության անդամները պետք է իրար նկատմամբ գտնվեն ստորադասական հարաբերության մեջ. անդամներից մեկը պիտի լինի *գերադաս,* իսկ մյուսը՝ *ստորադաս.* Բազմաբաղադրիչ բառակապակցություններում սովորաբար աստիճանավորված լրացումներ են լինում, որոնք, իրար լրացնելով, ստորադասվում են գերադաս անդամին. օրինակ՝ «Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկանի տեղակալի առաջարկը սիրով ընդունվեց», այստեղ գերադաս անդամն է *առաջարկը,* որին լրացնում է *տեղակալի,* սրան էլ՝ *դեկանի,* ապա՝ *ֆակուլտետի,* սրան՝ *բանասիրական* և *համալսարանի,* ապա՝ *պետական,* նոր միայն *Երևանի:* Այստեղ տեղին է ընդգծել, որ բառակապակցությունները *համադաս* լինել չեն կարող, ինչպես ընդունում են ռուս և հայ մի շարք լեզվաբաններ: (Տարիներ առաջ մենք նույնպես ընդունում էինք այդ տեսակը[12], բայց մեր հետագա ուսումնասիրություններում համոզվեցինք, որ նման տեսակետը ճիշտ չէ):

Համադասական բառակակապակցություններ ընդունողները որպես օրինակներ բերում են այսպիսի կառույցներ. «Աշակերտը գնեց *գիրք, տետր, թուղթ, գրիչ* և գրենական այլ պիտույքներ»: Այստեղ միայն *գրենական պիտույք-ն* է բառակապակցություն, իսկ *գիրք, տետր, թուղթ, գրիչ* բառերը նախադասության համազոր անդամներ են, որոնք առանձին-առանձին մեկ գերադաս անդամ ունեն, այն է՝ *գնեց.* այս դեպքում էլ առկա է ստորոգումը, ու-

[12] Տե՛ս մեր Ժամանակակից հայերենի պարզ նախադասության շարադասությունը, Ե., 1976, էջ 116-117:

րեմն գործ կունենանք նախադասության հետ: Կամ եթե դրանք նախադասության կազմում են հանդես գալիս, նույնպես բառակապակցություններ համարվել չեն կարող, ինչպես՝ կարմիր, կապույտ, դեղին ծաղիկներ, զբաղվել սպորտով, երաժշտությամբ, նկարչությամբ:

Եզրակացությունը պարզ է. բառակապակցություններ պետք է համարել միայն *ստորադաս* հարաբերությամբ իրար հետ կապված կառույցները[13] (այս մասին խոսվելու է ստորև):

դ) Սահմանման հաջորդ պահանջը բառակապակցության՝ նախադասության մեջ մեկ անդամի դեր կատարելն է. հաճախ նախադասության մեջ այս կամ այն անդամի պաշտոնում հանդես է գալիս ոչ թե *մեկ բառ*, այլ շարահյուսորեն իրար հետ կապված մի *քանի բառերի կապակցություն*, որպես շինանյութ՝ մեկ անդամի նշանակությամբ: Քննենք հետևյալ նախադասությունը՝ «Այս տարի մեր այգու ծիրանի ծառերը նախորդ տարվա համեմատությամբ առատ բերք տվեցին»: 12 բառերից բաղկացած այս նախադասության մեջ կա 6 բառակապակցություն՝ տարբեր անդամների պաշտոններով և մեկ ստորոգյալ՝ *տվեցին*.

այս տարի (ոչ նախորդ տարիները) – ժամանակի պարագա (ե՞րբ)
մեր այգու (ոչ ուրիշների) հատկացուցիչ (ո՞ւմ այգու),
ծիրանի ծառերը (ոչ դեղձի կամ խնձորի) - ենթակա (ինչե՞րը)
նախորդ տարվա համեմատությամբ - համեմատության պարագա
առատ բերք - ուղիղ խնդիր (ի՞նչ տվեցին).
այգու ծառերը (ոչ անտառի կամ բակի) - որոշիչ (ո՞ր ծառերը)
տվեցին – ստորոգյալ (գերադաս անդամ):

Մեկ անդամի դերով են հանդես գալիս նաև դերբայական դարձված կառույցները.

Բազմած լուսնի նուրբ շողերին,
Հովի թևին թռչելով՝
Փերիները սարի գլխին
Հավաքվեցին գիշերով (ՀԹ):

Այստեղ երկու ձևի պարագաները արտահայտված են դերբայական դարձվածներով, իսկ *սարի գլխին* տեղի պարագան՝ գոյականական բառակապակցությամբ:

Հասկանալի է, որ բառակապակցությունները իրենց ներսում շարահյուսորեն վերլուծելի են՝ ըստ գերադաս և ստորադաս անդամների. չմոռանանք, որ դերբայներին լրացնող անդամներին տրվում է *կողմնակի* անվանումը (սրանց մասին՝ իրենց տեղերում):

ե) Իսկ ինչո՞ւ է շեշտվում *անվանողական արժեք ունենալու հանգամանքը:* Հայտնի է, որ բոլոր տեսակի բառակապակցությունները, *բացի հաղորդակցական* արժեք ունեցող դարձվածներից *(Պատը ծակ է: Էս խմորը*

---

[13] Որոշ լեզվաբաններ ընդունում են նաև *կապային* բառակապակցություններ (դանակի պես, մինչև կեսգիշեր, ապրելու համար, գլխի տակ և այլն), որը, մեր կարծիքով, ճիշտ չէ:

շատ ջուր կվերցնի), զուրկ են *ստորոգման հատկանիշից,* չունեն հաղորդակցման արժեք, այսինքն՝ որևէ բան չեն հաստատում կամ ժխտում, դրանք միայն անվանում են առարկաների, հարաբերությունների, հատկանիշների հասկացություններ, այսինքն՝ համարժեք են բառերին: Բառակապակցությունը նախադասության արժեք կստանա միայն ստորոգման քերականական կարգ ստանալիս:

Համեմատենք ձախ և աջ կողմերի կառույցները.

պայծառ արև	Արևը պայծառ է (պայծառացավ):
ծաղկած ծառ	Ծառը ծաղկել է (ծաղկած է, ծաղկեց):
հալած յուղի տեղ ընդունել	Հալած յուղի տեղ մի՛ ընդունիր (չընդունես):
ուղտը գդալով ջրել	Ուղտը գդալով չեն ջրի (չջրես):

զ) Բառակապակցության մյուս հատկանիշն այն է, որ նախադասությունը կարող է արտահայտվել նաև մեկ բառով (*Սքնեց, Լուսացավ, Աշուն: Նահանջել: Այո՛: Ո՛չ),* բառակապակցությունը միաբառ լինել չի կարող:

ԲԱՌ ԵՎ ԲԱՌԱԿՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ: Իսկ ինչո՞վ են բառակապակցությունները տարբերվում բառերից.

ա) Ասվեց, որ բառակապակցությունը միաբառ լինել չի կարող:

բ) Բառը շարահյուսական մեկ նվազագույն միավոր է, իսկ բառակապակցությունը շարահյուսորեն վերլուծելի է. ունի գերադաս և ստորադաս անդամներ:

գ) Բառի հետ համեմատած՝ բառակապակցությունը ավելի է կոնկրետացնում առարկայի, երևույթի, հատկանիշի իմաստը: Այսպես, *սեղան* բառը ամենաընդհանուր իմաստ ունի, մինչդեռ եթե այն դառնում է բառակապակցության անդամ, կոնկրետանում է նրա իմաստը, ավելի որոշակի է դառնում այն՝ *կլոր սեղան, ճաշի սեղան, երկրաչափական սեղան, աշակերտական սեղան, սեղան գցել, սեղան ղեկավարել:*

դ) Բառակապակցությունը տարբերվում է նաև հարադրավոր բայերից. հարադրությունը բարդ բառ է՝ օժտված մեկ շեշտով *ձայն տալ, մոտ գալ, ներս մտնել, խաղ խաղալ, ներսուդուրս անել* և այլն, մինչդեռ բառակապակցությունը (թե՛ ազատ և թե՛ կայուն) տարբեր շեշտեր է ստանում (*եզան լեզու, գրական թերթ, կենդանի դիակ):* Իհարկե, շատ հարադիր բայեր հանդես են գալիս նաև դարձվածային արժեքով և մեկ շեշտ են ստանում՝ *քար կտրել, ծե՛ռք բռնել, գլո՛ւխ հանել, պո՛չ խաղացնել...*

ԲԱՌԱԿՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

§ 22. Բառակապակցությունների դասակարգում կարելի է կատարել 3 հայեցակարգով.

1. Ըստ կազմության՝ *երկանդամ և բազմանդամ* (սրանց մասին խոսվեց վերևում).

2. Ըստ բաղադրիչների կապակցելիության սերտության աստիճանի՝ *ազատ և կայուն.*

3. Ըստ գերադաս անդամի խոսքի մասային պատկանելության՝ *գոյականական, ածականական, թվականական, բայական, մակբայական, դերանվանական, եղանակավորող:*

ԱԶԱՏ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ: *Ազատ* բառակապակցությունները կազմվում են խոսողության ընթացքում, դրանց համար լեզվում պատրաստի կաղապարներ չկան, դրա համար էլ դրանց բաղադրիչները կարող են իրարից հեշտությամբ բաժանվել, գործածվել առանձին-առանձին, ինչպես նաև միանալ տարբեր բաղադրիչների հետ և ուրիշ բառակապակցություններ կազմել: Այսպես, օրինակ՝ *պատանի բարեկամ, առաջին կարգ, քաղցր հայացք, զբաղվել ընթերցանությամբ* բառակապակցությունների բաղադրիչները տարրալուծելի են. դրանց ստորադաս անդամները կարող են ինչպես այլ գերադաս անդամների հետ գործածվել *(երիտասարդ բարեկամ, հինգերորդ կարգ, քթու հայացք, զբաղվել երաժշտությամբ),* այնպես էլ՝ ստորադաս անդամները՝ այլ գերադաս անդամների հետ գործածվել *(պատանի բնասեր, առաջին կուրս, քաղցր ժպիտ, տարվել ընթերցանությամբ):*

Կայուն բառակապակցությունները կառուցված են լինում մշտապես իրար հետ գործածվող բաղադրիչներից և մեկ իմաստ են արտահայտում. սրանք խոսելու ընթացքում չեն կազմվում, դրանց համար լեզվում նախապես ստեղծվել են պատրաստի կաղապարներ, որոնք տարրալուծվելիս, ամբողջական կառույցը կորցնում է իր իմաստը, քանդվում են կառույցները (*առյուծի բաժին, գառան դմակ, եզան լեզու, Ազգային ժողով, ծծմբական թթու, մեջքներով սև կատու անցնել, ականջին օղ անել* և այլն):

Կայուն բառակապակցությունները բաժանվում են 2 խմբերի՝

ոչ վերաիմաստավորված և վերաիմաստավորված[*]*:*

I

ՈՉ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՎԱԾ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 23. Սրանցում ընդհանուր իմաստի փոխաբերացում չկա. կապակցության յուրաքանչյուր անդամ գործածվում է իր իսկական իմաստով, երբեմն էլ ամբողջ կառույցը անվանակոչվում է մի առարկայի նմանողությամբ. ինչպես՝ *եզան լեզու* բույսի անվանումը ժողովուրդը տվել է՝ այն իր ձևով ու կոշտությամբ նմանեցնելով *եզ* կենդանու լեզվին, իսկ *գառան դմակ* խաղողի ողկույզը նմանեցրել է *գառի դմակին:*

Կայուն բառակապակցության ոչ վերաիմաստավորված տեսակով անվանվում են՝

ա) Աշխարհագրական անունները *(Մասիս սար, Սևանա լիճ, Հայկական Պարի, Հեռավոր արևելք, Հյուսիսային սառուցյալ օվկիանոս...):*

բ) Երկրների, պետությունների, մարզերի, քաղաքների ու գյուղերի անվանումները (*Հայաստանի Հանրապետություն, Լեռնային Ղարաբաղ, Մեծ*

---

[*] Վերաիմաստավորվածների տակ պետք է հասկանալ միայն *դարձվածային միավորները:*

Բրիտանիա, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Վերին Սասնաշեն, Նոր Ա-րարկիր, Հին Բայազետ...):

գ) Պետական կառավարման մարմիններն ու գերատեսչությունները (*Ազգային ժողով, Պետական դումա, Անվտանգության խորհուրդ, Առաջին ատյանի դատարան...):*

դ) Մարդկանց բաղադրյալ հատուկ անուններ (*Տիգրան Մեծ, Արշակ Երկրորդ, Չենով Օհան, Պետրոս Առաջին, Իվան Սիեղ...):*

ե) Գիտական տերմիններ (*մագնիսական դաշտ, առաջին աստիճանի հավասարում, ծծմբական թթու, ջրածնային ռումբ, բաղադրյալ ստորոգյալ, խոսքի մաս...):*

զ) Պարբերականների, գրքերի, ստեղծագործությունների անվանումներ, վերնագրեր (*«Հայաստանի Հանրապետություն», «Գրական թերթ», «Ե-ռածայն պատարագ», «Վերք Հայաստանի», «Իններորդ ալիք», «Հինգե-րորդ սիմֆոնիա»...):*

է) Այս տեսակի մեջ են մտնում նաև սովորական բառային իմաստներով բաղադրյալ անվանումները (*շտապ օգնություն, պատի թերթ, գրության քույր...):*

ը) Ոչ վերաիմաստավորված, ազատ բառակապակցությունների մի տեսակ էլ *դերբայական դարձվածն է,* որը, ինչպես ասվեց, դիտվում է որպես նախադասության մեկ անդամ, բայց շարահյուսորեն վերլուծելի է իր ներսում: Երկու օրինակ. «*Փարիզի Միջազգային երաժշտական փառատոնին մասնակցելը* Կոմիտասին պարտավորեցնում էր ավելի լավ նախապատրաստվել»: «*Ամբողջ կյանքը իր ժողովրդի երգարվեստին նվիրած* Կոմիտասը Փարիզում ապացուցեց *հայ ժողովրդի ազգային երգ ու երաժշտությունը ունենալը»:* «Լուսինե Զաքարյանը Կոմիտասի երգերը կատարում էր՝ *աշխարհից վերացած, ամբողջ էությամբ ոգի դարձած»:* Առաջին նախադասության մեջ դերբայական դարձվածը ենթակա է, երկրորդում՝ որոշիչ և ուղիղ խնդիր, երրորդում՝ ձևի պարագա:

Ոչ վերաիմաստավորված բառակապակցությունների դասակարգումը ըստ նրա *գերադաս անդամի խոսքամասային պատկանելության:* Ասվել է, որ բառակապակցությունները կազմվում են երկու կամ ավելի լիիմաստ բառերի զուգորդումներից, որոնցից մեկը միշտ հանդես է գալիս որպես գերադաս անդամ, իսկ մյուսը (մյուսները)՝ նրան կամ իրար լրացնող անդամներ: Ըստ այն հանգամանքի, թե *գերադաս անդամը* ինչ խոսքի մասով է արտահայտված, այդ խոսքի մասի անունով էլ կոչվում է ամբողջ բառակապակցությունը:

ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ - Գոյականական գերադաս անդամ ունեցող բառակապակցությունը կարող է ունենալ գոյականի տարբեր հոլովներով արտահայտված լրացումներ՝ *գոհար* աստղեր, *ոսկի* երազ, *ուսուցիչ* մարդ, (ուղղական), *երեխայի* ձայն, *աղջկա* բնավորություն, *աշնան* քամի (սեռական), *կավից* աման, *ծղոտից* գլխարկ (բացառական), *հյուսերով* աղջիկ, *համով* ճաշ (գործիական), հանդիպում *դպրոցում,* անցուդարձ *միջանցքում*... (ներգոյական):

Ավելի տարածված են *ածականներով և թվականներով* լրացումները *(ուսանողական* տոմս, *սև* սիրտ, *առաջին* ջութակ): Գոյականական բառակապակցություններն ունենում են նաև *անկախ դերբայներով (խմելու ջուր, քնած* բնություն, *երգող* թռչուն) և *դերանուններով* լրացումներ (*որոշ* մարդիկ, *համայն* աշխարհը, *ինչպիսի՞* գեղեցկություն) նաև *մակբայներով (երեկոյան* զբոսանք, *դանդաղ* շարժում, *առավոտյան* մարմնամարզություն, *արտաքուստ* հանգստություն):

ԱԾԱԿԱՆԱԿԱՆ - Հայերենում բավականին տարածված են նաև *ածական գերադաս* անդամով բառակապակցություններ, որոնց լրացումները կարող են արտահայտվել *գոյականներով (դավիճ* անտեղյակ, *աչքը* շիլ, *քիթը ծուռ,* խելքից *պակաս,* մտքով *տկար,* երեխաներով *երջանիկ), (ածականներով) անսահման* բարի, հեշտ լուծելի, *դժվար* իրագործելի), *մակբայներով (հազիվ* ընթեռնելի, *երիցս* նզովյալ, *արտաքուստ* խաղաղ), *թվականներով (տոթ* գլխանի, *երկու* երեսանի), *դերբայներով (գովելու* արժանի, *կռվելու* անպատրաստ), *դերանուններով (այդքան* գեղեցիկ, *ինչքան* գրավիչ և այլն):

ԹՎԱԿԱՆԱԿԱՆ – *Թվական* գերադաս անդամով կազմված բառակապակցությունները շատ սակավ կիրառություն ունեն. թվականների հետ գործածվող մի քանի բառեր կան (*մոտ, մոտավորապես, համարյա, գրեթե,* որոնք դրվելով թվականների վրա՝ թվային մոտավորության գաղափար են արտահայտում *(մոտավորապես* երեսուն, *մոտ* քառասուն, *համարյա* հարյուր, *գրեթե* տասնհինգից-քսան):

ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ - բառակապակցությունները նույնպես սակավ են. միայն սահմանափակ թվով դերանուններ կարող են զուգորդվել *գրեթե, համարյա, բացարձակապես, մոտավորապես* բառերի հետ (*համարյա* բոլորը, *գրեթե* այսքանը, *այդ* ամենը, *այն* ամբողջը, *մոտավորապես* այդքանը, *գրեթե* ոչինչ և այլն):

ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ - Սրանք բավականին մեծ տարածում ունեն հատկապես գրավոր խոսքում: Եթե անվանողական բառակապակցություններում առկա է հիմնականում առդրությունը (չհոլովվող լրացումների դեպքում), և եթե այնտեղ շարադասությունը գրեթե կայուն է, ապա բայականներում առդրության հետ հանդես է գալիս նաև *խնդրառությունը,* որը պայմանավորված է բայի *սեռով և իմաստով,* և սրանցում *լրացում-լրացյալի* շարադասությունը բավական ազատ է:

Բերենք նախ *խնդրառական կապակցությունները:* Սրանք ունեն հետևյալ կաղապարները. *գոյական (տարբեր հոլովներով + բայ)* (հարգել աշխատանքը, կտրել ծառը, մեկնաբանել հոդվածը, գնալ հացի, շտապել նիստի, ցրտից դողալ, ցեխից հանել, հաճույքով լսել, մեքենայով շրջել, խելքով դատել, համբերությամբ լսել, օդում սավառնել, լսարանում վճռել, մտքում համաձայնել, քամուց քշվել և այլն): *Կապ, կապի խնդիր+բայ* (ընկերոջ միջոցով ուղարկել, վերադասի կողմից կարգադրվել, առանց գրքի չգնալ, ընկերոջ երեսից տուժել...):

Առդրությամբ կապակցվող օրինակներ՝ այլևս չսպասել, դեմհանդի-

ման հանդիպել, հանգամանորեն բացատրել, ակամա հիշել, նստած երգել, պառկած կարդալ, (ծանոթին) հանդիպելիս բարևել, (ուսուցչին) հանդիպելիս գլխարկը հանել...:

Պետք է հիշել, որ ցանկացած *բայական բառակապակցություն* կարող է ստանալ *ստորոգում* և վերածվել *նախադասության*, ինչպես՝ Ընկերոջ միջոցով ուղարկել – Ընկերոջ միջոցով ուղարկեց (կուղարկի): Քամուց քշվել – – Քշվեց քամուց և այլն:

ՄԱԿԲԱՅԱԿԱՆ - Սակավ կիրառություն ունեն նաև մակբայական բառակապակցությունները. *մակբայ* գերադաս անդամին կարող են լրացնել այլ մակբայներ, ածականներ, թվականներ, գոյականներ և կազմել մակբայական բառակապակցություններ (*չափազանց* արագ, *շատ* դանդաղ, *անհամեմատ* արագ, *որքան* դանդաղ, *արտակարգ* բարեկամաբար, *եղբոր պես* սիրելի, *տասն անգամ* արագ, *թռչունից* արագ և այլն):

ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՎԱԾ ԿԱՅՈՒՆ ԲԱՌԱԿՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 24. Ինչպես տեսանք վերևում, *ոչ վերաիմաստավորված բառակապակցությունների* բաղադրիչները ամբողջ կառույցի մեջ չեն իմաստափոխվում, և ամբողջ բառակապակցության իմաստն էլ բխում է այդ բաղադրիչների իմաստների գումարից (Ազգային ժողով, մագնիսական դաշտ, ատոմային պատերազմ և այլն): *Վերաիմաստավորված բառակապակցություններում* բոլորովին այդպես չէ. նախ՝ սրանցում բաղադրիչները իրենց իսկական իմաստներով հանդես չեն գալիս, այլ՝ *փոխաբերական*, ապա՝ բառակապակցության ամբողջական իմաստը բոլորովին չի համընկնում նրա բաղադրիչների իմաստների գումարին: Օրինակ՝ *«փոթորիկ մի բաժակ ջրում»* կամ *«մեջքներով սև կատու անցնել»* այս կայուն բառակապակցությունների մեջ ոչ մի բաղադրիչ իր իսկական իմաստով չի գործածվել. առաջինում ոչ *բաժակ* կա, ոչ *ջուր* և ոչ էլ *փոթորիկ*, երկրորդում էլ չկա ոչ *կատու*, ոչ *սև* և ոչ էլ *անցնել*, և բերված երկու կայուն կապակցությունների իմաստները չեն առաջացել իրենց բաղադրիչների իմաստների գումարից, այլ ստացվել են բոլորովին այլ՝ վերաիմաստավորված դատողություններ. *փոթորիկ մի բաժակ ջրում* արտահայտությունն ունի փոխաբերական իմաստ և նշանակում է՝ չնչին բանից մեծ իրարանցում, ոչնչից շատ աղուկ, իսկ *մեջքներով սև կատու անցնել* նույնպես վերաիմաստավորված է և նշանակում է ընկերների, մտերիմների մեջ գժտություն, դժգոհություն առաջանալ: Կամ *պատը ծակ է* նախադասության կառուցվածք ունեցող կապակցությունը նույնպես վերաիմաստավորված է և ոչ մի կապ չունի *պատի* և նրա արանքում *անցք, ճեղքվածք* ունենալու հետ, այլ նշանակում է՝ *պետք է զգույշ լինել, մեզ լսող կա, գաղտնի բաներ չխոսել* և այլն:

Այսպիսի վերաիմաստավորված բառակապակցություններն ու նախադասությունները լեզվաբանական գրականության մեջ *դարձված* կամ *դարձվածային միավոր* (ԴՄ) անվանումն են ստացել: Սրանցով լեզվաբաններն

ավելի ուշ սկսեցին զբաղվել, բայց դրանց վերաբերյալ արդեն բավականին ուսումնասիրություններ ու բառարաններ կան: Իսկ լեզվաբանության այն ճյուղը, որն զբաղվում է դարձվածների ուսումնասիրությամբ, կոչվում է «Դարձվածաբանություն»:

Ուրեմն *ի՞նչ է դարձվածը,* ո՞րոնք են նրա հատկանիշները:

Դարձվածը երկու կամ ավելի բառերից կազմված պատկերավոր գաղափար կամ միտք արտահայտող վերաիմաստավորված, պատրաստի, վերարտադրելի կայուն բառակապակցություն է կամ նախադասություն:

Սահմանման մեջ շատ որոշակիորեն ասված է.

ա) Դարձվածը միաբառ լինել չի կարող. այն անպայման բազմաբաղադրիչ է. միաբառ դարձված չկա:

բ) Դարձվածի բաղադրիչ միավորները՝ բառերը, հանդես են գալիս ոչ թե իրենց իսկական՝ *ուղղակի* իմաստներով, այլ՝ *փոխաբերական:*

գ) Դարձվածային ամբողջական կապակցության իմաստը չի բխում նրա առանձին բաղադրիչների իմաստների գումարից, այլ այն բոլորովին նոր իմաստ է ձեռք բերում, այսինքն՝ *վերաիմաստավորվում է:*

դ) Դարձվածը ոչ թե կազմվում է խոսելու պահին, ինչպես ազատ բառակապակցություններ, այլ խոսելիս այն հիշվում ու մեջ է բերվում որպես *պատրաստի կառույց՝ բլոկ,* այսինքն՝ վերարտադրվում է խոսողի կողմից՝ ելնելով խոսքի իրավիճակից ու դրա անհրաժեշտությունից:

Դարձվածի կիրառումը պայմանավորված է հաղորդակցման իրավիճակով, խոսքի համատեքստով ու խոսքային միջավայրով: Դարձվածները խոսողի կողմից գործածվում են կյանքի բոլոր բնագավառներում, թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքում, հետևաբար և խոսքային բոլոր ոլորտներում ու ոճերում: Դարձվածները խոսքը ոճավորելու հրաշալի միջոցներ են, դրա համար էլ դրսևորվում են ոճերի բոլոր տեսակներում: Առանձնապես մեծ է դարձվածների դերը գեղարվեստական, նրանից ոչ պակաս հրապարակախոսական ու առօրյա խոսակցական ոճերում: ԴՄ-ների միջոցով խոսողը ոչ միայն անվանում է ինչ-որ բան՝ անձ, առարկա, երևույթ, մարդկային հարաբերություն և այլն, այլև իր վերաբերմունքն է արտահայտում դրանց նկատմամբ՝ խոսքը դարձնելով ավելի դիպուկ, արտահայտիչ ու պատկերավոր: Այսպես, օրինակ՝ մեկին խիստ պատժելու, քննադատելու փաստը ավելի պատկերավոր կերպով նշելու համար բերվում են հետևյալ ԴՄ-ները՝ *մեծ կտորը ականջը թողնել, բուրդը գզել, շան օրը գցել, միսը բերանը տալ, փոստը հանել, հոգին բերանը բերել* և այլն:

Հայերենն ունի դարձվածային հարուստ շտեմարան: Դարձվածները օժտված են նաև բազմիմաստությամբ, ունեն հոմանիշների ու հականիշների հարուստ համակարգ և ոճական բազմազան ու բազմապիսի կիրառություններ. առանց դրանց խոսքը աղքատ կլինի:

Ասվածից և բերված օրինակներից դժվար չէ եզրակացնել, որ դարձվածները բառերից բարձր միավորներ են՝ բառային ու խոսքային կառույցներ, ուրեմն դրանք *շարահյուսական մակարդակի միավորներ են և* պետք է

ուսումնասիրվեն ոչ թե *բառագիտության*, այլ *շարահյուսության բաժնում*, մանավանդ որ դարձվածային համակարգում քիչ չեն նաև հաղորդակցական արժեք ունեցող, այսինքն՝ նախադասությունների կառուցվածքով կառույցներ (*Հակոն տանը չէ: Պատը ծակ է: Ես խմորը շատ ջուր կվերցնի: Բանը բուրդ է: Վերնահարկը դատարկ է: Սոխ չես կերել, սիրտդ ինչո՞ւ է մրմռում* և այլն):

Ուրեմն՝ ԴՄ-ները պետք է քննվեն *բառակապակցությունների մեջ*, որպես նրա *վերաիմաստավորված* տեսակ: Իսկ բառակապակցությունները քննվում են ոչ թե *բառագիտության*, այլ *շարահյուսության* մեջ:

ՇԱՐՈՒՅԹ

§ 25. Շարույթը սերտորեն կապված է *բառակապակցության հետ*.

Շարույթ հասկացությունը լեզվաբանության մեջ քննության առարկա է դարձել ավելի ուշ՝ 20-րդ դարի սկզբներին. այն կապված է ֆրանսիացի լեզվաբան Ֆ.Սոսյուրի անվան հետ: Նա շարույթը համարում է *երկու կամ մի քանի իմաստակիր նշանների (բառերի) կապակցությունը:* Հայ և ոչ միայն հայ լեզվաբանության մեջ շարույթի վերաբերյալ միասնական մոտեցում ու ըմբռնում չկա: Մի կողմ թողնելով ռուս լեզվաբանների իրարամերժ տեսակետները, նշենք, որ ակադեմիկոս Գ.Ջահուկյանը շարույթը կապում է նախադասություն կազմող միավորների *արտասանական տակտի ու հնչերանգի հետ:* Ըստ նրա՝ շարույթը կարող է լինել ինչպես մեկ բառ, այնպես էլ մեկ շնչով արտաբերվող *բառաշղթա. «Նախադասության այն հատվածները, որոնք բաղկացած են մեկ բառից, բառախմբից կամ բառակապակցությունից, և որոնք հանդես են գալիս որպես որոշակի դադարներով և հնչերանգով առանձնացվող միավորներ, կոչվում են շարույթներ»:* Եվ նա բերում է «Ես Գրիգորի հետ ոչ մի կերպ գյուղ չեմ գնա» նախադասությունը, որը բաժանում է 4 շարույթի՝ 1) *ես*, 2) *Գրիգորի հետ*, 3) *ոչ մի կերպ*, 4) *գյուղ չեմ գնա* [14]:

Մեր կարծիքով, ընդունելի պետք է համարել Սոսյուրի տեսակետը, որը *շարույթը* համարում է *բառակապակցական կատեգորիա*, հետևաբար այն չպետք է կապել ստորոգում ունեցող կառույցների՝ նախադասությունների հետ, այլ պետք է դրանք քննել *որպես բառակապակցություն և անտարրալուծելի նվազագույն կառույցներ*, ինչպես՝ *Ազգային ժողով, խելքից պատուհաս, աստղերից իջած, ծիրանի ծառ, բերքի տոն, երկու քեյի գդալ (շաքարավազ), իններորդ շարասյուն, առաջին աստիճանի հավասարում:* Ինչպես որ բառակապակցությունը *միաբառ* լինել չի կարող, այնպես էլ *շարույթը:* Հենց տերմինի անվանումն էլ դրա վկայությունն է՝ синтагма: Շարույթը այդպես է բացատրված նաև Հ.Պետրոսյանի, Ս.Գալստյանի և Թ.Ղարագյուլյանի կողմից կազմված «Լեզվաբանական բառարանում» (Ե., 1975, էջ 241):

---

[14] Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 353-354:

Այստեղ շարույթը ձևակերպված է որպես «*ստորադասական հարաբերությամբ կապված երկու անդամների կապակցություն*»: Ասվածին միայն կարելի է ավելացնել, որ շարույթը կարող է լինել նաև եռանդամ, քառանդամ և այլն:

Այս իմաստով քննենք հետևյալ նախադասության մեջ եղած շարույթները. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նորընտիր պատգամավորները մեկ մարդու պես հավանություն տվեցին էներգետիկ ճգնաժամի դեմ ուղղված բողոքին» (Մամուլ): Ինչ խոսք, այստեղ ևս անդամատումը հնչերանգով է կատարվում, և առանձնանում է 5 շարույթ՝ ներառյալ նաև շարույթներով արտահայտված ենթական՝ *նորընտիր պատգամավորները* և ստորոգյալը՝ *հավանություն տվեցին*. առանձին շարույթներ են՝ *Հայաստանի Հանրապետության, Ազգային ժողովի, մեկ մարդու պես և էներգետիկ ճգնաժամի դեմ ուղղված բողոքին*: Սրանցից յուրաքանչյուրը իսկապես անտարրալուծելի կառույց է՝ իր համապատասխան հարցերով ու հնչերանգային ելևէջներով: Այդպես էլ հատույթավորենք հետևյալ նախադասությունը՝ «ընդմիջման ժամին // Ազգային գրադարանից դուրս գալով // մայթի վրա // *հանդիպեցի* -ն շարույթ չէ) // Մոսկվայից վերադարձած ընկերոջս //: Այստեղ կա 4 շարույթ և մեկ ստորոգյալ:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

ՆՐԱ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ

§ 26. *Քերականական կարգերը քերականական իմաստների և դրանց արտահայտության միջոցների՝ ձևերի միասնությունն են.* դրանք հատուկ են ինչպես *ձևաբանական*, այնպես էլ *շարահյուսական* մակարդակներին:

Ձևաբանական մակարդակի քերականական կարգերը իրենց հերթին լինում են *անվանական և բայական:* Հայերենի հիմնական անվանական կարգերն են՝ *առկայացման, անձի ու իրի, հոլովի, թվի,* ածականի *համեմատության աստիճանավորման,* բայական *եղանակի, ժամանակի, կերպի, դեմքի, բայաստեղի և հաստատման - ժխտման:* Կան կարգեր, որոնք դրսևորվում են գոյականի և բայի մեջ (թվի կարգը), դերանվան ու բայի մեջ (թվի և դեմքի կարգերը): Ձևաբանական կարգեր են նաև խոսքի մասերը:

Շարահյուսական մակարդակի կարգերն են՝ *համաձայնությունը, խնդրառությունը* (վարում, կառավարում), *առդրությունը, համադասությունն ու ստորադասությունը:* Շարահյուսական կարգերը հատուկ են նաև բառակապակցություններին:

Նախադասության քերականական կարգերն են՝ *հաստատում – ժխտում, ստորոգում (եղանակ, ժամանակ, դեմք, թիվ), հնչերանգ և շարադասություն:*

Շարահյուսական մակարդակում քերականական կարգերը հանդես են գալիս փոխկապակցված. բառը իր քերականական ձևափոխություններով՝ ձևաբանական կարգերով, դառնում է շարահյուսական միավոր՝ ձեռք բերելով շարահյուսական կարգեր:

§ 27. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ - Հայտնի է, որ մարդկանց միջև լեզվական հաղորդակցումը իրականանում է խոսքային հոսքի միջոցով: Բանավոր հաղորդակցումը կարող է տեղի ունենալ երկու կամ ավելի մարդկանց շրջանակներում, որոնք կարող են հաղորդակցվել նախադասություններով՝ ինչպես պարզ, այնպես էլ՝ բարդ, ինչպես նաև առանձին բառերով ու արտահայտություններով՝ նայած խոսքի իրավիճակին ու հաղորդակցման բնույթին: Ասվածից հետևում է, որ նախադասությունը լեզվական այն միավորն է, որի միջոցով իրականացվում է հաղորդակցումը: Հետևաբար՝ *նախադասությունը լեզվի շարահյուսական մակարդակի գլխավոր ու հիմնական միավորն է՝ առավելագույն միավորը* (ՇԱՄ): Քանի որ նախադասությունն էլ կազմվում է բառերից (խոսքը երկկազմ նախադասությունների մասին է), հետևաբար, որպես շարահյուսական մակարդակի *նվազագույն միավորներ* հանդես են գալիս բառերը (ՇՆՄ)՝ իրենց քերականական կարգերով: Շարահյուսական մակարդակը, որպես լեզվական ամենաբարձր մակարդակ, իր մեջ ներառում է նաև լեզվական ստորին մակարդակների՝ հնչյունային, բառային ու ձևաբանական, բոլոր կառույցներն ու բաղադրիչ տարրերը՝ իրենց քերականական կարգերով, փոխկապակցված:

Լեզվաբանական ավելի ուշ շրջանի աշխատություններում խոսվում է նաև նախադասության քերականական կարգերի մասին[15]: Ուրեմն, մինչև նախադասությունը սահմանելը, որը այնքան էլ հեշտ չէ, և որի վերաբերյալ կան մոտ 200 սահմանումներ, քննենք նախադասության *քերականական կարգերը:*

Ամենից առաջ նախադասությունը *երկպլանային միավոր է.* ունի *կառուցվածք և հաղորդակցման ֆունկցիա:*

Որպես կառուցվածք նախադասությունները լինում են՝ *երկկազմ՝ երկբաղադրիչ* (համառոտ և ընդարձակ, պարզ և բարդ) և *միակազմ՝ միաբաղադրիչ* (բայական և անվանական): *Երկկազմ նախադասությունը* կառուցված է *ենթակա+ստորոգյալ* միջուկային կառույցից՝ ենթակայի և ստորոգյալի բևեռներից, սրանցից էլ ամեն մեկը կարող է ունենալ իր լրացումները: Միակազմ նախադասություններն ունեն *մեկ բևեռ,* նույնպես շարահյուսական մակարդակի միավորներ են և նույնպես օժտված են քերականական կարգերով (սրանց մասին խոսվելու է առանձին):

§ 28. ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱ ասելով պետք է հասկանալ նախադասության *իմաստային կողմը:* Նախադասությունը, որպես հաղորդակցման միավոր, անպայման պետք է տրամաբանական միտք արտահայտի, ըստ որում՝ ավարտուն միտք: Ուրեմն՝ նախադասությունը ամենից առաջ պետք է լինի մտքի առկայության և ավարտվածության լեզվական միավոր: Նախադասության այս հիմնական ու կարևոր հատկանիշը ընդգծել է Ստ.-Պալասանյանը դեռևս 1869-ին Թիֆլիսում լույս տեսած իր «Գործնական քերականութիւն հայերէն լեզուի» աշխատության մեջ: «*Ի՞նչ է նախադասությունը*» վերնագրի տակ նա գրում է. «*Նախադասութիւն կոչվում է մեր տուած դատողութիւնը առարկայի վրա*»[16]:

Պալասանյանի այս դատողությունն է տասնյակ տարիներ բերվել մեր դպրոցական դասագրքերում. «*Բառերով արտահայտված յուրաքանչյուր ամփոփ միտք կոչվում է նախադասություն*» (Գուրգեն Սևակ): «*Բառերի կապակցությունը կամ բառը, որն արտահայտում է ավարտուն միտք, կոչվում է նախադասություն*» (Սերգեյ Աբրահամյան): Եվ այսպես՝ բոլոր շարահյուսական դասագրքերում:

Այսպես է սահմանվել նախադասությունը նաև ռուս և օտար լեզվաբանության մեջ:

Միայն հետագա տարիներին լեզվաբանական միտքը ավելի զարգացավ, և ինչպես շատ հարցերում, այնպես էլ նախադասության սահմանման մեջ նոր ճշգրտումներ մտցվեցին: Նախադասությունը բնութագրվեց *բազ-*

---

[15] Հայ լեզվաբանության մեջ նախադասության քերականական կարգերի մասին առաջինը խոսել է *Գ.Ջահուկյանը* (Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» գրքում, Ե., ԳԱ,1974): *Նվարդ Պառնասյանը* ավելի հանգամանորեն է քննել այդ հարցերը (տե՛ս *Ն.Պառնասյան,* Նախադասության քերականական կարգերը ժամանակակից հայերենում, Ե., ԳԱ, 1986):

[16] *Ստ.Պալասանյան,* Գործնական քերականութիւն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1869, էջ 4:

մակդմանիորեն, նշվեցին նրա քերականական կարգերը՝ *ստորոգում, հնչերանգ, եղանակավորում, հաստատում-ժխտում* և այլն, բայց բոլոր դեպքերում նախադասության կարևորագույն հատկանիշը՝ նրա ելակետային դրույթը, համարվեց *իմաստ արտահայտելը:* Եվ իսկապես դա այդպես է, որովհետև բառերի ամեն տեսակի կապակցություն չէ, որ միտք է արտահայտում, թեկուզ ունենա ստորոգում և հնչերանգային ավարտվածություն, որոնք նույնպես շատ կարևոր հատկանիշներ են նախադասության համար:

Այս առումով քննենք հետևյալ չակերտավոր նախադասությունը, որտեղ առկա են նրան հատուկ քերականական կարգերը, բայց բացակայում է տրամաբանական կողմը, այսինքն՝ այն իմաստազուրկ է: Ահա այդ շինծու «նախադասությունը»:

«Սպիտակաթույր ուղտերի երամը սրընթաց արշավում էր երկնաքեր ծառերի ծյուղազուրկ գագաթներով»: Սա թեև քերականորեն ճիշտ ձևավորված կապակցություն է, բայց նախադասություն չէ, որովհետև անմտություն է, իրականությանը ոչ համապատասխան «դատողություն», քանի որ սպիտակաթույր ուղտեր, ուղտերի երամներ, երկնաքեր ու ծյուղազուրկ ծառեր բնության մեջ չկան, մյուս կողմից՝ ուղտերը սրընթաց արշավել չեն կարող, այն էլ՝ ծառերի վրայով:

Ահա այսպիսի կառույցներն է, որ ռուս ճանաչված լեզվաբան Վ.Զվեգինցևը անվանում է *սուտ, կեղծ նախադասություններ* (псевдопредложение)[17]:

Նման անբովանդակ կառույցների մասին խոսում է նաև Մ.Ասատրյանը՝ թարգմանաբար բերելով Խոմսկու հետևյալ օրինակը՝ «Անգույն, կապույտ գաղափարը կատաղի քնած է»[18]:

Եզրակացությունը պարզ է՝ նախադասության հիմնական հատկանիշը *տրամաբանական միտք արտահայտելն է,* մյուս հատկանիշներն ու քերականական կարգերը նպաստում են նախադասության ձևավորմանը:

§ 29. ՍՏՈՐՈԳՈՒՄ - Ստորոգումը նախադասության *կանորագույն քերականական շարահյուսական կարգն է,* որը հատուկ է բոլոր երկկազմ և որոշ միակազմ նախադասությունների: *Առանց ստորոգման նախադասություն չկա:* Հայ քերականագիտության մեջ ստորոգման, որպես նախադասության էական հատկանիշի, տեսությունը առաջինը տվել է Մ.Աբեղյանը. *«Խոսքը կամ նախադասությունը բառերով արտահայտված մտածողություն է,* - գրում է Աբեղյանը, - *որի մեջ ստորոգում է լինում, այսինքն՝ մի առարկայի վերագրվում է մի հատկանիշ.* օրինակ՝ *նապաստակը վախկոտ է* մի խոսք է, որով նապաստակին վերագրվում է *վախկոտ* հատկանիշը»[19]: Նույն տեղում՝ *ծանոթագրության* մեջ, Աբեղյանը բացատրում է, թե ի՞նչ է

---

[17] ***В.А. Звегинцев,*** Предложение и его отношение к языку и речи. МГУ, 1976, стр. 177.

[18] *Մ.Ասատրյան,* ժամանակակից հայոց լեզու (շարահյուսություն) Ե., 1987, էջ 107:

[19] *Մ.Աբեղյան,* Հայոց լեզվի տեսություն, Ե. 1965, էջ 359-360:

ստորոգում ասածը, և ի՞նչ է նշանակում հատկանիշի վերագրումը առարկային: Նա գրում է, որ յուրաքանչյուր առարկա ունի իր հատկանիշը՝ *սպիտակ ծյուն, վազող ծի, ծաղկած ծառ,* մենք այդ հատկանիշները մտովի անջատում ենք առարկայից և մտածողությամբ նորից վերագրում ենք առարկաներին (ծյունը սպիտակ է, ծին վազող է → վազում է → վազեց, ծառը ծաղկած է կամ ծաղկեց):

Բերված օրինակներից հստակ երևում է, որ Աբեղյանը *հատկանիշ* ասելով հասկանում է ոչ միայն *որակական ու քանակական* հատկանիշ, այլև՝ *գործողությունը* իբրև հատկանիշ: Միաժամանակ ակնառու է, որ բառակապակցությունները (սպիտակ ծյուն, վազող ծի, ծաղկած ծառ) զուրկ են հաղորդակցական արժեքից և միայն ստորոգման շնորհիվ են դրանք ձեռք բերում հաղորդակցական արժեք ու փոխակերպվում նախադասությունների (Ձյունը սպիտակ է: Ձին վազում է և այլն):

Մ.Աբեղյանի եզրակացությունը հստակ է ու ճշգրիտ. «*Խոսքի (նախադասության) էությունը ստորոգումն է: Առանց ստորոգման խոսք չկա*»[20]:

Այստեղ տեղին է հիշել Մ.Ասատրյանի հետևյալ վկայությունը. «Ինչպես նշում են առանձին լեզվաբաններ, *ստորոգում՝ ահա այն կախարդական գավազանը,* որը սովորական բառին կամ բառակապակցությանը մի հատուկ կյանք ու էություն է ներշնչում՝ դրանք դարձնելով մտքի ձևավորման ու հաղորդակցման միջոց»[21]:

Ստորոգման խնդիրը նորագույն լեզվաբանության հիմնահարցերից է: Գ.Ջահուկյանը ավելի լայն առումներով քննելով ստորոգման հարցը, վերջին հաշվով հանգում է Աբեղյանի դատողությանը՝ «*Նախադասության էական կողմը ստորոգումն է. առանց ստորոգման նախադասությունը լոկ բառակապակցություն է*»: Շարունակելով իր միտքը՝ նա գրում է. «*Նախադասությունը հանդես է գալիս որպես բայական բառակապակցություն + ստորոգման (հաղորդակցման իրադրության) դրսևորման բոլոր միջոցները*»[22]:

Այստեղ հարկ ենք համարում անդրադառնալ նաև բայական վերաիմաստավորված բառակապակցություններին՝ դարձվածներին, որոնք ստանալով ստորոգման զորեղ հատկանիշը՝ վերածվում են նախադասությունների: Բերենք միայն 2 օրինակ՝ «խոփը քարին դեմ առնել» և «ծուկը գլխից բռնել»: Սրանք չունեն հաղորդակցման արժեք, որովհետև չկա հաղորդված բովանդակության վերագրումը իրականությանը, չկա գործողությունը և նրա կատարողը, չկան եղանակաժամանակային ու դիմային նշույթավորված հատկանիշներ, այսինքն՝ *բացակայում է ստորոգումը:* Սինչդեռ՝ «Խոփը քարին է դեմ առել» և «Ձուկը գլխից են բռնում» կառույցները արդեն հաղորդակցական արժեք են ձեռք բերել. առկա է գործողությունը, նրա կատարողը:

Ստորոգման վերաբերյալ փիլիսոփայական հետաքրքիր դատողութ-

---

[20] Նույն տեղում:

[21] *Մ.Ասատրյան,* նշվ.աշխ., էջ 119:


[22] *Գ.Ջահուկյան,* նշվ. աշխ., էջ 333-334:

յուն ունի նաև էրիկ Աթայանը: Նա ստորոգումը կամուրջ է համարում լեզվական և արտալեզվական աշխարհների միջև. «Ստորոգումը աշխարհի պատմական ճանաչումն է, որն իր խորքային մակարդակում համընկնում է տրամաբանական դատողությանը» [23]:

Ասվածի վկայությունն այն է, որ ստորոգման միջոցով խոսողը իր վերաբերմունքն է արտահայտում իրականության նկատմամբ՝ մի դեպքում հաստատելով, նշելով որևէ փաստ, իրողություն, մյուս դեպքում այն ժխտելով կամ հարցականի տակ առնելով: Ասվածից էլ հետևում է, որ ստորոգումը ոչ միայն հատկանիշ է վերագրում առարկային, այլև արտահայտում է նաև խոսողի վերաբերմունքը, որն իրականանում է բայերի եղանակաժամանակային, ինչպես նաև դիմային ու թվային մասնավորումով:

Ավելի հանգամանորեն ուսումնասիրելով նախադասության առկայացման այս միջոցները՝ Ն.Պառնասյանը, *ստորոգումը համարելով* նախադասության էությունը, նրա հիմնական հատկանիշը, միաժամանակ բացատրում է, թե ինչպես է իրականանում ստորոգումը, և նա ստորոգմանն է վերագրում *եղանակավորման, ժամանակի, դեմքի ու թվի կարգերը* ու գրում է. «*Ստորոգումը իրացվում է այս բոլոր կարգերի ամբողջությամբ, որոնք հանդես են գալիս միասնաբար*» [24]:

Իր ասածը ավելի տեսանելի դարձնելու համար Պառնասյանը բերում է ստորոգման քերականական կարգերի հետևյալ գծապատկերը.



§ 30. ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՒՄ - Ըստ Վ. Վինոգրադովի, *եղանակավորմամբ* արտահայտվում է այն, թե խոսողը ինչպես է մտածում, հասկանում ու դասակարգում իր հաղորդածը, թե խոսողը ինչպես է վերաբերվում իրականությանը. իրականությունը ներկայացնում է պատմողաբա՞ր, հրամա՞ն կամ հարցադրո՞ւմ է առաջ քաշում, թե՞ կոչ ու բացականչություն է անում և այլն:

---

[23] *Է.Աթայան*, Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Ե., 1981, էջ 193 և 202:

[24] *Ն.Պառնասյան*, Նախադասության քերականական կարգերը ժամանակակից հայերենում, Ե., 1986, էջ 79:

Հենց սրանցով էլ պայմանավորված է նախադասությունների հնչերանգային բնույթը[25]:

Եղանակավորման հետ միասնաբար հանդես են գալիս նաև ժամանակի, դեմքի ու թվի քերականական կարգերը, որոնք տարբեր կողմերով իրականացնում են տվյալ գործողության կամ հատկանիշի կապը սուբյեկտի հետ և հնչերանգի հետ միասին ձևավորում են նախադասությունը:

§ 31. ԺԱՄԱՆԱԿԻ ԿԱՐԳԸ ստորոգման անկապտելի մասն է. յուրաքանչյուր գործողություն, եղելություն, վիճակ իրականանում է ժամանակի ոլորտում. ժամանակից դուրս ստորոգում չկա: Բնականաբար, ժամանակի կարգը քերականության մեջ արտահայտվում է բայի ներկա, անցյալ և ապառնի ժամանակներով (Սովորում եմ համալսարանում- ներկա, սովորել եմ - սովորեցի համալսարանում-- անցյալ և սովորելու եմ –կսովորեմ – պիտի սովորեմ համալսարանում -- ապառնի):

Միակազմ, անդեմ անվանական նախադասություններում ժամանակն արտահայտվում է նաև ժամանակ ցույց տվող գոյականներով, ածականներով, թվականներով, մակբայներով (Ամառ: Պայծառ արև: 1915 թիվ):

> ***Ծանոթություն.*** ժամանակի հարցում պետք է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք ևս. դա այն է, որ *ձևաբանական* ժամանակը կարող է իմաստով չհամընկնել *շարահյուսական ժամանակի* հետ (սա հիմնականում ոճական իմաստով է կատարվում): Օրինակ՝« – Մեկ էլ ի՞նչ *եմ տեսնում,* դեմս *է դուրս գալիս* մի արջ, - պատմում է Վ.Անանյանը»: Այստեղ առկա է *շարահյուսական-տրամաբանական անցյալը,* բայց բայը ձևավորված է *ձևաբանական ներկայով (տեսնում եմ, դուրս է գալիս)* կամ հետևյալ նախադասության մեջ ձևաբանական ներկան շարահյուսական ապառնիի փոխարեն է գործածված. «Պատրաստվի՛ր, Արշա՛կ, վաղը քաղաք *եմ գնում.* քեզ հետս *եմ տանում*»:

§ 32. ԴԵՄՔԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ առկայությունը ակնհայտ է հենց բերված նախադասություններում էլ: Անանյանը չէր կարող ասել՝ «Մեկ էլ տեսնում ես՝ դեմս է դուրս գալիս արջը»: Կամ՝ «Վաղը քաղաք է գնում, քեզ էլ եմ հետս տանում»: Սրանցում ակնհայտ է նաև *թվի քերականական կարգը:*

Իսկ ինչ վերաբերում է *միակազմ նախադասություններին, սրանց վերաբերյալ պետք է ասել. անդամ միակազմ* նախադասություններում թեև քերականորեն դեմքի, թվի ու ժամանակի արտահայտությունները չկան, սակայն դրանք տրամաբանորեն հասկանալի են, ինչպես՝ *Աշուն: Անձրև:* Սրանցում առկա է թե դիմային (3-րդ դեմք) և ժամանակային վերաբերությունը (ներկա ժամանակ): Կամ՝ «*Այնպես ապրել,* որ հողը չզգա քո սեփական ծանրությունը»: *«Չծխել».:* Սրանցում տրամաբանորեն առկա է ապառնի ժամանակի և 2-րդ դեմքի առկայությունը (*պետք է ապրեք և մի՛ ծխեք*):

---

[25] Տե՛ս Грамматика русского языка, т. 2, часть 1, М., 1960, էջ 79-80 (под ред. ***В.В.Виноградова***): *Ս.Գ.Աբրահամյան,* Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր,Ե. 1962, էջ 33: «Ժամանակակից հայոց լեզու», ՀՍՍՀ ԳԱ, հրատ., հ. 3, էջ 120-124:

Սրանք չունեն ստորոգում, ունեն կենտրոնական անդամ:

Անենթակա (անորոշ դիմավոր) նախադասություններում արդեն առկա են նշված քերականական կարգերը, բայց չկա ենթակա, որին ստորոգում կատարվի: Այստեղ էլ, ինչպես ասում են որոշ լեզվաբաններ, ստորոգումը կատարվում է *հնչերանգով և խոսքային շրջապատով*՝ «Խարխուլ մակույկով հանձնվիր ծովին, քան թե հավատա կնոջ երդումին» (Ավ.Իս.) (Կա 2-րդ դեմքի, եզակի թվի, ապառնի ժամանակի, ըղձական եղանակի ըմբռնում): «Իրիկուն էր, հրակարմիր մի իրիկուն» (ԵՉ): «Առավոտ էր, Արարատյան դաշտի լուսապայծառ առավոտներից մեկը» (Րաֆֆի), այստեղ էլ կա 3-րդ դեմքի, եզակի թվի, սահմանական եղանակի անցյալ ժամանակի ըմբռնում:

Ասվեց, որ ստորոգումը հատկանիշ է արտահայտում և այդ հատկանիշը վերագրում է ենթակային: Այժմ տեսնենք, թե ստորոգումն ինչո՞վ է արտահայտվում և ինչպե՞ս է վերագրվում ենթակային:

Հայերենում ստորոգումն արտահայտվում է՝

1. *Օժանդակ բայերի երկու ժամանակներով, բոլոր թվերով ու դեմքերով:*

Ծալվել է սարը սարի վրա, Ձորը ձորի մեջ մոլորվել է (ՀՍ):

Հայրենիքես հեռացել եմ (Ավ.Իս): Գալու է աշունը դարձյալ (ՀՍ):

2. *Բայական վերջավորություններով*՝ Սիրենք, կատարելագործենք և հարստացնենք մեր հայրենի գանձը՝ մեր լեզուն (ԱՋ): Գնա՛, նստ*իր* և դասերդ սովոր*իր*: Գնամ տուն: Կգնաս տուն: Կգնայի տուն:

3. *Վերացական բայերով.* սրանք հիմնականում հանգույցի դեր են կատարում: Սթության մեջ ծառը *մարդ թվաց: Պատգամավորներ են առաջադրվել* նաև անարժան մարդիկ: Երազանքս կատարվեց՝ *ուսանող դարձա:* Ի-զուր ես *հիմար ծևանում:* Լավ *մարդ է երևում* և այլն:

Վերացական բայերի մի մասը ստորոգելիի հետ կապակցվում է նաև *որպես, իբրև, ինչպես* կապերով: Նա դրսում *հռչակվել էր իբրև ազգասեր:* Աշխատում էր *որպես ինժեներ:*

4. *Միադիմի բայերով.* սրանք այն բայերն են, որ դեմքի հարացուցային շարքեր չեն կազմում և հանդես են գալիս հիմնականում 3-րդ դեմքով (Ցրտում է: Լուսանում է: Առավոտ է: Ցուրտ է: Այս հեռախոսով չի խոսվում: Այստեղ չի քնվում):

5. Ստորոգումն արտահայտվում է նաև *հարադիր բայերով՝ «Բարև կուտամ,* չես առնի» (Ավ.Իս.): «Գևորգ Ե-ի չոր պատասխանը *բևաթափ արեց* Կոմիտասին»: «Դիլան դային *գլուխը դուրս հանեց»* (ԱԲ)*:* «Տունը *փուլ եկավ: Թողեց հեռացավ*» և այլն:

Այսպիսով՝ *ստորոգումը նախադասության հիմքն է*՝ նրա բուն էությունը: Ստորոգումը իրականանում է իրեն հատուկ քերականական 4 կարգերի միջոցով՝ *եղանակավորման, ժամանակի, դեմքի և թվի.* առանց այս 4 կարգերի ստորոգում լինել չի կարող: Նշելի է նաև, որ քերականական այս կարգերը հանդես են գալիս իրար հետ փոխկապակցված, միասնաբար՝ մեկը մյուսով պայմանավորված:

Նախադասության քերականական մյուս կարգերն են *հնչերանգն ու*

շարադասությունը, որոնք ստորոգման հետ ձևավորում են նախադասությունը: Սրանց մասին հանգամանորեն խոսվել է «Շարահյուսական կապակցության միջոցները» բաժնում (տե՛ս § 8-12):

§ 33. ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ - Այստեղ խոսվելու է շարադասության միայն քերականական նշանակության մասին, թե ինչ դեր է այն կատարում նախադասության ձևավորման գործում: Վերևում ասվել է, որ շարադասությունը նախադասություններում և բառակապակցություններում բառերի (ոչ միայն նախադասության անդամների) դասավորության ընդունված կարգն է՝ պայմանավորված համապատասխան լեզվի քերականական օրենքներով ու կանոններ ով: Ասվել է նաև, որ շարադասությունը լինում է *սովորական և շրջուն:* Ժամանակակից հայերենում սովորական շարադասությամբ ենթական դրվում է ստորոգյալից առաջ, լրացումները՝ լրացյալից, բացի բացահայտիչից, որը վերջադաս շարադասություն ունի: Եթե մյուս անդամների դեպքում շրջման դեպքերը մեծ մասամբ չեն փոխում նրանց պաշտոնները, ապա բացահայտիչի դեպքում նման տեղափոխությունից փոխվում են բացահայտիչ - բացահայտյալների պաշտոնները («Հայաստանի սոխակը՝ Գոհար Գասպարյանը, անգերազանցելի կոլորատուրային սոպրանո է» և «Գոհար Գասպարյանը՝ Հայաստանի սոխակը... (Ավետիք Իսահակյանի բնութագրումն է):

Այժմ տեսնենք, թե շարադասությունը ինչ դեր է կատարում բառերից նախադասություններ կազմելու հարցում: Այսպես, օրինակ՝ «Նստում ամպ գլխին է տարին բոլոր Կաքավաբերդի» - ինչպես երևում է, սա բառերի կույտ է, ոչ մի միտք ու իմաստ չի արտահայտում, հետևաբար նախադասություն չէ, որովհետև չկա բառերի կանոնավոր դասավորություն, մինչդեռ երբ այդ նույն բառերը դասավորում ենք մեր լեզվի շարահյուսական կանոններով ու օրենքներով, ստացվում է մի հրաշալի նախադասություն՝ «Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամպ է նստում»: Այս նույն նախադասությունը նույն իմաստով կարելի է նաև մի քանի շարադասությամբ ձևավորել, այսպես՝ «Ամպ է նստում Կաքավաբերդի գլխին տարին բոլոր» կամ «Տարին բոլոր Կաքավաբերդի գլխին ամպ է նստում», ինչպես նաև՝ «Կաքավաբերդի գլխին է ամպ նստում տարին բոլոր», կարելի է նաև այլ տարբերակներով շարադասել: Եզրակացությունը պարզ է. *հայերենի շարադասությունը ազատ է ու ճկուն,* բայց ոչ կամայական: (Այս մասին տե՛ս § 8): Այստեղ միայն ասենք, որ նախադասության կառուցման հարցում շարադասությունը շատ կարևոր դեր ունի և ստորոգման ու հնչերանգի հետ ձևավորում է նախադասությունը՝ իր բազմազան նրբերանգներով ու ոճական առանձնահատկություններով:

Այժմ տեսնենք, թե նախադասության ձևավորման հարցում ի՞նչ դեր ունի շարահյուսական կապակցության մյուս միջոցը՝ հնչերանգը:

§ 34. ՀՆՉԵՐԱՆԳ - Հնչերանգի մասին նույնպես հանգամանորեն խոսվել է «Շարահյուսական կապակցության միջոցներ» բաժնում (տե՛ս §12): Այստեղ կխոսենք նրա՝ միայն նախադասության ձևավորման դերի մասին:

Հնչերանգը նախադասության ձևավորման *վերհնչույթային* միջոց է. այն *հաղորդակցային երևույթ է և քերականորեն չի նշույթավորվում:*

Հնչերանգը նախադասության ձևավորման կարևոր հատկանիշներից մեկն է, որի միջոցով բառերը (բառը) կամ բառակապակցությունը ձևավորվում, ավարտուն տեսք է ստանում և դառնում է հաղորդակցման նվազագույն միավոր՝ նախադասություն: *Ինչ դեր որ ունի բառային շեշտը բառի համար, նույն դերն էլ ունի հնչերանգը նախադասության ձևավորման համար:*

Ճիշտ է, նախադասության կառուցման հիմնական նյութը բառերն են (կամ բառը), բայց դրանք ձայնի միապաղաղ հոսքով չեն արտաբերվում. ձայնը մերթ բարձրանում է, մերթ իջնում, մերթ ընդհատվում: Եթե նախադասությունն ավարտվելիս ձայնը նույնպես իջնում, ավարտվում է, ուրեմն կա ավարտուն հնչերանգ, որով էլ պայմանավորված է նախադասության միտքը: Իսկ եթե նախադասության կեսից է ձայնը իջնում, դադարում, հնչերանգը ավարտին չի հասնում, ուրեմն նախադասության միտքը կիսատ է մնում: Եթե ստորոգման միջոցով հատկանիշը առարկային վերագրվելով է նախադասություն կազմվում, ապա հնչերանգի միջոցով ձևավորվում է *մտքի ավարտվածությունը,* ըստ որում, միտքը կարող է արտահայտված լինել ինչպես մեկ բառով (Սթննեց: Գարուն: Ապրել: Հաղթել), այնպես էլ բառակապակցությամբ (Կամար ունքեր: Սև աչքեր: Ալպիական մանուշակ), նաև նախադասության բոլոր տեսակներով. այսպես՝ «Ձմեռն անցավ» - պարզ համառոտ, «Այս տարի ձմեռը շուտ անցավ» - պարզ ընդարձակ, «Ձմեռն անցավ, եկավ գարուն, հալվեց բարձրիկ սարերի ձյուն» - բարդ համադասական, «Երբ բաց եղան գարնան կանաչ դռները, յարս էլ գնաց յայլաները Բինգյոլի» - բարդ ստորադասական:

Ուրեմն՝ հնչերանգը շատ կարևոր դեր ունի ինչպես երկկազմ, այնպես էլ միակազմ նախադասություններում: Եթե առաջիններում նրա դերը էական է, ապա անդեմ նախադասություններում նրա դերը բացառիկ է, որովհետև առաջիններում այն համընկնում է ստորոգման հետ, որն ունի բառային արտահայտման տարբեր ձևեր, իսկ երկրորդներում ստորոգումը կատարվում է միայն ձայնային ելևէջներով, որը անվանվում է *հնչերանգային ստորոգում:*

Վերևում ասացինք, որ հնչերանգը, իր ելևէջներով, նախադասության ձեվավորման կարևորագույն միջոց է: Այս առումով քննենք հետևյալ նախադասությունները. «Աշուն էր. պայծառ աշուն»: Եթե սա արտաբերենք մեկ ավարտուն հնչերանգով, կունենանք մեկ նախադասություն, բայց եթե արտաբերենք երկու հնչերանգով, կունենանք երկուսը՝ «Աշուն էր». «Պայծառ աշուն»: Շարունակենք նախադասությունը՝ «Աշուն էր. պայծառ աշուն. օդը մաքուր էր՝ արցունքի պես ջինջ»: Այս դեպքում եթե ամբողջ կառույցը արտաբերենք մեկ հնչերանգով՝ իր ելևէջներով և հնչերանգը ավարտենք *արցունքի պես ջինջ* կապակցության վերջում, ավարտուն հնչերանգի շնորհիվ կստանանք մեկ բարդ համադասական նախադասություն՝ կազմված 3 պարզ նախադասություններից:

Հնչերանգային ավարտվածության շնորհիվ են ձևավորվում նաև բարդ ստորադասական նախադասությունները, ինչքան էլ դրանք ծավալուն լինեն: Ահա մեկ օրինակ՝ «Երբ ծաղիկներն արթնացան գիշերվա նիրհից, և ցողը շողշողուն կաթիլներ շարեց նարնջագույն քարերի վրա, արևի առաջին շողերի հետ, գյուղի դիմաց՝ դեղնած արտերում, զարթնեց կաքավը, որն սկսեց կվկվալ»: Այս ամբողջ կառույցը արտաբերվում է հնչերանգային մեկ ավարտվածությամբ՝ տարբեր ելևէջներով:

Ասվեց, որ հնչերանգը քերականորեն չի նշույթավորվում. գրավոր խոսքում նրա ելևէջումները և սկիզբն ու ավարտը ցույց տալու համար կարելի է դիմել կորագծերի օգնությանը: Նախադասության սկզբի և ավարտի հնչերանգային տոնայնությունը կլինի նույն մակարդակի վրա: Այսպես միակազմ և երկկազմ համառոտ նախադասություններում այն կունենա հետևյալ տեսքը՝

Սթննց: Ցուրտ է: Կռվել: Գարունը եկավ: Օրերը տաքացել են:

Բարդ նախադասություններում այն կունենա նաև ելևէջումներ՝

Գարունը եկավ, հավքերը եկան, Սարեր ու ձորեր ծաղիկներ հագան:

Հնչերանգը շատ կարևոր դեր ունի նաև այն հարցում, թե խոսողը ինչ վերաբերմունքը ունի իր ասածի և իր խոսակցի նկատմամբ: Եթե խոսողը սովորական փաստ է ներկայացնում, չեզոք ոճով որևէ բան է հաստատում, կամ ժխտում, նախադասությունն ունենում է *հաստատական* կամ *ժխտական* հնչերանգ: Այս հնչերանգը հատուկ է *պատմողական* նախադասություններին, իսկ եթե որևէ բան երկմտությամբ է արտահայտվում, հաղորդածի հնչերանգը կլինի *երկբայական*, կասկածական:

Իսկ երբ որևէ բանի վերաբերյալ հարցում է առաջադրվում, ուրեմն հնչերանգի բնույթը կլինի *հարցական*, հրամանն արտահայտելու դեպքում՝ *հրամայական* և այլն: Հետևաբար, հնչերանգով էլ պայմանավորված են նախադասությունների հնչերանգային տեսակները՝ *պատմողական, հարցական, հրամայական, ըղձական և բացականչական:* Սրանց մասին խոսվելու է իրենց տեղերում՝ «Նախադասությունների տեսակներն ըստ հնչերանգի» բաժնում:


Հնչերանգի հետ սերտորեն առնչվում է նաև ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՇԵՇՏԸ, որի մասին խոսվել է «Շարահյուսական կապակցության միջոցները» բաժնում:

Այսպիսով՝ *Հնչերանգը նախադասության քերականական այն կարգն է, որով ձևավորվում է նախադասության մտքի ավարտվածությունը և նախադասության ամբողջականությունը:*

Ստացվեց, որ նախադասությունը ամենից առաջ խոսքի, հաղորդակցման նվազագույն միավոր է՝ հաստատումով կամ ժխտումով, որ իրականանում է *ստորոգման միջոցով*. ստորոգումն էլ կատարվում է միայն *ժամանա-*

կի, եղանակի, դեմքի ու թվի առկայության դեպքում, իսկ այս բոլորը իրականանում, ավարտուն տեսք են ստանում *շարադասության և հնչերանգի* շնորհիվ: Միայն քերականական այս կարգերի շնորհիվ է իմաստավորվում ու ձևավորվում նախադասությունը:

Ասվածը ավելի տեսանելի է դարձնում նախադասության հետևյալ գծապատկերը՝



Այս բոլորից ելնելով՝ նախադասությունը կարելի է սահմանել այսպես.

Նախադասությունը ստորոգումով, հնչերանգային ավարտվածությամբ և բառերի կանոնավոր դասավորությամբ (կամ առանձին բառով) ձևավորված լեզվական հաղորդակցման նվազագույն միավոր է:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

(ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ)

§ 35. Կառուցվածքային տեսակետից նախադասությունները միատարր չեն. մի դեպքում իրենց կազմում ունենում են միայն *գլխավոր անդամներ*, մյուս դեպքում՝ դրանց *լրացնող անդամներ*, մի դեպքում լինում են *միաբևեռ*, մի այլ դեպքում մեկից ավելի ստորոգումներ են ունենում, ավելի ստորոգումների դեպքում էլ լինում են *բարդ համադասական ու բարդ ստորադասական*, ունենում են նաև տարբեր հնչերանգներ և այլն: Ըստ այդմ էլ նախադասությունները դասակարգվում են տարբեր հիմունքներով.

1. *Ըստ գերադաս անդամների առկայության (միակազմ և երկկազմ).*
2. *Ըստ միայն գլխավոր կամ դրանց հետ երկրորդական անդամների առկայության (*համառոտ և ընդարձակ):
3. *Ըստ արտահայտված մտքի և իրականության հարաբերության* (դրական և ժխտական):
4. *Ըստ խոսքի նպատակադրման և հնչերանգի* (պատմողական, հարցական, հրամայական, ըղձական, բացականչական):
5. *Ըստ նախադասության անդամների առկայության (լրիվ և թերի).*
6. *Ըստ ստորոգումների թվի* (պարզ և բարդ):

§ 36. ԵՐԿԿԱԶՄ ԵՎ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ - Երկկազմ նախադասությունների կառուցվածքային առանձնահատկությունն այն է, որ սրանց կազմում կան երկու գլխավոր անդամներ՝ *ենթակա և ստորոգյալ*, որոնք հիմնական բևեռներն են. դրանք կարող են հանդես գալ ինչպես առանց լրացումների (Գարունը եկավ: Ծառերը ծաղկեցին), այնպես էլ՝ լրացումներով (Լռություն կա Կաքավաբերդի ավերակներում) (ԱԲ), Օ՛, գրքերի աշխարհը տիեզերք է անեզր (ԵՉ):

Եթե երկկազմ նախադասությունը կազմված է լինում միայն ենթակայից և ստորոգյալից, կոչվում է *պարզ և համառոտ նախադասություն*, իսկ եթե գլխավոր անդամներն ունենում են լրացումներ (թեկուզ մեկ լրացում՝ «Երեխան գիրք է կարդում»: «Ցանկալի գարունը եկավ»), այսպիսի նախադասությունները կոչվում են *պարզ ընդարձակ նախադասություններ:*

Հայերենում նախադասությունների մեծ մասը *երկկազմ է:* Այսպիսի նախադասություններին հակադրվում են ՄԻԱԿԱԶՄ նախադասությունները, որոնցում կա միայն մեկ գերադաս անդամ՝ արտահայտված որևէ դիմավոր բայով, ինչպես նաև գոյականով, ածականով, դերբայով և այլն: Միակազմ նախադասությունները արտահայտվում են ինչպես մեկ բառով (Սքնեց: Աշուն: Կովել:), այնպես էլ դրանց գերադաս անդամը կարող է ունենալ լրացումներ *(Սրբազան երազ: Ոսկի աշուն: Կատարյալ գեղեցկություն:* Երգել սրտով: Որջունել սիրով և այլն):

§ 37. ԼՐԻՎ ԵՎ ԹԵՐԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ - Խոսքի մեջ, հատկապես երկխոսություններում, հաճախ հաղորդակցվողները գործածում են այնպիսի նախադասություններ, որոնցում բոլոր անդամները արտահայտված չեն լինում. բացակայում են հատկապես *ենթական* կամ *ստորոգյալը*, ինչպես նաև երկրորդական անդամներ, և բոլորովին էլ անհրաժեշտ չի լինում դրանց վերականգնումը. դրանք հասկացվում են մտքից կամ արտահայտված են լինում նախորդ նախադասություններում:

Այն նախադասությունը, որը կառուցվածքային տեսակետից ամբողջական չէ, երբ մեկ անդամը կամ մեկից ավելի անդամները բաց են թողնված, բայց մտքով հասկացվում են, կոչվում է թերի նախադասություն»[26]:

Թերի նախադասությունները պայմանավորված են խոսքի *տնտեսման օրենքով:* Տնտեսման օրենքը հատուկ է բոլոր լեզուներին. մարդ աշխատում է, ինչքան հնարավոր է, կարճ խոսել՝ խնայել էներգիա և ժամանակ, դրա համար էլ հատկապես երկխոսություններում չգործածել այնպիսի բառեր ու բառակապակցություններ, որոնք առանց գործածության էլ հասկանալի են: Ահա թե ինչու է լեզուն միշտ ձգտում սեղմության ու կարճության: Հենց սրանից ելնելով էլ ժողովուրդն ստեղծել է մի լավ ասացվածք՝ *«Թոկի երկարն է լավ, խոսքի՝ կարճը»:*

Թերի նախադասությունները թեթևացնում են խոսքը, այն ազատում են ավելորդ բառերից, կամ ինչպես ասում են՝ կրկնաբանությունից: Խոսելիս խոսակիցներն աշխատում են խոսքից դուրս թողնել հասկանալի, կռահելի բառերը: Որպես ասվածի օրինակ բերենք մի երկխոսություն.

- Բա՛րև, Տիգրա՛ն, որտեղի՞ց ես գալիս այս ուշ ժամին:
- Համերգից:
- Ի՞նչ էիր լսում:
- Բեթհովենի «Իններորդ սիմֆոնիան»:
- Օ՜, հիանալի ստեղծագործություն: Շատ եմ սիրում: Ո՞վ էր դիրիժորը:
- Օհան Դուրյանը:
- Հրա՜շք: Մեծ բավականություն ես ստացել:

Այստեղ բերված ոչ մի նախադասությունում ենթակա չկա, լրիվ զեղչված են նաև *գալիս եմ, լսում էի* ստորոգյալները, իսկ անվանական ստորոգյալներում զեղչված են հանգույցները՝ (*ստեղծագործություն է, Օհան Դուրյանն էր):*

Թերի նախադասություններում մեծ է *հիշերանգի* դերը. դրա միջոցով է, որ բառը կամ բառակապակցությունը նախադասության արժեք է ստանում:

Թերի նախադասությունները բազմազան են. դրանք կարող են համընկնել, ինչպես միակազմ, այնպես էլ բառ-նախադասությունների հետ, բայց դրանցից տարբերվում են նրանով, որ միակազմ նախադասությունները, կազմված լինելով մեկ կամ մի քանի բառերից, ամփոփ միտք են արտա-

---

[26] *Ս.Աբրահամյան, Ն.Պառնասյան, Հ.Օհանյան, Խ.Բադիկյան,* ժամանակակից հայոց լեզու (շարահյուսություն), հ.3, Ե., 1976, էջ 446:

հայտում, ուստի և թերի չեն, որովհետև որևէ լրացուցիչ բան ավելացնելու պահանջ չեն առաջացնում:

Թերի նախադասությունների ամենատարածված տեսակներն են *զեղչված ենթակայով և զեղչված ստորոգյալով* նախադասությունները:

§ 38. ԶԵՂՉՎԱԾ ԵՆԹԱԿԱՅՈՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ - Նախադասության ենթական կարող է զեղչվել միայն այն դեպքերում, երբ հասկանալի է լինում խոսքից, երբ ստորոգյալն ունենում է իր ենթական, որը տվյալ դեպքում արտահայտված չէ, բայց վերականգնելի է:

Ենթական զեղչվում է հետևյալ դեպքերում՝

ա) Երբ ենթական խոսողն է կամ խոսողները, այսինքն՝ ստորոգյալն արտահայտված է բայի *առաջին դեմքի եզակի կամ հոգնակի* թվերով.

Ա՛խ քո տեսքին, անուշ լեզվին Կարոտցել եմ, մայրի՛կ ջան,
Երնե՛կ, երնեկ երազ լինիմ, Թռչիմ մոտդ, մայրիկ ջան (Ավ.Իս.):
Թափառում ենք փողոցներում... (ՍԿ)
Ով իմանա, ո՞ւր ընկանք, Քանի տարվա հյուր ընկանք (ՀՃ):

բ) Երբ ենթական խոսակիցն է կամ խոսակիցները. այս դեպքում ստորոգյալն արտահայտվում է բայի *երկրորդ դեմքի եզակի* կամ *հոգնակի* թվերով՝

Եվ մեզանից արդ ընդունիր Երախտիքի այս խաչբուռը (ՊՍ):

«Եթե ինձ մեկ անգամ խաբես, հանցավոր ես, իսկ եթե երկրորդ անգամ խաբես, ես եմ հանցավորը» (Ասացվածք):

Այս դեպքում ենթակաները ավելի հաճախ են զեղչվում, հատկապես երբ նախադասության մեջ կան կոչականներ՝

Աղջի՛, անաստված, նստի՛ր վրանում... (ՀՃ):
Եկե՛ք, քույրե՛ր, սեգ սարերի Չքնաղագեղ ոգիներ... (ՀՃ):
Մնաք բարով, ա՛րև, գարո՛ւն և խնկաբո՛ւյր ծաղիկներ... (ՀՀ)

Պատահում է, որ խոսողը ինքն իրեն էլ է դիտում իբրև խոսակից և իրեն էլ է մասնակից դարձնում գործողությանը՝

Կգա՞ս, իմ ընկե՛ր, *գնանք* դեպի սար... (ՀՃ):
... ես ի՞նչ է հապա, որ տեղն *ենք մտնում,* Հեկեկում ես դու գիշերվա մթնում (ՀՃ):

Ենթական հաճախ զեղչվում է, երբ ստորոգյալը անվանաբայական է լինում.

Մաճկալ ես, բեզարած ես ... (Ավ.Իս.):

«Գիտեմ՝ լավ բժիշկ ես ու լավ մասնագետ»: «Տաղանդավոր ուսանողներ եք, ապրեք»:

գ) Բայերի առաջին և երկրորդ դեմքերով արտահայտված ստորոգյալների ենթակաները կարող են միասին զեղչվել բարդ նախադասություններում՝

Հոգի կուտամ, հոգի տո՛ւր ինձ, իմ նազելի՛ աչագեղ (Ավ.Իս.):
Ինչ որ ցանկաս՝ կուզե՞ս լինիմ, Լինիմ երկինք ու երկիր,
Լինիմ ծո՛վ, ժայռ, ա՛րև, լուսի՛ն, Միա՛յն, միա՛յն ինձ սիրի՛ր (Ավ.Իս.):

դ) Ենթական զեղչվում է նաև այն դեպքում, երբ նախորդ նախադասություններում գործածվել է.

Հազրոն նստել է օջախի քարին,
Հիշում է կորած երկիրն ու հողը,
Տխուր նայում է հայկական պարին
Եվ նվագում է ծիրանի փողը (ՀՍ):

§ 39. ՋԵՂՉՎԱԾ ՍՏՈՐՈԳՅԱԼՈՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ - Ստորոգյալների զեղչումը հիմնականում պայմանավորված է լինում նախորդ նախադասություններում նրանց գործածությամբ: (Ես դասի եմ գնում, դու՝ ո՞ւր: Ես գիրք եմ գնելու, իսկ դու՝ գրելու թուղթ, մտնենք գրախանութ): Այդպես են նաև առածներում ու ասացվածքներում, երբ նրանց մի ծայրում կա ստորոգյալ, մյուսում այն չի կրկնվում. դրանք հասկացվում են մտքից: Օրինակներ՝ «Ճտերը աշնանը կհաշվեն, գառները՝ գարնանը»: «Սվածը երազում հաց է տեսնում, ծարավը՝ ջուր»: «Թոկի երկարն է լավ, խոսքի՝ կարճը»: «Մեկը փող է երազում, մյուսը՝ խելք»:

Նախադասություններում ստորոգյալները զեղչվում են կամ ամբողջովին, կամ մասամբ. ըստ որում, մեծ մասամբ զեղչվում են անվանաբայական ստորոգյալների հանգույցները՝ «Առաջին ծիավորը հնագետ էր, երկրորդը՝ նկարիչ» (ԱԲ): «Սոնան հարվածային է, Արթուրը՝ գերազանցիկ»: «Մեկն ուժեղ է, մյուսը՝ թույլ»:

«Բարդ է նա իր զենքերի պես, խորը՝ իր փորած հանքերի նման» (ՆՉ):

Քիչ չեն դեպքերը, երբ բայական ստորոգյալի օժանդակ բայն էլ է զեղչվում՝ «Դասախոսը խոսում է, ուսանողները՝ գրում»: «Մեկը խոսում է, մյուսները՝ լսում»:

«Օխտն աղբյուրից ջուր է առել՝ Կույս սափորով լուռ ու մունջ,
Օխտը ծաղկից ծաղիկ քաղել, Կապել սիրո ծաղկեփունջ» (ՀԹ):

Բայական ստորոգյալը զեղչվում է՝

ա) Երբ տարբեր նախադասությունների ստորոգյալները նույնն են: Օրինակ՝ «Աղջիկը ջութակ էր նվագում, տղան՝ դաշնամուր»: «Մեկն եկել էր հեռավոր Տայգայից, մյուսը՝ արևախանձ Եգիպտոսից» (Գար):

բ) Ստորոգյալը ամբողջությամբ է զեղչվում հարցական նախադասության պատասխան նախադասության մեջ: Այսպես՝ «Եթե մեկը հարցնի՝ Որտեղից ես գալիս, ճամփո՛րդ.

- Արմանի երկրից, - կլինի պատասխանը (Գ.Էմին):

- Դարերից եկած, հավերժի ճամփորդ, դեպի ո՞ւր ես գնում:

- Դեպի դարերի խոսքը, ու իմ ճամփան վախճան չունի» (Գ.Էմին):

- Հարությո՛ւն, գիտեմ, երկու ֆակուլտետ ավարտեցիր, հիմա որտե՞ղ ես սովորում:

- Հիմա էլ՝ բանասիրականում:

Հատկապես ժողովրդախոսակցական ոճերում *ասել, հարցնել* և նման ասացական բայ-ստորոգյալների փոխարեն գործածվում է *թե* շաղկապը, ո-

րը հեղինակի խոսքը կապում է ուղղակի խոսքի հետ: Օրինակ՝ «Մայրս թե՝ որդի՛, քաղաքը քո բանը չէ, տա՛ղդ նստիր, հո՛ղդ մշակիր»(ՊՂ): «Բժիշկը թե՝ ի՞նչ գանգատներ ունեք: Մայրս թե՝ բժի՛շկ ջան, գլուխս իմս չէ...» (Ե.տ.):

§ 40. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՁԵՎԱՉՈՒՄ - Ավելի սակավ դեպքերում զեղչվում են նաև նախադասության երկրորդական անդամների որոշ տեսակներ: Ստորոգյալների լրացումները մեծ մասամբ զեղչվում են ստորոգյալների հետ միասին. սա մեծ մասամբ հանդես է գալիս երկխոսություններում.

- Տիգրա՛ն, ես գրադարան եմ գնում, իսկ դո՞ւ:
- Հայտնի չէ (թե ուր եմ գնում): Ես գիրք եմ գնելու, իսկ դո՞ւ:
- Դեռ չգի՛տեմ...

Ինչպես երևում է վերևում բերված օրինակներից, զեղչված ստորոգյալների փոխարեն (լրիվ թե մասնակի) գրավոր խոսքում դրվում է *բուլ* նշանը, իսկ *բուլ* կրող անդամը արտաբերվում է ծայնի բարձրացմամբ՝ համեմատաբար սուր հնչերանգով, որին հաջորդում է փոքր դադար:

§ 41. ՀԱՍՏԱՏԱԿԱՆ ԵՎ ԺԽՏԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ - Ըստ արտահայտված մտքի և իրականության հարաբերության, այսինքն՝ իրականության մեջ գործողությունների, երևույթների, անձերի ու առարկաների հաստատման կամ ժխտման, նախադասությունները բաժանվում են երկու խմբի՝ *հաստատական և ժխտական:* Առաջին դեպքում խոսքի, նախադասության մեջ հաստատվում է ենթական կամ նրան վերագրվող հատկանիշը (Նախատեսված համերգը տեղի ունեցավ: Ուսանողի պատասխանը գոհացուցիչ էր): Մյուս դեպքում ժխտվում է ենթական կամ նրան վերագրվող հատկանիշը (Նախատեսված համերգը տեղի չունեցավ: Ուսանողի պատասխանը գոհացուցիչ չէր):

Առաջին տիպի նախադասությունները կոչվում են *հաստատական* կամ *դրական,* երկրորդը՝ *ժխտական* կամ *բացասական:*

Ինչպես նշում է Գ.Ջահուկյանը, այս կարգը *իմացական ակտ* է, այսինքն՝ այն տեղի է ունենում հաղորդակցման պրոցեսում՝ հաղորդողի և հաղորդակցվողների միջոցով, որով հաստատվում կամ ժխտվում է որևէ ակտ, իրողություն, անձ, առարկա:

Ժամանակակից հայերենում գրեթե բոլոր հաստատական նախադասությունները (բացի մի քանի անվանական անդեմ նախադասություններից) ունեն իրենց համապատասխան ժխտական ձևերը:

Հայերենում ժխտական խոնարհումը *նշույթավոր է.* այն իրացվում է *Չ* մասնիկով և ՈՉ, ՄԻ ժխտականներով: Սրանցից բացի ժխտման նշույթավորումը կատարվում է ժխտական նախածանցներով (ԱՆ, ԱՊ, ԴԺ, Տ, Չ), ժխտական դերանուններով (ՈՉ, ՈՔ, ՈՉԻՆՉ, ՈՉ ՄԵԿԸ, ՈՉ ՄԻ) և ժխտական վերաբերականներով (ՈՉ, ՉԷ, ԲՆԱՎ, ԵՐԲԵՔ):

Ըստ ժխտման ծավալի ու բովանդակության, այսինքն՝ ըստ այն հանգամանքի, թե ժխտումը ստորոգյալի արտահայտած հատկանիշի՞ն է վերա-

բերում, թե՞ միայն ենթակային կամ որևէ լրացման, ժխտումը լինում է *ընդհանրական և մասնակի:*

Ժխտումն ընդհանրական է, եթե այն վերաբերում է նախադասության ստորոգյալին (լինի այն բայական թե անվանաբայական, այսինքն՝ ստորոգյալն ունենում է ժխտական ձև. այն զուրկ է լինում դրական հատկանիշից (Գիրքը նկարազարդ չէ: Դասը չկայացավ: Ձմռանը ցուրտ չէ: Չխոսեց: Մի՛ գնա):

Ժխտումը մասնակի է, եթե այն վերաբերում է ոչ թե ստորոգյալին, այլ նախադասության որևէ անդամի (ենթակա, լրացումներ): Օրինակներ, «Տեղի ունեցավ համերգ և ոչ թե ներկայացում»: «Ուանողները զեկուցեցին, ո՛չ - դասախոսները»): «Դա Անահիտի աշխատանքն է, ոչ թե Տիգրանի»): «Ոչ թե գիրք կարդացի, այլ ամսագիր»: «Ոչ թե այսօր, այլ վաղն եմ քննություն հանձնելու»:

Ժխտական նախադասություններում Չ մասնիկի հավելումը դիմավոր բայի վրա լիովին նույնանում է ձևաբանական մակարդակում բայի ժխտական խոնարհման հարացույցի օրինաչափություններին: Նույնն էլ *Մի* արգելականը (այդ պատճառով էլ այստեղ դրանց հարացույցները չենք բերում)*:*

Ոչ ժխտական մասնիկը նույնպես մեծ կիրառություն ունի ժխտական նախադասություններում. այն դրվում է նախադասության բոլոր անդամների վրա և մեծ դեր ունի թե՛ ընդհանրական և թե՛ մասնակի ժխտումների դեպքում (օրինակները բերված են վերևում): ՈՉ ժխտականի հետ հաճախ կիրառվում է նաև *Թե* շաղկապը, որը հակադրական հարաբերություն է դրսևորում ԱՅԼ-ի հետ (Ոչ թե Արամոն է երգում, այլ՝ Արթուրը: Ոչ թե գյուղ կգնանք, այլ՝ ամառանոց. ոչ թե այսօր, այլ՝ վաղը):

Ժողովրդախոսակցական լեզվում հաճախ ՈՉ-ը գործածվում է ըղձական եղանակի բայերի հետ (Ոչ ունենամ քեզ պես ընկեր: Մայրդ ոչ ունենար քեզ պես ապերախտ զավակ: Ոչ տեսնեի այս ավերածությունները և այլն):

Ժողովրդախոսակցական լեզվում և հատկապես բարբառներում Ոչ-ի փոխարեն *Չէ* ժխտականն է գործածվում, ինչպես *Թե* շաղկապի հետ, այնպես էլ առանց նրա (Դասի գնալո՞ւ ես, *թե չէ՝* Խոսքիդ տե՞րն ես, *թե չէ: «Չէ՛ չի* լռել մեծ Շոթայի երգի ձենը կաթոգին») (ՀԹ):

Ինչպես ասվեց, ժխտումն արտահայտվում է նաև ժխտական դերանուններով (*ոչ ոք, ոչինչ, ոչ մեկը, ոչ մի):* Արևելահայերենում այս դերանունների հետ ստորոգյալները ժխտական բայածևերով են գործածվում (*Ոչինչ* չպատասխանեց: *Ոչ մի* բան չասաց: «Եվ ինձ խավարից *ոչ ոք* չի կանչում» (ՎՏ): *Ոչ մեկը* չէր լսում, *ոչ մեկը չէր* կարեկցում):

Արևմտահայերենում ժխտական դերանունների հետ բայ-ստորոգյալը դրական խոնարհմամբ է գործածվում («Ոչ ոք *ըսավ*, հե՛գ տղա...» (ՊՊ): «Ոչինչ *տեսա* ես այնտեղ»: «Ոչ մեկը ձայն *տվեց»* «Ոչինչ *կա* խանութում»):

Մ.Աբեղյանը ժխտական ցուցիչներ է համարում նաև մակբայներից մի քանիսը (*այլևս, էլ, երբեք, բնավ):* Սրանց հետ ստորոգյալները նույնպես ժխտական են լինում (*Այլևս* այդ մասին խոսք չլինի: *Երբեք* այսքան հմայիչ տեսարան չէի տեսել: *Բնավ* այդ մասին չխոսեց:

Էլ մի՛ ուշացնի, ես շատ եմ կացել,
Էլ մի՛ լացացնի, ես շատ եմ լացել:
Էլ չեմ սիրել ես, երբ դու չես ուզում,
Էլ չեմ կանչիլ ես նրան երազում (ՀԹ):

§ 42. *Շարահյուսական մակարդակում* ժխտումն ունի բազմակի դրսևորումներ. այն կարող է նշույթավորում ունենալ, կարող է և չունենալ. չունենալու դեպքում մեծ դեր ունեն տրամաբանական շեշտն ու հնչերանգը: Դա շատ լավ երևում է հետևյալ օրինակներում, որտեղ տրամաբանական շեշտի՝ ենթակայի, խնդիրների ու պարագաների վրա դրվելը փոխել է ժխտական բնույթը. այս դեպքում ժխտվում է ոչ թե գործողությունը (թեև բայը ժխտական խոնարհումով է գործածված), այլ ենթական, խնդիրներն ու պարագաները: Այսպես՝«Չեկուցումը *ես՛* չկարդացի, (կարդաց ընկերս», ժխտվել է *ես* ենթական): Նա *զեկուցում* չկարդաց, (կարդաց *դասախոսություն,* ժխտվել է *զեկուցում* ուղիղ խնդիրը): Դասախոսը *գրադարան* չգնաց (գնաց համալսարան – ժխտական է *գրադարան* տեղի պարագան): «Չեկուցողը բարձր չէր խոսում» (ցածր էր խոսում - այստեղ էլ ժխտվել է ձևի պարագան):

Եվ այս բոլորը կատարվել է տրամաբանական շեշտի ու հնչերանգի շնորհիվ:

Հնչերանգի շնորհիվ բարդ ստորադասական նախադասություններում ՈՐ շաղկապով կապակցված ժամանակի պարագա երկրորդականը, որի ստորոգյալը թեև ժխտական բայով է արտահայտված, դրական իմաստ է ձեռք բերում: Օրինակ՝ «Արջին որ ծառի հետև չտեսավ, հոգին դարձավ կորեկի հատ» (ՎԱ): «Որ այդ ավերածությունները չտեսա, աչքերս մթնեց, իսկ որ մերոնց կորուստի մասին էլ չիմացա, սիրտս կանգնեց» (Մամուլ): Բերված բոլոր օրինակներում ժխտումը նշույթավորված է:

Կան որոշ կառույցներ, որոնցում ժխտումը նշույթավորված չէ. այդ դեպքում հնչերանգի դերը ավելի է մեծանում: Նման կառույցներում թեև հնչերանգը հաստատական է, բայց արդյունքում ժխտական իմաստ է ստացվում: Ահա մի երկու օրինակ՝

- Տղադ ի՞նչ արեց, *աշխատանք* ճար՞եց:
- Բա ի՞նչ արեց, ճարեց (այսինքն՝չճարեց):
- Աղջիկդ այս տարի համալսարան ընդունվե՞ց:
- Հա՛, *ընդունվե՛ց* (այսինքն՝ չընդունվեց):
- Արա՛մ, մայրդ հիվանդ սկեսուրին այցելե՞ց, գոնե գյուղ գնա՞ց:
- Հա, բա ինչ արեց, համ գյուղ *գնաց,* համ էլ տատիկին *տեսավ* (չգնաց, չտեսավ):

Հայերենում տարածված է ժխտման ոչ նշույթավորված մի ձև ևս. դա այն է, երբ ժխտումն արտահայտվում է հարցական հնչերանգով. այսպես՝

Ու՞ր է այստեղ ծաղիկ, որ հավաքենք (այսինքն՝ ծաղիկ չկա):

Ո՞վ է դաս սովորել, որ ես սովորեի (Ոչ ոք չի սովորել, ես էլ չեմ սովորել):

Ի՞նչ խելոք բան ես արել, որ գլուխ ես գովում (խելոք բան չես արել):

Որոշ դեպքերում էլ հնչերանգի շնորհիվ բարդության հաստատական բաղադրիչ նախադասությունն արտահայտում է *ժխտում*, իսկ ժխտականը՝ *հաստատում*: Սա հատուկ է հատկապես հռետորական հարցմանը.

Ինձ մի՛ սպանիր, ղամեդ տար հեռո՛ւ...
Քո քույրը չե՞մ ես, իմ Մոսին չե՞ս դու (ՀԹ):
Աղջի՛, սևասի՛րտ, քո ահը կտրի,
Աղջիկը մենակ ձո՞րը կմտնի (ՀԹ):

Առաջին երկտողում հարցականով հաստատական իմաստ է արտահայտված (ես քո քույրն եմ: Դու իմ Մոսին ես): Իսկ երկրորդ երկտողում հարցականով ժխտում է արտահայտվել (Աղջիկը մենակ ձորը չի մտնի):

Կրկնակի ժխտում. – Հայերենում տարածված ձև է նաև կրկնակի ժխտումը, ժխտական օժանդակ բայը կամ հանգույցը գործածվում է որևէ դերբայի ժխտական ձևի հետ: Այսպիսի կրկնակի ժխտումով նախադասությունների իմաստը ոչ թե ժխտական է լինում, այլ հաստատական: Ահա այդպիսի մի քանի նախադասություններ.

Չեմ կարող չհավատալ նրա ասածներին (պիտի հավատամ):

Չէիր կարող չայցելել հիվանդ ընկերոջդ (պիտի այցելեիր):

Այնպիսի պայմանների մեջ էին դրել, որ չէիր կարող չասել (պիտի ասեիր): Հնարավոր չէր չպատասխանել. հարցերը հեշտ էին (պիտի պատասխաներ):

§ 43. ՊԱՐԶ ԵՎ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ - Քանի որ նախադասության հիմնական հատկանիշներից մեկն էլ ստորոգումն է, հետևաբար նախադասությունների պարզ կամ բարդ լինելը որոշվում է նրա ստորոգումների քանակով. եթե նախադասության մեջ կա մեկ ստորոգում, ուրեմն՝ նախադասությունը պարզ է, որովհետև մեկ ստորոգումով մեկ հատկանիշ է վերագրվում ենթակային, հետևաբար մեկ միտք է արտահայտվում. օրինակ՝

Նստել եմ մեր տան պատի տակ՝
Մեջքը մաշված քարին (ՀՍ):

Այստեղ միայն մեկ ստորոգում կա՝ *Նստել եմ,* հետևաբար պարզ նախադասություն է: Բայց Համո Սահյանը շարունակում է իր միտքը՝ այն հավելելով մեկ ուրիշ նախադասությամբ՝

Հնձած խոտի բույր է բերում
Սարից փախած քամին:

Այստեղ պետք է նկատի ունենալ երկու հանգամանք, որոնց դեպքում նախադասությունը բարդ համարել չի կարելի.

ա) Երբեմն որոշ եղանակավորող բառեր հանդես են գալիս բայական տեսքով և զուգահեռաբար գործածվում են դիմավոր բայերի հետ: Օրինակ՝

Կարծես թե դարձել եմ ես տուն (ՎՏ):
Ասես մի հին երգ է հնչում իմ հոգում (ԳՍ):

Կարծեմ Չեզ Մոսկվայից եմ ճանաչում: *Կարծես* չեմ սխալվում:

Ընդգծված բայերը դիմավոր բայերի արժեք չունեն, և նախադասությունները բարդ չեն:

բ) Կրկնվող դիմավոր բայերով նախադասությունները նույնպես չպետք է բարդ համարել, ինչպես՝ «Լինում է, չի լինում, մի թագավոր է լինում»: «Թագավորի տղան գնում է, գնում, ճշմարտությունը չի գտնում»: «Խոսում ես, խոսում անվերջ»:

Բարդ չպետք է համարել նաև բազմակի ենթականեր ու բազմակի լրացումներ ունեցող նախադասությունները, ինչպես՝

Այստեղ էին նրանք... Վարուժանը խոհուն,
Սիամանթոն՝ հայացքն ուղղած դեպի եթեր (ԳՍ):

Պարիսպների գլխին բույն էին դրել ցինն ու ագռավը (ԱԲ):

Հասկանալի է, որ մեկ ենթակա և բազմակի ստորոգյալներ ունեցող նախադասությունը կմտնի բարդ համադասականի մեջ, որովհետև ունի բազմակի ստորոգումներ.

Նորից երգում-մորմոքում է աստվածային Կոմիտասը,
Կախարդում ու մոգում է աստվածային Կոմիտասը (ՊՍ):

Երկկազմ նախադասությունների դեպքում, ինչպես տեսնում ենք, դժվար չէ որոշել պարզն ու բարդը, իսկ այդ հարցը ինչպե՞ս որոշել միակազմների դեպքում. այս դեպքում պարզ ու բարդը պարզապես որոշվում են միակազմի *գերադաս* անդամների քանակով՝ լինի այն անվանական միակազմ, թե բայական.

Սև գիշեր և հուշեր և խոհեր անհամար,
Մոռացված երազներ, շուշաններ թառամած...
Տրտմություն մեծավոր՝ միածայն, միալար (ՎՏ):

Չսիրել, չտխրել, չափսոսալ-Հեռանալ (Ն.տ):

Սրանք բոլորն էլ բարդ միակազմ նախադասություններ են:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՀՆՉԵՐԱՆԳԻ

§ 44. Ասվել է, որ յուրաքանչյուր նախադասության մեջ առկա է խոսողի վերաբերմունքը իրականության նկատմամբ, այսինքն թե խոսողը ինչ վերաբերմունք ունի իր հաղորդած նյութի նկատմամբ. մի դեպքում խոսողի նպատակն է լինում սովորական դատողություն անել կյանքի որևէ բնագավառի, որևէ իրողության, երևույթի, փաստի ու հատկանիշի վերաբերյալ, հաստատել կամ ժխտել այն: Մի այլ դեպքում խոսողը այդ իրողությունների ու երևույթների վերաբերյալ թեական վերաբերմունք է ունենում և հարցում է արտահայտում դեպքերի ու երևույթների մասին, մի երրորդ դեպքում նա իր հուզաարտահայտչական վերաբերմունքն է արտահայտում ինչ-որ բանի վերաբերյալ կամ էլ իր մտքերն արտահայտում է որոշ հորդորով, հրամանով ու կարգադրությամբ և այլն: Եվ այս ամենը խոսողը կատարում է իր ձայնի, տոնայնության ելևէջների ու առոգանության միջոցով, որն էլ կոչվում է *հնչերանգ:*

Հիմնականում հնչերանգով են ձևավորվում նախադասությունների հնչերանգային տեսակները: Բացի հնչերանգից, նախադասությունների հնչերանգային ձևավորմանը մասնակցում են բայի եղանակաժամանակային քերականական կարգերը, ինչպես նաև բառային զանազան միջոցներ՝ *վերաբերականներ* (սրանցով խոսողն իր մտածական ու դատողական վերաբերմունքն է արտահայտում) և *ձայնարկություններ*, որոնցով խոսողն արտահայտում է իր զգացմունքային վերաբերմունքը:

Ըստ քերականական ու բառային այս միջոցների ու հնչերանգի բազմազանության՝ ժամանակակից հայերենի նախադասությունները խմբավորվում են հինգ տեսակների մեջ՝ *պատմողական, հարցական, հրամայական, ղոձական և բացականչական:*

Այս հինգ տիպի նախադասությունները իրենց հերթին լինում են՝ համառոտ և ընդարձակ, պարզ և բարդ, միակազմ և երկկազմ, դիմավոր և անդեմ, հաստատական և ժխտական: Այս տեսակետից յուրաքանչյուր տեսակ ունի իր կառուցվածքային առանձնահատկությունները, բառաքերականական գործառույթները և հատկապես հնչերանգային՝ յուրաքանչյուր տիպին հատուկ դրսևորումները:

ՊԱՏՄՈՂԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 45. Պատմողական նախադասություններով սովորաբար դատողություններ են արվում օբյեկտիվ աշխարհի իրերի ու երևույթների վերաբերյալ. դրանցով հաստատվում կամ ժխտվում է որևէ փաստ, իրադարձություն, եղելություն, երևույթ, բնութագրվում են անձեր, առարկաներ, հատկանիշներ, հարաբերություններ և այլն:

Պատմողական նախադասությունները սովորաբար արտահայտվում են *չեզոք հնչերանգով,* այսինքն՝ առանց լարվածության, առանց շեշտակի ձայնի տատանումների, հանգիստ:

Այս տիպի նախադասություններում տրամաբանական շեշտը սովորաբար ընկնում է ստորոգյալի վրա:

Քանի որ նախադասությունների բնույթների որոշման հարցում մեծ մասամբ հիմնական դերը պատկանում է ստորոգյալներին՝ իրենց հնչերանգային տարբեր տեսակներով, պատմողական նախադասություններում նույնպես կարևոր անդամը ստորոգյալն է՝ լինի այն բայական թե անվանական: Պատմողական նախադասությունների ստորոգյալներ են դառնում բայի բոլոր եղանակները, բացի հրամայականից, ինչ խոսք, որ գերակշռողը սահմանական եղանակի բայածներն են: Թերևս սա է պատճառը, որ այս երանգի նախադասությունները կիրառվում են խոսքի բոլոր ոճերում, հետևաբար կիրառության ավելի լայն ոլորտներ ունեն: Բերենք օրինակներ՝ արտահայտված բայի տարբեր եղանակներով ու ժամանակային ձևերով.

Սահմանականով - «Չմոռաս մի գիշեր կար մի հարսանիք...» (ՀԹ): «Լուսնի եղջյուրը ծածկվեցավ Քարքե լեռան ետևում» (Րաֆ.): «Դիլան դային նստել էր հնձանի դռանը...» (ԱԲ): «Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ (ՎՏ):

Հարկադրական եղանակով - «Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով, Պիտի գովեն քո նոր կյանքը՝ նոր երգերով, նոր խոսքով (ՀԹ):

«Պիտի երթաս առաջ հիմի, պիտի առնեն քաղաքը հին» (ԵՉ):

Պայմանական (ենթադրական) եղանակով - «Դուռը քո դիմաց միշտ բաց կլինի» (ՀՍ): «Դու կգաս, ու ես այլևս չեմ լինի, չի լինի քո հին տունը, չի լինի նաև շունը»(Գար.):

Ըղձական եղանակի բայերը նույնպես կարող են պատմողական նախադասություններում հանդես գալ, եթե բացականչական հնչերանգով չարտաբերվեն, այլ չեզոք՝ առանց հույզերի ու ցանկությունների. «Գուցե մեր բախտից Քարակապում մի քարի տակ մտած լինի» (ԱԲ): «Մութ սենյակում նստեմ միայնակ ու բաց անեմ հիշողություններիս կծիկը» (ԳԹ):

Պատմողական նախադասությունների ստորոգյալները լինում են նաև անվանաբայական «Ես *երգիչ եմ, երկնի թիթեռ*» (Ավ. Իս.): «*Ես եմ* հիմա մի պոետ, և իմ անունը՝ *Չարենց*» (ԵՉ):

«*Ես* բանաստեղծ եմ՝ *հավերժի որդի*» (ՀՇ):

Պատմողական նախադասությունները կարող են լինել նաև միակազմ՝ Աշուն է, Անձրև: Դալուկ դաշտեր: Մերկ անտառ: Երևան: Աստաֆյան փողոց:

Բերված օրինակներից էլ երևում է, որ պատմողական նախադասությունները լինում են պարզ և բարդ, միակազմ և երկկազմ, հաստատական և ժխտական:

ՀԱՐՑԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 46. Հարցական նախադասությունների ձևավորման հիմնական միջոցը *հարցական հնչերանգն է*, որը համընկնում է տրամաբանական շեշտի հետ՝ դառնալով նրա էական հատկանիշը, դրվում է նախադասության ցանկացած անդամի (ինչպես նաև ոչ անդամի) վրա:

Հարցական բնույթի կարող են լինել նաև *միակազմ* նախադասությունները. «էլ ի՞նչ ընկեր, ի՞նչ բարեկամ»: «Ինչո՞վ բացատրել այս ամենը»: «Արժի՞ ապրել»:

Սովորական, չեզոք ոճով ու հնչերանգով արտաբերված պատմողական նախադասությունը հարցական հնչերանգով հեշտությամբ վերածվում է հարցականի: Օրինակ՝ «Բերդի քարերի մոտ բուսել էր ալպիական մանուշակը» (ԱԲ): Այս նախադասության ցանկացած անդամի վրա կարելի է դնել հարցական նշան և արտաբերել հարցական հնչերանգով, ըստ որում հարցադրումը կարելի է մի քանի նպատակներով կատարել, և դա հեշտությամբ կատարվում է օժանդակ բայի տեղափոխության շնորհիվ, ինչպես նաև առանց դրա տեղափոխության: Այսպես՝ «Բերդի քարերի մո՞տ էր բուսել ալպիական մանուշակը», «Բերդի քարերի մոտ բուսե՞լ էր ալպիական մանուշակը»: «Բերդի քարերի մոտ ալպիական մանուշա՞կն էր բուսել» և այլն:

Նկատելի է, որ հարցական նախադասություններում հնչերանգը չեզոք չէ, այն բարձրացող - իջնող է: Հարցական նշան կրող բառը, լինի նախադասության սկզբում, մեջտեղում թե վերջում, իր վրա է կրում հնչերանգի ուժգնությունը, և այն արտաբերվում է *ավելի բարձր տոնայնությամբ:* Նրանից առաջ և հետո եղած մյուս բառերը արտաբերվում են առանց ձայնի բարձրացման, սովորական հնչերանգով:

Եթե հարցական նախադասության մեջ ԹԵ - ով շաղկապված համադաս անդամներն են հարցման ենթարկվում, հարցական նշանը դրվում է ԹԵ-ից առաջ եղած բոլոր համադաս անդամների վրա. ԹԵ-ին հաջորդող անդամի վրա հարցական նշան չի դրվում. այն դրվում է *ԹԵ* շաղկապի վրա՝ («Հիմա ո՞ւր ես գնալու, աշխատանքի՞, թե՞ գրադարան»: «Չգիտեմ՝ վարդերից ո՞րը ընտրեմ, կարմի՞րը, դեղի՞նը, նարնջագու՞յնը, թե՞ հենց վարդագույնը»):

Հարցական նախադասությունները մեծ մասամբ ձևավորվում են *հարցական դերանուններով,* որոնց վրա էլ ընկնում է տրամաբանական շեշտը՝ գումարվելով հարցական հնչերանգի հետ:

Ո՞ւր էիր դու, անցո՛րդ, գիտեմ՝ դու վախից
Անուս անգամ չէիր տալիս, բարեկա՛մ,
Ի՞նչ հանցանքիս համար, ասա՛, ազգակի՛ց,
Չեր մաքառման մատյանի մեջ ես չկամ
(Սարմեն, Անդրանիկին):

Ախր ես *ինչպե՞ս* վեր կենամ գնամ,
Ախր ես *ինչպե՞ս* ուրիշ տեղ մնամ (ՀՍ):
Որտե՞ղ է ընկած Այն քարը հիմի,
Որ հողիս վրա Շիրիմ պիտ լինի (Ավ.Իս.):

Հարցական նախադասությունների ստորոգյալները նույնպես կարող են արտահայտված լինել բայի տարբեր եղանակներով.

Սահմանականով՝ Ո՞ր երկրի սրտում թախիծ *կա* այսքան (ՎՏ):

Ո՞վ *քեզ ծեծեց*, Մարո՛ջան (ՀՄ)։ Ո՞ւմ սիրտն է *հեծում* մռայլ գիշերին (Ավ.Իս.)։

Պայմանականով՝ Կգա՞ս, իմ ընկեր, գնանք դեպի սար (ՀՄ)։ Երկու օրից *կիասնե՞ք* (ԴԴ)։ *Կկարողանա՞ս* վերծանել այս արծանագրությունը (ՍԳ)։

Հարկադրականով՝ Պիտի գնա՞նք, թե՞ ոչ։ «Նա *պետք է իմանա՞ այս մասին*»։

Ըղձականով՝ - « *Գնա՞մ* հայրիկին կանչեմ»։ «Խաղա՞նք այս սենյակում»։

Սովորաբար խոսողը հարցադրումը կատարում է մի քանի նպատակներով՝ մի դեպքում ցանկանալով իմանալ իրեն ոչ հայտնի, անծանոթ անձի, դեպքի, իրադարձության մասին, մյուս դեպքում հարցականով խոսողը ցանկանում է ունկնդիրների ուշադրությունը բևեռել ինչ-որ անձի, դեպքի, երևույթի կամ ինչ-որ բանի վրա, որը հայտնի է ունկնդիրներին, մի երրորդ դեպքում հարցական նախադասություններով ցանկություն, հեգնանք, արհամարհանք, հորդոր, հանդիմանություն, խնդրանք է արտահայտվում։ Իմաստային այս առումներով էլ հարցական նախադասությունները կարելի է բաժանել 3 կարգի՝ *Բուն* կամ *հավաստիական, հռետորական* կամ *ճարտասանական և լրացական*[27]։

§ 47. ԲՈՒՆ (ՀԱՍՏԱՏԱԿԱՆ) ՀԱՐՑՈՒՄ - Այս դեպքում խոսողը ցանկանում է իր հարցի պատասխանն իմանալ, տեղեկություն ստանալ իր չիմացածի մասին.

- Ո՞ւր գնացին երեխաները։ - Ի՞նչ լուր ունեք Արցախից։ -Ո՞վ քեզ հրավիրեց միջազգային գիտաժողովի։

Նման դեպքերում սովորաբար հարցերին պատասխաններ են տրվում։

Որոշ դեպքերում էլ թեև խոսողը տեղեկություն ունի իր հարցադրման՝ անձի, դեպքի, իրադարձության վերաբերյալ, սակայն ցանկանում է *ավելի ստույգ, հավաստի դարձնել* իր համար ոչ այնքան հավաստին։ Օրինակներ.

- Ուրեմն Աշո՞տն է եղել նախահարձակը։ - Լսել եմ՝ ամուսնացել ես, ճի՞շտ է։

Երբեմն էլ հարցին հարցով է պատասխանվում՝

- Իսկ դուք, տղանե՛ր, մեզ չպե՞տք է օգնեք այս հարցում։ - Ինչո՞ւ չէ։

- Իսկապե՞ս, նա ձեզ վիրավորե՞լ է։ - Բա ի՞նչ է արել. այն էլ՝ խիստ։

Նման դեպքերում հարցումով հարցումին պատասխանը կարող է փոխարինվել *այո, ոչ* պատասխանական բառերով, ինչպես նաև *իհարկե, անշուշտ, անկասկած, թերևս, անպայման* եղանակավորող բառերով։ Բերենք մի քանի օրինակ.

- Պատրա՞ստ եք ստուգողական գրելու։ - *Իհարկե*, վաղուց եք ասել։

- Իսկ աղջիկները կմասնակցե՞ն մեր արշավին։ - *Անպայման*, մեծ սիրով

- Արթո՛ւր, կօգնե՞ս ինձ՝ գրքերը տուն տանել։ - *Անտարակույս*։

---

[27] Տե՛ս *Մ.Աստրյան*, նշվ. աշխ., էջ 132-136, *Մ.Աբրահամյան, Ն.Պաոնասյան, Հ.Օհանյան, Խ.Բադիկյան*, նշվ. աշխ., էջ 517-528։

Հավաստիական հարցման ժամանակ հաճախ նաև *բացասական պատասխան* է տրվում *ոչ, բնավ, ամենևին, երբեք,* պատասխանական բառերով.

- Պատրա՞ստ եք ստուգողական գրելու: - *Ո՛չ,* չէիք նախազգուշացրել:
- Վերդիի ստեղծագործություններից որևէ մեկը ձեզ ծանծրացրե՞լ է:
- *Ամենևին, բնավ:*
- Սոնա, չէի՞ք ցանկանա վաղը գալ քննության: - *Բնա՛վ, երբե՛ք,* ես այսօր եմ պատրաստ:

Այսպիսի նախադասություններում սովորաբար կիրառվում են նաև. *մի՞թե, արդյոք, չլինի՞ թե* երկբայական –հարցական եղանակավորիչները, որոնք մի դեպքում *տարակուսանք* են արտահայտում *(Մի՞թե* վերջին պոետն եմ ես (ՎՏ), մի այլ դեպքում՝ *զարմանք, անհանգստություն (Չլինի՞* թե երեխային մի բան է պատահել), երրորդ դեպքում՝ *երկմտություն* (*Արդյո՞ք* խոսքի տերը կլինի տնօրենը) և այլն:

§ 48. ՀՈՌԵՏՈՐԱԿԱՆ (ՃԱՐՏԱՍԱՆԱՆ) ՀԱՐՑՈՒՄ – Նման հարցադրումը հիմնականում ոճական արժեք ունի. այն մեծ մասամբ հատուկ է *հռետորական ոճերին:* Այս դեպքում խոսողը հարցադրումը կատարում է ոչ թե պատասխան ստանալու նպատակով (հարցի պատասխանը ինքն էլ գիտի, ունկնդիրներն էլ), այլ հարցադրումով ցանկանում է ունկնդիրների ուշադրությունը հրավիրել *ասույթի միջուկի,* այսինքն՝ այն խնդիրների վրա, որոնք հուզում են ոչ միայն իրեն, այլև բոլորին: Օրինակ՝

Հիմի՞ էլ լռենք, եղբա՛յր (ՌՊ): Ինչո՞ւ են իրենց հողին ու հայրենիքին կառչած մարդիկ հեշտությամբ թողնում իրենց դարավոր երկիրը (Ազգ):

Բերենք հռետորական հարցման գեղարվեստական օրինակներ.

Գարուն է, անուշ գարուն, Դու ինչո՞ւ չկաս, մեր երգի վեհափառ,
Կաքավն է երգում սարում, Կանչում է՝ եկ, Կոմիտաս (Սարմեն):

Ինչո՞ւ են մարդիկ գինն իրենց գանձի
Իմանում միայն կորցնելուց հետո (ԼՍ):

Ինչպես դժվար չէ նկատել, հռետորական հարցումը աշխուժացնում է խոսքը, նրան ուժ ու կենդանություն է տալիս, լարում է ունկնդիրների ուշադրությունը:

Հռետորական հարցման դեպքում շատ հաճախ խոսողը, հռետորը ինքն էլ պատասխանում է հարցին. «Ո՞վ կթողնի, որ ազատ ձեռներեցը ազատ գործի: - Ոչ ոք, նրա ձեռքը հազար բռնող կա» (Մամուլ):

Ո՞վ է տվել էն լրբին սար – Սարը ամենքինն է հավասար (ՀԹ):

«Ինչո՞ւ գժտվեցին, չէ՞ որ մտերիմ ընկերներ էին»: - Ինչո՞ւ այդպես խիստ խոսեց տնօրենի դեմ, չէ՞ որ նրա մոտիկ մարդն էր:

§ 49. ԼՐԱՑԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ - Մեր լեզվում հարցական նախադասություններ բազմազան կիրառություններ ունեն, դրանցից մեկն էլ հարցման այն

տեսակն է, երբ խոսողը ավելի է սաստկացնում է իր հարցումը և *կրկնակի հարցման* միջոցով ավելի է սրում իր հարցի բնույթը, երբեմն էլ դրանով իր միտքն է հաստատում. «Ես ինչպե՞ս չմասնակցեմ այդ հարցի քննարկմանը. չէ՞ որ լուրջ հարց է (ուրեմն պիտի մասնակցեմ): «Ինչո՞ւ ես հրաժարվում. չէ՞ որ գնալդ պարտադիր է» (ուրեմն պետք է գնաս):

Լրացական հարցման միջոցով հաճախ *հեգնանք ու արհամարհանք* է արտահայտվում (Կարոն ո՞վ է, որ իմ դեմ ելույթ ունենա: Ումի՞ց քաշվեմ. չլինի՞ քեզնից): «Դո՞ւ պիտի էն հոր զավակը լինես» (ՀԹ): Նա՞ պիտի ինձ օգնի:

Այս տիպի հարցումով նաև *խնդրանք, հորդոր է* արտահայտվում՝

«Երկու օրով գիրքդ չէ՞իր տա»): Չէի՞ք փոխանցի:

- Տղա՛ ջան, կօգնե՞իր՝ *այս ճամպրուկը մեքենա բարձրացնել*: Կսպասե՞ս երկու րոպե:

Կարող են արտահայտել նաև *զարմանք, տարակուսանք*. «Ինչպե՞ս թե մեր մեքենան մեզ երկու օրով չի տալու»: «Ինչպե՞ս թե իրենց հողերը մեզ չեն տա» (ՀԹ):

Լրացական հարցման մի տեսակն էլ կարելի է համարել այնպիսի հարցադրումները, *որոնցում պատասխանը թաքնված է հենց հարցադրողի խոսքում:*

- Մենք կարծեմ հին ծանոթներ ենք, *այնպես չէ՞*: - Իհարկե, Մոսկվայում ենք հանդիպել:

- Աճառյանը Սորբոնում է սովորել, *այնպես չէ՞*: - Այո՛, Աշակերտել է Մեյեին:

- Զեկուցողը ի՞նչ նոր բան ասաց որ: - Ոչինչ. բոլորն էլ հայտնի բաներ էին:

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (ՀՈՐԴՈՐԱԿԱՆ) ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 50. Եթե հարցական նախադասություններով խոսողը տարբեր նպատակներով հարցում է կատարում որևէ անձի, իրի, երևույթի, հատկանիշի և այլնի վերաբերյալ, ապա *հրամայական-հորդորական նախադասությունների* միջոցով իր ցանկությունը, կամքը, խնդրանքը, հրամանն ու առաջադրանքն է արտահայտում, երբեմն էլ հորդորում, հրահրում է՝ որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու, որևէ հարց, խնդիր լուծելու կամ չլուծելու:

Հրամայական նախադասությունների ձևավորման ամենակարևոր հատկանիշը շեշտն ու հնչերանգն են: Սրանցում շեշտը համընկնում է տրամաբանական շեշտին և սովորաբար դրվում է հրամայական եղանակներով արտահայտված բայ-ստորոգյալների վրա, անհրաժեշտության դեպքում դրվում է նաև այլ անդամների ու բառերի վրա, և դրանք տարբերվում են ավելի բարձր տոնայնությամբ, իրենց ձայնային ուժգնությամբ առանձնանում են մյուս բառերից ու բառակապակցություններից:

Հրամայական նախադասությունները մեծ մասամբ *կամային բնույթ* ունեն և ծառայում են խոսողի կամքի արտահայտմանը: Նայած այն բանին, թե խոսողը ինչ իմաստ է դնում իր խոսքի մեջ, ինչ նպատակով է արտաբերում իր ասելիքը. այն խնդրա՞նք է, հրամա՞ն, առաջադրա՞նք, ըստ այդմ էլ իր ձայնին տարբեր տոնայնություն է տալիս, տարբեր ուժգնություն, դրանով էլ միևնույն կառուցվածքն ունեցող նախադասությունները *իմաստային տարբեր լիցքեր* կունենան, տարբեր սաստկություն:

Այս իմաստով համեմատենք ձախ և աջ կողմերի նույնակազմ նախադասությունները՝ ձախ կողմինը արտաբերելով բարձր՝ *հրամայական* տոնայնությամբ, աջ կողմինը՝ *թույլ, հորդորական, խնդրական.*

Մի՛ գնա: Չգնաս:	Մի՛ գնա, Չգնա՛ս:
Վերցրո՛ւ պայուսակդ ու դպրո՛ց գնա:	Վերցրո՛ւ պայուսակդ ու դպրո՛ց գնա:
Արի ինձ *մո՛տ,* բան եմ ասելու:	Արի ինձ *մո՛տ,* բան եմ ասելու:
Ի՛նձ տուր այդ թղթերը:	Ի՛նձ տուր այդ թղթերը:

Ակնհայտ է, որ առաջին շարքում *հրամայական* նախադասություններ են, երկորդում՝ *հորդորական:*

Կամ մի՞թե նույն իմաստներն ունեն հրամայական բայերով արտահայտված հետևյալ նախադասությունները. «Քնած առյուծնե՛ր, բաշերդ թոթվե՛ք» (Ավ. Իս.): «Գնա՛, իմ խե՛ղճ գիրք, գնա՛ մարդամե՛ջ» (ԽԱ):

Թե՛ այս և թե՛ վերևի օրինակները հաստատում են, որ հրամայական եղանակի բայերով արտահայտված բոլոր նախադասությունները *հրամայական* կոչելը նեղացնում է այդ տեսակի մեջ մտնող նախադասությունների իմաստները, և ճիշտ կլինի դրանք կոչել *հրամայական – հորդորական* և ուսումնասիրել *իրենց ենթատեսակներով:*

§ 51. ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ - Այս ենթատեսակի մեջ մտնող նախադասություններն արտաբերվում են *ավելի՛ բարձր հնչերանգով, ուժգին տոնայնությամբ,* որովհետև արտահայտում են *հրաման, կարգադրություն, պահանջ, անհրաժեշտաբար կատարվող գործողություն,* ինչպես նաև *չկատարվող, մերժվող գործողություն:*

Հրաման – Թռե՛ք, բազենե՛ր, *սուրացե՛ք,* տանկե՛ր, դեպի թշնամին (Ավ.Իս.):

- Պատասխա՛ն տուր ինձ, *մատնի՛չ սևաչյա (ՀԹ):*

Կարգադրություն - Մտի՛ր ջուրը և մաքրվի՛ր Համիդի տված աղտեղություններից, - կարգադրեց Այվազովսկին շանը (Վագներ): Կարգի՛ բերեք ննջարանները և անցեք տողանի՛, - կարգադրեց ջոկատավարը (Պպր.):

Պահանջ – Հա՛ց բերեք, արա՛ղ բերեք քեռի Խեչանի համար (ՀԹ):

Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի արջի ցեղերին (ՎՏ):

Ելե՛ք, զարթնեցե՛ք, կանգնեցե՛ք արթուն,

Գիտցե՛ք՝ քնում են գետերն ու քամին,

Սակայն չի քնում երբեք թշնամին (Ավ.Իս.):

Անհրաժեշտաբար կատարվող կամ չկատարվող գործողություն - Որպես փոթորիկ *իջե՛ք* ավերիչ ԵՎ *խորտակեցե՛ք* աշխարհն այս զազիր (ՎՏ):

Շմասնակցե՛ք երբեք այդ նենգ դավադրությանը (ԴԴ):

Արգելք, մերժում – Ո՛չ, *չե՛ս գնա* այդ քայլին (Գար.):

- Իմ քորփա էրեխին էն անիրավ աշխարքը մի՛ գցիլ, *չեմ ուզում*, - լալիս էր կինը (ՀԹ):

Իշխաննե՛ր, *չծախե՛ք* մեր հոգիները, *չուրանա՛ք* մեր հավատը (ԴԴ):

§ 52. ՀՈՐԴՈՐԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ - Այս տիպի նախադասություններում *շեշտվածությունն ավելի մեղմ է, ինչերանգը՝ ցածրացող*, դրա շնորհիվ էլ խոսողը ոչ թե հրամանն ու կարգադրություն է անում, այլ մի դեպքում *խնդրում է*, մյուս դեպքում՝ *հորդորում՝ խոնարհաբար պահանջում* և այլն: Նույնիսկ խնդրանքը, աղերսանքը, մաղթանքը հնչերանգի տարբեր ելևէջներով են պայմանավորված: Օրինակ՝ *«Օգնի՛ր ինձ*, Մարիա՛մ, բարեխոս եղիր իմ և իմ միջև», Սևակը այս տոնայնությամբ իսկապես օգնություն է հայցում, իսկ հետևյալ տողերով Սարմենը Կոմիտասի ներկայությունն է տենչում՝ հաստատ իմանալով, որ Կոմիտասը չկա և իր կանչելով ու տենչալով էլ չի գա՝

Կաքավն է երգում սարում, Կանչում է՝ *ե՛կ, Կոմիտա՛ս,*

Նստի՛ր քո չինարի տակ, *Մրմնջա՝* «Ծիրանի ծառ», «Անտունի», «Ծիծեռնակ»:

Բերենք հորդորականի մի քանի տեսակներ

Խնդրանք, աղերսանք – Քու՛ն եղիր, բալա՛ս, աչքդ *խու՛փ արա ...*

Սու՛րբ Աստվածամայր, բալիկիս *քո՛ւն տուր* (ՌՊ):

Մի՛ լար, մի՛ թացիր աչերդ (ԴԴ): *Դարձի՛ր ինձ մո՛տ, Վերադարձի՛ր* դու նորից (ՎՏ):

Հորդոր - Սրի՛, եղբա՛յր, փառաբանենք մեր քաղցրաբառ հայոց լեզուն (ՆՋ):

Լսի՛ր, հայ՛ր, *ընդունի՛ր* տառապյալ որդուդ աղաչանքը, մի՛ արատավորիր Սամիկոնյանների պայծառ անունը հավիտենական ամոթով» (Րաֆ.):

Պատգամ – Լսի՛ր, որդի՛ս, պատգամ որպես, Սիրող քո մոր խոսքը սրտանց...

Այսօրվանից հանձնում եմ քեզ հայոց լեզուն հազարագանձ,

Պահի՛ր նրան բարձր ու վճիտ Արարատի սուրբ ձյունի պես (ՍԿ):

Եկու՛ր, որդյա՛կ, հայրենի տունդ շենցու՛ր (ԴՎ):

Ազնի՛վ եղիր ամեն ինչում... Դու մի՛ եղիր կյանքում տհաս (ՊՍ):

Կոչ, հրավեր - Սրի՛, իմ սոխա՛կ, *քող* պարտեզ *մերին*,

Տաղերով *քու՛ն բեր* տղիս աչերին (ՌՊ),

Սրի՛, բլբու՛լ, *խոսի՛ քարըն*, օրհնվի քո էկած սարըն (Ս-Ն)

Եկե՛ք, քույրե՛ր սեգ սարերի... *Եկե՛ք ջահել* սիրահարի սերը ողբանք վաղամեռ (ՀԹ):

Հորդորական նախադասությունների մի տեսակն էլ դասագրքերում

լայնորեն գործածվող *առաջադրանքներն են,* որոնցով աշակերտներից պահանջվում է *կատարել* ինչ-որ առաջադրանք. *«Արտագրի՛ր և լրացրո՛ւ* բաց թողնված տառերն ու կետադրական նշանները»: «*Կարդացե՛ք* պատմվածքը, *բաժանեցե՛ք* հատվածների և *վերնագրե՛ք* (դասագրքերից):

Ինչպես երևում է բերված օրինակներից (և ընդհանրապես), հրամայական նախադասություններում սովորաբար ենթակաները զեղչվում են, դրանց փոխարեն առատորեն են գործածվում կոչականները, որոնք նույնպես շեշտվում են, բայց ավելի թույլ, քան հրամայական շեշտ կրող բառերը. (*«Պատմի՛ր* ինձ, ով *Արարա՛տ,* թե Թուրքիայում քանի նոր Կոմիտասներ են թաղել» (Թարգմ.): «*Պտտվի՛ր, պտտվի՛ր, կարուսե՛լ,* ես քո երգը վաղուց եմ լսել» (ՎՏ):

Իսկ ինչո՞վ է պատճառաբանվում հրամայականներում կոչականների առատ գործածությունը և ենթաների զեղչումը. ինքնըստինքյան հասկանալի է, որ հրամայական նախադասությունների ստորոգյալները արտահայտվում են բայի երկրորդ դեմքով, որը խոսակիցն է, որն իր մեջ ունի ԴՈՒ և ԴՈՒՔ ենթակաները, որոնց բառային գործածությունը իսկապես ավելորդ կլիներ, իսկ կոչականներն էլ հենց այն անձերն ու անձնավորված առարկաներն են, որոնց հետ հաղորդակցվում է խոսողը: Փաստորեն, այս դեպքում *ենթական և կոչականը համընկնում են,* և քանի որ դերանվամբ արտահայտված ենթական շատ անորոշ է, իսկ կոչականը շատ որոշակի է ցույց տալիս անձը կամ առարկան, որին դիմում է խոսողը, այդ պատճառով էլ ենթական խոսքից դուրս է մնում: Իսկապես, ինչի՞ նման կլիներ, եթե Տերյանն ասեր՝ «Դու պտտվի՛ր, պտտվի՛ր կարուսե՛լ... կամ՝ Թումանյանն ասեր՝ Դուք եկեք, քույրեր ... և այլն:

Երկրորդ դեմքի հետ կոչականը կիրառվում է միայն այն դեպքում, երբ խոսողը հատուկ ընդգծում, շեշտում է ենթական, թե ով կամ ինչ է նա. այսպես՝

«Ազատությա՛ն զանգ, դու վե՛հ ղողանջե... (Ավ.իս.):

կամ՝ «*Արքա՛, դու* լա՛վ խորհիր նաև գալիքի մասին...» (ՊՋ):

Ասվեց, որ թե՛ հրամայական և թե՛ հորդորական նախադասություններում շեշտը հիմնականում դրվում է ստորոգյալների վրա:

Չի բացառվում նաև այլ անդամների վրա դրվելը, այսպես՝ «Հիմա շարադրություն գրիր» նախադասության մեջ կարելի է մի դեպքում շեշտել *հիմա* ժամանակի պարագան, մյուս դեպքում՝ *շարադրություն* ուղիղ խնդիրը: Այս դեպքում ստորոգյալների շեշտը թուլանում է, բայց չի վերանում, ավելի զորեղանում է տրամաբանական շեշտ կրող անդամի արտաբերումը:

Արգելական հրամայականներում շեշտը միշտ *Մի* արգելականն է կրում: Այս դեպքում պետք է նկատի ունենալ բառի բազմիմաստությունը: Եթե այն բարձրացող է և կտրուկ շեշտ է կրում, ուրեմն արգելական հրամայականի ցուցիչ է՝ *Մի՛ խառնեք* մեզ ձեր վայրի արջի ցեղերին (ՎՏ):

Դու *մի՛ հավատա* ժպտուն աչքերին, դու *մի՛ խաբվիր* ժպտուն աչքերից – (ՀԹ), իսկ եթե *Մի*-ն ավելի թույլ շեշտով է արտաբերվում, մոտենում է եղանակավորող բառերին, ուրեմն նախադասությունը կլինի հորդորական:

Մի՛ տրտնջա ցավիդ համար – սիրո առատ աղբյուր է նա (ՎՏ):

- Խնդրում եմ, մի՛ խանգարիր):

Հրամայական և հորդորական նախադասություններում, եթե ստորոգյալներն արտահայտված են *հարադիր բայերով*, շեշտը դրվում է հարադիր բայի *անվանական բաղադրիչի վրա (Դո՛ւրս* եկեք կրկին շիրմից, խավարից: *Վե՛ր* կաց, վե՛ր իգի՛ր - (ՀԹ):

Մո՛տ եկ, լալկա՛ն աղջիկ: *Ցույց* տուր գտածդ:

Բացի բայի հրամայական եղանակից, սակավ դեպքում հրամայական նախադասություններում կարող են հանդես գալ նաև մյուս եղանակների բայերը (Սահմանական՝ *Գնում ես* տուն, և վերջ):

Պայմանական եղանակի երկրորդ դեմքի բայերով նույնպես հորդորական նախադասություններ են կազմվում, որոնք հիմնականում խորհրդի, խրատի արժեք ունեն (Կարգին կհագնվես, վզկապդ էլ կկապես: Շուտ *կվերադառնաս ու կպատմես* ներկայացման մասին):

Հարկադրականով կազմվող հորդորական հրամայականներում հնչերանգի տոնայնությունը ավելի բարձր է լինում, հրամայականի շեշտը ավելի է ընդգծվում (Անպայման *պետք է* այդ մասին *խոսես: Պետք է* նախ *աշխատեք*, ապա նոր մտածեք բարիքները վայելելու մասին: *Չպետք է թույլ տանք*, որ ուզածն անի):

Ըղձական եղանակի բայածևերով (դրական, ժխտական, եզակի, հոգնակի) նույնպես հորդորական նախադասություններ են կազմվում (Դուք զենքով *կռվեք*, մենք՝ խոսքով: Գնացե՛ք տատիկի տուն, բայց չարություն *չանեք):*

Հորդորական նախադասությունների ստորոգյալները կարող են արտահայտվել նաև *ըղձականի* ինչպես *առաջին*, այնպես էլ *երրորդ* դեմքի բայերով: Օրինակներ՝ *առաջին դեմքի հոգնակի թվով* (Սակայն *թողնենք* հրաշքները, գնա՛նք, *տե՛ր արքա, գնանք* քո ցավին (ՀԹ): Հանգստացանք, *գնանք* մի քիչ էլ *կարդանք): Երրորդ դեմքի եզակի թվով.* այս դեպքում դիմավոր բայի հետ գրեթե միշտ հանդես է գալիս *թող* եղանակավորող բառը՝ *Թո՛ղ գա* ինձ մոտ: Թո՛ղ հաստատ մնա մեր թագավորը (ՀԹ): «Թող միշտ *ծածանվի* ազատության դրոշը՝ Մասսի ձյունապատ գագաթին (ԳԹ):

Վերևում քննվեցին միայն երկկազմ հրամայական-հորդորական նախադասությունները: Հրամայական-հորդորական են լինում նաև *միակազմ* նախադասությունները. Ջուրը չտեսած՝ *մի՛ բոբիկանա: Մի՛ լինիր* ուրագի պես՝ միշտ դեպի քեզ, միշտ դեպի քեզ (Առած): Սրանք *անորոշ դիմավոր* միակազմ նախադասություններ են:

Բայական անդեմ նախադասությունները, հատուկ հնչերանգով արտաբերելիս, նույնպես կարող են *հրաման, կոչ, կարգադրություն* արտահայտել (*Հետևել* իմ օրինակին: *Բարձրացնել* ուսման որակը: *Կրակել, չզիջել:* Ընդմիշտ *լռել, չխոսել):*

Միակազմ անվանականները նույնպես շեշտադրությամբ կարող են հրամայական լինել. *Ո՛չ տրտունջ, ո՛չ մրմունջ* սգավոր... (ՎՏ): *Դեպի ռազմի դաշտ, դեպ ամմահացում* (Ավ.Իս.): *Օ՜ն անդր առաջ* (Ղ.Ալիշան): *Առա՛ջ, Լռությո՛ւն* և ա յլն:

§ 53. Դպրոցական և բուհական դասագրքերում *ըղծականը*, որպես նախադասության հնչերանգային առանձին տեսակ, չի նշվում, մինչդեռ Մ.Աբեղյանը «Խոսքերի (նախադասությունների) տեսակները ըստ բայի եղանակների» բաժնում գրում է. «Բայի եղանակները ցույց են տալիս խոսողի վերաբերմունքը խոսքի բովանդակության նկատմամբ» և ավելացնում է՝ *«Ըղծականն ամենից առաջ ցույց է տալիս մի եղելություն, որ ցանկացվում է խոսողից կամ կախված է առաջին դեմքի կամքից: Այսպես գործ է ածվում ըղծական փափագ, տենչանք ցույց տալու համար՝ օրհնությունների, անեծքների, բարեմաղթությունների, երդումների մեջ»*[28]:

Որպես օրինակներ Աբեղյանը բերում է՝ «*Գնամ, տեսնեմ* նրան.: *Տեսնես* ուրիշ աշխարհներում էլ այսպիսի սարեր կա՞ն: *Երանի գիտենամ*, թե նա ի՞նչ է անում»: Ճիշտ է, *ըղծականը* Աբեղյանը դիտարկում է որպես բայի 5 եղանակներից մեկը և տեղնուտեղն էլ գրում է, որ *հրամայականով և ըղծականով* կազմվում են *ցանկության խոսքեր:* Սրանից ելնելով էլ՝ մենք ընդունում ենք նաև *ըղծական նախադասություններ:*

Դասագրքերում ու ձեռնարկներում նախադասությունների *ըղծական* տեսակը ծուլված է *բացականչականների* մեջ և չի էլ նշվում, որ առանձնանում է նրանցից:

Մինչդեռ օրինակներն էլ վկայում են, որ ըղծականները առանձին տեսակներ են, որովհետև էապես տարբերվում են բացականչական նախադասություններից մի քանի հատկանիշներով.

Ամենից առաջ՝ ըղծականները արտահայտում են խոսողի *փափագը, իղձը, տենչանքը, օրհնանքներն ու անեծքները*, մինչդեռ *բացականչականները* արտահայտում են *ուրախություն, հիացմունք, զարմանք, բացականչություն, հանդիմանություն, ափսոսանք, վախ, հեգնանք* և այլն:

Երկրորդ՝ ըղծականների հնչերանգը համեմատաբար *հանգիստ է, խաղաղ, զգացմունքային,* մինչդեռ բացականչականների հնչերանգը ավելի *բարձր է, պոռթկուն* (Վա՜հ, էսքան էլ չար լինի մարդ), երբեմն էլ՝ *ահազանգող ու ահաբեկող:*

Եվ *երրորդ*՝ եթե բացականչականներում առատորեն են գործածվում ձայնարկություններն ու վերաբերականները, ապա ըղծականներում դրանք սակավադեպ են:

Սրանց ընդհանրությունն այն է, որ երկուսում էլ ստորոգյալները արտահայտվում են հիմնականում բայի ըղծական եղանակով, և երկու տեսակներն էլ չունեն բառաքերականական արտահայտման միջոցներ, չեն առանձնանում նաև կետադրական նշաններով (բացականչականներում ստորակետերով տրոհվում են ձայնարկությունները և որոշ վերաբերականներ):

Եվ վերջապես, մեր պոեզիան լեփ-լեցուն է ըղծական նախադասություններով, մինչդեռ բացականչականները շատ քիչ են: Քննարկենք նախա-

---

[28] *Մ.Աբեղյան,* Հայոց լեզվի տեսություն, Ե.,1965, էջ 557, 590-600:

դասությունների հնչերանգային այս երկու տեսակները՝ իրարից զատ:

Ըղձական նախադասությունները, ինչպես ասվեց, արտահայտում են խոսողի *հոգեկան ապրումները՝ ցանկություն, տենչանք, կամքի իրականացում, երազանք*, և սրանց հնչերանգը ավելի մեղմ է, ավելի զգացմունքային.

Թռչե՛ի մտքով տուն, Ուր իմ մայրն է արթուն,
Տեսնե՛ի այն առուն Կարոտով ես անհուն... (ԳՍ):

Լինե՛ինք մենակ ես ու դու Գետի կանաչ եզերքին.
Դու խառնեիր քո հոգու մրմունջները իմ երգին (ԳՍ):

Լիներ, այնպես լիներ, որ ինքը *հնձվոր լիներ*, նրանց արտը *հնձեր*, Սոնան հաց *բերեր* իրեն, շապիկը *քրտներ* և քրտնած *ճստեր* կողքին (ԱԲ):

... Եվ Չարենցը *համբուրի* քո շրթունքները մեռած (ԵՉ):

Ըղձական նախադասություններում մեծ կիրառություն ունի *լինել* բայի ըղձականի անցյալի ապառնին, որով ավելի է ընդգծվում խոսողի ցանկությունը.

Լինե՛ի չոբան սարերում հեռու, *Գայիր, անցնե՛իր* վրանիս մոտով (ՎՏ):

Հրաշք լիներ, կրկնվե՛ր այն հրաշքը իրական,
Առուն ստվերս տաներ ջաղացպանի աղջկան (ՀՍ):

Լիներ հեռու մի անկյուն, *լիներ* արդար մանկան քուն... (ՀԹ):

Ըղձական նախադասության ստորոգյալները կարող են արտահայտվել նաև ըղձականի ժխտական ձևերով, որոնք ավելի են սաստկացնում իղձը և ավելի շուտ ափսոսանք են արտահայտում կատարվածի վերաբերյալ. *«Չգայիր էլի, չհանդիպեիր, խաղաղված անդորրս չվրդովեիր»* (ԳԹ): *«Ոտքս կոտրվեր, էս կողմերով* չանցնեի ու այս ավերածությունները *չտեսնեի* (Կումայրի):

Ըղձական նախադասություններում, հատկապես ժողովրդախոսակցական լեզվում, առատ գործածություն ունեն *երնեկ, երանի, երանի թե, ուր է, ուր է թե* զգացմունք արտահայտող բառերը.

Երնե՞կ, երնե՞կ երազ լինիմ, Թռնիմ մոտդ, մայրի՛կ ջան (Ավ.Իս.):

Երնեկ ունենամ հազար ու մի կյանք, հազարն էլ սրտանց քեզ մատաղ *անեմ (ՆԻ):*

Երանի թե մի օր հանկարծ Քանաքեռից *իջնեիր*
Եվ քո սիրած Նորքում կանգնած՝ Երևանին *նայեիր* (Սարմեն):

Ուր է թե մի հրաշք լիներ, ու նորից ջահելանայի (ԳԹ):

Սի՞թե բերված նախադասություններում *բացականչություն կա*. դրանք իրարից որակապես տարբեր խոսքային ու լեզվական միավորներ են:

Ինչպես երևում է բերված օրինակներից, ըղձական նախադասությունները նույնպես լինում են *պարզ և բարդ, միակազմ և երկկազմ:* Հատկապես

բարդ ստորադասական կառույցներում հաճախակի կիրառվում է նաև ՈՐ թարմատարը:

Ըղձական նախադասություններով են արտահայտվում են նաև *բարեմաղթանքներ՝ Բարի ճանապարհ,* վարդապե՛տ, վերադարձ բարի (Կոստան Զարյան): *Խաղաղությո՛ւն ձեզ,* մեր անբա՛խտ պապեր – (ՀԹ): - *Գնա՛ս բարով,* վարժապետ, բարի՛ ճանապարհ, վերադարձ բարի (ԽԴ):

Օրհնանքներ՝ Երկար կյանք *ունենաս,* որդի՛, Աստված քեզ երկար *կյանք տա (ՊՂ):* Յոթ որդով *սեղան նստես:* Հող *բռնես՝ ոսկի դառնա* (ՊՂ): Նաև անեծքներ՝ Լավ օր *չտեսնես,* Աստված պատիժդ *տա:* Ցամաք հացի կարոտ *մնաս* և այլն: Ըղձականով են արտահայտվում նաև հայհոյանքները:

Ըղձական նախադասություններում ստորոգյալները կարող են արտահայտվել նաև բայերի *ենթադրական և հարկադրական* եղանակներով (*Կգնայի* գյուղ, մի լավ *կիանգստանայի, կգայի* ու թարմ ուժերով գործի *կանցնեի: Կգայիր, կնստեիք, կվերհիշեիք* մեր մանկությունը, *կզրուցեիք, կջահելանայիք):*

Պիտի փարվեմ չքնաղ լանջիդ... (Ավ.Իս.): Պիտի մի անգամ էլ *վանա ծով գնամ, պիտի* Աղթամարում նորից *մոմ վառեմ ու նոր մեռնեմ* (Սարմեն):

ԲԱՑԱԿԱՆՉԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 54. Ինչպես ասվեց վերևում, բացականչական նախադասությունները նույնպես *զգացմունքային են* և արտահայտում են խոսողի *ուրախությունը, ցնծությունը, հիացմունքն ու զարմանքը, հանդիմանությունն ու բացականչությունը, ափսոսանքն ու վախը, հեգնանքն ու դժգոհությունը* և նման զգացմունքներ: Սրանց ձևավորման միջոցը նույնպես հնչերանգն է, բայց ի տարբերություն ըղձական նախադասությունների, սրանց հնչերանգի տոնայնությունը ավելի բարձր է ու ավելի շեշտված, սրանցում շեշտը կարող է ընկնել նախադասության ցանկացած անդամի (նույնիսկ ոչ *անդամի)* վրա՝ ձայնարկությունների, վերաբերականների, և վերաբերել ամբողջ նախադասությանը: Բացականչական հնչերանգով արտասանվող բառը գրավոր խոսքում իր վրա է կրում երկարացման (բացականչական) նշան կամ շեշտ՝ *Հե՛յ վա՛խ,* կոտրան իմ թևերը, ընկա գիրկդ, Ալագյա՛զ (Ավ. Իս.):

Բացականչական նախադասություններն արտահայտվում են բառաքերականական հետևյալ միջոցներով.

1. *Սահմանական եղանակի* տարբեր ժամանակաձևերի բայերով՝ *Եկա՛ն, եկա՛ն, բերի՛ն, բերի՛ն,* Մեր Կոզբադին գնաց Սասուն, Կանայք բերեց քառսուն-քառսուն (ՀԹ): Յարիս *տարա՛ն,* ջանիս *տարա՛ն, Հոնգուր-հոնգուր կուլամ ես (Ավ. Իս.):* Գալու՛ եմ, գալու՛, *մի վախենա...* (ՎԱ):

2. *Հրամայական եղանակի* բայածևերով, որոնք ոչ թե հրաման ու կարգադրություն են արտահայտում, այլ *բացականչություն, ահազանգ՝ Մի եկե՛ք, եկե՛ք* տեսեք՝ ինչ է կատարվում այստեղ:

Ենթադրական և հարկադրական եղանակներով՝ Կգնա՛ս, կգնա՛ս, դու

խելոք ես, կգնաս ու հանճնարարությունս կկատարես: *Պիտի գոռա՜մ, պիտ կրկնեմ* անդադար՝ Ազատություն (ՄՆ):

Դու պիտի ծաղկե՛ս, երկի՛ր հայրական, Քո ոգով, ոճով և բարձրագլուխ,
Դու պիտի հնչես, հնչես հաղթական, Իմ հին հա՛յ լեզու՝ քաղցր ու սրտաբուխ (Ավ. Իս):

Ըղձական եղանակի բայածևերը նույնպես կարող են բացականչական նախադասություններ ձևավորել, միայն թե այս դեպքում նախադասությունը պետք է արտաբերվի ավելի բարձր հնչերանգով և բացականչություն արտահայտի՝ Քո հողին *մեռնե՛մ*, անգի՛ն հայրենիք... (Ավ.Իս.): Ա՛խր ես *ինչպե՛ս վեր կենամ գնամ*... (ՀՍ):

Բացականչական նախադասությունների ստորոգյալները կարող են լինել նաև *անկանոնական*, մանավանդ երբ դրանց հետ հանդես են գալիս ձայնարկություններ ու հարցահարաբերական դերանուններ՝ *Օ՛*, գրքերի աշխարհը *տիեզերք է անեզր (ԵՉ):*

Էս ի՛նչ զուլում *աշխարհ է*, սրտացավ ընկեր չկա (Ավ.Իս.): Մեր տեսածը *իսկապես հրա՜շք էր:* Մեր լեռնաշխարհի բնությունը *շա՜տ գեղեցիկ է, շա՜տ հմայիչ (ՎՍ):*

Ձայնարկությունները բացականչական նախադասությունների էությունն են: Ձայնարկություններ պարունակող գրեթե բոլոր նախադասությունները բացականչական են, որովհետև ձայնարկություններն անպայման արտաբերվում են շեշտման կամ հարցման հնչերանգով, որը վերաբերում է ամբողջ նախադասությանը:

Ձայնարկությունների, ինչպես և ըղձական եղանակի բայերի հետ սովորաբար գործածվում են նաև կոչականներ, որոնք կրկնակի շեշտադրություն են հաղորդում ամբողջ նախադասությանը: Բերենք մի քանի օրինակ.

Հե՛յ, ո՞ւր ես, Դավի՛թ, հայո՛ց պահապան,
Քարը պատռվի, դուրս արի մեյդան (ՀՄ):

Հե՛յ քաո, հե՛յ քաո, լանջե՛ր մարջաո, մատաղ լինի հոգիս ձեզ
(Վ.Աղասյան):

Ա՛յ իմ Արա՛զ, ջուրդ վարար, Սիրուն յարիս յարաբ տեսա՞ր (Հ.Հովհ.):

Է՛յ, ջան-հայրենիք, ինչքա՜ն սիրուն ես... (Ավ.Իս.)

Հարցահարաբերական դերանունները նույնպես առատությամբ են գործածվում բացականչական նախադասություններում՝ նույնպես շեշտվելով՝

Ի՞նչ են տարել նրանք կյանքից, թե *ի՞նչ տանես* դու քեզ հետ (ՀՄ):

Ու՞ր է քո հրեղեն ծին, *Ո՞ւր է* քո հոր թուրկեծակին (ՀՄ):

Ինչքա՜ն ծաղիկ պիտի բուսներ, որ չբուսավ այս հողին (ՀՄ):

Մանկություն իմ քնքշագին, ես քեզ *ինչպե՜ս մոռանամ* (Սարմեն):

Ծննդավայր իմ հարազատ, Քեզնից *ինչպե՞ս հեռանամ* (ՀՍ):

Բացականչական նախադասություններում մեծ կիրառություն ունեն նաև *ողջու՜յն, կեցցե՜, ափսո՜ս, երանի՜* ձայնարկությունների արժեք ունեցող բառերը.

Ափսո՜ս, Անու՛շ, սարի ծաղիկ, *Ափսո՜ս* իգիթ քո յարին... (ՀԹ):

Ողջո՜ւյն, ողջո՜ւյն ձեզ հին ու նոր, արի, բարի ընկերներ (ՀԹ):

Կեցցե՜ կատուն, որ իր փորի համար մուկ է բռնում (ՄՆ):

Ինչպես դժվար չէ նկատել բերված օրինակներից, բացականչական նախադասությունները ևս թե՛ կառուցվածքային և թե՛ հնչերանգային տեսակետից միատարր չեն. դրանց մեջ կան թե՛ *պարզ և թե՛ բարդ, թե՛ միակազմ և թե՛ երկկազմ,* այդպես էլ *պատմողական, հարցական, հրամայական ու ըղձական նախադասություններ.* դրանց տարբերակման հիմնական միջոցը բանավոր խոսքն է՝ իր տրամաբանական շեշտով, հնչերանգային ելևէջներով, *խոսողի անհատական վերաբերմունքով:* Ըստ այս ամենի, միևնույն նախադասությունը կարելի է արտաբերել տարբեր հնչերանգներով, որով էլ պայմանավորված կլինի նրա բնույթը: Օրինակ, ի՞նչ հնչերանգի է Հ.Հովհաննիսյանի հետևյալ նախադասությունը՝

Քեզ սպասող չմնաց, Ո՞ւր ես գալիս, ա՛յ գարուն,
Գովքդ ասող չմնաց, Ջու՛ր ես գալիս, ա՛յ գարուն:

Հարցակա՞ն, հրամայակա՞ն, թե՞ բացականչական: Նայած թե այն ինչպես է արտասանվում:

Հաճախ հնչերանգային տարաբնույթ նախադասությունները «մաքուր» վիճակով հանդես չեն գալիս (դա երևում է նաև բերված օրինակներում), թե՛ գրավոր և հատկապես բանավոր խոսքում տարբեր երանգի նախադասություններ կարող են հանդես գալ *համակցված* կերպով և նույն կառույցում լինեն թե՛ մեկ և թե՛ մյուս երանգի նախադասություններ: Օրինակ՝ Ավ. Իսահակյանի հետևյալ քառատողում, որտեղ կա 5 պարզ նախադասություն, նրանցից մեկը հարցական է, մյուսը՝ հորդորական, իսկ մյուս երեքը ըղձական երանգի են.

Ինչ որ ցանկաս՝ Կուզե՞ս լինիմ,
Լինիմ երկինք ու երկիր,
Լինիմ ծո՛վ, ժայռ, ա՛րև, լուսի՛ն,
Միայն, միայն ինձ սիրիր...

Մեր ասածն ավելի է հաստատում նաև այն հանգամանքը, որ միևնույն նախադասության մեջ հաճախ գործածվում են թե՛ ձայնարկություններ, թե՛ հարցահարաբերական դերանուններ և թե՛ վերաբերականներ, ինչպես նաև կոչականներ: Այս դեպքում նախադասության մեջ շեշտվում են բոլոր շեշտակիր միավորները, և այդ բոլորը միաձուլվում են մի հնչերանգի մեջ, որը

տարբեր ելևէջումներով իր մեջ է ներառում ամբողջ նախադասության հնչերանգությունը և ավարտվում է նախադասության վերջում: Սա էլ կոչվում է *հնչերանգային ավարտվածություն,* ինչը պարտադիր է բոլոր նախադասությունների համար:

ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 55. Թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքում ենթակա և ստորոգյալ ունեցող՝ *երկկազմ* նախադասությունների հետ հաճախ գործածվում են նաև այնպիսի նախադասություններ, որոնցում բացակայում են երկկազմին հատուկ անդամներից մեկը՝ *ենթական, կամ երկուսը միասին՝ թե ենթական և թե՛ ստորոգյալը,* բայց հաղորդակցումը տեղի է ունենում. խոսողը, խոսակիցն ու ընթերցողը որոշակիորեն հասկանում են հաղորդման իմաստը, հասկանում են, թե ինչի մասին է խոսքը: Նախադասությունների այս տեսակը քերականության մեջ կոչվում է *միակազմ, միաբևեռ կամ միակենտրոն:*

Ուրեմն՝ միակազմ նախադասություններում լինում է մեկ կենտրոնական *գերադաս* անդամ, որը ոչ *ենթակա է* և ոչ էլ *ենթակա ունեցող ստորոգյալ,* այլ մի սովորական անուն, բառ- բառակապակցություն (Ամառ: Էջմիածին: Սիրգ ու փոշի), *ենթակա չունեցող դիմավոր բայ* (Աքենց: *Ասում եմ՝* ուռին աղջիկ էր ինձ պես: *Գնա՛ մեռի, արի՝* սիրեմ): *Կամ անորոշ դերբայ (կռվել, չզիջել):* Հենց այդ մեկ անդամի շուրջն էլ ծավալվում է խոսքը, ասելիքը: Ըստ որում, այս տիպի նախադասությունները լինում են ինչպես համառոտ (*Աշուն: Չխոսել),* այնպես էլ ընդարձակ *(Այսօր կարծես շուտ լուսացավ: Ամառային ուրախ տրամադրություն),* լինում են նաև բարդ *(Սոխ չես կերել, սիրտդ ինչո՞ւ է մրմռում):*

Միակազմ նախադասությունների ձևավորման հիմնական միջոցը *հնչերանգն է՝* իր ավարտվածությամբ ու տարբեր տեսակներով՝ հարցական, հրամայական, ըղձական, պատմողական:

Միակազմ նախադասությունները ավելի շատ ոճական արժեք ունեն. դրանք մի տեսակ *կարճում են խոսքը.* ասելիքը դարձնում են ավելի *դիպուկ ու նպատակասլաց,* ավելի *պատկերավոր ու գեղագիտական:* Դրանց մի մասը լսողին, ընթերցողին հնարավորություն է տալիս ասվածը ընկալել յուրովի, այն ընկալել իր ցանկացած իմաստով, ինչպես ինքը կուզենա մեկնաբանել այն: Օրինակ՝ մի՞թե Պ.Սևակի հետևյալ միակազմ նախադասությունները կունենային այն հմայքը, լիցքն ու տարողունակությունը, եթե նա դրանց արտահայտած միտքը ներկայացներ երկկազմ նախադասություններով.

Ութսունմեկ թիվ: Վաղարշապատ: Էջմիածին:
Սիրգ ու փոշի: Ամխիղճ արև:
Շողամրցում Մասիսների, Արագածի:
Սրբագործված հին-հին քարեր:

Եվ Մայր Արաքս, և Մայր Տաճար:
Տաճարի շուրջ՝ սուրբ, սուրբ քարեր,
Հնչող,
Շնչող,
Կանչող զանգեր...
Եվ ծեմարան՝ մտքի կաճառ:

Հայերենի միակազմ նախադասությունները բաժանվում են 3 խմբի՝ ԴԻՄԱՎՈՐ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆԴԵՄ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲԱՌ-ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Միակազմ նախադասությունների այսպիսի բաժանման հիմքում նրանց քերականական կառուցվածքն է՝ մասնավորապես քերականական *դեմք ունենալու կամ չունենալու հատկանիշը*, այստեղից էլ նրանց անվանումները՝ *դիմավոր* (քերականական դեմք ունեցող), *անդեմ* (քերականական դեմք չունեցող): *Բառ-նախադասությունները* դասվում են *անդեմների* շարքը:

ԴԻՄԱՎՈՐ ՄԻԱԿԱԶՄ (ԱՆԵՆԹԱԿԱ) ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 56. Այս տիպի միակազմ նախադասությունների կառուցվածքային առանձնահատկությունն այն է, որ չունեն *քերականական ենթակա՝ անենթակա են*, և հնարավոր չէ ենթական վերականգնել:

Դիմավոր միակազմ (անենթակա) նախադասությունների գերադաս՝ կենտրոնական անդամը որևէ բայ է (Սթենց: Լուսացավ: Սթնել է: Անձրևելու է): Սրանց ստորոգյալները արտահայտվում են նաև կախյալ դերբայով ու օժանդակ բայով: (Ասում եմ՝ ուռին աղջիկ էր ինձ պես: Զանգը տվին):

Դիմավոր միակազմ նախադասությունները չպետք է շփոթել *զեղչված ենթականերով* նախադասությունների հետ, քանի որ զեղչվածներում ենթակաները հեշտությամբ վերականգնելի են, և դա բխում է ոչ միայն նախադասությունների կառուցվածքից, այլև իմաստներից, դրանց ստորոգյալի ստորոգումային հատկանիշը կոնկրետ հասցեատեր ունի (Հիշում եմ դեմքը քո ծեր... Լսի՛ր որդիս պատգամ որպես...): Կամ ենթական կա նախորդ նախադասություններում (§ 38):

Մինչդեռ դիմավոր միակազմ նախադասություններում հնարավոր չէ գտնել խոսքի հասցեատերը, թե ստորոգումը ում կամ ինչին է վերագրվում: Օրինակ՝ Ավ. Իսահակյանն ասում է. *«Ասում են, թե դու այնպես, Մոռացել ես ինձ այնպես...»:* Բայց թե ովքե՞ր են այդ ասողները, հայտնի չեն:

Դիմավոր միակազմ նախադասություններն ունեն իրենց ենթատեսակները:

§ 57. *Վիճակային* - Սրանք նշում են *մթնոլորտային երևույթներ (Ամպել է: Անձրևում է: Սաստիկ փոթորիկ է ու մրրիկ: Ցուրտ է: Կայծակում է):* Նշում են նաև օրվա պահեր (*Սթնում է: Լուսանում է: Առավոտ է: Ցրտեց: Գիշեր էր՝ դառնաշունչ քամիով): Տարվա եղանակներ (Գարուն ա՝ ծուն ա արել: Ամառ*

է: Աշում է և այլն): Ինչպես երևում է բերված օրինակներից, սրանց ստորոգյալ-գերադաս անդամներն արտահայտված են բայի *եզակի երրորդ դեմքով*, ինչպես նաև վերադիրով և *է* հանգույցով:

Վիճակային նախադասությունների ստորոգյալ-գերադաս անդամները կարող են արտահայտվել նաև *հարադրավոր բայերով (Վերջերս ցուրտ է ա-նում: Երեկ ամպամած է եղել: Այսօր արև կլինի: Սարերում փոթորիկ է եղել):*

Այս տիպին են պատկանում նաև ժամանակի վերաբերյալ հարց ու պատասխան նախադասությունները՝

- Ժամը քանի՞սն է: - Ժամը տասներկուսն է:

- Այսօր ամսի քանի՞սն է: - Այսօր ամսի քսանհինգն է:

Անենթակա նախադասություններ են համարվում նաև՝ *Քունս տանում է: Ուշքը գնում է* (մի բանի համար): *Վրաս դող է գալիս: Խիղճդ տանջում է: Լացդ կգա* և այլն:

§ 58. *Բուն անորոշ դիմավոր նախադասություններ* - Այս ենթատիպի նախադասություններում գործողություն կատարողը *ավելի անորոշ է*, թեև այն անձ է, բայց անորոշ է ինչպես նրա դեմքը, այնպես էլ թիվը: Սրանց ստորոգյալները հիմնականում արտահայտվում են *բայի հոգնակի թվի երրորդ դեմքով*, բայց այդ հոգնակին հաճախ եզակիի իմաստ է ունենում: Օրինակ՝ *«Քեզ հեռախոսի մոտ են կանչում»: «Դռան զանգը տվին»: «Թոշակ են տա-լիս»:* Սրանցում թեև ստորոգյալը հոգնակի թվով է արտահայտված, բայց հասկանալի է, որ գործողությունը մեկ անձնավորություն է կատարում:

Հետևյալ նախադասություններում նույնպես խիստ անորոշ է գործո-ղություն կատարողների թիվը. *«Ինձ մեկ ամսով գործուղման են ուղար-կում»: «Յարիս տարան, քանիս տարան,* Հոնգուր-հոնգուր կուլամ ես» (Ավ. Իս.): *«Ասում են,* թե մոտենում է նրա վերջը: *Սուտ են ասում»* (ՊՍ):

Անորոշ դիմավոր պետք է համարել այն դեպքերը, երբ խոսողը ենթա-կան է, բայց իր ասելիքն արտահայտում է ոչ թե *առաջին,* այլ *երրորդ* դեմքի *հոգնակի թվով՝ «Քեզ ասում են՝ մոտ արի»* (մի հոգի է խոսողը, և խոսողն էլ ինքն է): Կամ՝ «Ի՞նչ ես կարծում, *կատակո՞ւմ են քեզ հետ»: «Քեզ կարգադ-րում են՝* գնա, և վերջ. չհակաճառես» (կարգադրողը, խոսողը ինքն է և ոչ թե մեկ ուրիշը):

§ 59. *Ընդհանրական անորոշ դիմավոր նախադասություններ* - Թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքում բավականին տարածված են այնպիսի նախադասություններ, որոնց բայերով արտահայտված ստորոգյալները ունեն խոնարհված բայի քերականական բոլոր կարգերը (*դեմք, թիվ-եղանակ, ժամանակ),* բայց *չունեն կոնկրետ ենթակա,* որին ստորոգվեն նրան վերաբերող հատկանիշները: Նման տիպի նախադասություններում խոսքը վերաբերում է ոչ թե մեկին, այլ *ընդհանուրին՝ բոլորին,* դրա համար էլ դրանք ստացել են *ընդհանրական դիմավոր* անվանումը: Այդ ընդհանրականության հանգամանքով է պատճառաբանված թեկուզ այն փաստը, որ այս կարգի նախադասությունները մեծ մասամբ լինում են

խորհուրդներ, խրատներ, առաջարկություններ, առածներ, ասացվածքներ, թևավոր խոսքեր, դարձվածային միավորներ և այլն:

Այս տիպի նախադասությունները նույնպես կարող են լինել *պարզ և բարդ, շաղկապավոր և շարահարական* (տե՛ս բերվող օրինակները): Սրանց *ստորոգյալները կարող են արտահայտվել բայի բոլոր եղանակների բոլոր դեմքերով ու տարբեր ժամանակներով:* Բերենք օրինակներ.

ա) բայի 1-ին դեմքով՝

Ծերանում ենք, Պարո՛յր Սևակ, Ծերանում ենք, սիրելի՛ս,
(...) Նկատում ենք մատղաշներին, Որոնք մեզ չեն նկատում (ՊՍ):

Ծնվում ենք ականա, ապրում ենք զարմացած, մեռնում՝ կարոտով (Ավ.Իս.): *Կին կգտնես, բայց մայր երբեք չես գտնի* (ՀՇ):

Հոգնում ենք, եղբայր, այս անիրավ աշխարհում (Ոզնի):

բ) Բայի 2-րդ դեմքով՝

Խարխուլ մակույկով հանճնվիր ծովին, քան թե հավատա կնոջ երդումին (Ավ.իս.):

Աչքդ թեքեցիր՝ բանիդ տերը չես, (...) Ու չես իմանում որ կողմը քըռչես (ՀԹ):

Գլուխ ես կոտրում ու գլուխ չես հանում: Ստածում ես, մտածում ու ճարը չես գտնում: Գիտունի հետ քար քաշի, անգետի հետ փլավ մի՛ ուտի (Ժող.):

գ) Բայի 3-րդ դեմքով՝ սրանք նույնպես մեծ մասամբ ժողովրդական առած-ասացվածքներ են.

Մի ձեռքով երկու ծմերուկ չեն բռնի: Ձուկը ծովում բազար չեն անի: Մեխի գլխին բռունցքով չեն խփի: Ուղտը գդալով չեն ջրի: Անջուր տեղը չեն բոբիկանա: Նորից չեն սիրում, սիրում են կրկին (ՊՍ):

Սրանց մեծ մասը կարող է արտաբերվել նաև հարցական հնչերանգով՝ անշուշտ ենթարկվելով որոշ փոփոխությունների՝

Բա ուղտը գդալով կջրե՞ն: Մեխի գլխին բռունցքով կխփե՞ն: Ձին չառած՝ մսուրը կկապե՞ն: Ձուրը չտեսած կբոբիկանա՞ն և այլն:

դ) Անորոշ դիմավոր նախադասություններ են կազմվում նաև *ձեզոք*, երբեմն էլ ներգործական սեռի բայերով կազմված *կրավորականներից*, որոնք քիչ գործածական են: Մի քանի օրինակներ՝

Այս հեռախոսով չի խոսվում: Խոնավ սենյակում չի քնվում: Այդ մասին չի խոսվել: Ձեր մասին վաղուց է ասվել: Այդ մասին արդեն մամուլում գրվել է և այլն:

ե) Այս տիպի նախադասությունների ստորոգյալը նույնպես կարող է *անվանաբայական* լինել՝ Շուն ես՝ քո դռանը հաչիր: Ծույլ ես՝ սոված կմնաս:

զ) Անորոշ դիմավոր են համարվում նաև *մարդ* գերադաս բառով կազմված նախադասությունները, եթե *մարդ* բառը անհոդ է գործածված, և խոսքը վերաբերում է ոչ թե մի անհատի, այլ բոլորին՝

Մարդ կա՝ ելել է շալակն աշխարհի,
Մարդ կա՝ աշխարհն է շալակած տանում (ՊՍ):

Մարդ ինչ անի, իրեն կանի: Մարդ ես՝ խոսքիդ տերը եղիր: Մարդ չգիտի՝ գլխին ինչ է գալու և այլն:

ԱՆԴԵՄ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 60. Ի տարբերություն անորոշ դիմավոր (անենթակա) միակազմ նախադասությունների, որտեղ կա դիմավոր բայ, անդեմ նախադասություններում այն չկա: Չկա նաև ենթակա: Նախադասության ձևավորման հիմնական միջոցը մնում է *հնչերանգը:* Սրանցում կա մի գերադաս՝ կենտրոնական անդամ, որի վերաբերյալ էլ տեղի է ունենում լեզվական հաղորդակցումը: Այդ անդամը կարող է արտահայտված լինել ինչպես *անորոշ դերբայով,* այնպես էլ *որևէ անուն խոսքի մասով*՝ մեծ մասամբ գոյականով:

Ըստ այն հանգամանքի, թե անդեմ միակազմ նախադասության գերադաս՝ կենտրոնական անդամը, ինչ խոսքի մասով է արտահայտված, ըստ այդմ էլ այս նախադասությունները բաժանվում են 2 խմբի՝ բայական և անվանական:

§ 61. ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԵՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ - Այս անդեմ նախադասության կենտրոնական *անդամը անորոշ* դերբայն է, որը կարող է հանդես գալ որպես առանձին նախադասություն (*Հեռանալ: Մոռանալ: Կռվել: Չգիջել: Չաղմկել: Չծխել: Ապրել),* այնպես էլ՝ ուրիշ բառերի հետ (*Ճանաչել գիմաստուխին և գիտուն, իմանալ զբանս հանճարոյ: Մոռանալ: Մոռանալ ամեն ինչ, ամենին մոռանալ: Ծաղիկները չտրորել):*

Ապրե՞լ, ապրե՞լ, այնպե՛ս ապրել,
Որ սուրբ հողը, երբեք, չզգա քո սեփական ծանրությունը:
Ապրե՞լ, ապրե՞լ, այնպես ապրել,
Որ դու ինքդ էլ երբեք չզգաս քո սեփական մանրությունը (ՊՍ):

Ինչպես ասվեց, այս կարգի նախադասությունների ձևավորման հիմնական միջոցը *հնչերանգն է.* հենց հնչերանգով էլ պայմանավորված են այս նախադասությունների իմաստային տեսակները և հաղորդակցման բնույթը:

Բայական անդեմ նախադասություններով արտահայտվում է *հրամանառաջադրանք, կարգադրություն, հանձնարարություն, հարցում, ցանկություն* և այլն:

Հրամանի՝ Վերցնել բահերը և հողը փորել: Անմիջապես տուն վերադառնալ: Առանց հանձնարարությունները կատարելու դուրս չգնալ: Չխոսել: Չաղմկել:

Առաջադրանք, հանձնարարություն՝ Արտագրել հատվածը և ընդգծել մակդիրները: Դիմավորել հյուրերին և առաջնորդել էջմիածին: Պատրաստ-

վել քննություններին: Իրերն ու երևույթները իրենց անուններով կոչել:

Իդձ, ցանկություն, փափագ՝

...Չսիրել, չխորհել, չափսոսալ, հեռանալ... (ՎՏ):

Երկընտրանք, երկմտություն՝ Լինե՞լ, թե՞ չլինել, - այս է խնդիրը (Թարգմ.): Որի՞ն սիրել, որի՞ն թողնել: Ո՞ւմ վստահել, որի՞ հետ համակերպվել, Գնա՞լ, թե մնալ:

Զարմանք, բացականչություն՝ Ի՞նչ, հեռանալ երկրից, երբե՛ք: Քուչր, դողանջի պես ճախրե՛լ ու գնալ, - Հմայված ու հեզ-ճախրե՛լ ու գնալ (ԵՉ):

Հարցում՝ Ո՞նց մոռանալ արհավիրքն այդ օրերի: Ինչպե՞ս քայլել առանց ուղու: Արժի՞ գնալ... Դոփե՞լ տեղում:

Հարցման հնչերանգով արտաբերվող այս տիպի կառույցներում կարող է նաև ճարտասանական հարցադրում լինել, ինչպես՝ *Ինչո՞վ բացատրել այս ահավոր արտագաղթը: Ո՞ւմ մեղադրել այս հարցում՝ միայն կառավարությունների՞ն: Ինչո՞ւ չխոսել:*

§ 62. ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՆԴԵՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ - Սրանք այն միակազմ նախադասություններն են, որոնց կենտրոնական՝ գերադաս անդամն արտահայտված է *գոյականով կամ գոյականական բառակապակցություններով:* Սրանք նույնպես չունեն ոչ *միայն դիմավոր բայ, չունեն նաև ենթակա.* պարզապես նախադասություն են անվանվում, որովհետև միտք են արտահայտում, *ունեն ավարտում հնչերանգ,* ըստ որում՝ մեծ մասամբ *հուզական հնչերանգ,* հենց դա է պատճառը, որ այս նախադասությունները բայական անդամների նման մեծ մասամբ *հուզական, զգացական* բնույթ ունեն: Սրանք մեծ մասամբ գործածվում են գեղարվեստական գրականության մեջ, որով կարճվում է խոսքը, նրան հաղորդվում է *հուզականություն ու պատկերավորություն՝ Լու՜յս զվարթ: Փառահե՜ղ տեսարան:*

Այս նախադասությունների գերադաս անդամը արտահայտվում է՝

ա) *գոյականի ուղղական հոլովով՝* Սև գիշեր և հուշե՜ր և խոհեր անհամար,

Մոռացված երազնե՜ր, շուշաններ թառամած (ՎՏ):

Ինչքա՜ն սեգ քնար,քանի՜ տավիղներ, Ինչքան հնչյուննե՛ր, մտքեր երազուն (ՊՍ)

Էջմիածին: Միրգ ու փոշի: Անխիղճ արև... (ՊՍ):

բ) *գոյականների հետ կարող են գործածվել նաև թվականներ՝ 451 թիվ Ավարայր: Ութ հարյուր ութսունմեկ թիվ: Էջմիածին: 1915 թիվ: Ապրիլի 24:*

գ) Գոյականների, ինչպես նաև դերանունների հետ կարող են հանդես գալ նաև *ահա և այլ* բառերը՝ *Ահա մեր գետը, մեր զուլալ գետը* (ԱԲ): *Ահա և ես, ահա և նա, ահա և Փարիզը՝ մեր ամենատես...*

դ) Կոչականը նույնպես կարող է կենտրոնական անդամ լինել, եթե բայի հետ չի համաձայնում՝ *Կապո՛ւյտ աղջիկ, ագաթի ու կաթի պես հոգեթով,*

Լուսամփոփի պես աղջիկ (ԵՉ): *Մա՛յր իմ՝ անուշ ու անգին...* (ԵՉ):

ե) Անվանական նախադասություններ են լինում նաև *անվանումները՝ Լեռնային Ղարաբաղ, «Սասունցի Դավիթ» կայարան, «Երիտասարդական»: Կ.Դեմիրճյանի անվան մետրոպոլիտեն: Երիտասարդական թատրոն* և այլն: Կարող են լինել նաև *գրքերի, հանդեսների, պարբերականների վերնագրեր՝ «Գրական թերթ»: «Կայծեր»: «Արարատյան դաշտի առավոտը»: «Դերբայական դարձված»: «Գարուն»* և այլն: Սրանք լինում են նաև *թատերական ռեմարկներ՝ Տնօրենի առանձնասենյակը: Գագիկ թագավոր՝ երիտասարդ, բարեկիրթ արտաքինով:*

զ) Այս տիպի նախադասություններն արտահայտում են նաև *բացականչություններ՝ Սանկությո՛ւն...* ոսկեթռչուն (ԵՉ): *Արևածագ, օ՜, արշալույս արյունոտ* (ՎՏ):

Արտահայտում են նաև *հարցում, հրաման* և այլն (Գուրգենն ու համբերությո՞ւն: Ո՞չ մի ձայն: Հանգի՛ստ: Լռությո՞ւն և այլն:

է) Անվանական նախադասություններով արտահայտվում են նաև *բարեմաղթանքներ, կոչեր, անեծքներ ու օրհնանքներ.* օրինակներ՝ *Փա՛ռք Աստծո: Բարի՛ ճանապարհ: Բարի՛ հաջողություն: Բարի՛ գիշեր: Բարի՛ լույս: Շնորհավո՛ր Ամանոր...*

Ողջո՛ւյն, ողջո՛ւյն ձեզ, հին ու նոր, արի՛, բարի՛ ընկերներ... (ՀԹ):
Խաղաղությո՛ւն ձեզ, մեր անբախտ պապեր (ՀԹ):

ը) Քիչ չեն նաև ժխտական բնույթի անվանական նախադասությունները, որոնք հիմնականում ձևավորվում են *ոչ մի* դերանվամբ (*Ո՛չ մի պատասխան: Ո՛չ մի ծառ ու ծաղիկ: Ո՛չ մի կենդանի շունչ, ո՛չ մի արծագանք):*

Ոչ մի հանճար, ոչ մի տաղանդ, ոչ մի քանքար՝
Ով որ Պոլսում եղեռնական այդ գարնան կար... (ՊՍ):

ԲԱՌ - ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 63. *Բառ - նախադասությունը միակազմ նախադասությունների մի առանձին տեսակ է,* որը հիմնականում արտահայտվում է *մեկ բառով,* բայց չի նույնանում մեկ բառով արտահայտված (վերևում նշված) միակազմ դիմավոր կամ անդեմ նախադասությունների հետ *(Սքնեց: Լուսացավ: Ամառ: Երևաց),* որովհետև սրանք կարող են լրացումներ ստանալ, ընդարձակվել, իսկ բառ-նախադասությունները՝ ոչ:

Բառ-նախադասությունները հիմնականում *հատուկ են երկխոսությանը,* դրանք կարճում են խոսքը, այն դարձնում են ավելի սեղմ ու դիպուկ, աշխույժ ու կենդանի: *Սրանք* նախադասություններ են, որոնցով՝ *մեկ բա-*

ռով, խոսողը հաղորդակցման մեջ է մտնում խոսակցի հետ, *հաստատում, ժխտում կամ երկբայական վերաբերմունք է դրսևորում խոսքի նկատմամբ:* Մեկական բառերով խոսողը կամ խոսակիցը կարող են տարողունակ մտքեր արտահայտել, իրենց վերաբերմունքը ցույց տալ: Մեկ օրինակով էլ դա լավ է երևում: «Խմբավարի հետևյալ հարցադրմանը Շուբերտի մեկ բառով տված պատասխանից իմացվում է, որ նրանք տանը դաշնամուր չունեն, և ինքն էլ տանը երաժշտությամբ չի զբաղվում.

- Դու տանը երաժշտությամբ զբաղվո՞ւմ ես, դաշնամուր ունե՞ք:

- *Ո՛չ*

Խմբավարի հաջորդ հարցի պատասխանը նույնպես շատ բան է ասում 10 տարեկան տաղանդավոր երաժիշտ Ֆրանց Շուբերտի ընտանիքի մասին.

- Մե՞ծ է ձեր ընտանիքը, գուցե վա՞տ եք ապրում:

- *Այո՛,* մաեստրո՛...

Բացի *այո և ոչ* պատասխանական բառերից, բառ-նախադասությունները են դառնում եղանակավորող բառեր, կայուն բառակապակցություններ՝ *իհարկե, անտարակույս, անշուշտ, անպայման, գուցե, թերևս, ըստ երեվույթին, հազիվ թե, համենայն դեպս...*

- Պարո՛ն, ինձ ինչ-որ բա՞ն եք ուզում ասել:

- *Իհարկե՛:*

- Իսկ ես կատարելո՞ւ եմ մենանվագը:

- *Անշուշտ:*

Բառ-նախադասությունների իմաստներն ավելի սաստկացնելու համար հաճախ այս բառերը գործածվում են նաև *այո և ոչ* բառերի հետ, կամ *այո*-ն ու *ոչ-ը* կրկնվում են (-*Այո՛, իհարկե՛,* նվագելու ես: -*Ոչ, ոչ, ոչ մի դեպքում: Այո՛, այո,* կգամ):

Ժողովրդախոսակցական լեզվում *այո և ոչ* բառերի փոխարեն գործածվում են *հա, չէ, եսիմ, չէ մի չէ. քավ լիցի* և նման բառեր:

Բառ-նախադասությունները լինում են՝

Հաստատական- այո՛, ինչո՞ւ չէ, ինչպե՞ս չէ, իհարկե, անշուշտ, անպայմանն... (Վստահ լինե՞մ, որ կընկերակցես: - *Այո՛, իհարկե՛:* - Աշխատանքդ ժամանակին կարո՞ղ ես ներկայացնել: - *Անշուշտ:* - Արթու՛ր, հաց կերե՞լ ես:

- Հա, պապի՛կ):

Ժխտական - ոչ, բնավ, ամենևին, քավ լիցի, ոչ մի դեպքում, երբեք (Դու երևի կատակ ես անում: - *Երբե՛ք:* Դա իրականություն է: - Ե՞րբ է լուծվելու այս խնդիրը: - *Ոչ մի դեպքում:* - Անդրո՛, կովը քեզ կուտի՞: - *Չէ՛,* կսատկի՞ (ԱԲ):

Հարցական – իսկապե՞ս, մի՞թե, այո՞, ո՞չ, ճի՞շտ, ոչի՞նչ, հա՞, չէ՞ (- Ասում են ուսանողների թոշակները բարձրացնելու են: - *Ճի՞շտ:* Քննությունները մեկ շաբաթով հետաձգել են: - *Իսկապե՞ս:* Ինչ լավ է. լավ կպարապենք: Սոնան նույնպես համալսարան ընդունվեց: - *Հա՞:* Շատ լավ է):

Զարմանք, արհամարհանք - ո՞նց, չէ մի չէ, չէ մի չէ պոզեր, դժվար թե և այլն (Հայրիկը վերադարձած կլինի: - *Դժվար թե:* Լսել եմ, որ գերազանցիկ ուսանողներին այս տարի Ծաղկաձոր են ուղարկելու: - *Չէ մի չէ պոզեր):*

ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

§ 64. Լեզվի շարահյուսական մակարդակի հիմնական առանցքը *պարզ նախադասությունն է՝* իր գլխավոր ու երկրորդական անդամներով և *մեկ ստորոգումով:* Պարզ նախադասության սխեմայով են կառուցվում բարդ նախադասությունները՝ իրենց բաղադրիչ նախադասություններով *և երկու կամ ավելի ստորոգումներով:* Այսպես, եթե պարզ նախադասության մեջ կան ենթակա, ստորոգյալ և լրացումներ, նույնն էլ կա բարդի մեջ, եթե առաջինում դրանք արտահայտված են լինում բառերով ու բառակապակցություններով, ապա երկրորդում այդ անդամները կարող են արտահայտված լինել նաև առանձին նախադասություններով: Բարդ նախադասությունների քննությունը թողնենք իր տեղում, այստեղ քննենք պարզ նախադասության կառուցվածքը: Նախադասության, նրա ձևավորման ու քերականական կարգերի մասին հանգամանորեն խոսվել է «Նախադասություն և նրա քերականական կարգերը» բաժնում (տե՛ս § 26-34):


Ասվել է, որ նախադասությունը կազմվում է բառերով և բառակապակցություններով, իսկ բառերը *ձևաբանական մակարդակի միավորներ են՝* մեզ ծանոթ տասը խոսքի մասերը: Մասնակցելով նախադասության կառուցմանը՝ այդ բառերի մի մասը վերածվում է *շարահյուսական մակարդակի միավորների՝ դառնալով նախադասության անդամներ* (ենթակա, ստորոգյալ, որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, խնդիրներ, պարագաներ): Հայտնի է, որ բոլոր խոսքի մասերը չէ, որ դառնում են նախադասության անդամներ: Նախադասության անդամներ են դառնում միայն *նյութական իմաստ ունեցող խոսքի մասերը,* իսկ դրանք հայերենում վեցն են՝ *գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ,* իսկ մյուս չորս խոսքի մասերը՝ *կապ, շաղկապ, վերաբերական, ձայնարկություն,* զուրկ են նյութական իմաստից ու թեև նախադասության անդամներ չեն դառնում, բայց վճռական դեր են խաղում նախադասության կառուցվածքում: Այսպես՝ *կապերն ու շաղկապները* քերականական իմաստներ են արտահայտում. *առաջիններըը* դրվելով գոյականների, դերանունների և այլ բառերի վրա՝ *ձևավորում են նրանց պաշտոնները* նախադասության մեջ, իսկ *շաղկապների* դերն այն է, որ դրանք իրար են կապում ու շաղկապում նախադասության համազոր անդամներ, ինչպես նաև համադաս ու ստորադաս նախադասություններ:

Բոլորովին այլ է *վերաբերականների ու ձայնարկությունների* դերը. առաջինները արտահայտում են խոսողի *մտածական, կամայիհ* վերաբերմունքը, երկրորդներն էլ արտահայտում են խոսողի *զգացական* վերաբերմունքը :

---

* Ծանոթության կարգով նշենք, որ թե՛ ռուսական և թե՛ հայ լեզվաբանության մեջ որոշ լեզվաբաններ վերաբերականները (вводные слова) նույնպես նախադասության անդամներ են համարում (Մ.Աբեղյան, Վ.Առաքելյան, Ռ.Իշխանյան): Սակայն այս տեսակետը շատ լեզվաբանների, այդպես էլ մեր կողմից ընդունելի չէ:
Կոչականների վերաբերյալ նույնպես իրարամերժ կարծիքներ կան. որոշ լեզվաբաններ կոչականը նախադասության անդամ չեն համարում, սակայն, ինչպես ցույց կտանք իր

Նախադասության անդամներ են դառնում ոչ միայն առանձին բառեր, այլև բառակապակցություններ՝ այդ թվում և դերբայական դարձվածներ ու դարձվածային միավորներ: Այս առումով քննարկենք հետևյալ նախադասությունը.



18 բառերից կազմված այս պարզ ընդարձակ նախադասությունն ունի 7 անդամ, որոնցից 5-ը արտահայտված են բառակապակցություններով. ազատ անդամներ են *խորհում էր* բայական ստորոգյալը և *լուռ* ձևի պարագան: Ենթական է *Մեսրոպ Մաշտոց* բաղադրյալ հատուկ անունը: Տեղի պարագան, ձևի պարագաները և վերաբերության խնդիրը նույնպես բառակապակցություններով են արտահայտված, որոնց համար մեկական հարց է տրվում, և որոնցից յուրաքանչյուրն ունի իր գերադաս անդամը: Այսպես՝ *խցերից մեկում* տեղի պարագայի գերադաս անդամը *մեկում* բառն է, *խցերից* –ը՝ նրա խնդիր լրացումը: *Հոգնած գլուխը ծեռքերով ամուր պահած* դերբայական դարձվածով արտահայտված ձևի պարագայի գերադաս անդամն է *պահած* հարակատար դերբայը, *գլուխը* նրա կողմնակի ուղիղ խնդիր լրացումն է, *հոգնած* դերբայը *գլուխ* գոյականի *որոշիչ* լրացումն է, *ծեռքերով* գոյականը *պահած* գերադաս անդամի կողմնակի միջոցի խնդիրն է, *ամուր*-ը նույն գերադաս անդամի (պահած) կողմնակի ձևի պարագան է:

Այդպես էլ կարելի է վերլուծել մյուս ձևի պարագան, որի մեջ *մարմարե սեղանին* նույնպես բառակապակցություն է, որի գերադաս անդամը *սեղանին* գոյականն է: *Հայոց գրերի մասին* բառակապակցությունը վերաբերության անուղղակի խնդիր է, որի գերադաս անդամը *գրերի մասին* կապային խնդիրն է, իսկ *հայոց*-ը *գրերի* գոյականի որոշիչն է:

Պարզորոշ երևում է, որ նախադասության անդամները արտահայտվում են ոչ միայն առանձին բառերով, այլև բառակապակցություններով, որոնք, սակայն, նույնպես շարահյուսորեն (իրենց մեջ) վերլուծելի են, իսկ այդ տարրալուծումները վերջին հաշվով հանգեցնում են *շարահյուսական նվազագույն միավորների* (ՇՆՄ), այսինքն՝ առանձին բառերի: Սրանից էլ հետևում է, որ *բառը և նախադասության անդամը* կարող են նույնանալ (երբ անդամը արտահայտված է մեկ բառով), կարող են և չնույնանալ (երբ ան-

---

տեղում, կոչականը շատ վճռորոշ նշանակություն ունի նախադասության մեջ, հետևաբար այն նախադասության անդամ է:

դամը արտահայտված է բառակապակցությամբ): Հենց այստեղ էլ պետք է տարբերակել *նախադասության անդամ և բառակապակցության անդամ* հասկացությունները:

Նշենք, որ *որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ* լրացումների անվանումները նույնն են թե՛ *նախադասության* և թե՛ *բառակապակցության* մեջ, որովհետև դրանք երկու դեպքում էլ գոյականական անդամների են լրացնում: Իսկ *ներբայ* գերադաս անդամներին լրացնող *ենթակա, ստորոգելի, խնդիր և պարագա անդամները կոչվում են կողմնակի*, որպեսզի տարբերվեն խոնարհված բայով արտահայտված ստորոգյալների *նույնանուն* անդամներից: Նեշտենք նաև, որ բառակապակցությունը *ստորոգյալ* անդամ չի ունենում: Բառակապակցությանը ստորոգում վերագրելիս միայն այն կվերածվի նախադասության («Ուղտի ականջում քնել» և «Ուղտի ականջում քնած է»):

Այժմ կոնկրետ նախադասության անդամների մասին:

Շարահյուսական մակարդակում նախադասության անդամները բաժանվում են 2 խմբի՝ *գլխավոր և երկրորդական:*


Գլխավորները նախադասության *ստորոգումային* անդամներն են՝ *ենթական և ստորոգյալը*, որոնք կազմում են նախադասության *միջուկը:* Սրանցից յուրաքանչյուրն ունի իրեն լրացնող անդամները, և այդ անդամներով միասին կոչվում են *ենթակայի բևեռ և ստորոգյալի բևեռ:* Ըստ որում՝ լրացնող անդամները կոչվում են *երկրորդական անդամներ*, որոնք լրացուցիչ տեղեկություններ են հաղորդում, տարբեր կողմերից պարզաբանում, լրացնում են գլխավոր (և ոչ միայն գլխավոր) անդամների իմաստները:

Երկրորդական անդամները բաժանվում են 2 խմբի. մի խումբը լրացնում է նախադասության՝ *գոյականով* արտահայտված ցանկացած անդամի (ենթակա, վերադիր, խնդիր ու պարագա) և կոչվում է *գոյականական անդամի լրացումներ* դրանք են՝ *որոշիչ, հատկացուցիչ և բացահայտիչ*, իսկ մյուս խումբը լրացնում է *խոնարհված բայ-ստորոգյալին* կամ *անկախ ներբայներին* և կոչվում է *բայական անդամի լրացումներ.* դրանք են՝ *խնդիրները ու պարագաները:*

Սակայն պետք է նկատի ունենալ, որ խնդիր և պարագա լրացումներ կարող են ունենալ նաև *անվանական բաղադրյալ ստորոգյալների* վերադիրները (Ես հպարտ եմ իմ *ծյուղերով ու սաղարթով* - միջոցի խնդիր: *Ժամանակով* կատուն ճոն էր - ժամանակի պարագա): Խնդիր և պարագա լրացումներ են ունենում նաև *բայանուն գոյականները* (հանդիպում *համալսարանում*, վերադարձ *արտասահմանից*), որոշ *ածականներ* (շատ *ուժեղ*, անչափ *հզոր*), որոշ մակբայներ (չափից ավելի *արագ*, խիստ *դանդաղ*) և այլն:

Գոյականներին և բայերին լրացնող անդամներն էլ իրենց հերթին կարող են լրացումներ ունենալ, որոնք *լրացման լրացում* անվանումն են ստացել:

Այսպիսով, նախադասության գծապատկերը կլինի՝



ԵՆԹԱԿԱ

§ 65. Որոշ դասագրքերում ու ձեռնարկներում ենթական բնորոշվում է որպես նախադասության՝ մի բան անող կամ լինող գլխավոր անդամ, որին ստորոգումով վերագրվում է որևէ հատկանիշ: Այս սահմանման մեջ *մի բան անող կամ լինող* ձևակերպումը վերաբերում է միայն *բայական – պարզ ստորոգյալ* ունեցող ենթակային, ինչպես՝ *Խնջույք է սարքել* Թմկա տիրուհին... Հեղեղի նման *հոսում է* գինին (ՀԹ):

Մինչդեռ *անվանաբայական* և որոշ *պակասավոր ու միադիմի բայերով* արտահայտված ստորոգյալներ ունեցող ենթակաները մի բան չեն անում կամ չեն լինում, այլ նրանց ստորոգման միջոցով հատկանիշ է վերագրվում, ինչպես՝ Թումանյանը ազգային *մեծ բանաստեղծ է:* Ծառը *բերքատու է:* Ես *առաջինն եմ:* Իմ ընկերը *դու ես:* Երեխան *քնած է:* Պակասավոր բայերով՝ Այստեղ խելոք ուսանողներ շատ *կան:* Ինչ *կա* քաղաքում...(ՀԹ): Բոլորս *գիտենք* այդ մասին: Ով բալիկ *չունի*, նա գալիք *չունի* (ՀՇ):

Հետևաբար, ճիշտ կլինի ենթական սահմանել այսպես՝

Ենթական նախադասության այն գլխավոր անդամն է, որի հետ կատարվում է ստորոգում, որին դիմավոր բայով վերագրվում է որևէ հատկանիշ՝ իբրև ստորոգյալ:

Սակայն այդ հատկանիշը *որոշչային չէ,* ինչպես՝ (*խելացի* երեխա, *ծաղկած* ծառ, *առաջին* ուսանող, *բանվոր* Պողոս), որտեղ *խելացի, ծաղկած, առաջին, բանվոր* լրացումներն արտահայտում են գոյականների հատկանիշները: Մինչդեռ ենթակային վերագրվող՝ ստորոգվող, հատկանիշն ունի *ժամանակային իմաստ,* այսինքն՝ այն *խոնարհված բայ է* (բայական-պարզ ստորոգյալի դեպքում՝ «Կոմիտասը ազգային երաժշտությունը մաքրեց օտարաբանություններից», *էական կամ վերացական բայով* և որևէ խոսքի մասով արտահայտված հատկանիշ (անվանաբայական-բաղադրյալ ստորոգյալի դեպքում՝ «Կոմիտասը հայ երգի մելոսն է»), ինչպես նաև որոշ *պակասավոր բայերով* արտահայտված ստորոգյալների դեպքում՝ «Երեխայի աչքերում *թախիծ կա»:*

ժամանակակից հայերենում ենթական դրվում է ուղղական հոլովով (կողմնակի ենթական՝ նաև սեռականով), սակավ դեպքերում՝ նաև *բացառականով*, որը կոչվում է *մասնական ենթակա*՝ «Այս ջրից չի խմվում»: «Հաղորդվում են Կոմիտասի *երգերից»*: Բուն ենթական և ուղղականով դրվող կողմնակի ենթական պատասխանում են *ո՞վ, ովքե՞ր ի՞նչ (ը), ինչե՞ր(ը)* հարցերին, սեռական- տրականով դրված կողմնակի ենթական՝ *ո՞ւմ, ինչի՞, ինչերի՞* հարցերին, բացառականով դրվածը՝ *ինչի՞ց, ինչերի՞ց* հարցերին:

ԵՆԹԱԿԱՅԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ

§ 66. Քանի որ ենթական ցույց է տալիս անձ և առարկա, որին հատկանիշ է վերագրվում, հետևաբար ենթակայի դերում նախ հանդես են գալիս առարկա նշանակող կամ առարկայական հասկացություն արտահայտող բառախմբերը (գոյականներ, դրանց փոխարինող դերանուններ, անորոշ և ենթակայական դերբայները)*:

Ա. *Գոյականով* - Ենթակայի պաշտոնում գոյականը հանդես է գալիս իր բոլոր տեսակներով (հատուկ, հասարակ, պարզ ու բաղադրյալ, շնչավոր ու անշունչ, որոշյալ ու անորոշ, եզակի ու հոգնակի)*: Օրինակներ՝ Հրաչյա Աճառյանը ամենաբեղմնավոր լեզվաբանն է: *Կոմիտասը* հայ երգը ներկայացրեց աշխարհին: *Հայաստանի Հանրապետությունը զարգացման* նոր փուլ է մտել: *Սևանա լիճը* աստիճանաբար բարձրանում է: Մեր *լեզուն* մեր խիղճն է (ՀՍ): Ազգի *հոգեբանությունը* մայրենի լեզուն է (ՀԹ): Ինչքան *հուր* կա իմ սրտում, բոլորը քեզ (ԵՉ): *Երկինքն* ամպել է, *գետինը* թաց է, *Յարս* քնել է, *երեսը* բաց է (ժող.): *Չիմ* մարդու ազնիվ բարեկամն է:

Բ. Դերանուններով - Ենթակայի պաշտոնով հանդես են գալիս առարկայական իմաստ արտահայտող դերանունները՝ առավելապես *անձնականները*՝ իրենց երեք դեմքերով և եզակի ու հոգնակի թվերով՝ *Ես* եմ հիմա մի պոետ (ԵՉ): *Դու* մեր երգի սրբագործողն ես (ԳԹ): *Նա* մեր երգի վեհափառն է (ԳԹ): *Մենք* փող զարկինք (ՄՊ): *Նրանք* դրոշակ ունեն (Ավ.Իս.):

Ենթականեր են դառնում նաև *ինքս ինքդ, ինքը* անձնական դերանունները և սրանց հոգնակի թվերը, որոնք կարող են հանդես գալ ինչպես առանձին, այնպես էլ *ես, դու, նա* և սրանց հոգնակի թվերի հետ. այս դեպքում սրանք իրարից չեն տրոհվում որպես բացահայտիչ-բացահայտյալ (*Ես ինքս* կզբաղվեմ այդ գործով: *Դուք ինքներդ* եք նախաձեռնել, *ինքներդ* էլ շարունակեք: *Մենք ամենքս* հյուր ենք կյանքում (ՀԹ): Վերջին օրինակում

---

* Ենթակայի պաշտոնով կարող են հանդես գալ նաև հատկանշային իմաստ արտահայտող բառախմբերը՝ փոխանվանաբար գործածվելիս, այսինքն երբ հանդես են գալիս գոյականաբար, հող են ստանում և հոլովվում են (ածական, թվական, հարակատար դերբայ և որոշ դերանուններ):

Եվ վերջապես, ենթակայի պաշտոնում կարող են հանդես գալ ինքնանվանողական գոյականի ֆունկցիոնալ գործառույթով հանդես եկող մյուս բոլոր խոսքի մասերը, մյուս կարգի բառերն ու լեզվական իրողությունները որպես իրենց անուն:

մենք –ի հետ հանդես է եկել *ամենքս* որոշյալ դերանունը:

Ցուցական դերանուններից ենթակայի դերում հանդես են գալիս *առարկայանիշ* դերանունները՝ եզակի և հոգնակի թվերով (*Սա* քո ցանկությունն է: *Դա* մեզ չի վերաբերում: *Սրանք* այսօրվա պահանջները չեն բավարարում, *դրանք* թող մնան):

Ցուցական *այս, այդ, այն* դերանունները թեև առարկայանիշ չեն, հոգնակի թիվ չունեն և չեն հոլովվում, բայց սահմանափակ դեպքերում կարող են ենթակայի դերում հանդես գալ (*Այդ* մի փառահեղ կառույց էր: *Այս* էր պակաս, *այս* էլ եղավ: *Էն* ո՞վ էր, նանի՛, որ կանչում էր մեզ ՀԹ):

Հարցահարաբերական դերանուններից՝ անձի և իրի անուններին փոխարինողները՝ *ով, ովքեր, ինչ, ինչեր, որը, որոնք (Ո՞վ* քեզ ծեծեց, Սարո՛ ջան (ՀԹ): *Ի՞նչը* կհաղթի կյանքում հերոսին (ՀԹ): *Ով* Արարատ ունի սրտում, իր մայր լեզուն չի մոռանա - (ՀՇ): Դրանք հուշարձաններ են, *որոնք* վկայում են մեր բազմադարյա ինքնությունը (ԳԹ):

Որոշյալ և անորոշ դերանուններից ՝ նույնպես անձի և իրի անուններին փոխարինողները (*Բոլորս* նույն բանն ենք ասում: *Յուրաքանչյուրը* գիտի իր գործը: *Ամեն մեկդ* մի բան է ասում: *Ոմանք* չեն լսում: *Ինչ-որ մեկը* ձայն է տալիս և այլն) :

Ժխտական 4 դերանուններից միայն մեկը՝ *ոչ մի* –ն ենթակա չի դառնում՝ *(Ոչինչ* չկա այնտեղ: *Ոչ ոք* ըսավ՝ հե՛գ տղա՛ (ՊԴ): *Ոչ մեկը* չեղավ, որ իմանար դարդերս (Ավ. Իս.):

Գ. Քանակական թվականներից առանց փոխանվանաբար գործածվելու ենթականեր են դառնում թվի վերացարկված անվանումները՝ անկախ առարկաներից՝ (*Հինգ անգամ հինգ* հավասար է քսանհինգի: *Հինը* կենտ թիվ է, *տասը* զույգ թիվ է):

Դ. Անկախ դերբայներից առանց փոխանվանաբար գործածվելու ենթակայի դերում հանդես են գալիս երկուսը՝ *անորոշը և ենթակայականը:*

Անորոշ դերբայն ունի *առարկայական* նշանակություն. այն օժտված է գոյականին հատուկ քերականական կարգերով, հանդես է գալիս ենթակայի դերում առանց փոխանվանական կիրառության՝ որպես *գործողության անուն.* օրինակներ՝ *Կառուցելը* հայ ժողովրդի անբաժան ուղեկիցն է: *Լռելը* ոսկի է, *խոսելը* ՝ արծաթ: *Ծխելն* արգելվում է: *Խաղալը* երեխայի տարերքն է: *Կարդալը* զարգացնում է մարդուն:

Բերված օրինակներում անորոշ դերբայը ենթակայի դերում հանդես է եկել *որոշյալ առումով.* Այն ենթակա է դառնում նաև *անորոշ առումով* գործածվելիս.՝ օրինակ՝ Նրա համար դժվար էր *խոսել* այդ մասին (ՍԳ): Ինձ մնում էր *համաձայնել* նրա հետ: Զգույշ է միրհավը. դժվար է նրան *խփել (ԱԲ):*

Ծանոթություն. Որոշ լեզվաբաններ էական բայերի հետ (անհրաժեշտ է, հարկավոր է, դժվար է, անկարելի է, հնարավոր է, խնդրվում է, կարգադրված է, կարելի է և այլն) անորոշ դերբայի անորոշ առումով գործածվելը համարում են ան-

վանական-բաղադրյալ ստորոգյալի մաս[29], մինչդեռ Մ.Աբեղյանը, Մ.Ասատրյանը, Ռ.Իշխանյանը, Ս.Գյուլբուդաղյանը նման կառույցներում անորոշ դերբայը՝ անկախ նրա առումից, ենթակա են համարում: Մենք ևս նույն կարծիքին ենք (Անհրաժեշտ է վերադառնալ (ենթակա): Դժվար է համաձայնել (ենթակա):

Անորոշ դերբայը ենթակայի դերում հանդես է գալիս նաև Ս և Դ ստացական հոդերով (Պատասխանելս դասախոսին դուր չեկավ: Գնալներս չհաջողվեց: Վերադառնալդ ուրախացրեց բոլորիս: Խոսելներդ անհրաժեշտ էր):

Ենթակայական դերբայը նույնպես գործողության հետ միաժամանակ առարկայական նշանակություն ունի: Օժտված է գոյականի քերականական կարգերով, հետևաբար ենթակայի դերում հանդես է գալիս առանց փոխանվանական կիրառության. օրինակ՝ *Պատմություն ունեցողը* չի կարող ետ չնայել: *Աշխատողը* սոված չի մնա: *Փնտրողը* կգտնի: *Տեսնողն* էլ կասի՝ ինչ աղջիկ է սա. հազար մարդի մոտ կերթա, կխոսա (ՀԹ):

Այս դերբայը կարող է հանդես գալ նաև հոգնակի թվով՝ Արտասահմանից *վերադարձողները* ապահովվեցին աշխատանքով (ՀՀ): *Շատ խոսողները* դիտողություն ստացան:

Նշելի է սակայն, որ որոշ կառույցներում ենթակայական դերբայը կարող է հանդես գալ նաև *փոխանվանաբար*՝ Ուսանողներից շատերը գրում էին, մի քանիսն էլ խոսում էին: *Գրողները* բարձր գնահատականներ ստացան, *խոսողները*՝ ցածր:

§ 67. *2.* Եթե վերը բերված դեպքերում ենթակայի դերում հանդես եկող բառախմբերը կիրառվել են իրենց բուն՝ *առարկայական* իմաստներով, ապա բառախմբերի որոշ տեսակներ էլ, որոնք հատկանշային իմաստ են արտահայտում, ենթակայի դերում հանդես են գալիս *փոխանվանաբար* գործածվելիս, այսինքն՝ ձեռք են բերում գոյականին հատուկ քերականական կարգեր:

Ենթակայի շարահյուսական պաշտոնով են հանդես գալիս փոխանվանաբար գործածվող հետևյալ բառախմբերը՝

Ածականները - Որդյա՛կ, *չարը* չար վախճան կունենա (Խիկար):

Ոչ *ուժեղը* թող ուրախանա, ոչ *թույլը* տխրի (Չիվանի): *Թանկ ու էժան* մի գին է (ժող.): Մրցումներում հաղթեց *ամենաուժեղը: Լավագույնը* լավի թշնամին է: ... Էստեղ ինչն է գլխավոր՝ Ուժեղի մոտ միշտ էլ *թույլն* է մեղավոր (ԱԽ):

Թվականների բոլոր տեսակները՝ Անծանոթներից *երկուսը* հայտնի մարդիկ էին, *երրորդը* դեռ անուն չէր հանել (Ոզնի): *Երկուսն էլ* հայ են, ունեն մի հավատ (ՀԹ): Սիդնեյի մրցումներում հայ մարզիկներից շահեցին *երեքը, չորրորդը* չմասնակցեց խաղերին (Ազգ): Ուսանողների *երկու երրորդը* թոշակ չի ստանում:

Դերանուններից փոխանվանաբար հանդես են գալիս անձերին ու ա-

---

[29] Տե՛ս ժամանակակից հայոց լեզու, հ.3, էջ 161 և *Ս. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան,* Հայոց լեզու, 2-րդ մաս, էջ 176:

ռարկաներին չփոխարինողները, այլ *հատկանշային* իմաստ ունեցողները. բնականաբար այս դերով հանդես են գալիս *ցուցականներից* մի քանիսը (*Այդքանը* չի բավարարի: *Այդպիսիները* միայն խոսում են: *Նույնը* նպատակահարմար չէ...) *Հարցահարաբերականներից՝ Ո՞րերորդը* հավանության արժանացավ: *Ինչպիսի՞ք* ընտրվեցին...: Որոշյալ և անորոշ դերանուններից՝ ևս մի քանիսը՝ *Մյուսները* այլ կարծիքի են: *Ուրիշները* կարող է համաձայն չլինեն: *Բոլորը* ներկա են: *Ինչ-որ մեկը* չի լսում:

Հարակատար դերբայը նույնպես փոխանվանաբար է հանդես գալիս՝ *Հնձածդ* խոտ չի՞ (ՀՄ): Գիշերվա *կերածը* կորած է (ժող.): *Անցածն էլ* ետ չի գալու (ՀԹ):

Փոխանուն սեռականը նույնպես ենթակա է դառնում. օրինակ՝ Սոնայի պատասխանը բարձր գնահատվեց, *Համմիկինը*՝ բավարար: Արթուրի առաջարկն ընդունվեց, *քոնը* առարկության արժանացավ: *Իմը ինձ հասավ (ժող.):*

§ 68. *Եվ վերջապես* - ինչպես իրավացիորեն նշում է Մ.Ասատրյանը, «ենթակայի պաշտոնով կամ ընդհանրապես գոյականի գործառույթով կարող են հանդես գալ մյուս բոլոր կարգի բառերը. այն է՝ *բայի դիմավոր ձևերը, մակբայները, կապերը, շաղկապները, եղանակավորիչները, ձայնարկությունները,* այլև լեզվական բոլոր միավորներն ընդհանրապես՝ հնչյունները, ածանցները, բառակապակցությունները, նախադասությունները»[30]: Սա այն է, ինչ լեզվաբանության մեջ կոչվում է *ինքնանվանողաբար-ֆունկցիոնալ փոխանվանությամբ* հանդես եկող բառախմբեր ու լեզվական իրողություններ: Ասվածների վերաբերյալ բերենք օրինակներ:

Մակբայներ - Արագ-ը ձևի մակբայ է: *Վաղուց*–ը չպետք է չարաշահել:

Կապեր - Դեպի –ն իսկական կապ է, *վրա*-ն՝ անիսկական, *առաջ* –ը և *ժամանակ*-ը կապական բառեր են:

Շաղկապ – Կամ –ը տրոհական շաղկապ է, *բայց* –ը՝ հակադրական, *ու*-ն՝ միավորիչ:

Վերաբերականներ - Այս *իհարկե-ն* բոլորովին էլ հավաստի չէ: Քո *ըստ երևույթին* –ը բացարձակ ժխտման է հավասար:

Ձայնարկություններ - Ա՛խ –ն ու *վա՛խ*-ը մեր երկրից վերացան:

Քերականական ձևեր - Գիտեմ –ը սահմանական եղանակի բայ է, *թռչեի*-ն՝ ըղձական, *գարուն* –ը երկվանկանի գոյական է: *Գարնանից* –ը բացառական հոլով է:

Բառակապակցություններ - Ազգային ժողովը նոր որոշում կայացրեց: *Քաղաքական դաշտը* խիստ լարված է: (Սրանք ֆունկցիոնալ չեն, այլ սովորական բառակապակցություններ):

Դերբայական դարձվածներ – Հասնելով բերդի ավերակներին –ը դերբայով կառույց է:

Դարձվածային միավորներով - Աչք մտնողը աչքի ընկավ՝ աչք կիա-

---

[30] *Մ.Ասատրյան*, Ժամանակակից հայոց լեզու (շարահյուսություն), Ե.,1987, էջ 154:

նի (ՊՍ): *Ջրից չոր դուրս եկողը* թաց տեղ չի պառկի (ՈՒԴԲ): Նրա *պյուռոյան հաղթանակը* իսկապես պարտություն էր (ՈՒԴԲ):

Որպես ենթականեր կարող են հանդես գալ նաև *ամբողջական նախադասություններ*. պարզ՝ Ռադիոյի հաղորդած *«Վաղը լավ եղանակ է սպասվում* –ը» սուտ դուրս եկավ: Բարդ՝ *Որ խոսք ենք տվել, պիտի կատարենք* –ը լավ կարգախոս է: *Չմեռնեի՝ Անին մերը տեսնեի, մեռնեի՝ Սևանը ցամաքած չտեսնեի-ն* Ավ. Իսահակյանի բաղձանքն էր:

Ծանոթություն - Լեզվաբան Վ.Առաքելյանը ընդունում է նաև *բաղադրյալ ենթակայի* տեսակը, որը չի նույնացնում բառակապակցությամբ արտահայտված ենթակային: Նա բերում է հետևյալ օրինակները՝ *«Աշակերտներից երկուսը* այս մի քանի օրը դասի չեն եղել» (ՆԴ): *«Չորսից ոչ ոք* ուշադրություն չի դարձնում» (Շ): *Գյուղացիներից շատերն* են համամիտ Ավան ամու ասածներին» (ԱԲ): *Կանանցից մեկը* բաժանվում է խմբից» և այլն:

ՍՏՈՐՈԳՅԱԼ

§ 69. *Ստորոգյալը երկկազմ նախադասության այն գլխավոր անդամն է, որն արտահայտում է ենթակայի հատկանիշը և այդ հատկանիշը ստորոգում՝ վերագրում է ենթակային:*

Հատկանիշ ասելով պետք է հասկանալ ինչպես գործողություն՝ Ծաղիկներն *արթնացան* գիշերվա նիրհից (ԱԲ): Կաթի սերը *քաշել եմ, դրել եմ* հովին՝ *սառի* (Ավ.Իս.), այնպես էլ որակական, քանակական, առարկայական հատկություն (Երևանը *գեղեցիկ է:* Արթուրը դասարանում *առաջինն է:* Մասիսը Հայաստան աշխարհի *խորհրդանիշն է):*

Ստորոգյալն արտահայտվում է բայի դիմավոր ձևերով՝ եղանակի, ժամանակի, դեմքի ու թվի քերականական կարգերով: Առանց դիմավոր բայի դիմավոր նախադասություն չի կարող լինել:

Ինչպես երևում է բերված օրինակներից, ստորոգյալն արտահայտվում է կամ միայն դիմավոր բայով, կամ դիմավոր բայի հետ նաև այլ խոսքի մասերով (գոյական, ածական, թվական, դերանուն, անկախ դերբայներ և այլն): Հետևաբար ըստ ձևային արտահայտության, ստորոգյալը լինում է *բայական՝* Գարունը *եկավ → գալու է → կգա→* (շուտով *պիտի գա) և անվանաբայական* (Աստված *մարդ է:* Բնությունը *գեղեցիկ է:* Ուսման մեջ նա *առաջինն է:* Իմ ընկերը *դու ես:* Դա *կարդալ չէ):*

ԲԱՅԱԿԱՆ ՍՏՈՐՈԳՅԱԼ

§ 70. Բայական ստորոգյալն արտահայտվում է խոնարհված բայի հարացուցային բոլոր ձևերով (պարզ, համադրական կամ վերլուծական):

Դպրոցական և բուհական որոշ դասագրքերում միայն խոնարհված

---

* Տե՛ս *Վ.Առաքելյան,* Հայերենի շարահյուսություն, հ. Ա.. Ե., 1958, էջ 52:

բայով արտահայտված ստորոգյալներն անվանվում են *պարզ*, իսկ այլ խոսքի մասերով և հանգույցով կամ վերացական բայերով կազմվածները՝ *բաղադրյալ*: Այս տերմինները նպատակահարմար չեն երկու առումով. նախ՝ աշակերտները և ուսանողները *պարզ ստորոգյալ* ասելով այն հաճախ շփոթում են բայի միայն *պարզ ժամանակաձևերով* արտահայտված ստորոգյալների հետ (*գրեցի, գրեմ, գրի՛ր*), իսկ բայի բաղադրյալ ժամանակաձևերով արտահայտվածները (*գրում եմ, գրել եմ, գրելու էի* և այլն) համարում են *բաղադրյալ*: Նման շփոթ չառաջանալու հիմնավորումով ճիշտ են վարվում այն լեզվաբանները, որոնք միայն բայի խոնարհման հարացույցի ձևերով արտահայտված ստորոգյալներին տալիս են *բայական անվանումը*, իսկ բայով և այլ խոսքի մասերով արտահայտվածներին՝ *անվանաբայական անվանումը*:

§ 70. *Բայական ստորոգյալն* արտահայտվում է՝

1. Բայի բոլոր եղանակների բոլոր ժամանակներով՝ համադրական և վերլուծական:

Սահմանականով - Ժայռից մասուր է *կաթում*, կարմիր սարսուռ է *կաթում* (ՀՍ): Լուսիննեն *նվագում էր*՝ աշխարհից կտրված... (ՀՔ): Շուտով եղբայրս վերադառնալու է բանակից:

Անտառում ամպի ծվենները կային (ԱԲ): Լույսն *էր մեռնում*, օրը՝ *մթնում*, Սութը տնից տուն *էր մտնում* (ՎՏ): Գարունը *եկավ*, հավքերը *եկան*... (ՀԹ):

Ըղձականով - ... Մեռնող վարսերս *փայփայեմ ու լամ* (ՎՏ): *Հրաշք լիներ, կրկնվեր* այն հրաշքը իրական, Առուն ստվերս *տաներ* Ջաղացպանի աղջկան (ՀՍ): *Թռչեի* մտքով տուն... *Տեսնեի* այն առուն (ԳՍ):

Պայմանական (ենթադրական) եղանակով - *Կգար, կնստեր* կողքիս ու իր անուշ պատմությունը *կաներ* էրգրի ու հողի մասին (ՍԳ): Դու *կգաս*, բայց ես *չեմ լինի* (ՎՏ): Օձի կծածը *կլավանա*, լեզվի կծածը *չի լավանա* (ժող.):

Հարկադրական եղանակով - Աշուղ Սայաթ-Նովի նման ես երգ ու տաղ *պիտի ասեմ* (ԵՉ): Թատրոնը *պետք է ապրի*, և հանդիսատեսը *չպիտի մոռանա* այն (ԳԹ):

> Դու *պիտի ծաղկես*, երկի՛ր հայրական...
> Դու *պիտի հնչես*, հնչես հաղթական,
> Իմ հին հայ լեզու, քաղցր ու սրտաբուխ (Ավ.Իս.):

Հրամայական եղանակի բայաձևերով - *Դարձի՛ր* ինձ մոտ, *Վերադարձի՛ր* դու նորից: *Հեռացի՛ր, մոռացի՛ր, մի՛ հիշիր*, Ինձ այդպես, քրոջ պես *մի՛ գթա (ՎՏ): Գնա՛*, միշտ *գնա՛* իմ քարավա՛նս և *քայլի՛ր* մինչև օրերիս վերջը (Ավ.Իս.):

§ 72. *2.* Բայական ստորոգյալն արտահայտվում է նաև *երկրորդական բաղադրյալ ժամանակներով*: Սրանք կազմվում են *համակատար, հարակատար ու կատարելի (ապառնի)* դերբայներով և *լինել* բայի խոնարհված ձևերով, օրինակ՝ *գնալիս է լինում, եղել, գնացած է լինում, եղել, գնալու է*

լինում, եղել: Ինչպես նկատելի է, ժամանակակից հայերենին նման ժամանակային ձևերը, այնքան էլ հարազատ չեն. դրանք ավելի շատ գործածվում էին 19-րդ դարի հայ գրողների ստեղծագործություններում: Բնագրային օրինակներ՝ Ժուկով-ժամանակով Հնդկաստանի Բենարես քաղաքում *տիրելիս է լինում* Ուքանա թագավորը (ՀԹ): Գոնե Սամվելը մի անգամ *նայելիս լիներ* խեղճ պատանու վրա (Րաֆ.): Մինչև տեղ է հասնում, հարսանիքավորները *գնացած են լինում* (ՀԹ): Երբ գյուղից *գնալու է լինում, համբուրելիս է լինում* կնոջն ու երեխաներին (Շ):

§ 73. *3.* Բայական ստորոգյալներ են նաև *հարադրական և զուգադրական բայերով* կազմվածները: Օրինակներ՝ *Անց են կենում* սեր ու խնդում: *Բաց արեց* ցերեկն իր աչքը պայծառ (ՀԹ): Դիվանաև *աչքը բաց է անում* Ոսկի քաղաքում (ՀԹ): Ու *լաց է լինում* ուռին՝ աչքը հառած լացող ջրերին (Գար.): *Առա՛ջ արի,* լալկա՛ն աղջիկ (Շ): *Վեր կացա, քուլացրի* ծիուս թամբի կապերը (ԱԲ): *Պտույտ է գալիս* չքնաղ տիրուհին (ՀԹ):

Հարադրական բայերի մի տեսակն են *զուգորդական բայերը (ասել-խոսել, առնել-փախչել, մեռնել-պրծնել, հագնել-կապել, գնալ-հեռանալ, աղաչել-պաղատել, քշել-տանել, առնել-ծախել, գրել-կարդալ, եփել-թափել, ծլել-ծաղկել, հալվել-մաշվել* և այլն): Սրանք ցույց են տալիս միմյանց զուգորդվող գործողությունների միասնություն և համարվում են պարզ ստորոգյալներ: Օրինակներ՝ *Մեռնեմ-պրծնեմ* ես օրից (ՀԹ): *Ծլես-ծաղկես,* իմ անո՛ւշ բոռնիկ, տեսնում ես՝ ես *հալվել-մաշվել* եմ, գոնե դու ինձ տիրություն արա, *եփի՛ր-թափի՛ր,* մինչև *գնամ-հեռանամ* այս կյանքից (ՍԳ):

Հարադրական բայեր պետք է համարել նաև կրկնվող բայերը, որոնք կարող են կապակցվել նաև շաղկապներով, կամ երկրորդ բայը կարող է առաջինի ժխտական ձևը լինել: Օրինակներ՝ *գնում եմ, գնում* հասնում են մի անմարդաբնակ կղզու (ՍԳ): *Տո՛ւր թե կտաս* շան ճակատին (ՀԹ): *Գնաց ու գնաց,* շատ ու քիչը Աստված գիտի (ՀԹ): *Խոսում է ու խոսում,* բան չի ասում (Ոզնի): *Կար, չկար* մի թագավոր կար (ՀԹ): *Լինում է, չի լինում,* մի որբ տղա է լինում...

Բայական ստորոգյալներ կարելի է դիտել նաև երկու խոնարհված բայերով արտահայտվածները, ինչպես նույն դեմքով (*Գնամ տեսնեմ՝* ի՞նչ է ասում: *Գնա խոսիր* հետը) այնպես էլ՝ տարբեր դեմքերով (Արի տեսնեմ՝ ի՞նչ ես ասում: *Արի գնանք* ցույց տամ: *Եկ տեսնենք՝* ինչ ենք անում): Այս դեպքում կարևոր նշանակություն ունի *հնչերանգը:*

Բայական հարադրությունների մեջ ձևակազմական արժեք ունեն ՏԱԼ բաղադրիչով կազմված և պատճառական իմաստ արտահայտող ձևերը, որոնք ցույց են տալիս գործողություն, որը ենթական ոչ թե ինքն է անում, այլ կատարել է տալիս մեկ ուրիշին (Գործը *կատարել տվեց* մեկ ուրիշին: Արթուրը շարադրությունը *գրել տվեց* իր պապիկին: Աղվեսի մահով *սպանել կտամ)* (Րաֆ.):

§ 74. Վերջապես բայական ստորոգյալներ են նաև հարադրական և զուգադրական բայերով կազմված *դարձվածային միավորները*, որոնք անչափ շատ են: Բերենք մի երկուսը՝ Ժողովի ժամանակ հո *կծել չէր, որ կծեց* շեֆին (Ոզնի): Տնօրենին *ցեխը կոխեց ու չհանեց*, նրա արածները *հողին հավասարեցրեց, պատին սեղմեց ու բուրդը քամուն տվեց:* Իսկ տնօրենը *հին երգն էր երգում*, քննադատությունը *ականջին օդ չէր անում* (ՈՒԴԲ):

Ծանոթություն - Թող, տես, արի, եկ, համեցեք, ասա և նման բայերը խոնարհված բայերի հետ եղանակավորման դեր են կատարում՝ մնալով բայական ստորոգյալներ: Օրինակներ՝ *Թող մի գա, տեսնենք*՝ ի՞նչ է ուզում: *Համեցեք, դիվան ուզիր* սրանից (ՀՁ): *Բեր տեսնենք*՝ ի՞նչ ես գրել: *Բեր* մեր տղային քաղաք *ուղարկենք*՝ աչք ու երեսը *թող մի քիչ բացվի (ՍԳ): Արի* այս գործը *ձեռնարկենք:* - Չեռնարկելը ձեռնարկենք, *ասա մի բան դուրս գա:* Որոշ լեզվաբաններ նման կառույցները իրավացիորեն համարում են *բարդ ստորոգյալ:*

ԱՆՎԱՆԱԲԱՅԱԿԱՆ ՍՏՈՐՈԳՅԱԼ

§ 75. *Դիմավոր բայով և այլ խոսքի մասերով կազմված ստորոգյալը կոչվում է անվանաբայական:*

Անվանաբայական ստորոգյալը միատարր լինել չի կարող. այն կազմված է լինում երկու կամ ավելի բառերից, որոնցից մեկը *գերադասն է* եական բայն է կամ վերացական մի բայ, մյուսը (մյուսները՝ նյութական իմաստ ունեցող որևէ խոսքի մաս (բացի խոնարհված բայից):

Անվանաբայական ստորոգյալի մաս կազմող և ստորոգվող հատկանիշն արտահայտող վիճակացույց բառը կոչվում է ստորոգելի կամ ստորոգելիական վերադիր, իսկ ստորոգվող հատկանիշը ենթակային ստորոգողը կոչվում է հանգույց: «Մեր լեզուն *ճկում է ու բարբարոս*» (ԵՉ) նախադասության մեջ *ճկում և բարբարոս* ածականները հատկանշացույց են, արտահայտում են *լեզու* ենթակայի հատկանիշները, իսկ *է* եական բայը՝ հանգույցը, այդ հատկանիշները կապել՝ վերագրել է *լեզուն* ենթակային: Ուրեմն՝ ենթակայի հատկանիշը ամփոփված է լինում ոչ թե ստորոգելիի կամ հանգույցի, այլ *այդ երկուսի միասնության մեջ:*

Հայերենում *ստորոգելին* արտահայտվում է *գոյականով, ածականով, թվականով, որոշ անկախ դերբայներով, դերանվամբ*, ինչպես նաև՝ *դարձվածային միավորներով:*

Հանգույցն արտահայտվում է *եական բայի դրական ու ժխտական ձևերով*, ինչպես նաև *վերացական կոչվող բայերով (անել, դառնալ, թվալ, համարվել, հանդիսանալ, երևալ, կոչվել, հռչակվել, ճանաչվել, ձևանալ, մնալ, ստանալ, անվանվել, նշանակվել, առաջադրվել* և այլն):

Ինքնուրույն նյութական բովանդակություն չարտահայտող և իբրև հանգույց հանդես եկող բայերը կոչվում են վերացական բայեր: Սրանցից մի քանիսը որոշ կառույցներում կարող են հանդես գալ նաև նյութական իմաստներով ու դառնալ բայական պարզ ստորոգյալներ, բայց ստորոգելիի

հետ գործածվելիս կորցնում են իրենց նյութական իմաստները և համարժեք են դառնում է *էական բային* կամ *լինել* վերացական բային: Դա լավ է երևում հետևյալ օրինակում՝ «Արամի գործը այլ *բնույթ ստացավ»* և «Արամը դիպլոմ *ստացավ»:* Առաջին դեպքում *ստացավ*-ը վերացական բայ է, հետևաբար՝ *հանգույց,* իսկ երկրորդ դեպքում այն *բայական ստորոգյալ է:*

Անվանաբայական ստորոգյալի ստորոգելին արտահայտվում է՝

§ 76. *1. Գոյականի ուղիղ և թեք հոլովներով.*

Ուղղականի որոշյալ և անորոշ առումներով՝ Լեզուն ազգի *հոգին է (ՀՏ):* Հրաչյա Աճառյանը հայ լեզվաբանության *գագաթն է* (Էդ.Աղայան): *Մածկալ ես,* բեզարած ես. Ես *երգիչ եմ* - երկնի *թիթեռ* (Ավ. Իս.): Աշխարհն էլ ասես մի *հեքիաթ լիներ* (Ավ.Իս.):

Ուղղականով արտահայտված ստորոգելին կարող է ձևավորվել նաև *որպես* կապով ու նրա խնդրով՝ Մայրս *աշխատում է որպես ուսուցչուհի.* Հայրս *աշխատանքի ընդունվեց որպես ինժեներ: Նա ներկայացավ որպես օտարական:*

Բուն սեռականով դրված վերադիրները ավելի շատ հատկացուցչային և որոշչային հատկանիշներ են ընդգծում՝ Այս ժամացույցը *պատի (սեղանի, գրպանի, թևի) է:* Պահարանը *գրքի (զգեստների, գործիքների) է: Գդալը՝ թեյի (ճաշի) է:* Բաժակը *գինու (սուրճի, ջրի, գարեջրի) է:* Հետաքրքիր է՝ իմ ընկերը *ինչ կարծիքի է:*

«Անձնանունների բառարանը» *Աճառյանինն է:* Գիրքը *Արամինն է:*

Վերջին երկու օրինակներում առկա ստորոգելիները *փոխանում սեռական են:*

Ծանոթություն - Քերականական որոշ աշխատություններում նշված է, որ գոյականների թեք հոլովների հետ գործածված ԵՄ և ԼԻՆԵԼ բայերը նյութական նշանակությամբ են օժտվում և հանդես են գալիս որպես *առանձին բայական ստորոգյալներ,* իսկ նրանց հետ գործածված բառերը *պարագայական իմաստներ են արտահայտում:* Օրինակներ՝ Գյուղը գետի աջ *ափին է:* Տունը *գյուղի ծայրին է:* Սարուքաքը *սարի կատարին է:* Սոնան *դասարանում է:* Իմ սիրտը *լեռներում է:* Ժողովը *ժամը հինգին է:* Քննությունները ամսի *վերջին են:* Ընկերս *գյուղից էր:* Նա այս *քաղաքում չէր եղել:*

Նույնն է ասվում նաև կապային կառույցների վերաբերյալ. ինչպես՝ Գդալը *բաժակի մեջ է:* Գիրքը *սեղանի վրա է եղել:* Արևը *ամպի տակ է:*

Սարգսի տունը *եկեղեցու մոտ էր:* Դեպքը *լուսադեմի կողմն էր* և այլն:

Նյութի և ծագման իմաստ արտահայտող *բացառականների հետ* ԵՄ և ԼԻՆԵԼ բայերը նույնպես անվանաբայական ստորոգյալներ են դառնում՝ Այս տունը *քարից է:* Սատանին *ոսկուց է:* Երկուսն էլ նույն *ջրկատից են:* Տիգրանը *մեր կուրսից է:*

Հատկանշային, որակական իմաստ արտահայտող *գործիականով* կառույցները նույնպես անվանաբայական ստորոգյալներ են՝ Երեխան *շնորհքով է:* Կարկանդակը *մսով է:* Սեփական այգու միրգը ավելի *համով է:* Առածդ կոշիկները *որակով չեն* և այլն:

Կապային կառույցներում նույնպես գործ ունենք ստորոգելիների և հանգույցների հետ: Օրինակներ՝ Ազգային ժողովի որոշումը *քաղաքաշինության վերաբերյալ էր:* Միջոցառումը ատենախոսության *պաշտպանության առթիվ էր:* Խոսքը *քո մասին չէ:* Հիվանդը հիմա *ոտքի վրա է:* Դա *էլ մի բանի նման չէ:*

§ 77. *2. Ածականները* ավելի հաճախակի կիրառություն ունեն անվանաբայական ստորոգյալներում: Վերադիր ածականները նշում են ենթակաների որակական հատկանիշը՝ *ճոխ է* հայոց լեզուն, և առատորեն կվարծատրվի նա, ով կուսումնասիրի այն (Բայրոն): Իմ գիտցած լեզուների մեջ հայերենը *բացառիկ է* (Ֆեյդի): Մայր Հայաստանի արգանդը *եղավ* սրբորեն *բեղուն* (ՊՍ): Մութ իրիկնաժամին կգաս դու *ինձ մոտ, կլինես քնքուշ, մոտիկ, հարազատ* (ՎՏ): Տղան շատ *խելոք է:* Աղջիկը *գեղեցիկ է:* Մեր կլիման *լեռնային է:* Տետրը *աշակերտական է:* Հեքիաթի ծին *հրեղեն էր:*

3. Թվականները ստորոգելի դառնալիս հանդես են գալիս թե՛ որոշիչ հոդերով և թե՛ առանց դրանց՝ երրորդ կուրսի ուսանողների թիվը հարյուր *քսանհինգ է:* Նրանք *երկուսն են:* Հերթագրման ցուցակում ես *առաջինն եմ,* դու՝ *երկրորդը,* Արամը *վեցերորդն է:*

4. Դերանունները նույնպես մեծ հաճախականություն ունեն որպես ստորոգելի: Ստորոգելի են դառնում բոլոր անձնական դերանունները: (Նվագողը *ես եմ,* լսողը՝ *դուք,* գնահատողները *նրանք են):* Սրանց սեռական հոլովները հանդես են գալիս փոխանուն սեռականներ և *հոդ* են ստանում (Հիմա խոսքը *քոնն է:* Այս գիրքը *իմն է:* Հանձնարարությունը *ձերն է,* գործը՝ *մերը*): Հարցահարաբերական դերանունները նույնպես մեծ կիրառություն ունեն: Մյուս դերանուններից ստորոգելիներ են դառնում առարկայանիշ և որականիշ դերանունները:

Այստեղ, այդտեղ, այնտեղ ցուցականները դառնում են *տեղի պարագաներ* (Մեր տունը *այստեղ է:* Հին դպրոցը *այնտեղ էր):*

5. Դերբայներից ստորոգելիներ են դառնում միայն *անկախները,* բացի համակատարից: *Անորոշ* դերբայը որպես ստորոգելի է հանդես գալիս ինչպես հոդով, այնպես էլ առանց հոդի՝ Իմ նշանաբանը պարտաճանաչ *աշխատելն է:* Բանը լավ անուն *թողնելն է:* Դա *աշխատել չէ,* որ դուք աշխատում եք: Բա դա դաս *կարդալ եղա՞վ:*

Ենթակայական դերբայը որպես ստորոգելի հանդես է գալիս իր բուն իմաստով (Նա լավ *կռվող է* և լավ էլ *սովորող էր),* իսկ *հարակատարը* հանդես է գալիս փոխանվանաբար (Սա քո *գրածն է:* Քո *ասածն էլ իմ ասածն է): Վիճակ ցույց տվող հարակատարը* դառնում է սովորական *բայական ստորոգյալ* (Երեխան *քնած է:* Ես *հոգնած եմ:* Նա *նստած է*)[31]:

6. Մակբայները ստորոգելիի պաշտոնում հանդես են գալիս իրենց բուն նշանակությամբ: (Մեքենայի ընթացքը *արագ է:* Արդեն *ուշ է:* Տուն գնալու ժամանակը *հիմա է:* Դպրոցը այնքան էլ *հեռու չէր, մոտ էր:* Դա արդեն *ուշ*

[31] Տե՛ս *Մ.Աստրյան,* նշվ. աշխ., էջ 169:

կլինի):

Վերևում խոսվեց անվանաբայական (այն կոչվում է նաև *բաղադրյալ*) ստորոգյալի *ԵՄ և ԼԻՆԵԼ + որևէ խոսքի մաս* տեսակի մասին: Սակայն, ինչպես նշվել է «ստորոգյալ» թեմայի սկզբում, բացի նշված կաղապարից, ստորոգյալի մաս են կազմում նաև *կոչվել* ԴԱՌՆԱԼ, ԹՎԱԼ, ՀԱՄԱՐՎԵԼ,ՀԱՆԴԻՍԱՆԱԼ և նման վերացական բայերը:

> ***Ծանոթություն*** - Մ.Աբեղյանը *ԵՄ, ԼԻՆԵԼ* բայերի գոյական կամ ածական լրացումը կոչում է բաղադրյալ *ստորոգյալ* (Տիգրանը *բարի է*, Տիգրանը *աշակերտ է:* Ձուրը *գոլորշի դարձավ),* իսկ մյուս վերացական բայերի (դառնալ, թվալ, համարվել, հանդիսանալ և այլն) լրացումը կոչում է *ստորոգելիական վերադիր* (Ներսես Դ -ը *կոչվեց Շնորհալի*, Թուփը *մարդ թվաց)*[32]: Հետագա շրջանի լեզվաբանները այս տարբերակումը իրավացիորեն չեն դնում, և երկու դեպքում էլ գործածում են միայն *ստորոգելիական վերադիր* անվանումը: Կարծում ենք՝ կարճ ձևը ավելի լավ է *ստորոգելի:*

Բերենք վերացական բայերով կազմված անվանաբայական ստորոգյալների բնագրային մի քանի օրինակ՝ Կոմիտասը հայ երգի *վեհափառը դարձավ (ԳԹ):* Ժպիտը *մեղք եք համարում* (ՀԹ): Քաղաքապետը *պատգամավոր ընտրվեց* (Ազգ): Հայաստանը *անկախ հանրապետություն հռչակվեց 1991 թ. սեպտեմբերի 21-ին (ՀՀ): Ընկերոջը հիմա պարոն* են անվանում (Ոզնի): Նաջարյանին ժողովի *նախագահ նշանակեցին* (ՍԳ): Այն օրվանից սրա համար կղզին *կոչվեց Մխթամար* (ՀԹ): Մթության մեջ ծառը ինձ *մարդ թվաց* (ՎԱ): *Ցերեկ է արել* խավար գիշերը (ՀԹ):

§ 78. Քննության հատուկ հարց է *անորոշ դերբայի* ստորոգյալի կազմում հանդես գալու խնդիրը: Հայտնի է, որ այն իր մեջ համատեղում է թե՛ գործողության և թե՛ առարկայական հատկանիշներ և խոսքի մեջ հանդես է գալիս գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններով, չի կորցնում, սակայն, իր բայ լինելու հատկանիշը:

Հայ քերականագիտության մեջ *անորոշ դերբայի ուղիղ ձևի և դիմավոր բայի* միասնաբար հանդես գալու հարցը տարբեր գնահատումներ է ստացել: Որոշ լեզվաբաններ, հետևելով ռուսերենի քերականությանը, հայերենում նույնպես ընդունում են *բարդ ստորոգյալի* առանձին տեսակը:

> ***Ծանոթություն*** - Գ. Ջահուկյանը և *դիմավոր բայ + անորոշ դերբայ կառույցներն է բարդ ստորոգյալ* կոչում *(ուզում է քայլել, ուզում է գնալ)* և բաղադրյալ ստորոգյալի և անորոշ դերբայի զուգադրումը *(Կարող է գնալ, պարտավոր է գնալ)*[33]:
>
> Վ.Առաքելյանը *բարդ է* համարում *անվանական և բայական* ստորոգյալների միասնությունը (*պատրաստ եմ* երդումս *դրժել: Անզոր է հասկանալ: Ուրախ եմ ծա-*

---

[32] Տե՛ս *Մ.Աբեղյան*, նշվ. աշխ., էջ 367-369:

[33] *Գ.Ջահուկյան*, նշվ. աշխ., էջ 404 և 412-413:

Ցորանալ: Մտադիր չէ վերադառնալ: Կարող է ավելի *սիրալիր թվալ* և այլն)[34]:

Ս.Գյուլբուդաղյանը *դիմավոր բայ + անորոշ դերբայ* կաղապարով ստորոգյալը կոչում է *բայական բաղադրյալ (խուսափում է պատասխանել, ծգտում էր ապացուցել, Ջանում էր խնդիրը լուծել* և այլն)[35]:

Թերևս ճիշտ պետք է համարել Մ.Ասատրյանի տեսակետը, որ «Այս տիպի կապակցությունների մեջ *անցողական բայերից կախված անորոշ դերբայը ուղիղ խնդիր է. օրինակ՝* Նա *սիրում է կարդալ, Սկսեց աշխատել, Շարունակում էր նայել,* իսկ *անանցողական բայերից կախված անորոշ դերբայը անուղղակի է, ինչպես՝ Նա ծգտում է ընդունվել* համալսարան, *Վախենում է* նրան *տեսնել, խուսափում է* իր ընկերներին *հանդիպելուց*»[36]:

§ 79. Հայերենում միասնական կարծիք չկա նաև *անհոդ անորոշ դերբայի և պետք է, անհրաժեշտ է, կարելի է, անկարելի է, հնարավոր է, անհնար է, անհնարին է, հաճելի է, տհաճ է, հեշտ է, դժվար է, լավ է, վատ է,* և նման տիպի բառերի կառուցվածքով ստորոգյալների վերաբերյալ: Օրինակներ՝ *Անհրաժեշտ է* ժամանակին *ավարտել* աշխատանքները (Ազգ): *Պետք է* սկսած գործը *կիսատ չթողնել* (Ա.տ.): Զգույշ է միրհավը. *հեշտ չէ* նրան *խփել (ԱԲ): Մեղք է* անառակին հրեշտակ *ասել (*Թոթ.): *Լավ է* ընդհանրապես *լռել (*Ոզնի): *Հնարավոր չէ* կարճ ժամանակում *փրկել* վիճակը (ՀՀ): *Հաճելի* է գովեստներ *լսել* իր մասին: *Ամոթ է* օրը ցերեկով մարդուն *զրպարտել: Ծանր է* մենակ ընտանիքի հոգսը *հոգալ* և այլն:

Նման կառույցները քերականական մի քանի աշխատություններում համարվում են բաղադրյալ ստորոգյալներ, իսկ դրանցով կազմված նախադասությունները՝ *անդեմ նախադասություններ:* Սինչդեո Մ.Աբեղյանը այդպիսի կառույցներում անորոշ դերբայը համարում է *ենթակա,* իսկ նրա հետ հանդես եկող *պետք է, լավ է, վատ է, անհրաժեշտ է* և նման բառերը՝ *ստորոգյալ*[37]*:* Նույն կարծիքին է նաև Մ.Ասատրյանը[38]: Մեր կարծիքով սա վիճելի հարց է:

Ստորոգյալներին տրվող հարցերը պայմանավորված են նրա տեսակներով. որոշ ստորոգյալների էլ հարց չի առաջադրվում:

ա) Բայական ստորոգյալներին տրվում է հետևյալ հարցերը՝ ի՞նչ է անում, ի՞նչ է լինում, ի՞նչ է անելու (լինելու), ի՞նչ է արել (եղել), ի՞նչ արեց (եղավ), ի՞նչ պիտի անի (լինի) և այլն:

բ) Անվանաբայական ստորոգյալներին տրվող հարցը վերաբերում է *ստորոգելիին՝* ո՞վ է, ի՞նչ է, ովքե՞ր են, ինչե՞ր են, ովքե՞ր կլինեն, ի՞նչ դարձավ, ի՞նչ եղավ, որտե՞ղ է, ե՞րբ էր, ո՞րերորդն է, որքա՞ն է, ինչպիսի՞ն է և

---

[34] *Վ.Առաքելյան,* Հայերենի շարահյուսություն, հատոր Ա,Ե.,1958, էջ 146-148:

[35] *Ս.Գյուլբուդաղյան,* նշվ. աշխ., էջ 164:

[36] *Մ.Ասատրյան,* նշվ. աշխ., էջ 163:

[37] Տե՛ս *Մ.Աբեղյան,* նշվ. աշխ., էջ 372:

[38] *Մ.Ասատրյան,* նշվ. աշխ., էջ 163:

այլն:

գ) *Կամ, գիտեմ, ունեմ* պակասավոր բայերով արտահայտված ստորոգյալները ոչ մի հարց չեն ընդունում: Օրինակներ՝ Հարդի հոտ *կա* քո ծորերում (ՀՍ): Այդ գործում ես *չկամ*, պարո՛ն (ՍԳ): Այն կինն էլ *ուներ* խշխշան շորեր... քորոցը նարնջագույն գլուխ *ուներ* (ԱԲ): Մայրս *ուներ* ձեռներ բարակ (ՎՏ): ...*Չունի* և պարսից արքան (ՎՏ): Անտառը ծանոթ էր նրան, *գիտեր*, թե որտեղ է սիրում բույն դնել ու կանչել միրհավը (ԱԲ): *Չգիտեմ*՝ որտեղից է գալիս Ջուբակի հեկեկանքը տխուր (ՎՏ):

ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

§ 80. Համաձայնությունը՝ իբրև քերականական կապակցության եղանակ, ամենից առաջ բնութագրական է նախադասության գլխավոր անդամներին:

Ժամանակակից հայերենում եիթական ու ստորոգյալը սովորաբար համաձայնում են *դեմքով ու թվով*. այսինքն՝ ենթակայի դեմքն ու թիվը պարտադրվում են ստորոգյալին, հետևաբար ստորոգյալը կախվածության մեջ է ենթակայից: Հայտնի է, որ Սանուկ Աբեղյանը հակառակ կարծիքի էր. նա գերապատվությունը տալիս էր ստորոգյալին:

§ 81. *Դիմային համաձայնությունը* վերաբերում է ենթակայի դերանվանական արտահայտությանը. այս դեպքում համաձայնությունը շատ կանոնիկ է, և կանոններից շեղումներ չկան: Այսպես՝ ստորոգյալի համաձայնությունը պայմանավորված է անձնական դերանվան դեմքով, բայական ստորոգյալների դեպքում համաձայնությունը տեղի է ունենում խոնարհված բայերի դեմքերով, անվանաբայականների ժամանակ՝ հանգույցներով:

ա) Եթե դերանուն-ենթական արտահայտված է անձնական դերանվան առաջին դեմքով (եզակի և հոգնակի թվերով), ստորոգյալը դրվում է առաջին դեմքով՝ Ու *թախծում եմ ես* խոով (ՀՇ):

Ես կգամ, դուռդ կբանաս, կընդունես մոլորված որդուդ (ՀՍ):

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես... (ՀՇ): *Մենք մարդ ենք ծնվել* մորից (ՊՍ):

Եթե ենթական ունի առաջին դեմքի դիմորոշ հոդ՝ Ս, նորից մնում է նույն համաձայնությունը՝ *Երդվյալս չեմ կարող* երդումս *դրժել: Երրորդ կուրսեցիներս պարտավորվել ենք* մեկ մարդու պես մասնակցել շաբաթօրյակին:

բ) Եթե ենթական արտահայտված է անձնական դերանվան երկրորդ դեմքով (եզակի և հոգնակի թվերով), ստորոգյալը դրվում է երկրորդ դեմքով՝

Դու պիտի հնչես, հնչես հաղթական, Իմ հի՛ն հայ լեզո՛ւ՝ քաղցր ու սրտաբուխ (Ավ.Իս.):

Դու ջահել ես, դու սիրուն ես, Արի՛, արի՛ տուն (ՁՍ):

Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես *ոռնացիք* վայրագ (ՀՇ):

Ստորոգյալը երկրորդ դեմքով է դրվում, եթե ենթական ունի երկրորդ դեմքի դիմորոշ հոդ՝ *Դ (Առաջավորդ չպետք է մեծամտանաս: Առաջավորները չպետք է մեծամտանաք):*

գ) Ստորոգյալը երրորդ դեմքով է դրվում, եթե ենթական արտահայտված է երրորդ դեմքի անձնական դերանվամբ կամ ցանկացած մյուս դերանուններով՝

Նա հրդեհի մեջ *դողում է, մրսում, Եվ ինքն իրեն փրկել է ուզում* (ՀՍ):

Այն ո՞վ է, նանի, որ *կանչում է* մեզ (ՀԹ): *Սա է մեր խաչը,* և պիտի տանենք: *Ոչինչ չի պատահել: Որտե՞ղ է* հիմա այն *երևակայությունը: Բոլորը գնացին:*

Գոյականներով կամ փոխանվանաբար գործածված այլ խոսքի մասերով հանդես եկող ենթակաների ստորոգյալները նույնպես երրորդ դեմքով են դրվում՝ *Մեծ է արվեստի ուժը. արվեստը կարող է գերել, հմայել, թեթևացնել ու խորապես ցնցել (ԳԹ): Թումանյանն ու Կոմիտասը ծնվել են* նույն թվին՝ 1869-ին (ԳԹ):

Անձնական դերանունների դիմային իմաստները սաստկացնելու նպատակով հաճախ *ես, դու, նա* դերանունների հետ գործածվում են *ինքս, ինքդ, ինքը, իրենք* ձևերը. այս դեպքում էլ համաձայնությունը մնում է նույնը.

Դիմորոշ հոդերից տարբեր են ստացական Ս և Դ հոդերը. այս հոդերն ունեցող գոյականներով արտահայտված ենթակաների ստորոգյալները նույնպես դրվում են երրորդ դեմքով՝

Գարունդ հայերեն *է գալիս, Ձյուներդ* հայերեն *են լալիս,*
Հայերեն *են հորդում ջրերդ:*
Հավքերդ երգում են հայերեն, *Խոփերդ հերկում են* հայերեն,
Հայերեն *են տոկում գրերդ* ... Հայերեն *են գալու դարերդ (ՀՍ):*

Սերս գաղտնի *թող մնա ...ճամփեն պիտի չիմանա... (ՀՇ):*

դ) Եթե ենթակաները արտահայտված են տարբեր դեմքերի դերանուններով, ստորոգյալը համաձայնում է նրանցից միայն մեկին, ըստ որում, *դեմքով ամենամոտին* և անպայման դրվում է հոգնակի թվով՝

Կապույտ, հստակ երկնքի տակ
Գնում էինք ես ու դու (Գ.Ջահուկյան):

Դու և նա պետք է կատարեք այս գործը: *Ես ու նա ենք ծեռնարկել* այս գործը: *Մենք ու դուք* միասին *պետք է կատարենք* հանձնարարությունը:

Ասվեց, որ ենթակայի և ստորոգյալի դիմային լիակատար համաձայնություն կա:

§ 82. *Թվային համաձայնություն* - ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնությունը, սակայն, դիմայինի նման կանոնիկ չէ. թվային համաձայնության դեպքում անհամաձայնության դեպքերը բավական շատ են:

Նախ քննենք հ ա մ ա ձ ա յ ն ու թ յ ա ն դեպքերը.

ա) *Եզակի ենթակայի* հետ դրվում է եզակի ստորոգյալ. օրինակներ՝ *Արևն է խաղում* լճի կապույտին: Ու *ջուրն է ծփում*՝ մաքուր քնքշությամբ (ՎԴ): Օ՜ Գրքերի *աշխարհը տիեզերք է* անեզր (ԵՉ): Ժայռի ծերպից *մեխակն է բուրում* (Ավ.Իս.):

բ) *Հավաքական գոյականների հետ* ստորոգյալը *եզակի թվով* է դրվում՝ *ժողովուրդը* քնած *առյուծ է*, որ *զարթնեց*, էլ *չի քնի* (Առած): *Գյուղ կանգնի՝ գերան կկոտրի* (Առած): - *Բանակը պատրաստ է* հարձակման, տե՛ր իմ (ԴԴ): Մեղուների *պարսը պատել էր* գյուղը: *Ձկների վտառը ցրվեց:*

Եթե հավաքական գոյականները հոգնակի թվով են գործածվում, ստորոգյալը նույնպես հոգնակի է դրվում՝ *Բանակներդ արշավեցին* Բեռլին տանող ճամփաներով (ՀԾ): Աշխարհի *ժողովուրդները պայքարում են* խաղաղության համար:

գ) *Հոգնակի ենթակայի հետ դրվում է հոգնակի* ստորոգյալ՝

Աղբյուրները հնչում են ու անց կենում:
Ծարավները տենչում են ու անց կենում,
Ու երջանիկ ակունքներին երազուն
Պոետները կանչում են ու անց կենում (ՀԹ):

Բարբարոսներ շատ *կգան ու կանցնեն* անհետ,
Արքայական խոսքը մեր կմնա հավետ (ՎՏ):

Սարեր ու ծորեր իրար երեսի
Նայում են, ժպտում՝ ամպի մշուշով (ՎՄ):

Բոլորը, ամենքը դերանուններով արտահայտված ենթակաների հետ ստորոգյալները նույնպես դրվում են հոգնակի թվով՝ կարծես դարձել եմ ես տուն, *Բոլորը առաջվանն են* կրկին (ՎՏ): *Ամենքը* իրենց տեղերն *են զբաղեցնում:*

դ) *Բազմակի ենթակաների* հետ ստորոգյալը սովորաբար դրվում է հոգնակի թվով՝ Վայրի *վիթն ու այծյամը դուրս էին եկել* Խոսրովի արիական անտառներից և ազատ, համարձակ *վազվզում էին* շրջակա մարգերի վրա (Րաֆ.): *Անց են կենում սեր ու խնդում, գեղեցկություն, գանձ ու գահ* (ՀԹ):

Անվանաբայական ստորոգյալները (ստորոգելի+հանգույց) նույնպես, որպես կանոն, պետք է թվային համաձայնության մեջ լինեն ենթակայի հետ, այսպես՝ եզակի ենթակայի հետ գոյական ստորոգելին և հանգույցը նույնպես եզակի թվով են գործածվում (դիմային համաձայնությունը պարտադիր է), օրինակ՝ *Ես ուսանող եմ, դու դասախոս ես, Նա ուսուցիչ է:* Հոգնակի ենթկայի հետ անվանական ստորոգյալը նույնպես հոգնակի թվով է դրվում՝ *Մենք ուսանողներ ենք, դուք դասախոսներ եք, Նրանք ուսուցիչներ են:* Սակայն հոգնակի ենթակաների հետ ստորոգելիները հավասարապես դրվում են նաև եզակի թվով՝ *Մենք ուսանող ենք, դուք դասախոս եք, Նրանք ուսուցիչ են:*

Այժմ՝ անհամաձայնության դեպքերը.

Ժամանակակից հայերենում, հատկապես խոսակցական լեզվում, թե՛ բայական և թե՛ անվանական ստորոգյալների ու ենթակաների թվային *անհամաձայնության* դեպքերը բավական շատ են:

§ 83. *Անհամաձայնության դեպքերից են՝*

1. *Բակառություն* - Սա այն դեպքն է, երբ *եզակի ենթակայի* հետ դրվում է *հոգնակի ստորոգյալ և հակառակը*՝ հոգնակի ենթակայի հետ դրվում է եզակի ստորոգյալ. այսպես՝ Ուսանողների մեծ *մասը* բարձր գնահատականներ *ստացան:* Առաջադրանքների ճնշող *քանակը* հավանության *արժանացան: Խնդիրների մեծ մասը չլուծվեցին:* Բազմության *մոտ կեսը շարժվեցին* դեպի հրապարակ:

Բակառություն է նաև, երբ ենթական հոգնակի է, ստորոգյալը եզակի՝ *Ոտքերս հոգնեց: Ձեռքերս ցավում է: Աչքերս շաղվեց: Մատներս փայտացավ* և այլն:

Բակառության նշված այս երկու դեպքերն էլ անհարիր են գրական լեզվին, և ճիշտ կլինի երկու դեպքում էլ համաձայնեցնել ենթականերն ու ստորոգյալները (Ուսանողների մեծ մասը բարձր գնահատական ստացավ: Ոտքերս ցավում են):

Բակառության մի տեսակն էլ այն է, երբ *բազմակի ենթակաների հետ դրվում է եզակի ստորոգյալ: Ձյուն ու ցուրտ եկավ, առու, գետ լռեց:* Աշնան խաղաղ օրերին նրան *հաճելի էր* և սիմֆոնդրի *տերևների խշշոցը, և վազերի օրորը, և հնձանի դռնակի երգը* (ԱԲ):

Սակայն, երբ *ենթակաները հանդես են գալիս շեշտված, առանձնացած, ստորոգյալները դրվում են հոգնակի թվով*՝ Բանավոր խոսքի *համն ու հոտը դարձվածներն են (ՈՒՈԲ): Երգն ու երաժշտությունը* առանձին *շուք էին տալիս* հանդեսին (Դպ): *Գիրն ու գրականությունը* նրա կյանքի անբաժան *ընկերներն են: Արմենակ Շահմուրադյանը, Տիգրան Նալբանդյանը, Վահան Տեր-Առաքելյանը* Կոմիտասի սիրելի *սաներն էին: Վարդը, մեխակն ու շուշանը* հոտավետ *ծաղիկներ են:*

2. *Անեզական գոյականներով արտահայտված ենթակաների հետ ստորոգյալը դրվում է եզակի թվով*՝ 2001 թվի սեպտեմբերի 11-ի դեպքերից *ցնցվեց* Միացյալ *Նահանգները. Ալպերը հիանալի բուսականություն ունի: «Կարապատները»* ֆուտբոլային *ուժեղ թիմ է: Ֆիլիպինները առատ երկիր է:*

3. *Երբ հոգնակի ենթկան որևէ ստեղծագործության վերնագիր է, ստորոգյալը դրվում է եզակի թվով*՝ Բիզեի *«Մարգարիտներ որոնողները» լսվում է* մեծ հետաքրքրությամբ: Գ.Սևունցի *«Գերիները»* վաղուց է *հրատարակվել:* Տերյանի *«Սքնշաղի անուրջները» լույս է տեսել* 1908 թվին՝ Թիֆլիսում:

4. *Երբ քերականական թվականը* հանդես է գալիս *որպես ենթակայի լրացում,* ստորոգյալը դրվում է *եզակի թվով*՝ *Քսան ուսանող «գերազանց» ստացավ: Տասներկու* երեխա ճամբար *գնաց: Երկու շրջանավարտ աշխատանքի նշանակվեց* տեղում: Սակայն չի բացառվում նաև նման դեպքում

ստորոգյալների հոգնակի թվով դրվելը՝ *Քսան ուսանող* «գերազանց» *ստացան: Երկու շրջանավարտ* աշխատանքի *նշանակվեցին* տեղում:

5. *Եթե ենթական արտահայտված է որոշյալ դերանուններով՝ Ս, Դ դիմորոշ հոդերով, ստորոգյալը հոգնակի է դրվում՝ Յուրաքանչյուրս* մեր անելիքը *գիտենք: Ամեն մեկդ* ձեր գործն *իմացեք: Բոլորս* իմացանք այդ մասին:

ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

§ 84. Ասվել է, որ հայերենին հատուկ է ինչպես *սովորական (կայուն)*, այնպես էլ *շրջուն շարադասությունը (ինվերսիա)* (§ 8-9-10):

Ժամանակակից հայերենի ենթակայի և ստորոգյալի շարադասությունը պայմանավորված է տարբեր գործոններով՝ *քերականական անհրաժեշտությամբ, ընդգծվելու, շեշտվելու հանգամանքով, ոճական հատուկ նպատակներով*, ինչպես նաև *ավանդական սովորությամբ:*

§ 85. *Սովորական* շարադասությամբ ենթական ստորոգյալից սովորաբար *առաջ է* դրվում, եթե այն արտահայտված է՝

Գոյականով՝ Տերևները խշշացին: Դիլան դային տապ արավ, պահվեց քարի տակ (ԱԲ): *Արևդ* հայերեն է *ծագում, Ծառերդ* հայերեն *են ծաղկում...* (ՀՍ):

Ածականով՝ Գեղեցիկը թող և՛ երազում, և՛ կյանքում *ցոլա* հավիտյան (Եվտուշ.): Այստեղ ինչն է գլխավոր, Ուժեղի մոտ միշտ էլ *թույլն է մեղավոր* (Աթ.Խ.):

Թվականով՝ Առաջինը հաղթեց չորրորդին: *Տասնհինգը երկնիշ թիվ է:*

Դերբայներով՝ Ստեղծագործելը Կոմիտասի *տարերքն էր: Կարդացողը գիտում կլինի: Հանգստացածը լավ կաշխատի:*

Դերանուններով, հատկապես ընդգծելի է, որ *հարցահարաբերական դերանուններով* արտահայտված ենթակաները գրեթե բացառապես նախադաս են գործածվում՝ *Ո՞վ* քեզ *ծեծեց*, Մարո՛ ջան, *ո՞վ անիծեց*, Մարո ջա՛ն (ՀԹ): *Ի՞նչ կա* խանութում: *Ովքեր չեն եղել* Սատենադարանում, քիչ բան *կիմանան* հայկական մշակույթի մասին (ՀՋ): *Ով* Արարատ *ունի* սրտում, իր մայր լեզուն չի մոռանա (ՀՇ): Անձնական և մյուս դերանուններով արտահայտված ենթակաները հիմնականում *ազատ շարադասություն ունեն.* այն կապված է տրամաբանական շեշտի ու հնչերանգի հետ:

Բառակապակցություններով (այդ թվում և դարձվածներով) արտահայտված ենթակաները նույնպես հիմնականում *նախադաս* կիրառություն ունեն՝ *Առաջին ատյանի դատարանը* սխալ վճիռ էր կայացրել (Իրավ.): *Կյանքի փորձ ունեցողները* առհասարակ քիչ են սխալվում (ԳԹ):

Այլ խոսքի մասերով արտահայտված ենթակաները նույնպես հիմնականում նախադաս են դրվում (*Դեպի*-ն կապ է: *Բայց*-ը շաղկապ է: *Մի*-ը՝ ծայնարկություն և այլն):

2. Ենթական ստորոգյալից պարտադիր կարգով առաջ է դրվում *հեղինակի խոսք-նախադասության մեջ*, եթե այն դրված է ուրիշի ուղղակի խոս-

քից առաջ: Այսպես՝ *Դեկանը կարգադրեց.* «Հավաքվեցե՛ք դահլիճում՝ զեկուցում լսելու»:

Կոմիտասը, շոյելով տղայի մազերը, հարցրեց.
- Մա՛նչս, վանեցի՞ ես, թե՞ Տարոն աշխարհից:

Նույն կաղապն է գործում նաև անուղղակի խոսքի հեղինակի խոսքում՝ *Դեկանը կարգադրեց,* որ գնանք դահլիճ՝ դասախոսություն լսելու: *Կոմիտասը,* շոյելով տղայի մազերը, հարցրեց՝ նա վանեցի՞ է, թե՞ Տարոն աշխարհից:

Իսկ եթե հեղինակի խոսք-նախադասությունը հաջորդում է ուրիշի ուղղակի խոսքին, *հեղինակի խոսքում պարտադիր կարգով ստորոգյալն է ենթակայից առաջ* դրվում.

– Բոլորդ հավաքվե՛ք դահլիճում, - *կարգադրեց դեկանը:*

- Մա՛նչս, վանեցի՞ ես, թե՞ Տարոն աշխարհից, - հարցրեց Կոմիտասը:

Ուրիշի խոսքի հետ կապված ենթակա-ստորոգյալի նման շարադասությունը պայմանավորված է տրամաբանությամբ. հիմնավորումն այն է, որ ստորոգյալը պետք է հեղինակի խոսքին ծառայի որպես կապի միջոց:

Անվանաբայական ստորոգյալները նույնպես մեծ մասամբ ենթականերից հետո են շարադասվում՝

Մեր *տունը* համր է ու *դատարկ,*
Մեր *տունը որբ է՝ ավեր* (ՎՏ):

Ես Նա եմ, ով միշտ մահվան մեջ է ապրել, բայց մահ չունի (ԳԷ):

Լուսիկի *հայրը* ուրախ ու բարի *մարդ էր* (ՀՔ):

Սակայն տրամաբանական շեշտ ստանալով՝ հաճախ նման կառույցներում ստորոգյալն է անցնում ենթակայից առաջ (*Գեղեցի՛կ էր* այդ *առավոտը* (Րաֆ.): *Ես եմ* հիմա այդ գործը տնօրինողը, *դու ես* կատարողը (ԳԹ):

§ 86. Ենթակա-ստորոգյալի շրջուն շարադասության դեպքերը - Հաճախ թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքում հարկ է լինում հատուկ նպատակներով ընդգծել ոչ թե գործող անձը, առարկան, այլ անձի, առարկայի *գործողությունը, նրա եղելությունը, դրությունը, վիճակը:* Այս դեպքում արդեն ստորոգյալն է անցնում ենթակայից առաջ, երբեմն էլ նախադասության սկիզբը՝ առաջ բերելով *շրջուն շարադասություն:*

1. *Ենթական ստորոգյալից հետո է շարադասվում, երբ հեղինակը հատուկ նպատակով ցանկանում է ընդգծել գործողությունը, ընթերցողի կամ լսողի ուշադրությունը հրավիրել հատկապես գործողության, եղելության վրա,* այսինքն՝ խոսողը առաջին պլան է մղում եղելության, դեպքի, երևույթի կարևորությունը: Օրինակ՝

Ծագում է մանուկ *արևը* գարնան
Կովկաս լեռների ձյունե պատնեշից (ՎՄ):

Ծփում է ծովն ալեծածան,
Ծփում է սիրտը տղի,
Գոռում է ծովն ահեղածայն (ՀԹ):

Լսվում է կաքավի թավ *երգը:* Անտառի խորքում *կանչում է միրհավը* (ԱԲ): *Գեղեցիկ է Սևանը* լուսաբացին: *Զարթնում է* շամբուտների փետրավոր *բնակչությունը* (ՎԱ):

Ինչպես երևում է բերված օրինակներից, ստորոգյալի նախադաս գործածությունը բնութագրական է հատկապես բնության նկարագրություններում՝ խոսքը ավելի գունեղ ու տպավորիչ դարձնելու նպատակով:

2. *Ստորոգյալը նախադաս է գործածվում հատկապես բանաստեղծական խոսքում՝ այն ռիթմավորելու և հանգավորելու նպատակով:*

Դոփում եմ, դոփում եմ, դոփում եմ ձիերը...
Գնում եմ, գնում եմ, գնում եմ ձիերը (ԵՉ):

Կանչում է կրկին, կանչում անդադար
էն չքնաղ երկրի *կարոտը* անքուն (ՀԹ):

Գոռում եմ, դողում Թմկա ծորերը...
Ջարկում եմ, ջարկվում դուշման *զորքերը* (ՀԹ):

3. *Ժողովրդական ստեղծագործություններում՝ հեքիաթներում, լեգենդներում, բալլադներում, խոսքին դինամիզմ հաղորդելու, ասելիքը ավելի աշխույժ դարձնելու հիմնավորումով ստորոգյալը նորից նախադաս է գործածվում՝ Լինում է, չի լինում մի խեղճ մարդ՝* անունը Նազար (ՀԹ): *Լինում է մի սար,* էն սարում *մի ծառ,* էն ծառում՝ *փչակ* (ՀԹ): *Լուսակերտ է ապարանքը* Թադմորի (Ավ.Իս.): Դարեր առաջ *կար* բարձրաբերձ պարիսպներով *մի դղյակ* (ՀՀ): Դունայի ափին *ապրում է փերին:*

4. *Թատերական ռեմարկներում նույնպես ստորոգյալը ենթակայից առաջ է դրվում,* որով դրամատուրգը հրահանգավորում է դերասանների խաղը, ինչպես նաև հանճնարարություններ է տալիս ռեժիսորին ու բեմի աշխատողներին՝ Դռների մեջ *երևում է Օսեփը* ... Նրան *ընդառաջ է գալիս Սալոմեն:* Բավականին *կահավորված է Օսեփի տունը.* առաստաղից *կախված է ջահը:* Հանգած մոմերով, պատերի տակ *շարված են աթոռներ ու բազկաթոռներ:* Կուլիսներից *լսվում է* Քալիի *ծայնը:* Բեմում *տիրում է խավար* (Գ.Ս.):

ԲԱՅԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԲԱՅԱԿԱՆ ՍՏՈՐՈԳՅԱԼՆԵՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

§ 87. Թեև *բայական ստորոգյալը շարահյուսական մեկ միավոր է՝ նախադասության մեկ անդամ,* բայց գլխավոր բաղադրյալ ժամանակներով կազմված ստորոգյալները հատուկ նպատակներով, նախադասության որևէ

անդամը շեշտելու անհրաժեշտությամբ, հաճախ տրոհվում են. *օժանդակ բայը* կամ անցնում է դերբայից առաջ, կամ հեռանալով նրանից՝ դրվում է այն անդամից հետո, որը շեշտվում է, որն իր վրա է կրում տրամաբանական շեշտը. ուրեմն՝ *օժանդակ բայն է այն գործող միջոցը, որը տրամաբանական շեշտի*, պատկերավոր ասած, *տանող հրթիռն է:* Օրինակ՝ *«Վաղուց դու ինձ մոռացել ես»* նախադասությունը չեզոք ոճով մի սովորական հաղորդում է եղելության վերաբերյալ, բայց երբ ԵՍ օժանդակ բայը անջատում ենք դերբայից ու դնում որևէ այլ անդամի վրա, փոխվում է ինչպես նախադասության ռիթմը, այնպես էլ՝ ոճն ու իմաստը, և տրամաբանական շեշտն էլ տեղափոխվում է այն բառի՝ անդամի վրա, որից հետո դրվել է ԵՍ օժանդակ բայը: Ահա այդ տարբերակները՝ *Վաղուց ես* դու ինձ *մոռացել* (շեշտվեց ժամանակը), Վաղուց *դու ես ինձ մոռացել* (շեշտվեց ենթական), Վաղուց դու *ինձ ես մոռացել* (շեշտվեց ուղիղ խնդիրը):

§ 88. *Երկրորդական բաղադրյալ ժամանակներով* արտահայտված ստորոգյալների բաղադրիչների շարադասությունը հետևյալ դասավորությունն ունի. նախ դրվում է *դերբայը*, նրան հաջորդում է *խոնարհված օժանդակ բայը*, ապա *լինել* բայը՝ իր փոփոխված ձևերով՝ (Այդ մասին նա նախապես՝ *իմացած չի եղել:* Ժուկով ժամանակով Հնդկաստանի Բենարես քաղաքում *տիրելիս է լինում* Ուքանա թագավորը ՀԹ):

Անվանական հարադրական բարդություններով արտահայտված ստորոգյալի շարադասությունը նման է վերևում նշվածին, այսպես՝ սկզբում դրվում է *անվանական հարադիրը*, նրան հաջորդում է օժանդակ բայը, ապա՝ դերբայը կամ այլ բառ. օրինակներ՝ Օտարականը մեր *ճիստ ու կացին դեռ չէր հարմարվել* (ՍԳ):

Նույն շարադասությունն ունի նաև *բայական հարադիրներով* արտահայտված ստորոգյալը՝ Համույթի համբավը *դուրս էր եկել* հանրապետության *սահմաններից* (ԳԹ): Ներկայացումների սիրահարը *ներս էր մտել ետնամուտքից* (Սով.արվ.):

§ 89. *Անվանաբայական ստորոգյալի* բաղադրիչները նույնպես շարադասական հետաքրքիր կիրառություններ ունեն: Հայտնի է, որ բայական ստորոգյալները ժխտական դարձնելիս օժանդակ բայն անցնում է դերբայից առաջ (բացի հարակատարից), մինչդեռ անվանաբայական ստորոգյալի հանգույցը չի տեղափոխվում (Նա իմ ընկերն է. Նա իմ ընկերը չէ):

Անվանաբայական ստորոգյալի դեպքում նկատելի է մի շատ կարևոր հանգամանք. եթե հանգույցը հեռանում է ստորոգելիից և դրվում է այլ անդամի վրա, *հենց այդ անդամն էլ դառնում է ստորոգելի, իսկ նախկին ստորոգելին զրկվում է իր նախկին պաշտոնից.* այսպես՝ Այս կարկաչը վճիտ նրա *ծայնն է* անգին» (ՎՂ): Այստեղ *ծայնն է* ստորոգյալը: Եթե *է* հանգույցը տեղափոխում ենք *կարկաչը* ենթակայից հետո, այն է դառնում *անվանաբայական ստորոգյալ*, իսկ *ծայնը* ստորոգելին՝ ենթակա. Այս *կարկաչն է* վճիտ նրա ծայնը անգին:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

§ 90. Միայն ենթակայով ու ստորոգյալով՝ նախադասության գլխավոր անդամներով, կազմված պարզ համառոտ նախադասություններով խոսողը, գրողը ծավալուն մտքեր չեն կարող արտահայտել, չեն կարող իրենց զգացմունքներն ու տրամադրությունները լրիվ հաղորդել լսողին, ընթերցողին: Ահա թե ինչու գլխավոր անդամների հետ նախադասություններում լայնորեն գործածվում են նաև *լրացնող՝ երկրորդական անդամներ*, որոնք տարբեր կողմերից լրացնում են ինչպես *ենթակային* (նաև գոյականով արտահայտված այլ անդամների), այնպես էլ *ստորոգյալին* (նաև անդեմ բայերով արտահայտված այլ անդամների): Այս նկատառումով էլ երկրորդական անդամները բաժանվում են երկու մեծ խմբերի՝ *գոյականական և բայական անդամների լրացումների:*

Նախադասության երկրորդական անդամներն էլ իրենց հերթին ունենում են իրենց լրացումները, որոնք կոչվում են *լրացման լրացումներ:*

Գոյականական անդամի լրացումներն են *որոշիչը, հատկացուցիչը և բացահայտիչը:* Բայական անդամի լրացումներն են *խնդիրներն ու պարագաները:* Այս անվանումներով են կոչվում նաև լրացման լրացումները:

Հատուկ նշենք, որ *խնդիր և պարագա* լրացումներ կարող են ունենալ ոչ միայն բայով արտահայտված անդամները, այլև որոշ *ածականներ ու բայանուն գոյականներ,* որոնք նախադասության մեջ հանդես են գալիս տարբեր պաշտոններով:

ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

§ 91. Գոյականական անդամի լրացումները պարզաբանում են գոյականով ու գոյականաբար գործածված այլ խոսքի մասերով հանդես եկող ոչ միայն ենթակաների, այլև այլ անդամների (վերադիրներ, խնդիրներ ու պարագաներ) *որակական ու քանակական հատկանիշները,* նրանց պատկանելությունը, սերումը, ծագումը, ինչպես նաև ավելի ստույգ են դարձնում, բացահայտում են այդ անդամների *էությունը, ով կամ ինչ լինելը:* Ըստ այդմ էլ՝ գոյականական անդամների լրացումները, ըստ իրենց լրացական հատկանիշների, լինում են 3 տեսակ՝ *որոշիչ, հատկացուցիչ և բացահայտիչ:*

ՈՐՈՇԻՉ

§ 92. Որոշիչը նախադասության՝ գոյականով կամ գոյականաբար առնված այլ խոսքի մասով արտահայտված որևէ անդամի *որակական, քանակական, վիճակային* կամ նման հատկանիշներ արտահայտող լրացումն է: Նախադասության այն անդամը, որն ունի *որոշիչ,* կոչվում է *որոշյալ:* Որոշիչը պատասխանում է *ինչպիսի՞, ո՞ր, որքա՞ն, ինչքա՞ն, որերո՞րդ, քանի՞երորդ,* նաև՝ *ինչի՞ց, ինչո՞վ* հարցերին:

Որոշչի պաշտոնով ամենից առաջ հանդես են գալիս հատկանշային իմաստ արտահայտող բառախմբերը՝ *ածականը, թվականը*, սրանց հարաբերակից *դերանունները* (ցուցականների մեծ մասը, որոշյալ, անորոշ, հարցահարաբերական, ժխտական, *անորոշ դերբայի* սեռական (տրական) հոլովը, *հարակատար և ենթակայական դերբայները*, ինչպես նաև *գոյականները*՝ *իրենց բոլոր հոլովածներով* (յոթ հոլովի համակարգով՝ բացի տրականից ու հայցականից), որոշչի պաշտոնով հանդես են գալիս նաև *բառակապակցությունները*, այդ թվում նաև *դարձվածային միավորները:*

Եթե հատկանշային իմաստ արտահայտող բառախմբերը և գոյականի ուղղական հոլովը որոշյալների հետ կապակցվում են *ուղիղ ձևով*, առանց քերականական փոփոխության, այսինքն՝ *առդրությամբ*, ապա գոյականների թեք հոլովները որոշչի դերում հանդես են գալիս կապակցության *խնդրառական* եղանակով:

§ 93. ԱԾԱԿԱՆԸ ՈՐՊԵՍ ՈՐՈՇԻՉ - Ածականի շարահյուսական պաշտոնը հիմնականում *որոշչի դեր կատարելն է (այն բայերի վրա դրվելիս կատարում է ձևի պարագայի շարահյուսական պաշտոն):*

Որոշիչն արտահայտվում է թե՛ *որակական* և թե՛ *հարաբերական ածականներով: Որակական ածականը* որոշչի պաշտոն է կատարում իր երեք՝ *դրական, բաղդատական և գերադրական* աստիճաններով և ցույց է տալիս առարկաների՝ անմիջապես իրենց հատուկ կամ վերագրովի հատկանիշներ՝ տարբեր կողմերով՝

ա) որակական (լավ, վատ, գեղեցիկ, բարի, չար, սքանչելի, հիանալի, լուսավոր, հին, նոր)... Այ, *սիրուն* աղջիկ, Այ դու *կարմրաթուշ, թխամազ* Անուշ (ՀԹ):

Մեր *հին* սագի *ողբանվագ, լացակումած* լարն եմ սիրում (ԵՉ):

բ) գույնը, համը, հոտը որպես հատկանիշ՝ կարմիր, կանաչ, ոսկեգույն, երփներանգ, համեղ, քաղցր, կծու, դառը, թթու, բուրավետ, հոտավետ...

Ես իմ *անուշ* Հայաստանի *արևահամ բառն* եմ սիրում (ԵՉ):

Մի ուրու անցավ, Սի *գունատ* աղջիկ՝ *ծերմակ* շորերով (ՎՏ):

գ) չափ ու քանակի հատկանիշ (մեծ, փոքր, ծանր, թեթև, երկար, կարճ, խիտ, նոսր, բազմաթիվ, հազարավոր, տասնյակ...)՝ Միայն *փոքրիկ* նորահարս Մարոն ատեց իր մարդուն (ՀԹ): Անցել են ձեր երկրի վրայով *հազարավոր* հողմեր .(Վ.Բրուսով):

դ) ձևը որպես հատկանիշ (ուղիղ, ծուռ, լայն, նեղ, տափակ, եռանկյունի...) *Ջիգզագ* ճանապարհները տանում էին մի *քառակուսի, ցածր* կացարան (ՀՆԺ):

ե) տարիքն ու հասակը որպես հատկանիշ (ահել, ջահել, տարեց, երիտասարդ...)՝ Եկե՛ք *ջահել* սիրահարի սերը ողբանք վաղամեռ (ՀԹ): Է՛յ, դու *ջահել* հպարտ հասակ... Մի *ծերուկ* ձկնորս և իր *պառավ* կին բնակվում էին մեծ ծովի ափին (Պուշկին):

Բաղդատականը աստիճանով արտահայտված որոշիչներ՝ Նրա թուխ դեմքը *ավելի մռայլ* կերպարանք էր ստացել (ԱԽ): Այսօր *ավելի գեղեցիկ*

տեսք ունեք, օրիո՛րդ (ՆԴ):

Գերադրականով՝ Ամենամեծ, ամենաքաղցր գանձն էիր դու, Որ քո ոտքով եկել մտել էիր սիրտը իմ (ԳՔ): Զգացածը *ամենագերագույն* հաճույք էր երիտասարդների համար (ԳԹ):

Հարաբերական ածականներով արտահայտված որոշիչները ոչ թե առարկաների անմիջական հատկանիշներ են ցույց տալիս, այլ տվյալ առարկային վերագրում են մեկ ուրիշ առարկայի ունեցած հատկանիշը, կամ մեկ առարկայի *անվանումը* մյուսի համար *հատկանիշի* դերով է հանդես գալիս: Այս դեպքում հատկանիշի պաշտոն կատարող առարկայի անվանումն ստանում է *ե, յա, այինե, ական, եղեն* և նման ածանցները և ցույց է տալիս որոշյալի ինչից լինելը (քարե, փայտե, ոսկյա, մետաքսյա), ում, ինչին հատուկ լինելը կամ ինչին վերաբերելը (հայրական, պապենական, լեռնային, քաղաքական, քաղաքային, տնային, տնական, դպրոցական, աշակերտական, հրեղեն...):

Նորից երգում, մորմոքում է *աստվածային* Կոմիտասը,
Կախարդում ու մոգում է *աստվածային* Կոմիտասը (ՊՍ):
Մեր *լեռնային* արշալույսի զով շունչը կա քո երգերում,
Անմահական գարուն ես դու, աշուն չկա քո երգերում (ՆՉ):

Աշնանային քամին *ծյան տեղ էր* բացում (ՊՂ): *Կաշվե* բաճկոնով մարդը ետ նայեց (ԱԲ):

Ավելի սովորական է որակական և հարաբերական ածականների՝ որոշչի պաշտոնում միասնաբար հանդես գալը՝ *քաղաքային ընդարձակ ու գեղեցիկ* այգիները աստիճանաբար վերածվում են *քարե, փայտե, երկաթե ու ցեմենտ-բետոնե գեղեցիկ,* հաճախ էլ *անճաշակ* սրճարանների ու *գիշերային լուսավոր* խաղատների (Մամուլ): *Գարնանային* առավոտը խոստանում էր *պայծառ և արևոտ* օր (ԱԲ): *Գիժ լեռնային* մի վտակ խոխոջում էր նրա տակ (ՀԹ):

Որոշիչների դերում հաճախ հանդես են գալիս նույն ածականների կրկնված ձևերը (*Մեծ-մեծ* խոստումներ էր տալիս: *Անուշ-անուշ* խոսքեր էր ասում: *Խելոք-խելոք* առաջարկություններ եղան: *Լավ-լավ* բաներ շատ ասվեցին և այլն):

§ 94. ԹՎԱԿԱՆԸ ՈՐՊԵՍ ՈՐՈՇԻՉ - Թվականով արտահայտված որոշիչները ցույց են տալիս քանակային կամ կարգային *հատկանիշ* և արտահայտվում են թվականների բոլոր տեսակներով.

Քանակականով (Հայաստանն ունեցել է *տասներկու* մայրաքաղաք (ԿԲ): *Հազար* շեփոր ինչեն քող այս առավոտ. (ԳՍ): Մոցարտը յոթ տարեկանում գրել է *չորս* սոնետ: *Յոթն հարյուր* սյուների վրա մարմարե սլաքում է աշտարակը երկնասույզ (Ավ.Իս.):

Դասականով (առաջին ջութակ, *իններորդ ալիք, ութերորդ* հրաշալիք, *տասներեքերորդ* շարասյուն և այլն): *Քանակականի և դասականի* համատեղ գործածությամբ (*Երրորդ* կուրսում սովորում է *հարյուր տասներկու* ու-

սանող: *Չորրորդ* հարկում կա *երեք* բնակարան): *Բաշխական և կոտորակային* թվականներով (Ջոկատները բաղկացած են *տասներկուական* զինվորներից: Ուսանողների *երեք չորրորդ* մասը սովորում է վճարովի):

§ 95. ԴԵՐԱՆՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՐՈՇԻՉ - Ասվեց, որ դերանուններից որոշչի պաշտոնով հանդես են գալիս միայն *հատկանշային իմաստ ունեցողները*, այսինքն՝ ածականներին ու թվականներին փոխարինող դերանունները: Անձնական և փոխադարձ դերանունները այս պաշտոնում գործածական չեն:

Ցուցական դերանունները որոշչի պաշտոն կատարելիս առարկաների չտարբերակված հատկանիշներ են նշում տարածական հարաբերությամբ՝ խոսողին ու խոսակցին մոտիկ կամ հեռու գտնվող առարկաների նկատմամբ՝ *Այս* իմաստուն, բայց համեստ ժողովուրդը աշխարհին տալիս է *այնպիսի* դեմքեր, ինչպիսիք տալիս են մեծ ժողովուրդները (ԿԲ): *Այս* վերամբարձ աշխարհին, *այս* փոխադարձ աշխարհին ի՞նչ ասեմ, որ հասկանա (ՀՍ): Շնորհակալություն Երևանին այն բանի համար, որ նա 2780 տարեկան է (ԳԹ):

§ 96. *Որոշյալ և անորոշ* դերանունները ցուցականներից հետո նույնպես մեծ կիրառություն ունեն այս պաշտոնում: Ի տարբերություն նախորդների, սրանք ցույց են տալիս անձերի ու առարկաների ամբողջական քանակական հատկանիշ՝ առանց որոշակի քանակ, երբեմն էլ տարտամ հատկանիշներ նշելով՝ *Ամեն* վայրկյան սիրով տրտում, ասում ես ես՝ Սնա՛ս բարով (ՎՏ): *Ամենայն* տեղ մահը մի է (ՄՆ): *Ուրիշ* երգեր են հնչում իմ հոգում (ՎՏ): Միևնույն երկրում կան ժողովուրդներ, որ ունեն *մի քանի* լեզուներ (Հր.Աճ.):

Հարցահարաբերական դերանուններն ավելի սակավ կիրառություն ունեն որոշչի պաշտոնում, դրանք հարցում են արտահայտում անձերի կամ առարկաների որակային ու քանակային հատկանիշների մասին՝ Աշո՛ւն, քեզ *ի՞նչ* քնքշությամբ, *ի՞նչ* խոսքերով երգեմ (ՎՏ): *Ո՞ր* երկիրն ես սիրում: *Քանի՞* գիրք ես կարդացել:

Ինչքան որ հուր կա իմ սրտում - բոլորը քեզ.
Ինչքան կրակ ու վառ խնդում - բոլորը քեզ (ԵՉ):

Ժխտական դերանուններից որոշչի շարահյուսական կիրառություն ունի միմիայն *ոչ մի* դերանունը՝ *Ոչ մի* երկիր այսքան մայրաքաղաքներ չի ունեցել: *Ոչ մի* տեղ մարդ իրեն այնպես ազատ չի զգում, ինչպես իր տանը:

§ 97. ԴԵՐԲԱՅԸ ՈՐՊԵՍ ՈՐՈՇԻՉ - Որոշչի շարահյուսական պաշտոնում կիրառվում են միայն *անկախ դերբայները (բացի համակատարից), անորոշ, հարակատար, ենթակայական, ապառնի 2-րդ:* Դրվելով գոյականների վրա՝ դրանք գործողության կերպաժամանակային հատկանիշը համատեղում են առարկաների հատկանիշների հետ:

Անորոշ դերբայի միայն *բուն սեռականն* է որոշչի պաշտոն կատարում (*խմելու* ջուր, *գրելու* թուղթ, *կարդալու* գիրք, *երգելու* տրամադրություն), իսկ երբ նույն դերբայի նույն հոլովածևը դրվում է ոչ թե առարկայի, այլ բայերի վրա, արդեն նպատակի պարագայի պաշտոն է կատարում՝ Երեխան գնաց *ջուր խմելու*: Նստեցի *շարադրությունը գրելու:* Գնացի գրադարան՝ *գիրք կարդալու սրանք սեռական-տրական հոլովով են):*

Որոշչային օրինակներ.

Օ՜, գարնա՛ն ամիս, *ապրելո՛ւ* ապրիլ:
Դու որ բերում ես ծաղիկներ ու կյանք,
Ինչո՞ւ դու դարձար մահվան տարելից (ՍԿ):

Նորակառույց դպրոցին կից բարեկարգվել էին նաև երեխաների *խաղալու* հրապարակն ու սպորտդահլիճը (Կումայրի):

Հարակատար դերբայով արտահայտված որոշիչը ցույց է տալիս առարկայի *գործողությունից առաջացած հատկանիշ*, թե խոսելու պահին ինչ վիճակում է որոշյալը (*հոգնած* մարդ, *ծաղկած* ծառ):

Իմ *կարոտած* սրտի համար ոչ մի ուրիշ հեքիաթ չկա... Մեր հին սազի ողբանվագ, *լացակումած* լարն եմ սիրում (ԵՉ): *Դադրած, բեզարած,* յա՛ր - ջան... (Ավ.Իս.): ...Խոսուն վկա կոտորածի Ու վճիտ աչք *ցամքած լացի* (ՊՍ):

Ենթակայական դերբայով որոշիչը արտահայտում է առարկայի՝ *ընթացքի մեջ եղող, գործող* հատկանիշ (*երգող* շատրվաններ, *վազող* առու, *հմայող* հայացք):

Տաճարի շուրջ սուրբ-սուրբ վանքեր՝
Հնչող, շնչող, կանչող զանգեր...
Դու հանգրվան, *կանչող* փարոս ... (ՊՍ):

Թեև սակավ կիրառությամբ, որոշչի պաշտոն է կատարում նաև այսպես կոչված *ապառնի երկրորդ,* դերբայը, որը ձևավորվում է *ԻՔ* վերջավորությամբ (*գրելիք, խոսելիք, կառուցվելիք, քանդվելիք):* Ակնհայտ է, որ ժամանակակից հայերենում նման կազմությամբ ապառնի դերբայների ճնշող մեծամասնությունը գոյականացել է՝ *ուտելիք, խմելիք, գալիք, վառելիք, հավատալիք, անելիք* և այլն: Բերենք որոշչային մի երկու օրինակ՝ *Գալիք* դու իմ սեր, իմ հույս, իմ տեր (ԳԹ): *Ուղարկվելիք* գրությունը պետք է հանգամանորեն քննարկվի հանձնաժողովում (Սամուլ): *Կառուցվելիք* Հյուսիսային պողոտան լինելու է և՛ ժամանակակից, և՛ ազգային ոճով:

§ 98. ԳՈՅԱԿԱՆԸ ՈՐՊԵՍ ՈՐՈՇԻՉ - Որոշչի շարահյուսական պաշտոն կատարում է նաև գոյական անունը՝ իր բոլոր հոլովներով, բացի տրականից ու հայցականից: Այս դեպքում մեկ անձի կամ առարկայի հատկանիշը որոշում է մեկ ուրիշ գոյական՝ ուղիղ կամ թեք ձևերով, մի դեպքում որոշելով տվյալ առարկայի՝ որոշյալի *կոչումը, պաշտոնը, զբաղմունքը, ով կամ ինչ լինելը (դերասան* Վահրամ Փափազյան, *նկարիչ* Մարտիրոս Սար-

յան, օպերային *երգչուհի* Գոհար Գասպարյան, *բանվոր* Պողոս, *գյուղացի* Համբո), մի այլ դեպքում՝ *ինչի ծառայելը, ինչի համար օգտագործվելը (թեյի* բաժակ, *դռան* բռնակ, *ճաշի* գդալ, *պատի* պաստառ, *լուսամուտի* ապակի), մի ուրիշ դեպքում՝ ինչից լինելը (*մետաքսից* հագուստ, *քարից* տուն, *կաշվից* կոշիկ), չորրորդ դեպքում ցույց է տալիս առարկայի *ինչպիսին լինելը, ինչով պատրաստված լինելը (խելքով* երեխա, *ճամուսով* կին, *համով* գրույց, *քանով* ապուր, *մսով* կարկանդակ) և այլն: Ըստ այդմ էլ՝ գոյականներով արտահայտված որոշիչները արտահայտվում են գոյականների տարբեր հոլովներով:

Ուղղական հոլովով՝ Հայաստան աշխարհ՝ երկիր դրախտավայր: *Մասիս* սարը *հայ* ժողովրդի խորհրդանիշն է: Անցնելով *Ախուրյան* գետը՝ մտանք *Անի* քաղաքը (Սամուլ): *Զորավար* Անդրանիկի, *երգահան* Կոմիտասի, *բանաստեղծ* Թումանյանի անունները կհիշվեն հավետ (ԳԹ): *Մայր* Արաքսի ափերով քայլամոլոր գնում եմ (ՌՊ):

Սեռական հոլովով դրված գոյական որոշիչները հաճախ շփոթվում են հատ կացուցիչների հետ. դրանք կարելի է տարբերել միայն իմաստային առումներով ու հարցադրումներով, օրինակ՝ «*Լուսամուտի* ապակին կոտրվեց քամուց» նախադասության մեջ *լուսամուտի* բառը հավասարապես և՛ *որոշչի իմաստ ունի, և՛ հատկացուցչի,* եթե հարցադրումը կատարվի *ի՞նչի ապակին,* այն բնականաբար կդիտվի որպես *հատկացուցիչ,* իսկ եթե՝ *ո՞ր ապակին,* ապա կդիտվի *որոշիչ,* ինչպես՝ «Խանութում վաճառվում է *լուսամուտի* ապակի»: Կամ՝ եթե երեխային խնդրես մի բաժակ բերել, նա կհարցնի՝ ո՞ր բաժակը՝ սուրճի՞, ջրի՞ թեյի՞, գինո՞ւ, օղո՞ւ, թե՞ գարեջրի: Այդպես էլ որոշիչներ են հետևյալ ընդգծված բառերը՝ Մեր Օհանը *երեխայի* խելք ունի. ամեն ինչի հավատում է: Ա՛յ տղա, *աղջկա* բնավորություն ունես. տղան այդքան խռովկան չի լինի: Սեղանը ծածկված էր *սեղանի* սփռոցով, վրան դրված էին *կոնյակի, գինու և շամպայնի* բաժակներ, *մրգերի* ափսեներ և *թեյի* գդալներ:

Բացառականով դրվող գոյական որոշիչները *համարժեք են հարաբերական ածականներին (ծղոտից* գլխարկ → *ծղոտե* գլխարկ, *արծաթից* → գդալ → արծաթե գդալ): Բնագրային օրինակ՝ Հեռավոր գյուղից Թիֆլիս եկած տղան հագել էր *մահուդից* հնամաշ կապա, *բրդից* գոլավոր գուլպաներ, *եզան կաշվից* տրեխներ, իսկ գլխին դրել էր գառան *մորթուց* պոպոզավոր գլխարկ (ՍԳ):

Գործիական հոլովով դրվող գոյական որոշիչները ցույց են տալիս *անձի կամ իրի մի բանով օժտված լինելը, մի բան կրելը.* օրինակներ՝ - Այն *քաղցր ծայնով* տղան թող մոտենա ինձ, - դիմեց Կոմիտասը վերջին շարքում կանգնած տղաներին (ԳԹ): *Խելքով ու շնորհքով* երեխան դեռ մանկությունից է նկատվում: *Չեռնափայտով* ծերունին ու *ակնոցով* երիտասարդը ինչ-որ մեկին էին փնտրում (ՍԳ):

Գոյականի ներգոյական հոլովով նույնպես որոշիչներ են դրվում, թեև դրանք շատ սակավադեպ են և հիմնականում *տեղի* իմաստ են արտահայտում: Օրինակներ՝

Հիշում եմ մորս ծայրը՝ *սարերում*... Հայաստանի դեսպանը *Ֆրանսիայում* խոսեց հայոց ցեղասպանության մասին: Ֆակուլտետի ներկայացուցիչը *ռեկտորատում* նոր խնդիրներ առաջադրեց:

Հատկապես վերջին օրինակներում որոշիչների դերը պայմանավորված է հնչերանգով և շարադասությամբ. եթե *Ֆրանսիայում և ռեկտորատում* բառերը արտաբերվեն ստորոգյալների հետ, կվերածվեն *տեղի պարագաների*, այսպես՝ Ֆրանսիայում Հայաստանի դեսպանը խոսեց հայոց ցեղասպանության մասին: Ռեկտորատում ֆակուլտետի ներկայացուցիչը նոր խնդիրներ առաջադրեց: Այս դեպքում հարցադրումը կլինի *որտե՞ղ*, իսկ որոշչի դեպքում հարցը կլինի *ո՞ր* դեսպանը (Ֆրանսիայում գտնվող), ֆակուլտետի *ո՞ր* ներկայացուցիչը (ռեկտորատի անդամ): Որոշչի դեպքում ներգոյականով դրված անդամները պետք է արտաբերվեն ոչ թե բայերի, այլ գոյականների հետ:

§ 99. ՄԱԿԲԱՅԱԿԱՆ ՈՐՈՇԻՉ - Մակբայը շատ սակավ դեպքերում է դրվում գոյականների վրա՝ որոշչի պաշտոնով. այն որոշչի դեր է կատարում հատկապես *բայանուն գոյականների* վրա դրվելիս[39]:

Մեքենայի *արագ* ընթացքը կեռմաններում վտանգավոր է:

Քննիչի *կրկին* հարցաքննումը համբերությունից հանեց ամբաստանյալին:

§ 100. Ինչպես նշվեց, մակբայները հիմնականում որոշիչ են դառնում բայանուն գոյականների համար: Հասկանալի է, որ բայանուն գոյականները գործողության իմաստ են արտահայտում և դրա համար էլ ավելի շատ խնդիր և պարագա լրացումներ են ստանում, քան որոշիչ, բայց, այնուամենայնիվ, ստանում են նաև *որոշիչ* լրացումներ: Ահա օրինակները՝ Լուրերի *երեկոյան* թողարկումը հագեցված էր նորություններով: Չիու՝ այդքան *դանդաղ* վազքը զայրացնում էր հեծյալին: Տոմսերի՝ *ամենուրեք* վաճառքը մարդաշատ էր դարձրել դահլիճը: Ուսման վարձերի *անհապաղ* պահանջը զայրացրել էր ուսանողներին:

Այստեղ պետք է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք. հաճախ բայանվան որոշիչ և խնդիր ու պարագա լրացումները շփոթվում են իրար հետ. չշփոթելու համար պետք է նկատի ունենալ երկու բան՝ *հարցադրումը և շարադասությունը:*

1. Ելնելով *բայանուն գոյականի* իմաստից՝ պետք է հարցադրում կատարել. եթե լրացման համար տրվում են *ո՞ր, ինչպիսի՞* հարցերը, ուրեմն տվյալ լրացումները որոշիչներ են, ինչպես՝ «Լուրերի *երեկոյան* թողարկումը» (*ո՞ր թողարկումը*), «Չիու *դանդաղ* վազքը» (*ինչպիսի՞ վազքը*), «Տոմսերի *ամենուրեք* // արագ // դանդաղ վաճառքը (ինչպիսի՞ վաճառքը): Այս դեպքում հնարավոր չէ այլ հարցադրում կատարելը, ուրեմն՝ բայանուն գո-

[39] Այս մասին հանգամանորեն տե՛ս *Լ.Ս.Մաքսուդյան*, Բայանուն գոյականը ժամանակակից հայերենում, Ե., 1984:

յականների լրացումները *որոշիչներ են:* Մինչդեռ հետևյալ օրինակներում հնարավոր չէ *ո՞ր և ինչպիսի՞* հարցերի առաջադրումը՝ «*հանդիպում այգում*» (որտե՞ղ), «*ելույթ Ազգային ժողովում*» (որտե՞ղ), «*հաղորդում Մոսկվայից*» *(որտեղի՞ց), «թռիչք ինքնաթիռով» (ինչո՞վ):* Ուրեմն, վերջին օրինակներում բայանուն լրացյալների լրացումները որոշիչներ չեն:

2. Բայանուն գոյականների լրացումների որոշման միջոց է նաև շարադասությունը: Բերված օրինակներից էլ շատ որոշակի նկատելի է, որ *որոշիչ լրացումները նախադաս են* (լուրերի *երեկոյան* թողարկում, ծիու *դանդաղ* վազք...), մինչդեռ խնդիր և պարագա լրացումները *ետադաս են* (թռիչք *ինքնաթիռով,* հանդիպում *այգում):*

§ 101. ԿԱՊԸ ԻՐ ԽՆԴՐԻ հետ ևս կարող է որոշչի պաշտոն կատարել (*մի թզի չափ հող, Փրփուրի պես լավաշ, լեռան վրայի ծյուն): Սեփականաշնորհման մասին* որոշումը լավ չընդունվեց ժողովրդի կողմից (Իրավունք):

§ 102. ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ արտահայտված որոշիչները ավելի բազմաբնույթ են: Դրանք լինում են ինչպես սովորական բառակապակցություններով, այնպես էլ՝ դերբայական դարձվածներով ու դարձվածային միավորներով. երկուական օրինակ՝ Աշուն էր՝ *տերևաթափով, արևի նվազ ջերմությամբ, դառնաշունչ քամիով* (ԱԲ): *Թուխ ծամերով, մետաքսե բարակ զգեստներով տասներկու* պարուհիները նազանքով ու ներշնչանքով պարում էին «Իլիկներով պարը» (Սով. արվ.): Հրացանը ուսին որսորդը գյուղ ի-ջավ: *Ամբողջ կյանքը իր ժողովրդի երգարվեստին նվիրած* Կոմիտասը աշխարհասփյուռ դարձրեց հայ երգարվեստը (ՄԳ):

Ոսկու գահերը հաստատող մի տուն չկա քո երգերում...
Դարերի գանձը մեզ բերող կամուրջը կա քո երգերում (ՆՋ):

Ամբողջ կյանքում իր խաչը կրող մեր ժողովուրդը դեռ շարունակում է կրել (ՈՒՂԲ): Երեխայի՝ *պատի ծեփ դարձած* գույնը անհանգստացրեց բուժքույրերին (Սամուլ):

ՈՐՈՇՉԻ ԵՎ ՈՐՈՇՅԱԼԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

§ 103. Ժամանակակից հայերենում որոշիչ-որոշյալի համաձայնությունը տեղի է տվել՝ վերացել է. այն հատուկ էր գրաբարին, ինչպես՝ *միով բանիվ, մեծավ մասամբ, մեծ վարդապետ, մեծք վարդապետք, մեծաց վարդապետաց, տանէ մեծէ, եղբարք հարազատք, Մեծի տանն Կիլիկիո* և այլն:

Ժամանակակից հայերենում որոշիչն ու որոշյալը առավելապես *առղրությամբ* են կապակցվում իրար հետ, որոշիչը որոշյալի վրա դրվում է ուղիղ ձևով և նրա հետ չի համաձայնում (խելոք ուսանող, խելոք ուսանողից, խելոք ուսանողներ, խելոք ուսանողներից, խելոք պատասխան, խելոք պատասխաններով և այլն):

Սակայն կան մի շարք դեպքեր, երբ *հոգնակի որոշիչների հետ որոշյալները* նույնպես *հոգնակի թվով են դրվում.*

ա) Երբ ածականով կամ գոյականով արտահայտված որոշիչները կրկնվում են (*մեծ-մեծ* խոստումներ տալ, *մանր-մունր* հարցեր չշոշափել, *սուտ ու մուտ* բաներ չասել, *լայն-լայն* փողոցներ, *շարան-շարան* մարգարիտներ, *թել-թել* նյարդեր...):

Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան՝
Վիճակ հանելու աշխույժ երգերով (ՀԹ):

բ) երբ որոշիչները բազմազանություն են արտահայտում (*անթիվ* մարդիկ, *բազմաթիվ* երեխաներ, *անհամար* առաջադրանքներ *այլազան* հարցեր, *բազում* ծաղիկներ: *Բազմաթիվ* դպրոցականներ *զույզզույզ* ծաղիկներով դիմավորեցին հերոսին):

գ) եթե բազմակի որոշիչները վերաբերում են տարբեր որոշյալների (*կարմիր ու սպիտակ* մեխակներ, *լայն ու ընդարձակ* սենյակներ, *խելոք ու բանիմաց* ուսանողներ, *կարճ ու երկար* խողովակներ):

Լավ ու վատ օրեր տեսած մեր ժողովուրդը արդեն ընտելացել է այս *դառն ու դաժան,* այս *առ ու փախի* տարիներին (Սամուլ):

Քանակական թվականներով արտահայտված որոշիչների հետ որոշյալները դրվում են ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի թվերով:

Եզակի թվով են դրվում՝

ա) *մի (մեկ)* թվականով արտահայտված որոշչի հետ որոշյալը բնականաբար դրվում է եզակի թվով (մի ծաղիկ, մեկ գիրք, մեկ հարց, մի պատասխան):

բ) Մեկից բարձր թվականով որոշիչների հետ գոյական որոշյալները նույնպես եզակի թվով են դրվում, եթե որոշյալները անորոշ առումով են գործածված (*Երկու կապիտան,* հինգ երեխա, քսանհինգ գիրք, հարյուր երեսուներեք ծառ, երկու հազար չորս հարյուր իննսունհինը դիմորդ): (Չի բացառվում նաև հոգնակի թվով դրվելը՝ «Երեք հրացանակիրներ», «Քրիստոսի տասներկու առաքյալներ» նկարը):

գ) Որոշյալները եզակի թվով են դրվում, երբ որոշիչները չափ ու քանակի միավորներ են, որոնց հետ կան այլ գոյականներ (հարյուր գլուխ անասուն, երեք թեյի գդալ շաքարավազ, երկու բաժակ գինի, տասը տուփ լուցկի, երկու դատարկ շիշ):

§ 104. *Որոշիչները հոգնակի թվով են դրվում, եթե՝*

ա) որոշյալները գործածված են հոդերով կամ հոլովված են (Նրա *երեք տղաներն էլ* ծառայել են բանակում: *Քսանհինգ աշակերտներս* այս տարի դարձան ուսանողներ: *Երկու տղաներիցս* մեծն ամուսնացել է, մյուսը ծառայում է: *Հինգ ընկերներով* ծովափ գնացինք:

բ) Երբ որոշչի և որոշյալի արանքում մեկ ուրիշ որոշիչ է ընկնում (*Հինգ փոքրիկ երեխաներ* իրենց սենյակն էին կարգի բերում: Գյումրիում *երեք հարյուրից ավելի կիսավեր տներ* են մնացել: Ֆակուլտետի *երեսուներկու*

առաջադեմ ուսանողներ ռեկտորատի կողմից պատվոգրեր ստացան):

Նման դեպքերում որոշյալը կարող է դրվել նաև *եզակի* թվով *(Երկու* երիտասարդ *մասնագետ* եկան գյուղում աշխատելու (ՍԳ):

Քառսուն կույս *աղջիկ* բերեք արմաղան,
Քառսուն կարճ *կնիկ*, որ երկանք աղան,
Քառսունն էլ երկար, որ ուղտեր բառնան... (ՀՃ):

Դերանվանական որոշիչները, ըստ իրենց բառիմաստային առանձնահատկությունների, պահանջում են և՛ եզակի, և՛ հոգնակի թվերով որոշյալներ.

ա) *այս, այդ, այն* դերանունների հետ որոշյալները հավասարապես դրվում են թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվերով՝ այս, այդ, այն *տղան- (տղաները), ուսանողը - (ուսանողները), գիրքը - (գրքերը), դաշտը- (դաշտերը), մարդը- (մարդիկ)* և այլն:

բ) *այսքան, այդքան, այնքան, այսպիսի, այդպիսի, այնպիսի* դերանունների հետ նույնպես դրվում են և՛ *եզակի, և՛ հոգնակի* որոշյալներ (այսքան *մարդ-(մարդիկ),* այդքան *երեխա- (երեխաներ)* այսպիսի *ուսանող- (ուսանողներ):*

գ) *ամեն, ամեն մի, յուրաքանչյուր, ամբողջ, ողջ, ոչ մի* դերանուն-որոշիչների հետ որոշյալները դրվում են *միայն եզակի թվով (Ամեն ուսանող* պարտավոր է ենթարկվել համալսարանի կարգ ու կանոնին: *Յուրաքանչյուր պատգամավոր* նախ ժողովրդի մասին պիտի մտածի: *Ոչ մի* դպրոցական *երեխա* դպրոցից դուրս չպիտի մնա):

ե) *Բոլոր* դերանվան հետ որոշյալները դրվում են միայն *հոգնակի* թվով *(Բոլոր ուսանողները* գնացին միտինգի: *Բոլոր ծառերը* ջրել եմ: *Բոլոր երեխաները* շրջապատել էին Չմեռ պապիկին ու Չյունանուշիկին):

ՈՐՈՇՉԻ ԵՎ ՈՐՈՇՅԱԼԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

§ 105. Ժամանակակից հայերենում որոշիչն ունի թե՛ *սովորական և թե՛ շրջուն* շարադասություն: Սովորական շարադասությամբ որոշիչը դրվում է որոշյալից առաջ: Որոշչի այդպիսի գործածությունը երբեմն պայմանավորված է նրա խոսքամասային պատկանելությամբ: Այսպես, օրինակ՝ *գոյականի տարբեր հոլովներով* արտահայտված որոշիչները հիմնականում *առաջադաս* գործածություն ունեն, երբեմն էլ դրանց առաջադաս գործածությունը դառնում է *խիստ պարտադիր:* Քննենք դրանք:

Գոյականի ուղիղ և թեք հոլովներով արտահայտված որոշիչները գրեթե բացարձակապես նախադաս են դրվում: Ետադասի ոչ մի գործածության չենք հանդիպել. փորձենք տեղափոխել հետևյալ որոշիչ-որոշյալների տեղերը՝ անհնար է. ստացվում են արհեստական՝ հայերենին անհարազատ կառույցներ.

էլ ինչու ես քարը թողնում քարի վրա, *քար* աշխարհ (Ավ.Իս.):

Քեռի Խեչանը դեսից-դենից խոսելով՝ թեյ խմեց (ՀԹ):

Նահապետը *երեխայի* բնավորություն ուներ (ՀՔ), *Թեյի* բաժակը կոտրվեց: *Բրդից* գուլպաները տաք են պահում: *Թանով* ապուրը համով էր:

Թերևս հնարավոր է տեղափոխել ուղղականով դրված որոշիչ-որոշյալների տեղերը (այն էլ շատ սակավ դեպքերում), բայց այդ դեպքում որոշիչը դադարում է որոշիչ լինելուց և վերածվում է *բացատրություն տվող բառի.* գրավոր խոսքում այն պետք է դնել փակագծերի մեջ: Համեմատիր հետևյալ նախադասությունները՝ «Հայ երգարվեստի մասին հրաշալի դասախոսություն կարդաց *երաժշտագետ* Ռ.Աթայանը» և «Հայ երգարվեստի մասին հրաշալի դասախոսություն կարդաց Ռ.Աթայանը (*երաժշտագետ*)*:*

Թվականներով արտահայտված որոշիչները նույնպես նախադաս են գործածվում՝ *հազար* տարով, *հազար* դարով առաջ թե ետ, ինչ կա որ (ՀԹ): *Առաջին* ծիավորը հնագետ էր... (ԱԲ):

Եթե որոշչի դերում միաժամանակ հանդես են գալիս դասական և քանակական թվականներ, նախ՝ դրվում է դասականը, ապա՝ քանակականը՝ երևում էր, որ *առաջին երկու* ծիավորը քաղաքի մարդիկ են (ԱԲ): Քննության կմտնեն նախ *առաջին չորս* ուսանողը, ապա՝ մյուսները:

Դերանուններով ու անկախ դերբայներով արտահայտված որոշիչները նույնպես հիմնականում նախադաս գործածություն ունեն՝ Ախր *ուրիշ* տեղ Հողի մեջ *այսքան* օրինություն չկա (ՀՍ): *Ամբողջ* աշխատանքը կատարեցին *ինչ-որ* վերանորոգման գրասենյակի *բոլոր* ծառայողները (ԵԵ): *Հանգստանալու* ժամանակը լրացավ: *Խմելու* ջուրը պետք է խնայել:

Որոշչի պաշտոն գերազանցապես կատարում են *ածականները,* որոնք սովորական շարադասությամբ նույնպես նախադաս են դրվում՝ *Սպիտակ* շղարշը յուր *թափանցիկ* ծալքերով սքողում էր *վեհափառ* գլխի այդ *սիրուն* զարդը (Րաֆ.):

§ 106. *Հատուկ պետք է ընդգծել,* որ գեղարվեստական գրականության մեջ, հատկապես չափածոյում հանդիպում ենք *որոշիչների ավելի շատ շրջուն, քան սովորական շարադասության* դեպքերի: *Ետադաս որոշիչները բանաստեղծությանը կենդանի, լիրիկական շունչ են տալիս, խոսքը դարձնում ավելի քնարական. շրջունությունը* նաև բանաստեղծությունը հանգավորելու և ռիթմը պահելու, ինչպես նաև միատարր հնչերանգությունը փոխելու, խոսքին վայելչություն ու բարձր ոճ հաղորդելու լավագույն միջոց է:

Ետադաս որոշիչները, եթե մեկ բառով են արտահայտված, սովորաբար չեն տրոհվում որոշյալներից՝

Ձմրուխտ երգեր, երազներ *չքեղ* Գարնան վարդերի հետ եկան, գնացին,

Համբույր *ծաղկաբույր* և սեր *հրաշագեղ* Գարնան հովի հետ եկան, գնացին (Ավ.Իս.):

Եթե ետադաս որոշիչները մեկից ավելի են, անպայման տրոհվում են *բութ* նշանով՝

Մայրս ուներ ձեռներ *բարակ*, Մոմե մատներ՝ *երկար ու նուրբ* (ՎՏ):

Իրիկունն եկավ, տնետուն մտավ,
Վառեց ճրագներ՝ *կարմիր ու պայծառ*...
Գիշերն էլ եկավ ու քնածներուն
Բերեց երազներ՝ *ճխշուն ու զառ-վառ* (Ավ.Իս.):

Հիշում եմ դեմքը քո *ծեր*, Մայր իմ՝ *անուշ ու անգին* (ԵՉ):

Վերջին ծիավորը քթի տակ մռմռում էր մի երգ՝ *մելամաղձոտ ու հուսահատ* (ԱԲ):

Քանի որ ժամանակակից հայերենում *որոշիչը իր որոշյալի հետ չի համաձայնում*, այդ պատճառով էլ հաճախ նույն որոշիչը կարող է վերագրվել ինչպես իրենից առաջ, այնպես էլ իրենից հետո դրվող գոյականին: Այսպես, օրինակ՝

Տունը ծառին հենվել էր կորացած մեջքով
Ու երգում էր ասես Նաիրյան երգ մի հին...
Այդ երգի մեջ *անբառ* տխրություններ կային (ՎԴ):

Այստեղ *անբառ* որոշիչը հավասարապես կարող է վերագրվել ինչպես *երգ*, այնպես էլ՝ *տխրություն* գոյականներին: Եթե *անբառ* որոշիչը վերաբերում է *տխրությունը* որոշյալին, ապա այն «*այդ երգի մեջ*» *կապակցությունից* պետք է տրոհվի հնչերանգով: Իսկ եթե *անբառ* որոշիչը վերաբերում է *երգ* գոյականին, ապա *մեջ* բառից պետք է անջատվի բութով՝ Այդ երգի մեջ՝ *անբառ* տխրություններ կային:

Բառակապակցություններով արտահայտված որոշիչները նույնպես կարող են որոշյալի նկատմամբ և՛ նախադաս, և՛ վերջադաս դիրք ունենալ: Սիա *վերջադասի* մի քանի օրինակներ՝ Նա խանդավառ մի պատանի էր՝ *ուրախության ցոլքն աչքերում:* Դրսում կանգնած են ճամբարի պետը, կոմենդանտը, գլխավոր բժիշկը՝ *սև ակնոցներով ու սպիտակ խալաթով* (ԳՄ):

Ինչպես երևում է բերված օրինակներից, ետադաս բառակապակցություններով, այդ թվում նաև դերբայական դարձվածներով արտահայտված որոշիչները տրոհվում են բութով. միջադասի դեպքում դրանք տրոհվում են ստորակետով՝ Կանաչազարդ դաշտավայրը, *ցողված վաղորդյան մարգարիտներով*, վառվում էր ծիածանի ամենանուրբ գույներով (Րաֆ.):

Նախադասի դեպքերում չեն տրոհվում՝ *Իմ տեսչությանը հանձնված* բերդի դռները բաց են քո առջև (Րաֆ.):

Կարճ տաբատով ու սև ակնոցավոր օտարականը նկարահանում էր տեսարանը:

Եթե դերբայական դարձվածով արտահայտված որոշչից բացի որոշյալն ունի նաև այլ որոշիչներ, ապա դրանք շարադասվում են վերջինից հետո՝ *Լեռների բարձր գագաթներից արագորեն գահավիժող գարնանային* ջրերը ամբարվում էին *լեռան ստորոտում կառուցված մի մեծ* ջրամբարում:

Բազմակի որոշիչների դեպքում (եթե դրանք համասեռ են), շարադա-

սությունը իրար նկատմամբ ազատ է, իսկ որոշյալի նկատմամբ՝ նախադաս (*Քաղցր, հյութալի, բուրումնավետ* խաղողից դժվար էր հրաժարվել): Իսկ եթե որոշիչները անհամասեռ են, կամ արտահայտված են որակական ու հարաբերական ածականներով, այս դեպքում արդեն շարադասական որոշակի կարգ գոյություն ունի.

ա) Նախ դրվում է *հարաբերական* ածականը, ապա՝ *որակականը*, քանի որ հարաբերական ածականները ավելի առարկայական են: Նույն ճանապարհով վրանների կողմն էր բարձրանում մի մարդ՝ գոտկում՝ *պողպատե փայլուն* մանգաղը (ԱԲ): *Քարե բարձր* պարիսպը անանցանելի էր:

բ) Եթե որոշյալն ունի ածականներով և թվականներով արտահայտված որոշիչներ, նախ դրվում են *թվականներով*, ապա՝ *ածականներով* արտահայտվածները՝ *Տասնմեկ երիտասարդ* բրազիլիացիներ 2:0 հաշվով հաղթեցին գերմանացի ֆուտբոլիստներին: *Երկրորդ համաշխարհային* պատերազմում զոհվեցին մոտ 48 հազար հայեր (Մամուլ): Իսկ եթե թվական որոշիչն է անմիջապես վերաբերում որոշյալին, այն էլ ավելի մոտ է դրվում նրան:

Եթե նախադասության միևնույն անդամն ունենում է և՛ որոշիչ, և՛ հատկացուցիչ լրացումներ, այդ դեպքում, որպեսզի որոշիչը չվերագրվի հատկացուցչին, դրվում է նրանից հետո, այսպես՝ Դրանք *անծավի նախկին* բնակիչներն էին, իրենց տեղը սիրով թողեցին *կղզու սրբազան* հյուրերին (Րաֆ.): Գիրքը *Սոնայի անբաժան* ընկերն է: Ծիրանը *Հայաստանի արևահամ* պտուղն է:

Իսկ եթե անհրաժեշտ է, որ որոշիչը վերագրվի հատկացուցչին, ապա պետք է դրվի նրանից առաջ, ինչպես՝ Նա լսում էր *հնօրյա ծիերի* դոփյունը (ԱԲ):

Անվերջ գիշերի մռայլ վիհերում
Իմ մենակ սիրտն է ցավագին ճչում (ՎՏ):

ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ

§ 107. *Գոյականով արտահայտված ենթակայի կամ նախադասության այլ անդամի պատկանելությունը, հատկացումը, վերաբերումը, սերումն ու ծագումը ցույց տվող լրացումը կոչվում է հատկացուցիչ:*

Հատկացուցիչը դրվում է *բուն սեռական* հոլովով և պատասխանում է *ո՞ւմ, ինչի՞, ինչերի՞* հարցերին, որոնք տրվում են հատկացյալի հետ (ո՞ւմ գիրքը):

Նախադասության այն անդամը, որն ունի հատկացուցիչ, կոչվում է *հատկացյալ:* Ի տարբերություն արևմտահայերենի, արևելահայերենում հատկացուցիչը որոշիչ հոդ չի ընդունում: Այն ընդունում է միայն ստացական հոդ՝ Ս, Դ:

Հետևյալ նախադասության մեջ կարելի է ցույց տալ հատկացուցչի ի-

մաստային 3 դրսևորումներ. «Մարտիրոս Սարյանի նկարը կախված է պատից»: Այստեղ *նկարը* ենթակայի հատկացուցիչն է *Մարտիրոս Սարյանի* գոյականական անդամը, որը հավասարապես ցույց է տալիս ամենից առաջ *սերում և ծագում* (քանի որ Սարյանը նկարիչ է, առաջին հերթին մարդ մտածում է, որ այդ նկարը Սարյանն է նկարել): Մյուս դեպքում կարող ես մտածել, որ Մ.Սարյանը գնել կամ նվեր է ստացել ինչ-որ նկար և կախել իր տան պատից: Այս դեպքում հատկացուցիչը ցույց է տալիս *պատկանելություն*՝ Նկարը պատկանում է Մ.Սարյանին: Երրորդ դեպքում կարող ես մտածել, որ Մարտիրոս Սարյանի դիմանկարն է կախված պատից, այս դեպքում էլ հատկացուցիչը ցույց է տալիս *վերաբերություն:*

Հատկացուցիչն արտահայտվում է՝

Գոյականով՝ Ամտառապահի որսկան շունը մեկ նայում էր տիրոջը, մեկ՝ Դիլան դայուն (ԱԲ): *Կոմիտասի* երգերը կապրեն այնքան, որքան՝ հայ ժողովուրդը:

Առարկայանիշ դերանուններով՝ Իմ մա՛յր հայրենիք, դու սրտիս մեջ ես (ՀՇ): Ամրակուռ է *մեր* հոգին՝ Դարերի զավակ (ՎՏ): *Ոչ մեկի* կարծիքը հաշվի չառավ:

Նշելի է, որ անձնական դերանունների առաջին և երկրորդ դեմքերի եզակի և հոգնակի թվերով դրված հատկացուցիչները կարող են փոխարինվել ստացական Ս, Դ հոդերով, որոնք դրվում են հատկացյալների վրա. այսպես՝ *իմ* խոսքը - խոսքՍ, մեր պահանջները - պահանջներՍ, քո առաջարկությունը - առաջարկությունԴ, ձեր սրտերը -սրտներԴ: Բերենք բնագրային օրինակներ՝

Վշտից նորից մեռավ հայրս՝ Ասաց՝ որդիՍ- թե կուզես
Հողը թեթև լինի վրաՍ՝ ՏունՍ կիսատ չթողնես (ՀՇ):
Թող աչքիՍ բոցը քո փշերն այրի (ՀՇ):

Պետք է խուսափել *Ս* և *Դ* հոդերը դերանունների հետ գործածվող սխալ ձևերից, ինչպես՝ ես *Իմ* խոսք*Ս* եմ ասում, դու *Քո* խոսք*Դ* ես առաջ տանում:

Հատկացուցիչն արտահայտվում է նաև գոյականաբար գործածվող *ածականներով (Չարի* վերջը եկել է: *Գեղեցիկի* հմայքը գերել է), *թվականով (Հարյուրի* կեսը հիսուն է: *Առաջինի* պատասխանը գերազանց էր), *դերբայներով (Երգողի* ձայնը հեռվից էր գալիս: *Չեկուցողի* փաստերը համոզիչ էին: *Տեսածիս* մի մասը կատարվեց):

ՀԱՏԿԱՑՈՒՑՉԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 108. Ամենից առաջ հատկացուցչի *իմաստային հատկանիշն* այն է, որ արտահայտում է ստացականություն, այսինքն՝ ցույց է տալիս այն անձը կամ առարկան, որն ունի մի բան, մի բանի տեր է, որին պատկանում է մի բան՝ իբրև սեփականություն:

Մ.Աբեղյանը նշում է *սեռականի մի շարք հատկանիշներ,* որոնք այս

կամ այն չափով ու իմաստային հարաբերություններով հատկացուցչային արժեք ունեն.

ա) *իբրև մասի և ամբողջի* հարաբերություն (*ծառի ճյուղ, ծիու գլուխ, տան կտուր).*

բ) *իբրև հատկություն (Աստծու բարություն, բնության գեղեցկություն).*

գ) *իբրև ազգի, ցեղի ամբողջության անդամ (Թորոսենց Վարդանը, խնամոնց Ավոն).*

դ) *իբրև իր ունեցածը (դարբնի աշակերտը, տիրոջ ծառան):*

Բացի ստացականության այս դեպքերից, բերվում են նաև հատկացուցչի իմաստային հարաբերությունների հետևյալ դեպքերը՝

1. *Ծագման, սերման* հարաբերություն (*Կարոյի տղան, ծառի ստվերը, Մուրացանի երկերը).*

2. *Առարկան, որից առանձնացվում, վերցվում է մի մասը (այգու կեսը, ուսանողների մի մասը, հացի կտորը).*

3. *Առարկան, որի համար հատկացված է մի բան՝ հատկացման սեռական (հացահատիկի պահեստ, նիստերի դահլիճ, երթևեկության կանոններ).*

4. *Այն տեղը և ժամանակը, որի մեջ կամ սահմաններում կա մի այլ առարկա (այգու ծառերը, բաժակի հյութը, ամառվա շոգը, ծմեռվա ցուրտը, շաբաթվա վերջը).*

5. *Պատճառի և հետևանքի իմաստային հարաբերություն (վշտի թախիծ, ուրախության լաց, տխրության մորմոք).*

6. *Որպես գործողության կատարող* (այս դեպքում հանդես է գալիս բայանուն գոյականների հետ (*թշնամու արշավանք, ծովի ալեկոծում, արևի ծագում, ոչխարի մայուն).*

7. *Անվանման սեռական (Կոմիտասի փողոց, Շիրակի մարզ, Սևանա լիճ, Վանա ծով):*

ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ ԵՎ ՀԱՏԿԱՑՅԱԼԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

§ 109. Հատկացուցիչ-հատկացյալի կապակցության վերաբերյալ կա 2 տեսակետ. առաջին՝ առդրություն (տե՛ս Ժ.Հ.Լ. 3-րդ հատոր, էջ 407) և երկրորդ՝ խնդրառություն (տե՛ս Մ.Աբեղյան, Հ.Լ.Տ., Ռ.Իշխանյան,Արդի հայերենի շարահյուսություն, 1986, էջ 159, Մ.Ասատրյան, Ժ.Հ.Լ. (Շարահյուսություն, Ե., 1987, էջ 208):

Նախադասության այս անդամների կապակցության եղանակը պետք է միայն խնդրառությունը համարել, որովհետև հատկանիշ արտահայտող գոյականական անդամը՝ հատկացուցիչը, արտահայտվում է հոլովական ձևով. այն միշտ դրվում է սեռական հոլովով, որը պայմանավորված է գերադաս բառի հատկանիշի իմաստով. այն է՝ հիմնականում *ստացականություն:*

Հատկացուցիչը հատկացյալի հետ սովորաբար դրվում է անփոփոխ ձևով՝ չհամաձայնելով ո՛չ հոլովով և ո՛չ էլ թվով, առանձին դեպքերում

դրանց միջև գոյություն ունի *թվային համաձայնություն*. այսպես՝

1. Հատկացյալը դրվում է *եզակի թվով*՝

ա) եթե հատկացուցիչը եզակի թվով է (երեխայի խաղալիքը, գրքի թերթը, սեղանի ոտքը),

բ) եթե միևնույն հատկացյալը պատկանում է մի քանի հատկացուցիչների (կամ բազմակի հատկացուցիչների), օրինակ՝ Երեխաների գնդակը ջուրն ընկավ: Հասմիկի ու Անահիտի ալբոմը դասարանում մնաց: Ծառերի խշշոցը կտրվեց:

գ) Երբ հատկացյալն արտահայտված է *ուրյուն* ածանցով (Մարդկանց երթևեկությունը դադարեց: Ուսանողների առաջադիմությունը բարձր է):

դ) Բազմակի հատկացուցիչների հատկացյալը եզակի թվով է դրվում նաև, եթե հատկացուցիչները միացած են *կամ* տրոհական շաղկապով (Ժողովում կլսվի տնօրենի կամ տեղակալի զեկուցումը: Ինձ տուր Աշոտի կամ Արամի ժամացույցը):

2. Հատկացյալը դրվում է *հոգնակի թվով*՝ եթե

ա) նույն հատկացուցչին մի քանի հատկացյալներ են պատկանում (Երեխայի խաղալիքները կոտրվեցին: Արմենի գնահատականները բարձր են: Գրքի պատմվածքները հետաքրքրությամբ են կարդացվում):

բ) եթե հատկացյալը պատկանում է բազմակի հատկացուցիչների (Պատգամավորների առաջարկները չընդունվեցին Աժ-ի կողմից: Ուսանողների պահանջները բավարարվեցին):

գ) եթե և՛ հատկացուցիչներն են բազմակի կամ հավաքական, և՛ հատկացյալները (Աստղերի ցոլքերը լուսավորել էին ծառերի գագաթները):

Հատկացուցիչ-հատկացյալի կապակցության հարցում պետք է ելնել նախադասության բովանդակությունից, այնպես որ նույն կառույցում երբեմն հնարավոր են ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի կիրառություններ. օրինակ՝ Ապրանքների արժեքը գնահատվում է ըստ որակի և Ապրանքների արժեքները գնահատվում են ըստ որակի:

ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ ԵՎ ՀԱՏԿԱՑՅԱԼԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

§ 110. Ժամանակակից հայերենում հատկացուցիչը սովորաբար դրվում է հատկացյալից *առաջ*՝ Մինչև *Նահապետի* տունը կհասնեինք, լուրն արդեն հասել էր նրան (ՀՔ): Նման սովորական շարադասությունը հատուկ է հատկապես գիտական և պաշտոնական ոճերին: Չափածոյում, նրանից ոչ պակաս՝ գեղարվեստական արձակում, հատկացուցիչները կիրառվում են նաև *շրջուն շարադասությամբ*, որը գեղարվեստական խոսքին հաղորդում է հուզականություն ու վայելչագեղություն՝

Ո՞ւր եք թռչում, օրե՛ր *գարնան*, օրեր *սիրո, վարդ ու երգի* (ՀՇ):

Հիշում եմ դեմքը՝ *քո ծեր*... (ԵՉ): Քույր *իմ* նազելի... (Ավ.Իս.):

Շրջուն շարադասության դեպքում շեշտվում է հատկապես *հատկացյալը*, նախադասության տրամաբանական շեշտն ընկնում է նրա վրա. այն

արտաբերվում է ավելի բարձր հնչերանգով՝ խոսողի ուշադրությունը հրավիրելով հենց այդ անդամի վրա՝

Ես քո սրտի մեջ վառում եմ ահա *Հուրն ազատության և իրավունքի,*

Կանգնեցնում եմ բազուկդ ահա, Ինչպես ոխակալ *օձն անապատի* (Ավ.Իս.):

Ետադաս հատկացուցիչը, ինչպես ետադաս որոշիչը, բազմակի լինելու դեպքում սովորաբար տրոհվում է. օրինակ՝ Բարդիները՝ *մեր տան բակի* և *փողոցի* խշշում էին խաղաղ... (ՎԴ):

Պետք է ուշադրություն դարձնել մի կարևոր հանգամանքի վրա. *աստիճանավորված հատկացուցիչների տեղերը խիստ կայուն են.* ինչպես՝ Ազգային ակադեմիայի տնօրենի տեղակալի հայտարարությունը ընդունվեց ի գիտություն: Այստեղ մի հատկացյալը մյուսի համար հատկացուցչի պաշտոն է կատարել:

Եթե բազմանդամ կամ աստիճանավորված հատկացուցչի կազմում կա տեղանուն, այն սովորաբար դրվում է առաջին տեղում՝ Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկանը հուսադրող խոստումներ տվեց:

Եթե նույն հատկացուցչի հատկացյալն ունի նախադաս որոշիչ կամ որոշիչներ, ապա հատկացուցիչը շարադասվում է դրանցից առաջ՝ Զգույշ էր միրհավը... նույնիսկ *որսորդի խոր* շնչառությունից բացում էր թևերը, թռչում գնդակից արագ (ԱԲ): Կապտավուն սարերն այնքան մոտ էին..., որ հեռվից կարելի էր համարել *նրանց մաքուր* լանջերի բոլոր ծորակները (ԱԲ):

Առաջադաս գործածության դեպքում հատկացուցիչը չի տրոհվում: Տրոհումը կատարվում է միայն այն դեպքում, եթե *հատկացուցչի և հատկացյալի արանքում* ընկնում են այլ բառեր կամ բառակապակցություններ: Բերենք մի երկու օրինակ. *Տղայի՝* աղջկա պատուհանին գամված հայացքի մեջ զղջման արտահայտություն կար: Ընդունիր այս բաժակը, և ամեն անգամ, երբ ըմպելու լինես դրանով, հիշիր *իմ՝* դեպի քեզ ունեցած ջերմ զգացմունքը (Րաֆ.):

Ինչպես նկատելի է, նման դեպքում հատկացուցչի վրա *բութ* նշան է դրվում, իսկ հատկացյալից առաջ ստորակետ չի դրվում:

ԲԱՑԱՀԱՅՏԻՉ

§ 111. *Նախադասության՝ գոյականով կամ գոյականական դերանուններով արտահայտված որևէ անդամի ով կամ ինչ լինելը ցույց տվող լրացումը կոչվում է բացահայտիչ:* Բացահայտիչ ունեցող անդամը կոչվում է *բացահայտյալ:* Բացահայտիչը լինում է նախադասության ցանկացած անդամի լրացում և պատասխանում է նույն անդամին տրվող հարցին:

Ի տարբերություն նախադասության մյուս անդամների՝ *բուն* բացահայտիչն ունի քերականական կայուն ձևավորում.

ա) այն ունի *կայուն շարադասություն* (դրվում է միայն *բացահայտյալից հետո),*

բ) շարահյուսական կապակցության եղանակը *համաձայնությունն է* (համաձայնում է դեմքով, թվով, հոլովով, հաճախ նաև հոդառությամբ),

գ) տրոհումը պարտադիր է. ունի հնչերանգային դադար:

Բացահայտիչը լինում է 3 տեսակ՝ *սովորական (բուն), մասնական և մասնավորող՝ պարագայական:*

ՍՈՎՈՐԱԿԱՆ (ԲՈՒՆ) ԲԱՑԱՀԱՅՏԻՉ

§112. Սովորական բացահայտիչը իր լրացյալի՝ բացահայտյալի կրկնությունն է այլ բառ(եր)ով կամ բառակապակցություններով, որն ամբողջությամբ հստակեցնում, պարզաբանում է բացահայտյալի էությունը՝ ով կամ ինչ լինելը՝ Տիգրանը՝ *ընկերս, լավ երգիչ է: Գյումրիի՝* ծննդավայրս, աստիճանաբար բարեկարգվում է: Բազմանդամ բացահայտիչը ավելի ընդարձակ, ավելի որոշակի տեղեկություններ է տալիս իր բացահայտյալի վերաբերյալ՝ Աստղիկը՝ *Տարոն աշխարհի դիցուհին,* հաճախ էր իջնում գետը՝ լոգանք ընդունելու (Րաֆ.): Ծիրանը՝ *Հայաստանի արևահամ պտուղը,* մեծ համբավ ունի աշխարհում (ՀԱ): Դու՝ *հայոց աշխարհի տիրակալդ,* մեծ բեռ ես վերցրել քո վտիտ ուսերին (ՍՉ):

Բացահայտիչը հիմնականում արտահայտվում է *գոյականներով* (տե՛ս բերված օրինակները), մյուս խոսքի մասերը բացահայտչի պաշտոն կարող են կատարել միայն գոյականաբար գործածվելիս: Օրինակներ՝ Քաղաքներում ու գյուղերում մնացածները՝ *մեծերն ու փոքրերը,* տեղահան արվեցին (ՊՉ): Վարորդների սիրած գույնը՝ *կանաչը,* «բարի երթ» է խորհրդանշում: Քննություն հանձնողները՝ *երկուսն էլ* դրական գնահատական ստացան: Նրանք՝ *երգողներն ու պարողները,* մրցանակներ ստացան: Սրանը՝ *ամենակարդացածը,* թյուրիմացաբար «բավարար» ստացավ:

Բացահայտյալը նույնպես կարող է բառակապակցությամբ արտահայտվել՝ *Ամման Կոմիտասի գործը շարունակողի՝* Թաթուլ Ալթունյանի անունը նույնպես թանկ է հայ ժողովրդի համար: *Հայերենի առաջին ուսուցիչը՝* Մեսրոպ Սաշտոցը, նաև տաղանդավոր գիտնական էր:

Բառակապակցություններով կարող են արտահայտվել նաև թե՛ բացահայտիչը և թե՛ բացահայտյալը՝ *Իմ առաջին դասարանի ուսուցչուհիս՝ մազերին արդեն ծյուն իջած ընկեր Սաթիկը, մեզ միշտ մայրենի լեզվի գովքն էր անում:*

Որոշ լեզվաբաններ բացահայտիչը ընդհանրապես լրացում չեն համարում, այլ նախադասության նույն անդամի կրկնությունը[40]: Դա սխալ տեսակետ է, որովհետև, ինչպես տեսանք, բացահայտիչը ավելի է կոնկրետացնում ու որոշակի դարձնում նախադասության որևէ անդամը, մանավանդ եթե այն արտահայտված է դերանվամբ, օրինակ Նա՝ *մեր Վարդանի ավագ*

---

[40] Տե՛ս Բանբեր Երևանի հպմալսարանի, 1979, № 1: *Ա.Խաչատրյանի* հոդվածը և *Պ.Պողոսյան,* Հայոց լեզու, 1976, էջ 221:

որդին է այս օբյեկտի տերը (Մամուլ):

Այժմ, թեկուզ մեկական օրինակներով, ցույց տանք, թե բացահայտիչը նախադասության ինչ անդամների (բացահայտյալների) է լրացնում ու բացահայտում նրանց էությունը:

Ենթակայի (Գոհար Գասպարյանը՝ Հայաստանի սոխակը, Կոմիտասի երգերը տարածեց ամբողջ աշխարհում):

Ստորոգելիի (Պատանու նպատակը լավ մարդ դառնալն էր՝ *բարձրագույն կրթություն ստանալը):*

Որոշիչ (Աղջնակը սիրում է *գույնզգույն՝ ծաղկավոր և շերտավոր* հագուստ):

Հատկացուցիչ (Մատենադարանի՝ այդ եզակի թանգարանի 16 հազար ձեռագրերը վկայում են հայ ժողովրդի հնագույն գրչության մասին (ԿԲ):

Բացահայտյալ (Ամրոցում մնացել էին երկու եղբոր *որդիները՝ Սամվելը՝ Վահանի որդին, և Մուշեղը՝ Վասակի որդին):*

Ուղիղ խնդիր (Ո՞վ չի սիրում *Սանկտ Պետերբուրգը՝ այդ բացօթյա թանգարանը):*

Անուղղակի խնդիրներ (Հրաչյա Աճառյանից՝ այդ տաղանդավոր լեզվաբանից, սովորում ենք ոչ միայն լեզվաբանություն...: Ուրախությամբ դիմավորեցինք *Շարլ Ազնավուրին՝ այդ ազնիվ ու նվիրյալ հայորդուն:* Ունկնդիրները գոհ մնացին *զեկուցողից՝ այդ հմուտ ու բանիմաց գիտնականից...):*

Պարագաներ (Վերջապես եղանք *Փարիզում՝ մեր երազած քաղաքում:* Տուն հասանք *կեսգիշերին՝ ժամը 3-ին)*:

§ 113. *Բացահայտիչները* կարող են կազմված լինել նաև *այսինքն, այն է, այս է, ուրեմն, ինչպես, օրինակ, իմա (իմացիր)* մեկնական բառերով. օրինակներ՝ Մի բանի եմ ձգտում. *այն է՝ Մասիսը տեսնել այն կողմից:* - Կատարիր պատգամս. *ուրեմն՝ վերադարձիր հայրենի տուն:* «Առեղծված է մեր սիրտը. *այսինքն՝ մեր զգացմունքների մեծ ու խորունկ աշխարհը»* (Ավ.Իս.): Նպատակս *սա է՝ միակ որդուս կրթության տալ:*

- Ինչպե՞ս են իմ սանիկները. *այսինքն՝ Վահանը, Փանոսը, Արմենակս,* - հարցնում է հոգեբուժարանում պառկած Կոմիտասը իր բժիշկ ընկերոջը: Գյուղի քահանան, *հիմա՝ Տեր-Սարգիսը,* նաև վարժապետ էր:

§ 114. *Բուն (սովորական)* բացահայտչի վերաբերյալ պետք է իմանալ հետևյալ *հիմնական կանոնը.* այն միշտ դրվում է ետադաս, տրոհվում է *բութ նշանով՝* իսկ նախադասության մյուս անդամներից անջատվում է *ստորակետով՝ Տիգրանը՝ ընկերս,* համալսարանն ավարտելուց հետո բանակ գնաց: Հրազդանի կիրճում գտնվող *«Արգնի» առողջարանը՝ նախկինում միութենական նշանակություն ունեցող այդ հրաշալի բուժարանը,* այժմ անուշադրության է մատնված:

Պետք է հիշել մի քանի դեպքեր, երբ բացահայտիչը տրոհվում է *բութով,* բայց նրանից հետո ստորակետ չի դրվում: Այդ դեպքերն են՝

1. Երբ բացահայտիչը դրված է *սեռական հոլովով* և հատկացուցչի դեր է կատարում (*Անդրանիկի՝ ազգային հերոսի* շիրիմը Փարիզից տեղափոխ-

վեց Երևան և ամփոփվեց «Եռաբլուրում»: Անդրանիկի՝ *ընկերոջս* պատասխանը գոհացուցիչ էր):

2. Երբ բացահայտչից հետո որևէ *կապ* է դրվում *(Անդրանիկի՝ մեր ազգային հերոսի մասին* բազմաթիվ գրքեր են գրվել: *Տղային՝ Արմենի հետ գյուղ գնացի):*

3. Երբ բացահայտչից հետո դրվում է *հանգույցը* կամ *օժանդակ բայը* (Բագրատունիների *մայրաքաղաքը՝ Անին* է ունեցել ջրմուղ ու ամրակուռ պարիսպներ):

4. Երբ բացահայտչից հետո դրվում է *էլ* հավելական շաղկապը (*Ընկերս՝ Տիգրանն էլ* իմ տարիքին է):

ՄԱՍՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏԻՉ

§ 115. Ի տարբերություն սովորական բացահայտչի, մասնական բացահայտիչը լիովին չի կրկնում իր բացահայտյալին, այլ դրսևորում է *նրա մի կողմը, մի հատկանիշը* և դրա համար էլ իր լրացյալի հետ կապակցվում է *իբրև, որպես, ինչպես* կապերով: Այսպես, օրինակ՝ «Գեղամը՝ *որպես ընկեր,* իրեն արդարացնում է» (գուցե այլ հատկանիշներով չի արդարացնում՝ սովորելու, հաճախելու մեջ և այլն): Այստեղ բացահայտիչը մասնավորում, ընդգծում է բացահայտյալի մեկ հատկանիշը և ոչ ամբողջությամբ:

Մասնական բացահայտիչն ունի *ազատ* շարադասություն՝ կարող է դրվել բացահայտյալից թե՛ առաջ, թե՛ հետո: Նախադաս և *ետադաս* դրվելիս տրոհվում է բութով և ստորակետով: Ահա բերված օրինակը՝ տարբեր շարադասություններով՝ «Որպես ընկեր՝ Գեղամը իրեն արդարացնում է», «Գեղամը իրեն արդարացնում է՝ որպես ընկեր» և «Գեղամը՝ որպես ընկեր, իրեն արդարացնում է»:

Մասնական բացահայտչի հետ կապված մի կարևոր հարց չպետք է աչքաթող անել. դա հետևյալն է՝ մասնական բացահայտիչը պետք է հոլովվի համաձայնի իր բացահայտյալի հետ, հակառակ դեպքում տրամաբանական սխալ կառաջանա: Քննարկենք հետևյալ նախադասությունները.

«Ես քեզ *որպես լավ ընկերոջ,* խորհուրդ եմ տալիս, չմասնակցել այդ գործարքին» և «Ես քեզ, *որպես լավ ընկեր,* խորհուրդ եմ տալիս չմասնակցել այդ գործարքին»:

Առաջին նախադասության մեջ, քանի որ *լավ ընկերոջ* բառակապակցությունը հոլովված է, հետևաբար այն վերաբերում է *քեզ* դերանվանը (երկուսն էլ տրական-հայցական հոլովով են դրված), մինչդեռ երկրորդ նախադասության մեջ *լավ ընկերը* ուղղական հոլովով է դրված, հետևաբար վերաբերում է *ես* ենթակային, ուրեմն՝ *լավ ընկերը ես եմ:* Նույնն է նաև հետևյալ դեպքում.

1. Ես՝ *որպես մասնագետ,* նրան բարձր եմ գնահատում:

2. Ես՝ *որպես մասնագետի,* նրան բարձր եմ գնահատում:

Առաջին դեպքում *մասնագետը* գնահատողն է՝ *ենթական,* իսկ երկրորդ նախադասության մեջ *մասնագետը* ոչ թե *գնահատողն է,* այլ *գնահատվողը՝*

Երան ուղիղ խնդիրը:

Մասնական բացահայտչի դեպքում, ինչպես սովորականի, *հոլովական և թվային* համաձայնությունը պարտադիր է: Օրինակ՝ Գեղամից՝ *որպես ազնվագույն ընկերոջից*, ես միշտ գոհ եմ եղել: Գեղամով՝ *որպես ազնվագույն ընկերոջով*, հպարտանում են նրա բոլոր ընկերները:

Թվային համաձայնություն. Արմենին ու Աշոտին՝ *որպես լավ աշխատողների*, մեկ ամսով առողջարան ուղարկեցին: *Գյումրու, Վանաձորի ու Սպիտակի վրա՝ որպես աղետի գոտու*, քիչ է ուշադրություն դարձվում (ՀՀ):

§ 116. Մի կարևոր հարցի մասին ևս. *որպես, իբրև, ինչպես* կապերով որոշ կառույցներ չպետք է շփոթել *մասնական բացահայտիչների հետ:* Օրինակ՝ հետևյալ նախադասություններում նման կառույցները ոչ թե մասնական բացահայտիչներ են, այլ *վերադիրներ* կամ *պարագաներ.*

Հասմիկը աշխատանքի ընդունվեց *որպես հաղորդավարուհի:*

Կյանքի առաջին շրջանում Ռաֆֆին հանդես եկավ *իբրև բանաստեղծ:*

Ապրիլի 7-ը հիշատակվեց *որպես մայրության տոն:*

Բերված 3 նախադասություններում էլ ընդգծվածները *վերադիրներ են* և չեն տրոհվում:

Ստորև բերվող օրինակներում ընդգծվածները *հիմունքի պարագաներ են:* Այսպես՝ Ես դիմեցի նրան *իբրև ավագ ընկերոջ:* Այդ տարիներին շատերին մեղադրեցին *իբրև էքստրեմիստների:* Անծանոթը դիմեց նրան *իբրև տեղացի լավ իմացողի:*

Սրանցում առկա է գործողության հիմունքը, հետևաբար *պարագաներ են* և նույնպես չեն տրոհվում:

Նման կառույցների տարբերակման լավագույն միջոց է նաև *փոխակերպումը.* մասնական բացահայտիչը հեշտությամբ կարելի է փոխակերպել սովորական բացահայտչի, ինչպես՝ «Գեղամի, *որպես իմ ավագ ընկերոջ*, խորհուրդը ինձ համար օգտակար եղավ: Այստեղ առկա է մասնական բացահայտիչը, որը հեշտությամբ կարելի է դարձնել սովորական՝ «Գեղամի՝ իմ ավագ ընկերոջ խորհուրդը ինձ համար օգտակար եղավ:

Մինչդեռ՝ «Գեղամը պարգևատրվեց որպես լավ աշխատող» նախադասությունը հնարավոր չէ փոխակերպել, հետևաբար՝ կառույցը *հիմունքի պարագա է*, մանավանդ որ այն կապված է բայ-ստորոգյալի հետ: Այստեղ, ուրեմն, խոսք լինել չի կարող ոչ մասնական բացահայտչի և ոչ էլ ստորոգելիական վերադրի մասին:

ՄԱՍՆԱՎՈՐՈՂ (ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ) ԲԱՑԱՀԱՅՏԻՉ

§ 117. Բացահայտչի այս տեսակը վերաբերում է միայն *տեղի և ժամանակի* պարագաներին. այն ավելի է կոնկրետացնում ու որոշակի դարձնում գործողության կատարման տեղը կամ ժամանակը: Այսպես՝ Ես քեզ կսպասեմ այսօր՝ ժամը 7-ին, Ազատության հրապարակում՝ Թումանյանի արձանի

մոտ: Առանց մասնավորող բացահայտիչների անորոշ կլիներ թե՛ կոնկրետ ժամանակը և թե՛ կոնկրետ տեղը:

Մասնավորող պարագայական բացահայտիչը իր բացահայտյալի հետ սովորաբար չի համաձայնում ոչ թվով և ոչ էլ հոլովով: Օրինակ՝ Զբոսաշրջիկների հետ պայմանավորվեցինք հանդիպել Հանրապետության հրապարակում՝ *շատրվանների մոտ* : Այս տեսակի բացահայտիչների կետադրությունը նույնն է՝ *Բութ և ստորակետ*: Ահա մի երկու բնագրային օրինակ՝ Պառկեցինք գետակի ափին՝ *խոտերի վրա* (ԱԲ): Մի անգամ էլ՝ *շատ տարիներ առաջ*, ճռնչաց այգու դուռը (ԱԲ): Այդ բազմամարդ հանրահավաքը տեղի ունեցավ կեսօրից *հետո՝ ժամը 6-ին*, Մատենադարանի առաջ՝ *աստիճանների վրա* (Սամուլ):

Մասնավորող բացահայտիչը նույնպես կարող է բազմակի լինել. ինչպես՝ Հաբուդը հանգիստ պառկեց հայրենի խրճիթում՝ *խոտի վրա՝ պառավ կնոջ կողքին* (ԱԲ):

ԲԱՑԱՀԱՅՏՉԻ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՅԱԼԻ ԿՊԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

§ 118. Ինչպես տեսանք վերևում, սովորական բացահայտիչ - բացահայտյալի դիմային, թվային և հոլովական համաձայնությունը *լիակատար է:*

Դիմային համաձայնություն. - Նման համաձայնությունը բնականաբար դրսևորվում է բացահայտյալի՝ անձնական դերանուններով արտահայտվելու դեպքում: Այսպես՝ անձնական դերանուններով արտահայտված բացահայտյալների գոյական բացահայտիչը նրա հետ համաձայնում է Ս և Դ հոդերով: Ս-ն դրվում է առաջին դեմքի եզակի և հոգնակի թվերով դրված բացահայտիչների վրա, Դ-ն՝ երկրորդ դեմքի, օրինակ՝ Ես՝ *ուսանողս*, պարտավոր եմ ենթարկվել համալսարանական կարգ ու կանոնին, և Մենք՝ *ուսանողներս*, պարտավոր ենք...: Դու՝ *պարծենկոտդ*, շատ ես մեծամտանում, և Դուք՝ *պարծենկոտներդ*, շատ եք մեծամտանում:

Երրորդ դեմքի բացահայտյալները՝ *Նա, Նրանք, ինքը, իրենք* գոյական բացահայտիչների հետ համաձայնում են Ը և Ն հոդերով՝ Նա՝ *դեկանն է* այդ հայտարարությունն արել: Նրանք՝ *ուսանողները*, կազմակերպեցին այդ միջոցառումը: Բայց այստեղ Ը և Ն հոդերը չեն, որ բառերին 3-րդ դեմքի իմաստ են տվել. բոլոր գոյականներն ու գոյականաբար գործածվող բառերն էլ 3-րդ դեմքի են:

Գոյականներով արտահայտված բացահայտիչ-բացահայտյալները, ինչպես տեսանք նախորդ օրինակներում, նույնպես հոդեր են ստանում՝ Երևանի պետական համալսարանը՝ *մայր բուհը*, ութսուն տարեկան է: Հոդ են ստանում հատկապես հատուկ անուններով արտահայտված բացահայտիչները՝ Տատիկին ուղեկցում էր թոռնիկը՝ *փոքրիկ Արթուրը:* Արտաշատ էին հավաքվել նոր նախարարները՝ *Ուրծա Ներսեհը, Աղվանից Արտենը* (ԴԴ):

Սահմանափակ դեպքերում այդ հոդերը չեն դրվում (ասենք՝ երբ հատկացուցիչ-հատկացյալի արանքում ուրիշ բառեր են ընկնում): Օրինակ՝

Վերջապես երևաց երգչուհին՝ *մի պճնազարդ ու բարձրահասակ տարեց կին, ներողություն խնդրեց ուշացման համար* (ԳԹ):

Թվային համաձայնություն - Որպես կանոն, թվային համաձայնությունը պարտադիր է (դրանք կան բերված օրինակներում), ևս մեկական օրինակ. Աշխարհի ամենամեծ պատկերասրահը՝ *Էրմիտաժը,* 322 դահլիճներ և 3 միլիոնից ավել ցուցանմուշներ ունի: Քեֆ էին անում և ուրախանում մեր հսկա պապերն ու մեր հայրերը՝ *գյուղի տերերը* (ՀԹ):

Կան նաև սակավ անհամաձայնության դեպքեր, որոնք խրախուսելի չեն՝ հիշո՞ւմ ես մեզ՝ *տասը հոգու,* բանտ պիտի ուղարկեիր (Գ.Սևունց): Հավաքվեց մեր ընտանիքը՝ *հայր, մայր, քույր ու եղբայր* (ՊՂ):

Հոլովական համաձայնություն - Սովորական բացահայտիչ-բացահայտյալի հոլովական համաձայնությունը *խիստ կայուն է*՝ Ռուբեն Սևակը իր սիրելի կնոջը՝ *Յանիին,* միշտ նվիրում էր սպիտակ ծաղիկներ՝ *Էդելվայսներ:* Սևակի սիրելի կինը՝ Յանին, մշտապես զմայլվում էր այդ սպիտակ ծաղիկներով՝ *էդելվայսներով* (ՊՁ):

Հոլովական համաձայնություն կա նաև մասնական և պարագայական բացահայտիչ-բացահայտյալի կապակցությունում, սակայն սրանցում կան նաև հոլովական անհամաձայնության դեպքեր՝ Հանդիպեցինք այգում՝ *չինարի ծառի տակ:* Ես քեզ երկար եմ սպասել՝ *դեռ ժամը հինգից:* (Շատ օրինակներ բերված են նաև վերևում):

ԲԱՑԱՀԱՅՏՉԻ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՅԱԼԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

§ 119. Ի տարբերություն որոշիչ և հատկացուցիչ լրացումների, բացահայտիչը բացահայտյալից միշտ *հետո է դրվում* (սովորական և պարագայական բացահայտիչները ուրիշ դիրք չունեն), սրանց հակառակ *ազատ է մասնական* բացահայտիչի տեղը. այն դրվում է և՛ *նախադաս, և՛ետադաս:*

Սովորական բացահայտիչ-բացահայտյալի տեղերը փոխելիս փոխվում են նաև նրանց պաշտոնները: Այսպես՝ Թող երիցս փառաբանվի հայկական հողը՝ *տաղանդների օրրանը, օրրանը մեծ գործերի* (Ռոբուել Քենտ): Հեռավոր հյուսիսից՝ *էստոնիայից,* Երևան են ժամանել մեր սիրելի բարեկամները (ԵԵ): Բոլորս սիրում ենք Երևանը՝ *մեր մայրաքաղաքը:* Ինչ խոսք, շատ հեշտությամբ կարելի է անդամների տեղափոխություն կատարել, և դա ոչ մի բանով անհարազատ չի լինի մեր լեզվին, պարզապես կփոխվեն նրանց պաշտոնները. *տաղանդների օրրանը* բացահայտիչը կդառնա *ենթակա, էստոնիայից*-ը՝ տեղի պարագա, *մեր մայրաքաղաքը*՝ ուղիղ խնդիր: Ճիշտ է, դրանք որպես բացահայտիչներ էլ նույն պաշտոններն էին կատարում, քանի որ, ինչպես նշել է Աբեղյանը, բացահայտիչը բացահայտյալի *կրկնությունն է,* բայց խոսքը նախադասության անդամի մասին է. չէ՞ որ ընդունված տեսակետը այն է, որ բացահայտիչ-բացահայտյալը լրացում-լրացյալի հարաբերության մեջ են:

Այս անդամների շրջելիության մասին Մ.Աբեղյանը և նրան հետևող Մ.Ասատրյանը հակառակ կարծիքի են՝ պնդելով, որ բացահայտիչը առաջ բե-

րելիս վերածվում է գոյական որոշչի: Աբեղյանը բերում է հետևյալ օրինակը՝ Անուց՝ *Բագրատունյաց մայրաքաղաքից,* շատ հեռու չէ Երազգավորսը» և փոխելով բացահայտչի ու բացահայտյալի տեղերը, նույն նախադասությունը ձևափոխում է այսպես՝ Բագրատունյաց մայրաքաղաք Անուց Երազգավորսը շատ հեռու չէ և *Բագրատունյաց* մայրաքաղաքը դիտում է որպեն *գոյական որոշիչ: Ճիշտ է, այն* դառնում է գոյական որոշիչ, բայց Աբեղյանը խախտում է անդամների համաձայնությունը, փոխում է հոլովը[41]:

Մ.Ասատրյանը գրում է. «Գոյականների բացահայտիչները կարող են դրվել նաև գոյականներից առաջ և այդ դեպքում նրանք փոխակերպվում են *գոյական որոշիչների»* (ընդգծումը մերն է՝ ԽԲ) և բերում է հետևյալ օրինակները՝ *Երևանը՝ Հայաստանի մայրաքաղաքը,* գեղեցիկ է // *Հայաստանի մայրաքաղաք Երևանը* գեղեցիկ է: Արդեն բավականին հեռացել էինք *Սևանա լճից՝* չքնաղ, կապուտաչյա *գեղեցկուհուց* //Արդեն բավականին հեռացել էինք չքնաղ, կապուտաչյա *գեղեցկուհի Սևանա լճից»:* Ակնհայտ են փոխակերպման փոփոխությունները. առաջին նախադասության մեջ *մայրաքաղաք* բառի որոշիչ հոդն է հանվել, իսկ երկրորդից հանվել է բացառականի *ուց* ձևույթը (*գեղեցկուհուց* -ը դարձել է *գեղեցկուհի),* մինչդեռ շարադասության փոփոխության դեպքում նախադասության ոչ մի անդամը ձևաբանական փոփոխություն չպետք է կրի:

Մեզ մնում է ասել, որ սովորական բացահայտիչ-բացահայտյալների տեղը կայուն է, և նրանց տեղափոխությունից ոչ միայն բացահայտիչը գոյական որոշիչ չի դառնա, այլև հաճախ նման փոփոխություն հնարավոր չէ: Ահա մի օրինակ՝

> ...Ու միշտ հոգնած ժամանակ են մենավոր ծառի տակ
> Նստում տխուր *մի քարի՝ գերեզմանին Մարոյի* (ՀԹ):

Մի՞թե կարելի է ասել՝ «Նստում տխուր գերեզմանին Մարոյի՝ մի քարի»:

Ինչպես ասվել է, կայուն շարադասություն ունեն նաև *պարագայական* բացահայտիչները, իսկ *մասնական* բացահայտիչների շարադասությունը ազատ է:

ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

§ 120. Եթե գոյականական անդամի լրացումները դրվում են նախադասության մեջ գոյականներով արտահայտված ցանկացած անդամների վրա, ապա *բայական անդամի լրացումները դրվում են դիմավոր բայերի, ինչպես նաև բայի անդեմ ձևերի՝ անկախ դերբայների վրա և ցույց են տալիս դրանց արտահայտած գործողությունների, դրության ու եղելության հետ կապված, նրանց առնչվող անձեր, առարկաներ, հանգամանքներ ու բազմազան*

---

[41] *Մ.Աբեղյան,* նշվ. աշխ., էջ 393 և *Մ.Ասատրյան,* նշվ. աշխ. էջ 210:

հատկանիշներ: Ըստ բայածների հետ առնչվելու հանգամանքի էլ բայական լրացումները լինում են՝

1. *Դիմավոր բայերի լրացումներ,*

2. *Դերբայական ձևերի լրացումներ,* որոնց տրվում է *կողմնակի լրացում* անվանումը՝ դրանց թվում նաև՝ *կողմնակի ենթական* և *ստորոգելին,* որոնք կապվում են դերբայի հետ:

Ըստ այն հանգամանքի, թե դիմավոր ու անդեմ բայերը առարկաների* հետ են առնչվում, թե* գործողության հատկանիշների ու հանգամանքների, բայական լրացումները բաժանվում են երկու մեծ խմբերի՝ *խնդիրների և պարագաների:*

Հիշեցման կարգով ասենք, որ *խնդիր ու պարագա* լրացումներ են ստանում ոչ միայն դիմավոր ու անդեմ բայերով արտահայտված անդամները, այլև *ուրիշ խոսքի մասեր ևս:* Օրինակ՝ շատ *ածականներ (էությամբ խաղաղ, գործից անտեղյակ, հոգով կենսախինդ, ընտանիքով երջանիկ* և այլն, *բայանուն գոյականներ (վերադարձ հայրենիք, դիմում ուսանողությանը, փախուստ ճամբարից* և այլն):

Իսկ խնդիրների ու պարագաների սահմանազատման մասին պետք է ասել հետևյալը. դրանք սահմանազատվում են *իմաստաբանական հիմունքով.* այսինքն՝ խնդիրները ցույց են տալիս գործողության հետ կապված *առարկաներ,* իսկ պարագաները՝ *հատկանիշներ ու հանգամանքներ:* Սակայն պետք է նկատի ունենալ, որ խնդիրներն ու պարագաները այնքան էլ անջրպետված չեն իրարից. երբեմն միևնույն լրացումը կարելի է դիտել և՛ *որպես խնդիր, և՛ որպես պարագա:* Օրինակ՝ «Թռչունը նստած է ծառի, *ծյուղին»* նախադասության մեջ *ծառի ծյուղին* (կամ *ծյուղին*) լրացումը կարելի է դիտել և՛ որպես *խնդիր (ինչի՞ն - ծյուղին)* և որպես *պարագա (որտե՞ղ-ծյուղին):* Կամ՝ «Մենք գյուղ գնացինք *մեքենայով»* (ինչո՞վ-*խնդիր* է) և գնացինք ինչպե՞ս- *պարագա է:* Այս մասին հանգամանորեն խոսվելու է «Բուն պարագաներ և պարագայական խնդիրներ» բաժնում (§ 140):

ԽՆԴԻՐՆԵՐ

§121. Խնդիր լրացումները ցույց են տալիս *ենթակայի գործողության հետ կապված կամ գործողությանը մասնակցող առարկաներ* և պայմանավորված են *բայի սեռի թելադրանքով. ներգործական և կրավորական սեռի բայերի* հետ կապված լրացումները կոչվում են *սեռի խնդիրներ,* իսկ *բայիմաստի* հետ կապված լրացումներ՝ *բնության խնդիրներ:*

Խնդիրների գործառությամբ հանդես են գալիս գոյականները, առարկայանիշ դերանունները, գոյականաբար գործածվող այլ խոսքի մասեր (ածականներ, թվականներ, դերբայներ և այլն): *Ներգործական* սեռի բայերի պահանջով դրված խնդիրը Աբեղյանը կոչում է *կրող խնդիր,* իսկ *կրավորա-*

կամ սեռի բայերի պահանջով դրվածները՝ *ներգործող խնդիրներ*[42]:

Եթե սեռի խնդիրները դրվում են բայերի սեռային պահանջով ու թելադրանքով, ապա *բնության խնդիրները բայի սեռի հետ կապ չունեն և պայմանավորված են բայերի բառային իմաստներով:*

Խնդիրներին տրվում են գոյականներին տրվող հարցերը *ո՞ւմ, ի՞նչ (ը), ումի՞ց, ինչի՞ց, ումո՞վ, ինչո՞վ, ո՞ւմ մասին, ինչի՞ մասին* և այլն:

ՍԵՌԻ ԽՆԴԻՐՆԵՐ

§ 122. Ինչպես ասվեց, սեռի խնդիրները պայմանավորված են բայերի սեռի *կարգային-քերականական* իմաստներով: Դրանք երկուսն են՝ *ուղիղ խնդիր*, որը դրվում է ներգործական սեռի բայերի *պահանջով, և ներգործող խնդիր*, որը դրվում է *կրավորական սեռի բայերի* պահանջով: Այս սեռերի բայերով կազմված նախադասությունները կոչվում են ըստ սեռերի՝ *ներգործական և կրավորական* կառույցներ, որոնք փոխադարձաբար պայմանավորված են իրարով և փոխակերպելի են. այսինքն՝ ներգործական կառույցը կարող է փոխակերպվել կրավորականի և հակառակը. ինչպես՝ Երեխան սիրում է ծնողներին → Ծնողները սիրվում են երեխայի կողմից: Քամին բացեց դուռը → Դուռը բացվեց քամուց: Այդպես էլ կրավորական կառույցները հեշտությամբ փոխակերպվում են ներգործականի՝ Դասախոսը սիրվում է ուսանողների կողմից → Ուսանողները սիրում են դասախոսին, նաև՝ Սպիտակը կործանվեց երկրաշարժից →Երկրաշարժը կործանեց Սպիտակը:

Նշելի է նաև, որ ներգործական կառույցի նախադասություններում քերականական *ենթական և ուղիղ խնդիրը* համապատասխանում են տրամաբանական *սուբյեկտին և օբյեկտին:* Մինչդեռ նախադասության փոխակերպման դեպքում՝ կրավորական կառույցում, փոխվում են այս հարաբերությունները. «Քամին կոտրեց ծառը» ներգործական կառույցում *քամին* քերականական *ենթական է, ծառը՝ ուղիղ խնդիր*, այսինքն՝ *քամին տրամաբանական* սուբյեկտն է, ծառը՝ օբյեկտը: Փոխակերպելիս՝ «Ծառը կոտրվեց քամուց» *քամուց* քերականական ներգործող խնդիրը տրամաբանորեն դառնում է սուբյեկտը՝ ենթական, քանի որ *գործողություն կատարողն է՝ ակտիվ անդամը:*

ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ

§ 123. Ուղիղ խնդիրը բայական անդամի այն լրացումն է, որը դրվում է բայի ներգործական սեռի պահանջով, այսինքն՝ հիմնականում իր վրա է կրում ենթակայի կատարած գործողությունը՝

Ոսոխն իր *որսը* խորովել դեռ չգիտեր:
Մենք *աստվածներ* ենք ձուլում
Ու վայելում *գինի* (ՆՉ):

---

[42] Տե՛ս *Մ.Աբեղյան*, նշվ. աշխ., էջ 374 և հաջորդ էջերը:

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ *բառն* եմ սիրում,
Մեր հին սազի ողբանվագ, լացակումած *լարն* եմ սիրում (ԵՉ):

Աշակերտը հարգում է իր *ուսուցչին:* Ուսուցիչը գնահատեց *աշակերտին:*

Հինգ հոլովի համակարգով ուղիղ խնդիրը ձևավորվում է՝ *իրի* դեպքում՝ *ուղղականով, անձի* դեպքում՝ *տրականով,* յոթ հոլովի համակարգով՝ միայն *հայցականով* և պատասխանում է ո՞ւմ (ո՞ւմ սիրել՝ *եղբորը)* և ի՞նչ (ը), (ի՞նչ սիրել՝ *գբոսանքը)* հարցերին:

Ուղիղ խնդիրների ձևավորման հարցում կարևոր նշանակություն ունեն բառերի իմաստային հատկանիշները, այսինքն՝ այն ա՞նձ է, թե՞ իր, շնչավո՞ր է, թե՞ անշունչ, անձի առո՞ւմ է, թե՞ իրի, որոշյա՞լ է, թե՞ անորոշ: Քննենք այդ դեպքերը:

1. *Անձի անունները որոշյալ առմամ* դեպքում ձևավորվում են *տրականածև հայցականով*՝ ԵՎ նրա խորաթափանց հոգին խորապես ճանաչեց *մարդուն:* Ճանաչեց և խորապես ատեց *մարդուն* (Ավ.Իս.):

Անորոշ առմամ դեպքում անձի անվան խնդիրը ձևավորվում է թե տրականածև հայցականով (Նա սիրում է մի գեղեցիկ *աղջկա), և թե ուղղականածև հայցականով՝ Մամիկոնյանը ծնում է* դավաճաններ... Մամիկոնյանը ծնում է և *հերոսներ* (Րաֆ.):

2. Իրի անունները, որոշյալ թե անորոշ առումներով, որպես ուղիղ խնդիրներ ձևավորվում են ուղղականածև հայցականով: Հանեցեք ձեր *դիմակները,* պարոնա՛յք, բավական է *կատակերգությունը* խաղաք (Իրավունք): Սիրում եմ մեր *երկինքը* մուգ, *ջրերը* ջինջ, *լիճը* լուսե (ԵՉ):

3. Կենդանիների անունները ուղիղ խնդիր դառնալիս, հատկապես անորոշ առումով, դրվում են ուղղականածև հայցականով: (Մեր ընտանիքը պահում էր երկու *կով,* վեց *ոչխար):* Մի լավ *շուն* ունեինք՝ անունը Չալանկ: Մի *հավք* զարկի ես մի օր (ՀԹ):

Որոշյալ առումով սրանք մեծ մասամբ դրվում են տրականածև հայցականով՝ Պանինի շները հալածում էին խրտնած *պախրայիմ* (ԱԲ): Մենք սիրում էինք մեր Չալանկ *շանը:*

Երբեմն էլ դրվում են ուղղականածև հայցականով՝

Մի օր սա եկավ՝ թե չորաս Չատին
Ոչխարը թաքուն մեր հանդն է քշել (ՀԹ):

§ 124. *Անձի և իրի առումներով* ուղիղ խնդիրները ձևավորվում են՝

ա) Եթե *իրը* (կենդանին կամ որևէ անշունչ առարկա) անձի անվան փոխարեն է գործածվում, դրվում է *տրականածևով*՝ Տղան փաղաքշում է *շնիկին* և խնամում է *նրան:* Աղջնակը սիրում է *տիկնիկին,* կերակրում է *նրան* ու երգ է ասում նրա համար:

բ) Եթե անձն է գործածվում իրի փոխարեն որպես ուղիղ խնդիր, ապա այն դրվում է ուղղականածև հայցականով (Հիվանդի համար *բժիշկ* կանչեցին: Գևորգը մի լավ *տղա* որդեգրեց: Հրամանատարը մի քանի *սպաներ* հրավիրեց՝ իր զորամասում աշխատելու:

Ով *Կոմիտաս* չի սիրում և *Սևակ ու Շիրազ* չի կարդում, էլ ի՞նչ հայ է (ԳԹ):

§ 125. *Ուղիղ խնդրի իմաստային առումներ* - Ներգործական սեռի բայերի տարբեր բառային իմաստներով պայմանավորված՝ ուղիղ խնդիրները կարող են ցույց տալ գործողության և խնդիրների միջև տեղի ունեցող բազմազան հարաբերություններ.

ա) Ենթակայի գործողության ազդեցությունից փոխվում է առարկայի տեսքը, ձևը, վիճակը, դրությունը՝ Գյուղացին վարում է *հողը*: Երեխան պատռեց *տետրը*: Թշնամին քանդեց *կամուրջը*, այրեց *գյուղը*:

բ) Ենթակայի գործողության հետևանքով մի բան է ստեղծվում, առաջանում՝ որպես գործողության արդյունք՝ Երեխան *շարադրություն* գրեց: Շինարարները *շենք* կառուցեցին: Հյուրերի համար Սոնան համեղ *տորթ* էր պատրաստել:

Ջանացել ենք մենք ամենքի համար,
Շինել ենք *կամուրջ*, կապել ենք *կամար* (ՊՍ):

գ) Ուղիղ խնդիրը կարող է լինել նաև մի ածե կամ առարկա, որն առընչվում է ենթակայի գործողության հետ, բայց դրանից չի ներգործվում, փոփոխության չի ենթարկվում և ոչ էլ այդ գործողության արդյունք է: Ահա նման մի քանի օրինակ.

Ու մարդիկ *ինձ* տեսնելով, Իրենց հոգնած աչքերում
Տեսան ուրիշ մի *աշխարհ, Գարուն* տեսան նորաբույր (ՀՇ):

Ծեր քահանան ոչ մի *աղոթք* չէր հիշում (ՎՏ): Մոռացավ *ընկեր, աղաչ ու աշխարհ* (ՀԹ):

Սիրում եմ *քեզ*, հայոց լեզու, մայրիկիս պես անուշ ես դու (ՀՇ):

§ 126. *Մասնական ուղիղ խնդիր* - Ներգործական սեռի բայերը երբեմն էլ ցույց են տալիս առարկա, որի հետ ենթակայի գործողությունը *մասամբ* է առնչվում՝ «Յարս էլ խմե՞ց էդ *ջրից*» (ՀԹ): Ազատ ժամերին միշտ ընթերցում եմ Պ.Սևակի *ստեղծագործություններից*: Հյուրերը ճաշակեցին մեր այգու *բարիքներից*:

Նման խնդիրները դրվում են *բացառական հոլովով* և կոչվում են *մասնական ուղիղ խնդիրներ*: Այդպիսի խնդիրներ են առնում *ուտել, խմել, ճաշակել, ծախել, տալ, տանել, կատարել, կարդալ, թարգմանել, հաղորդել, լսել, նվագել* և նման բայեր:

Այս դեպքում մասնական ուղիղ խնդիրը չպետք է շփոթել *մասնական ենթակայի* հետ. տարբերակման լավագույն միջոցը *Վ* ածանցն է: Բերված բոլոր օրինակներում բայերի հետ առնչվողները ուղիղ խնդիրներ են, որովհետև բայերի հետ կա նաև գործողություն կատարողը՝ ենթական (կամ կարող է այն զեղչված լինել), մինչդեռ եթե նշված բայերում առկա է *Վ* ածան-

ցը, ուրեմն այդպիսի կառույցներում առկա է *ենթակա+ստորոգյալ* հարաբերությունը: Բերենք մի երկու օրինակ՝ Հ.Թումանյանը թարգմանել է նաև Պուշկինի *ստեղծագործություններից:* Մի ժամանակ միշտ հաղորդում էին Կոմիտասի *ստեղծագործություններից.* «Արարատ» կինոնկարում ցուցադրում էին եղեռնի *տեսարաններից:* Ընդգծվածները մասնական ուղիղ խնդիր են, իսկ Մի ժամանակ միշտ հաղորդվում էին Կոմիտասի *ստեղծագործություններից* և Արարատ կինոնկարում *ցուցադրվում* էին եղեռնի *տեսարաններից.* այստեղ արդեն ընդգծվածները *մասնական ենթականեր* են՝ դրված բացառական հոլովով:

Ուղիղ խնդիր լրացում են առնում նաև *ՅՆ* պատճառական ածանց ունեցող բոլոր բայերը՝

Նստեցնում է *քեզ* մի երկու բաժակ
Տաք ջուր խմեցնում, կամ *մի քաս օղի* ... (ՀՃ):

Ինձ շատ մի լացացնի՝ ես շատ եմ լացել (ՀՃ):

Ծանոթություն - Քերականական որոշ աշխատություններում խոսվում է նաև *ներքին ուղիղ խնդրի* մասին (Կ.Առաքելյան, Ռ.Իշխանյան): Սա այն խնդիրն է, որն ունի *նույն բառարմատը,* ինչ որ բայ-ստորոգյալն է՝ Հառաչանքով սրտի խորքից *խոսք էր խոսում* Աստծու հետ (ՀՃ): Ռամիկը պետք է իր *կռիվը կռվի* (ԴԴ): *Երգ է երգում* սայլապանը (ԱԲ):

Կան բայեր, որոնք մի իմաստով չեզոք են, մյուսով՝ ներգործական: Այդպիսի բայերից են՝ *հոգալ* (ծմեռվա մասին // ապրուստի մասին - չեզոք), բայց *հոգալ հոգսեր // դարդ ու ցավը* - ներգործական: *Ապրելը* ընդհանրապես *չեզոք է* (ապրել քաղաքում, գյուղում), բայց *ներգործական է* (*միշտ* ապրել, *ցավ* ապրել): *Աշխատել* բայը նույնպես կրկնասեռ է. չեզոք իմաստով՝ աշխատել դպրոցում (տանը) և աշխատել *վաստակելու* իմաստով՝ դառնում է ներգործական՝ (հաց աշխատել, *փող* աշխատել): Այդպես էլ *նայել* բայը մի դեպքում *չեզոք է*՝ նայել ծառին (քաղաքին), մյուս դեպքում՝ *ներգործական*՝ նայել *կինոնկարը (գիրք, աշխատանքը)* և այլն:

Սեռային այսպիսի անցումներից այնքան էլ հեշտ չէ *գլուխ հանել.* Օրինակ՝ *նայել* բայի խնդիրը եթե *անձ է* (նայել երեխային, նայել ընկերոջը, նայել Տիգրանին), անմիջապես դժվար է որոշել *երեխային, ընկերոջը, Տիգրանին* լրացումները ուղիղ խնդիրնե՞ր են, թե՞ անուղղակի, իսկ եթե անձերը փոխարինենք իրերով (նայել ծառին, ինքնաթիռին, շենքին) դրանք կստանան *ինչի՞ց* հարցը, հետևաբար անուղղակի խնդիրներ են, իսկ բայը այս դեպքում՝ չեզոք: Թեև որոշ դեպքերում այն ստանում է նաև *ուղիղ խնդիր* (նայել *նկարը,* մեկի *աշխատանքը):* Ուրեմն՝ *նայել*-ը կրկնասեռ բայ է:

Տեսնել բայը հիմնականում ներգործական է, որովհետև թե՛ անձի և թե՛ իրի դեպքում, *ուղիղ խնդրի* հարց է ստանում՝ տեսնել ի՞նչ (ը)՝ *ծառը, տունը, տեսնել* (ո՞ւմ)՝ *երեխային, ընկերոջը:* Նույն բայը իրի դեպքում երբեք *ինչի՞ց* հարցը չի կարող ստանալ:

ՆԵՐԳՈՐԾՈՂ ԽՆԴԻՐ

§ 127. Ինչպես ասվեց, ներգործող խնդիրը նույնպես պայմանավորված է բայի սեռով և սեռի խնդիր է. այն միշտ դրվում է *կրավորական* սեռի բայերի պահանջով:

Ի տարբերություն ուղիղ խնդրի, որի դեպքում ենթակայի գործողությունն է անցնում առարկայի վրա, այս դեպքում ճիշտ հակառակն է՝ ենթական ինքն է կրում մեկ ուրիշ անձի, առարկայի գործողությունը. ենթական ոչ թե ազդող, ներգործող է, այլ կրող (Քամուց կոտրվեց ծառը: Ուսուցիչը սիրվում է իր աշակերտների կողմից), այս դեպքում քերականական ենթակաները ավելի պասսիվ են, ավելի ակտիվ դերում են *քամուց և աշակերտների կողմից* ներգործող խնդիրները, որոնք տրամաբանական ենթականեր են՝ գործողություն կատարողները:

Ներգործական անուղղակի խնդիրները հիմնականում արտահայտվում են *բացառական* հոլովով (Որպես զորավար՝ Անդրանիկը մշտապես սիրվել է իր ժողովրդից: Տե՛ս, հա՛, չխաբվես նրա սուտ խոսքերից: Տրդատը պատժվեց պարսիկներից):

Անձերի դեպքում մեծ մասամբ հանդես է գալիս նաև *կողմից* կապը (Դպրոցական այգին մշակվում է աշակերտների կողմից: Ուսանողը դիտողություն ստացավ դեկանի կողմից): *Կողմից* կապով կարող են արտահայտվել անձնավորված իրերը (Մեղադրյալը դատապարտվեց *դատարանի կողմից:* Պատգամավորը դիտողություն ստացավ *Ազգային ժողովի կողմից):*

§ 128. Ներգործող խնդիրը դրվում է նաև *գործիական* հոլովով՝ Աղջիկը հմայված էր *երիտասարդով: Սար ու ծոր ծածկվեց ձյունով: Դեպքի վայրը* անմիջապես շրջապատվեց ոստիկաններով:

Կարևոր ենք համարում խոսել մի շփոթեցնող հարցի մասին. ուսանողները (և ոչ միայն նրանք) երբեմն ներգործող անուղղակի խնդիրը շփոթում են *պատճառի պարագայի* հետ: Այսպես, օրինակ՝ «Երեխան լալիս էր *քաղցից»: «*Շնիկը սրթսրթում էր *ցրտից»:* «Արջը մռնչում էր *ցավից»* նախադասություններում, ճիշտ է, ենթակաների գործողությունները կատարվում են այլ առարկաների ներգործությամբ (երեխայի վրա քաղցն է ազդել, շնիկի վրա՝ ցուրտը, արջի վրա՝ ցավը), բայց դրանք քերականական ներգործող խնդիրներ չեն, որովհետև ոչ մեկն էլ բայերի սեռի պահանջով չի դրվել, բոլորն էլ չեզոք սեռի բայեր են և երբեք Վ ածանցով կրավորական չեն դառնում, հետևաբար՝ փոխակերպելի չեն. դրանց ենթակաները ներգործող խնդիրներ չեն դառնա, և ոչ էլ խնդիրները՝ ենթակա: (Դա հնարավոր է մեկ դեպքում, եթե չեզոք սեռի բայերի մեջ ավելացնենք *ՅՆ* ածանցը՝ Ցավը մռնչացնում էր արջին):

Նույնիսկ կրավորականի որոշ դեպքում էլ, եթե բացառականով խնդիրները փոխակերպելի չեն, նման խնդիրները ներգործող չեն, ինչպես՝ «Ավին մի ձեռքով պաշտպանվում էր հարվածներից» (ԱԲ): Այստեղ *հարվածնե-*

ոից-ը ներգործող խնդիր չէ, որովհետև ենթակայի չի փոխակերպվում: Ենթական՝ գործողություն կատարողը, միշտ մնում է Ավին:

ԲՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

§ 129. Եթե սեռի խնդիրները պայմանավորված են ներգործական և կրավորական սեռերի բայերով, ապա բնության խնդիրները *անտարբեր են բայի սեռի նկատմամբ* և դրվում են *բայիմաստի բառային պահանջով.* դրանք կարող են դրվել հիմնականում *չեզոք,* ինչպես նաև ներգործական ու կրավորական բայերի վրա:

Դպրոցական քերականության մեջ բնության խնդիրներն անվանվում են *անուղղակի խնդիրներ,* որոնք արտահայտվում են գոյականների, առարկայանիշ դերանունների և գոյականաբար առնված այլ խոսքի մասերի *տրական, բացառական և գործիական,* մասամբ էլ *ներգոյական* հոլովներով, ինչպես նաև *հոլովակապային կառույցներով:*

Քանի որ բնության խնդիրները սերտորեն կապված են բայերի բազմիմաստության հետ, դրվում են դրանց պահանջով, հետևաբար դրանց թիվը քիչ չէ. ըստ բայերի բառային բազմիմաստության, բնության խնդիրները լինում են՝ *հանգման, մատուցման, օգուտի կամ վնասի, վերաբերության, միջոցի, անջատման, սահմանափակման և բաղկացության:*

ՀԱՆԳՄԱՆ ԽՆԴԻՐ

§ 130. Հանգման անուղղակի խնդրի իմաստային առումները չափազանց շատ են, բայց այդ բոլոր միավորվում են *հանգման* անվան տակ, որովհետև դրանցում կան *հանգելու, մոտենալու, փարվելու, կպչելու, առնչվելու, հաղորդվելու* և նման իմաստներ, և բոլորն էլ ձևավորվում են բուն *տրական հոլովով:*

ա) Հանգման անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որին հանգում, մոտենում, դիպչում է որևէ անձ կամ առարկա: Պիտի փարվեմ *չքնաղ լանջիդ* (Ավ.Իս): Իսկ երբ տագնապը հասնում է *սրտին...* (ԼՍ): Կինը մոտեցավ *օջախին...* (ԱԲ): Արդեն հասել էին Արածանիի *ափերին* (Րաֆ.): Ա՛զգ իմ, *վշտիդ* ինձ խաչել եմ (ՀՇ):

բ) Այն առարկան, որին համածայնում, հպատակվում, հնազանդվում, նմանվում, հակառակվում, ենթարկվում, հետևում է մեկ ուրիշ անձ կամ առարկա (Օտար երեխան չէր հնազանդվում և չէր հպատակվում նոր *դաստիարակչուհուն* (Դպր.): Ժողովականները համածայնեցին ելույթ ունեցողի *կարծիքին:* Հետևի՛ր մեծերի լավ *օրինակին: Երեխան* ծնողներին է *նմանվում:*

գ) Այն առարկան, որին տեղչում, կարոտում, փափագում, օգնում, հավատում, ունկնդրում է որևէ անձ կամ առարկա՝ Սիրտս փափագում է իմ *հո-*

ղին ու ջրին (ՀՋ): Նայում է շահը անտեր *գահույքին ու տենչում տիրուհուն:* Դու հավատում ես քո *երազներին,* ինչպես պատանին՝ *առաջին սիրուն* (ԼՍ): Կարոտում եմ իմ ազնիվ *բարեկամին* (ԽԴ): Հիմնադրամը օգնում է նաև *թոշակառուներին* (Եթեր):

դ) Այն առարկան, որին ձուլվում, կապվում, հանգուցվում, փաթաթվում, միացվում, խառնվում, հյուսվում, հպվում է մեկ ուրիշ առարկա՝ Արջը փաթաթվում է ծառին ու մի պահ սպասում (ՎԱ): Լավն էլ *վատին* է խառնվում ու հյուսվում ստերի *շղթային* (Մ): Մարդը մահկանացու է և վերջապես ձուլվում է հողին: Երեխան վախից հպվում է *մորն ու* աղիողորմ լալիս: Չուգունը ձուլվում է *երկաթին (ԳՏ):*

ե) Հանգման խնդիր են առնում նաև բաժանորդագրվել, ազդել, վստահել, դավել, նախանձել, կենտրոնանալ բայերը (բաժանորդագրվել *ամսագրերին,* վստահել *ընկերոջը,* նախանձել *հարևանին,* կենտրոնանալ *մի բանի վրա,* ազդել *եղբոր վրա):*

Կյանքը սիրիր լիահնչյուն ու մի դավիր քո *քնարին* (ԵՉ):

զ) Հանգման խնդիր են առնում նաև վարժվածության, տեղափոխության, գերադասության, համապատասխանության իմաստ ունեցող մի շարք բայեր (վարժվել *եղանակին,* ընտելանալ *շրջապատին (միջավայրին),* չհամապատասխանել *պահանջին,* իշխել *երկրին (մարդկանց),* գերազանցել ընկերներին և այլն):

է) Հանգման խնդիրները ձևավորվում են նաև *կապով ու կապի խնդրով* (հարձակվեցին *թշնամու վրա,* ուշադրություն չէին դարձնում *կետադրության վրա,* բողոքել *դատավճռի դեմ,* ցուցմունք տալ *մեկի դեմ, ազդել ընկերոջ վրա):* Սխալ վարվեցիր *դասընկերոջդ նկատմամբ:*

ը) Անվանական (բաղադրյալ) ստորոգյալները նույնպես հանգման խնդիր լրացումներ կարող են առնել. այս դեպքում վերադիրները մեծ մասամբ ածականներ են լինում (*գործին* անտեղյակ, *ցավին* անտարբեր, *ստրության* ընդունակ, *շատերին* օտար): Բնագրային օրինակներ՝ Այդպես էլ մնացին քնած՝ դավին անտեղյակ, *ցավին* անտարբեր (ՀԹ): Պարո՛ն նախագահ, Ձեր ասածը *ճշմարտությանը* համազոր է, բայց կընդունվի՞ արդյոք (Մամուլ):

ՍԱՏՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐ

§ 131. Սովորաբար *մատուցման խնդիրը* չեն զանազանում *հանգման խնդրից,* դրանք քննում են միասնաբար՝ մեկ անվան տակ՝ *հանգման խնդիր*[43]: Սինչդեռ թե՛ քերականորեն և թե՛ տրամաբանորեն այդ երկու խնդիրները տարբերվում են:

Քերականական տարբերությունն այն է, որ ի տարբերություն *հանգ-*

[43] Տե՛ս *Ս.Աբրահամյան,* ժամանակակից հայերենի քերականություն (ուսուցիչների համար), 1975, էջ 295-296, *Ս.Գյուլբուդաղյան,* ժամանակակից ՀԼ, էջ 180-182:

մաՆ խնդիրների, որոնք հիմնականում դրվում են *չեզոք սեռի* բայերի իմաստի պահանջով (մոտենալ *մեքենային*, հանդիպել *ընկերոջ հետ*), մատուցման խնդիրները հիմնականում պայմանավորված են *ներգործական*, երբեմն էլ *կրավորական սեռի* բայերի իմաստով, որոնք այս դեպքում *կրկնակի խնդիրներ* են ստանում՝ *ուղիղ և անուղղակի (դասը* բացատրել *երեխային, գիրքը* հանձնել *գրադարանին, ջուր* տալ *երեխային* և *ջուրը* տրվեց *երեխային):*

Տրամաբանական տարբերությունն այն է, որ բայերի իմաստներն էլ այս դեպքում նախորդներից տարբեր են՝ *տալ, հանձնել, մատուցել, ասել, նվիրվել, հաղորդել, բացատրել, կտակել և տալու, հանձնելու* իմաստ ունեցող նման բայեր:

Այս երկու խնդիրների համատեղման և մի անվան տակ քննելու ելակետը միայն դրանց՝ *տրական հոլովով* դրվելն ու նույն հարցերին պատասխանելն է: Մինչդեռ, ինչպես ասվեց, դրանք չեն նույնանում:

Մատուցման խնդիրը ցույց է տալիս՝

ա) այն անձը կամ առարկան, որին տրվում, հանձնվում, մատուցվում է ուրիշ առարկա, որևէ բան՝

Լույսի հրճվանքը տվեց երկնքին...
Վեհության խիոնը լեռներին տվեց...
Դայլայլը տվեց *հավք ու հովերին* (ՀՇ):

Փոստատարը նամակը հանձնեց *տիրոջը:* Սոնան սուրճ մատուցեց *հյուրերին:*

Ամառն անգամ ձնծաղիկ էր *մեզ* բերում (ՀՇ):

բ) Այն առարկան, որին ասվում, հայտնվում, հաղորդվում, ծոնվում, առաջարկվում, պարգևվում, վստահվում, հանձնվում է որևէ բան՝

... Այսօրվանից հանձնում եմ *քեզ* հայոց լեզուն հազարագանձ (ՍԿ):

Դու հայրենիք տվիր *հային,* որ դրախտ է աչքիս թվում...,

Քեզ Արևը պիտի լինի հաղթանակի շքանշան...(ՀՇ):

Լավ վարպետը իր գիտելիքները փոխանցում է *սաներին* (ՀԱ): «Փարոսը» օգնություն է բաժանում *կարիքավորներին:* Աստված քեզ կրկին անգամ պարևեց *ինձ,* անգի՛ն Սամվել (Րաֆ.):

գ) Մատուցման խնդիր են ընդունում նաև *ՅՆ* ածանցով կազմված որոշ բայեր, որոնք կրկնակի խնդիրներ են ստանում՝ *ուղիղ և անուղղակի*՝ Մայրը *դաս* է սովորեցնում *երեխային:* Երեխան *ճաշ* է կերցնում *տիկնիկին:* Թռչունը *ջուր է* խմեցնում *ձագուկներին:*

դ) Մատուցման խնդիրը ձևավորվում է նաև *անորոշ դերբայ+տալ* կապակարով՝ Պապիկը *նամակը* կարդալ տվեց *թոռնիկին:* Մայրը *ջուրը* լցնել տվեց *ծաղիկներին:*

Ծանոթություն - ՕԳՈՒՏԻ (ԸՀՀԻ) ԿԱՄ ՎՆԱՍԻ ԽՆԴԻՐ

Մ.Աբեղյանը գրում է. «Տրական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որի համար կամ նկատմամբ կա կամ լինում է մի բան» և բերում է հետևյալ օրինակները՝ «Ուրիշին փոս փորողը ինքը կընկնի մեջը»: «Ուրիշի աչքը քեզ համար լույս չի տա»:

«Քեզ դեռ շատ բան է պակասում»: «Մի՞թե կցանկանայիր, որ մենք քո օգտին մեր հացից կտրվեինք»:

Ուրեմն, օգուտի կամ վնասի խնդիրը այն լրացումն է, որը ցույց է տալիս մեկի կամ մի բանի համար, հօգուտ, կամ ի վնաս մեկի կատարվող գործողության պահանջով դրվող առարկաներ: Օրինակներ՝ Հայրենիքի համար կյանքներս էլ կտանք (ԴԴ): Հայրենիքի համար, այս աղջկա համար արժե կռվել ու մահանալ (ԳՍ): Խմում ենք կռվող քաջերի փառքին (ՀԹ): Փա՜ռք քեզ, միշտ փառք, վերածնված հայրենիք (Սարմեն): Վայ նրան, ով մայր երկիր չունի, նա լոկ նման է անբույն թռչունի (Սարմեն): Արտադրամասն աշխատում է ի վնաս ձեռնարկության (Մամուլ):

ԱՆՋԱՏՄԱՆ ԽՆԴԻՐ

§ 132. Անջատման խնդիրը իմաստով *բոլորովին հակադիր է տրական հոլովով* դրվող բոլոր խնդիրներին: Եթե տրականով դրվածները ցույց են տալիս հանգում, մատուցում, հպում, ձուլում և այլն, ապա անջատման խնդիրները ցույց են տալիս զատում, անջատում, հեռացում և այլն: Հետևաբար՝ *անջատման խնդիրը ցույց է տալիս այն անձը կամ առարկան, որից անջատվում, բխում, ծագում է մի բան, որից սկսվում է գործողությունը:* Այն դրվում է *բացառական հոլովով* և պատասխանում է *ո՞ւմից, ինչի՞ց* հարցերին: Անջատման խնդիր են առնում՝

ա) *հեռանալ, անջատվել, զրկվել, զատվել, պոկվել, փախչել, թաքցնել* և այլ բայեր, օրինակ՝ Շատ *բանից է* մեզ զրկել վայրենին, Բայց մենք չենք զրկվել մեր բերանի *համից* (ՊՍ): Հայոց վշտի *ուռենուց* կտրած սուրբ սրինգով Կոմիտասը հայ երգը հնչեցրեց ամբողջ աշխարհում (Էջմիածին): Անկարելի եղավ ծաղիկը ջոկել *ծաղկավաճառից* (ՎՓ): Ոչ մի ժանիք ինձ չի բաժանի իմ *անդուլ դարից:* Ազատվեց հին *կապանքից* Հոգիս՝ վիթխարի ցավով (ԵՉ):

բ) Անջատման խնդիր են առնում նաև հոգեկան վիճակ արտահայտող մի շարք բայեր՝ *վախենալ, սարսափել, ակնածել, ամաչել, խորշել, խռովել, զգուշանալ, նեղանալ, խուսափել, հիասթափվել, հրաժարվել, ծանծրանալ, դժգոհել, հոգնել, զզվել*... Ու խռոված իր հորից՝ նա թողեց հայրենի տունը: Ու ջերմ ըղձերս, *բախտից* հալածված, Քեզ մոտ են թռչում հախուռն երամով (ՀԹ): Գող, թե գազան հենց դատարկ *վախից* Հեռու են փախչում նրա փարախից (ՀԹ): ...Ես շատ եմ զզվել *քաղաքից, գազեթից* (ՀԹ): Զգուշանալով վերահաս *վտանգից՝* հրաժարվեց այդ մտքից (Ոգնի):

գ) Անջատման խնդիր են նաև անձ ու առարկա նշող գոյականները, որոնցից ծագում, սերում առաջանում են այլ անձեր ու առարկաներ: Հայ ժողովուրդը սերվել է Թորգոմա նապահետական *տոհմից* (ՀԽ): Երեխան իր աշխատասիրությունը ժառանգել է *հորից:* Նա ծնվել է ազնիվ *ցեղից* (ՀԽ):

դ) Անջատման խնդիրը ցույց է տալիս նաև այն անձը կամ առարկան, որից մի բան է բխում, ստացվում, լսվում, խնդրվում՝ Օխտն *աղբյուրից* ջուր է առել... Հաց չենք ուզում *ձեզանից....:* Ես իմ *մեծերից* եմ լսել... (ՀԹ): Խեղճ աղքատի հոգին դուրս գա *Քարից, հողից* հաց քամե (Ավ. Իս.):

Անջատման խնդիրը հաճախ շփոթվում է բացառականով դրված *տեղի*

պարագայի, ինչպես նաև *ներգործող խնդիրների* հետ, և հաճախ դժվար է լինում դրանք զանազանել. այս դեպքում նորից պետք է դիմել *հարցի օգնությանը* և տրամաբանությանը: Օրինակ՝

Քաշեց արևը ծիլերը *հողից* իր շողապայծառ լույս մագիլներով,
Ծփաց կանաչը, ծածանվեց *հովից* Արտերի թավիշ հորձանքը սիրով
(ՀՇ):

Այստեղ երկվություն չի կարող լինել, որ *հովից* լրացումը ոչ թե անջատման խնդիր է, այլ ներգործող, որովհետև այն հեշտությամբ փոխակերպվում է ենթակայի (*Հովը ծածանեց հորձանքը, հորձանքը ծածանվեց հովից*): Երկվություն է առաջանում *հողից* լրացման հարցում. այն անջատման խնդի՞ր է, թե՞ տեղի պարագա (Արևը ծիլերը ինչի՞ց քաշեց, թե՞ որտեղից): Տրամաբանորեն այն ավելի շուտ *անջատման խնդիր է*, քան *տեղի պարագա*, որովհետև դրանից է *բխում*, անջատվում մի բան, և ավելի տրամաբանական է առաջադրել *ինչի՞ց* հարցը:

Անձի կամ անձի առման դեպքում բնականաբար նման երկվություն չի առաջանա, ինչպես՝ «Նամակ ստացավ *ընկերոջից*» (ո՞ւմից): «Երեխան տիկնիկը հագիվ խլեց շնիկից» (ո՞ւմից):

ՄԻՋՈՑԻ ԽՆԴԻՐ

§ 133. *Միջոցի խնդիրը ցույց է տալիս այն առարկան (նաև անձը), որով, որի միջոցով կատարվում է ենթակայի գործողությունը*. այն դրվում է *գործիական հոլովով*, ինչպես նաև *միջոցով, շնորհիվ* կապերով ու դրանց խնդիրներով և պատասխանում է *ո՞ւմով, ինչո՞վ* հարցերին: Միջոցի խնդիրները կարող են դրվել ամենաբազմազան իմաստներ արտահայտող բոլոր սեռերի բայերի վրա, որոնք առնչվում են առարկաների հետ. «Հայոց վշտի ուռենուց կտրած *սուրբ սրինգով* Կոմիտասը հայ երգը հնչեցրեց ամբողջ աշխարհում» (Էջմիածին): Այս *սրինգի միջոցով* նա հազարավոր սրտեր հուզեց,

Նրանով է մրմնջացել հայ պանդուխտը՝ վերքն իր սրտի (ՍԿ):

Դու մեր սրբությո՝ կնքված *Մեսրոպով, Նարեկացիով* սնված ու յուղված: Ջուր ես խմել *ոսկե քասով* ժողովրդի պարզ սրտից (ՊՍ):

Միջոցի խնդիրներ են առնում նաև մարդու հոգևոր ու մտավոր վիճակը, տրամադրություններն ու հույզերն արտահայտող բայերը (զբաղվել, զմայլվել, հպարտանալ, գայթակղվել, հրապուրվել, մխիթարվել, պարծենալ, ուրախանալ, շլանալ...): Զբոսաշրջիկները հիանում են մեր *քաղաքի գեղեցկությամբ:* Շատ մի՛ հրապուրվիր այդ *աղջկանով:* Իսկ ո՞վ չի զմայլվում Ալեքսանդր Թամանյանի *ճարտարապետությամբ:* Սոցարտը դեռ մանկուց է զբաղվել *երաժշտությամբ:*

Միջոցի խնդիրը չպետք է շփոթել գործիականով դրվող որոշ *ծևի պարագաների* հետ, որոնք պարագայական խնդիրներ են: Համեմատենք այս երկու նախադասությունները՝

Երեխան ծաղիկները ջրում է *ցնցուղով* (ինչո՞վ - միջոցի խնդիր) և
Երեխան ծաղիկները ջրում է *բերանով (ծեռքի ափով)*:
Վերջին դեպքում ավելի շատ ընկալվում է գործողության կատարման *ձևը* քան *միջոցը*:

ՎԵՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ

§ 134. *Վերաբերության խնդիրը նշում է այն անձը կամ առարկան, որի մասին, որի վերաբերյալ խոսվում է, որի նկատմամբ կատարվում է գործողությունը:* Այն հիմնականում դրվում է բացառական հոլովով, ինչպես նաև *մասին, վերաբերյալ, նկատմամբ, հանդեպ* և նման կապերով ու կապի խնդիրներով և պատասխանում է *ո՞ւմից, ինչի՞ց, ո՞ւմ մասին, ինչի՞ վերաբերյալ, ինչի՞ առիթով* և նման հարցերի:
Վերաբերության խնդիր են առնում հիմնականում *ասացական և մտածական բայերը (ասել, խոսել, պատմել, զրուցել, գանգատվել, բամբասել, կարծիք հայտնել, դատել)*:
Օրինակներ բացառական հոլով՝
Ի՞նչ կա քաղաքում, դե պատմի՛ր, տեսնեմ... *Մեռնող-ապրողից, քանկ ու էժանից,* Կամ նոր դուրս եկած *գազեթից, բանից*... (ՀԹ):
Ու պատմում էր նա *հուրի-փերիներից, զմրուխտ ղուշից* (ՀԹ): Մայրս հաճախ էր գանգատվում իր *անցյալից* ու ներկա *կյանքից*:

Խոսում էինք անվերջ մեր երջանիկ *կյանքից*
Եվ *երգերից* մեր նոր, որ պիտի գան (ՎՏ):

Վերաբերության խնդիրն արտահայտվում է նաև հոլովակապային կապակցություններով՝ *Անդրանիկի* մասին ժողովուրդը խոսում է որպես մեծ հայրենասերի (ԳԹ): Այդ *գործի վերաբերյալ* իրարամերժ կարծիքներ կան (Ազգ): Դրամաշորթի *գործի առթիվ* քրեական գործ է հարուցվել (Երկիր): *Զեկուցման շուրջ* ծավալվեց մտքերի աշխույժ փոխանակություն (ԳԹ):
Վերաբերության առիթով հաճախ է չարաշահվում *վրա* կապը. նույնիսկ որոշ մարդիկ հաճախ են «կանգ առնում այս կամ այն հարցի *ու խնդրի վրա,* փոխանակ խոսելու այս կամ այն *հարցի ու խնդրի մասին:* «Զեկուցողը *կանգ առավ» նաև առօրյա* խնդիրների վրա» (ՀՀ): «Ես կփորձեմ *կանգ առնել* ձեր տված *հարցերի վրա»* (հեռուստ.):
Դեպի կապը նույնպես այս իմաստով ճիշտ չի գործածվում՝ Հայրը անտարբեր էր *դեպի երեխան* (փոխանակ երեխայի նկատմամբ): Վատ վերաբերմունք ունես *դեպի ռաբիսը* (փոխանակ ռաբիսի հանդեպ, վերաբերյալ) և այլն:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԽՆԴԻՐ

§ 135. *Այս խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որով սահմանափակվում, մասնավորեցվում է ենթակայի գործողությունը կամ ինչ-որ հատկա-*

Միշ: Այն լինում է ոչ միայն բայերի, այլև ածականների լրացում: Այսպես՝ եթե ուսուցիչը ծնողին ասում է, որ նրա երեխան թույլ է *մաթեմատիկայից*, դա չի նշանակում, թե երեխան ընդհանրապես է թույլ. նրա թուլությունը սահմանափակվում է մեկ առարկայով: Այստեղ սահմանափակման անուղղակի խնդիրը՝ *մաթեմատիկայից, թույլ* ածականի լրացումն է:

Սահմանափակման խնդիրը դրվում է *բացառական, գործիական, ներգոյական* հոլովներով, ինչպես նաև կապական կապակցություններով. այն պատասխանում է *ինչի՞ց, ինչո՞վ, ինչո՞ւմ* հարցերին:

ա) *Բացառական հոլովով*՝ Այժմ բոլոր ֆակուլտետներում քննություն են հանձնում նաև *օտար լեզվից:* Արթուրը *լողից* առաջին տեղը գրավեց: *Խելքից* պատուհաս մարդիկ էլ կան: *Տեսողությունից* չեմ բողոքում, խեղճանում եմ *լսողությունից:*

բ) *Գործիական հոլովով*՝ Լավ է կույր լինել *աչքով*, քան *մտքով* (Եղիշե), Արմենի խստությանը մի՛ նայեք, նա *հոգով* բարի է: *Բնավորությամբ* հորն է քաշել: Չարենցը մի առիթով ասել է. «Կուզենայի աղջիկս *դեմքով* մորը քաշեր, *խելքով*՝ հորը: Հակառակը եղավ» (Հուշերից):

գ) *Ներգոյական հոլովով*՝ Այս մի հարցում արդարացնում ես, *մյուսներում՝ ոչ: Դրսում* իրեն շատ լավ է դրսևորում, *ներսում է* ամբարիշտ: Երեխան *սովորելում* լավ է, *աշխատանքում* է ծուլանում:

դ) Արտահայտվում է նաև *կապերով*՝ Երիտասարդ պրապորչիկը լավ է *նետածգության մեջ*, թույլ է *սովորելու մեջ* (Հայ գինվոր): *Ծավալի տեսակետից* աշխատանքները բավարար են, մնում է որակը: *Ուրիշների նկատմամբ* լավ եք վերաբերվում, *իրար նկատմամբ*՝ ոչ:

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ (ԲԱՂԴԱՏՈՒԹՅԱՆ) ԽՆԴԻՐ

§ 136. *Համեմատության (բաղդատության)* խնդիրը ցույց է տալիս մի առարկա, որն ուրիշ առարկաներից տարբերվում է իր ինչ-ինչ հատկանիշներով՝ Մասիսը *Արագածից բարձր է:* Արսենը խելոք է *Տիգրանից:* Քույրը *եղբորից* գեղեցիկ է: Այս մեկը գերադասում եմ *մյուսներից:* Առյուծը ուժեղ է *վագրից:*

Համեմատելին միշտ դրվում է բացառական հոլովով և պատասխանում է *ո՞ւմից, ինչի՞ց* հարցերին:

ԲԱՂԿԱՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ

§ 137. *Բաղկացության խնդիրը* այն է, որ ցույց է տալիս, թե ինչից է կազմված, ինչից է բաղկացած տվյալը առարկան՝ Գետեր են գոյանում *վտակներից:* Բնակարանը բաղկացած է 3 սենյակից: Գինին պատրաստում են *խաղողից:* Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կառուցվեց Անիի բաց գույնի սրբատաշ *տուֆից:* Մեր ընտանիքը բաղկացած է *ութ շնչից:*

Բաղկացության խնդիրը դրվում է բացառական հոլով:

ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

§ 138. Բայական անդամի լրացումների շարադասությունը, համեմատած անվանական (գոյականական) անդամների լրացումների հետ, *բավական ազատ է:* Խնդիրների և պարագաների շարադասության խիստ պայմանականություն գոյություն չունի: Դրանք կարող են և՛ նախադաս, և՛ ետադաս շարադասվել՝ նայած խոսքի բնույթին, նախադասության կառուցվածքին, տրամաբանական շեշտին ու հնչերանգին: Ինչպես իրավացիորեն նշել է Մ.Աբեղյանը, խնդիրների ու պարագաների շարադասությունը ազատ է, դրանք ստորոգյալից հավասարապես կարող են և՛ առաջ, և՛ հետո դրվել, «այն կարգով, որով գաղափարները ծնվում են խոսողի մտքի մեջ»[44]: Աբեղյանի այս տեսակետը հիմնականում ճիշտ է, սակայն մեր կատարած վիճակագրությամբ խնդիրները (հատկապես ուղիղ խնդիրը) ավելի շատ *ետադաս* կիրառություն ունեն, պարագաները՝ հակառակը :

Խնդիրների շարադասությունը, ի տարբերություն պարագաների, գերազանցապես վերջադաս է. դրանք *առաջադաս են գործածվում հատկապես շեշտակրության դեպքում:*

§ 139. *Ուղիղ խնդրի շարադասությունը* - ժամանակակից հայերենում սովորական շարադասությամբ ուղիղ խնդիրը, որպես կանոն, դրվում է ստորոգյալից հետո՝

Հազրոն նստել է օջախի քարին,
Հիշում է կորած *երկիրն ու հողը,*
Տխուր նայում է հայկական պարին
Եվ նվագում է *ծիրանի փողը* (ՀՍ):

Եվ նրա խորաթափանց ոգին ճանաչեց *մարդուն,* ճանաչեց և խորապես ատեց *մարդուն* և նրա *օրենքները* (Ավ.Իս.): Արևը տաքացնում է սառած *բուսականությունը:*

Բազմակի ուղիղ խնդիրները նույնպես հիմնականում ետադաս են դրվում՝ Ես ծանոթացա ու սիրեցի հայ ժողովրդի *երգը, երաժշտությունը, արվեստի տաղանդավոր ներկայացուցիչներին* (Ռոքուել Քենտ): Հայ գիտնականներն են հայտնաբերել *ճաիրիտը, երևանիտը, դեղերոնը* և էլի շատ *նյութեր* (ԳՏ):

Դերանուններով արտահայտված ուղիղ խնդիրները նույնպես հիմնականում վերջադաս կիրառություն ունեն՝ Կարոտով միշտ հիշում եմ *քեզ*... Բոլորս հարգում ենք *նրան:*

Սակայն թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքում խոսողն ու գրողը հա-

---

[44] Տե՛ս *Մ.Աբեղյան,* նշվ. աշխ., էջ 532-534:

* Տե՛ս մեր «ժամանակակից հայերենի պարզ նախադասության շարադասությունը» գրքի (Ե., 1976) 80-81 և 86-87 էջերի վիճակագրական տվյալները:

ծախ են դիմում *շրջուն շարադասությանը:* Սրա նպատակն այն է, որ նրանք խոսակցի, ընթերցողի ուշադրությունը ցանկանում են բևեռել գործողության անմիջական առարկայի վրա: Այդ դեպքում ուղիղ խնդիրը, իր վրա կրելով տրամաբանական շեշտը, անցնում է ստորոգյալից առաջ: Այս երևույթը ավելի շատ հատուկ է գեղարվեստական գրականությանը, հատկապես պոեզիային՝ մանավանդ այն ռիթմավորելու և հանգավորելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև միօրինակությունից խուսափելու համար՝

Աղքատություն ես սիրեցի, *խեղճի լացը, հառաչանք,*
Ես քնարս նվիրեցի *վիշտ* երգելու և *տանջանք* (Հ.Հովհ.):

Եթե *ծաղիկ* եք տեսել երազում, Համարձակ եղեք... (ՎՊ): Ես *քեզ* եմ երգում... (ԵՉ):

Միօրինականությունից խուսափելու համար Չարենցը դիմում է ուղիղ խնդիրների թե՛ նախադաս և թե՛ ետադաս շարադասության գեղարվեստական հնարներին՝

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ *բառն* եմ սիրում,
Մեր հին սազի ողբանվագ, լացակումած *լարն* եմ սիրում...
Սիրում եմ մեր *երկինքը* մուգ, *ջրերը*, ջինջ, *լիճը* լուսե
... Ու հնամյա քաղաքների հազարամյա *քարն* եմ սիրում (ԵՉ):

Ստորոգյալից առաջ անցնելիս ուղիղ խնդիրը հաճախ անհող է գործածվում, այս դեպքում օժանդակ բայը դերբայից առաջ է անցնում և դրվում է խնդրի ու դերբայի միջև՝ Ուղևորը *տոմս է* վերցնում: Երեխան *գիրք է* կարդում: Վարորդը *մեքենա է* վարում: Դրանով տրամաբանական շեշտն ընկնում է ուղիղ խնդրի վրա:

Նման կառույցներում ուղիղ խնդիրը վերջադաս չի դրվում. դա հայերենի համար խորթ կլինի, ինչպես՝ «Տղան *ծուկ* է բռնում», բայց ոչ «Տղան բռնում է *ծուկ*», «Երեխան կարդում է *գիրք*»:

Ներգործող անուղղակի խնդիրների շարադասությունը գրեթե չի տարբերվում ուղիղ խնդրի շարադասությունից. նրա սովորական կիրառությունը նույնպես ետադաս դիրքն է՝ Շրջակա անտառոտ լեռները դեռ պատված են քանձր *մշուշով* (ՎՓ): Արարատյան դաշտը ոսկեզօծվել էր աշնանային թարմ *գույներով* (Րաֆ.): Նա հալածվում էր իր ընկերների կողմից:

§ 140. ԲՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ: Եթե սեռի խնդիրների (ուղիղ և ներգործող) շարադասությունը հիմնականում *ենթակա+ստորոգյալ+խնդիր* կառույցն է, որտեղ շրջունությունը հիմնականում կատարվում է հատուկ նպատակով, ապա *բնության խնդիրների* որոշ տեսակներում, որպես կանոն, խնդիրները հիմնականում *նախադաս դիրք* ունեն ստորոգյալների նկատմամբ, որոշ տեսակներում՝ *ետադաս,* մի քանի խնդիրներ էլ՝ հավասարապես թե՛ նախադաս և թե՛ ետադաս:

Այսպես՝ հիմնականում *նախադաս են դրվում՝*

ա) *Անջատման անուղղակի խնդիրները.* նախադաս դիրքը արդարացվում է տրամաբանորեն: Անջատման գաղափարը նախ կապվում է առար-

կայի հետ, որից էլ ծագում, առաջանում է ինչ-որ բան: Այդ պատճառով էլ մարդու ուղեղում նախ ծագում է այդ առարկան, ապա՝ նրանից բխող գործողությունը՝

Բախտի դաժան խաղով աշխարհով մեկ ցրված *պանդուխտ հայերից* նամակների անվերջ հեղեղ հոսեց դեպի նա (ՀՔ):

Ես *քեզնից* դառնացած հեռացա,
Ես *քեզնից* հեռացա ու լացի (ՎՏ):

Խեղճ աղքատի հոգին դուրս գա՝ *Քարից, հողից* հաց քամե (Ավ.Իս.):

Սրանց ետադաս կիրառության դեպքեր քիչ են հանդիպում. այդ դեպքում ավելի շատ ընդգծվում է գործողությունը՝ Ես անջատված եմ *հայրենի հողից* (ՎՏ):

բ) *Համեմատության (բաղդատության) խնդիրը* նույնպես հիմնականում նախադաս է դրվում. սա նույնպես պատճառաբանված է. հայտնի է, որ համեմատվող առարկան համեմատելիից միշտ առաջ է դրվում՝ Բրազիլիական թիմը *մյուս թիմերից* ավելի ուժեղ է: Գյումրին *Վանածորից* մի քանի անգամ մեծ է: Տիգրանը *Վահանից խելոք է:*

Միայն կապերով (*պես, նման*) և *ինչպես, որպես* բառերով կառույցները դրվում են թե՛ *նախադաս* և թե՛ *ետադաս՝ Որպես մի ամոթխած հարսիկ,* սքողում էր յուր դեմքը անթափանցիկ շղարշով (Րաֆ.) (նախադաս): Դուրս եկավ, ճոճեց բարակ մարմինը *որպես եղեգ* և կաքավի մանր քայլերով սուրաց դեպի հնձանը (ԱԲ) (ետադաս):

Ետադաս են դրվում վերաբերության և սպեմանափակման խնդիրները:

ա) *Վերաբերության խնդիրը,* արտահայտված լինի գոյականի բացառական հոլովով, թե կապի խնդրով ու կապով, սովորաբար ստորոգյալից հետո է դրվում. դրանք հազվադեպ են ստորոգյալից առաջ դրվում, այն էլ՝ այդ խնդիրները շեշտելու, ընդգծելու նպատակով: *Ետադասի* օրինակներ՝ Մովսեսը պատմում էր *Արաբոյի և Աղբյուր Սերոբի կռիվներից* (ՀՔ): Տարեց տղամարդիկ խմբով նստում էին արևահայաց պատերի տակ ու խոսում էին անցած գնացած *բաների մասին* (ՀՔ):

Խորհեցե՛ք մի պահ *թռչելու մասին,*
Խորհեցե՛ք *ծաղկի ու ծովի մասին* (ՎԴ):

Նախադաս՝ Ճամփին *որսից* էին պատմում: *Թռչելու մասին* խորհեցեք մի պահ: (Տրամաբանական շեշտն ընկել է *նախադաս* խնդիրների վրա):

Հիմնականում ետադաս են դրվում նաև *հանգման, մատուցման* և *շահի* խնդիրները:

ՊԱՐԱԳԱՆԵՐ

§ 141. Բայական անդամի լրացումներ են նաև *պարագաները: Եթե խնդիրները ցույց են տալիս գործողության հետ կապված առարկաներ* (ուղղակի և անուղղակի), *ապա պարագաները ցույց են տալիս գործողութ-*

յան որակական և քանակական առանձնահատկությունները՝ կատարման տեղը, ժամանակը, նպատակը, պատճառը, պայմանը, հիմունքը, հակառակ հիմունքը և այլն:

Նշելի է նաև, որ ինչպես խնդիրները, այնպես էլ պարագաները լրացնում են ոչ միայն դիմավոր բայերին, այլև բայի անդեմ ձևերին, այդպես էլ՝ որոշ ածականների, բայանուն գոյականների:

Պարագաներն արտահայտվում են՝ մակբայներով, գոյականի հոլովաձևերով, ածականներով, անկախ դերբայներով, հատկանշային դերանուններով, կապերով ու կապի խնդիրներով, բառակապակցություններով: Ըստ այդմ էլ Մ.Աբեղյանը պարագաները բաժանում է երկու խմբի՝ *բուն պարագաներ* (սրանք մակբայներով և այլ խոսքի մասերով հանդես եկող պարագաներն են) և *պարագայական խնդիրներ* (սրանք գոյականների հոլովված ձևերով կամ հոլովակապային կառույցներով հանդես եկող պարագաներն են):

ԲՈՒՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ ԵՎ ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

§ 142. Ասվեց, որ խնդիրները ցույց են տալիս գործողության հետ կապ ունեցող *առարկաներ*, իսկ պարագաները՝ *հանգամանքներ:* Դա լավ է երևում հետևյալ նախադասություններում՝ «Սամվելը մոտեցավ պատուհանին, ետ տարավ կերպասյա *վարագույրը* և սկսեց թարմ *օդ* ծծել» (Րաֆ.), «Մենության խավար գնդանց *կրկին* ես վերադարձա *հզոր ու հպարտ* (ՎՏ):

Առաջին նախադասության մեջ *պատուհանին, վարագույրը և օդ* լրացումները գոյականներ են, հետևաբար՝ խնդիրներ, իսկ երկրորդում բայի լրացումներից մեկը մակբայ է (*կրկին),* իսկ *հզոր ու հպարտ* բառերը ածականներ են՝ *մակբայական կիրառությամբ,* հետևաբար պարագաներ են: Այստեղ երկվություն չկա:

Քննենք հետևյալ նախադասությունները՝

«Ձբոսաշրջիկները Երևանում շրջեցին *մեքենայով»* և «շրջեցին *ոտքով»:* Այստեղ *ոտքով* -ի դեպքում տրվում է *ինչպես* հարցը (ինչպե՞ս շրջեցին, ուրեմն՝ այն *ձևի պարագա է* արտահայտված գոյականի գործիական հոլովով, իսկ *շրջեցին մեքենայով*-ի դեպքում սովորաբար տրվում է *ինչո՞վ* հարցը. հետևաբար՝ այն *միջոցի խնդիր է,* բայց կարելի տալ նաև *ինչպե՞ս* հարցը. այս դեպքում նույն *մեքենայով* գոյականը կլինի *ձևի պարագա:*

Նկատելի է, որ մարմնի մասերի անվանումներով արտահայտված լրացումները հիմնականում *ձևի պարագաներ են:*

Մ. Աբեղյանը գրում է. «Պարագաները նայելով թե ինչ խոսքի մասերով են արտահայտվում, բաժանվում են 2 խմբի՝ *բուն պարագաներ և պարագայական խնդիրներ, բուն պարագաները* արտահայտվում են *մակբայներով և իբրև մակբայ գործածված ածականներով,* օրինակ՝ *կամաց* խոսեցեք: *Երբեք* մեկին չեմ նախանձում ես աշխարհում»: «*Պարագայական խնդիրները,* - շարունակում է Աբեղյանը, - արտահայտվում են մի *գոյականով՝ մենակ կամ որևէ կապով: Օր.*՝ «Նա *քաղաքից* վերադարձավ *գյուղ»:*

«Նա գիշերս *առանց քնելու* լուսացրեց (անորոշ դերբայը Աբեղյանը համարում է գոյական)։ «Մարդը պետք է *խղճմտանքով* խոսի»։ Շարունակելով իր միտքը՝ Աբեղյանը ավելացնում է. *«Պարագայական խնդիրները միջին տեղ են գրավում բուն պարագաների, որ է՝ մակբայների և առարկայական խնդիրների միջև»*[45]։

Բերենք բուն պարագաների և պարագայականե խնդիրների նմանատիպ օրինակներ՝ *Բուն ձևի պարագա* - Դու *անհոգ* նայեցիր իմ վրա (ՎՏ)։ *Անհագուրդ* հիացավ ոսկեդեղձան հյուսերով (ԱԲ)։

Ձևի պարագա՝ պարագայական խնդիր - Աշխենը *հոգով ու սրտով* նվիրված էր իր սիրելիին (Րաֆ.)։ Սայաթ-Նովան *ամպի նման* տխուր մնաց։

Բուն տեղի պարագա - Ամենուրեք տիրում էր տխուր, անապական դատարկություն (Րաֆ.)։ *Դեմը* քաղաքն էր տարածվել՝ հազարամյա (ԵՉ)։

Տեղի պարագա՝ պարագայական խնդիր - Ցուպը ձեռքիս՝ *գեղը* մտա, Անցա յարիս *տան ճամփով* (Ավ.Իս.)։ Ծաղկել ես *սարում, անտառում, արտում* (ՎՏ)։

Այս դեպքում կարող է հարց առաջանալ, թե ինչո՞ւ *պարագայական խնդիրները*, որ գոյականներ են, պարագաներից չեն անջատվում և որպես *խնդիրներ* չեն դիտվում։

Այս հարցի պատասխանը նույնպես տալիս է նրբանկատ հայագետը։ Նա ասում է. «Նման լրացումները խնդիրներ են, որովհետև պահում են իրենց հոլովական ձևերը և հոլովների հատուկ նշանակությունները։ Սյուս կողմից, սակայն, դրանք պարագաներ են, որովհետև խոսքի մեջ դրվելով բայի վրա, կորցնում են իրենց առարկայական իմաստը։ Խոսքի մեջ իրենց ունեցած նշանակությամբ, ուրեմն այս լրացումները պարագաների կարգին են պատկանում, բայց իսկական պարագա կամ մակբայ չեն, որովհետև, ինչպես ասացինք, պահում են իրենց հոլովական նշանակությունը։ Օր.՝ երբ ասում ենք «Նա *քաղաքից* վերադարձավ *գյուղ»*, ինչքան էլ *քաղաքից (որտեղի՞ց, ինչի՞ց) և գյուղ (որտե՞ղ, ո՞ւր և ոչ ի՞նչը)* լրացումները խոսքի մեջ տեղի պարագա են նշանակում, բայց և այդպես, *քաղաքից* բացառական հոլովն ու *գյուղ* (հայցական) հոլովը կատարելապես պահում են իրենց կենդանի հոլովական նշանակությունը՝ հետևաբար՝ *քաղաքից և գյուղ* լրացումները չի կարելի իսկական պարագաների, այսինքն մակբայների մեջ դնել. դրանք *պարագայական խնդիրներ են»*[46]։

Առարկայական և պարագայական խնդիրների տարբերակման հիմնական միջոցը *հարցադրումն է*. քանի որ առարկայական խնդիրները գոյականներ են, ուրեմն պետք է պատասխանեն գոյականներին տրվող հարցերին (ի՞նչ, ո՞ւմ, ինչի՞ն, ումի՞ց, ումո՞վ, ինչո՞վ), իսկ պարագայական խնդիրները քանի որ մտածվում են, որպես հատկանիշներ, վիճակներ, հանգամանքներ, պատասխանում են մակբայներին և նրանց հարաբերակից բառերին տրվող հարցերին (ո՞ւր, որտե՞ղ, ե՞րբ, ինչպե՞ս, ինչքա՞ն, ինչո՞ւ, որքա՞ն, ինչի՞ հիման վրա, ի՞նչ նպատակով, ի՞նչ պատճառով և այլն)։

---

[45] *Մ.Աբեղյան*, նշվ. աշխ. էջ 382։

[46] Նույն տեղում։

§ 143. *Տեղի պարագան բայ-ստորոգյալի (կամ դերբայի) այն լրացումն է, որը ցույց է տալիս այն տեղը, որտեղ կատարվում է, դեպի ուր ուղղված է, որտեղից սկսվում է ենթակայի գործողությունը:* Այն պատասխանում է՝ *ո՞ւր, որտե՞ղ, դեպի ո՞ւր, որտեղի՞ց, որտեղո՞վ, մինչև ո՞ւր* և նման հարցերին:

Տեղի պարագան արտահայտվում է տեղի մակբայներով ու նրանց հարաբերակից դերանուններով, գոյականների բոլոր հոլովաձևերով, տեղ ցույց տվող կապերով ու կապի խնդիրներով և բառակապակցություններով:

1. Տեղի պարագան ամենից առաջ արտահայտվում է *տեղի մակբայներով՝ Ամենուրեք* տիրում էր երգ ու ծիծաղ (ՊՂ): Բարձրանում էին *վերև*, իջնում էին *ներքև*, կորուսյալին չէին գտնում (ՍԳ): *Առաջ ու ետ* էին նայում, էլի չէին տեսնում (Ն.տ):

2. *Ցուցական և հարցահարաբերական դերանուններով՝* Ո՞ւր գնացին ծաղիկները. Սուս, քնած են հողի տակ (ՀԹ): *Որտե՞ղ* է ընկած այն քարը հիմի... (Ավ.Իս.):

Չգիտեմ՝ *որտեղի՞ց է* գալիս ջութակի հեկեկանքը տրտում (ՎՏ):

Այնտեղ գործերը վատ չեն, իսկ *այստեղ* շատ են հապաղում: *Այստեղ* ինձ լավ եմ զգում և այլևս *այնտեղ* չեմ վերադառնա (ԳԹ):

3. Տեղի պարագան արտահայտվում է *գոյականի բոլոր հոլովներով.*

Հայցական (ուղղական) - Ուսուցիչը *դասարան է* մտնում՝ թխաչյա ու ցոլակն մանուկներին հայոց գրերը սովորեցնելու (ՀՔ): Եվրոպայից Կոմիտասը վերադարձավ *Հայաստան՝* իր սիրելի ժողովրդին ծառայելու (ԳԹ): Թվում է, թե պանդուխտ եմ ես, Ու երգդ ինձ *տուն* է տանում (ՀԾ): *Հնձան է* մտնում ձեր Դիլան դային... (ՀՍ):

- Դե մեռի՛ր, էլի, *գետինը* մտի՛ր, *Տանը* վե՛ր ընկիր, իլիկ պտտի՛ր (ՀԹ): Այս հոլովով են դրվում մարդու և կենդանիների մարմնի մասերի անվանումներով արտահայտված տեղի պարագաները (Մի բան դրեց *բերանը*, պարկն առավ *ուսը*, փայտն առավ *ձեռն* ու տանից դուրս եկավ):

Տրական հոլովով դրված տեղի պարագան ցույց է տալիս գործողության կատարման կոնկրետ տեղը՝ *Կաքավաբերդի գլխին* տարին բոլոր ամպ է նստում (ԱԲ): *Դռան շեմին* յարիս տեսա, Սոլորվեցի՝ երա՞զ է սա (ժող. երգ): Փերիները *սարի գլխին* հավաքվեցին գիշերով (ՀԹ): Արծանը դրված է *պատվանդանին:*

Տրականով դրվում են նաև մարդու և կենդանիների մարմնի մասերի անվանումներով արտահայտված տեղի պարագաները (Գլխարկը դրեց *գլխին*, թիկնոցն առավ *ուսերին*, ակնոցը դրեց *աչքերին:* Աշուշ էր իջել *ծիու աչքերին:* Եկա՞ծ էր էս բանը իսկի *քո գլխին* (ՀԹ):

Բացառականը ցույց է տալիս այն տեղը, որտեղից սկիզբ է առնում գործողությունը. այն ծառայում է որպես ելակետ: Օրինակներ՝ Տուն էին դառնում գյուղի *աղբյուրից* երեք մայրերը՝ կժերը ուսին (ՍԿ): Թևը ջարդած հավքի նման Սոնան դուրս թռավ *հնձանից* (ԱԲ)... *Գյուղից* սլացան մի խումբ կտրիճներ (ՀԹ): *Էն Թմկա բերդից* Թաթուլն է իջնում (ՀԹ): Հայրենի գյուղի այն *պաղ աղբյուրից* մի կուժ ջուր բերեք (Սարմեն):

Կենդանիների և մարդու մարմնի մասերի անվանումներով տեղի պարագաները նույնպես կարող են դրվել բացառական հոլովով (Այվազովսկին շքանշանները հանեց *շամ վզից* ու ջուրը նետեց (Վագներ)։ Աղջիկը ժամացույցն արծակեց *թևից, վզից* հանեց վզնոցը, մատանին հանեց *մատից* ու պառկեց հանգստանալու (ՊՂ)։

Գործիական հոլով դրված տեղի պարագաները նշում են այն տեղը, որտեղով, որի վրայով, միջով տեղի է ունենում գործողությունը՝ *Մայր Ա-րաքսի ափերով* քայլամոլոր գնում եմ (ՌՊ)։ Անուշ մրմունջով - նիրհած *դաշտերով* Սեղմ օրորվում էր ծիգ քարավանը (Ավ.Իս.)։ ... Անցա յարիս տան *ճամփով* (Ավ.Իս.)։ *Սարերով ու լայն դաշտերով* սլանում էր դիվիզիան (Ժող. երգ)։

Գոյականի *ներգոյական հոլովով* դրվող տեղի պարագաների հաճախականությունը ավելի մեծ է, սա ցույց է տալիս այն տեղը, որի ներսում, որի սահմաններում է կատարվում ենթակայի գործողությունը՝ *Սթնածորում* այժմ էլ Թավուտ անտառներ կան (ԱԲ)։ ... Եվ ես *ապատում և անապատում* Լուռ թափառում եմ՝ հոգիս ծանրացած (Ավ.Իս.)։ Ծաղկել ես *սարում, անտառում, արտում*։ Ուրիշ երգեր են հնչում իմ *արտում* (ՎՏ)։ Չարությունն էր բույն դրել նրա *սրտում* (ՊՂ)։ Մարգարտի հատիկը պահել էր *բերանում*։

4. Տեղի պարագան արտահայտվում է նաև կապական կառույցներով *(մեջ, դեմ, դիմաց, տակ, վրա, ներս, դուրս, դեպի, առաջ, մինչև, միջև, մոտ, ներքո* և այլն)։ Թռչում էր *դեպի արևը*... Ու տղերքը տխուր ու լուռ վերադարձան *դեպի տուն* (ՀԹ)։ *Ամպի տակից* ջուր է գալիս (ՀԹ)։

Այս պարագան արտահայտվում է նաև բառակապակցություններով՝

Ինչպես մի հեղեղ վեր կենար կանգնած, *երկնքի մթնած ամպերից իջ-ներ* ... (ՀԹ)։

Ջանգեզուրի երկնաքեր ժայռերի ծերպերում բույն են դրել արծիվները։

ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ

§ 144. *Ժամանակի պարագան ցույց է տալիս ենթակայի գործողության կատարման ժամանակը, նրա տևողությունը, սկիզբն ու ավարտը*։ Այն արտահայտվում է ժամանակի մակբայներով, գոյականի բոլոր հոլովաձևերով, որոշ անկախ դերբայներով, կապերով ու նրանց խնդիրներով, բառակապակցություններով, այդ թվում՝ դերբայական դարձվածներով ու դարձվածային միավորներով։ Այն պատասխանում է *ե՞րբ, երբվանի՞ց, մինչև ե՞րբ, ինչքա՞ն ժամանակ, քանի՞ ժամով, օրով, տարով* և այլն։

Ժամանակի պարագան արտահայտվում է՝

1. *Ժամանակի մակբայներով*՝ *Վաղուց, վաղուց* ես դու ինձ մոռացել (ՀԹ)։ *Առավոտյան* նա բարձրացավ սարը (ՊՂ)։ *Այժմ* պատասխան պետք է տաս արածներիդ համար։ *Հիմա* եմ հասկանում, թե ի՞նչ էիր ուզում անել։ *Երեկ* հնչեց հեռախոսազանգը։ *Երեկոյան* տուն դարձան դատարկածեռն։

2. *Գոյականի տարբեր հոլովներով՝*

Հայցական (ուղղական) - Այս հոլովով դրվում են հատկապես ժամանակի անունները (*Գիշերը* անձրև եկավ: Ձմռան *մի գիշեր* կար մի հարսանիք (ՀԹ): *Մի վայրկյան* ազատ ժամանակ չեմ ունենում: *Ամեն տարի* բնական մի աղետ լինում է):

Տրականով նույնպես արտահայտվում է ժամանակի պարագան. օրինակ՝ *Ամսի վերջին* ստուգարքներ են լինում: Դասերն սկսվում են *ժամը ութ անց կեսին:* Ավարտաճառերի պաշտպանությունը տեղի կունենա *հունիսին:*

Բացառականը ցույց է տալիս այն ժամանակը, որից սկսվում է գործողությունը (Մենք ամենքս հյուր ենք կյանքում Մեր *ծննդյան փուչ օրից* (ՀԹ): *Երկու շաբաթից* կսկսվեն քննությունները: Նա *մանկությունից* էր արվեստին սիրահար):

Գործիականով դրվող ժամանակի պարագան ավելի տևական գործողություն է մատնանշում՝ Սոված, պատռած շորերով Կորչում էր նա *օրերով* (ՀԹ): *Դարերով* ենք մաքառել թշնամիների դեմ: Գալիս էին աշկարա *օրը ցերեկով* (ՂԱ): *Ժուկով-ժամանակով* երկրի վրա եղել է մի բարի թագավոր (Ժող.հեք.):

Ներգոյական հոլովով դրված պարագաները նշում են այն ժամանակը, որի ընթացքում է կատարվում գործողությունը: Օրինակ՝ Ավարայրի ճակատամարտը տեղի է ունեցել *հինգերորդ դարում: Այդ դարում* էլ ստեղծվել են հայոց գրերը: Շինարարները գործը ավարտեցին *մեկ տարում:* Դեռ ախ չէր քաշել *նա իր օրում (ՀԹ): Ներկա օրերում* էլ ի՞նչ սև քնար (ՄՆ):

3. Որոշ անկախ դերբայները նույնպես կարող են հանդես գալ ժամանակի պարագայի կիրառությամբ: *Համակատարով* (Նա ինձ հանդիպեց *աշխատելիս: Ուտելիս* չեն խոսում): Ինչպես այս, այնպես էլ անորոշ, հարակատար դերբայները ժամանակի պարագայի պաշտոնում մեծ մասամբ հանդես են գալիս դերբայական դարձվածներում՝

Մանկությունս հիշելիս՝ սիրտս լցվում է գինով.
Ես մի ընկեր ունեի Լիպո անունով (ԵՉ):

Օրինակներ մյուս դերբայներով՝ *Հասնելով բերդի ավերակներին՝* նստեցին հանգստանալու: *Ավարտելով արտագնա աշխատանքը՝* տուն վերադարձա: Դեռ ջուրը *չտեսած՝* մի բոբիկանա (Ժող.): *Ձին չառած՝* մսուր չեն կապի (Ժող.):

4. Ժամանակի պարագան արտահայտվում է նաև *երբ, երբևէ, երբևիցե* դերանուններով՝ *Երբ* կհոգնես կգազազես աշխարհից, Դարձիր իմ մոտ (ԿՏ): Էն *ե՞րբ* էր՝ Անուշն իր կուժը առավ, Աղբյուրը գնաց ու ետ չդառավ (ՀԹ): Երբևէ Իտալիայում չեմ եղել (ԳԹ): *Երբևիցե* դու քեզ հարց տվե՞լ ես:

5. Ժամանակի պարագան ավելի հաճախ հանդես է գալիս կապային կառույցներով. այս դեպքում կապի խնդիրների հետ մեծ մասամբ դրվում են՝ *առաջ, հետո, անց, ժամանակ, վրա, անգամ, ի վեր, միջոցին, մոտ, նախքան, պահին, օրոք* և նման կապեր ու կապական բառեր և ցույց են տալիս ժամանակային ամենատարբեր հարաբերություններ՝ սկիզբ, ըն-

թացք, վերջ, միաժամանակություն, տարաժամանակություն՝ *Ձանգը տալուն պես* մտանք լսարան: *Վերջին խոսքի վրա* զանգը հնչեց: *Մինչև ուշ գիշեր* աշխատում էի: *Նախքան համալսարան ընդունվելս* բանակ գնացի և վերադարձա միայն *հինգ տարի անց: Այդ օրից ի վեր* շատ բան է փոխվել իմ կյանքում: Ավելի հաճախ գործածվում է *ժամանակ* կապական բառը՝ *Ձմեռ ժամանակ* տաք են հագնվում: Դասախոսի *խոսելու ժամանակ* հարցեր չեն տալիս:

ՁԵՎԻ ՊԱՐԱԳԱ

§ 145. *Ձևի պարագան ցույց է տալիս, թե ինչպես, ինչ եղանակով, ինչ կերպ ու ինչ ձևով է կատարվում գործողությունը:* Այս պարագան արտահայտվելու ավելի լայն հնարավորություններ ունի: Այն արտահայտվում է ձևի մակբայներով, որակական ածականներով, ցուցական և հարցահարաբերական դերանուններով, գոյականի և անորոշ դերբայի գործիական հոլովներով, հարակատար դերբայով, կապերով, կապական բառերով ու կապի խնդիրներով և բառակապակցության երկու տեսակներով՝ վերաիմաստավորված և ոչ վերաիմաստավորված: Ձևի պարագան պատասխանում է *ինչպե՞ս, ի՞նչ ձևով, ի՞նչ կերպ* հարցերին:

Ձևի պարագան ամենից առաջ արտահայտվում է՝

1. *Ձևի մակբայներով* և ցույց տալիս գործողության բազմազան հատկանիշներ՝

Բարբարոսներ շատ կգան ու կանցնեն *անհետ.*
Արքայական խոսքը մեր կմնա *հավետ* (ՎՏ):

Դանդաղ է քայլում հոգնատանջ իմ ձին (ՎՏ): Ուզում եմ մեկին *քնքշորեն* սիրել (ՎՏ): Ծովն է մտնում *գաղտագողի* ամեն գիշեր մի տղա (ՀԹ): Թիկն էր տվել քարին, թրջում էր հացը պաղ ջրի մեջ և *դանդաղ* կրծում (ԱԲ): *Անդադար* խոսում էին թշնամու հարձակումից (ՀՔ): Արևը փայլում էր *մերթ ընդ մերթ* (ՎԱ):

2. Ձևի պարագայի պաշտոնում առատորեն հանդես են գալիս նաև ածականները, որոնք դրվելով բայ-ստորոգյալների վրա, ցույց են տալիս գործողության որակը, հատկանիշը՝ Կանգնիր *հպարտ* որպես լույս լեռն է մեր կանգուն (ՎՏ): *Անուշ* նիրհեցին ծով, անտառ ու լեռ: Նընջեցին *անուշ* երկինք ու երկիր, Աչքերդ *ամուր* փակիր, ինձ *քնքուշ* գրկիր (ԳԹ): *Ծանր* նստել է քարափը ծորում (ՀՍ):

Ճիշտ է, բայերի հետ գործածվելիս որակական ածականները *ձևի* պարագայի պաշտոն են կատարում, հանդես են գալիս *մակբայաբար,* բայց որպես խոսքի մաս մնում են ածականներ:

3. Դերբայներից ձևի պարագայի գործածությամբ հանդես է գալիս *անորոշի գործիական հոլովը՝ երկու փետուր օրորալով* վայր ընկան աշնան տերևի նման (ԱԲ): Հնձանի առաջ *խոխոջալով* հոսում էր առվակը (ԱԲ): *Երգելով* իջավ բեմից ու *շշնջալով* ասաց... (ՍԳ):

Քանի որ *հարակատար դերբայը* ածականի նման հատկանշային իմաստ ունի, այդ պատճառով էլ ձևի պարագայի պաշտոնում մեծ հաճախականություն ունի՝ *Հոգնած* նայում եմ ես ճամփաներին, Սերմնացանները չդարձան տուն (ԳՍ): Ես քեզնից *դառնացած* հեռացա... (ՎՏ): ... Պիտի պարեն *խելագարված (ԵՉ):* ... *Հոգնած* նստեց կողքիս (ԱԲ):

Ծանոթություն - Ձևի պարագայի դեր են կատարում նաև այնպիսի կառույցներ, որտեղ հարակատար դերբայը զեղչված է լինում, բայց մտքից հասկացվում է. օրինակ՝ Ներս մտավ երեխան՝ *ծաղիկները ձեռքին* (զեղչված է *բռնած* դերբայը): Հարս ու աղջիկ՝ *կժերը ուսերին* (զեղչված է *դրած* դերբայը) գնում էին ջրի: Բոստանից վերադառնում էր հայրս՝ *բահը ուսին* (զեղչված է *դրած* դերբայ): Դիլան դային նստել էր ու միտք էր անում՝ ականջը սիմինդրի տերևների խշշոցին (զեղչված է *պահած* դերբայը) (ԱԲ):

4. Ձևի պարագայի դերում հանդես են գալիս նաև *ցուցական և հարցահարաբերական* դերանունները՝

Ախր ես *ինչպե՞ս* վեր կենամ, գնամ,
Ախր ես *ինչպե՞ս* ուրիշ տեղ մնամ...
Ախր ես *ինչպե՞ս* ապրեմ՝ առանց ինձ (ՀՍ):

Դու ինձ *այնպես* ես սիրում, Որ կարծես չես սիրում (Ավ.Իս.):

Էսպես է ասել հնուց էդ մասին Ֆարսի բլբուլը՝ անման Ֆիրդուսին (ՀՄ):

5. Ձևի պարագայի դերում կարող են հանդես գալ նաև գոյականի *գործիական և ներգոյական* հոլովածները՝ Մեր սուրը *փառքով* դրեցինք պատյան (Ավ.Իս.): Ես էլ *ժպիտով* մահիս կգնամ (ՀԾ): ... Բայց ծնվողը ծնվում է *պայքարով, պայքարով է* մեռնում և մեռնողը (ԵՉ): ... *Ծեծով, կոծով, հրով, սրով* Ծով Արագի ափը հասանք (ՀՄ):

Ավելի շատ կիրառելի է վերացական գոյականների գործիական հոլովը՝ *քաջությամբ* հաղթեցին, *ուրախությամբ* ընդունեցին, *հետաքրքրությամբ* ուսումնասիրեցին, *հեշտությամբ* համաձայնեցին, *դժվարությամբ* լուծվեցին և այլն:

Գոյականի ներգոյական հոլովը ավելի սակավ կիրառություն ունի այս պաշտոնում (երեխան դասը *մտքում* է կարդում: Մեր հարևանը *քթում է* խոսում: Սանամ մայրիկը կորած որդու մասին ուրիշներին չի պատմում. նրա հիշատակը *արտում է* պահում (ՊՂ): Հասկանում եմ. չես արտահայտվում. դու ինձ *սրտում* ես սիրում (ՊՂ):

Բերված բոլոր օրինակներում ընդգծված պարագաների համար տրվում է ոչ թե *որտե՞ղ*, այլ *ինչպե՞ս* հարցը, հետևաբար. աներկբայելի է, որ դրանք ոչ թե տեղի պարագաներ են, այլ՝ ձևի:

Գոյականների կրկնությամբ կազմված մակբայներով նույնպես ձևի պարագաներ են կազմվում՝ Եվ անապակ գինին *շիթ առ շիթ* ծորում էր մատների արանքով (ԱԲ): Եվ կարդում էր ապագայի ոսկետառ գիրքը՝ *էջ առ էջ* (Ավ.Իս.):

6. Չևի պարագան արտահայտվում է նաև կապային կառույցներով *(պես, նման, ինչպես, որպես, անկախ, վրա, տակ)* և նման կապերով ու կապական բառերով՝ Սանկության օրեր, *երազի նման* անցաք, գնացիք (ՄՆ): Նայեց, նայեց Սայաթ-Նովան, *ամպի նման* տխուր մնաց (ԵՉ): *Արևի պես,* երկի՛ր իմ, կմնաս վառման (ՎՏ): Իմ ոսկի՛ օրե՛ր, ո՞ւր եք սլանում Անմիտ, խելահեղ *ճժույգների պես* (ՀՇ): Գյուղի գգիրը *բեղի տակ* ծիծաղում էր ու *քթի տակ* բաներ մռթմռթում (ՍԽ): Քայլում էր *թաթերի վրա:* Հարցերը լուծում էր *ոտքի վրա: Մեջքի վրա պառկած՝* գուշակություններ էր անում: Չէր կարող *առանց հայրենիքի ապրել...* ու վերադարձավ (ԳԹ):

7. Չևի պարագաների պաշտոնում մեծ կիրառություն ունեն ինչպես *սովորական բառակապակցությունները,* այնպես էլ *դերբայական դարձվածներն ու դարձվածային միավորները:* Ահա նման օրինակներ՝

Մանուշակներ ոտքերիս ու շուշաններ ծեռքերիս,
Ու վարդերը այտերիս ու գարունը կրծքիս տակ...
Սարից իջա ես քաղաք (ՀՇ):

Ու քայլեցի *խայտալով ու շաղ տալով մայթերին*
Մանուշակներ ու վարդեր ու շուշաններ ծյունաթույթ (ՀՇ):

Հայացքն ուղղած դեպի երկինքը անսահման՝
Կանգնել էր Կոմիտասը, *ինչպես տաճարի սյուն* (ԳՍ):

Աշխարհից հեռու մի գյուղում, *եղեգնյա մի սրինգ կտրած,*
Արև է երգել ու գարուն այս հիվանդ, հանճարեղ պատանին (ԵՉ):

Ուրիշների պնակները լիզելով՝ առաջ գնաց: *Ընկերոջ տակը փորելով՝* աթոռի տիրացավ (Ոզնի):

ՆՊԱՏԱԿԻ ՊԱՐԱԳԱ

§ 146. Այս պարագան ցույց է տալիս գործողության կատարման նպատակը, պատասխանում է *ինչո՞ւ, ինչի՞ համար, ի՞նչ նպատակով* հարցերին և արտահայտվում է՝

1. *Անորոշ դերբայի տրականի* հոլովով՝ Կոմիտասը, Մանթաշովի հովանավորությամբ գնաց Բեռլին *սովորելու:* Գյուղ էի գնացել *հանգստանալու:*

2. *Անորոշ դերբայով կազմված դերբայական դարձվածներով՝* Վարագներն իջնում էին՝ *ջուր խմելու:* Գյուղն էին իջել հովիվ պատանիք՝ *աղջիկ տեսնելու,* պարի ու կոխի (ՀԹ): Գնացել էի Փարիզ՝ *զեկուցում կարդալու:*

3. *Գոյականի տրական հոլովով՝* Գյուղն էին իջել հովիվ պատանիք՝ աղջիկ տեսնելու, *պարի ու կոխի* (ՀԹ): Երեխան գնաց *հացի:* Գնացի *զեկուցման:*

4. Արտահայտվում է նաև *համուն, համար, նպատակով* կապերով ու նրանց խնդիրներով՝ Կոմիտասին *բուժման ուղարկելու նպատակով* հանձնաժողով կազմակերպվեց: *Հանուն ինչի՞* ենք պայքարում: *Նպատակին հասնելու համար* միջոցների մեջ խտրություն չէր դնում (Ազգ):

ՊԱՏՃԱՌԻ ՊԱՐԱԳԱ

§ 147. *Ստորոգյալի այս լրացումը նշում է այն հանգամանքը, որը պատճառ է դառնում ենթակայի գործողության կատարման համար.* այն արտահայտվում է գոյականի *բացառական, գործիական, անորոշ դերբայի բացառական* հոլովներով, *կապական կառույցներով, դերբայական դարձվածներով և* պատասխանում է *ինչո՞ւ, ի՞նչ պատճառով, ինչի՞ց* հարցերին: Պատճառի պարագան արտահայտվում է՝

1. *Գոյականի բացառական հոլովով՝*

Խեղճը դողալով անհույս կռացավ, *Դարդից* չորացավ, ուռենի դարձավ (ՀԹ): *Վշտից ու սարսափից* մարդիկ խելագարվում էին, բայց փաշայի արնածարավ հոգին չէր հագենում (ՊՋ): Ա՜խ , այն քարերը, Ծանր քարերը, Ամռան արևից շիկացել, կիզվել, Մի կաթիլ *ջրի տենչից* այրվել են, *Սառնամանիքից* ճաքվել, կիսվել, *Ձյունամրրիկից* հողմահարվել են (ՎՂ): Լեզուն կարող է *սարսափից* լալկվել, կապ ընկնել *ահից* (ՊՍ):

2. Պատճառի պարագան արտահայտվում է նաև *անորոշ դերբայի բացառական* հոլովով՝ *Շտապելուց* թև են առել, դարձել թեթև թիթեռներ (ՀԹ): *Շատ կարդալուց* տեսողությունը վատացել էր: *Երկար քայլելուց* հոգնել էր: *Քնելուց* թմրել էր և այլն:

3. Այս պարագան արտահայտվում է նաև *պատճառով, հետևանքով, ծեռքից, երեսից* կապական բառերով՝ *Առատ ծյան հետևանքով* հեղեղատներ առաջացան: *Կարկուտի պատճառով* ծառապտուղը սակավ եղավ: Արթուրը տուժեց *ընկերոջ երեսից:*

4. Բառակապակցություններով՝

Ցնծության ծայնից, ծափերի զարկից
Շարժվում են, դողում պատեր ու օճորք (ՀԹ):

Գոնե այդ գիշեր *իր կրած բոլոր տառապանքների պատճառով* Սյուզանի բոլոր մեղքերը կարելի է քաված համարել (ՎՓ): Մամիկոնյան իշխանը, *վաղուց հասկացած լինելով այդ ճշմարտությունը,* նրանց թողել էր իրենց կամքին (Րաֆ.):

Ընդհանրապես պետք է խուսափել *համար, շնորհիվ, առթիվ* կապերը գործածել պատճառի պարագաների նպատակով: Ինչպես կտեսնենք, այդ կապերը մասնակցում են *հիմունքի* պարագաների կազմությանը. *համար*-ը՝ նաև նպատակի:

Նշենք նաև, որ հաճախ պատճառի պարագան շփոթում են նաև ներգործող խնդրի հետ: Սրանց տարբերակման հիմունքը տե՛ս «Ներգործման խնդրի» տակ՝ § 75:

ՀԻՄՈՒՆՔԻ ՊԱՐԱԳԱ

§ 148. *Սա բայական անդամի այն լրացումն է, որ ցույց է տալիս գործողության կատարման հիմունքը, այսինքն՝ այն առարկան, հանգամանքը, որը նախադրյալ է հանդիսանում որևէ գործողության, եղելության իրակա-*

Նացման համար: Այն դատողության, մտքի փաստական հիմունքն է: Պատասխանում է *ինչի՞ց, ի՞նչ հիմունքով, ինչի՞ հիման վրա* հարցերին:

Հիմունքի պարագան արտահայտվում է՝

1. *Գոյականի բացառական և գործիական հոլովներով*՝ Օտար քաղաքում կարողանում էի կողմնորոշվել խանութների *ցուցափեղկերից ու ցուցանակներից* (Գար.): Հրաչյա Աճառյանը իր՝ քառասուն տարի չտեսած ընկերոջը ճանաչում է դռան ետևից *լսվող ձայնից* (Հուշ): Ոստիկանները դեռ հեռվից ճանաչվում են *իրենց համազգեստով:* Ներսես Մեծը *կայսեր հրամանով* աքսորված էր Պատմոս անմարդաբնակ կղզին (Րաֆ.): Տղան քաղաք մեկնեց *հոր պահանջով:*

2. Հիմունքի պարագան արտահայտվում է նաև *ըստ, շնորհիվ, հիման վրա, առիթով, համաձայն, համեմատ, նայած, կարծիքով* կապերով ու կապի խնդիրներով՝ *Ըստ ռեկտորի կարգադրության*՝ քննությունները ավարտվելու են հուլիսի սկզբին: *Համաձայն նախարարության որոշման*՝ բարձրանալու են կենսաթոշակները: Արթուրը խնդիրը լուծեց *ուսուցչի բացատրության հիման վրա: Իմ կարծիքով*՝ նա արժանի է դրան:

Համար կապը նույնպես կարող է հիմունքի պարագա ձևավորել. օրինակ՝ «Իր *ընկերասիրության համար* Արթուրին բոլորն են սիրում: *Հաջող ելույթի համար* շնորհավորեցին ու պատվոգիր հանձնեցին զեկուցողին:

3. Բերված օրինակներից էլ երևում է, որ հիմունքի պարագան արտահայտվում է նաև *բառակապակցություններով*՝ *Երևանի քաղաքապետարանի որոշմամբ* ապրիլ ամիսը հայտարարված է շաբաթօրյակի ամիս (ԵԵ): *Ըստ ՀՀ Ազգային ժողովի միաձայն որոշման*՝ նախագահական նոր ընտրություններ են կազմակերպվելու:

Երբեմն անհրաժեշտ է լինում հիմունքի պարագան տրոհել *բութ* նշանով: Օրինակ՝ «Իմ պատկերացմամբ՝ արված առաջարկությունը ընդունելի պետք է համարել»:

ՋԻՋՄԱՆ (ՀԱԿԱՌԱԿ ՀԻՄՈՒՆՔԻ) ՊԱՐԱԳԱ

§ 149. Հակառակ նախորդ պարագայի, *զիջման պարագան ցույց է տալիս, որ գործողությունը կատարվում է հակառակ որևէ կարգադրության, հիմունքի, պայմանի:* Այսինքն՝ դա այն հիմունքն է, որին չի համապատասխանում հետևանքը: Այս պարագան հիմնականում արտահայտվում է *կապերով ու իրենց խնդիրներով.* ահա այդ կապերը՝ *հակառակ, չնայած, չնայելով, փոխանակ, փոխարեն, թեև:* Պատասխանում է *հակառակ ինչի՞, չնայած ինչի՞* հարցերին:

Զիջման պարագան իր իմաստով հակադրվում է *հիմունքի, պատճառի և պայմանի* պարագաներին: Դա լավ է երևում հետևյալ հակադիր օրինակներում՝

ա) «*Համաձայն իմ սովորության*՝ դասերից հետո գրադարան եմ գնում» (հիմունք), և «*Հակառակ իմ սովորության*՝ դասերից հետո գրադարան չգնացի» (հակառակ հիմունք):

բ) «*Ձյան ու բքի պատճառով* Գեղամը գյուղ չգնաց» (պատճառի) և «*Ձնայած ձյանն ու բքին*՝ Գեղամը գյուղ գնաց» (հակառակ հիմունք, զիջում):

գ) «Մենք պետք է հանդիպեինք նրա ծնողների *թույլտվության պայմանով* միայն» (պայման) և «Մենք չհանդիպեցինք՝ *չնայած նրա ծնողների թույլտվությանը*» (հակառակ հիմունք, զիջում):

Բերենք հակառակ հիմունքի պարագաների բնագրային օրինակներ.

Եվ *արտերի փոխանակ*՝ Հորովելը գեղջուկի դահլիճներում է հնչում.

Բաց երկնքի փոխանակ՝ Շրթունքները պանդուխտի բեմերից են մրմնջում (ՊՍ): *Հակառակ մեր ցանկության*՝ կառապանը թեքվեց դեպի ձախ (ՎՓ): *Ի հակադրություն եղած փաստերի*՝ դատարանը սխալ վճիռ կայացրեց (Մամուլ): *Հեղափոխական երգիչ չլինելով հանդերձ*՝ Վարուժանը համոզված էր սակայն, որ մի օր կճայթի ամպրոպը (ՊՁ):

Հակառակ հիմունքի պարագաները տրոհվում են *բուք* նշանով:

ՊԱՅՄԱՆԻ ՊԱՐԱԳԱ

§ 150. *Պայմանի պարագան նշում է այն հանգամանքը, որով պայմանավորված է ենթակայի գործողությունը:* Այն հիմնականում արտահայտվում է *անորոշ դերբայի* գործիական հոլովով, ինչպես նաև *դեպքում* կապական բառով. օրինակներ՝ «*Լավ աշխատելու դեպքում* միայն արդյունքի կհասնես»: «Միայն *դասերից չբացակայելով* հաջողություն կունենաս» և «*Միայն դասերից չբացակայելու դեպքում* հաջողության կհասնես»:

Արտահայտվում է նաև անորոշ դերբայի սեռական-տրական հոլովով և *պայմանով* բառով՝ Կգամ քեզ մոտ՝ *գիրքս վերադարձնելու պայմանով: Շուտ վերադառնալու պայմանով* միայն կարող եմ ընկերակցել քեզ: Ասածիդ համաձայն կլինեմ՝ *խոստումդ կատարելու պայմանով:*

Պայմանի պարագան իմաստային առումով շատ չի հեռանում *հիմունքի, որոշ* դեպքերում էլ՝ *ժամանակի պարագաներից*՝

Արծակուրդ ստանալու դեպքում գյուղ կգնամ (պայման):

Արծակուրդ ստանալիս գյուղ կգնամ (ժամանակ):

Արծակուրդ ստանալու հիմնավորումով գյուղ կգնամ (հիմունք):

ՉԱՓ ՈՒ ՔԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ

§151. *Չափ ու քանակի պարագան բնութագրում է գործողությունը՝ չափի, քանակի, տևողության, աստիճանի տեսակետից.* արտահայտվում է *չափ ու քանակի մակբայներով, գոյականի տարբեր հոլովածներով,* հատկանիշ նշող դերանուններով, թվականներով, հոլովակապային կառույցներով: ինչպես նաև բառակապակցություններով: Պատասխանում է, *ինչքա՞ն,*

որքա՞ն, ի՞նչ չափով, քանի՞ անգամ հարցերին:

1. *Չափ ու քանակի մակբայներով*՝ Դու *նորից եկել ես,* ի՞նչ անեմ (ՎՏ): *Նորից* չեն սիրում, սիրում են *կրկին* (ՊՍ): *Կրկին* եկար, անո՛ւշ գարուն (ՎՏ):

- Չէ, Անո՛ւշ, *քիչ էլ, մի քիչ էլ* մնա (ՀԹ): Շարմաղ բիբին *անընդհատ* լալիս էր (ԱԲ):

Բազմիցս խոսվել է այդ մասին: Ձայրացավ *անչափ շատ* ուշանալու համար: Ամանը լցվել էր *կիսով չափ:*

2. *Ցուցական և հարցահարաբերական դերանուններով*՝ Սպասեցինք *այնքան,* մինչև ներկայացումն ավարտվեց: *Էնքան* մնացի, աչքս ջուր դառավ (ՀԹ): *Այսքան* սպասել կլինի՞: *Որքա՞ն* ենք մենք խաղացել, իրար սիրել ու ծեծել (ՀԹ): *Ինչքան* կուզեք, *այնքան* կստանաք:

3. Չափ ու քանակի պարագան արտահայտվում է նաև *թվականների ու գոյականների տարբեր հոլովների զուգորդմամբ*՝ Այս գիրքը արժե *հազար դրամ:* Գիշերով անցանք մոտ *հիսուն կիլոմետր:* Խաղողը վաճառվում է *հարյուր դրամով:* Թվականների հետ հաճախ գործածվում է *անգամ* բառը՝ Արմեն Տիգրանյանի «Անուշը» լսել եմ մի *երեսուն անգամ: Տասն անգամ* չափիր, *մեկ անգամ կտրիր (Ժող):*

> *Ծանոթություն* - Պետք է միշտ խուսափել *բազմիցս անգամ* կապակցության գործածումից, որովհետև *բազմիցս* բառի իմաստի մեջ արդեն *անգամ*-ը կա:

ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԱԳԱ

§ 152. Որոշ լեզվաբաններ միասնության պարագան համարում են *միասնության խնդիր:* Բայական անդամի այս լրացումը մի տեսակ երկվություն ունի. մի դեպքում այն խնդրային իմաստով է հանդես գալիս, մեկ այլ դեպքում՝ պարագայական: Այս դեպքում պետք է ելնել թե՛ նախադասության իմաստից, հաշվի առնելով նրա տրամաբանական կողմը, և թե՛ հարցադրումից. օրինակ՝ «Նույն հարթակում ապրում ենք *երկու հարևանների հետ*»: «Տղաս ամուսնացավ իր սիրած *աղջկա հետ»:* «Գնացքում ծանոթացել էի *երկու ռուս տղաների հետ. միասին* էինք ճաշում»: Բերված նախադասություններում ընդգծված լրացումները ավելի շուտ խնդիրներ են: Բայց միասնությունը ավելի շուտ գործողության հանգամանք է ցույց տալիս և ընդգծում է, որ ենթական գործողությունը մենակ չի կատարում:

Միասնության պարագան արտահայտվում է գոյականի *գործիական հոլովով (ընկերներով* որսի գնացինք: *Հարևաններով այգի հիմնեցինք:* Մեր *երգերով,* մեր *վերքերով* դար ու դարեր քայլենք պիտի (ՍԿ): *Թիկնապահներով* առաջ սլացավ Ձորիակը (ԴԴ):

Այն ձևավորվում է նաև *հետ, հանդերձ, միասին* կապերով՝ Գործը կատարեցինք *ընկերներով միասին:* ... Այս հմուտ, հանճարեղ լոռեցին *Հոմերի Գյոթեի հետ* մի օր հավասար նստել է քեֆի (ԵՉ): Երբեմն էլ *հետ և միասին*

կապերը կիրառվում են միասին՝ ավելի սաստկացնելով խոսքի ուժը (Նա յուր զինակիցների *հետ միասին* իջաւ վերին լանջերից (Մուր.)։

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ

§ 153. Հասկանալի է, որ լեզուն իր ամբողջության մեջ ավելի բարդ համակարգ է՝ բազմաբարդ կառույց, և քերականությունը ի վիճակի չէ լեզվում դրսևորվող բոլոր իրողություններն ու երևույթները կանոնակարգելու և անվանելու։ Լեզվական ոչ բոլոր երևույթներն են, որ քերականորեն հնարավոր է կաղապարել, կանոնակարգել ու սահմանել։ Լեզվում կան շատ իրողություններ, որ իրենց բազմազանության պատճառով մնում են անսահմանելի։ Այդ է պատճառը, որ լեզվական որոշ երևույթների վերաբերյալ տարբեր մոտեցումներ ու սահմանումներ կան տարբեր մասնագետների կողմից։ Այս բանը շատ լավ երևում է հատկապես *խնդիրների և պարագաների* տեսակները որոշելու, դասակարգելու և սահմանելու հարցերում ևս։ Քանի որ բայերը հազարավոր իմաստներ ունեն, և դժվար է դրանք համակարգի բերել ու դրանց լրացումներին կոնկրետ ու սպառիչ անվանումներ տալ, այդ պատճառով էլ լեզվաբաններն աշխատում են, որքան հնարավոր է, դրանք համախմբել, համակարգել ինչ-որ տեսակների մեջ և ինչ-ինչ անուններ տալ։ Օրինակ՝ եթե դպրոցական և բուհական դասագրքերում նշվում են խնդիրների 5-6, պարագաների 8-9 տեսակներ, ապա լեզվաբան Վ.Առաքելյանը նշում է խնդիրների 36, իսկ պարագաների 39 տեսակներ (Տե՛ս Վ.Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հատոր Ա)։ Ինչ խոսք, ուսուցման տեսակետից նման մոտեցումը աննպատակահարմար է և անընդունելի։

Ահա այս տեսակետից էլ երկիմաստ, եռիմաստ և բազմիմաստ խնդիրներն ու պարագաները նպատակահարմար է կոչել ընդհանրական։

Ասվածները ցույց տանք օրինակներով։ Այսպես՝ Պ.Սևակի հետևյալ նախադասության բայական լրացումներին ի՞նչ անուն տալ՝

Քո *Մասիս հորով, քո Արաքս մորով,* Մեծանաս *դարով,* Երևա՛ն։

Թերևս *մեծանաս դարով* կապակցությունը կարելի է դիտել թե՛ *ձևի* (ինչպե՞ս) և թե՛ *չափ ու քանակի* (ինչքա՞ն) պարագա, իսկ *Մասիս հորով և Արաքս մորով* լրացումները կարելի է ընդունել և՛ *ձևի, և՛ միասնության* պարագաներ։

Կամ ի՞նչ անուն տալ հետևյալ պարագային՝ «Երեխաները պարում են *երաժշտության հնչյունների տակ»։*

Ինչպե՞ս էին պարում (պարելու ձև չկա).

Որտե՞ղ էին պարում (տեղը բոլորովին չի ընկալվում).

Ե՞րբ էին պարում (ժամանակի հարցը ևս բացառվում է).

Գուցե երաժշտության հե՞տ (միասնություն էլ չկա)։

Ուրեմն՝ մնում է այն անվանել *ընդհանրական պարագա. մի անվանում,* որի տակ կարելի է մի քանի իմաստներ համատեղել։

Նմանատիպ այլ օրինակներ.

Բժիշկը *գործիքով* զննեց հիվանդին: *Դանակով* հեռացրեց կոշտուկը (ինչպե՞ս, թե՞ ինչով):

Կամ ինչ անուններ տալ հետևյալ լրացումներին՝

Դիլանը գլուխը հանեց *դռան ծայրին*:

Ելացա խնդուն *փառքիդ:* Դու անուշ *ժպտում ես ինձ:*

Վազողն անցավ *բոլորից:* Պանիրը վազում էր *շների հետևից*:

Կառչում է *նրանից:* Հարցնում է *հորից:* Խնդրեց *ընկերոջից:* Աղջիկները ծիծաղում էին իրենց *ընկերուհիների վրա:* Զարմանում եմ քո *միամտության վրա* և այլն:

Նման լրացումների մասին Ռ.Իշխանյանը իրավացիորեն գրում է. «Այսպիսի օրինակներ կարելի է շատ բերել. հնարավոր է լրացումների մի նոր տեսակ կամ տեսակներ առանձնացնել, բայց դա էլ չի փրկի. միևնույն է, կլինեն լրացումներ, որոնք նշված տեսակներից ոչ մեկին չեն վերագրվի... Նախադասությունների վերլուծման ժամանակ պետք է նշել այսպիսի բազմիմաստությունը»[47]:

Ահա *իմաստային այդ բազմիմաստությունն է, որ նպատակահարմար ենք գտնում* կոչել ընդհանրական անվանումով:

Չմոռանանք, որ Մ.Աբեղյանը և Մ.Ասատրյանը ընդունում են *ընդհանրական մակբայներ,* որպես մակբայների առանձին տեսակ, հետևաբար նման մակբայներով կազմված պարագաներն էլ կարելի է կոչել *ընդհանրական պարագաներ:* Այսպես՝ *արտաքուստ, ներքուստ* մակբայների մեջ *տեղի* իմաստի հետ կա նաև *ձևի* իմաստ: Նույնն էլ՝ *տեղնուտեղը, դեմ առ դեմ, դեմ հանդիման, դեմդիմաց:* Այդպես էլ՝ *իսկույն, րոպեապես, անմիջապես, վայրկենաբար, ստեպ-ստեպ, կրկին, հաճախ, շուտով, անընդհատ, մերթ ընդ մերթ* մակբայներում և դրանցով կազմված պարագաներում համատեղում են *ժամանակի և ձևի* իմաստները և այլն:

ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

§ 154. Խոսքը ոճավորելու, բառը ընդգծելու, շեշտելու, ինչպես նաև բանաստեղծությունը ռիթմավորելու համար կարևոր նշանակություն ունի նաև պարագաների շարադասությունը: Ճիշտ է, պարագաների շարադասությունը հիմնականում պայմանավորված է ստորոգյալին մոտիկ լինելու, նրանից անմիջապես առաջ կամ հետո դրվելու հանգամանքով, բայց որոշ պարագաներ երբեմն էլ անցնում են նախադասության սկիզբը՝ հեռանալով ստորոգյալներից. դա կատարվում է տվյալ պարագան ավելի շեշտելու, ընդգծելու նպատակով:

Ժամանակակից հայերենում՝ խոսքի մեջ, պարագաների տեղը խիստ որոշակի չէ. պարագաները մեծ մասամբ ունեն *ազատ շարադասություն,* բայց նայած խոսքի բնույթին, նախադասության կառուցվածքին, խոսողի

---

[47] *Ռ.Իշխանյան* նշվ. աշխ., էջ 236-237:

նպատակադրվածությանը, պարագաները կարող են շարադասական բազում ձևեր ստանալ: Դա կախված է նաև այն բանից, թե ինչ խոսքի մասով է արտահայտված տվյալ պարագան: Այնուամենայնիվ, որոշ պարագաներ խոսքում ունեն իրենց *նախընտրելի* տեղը, և դրա տեղափոխությունը դիտվում է որպես շ ր ջ ու ն ու թ յ ու ն:

Այսպես՝ տեղի, ժամանակի, պատճառի, հիմունքի և հակառակ հիմունքի պարագաները հիմնականում ստորոգյալների նկատմամբ *նախադաս դիրք ունեն:*

Տեղի պարագան, դրվելով նախադասության սկզբում, խոսողի ուշադրությունը հրավիրում է այն հանգամանքի վրա, թե *որտեղ* է կատարվում գործողությունը, կամ *որտեղից* է բխում, սկիզբ առնում (*Երևանում* տեղի ունեցավ Սփյուռքի և Հայաստանի գրողների համատեղ գիտաժողովը: *Արտասահմանից* հարյուրից ավելի գրողներ ու գրաքննադատներ էին եկել (ԳԹ): *Էն Թմկա բերդից* Թաթուլն է իջնում (ՀԹ): *Ամպի տակից* ջուր է գալի (ՀԹ): *Դռան մոտ* կանգնած էր թրջված շունը:

Եթե նույն նախադասության մեջ *ելման և ժամանման* կամ *ուղևորման* իմաստ ունեցող տեղի պարագաներ կան, նախ դրվում է *ելման* պարագան, որին հաջորդում է *ժամանման կամ ուղևորման պարագան*՝ Մի ռուս գեներալ *կովկաս լեռներից,* Մի անգամ *դեպի Թիֆլիս* էր գալիս (Լերմոնտով թարգմ.): *Աջից* քարքարոտ մի ճամփա պոկվում է *մայր ուղուց* և մտնում *ծորակ* (ՍԳ):

Եթե նախադասության մեջ տեղի պարագան արտահայտված է *տեղի մակբայներով* կամ *դերանուններով,* դրանք մեծ մասամբ դրվում են նախադասության *սկզբում (Ամենուրեք* եռում է աշխատանքը: *Այստեղ* կառուցվում է հյուսիսային պողոտան):

Տեղի պարագայի շարադասությունը պայմանավորված է նաև նախադասության կառուցվածքով. եթե նախադասությունն ունի *ենթակա+ստորոգյալ* կառուցվածք, տեղի պարագան սովորաբար դրվում է ստորոգյալից հետո (Տունը գտնվում է *գյուղի ծայրին),* իսկ *ստորոգյալ+ենթակա* կառուցվածքի դեպքում այն դրվում է ստորոգյալից առաջ և շեշտվում է (*Գյուղի ծայրին է* գտնվում տունը):

Ժամանակի պարագայի շարադասությունը նույնպես հիմնականում ազատ է, բայց վիճակագրական հաշվարկները ցույց են տալիս, որ այն մեծ մասամբ *նախադաս է* դրվում. սա բացատրելի է այն հանգամանքով, որ որևէ անցքի, իրադարձության, դեպքի ու փաստի մասին խոսելիս գրողը, խոսողը ցանկանում է ընթերցողի կամ լսողի ուշադրությունը նախ հրավիրել դեպքի, եղելության կատարման ժամանակի վրա. այսպես՝ *69թ. (մ.թ.ա.)* Տիգրան Երկրորդը ավարտում է թատրոնի շինությունը... *Նույն թվականին* հռոմեական Լուկուլլոս զորավարը գրավում է Տիգրանակերտը (ՀԺՊ): *Հազար ութ հարյուր վաթսունհինգ թվին* Հայոց այգիներն ի՞նչ պտուղ տվին (ՊՍ):

Ժամանակի մակբայներով արտահայտված պարագաները գրեթե միայն *նախադաս* են գործածվում (*Լուսաբացին* գյուղն արդեն ոտքի էր (ԱԲ): *Հիմի* ի՞նչ պիտի անենք (ՀՋ): *Այժմ* հանգստանալու ժամանակը չէ. *շու-*

տով սկսվում են գյուղատնտեսական աշխատանքները: *Համախ* այդ մասին կարգադրություններ եղել են):

Եթե նախադասության մեջ կան *տեղի և ժամանակի պարագաներ*, ժամանակի պարագան սովորաբար նախորդում է տեղի պարագային (*Տասը տարի առաջ* փարիզյան մի փողոցում՝ կառքի տակ, ջախջախվեց հայ մշակույթի ամենակարկառուն ներկայացուցիչներից մեկը՝ բազմավաստակ Արշակ Չոպանյանը (ՍԳ):

Պատճառի պարագայի նախադաս դիրքը նույնպես պատճառաբանվում է խոսողի ու լսողի ուշադրությունը գործողության պատճառի վրա գրավելու մղումով՝ Խեղճը դողալով անհույս կռացավ, *Դարդից* չորացավ, ուռենի դարձավ (ՀԹ): *Վշտից ու սարսափից* մարդիկ խելագարվում էին: *Անքնությունից* կոպերը կարմրել էին:

Ինչ խոսք, բացառված չէ նաև նման պարագաների ետադաս դիրքը (Ծաղիկը ցամաքեց *անհայտ պատճառով:* Երեխան լալիս էր *հուզմունքից:* Դողում էր *վախից):*

Հիմունքի և հակառակ հիմունքի պարագաների նախադաս գործածությունը պայմանավորված է նրանով, որ խոսելիս նախ նշվում է գործողության կատարման դրդապատճառը, հիմնավորումը կամ հակառակ հիմունքը (*Համաձայն նախնական պայմանավորվածության*՝ այդ օրը շուտ արթնացանք: Նամակը, չնայած հին լինելուն, չէր կորցրել հետաքրքրությունը): Սրանց ետադաս շարադասությունը կարելի է շրջուն համարել (Աշխատանքը կատարվում է *համաձայն պահանջի):*

Ետադաս դիրք ունի հատկապես *նպատակի պարագան.* պատճառն այն է, որ երբ խոսողը ցանկանում է նշել որևէ գործողության կատարման նպատակը, նախ նրա ուղեղում ծագում է այդ գործողությունը, ապա նրա կատարման նպատակը (Սիրով կգամ Երևան՝ *նորից երգելու:* Գյուղն էին իջել հովիվ պատանիք՝ *աղջիկ տեսնելու, պարի ու կռիվի* (ՀԹ): *Համար* կապով արտահայտվածներ մեծ մասամբ նախադաս են դրվում (*Օլիմպիական խաղերին մասնակցելու համար* Տոկիո մեկնեցին հազարավորմարզիկներ): Նույնը կարելի է ասել *նպատակով* կապի մասին:

Ավելի ազատ շարադասությամբ օժտված են *ձևի, չափ ու քանակի և միասնության պարագաները:* Սակայն այս դեպքում էլ նշանակություն ունի, թե դրանք ինչ խոսքի մասերով են արտահայտված: Մակբայներով արտահայտվածները հիմնականում նախադաս են դրվում (*Հազիվ էր* հիշում անցածը: *Միասին* կատարեցինք առաջադրանքը):

Հավասարապես գործածական են նաև սրանց՝ ստորոգյալներից հետո դրվելու դեպքերը, մանավանդ երբ դրանք արտահայտված են լինում բառակապակցություններով: Հնձան է մտնում ծեր Դիլան դայի՝ *Հոգում հեռավոր օրերի ցավը* (ԱԲ): Նստել էր ու միտք էր անում՝ ականջը սիմինդրի տերևների խշշոցին (ԱԲ):

ԱՆՎԱՆԱԲԱՅԱԿԱՆ (ԲԱՂԱԴՐՅԱԼ) ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԽՆԴԻՐ ԵՎ ՊԱՐԱԳԱ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

§ 155. Ինչպես ասվել է «Բառակապակցություն» (§ 21) և «Խնդրառություն» (§ 17) բաժիններում, *խնդրառությունն ու* պարագաառությունը հատուկ է ոչ միայն խոնարհված ու անդեմ բայերին, այլև գոյականներին, ածականներին, թվականներին ու այլ խոսքի մասերի, հետևաբար երբ նշված խոսքի մասերը հանդես են գալիս որպես *անվանաբայական ստորոգյալի վերադիրներ,* սրանց լրացումներն էլ կարող են լինել *խնդիրներ ու պարագաներ:* Քննենք այդ դեպքերը:

Խնդիր լրացումներ - Անվանաբայական *ստորոգյալի* գոյականով, ածականով արտահայտված ստորոգելիական վերադիրները առավելապես խնդրի լրացումներ են ունենում՝ տարբեր հոլովներով. դրանք շատ լավ տարբերակվում են հարցադրումներով.

ա) *Հանգման խնդիր՝* Երգ իմ, նման ես *քո ստեղծողին* (ՀՍ) - (Նման ես ո՞ւմ): Հավատարիմ եղեք մեկտեղ կերած *աղ ու հացին* (ՀՍ) - (հավատարիմ եղեք *ինչի՞ն):* Շատ մոտ է նա իմ *հավատքին* (ԳԹ) - (մոտ է իմ ինչի՞ն):

բ) *Անջատման խնդիր՝ Ժողովրդից* երգն է անբաժան (ՍԳ) - (ումի՞ց է անբաժան): Վիշտն էլ *ուրախությունից* շատ հեռու չէ: Շատ գոհ ենք ձեր *հյուրասիրությունից:*

գ) *Միջոցի խնդիր՝*

Ես հպարտ եմ իմ *ծյուղերով ու սաղարթով,*
Բայց առավել՝ *իմ արմատով* (ՊՍ):

Երեխան երջանիկ է իր *խաղով:* Մոր աչքը լի է *արցունքով:* Խոսքը *գործով է* զորավոր, մարդը՝ *խոսքով* (ԳԹ):

դ) *Սահմանափակման խնդիր՝ Մահով* մանուկ եմ դառնում (ՀՍ):

Հոգով, սրտով ես հիմա խաղաղ եմ (ԳԹ):

ե) *Վերաբերության խնդիր՝ Նրա հանդեպ* եղել եմ բարի: *Ընկերոջ նկատմամբ* անտարբեր չէ: *Մեր վիճակին* տեղյակ է Աստված (ՀԹ):

զ) *Շահի (օգուտի կամ վնասի խնդիր)* - Արցախի հերոսներն արժանի են *գովեստի:*

Սիրելի՛ Պարույր, դու հաց էիր *ինձ համար,*
Օդ էիր ու ջուր (ՀՍ):

Այստեղ *հաց, օդ, ջուր* գոյական վերադիրներն են ստացել շահի խնդիր՝ *ինձ համար:*

Պարագա լրացումներ - Անվանաբայական ստորոգյալի վերադիրներն ընդունում են նաև տարբեր տեսակի *պարագայական լրացումներ,* որոնք պատասխանում են համապատասխան պարագաներին տրվող հարցերին:

ա) *Տեղի պարագա՝* Երկրային իմ *կրծքին* (որտե՞ղ) ծաղիկ դարձար լուսավոր (ՀԾ):

Հների մեջ դու ալեհեր, *նորերի մեջ՝* նոր ու ջահել (ՊՍ):

Եվ ծառե՞րն են շատ այս *լեռնակողմում*,
Թե՞ վեր ծառացած խաչքարերը (ՊՍ):

Խուլ արծագանք է, խուլ *ձորերի մեջ, խոր ծովերի մեջ* ալիք է կյանքս (ՀՍ):

Մի տեղ՝ համեստ հովիվ, *մի տեղ* ճորտ եմ եղել (ՀՍ):

բ) *Ժամանակի պարագա*՝

Մի ժամանակ (ե՞րբ) մարդ եղել է կապիկ,
Բայց կեղտոտ է *միշտ էլ* եղել շապիկը (ՊՍ):

Ես այն չեմ *արդեն*, ինչ որ էի ես *մի տարի առաջ*, Եվ այն չեմ *արդեն*, ինչ որ էի ես այն *մեծ թռիչքից մի վայրկյան առաջ* (ՀՍ): *Ժամանակով* կատուն ճոն էր (ՀՃ):

գ) *Հիմունքի պարագա*՝ *Լոկ ծայնի համար* հանդարվեց նա սաճ (ՊՍ):

Համաձայն օրենքի դու միշտ մեղավոր ես (Ոզնի): Նա *միշտ էլ* մեծ է եղել *շնորհիվ իր ազնվության ու վայելուչ վարքագծի* (Մամուլ): *Իր անել-դնելով, ճիստ ու կացով* շնորհալի հարս է (Մխ):

դ) *Հակառակ հիմունքի պարագա*՝ *Չնայած տարիքն առած լինելուն*՝ դեռ աշխույժ էր: *Հակառակ իրադարձություններին*՝ նա բոլորովին անհանգիստ չէր:

ե) *Պատճառի պարագա*՝ *Ըշտապելուց* թև են առել, Դարձել թեթև թիթեռներ (ՀՃ): *Ծեծվելու վախից* կծիկ էր դարձել: Տկար էր *ծերության պատճառով: Շատ աշխատելուց և քիչ քնելուց* ուժասպառ էր եղել:

զ) *Հիմունքի պարագա*՝ Ու Սողոմոնը Կոմիտաս դարձավ՝ *ի խորը հարգանս տասներկու դար իրենից առաջ հայոց երգը մշակող հոգեզվարթ Կոմիտաս կաթողիկոսի* (ՊՍ): *Հայ երգը Պոլսում տարածելու համար* նրա երգչախումբը կոչվեց «Գուսան» (ԳՃ):

է) *Չևի պարագա*՝ Բերում են իրենց խելոք Նազարին, *առքով ու փառքով* թագավոր դնում (ՀՃ): *Կամաց-կամաց* դարձավ վիրավոր մեր հոգին ջահել ու բազմաերազ (ԵՉ):

ը) *Միասնության պարագա*՝

Ուր ահեղ կռվով չի մտնիլ արքան,
Ղոնաղ է աշուղն իրեն *սազի հետ* (ՀՃ):

Ընկերներիս հետ միշտ հաշտ ու խաղաղ եմ: Տխուր ենք *ազգովի:*

Խնդիր և պարագա լրացումներ՝ *միատեղ* - Միևնույն նախադասության մեջ հաճախ նույն վերադիրը կարող է ունենալ և՛ խնդիր, և՛ պարագա լրացումներ, ինչպես՝

Նա *միշտ* (ժամանակի պարագա) հնազանդ է եղել իր *հավատքին* (հանգման խնդիր):

Դու ծաղիկ էիր *իմ գրկում* (տեղի պարագա) *ճորից* (ժամանակի պարագա):

Այս պահին (ժամանակի պարագա) *աշխարհում* (տեղի պարագա) հարուստ եմ *բոլորից* (ՊՍ) - համեմատության խնդիր:

ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾ ԵՎ ԿՈՂՄՆԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐ (ԼՐԱՑՈՒՄՆԵՐ)

§ 156. *Ի՞նչ է դերբայական դարձվածը* - Հայերենի 4 անկախ դերբայները (անորոշ, հարակատար, համակատար, ենթակայական) խոնարհման հարացույցին չեն մասնակցում, հետևաբար բայական ստորոգյալներ չեն կազմում, դրանք նախադասության մեջ հանդես են գալիս շարահյուսական տարբեր անդամների պաշտոններով (ենթակա, վերադիր, գոյականական և բայական անդամների լրացումներ): Հարակատարն ու համակատարը մասնակցում են երկրորդական բաղադրյալ ժամանակների կազմությանը (գնացած կլինեմ, գնալիս կլինեմ):

Անորոշ դերբայի շարահյուսական կիրառությունը:

Ենթակա - Դասական երաժշտություն *լսելը* ազնվացնում է մարդուն:

Որոշիչ - *Խմելու* ջուրը պետք է խնայել:

Հատկացուցիչ - Բարձր *խոսելու* ցանկություն չունեմ:

Վերադիր - Դա *խոսել* չէր, որ խոսեցիր: Բա դա *խոսե՞լ* եղավ, որ խոսեցիր:

Բացահայտիչ - *Խոսելը*՝ մարդու համեստության չափանիշը, պետք է չափավորված լինի:

Խնդիրներ - Հետևիր երեխայի *ճիշտ խոսելուն: Շատ խոսելուց* օգուտ չկա:

Պարագաներ - Գնացի գործարան՝ *կոմիտասի մասին խոսելու*:

Այդպիսի շարահյուսական կիրառություններ ունեն նաև *հարակատար և ենթակայական դերբայները,* ըստ որում, հարակատարը՝ *փոխանվանաբար* գործածվելիս:

Համակատար դերբայը միայն *պարագայական* կիրառությամբ է հանդես գալիս. այն միշտ ժամանակի պարագայի դեր է կատարում և ցույց է տալիս ընթացքի մեջ գտնվող գործողությանը *հարակից գործողություն (խոսելիս* աշխատի՛ր սխալներ թույլ չտալ: *Գրելիս* աշխատի՛ր ուշադիր լինել: *Ուտելիս* չեն խոսում):

Նշված անկախ դերբայները նախադասությունների մեջ հանդես են գալիս ինչպես առանձին, այնպես էլ այլ բառերի հետ՝ գուգորդմամբ, ինչպես վերևում բերված օրինակներում *(երաժշտություն լսելը, բարձր խոսելու* ցանկություն, *շատ կարդալուց,* հետևիր *երեխայի ճիշտ կարդալուն):* Ակներև է, որ *անորոշ դերբայ* գերադաս անդամն ունի իր լրացումները: Այդպես էլ հարակատար և ենթակայական դերբայները կարող են ունենալ իրենց լրացումները և իրենց լրացումների հետ դառնալ նախադասության մեկ անդամ *(ծառի ճյուղին նստած* թռչուն, *բարձր սարից արագորեն իջնող* գետակ): Ասենք նաև, որ անորոշ դերբայի հոլովված ձևերը ևս ունենում են իրենց լրացումները (*Մեղմ ու անուշ երգելով*՝ բեմահարթակ բարձրացան դպրոցականները: *Համերգասրահում հաջող ելույթ ունենալուց հետո* նրանք վերադարձան դպրոց):

Այսպիսով՝ *անկախ դերբայը իր լրացումներով կոչվում է դերբայական դարձված (կրճատ*՝ ԴԴ):

ԴԴ-ն կարող է լինել *երկանդամ և բազմանդամ*, ըստ որում նրա *գերադաս անդամը անկախ դերբայն է*՝ լինի այն ուղիղ ձևով, թե հոլովված: *Երկանդամ ԴԴ-ն կազմված է* լինում *մեկ գերադաս անդամից և մեկ լրացումից, բազմանդամը՝ մեկ գերադաս անդամից և երկու կամ ավելի լրացումներից* կամ լրացման լրացումներից:

Պետք է հիշել, որ ԴԴ-ն նախադասության մեջ հանդես է գալիս *մեկ անդամի պաշտոնով*. այդ անդամի պաշտոն կատարողը հենց գերադաս անդամ-դերբայն է, որի կատարած պաշտոնի անունով էլ կոչվում է ամբողջ ԴԴ-ը: Յուրաքանչյուր ԴԴ շարահյուսորեն վերլուծելի է. դա կատարվում է նախադասության վերլուծության հաջորդ աստիճանում՝ նրա գլխավոր և երկրորդական անդամները նշելուց հետո:

Եթե նախադասության մեջ նշված անկախ դերբայները հանդես են գալիս միայնակ՝ առանց լրացումների, կոչվում են *դերբայական անդամներ*, իսկ այդ դերբայներին լրացնող անդամները, ի տարբերություն նախադասության սովորական անդամների, կոչվում են *կողմնակի անդամներ*: Քանի որ *որոշիչը, հատկացուցիչն ու բացահայտիչը* դերբայների չեն լրացնում, այդ պատճառով էլ դրանք *կողմնակի* լինել չեն կարող: Կողմնակի են լինում միայն *բայական անդամի լրացումները՝ խնդիրներն ու պարագաները*, նաև *ենթական ու ստորոգելիական վերադիրը*, եթե դրանք կապվում են անկախ դերբայների հետ: Այս առումով քննարկենք վերևում բերված օրինակներից երկուսը՝ «Դասական երաժշտություն լսելը զարգացնում է մարդուն»: Այս նախադասության ենթական արտահայտված է ԴԴ-ով՝ *դասական երաժշտություն լսելը*, ստորոգյալն է *զարգացնում է* ներգործական սեռի բայը, իսկ *մարդուն* լրացումը ուղիղ խնդիր է: Սա կլինի նախադասության *առաջին աստիճանի* վերլուծություն: Երկրորդ աստիճանում վերլուծում ենք ԴԴ-ով արտահայտված ենթական, որի գերադաս անդամը՝ *լսելը անորոշ դերբայն է*, որին անմիջական լրացնում է *երաժշտությունը* կողմնակի ուղիղ խնդիրը (ի՞նչ լսելը), իսկ *դասական* անդամը լրացնում է ոչ թե *լսելը* դերբային, այլ *երաժշտությունը* գոյականական անդամին, հետևաբար այն կլինի սովորական որոշիչ և ոչ կողմնակի:

«Հետևի՛ր երեխայի ճիշտ խոսելուն» նախադասության ենթական զեղչված է, *հետևի՛ր*-ը նրա պարզ ստորոգյալն է, իսկ *երեխայի ճիշտ խոսելուն* եռանդամ ԴԴ-ն հանգման խնդիր է, որի գերադաս անդամը *խոսելուն* անորոշ դերբայի տրական հոլովն է, որին անմիջապես լրացնում է *ճիշտ* կողմնակի ձևի պարագան (ինչպե՞ս խոսելուն), իսկ *երեխայի* բառը նորից կապված է *խոսել* դերբայի հետ, հետևաբար այն կողմնակի ենթակա է՝ դրված *սեռական* (տրական) հոլովով (կողմնակի ենթական կարող է դրվել նաև *ուղղականով*):

Որպեսզի ապացուցվի *երեխայի* ենթակա լինելը, կարելի է նախադասությունը փոխակերպել՝ ԴԴ-ը դարձնել երկրորդական նախադասություն, կստացվի՝ «Հետևիր, որ երեխան ճիշտ խոսի»: Ակնհայտ է, որ *երեխան* ենթակա է:

Ասենք, սակայն, որ ԴԴ-ը չի առաջանում միայն երկրորդական նախադասության պարզեցումից, ինչպես կարծում են շատերը, դրանք լեզվա-

մտածողական առանձին երևույթներ են, որոնք առաջանում են մարդու ուղեղում հենց այդ ձևերով, մանավանդ որ շատ բարդ ստորադասական նախադասություններ կան, որոնցում ԴԴ-ները բոլորովին էլ փոխակերպելի չեն: Դրանք պարզապես շ ա ր ա հ յ ու ս ա կ ա ն հ ո մ ա ն ի շ ն ե ր են:

§ 157. *Քննենք կողմնակի անդամները.* ասվեց, որ դրանք կապվում են *անկախ դերբայների* հետ և լինում են՝

ԿՈՂՄՆԱԿԻ ԵՆԹԱԿԱ - Սա տարբերվում է նախադասության իսկական ենթակայից. այն նախ *ստորոգումային կապակցության մեջ չէ*, ապա հիմնականում դրվում է *սեռական* հոլովով և նմանվում է *հատկացուցչին*, բայց հատկացուցիչ չէ, որովհետև գոյականի լրացում չէ, այլ դերբայի, մյուս կողմից՝ կողմնակի ենթակայի և նախադասության ստորոգյալի միջև *ստորոգումային կապ չկա, չկա նաև թվային համաձայնություն*: Այսպես՝ «*Աճմանոթի* ներս մտնելը զգաստացրեց բոլորիս» և «*Աճմանոթների* ներս մտնելը զգաստացրեց բոլորիս», մինչդեռ դիմավոր բայ-ստորոգյալի ենթական թվով համաձայնում է ստորոգյալի հետ, և նրանց միջև ստորոգումային կապ գոյություն ունի, ինչպես՝ «Որ *աճմանոթը* ներս *մտավ...*» և «Որ *աճմանոթները* ներս *մտան...*»:

Ասվեց, որ կողմնակի ենթական սովորաբար դրվում է *սեռական* հոլովով և պատասխանում է *ո՞ւմ, ինչի՞* հարցերին: Օրինակներ՝ *Ջրի* շատ գալը կտրվելու նշան է (Առած): *Հյուրերի* հայտնվելը անսպասելի էր: Այս տարի *գարնան* գալը ուշացավ: *Հասմիկի*՝ համալսարան ընդունվելը ուրախացրեց ծնողներին: *Իմ* գնալը չհաջողվեց:

Կողմնակի ենթական դրվում է նաև *ուղղական* հոլովով: Օրինակներ՝ *Գարունը* բացվելուն պես ծառերի չոր կեղևը մաշվում էր (ԱԲ): *Աճմրևը* դադարելուց հետո վերսկսեցինք աշխատանքը: *Մեքենան* արգելակվելուն պես ցած իջանք:

Բերված բոլոր օրինակներում կողմնակի ենթակաները դրվել են *անորոշ դերբայների* հետ: Բացի անորոշ դերբայներից, կողմնակի ենթականեր կարող է ունենալ նաև *հարակատար դերբայը (Ձրի* կտրածը կլավանա, *լեզվի* կտրածը չի լավանա (Ժող.): *Գիտնականի* գրածը անառարկելի փաստեր ուներ: *Չեր* հավանածը ինձ դուր չեկավ: *Նրա* ղեկավարած հիմնարկը վճասով է աշխատում: Քո տեսած սերմը չի կանաչի):

Ծ ա ն ո թ ա ց ու մ - Քանի որ կողմնակի ենթական դիմավոր բայ-ստորոգյալի հետ չի կապվում, այլ հանդես է գալիս որպես *դերբայի լրացում*, նպատակահարմար է այն անվանել ոչ թե *կողմնակի անդամ*, այլ *կողմնակի լրացում*, ինչպես առաջարկում է Աշոտ Մարությանը. «Ավելի նպատակահարմար է ԴԴ բառակապակցության մեջ մտնող բոլոր անդամներն էլ կոչել *կողմնակի լրացումներ*, որով նրանք կտարբերվեն նախադասության անդամներից»[48]:

---

[48] *Ա.Մարության*, Ժամանակակից հայերենի շարահյուսության հարցեր, Ե., 2003, էջ 49:

ԿՈՂՄՆԱԿԻ ՍՏՈՐՈԳԵԼԻ *(վերադիր)* - կողմնակի վերադիրը (ստորոգելին) դրվում է *վերացական բայերի (լինել, դառնալ, թվալ, կոչվել, համարվել, հանդիսանալ, հոչակվել, ծնանալ, մնալ, նշանակվել, առաջադրվել, վերագրվել...)* պահանջով: Սրանք սովորական վերադիր են դառնում, երբ դերբայը փոխարինվում է դիմավոր բայերով. այսպես՝ «*Այգի կոչվածը* մի փոքր հողակտոր էր». այստեղ *այգին* կողմնակի վերադիր է, որովհետև դրված է *կոչված* վերացական բայի պահանջով. այն դառնում է սովորական վերադիր, եթե *կոչված* դերբայը փոխակերպենք *կոչվում էր* դիմավոր բայով. այսպես՝ «Այն, ինչ *կոչվում էր այգի*, մի փոքր հողակտոր էր»: Այլ օրինակներ՝ *Վարպետ անվանվող* Կարոն անուն էր հանել Գյումրիում (Ավ.Իս.): *Դպրոց համարվող* շենքը մի փոքրիկ խրճիթ էր (ՍԽ): *Ջուր դարձող* ծյուղը փակել էր ճանապարհը (ՍԽ): Նրա *ով լինելը* պարզելու համար պետք է անցյալը քննել (ՎԲ):

ԿՈՂՄՆԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐ - Ինչպես դիմավոր բայերի խնդիր լրացումները, այնպես էլ կողմնակի խնդիրները լինում են *սեռի և բնության:* Սեռի խնդիրները պայմանավորված են ներգործական *(ուղիղ խնդիր)* և կրավորական *(ներգործման խնդիր)* սեռի բայերով:

Կողմնակի ուղիղ խնդրի օրինակներ՝ Իրիկնաժամին *թփերն* օրորող հովի պես թեթև մի ուրու անցավ (ՎՏ): *Ձեզ* տանջող ցավը մեզ էլ է պատել (ՀԹ): *Ձու* գողացողը ձի էլ կգողանա (Առած): *Ճյուղերը* ջարդելով եղնիկը դուրս եկավ բացատ (ՎԱ): *Հիվանդին* խնամելիս բավարարվածություն էր զգում: *Ընկերոջս* տեսնելիս ուրախացա:

Ներգործման կողմնակի խնդրի օրինակներ՝ *Ձյունով* ծածկված արահետը լրիվ անհետացել էր (ՍԽ): *Քամուց* կոտրված ծառը նորից շիվեր տվեց: *Ընկերոջից* վիրավորված Տիգրանը այլևս չհանդիպեց նրան: *Մեծերի կողմից* երես տված երեխան ամբարտավան կլինի:

Կողմնակի բնության խնդիրներ - Ինչպես ասվել է սովորական բնության խնդիրների վերաբերյալ, սրանք նույնպես անմտարբեր են բայի սեռի նկատմամբ և պայմանավորված են բայերի *բառային իմաստներով:* Լեզվում ինչքան որ սովորական բնության խնդիրներ կան, այդքան էլ կողմնակի բնության խնդիրներ կան:

ա) *Հանգման* - Աչքերը *վրանին* հառած՝ առաջ գնաց: Հենվելով *պատին*՝ կոշիկների քուղերն էր կապում: Մոտենալով *անծանոթին*՝ սկսեց հարցուփորձ անել:

բ) *Մատուցման* - Մ.Խորենացու շքանշանը հանձնելով վաստակաշատ *դասախոսին*՝ ռեկտորը բարեմաղթանքի խոսքեր ասաց: Սուրճը մատուցելով *հյուրերին*՝ Սոնան աչքի պոչով զննեց անկյունում նստած երիտասարդին (ՎՊ):

գ) *Անջատման - Թոկից* փախած գոմեշը երկար ճանապարհ անցավ (ՀՍ): *Ընկերոջից* ստացած նամակը շատ հուսադրեց հայրենաբաղձ աղջկան (ՀՋ):

դ) *Միջոցի - Ինքնաթիռով* թռչելիս ինչո՞վ ես տարբերվում թռչունից: Ամեն անգամ *կավիճով* գրելիս դպրոցական տարիներս եմ հիշում:

ե) *Վերաբերության- Քաղաքականությունից* խոսելիս հաճախ զայրանում ես: *Որսից* պատմելիս Վ.Անանյանը շատ բաներ է հնարում: *Վահրամ Փափազյանի մասին* խոսելիս վերհիշում ես նրա դերակատարումները, տեղափոխվում ես նրա աշխարհը:

Կապային խնդիր - Կապային խնդիրները ձևավորվում են *մոտ, տակ, վրա, մասին, կողմ, վերաբերյալ* և նման կապերի ու որևէ գոյականի կամ դերանվան միասնությամբ, որոնք դրվում են որևէ անկախ դերբայի պահանջով (Բարկանալով *երեխայի վրա*՝ մայրը պարտադրեց դասերը պատրաստել: Թեքվելով *հիվանդի կողմը* ՝ բժշկուհին ջերմաչափ դրեց: Ափսեի *ջրի մեջ* նայելով՝ գուշակություններ էր անում: Չմտածելով գալիք *փորձանքի մասին*՝ տնօրենը նոր կարգադրություններ էր անում):

ԿՈՂՄՆԱԿԻ ՊԱՐԱԳԱՆԵՐ - Կողմնակի պարագաները նշում են անդեմ բայերի գործողության որակական ու քանակական հատկանիշները, ինչպես նաև տեղը, ժամանակը, նպատակը, պայմանը, պատճառը, հիմունքը և այլն:

ա) *Տեղի - Սքնաձոր* տանող միակ արահետն առաջին ձյան հետ փակվում էր (ԱԲ): *Գյուղից* եկած Խեչանին դժվար էր խոսք հասկացնել: Նրան *մեր տանը* տեսնելով՝ շատ ուրախացա:

բ) *Ժամանակի* - Վառի՛ր լույսդ, *վաղ* անցած լույսի ցնո՛րք իմ հոգու (ՎՏ): *Երեկվանից* քնած հիվանդը աչքերը բացեց: *Անցյալ տարվանից* պայմանավորված խոստումդ չմոռանաս:

գ) *Չևի պարագա* - Մի ստվեր անցավ՝ ծաղիկ ու կանաչ *մեղմիվ* շոյելով (ՎՏ): Մտքերը անշարժ ու հանդարտ էին, ինչպես գլխի՝ *խնամքով* սանրած դեղին մազերը (ԱԲ):

դ) *Պատճառի* - Իմ անվերջ ճամփի *տանջանքից* հոգնած՝ ես ննջել էի (ՎՏ): *Անքնությունից* ծանձրացած՝ հիմար սերիալներ էի նայում:

ե) *Նպատակի - Երգելու* գնացողը պետք է տրամադրված լինի: *Սովորելու* գնալուց առաջ տան մասին մտածի՛ր: *Հյուրախաղերի* մեկնելու պատրաստություն էին տեսնում:

զ) *Հիմունքի - Կառավարության օրենքով* սահմանված նախագծով էին աշխատում: *Համաձայն վերադասի կարգադրության*՝ գնալու ժամկետը կրճատվեց: *Չեռնարկված միջոցառումների շնորհիվ* բացակայող ուսանողներ չեղան:

է) *Հակառակ հիմունքի- Չնայած նոր նախագծով* կառուցված լինելուն՝ դարձյալ անհաջող էր: *Չնայած սպասարկման բարձր որակին* համապատասխանելուն՝ նորից դժգոհելու առիթ կար:

ը) *Չափ ու քանակի - Տասն անգամ* չափելու, *մեկ անգամ* ձևելու հանճարարարականը միանգամայն ճիշտ է: *Մեկ թզաչափ* կռանալով՝ նկատեց միջատին:

Հիշեցման կարգով նորից նշենք, որ կողմնակի անդամներ ստանալու համար նախ դիտարկում ենք *դիմավոր բայով* կազմված նախադասությունը, ապա պահանջվող կողմնակի անդամի հետ առնչվող խոնարհված բայը

փոխարինում ենք *անդեմ բայով*, և բայի սովորական լրացումն ու ենթական դառնում են *կողմնակի*. այսպես՝ «*Քամին կոտրեց ծառը*» և «*քամու կոտրած ծառը*» (առաջին դեպքում *քամին* ենթակա է, իսկ երկրորդ դեպքում՝ *քամու*, կողմնակի ենթակա է):

ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾԻ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 158. Տրոհվող դերբայական դարձվածների կետադրությունը շատ որոշակի է ու կանոնարկված. *Նախադաս և վերջադաս ԴԴ-ները տրոհվում են բուքով, միջադասները՝ ստորակետերով:*

Տրոհվում են՝

1. *Ժամանակի պարագայի* պաշտոն կատարող ԴԴ-ները՝ «*Հասնելով բերդի ավերակներին*՝ ձիավորները ցած իջան: Ձիավորները ցած իջան՝ *հասնելով բերդի ավերակներին*» և «Ձիավորները, *հասնելով բերդի ավերակներին*, ցած իջան (ՀԱԺ):

2. *Չևի պարագաս՝ «Գլուխները թափահարելով ու ծյունը ճեղքելով՝* նախագները իջնում էին գոմերը»: «Նոխազները իջնում էին գոմերը՝ *գլուխները թափահարելով և ծյունը ճեղքելով*» ու «Նոխազները, *գլուխները թափահարելով ու ծյունը ճեղքելով*, իջնում էին գոմերը»:

3. *Զիջման պարագաս՝ «Չնայած տեղատարափ անձրև գալուն՝* ոչխարները հանգիստ արածում էին»: «Ոչխարները հանգիստ արածում էին՝ *չնայած տեղատարափ անձրև գալուն*» և «Ոչխարները, *չնայած տեղատարափ անձրև գալուն*, հանգիստ արածում էին»:

4. *Նպատակի պարագաս*, եթե այն *համար* կապով չի արտահայտված: «Գյուղն էին իջել հովիվ պատանիք՝ աղջիկ տեսնելու, պարի ու կոխի» (ՀԹ): (Այս նախադասության շարադասությունը կայուն է, փոխելու դեպքում պետք է ավելացնել *համար* կապը): «*Կամենալով ծարավը հագեցնել* ՝ հոգնած ճամփորդը մոտեցավ աղբյուրին»: «Հոգնած ճամփորդը մոտեցավ աղբյուրին՝ *կամենալով ծարավը հագեցնել*» և «*Հոգնած ճամփորդը, կամենալով հագեցնել ծարավը*, մոտեցավ աղբյուրին»:

5. *Պատճառի պարագաս՝* Աշխատանքից ազատել էին՝ *պատճառաբանելով պարտքերը:*

6. Տրոհվում է նաև *որոշիչ ԴԴ-ն*, եթե այն *ետադաս է*՝ «Առվակը՝ *բարձր սարերից գահավիժող*, կյանք է պարգևում բուսականությանը»:

§ 159. *Դերբայական դարձվածը չի տրոհվում.*

1. Եթե այն *ենթակա է*՝ «*Մեր ժողովրդական երգը օտարաբանությունից զտողն ու մաքրողը* Կոմիտասն է»: *Հայ գրերի ստեղծողը* Մեսրոպ Մաշտոցը եղավ:

2. Եթե այն *ստորոգելիական վերադիր է*՝ Մեսրոպ Մաշտոցը *հայ գրերի ստեղծողն է:* Կոմիտասը *հայ երգի մաքրագործողը դարձավ:*

3. Եթե այն *հատկացուցիչ է*՝ Մենք գիշերեցինք *մեզ սիրով հյուրընկալողի* տանը: Բաժակ բարձրացրինք *իրենց կյանքը Արցախի համար զոհա-*

բերողների կենացը:

4. Եթե այն *նախադաս որոշիչ է՝ Ամբողջ կյանքը իր ժողովրդի երգարվեստին նվիրած* Կոմիտասն ապրեց 66 տարի, որից 20-ը՝ հիվանդ: *Շատ կարդացած երեխան* բանիմաց կլինի: *Բարձր սարից գահավիժող առվակը* կյանք է պարգևում բուսականությանը:

5. Չի տրոհվում *համակատար դերբայով՝ (ի)*-ով կազմված դարձվածը՝ *Քաղհան անելիս* աղջիկը մեկ-մեկ գայթում էր: *Որդուն ամուսնացնելիս* Զորոն գինին Արարատյան դաշտից բերեց (ՍԳ):

6. Չեն տրոհվում *խնդիրների պաշտոններ կատարող ԴԴ-ները:* Բոլորն էին հասկանում *առաջադրվող հարցի դժվար լինելը:* Գյուղում խոսում էին *Օհան ամու աշխարհաքող լինելու մասին:*

7. Չեն տրոհվում հատկապես այն ԴԴ-ները, որոնք կազմվում են *կապերով (համար, մասին, շնորհիվ, նպատակ, առանց, առաջ, հետո* և այլն) և կապի խնդիրներով: Քաղաք էին գնացել իրենց *շրջանավարտների հավաքին մասնակցելու համար: Գրքեր պատվիրելու նպատակով* գրադարան գնացի: Պարգևատրության էր ներկայացել *նոր նախագիծ ներկայացնելու հիմնավորումով: Կուրսային աշխատանք գրելուց առաջ* պետք է գրականությունը լավ ուսումնասիրել: *Քննությունները հաջող հանձնելուց հետո* գյուղ կգնամ:

Ծանոթություն - *Համար* կապով կառույցները երբեմն էլ տրոհվում են (տե՛ս «Նախադասության տրոհվող այլ անդամներ» բաժինը՝ § 165):

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐ

§ 160. Հաճախ նախադասության մեջ միևնույն անդամի պաշտոնով հանդես են գալիս մեկից ավելի բառեր, որոնք կոչվում են *բազմակի անդամներ* կամ նախադասության *համադաս անդամներ:* Նախադասության համադաս անդամները շարահյուսական միևնույն գործառույթն ունեն և պատասխանում են միևնույն հարցերին. դրանք արտասանվում են թվարկման հնչերանգով, այսինքն՝ փոքր դադարներով: Գրավոր խոսքում բազմակի անդամները տրոհվում են ստորակետերով կամ միանում են համադասական շաղկապներով:

Բազմակի կարող են լինել նախադասության թե՛ ենթական և թե՛ գոյականական ու բայական անդամների բոլոր լրացումները:

Պետք է հիշել, որ բազմակի ստորոգյալներ ունեցող նախադասությունները ոչ թե *պարզ,* այլ *բարդ* նախադասություններ են, որովհետև, ինչպես ասվել է, ունեն մեկից ավելի ստորոգյալներ: Այսպես՝

Իմ պապը հողի հետ *խորհել ու խոսել է,*
Ամպի հետ *արտասվել,* ջրի հետ *հոսել է* (ՀՍ):

Այստեղ կա 4 ստորոգյալ, ուրեմն կա և 4 ստորոգում. յուրաքանչյուր ստորոգյալ առանձին-առանձին տարբեր հատկանիշներ է վերագրում միևնույն ենթակային. ուրեմն գործ ունենք բարդ համադասական նախադասության հետ:

Վ.Տերյանի հետևյալ քառատողում նույնպես մեկ ենթակա կա, որին տարբեր ստորոգյալներով տարբեր հատկանիշներ են վերագրվում՝ *շրջելու, շրշելու, շշնջալու, անրջելու, սիրելու, հիշելու՝*

Անտես ու հուշիկ իմ շուրջը *շրջում*
Եվ *շշնջում ես,* և անուշ *շրշում,*
Պայծառ տրտմությամբ ինձ ես *անրջում*
Ու գաղտնի սիրով *սիրում ու հիշում:*

Ուրեմն այս քառատողում կա մեկ բարդ համադասական նախադասություն՝ 6 ստորոգումներով:

Բերենք բազմակի *ենթականերով* նախադասությունների օրինակներ.

Պիտի փլվեն *ամեն պատնեշ, ամեն սուտ (ՍԿ): Անձրև, քամի, տրտունջ* ու *թախիծ, Լույսերս* ոսկի ընկած ու հանգած... (ՎՏ): Իմ գլխի վերև չպետք է լինի *Ոչ մի հովանի, ոչ մի իրավունք* (Ավ.Իս.):

Բազմակի որոշիչներ - անկախ այն բանից, թե որոշիչները ինչ խոսքի մասերով են արտահայտված, եթե դրանք համասեռ են, այսինքն՝ արտահայտված են միևնույն տեսակի ածականներով, գոյականներով, թվականներով, դերբայներով և այլն, և եթե դրանք առանձին-առանձին լրացնում են միևնույն գոյականական անդամին, ուրեմն՝ բազմակի (համադաս) լրացումներ են. այսպես՝

Անհայտ, անորոշ, անծև տեսիլներով
Չգտում է հոգիս հեռո՜ւ, շատ հեռու (Ավ.Իս.):

Օտար, ամայի ճամփեքի վրա Իմ քարավանս մեղմ կողոզանջե (Ավ.Իս.):
Քարե, փայտե և նույնիսկ *հողե* տնակները ծառայում էին որպես մարդկանց կացարաններ (ԳՄ):

Իսկ եթե որոշչի դերում հանդես են գալիս որակական և հարաբերական ածականները միասնաբար, դրանք իրարից չեն տրոհվում՝ *Քարե հին* կամուրջը դեռ երկար կանգուն կմնա: *Երկաթե բարձր* ցանկապատը անհնար էր անցնել: *Լեռնային զուլալ* առվակը կյանք է պարգևում պապակած բուսականությանը (ԹՆԺ):

Չեն տրոհվում նաև թվականներով ու ածականներով կամ, առհասարակ, տարբեր խոսքի մասերով իրար հետ հանդես եկող բազմակի որոշիչները (*Տասներկու փորձառու* շինարարներ *երկու ցրտաշունչ* օրում վերաշորոգեցին երկաթուղին):

Օրինակներ *բազմակի թվականներով և դերբայներով՝ Առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ* կուրսերի պարապմունքներն ավարտվում են հունիսի 12-ին: Օդում *ճախրող, երգող ու ծլվլացող* թռչունները, զգալով արծվի մոտենալը, թաքնվեցին: *Ղեղնած, դալկացած ու չորացած* ծառերը ջրի կարիք են զգում:

Տարբեր խոսքի մասերով արտահայտված բազմակի որոշիչները նույնպես տրոհվում են կամ կապակցվում են համադասական շաղկապներով:

Իմ քաղցրանուն, իմ բարձրանուն, իմ տառապած, իմ փառապանծ...
Սրի պատյան, սիրո մատյան - Միշտ *հի՛ն ու նո՛ր* իմ Հայաստան (ՊՍ):
Բազմակի հատկացուցիչներ - Եվ հրաշքներով, վեհ լռության մեջ Տիեզերքն անծիր՝ ղողանջում է խոր երգն *անմահության, և՛ հավերժության, և՛ ճշմարտության, և՛ գեղեցկության* (Ավ.Իս.): Կարկուտից տուժել են *Գորիսի, Ղափանի և Սիսիանի* ցանքատարածությունները:

> ***Ծանոթություն*** - Բազմակի հատկացուցիչների հետ չպետք է շփոթել *աստիճանավորված հատկացուցիչները*, որտեղ մի հատկացուցիչը լրացնում է մյուսին՝ ԵՊՀ-ի բանասիրական ֆակուլտետի երրորդ կուրսի ուսանողները հաջող հանձնեցին քննությունները:

Բազմակի բացահայտիչներ (Ընկերներս՝ *Գեղամը, Տիգրանն ու Արշալույսը*, ավարտեցին համալսարանը): Բազմակի բացահայտիչները հաճախ ունենում են իրենց լրացումները՝ Ուզում եմ, որ ամեն ինչ կանգ առնի, ինչպես որ կա՝ *երկինքը աստղերով, հողը հասկերով, լռությունը իր քինը կապույտով* (Թոթովենց):

Մասնավորեցնող՝ պարագայական բացահայտիչները բազմակի չպետք է համարել՝ *Վտակի ափին՝ ուռենու տակ*, տխուր նստել էր Լիլիթը (Ավ.Իս.): *1999 թ. հոկտեմբերի 27-ին՝ ժամը 17. 30-ին*, Ազգային ժողովում տեղի ունեցավ մեծ աղետ:

Բազմակի ուղիղ խնդիրներ - Սրանք լրացնում են թե՛ դիմավոր և թե՛ անդեմ բայերին (վերջին դեպքում կոչվում են կողմնակի) և իրենց հետ կարող են ունենալ նաև լրացումներ՝

Սիրում եմ մեր *երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,*
Արևն ամռան ու ծմեռվա վիշապածայն բուքը վսեմ (ԵՉ):

Շինել ենք մենք *կամուրջ*, կապել ենք *կամար*...
Ամենքին տվել՝ *միտք, առած, երգեր*...
Ամեն տեղ թողել մեր աչքից՝ *ցոլանք*,
Մեր հոգուց՝ *մասունք և նշխար*՝ սրտից (ՊՍ):

Ինչպես թողնենք *տունն ու ջաղացը*՝ անտեր,
«Իմալ կեղնի, իմալ չերթանք մըր էրգիր» (ՍԿ):

Կողմնակի ուղիղ խնդիր՝ Սիրելով քո *երկիրը, հողն ու ջուրը*, կսիրես նաև քո ժողովրդին (ԳԹ):

Բազմակի անուղղակի խնդիրներ - Բազմակի կարող են լինել բոլոր տեսակի անուղղակի խնդիրները, որոնք լինում են թե՛ սովորական և թե՛ կողմնակի. դրանք կարող են լինել ինչպես միաբառ, այնպես էլ՝ իրենց հետ ունենալ լրացումներ՝

Երկնի մովին, կանաչ ծովին, Անտառներին խոր ու մթին,
Գարնան ամպին՝ լույս ոլորտում Ասում եմ ես՝ մնաք բարով (ՎՏ):

Մեր սուրբ զոհերի, մեր սուրբ հողերի, մեր ցավի մասին
Այսքան տարիներ ո՞ւր էինք լռել (ՍԿ):

Ինձ շաղախեցիր *մարդկանց կավից,*
Սիրուց, զայրույթից, բերկրանքից, ցավից (ՍԿ):

Ինչպե՞ս եք ապրում, դու *ծեզնից* պատմի,
Ձեր օր ու կյանքից, ծեր ցավ ու դարդից (ՀԹ):

Ապրում էինք *հույսով, սիրով ու հավատով:* Անցյալում գյուղացին հողը մշակում էր *արորով ու գութանով, բահով ու բրիչով, մաճով ու մաճկալով:*

Բազմակի պարագաներ - Բազմակի են լինում նաև բոլոր տեսակի պարագաները՝ արտահայտված մեկական բառերով կամ բառակապակցություններով՝

Կանգնեցի *խոժոռ, մենակ ու հաստատ Մասիսի նման,*
Կանչեցի թշվառ էն հոգիներին՝ ցրված հավիտյան
Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև Ծովն հայոց,
Մինչև Հելեսպոնտ, մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ (ՀԹ):

Ա՜խ, դու էլ *ոլոր, մոլոր* գնացիր, Ո՞ւմ հարցնենք՝ ո՞րն է ճամփան Բինգյոլի (ՍԿ):

Դու քայլում ես *սարով, ձորով, աշխարհով,*
«Քելե լաո՛, քելե էրթանք մըր էրգիր» (ՍԿ):

Խեղճ մայրը սպասեց որդուն *օրերով, ամիսներով ու տարիներով... Սմառ, ծմեռ, գիշեր, ցերեկ* նա իր գործն էր անում՝ աչքը ճամփին (ՊՂ):

Կապով և կապի խնդիրներով արտահայտված պարագաները նույնպես կարող են բազմակի լինել (*Հայրենիքի համար, այս աղջկա համար* արժե կռվել ու մեռնել (ԳՍ): Աշխատում էր՝ *հանուն իր տան ու տեղի, հանուն երկրի ու հողի, հանուն իր ժողովրդի* (ԳԹ):

Ծանոթություն - Միևնույն բառի կրկնությամբ արտահայտված լրացումները բազմակի անդամներ չպետք է համարել (Ու պայքար, պայքար, պայքար երգեցի Դվ): ...Իմ հեռո՜ւ, հեռո՜ւ, հեռո՜ւ, նահրյան դալար բարդի (ՀՍ):

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏՐՈՀՎՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ

§ 161. Շարահյուսական կառույցներում հաճախ նախադասության որևէ անդամ արտաբերվում է որոշակի հնչերանգով, որը գրավոր խոսքում տրոհվում է կետադրական նշաններով՝ ստորակետով կամ բութով. դադարով առանձնացած այդ անդամին տրվում է *տրոհվող անդամ* անվանումը: Տրոհումով խոսողը նպատակ է դնում ընդգծել իր համար ավելի շատ կարևորություն ունեցող անդամը՝ հաղորդակցվողի ուշադրությունը հրավիրելով նրա վրա:

Նախադասության տրոհվող անդամներից ամենաակնառուն **կոչականն** է:

ԿՈՉԱԿԱՆ

§ 162. Նախ՝ տեսնենք, թե ինչ է կոչականը, ինչ արժեք ունի այն նախադասության կազմում, նախադասության անդա՞մ է, թե՞ ոչ:

Կոչականը նախադասության այն անդամն է, որն արտահայտվում է մեկ բառով կամ բառակապակցությամբ և ցույց է տալիս այն անձը կամ առարկան, որին դիմում է խոսողը, որին հասցեագրվում, ուղղվում է խոսքը, արտահայտությունը: Այն միշտ դրվում է ուղղական հոլովով, որոշիչ հոդ չի ընդունում և միշտ տրոհվում է:

Թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքում կոչականը վճռորոշ նշանակություն ունի. խոսքի մեջ կոչականը գործածվում է այն դեպքում, երբ խոսողը կամ գրողը ցանկանում է խոսքային փոխադարձ կապի մեջ մտնել, հաղորդակցվել խոսակցի կամ անձնավորված առարկաների հետ, նրանց ուշադրությունը հրավիրել դեպի իր հաղորդումը, խոսակցին ընդգրկել խոսքային ոլորտ: Այսպիսի հաղորդակցումը կարող է տեղի ունենալ երես առ երես, այսինքն՝ որպես խոսքային հաղորդակցման ձև հանդես է գալիս **երկխոսությունը**, կամ խոսողը, գրողը մտովի է դիմում հաղորդակցման ոլորտ ընդգրկվող անձին կամ առարկային: Այս դեպքում խոսողը հիմնականում ինքն իր հետ է լինում, կամ խոսակցին պատկերում է մտովի:

Կոչականի վերաբերյալ լեզվաբանական գրականության մեջ միասնական կարծիք չկա. որոշ լեզվաբաններ այն նախադասության անդամ չեն համարում:

Գուցե այս տեսակետը գալիս է ռուս լեզվաբան Ա.Պեշկովսկու այն թյուր կածիքից, թե կոչականը իբրև նախադասության մարմնի մեջ խրված գնդակ է, այսինքն՝ նախադասության համար խորթ, օտար մարմին է[49]:

Սակայն, իրականությունն այն է, որ ինչպես ապացուցում են ռուս և հայ մի քանի լեզվաբաններ, կոչականը նախադասության *կարևորագույն անդամներից մեկն է*, որովհետև նրա և ենթակայի ու ստորոգյալի միջև կա ինչպես իմաստային, այնպես էլ քերականական կապ:

Ա.Ռուդնևը գրում է. «*Կոչականը նախադասության կառուցվածքում հանդես եկող առանձնահատուկ անդամ է, այն արտահայտվում է գոյական կամ գոյականացած այլ խոսքի մասի ուղղական հոլովով, ընդգծում է այն դեմքը կամ առարկան, որին ուղղված կամ հասցեագրված է խոսողի խոսքը*»[50]:

Ակադեմիկոս Վ.Վինոգրադովը, կոչականը համարելով նախադասության անդամ, նրան վերագրում է *ժամանակի, դեմքի, թվի և եղանակավորման* քերականական կարգեր[51]:

Վաստակաշատ հայագետ Մ.Աբեղյանը գրում է. «*Կոչական անունը, երբ բայը երկրորդ դեմքով է, բացահայտիչ է ենթակայի, արտահայտված լինի ենթական դերանունով, թե ոչ, օրինակ՝ Դու, կաթողիկոս,* հորինե կոնդակ: Դու, *հայ զորապետ,* գթա հայերուն: Լսիր, որդյա՛կ, հորդ խրատին»[52]:

Կոչականը նախադասության անդամ են համարում և նրա մի քանի կարևոր հատկանիշների մասին են խոսում Ռ.Իշխանյանը[53] և Մ.Ասատրյանը[54]:

Կոչականի ավելի մանրամասն ու հանգամանալից ուսումնասիրությանն է նվիրված նաև մեր աշխատությունը[55]:

Ակադեմիկոս Գ.Ջահուկյանը թեև կոչականը նախադասության անդամ չի համարում, բայց նրան վերագրում է ուղղական հոլովի հատկանիշ[56]: Այդպես են վարվում նաև 5-6-րդ դասարանների հայոց լեզվի դասագրքի հեղինակներ Էդ.Աղայանը և Հ.Բարսեղյանը: Այս դեպքում ակնհայտ է բացահայտ հակասությունը. *եթե որևէ բառի հոլովի քերականական կարգ է* վերագրվում, ուրեմն այն պետք *է շարահյուսական որևէ անդամի դեր կատա-*

---

[49] Տե՛ս ***А.М.Пешковский,*** Русский синтаксис в научном освещении, М., 1956.

[50] ***А.Г.Руднев,*** Синтаксис современного русского языка, М. 1968. стр. 208.

[51] ***В.В.Виноградов*** Основные вопросы синтаксиса предложения. В кн. "Вопросы грамматического строя" , М.,1955, стр. 405.

[52] *Մ.Աբեղյան,* Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 335, 399, 410:

[53] *Ռ.Իշխանյան,* Արդի հայերենի շարահյուսություն, Ե.,1986, էջ 279-283:

[54] *Մ.Ասատրյան,* Ժամանակակից հայոց լեզու (շարահյուսություն),Ե., 1987, էջ 319-321:

[55] *Խ.Բադիկյան,* Կոչականը և նրա ուսուցումը, Ե., 1982, էջ 3-138:

[56] *Գ.Ջահուկյան,* Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 199,368,370:

րի նախադասության մեջ, հետևաբար, *եթե կոչականին վերագրվում է հոլովի քերականական կարգ, ուրեմն այն նախադասության անդամ չլինել չի կարող:*

Կոչականը լեզվի զարգացման բոլոր փուլերում վճռական դեր է խաղացել մարդու խոսքում, ունեցել է իր առանձին ձևավորումը՝ *հոլովը* (Այժմ վրացերենն ունի կոչական հոլով. այն ուներ նաև հին հայերենը), հետևաբար եղել է *նախադասության կարևորագույն անդամներից մեկը,* ոչ պակաս, քան ենթական. այն իմաստային ու տրամաբանական կապերով կապված է նախադասության հետ, նրա կազմից դուրս մնալ չի կարող, մանավանդ որ իր հնչերանգով ներառվում է ամբողջ նախադասության հնչերանգի մեջ: Բացի դրանից, այն ունի իր առանձին՝ բարձրացող հնչերանգը, որն իր վրա է հրավիրում խոսքի օբյեկտին և ունի իր քերականական կարգերը:

Փորձենք մի երկու նախադասություններից հանել կոչականները, կտեսնենք, թե խոսքը ինչքան անորոշ ու տարտամ կլինի, և չի հասկացվի խոսողի, գրողի ասելիքի բուն էությունը: Օրինակ՝ ինչի նման կլինի Սիլվա Կապուտիկյանի պատգամը, եթե այն հասցեագրված չլինի իր որդուն, որն այստեղ ընդհանրացված կերպար է.

Լսի՛ր, որդի՛ս, պատգամ որպես...

Կամ ինչի՞ նման կլինի Սարմենի հետևյալ սրտառուչ խոսքը, եթե այնտեղ *Կոմիտաս* կոչականը չլինի, ի՞նչ կիմացվի, թե ո՞ւմ է կանչում կաքավը.

Գարուն է, անուշ գարուն, Դու ինչո՞ւ չկաս,

Կաքավն է երգում սիրով, Կանչում է՝ եկ, *Կոմիտա՛ս:*

Կամ առանց *կռունկ* կոչականի ժողովուրդը ումից խաբրիկ մը կաղերսեր, առանց *ծովակ* կոչականի Րաֆֆին ում հետ կխոսեր, առանց Արաքսի Պատկանյանը ո՞ւմ կդիմեր:

Տեղին ենք համարում նշել, որ որոշ կառույցներում կոչականները ավելի կարևոր դեր են խաղում խոսքում, քան ենթակաները, ավելի ակնառու են նշում գործողության կատարողը, այն անձը կամ առարկան, որին ստորոգումով վերագրվում է որևէ հատկանիշ: Այսպիսի դեպքերում կոչականները ոչ միայն բացահայտում են ենթական, այլև, ավելի ակտիվանալով, իրենք են «ստանձնում» ենթակայի դերը՝ չվերածվելով, սակայն, քերականական ենթակայի. այս դեպքում կոչականները դառնում են ասույթի, դատողության *տրամաբանական ենթակաները:* Լեզվում տարածված երևույթ է այն փաստը, որ կոչականների առկայության դեպքում շատ հաճախ նախադասությունների ենթակաները չեն կիրառվում (սա հատկապես այն դեպքում է լինում, երբ կոչականները հանդես են գալիս *երկրորդ դեմքերի բայերի* հետ): Բավարարվենք մի երկու օրինակով. «*Ազնո՛ւ,* որ մեծանաս, ի՞նչ ես դառնալու» (ԱԲ): «*Մարդի՛կ,* ինձ շատ եք չարչարել» (ՀՍ): «*Երկնքի՛ աստղեր,* հոգվույս մեջ ընկեք, Կայծ տվեք, կյանք ծեր սիրահարին հեգ» (ՊԴ): Պտտվի՛ր- պտտվի՛ր *կարուսե՛լ, Ես քո երգը վաղուց եմ լսել (ՎՏ):*

Բերված օրինակներն էլ, անշուշտ, ապացուցում են, որ կոչականը նախադասության կազմից դուրս մնալ չի կարող. *այն վճռական դեր է խաղում նախադասության իմաստի ճիշտ ձևավորման գործում:*

Քանի որ կոչականը նախադասության անդամ է, ուրեմն այն պետք է օժտված լինի իրեն հատուկ քերականական կարգերով. տեսնենք՝ որոնք են դրանք:

§ 163. ԿՈՉԱԿԱՆԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ: Ամենից առաջ կոչականն ունի *հոլովի քերականական կարգը*. այն դրվում է *ուղղական հոլովով* և որոշիչ հոդ է ընդունում:

Դիմավոր բայերի *երկրորդ դեմքի* հետ հանդես եկող կոչականները սերտորեն կապվում են բայերով արտահայտված ստորոգյալների հետ և ընկնում են բայերին հատուկ քերականական կարգերի՝ *եղանակավորման, դեմքի, թվի*, ինչպես նաև *ժամանակի* ոլորտներում: Այս մասին ակադեմիկոս Վ.Վինոգրադովը գրում է. «*Ստորոգելիությունը հատուկ է նաև կոչականին՝ խոսքի հասցեատիրոջ անվանմանը: Այսինքն՝ այդ միջոցով նրա մասին հասկացության արտահայտումը հարաբերակցվում է օբյեկտիվ իրականության հետ և կոնկրետացնում է օբյեկտը՝ իրական կամ ենթադրյալ անձը, որին խոսքով դիմում է խոսողը: Հարաբերակցության էությունը տվյալ դեպքում կայանում է հասկացության կոնկրետացման մեջ, որը քերականության մեջ իրականացվում է եղանակավորման, դեմքի, թվի և ժամանակի քերականական կարգերի միջոցով*»[57]:

Ելնելով Վինոգրադովի այս նկատառումներից և կոչականի ընձեռած հնարավորություններից՝ քննենք այդ կարգերը:

Եղանակավորում - Ամենից առաջ ասենք, որ կոչականը առնչվում է բայի եղանակների հետ: Վիճակագրական պարզ հաշվառումներն էլ հաստատում են այն փաստը, որ կոչականները ամենից շատ հանդես են գալիս հատկապես *հրամայական և բացականչական* նախադասություններում, որտեղ դրանք ավելի են կոնկրետացնում խոսքը՝ *այն ուղղելով գործողություն* կատարողին և ուժեղացնում են բայ-ստորոգյալի արտահայտած հրամանն ու կարգադրությունը, հանդիմանությունն ու խնդրանքը՝ *Թռե՛ք, բազենե՛ր, սուրացե՛ք, տանկե՛ր*, դեպի թշնամին (Ավ.Իս.): *Զգուշացե՛ք, ա՛պրո՛ն*, ապա թե ոչ, ձեզ հետ կկորչի նաև ձեր աղջիկը (Շ):

Կոչականները առատորեն են գործածվում նաև արգելական հրամայականներում՝ *Մի վազեք, ալի՛ք*, կացե՛ք, *կոհակնե՛ր* (Հ.Հովհ.): *Մի՞ լար, որդի՛ս, որ չես լսում էլ մայրական քաղցր օրոր* (Ծատ.):

Կոչականները ավելի սակավ կիրառություն ունեն բացականչական նախադասություններում՝ *Թաղեմ քեզ, հատի՛կ*, ու դարդս քեզ հետ (Հ.Հովհ.): *Գնա՛ս բարով, հա՛յ ուխտավոր*, երանի քեզ, *հայ ուխտավոր* (ՀԹ):

Կոչականները հանդես են գալիս նաև *հարցական* նախադասություններում՝ *Գովքդ ասող չմնաց, ո՞ւր ես գալիս, ա՛յ գարուն* (Հ.Հովհ.):

- *Արևի՛կ*, իսկ ի՞նչ պետք է անել առանց խմիչքի (ՎՊ):

Դեմքի քերականական կարգը նույնպես հատուկ է կոչականին, որը սակայն դիմային վերջավորություններով չի արտահայտվում: Քանի որ կո-

---

[57] Տե՛ս ***В.Виноградов***, նշվ. աշխ., էջ 405:

չականը մեծ մասամբ հանդես է գալիս որպես խոսակից, ուրեմն այն հիմնականում կապվում է *երկրորդ* դեմքի հետ, և նրան վերագրվում է *երկրորդ դեմքի քերականական կարգը*՝ Թո՛ղ, *Դիլա՛ն,* գնա քեզ համար (ԱԲ): *Անցո՛րդ,* խոնարհիր գլուխը քո սեգ, Այստեղ հանգչում է մի բուռ տիեզերք (ՀՇ): Կանչե՛, *կռունկ-* կանչե՛, քանի գարուն է (Ժող. երգ.):

Երբեմն էլ կոչականին վերագրվում է *առաջին դեմքի* հատկանիշ. այս դեպքում եզակի թվով գործածվող կոչականի հետ ստորոգյալը հանդես է գալիս *հոգնակի թվով.* պատճառն այն է, որ խոսողը իր խոսակցին ներառում է առաջին դեմքի ոլորտում, և գործողության կատարումը վերագրվում է թե՛ ենթակային և թե՛ կոչականին՝ միաժամանակ՝

- Կռվենք, *սպարապե՛տ:* Կռվենք, սերունդ-սերունդ կռվով գնանք (ԴՊ):

Կոչականը առաջին դեմքի հետ է համընկնում նաև, երբ խոսողը ինքն իր հետ է խոսում (ներքին խոսք)՝ «Ծերանում ենք, *Պարո՛յր Սևակ,* ծերանում ենք, *սիրելի՛ս* (ՊՍ):

Թվի քերականական կարգը նույնպես հատուկ է կոչականին: Այս դեպքում կոչականի թիվը համընկնում է ստորոգյալի թվին. բնականաբար, երբ խոսողը դիմում է մի անձի կամ առարկայի, և՛ կոչականը, և՛ ստորոգյալը կդրվեն եզակի թվով, իսկ եթե դրանք մեկից ավելի են, երկուսի թիվն էլ կլինի հոգնակի, ուրեմն՝ կա *թվային* համաձայնություն:

Եվ որտա՞, *զանգ և արթնացրո՛ւ* Դարավոր նիրհից Սասիս ու Կազբեկ, *Թափ տուր,* թևերդ, *արծի՛վ լեռներու, քնա՛ծ առյուծներ, բաշերդ թոթվե՛ք* (Ավ.Իս.):

Դուք էլ ինձ հետ *ծեծ տվեք, Իմ դարդերի քա՛յ սարեր* (ՀԹ): *Հրա՛շք աղջիկ՝ գիշերների թագուհի,* ճառագայթող քո աչքերով դու *եկար* (ՎՏ):

§ 164. ԿՈՉԱԿԱՆԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ - Ինչպես երևաց բերված օրինակներից, կոչականները խոսքում հանդես են գալիս ինչպես *մեկ բառով,* այնպես էլ՝ *իրենց լրացումներով:*

Լինելով նախադասության՝ գոյականով (կամ գոյականաբար հանդես եկող այլ խոսքի մասերով) արտահայտված անդամ՝ կոչականն, անշուշտ, ստանում է գոյականին հատուկ լրացումներ և վերածվում է *բազմանդամ կոչականի:* Ըստ որում, այդ լրացումները կարող են լրացնել ինչպես կոչականին, այնպես էլ իրար: Բազմանդամ կոչականներում բնականաբար գերադաս անդամը լինում է *բուն կոչականը,* ինչպես դերբայական դարձվածում գերադաս անդամը անկախ դերբայն է:

Առաջին աստիճանի լրացումները լրացնում են բուն կոչականին և կարող են լինել *որոշիչներ, հատկացուցիչներ ու բացահայտիչներ:* Երկրորդ աստիճանի լրացումները արդեն լրացման լրացումներ են դառնում: Օրինակ՝ Ողջո՛ւյն, ողջո՛ւյն ձեզ, *հի՛ն ու նո՛ր, արի՛, բարի ընկերներ»* (ՀԹ) նախադասության մեջ *հին ու նոր, արի, բարի* լրացումները առաջին աստիճանի լրացումներ են և լրացրել են *ընկերները* գերադաս անդամին: Իսկ

«Կմեռնեմ, միայն թե դու դարերում ազատ խշշաս,
Իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ, Հայրյան դալար բարդի» (ՀՍ)

նախադասության մեջ գերադաս անդամին՝ կոչականին, լրացրել են *նախդյան և դալար* որոշիչները, սրանց էլ՝ *հեռու և իմ լրացումները:* Մինչդեռ՝ «*Կապույտ երկնքի ոսկեհեն աստղեր,* Ձեր հեռվից դուք միշտ տեսնում եք նրան» (ՎՏ) նախադասության մեջ կա *երրորդ* աստիճանի ծավալում՝ *կապույտ*-ը լրացնում է *երկնքին,* սա էլ՝ *ոսկեհեն*-ին, վերջինս էլ՝ *աստղեր* գերադաս անդամին:

Բուն կոչականը (ծավալուն կոչականի գերադաս անդամը) կարող է ունենալ որոշիչ լրացումներ՝ արտահայտված՝ *ածականներով* (Արդյոք ո՞ւր ես դու, իմ *անուշ երազ: Սիրուն աղջիկ, մոտ արի:*

Թվականներով (Իններորդ համար, դաս պատասխանիր: *Առաջին կանգնած,* ետ գնա):

Դերբայներով (Դադրած, բեզարած յար ջան, Ամպերն ելան, տուն արի (Ավ.Իս.):

Գոյականի տարբեր հոլովներով (Աստվածամայր մայր իմ դու հեզ, Չունես չարի ոչ մի թել (ՀՇ): *Այ համով աղջիկ, այ ծամով աղջիկ* (ՀՄ): *Գիշերվա՛ երազ,* որտեղի՞ց հայտնվեցիր *(ԳՔ):*

Հատկացուցիչ լրացումներ՝ *երկնքի աստղե՛ր,* հոգվույս մեջ ընկեք, Կայծ տվեք, կյանք՝ ձեր սիրահարին հեզ (ՊԴ): Քո ունքերդ, *իմ սիրեկան,* կեռ են դահճի թրի նման (Ավ.Իս.): Շատ համեղ ես դու, *երևանի՛ ջուր:*

Բացահայտիչ լրացումներ - Այս լրացումը ավելի է պարզաբանում այն անձը կամ առարկան, որին դիմում է խոսողը, գրողը՝

Մենավո՛ր իմ սիրտ՝ մոլորվա՛ծ թռչուն,
Կարոտիդ կանչը չի հասնի նրան (ՎՏ):

Հրա՛շք աղջիկ՝ գիշերների՛ թագուհի,
Ճառագայթող քո աչքերով դու եկար (ՎՏ):

Հաճախ միևնույն կոչականը կարող է ունենալ և՛ *որոշիչ,* և՛ *հատկացուցիչ,* և՛ *բացահայտիչ* լրացումներ՝

Մայր իմ ժողովուրդ, դեպի քեզ կգամ,
Դեպի քեզ, *հայրենի՛ աշխարհ* (Ավ.Իս.):

Քեզ մոտ եմ գալիս, *հայրենիք իմ հեզ* (ՀՄ):

Մելամաղձո՛տ լճակդ իմ, քեզ հետ ըլլանք մտերիմ (ՊԴ):

§ 165. ԿՈՉԱԿԱՆԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ - Միաբառ կոչականը, կամ բազմանդամ կոչականի գերադաս անդամը կարող է արտահայտվել տարբեր խոսքի մասերով, ինչպես նաև բառակապակցություններով՝ այդ թվում նաև դարձվածային միավորներով՝ բոլորն էլ ուղղական հոլովով և առանց որոշիչ հոդերի (Ս և Դ հոդեր կարող են ստանալ):

Գոյականներով - Գիշեր ու զօր դու ինչում ես, *իմ անուշ տավիղ,* Ասես աղբյուր կարկաչում ես, իմ անուշ տավիղ (ՎՀ): Ինչպես չսիրեմ քեզ, *իմ անգի՛ն լեզու* (ԴԼ):

Ածականներով - Այս դեպքում կոչական ածականների հետ մեծ մա-

սամբ հանդես է գալիս նաև *ջան* բառը՝ *Անուշիկ ջան*, մի բաժակ ջուր տուր: *Փոքրի՛կ ջան*, մոտ արի:

Ել, *ազի՛զ ջան*, գարունն եկավ, Ալ-բալ հագան սար ու ծոր (Ավ.Իս.):

Ջան բառին նման դեպքերում համարժեք է *U* հոդը, որը փաղաքշականի իմաստ է ստանում (*փոքրիկս, անուշիկս, թմբլիկս, սիրունիկս, լավիկս, ջանիկս, նազելիս*):

Ածականները կոչականի դեր են կատարում նաև այն դեպքում, երբ խոսողը խոսակցին դիմում է հանդիմանելու, վիրավորելու, անարգելու համար և գործածում է *դմբո, հիմար, անզգամ, դող, տգետ, տհաս, անճոռնի, ապաշնորհ, անգութ, անխիղճ* ածականները, ինչպես նաև՝ *հայվան, անասուն, գազան, բորենի* և նման գոյականներ:

Թվականներով - Առաջի՛ն, արագացրու քայլերդ, *երկրո՛րդ,* իսկ դու հասիր նրան:

Չո՛րս հարյուր հինգ, ջահը վաճառված է, մուծիր դրամը և ստացիր քո ապրանքը (ՍԳ):

Դերանվամբ - Որպես կոչականներ են գործածվում միայն անձնական դերանվան երկրորդ դեմքի եզակի և հոգնակի թվերը. պատճառն այն է, որ խոսողը կոչականին դիմում է որպես խոսակցի, որին էլ հատուկ է երկրորդ դեմքը: Օրինակներ՝

Դո՛ւ հին, հնամյա, *դո՛ւ* բիբլիական,
Դու նոր Երևան՝ պատմությամբ լի (ՍԿ):

Ծո՛վ դու ժպտուն, հրաշատեսիլ կապույտ ծով,
Աչքերս ի քեզ հառած մնամ ժամերով (Մ.Աճեմյան):

Դժվար չէ նկատել, որ դերանուններով արտահայտված կոչականները իրենց հետ կարող են ունենալ նաև գոյականներով արտահայտված կոչականներ ևս:

Բնականաբար, դերանուն-կոչականները տարբերվում են դերանուն, ենթականերից. ենթակաների դեպքում՝ նրանց ստորոգումով հատկանիշ է վերագրվում (Ես կգամ, երբ դու մենակ կմնաս (ՎՏ): Դուք էլ ինձ հետ ծեն տվեք, իմ դարդերին թայ սարեր (ՀԹ): Իսկ դերանուն - կոչականների դեպքում խոսողը պարզապես դիմում է որևէ անձի կամ առարկայի:

Քանի որ դերանունն ունի ընդհանուր, չտարբերակված իմաստ, այդ պատճառով էլ խոսողը, գրողը իր խոսակցին ավելի որոշակի ու ճանաչելի դարձնելու համար հաճախ բացահայտում է, թե ով կամ ինչ է այդ դերանուն-կոչականը՝

Իմ սուրբ մանկիկ, թող համբուրեմ թաթիկներդ ցեխոտած.

Դու՝ կյանք ու սեր, ծափ ու ծիծաղ,
Ուրախության դու աստված (Ավ.Իս.):

Հարակատար և ենթակայական դերբայները գոյականաբար գործածվելիս նույնպես կարող են կոչականների դերում հանդես գալ, այս դեպքում դրանք սովորաբար ունենում են իրենց լրացումները (*Բա՛ծր խոսող,* խան-

գարում ես: *Արա՛գ վազող,* մոտեցիր մարզիչին: *Հոգով արիացածնե՛ր, մի վհատվեք: Պատի տակ կանգնա՛ծ,* ննստիր):

Խոսակցին տեղանունով կոչելը նույնպես ընդունված դիմելածև է, որը ավելի շատ բանավոր խոսքին է հատուկ և հիմնականում հասարակաբանություն է՝

- *Տո՛ մեղրածորցի,* դու քանի՞ գլխանի ես, որ Հացավանի կանանց վրա ձեռ ես բարձրացնում (ՆՉ):

Արևն ելավ, *զեյթունցինե՛ր,* Դեհ, ձի հեծնենք, առնենք զենքեր, դիմենք առաջ (Հ.Չաքրյան):

Կոչականներ են դառնում նաև ազգության, զբաղմունքի մասնագիտության անվանումներ, ինչպես նաև ցանկացած բառեր, բառակապակցություններ ու դարձվածներ

-Ռո՛ւս, դրաստի, ռո՛ւս, դրաստի, - վազելով ռուս զինվորների հետևից՝ բղավում էին գյուղի երեխաները (ՀՄ):

- *Չարչի՛ ախպեր, չարչի՛ ախպեր,* ասեղ ունե՞ս, էս կո՛ղմը բեր (ՀԹ):

- *Վարո՛ղ,* այստեղ պահեք մեքենաս, խնդրում եմ:

- *Պաղպաղակ, պաղպաղակ,* սպասիր մի քիչ, - բղավում են երեխաները:

... Դու օգտվեցիր, *թվաբանությո՛ւն* (ՊՍ):

ԿՈՉԱԿԱՆԻ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

§ 166. Հայտնի է, որ ոճերի միջոցով խոսողն արտահայտում է նաև իր վերաբերմունքը անձի, առարկայի կամ եղելության նկատմամբ. և քանի որ կոչականն էլ հենց այն անձն է կամ անձնավորված առարկան, որին դիմում է խոսողը, հետևաբար տարբեր ոճերում կոչականն ունի տարբեր կշռույթ ու բազմազան կիրառություններ: Կոչականը, շնորհիվ իր հատուկ հնչերանգի ու արտաբերման եղանակի, մի դեպքում խոսքին հաղորդում է պոետական շունչ, արտահայտչականություն ու բնության շնչավորում (*Ջյունապատ լեռներ ու կապո՛ւյտ լճեր, Երկինքնե՛ր որպես երազներ* հոգու, *Երկինքնե՛ր որպես մանկական աչեր,* Մենակ էի ես, ինձ հետ էիր դու (ԵՉ): Մեկ ուրիշ ոճում այն կարող է թախիծ ու տրտմություն արտահայտել *(Աղջի՛, Մանուշա՛կ,* վատ բան ես տեսել (ՀԹ): Մի ուրիշ տեղ՝ խնդրանք ու աղերսանք *(Վա՛յ, վա՛յ, Մոսի՛ ջան,* ինձ մի՛ սպանիր, Ինձ թող էս անգամ (ՀԹ), մի այլ դեպքում՝ ցավ ու ափսոսանք (*Ափսո՛ս, Անո՛ւշ, սարի՛ ծաղիկ... ՀԹ*) և այլն:

Իհարկե, խոսքային այսպիսի երանգավորումներ կոչականներն արտահայտում են հատկապես բայերի տարբեր եղանակների, ձայնարկությունների ու եղանակավորող բառերի հետ միասին:

Վարչագործառական ոճերում, որպես կոչականներ խոսակցական ոճին հատուկ հասարակ, սովորական բառեր չեն գործածվում. այս ոճերում, որպես դիմելածև, ամենից առաջ ընդունված է գործածել տվյալ պաշտոնատար անձի անուն - հայրանունը, կամ ազգանվան հետ՝ *պարոն* կամ ընկեր

որոշիչները (Սեմյո՛ն Տիգրանիչ, Վարդուհի Արշակովնա կամ ընկե՛ր Հախումյան, պարո՛ն Սիմոնյան և այլն)* :

Պարոն կամ *ընկեր* բառերը գործածվում են նաև պաշտոնների, մասնագիտությունների, զբաղմունքների անվանումների հետ (*պարո՛ն նախարար, պարոնա՛յք պատգամավորներ, ընկե՛ր հրամանատար, ընկե՛ր փոխտնօրեն*):

Դատավարական գործընթացում ընդունված ձև է *քաղաքացի* որոշիչը՝ *քաղաքացի դատավոր, քաղաքացի դատախազ,* ինչպես նաև *ամբաստանյալ, մեղադրյալ* և այլն:

Առօրյա-խոսակցական ոճերում որպես կոչականներ կիրառվում են ամենատարբեր բառեր ու բառակապակցություններ՝ կապված ընտանիքի անդամների, ազգակցական ու բարեկամական կապերի, մարդուն բնորոշ հատկանիշների (առավելությունների, թերությունների, պակասությունների, տարիքի, զբաղմունքի և ուրիշ հատկանիշների հետ):

ա) Ընտանեկան, բարեկամական, ազգակցական կապեր անվանող կոչականներ (*պապի՛կ, տատի՛կ, հայրի՛կ, մայրի՛կ, քույրի՛կ, եղբայր, քեռի՛, մորաքո՛ւյր, հորեղբա՛յր, խնամի՛, հարևա՛ն, բարեկա՛մ* և նման բառեր, որոնք գործածվում են նաև ոչ իրենց իսկական նշանակությամբ (օտարին էլ են դիմում նման կոչականներով): Այս բառերի հետ, հատկապես բանավոր խոսքում, լայնորեն գործածվում է նաև *ջան* բառը որպես սիրալիրության արտահայտություն (Պապի՛կ ջան, պաղպաղակի փող կտա՞ս: Քեռի՛ ջան, գրախանութի տեղը չե՞ք ասի: Բալա՛ ջան, օգնի՛ր ինձ...):

Ազիզ բառը իր հերթին մեկ ուրիշ կոչականի համար կարող է որոշիչ դառնալ (*Ազի՛զ ընկեր,* նեղն եմ ընկել, որտե՞ղ ես (Զիվանի), *Ազի՛զ բալա,* ինձ լսի՛ր):

բ) Որպես հարգանքի արտահայտություն երբեմն էլ կոչականների վրա դրվում է Ս հոդը (սիրելիՍ, հարգելիՍ, տղաՍ, բարեկամՍ, զավակՍ, աղջիկՍ, լավիկՍ...):

Ավելի սակավ կիրառություն ունի նաև *Դ* հոդը (*սա հնացած ձև է*)՝

Սիրելի՛ Զիվան, ընկերդ իմ հոգու, Մարդկային սիրտը հասկանում ես դու (ՀԹ):

Քեզ ասեմ, Մուշե՛ղ, որդի՛ Վասակա, Քեզ ասեմ, *արիդ* ու կանչեմ ոխի (ՎԴ):

Սիրելի և *հարգելի* բառերը նույնպես հաճախ են գործածվում կոչականների հետ, բայց սա արդեն ավելի բարձր ոճերում ու հատկապես նամակներում:

գ) Որպես կոչականներ են գործածվում նաև մարդկանց վարքագծերի հատկանիշների, բնավորության գծերի (թե՛ դրական և թե՛ բացասական), վարվելակերպի, հասակի, տարիքի, սեռի, նույնիսկ ֆիզիկական արատնե-

---

* Մենք առաջարկում ենք ռուսական *իչ, ովիչ, ովնա, եվնա* ածանցների փոխարեն գործածել մեր հայկական բարեհունչ դիմելաձևերը՝ Սեմյո՛ն Տիգրանի, Լևո՛ն Արտաշեսի, Վահրա՛մ Խաչատուրի, Սեդա՛ Արմենակի, Վարդուհի՛ Գեղամի և այլն:

րի ու թերությունների անվանումներ *(խելոք, քաջագործ, հիմար, վայրենի, անամոթ, անպատկառ, ապուշ, լիրբ, տխմար, գիժ, լկտի, շաշ, տգետ, բիծա, քորփա, գող, ավազակ...)*: Գործածվում են նաև կենդանիների ու թռչունների անվանումներ (*կարիճ, օձ, արջ, սողուն, ավանակ, ջորի, սև շուն, վայրի գազան, սև ագռավ, խորամանկ աղվես...*): Թվարկված որոշ բառերի հետ գործածվում է նաև *մեկը* անորոշ դերանունը (*հիմարի մեկը, տգետի մեկը, ապուշի մեկը, հայվանի մեկը...*):

դ) Բարբառներում և խոսակցական լեզվում տարածված ձև են անձնանունների կրճատված ձևերը որպես կոչականներ գործածելը. (Խաչո՛, Հովո՛, Կարո՛, Լուսո՛, Վարդո՛, Հասո՛), ինչպես նաև որոշ բարբառներին հատուկ դիմելաձևերը (*արա՛, ծո՛, գյա՛, տո՛, աղա՛, գյադա՛, լածիրա՛կ* և այլն):

ե) Ընդհանուր տարածում է գտել հեռախոսային ԱԼԼՈ (HELLO) օտար կոչականը, որի փոխարեն առաջարկում ենք՝ ԱՅՈ՛ բառը կամ ԼՍՈՒՄ ԵՄ նախադասությունը:

Գրական ոճերում, հատկապես չափածոյում, կոչականը ավելի է երանգավորում խոսքը, բարձրացնում է նրա հուզարտահայտչական լիցքը՝ մի դեպքում արտահայտելով ուրախություն, մյուս դեպքում՝ տխրություն, մի դեպքում՝ հույզ, մյուս դեպքում՝ թախիծ, ինչպես նաև՝ զարմանք ու ցասում:

Հատկապես բանաստեղծական խոսքում կոչականների միջոցով բանաստեղծները անձնավորում ու շնչավորում են առարկաներն ու երևույթները.

Արա՛քս, ինչո՞ւ ձկանց հետ պար չես բռնում մանկական (ՌՊ):

Սի՛րտ իմ, գազազես, ի՞նչ պիտի անես... (Ավ.Իս.):

Գարնա՛ն թռչուններ, երկնքի մովում
Երգեցեք նրան իմ սիրո մասին (ԳՍ):

Դու, Արագա՛ծ, ալմաստ-վահան, կայծակեղեն թրերի... (Ավ.Իս.):

Կոչականի ոճական արժեքը ավելի ընդգծված է դրսևորվում *հռետորական հարցման ու հռետորական բացականչության նախադասություններում.*

Իմ *նո՛ր հայրենիք, հզո՛ր հայրենիք* (ՀԹ):

Կոչականի ոճական կիրառության հրաշալի միջոցներ են նաև նրա կրկնությունն ու վերջադաս կիրառությունները (էպիֆորը).

Հեյ ճամփաննե՛ր, ճամփաննե՛ր, Անդարձ ու հին *ճամփաներ*,
Ովքե՞ր անցան ձեզանով, Ո՞ւր գնացին, *ճամփաննե՛ր* (ՀԹ):

Բրոնզե *քո՛ւյր իմ, բրոնզե քույր իմ, բրոնզե հարս...* (ԵՉ):
էպիֆորի օրինակ՝

Սև-մութ ամպեր ճակտիս դիզվան, Դուման հագար, *Ալագյա՛զ*,
Սրտումս արև էլ չի ծաղկում, սիրտս է դուման, *Ալագյա՛զ* (Ավ.Իս.)

Ենպես ըլի մե-մե անգամ տեսքդ տեսնեմ, վարդ ես, *գոզալ*,
Ես փուչ կյանքում սրտիս տված, անմահական զարդ ես, *գոզալ* (ԵՉ):

ԿՈՉԱԿԱՆԻ ՀՆՉԵՐԱՆԳԸ, ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 167. Կոչականը, որպես նախադասության կազմի մեջ մտնող միավոր, որը միաժամանակ խոսողի վերաբերմունքն է արտահայտում խոսակցի և խոսքի նկատմամբ, առաջին հերթին օժտված է *առանձնահատուկ հնչերանգով*, որը գրավոր խոսքում նշույթավորվում է ստորակետով ու շեշտով: *Բառը կոչական է դառնում հնչերանգի միջոցով:* Օրինակ՝ հետևյալ նախադասությունը տարբեր հնչերանգներով արտաբերելիս *հայրենիք* բառը մի դեպքում դառնում է կողմնակի ուղիղ խնդիր (*Հայրենիք* սիրելը ազնվացնում է մարդուն), մյուս դեպքում՝ կոչական (*Հայրենի՛ք*, սիրելը ազնվացնում է մարդուն): Այս մասին տես նաև § 12:

Ըստ իրենց ոճաիմաստային արտահայտչական բազմազանության ու շարադասության՝ կոչականներն ունեն հնչերանգային հարուստ ներբերանգներ. *մի դեպքում դրանք արտաբերվում են ուժեղ, բարձրացող հնչերանգով, մի այլ դեպքեր՝ մեղմ կամ թույլ:* Կոչականի հնչերանգը պայմանավորված է նաև նախադասությունների հնչերանգային տեսակով, ինչպես նաև կոչականներ անվանող անձերի դիրքով, պաշտոնով, խոսակիցների մակարդակով, տրամադրությամբ, միջավայրով և այլն:

Կոչականի *շարադասությունը ազատ* է, նրա տեղը խոսքում պայմանավորված է խոսողի ցանկությամբ ու տրամադրությամբ: Սակայն կան դեպքեր, երբ կոչականի նախադաս կիրառությունը պարտադիր է. դա հատուկ է հատկապես պաշտոնական ոճերին (ելույթներ, հրապարակախոսություններ, հայտարարություններ, զեկուցումներ, ինչպես նաև որոշ գործնական գրություններ):

Սովորաբար նախադաս կոչականները ավելի բարձր հնչերանգով են արտաբերվում, մանավանդ եթե դրանցից առաջ կան բացականչական բառեր ու ձայնարկություններ, ողջույնի, հրաժեշտի բարեմաղթություններ (Ողջո՜ւյն, ողջո՜ւյն ձեզ, հին ու նոր, արի՛, բարի՛ *ընկերներ*... (ՀԹ): Մնաք բարով, *ա՛րև, գարո՛ւն և* խնկաբո՛ւյր *ծաղիկներ*... (Հ.Հովհ.):

Կոչականի *կետադրությունը* բարդ չէ. այն տրոհվում է ստորակետով իր վերջին վանկի ձայնավորի վրա շեշտ է կրում, իսկ եթե կոչականն ունենում է նախադաս որոշիչ, շեշտն անցնում է այդ որոշչի վրա (Սիրո՛ւն *աղջիկ*, ի՞նչ ես լալիս ու ման գալիս... (ՀԹ): Նախադաս հատկացուցիչը չի շեշտվում՝ Արի՛, իմ *սոխակ*... (ՌՊ): Կոչականից հետո դրվող լրացումները չեն շեշտվում. շեշտը մնում է կոչականի վրա (*Սանկո՛ւթ* իմ քնքշագին, ես քեզ ինչպե՞ս մոռանամ (Սարմեն): Քո՛ւյր իմ նազելի, նայիր քո դիմաց... (Ավ.Իս.):

Կոչականները հաճախ հանդես են գալիս ձայնարկությունների հետ: Այս դեպքում՝

1) եթե դրանք հանդես են գալիս կոչական ձայնարկությունների հետ

(ա՛յ, հե՛յ, է՛յ, ջան) չեն տրոհվում. օրինակ՝ Ա՛յ պա՛ղ *ջրեր*, զուլա՛լ ջրեր... (ՀԹ): Այ դու *կկու՛*, հիմա՛ր *կկու*...(ՀԹ):

Ջա՛ն հայրենի՛ անտառներ, Դուք եք կանչում ինձ ձերոքով (ՀԹ):

2. Եթե կոչականները հանգես են գալիս բացականչական ձայնարկությունների հետ (ա՛խ, վա՛խ, ամա՛ն, վա՛յ, ափսո՛ս, է՛, է՛հ և այլն), տրոհվում են՝

Ա՛խ, *Անո՛ւշ, Անո՛ւշ,* անաստվա՛ծ *Անուշ*... Ափսո՛ս, *Անո՛ւշ,* սարի ծաղիկ (ՀԹ):

է՛յ, *Նավավա՛ր,* ի՞նչ ես անում... (ԱԾ): Հե՛յ, ո՞ւր ես, Դավի՛թ, հայոց պահապան (ՀԹ):

Սակայն սա այնքան էլ կայուն կանոն չէ. ձայնարկություններից տրոհվելը նույնպես պայմանավորված է հնչերանգով:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏՐՈՀՎՈՂ ԱՅԼ ԱՆԴԱՄՆԵՐ

§ 168. Կոչականներից բացի նախադասության մեջ տրոհվում են ինչպես նրա բազմակի անդամները (սրանց մասին խոսվել է վերևում. տե՛ս § 157), այնպես էլ շարադասությամբ, լրացումների ծավալով, ինչպես նաև այլ հանգամանքներով պայմանավորված անդամները:

Նախադասության անդամների տրոհումը կատարվում է որոշակի հնչերանգով, որը գրավոր խոսքում արտահայտվում է կետադրական նշաններով՝ բութով կամ ստորակետով, կամ՝ թե՛ մեկով և թե՛ մյուսով:

Քննարկենք բազմակիության հետ կապ չունեցող տրոհման դեպքերը:

1. *Տրոհվում է կողմնակի ենթական,* եթե նրա ու դերբայի միջև ընկած են այլ անդամներ՝ Ներկաներին հիացրեց 5 տարեկան *երեխայի*՝ այդքան հմայիչ նվագելը (ԳԹ): Սիմինդրի *տերևների*՝ իրիկվա հովից խշշալը դառն հուշեր էր արթնացնում Դիլանի սրտում: *Սոնայի*՝ միրհավի պես ծեռքից թռչելը անթեղված կրակ էր դարձել:

2. *Հատկացուցիչը* նույնպես տրոհվում է, եթե նրա և հատկացյալի արանքում այլ բառեր են ընկնում: Այս դեպքում հատկացուցիչը տրոհվում է բութով, բայց հատկացյալից հետո ստորակետ չի դրվում՝ *Աղջկա*՝ դիմացի պատշգամբին ուղղված հայացքում թախիծ կար: *Իմ*՝ քո նկատմամբ ունեցած վերաբերմունքը միշտ էլ բարյացակամ է եղել: *Գրքի*՝ բավականին ուշացած շնորհանդեսը վերջապես կատարվեց:

3. *Բացահայտիչ լրացումը* պարզաբանող բնույթ ունի, դրա համար էլ միշտ դրվում է բացահայտյալից հետո և տրոհվում է *բութով,* ըստ որում՝ կետադրական այս նշանները նույնն են բացահայտիչի 3 տեսակների համար. Կիբեռնետիկայի հայրը՝ *Նորբերտ Վիները,* մաթեմատիկայով լրջորեն սկսել է զբաղվել 5 տարեկանից: Մենք՝ *երիտասարդներս,* հետևում ենք մեր ավագներին: Հասմիկը՝ *իբրև կուրսի ավագ,* իրեն արդարացնում է: Այդպես մի անգամ էլ՝ *շատ տարիներ առաջ,* ճոնչաց այգու դուռը (ԱԲ):

Շարադասությամբ պայմանավորված տրոհում - Ինչպես ասվել է «Շարադասություն» բաժնում՝ նախադասության անդամների տրոհումը պայմանավորված է նաև նրա անդամների շարադասությամբ: Հիմնականում տրոհվում են ետադաս որոշիչը, հատկացուցիչը և պարագաների մի մասը:

1. *Տրոհվող որոշիչ* -Տրոհվում են *ետադաս* բազմակի որոշիչները. որոշիչը որոշյալից տրոհվում է բութով, իսկ նախադասության մյուս անդամներից՝ ստորակետերով՝

Մայրս ուներ բարակ ձեռներ, Սոմե մատներ՝ *երկար ու նուրբ* (ՎՏ):

Մանկական ձայնը՝ *սկզբում կերկեր,* Վայրկյաններ հետո ինքն իրեն գտավ (ՊՍ):

Մի ճերմակ ամպ՝ *թափանցիկ ու տծև,* հանդարտ լողում է լազուրի մեջ (ԱԲ): Բացվում են վայրի վարդերը՝ *դեղին, սպիտակ* (ԱԲ):

Տրոհվող ետադաս որոշիչները արտահայտվում են նաև բառակապակցություններով՝ այդ թվում նաև դերբայական դարձվածներով ու դարձվածային միավորներով: Օրինակ՝ Տաքանում են Օրանջիայի քարերը, և խլեզները՝ *փորի մաշկը դեղին,* պառկում են տաք քարերի վրա (ԱԲ): Տերասածև բարձրանում են ժայռերը՝ *մեկը մյուսից խոժոռ ու ահռելի* (ԱԲ): Հետաքրքիր մարդ էր մեր Սիմոնը՝ *կյանքին անհաղորդ* (ՔԹ):

ԴԴ-ներով Հիմա էլ՝ Աքնաձորում մուգ-կանաչ մաշկով խլեզներ կան՝ *մարդու երես չտեսած* (ԱԲ): ... Շատ ջահել կին էր՝ *հագիվ քսանհինգը բոլորած* (ՀԱ):

Դարձվածային միավորներով՝ Բարեկամս երկու երեխա ունի, երկուսն էլ՝ *աստծո երեսից ընկած* (ՍԳ): Լավ եմ ճանաչում, շատ ժլատ մարդ է՝ *լվից ծրագու հանող* (ՈՒԴԲ):

Երբեմն էլ տրոհվում են *միաբառ ետադաս* որոշիչները՝ Ու ծուխը՝ *կապույտ,* բարձրանում էր վեր (ԵՉ): Արևը՝ *բորբ,* մայր էր մտնում արևմուտքում (ԵՉ):

2. Տրոհվում է նաև *ետադաս հատկացուցիչը*՝ Նրանք պատմում էին մահացած սերը՝ *թիթեռների ու ծաղիկների* (ԳՍ): Վար նետեմ ցուպս այս մաշված՝ *թափառական պանդուխտի* (Գ.Էմին): Ձեռքս ընկավ մի դալար ճյուղ՝ *նորատունկ ծառի* (ՍԳ):

3. *Տրոհվող պարագաներ* - Բայական անդամի լրացումներից տրոհվում են միայն պարագաները (այն էլ՝ ոչ բոլորը): Տրոհվում են ԴԴ-ներով արտահայտված որոշ պարագաներ: Չի բացառվում նաև կապային կառույցներով կամ ածականներով, մակբայներով ու գոյականներով արտահայտված պարագաների տրոհումը: Սրանց տրոհումը կետադրական ընդունված կանոններից չի շեղվում. նախադասի և վերջադասի դեպքում տրոհվում են բութով, միջադասի դեպքում՝ ստորակետով (տե՛ս § 155.):

Չևի պարագա՝ արտահայտված ԴԴ-ներով՝ Գալիս է հեռվից՝ *բարձր գոռալով* (ՀԹ):

Հագած-կապած զենք ու զրահ՝ արշավեցին թշնամու վրա:
Ոռնում են գայլերը՝ *դնչները լուսնյակին մեկնած* (ԱԲ):

Տրոհվում են նաև որոշ *կապային կառույցներով* արտահայտված ձևի պարագաները. *Սթնածորում արջերը պար են բռնում՝ սուլելով չոբանի պես* (ԱԲ)։ Գնում էր տուն՝ *դատարկ պայուսակը թևի տակ* (ՊՊ)։

Տրոհվում են նաև *ածականներով, մակբայներով ու գոյականներով* արտահայտված ծավալուն ձևի պարագաները՝ Շատ հերոսներ մահը գրկեցին՝ *արիաբար ու հաղթական* (ՀՀ)։ Վրնջում էին ձիերը՝ *մետաղածայն ու երկարածոր* (ԵՉ)։ Լիպոն արշավում էր բանակում՝ *ռազմի շապիկով։* Հոգնած ժամանակ անկողին էր մտնում՝ *գուլպաներով ու շորերով* (ՍԳ)։

Տրոհվող նպատակի պարագան մեծ մասամբ արտահայտվում է ետադաս ԴԴ-ներով, երբեմն էլ կապային կառույցներով՝ Վարագները ժանիքով փորում են հողը՝ *աշունքվա* փտած կաղիններ որոնելու (ԱԲ)։ Բարձրացան վանքի կտուրը՝ *կտուրին բուսած թփերը կրծելու* (ԱԲ)։ Նա միանում էր ժողովրդին՝ *աշխարհը կործանումից փրկելու համար* (ԴԴ)։ Կինը, *աչքերը մուխից պահելու համար,* ծեռքը բռնում էր ճակատին (ԱԲ)։

Ժամանակի պարագան նույնպես տրոհվում է, եթե արտահայտված է անորոշ դերբայի գործիական հոլովով, հարակատար դերբայով կազմված ԴԴ-ներով, ինչպես նաև կապերով՝ *Հասնելով բերդի ավերակներին՝* ծիավորները ցած թռան ձիերից (ԹՆԺ)։ *Ղեռ ժայռերին չհասած՝* դիմացից լսվեց հրացանի պայթյուն (ԱԲ)։ *Ջուրը չտեսած՝* մի բոբիկանա (Ժող.)։

Սովորաբար *համակատար դերբայով կառույցները* չեն տրոհվում, սակայն պոեզիայում քիչ չեն նաև տրոհման դեպքերը՝

Մանկությունս հիշելիս՝ սիրտս դառնում է գինով.
Ես մի ընկեր ունեի Լիպո անունով (ԵՉ)։

... *Մենք էլ օրհնելիս մեր զավակներին՝* Չեր խոսքն ենք ասում... (ՀԹ)։

Պատճառի պարագան ևս տրոհվում է, երբ ծավալուն է, կամ արտահայտված է ԴԴ-ով՝ *Կամենալով փարատել* դիմացինի անձկությունը՝ ինքն էլ էր հիվանդացել (ԴԴ)։ Դու, *Մուսայի խելքով ընկած,* վեր ես կենում, մեզ հայհոյում (ՀԹ)։ Միևչ տներում, *ներսի տաքից,* ապակիներն ուրախությամբ լաց են լինում աննպատակ... (ՊՍ)։

Հիմունքի և հակառակ հիմունքի պարագաները, ծավալուն լինելու դեպքում, ինչպես նաև կապական կառույցներով, նույնպես տրոհվում են՝ *Զանազան հիմնավորումներով էլ՝* աշխատում էր դուրս գալ իրավիճակներից (Ոզնի)։ *Չնայած անտանելի շոգին ու թեժ աղմուկին՝* Բաղդադի փողոցները լիքն էին ժողովրդով (ՀԹ)։ *Չնայած եղանակի ցրտությանը՝* հովիվները չէին ուզում տուն վերադառնալ (Գար.)։

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԿԻՑ ՄԻԱՎՈՐՆԵՐ

§ 169. Ինչպես ասվել է, նախադասությունը քերականական օրենքներով ու կանոններով կազմված շարահյուսական կառույց է, որն իր մեջ ներառում է լեզվի ամբողջ բառապաշարը: Այդ բառապաշարի *նյութական իմաստ* ունեցող բառերը հանդես են գալիս *նախադասության գլխավոր և երկրորդական անդամների պաշտոններով*, այսինքն՝ արտահայտում են առարկայական աշխարհի իրերն ու երևույթները՝ իրենց բազմազան հատկանիշներով: Իսկ *նյութական իմաստից զուրկ* բառերը նախադասության մեջ երկու դեր են կատարում՝ *քերականական (* սրանք կապերն ու շաղկապներն են) և *վերաբերմունքային* (սրանք վերաբերականներն ու ծայնարկույթներն են): Վերջին երկու կարգի բառերը թեև նախադասության անդամներ չեն լինում, սակայն որոշակի դեր են խաղում նախադասությունների մեջ ինչպես կառուցվածքային, այնպես էլ բովանդակային տեսակետից՝ արտահայտելով խոսողի կամային՝ *մտային* կամ *հուզական* վերաբերմունքը:

Նախադասության հարակից միավորներից շարահյուսական մակարդակի քննության միավորներ պետք է համարել վերաբերականները, միջարկությունները, ինչպես նաև ներդրյալ բառերը, բառակապակցություններն ու նախադասությունները: Իսկ *կապերն ու շաղկապները*, ինչպես ասվել է § 6-7-ում, շարահյուսական կապակցության միջոցներ են:

ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆՆԵՐ, ՄԻՋԱՆԿՅԱԼ ԲԱՌԵՐ

§ 170. Լեզուների պատմական զարգացման ընթացքում զգալի իմաստափոխությունների են ենթարկվում նաև բառերը, որի հետևանքով էլ տեղաշարժեր են առաջանում նաև խոսքի մասերում, ըստ որում, նյութական իմաստ ունեցող որոշ բառեր կարող են զրկվել իրենց նյութական իմաստից և վերածվել սպասարկու խոսքի մասերի. այդպես է կատարվել նաև վերաբերականների հետ, որոնց մեծ մասը առաջացել է *գոյականներից (արդյոք, իհարկե, իրավ, հիրավի, իրավամբ, ցավոք, մի խոսքով, ինչ խոսք) ածականներից (անկասկած, անպատճառ, լոկ, սոսկ, ճշմարիտ, դժվար թե) դերանուններից (ինչևէ, ինչևիցե, ուր է թե), բայերից (խնդրեմ, կարծեմ, կարծես, կեցցես, թող, համմե, տեսնես...), մակբայներից (ամենևին, բնավ, պարզապես, վերջապես, դժբախտաբար, ի վերջո, արդ, էլի...), շաղկապներից (նույնինքն, անգամ, գեթ, գոնե, համենայն դեպս, իսկ որ...)*: Որոշ միակազմ նախադասություններ ու դարձվածներ նույնպես ձեռք են բերել վերաբերականների իմաստ (*ինչ խոսք, այ քեզ բան, աստված չանի, արևս վկա, տա աստված, ծայն բարբառո հանապատի* և այլն):

Այսպիսով՝ վերաբերականները, լինելով չթեքվող խոսքի մաս, շարահյուսական մակարդակում հանդես են գալիս նախադասության մեջ որպես նրա հարաբերակից միավորներ և արտահայտում են խոսողի *գնահատո-*

դական-դատողական՝ կամային վերաբերմունքը ամբողջ նախադասության կամ նրա որևէ անդամի վերաբերյալ: Խոսողը մի դեպքում հաստատում է իր ասածը կամ լսածը, մյուս դեպքում կասկածի տակ է առնում այն, երբեմն էլ ժխտում է կամ ավելի սաստկացնում, և ըստ այդմ էլ վերաբերականները լինում են՝

Հաստատական (անշուշտ, անտարակույս, բնականաբար, իսկապես, իհարկե, հարկավ). օրինակներ՝

Այս անգամ ընտրությունները, *անշուշտ*, արդարացի կլինեն: *Իհարկե*, դու ճիշտ ես: Հաստատական է նաև *այո* վերաբերականը՝ Կոմիտասը, *այո՛*, մեր երգի վեհափառն է:

Երկբայական (գուցե, գրեթե, թերևս, դժվար թե, իբրև թե, միգուցե, հազիվ թե). օրինակներ՝

Հազիվ թե կարողանանք արդարացի ընտրություն կատարել: *Կարծես* հավք էր թառել անտառի մթին խորքում (ԱԲ): *Թերևս* հաջողացնեմ աշխատանքը ժամանակին ավարտել:

Զգացական՝ Երնեկ նրան, ով հայրենական տուն ունի հիմի (Սարմեն): *Դժբախտաբար*, չեմ կարող հավաքին մասնակցել: *Ցավոք սրտի* , ասածդ չկարողացա կատարել:

Սահմանափակման՝ Դուք *միայն* ասում եք...: *Գոնե* մեկ անգամ ծնողներիդ այցելիր: *Սոսկ* հայրենիքի սերն էր նրան տանջում: *Լոկ* մեկ խնդիր ունեմ՝ տուն գնալ:

Ձիջական՝ Ի դեպ, այդ մասին արդեն խոսվել է: *Ի միջի այլոց*, այս տարի ավելի մեղմ ձմեռ եղավ: *Այնուամենայնիվ*, համաձայնությունս տվեցի:

Սաստկական՝ Մինչև իսկ ոչ մասնագետներն էին սխալները նկատում: *Անգամ* երեխան չէր համաձայնի: *Հենց* այդ էլ ուսանողների պահանջն էր՝ թոշակ տալ:

Վերաբերականները լինում են նաև *հարցական, ցուցական, զիջական* և այլն:

Ինչպես երևում է բերված օրինակներից, վերաբերականները որոշ դեպքերում տրոհվում են նախադասության անդամներից, որոշ դեպքերում՝ ոչ: Ինչ խոսք, որ տրոհումը պայմանավորված է խոսողի վերաբերմունքով ու հնչերանգով: Տրոհվում են հատկապես հաստատական, երկբայական, ժխտական, զիջական վերաբերականները:

Վերաբերականները դրվում են հատկապես բայ-ստորոգյալների ու նրանց լրացումների վրա (չեն բացառվում նաև անվանական ստորոգյալները), ոչ մի հարցադրում չեն ընդունում և հիմնականում նախադասության ոչ մի անդամի դեր չեն կատարում, որովհետև քերականորեն չեն կապվում նախադասության որևէ անդամի հետ. դրանք մեծ մասամբ միջանկյալ բառերի դեր են կատարում:

Շարահյուսական մակարդակում վերաբերականները կարող են լինել ինչպես բառ- նախադասություններ (տես § 63), այնպես էլ անդեմ նախադասություններ (տես § 60):

Միջանկյալ բառերից, հատկապես, գնահատողական արժեք ունեցող-

ները երբեմն էլ դառնում են նախադասության անդամներ. այս դեպքում բնականաբար չեն տրոհվում: Դրանց՝ նախադասության անդամ դառնալը պայմանավորված է նաև շարադասությամբ ու հնչերանգով: Օրինակ՝ քննենք *ի միջի այլոց* և *մատնությամբ* բառերի կիրառությունները՝ պայմանավորված դրանց շարադասությամբ. «*Ի միջի այլոց*, գիտնականը այդ մասին վաղուց էր խոսել» և «Գիտնականը այդ մասին վաղուց *ի միջի այլոց* էր խոսել»: Առաջին նախադասության մեջ ընդգծված բառը քերականորեն նախադասության հետ չի կապվում և միայն խոսողի վերաբերմունքն է արտահայտում, մինչդեռ երկրորդում այն դրվել է բայ-ստորոգյալից առաջ և ընդգծել է խոսելու *եղանակը*, հետևաբար դարձել է նախադասության անդամ՝ *ծևի պարագա* (խոսել է՝ հարցին կարևորություն չտալով): Նույնն է նաև հետևյալ դեպքը՝ «Մի օր էլ, *մատնությամբ*, մի գյուղում բռնվեց նա» (Ավ.Իս.) և «Մի օր էլ մի գյուղում *մատնությամբ* բռնվեց նա»: Առաջին դեպքում *մատնությամբ* բառը *միջանկյալ բառ է*, երկրորդ դեպքում՝ *հիմունքի* պարագա :

Այսպիսով, միջանկյալ են համարվում այն բառերը, որոնք շարահյուսորեն չեն կապակցվում նախադասությունների հետ, բայց որոշ երանգ են տալիս նրանց, ոճավորում են խոսքը, արտահայտում են հեղինակի վերաբերմունքը:

Բացի վերաբերականներից, միջակյալ բառեր են դառնում *գոյականների տարբեր հոլովաձևեր - սիրով, հաճույքով, ուրախությամբ, ներողություն, մատնությամբ* (Ես լավ չլսեցի, *ներողություն*, եթե կարելի է՝ նորից կրկնեք: Կկատարեմ, *ինչու չէ, սիրով ու հաճույքով)*: Բերված օրինակներում, բացի *ներողություն և սիրով ու հաճույքով* գոյականներից, կան նաև *եթե կարելի է* և *ինչու չէ* նախադասությունների արժեք ունեցող միջանկյալ միավորներ:

Միջանկյալ բառեր կարող են դառնալ նաև *ածականներ (Գեղեցիկ*, լսում եմ, շարունակե՛ք... *Լա՛վ, շա՛տ լավ*, բավարարված եմ, գերազանց եք ստանում), *թվականներ (Առաջինը*, ես դերձակ չէի ուզում լինել, *երկրորդ*, Սուսա՛ն, հորդ մասին մի՛ խոսիր): *Մակբայներ* (Ես էլ, *անգիտակցաբար*, մի պահ կանգ առա: *Անտարակույս*, նա դիմեց այդ քայլին):

Միջանկյալ բառեր կարող են դառնալ նաև որոշ *շաղկապներ (թեկուզ, սակայն, էլ, ուրեմն, ապա...), դերանուններ (մի, ոչ մի, այսպես), բայեր (ասես, կարծեմ, կարծես, թող, խնդրեմ, կեցցես, ապրես...)*:

ՉԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 171. Չայնարկությունները *(միջարկություններ)* նախադասության անդամներ չլինելով հանդերձ՝ նույնպես մտնում են նախադասության կազմի մեջ և արտահայտում են խոսողի *սուբյեկտիվ, զգացական ու կամային վերաբերմունքը* խոսքի նկատմամբ, մինչդեռ վերաբերականները *դատողական-գնահատողական* վերաբերմունք են արտահայտում: Չայնարկություններով խոսողը մի դեպքում զգացական վերաբերմունք է արտահայտում, մի այլ դեպքում՝ կամային, ըստ այդմ էլ՝ ձայնարկությունները երկու տեսակ են

լինում՝ *բացականչական և կոչական:* Ձայնարկությունների մի տեսակ էլ կա, որը կապ չունի մարդու ոչ զգացմունքների և ոչ էլ կամքի հետ. դրանք այսպես կոչված, *բնաձայնական* ձայնարկություններն են, որոնք կենդանիների, առարկաների կամ բնության երևույթների կողմից արտաբերվող ձայներ են՝ շըրխկ, թըրխկ, ղա, ղու, միաու, հա՜ֆ- հա՜ֆ, կըռ-կըռ, բո՜ո, վուո՜ւ, բուո՜ւ և այլն:

Ձայնարկությունների մասին մանրամասնորեն չենք խոսում, որովհետև դրանք ձևաբանական մակարդակի միավորներ են: Դրանց իմաստների ու կիրառությունների մասին տե՛ս *Մ.Աստրյան,* «Ժամանակակից հայոց լեզու» (ձևաբանություն), 1983, էջ 453-461 և նույնի «Ժամանակակից հայոց լեզու» (շարահյուսություն), 1987, էջ 326-332 աշխատություններում:

ՆԵՐԴՐՅԱԼ ԲԱՌԵՐ, ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 172. Նախադասությունների մեջ, միջանկյալ բառերի նման, որոշ դեպքերում գործածվում են այնպիսի բառեր, բառակապակցություններ ու նախադասություններ, որոնք ամբողջ նախադասության կամ նրա որևէ անդամի համար *տեղեկանքային բնույթ ունեն,* այսինքն՝ լրացուցիչ բացատրություն են տալիս կամ մեկնաբանում են նախադասության մեջ գործածված, անծանոթ կամ անհասկանալի թվացող որևէ բառ կամ արտահայտություն, կամ երբեմն էլ թարգմանում են օտար կամ բարբառային բառը: Այդպիսի բառերը, բառակապակցությունները կամ նախադասությունները արտաբերվում են մի տեսակ տարբերակվող *հնչերանգով* և գրավոր խոսքում անպայման տրոհվում են փակագծերով (երբեմն էլ՝ ստորակետերով), դրա համար էլ *ներդրյալ* անվանումն են ստացել: Դրանք, թեև քերականորեն նախադասության ու նրա անդամների հետ չեն կապվում, բայց տրամաբանորեն նրա շղթայից դուրս չեն մնում, որովհետև հաճախ ավելի կարևոր տեղեկություններ են հաղորդում: Այսպես, մի՞թե հետևյալ նախադասության մեջ պակաս նշանակություն ունեն ներդրյալ՝ տեղեկատու բառերն ու բառակապակցությունները՝ «Հայ գրողների համաժողովում ելույթներ ունեցան՝ Ս.Սարինյանը (*գրաքննադատ),* Լ.Մկրտչյանը (*թարգմանիչ),* Կ.Խոդիկյանը *(«Գրական թերթի» խմբագիր),* երիտասարդության դաստիարակության խնդիրների մասին խոսեց Տ.Էլոյանը (*դպրոցի տնօրեն):* Մի քանի տարի առաջ Վարդան Սարգսյանը (*Կոմիտասի սան)* Ֆրանսիայից նամակ է ուղարկում Երևան (ՍՍ): Նաիրիտը, *ինչպես և Երևանիտը,* հայտնաբերել են Հայաստանի երիտասարդ գիտնականները (Գիտ.Տեխ.):

Ասվեց նաև որ ներդրյալները նաև թարգմանում, բացատրում են օտար, բարբառային կամ անհասկանալի բառեր ու արտահայտություններ: Օրինակ՝ Կառավարական բարձրաստիճան ղեկավարների *իմփիչմենթը (քրեական պատասխանատվություն)* հեռու չէ (Իրավ): Ծովից *բիկինիներով (շատ կարճ լողազգեստ)* ելնող գեղեցիկ կանայք գրավեցին տղամարդ-

կանց ուշադրությունը (Եթեր)։ Երեխայի «*Ուզունդարա» (երկար կիրճ)* պարը շատ գեղեցիկ էր (Հեռ.)։ Նրան գյուղում «*ուզուն ախմախ» (երկարահասակ տխմար)* էին կանչում (ՎՓ)։ - Ղազարոսի մոտ եղե՞լ եք (այսինքն՝ Աղայանի), - հարցրեց Թումանյանը (ՁԼ)։

Ներդրյալ նախադասությունները ավելի որոշակի են արտահայտում հիմնական նախադասության կամ նրա որևէ անդամի մեկնությունը. դրանք իրենց *ստորոգման հատկանիշով* հնարավորություն են ընձեռում ավելի հստակ ձևավորելու միտքը՝ ասելիքը։

Ներդյալ նախադասությունները շարադասվում են այն անդամից կամ անդամ-կապակցություններից հետո, որին վերաբերում են։ Պարզ է՝ դրանք նախադաս լինել չեն կարող։ Օրինակներ՝ Կոմիտասը Զիվանու և նրա խմբի համար ճեմարանում մի հրաշալի համերգ-դասախոսություն կազմակերպեց (*դա 1903 թվականին էր),* որից գոհ մնացին թե՛ հանդիսականները և թե՛ աշուղները (ՁԼ)։ Սուսերամարտերն արված են այնքան լավ *(սա սպորտի վարպետ Ա.Հարությունյանի ծառայությունն է),* հոգեբանորեն այնքան ճշմարիտ (*սա* էլ թատրոնի երիտասարդության շնորհքն է), որ երբեմն մոռանում ես վաղածանոթ դերասանին և աչքերիդ առաջ տեսնում ես միմյանց խողխողող վերոնացի պատանիներին (ՍԱ)։ Նրա ստեղծած կերպարը շատ հարուստ է գույներով (*այդ գույների մեջ ավելորդ են* զուտ գեղջկական երանգները (և.տ.)։ Առաջին անգամ նա սկսեց մտածել (*արդեն տասնհինգ տարեկան էր),* թե ինչից.ինչ դառավ (ԴԴ)։

Անցյալի գրականության մեջ նման նախադասությունները հաճախ տրոհվել են նաև ստորակետ-գծով, որը հիմա ընդունելի չէ։

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԸՍՏ ՀՈԼՈՎՆԵՐԻ (ՀՈԼՈՎՆԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ)

§ 173. Հոլովներով արտահայտվում են բառերի միջև եղած զանազան հարաբերություններ, այսինքն՝ դրանցով որոշվում են նախադասության անդամների պաշտոնները։ Որպես գոյականի, առարկայանիշ դերանվան և գոյականաբար առնված այլ խոսքի մասի *քերականական կարգ*՝ հոլովին հատուկ է *իմաստի և ձևի* միասնական դրսևորումը. *առանց ձևի հոլով չկա* (նկատի է առնվում նաև ներքին թեքումը՝ *տուն-տան, հայր-հոր)։* Ըստ այն բանի, թե տվյալ լեզվում բառը ձևաիմաստային քանի տեսակի փոփոխության է ենթարկվում, տվյալ լեզուն այդքան էլ հոլով ունի։ Օրինակ՝ մեզ ծանոթ լեզուներում ֆրանսերենն ու իտալերենը հոլովներ չունեն, որովհետև այդ լեզուներում բառերը ձևային փոփոխություններ չեն ստանում։ Անգլերենն ունի միայն 2 հոլով, որոնցից մեկը բառի ուղիղ ձևն է, մյուսը ձևավորվում է S ցուցիչով, եթե այն դրվում է գոյականի վերջում և իրենից առաջ ունի ապոստրոֆ նշան, նշանակում է բառը դրված է սեռական հոլովով և պատկանելություն է ցույց տալիս։ Լատիներենում և գերմաներենում բառը ձևափոխության է ենթարկվում 4 ձևով, նշանակում է ունեն 4 հոլով, ռուսերենում չկա *բացառական* հոլով։ Սրան հակառակ, լեզուներ էլ կան, որտեղ

բառը ձևափոխվում է բազմաթիվ ձևերով՝ 3-52: Օրինակ՝ էստոներենն ունի 11, ֆիններենը՝ 16, հունգարերենը՝ 21, սանսկրիտը՝ 8 և այլն:

Այն լեզուներում, որոնցում բառը ձևափոխությունների չի ենթարկվում, նախադասության անդամների պաշտոնները որոշվում են նախդիրների (articl) միջոցով, այսպես՝ անգլերենում սեռականը, ինչպես ասվեց, ձևավորվում է 'S-ով՝ the book'S -գրքի, տրականը՝ on-ով՝ on the book բացառականը՝ from-ով (from the book), ներգոյականը՝in-ով (in the book):

Ռուսերենի բացառականը նույնպես նախդիրներով է ձևավորվում՝ **из, с, из-под, из-за, от**:

Գրական արևելահայերենի հոլովների քանակի վերաբերյալ 3 տարբեր կարծիքներ կան. այն լեզվաբանները, որոնք հոլովները տարբերում են և՛ ձևաբանական, և՛ շարահյուսական սկզբունքներով, այսինքն՝ *ձևի և իմաստի միասնությամբ*, ընդունում են 7 հոլով (ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական): Ովքեր առաջնորդվում են *ձևաբանական* սկզբունքով, բայց *որոշիչ հոդը* համարում են սեռականը և տրականը իրարից տարբերող ձևույթ, ընդունում են 6 հոլով՝ առանց հայցականի: Իսկ այն լեզվաբանները, ովքեր առաջնորդվում են զուտ բառերի ձևափոխության սկզբունքով և միայն *հոլովակերտ ձևույթներն* են համարում հոլովատարբերակիչ՝ առանց որոշիչ հոդի, ընդունում են 5 հոլով՝ ուղղական, տրական, բացառական, գործիական, ներգոյական: Վերջիններս երկրորդ հոլովն անվանում են *սեռական-տրական* կամ *ստացական*, ինչպես Ռ.Իշխանյանը:

Հարկ ենք համարում նշել, որ աշխարհաբարի հոլովների թվի վերաբերյալ բանավիճել են անվանի լեզվաբաններ ու գիտնականներ դեռևս 20-րդ դարի սկզբներից: Վեճը բավականին հանդարտվել էր մինչև 1967-ը՝ *7 հոլովի ընդունմամբ*: Սակայն 1967-ին մոտ մեկ ամիս տևողությամբ ԳԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտում գիտական շատ մեծ ու ծավալուն բանավեճ տեղի ունեցավ հոլովների թվի վերաբերյալ, մասնակցեցին ոչ միայն անվանի լեզվաբաններ, տարբեր մասնագիտությունների տեր գիտնականներ, ուսուցիչներ, այլև ասպիրանտներ և ուսանողներ, և այդպես էլ միասնական կարծիքի չեկան: Գրվեցին բազմաթիվ թեր ու դեմ հոդվածներ ու գրքեր[58]:

Ժամանակակից արևելահայերենում հոլովական իմաստներ արտահայտելու համար բառն ստանում է 5 ձևափոխություն (հայցական հոլովը չունի իր սեփական ձևը. այն *իրի դեպքում* նմանվում է ուղղականին, *անձի դեպքում* տրականին, իսկ տրական հոլովը նույն սեռականն է՝ երբեմն *որոշիչ հոդ ստանալու ունակությամբ*, հետևաբար՝ այն նույնանում է սեռականին: Միայն 8 դերանուններ (*ես, դու, նա, ինքը, մենք, դուք, սա, դա)* ունեն 6 ձևափոխություն, հետևաբար՝ 6 հոլով:

---

[58] Տե՛ս *Հ.Խ.Բարսեղյան*, Սանուկ Աբեղյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր քննադատությունները, «Հայաստան» հրատ., Ե.,1967:
Տե՛ս *Ալ.Մարգարյան*, Հոլովները հայերենում, Ե., 2000, 200 էջ:

Շարահյուսական մակարդակում նախադասության տարբեր անդամներ դրվում են տարբեր հոլովներով, որն էլ կոչվում է *հոլովների շարահյուսական կիրառություն:*

Նկատի ունենալով դպրոցներում և որոշ բուհերում ուսուցման 7 հոլովների համակարգը, նպատակահարմար ենք գտնում նախադասության անդամների պաշտոնները տալ՝ նշելով նախ *բուն* հոլովները, ապա՝ անմիջապես նրանից հետո՝ *նմանածև* մյուս անդամները՝ առանձին համարակալումներով. այսպես՝ *Բուն ուղղական,* ապա՝ *ուղղական (հայցական), բուն սեռական,* ապա՝ *սեռական (տրական):*

ՈՒՂՂԱԿԱՆ ՀՈԼՈՎԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

§ 174. ԲՈՒՆ ՈՒՂՂԱԿԱՆ - Ուղղականը հիմնականում *ենթակայի* հոլովն է, ենթակայից բացի ուղղականով դրվում են նաև այլ անդամներ:

1. *Ենթակա* - Ենթական կարող է գործածվել ինչպես առանց հոդի՝ Անուշ նիհրեցին *ծով, անտառ ու լեռ* (ՎՏ), խոտերի մեջ արածում էր *մի* սպիտակ *գառ* (ՍԽ), այնպես էլ՝ որոշիչ, ստացական ու դիմորոշ հոդերով: Օրինակներ՝ Մեկ ազգի *պահողը,* իրար *միացնողը* լեզուն է ու հավատը (ԽՍ): Ճոխ է *հայոց լեզուն,* և առատորեն կվարձատրվի *նա, ով* կուսումնասիրի այն (Բայրոն): Պիտի դառնա *տղես* կռվեն հաղթական, Հա՛րս, ե՛ղ - լեցուր ճրագին (Դ.Վ.): *Տղաղ* ավարտեց համալսարանը: *Ուսուցիչները* աշխատում ենք նորություններով զինել աշակերտներին (Դպր.):

2. *Կողմնակի ենթակա - Մեքենան* վթարվելու պատճառով մեր ուղևորությունը հետաձգվեց: *Հեքիաթը* ավարտվելով՝ ավարտվեց և պատմությունը:

3. *Գոյական որոշիչ* - Պտույտ է գալիս *ծաղիկ* տիրուհին (ՀԹ): *Արծաթ* խոսքերով աղբյուրն է խոսում (ՎՏ): *Գյուղացի* Համբոյի տունը կռիվ էր ընկել (ՀԹ): *Ճարտարապետ* որդի ունեմ, մատաղ լինեմ ջինջ հոգուն (ԳՍ):

4. *Ստորոգելիական վերադիր* - Մեր լեզուն մեր *խիղճն է* դա: Սուրբ *հացը մեր սեղանի,* Մեր հոգու *կաճչն է* արդար Ու *համը* բերանի (ՀՍ): Կոմիտասը ինձ համար չքնաղ *լեգենդ է* (Ավ.Իս.): ...Աշխարհում նա *եղել է դպիր, վարդապետ* (ԵՉ):

5. *Կոչական* - Արի՛, *եղբա՛յր,* փառաբանենք մեր քաղցրաբառ հայոց լեզուն (ՆՉ): Քեզ, *իմ հա՛յ լեզու,* կսիրեմ մրգաստանի մը նման (Թոթովենց): *Որսկա՛ն ախպեր* , սարեն կուգաս, սարի մարալ կփնտրես (Ավ.Իս.):

6. *Բացահայտիչ*- Ալեքսանդր Թամանյանը՝ այդ մեծատաղանդ ճարտարապետը, հավերժ կապրի իր գեղաշուք կառույցներով (ՍԱ): Հայաստանի մայր բուհը՝ պետական համալսարանը, բոլորեց իր 80 տարին (ՀՀ):

Ծանոթություն - Քանի որ բացահայտիչը դրվում է նաև մյուս բոլոր հոլովներով, այդ պատճառով էլ մյուս հոլովներում չենք նշում:

ՈՒՂՂԱԿԱՆ (ՀԱՅՑԱԿԱՆ) հոլովով դրվում են՝

1. *Ուղիղ խնդիրը,* եթե այն իրի անուն է, կամ անձ է՝ *իրի առումով*՝

Ոսոխն իր *որսը* խորովել դեռ չգիտեր,

Մենք *աստվածներ* էինք ծուլում և վայելում *գինի* (ՆՁ):

Չգտա մի տեղ անմարմին *մի կին, Սերս* կորցրի պագշոտ գրկի մեջ,

Ինչ որ ունեի - և վսեմ, անգին, Ողջը աղտոտվեց անհուն կրքի մեջ (Ավ.Իս.): Ինձ վիճակված էր սիրել ընդմիշտ *Այս հողը*՝ շոգից ու վշտից խանձված (թարգմ.): Ես սիրում եմ *մայրիկիս*... (ՀԹ):

2. *Կողմնակի ուղիղ խնդիրը - Ոճ* չունեցող ազգերը չկազմակերպված իրեր են (Ավ.Իս.): Իրիկնաժամին *թիերն* օրորող հովի պես թեթև Մի ուրուանցավ՝ ճերմակ շորերով (ՎՏ): *Ձու* գողացողը ձի էլ կգողանա (Ժող.): *Երեխային* գուրգուրելով մայրը երգեր էր մրմնջում (ՊՂ):

3. *Տեղի պարագան* - Մի հավատարիմ շուն ունեինք. ինձ *դպրոց* էր ուղեկցում, մայրիկիս՝ *գործարան* (ՊՂ): - Անու՛շ, այ աղջի՛ Անուշ, *տուն* արի՛ (ՀԹ): Իջան *ձորը*՝ խորոված անելու (ԳԹ): Գնացինք *գործարան*՝ զեկուցում կարդալու:

4. *Կողմնակի տեղի պարագան - Անտառամեջ* հասնելով՝ սկսեց հարցուփորձ անել Ջավենի մասին (ՀՄ): *Գյուղ* տանող ճանապարհը խիստ անբարեկարգ էր (ՊՂ): Վերադառնալով որջը՝ արջը քոթոթին չգտավ (ՎԱ):

5. *Ժամանակի պարագան - Յերեկներն* աշխատում էի, *գիշերները*՝ ստեղծագործում: Քեֆչի Հասանը *ամեն օր* քեֆ էր անում (ՀԹ):

6. *Կողմնակի ժամանակի պարագան - Գիշերը* տուն գալով՝ սուսուփուս անկողին էր մտնում: *Յերեկը* սովորելով, *գիշերն* աշխատելով՝ Աճառյանը ավարտեց Սորբոնի համալսարանը:

7. *Չափ ու քանակի և գնի պարագան* - Զեկուցումը տևեց ուղիղ երկու ժամ: Միերը զարմով արևազուն *Քառասուն* տարի իշխեց Սասուն (ԵՉ):

ՍԵՌԱԿԱՆ (ՏՐԱԿԱՆ) ՀՈԼՈՎԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

§ 175. ԲՈՒՆ ՍԵՌԱԿԱՆՈՎ, առանց որոշիչ հոդի դրվում են *գոյականական անդամի լրացումները:*

Բուն սեռականի հիմնական կիրառությունը

1. *Հատկացուցչի* շարահյուսական պաշտոն կատարելն է՝ Ի՞նչ իմաս *ստեղծողի* գաղտնիքներն անհամար (ՀԹ): Ընդունիր դու՝ *մեր* ցաք ու ցիր *մասունքների* հավաքարար, Դու՝ խազերի մեր քերական (ՊՍ): ... Ես երգիչ *հրի, սրի,* շահ չունեմ *քո* սիրուց զատ (ՀՄ):

2. *Գոյականով և անորոշ դերբայով արտահայտված որոշիչ* - Ծագում է մանուկ արևը *զարնան* (ՎԱ): *Աշնան* արևը մարդ չի տաքացնի (Ժող.): Երևանի արտադրած *պատի և ծեռքի* ժամացույցները ժամանակին մեծ պահանջարկ ունեին (ՀՀ): ՀՀ կառավարությունը ջանում է քաղաքին 24 *ժամյա խմելու* ջուր մատակարարել (ԵԵ): *Կարդալու* գիրք եմ գնել:

3. *Ստորոգելիական վերադիրը,* որն այս դեպքում պատկանելություն է ցույց տալիս, ստանում է *կրկնակի հոդ* և կոչվում է փոխանուն *սեռական*

(Այս գիրքը *Գեղամինն է:* «Իններորդ ալիքը» *Այվազովսկունն է:* Այս կառույցը *Թամանյանինն է):*

4. Բուն սեռականով դրվում է նաև *կողմնակի ենթական* - Մեծ *հայրենասերի*՝ հայրենիք վերադառնալը ոգևորեց բոլորիս (ԳԼ): *Աստծու* պահած գառը գայլը չի ուտի: *Քամու* բերածը քամին էլ կտանի (Ժող.):

ԲՈՒՆ ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎԸ հիմնականում կապվում է *բայական անդամի լրացումների հետ.* այս հոլովով դրվում են խնդիրներ ու պարագաներ և նախադասության այլ անդամներ, ինչպես հոդերով, այնպես էլ առանց հոդերի:

1. *Հանգման խնդիր* - ...Կնստեր իր տեղը, կկոքներ հոնի կարմիր *մահակին* (ԱԲ): Թո՛ւ ձեր գեղի միջի - *մարդին,* Ձեր *ճամուսին,* ձեր *աղաբին* (ՀԹ): Դեռ մինչև երբ չսեղմեմ գլուխս *լանջիդ* տաք (ԴՎ):

2. *Կողմնակի հանգման խնդիր* - Ձեռքը դնելով *կրծքին* երդվեց, որ չի արել (ՊՂ): Խոսքն ուղղելով *ներկաներին*՝ կարևոր առաջարկություններ արեց: Դիմելով *ընկերոջը*՝ օգնություն խնդրեց:

3. *Մատուցման խնդիր* - Լույսի հրճվանքը տվեց *երկնքին...*

Ճերմակ ժպիտը տվեց *ծովերին,*

Վեհության խիճդը *լեռներին* տվեց:

Դաշտերին՝ կանաչ ժպիտը գարնան (ՀՇ):

Հյուրերին մատուցեցին նաև թարմ մրգեր ու բազմատեսակ խմորեղեն:

4. *Կողմնակի մատուցման խնդիր* - *Հյուրերին* միայն սուրճ մատուցելով՝ ճանապարհ դրին: *Երեխաներին* մեկական խաղալիք տալով՝ տուն ուղարկեցին:

5. *Տեղի պարագա* - Արարատի ծեր *կատարին* Դար է եկել վայրկյանի պես ու անցել (Ավ.Իս.): Խայամն ասաց իր սիրուհուն՝ «Ոտքդ զգույշ դիր *հողին»* (ՀԹ): Իջավ սարյակը դաշտում - Ծիլ *էր կտուցին* (ՀՍ):

6. *Կողմնակի տեղի պարագա* - Լեռան *բարձունքին* նստելիս՝ մանկությունս եմ հիշում (ՀՍ): Ժայռի ստվերը *գետափին* չոքելով՝ ջուր է խմում (ՀՍ):

7. *Ժամանակի պարագա - Կեսգիշերին* առատ ձյուն էր տեղացել (ՍԽ): Եվ *լուսաբացին,* երբ հոգնած լինեք... Կանչեմ ձեզ, ճչամ, եղբայրնե՛ր, ելեք (ՎՏ): Ե՛հ, պարոննե՛ր, տեսա կանաչ *գարունքին,* էս սարերում լաց էր լինում մի պախրա (ՀԹ):

8. *Կողմնակի ժամանակի պարագա - Կեսգիշերին* եկած ձյունը ծածկել էր ճանապարհը: *Գիշերով* կերածը կորած է (Ժող.):

9. *Նպատակի պարագա* - Տիգրան Հեքեքյանի մանկական երգչախումբը Ամերիկա մեկնեց *համերգի* (Եթեր): Մարդ գնում է *առևտրի,* Հավաքվում են, քաշում սրի (ՀԹ): Վարազները իջնում են ջուր *խմելու* (ԱԲ): Երեխան գնաց խանութ՝ *հացի:*

10. *Կողմնակի նպատակի պարագա* - Անասուններն *արոտի* տանելով՝ գյուղացին ավելի շատ կաթնամթերք է ստանում: *Հյուրախաղերի* գնալով՝ մեծ անուն հանեց (ԳԹ):

11. *Չևի պարագա - Ուսապարկը ուսին*՝ շարունակում էր վերելքը: Սպասում էր տարեց կինը՝ *աչքը ճանապարհին, ականջը ձայնի* (ՊՂ):

12. *Կողմնակի ձևի պարագա - Մեջքիդ պառկելով՝* գործը առաջ չի գնա (ՊՂ): Մտածում էր գալիքի մասին՝ մեջքին պառկած:

13. *Ստորոգելիական վերադիր* - Գարեգին, ես էլ քո *կարծիքին եմ, բայց մյուսներին կկարողանա՞նք համոզել* (ՍԳ): Գիտեմ՝ դու էլ *այդ մտքին ես:* Թեև բարձր էր խոսում, բայց ուշադրությունը *մեքենայի ձայնին էր* (ԳԹ):

ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

§ 176. Բացառական հոլովը ցույց է տալիս ինչ-որ բանի *սկզբնապատճառը, աղբյուրը՝* քերականական անջատման խնդիրը, այդպես էլ բազմաթիվ այլ անդամներ են դրվում այս հոլովով:

1. *Անջատման խնդիր* - Հովն *ամպի թևից* մի փետուր պոկել, ինքն էլ չգիտի, թե ուր է տանում (ՀՍ): ...Հոգին չի զարթնի *վսեմ երազից* (Ավ.Իս.): Ասում են՝ իբրև մոխիրը նրա *խարույկից* հանել ու մորն են տարել (ՀՇ):

2. *Կողմնակի անջատման խնդիր* - Պոկվելով դալկացած *ծառերից՝* դեղնած տերևները պար էին բռնել օդում (ԳԹ): Անջատվելով իր *արմատներից՝* մարդ դառնում է անբուն թռչուն (Ժող.): Խույս տալով *հասարակությունից՝* Շահյանը իրեն մենակ էր զգում (Ն-Դ):

3. *Ներգործման խնդիր* - Հայ ժողովուրդը բազմիցս է հալածվել *օտար նվաճողներից* (ՀԺՊ): Աշնան դեղին ու դալուկ տերևները քշվում էին ցրտաշունչ *քամուց* (ՍԳ): *Երկրաշարժից* ավերվեցին հարյուրավոր գյուղեր ու հազարավոր կառույցներ (Կումայրի):

4. *Կողմնակի ներգործման խնդիր* - Եվ քո տաքուկ *շնչից* ներշնչված՝ Աղբյուրներն են երգում նման քաղցր լացի (ՊՍ): *Քամուց* ոչ մի թուփ ու խոտ չշարժվելով՝ քարացել էր կարծես բնությունը (ԳԹ):

5. *Վերաբերության խնդիր* - Դուք *ձեզնից* պատմեք, ձեր *օր ու կյանքից,* ձեր *ցավ ու դարդից* (ՀԹ): Խոսում էին Լոռվա հին-հին *քաջերից* (ՀԹ): Ավին անընդհատ *որսից* էր պատմում ու իր *հնարամտություններից:*

6. *Կողմնակի վերաբերության խնդիր* - Իր *որսից* պատմելիս Ավին շատ բաներ էլ ավելացնում էր: Թումանյանը, *ընկերներից* խոսելիս, Նեսոյին երբեք չէր մոռանում (Հուշ):

7. *Սահմանափակման խնդիր* - Փոքրիկս ավելի ուժեղ է *երաժշտությունից,* մեծս՝ *մաթեմատիկայից* (ՀԱ): Պապիկը խեղճացել էր *տեսողությունից,* տատիկը՝ *լսողությունից:*

8. *Կողմնակի սահմանափակման խնդիր - Տեսողությունից ու լսողությունից* խեղճանալով՝ պապիկս տանից քիչ էր դուրս գալիս (ՊՂ): Հատկապես *անգլերենից* ուժեղ լինելով՝ նախընտրեցի ռոմանագերմանական բաժինը և չսխալվեցի (ԳԹ):

Այս հոլովով են դրվում նաև *տեղի, ժամանակի, պատճառի, հիմունքի, ձևի պարագաները:*

9. *Տեղի պարագա* - Եվ հանկարծ *այգուց* դու ելար իմ դեմ՝ Ոտքերով բոբիկ ու ցողաշաղախ (ՎՂ):

- Գալիս եմ, գալիս, Գալիս եմ, նանի՛, *Ձորից* աղջկա ծեննն է դողաղում (ՀԹ):

10. *Կողմնակի տեղի պարագա* - Սևանը *երկնքից* ընկած մի կտոր է (Ավ.Իս.): Հնձած խոտի բույր է բերում *Մարից* փախած քամին (ՀՍ):

Ու եկած *խութից* ամայաբնակ, Ապա՝ ամայի *Ոշտունիքից,*
Ելած *Իզմիրից* դեռ դիակուտակ, Ապա՝ *Բիթլիսից* դեռ մահակնիք,
Ելած *Բաղեշից* հայաթափված, Եվ ապա՝ *Մուշից*՝ շամփրի քաշած...
Լուռ անցնում էինք այժմ խոլական Եփրատի մոտով (ՀՇ):

11. *Ժամանակի պարագա* - Պանդուխտ եմ, քույրի՛կ, մանուկ *օրերից* (ՀԹ): *Գիշերվանից* տեղատարափ անձրև է գալիս: Ես, *մանկությունից* միշտ սովոր հյուսիսին... (ԳԹ):

12. *Կողմնակի ժամանակի պարագա - Կռիվներից* մնացած մի սայլ էր ընկած խոհանոցի մոտ (ԲՀ): *Երեկվանից* սկսած անձրևը դեռ չի դադարում: *Հնից* մնացած բան է:

13. *Պատճառի պարագա - Շտապելուց* թև են առել՝ Դարձել թեթև թիթեռներ (ՀԹ): Խեղճը դողալով՝ Անհույս կռացավ, *Դարդից* չորացավ, Ուռենի դարձավ (ՀԹ): *Վշտից* կռացել, մի բուռ էր դարձել (ՊՂ): Մարդիկ արթնացան մոշահավի *ծղրտոցից* (ՍԽ):

14. *Կողմնակի պատճառի պարագա - Ցրտից* վախենալով՝ հաստ քուրք էր հագել (ԳՍ):- *Հուզմունքից* դողալով՝ հագիվ էր խոսում: *Ամոթից* կարմրած՝ մի կողմ էր քաշվել (ԳՄ): *Շոգից* խեղդված՝ տներից դուրս չէինք գալիս (ԳԹ):

15. *Հիմունքի պարագա* - Աճառյանը իր ուսանողներին *ձայնից* էր ճանաչում: Նրա *նամակներից* արդեն ամեն ինչ գիտեի իր մասին: *Աղոքքից* հիշեցի այդ փոքրահասակ տատիկին (ՊՂ):

16. *Կողմնակի հիմունքի պարագա* - Աճառյանը, *ձայնից* ճանաչելով 40 տարի չտեսած ընկերոջը, բացում է դուռը (Հուշ.): *Աղոքքից* հիշելով տատիկին՝ գրկեցի նրան:

17. *Մասնական ենթակա* - Սթության մեջ հագիվ նշմարվեցին *աքսորյալներից* (Հուշ.): Ցերեկույթի ժամանակ կարդացվեցին Սևակի *բանաստեղծություններից* և հնչեցին Կոմիտասի *երգերից* (ԳԹ):

18. *Մասնական ուղիղ խնդիր* - Հաճույքով լսեցինք Սևակի *բանաստեղծություններից* և Կոմիտասի *երգերից:* Ընկերներս վայելեցին իմ այգու *մրգերից:* Յարս էլ խմե՞ց էն *ջրից* (ՀԹ):

19. *Գոյական որոշիչ - Ծղոտից* գլխարկն ու *մետաքսից* հովանոցը պաշտպանում էին շոգից (ՍԳ): Հատկապես հիսուն-վաթսունական թվականներին Երևանում մասսայաբար քանդվեցին *աղյուսից ու փայտից* տնակները և կառուցվեցին *քարից ու երկաթբետոնից* հինգից-տասնչորսհարկանի բազմաթիվ գեղեցիկ շենքեր (ՀԿ):

20. *Ստորոգելիական վերադիր* - Այս բարձրահարկը *երկաթբետոնից է:* Խեղճ գյուղացու հագուստը ոչխարի ու այծի *բրդից էր,* ոտնամանը՝ եզան *կաշվից (ՀԿ):*

ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

§ 177. Գործիական հոլովը հիմնականում միջոցի խնդրի հոլովն է: Այս հոլովով դրվում են նաև տարբեր խնդիրներ ու պարագաներ, ինչպես նաև այլ անդամներ:

1. *Միջոցի խնդիր* - Մեր հոգին լիքն է *խոհերով ու գաղտնիքներով:* Սիա թե ինչու մենք շատ բան ունենք ասելու աշխարհին (Ավ.Իս.): Եվ ծաղիկները այդ սուրբ *շշուկով* իմ սիրտը լցրին (ՎՏ): Հաճախ նամակները *մատիտով* էին գրում (ԳԹ):

2. *Կողմնակի միջոցի խնդիր - Բահով* հողը փորելիս մի կարաս ոսկի է գտնում (ՀԹ): *Մեքենայով* ծովափ գնալիս վայելում էինք նաև բնության գեղեցկությունները (Հուշ.):

3. *Ներգործման խնդիր* - Հայոց պատմության տառերը *հայոց արյունով* են գրված (Ավ.Իս.): Սար ու ձոր ծածկվել էր *ձյունով* (ՍԳ): Ես կախարդված եմ միշտ *քեզնով* (ԳԹ):

4. *Կողմնակի ներգործման խնդիր* - Լեռնե՛ր, ներշնչված դարձյալ *ձեզանով*՝ թնդում է հոգիս աշխուժով լցված (ՀԹ):

Իր *վշտով* տարված՝ մոռացել էր ամեն ինչ (ՍԳ):

5. *Տեղի պարագա* - Մայր Արաքսի *ափերով* քայլամոլոր գնում եմ (ՌՊ): Գոհար աստղերի քարավանները թափառում էին երկնի *ճամփեքով* (Ավ.Իս.): Ծիածանն անցավ *երկնքով*՝ ամպ էր կտուցին (ՀՍ):

6. *Կողմնակի տեղի պարագա - Ճանապարհով* անցնելիս հանդիպեց բարեկամին: *Միջանցքով* քայլելիս ուշադի՛ր եղիր (Դպր.):

7. *Ժամանակի պարագա* - Մեծարենցը գիշերով նստում էր ջրի ափին ու զմայլվում բնության գեղեցկությամբ (Դաս.): Եթե *ցերեկով* չէր հասցնում, աշխատանքի մեծ մասը կատարում էր *գիշերով* (ՊՊ):

8. *Կողմնակի ժամանակի պարագա* - Ցերեկով նստելով ջրի ափին՝ չէր հագենում: «*Գիշերով* արած գործը գտնված է» - միշտ ասում էր մայրս:

9. *Հիմունքի պարագա* - Հայոց դպրոցները փակվել էին ռուս թագավորի *հրամանով* (ԱՋ): ՀՀ նախագահի *կարգադրությամբ* կոնյակի գործարանը հանձնվեց ֆրանսիացիներին (Իրավունք): *Ազգային ժողովի որոշմամբ* բյուջետային հիմարկների աշխատողների աշխատավարձը բարձրացավ միայն 20 տոկոսով (ն.տ.): Անհայտ օրենքի *չգրված կետով*՝ լոկ ծայնի համար համարվեց նա սան (ՊՍ):

10. *Կողմնակի հիմունքի պարագա - Դատարանի վճռով* կայացած որոշումը ուժ չունեցավ: *Օրենքով* չնախատեսված վճիռը ուժ չունի:

11. *Նպատակի պարագա - Գործով* Մոսկվա էի գնացել: *Գործուղումով* Փարիզ գնացի: Մոտդ եկել եմ մի *խնդրանքով*... (Ոզնի):

12. *Կողմնակի նպատակի պարագա - Անձնական գործով* գյուղ գնալիս փորձանքի հանդիպեցի: *Հատուկ նպատակով* այգի մտնելիս հին ընկերներիս հանդիպեցի:

13. *Չևի պարագա* - Ու խենթացած ծափ տվեց Փարիզն ինչպես *ծեռքերով,* Այնպես նաև բաց ու խուփ *թարթիչներով*՝ զարմացած (ՊՍ):

Լիլիթը *հուզմունքով* դիտում էր գեղանի կարապներին (Ավ.Իս.): Աստ-

ղերն են ժպտում *լուսեղեն նազով* ... Սիրտս *կարոտով* կանչում է քեզ՝ եկ (ՎՏ): Էլ չեմ դիմանա, Կփախցնեմ *զոռով* (ՅԹ):

14. *Կողմնակի ծևի պարագա - Սահուն* քայլերով անցնելիս չնկատեց ինձ (ԳԹ): *Ուրախությամբ* իմանալով հաճելի լուրը՝ անմիջապես գյուղ մեկնեցի (ԳՔ):

15. *Չափ ու քանակի պարագա* - Ընկերս ինձանից փոքր է *երկու տարով:* Հողերը *հարյուրավոր հեկտարներով* մնացել են անմշակ (ՅՅ):

16. *Կողմնակի չափ ու քանակի պարագա - Քսան տոկոսով* բարծրացրած աշխատավարձը ուսուցչին ոչինչ չտվեց (Դպր.):

17. *Միասնության պարագա - Երկուսով* նստում են վարունգի թաղերի մոտ (ԱԲ): Քո *ընկերներով* պետք է գործը կատարես:

18. *Կողմնակի միասնության պարագա - Ընկերներով* կատարած գործը հաճելի է: *Բարեկամներով* լուծված հարցը լավ արդյունք տվեց:

19. *Գոյականի որոշիչ - ... Մ'յ սև աչքերով, Մ'յ թուխ աչքերով,* Ունքերդ կամար, Աղջի՛կ, քեզ համար (ՅԹ): Մի ուրու անցավ, մի գունատ աղջիկ՝ *ճերմակ շորերով* (ՎՏ): Սոնան միշտ *համով* կերակուրներ էր պատրաստում: Արթուրը *խելքով* տղա է՝ շուտ ըմբռնող:

20. *Ստորոգելիական վերադիր* - Ամառ-ձմեռ խեղճ մարդը նույն *զգեստով* էր (ՍԳ): Այսօրվա նախաճաշը շատ *համով էր,* որովհետև արևածաղկի *յուղով էր:* Տղան տեսքով էր, աղջիկը՝ *սլացիկ բոյով* (ՍԳ):

ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

§ 178. Ներգոյականով *տարածական և պարունակության* իմաստ արտահայտող անդամներն են դրվում.

1. *Տեղի պարագա* - Խաղաղություն կար Կաքավաբերդի *ավերակներում* (ԱԲ): Լռություն կա իմ *հոգում:* Դու քնած ես տաքուկ *անկողնում* և արև բախտի երազ ես տեսնում (ՎՏ): Ծաղիկ էի նորաբողբոջ՝ սարի *լանջում,* երկնի տակ (Ավ.Իս.):

2. *Կողմնակի տեղի պարագա* - Շիրակի *դաշտերում* անցկացնելով մանկությունս՝ ճաշակեցի հայրենիքի քաղցրությունը (Ավ.Իս.): *Անկողնում* քնած երեխան արթնացավ ու սկսեց մորը կանչել: *Ջրում* ծնվածը օդում չի թռչի (Ժող.):

3. *Ժամանակի պարագա* - Ներկա *օրերում* այլ ինչ սև քնար, Սուր է հարկավոր կտրիճի ձեռքին (ՄՆ): Մոտիկ *ապագայում* լուծվելու է երևանի ջրի հարցը (ՅՅ): Ռեկտորը *սկզբում* խոսեց առաջադիմության մասին, *վերջում*՝ կարգապահության (ԵՅ):

4. *Կողմնակի ժամանակի պարագա* - Իր ապրած յոթանասունհինգ տարիներից *հիսունհինգում* միայն ազգօգուտ գործ կատարեց:

5. *Սահմանափակման խնդիր* - Այդպիսի *գործերում* նա շատ հմուտ է: Հատկապես *վիճաբանություններում* ոչ ոք չէր զիջում: Իրեն լավ էր դրսևորում միայն *մրցումներում: Թղթախաղում* միշտ բախտը բերում էր (Շ):

6. *Կողմնակի սահմանափակման խնդիր - Դրանում* համոզված չլինելով՝ իր համաձայնությունը չտվեց: *Վիճաբանությունում* տանուլ տալով՝ իրեն վատ էր զգում: Աշխատանքում չփայլելով՝ հեղինակություն չէր վայելում (ՀԱ):

7. *Ձևի պարագա* - Բորբ արևին իմ բորբ *սրտում* ասում եմ ես՝ մնաք բարով (ՎՏ): Ձկնորսը *մտքում* անիծում էր իր բախտը (ՍԳ): Երեխան *քթում է* խոսում: *Մտքում* հաշվում էր ոչխարները, ու մեկը միշտ պակասում էր (ՍԳ):

8. *Կողմնակի ձևի պարագա - Մտքում* անիծելով իր բախտը՝ օրվա որսից գոհ էր մնում: *Սրտում* սիրելով աղջկան՝ աշխատում էր շատ երես չտալ (ՊՂ): *Քթում* խոսելիս՝ մեկ-մեկ էլ՝ հայհոյում էր (ՊՂ):

9. *Գոյական որոշիչ* - Ներգոյական հոլովով գոյական որոշիչները հազվադեպ են. որոշչի պաշտոնով հանդես եկող գոյականները սովորաբար միաբառ չեն լինում, և որոշչային կապակցության մեջ արտահայտված չի լինում կախյալ դերբայը. փաստորեն առանց դերբայի զեղչման այդ որոշչային բառակապակցությունը կլիներ դերբայական դարձվածով արտահայտված որոշիչ. այսպես՝ «Մեր պատգամավորներին դիմավորեց *Մոսկվայում* (եղած) Հայաստանի դեսպանը» (ՀՀ): «Հայաստանի դեսպանը *Փարիզում* (եղած, գտնվող) հայոց ցեղասպանության հարցն է բարձրացրել» (Ազգ): «Հիշում եմ մորս ձայնը *սարերում* (հնչող, կանչող), Ոչխարի մակաղելը *փարախում»* (ՍԳ):

Նման կառույցներում, անշուշտ, մեծ կարևորություն ունեն շարադասությունն ու հնչերանգը, եթե ներգոյականով դրվող գոյական որոշիչներն արտաբերվեն բայ-ստորոգյալների հետ, կլինեն *տեղի պարագաներ (Մոսկվայում դիմավորեց,բարձրացրեց),* իսկ եթե արտաբերվեն գոյականների հետ, կլինեն *որոշիչներ (դեսպանը Մոսկվայում, դեսպանը Փարիզում)* (տե՛ս § 98):

10. *Ստորոգելիական վերադիր* - Հիվանդը *նույն վիճակում է:* Տնօրենը *տեղում չէ:*

- Դու քո *պաշտոնում չես,* սիրելի՛ս, այնպես որ նկատի ունեցիր (Առավոտ):

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Նախադասությունը, ինչպես նշված է սույն դասագրքի առաջին մասում (§ 1), շարահյուսության ուսումնասիրության հիմնախնդիրն է, շարահյուսական ամեն մի հետազոտության կենտրոնը, ելակետն ու վախճանակետը:

Ի՞նչ է բարդ նախադասությունը:

§ 176. Բարդ նախադասությունը բնութագրվում է հետևյալ հատկանիշներով:

1. Բարդ նախադասությունը, ինչպես և պարզը, հանդես է գալիս որպես լեզվի երկու կարևորագույն գործառույթների՝ ա) մտածողության միջոցի և բ) հաղորդակցության միջոցի իրացում կամ իրականացում:

Բարդ, նաև պարզ նախադասություններով մենք մտածում ենք կամ, ինչպես ասում են, «զմտավ ենք ածում» (Գ. Սևակ) մեր շրջապատի իրերն ու իրողությունները, դրանց հարաբերությունները, մեր իսկ ներաշխարհի երևույթները, զգացողությունները, վերաբերությունները այդ ամենի նկատմամբ և այդ նույն նախադասություններով «զմտավ ածվածը» դարձնում խոսակցի սեփականություն: Այլ կերպ ասած՝ նախադասությունը՝ պարզ թե բարդ, լեզվական նյութական այն միավորն է, որով ձևավորվում է միտքը, և որով արդեն ձևավորված միտքը հաղորդվում է խոսակցին (բանավոր թե գրավոր), այսինքն՝ կատարվում է հաղորդակցություն:

Այս հիմունքով դատելով՝ կարելի է ասել, որ ի վերջո նախադասությունը՝ իր բոլոր արտահայտություններով, է՛ լեզվի գոյը: Հիրավի, չկա լեզվական աստիճանակարգության՝ շարահյուսության և նրան ստորակարգված մակարդակների որևէ միավոր, որ ներունակությամբ չարտացոլվի նախադասության մեջ՝ սկսած հնչույթից մինչև ձևույթն ու բառը, բառից մինչև բառածևը, հնչյունական մակարդակից մինչև ձևաբանական մակարդակի բոլոր իրողություններն ու օրինաչափությունները:

2. Բարդ նախադասությունը, ինչպես նաև պարզը, արտահայտում է ամփոփ միտք: Ըստ որում՝ միտք պարունակելը նախադասության հիմնական հատկանիշն է: Միտքը նախադասության մեջ ձևավորվում է տվյալ լեզվամտածողությանը հատուկ բառաքերականական որոշակի օրինաչափություններով, դրանց համակարգված համակցությամբ: Թե՛ բարդ և թե՛ պարզ նախադասությունները արտահայտում են ամփոփ ու ավարտուն միտք:

Իբրև բարդ նախադասության կազմիչներ՝ հանդես են գալիս պարզ նախադասությունները: Ուրեմն *բարդ նախադասությունն ըստ էության*

պարզ նախադասությունների գումար է: Սակայն այն երկու կամ ավելի պարզ նախադասությունների սոսկական թվարկում չէ կամ թվաբանական գումար, ոչ էլ բարդ նախադասության իմաստն է իր կազմիչ պարզ նախադասությունների իմաստների թվաբանական գումարը: Ճիշտ է նկատված, որ «Բարդ նախադասությունը սխալ է գնահատել իբրև առածին ու անկախ պարզ նախադասությունների սովորական զուգորդություն, կոմպոզիցիոն միասնություն տեքստում: Այն իրենից ներկայացնում է մեկ միասնական հաղորդակցական միավոր, որը չի կարելի նույնացնել իր կազմիչ մասերի սոսկական գումարի հետ»[59]:

Բարդ նախադասությունը մի կուռ ամբողջություն է, որի մեջ առկա պարզ նախադասությունները զրկված են նախադասության հիմնական հատկանշից՝ ամփոփ միտք արտահայտելուց և վերածվել են սոսկ կազմիչ տարրերի կամ միավորների:

Չի կարելի կարծել նաև, թե բարդ նախադասությունը, ի տարբերություն պարզի, բովանդակում է *ո՛չ* թե մեկ, այլ մեկից ավելի՛ մտքեր, այնքան, որքան պարզ նախադասություններից որ կազմված է այն: Բարդ նախադասությունը, անկախ իր նախադասություն-բաղադրիչների քանակից, դրսևորում է մեկ միտք և *ո՛չ* ավելի:

3. Ինչպես որ պարզ նախադասության բաղադրիչ տարրերը (նախադասության անդամներ, բառակապակցություններ, սպասարկու բառեր), որպես շինանյութ, շաղախվելով շարահյուսական որոշակի իրակությունների հետ, գոյացնում են միտք, այդպես էլ բարդ ամբողջի մեջ մտնող պարզ նախադասությունները, կորցնելով իրենց ինքնուրույնությունը, վերածվում են մի այլ կարգի շինանյութի, որը շարահյուսական ուրիշ իրակությունների աշխատանքով նույնպես գոյացնում է միտք՝ *մեկ ընդհանուր, ավարտուն ու ամփոփ մտածություն:* Ուրեմն, կարելի է ասել, բարդ նախադասության բաղադրիչ-նախադասությունները մեկ ընդհանուր մտքի կազմիչներն են ու արտահայտիչները, որոնք միմյանց հետ աղերսվում են ներքին տրամաբանությամբ ու իմաստով, կապակցվում քերականական համապատասխան եղանակներով ու միջոցներով:

4. Պարզ և բարդ նախադասության հարաբերակցության մասին խոսելիս ոմանք ուշադրությունը սևեռում են դրանց արտահայտած իմաստային հատկության վրա, ըստ որի՝ պարզ նախադասությունն արտահայտում է մեկ *պարզ միտք*, բարդ նախադասությունը՝ մեկ *բարդ միտք*[60]: *Բարդ* ածականի հականիշը *պարզ*-ն է, *բարդ միտք* հասկացության հականիշը՝ *պարզ միտք*-ը: Իրականում և՛ պարզ, և՛ բարդ մտքերը կարող են դրսևորվել թե՛ պարզ և թե՛ բարդ նախադասություններով: Նախադասությունն իր կառուցվածքով կարող է պարզ լինել, իսկ նրա բովանդակած միտքը՝ բարդ, և, ընդհակառակը, նախադասությունը կարող է լինել բարդ, արտահայտած միտքը՝ միանգամայն պարզ:

---

[59] ***Н.М. Шанский*** и др., Современный русский литературный язык, под. ред. Н.М. Шанского, Л., 1988, էջ 585:

[60] Տե՛ս *Գր. Գարեգինյան*, Ժամանակակից հայոց լեզու. բարդ նախադասություն, Եր., 1984, էջ 4:

Սիա մի բարդ նախադասություն. *Թվում է, թե օրերը ցրտելու են:* Սիա մի պարզ նախադասություն. *Անտեսելով 20-րդ դարի գիտության և արվեստի զարգացման պրոցեսի սոցիալական, քաղաքական, ազգային ու պատմական ներքին բազմաշերտությունը՝ քննադատն անխուսափելիորեն կորցնում է ազգային գրականության, մասնավորապես արդի գրական կենդանի պրոցեսի զարգացման բուն շարժառիթների ճշմարիտ զգացողությունը և գնահատության չափանիշները (ԳԹ):*

Առաջին՝ բարդ նախադասության իմաստն ընկալելու համար մտքի լարվածության կարիք չկա ընավ, ինչը չի կարելի ասել երկրորդ՝ պարզ նախադասության մասին, թեև այնտեղ չկա որևէ անհասկանալի բառ, բառակապակցություն և այլն: Իսկ եթե *բարդ միտք* կապակցության մեջ *բարդ* գիտաբառը հասկանանք որպես երկու կամ ավելի մասերից բաղկացած լինելը, ապա դարձյալ կստացվի, որ բարդ միտքը կազմված է երկու կամ ավելի (պարզ) մտքերից, որ դարձյալ ընդունելի չէ, քանի որ, ինչպես նշվեց, *բարդ նախադասությունը արտահայտում է մեկ միտք:*

Նախադասությունը, այսպիսով, արտահայտության պլանում, այսինքն՝ կառուցվածքով կարող է բարդ լինել, իսկ բովանդակության պլանում՝ պարզ, և՝ հակառակը:

5. Պարզ և բարդ նախադասությունը հաճախ տարբերակում են ըստ *ստորոգման* կամ *ստորոգյալների* քանակի: Չպետք է կարծել, թե պարզ նախադասությունը ունի մեկ *ստորոգում*, ուրեմն՝ մեկ ստորոգյալ, բարդը՝ երկու կամ ավելի ստորոգում, ուրեմն և՝ նույնքան ստորոգյալ[61]:

Այդպիսի կառույց կարող են ունենալ միայն որոշակի կարգի նախադասություններ: Օրինակ՝ Ներքևում խոտը *կանաչին է տալիս*, և խոտի մեջ թաքնված մի կակաչ *ժպտում է* (ՀԹ): Այս բարդ նախադասությունն ունի երկու ստորոգումային միավոր, որոնք հենց նրա կազմիչ երկու պարզ նախադասություններն են. ուրեմն առկա է երկու պարզ նախադասություններից

---

[61] «Բարդ նախադասությունը երկու կամ ավելի ստորոգումային միավորների կառուցվածքաիմաստային և իմաստային միասնությամբ բնորոշվող ամբողջություն է»,- գրում են ժամանակակից գրական ռուսերենի քերականության բուհական դասագրքի հեղինակները (***Л.А. Лекант*** и др., Современный русский литературный язык, М., 1982, էջ 328):

Բարդ նախադասությունը գրեթե նույն կերպ է բնութագրված ռուսերենի մեկ այլ բուհական դասագրքում (Ն.Մ. Շանսկու և այլոց հեղինակակցությամբ). «Բարդ նախադասությունը,- գրում են հեղինակները,- շարահյուսական յուրահատուկ միավոր է, որ ներկայացնում է երկու (կամ ավելի) ստորոգումային մասերից կազմված միացություն (***Н.М. Шанский*** и др., հիշ. աշխ., էջ 584):

Այս դրույթը պաշտպանություն է գտել նաև հայ քերականագիտության մեջ: «Քերականական-կառուցվածքային տեսակետից, – կարդում ենք «Հայոց լեզու» բուհական դասագրքի Բ հատորում, այդպիսի բարդ և համապատասխան պարզ նախադասության տարբերությունը ստորոգման քանակի մեջ է. պարզ նախադասության մեջ կա *մեկ ստորոգյալ*, բարդի մեջ՝ *մեկից ավելի*» (տե՛ս *Ա.Գ. Աբրահամյան, Վ.Դ. Առաքելյան, Վ.Ա. Քոսյան*, Հայոց լեզու, հ. Բ, Եր., 1975, էջ 304. Ընդգծումը մերն է - Ա.Պ): Փոքր-ինչ այլ ձևակերպումով նույն միտքն է արտահայտում նաև Գր. Գարեգինյանը: «Պարզ նախադասությունը,- գրում է նա,- *մենաստորոգումային* կառույց է, բարդ նախադասությունը՝ *բազմաստորոգումային* կառույց» (տե՛ս նրա հիշ. աշխատությունը, էջ 25. ընդգծումը մերն է – Ա.Պ.):

կազմված մեկ բարդ նախադասություն՝ երկու ստորոգյալներով (*կանչ|ում է տալիս* և *ժպտում է*): Բայց դիտարկենք նաև հետևյալ կառույցը. Ահա մի հարված, որ իր առավել ուժգնությամբ իսկ նսեմացնում է կարծես նախորդ հարվածի ազդեցությունը (ՎՓ): Այս նախադասությունը ևս բարդ է՝ կազմված երկու պարզ նախադասություններից, թեև ունի միայն մեկ ստորոգումային միավոր. դա երկրորդ բաղադրիչն է՝ *նսեմացնում է* ստորոգյալով: Մեկ այլ բարդ նախադասություն. Սև գիշե՞ր, և հուշե՞ր, և խոհե՞ր անհամար, Մոռացված երազներ՝ շուշաններ թառամած, Խնդություն հեռացած և անցած, և անդարձ, Տրտմություն մենավոր, միածա՛յն, միալա՛ր (ՎՏ):

Այս բարդ նախադասությունը բաղադրված է արդեն ոչ թե երկու, այլ վեց պարզ նախադասություններից՝ 1. Սև գիշե՞ր, 2. և հուշե՞ր, 3. և խոհե՞ր անհամար, 4. Մոռացված երազներ՝ շուշաններ թառամած, 5. Խնդություն հեռացած և անցած, և անդարձ, 6. Տրտմություն մենավոր, միածա՛յն, միալա՛ր: Վեց միակազմ պարզ նախադասություններից կառուցված այս բարդ նախադասության մեջ չկա ոչ մի ստորոգումային միավոր, ոչ մի ստորոգյալ: Ուրեմն ստորոգումային միավորների քանակով չի որոշվում նախադասության՝ պարզ թե բարդ լինելը:

Այսպիսով՝ գիտականորեն արդարացված չէ շարահյուսական մի կառույցը բնութագրել՝ հիմքում ունենալով այդ կառույցի տեսակային հատկանիշներից այսինչ մեկը, անտեսելով մյուսները:

Իրականում բարդ նախադասությունը բաղադրված է իրենց կառուցվածքային ու իմաստային ինքնուրույնությունը կորցրած և բառաքերականական իրակություններով կապակցված, մեկ ընդհանուր միտք պարունակող երկու կամ ավելի պարզ նախադասություններից, որոնք հանդես են գալիս որպես հաղորդակցական մեկ միասնական միավոր, մեկ ամբողջություն:

6. Բարդ նախադասության հատկանիշներից մեկն է *հնչերանգային ավարտունությունը:* Ձայնային որոշակի ելևէջավորումը ձևավորում է ինչպես պարզ, այնպես էլ բարդ նախադասություն: Խոսքային ընդհանուր շղթայի մեջ ձայնային տոնը, փոքր ու մեծ շարահյուսական դադարներն առանձնացնում են կառուցվածքային միավորներ, որոնք այլ բան չեն, քան պարզ նախադասություններ՝ բարդ նախադասությունների բաղադրիչ տարրերը:

Ընդհանրապես պետք է արձանագրել, որ շարահյուսագիտության մեջ ամենից ավելի դժվար է քննության տրվում նախադասության հնչերանգային հատկությունը: Խնդիրն այն է, որ հնչերանգությունը նախ և առաջ կենդանի հնչյունային լեզվի հատկանիշ է՝ հնչյունանախադասության հատկությունը: Սրա գրավոր տարբերակում հնչերանգն արտահայտվում է տվյալ լեզվում առկա կետադրական համապատասխան նշաններով (գրաֆեմաներով): Գրավոր խոսքը ընթերցողը մտովին կամ, եթե բարձրաձայն է կարդում բնագիրը, կենդանի կերպով վերարտադրում է հնչյունանախադասության ձայնային վերուվարումները այնպես, ասես դա հենց բանավոր ասված հնչյունային խոսքն է, որտեղ մտքերն ավարտունություն են ստանում, այսինքն՝ ձևավորվում են որպես հաղորդակցական միավորներ՝

դարձյալ և դարձյալ հնչերանգով: Դիտարկենք հետևյալ նախադասությունը: *Մտքիս մեջ հանդիպման հազար ու մի տարբերակներ էի գծել. երկու քույրեր են, բաժանվել են, երբ մեկը քսանվեց տարեկան էր, մյուսը՝ քսան, ահա հանդիպել են, երբ մեկը յոթանասանվեց տարեկան է, մյուսը՝ յոթանասուն (ՍԿ):*

Այս նախադասությունը բաղկացած է ութ պարզ նախադասություններից, որոնք մեկ բարդ ամբողջի մեջ են ամփոփվել մեկ ավարտահնչերանգով (անշուշտ, նաև այլ գործոններով): Նախադասության կառուցվածքը և բաղադրիչների իմաստային-քերականական հարաբերությունները թույլ են տալիս փոխել նախադասության հնչերանգությունը և մեկի փոխարեն ունենալ երկու ավարտուն հնչերանգ, ինչպես՝ 1. *Մտքիս մեջ հանդիպման հազար ու մի տարբերակներ էի գծել. երկու քույրեր են, բաժանվել են, երբ մեկը քսանվեց տարեկան էր, մյուսը՝ քսան:* 2. *Ահա հանդիպել են, երբ մեկը յոթանասունվեց տարեկան է, մյուսը՝ յոթանասուն:* Թվահամարները նշում են երկու առանձին նախադասություններ՝ երկու ավարտուն հնչերանգներով: Առաջին թվահամարի նախադասությունը իր հերթին, հնչերանգը փոխելով, կարելի է վերածել երեք ավարտուն մտքերի, ինչպես՝ 1. *Մտքիս մեջ հանդիպման հազար ու մի տարբերակներ էի գծել:* 2. *Երկու քույրեր են:* 3. *Բաժանվել են, երբ մեկը քսանվեց տարեկան էր, մյուսը՝ քսան:* Երրորդ թվահամարի նախադասության հնչերանգը փոփոխման ենթակա չէ՝ նրա բաղադրիչների շարահյուսական հարաբերության բառաքերականական որոշակի արտահայտության պատճառով (կախյալ նախադասության առկայություն, որոշ միավորների զեղչում՝ ընդհանուր լինելու հիմունքով և այլն):

Այսպիսով՝ ինչպիսի տրոհման էլ որ ենթարկենք նախադասությունը, այն պետք է ունենա մեկ ընդհանուր ավարտուն հնչերանգ, որով ազդարարվում են հաղորդակցական միավորի սկիզբն ու ավարտը:

§177. Ինչպես պարզ նախադասությունը, այնպես էլ բարդը ձևավորվում են պատմողական, հրամայական, հարցական և բացականչական հնչերանգներով: Ըստ որում՝ բարդ նախադասության հնչերանգային առավել կարևոր տարբերակիչ հատկությունը տոնայնության կտրուկ վերուվարումներն են պարզ նախադասություն–բաղադրիչների սահմանագծում: Նախադասության արտաբերությունը սկսվում է ծագումով, այսինքն՝ տոնի որոշ բարձրացումով. հաջորդ բաղադրիչին հասնելով՝ տոնայնությունը կամ ավելի է բարձրանում, կա՛մ իջնում է՝ չվերածվելով, սակայն, ավարտահնչերանգի, հակառակ պարագայում նախադասությունը կավարտվի: Իսկ յուրաքանչյուր հաջորդ բաղադրիչ–նախադասություն ունենում է ելման հնչերանգ, որով բնորոշվում է բարդության առաջին եզրը: Եվ այսպես ձայնային վերուվարումները շարունակվում են, մինչև որ հնչերանգային ավարտունությունը ազդարարում է նախադասության ավարտը: Հարկ է նշել նաև, որ մինչդեռ պարզ նախադասությունը ունենում է միայն այսինչ կամ այնինչ հնչերանգային ձևավորումը (պատմողական, բացականչական և այլն), բարդը միաժամանակ կարող է համատեղել երկու (անգամ երեք) կարգի

հնչերանգային ելևէջումներ: Հմմտ. *Օրին քաշում ենք հարսանիքի համար, ծնունդի ու կնունքի, տոնախմբությունների համար. քաղման մասին ո՞վ է մտածում* (ՄԳ): Այս բարդ նախադասությունը բաղկացած է երկու պարզ նախադասություններից. 1. *Օրին քաշում ենք հարսանիքի համար, ծնունդի ու կնունքի, տոնախմբությունների համար:* Այս հատվածը արտաբերվում է պատմողական հնչերանգով: 2. *Քաղման մասին ո՞վ է մտածում:* Այս հատվածն արտաբերվում է հարցական տոնայնությամբ: Ուրեմն երկու տարբեր հնչերանգներ են առկա միևնույն նախադասության մեջ: Նախադասությունն սկսվում է պատմողական հնչերանգով, ավարտվում հարցականով, բայց միևնույնն է, այն ձևավորվում է մեկ ընդհանուր, ավարտուն հնչերանգությամբ:

ՀԱՄԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՏՈՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

§178. Պարզ նախադասության նվազագույն միավորների՝ նախադասության անդամների միջև առկա են լինում շարահյուսական երկու կարգի հարաբերություններ, որոնք կոչվում են *համադասություն և ստորադասություն:* Այդ նույն հարաբերությունները, ինչպես և պարզ նախադասությանը հատուկ շատ այլ իրակությունններ, նկատվում են և բարդ նախադասությունների կառուցվածքում: Բարդ նախադասության նվազագույն արտահայտությունը *երկբաղադրիչ կառույցն է,* որ երկու միակցված պարզ նախադասություններից կազմված մի ընդհանուր ամբողջություն է: Այդ ընդհանուր ամբողջությունը կազմող երկու բաղադրիչների միջև կարող են լինել շարահյուսական հարաբերությունների երկու տարատեսակներ՝ *համադասություն և ստորադասություն:* Ըստ այդ հարաբերության արտահայտության էլ բարդ նախադասությունը կամ համադասական է, կամ ստորադասական: Առաջին դեպքում բաղադրիչների միջև առկա է համադասական հարաբերություն, երկրորդ դեպքում՝ ստորադասական:

Բարդ համադասական կոչվում է այն նախադասությունը, որի բաղադրիչ նախադասությունները քերականորեն համարժեք են, հավասարազոր:

Բարդ ստորադասական կոչվում է այն նախադասությունը, որի բաղադրիչները քերականորեն անհամարժեք են. մեկը լրացում է, մյուսը՝ լրացյալ:

Համադասությունը և ստորադասությունը, այսպիսով, բարդ նախադասության բաղադրիչների հարաբերությունը բնորոշող հիմնական շարահյուսական կարգերն են:

§ 179. Ավանդական քերականագիտության մեջ, դեռևս 19-րդ դարի կեսերից սկսած, համադասության և ստորադասության կարգերը բարդ նախադասության մեջ ընդունված է եղել տարբերակել նրա բաղադրիչների իմաստային անկախության և կախվածության հակադրության հիմքի վրա: Այս դրույթը արտացոլվել է ամենից առաջ Ս. Պալասանյանի աշխատություններում: Նրա կարծիքով՝ բարդ համադասական նախադասության բա-

դադրիչները «քերականորեն միմյանցից ամենևին կախում չունեն, այլ յուրաքանչյուրը առանձին մի ամբողջ միտք է պարունակում իր մեջ»[62]: Ըստ այդմ բարդ համադասական նախադասությունը կազմված է առանձին, անկախ նախադասություններից և բովանդակում է այնքան միտք, որքան պարզ նախադասություններ ունի իր կազմում:

Այս տեսակետն է պաշտպանել նաև Մ. Աբեղյանը, որ գրում էր. «Իրար հետ կապակցված խոսքերը (նախադասությունները – Ա.Պ.) միմյանց վերաբերմամբ ունեն երկու տեսակ հարաբերություն՝ *ստորադասական* և *համադասական:*

1. Կապակցված խոսքերից մեկը, դառնալով լրացում մի ուրիշ խոսքի, իր կատարած պաշտոնով ստորադասվում է այն խոսքին, որի լրացումն է դառնում: Լրացում դարձող խոսքը կոչվում է ստորադաս կամ երկրորդական խոսք (...):

2. Կապակցված խոսքերը լինում են միմյանց *համազոր* և *միմյանցից անկախ,* այսինքն մեկը մյուսի լրացում չեն դառնում: (...) Դրանք միմյանց վերաբերմամբ համադաս խոսքեր են»[63]:

Համադասության և ստորադասության արտահայտման նյութական միջոցներից կարևորագույնը համադասական և ստորադասական շաղկապներն են ու շաղկապական բառերը, նաև հարաբերական դերանունները. վերջիններս ստեղծում են միայն ստորադասական կապակցություն: Դիտարկենք հետևյալ նախադասությունները.

1. Աճուրդի հանված ազատությունն է մռնչում այսօր, Եվ առևանգված սերն է հեծկլտում տատրակի նման (ՎՊ): 2. Նրանք ծնվում են իրենց ծնողի անզորությունից, *որպեսզի* դառնան նոր զորեղություն (ՊՍ):

Երկրորդ նախադասության բաղադրիչների միջև կա ստորադասական հարաբերություն, որի ձևական ցուցիչն է *որպեսզի* ստորադասական շաղկապը: Ուրեմն անկախության մասին խոսք չի կարող լինել: Առաջին նախադասության բաղադրիչները կապակցված են *և* համադասական շաղկապով, որը համադասության արտահայտության բառական միջոցն է: Թվում է, թե այստեղ բաղադրիչները «միմյանցից անկախ» են: Իրականում, սակայն, այդպես չէ, եթե դրանք դիտենք իրենց իմաստային միասնության մեջ՝ որպես մեկ ընդհանուր ամբողջի մասեր: Երկու բաղադրիչները թե՛ արտահայտության և թե՛ բովանդակության պլաններում կրողն են ընդհանուր մտքի, որ ցանկացել է ասել հեղինակը:

Այս և նման գործողությունների, իրողությունների թվարկում արտահայտող նախադասություններում, այսուհանդերձ, առկա է որոշ թվացյալ անկախություն, մասնավորապես, երբ բաղադրիչները կապակցվում են շարահարությամբ, այսինքն՝ առանց սպասարկու բառերի: Հմմտ. Կա Մեծարենց, կա Տերյան, և բազում ուրիշ պոետներ կան (ԵՉ): Բնությունը փառավորվում էր յուր վաղորդյան հրճվանքով, թռչունները ուրախածայն երգերով

---

[62] *Ա.Պալասանեան,* Քերականութիւն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1906, էջ 193:

[63] *Մանուկ Աբեղյան,* Աշխարհաբարի շարահյուսություն. Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 600. ընդգծումը մերն է – Ա.Պ.:

ողջունում էին տվնջյան լուսատուի հանդիսավոր ելքը, ամենուրեք շնչում էր անսպառ հաճություն (ՐՍ): Այս կարգի նախադասությունների բաղադրիչները, ըստ Մ. Աբեղյանի, «կապակցության վերանալով՝ դառնում են անկախ» նախադասություններ[64]: Սրան հարկ է ավելացնել, որ հիշյալ նախադասությունների բաղադրիչները կարող են անկախանալ միայն հնչերանգի փոփոխությամբ, այսինքն՝ եթե բաղադրիչներից յուրաքանչյուրը ձևավորվի մեկական ավարտուն հնչերանգով, ինչպես՝ Կա մեծարենց: Կա Տերյան: Եվ բազում ուրիշ պոետներ կան, և այլն:

Եվ կամ *ու* համադասական շաղկապները, սակայն, հաճախ կարող են կապակցել այնպիսի բաղադրիչներ, որոնք իմաստային տեսակետից արտահայտում են գործողությունների, եղելությունների ժամանակային հաջորդականություն, պատճառահետևանքային և այլ հարաբերություններ: Հմմտ. 1. Նրանք մոլորվածի պես լուռ ու մունջ ներս մտան, և քրմապետը դուռը փակեց նրանց հետևից (ՂԱ): Երկրորդ բաղադրիչում առկա գործողությունը ժամանակային առումով հաջորդում է նախորդ բաղադրիչում արտահայտված գործողությանը, այսինքն՝ առկա է գործողությունների հաջորդականություն: 2. Բայց դժվար է լինում մարմին տալ այդ երգին (...), և ես տվայտելով մռայլվում եմ կրկին (ՊՍ): Այստեղ բաղադրիչների միջև արդեն առկա է պատճառահետևանքային հարաբերություն. առաջին բաղադրիչում նշվում է մի իրողություն, որն ընկալվում է որպես պատճառ, որին իբրև հետևանք հաջորդում է երկրորդ բաղադրիչում նշված գործողությունը: Ավելացնենք, որ պատճառահետևանքային հարաբերությունը առավելապես բնորոշ է ստորադասական կապակցությանը: Հմմտ. Բայց եթե (*երբ, քանի որ* և այլն) դժվար է լինում մարմին տալ այդ երգին (...), ես տվայտելով մռայլվում եմ կրկին: Ստացվում է, որ համադասական կապակցության մեջ առկա են ստորադասական կապակցության տարրեր: Եվ դա վերաբերում է ոչ միայն *և (ու)* միավորիչ շաղկապներով, այլև որոշ այլ շաղկապներով կապակցություններին:

§ 180. Ինչպես նկատված է, «Բարդ նախադասության բաղադրիչների հարաբերության բնույթը երբեմն որոշակի չէ հենց քերականական տեսակետից»[65]: Մի կողմ թողնենք շարահարական կապակցությունը, որտեղ հաճախ դժվար է որոշել բաղադրիչների հարաբերությունները, որոնք դրսևորվում են բայ-ստորոգյալների եղանակաժամանակային որոշակի կիրառություններով, ձայնային որոշակի ելևէջավորումով և այլն. շատ դեպքերում սպասարկու բառերն իսկ ի զորու չեն հստակորեն սահմանելու կապակցության բնույթը: Դա վերաբերում է թե՛ համադասական որոշ շաղկապներին, թե՛ ստորադասական, թե՛ մենադիր, թե՛ զուգադիր շաղկապներին: Վաղուց դիտարկված է, որ «երկակիությունը առանձնապես հատուկ է այնպիսի բարդ նախադասությունների, որոնց մի մասի հետ գործածվում է զիջական, իսկ մյուս մասի հետ՝ ներհակական շաղկապ»[66]: Հմմտ. *թեև... բայց (սա-*

[64] *Մ.Աբեղյան,* նշվ. աշխ., էջ 600:
[65] *Ս.Գ. Աբրահամյան* և ուրիշներ, Հայոց լեզու, հ. Բ, եր., 1975, էջ 307:
[66] Տե՛ս նույն տեղը:

կայն), թեպետ... բայց (սակայն), թեպետև ... բայց (սակայն), չնայած (որ) ... բայց (սակայն) շաղկապներով կապակցված կառույցները: Օր. Թեպետ արդեն տասը տարին մեկ վայրկյանում ուսերիցս վայր է ընկել, սակայն ունեմ տարիքային մի թուլություն. համբույրի և պաչի միջև դեռ դնում եմ տարբերություն (ՊՍ): *Թեպետ* շաղկապը, որ առկա է առաջին բաղադրիչում, ազդարարում է զիջման ստորադասական հարաբերություն, որը հայտնի չափով չեզոքացվում է երկրորդ բաղադրիչի սկզբում առկա *սակայն* համադասական շաղկապով: Վերջինս բարդ ամբողջի մեջ մտցնում է համադասության տարրեր:

Երկակի իմաստ կարող է արտահայտել նաև *եթե... ապա (հապա)* զուգադիր շաղկապը, որը, ինչպես նախորդ շաղկապները, տրոհվելով տեղաբաշխվում է երկու կից բաղադրիչների մեջ՝ նրանց սկզբում: Սա սովորաբար արտահայտում է ստորադասական հարաբերություն՝ պայմանահետևանքային նշանակությամբ: Հմմտ. Եթե մարդիկ հնարավոր են համարում զրպարտել առանց որևէ հիմքի, ապա ինչե՞ր չեն անի՝ նկատելով այս փաստը (ՆՋ): Եթե զարթնում է գինովցած քամին,ապա զարթնում է ծոցվոր ծառերից կաթող մրգերի թմփոցից միայն (ՊՍ):

Այս նախադասություններում առկա է որոշակի ստորադասական հարաբերություն՝ պայմանահետևանքային բովանդակությամբ: Բայց միշտ չէ, որ նման կապակցության մեջ արտահայտված է լինում ստորադասություն: Քիչ չեն դեպքերը, երբ միևնույն *եթե... ապա (հապա)* զուգադիր շաղկապով կապակցվում են համադաս բաղադրիչներ՝ ներհակական հարաբերությամբ: Հմմտ. [Նրանց հայրը՝ Ռոմանոս Սահակյանը, նկարիչ էր: Երկու որդիներն էլ էին նկարում]: Եթե ավագ որդին մեծ հաջողություններ էր հասել բնանկարի ասպարեզում, ապա կրտսերն էլ աչքի էր ընկնում կոմպոզիցիոն մտածողությամբ (ԳԹ): Թեև բաղադրիչների կապը իրացված է *եթե... ապա* շաղկապով, սակայն դրանց միջև առկա է համադասական կապակցություն՝ հակադրական հարաբերությամբ:

Թե շաղկապը իր բուն խոսքամասային իմաստով առավելապես ստորադասական է: Հմմտ. Եվ ես անորոշ այնժամ հասկացա, *թե* այսուհետև դեպի հայրենիք երբեք ինձ համար էլ ճամփա չկա (ՀԹ): Բայց նույն *թե* շաղկապով կարող են կապակցվել նաև համադաս միավորներ. հմմտ. Այս լեռնակողզում լեռքարե՞րն են շատ, *թե՞* կերպաձևված շիրմաքարերը (ՊՍ): Նույն *թե*-ն կարող է կապակցել համադաս նախադասություններ՝ առանց հարցական հնչերանգի՝ երկրորդ հատվածում. հմմտ. Ի՞նչ են տարել նրանք կյանքից, *թե* ինչ տանես դու քեզ հետ (ՀԹ) և այլն:

Թե չէ բարդ շաղկապը ևս կապակցում է առավելապես ստորադաս բաղադրիչներ՝ ժամանակային հարաբերությամբ. հմմտ. Ներս մտավ *թե չէ*, բարձրացավ ամբիոն և սկսեց իր քարոզը (ՀՍՅԵ): Բայց կապակցում է նաև համադաս բաղադրիչներ. հմմտ. Չէ՛, ինձ չէիր, չէիր սիրում, *թե չէ* ի՞նչ է, բա՞րդ էր այնքան գտնել երեք անուններում իմ անունը գեթ մի՛ անգամ (ՊՍ):

Այսպիսով՝ նույնիսկ ճշույթավոր կապակցության մեջ առաջին հայացքից ստորադասական թվացող հարաբերությունը իրապես համադասական է:

§ 181. Նման երկակիություն առկա է ոչ միայն հայերենում, այլև ուրիշ շատ լեզուներում, և դա հաճախ տարակարծությունների և գիտական բուռն վեճերի առիթ է դարձել: Նկատի ունենալով այն իրողությունը, որ, օրինակ, ռուսերենում մի շարք դեպքերում բարդ նախադասության բաղադրիչների շարահյուսական հարաբերությունը նույնիսկ սպասարկու բառերի առկայությամբ հստակ չի տարբերակվում, Մ.Ն. Պետերսոնը հանգեց այն եզրակացության, որ «համադասության և ստորադասության միջև օբյեկտիվ տարբերություն չկա, ուրեմն և կարիք չկա պահպանելու անցյալից եկող ժառանգությունը նախադասության տեսության վերաբերյալ»[67]:

Մ. Պետերսոնի այս տեսակետը լուրջ առարկությունների հանդիպեց հենց ռուս լեզվաբանության մեջ: Ա.Մ. Պեշկովսկին այդ մասին հատուկ աշխատություն գրեց և գլխավոր հարցադրումը զետեղեց հենց խորագրում՝ «Գոյություն ունի՞ արդյոք ռուսաց լեզվում նախադասությունների համադասություն և ստորադասություն»[68]:

Այս աշխատության մեջ նա համադասությունը և ստորադասությունը տարբերակեց ոչ միայն իբրև իմաստաբանական, այլև որպես զուտ քերականական կարգեր: Նա առանձնացրեց ձևակազմական այն օրինաչափությունները, որոնցով հստակորեն տարբերակվում են հիշյալ շարահյուսական երևույթները:

Գալով մեր իրականությանը՝ պետք է ասել, որ հայ քերականների ճնշող մեծամասնությունը ընդունում է համադասության և ստորադասության քերականական կարգերի գոյությունը բարդ նախադասություններում, թեև տարբեր հեղինակներ թե՛ անցյալում, թե՛ ներկայում տարբեր կերպ են մեկնաբանում առանձին կառույցների բաղադրիչների հարաբերությունները, կապակցության բնույթը: Այդ մասին կխոսվի համապատասխան բաժիններում:

ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

§ 182. Համադասական և ստորադասական հարաբերությունները բարդ նախադասության բաղադրիչների միջև դրսևորվում են երկու եղանակով՝ ա) *սպասարկու հատուկ բառերով* և բ) *առանց սպասարկու հատուկ բառերի*: Սպասարկու բառերով արտահայտված կապակցությունը ընդունված է կոչել *զողմածական* կամ *ճշույթավոր*, առանց սպասարկու բառերի

---

[67] ***М.Н. Петерсон,*** Очерк синтаксиса русского языка. М., 1923. էջ 32:

[68] ***А.М. Пешковский,*** Существует ли в русском языке сочинение и подчинение предложений? В сб. Родной язык в школе. Научнопедагогический сборник, кн. 11-12, М., 1923.

կապակցությունը՝ *շարահարական* կամ *աննշույթ*:

Իբրև սպասարկու բառեր կիրառվում են համադասական և ստորադասական շաղկապները: Սրանք կապակցում են համադաս, գերադաս և ստորադաս բաղադրիչներ: Հարաբերական դերանունները կապակցում են գերադաս և ստորադաս բաղադրիչներ: Օրինակ՝

Ա. Սև են աչքերդ՝ իմ աչքերի պես, Եվ գիտեն նայել այնպես տրտմորեն (ՊՍ): Սեր ու բարիք եմ ցրել, մինչդեռ պետք էր սեր հայցել, իսկ բարիքը՝ վաճառել (Ն.տ.): Այս նախադասությունների բաղադրիչները կապակցված են *և, մինչդեռ, իսկ* շաղկապներով, որոնք համադասության արտահայտության նյութական-բառական ցուցիչներն են:

Համադասական շաղկապներն են *և, ու, և՛...և՛, էլ, թե՛...թե՛, թե չէ, կամ, կա՛մ...կա՛մ, իսկ, սակայն, բայց, մինչ, մինչդեռ, նաև, այլև, ո՛չ միայն... այլև՛, ո՛չ թե... այլ, ո՛չ...ո՛չ, է՛լ...է՛լ, քանև* այլն:

Բ. Ինձ հետաքրքրում էր ավազակապետի այն խոսքը, *թե* մուրացկանի դեմքը նրան ծանոթ էր: Ես համոզված էի, *որ* այդ ծանոթության հետ անպատճառ կապված կլիներ մի ամբողջ պատմություն, *որովհետև* քավոր Պետրոսը այն պտուղներից չէր, *որ* նրա ճաշակելը մնար առանց հետևանքի (Ր): Այս նախադասությունների բաղադրիչները կապակցված են *թե, որ* (երկու անգամ կիրառված), *որովհետև* շաղկապներով, որոնք ստորադասական հարաբերության արտահայտման նյութական-բառական միջոցներն են:

Գ. Մի անգամ, *երբ* հեռու հյուսիսում՝ ուսանողական մենակյաց սենյակումս, փակված՝ դիսերտացիայիս վերջին գլուխներն էի գրում, մի նամակ ստացա, *որի* մեջ ապշեցուցիչ անողոք անկեղծությամբ գրում էր նա... (ՆԴ): Այս բարդ նախադասության երեք բաղադրիչները հաջորդաբար կապակցված են *երբ* և *որ*(ի) հարաբերական դերանուններով, որոնք ևս ստորադասական կապակցության դրսևորման նյութական-բառական միջոցներն են:

Ստորադասական շաղկապներն են՝ *որ, թե, եթե, որովհետև, քանի որ, որպեսզի, թեև...բայց (սակայն), թեպետ(և)...բայց (սակայն), թեկուզև... բայց (սակայն), չնայած...բայց (սակայն), ինչ է թե, թե ինչ է, թե չէ* (վերջին երեքը հատուկ են ժողովրդախոսակցական ոճին), *զի, քանզի* (այս երկուսը կիրառվում են առավելապես հին հայերենի լեզվական երանգը պահելու համար) և այլն:

Հարաբերական դերանուններն են՝ *ով, ինչ, որ, ինչպիսի, ինչքան, որքան, որչափ, ինչպես, ինչչափ, երբ, ուր, որտեղ* և այլն:

Բոլոր հարաբերական բառերին վերջից կարող է միակցվել *որ* շաղկապը, որ կոչվում է *թարմատար* (թարմատար շաղկապ): Այն կապակցական դերից զուրկ է և ունի զուտ ոճական արժեք: Հմմտ.

Երբ որ բացվին դռներն հուսո (...), Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա (ՆՈ): *Ինչքան որ* հուր կա իմ սրտում, բոլորը՝ քեզ (ԵՉ):

Այս *որ* թարմատարը այնքան մեծ հակում ունի հարաբերականների հետ կիրառվելու, որ մինչև իսկ զուգորդվում է հենց *որ* հարաբերականի հետ. հմմտ. *Որը որ* պատահի, մորթի՛ր (ՀԹ):

§ 183. Ստորադասական կապակցությամբ բարդ նախադասությունների գերադաս բաղադրիչում կարող է կիրառվել նաև *հարաբերյալ*՝ արտահայտված անձնական երրորդ դեմքի և ցուցական երրորդ շարքի դերանուններով:

Զոդվածական կապակցության մեջ սպասարկու բառերը տեղաբաշխվում են հետևյալ կերպ:

Հարաբերականները ու մենադիր ստորադասական շաղկապները տեղադրվում են միայն *կախյալ* նախադասության սկզբում և հանդիսանում են նրա անկապտելի բաղադրատարրը, մի տեսակ՝ սեփականությունը, և գերադաս ու ստորադաս բաղադրիչների դիրքերի փոփոխության դեպքում *նրանք իրենց տեղում մնում են անփոփոխ*: Հմմտ.

Ի՞նչը կհաղթի կյանքում հերոսին, *թե* չլինին կինն ու գինին (ՀԹ): → *Թե* չլինին կինն ու գինին, ի՞նչը կհաղթի կյանքում հերոսին: *Ով* որ մեղավոր է, նա պատասխան կտա (ՔԹ): → Նա պատասխան կտա, *ով* որ մեղավոր է: Շաղկապի կամ հարաբերականի դիրքի փոփոխությունը կախյալ նախադասության մեջ շեղում է գրական նորմայից և կարող է արդարացվել միայն ոճական նկատառումներով: Հմմտ.

Իմ օրերի երգը *եթե* իմ տողերից հիմա լսես, ուրեմն ես մեծ եմ ու խոր, երգից էլ իմ՝ խոր ու վսեմ (ԵՉ):

Թե չէ շաղկապը կիրառվում է կախյալ նախադասության վերջում: Հմմտ.

Աղբյուրին հասավ *թե չէ*, բուռ-բուռ սկսեց խմել սառույցի պես սառը ջրից (ԳԹ):

Զուգադիր ստորադասական շաղկապների մի եզրը տեղադրվում է ստորադաս բաղադրիչի սկզբում, մյուսը՝ գերադաս, ըստ որում՝ ստորադաս եզրը սովորաբար լինում է նախադաս: Հմմտ.

Եթե այդպես է, *հապա* ինչպե՞ս դու եկար ներս (ՎԳ): *Թեև* ուժս է հատած, *բայց* մի օգուտ էլ ես կտամ (ՊՍ):

§ 184. Համադասական կապակցության մեջ մենադիր համադասական շաղկապը դրվում է *բաղադրիչների միջև*՝ առանց մտնելու որևէ մեկի կազմի մեջ, առանց դառնալու որևէ մեկի բաղադրատարրը կամ սեփականությունը: Հմմտ.

Երկնքում պլպլում էին անթիվ աստղեր, *իսկ* հեռու արևելքում արշալույսը նոր-նոր սկսել էր բացվել (ՆԳ): Արդեն մի կաքավ կանաչ սաղմոս է կարդում քարերի մեջ, *և* լուսաբացի հովը բերում է իրենց դեզի բույրը (ԱԲ): Բաղադրիչների դասավորության փոփոխության դեպքում շաղկապը մնում է իր կայուն տեղում՝ երկու համադաս նախադասությունների միջև: Հմմտ.

Հենց տան կողքից սկսվում էր կաղնի ու հաճարի ծառերի թավ ու պառավ անտառը, *իսկ* տան առաջին ընկած էր մի հին կոտրած ջաղացքար (ՀԹ): → Տան առաջին ընկած էր մի հին կոտրած ջաղացքար, *իսկ* հենց տան կողքից սկսվում էր կաղնի ու հաճարի ծառերի թավ ու պառավ անտառը:

Կրկնադիր շաղկապները դրվում են *յուրաքանչյուր բաղադրիչից առաջ*՝ հաճախ սկսած հենց առաջին բաղադրիչից: Հմմտ.

Եվ նստեցին ապա աղբյուրի մոտ, (...) *եվ* լարելով փանդիռն արծաթալար՝ Ալևորիկ գուսանը որոտաց *եվ* բամբ որոտալով՝ վիպեց, ասաց (..., ՎԴ): *Կա՛մ* սիրել եմ, *կա՛մ* ատել եմ, բայց չեմ խաբել(ՊԱ):

Համադասական շաղկապները, այսպիսով, զուգադրվող երկու բաղադրիչների համար ընդհանուր են՝ առանց հարելու կից բաղադրիչներից որևէ մեկին, մշտապես մնալով չեզոք դիրքում: Այդ իսկ պատճառով՝ մինչդեռ ստորադասական շաղկապներով կամ հարաբերական բառերով կապակցված բաղադրիչները մեծ մասամբ ազատորեն կարող են տեղաշարժվել, նույնիսկ փոխադարձաբար թափանցել մեկը մյուսի մեջ (առավելապես՝ կախյալը՝ գերադասի մեջ, հազվադեպ՝ նաև հակառակը), համադասական շաղկապներով կապակցված հատվածները հիմնականում զուրկ են նման հնարավորությունից, քանի որ այդ շաղկապները չեն պատկանում բաղադրիչներից որևէ մեկին և երկուսի համար էլ նույն դերն են կատարում:

Համադասական և ստորադասական կապակցությունների եղանակների ու միջոցների մասին ավելի մանրամասն տե՛ս համապատասխան կապակցություններին վերաբերող գլուխներում:

> *Ծանոթություն:* Համադաս բաղադրիչները քիչ դեպքերում միայն կարող են ազատորեն ետուառաջ տեղաշարժվել: Այդպիսի տեղաշարժ կարող է լինել միայն հավելական, միավորական, մասնական և նման հարաբերություններ դրսևորող կապակցություններում: Մակաբերական, մեկնական, ժխտական, սահմանափակման, պայմանահակադրական և նման կապակցություններում այդպիսի տեղաշարժը փոխում է բաղադրիչների իմաստային հարաբերությունները, խաթարում բովանդակությունը: Տե՛ս համապատասխան ենթագլուխները:

§ 185. Շարադասությունը ևս լեզվական կարևոր գործոն է, որ ձևավորում է բաղադրիչների շարահյուսական հարաբերությունը: Ինչպես որ պարզ նախադասության անդամները, այնպես էլ բարդ նախադասության բաղադրիչները, ի թիվս այլ իրակությունների, կապակցվում են՝ ոչ թե պատահական դիրքեր գրավելով միմյանց հանդեպ, այլ մեծ մասամբ դասավորվելով որոշակի հաջորդականությամբ:

Անշուշտ, կան կառույցներ, որոնցում բաղադրիչների դասավորությունը համեմատաբար ազատ է: Այդպիսի համեմատական ազատություն կա մասնավորապես ստորադասական նախադասությունների բաղադրիչների շարադասության մեջ: Այստեղ, սակայն, ևս կան կառույցներ, որոնք զուրկ են դասավորության բացարձակ ազատությունից: Այդպիսիք են հատկապես *թեև... բայց (սակայն), չնայած որ... բայց (սակայն), թեպետ(և)... բայց (սակայն), եթե... ապա (հապա)* զուգադիր շաղկապներով կապակցվող նախադասությունները:

Ինչպես նշվեց ծանոթության մեջ, նման ազատություն կա նաև հավելական, միավորական և նման բնույթի համադասական նախադասություններում: Հմմտ. Հնչում էր ուրախ երաժշտությունը, և կերուխում կար այն-

տեղ, ջահելները աշխույժ զրուցում էին: Այստեղ բաղադրիչների ազատ տեղաշարժը չի փոխում կամ խաթարում բարդ ամբողջի ընդհանուր իմաստը, ինչպես՝ Ջահելները աշխույժ զրուցում էին, կերուխում կար այնտեղ, և ուրախ հնչում էր երաժշտությունը կամ Կերուխում կար այնտեղ, ուրախ հնչում էր երաժշտությունը, և ջահելները աշխույժ զրուցում էին և այլն:

§ 186. Կան նաև կառույցներ, որոնց բաղադրիչների դիրքերի փոփոխությունը կա՛մ անհնար է, կա՛մ հանդես է բերում իմաստների փոփոխություն: Այդպիսի կառույցներ են մասնավորապես *այն համադասական* նախադասությունները, որոնց բաղադրիչներում արտահայտվում են ժամանակային հաջորդականությամբ կամ պատճառահետևանքային հարաբերությամբ միմյանց հետ կապված գործողություններ, եղելություններ: Հմմտ. 1. Մինասյանը հավաքեց իր ունեցած-չունեցածը, և կես ժամից հետո Մարությանը արդեն նրան իրենց տուն էր տանում կառքով (ՆԴ): Առկա է ժամանակային հաջորդականություն: 2. Ես գնացի անտառ՝ զբոսնելու, և գլխիս ցավն անցավ: Այստեղ առկա է պատճառահետևանքային հարաբերություն: Առաջին բաղադրիչում նշվում է պատճառը (քանի որ կամ երբ որ ես գնացի անտառ՝ զբոսնելու...), երկրորդում՝ հետևանքը (գլխիս ցավն անցավ): Բաղադրիչների դիրքի *ետևառաջությունը* այստեղ հանգեցնում է իմաստի փոփոխության: Հմմտ. Գլխիս ցավն անցավ, և ես գնացի անտառ՝ զբոսնելու: Սրա իմաստն է՝ երբ որ (կամ քանի որ) գլխիս ցավն անցավ, ես գնացի անտառ՝ զբոսնելու: Այլ կերպ ասած՝ նախկին պատճառը վերածվում է հետևանքի, հետևանքը՝ պատճառի. միաժամանակ փոխվում է նաև գործողությունների հաջորդականությունը:

Կան նաև այլ կառույցներ, որոնց բաղադրիչների դասավորությունը կայուն է (տե՛ս § 203, 216, 218):


§ 187. Բարդ նախադասության բաղադրիչների հարաբերությունների ձևավորման ու դրսևորման գործում որոշակի դեր ունի նաև դրանց արտաբերման ձայնային ելևէջավորումը: Վերջինիս դերը զգալիորեն մեծանում, հաճախ վճռական է դառնում մասնավորապես շարահարական կապակցության մեջ: Եթե զոդվածական կապակցության մեջ հնչերանգն ազդարարում է՝ ա) նախադասության սկիզբը, բ) մասերի տրոհումը և գ) ավարտը, ապա զոդի բացակայության դեպքում այն ստանձնում է առնվազն ևս մեկ, երբեմն երկու գործառույթ: Դրանցից մեկը այն է, որ ձայնային որոշակի վերուվարումները պայմանավորում են նախադասության բաղադրիչների շարահյուսական հարաբերությունների *բնույթը*՝ *համարժեքությունը* (համադասությունը) և անհամարժեքությունը (ստորադասությունը): Հմմտ.


Աչքըդ թեքեցիր՝ բանիդ տերը չես (ՀԹ):

Այս նախադասության բաղադրիչները քվարկման-հավելական հնչերանգով, այսինքն՝ երկու հատվածների սահմանագծում ձայնի տոնի որոշակի *իջեցումով արտաբերելիս՝ ստանում ենք համադասական* կապակցություն: Ըստ որում՝ առաջին բաղադրիչի՝ սահմանական եղանակի անց-

յալ կատարյալ ժամանակածևով արտահայտված բայ-ստորոգյալը պահում է իր եղանակաժամանակային բուն նշանակությունը՝ նշելով միևչև խոսելու պահը ստուգապես կատարված-ավարտված գործողություն: Ասել է թե՝ Աչքդ արդեն *թեքեցիր (թեքել ես* և այլն) և (կամ ուստի) բանիդ տերը չես: Նույն նախադասությունը կարելի է արտաբերել նաև՝ երկու բաղադրիչների սահմանագծում ձայնատոնի որոշակի բարձրացումով, որ հատուկ է ստորադասական կապակցությանը: Այս պարագայում ստացվում է բարդ ստորադասական նախադասություն, որի առաջին բաղադրիչը պայմանի կամ ժամանակի պարագա է, երկրորդ բաղադրիչը՝ գերադաս նախադասություն: Հատկանշական է նաև, որ ստորադասական հարաբերության դեպքում նույն *թեքեցիր* բայ-ստորոգյալը այլևս զրկվում է իր եղանակաժամանակային բուն՝ առաջնային իմաստից և չի նշում կատարված-ավարտված գործողություն, ինչպես առաջին տարբերակում, այլ դրսևորում է հարաբերական իմաստ՝ ապառնի՝ կատարելի մի գործողություն, որը եթե կատարվի, նրան կհետևի մեկ այլ գործողություն, այսինքն՝ *թեքեցիր* =(եթե, հենց որ) *թեքես* (ըղձական եղանակի ապառնի): Նախադասության իմաստն էլ այս է. եթե (հենց որ) աչքդ թեքես, բանիդ տերը չես:

Հնչերանգը, այսպիսով, որոշում է բարդ նախադասության բաղադրիչների շարահյուսական հարաբերությունը: Ահա այդ երկու նախադասությունների հնչերանգների գծային մոտավոր արտահայտությունները.

1. Համադասական կապակցություն. 

2. Ստորադասական կապակցություն. 

Հնչերանգի հաջորդ գործառույթը այն է, որ նրանով կարող է որոշվել բուն իսկ կապակցության եղանակը՝ զոդվածական կամ շարահարական լինելը: Հմմտ. հետևյալ նախադասությունը.

Ասա՛ ինձ, *ի՞նչ կուզես.*

Այստեղ ունենք երկբաղադրիչ բարդ ստորադասական նախադասություն: Այն կարող է արտահայտել երկու տարբեր իմաստներ և ըստ այդմ ընկալվել երկու կերպ[69]:

1. Եթե ընդգծված կախյալ հատվածը արտահայտում է *Ի՞նչ կուզես* (*ի՞նչ ես ուզում*) անուղղակի հարցումը [Ասա՛ ինձ, *թե ի՞նչ կուզես* (*ի՞նչ ես ուզում*)], ապա կապակցությունը շարահարական է, և *թե* շաղկապի հավելումը՝ հնարավոր, ինչպես որ է՛ նշված օրինակում:

2. Եթե կախյալ բաղադրիչը ո՛չ թե հարցում է պարունակում, այլ՝ *ինչ*

[69] Շարահյուսական այս իրողությունը առաջինը նկատել է Մ. Աբեղյանը, որից և վերցրել ենք հիշյալ նախադասությունը՝ որպես առավել հաջողված նմուշ: Տե՛ս նրա Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 228:

որ կուզես (ինչ որ կցանկանաս) իմաստը (Ասա՛ ինձ, *ինչ որ կուզես*), ապա կապակցությունն իրացված է հարաբերական բառով, և շաղկապի հավելումը բացառվում է, չհաշված *որ* թարմատարը, որը չի փոխում կախյալ հատվածի իմաստն ու կառուցվածքը: Դա պարզորոշ երևում է երկրորդ տարբերակում:

Իրենց արտահայտած իմաստներին համապատասխան՝ միանգամայն տարբեր են այդ, առաջին նվագ միևնույնը թվացող նախադասության երկու տարբերակների կառուցվածքային հատկանիշները: Առաջին տարբերակում առկա է շարահարական կապակցություն, երկրորդում՝ զոդվածական՝ իր հարաբերական տարատեսակով: Իսկ այդ տարբերակները՝ կապակցության՝ զոդվածական թե շարահարական լինելը, բացահայտվում են միայն և միայն հնչերանգով: Ընդ որում՝ 1) եթե հիշյալ նախադասությունը արտաբերելիս ձայնային ելևէջների բարձրակետը ներկայացնում է *ինչ* դերանունը, որը դրա հետ միասին տրամաբանական շեշտի կրողն է, ապա կապակցությունը *շարահարական* է: 2) Եթե ձայնային ելևէջները, ծագող կորագծով հատելով երկու բաղադրիչների սահմանը, իրենց բարձրակետին են հասնում կախյալ հատվածի բայ-ստորոգյալի վրա, որը տվյալ դեպքում ընկնում է նաև տրամաբանական շեշտի տակ, ապա կախյալ նախադասությունը *զոդվածական* է՝ *հարաբերական* տարբերակով: Առաջին տարբերակի հնչերանգը համապատասխանում է շարահարական կապակցությամբ նախադասության հնչերանգին, և երկրորդ բաղադրիչի սկզբի *ինչ* բառը հարցական դերանուն է, որ արտահայտում է անուղղակի հարցում (*ի՞նչ կուզես =ի՞նչ ես ուզում*): Երկրորդ տարբերակի հնչերանգը համապատասխանում է զոդվածական կապակցությամբ նախադասության հնչերանգին, և նրա սկզբում գտնվող *ինչ* բառը հարաբերական դերանուն է [Ասա՛ ինձ, *ինչ (որ) կուզես=ինչ որ ուզում ես*]:

Այդ նախադասության արտաբերման ձայնային երկու տարբեր ելևէջումները կարելի է նկատել հետևալ մոտավոր կորագծերով[70]:

1. Շարահարական կապակցություն. Ասա ինձ՝ ի՛նչ կուզես:

2. Զոդվածական կապակցություն. Ասա ինձ, ինչ կուզե՛ս:

§ 188. Բարդ նախադասության բաղադրիչների կապակցությունը կարող է իրացվել առանց հատուկ սպասարկու բառերի՝ շարահարությամբ:

[70] Ասվում է *մոտավոր*, որովհետև ձայնային ելևէջավորումը ճշգրիտ կերպով կարող է վերարտադրել միայն ֆոնոգրամային հատուկ սարքավորումը: Դրանով զբաղվում են հնչյունաբանական հատուկ լաբորատորիաները:

Շարահարությունը աննշույթ կապակցություն է, որը առավելապես հատուկ է ժողովրդախոսակցական լեզվին: Այստեղից էլ այն անցել է գրական հայերենին: Մեծ հաճախականություն ունի մասնավորապես չափածոյում, ապա նաև արձակ խոսքում:

Բարդ համադասական նախադասություններում շարահարությամբ կապակցվում են մեծ մասամբ բաց շարքեր ունեցող միավորական, թվարկման կամ հավելական բնույթի բաղադրիչները: Շարքը սովորաբար փակվում և ամփոփվում է *և (ու)* շաղկապով: Հմմտ.

1. *Միավորական կապակցություն.* [Դավիթն էր,] ընկավ նրանց հետևից, Որին մի սարից, որին մի ձորից, Գել, ինձ, առյուծ, արջ, վագր բռնեց, Հավաքեց, բերավ, իր նախրին խառնեց *Ու* առաջն արավ դեպ Սասմա քաղաք (ՀԹ):

Վեց բաղադրիչից բաղկացած, բաց շարք ներկայացնող այս համադասական նախադասության առաջին հինգ բաղադրիչները կապակցված են շարահարությամբ, վերջինը՝ վեցերորդը՝ *ու* շաղկապով, որ փակել ու ամփոփել է շարքը:

2. *Հավելական կապակցություն.* Նրանց ձայնի վրա տներից իսկույն դուրս էին գալիս որդիները, կանայք, հարսները գլուխները հանում էին դռներից կամ լուսամուտներից, երեխաները վազում էին խաղի տեղից, և սկսվում էր լեզվակռիվ (ՍՋ):

Չորս բաղադրիչից բաղկացած հավելական բնույթի այս նախադասության առաջին երեք հատվածները կապակցված են շարահարությամբ, չորրորդը՝ *և* շաղկապով, որ նույնպես փակել ու ամփոփել է շարքը:

Շարահարությամբ կարող են կապակցվել նաև բարդ ստորադասական նախադասության բաղադրիչները: Հմմտ. Ես չգիտեմ՝ *ուր են տանում հեռավոր Ուղիների ժապավեններն անհամար* (ՎՏ):

Ընդգծված կախյալ բաղադրիչը կապակցված է շարահարությամբ:

§ 189. Շարահարական կապակցությունը իրացվում է մի շարք գործոններով, որոնցից կարելի է առանձնացնել մասնավորապես երեքը. 1) *կազմիչ տարրերի իմաստային ներքին կապը,* 2. *հնչերանգը,* 3. *բաղադրիչների բայ-ստորոգյալների եղանակաժամանակային կիրառությունները:*

Իմաստային գործոնի և հնչերանգի մասին արդեն խոսվեց (տե՛ս § 185-186):

Շարահարական կապակցության դեպքում կարևորվում են նաև *բայ-ստորոգյալների* եղանակաժամանակային որոշակի կիրառությունները: Բայ-ստորոգյալները, դրվելով այս կամ այն եղանակի այս կամ այն ժամանակածևով, զուգորդվելով որոշակի հնչերանգությամբ, հաճախ պայմանավորում են ո՛չ միայն ամբողջ նախադասության կառուցվածքը, այլև բաղադրիչների շարահյուսական հարաբերությունները՝ համադասությունը, ստորադասությունը, գերադաս և ստորադաս եզրերը: Ասվածը կարելի է դիտարկել հետևյալ երկու բայերը իրենց կազմում որպես ստորոգյալ ունեցող նախադասություններում՝ *նվագել* և *լսել:*

1. Նվագում ես, լսում եմ:
2. Նվագի՛ր՝ լսեմ:
3. Նվագես՝ կլսեմ:

Երեք նախադասություններում էլ պահպանված են բայերի դիմային և թվային կարգերը՝ առաջին և երկրորդ դեմքեր՝ միևնույն հաջորդականությամբ, և եզակի թիվ: Տարբեր են եղանակային և ժամանակային կարգերը:

Առաջին տարբերակը երկիմաստ է. կախված հնչերանգից՝ այն կարող է ներկայացնել և՛ համադասական կապակցություն, և՛ ստորադասական (տե՛ս § 187, *Աչքդ թեքեցիր*... նախադասության առաջին և երկրորդ տարբերակները): Երկրորդ նախադասությունը ներկայացնում է ստորադասական կապակցություն, որտեղ առաջին բաղադրիչը՝ *Նվագի՛ր*, գերադաս եզրն է, երկրորդը՝ *լսեմ*, ստորադաս եզրը՝ նպատակի պարագա: Երրորդ նախադասությունը նույնպես ստորադասական կառույց է, սակայն միանգամայն այլ կարգի: Այստեղ գլխավորը արդեն ո՛չ թե առաջին եզրն է (*Նվագես*), այլ երկրորդը (*կլսեմ*): Առաջին բաղադրիչը վերածվել է կախյալ նախադասության՝ պայմանի (կամ ժամանակի), և նշանակում է՝ *եթե* (կամ *երբ*) *նվագես*.

Կառուցվածքային այս բոլոր փոփոխությունները պայմանավորված են բաղադրիչների բայ-ստորոգյալների եղանակաժամանակային որոշակի, նպատակադրված կիրառություններով՝ հաճախ զուգորդված հնչերանգային այս կամ այն արտահայտությամբ:

Այսպիսով՝ բարդ նախադասության բաղադրիչները կապակցվում են՝ ա) *բառական միջոցներով*, որոնք են *շաղկապները* և *շաղկապական բառերը*՝ իրենց երկու տարատեսակներով՝ *համադասական* և *ստորադասական*, և *հարաբերականները*, և բ) *առանց բառական միջոցների՝ շարահարությամբ*: Կապակցության երկու եղանակների դեպքում էլ աշխատում են *հնչերանգը* և *շարադասությունը*:

Ծանոթություն: Ոմանք, հետևելով *ռուս* լեզվաբաններին, շարահարական կապակցությունը կոչում են *անշաղկապ* կապակցություն (бессоюзная связь): Տե՛ս *Ն. Պառնասյան*, Անշաղկապ բարդ նախադասությունները ժամանակակից հայերենում, Լեզվի և ոճի հարցեր, հ. 2, Եր., 1964, *Գ.Լ. Գարեգինյան*, Ժամանակակից հայոց լեզու. բարդ նախադասություն, Եր., 1984, էջ 301 և հջ.: Եթե *անշաղկապ* գիտաբառը կարող է քիչ թե շատ արդարացվել համադասական կապակցության եղանակը բնութագրելիս, ապա այն բնավ արդարացված չէ ստորադասական հարաբերության ճիշտ գնահատման տեսակետից: Խնդիրն այն է, որ ստորադասական հարաբերության դրսևորման բառական միջոցներ են ո՛չ միայն շաղկապները (հասկանալի է՝ ստորադասական), այլև հարաբերական դերանունները: Ստորադասական շաղկապների բացակայության դեպքում կապակցությունը թերևս նույնպես կարելի է կոչել *անշաղկապ*: Հետևողական լինելու պարագայում հարաբերականների բացակայությամբ նախադասությունն էլ պետք է կոչվեր *անհարաբերական*: Հմմտ. Ասում են՝ ուռին Աղջիկ էր ինձ պես, Սնում էր յարին, Ու չեկավ նա տես (ՀՁ): Առաջին և երկրորդ նախադասություն-բաղադրիչները կապակցված են իսկապես առանց շաղկապի. սպասելի է *թե* շաղկապը (Ասում են, *թե* ուռին աղջիկ էր ինձ պես...): Կապակցությունը կարելի է կոչել *անշաղկապ*: Երկրորդ և երրորդ բաղադրիչները նույնպես կապակցված են առանց սպասարկու բառի, բայց այստեղ արդեն սպասելի է *որ(ը)* հարաբերականը (Աղջիկ էր ինձ պես, *որ(ը)* սնում էր յարին...): Այս կապակցությունն էլ նույն տրամաբանությամբ պետք է կոչվեր *անհարաբերական*, որ չի կոչվել: Լեզվական իրողությունները դասակարգելիս պետք է առաջնորդվել մեկ միասնական սկզբունքով:

Լեզվական այս իրողությունը ճիշտ է արտացոլում *շարահարությունը* գիտաբառը: Շարահարական կապակցությունը ենթադրում է թե՛ առանց շաղկապի և թե՛ առանց հարաբերականի կապակցություն:

ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

§ 190. *Իր կազմում քերականորեն համարժեք երկու կամ ավելի բաղադրիչ-նախադասություններ ունեցող նախադասությունը կոչվում է բարդ համադասական:*

Բարդ համադասական նախադասության բաղադրիչները իրենց ներքին բովանդակությամբ փոխադարձաբար կապված են միմյանց հետ: Քերականորեն, սակայն, նրանք կախում չունեն միմյանցից և բարդ ամբողջի մեջ պահում են շարահյուսական միևնույն գործառույթը: Ինչպես պարզ նախադասության մեջ բազմակի անդամներն են համարժեք և շարահյուսորեն համահավասար, այդպես բարդ համադասական նախադասության բաղադրիչները յուրատեսակ բազմակի անդամներ են ամբողջ բարդ կառույցի համար:

Ունի կառուցվածքային հետևյալ հատկանիշները:

§ 191. Բարդության մեջ մտնող բաղադրիչներից մեկը ո՛չ քերականորեն, ո՛չ իմաստային առումով չի կապվում կից բաղադրիչի որևէ անդամի, անդամների կամ զուգորդությունների հետ, ինչը որ առկա է բարդ ստորադասական նախադասությունների ճնշող մասում, այլ կապվում է իրեն նախորդող կամ հաջորդող կամ թե՛ նախորդող և թե՛ հաջորդող բաղադրիչների հետ՝ ամբողջությամբ:

Համադասական կապակցության նվազագույն կառույցը երկբաղադրիչ բարդ նախադասությունն է: Վերն ասվածը կարելի է դիտարկել հետևյալ նախադասություններում.

1. Ուժեղ ցնցումներ էին պետք՝ ինձ այդ անտարբերությունից հանելու համար, և այդ ցնցումները ես գտա գիշերները լուսացնող ընկերներիս շրջանում (ՆԴ):

2. Հայոց լեռնաստանի կատարներով կապույտ Քայլում էին հայոց աստվածները բոլոր, Եվ այդ հուրհեր, խարտյաշ արեգակին ի տես Մի սիրատարփ եղնիկ ու եղջերու Վարգում էին դեպի հովիտները սիրո (ՎԴ):

Թե՛ առաջին և թե՛ երկրորդ օրինակում առկա բաղադրիչներից ոչ մեկը մյուսի և ո՛չ մի անդամի հետ, առանձին վերցրած, չի կապվում, չի առնչվում որևէ զուգորդության կամ բառակապակցության հետ, այլ կապակցվում է կից պարզ նախադասության հետ ամբողջությամբ: Այդ կապը երկուսի միջև էլ իրացվել է *և* շաղկապով, որ, ի դեպ, առաջին հերթին կապակցում է նախադասության հենց բազմակի անդամներ: Ուրեմն, կարելի է ասել, համադասական կապակցությամբ կապված նախադասությունները բարդ կառուցվածքի նույնասեռ բազմակի անդամներն են:

Առաջին հայացքից թվում է, որ համադաս բաղադրիչները ունեն անկախություն, և հեշտ ու հանգիստ կարելի է դրանք փակել վերջակետով (գրավոր խոսքում) և վերածել անկախ պարզ նախադասությունների: Նման

անկախությունը թվացյալ է: Մեկը մյուսի նկատմամբ շարահյուսորեն համադաս հարաբերության մեջ գտնվելը ամենևին չի նշանակում միմյանցից լիապես անկախ լինել: Բաղադրիչների իմաստների ներքին տրամաբանական կապը և մեկ միասնական-ավարտուն հնչերանգը, այլև կապակցության բառական միջոցները բարդության եզրերը կապում են միմյանց հետ նաև քերականորեն:

Կապակցության *բառական միջոցների բացակայության դեպքում* գործում են կապակցական մյուս միջոցները, որոնք նույնպես թույլ չեն տալիս տրոհել բարդությունը և վերածել անկախ նախադասությունների:

§ 192. Բարդ համադասական նախադասությունը կարող է բաղադրված լինել նաև երեք կամ ավելի բաղադրիչներից: Այսպիսի կառույցներում սովորաբար նշվում են կա՛մ տարաժամանակյա, այսինքն՝ հաջորդաբար կատարվող գործողություններ, կա՛մ համաժամանակյա, այսինքն՝ միաժամանակ կատարվող գործողություններ, եղելություններ: Հմմտ.

Ա) *Տարաժամանակյա գործողություններ.* Արեգակն իջնում, փարվում է սարին, Սարի ստվերը ժայռին է փարվում, Ժայռի ստվերը փարվում է ծառին, Ծառի ստվերը գետի հետ գնում, Գլուխը հովտի կրծքին է դնում (ՀՍ):

Բ) *Համաժամանակյա գործողություններ.* Կարոտում եմ քեզ և կարոտում եմ շատ, քո համբույրները դեռ թաց են շրթունքներիս վրա, մինչև հիմա աչքերիցս չի հեռանում պայծառ հայելու մեջ ցոլում քո գլուխը, ականջներիս մեջ դեռ հնչում է քո մանդոլինը (ԳՄ):

Ըստ բաղադրիչների՝ միմյանց նկատմամբ ունեցած իմաստային հարաբերության՝ բարդ համադասական նախադասությունները ներկայացնում են *բաց* և *փակ* շարքեր:

Ա. *Բաց շարք* սովորաբար ներկայացնում են այն բարդ համադասական նախադասությունները, որոնց կազմում եղած երկու կամ ավելի բաղադրիչները արտահայտում են համաժամանակյա կամ տարաժամանակյա *միմյանց չհակադրվող գործողություններ, եղելություններ:* Հմմտ.

1. *Երկբաղադրիչ բաց շարքի նախադասություն.* Հասունացած արտը մնացել էր կիսաքաղ, և անվաստակելի արորը անգործ ընկած էր դեռ չվերջացրած ակոսների մեջ (Ր):

2. *Բաց շարքի բազմաբաղադրիչ նախադասություն.* տե՛ս նախորդ կետի օրինակները, այլև՝ Գլխին գդակ չուներ, արևառ երեսը թավամազ էր, մորուքն ու բեղերը կարծես խառնվել էին իրար, կուրծքը բաց էր, կապույտ արխալուղ ուներ հագին և լայն շալվար (ՆԴ):

Բաց շարքի թե՛ երկբաղադրիչ, թե՛ բազմաբաղադրիչ նախադասությունների բաղադրիչները կարող են կապակցվել և՛ շարահարությամբ, և՛ շաղկապներով՝ առավելապես միավորիչ կամ տրոհական (*և, ու, էլ... էլ, թե՛... թե՛, կա՛մ... կա՛մ, ոչ... ոչ, և՛... և՛* և այլն): Ոճական նկատառումներով շաղկապները հարակրկնությամբ կարող են կրկնվել բաղադրիչների սկզբում՝ սկսած հենց առաջինից: Հմմտ.

Եվ պղնձե հազար շեփոր պարզվեց կրկին արեգակին, *եվ* պղնձե արեգակից փայլատակեց հազար ծնծղա, *եվ* շեփորները պղնձե ղողանջեցին միանգամից, միանգամից ծիծաղեցին ծնծղաները պղնձածայն (ՎԴ):

Բ. *Փակ շարք* ներկայացնում են այն բարդ նախադասությունները, որոնք բաղկացած են *հակադրության հիմքով միավորված երկու բևեռներից:* Յուրաքանչյուրում սովորաբար առկա է լինում մեկական բաղադրիչ: Հմմտ.

Թևերը ցանցառամիտ, թեթևամիտ մարդկանց համար են, իսկ կուշտ փորով, առողջ, այլև հաստատ գետնի վրա ման եկողների համար ավելորդ բաներ են դրանք (Վրթ. Փ.): Եվ նա մի օր ընկավ մահով հերոսական Թշնամու շարքերում՝ մեր դիրքերից հեռու, Սակայն մահից հետո նրա մայրը երկա՜ր, Դեռ շարունակ որդուց նամակ էր ստանում (ՊՍ):

Փակ շարքով կառույցի բևեռներից մեկը, առավելապես առաջինը իր հերթին կարող է կազմված լինել բաց շարքին բնորոշ երկու կամ ավելի բաղադրիչներից: Ըստ այդմ՝ երկրորդ բևեռը ներկայացնող բաղադրիչը ներհակական հարաբերությամբ կապակցվում է նախորդ բևեռում առկա բոլոր բաղադրիչներին՝ միաժամանակ: Հմմտ.

Միշտ բուռն կերպով հետաքրքրվում էր որևէ բանով, միշտ գործունյա էր, երբեք պարապ չէր նստում և Պարմի ամբողջ արքունիքից շատ ավելի խելացի էր, սակայն խարդավանքների մեջ հաջողություն ունենալու համար նրան պակասում էին համբերությունն ու պաղարյունությունը (Ս):

Փակ շարքի այս կառույցը բաղկացած է երկու բևեռներից, որոնցից առաջինում առկա են բաց շարքին հատուկ, միավորական հարաբերությամբ կապակցված չորս բաղադրիչներ, իսկ երկրորդ բևեռը՝ *սակայն* շաղկապով սկսվող, ներկայացնում է միայն մեկ պարզ նախադասություն, որը իր բովանդակությամբ հակադրված է բոլոր նախորդներին՝ միասին վերցրած:

Փակ շարքի բաղադրիչները կապակցվում են *բայց, իսկ, սակայն, մինչ, մինչդեռ* ներհակական շաղկապներով, *ոչ թե... այլ, ոչ միայն... այլև (այլ նաև), ...այլ ոչ թե, այսինքն, այն է* և նման՝ այլևայլ իմաստներ արտահայտող շաղկապներով:

Թե՛ բաց, թե՛ փակ շարքեր բովանդակող երկկազմ բաղադրիչ-նախադասությունների ստորոգյալները եղանակաժամանակային առումով ազատ չեն կառուցվում: Սովորաբար ազատ, այսինքն՝ ըստ խոսողի կամ հեղինակի հայեցողության է կառուցվում շարքերի առաջին բաղադրիչի ստորոգյալը: Այուսի կամ այուսների պարզ ստորոգյալի կամ բաղադրյալ ստորոգյալի հանգույցի եղանակաժամանակային ընտրությունը թելադրված է լինում առաջին ստորոգյալի եղանակաժամանակածևով (տե՛ս 3-րդ և 4-րդ կետերը): Հմմտ. նաև՝

1. *Նայեց* աղջիկը տղային, *Հիկնեց* թեթև, ամոթխած, Տղան կարծես գարնանային ծաղիկների բույրը *զգաց* (ԳՍ): 2. Ոգևորությունը *տիրում է* ամենքին. կարծես հարսին *են ուզում* պարեցնել, իսկ հարսը, ավա՜ղ, պարել *չգիտի*, բլիկ *շարժում է* թևն ու ոտքերը, մեկ՝ աջ, մեկ ձախ *է դառնում, քաշում է* պահել պարի կշռույթը (ՍԿ):

Առաջին օրինակի առաջին բաղադրիչի բայ-ստորոգյալը կիրառված է սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակածևով (*նայեց*), որի պարտադրանքով մյուս բաղադրիչների ստորոգյալները ևս դրվել են նույն եղանակով ու ժամանակածևով (*շիկնեց, զգաց*): Երկրորդ բնագրային վկայության առաջին պարզ նախադասության բայ-ստորոգյալը կիրառված է սահմանականի ներկա ժամանակածևով (*տիրում է*), և մյուսները հաջորդաբար կրկնում են նույն եղանակն ու ժամանակածևը (*ուզում են, չգիտի, շարժում է, քանում է*):

Կառուցվածքային այս հատկությունը, սակայն, բացարձակ չէ բոլոր տեսակների բարդ համադասական նախադասություններում: Բայ-ստորոգյալների եղանակաժամանակային ձևերի համաձայնությունը կարող է լինել նաև *մասնակի* կամ *հարաբերական*:

Հմմտ. 1. Քո երազները իմ երազներն *են*, Եվ երազները*դ ժողովել եմ* գերանդիով լուսապայծառ (ԿՋ): 2. Բայց այդ օրը գյուղը անտես թելով կապված *զգաց* իրեն, և մի բռունցք՝ գինված բռունցք, հարված *էր պատրաստում* գյուղի համար (ԱԲ):

Առաջին նախադասության առաջին բաղադրիչի բայը դրված է սահմանական եղանակի ներկա ժամանակով, երկրորդ բաղադրիչինը՝ վաղակատար ներկայով (*են → ժողովել եմ*): Երկրորդ նախադասության առաջին բաղադրիչի բայ-ստորոգյալը արտահայտված է անցյալ կատարյալ, երկրորդինը՝ անցյալ անկատար ժամանակածևով (*Զգաց → պատրաստում էր*): Երկու կառույցներում էլ դիմավոր բայերի եղանակաժամանակային համաձայնությունը մասնակի է կամ հարաբերական:

Բայ-ստորոգյալների եղանակաժամանակային համաձայնությունը խախտվում է մասնավորապես պայմանահակադրական հարաբերության հիմքի վրա կազմված համադասական կառույցներում:

Հմմտ. 1. Անսա՛ հորդ պաղատագին ծայնին, և չես զղջա: 2. Կա՛մ *հեռացի՛ր*, ընդմի՛շտ *գնա*, կա՛մ *արի*, Թե չէ այդպես դու նման *ես* չփլված, բայց ուր որ է գլխիս թափվող կամարի (ՊՍ): Այստեղ էլ առկա են՝ 1. հրամայական եղանակի ապառնի և պայմանական եղանակի ապառնի (*անսա՛ → չես զղջա*), 2. հրամայական եղանակի ապառնի և սահմանական եղանակի ներկա ժամանակածևերի [*հեռացի՛ր, գնա՛ → ես* (նման *ես*)] հարաբերակցություններ, որոնք բխում են շարահյուսական համապատասխան կառույցներից:

ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

§ 193. Համադասական կապակցությունը բարդ նախադասություններում իրացվում է երկու եղանակով՝ ա) սպասարկու բառերով և բ) առանց սպասարկու բառերի: Առաջինը կոչվում է *զողվածական* կամ *նշույթավոր* կապակցություն, երկրորդը՝ *շարահարական* կամ *անշույթ*:

§ 194. *Զոդվածական կապակցության մեջ որպես սպասարկու բառեր հանդես են գալիս համադասական շաղկապները,* որոնք իրենց կիրառական հատկությամբ ստորաբաժանվում են երեք տարատեսակների.

Ա. *Մենադիր շաղկապներ – և, ևս, ու, էլ, նաև, այլև, մինչ, մինչդեռ, այլապես, այսինքն (թե), բայց, սակայն, կամ, և կամ, կամ թե չէ* և այլն: Այս շաղկապները կոչվում են մենադիր՝ առանձին կամ միայնակ կերպով համադաս բաղադրիչներ կապակցելու հիմունքով:

Հմմտ. Ես մտրակի ծայրով զարկում էի ծառերի տերևներին, և գիշերվա ցողը անձրևի նման թափվում էր ձիու վրա, ինձ վրա (ԱԻ): Դու խոր կլռես, *ու* կխոսեմ ես նկարից, իրից, թղթերից դժգույն (ՍԿ): Նույնիսկ Սևանը համարում են վիթխարի քարի վրա երկնքից ընկած մի կաթիլ, *իսկ* այդ քարը Հայաստանն է (ՋԲ) և այլն:

Որոշ մենադիր շաղկապներ, ինչպես կարելի է նկատել թվարկվածների մեջ, ունեն վերլուծական կազմություն (*և կամ, կամ թե չէ* և այլն):

Բ. *Կրկնադիր շաղկապներ – և՛...և՛, ու՛...ու՛, թե՛...թե՛, կա՛մ...կա՛մ, ո՛չ...ո՛չ, է՛լ... է՛լ:*

Կրկնադիր շաղկապները բնորոշվում են նրանով, որ կրկնվում են բարդության բաղադրիչներից յուրաքանչյուրում:

Հմմտ. *Եվ* գալարվում բարձերի մեջ, *Եվ* գալարվում է թագուհին Բարձերի մեջ իր փետրալից *Եվ* գալարում բարձերի մեջ Իգությունն իր սքանչելի (ՎԴ): *Կա՛մ* նախագահ է, *կա՛մ* կալի հսկիչ (ՊՍ):

Գ. *Զուգադիր շաղկապներ – ոչ միայն... այլև, ոչ միայն... այլ նաև, ոչ թե... այլ, եթե ոչ... ապա, եթե... ապա:*

Հմմտ. *Ո՛չ թե* ներս է մտնում, *այլ* ավելի շուտ դռներին դիպչելով՝ իրեն գցում է դասարանը (ՍՋ): *Ո՛չ միայն* հմուտ պարուսույց էր, *այլև* հայտնի երգահան (Առավ.) և այլն:

Զուգադիր շաղկապների առաջին եզրը դրվում է սովորաբար առաջին բաղադրիչի սկզբում, երկրորդը՝ երկրորդ:

Շաղկապները ո՛չ միայն կապակցում են բարդ համադասական նախադասության մասերը, այլև հաճախ կանխորոշում վերջիններիս իմաստային հարաբերությունների բնույթը: Դրանք թեև սպասարկու բառեր են, բայց նախ և առաջ *բառ* են, ուրեմն ունեն բառիմաստներ ու իմաստային նրբերանգներ: Այս էլ հենց պայմանավորում է տարբեր շաղկապների միջոցով համադասական տարբեր հարաբերությունների դրսևորումը բարդ ամբողջի բաղադրիչների միջև: Սակայն, «խիստ ասած՝ յուրաքանչյուր շաղկապ, արտահայտելով միայն իրեն հատուկ մի որոշ կապակցական հարաբերություն, միևնույն ժամանակ իր արտահայտած այդ իմաստով միայնակ չի մնում՝ միավորվելով մոտիկ նշանակություն արտահայտող շաղկապների մի մեծ կամ փոքր խմբի հետ»[71]:

---

[71] *Մ.Ե. Աստրյան,* Ժամանակակից հայոց լեզու. Շնաբանություն, Եր., 1983, էջ 429:

§ 195. Համադասական շաղկապները, ըստ իմաստային ընդհանրության և կապակցական դերի, ստորաբաժանվում են չորս խմբերի.

Ա. *Միավորական (միավորիչ) շաղկապներ:* Սրանց գերակշռող (դոմինանտային) իմաստը շարահյուսական բաղադրիչների միավորումն է մեկ ընդհանուր ամբողջության մեջ: Այդ պատճառով էլ սրանք կոչվում են նաև *հավելական:* Դրանք են՝ *և, ու, ևս, էլ, նաև, այլև, թե՛...թե՛, և՛... և՛, ոչ - միայն... այլև, ոչ... ոչ* և այլն: Այս խմբի շաղկապներից *և*-ը, մասամբ նաև *ու*-ն կարող են կապակցել նաև այնպիսի բաղադրիչներ, որոնց հարաբերությունը բարդացված է ստորադասության տարրերով, մասնավորապես՝ պատճառահետևանքային և պայմանահետևանքային իմաստներով (տե՛ս - համապատասխան կապակցությունները):

Բ. *Տրոհական շաղկապներ:* Սրանց գերակշռող նշանակությունը կապակցվող եզրերի իմաստների փոխադարձ բացառումն է կամ երկընտրանքի արտահայտությունը: Դրանք են՝ *կամ, և կամ, կա՛մ...կա՛մ, կամ թե, կամ թե չէ, թե* և այլն:

Գ. *Ներհակական շաղկապներ:* Սրանք արտահայտում են կապակցվող բաղադրիչների միջև եղած իմաստային այլևայլ հակադրություններ: Դրանք են՝ *իսկ, սակայն, բայց, մինչ, մինչդեռ, այնինչ, ոչ թե, այլ ոչ թե, ոչ թե... այլ, և ոչ թե* և այլն:

Դ. *Մեկնական:* Սրանք թվով քիչ են՝ *այսինքն, այսինքն թե, այն է, ասել է թե, իմա՛:* Կապակցում են այնպիսի բաղադրիչներ, որոնք մի կողմից՝ բնորոշվում են իմաստային նույնականությամբ, մյուս կողմից՝ երկրորդ եզրով բնութագրում, որոշակիացնում են առաջին եզրի բովանդակությունը: Նույնպիսի հարաբերություններ են արտահայտում նաև որպես շաղկապական բառեր կիրառվող մի քանի կապակցություններ՝ *այլ խոսքով, ուրիշ խոսքով, մի խոսքով, այլ կերպ ասած* և այլն:

Այս չորս խմբերից առավելապես առաջին՝ *միավորական,* մասամբ երկրորդ՝ *տրոհական* շաղկապներն են, որ գոյացնում են *բաց շարքի* նախադասություններ: Երրորդ և չորրորդ խմբերի՝ *ներհակական* և *մեկնական* շաղկապները կապակցում են *փակ շարքեր* կազմող նախադասությունների բաղադրիչներ:

Ձոդվածական կապակցության մեջ թեև ո՛չ էական ու վճռական, բայց նույնպես դեր է խաղում նաև բաղադրիչների արտաբերության ձայնային ելևէջավորումը կամ հնչերանգը, որ ամփոփում է շարքերը և ավարտունություն տալիս ամբողջ բարդ նախադասությանը:

Այստեղ գործում է նաև շարադասությունը, որ որոշում է գործողությունների, եղելությունների, իրադրությունների հաջորդականությունը:

§ 195[ա]. *Շարահարական կապակցությունը* բնորոշվում է շաղկապների ու շաղկապական բառերի բացակայությամբ: Այսպիսի կապակցության մեջ չեն կարող ի հայտ գալ բաղադրիչների իմաստային այն բազմաճոխ հարաբերությունները, որոնք արտահայտվում են սպասարկու հատուկ բառերով: Շարահարությամբ կապակցվում են առավելապես բաց շարքի, սրա մեջ էլ՝

հիմնականում միավորական և հավելական հարաբերությամբ կապակցված բաղադրիչներ: Հմմտ.

Միավորական հարաբերություն. Թափառաշրջիկ շների մի ոհմակ խառնվել էր մուրացկաններին, մռմռալով կրծոտում էր գետնի վրա թափված ոսկորներ, լակում կերակրի կեղտոտ հեղուկը (ԱՇ): Աղջիկն ասես քաշում էին, տղեն ասես՝ տանում, շատ անգամ թուրքացնում, հավատից հանում, *շատ անգամ* էլ գլուխը կտրում, նահատակում (ԽԱ):

Հավելական հարաբերություն. Բնությունը փառավորվում էր յուր վաղորդյան հրճվանքով, թռչունները, ուրախածայն երգելով, ողջունում էին տվնջյան լուսատուի հանդիսավոր ելքը, ամենուրեք շնչում էր անսպառ հաճություն, ամենուրեք տիրում էր անթառամ զվարթություն(Ր): Գիշերն եկավ, զով հովն ընկավ, Աստղունք լուսնին ծայն տվին, (...) Մով-ծովն ընկավ, Հավքերն ինձի ծայն տվին (ԱԻ) և այլն:

Բազմաբաղադրիչ, մանավանդ միավորական ու հավելական հարաբերությամբ կապակցված նախադասություններում շարահարական կամ զոդվածական կապակցությունները անխառն հանդես չեն գալիս. բաղադրիչների մի մասը հաճախ կապակցվում է առանց սպասարկու բառերի, մի մասը՝ զոդով: Հմմտ.

Քուն թե արթուն՝ օրիս շատը երազ եղավ, անց կացավ, Երազն էլ՝ նուրբ ու խուսափուկ, վռազ եղավ, անց կացավ, Վռազ անցան երազ, մուրազ, ու չհասա ոչ մեկին, Կյանքս թեթև տանուլ տված գրազ եղավ, անց կացավ (ՀԹ):

Նախադասությունը բաղկացած է երեք զույգ բաղադրիչներից և մեկ առանձին բաղադրիչից: Զույգերը և նրանց եզրերը կապակցված են շարահարությամբ, միայն մեկ բաղադրիչ կապակցված է *ու* շաղկապով (... *ու* չհասա ոչ մեկին):

Շարահարական կապակցությամբ բաց շարքի նախադասության վերջին բաղադրիչը, ինչպես նշվեց, սովորաբար կապակցվում է զոդով, որը, այսպես ասած, փակում է շարքը (տե՛ս § 199): Հմմտ. նաև՝ Մարթան առավոտները վաղ վեր էր կենում, թախտն ու հատակը ավլում, փոքրիկ ինքնաեռը գցում *և* նստում հինած գործելու մինչև ինքնաեռի եռ գալը (ՆԴ): Վերջին՝ *և* շաղկապով սկսվող բաղադրիչին այլևս նոր մի բաղադրիչ հաջորդել չի կարող: Այն իրեն հաջորդող հատվածով ազդարարում է նախադասության և մտքի ավարտը:

Շարահարության մեջ կարևորվում են բաղադրիչների ներքին տրամաբանական կապը և ձայնային որոշակի ելևէջավորումը: Բաղադրիչներն արտասանվում են թվարկման բնույթի հնչերանգով՝ յուրաքանչյուր հաջորդ բաղադրիչից առաջ ունենալով շարահյուսական փոքրիկ դադար (պաուզա): Այսպիսով՝ շարահյուսական դադարը ևս ստանձնում է կապակցական դեր՝ դառնալով հնչերանգի տարր:

§ 195[բ]. Թե՛ զոդվածական, թե՛ շարահարական կառույցների բարդ համադասական նախադասություններում կապակցությանը նպաստում և այն ավելի սերտ են դարձնում երկու կամ ավելի կից բաղադրիչներում՝ ա)

կրկնվող, բ) *բառաքերականական այլևայլ արտահայտություններով միմյանց փոխարինող* և գ) *մասնակի* կամ *լրիվ զեղչմամբ ընկալվող* անդամները: Հմմտ.

Ա. *Կրկնվող կամ ընդհանուր անդամներ*. 1. *Ախր* ես ինչպե՞ս վեր կենամ գնամ, *Ախր* ես *ինչպե՞ս ուրիշ տեղ* մնամ, *Ախր ուրիշ տեղ* հայրեններ *չկան*. *Ախր ուրիշ տեղ* հորովել *չկա*, *Ախր ուրիշ տեղ* սեփական մոխրում սեփական հոգին խորովել *չկա*, *Ախր ուրիշ տեղ* սեփական բախտից խռովել *չկա* (ՀՍ): Վեց անգամ կրկնված է *ախր* եղանակավորող բառը, երկու անգամ՝ *ինչպե՞ս* դերանունը, չորս անգամ՝ *ուրիշ տեղ* կապակցությունը, նույնքան անգամ՝ *չկա (չկան)* բայ-ստորոգյալը: Կրկնվող այս միավորները ավելի սերտ են դարձնում բաղադրիչների կապն ու տրամաբանական առնչակցությունը: 2. *Նրանք* խնամք էին տանում այգիներին, հավաքում էին պտուղները և միևնույն ժամանակ վայելում էին զվարճալի ծառաստանի մաքուր և հովասուն օդը (Ր): *Նրանք* ենթական, որ առկա է առաջին բաղադրիչում, ընկալվում է նաև երկրորդ ու երրորդ բաղադրիչներում՝ դառնալով նրանց համար ընդհանուր անդամ:

Բ. *Միմյանց փոխարինող անդամներ*. 1. Լինում է իբրև գյուղացի մի *մարդ*, Աղքատ, օրական ապրուստի կարոտ, Ունենում է *սա* մի խելոք տղա, Տանում է, ծառա տալիս մեկի մոտ (ՀԹ): 2. *Թևոսը* հեգնում էր *Միհասի* բարձր հասակը և «սարսաղ» մտքերը, *Միհասը* զարմանում էր *նրա* կարճ բոյի ու մեծամեծ խոսքերի վրա, և *նրանք* հաճախ դիմում էին հայհոյանքի կամ շոշափում ոսկորները վաղուց մեռած ծնողների (ՍՋ):

Առաջին նախադասության առաջին բաղադրիչի *մարդ* ենթական երկրորդ բաղադրիչում փոխարինվել ու արտահայտվել է *սա* դերանվամբ: Երկրորդ նախադասության առաջին և երկրորդ բաղադրիչների *Թևոսը* և *Միհասը* ենթակաները երրորդ բաղադրիչում արտահայտվել են *նրանք* դերանվամբ և այլն:

Գ. *Մասնակիորեն կամ լրիվ զեղչված անդամներ:* Մասնակիորեն կարող է զեղչվել բաղադրյալ ժամանակաձևերի օժանդակ բայը: Սովորաբար զեղչվում է *երկրորդ* և *հաջորդ* բաղադրիչներում: Հմմտ. Ավին վազում *էր*, թռչում գերանների վրայով, սայթաքում, նորից բարձրանում (ԱԲ):

Առանձին դեպքերում կարող են զեղչվել և *նախորդ* բաղադրիչների օժանդակ բայերը՝ պահպանվելով վերջին բաղադրիչում: Հմմտ. Նրա սիրուն դեմքը կապտել, գեղանի աչքերը հանգել, շրթունքները փակվել, և սիրտը դադարել *էր* տրոփելուց (ՍԳ):

Երկրորդ և հաջորդ բաղադրիչներում կարող է զեղչվել բաղադրյալ ստորոգյալի *հանգույցը*: Հմմտ. Կյանքը երազ *է*, աշխարհը՝ հեքիաթ, ազգեր, սերունդներ՝ անցնող քարավան (ԱԻ):

Երբեմն ոճական նկատառումներով զեղչվում են *նախորդ* բաղադրիչների հանգույցները, պահպանվում է *վերջինը*: Հմմտ. Չարենցը ցնդած, գինեմոլ, հարբեցող, հիմար *է* [ասիկ] (ԵՉ):

Երկրորդ և *հաջորդ* բաղադրիչներում ամբողջովին կարող է զեղչվել նախորդ բաղադրիչում առկա որևէ անդամ, ինչպես՝ Մեկ օր տավարն *էին*

ուղարկում, մյուս օրը՝ հորթեր, մեկէլ օրը՝ գութան (ՂԱ)։ Առավոտը ո՛չ Նադիր շահի մարմինը գլուխ *ուներ*, ո՛չ գլուխը՝ թագ (ԱԻ) և այլն։

Այս և նման կառույցների բարդ համադասական նախադասություններում բաղադրիչների կապը անհամեմատ ավելի սերտ է լինում, թեև, ինչպես երևում է նաև օրինակներից, դրանցից շատերը կապակցված են շարահարությամբ։ Սերտությունը պայմանավորված է նաև նրանով, որ զեղչված կամ կից բաղադրիչների հետ ընդհանուր անդամ ունեցող եզրերի կապակցության մեջ մեծանում է դրանց ներքին՝ իմաստային կախվածությունը միմյանցից։

ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

§ 196. Բարդ համադասական նախադասության բաղադրիչների շարահյուսական հարաբերությունները բնորոշվում են իմաստային և ձևակազմական ո՛չ միասեռ, այլ խիստ տարասեռ ու տարատեսակ իրակություններով։ Այս հանգամանքը զգալիորեն խոչընդոտում է առանձնացնելու նման հարաբերությունների դասակարգման ձևական, իմաստային կամ ձևաիմաստային ընդհանուր ու համապարփակ հատկանիշներ։

Որոշ քերականներ դասակարգման հիմքում դնում են որոշակի ընդգծված կառուցվածքային մի այնպիսի հատկություն, ինչպիսին է նախադասության բաղադրիչների շարքերի *բաց* կամ *փակ* լինելը (տես՝ § 192, Ա, Բ)[72]։ Ուրիշները դասակարգման համար առաջնային են համարում առավելապես ձևակազմական, ավելի ստույգ՝ բաղադրիչների կապակցության բառական միջոցները։ Համադասական կապակցությունները ըստ այդմ խմբավորվում են շաղկապների բովանդակած իմաստային կառուցվածքի հիմքի վրա[73]։

Մոտեցման թե՛ առաջին, թե՛ երկրորդ տեսանկյունը թերի է, քանի որ նախ՝ բաց և փակ շարքերը միաժամանակ հատուկ են բարդ համադասական նախադասությունների բաղադրիչների տարասեռ հարաբերություններով բնորոշվող կառույցներին, երկրորդ՝ շաղկապները իրենց հերթին բազմիմաստ են, և միևնույն շաղկապը հաճախ կարող է կապակցել միանգամայն հակադիր նշանակություններ ունեցող եզրեր։

Համադասական նախադասությունը էությամբ ճանաչելու համար հարկ է հաշվի առնել և՛ ձևակազմական գործոնը, և՛ իմաստային հարաբերությունների բնույթը։ Այս սկզբունքով առաջնորդվելով՝ առանձնացվում են ձևակազմական և իմաստաբանական *հիմնական* և *երկրորդային* հատկանիշներ։ Թե՛ հիմնական և թե՛ երկրորդային հատկանիշները ունենում են ընդհանրություններ և տարբերություններ։ Հիմնական և երկրորդային հատ-

---

[72] Современный русский литературный язык, М. 1981, էջ 527 և հջ.։

[73] Տե՛ս *Վ. Առաքելյան*, Հայերենի շարահյուսություն, հ. Բ, էջ 298, *Գ.Լ. Գարեգինյան*, Ժամանակակից հայոց լեզու, բարդ նախադասություն, էջ 38 և հջ.։

կանիշների ընդհանրությունների և տարբերությունների հիմքի վրա ստանում ենք երկաստիճան դասակարգում:

Առաջին աստիճանում ունենում ենք համադասական կապակցությունների երկու խմբեր, որոնք հակադրվում են միմյանց իմաստակառուցվածքային որոշակի հատկանիշներով: Մեկ խումբ են կազմում այն բարդ համադասական նախադասությունները, որոնց բաղադրիչները իրենց ներքին տրամաբանական հարաբերություններով և իմաստներով «իրարու *համեմատ, համաձայն են* կամ *միատեսակ, ոչ հակառակ* բովանդակություն ունեն»[74], մյուս խմբի համադաս եզրերը «բովանդակությամբ *իրար հակառակ* կամ *անհամեմատ* են»[75]:

Առաջին խումբը կազմում են *բաղհյուսական* կապակցությունները, երկրորդ խումբը՝ *ներհակական:* Կապակցություններից յուրաքանչյուրը ունի իր ենթատեսակները, որոնք բնութագրվում են տվյալ կառույցին հատուկ երկրորդային հատկանիշներով կամ ենթահատկանիշներով:

Ծանոթություն: Այս դասակարգումը, որ դիմացել է ժամանակի քննությանը, կատարել է հայ շարահյուսագիտության մեծագույն երախտավոր Մանուկ Աբեղյանը: Այն հիմնված է լեզվական իրողությունների, մասնավորապես նախադասության կառուցվածքային օրինաչափությունների գիտական խոր ու համակողմանի քննության վրա: Այդ իսկ պատճառով մենք առաջնորդվում ենք Մ. Աբեղյանի առաջադրած սկզբունքով՝ հընթացս կատարելով որոշ ճշգրտումներ ու հավելումներ:

Ավելորդ չենք համարում նաև նշել, որ բարդ համադասական նախադասության դասակարգումը գրեթե նույն սկզբունքներով են կատարում և ժամանակակից որոշ ռուս լեզվաբաններ:

Այսպես "Современный русский литературный язык" բուհական դասագրքի հեղինակները համադասական կապակցությունը ժամանակակից ռուսերենում ստորաբաժանել են նույնպես երկու խմբի՝ *շարակցվող* (*բաղհյուսվող* - соединительные) և *ոչ շարակցվող* (*ոչ բաղհյուսվող* - несоединительные), որոնք կապակցվում են համադասական համապատասխան շաղկապներով (տե՛ս Современный русский литературный язык, под редакцией П. Леканта, М., 1982, էջ 335 և հջ.):

Այսպիսով՝ բարդ ամբողջություն կազմող կառույցների բաղադրիչ-նախադասությունների իմաստային ու տրամաբանական առնչությունները, կապակցության բառաքերականական արտահայտությունները, շարադասությունը և հնչերանգը պայմանավորում են համադասական կապակցության երկու կարգի հարաբերություններ՝ *բաղհյուսական* և *ներհակական:*

Ա. ԲԱՂՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 197. *Բաղհյուսական կոչվում է այն կապակցությունը, որի բաղադրիչները իրենց ներքին տրամաբանությամբ ու իմաստներով միավորվում, շարակցվում են իրար՝ առանց հակադրության, փոխադարձ ժխտման:*

---

[74] *Մ. Աբեղյան,* Հայոց լեզվի տեսություն, էջ 654. ընդգծումը մերն է - Ա.Պ.:

[75] Նույն տեղը. ընդգծումը մերն է - Ա.Պ.:

Բաղկյուսական բարդ համադասական նախադասությունների բաղադրիչների կապակցությունը լինում է՝ 1. *միավորական*, 2. *հավելական*, 3. *մեկնական*, 4. *մակաբերական*, 5. *մասնական*, 6. *բաղդատական*:

1. ՄԻԱՎՈՐԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 198. *Միավորական է կոչվում այն կապակցությունը, որի բաղադրիչները միավորվում են մեկ ընդհանուր ամբողջի մեջ՝ արտահայտելով այնպիսի գործողություններ, եղելություններ, որոնք ունենում են մեկ և նույն ենթական:*

Կառուցվածքային տեսակետից այս նախադասությունները բնութագրվում են նրանով, որ բաղադրիչներից մեկում առկա մեկ և նույն ենթակային վերագրվում են երկու կամ ավելի հատկանիշներ: Ըստ այդ հատկանիշների քանակի՝ բարդությունը կազմված է լինում համապատասխան թվով բաղադրիչներից:

Ունի ձևակազմական հետևյալ հատկանիշները:

Կապակցությունն իրացվում է *և, ու, այլև, նաև, ևս, և՛...և՛, թե՛...թե՛, է՛լ, է՛լ ...է՛լ, ո՛չ ...ո՛չ, ո՛չ միայն ... այլև՛, ինչպես և, ինչպես նաև* և նման միավորիչ շաղկապներով:

Այս խմբից ամենամեծ հաճախականությունն ունեն *և* և *ու* շաղկապները, որոնց իմաստը խիստ վերացարկված է: Դրանք կարող են դրսևորել ամենատարբեր հարաբերություններ:

Կապակցությունը կարող է իրացվել նաև *շարահարությամբ:* Այս դեպքում իբրև կապակցական օժանդակ միջոց է ծառայում ձայներանգը, որ միավորում է բարդության բաղադրիչները և ավարտունություն տալիս ամբողջ նախադասությանը:

Թե՛ նշույթավոր և թե՛ աննշույթ կապակցությունները ներկայացնում են առավելապես բաց շարքեր: Սովորաբար փակ շարք են կազմում *ևս, ինչպես և, ինչպես նաև, նույնպես և, ո՛չ միայն ... այլև՛ (այլ նաև)* շաղկապներով կապակցված կառույցները:

Երկբաղադրիչ նախադասությունների եզրերը սովորաբար կապակցվում են շաղկապով: Հմմտ.

Գնում էին կալանավոր նախարարների կողքով դեպի քաղաք և չէին կարողանում զսպել իրենց վիշտն ու ցասումը (ԴԴ):

Երեք և ավելի բաղադրիչներ ունեցող նախադասությունների երկրորդ և հաջորդ եզրերը նախորդների հետ կապակցվում են շարահարությամբ, իսկ վերջինը՝ շաղկապով: Վերջին բաղադրիչի՝ նման կապակցությունը ազդարարում է շարքի և ամբողջ նախադասության ավարտը: Հմմտ.

Լինեի նորից այն խենթ պատանին՝ Երգը շրթունքիս, և սիրտս ուրախ, Սանձեի նորից հորս կապույտ ձին Եվ խուլ ծորերով, կատարներով վես Սուրող գետերի շառաչյունի հետ թռչեի չքնաղ իմ սիրածին տես, Որպես մի վառցած, անվեհեր ապետ (ԱԻ):

Ոճական նկատառումներով, մանավանդ բանաստեղծական խոսքում կապակցության այս ձևը երբեմն կարող է խախտվել. վերջին բաղադրիչը կարող է կապակցվել շարահարությամբ, նախորդները՝ շաղկապով: Երբեմն բոլոր եզրերի կապը կարող է իրացվել առանց սպասարկու բառերի: Հմմտ.

Կխորտակեմ կամարները երկնային, Ես չեմ թողնի, ես չեմ թողնի [դու մեռնիս], *Եվ* կվանեմ, *և* կհաղթեմ չար մահին, Ես չեմ թողնի, ես չեմ թողնի [դու մեռնիս] (ԱԻ): Ծնվում ենք ակամա, ապրում ենք զարմացած, մեռնում ենք կարոտով (Ե.տ.):

§ 199. *Միավորական կառույցների բաղադրիչներում արտահայտված գործողությունները, եղելությունները կարող են կատարվել միաժամանակ կամ հաջորդաբար:* Առաջին դեպքում ունենում ենք *համաժամանակյա* կամ *միաժամանակյա* գործողություններ, եղելություններ, երկրորդ դեպքում՝ *տարաժամանակյա:* Երկու պարագայում էլ կարևորվում է բաղադրիչների բայ-ստորոգյալների եղանակաժամանակային որոշակի կիրառությունը: Թե՛ համաժամանակյա և թե՛ տարաժամանակյա գործողությունները կից բաղադրիչներում արտահայտվում են բայի այսինչ եղանակի միևնույն ժամանակածով և միևնույն դեմքով: Հմմտ.

Ա. *Համաժամանակյա գործողություններ.* Ընկերս կամաց սուլում էր մի երգ և ծիու քայլերի համեմատ թամբի վրա օրորվում (ՎՍ): Նրանք զբոսնում են քևանցուկ և խոսում երեկվա ներկայացման մասին (ՆՋ):

Երկու նախադասությունների զույգ բաղադրիչներում գործողությունները կատարվում են միաժամանակ: Առաջին զույգ բաղադրիչների բայ-ստորոգյալները դրված են սահմանական եղանակի անցյալ անկատար, երկրորդ զույգ բաղադրիչների բայ-ստորոգյալները՝ նույն եղանակի անկատար ներկա ժամանակածով:

Բ. *Տարաժամանակյա գործողություններ.* Այս կառույցներում նշվում են մեկը մյուսի հետևից հաջորդաբար կատարվող գործողություններ, եղելություններ: Հմմտ. Քամին եկավ հանկարծ, քշեց երկինքները ծառերի անկյուններից (ՌԴ): Ապա գերանդիները, զնդանը, մուրճը, ջրի կուլան կպահեն խուրծերի տակ և կցրվեն տները (ԱԲ): [Չկնիկն առվին խուտուտ տվեց, Եվ առուն՝ պարզ ու անբիծ, քրքջալով ուշաթափվեց ու ծորն ընկավ քարափից:] Զարկվեց քարին, ուշքի եկավ, Շուրջը նայեց կասկածով Եվ մի կապույտ ժպիտ շուրթին՝ ճամփա ընկավ դեպի ծով (ՀՍ): [Սիրտս ալևոր կաղնու մեջ դրի,] Կռացած կաղնին նորից բողբոջեց, Բարձրացավ, կանգնեց ընդդեմ հողմերի Եվ ջահելացած նորից շառաչեց (ՀՇ):

Տարաժամանակյա գործողություններ արտահայտող երկրորդ կամ հաջորդ բաղադրիչը կարող է սկսվել նաև *ապա* շաղկապով, որ հայտնի չափով պահում է նաև մակբայական իմաստը: Հմմտ.

Ձիերը կանգ առան, խոր շնչեցին, *ապա* շարունակեցին քայլել (ՎՍ): Տղաս մի վայրկյան կանգ առավ ափին, զննող հայացքով նայեց շուրջը, *ապա* վճռական շարժումով մեր ահագին նավակը հրեց ջրի մեջ (Ե.տ.):

Թե՛ համաժամանակյա, թե՛ տարաժամանակյա գործողություններն ու եղելությունները բարդության բաղադրիչներում գործնականում կարող են արտահայտվել բայի բոլոր եղանակների բոլոր ժամանակածևերով (տե՛ս վերի օրինակները):

Եվ և *ու* շաղկապները իրենց իմաստային հատկություններով գրեթե նույնական են, թեև երբեմն դրսևորում են կիրառական նուրբ տարբերություններ: «Դրանց գործածությունը կախված է գրողի ճաշակից, միայն պետք է դիտել, որ *ու* շաղկապով են կապակցվում սովորաբար խոսքի բազմակի մասերը, մանավանդ երբ ետևից գալիս է *և*-ով կապված մի համադաս խոսք, օրինակ՝ Ես *ու* դու գնացինք *և* տեսանք նրան»[76]:

Թեև պակաս հաճախականությամբ, բայց և որոշակիորեն միավորական կապակցություններ են գոյացնում և մյուս շաղկապները (տե՛ս § 198, 1, 2):

Այլև, նաև, այլ նաև, ևս, ինչպես և շաղկապները կապակցում են միավորական նախադասությունների այնպիսի բաղադրիչներ, որոնց երկրորդում կամ հաջորդում նշված գործողությունները, եղելությունները դիտվում են իբրև չսպասված կամ անսպասելի մի հավելում, հաճախ որպես իմաստի սաստկացում, զորեղացում: Հմմտ.

Ես կուզեմ լինել անսահման ազատ, *այլև* անաստված (ԱԻ): Հիշի՛ր, փա՛ռք տուր մեզ՝ ընկածներիս բոլոր, *նաև* փա՛ռք տուր ապրողներիդ (ՊՍ): Գիտեր նաև պարսից լեզվի շատ բարբառներ, փուշտուներեն ևս հասկանում էր:

Եվս շաղկապը սովորաբար գործածվում է ետադաս դիրքով:

Այլև, այլ նաև շաղկապները ըստ էության *ոչ միայն ... այլև, ոչ միայն ... այլ նաև* զուգադիր շաղկապների երկրորդ եզրերն են և հաճախ կիրառվում են նույն իմաստով, ինչ որ չտրոհվող զուգադիր շաղկապները: Հմմտ. Միայն վաղվա հանդիպումը չէր նրա մտորումների առարկան, *այլև* մի քանի ժամ առաջ տեսած պատկերը (ԱՇ): Չէ՞ որ նրանք միայն չեն կառուցել շենքեր Ու բարիքներ քամել հողից ու երկաթից, *Այլև* հողագնդի ապագան են փրկել Բարբարոսի դաժան ու արյունոտ թաթից (ՊՍ):

Ասել է թե՝ *ոչ միայն* կառուցել են շենքեր..., *այլև* հողագնդի ապագան են փրկել:

Այս մենադիր շաղկապները կապակցում են փակ շարքի բաղադրիչներ, ինչը որ հատուկ է հենց զուգադիր շաղկապներին, որոնց եզրերն են դրանք՝ տրոհված ու անկախացած կերպով:

Ե՛վ... և, թե՛... թե՛ կրկնադիր շաղկապները ևս կապակցում են միավորական նախադասություններ՝ ընդգծելով կամ շեշտելով բոլոր բաղադրիչների համապատասխան անդամները կամ բառակապակցությունները: Հմմտ. Կիրիլ Կարպիչը (...) *թե՛* ծխում էր, *թե՛* լսում հիշյալ վիճաբանությունը (Մ): [Դա նոր ցեղ է, ավելի շուտ՝ մի նոր տեսակ]. *և՛* դիմացկուն է, *և՛* կրկնակի մթերատու (ՊՍ): [Եվ ամենից գլխավորը՝ տալիս է բուրդ, որ] *և՛* առատ է քանակով, *և՛* կիսանուրբ (Ն.տ.):

---

[76] *Սամուկ Սբեոյան*, նշվ. աշխ., էջ 655:

Եվ... և, թե՛...թե՛ շաղկապների հականիշն է *ոչ...ոչ* կրկնադիր շաղկապը, որ կապակցում է միավորական բաղադրիչներ՝ հավասարապես ընդգծելով դրանք և հավասարապես ժխտելով բոլորը: Հմմտ. Եվ (թե՛) լավ պարում է, և՛ (թե՛) անուշ երգում // *Ոչ* լավ պարում է, *ոչ* անուշ երգում: Այլ մի օրինակ. *Ոչ* գյուտ է արել, *ոչ* հրաշք գործել այս գիտնականը իր փորձադաշտում (ՊՍ):

Այս կառույցների նախադասությունները ևս կազմում են բաց շարքեր: Բաղադրիչների քանակությունը ձևականորեն սահմանափակված չէ. այն որոշակի իրադրական բնավորություն ունի և կախված է նկարագրվող նյութի բովանդակությունից, տեղեկատվության ծավալման անհրաժեշտությունից:

Ծանոթություն: Ավանդական քերականագիտության մեջ միավորական կապակցության ըմբռնումը փոքր-ինչ այլ է եղել: Գուրգեն Սևակը այն կոչում էր *միավորյալ* և համարելով բարդ համադասական նախադասության մի տարատեսակ՝ սահմանում էր այսպես. «Ենթականերով և ստորոգյալներով միավորված նախադասությունը կոչվում է միավորյալ» (տե՛ս նրա «Հայոց լեզվի շարահյուսություն» դպրոցական դասագիրքը, Եր., 1958 և հջ. հրատարակություններ, համապատասխան խորագրի տակ):

Ըստ այս սահմանման՝ և՛ ենթականերով, և՛ ստորոգյալներով, կամ միա՛յն ենթականերով ու միա՛յն ստորոգյալներով միավորված նախադասությունը բարդ է: Օրինակ, ըստ նրա՝ հավասարապես բարդ են՝ 1. Ես ու դու գնացինք տուն, 2. Ես գնացի տուն ու վերադարձա, 3. Ես ու դու գնացինք տուն ու վերադարձանք:

Իրականում, ծնկայն, այս երեք կառույցներից բարդ են միայն երկրորդն ու *երրորդը, որոնցում առկա են երկուական ստորոգյալներ:* Առաջինում առկա է միայն մեկ ստորոգյալ, և նախադասությունը բարդ լինել չի կարող: Անշուշտ ենթակայի բազմակիությունը տեղեկատվական իմաստով ենթադրել է տալիս նաև բազմակի գործողություններ: *Ես ու դու գնացինք տուն* նշանակում է՝ *Ես գնացի տուն,* և *դու գնացիր տուն,* սակայն նշանակելին չփոխակերպված նախնական տարբերակում քերականորեն չի ձևավորվել որպես համադասական կապակցություն, քանի որ «բազմակի ստորոգյալների գծային հատույթավորումից ստացված միավորներն ունեն նախադասության հատկանիշ, ի տարբերություն բազմակի ենթակաների հատույթավորման, որի դեպքում չենք ստանում նախադասության հատկանիշ ունեցող միավոր»[77]:

2. ՀԱՎԵԼԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 200. *Հավելական է կոչվում այն կապակցությունը, որի բաղադրիչները, հաջորդելով մեկը մյուսին, ծավալում են հաղորդման սահմանները՝ բովանդակությամբ չհակասելով ու չհակադրվելով միմյանց:*

Այս նախադասությունները բնորոշվում են նրանով, որ բաղադրիչներում ունենում են երկու կամ ավելի ենթականեր, որոնց վերագրվում են երկու կամ ավելի հատկանիշներ: Իմաստային դաշտով հարելով միավորական նախադասություններին՝ հավելական կապակցությունը, սակայն, նրանից էապես տարբերվում է կառուցվածքով: Առաջին դեպքում՝ ենթական

---

[77] *Ս.Գ. Աբրահամյան, Վ.Դ. Առաքելյան, Վ.Ա. Քոսյան,* Հայոց լեզու, հ.. Բ., էջ 316:

կառույցում ունենում ենք մեկ ենթակա և երկու ստորոգյալ, երկրորդ դեպքում նվազագույն կառույցում առկա են երկու ենթականեր և երկու ստորոգյալներ, որոնց արտահայտած հատկանիշները վերագրվում են ոչ թե նույն, այլ տարբեր ենթականերին: Օրինակ՝

1. Սարեր ու ձորեր իրար երեսի նայում են, ժպտում ամպի մշուշով(ՎՄ):

Այս կառուցը միավորական է, քանի որ երկու հատկանիշները (*նայում են, ժպտում*) վերագրված են միևնույն երկու ենթականերին (*սարեր ու ձորեր*):

2. Դաշտից սուրում է զով մարմանդ քամին առավոտի, Ու վառվում է վերջին լույսով կրակը այն կարմիր կետի (ԵՉ):

Այս նախադասությունը հավելական կառույց է, քանի որ երկու հատկանիշները (*սուրում է, վառվում է*) վերագրված են երկու տարբեր ենթակաների (*քամին* և *կրակը*):

Կառուցվածքային հատկանիշներն են:

Կապակցությունն իրացվում է գրեթե նույն միավորիչ շաղկապներով, որոնք հատուկ են միավորական համադասական նախադասություններին (*և, ու, նաև, ևս, և... և՛, թե՛...թե՛, էլ, ոչ...ոչ, ոչ միայն...այլև՛* և այլն):

Այս խմբից, ինչպես և նախորդ տարատեսակում, մեծապես կիրառվում են *և* և *ու* շաղկապները: Մյուսների հաճախականությունը փոքր է:

Կապակցությունը շատ հաճախ իրացվում է շարահարությամբ, որի դեպքում առավել կարևորվում է ձայներանգի դերը՝ կենդանի խոսքում: Ձայներանգի տարատեսակները գրավոր խոսքում արտահայտվում են համապատասխան նշաններով՝ միջակետով և ստորակետով:

Ինչպես միավորական, այնպես և հավելական կապակցության մեջ շարքերը առավելապես բաց են: Բաց են մասնավորապես շարահարական կապակցությամբ իրացված շարքերը: Փակ են մասնավորապես *ոչ միայն... այլև՛ (այլ նաև)* շաղկապով կապակցված բաղադրիչների շարքերը:

Հավելական կապակցությամբ նախադասությունների բաղադրիչների միջև կարող են դրսևորվել իմաստային այլևայլ հարաբերություններ, որոնք այլազան գործողությունների, եղելությունների, իրադրությունների ու վիճակների արտահայտություններ են: Այդ գործողությունները, եղելությունները, ինչպես և միավորական կապակցության մեջ, կարող են կատարվել (կամ չկատարվել) *միաժամանակ* կամ *տարբեր ժամանակներում՝ հաջորդաբար:* Ուրեմն այս կապակցության մեջ ևս կարող են լինել *համաժամանակյա* կամ *տարաժամանակյա* եղելություններ ու գործողություններ:

Երկու դեպքում էլ առկա է բաղադրիչների բայ-ստորոգյալների եղանակաժամանակային որոշակի կիրառություն, ավելի ստույգ՝ որոշակի համաձայնություն:

§ 201. *Համաժամանակություն (միաժամանակություն)* արտահայտող կառույցները բնորոշվում են գործողությունների, եղելությունների քվարկումով, մեկը հաջորդաբար ավելանում է մյուսի վրա, ծավալում ամբողջ միտ-

քը: Այնպես որ երկրորդ և հաջորդ բաղադրիչները հանդես են գալիս որպես ընդհանուր մտքի ծավալիչներ:

Հմմտ. Իրենց աթոռակներին կոշկակարները ջանասիրաբար մուրճահարում էին, ատաղձագործները սղոցում էին արդեն չորացած անտառանյութը, բրուտները կճուճներ ու անոթներ էին սարքում, ամեն մեկը զբաղված էր իր գործով (ՎԼ):

Պարզ թվարկությամբ ներկայացված են միաժամանակ կատարվող գործողություններ: Բոլոր բայ-ստորոգյալները արտահայտված են սահմանական եղանակի անցյալ անկատար ժամանակածևով (չորրորդ բաղադրիչում *էր* օժանդակ բայն էլ դրված է անցյալ ժամանակածևով, որ նույնպես համաձայն է նախորդներին): Կապակցությունը շարահարական է, շարքը՝ բաց: Հարկ է, սակայն, նշել, որ բայ-ստորոգյալների եղանակաժամանակային համաձայնությունը կարող է նաև չլինել լիակատար, և չնայած դրան՝ գործողությունները, եղելությունները կարող են դրսևորել միաժամանակություն: Շարահարությամբ կապակցված բաց շարքի բաղադրիչներից վերջինը կարող է ունենալ *և (ու)* շաղկապ, որը ամփոփում ու փակում է շարքը: Հմմտ.

Ներքևում Վանա բարեբեր հովիտն էր՝ կանաչապատ ու ծաղկազարդ, բաց կապույտ ժապավենի պես օձագալար ձգվում էր Խոշաբա գետը՝ արևի շռայլ ճառագայթներով ողողված, աջ ու ձախ կողմերում քմահաճ կտրվածքներով փռվել էին ջրարբի, բարեբեր արտերը, և վերջապես արևելյան կողմում եռագագաթ Վարագա սարն էր երևում (ԳՍԹ):

Բայերը դրված են՝ *էր* էական բայը՝ անցյալ ժամանակով, *ձգվում էր* և *երևում էր* ստորոգյալները՝ անցյալ անկատարով, *փռվել էին* ստորոգյալը՝ անցյալ վաղակատարով, և, սակայն, նշում են գործողությունների, իրողությունների միաժամանակություն:

Ոճական նկատառումներով *և* շաղկապը հարակրկնությամբ կարող է կիրառվել բաղադրիչներից յուրաքանչյուրի կամ մի քանիսի սկզբում: Հմմտ.

Կլեոպատրան ելավ տեղից, *Եվ* աչքերում չկար ցասում, *Եվ* ճակատին չկար կնճիռ, *Եվ* շուրթերին վճիռ չկար, Առեղծված կար աչքերի մեջ, *Եվ* ճակատին՝ պայծառություն, *Եվ* շուրթերին գորով կար տաք (ՎԴ):

Գործողությունների, եղելությունների միաժամանակությունը կարող է լինել՝ ա) *լիակատար*, բ) *ոչ լիակատար* կամ *մասնակի*:

Ա. *Լիակատար համաժամանակությունը* ենթադրում է գործողությունների ու եղելությունների միաժամանակ կատարվելը կամ չկատարվելը միևնույն ժամանակահատվածի ամբողջ ընթացքում (տե՛ս ՎԼ-ից, ԳՍԹ-ից և ՎԴ-ից քաղված բնագրային օրինակները), այլև՝

Օրը թեքվում է դեպի մայրամուտ, Հովերն են խաղում ծորալանջն ի վեր, Երկարում են խիտ ստվերներն անփույթ (ՀՍ):

Բ) *Ոչ լիակատար համաժամանակությունը* հատկանշվում է նրանով, որ թվարկվող գործողություններից, եղելություններից մեկը (երկուսը, երեքը և այլն) կատարվում է կից բաղադրիչում կամ բաղադրիչներում արտահայտված գործողությունների, եղելությունների հետ մեկտեղ, բայց ոչ ժա-

մանակի ամբողջ տևողության ընթացքում, այլ, այսպես ասած, հընթացս, մի պահի: Հմմտ.

Ներքևում խոտը կանաչին է տալիս, և խոտի մեջ մի կակաչ թաքնված հանկարծ ժպտում է (ՀԹ):

Գործողության ժամանակի տևողության սահմանափակումը բաղադրիչներից մեկում հավելյալ կերպով կարող է արտահայտվել բառական հատուկ միջոցներով՝ լրացումներով, ինչպիսին է վերի օրինակի *հանկարծ* ձևի պարագան: Այլ օրինակ.

Նրա աշխույժի առջև սառցակույտ էր հալվում, և սոխակները, *հաճախ* նրան մի աննման վարդ կարծելով, պար էին բռնում նրա շուրջը, օդը լցնում իրենց բոցավառ սրտից բխած խանդոտ դայլայլներով (Վրթ. Փ):

Այստեղ երկրորդ և երրորդ բաղադրիչներում նշված գործողությունների տևողությունը նվազել է *հաճախ* մակբայով արտահայտված չափի պարագայի պատճառով: Եթե օտարվի այդ *հաճախ* մակբայը, միաժամանակությունը կլինի լիակատար: Նրա աշխույժի առջև սառցակույտ էր հալվում, և սոխակները, նրան մի աննման վարդ կարծելով, պար էին բռնում նրա շուրջը... և այլն:

Թե՛ լիակատար և թե՛ մասնակի միաժամանակությունը սովորաբար արտահայտվում է բաղադրիչների բայ-ստորոգյալների եղանակաժամանակային համաձայնությամբ:

§ 202. *Տարաժամանակյա հարաբերությունը*, ինչպես միավորական կապակցության մեջ, այնպես և այստեղ բնորոշվում է նրանով, որ բաղադրիչներում արտահայտված գործողությունները, եղելությունները կատարվում են հաջորդաբար, մեկը մյուսից հետո՝ տարբեր ժամանակահատվածներում:

Ժամանակային հաջորդականությունը չի ենթադրում բաղադրիչներից մեկում գործողությունը անցյալում, մյուսում՝ ներկայում, երրորդում՝ ապագայում կատարվելը: Գործողությունների՝ մեկը մյուսին հաջորդելը ունի տրամաբանական հիմք, որը թույլ է տալիս հաճախ միևնույն եղանակաժամանակային կիրառություն ունեցող բայ-ստորոգյալների արտահայտած իմաստային կառուցվածքում դիտարկել գործողությունների ու եղելությունների հաջորդական շղթա: Հմմտ.

Քայլերս իրենք իրենց շուռ եկան դեպի այն կողմը, և ես, գրեթե դողալով ցանկությունից, *արագ գնացի դեպի անտառի խորքը*: (Վրթ. Փ), Սի քանի անգամ մատներս դիպան նրա լարերին, և նրանց թույլ հնչյունները հիշեցրին ինձ այն նշանավոր առավոտը [, երբ Լևոնն առաջին անգամ նվագեց «Մադրիդի շրջմոլիկը»] (ԱՇ): Եվ առավոտ եղավ Նավասարդյան, Եվ վաղ առավոտն այդ Նավասարդյան Իբրև վարդամատն մի քրմուհի Ոտաբոբիկ կանգնեց լեռան վրա, Եվ մատներից նրա ու ոտքերից Վարդեր կաթկթեցին հող ու քարին (ՎԴ):

Բերված օրինակներում բոլոր բաղադրիչների բայ-ստորոգյալները դրված են անխտիր միևնույն անցյալ կատարյալ ժամանակածևով և, սակայն, արտահայտում են հաջորդաբար կատարվող գործողություններ:

Որոշ կառույցներում գործողությունների, եղելությունների միաժամանակությունը և տարաժամանակությունը հանդես են գալիս կողք կողքի և սերտորեն առնչվելով միմյանց հետ՝ կազմում մի կուռ ամբողջություն: Հմմտ.

Մարթայի ձեռքերն արձակեցին, նա իսկապես որ հանգստացավ, և շունչը տեղը եկավ (ՆԴ):

Նախադասությունը բաղկացած է երեք բաղադրիչներից, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել երկու հատվածի: Երկրորդ և երրորդ բաղադրիչները, կազմելով մեկ հատվածը, պահում են գործողությունների միաժամանակություն. *Նա հանգստացավ, և շունչը տեղը եկավ.* ասել է թե՝ հանգստանալու համեմատ՝ շունչը տեղը եկավ: Առաջին բաղադրիչը, որ ներկայացնում է առաջին հատվածը, նշում է երկրորդ հատվածում արտահայտված գործողություններին նախորդած գործողություն. (Նախ) Մարթայի ձեռքերն արձակեցին, (հետո) նա իսկապես որ հանգստացավ... և այլն:

Կապակցությունը կարող է իրացվել նաև *ոչ միայն...այլև, ոչ միայն...այլ նաև* զուգադիր շաղկապներով: Սրանք սովորաբար կազմում են փակ շարքեր: Այս կառույցները հատկանշվում են նրանով, որ երկրորդ բաղադրիչում նշված գործողությունը կամ եղելությունն է, որ մղվում է առաջին գծի վրա. հեղինակը կամ խոսողը ասես կարևորում է հատկապես երկրորդ բաղադրիչում նշվածը, որը դառնում է մտքի լարման գագաթնակետը: Հմմտ.

Ո՛չ միայն իշխանավորներն են դրանում մեղավոր, այլև՛ հայտնի չափով ձեր մեղքն ունեք հենց դուք՝ ընտրողներդ [, որ ընտրել եք նրանց] (ԳԹ):

3. ՄԵԿՆԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 203. *Մեկնական կոչվում է այն կապակցությունը, որի բաղադրիչներից մեկը կամ մի քանիսը բացատրում կամ ճշգրտում են նախորդի կամ նախորդների իմաստը:*

Ունի ձևակազմական հետևյալ հատկանիշները:

Կապակցությունը զոդվածական է: Որպես սպասարկու բառեր կիրառվում են մեկնական շաղկապները՝ *այսինքն (թե), իմա՛, ասել է (թե), այն է,* և շաղկապական որոշ բառակապակցություններ, որպիսիք են՝ *այլ խոսքով, մի խոսքով, ուրիշ խոսքով, այլ կերպ ասած, այսպես ասած* և այլն:

Մեկնական հարաբերություն արտահայտող կապակցությունները սովորաբար ներկայացնում են երկբևեռ կառույցներ, որտեղ երկրորդ բևեռը յուրովի մեկնում է առաջինի իմաստը, որոշակիություն, ստուգություն մուծում նրա մեջ: Բևեռներից յուրաքանչյուրը կարող է կազմված լինել մեկական կամ մեկից ավելի բաղադրիչներից: Հիմք ունենալով կառույցի երկբևեռ հատկությունը՝ կարելի է ասել, որ այս նախադասությունները ևս ներկայացնում են փակ շարքեր:

Շաղկապը կամ շաղկապական բառակապակցությունը դրվում է մեկնական հարաբերություն արտահայտող բաղադրիչի սկզբում, որին նախորդում է շարահյուսական որոշակի դաղար, իսկ երկրորդ հատվածը արտաբերվում է նախազգուշական հնչերանգով՝ ձայնի տոնի որոշ բարձրացումով:

§ 204. Մեկնական կապակցությունը բնորոշվում է իմաստային հետևյալ կառուցվածքով:

1. Երկրորդ բաղադրիչը կարող է կրկնել առաջին բաղադրիչի իմաստը, սակայն այլ արտահայտությամբ: Հմմտ.

Երկար տատանումներից հետո վերջապես, թեև չուզելով, ողջ ընտանիքով մեկնեց Մոսկվա, *այսինքն մեկնեց նախկին Խորհրդային Միության և այժմյան Ռուսաստանի Ֆեդերացիայի մայրաքաղաքը* (ԳԹ):

2. Երկրորդ կամ մեկնող բաղադրիչը կարող է ներկայացնել առաջին բաղադրիչում առկա որևէ բառի, բառակապակցության բացատրություն, ստուգաբանություն: Հմմտ.

Ապրանքը եթե տիրոջը չգցի, *այսինքն տիրոջ նման չլինի, գողանովի է* (ՀԹ): [Տիեզերանավի ազատ թռիչքի ժամանակ ինչպե՞ս համեմատել մարմինների զանգվածները, եթե] օգտվում ենք լծակավոր կշեռքից, *այսինքն չենք օգտագործում զսպանակավոր կշեռք* (ՖԽժ):

Մեկնող բաղադրիչով ավելի մատչելի ու հասկանալի կերպով բացատրված է, թե ինչպես պետք է ընկալել նախորդ բաղադրիչում ասվածը:

3. Երկրորդ բաղադրիչը նեղացնում և դրանով իսկ ավելի որոշակի է դարձնում մեկնվող հատվածի որևէ բառի, բառակապակցության իմաստը, այլ կերպ ասած՝ ընդհանուրը դրսևորում է մասնավորով: Հմմտ.

Որդիս դպրոցական տարիքից երազում էր ընդունվել գեղարվեստի ակադեմիա, *ասել է թե՝ ուզում էր դառնալ գեղանկարիչ*:

Գեղարվեստի ակադեմիան ընդգրկում է գեղեցիկ արվեստների մի ամբողջ շարք, որի իմաստը նեղացված է, ավելի ճիշտ՝ ընդհանուրը մասնավորված է գեղանկարչի արվեստի մեջ:

4. Երկրորդ բաղադրիչը լուսաբանում է, մեկնաբանում նախորդի բովանդակությունը, խոսողի կամ հեղինակի տեսանկյունով՝ ավելի հստակ ու ստույգ ձևակերպում ասելիքը: Հմմտ.

Իր ամբողջ կյանքում նա երբեք չի ճամփորդել ընտանիքով, *այսինքն՝ միշտ մտածել է* [, որ եթե պատահար է լինելու, թող միայն ինքը դառնա զոհը] (ՍՊ): [Պարտականության ու սիրո միջև Այդ ես եմ տնկված՝ Ուղեփակոցի գերանի նման...] Եվ որտեղ որ է, ես ինձ արմատից ինքս կպոկեմ, *այսինքն կելնեմ ու լուռ կգնամ հենց Օրենքի մոտ, կասեմ*... (ՊՍ): Նույնը անել հորդորեցի և հարուստ գյուղացիներին, *այն է՝ իրենց ավելորդից մի-մի բան հատկացնեն չունևոր գյուղացուն* (Մ):

Այսպիսով՝ երկրորդ բաղադրիչը ավելի ստույգ ու ճշգրիտ կերպով ներկայացնում է մեկնվող հատվածի իմաստը, որը կարող է լինել տարտամ, անհասկանալի, բացատրության կարոտ:

5. Երկրորդ բաղադրիչը կարող է ոչ միայն մեկնել ու ճշտել նախորդ հատվածում ասվածը, այլև կատարել իմաստային հավելում: Հմմտ.

Երևանում վաղը սպասվում է առանց տեղումների եղանակ՝ 3-5 աստիճան ջերմությամբ, ասել է թե՝ ջերմաստիճանը նախորդ օրվա համեմատ կբարձրանա 2-3 աստիճանով (Ռ):

6. Ինչպես նշվեց, բացի շաղկապներից, մեկնական կապակցությունը կարող է իրացվել նաև շաղկապական մի քանի բառակապակցություններով՝ *մի խոսքով, ուրիշ խոսքով* և այլն: Հմմտ. Սպարտակը զինված էր շարքային գլադիատորի պես, *այլ կերպ ասած՝ աջ ձեռքին եռաժանին էր, ձախով բռնել էր փոքրիկ վահանը* (ՎԼ):

§ 205. Կապակցական դեր է կատարում նաև *այսպես ասած* բառակապակցությունը, որ հաճախ հեղինակի հեգնական, քամահրական վերաբերմունքն է մուծում խոսքի մեջ: Հմմտ.

ՀՀ ԳԱԱ իսկական անդամ է, բայց ի՞նչ է ստանում. *այսպես ասած՝ երա «մաքուր» աշխատավարձը հազիվ սպառողական զամբյուղն է լցնում, այն էլ ոչ թե համ ու դամով, այլ չոր հացով ու չորքանով* [. չուզեցինք նման անկախությունը] (ԳԹ):

Ծանոթություն: Հայ քերականագիտության մեջ միասնական կարծիք չկա այս կառույցների վերաբերյալ: Որոշ լեզվաբաններ դրանք համարում են բարդ ստորադասական նախադասություններ: Տե՛ս *Ն. Պառնասյան,* Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում, Եր., 1961, էջ 58, *Ա. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Խ. Բադիկյան,* Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Եր., 1976, էջ 647 և հջ., *Բ. Վերդյան,* Բարդ ստորադասական նախադասության շարահյուսություն, Եր., 1970, էջ 157, և այլք: Խնդիրն այն է, որ նշյալ շաղկապներով ու շաղկապական բառերով կապակցված բաղադրիչների իմաստային կառուցվածքում որոշ չափով նկատելի է նաև ստորադասական հարաբերություն՝ բացահայտչային իմաստով: Սակայն դրանց իմաստային- տրամաբանական հարաբերության մեջ գերիշխողը համարժեքությունն է, որով էլ հենց դրանք ներկայացնում են ավելի համադասական, քան ստորադասական կապակցություններ: Չենք կարող չնշել նաև, որ վերջին շրջանի ռուս շարահյուսագիտության մեջ նույն մեկնական՝ ***то есть, а именно*** շաղկապներով կապակցված կառույցները անվերապահորեն դիտարկված են որպես համադասական նախադասություններ՝ մեկնական հարաբերությամբ՝ сложносочиненные предложения с пояснительными отношениями, տե՛ս ***Н.М. Шанский, А.Н. Тихонов, А.В. Филиппов, С.И. Небыкова, Д.И. Изаренков,*** Современный русский литературный язык, М., 1988, էջ 609 և հջ.:

4. ՄԱԿԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 206. *Սակաբերական կոչվում է այն կապակցությունը, որի բաղադրիչներից նախորդում նշվում է մի գործողություն, որից իբրև հետևանք կամ հետևություն բխում է հաջորդ բաղադրիչում արտահայտված գործողությունը:*

Ունի իմաստակառուցվածքային հետևյալ հատկանիշները:

1. Մակաբերական կապակցությունը ներկայացնում է *փակ* շարքի կառույցներ:

2. Կապակցությունն իրացվում է առավելապես *և* կամ *ու* շաղկապներով:

3. Կազմված է լինում երկու բաղադրիչներից, որոնց միջև առկա է պատճառահետևանքային հարաբերություն: Առաջին բաղադրիչում հայտնվում է մի գործողություն կամ եղելություն, որը պատճառ է դառնում երկրորդ բաղադրիչում արտահայտված գործողության կամ եղելության:

Պատճառահետևանքային հարաբերությունը երկբաղադրիչ նախադասություններում կարող է դրսևորվել թե՛ համադասությամբ, թե՛ ստորադասությամբ: Հմմտ.

ա. *Սենյակում շատ տոթ էր,* և մենք դուրս եկանք պատշգամբ՝ թարմ օդ շնչելու:

բ. *Քանի որ (որովհետև) սենյակում շատ տոթ էր,* մենք դուրս եկանք պատշգամբ՝ թարմ օդ շնչելու:

Պատճառահետևանքային հարաբերությունը առաջին նախադասության մեջ դրսևորվել է համադասական կապակցությամբ, երկրորդում՝ ստորադասական: Երկու կառույցներում էլ առաջին եզրերը նշում են մի իրողություն կամ հանգամանք, որը պատճառ է դառնում երկրորդ եզրում արտահայտված գործողության:

Սակայն հիմք չկա երկու նախադասություններն էլ համարելու ստորադասական: Կառույցի՝ *ա՛յս* կամ *ա՛յն* տիպին պատկանելը կանխորոշվում է ոչ միայն բաղադրիչների իմաստային հարաբերությամբ, այլև ամենից առաջ՝ կապակցության միջոցներով: Առաջին դեպքում բաղադրիչները կապակցված են *և* համադասական շաղկապով, և կառույցը համադասական է, երկրորդ դեպքում՝ *քանի որ (որովհետև)* շաղկապով, և կառույցը ստորադասական է:

Տարբեր է նաև երկու կառույցների արտաբերության ձայներանգը: Առաջին նախադասությունը արտաբերվում է համադասությանը հատուկ թվարկման բնույթի հնչերանգով, ուրեմն և համադասական է, երկրորդը՝ նախազգուշական հնչերանգով, ուրեմն և ստորադասական է:

4. *Եվ* շաղկապով կապակցված պատճառահետևանքային հարաբերություններ արտահայտող նախադասությունները հարում են, մի կողմից՝ ա. միավորական կապակցություններին, մյուս կողմից՝ բ. հավելական:

Ա. *Միավորական կառույցներին* հարում են այն նախադասությունները, որոնց թե՛ առաջին և թե՛ երկրորդ եզրերում գործում են միևնույն ենթակաները, այսինքն միևնույն ենթակայի շուրջը միավորված են երկու կամ ավելի ստորոգյալներ: Հմմտ.

Դու սովոր ես իմ մեջ տեսնելու մի փոքրիկ աղջնակ, և զարմանում ես [, երբ ես լրջորեն առարկում եմ] (ԱՉ):

Բ. *Հավելական կառույցներին* հարում են այն նախադասությունները, որոնց բաղադրիչների ենթակաները տարբեր են, և երկրորդ բաղադրիչի իմաստը յուրովի հավելում է առաջին բաղադրիչին: Հմմտ.

Հնարավոր չի եղել նրան չքմեղացնել, և պատիժը ես եմ կրել (ՎՓ):

Այս և նման կառույցները, սակայն, ո՛չ միավորական են, ո՛չ էլ հավելական, քանի որ նրանց բաղադրիչների միջև գերիշխում է պատճառահետևանքային հարաբերությունը: Սրանք մակաբերական կապակցություններ են:

5. Բաղադրիչների կապակցությունը կարող է իրացվել նաև *ուստի, ուստի և, ուրեմն, ուրեմն և, ապա ուրեմն* շաղկապներով, *այդ իսկ պատճառով, (և) դրա համար, դրա համար էլ* և նման շաղկապական բառերով: Հմմտ.

Նրան վաղուց էին ճանաչում, ուստի և ընդունեցին (ԴԴ): Դուք առայժմ դեռ լսում եք, Ուստի նաև ի՛նձ լսեցեք [Ու հանեցեք դիմակնե՛րըդ] (ՊՍ): Նա օգնում է իրավական մարմիններին՝ բացահայտելու այդ հանցավոր խմբի գործունեությունը, դրա համար էլ դատարանը նրա նկատմամբ կայացնում է չափազանց մեղմ վճիռ (Ավանգ.):

6. Կապակցությունը կարող է արտահայտել նաև հետևության հարաբերություն: Երկրորդ նախադասությունը «լինում է առաջինի հետևությունը, լինի մի եզրակացություն թե իրական հետևանք», իսկ առաջին նախադասությունը «պարունակում է երկրորդի հիմունքը, լինի տրամաբանական, իրական կամ բարոյական հիմունք»[78]: Հմմտ.

Նրա հանցանքը ինքս ստուգեցի անձամբ, դրա համար էլ կալանավորել հրամայեցի՝ չարին չարով կործանելու համար (Մ): Թագուհին գիտեր իր էրկան համառությունն ու անդրդվելի կամքը, ուստի չընդդիմախոսեց (ԵՕ): Մի ոտ չունեմ, ուստի և ձեր երկուսի փոխարեն երեքն ունեմ (ՊՍ):

7. Կապակցության երկու եզրերը սովորաբար ներկայացնում են երկկազմ պարզ նախադասություններ (տե՛ս վերի օրինակները): Սակայն բավականաչափ տարածում ունեն այն կառույցները, որոնց առաջին բաղադրիչը միակազմ նախադասություն է և ներկայացնում է մի իրողություն, իրադրություն, բնության երևույթ, որից որպես հետևություն բխում է երկրորդ եզրում նշված գործողությունը: Հմմտ.

Շարունակ անձրևում էր, այդ իսկ պատճառով փողոցները գրեթե դատարկվել էին: Արդեն լուսանում էր, և մեր առջև հետզհետե գծագրվում էր Մասիսի վեհաշուք պատկերը՝ գագաթին քնած գեղեցկուհիով: [Անգլխարկ լավ է,] Սակայն անգլուխ անկարելի է, ուստի մենք [, որ միշտ գլուխ ենք դատում], Այսօր կդատենք նաև մի գլխարկ (ՊՍ):

8. Մակաբերական հարաբերություն արտահայտող նախադասության առաջին եզրում կարող է լինել կամային-զգայական իմաստի բայ-ստորոգյալ, որ արտահայտում է ներգործություն, հրամանք, հորդոր, կոչ, աղերսանք, հոգեկան տվայտանք և այլն: Երկրորդ բաղադրիչում նշվում է այդ *հրամանի, հորդորի, հոգեկան ապրումի և այլնի հետևանքը*: Հմմտ.

Հրամանատարը, իր զորքերի առաջ ընկած, հորդորում էր մարտիկներին, և հոգնած ու ուժասպառ զորքը հլու-հնազանդ հետևում էր նրան (ՀՉ): Այդ լուրը պարզ երկնքում ճայթած ամպրոպի նման ցնցեց տանտիրուհուն,

[78] *Մանուկ Աբեղյան*, նշվ. աշխ., էջ 664:

և նա ուշաթափ ընկավ աղախնի թևերի մեջ (ՍՊ): Տվե՛ք ինձ հեռնման կետ, և ես շուռ կտամ երկիրը (Արքիմեդ) և այլն:

9. Կապակցությունը հազվադեպ կարող է իրացվել նաև *շարահարությամբ*. Հմմտ.

Աշխարհին ուղղված մի բացիկ եմ ես, Մի՛ ծրարեք ինձ և մի՛ սոսնձեք (ՊՍ): Բայց այստեղ արդեն դժվար է որոշել, թե կապակցությունը ինչպիսի՛ն է՝ համադասակա՞ն, թե՞ ստորադասական: Այն կարելի է տարբերակել միայն հնչերանգով:

§ 207. Ինչպես նշվեց վերը, մակաբերական հարաբերություն արտահայտող կառույցները ներկայացնում են փակ շարքեր՝ կազմված երկու բևեռներից, որոնցից առաջինում նշվում են որևէ գործողության, եղելության պատճառը, հիմունքը կամ տրամաբանական հիմքը, երկրորդում՝ հետևանքը, հետևությունը, եզրակացությունը և այլն: Սակայն քիչ չեն նաև այն բարդ համադասական նախադասությունները, որոնք կազմված են երեք և ավելի բաղադրիչներից: Այս պարագայում, միևնույնն է, առկա է տիպաբանական նույն կառույցը, միայն թե երկու հակադիր մասերից մեկը կամ մյուսը կամ երկուսն էլ ունենում են երկուական կամ ավելի եզրեր: Այսպիսով՝ պատճառը, հիմունքը՝ մի կողմից, հետևանքը կամ հետևությունը՝ մյուս կողմից, առանձին-առանձին կազմված են լինում մեկից ավելի բաղադրիչներից, թեև փակ շարքի հատկությունը պահպանվում է: Հմմտ.

Ա. *Առաջին բևեռը՝ երկբաղադրիչ*. Քաղաքից նամակներ եկան, օտար և անսովոր խոսքեր եկան հեռու քաղաքներից՝ զինվորների հետ, և գյուղը կերպարանքը փոխեց (ԱԲ): Շրջանը նեղ ընկերական չէր, լայն հասարակական էր, ուստի և այստեղ հնչած ամեն մի արտահայտություն շուտով մեծ արձագանք էր գտնում քաղաքում (ԱՇ):

Բ. *Երկրորդ բևեռը՝ երկբաղադրիչ*. Աշխարհը ցուրտ է, ուստի և պետք է փակել դռները աշխարհի դեմ, պետք է ամուր փակել բոլոր դարպասները (ՎԹ):

Գ. *Երկու բևեռներն էլ՝ երկբաղադրիչ*. Կանչում է կրկին, կանչում անդադար էն չքնաղ երկրի կարոտը անքուն, Ու թևերն ահա փռած տիրաբար՝ թռչում է հոգիս, թռչում դեպի տուն (ՀԹ): [Բայց հիշի՛ր, որ] սկսվել՝ բնավ չի նշանակում փոխել հավատ, Ինչպես նաև ուրացում չէ մոռացումը, Ուստի և մեր անջատումն էլ վերջնական չէ, այլ անցողիկ (ՊՍ) և այլն:

5. ՄԱՍՆԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 208. *Մասնական կոչվում է այն կապակցությունը, որտեղ առաջին, երկրորդ և հաջորդ բաղադրիչները արտահայտում են մեկ ընդհանուր մտքի առանձնացված մասերը, որոնք և ամբողջացնում են նախադասությունը:*

Ունի իմաստակառուցվածքային հետևյալ հատկանիշները:

Բարդ համադասական նախադասության մի տարատեսակն են կազմում սրանք և իրենց իմաստային հատկությամբ հարում են հավելական կապակցությանը: Այստեղ ևս երկրորդ և հաջորդ բաղադրիչները մտային հավելումներ են կատարում նախորդում կամ նախորդներում ասվածին: Ունեն, սակայն, թե՛ կառուցվածքային, թե՛ իմաստային էական տարբերություններ:

1. Բովանդակելով մեկ ընդհանուր միտք՝ առանձին-առանձին կամ մաս առ մաս ընդգծում են այդ միտքը կազմող բաղադրիչներից յուրաքանչյուրը:

2. Բաղադրիչներում ներկայացվում է երևույթների, իրողությունների հաջորդականություն, որ արտահայտվում է ենթակայի կամ նրան վերագրվող հատկանշի կամ թե՛ ենթակայի և թե՛ նրան վերագրվող հատկանշի հաջորդական փոփոխություններով, հերթագայություններով:

3. Ի տարբերություն համադասական այլ կապակցությունների, այստեղ բաղադրիչների բայ-ստորոգյալների նշած գործողությունները իրենց ժամանակային հատկությամբ գերազանցապես նույնական են: Գործողությունները, եղելությունները ճշդող մասով կատարվում են միաժամանակ՝ ստեղծելով համաժամանակյա հարաբերություն:

4. Կազմում են առավելապես բաց շարքեր:

5. Ունեն կապակցության խիստ յուրահատուկ եղանակ: Բաղադրիչները սովորաբար չեն կապակցվում շաղկապներով կամ շաղկապական բառերով: Նման դեր են կատարում հատկապես որոշ դերանուններ, որպիսիք են՝ *մեկը... մեկը, միսը...միսը, մեկը (միսը)...մյուսը, որը...որը, ոմանք...ոմանք, սա...նա,* թվականներ՝ *առաջինը...երկրորդը...երրորդը,* փոխանվանաբար կիրառված մակբայներ՝ *շատը...քիչը* և այլն: Հմմտ.

Մեկը ոսկի գրիչ առավ, մյուսը՝ քնար թանկագին, Որը հայտնի երգիչ դարձավ, Որը՝ ճարտար վիպասան (ՀԹ):

Նկատելի է, որ մասնական կապակցություն կազմող բոլոր բաղադրիչները սկսվում են *մեկը...մյուսը, որը...որը* և նման կապակցական կաղապարներով:

Նշված օրինակում *որը* դերանունը կրկնված է նաև երկրորդ բաղադրիչում՝ ստեղծելով յուրահատուկ կապակցություն՝ եզրերի կառուցվածքային համանմանն ու ներդաշնակ արտահայտությամբ: Որպես կրկնադիր կարող է կիրառվել նաև *մեկը (միսը)* դերանունը. Հմմտ.

Մեկն՝ ի պապանց պարոնորդի, Մեկն ի հարանց մուրող լինի, Մեկին՝ հազար ծի ու ջորի, Մեկին՝ ո՛չ ուլ մի, ո՛չ մի մաքի (Ֆրիկ):

Մասնական հարաբերություն արտահայտող բաղադրիչներից վերջինը կարող է ունենալ ընդհանրացնող, ամփոփող նշանակություն՝ կապակցվելով՝ *բոլորը), ամբողջը), ամենքը* որոշյալ դերանուններից մեկնումեկով: Հմմտ.

Մեկն ընծա է նրան բերում, մեկը երգ է ծոնում, *Ամբողջ* գյուղն է տոնում նրա ծնունդն ամեն տարի (ՀՍ):

§ 209. Մասնական կապակցությունը կարող է կազմել ավելի ծավալուն մի բարդ նախադասության մեկ եզրը: Հմմտ.

Ու դուրս քաշեցին գոռով երկուսին՝ Սինը՝ մեր Սարոն, իսկ մյուսն՝ Անուշի անդրանիկ եղբայր գառնարած Մոսին (ՀԹ):

Հատկանշական է, որ բաղադրյալ ստորոգյալների հանգույցը այս և նման կառույցներում ազատորեն կարող է զեղչվել (տե՛ս Ֆրիկի և Հ. Թումանյանի բնագրային օրինակները):

Որոշ դեպքերում բաղադրիչների կապակցությունը հավելյալ կերպով կարող է իրացվել *իսկ* հակադրական շաղկապով, որը, սակայն, կառույցին հաղորդում է ներհակական *բնույթ*: Տե՛ս վերի օրինակներից մեկը, այլև՝

Ի՞նչ փույթ՝ մեկը իր ծնունդը գետից առել, Իսկ մյուսը՝ մեր Սևանի պաղ կոհակն է կրակ դառել (ՊՍ):

Ինչպես դժվար չէ նկատել, *իսկ* շաղկապը մասնական հարաբերության մեջ մուծել է հակադրության երանգ:

Այլ օրինակներ.

Ոմանք կալանավորված էին, ոմանք փախչում էին (Ր): Շատը գնաց, քիչը մնաց (Ժող.): [Առանց ուսադիրներին նայելու էլ, միայն համազգեստներից կարելի էր որոշել, որ] առաջինը մի գեներալ էր, երկրորդը՝ գնդապետ, երրորդը՝ գեներալի թիկնապահը [, որ կանգնած էր մեկուսի] (ԲՀ) և այլն:

6. ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 210. *Բաղդատական կոչվում է այն կապակցությունը, որի բաղադրիչները հարաբերակցում են գործողության, եղելության ձևի, որակի, չափ ու քանակի կամ նման այլ մի հատկանշի համեմատության հիմքի վրա:*

Ունի իմաստակառուցվածքային հետևյալ հատկանիշները:

1. Ձևի, չափի ու քանակի հարաբերությունները բարդ նախադասություններում դրսևորվում են առավելապես ստորադասական կապակցությամբ՝ ձևի կամ չափի պարագա կախյալ նախադասությունների միջոցով: Հմմտ.

Ա. *Ձևի պարագա.* Իսկ խորքում՝ կապույտ մշուշի մեջ, երևում էր հազիվ նշմարելի զույգ Արարատը, ինչպես նոյեմբերյան պարզ գիշերներին երևում է գյուղի կտուրներից (ԱԲ):

Բ. *Չափի պարագա.* Եվ կլինի երգը այնքան բարձրահուն ու բարձրախոհ, Որքան լինի դաշինքն այդ խոր միածույլ ու միասիրտ (ԵՉ):

Սակայն կան նաև այնպիսի կառույցներ, որոնց բաղադրիչները իրենց այս կամ այն հատկությամբ, բայ-ստորոգյալի արտահայտած գործողությամբ, եղելությամբ, գործողության կամ եղելության որևէ հատկանշով հարաբերակցում են համեմատության հիմքով և ներկայացնում ո՛չ թե ստորադասական, այլ համադասական կապակցություն:

«Կապակցությունը լինում է մի որակ կամ չափ ու քանակ ցույց տվող ցուցականով, ինչպես *այսպես, նույնպես, նույնքան, նույնչափ* և այլն»[79]:

Սրանք այնքան էլ մեծ տարածում չունեն, առավելապես հանդիպում են գեղարվեստական խոսքում:

2. Այս կապակցությունը ներկայացնում է *փակ* շարք: Կազմված է լինում երկու բևեռներից, որոնցից առաջինում հայտնվում է որևէ գործողություն, եղելություն, իրողություն, որոնց հետ յուրովի զուգահեռ է անցկացվում երկրորդ բևեռում ասվածի միջոցով: Հմմտ.

Նա չափազանց շատ էր սիրում երեխաներին, այնչափ էլ երեխաներն էին սիրում նրան: Աննձրևին փոխանակում է փայլուն արևը, ցրտին՝ տաքությունը, այսպես մարդու կյանքի մեջ իրար հաջորդում են լացն ու ծիծաղը, երկյուղն ու հույսը (ՄԱ):

Բևեռներից մեկը կամ մյուսը, երբեմն երկուսը միաժամանակ կարող են կազմված լինել երկու կամ ավելի բաղադրիչներից՝ արտահայտված այլևայլ համադասական կապակցություններով: Հմմտ. վերի օրինակներից երկրորդը, որտեղ երկու եզրերն էլ բարդ նախադասություններ են: Այլ օրինակներ.

«Հարազատ» եմ ասում և այնուհետև լռում. Սիրող սիրտն է այդպես խոսքը շուտ սպառում (ՊՍ): Գանգուր բաղեղն է աճել վերստին, Փարվել չափարին ծաղկած ձեր այգու, Կարոտն է այդպես փարվել իմ սրտին (Ն.տ.):

Բերված երկու օրինակներում էլ համեմատվող եզրերի առաջին բևեռը երկբաղադրիչ է, երկրորդ բևեռը՝ միաբաղադրիչ:

3. Կապակցությունը, թեև հազվադեպ , բայց կարող է իրացվել նաև առանց հիշյալ կապակցական բառերի՝ շարահարությամբ: Հմմտ.

Ասեղներ են հոսում ամեն ջրհորդանից, Ասեղների հոսք է և իմ ներսում (ՊՍ): [Հո՜ արա, եզո՛ ջան, հորվե՜լ]. Ծարա՞վ ես, ես է՛լ եմ ծարավել, Դադրա՞ծ ես, ես՝ քեզնի՛ց առավել, Ինձ էլ է արևը խորովել. Հորովե՜լ (Ն.տ.):

Բաղադրիչների իմաստների հարակցումը համեմատության հիմունքով ակնհայտ է, թեև չկա կապակցող որևէ բառ:

4. Նախադասությունը արտաբերվում է հավելական կապակցությանը հատուկ հնչերանգով. ձայներանգը առաջին բաղադրիչի (կամ բևեռի) վերջում փոքր-ինչ իջնում է, գոյանում է շարահյուսական փոքրիկ դադար, երկրորդ բաղադրիչի (կամ բևեռի)՝ տրամաբանական շեշտի տակ գտնվող բառի վրա հասնում իր բարձրակետին և ապա հետզհետե իջնելով՝ ավարտուն տալիս ամբողջ կառույցին: Կրկին գոյանում է շարահյուսական դադար՝ նախորդից ավելի մեծ տևողությամբ: Սա էլ հենց ազդարարում է նախադասության ավարտը:

---

[79] *Սանուկ Սրեղյան*, նշվ. աշխ., էջ 662:

Բ. ՆԵՐՀԱԿԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 211. *Ներհակական կոչվում է այն կապակցությունը, որի բաղադրիչները իրենց ներքին տրամաբանությամբ ու իմաստներով հակադրվում են իրար կամ բացառում են միմյանց:*

Ներհակական բարդ համադասական նախադասությունները լինում են՝ *1. ժխտական, 2. տրոհական, 3. հակադրական, 4. սահմանափակման, 5. պայմանահակադրական:*

1. ԺԽՏԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 212. *Ժխտական կոչվում է այն կապակցությունը, որի բաղադրիչներից մեկում ժխտվում է այն, ինչ որ հաստատվում է մյուսում:*

Ունի իմաստակառուցվածքային հետևյալ հատկանիշները:

Այս բարդ նախադասությունները երկբևեռ են և կազմում են փակ շարք: Կապակցվում են *ոչ թե...այլ, այլ ոչ թե, և ոչ թե, այլ* (ընդհակառակն) շաղկապներով:

Ժխտական ներհակություն արտահայտող համադասական կապակցությունների բաղադրիչներից մեկում՝ առաջինում կամ երկրորդում, ժխտվում է կա՛մ ենթական, կա՛մ սրան վերագրվող հատկանիշը, կամ հատկանշի հատկանիշը, եթե կա, կա՛մ բոլորը միասին, մյուսում հաստատվում է այն ամենը, ինչ ժխտվել է կից բաղադրիչում:

Ժխտումը և նրան համապատասխանող հաստատումը կարող են լինել՝ ա. *լիակատար* և բ. *մասնակի:*

Ա. *Լիակատար ժխտում* արտահայտող կառույցները խիստ սակավ են: Այս կարգի նախադասության բաղադրիչներից մեկում ըստ էության ժխտվում են թե՛ ենթական, թե՛ ստորոգյալը (անշուշտ, եթե նախադասությունը երկկազմ է), թե՛ լրացումները, եթե կան, իսկ կից բաղադրիչում հաստատվում են ուրիշ ենթական, ուրիշ ստորոգյալ, ուրիշ լրացումներ, եթե կան: Հմմտ.

Ոչ թե *ես եմ անհույս հոռետես դարձել,* այլ աշխարհն է հիմնովին գլխիվայր շրջվել:

Առաջին բաղադրիչը՝ *ես եմ անհույս հոռետես դարձել,* ժխտվում է հիմնովին, այսինքն՝ թե՛ ենթական *(ես),* թե՛ նրան վերագրված հատկանիշը *(հոռետես եմ դարձել),* թե՛ հատկանշի հատկանիշը *(անհույս):* Երկրորդ բաղադրիչում աշխատում է նոր ենթական *(աշխարհը),* սրան վերագրված է նոր հատկանիշ *(շրջվել է),* որն էլ ունի իր հատկանիշները *(հիմնովին, գլխիվայր):*

Լիակատար ժխտման հարաբերությամբ բնութագրվող բաղադրիչները կապակցվում են *ոչ թե...այլ* զուգադիր և *այլ, այլ ոչ թե, և ոչ թե* մենադիր շաղկապներով: Ըստ որում՝ շաղկապները ունեն իրենց կայուն ու անփոփոխ տեղը: *Ոչ թե*-ն դրվում է լիակատար ժխտում արտահայտող բաղադրի-

չի հենց սկզբում, զուգադիր այդ շաղկապի երկրորդ եզրը՝ *այլ*-ը, ինչպես նաև մենադիր *այլ, այլ ոչ թե, և ոչ թե* շաղկապները՝ երկրորդ բաղադրիչի սկզբում: Մենադիր շաղկապով օրինակ.

Իրար գլխով տալով հին ու նոր բաներ, իրար հիշեցնելով հին ու նոր պարտքեր՝ ոչ մեկը մյուսին չէր լսում, այլ ամեն մեկը փորձում էր ավելի բարձր գոռալով՝ խեղդել հարևանի ձայնը (ՍՋ):

Այլ շաղկապով կապակցվելու դեպքում առաջին բաղադրիչի բայ-ստորոգյալը կամ հանգույցը արտահայտվում է ժխտական խոնարհմամբ, երկրորդինը՝ դրական: Տե՛ս վերի օրինակը, այլև՝

Եվ դու չես ասում, ո՛չ էլ դուք, այլ ե՞ս, ես՝ Սիս-Մասիսըս, Այդ ե՛ս եմ ասում Անդադար-անդուլ-անվե՛րջ զնգացող իմ անքուն զանգով (ՊՍ):

Ոչ թե...այլ զուգադիր շաղկապով կապակցվելիս առաջին բաղադրիչը իր լրիվ ծավալով ժխտվում է շաղկապի սկզբնամասով՝ *ոչ թե*-ով: Հմմտ.

Ոչ թե լեռնականների կորովի երգն էր նվագում, այլ այս անգամ հնչում էր հովվական պարզ մի երգ (ԱԲ):

Ոչ թե մենադիր շաղկապը կարող է դրվել նաև երկրորդ բաղադրիչի սկզբում: Այդ դեպքում «ժխտական կապակցությունը կարող է շուռ տված ձևով լինել»[80]: Նման կառույցում ժխտվում է երկրորդ բաղադրիչի բովանդակությունը: Հմմտ.

Անկախությունը սկուտեղի վրա մատուցեցին մեզ, *ոչ թե* մենք պայքարով, առավել ևս արյան գնով նվաճեցինք այն (ԳԹ):

Երկրորդ բաղադրիչի իմաստը կարող է ժխտվել նաև *այլ ոչ թե, և ոչ թե* շաղկապների միջոցով: Հմմտ.

Դու ես հոգուդ դռները իմ դեմ ամուր փակել, *և ոչ թե* ես եմ քեզնից հրաժարվել:

Բ. Ժխտական հակադրությամբ բնորոշվող բարդ նախադասություններում, սակայն, ավելի մեծ հաճախականություն ունի *մասնակի ժխտումը:*

Այս կարգի նախադասությունների հակադիր եզրերը ունենում են միևնույն ենթական և տարբեր ստորոգյալներ: Ժխտումը վերաբերում է ստորոգյալին: Ստորոգյալը կարող է ունենալ լրացումներ, կարող է նաև չունենալ: Ըստ այդմ՝

ա) Ժխտվում է միայն *ստորոգյալը,* բայց ոչ լրացումները: Հմմտ.

Եվ հիմա արդեն նա գանձ *չի հատում,* Այլ *գրավում է, Չի կտրում* ձեռքեր, այլ *վարձում* ընդմիշտ (ՊՍ):

Այս բարդ նախադասությունը կազմված է երկու ներդաշնակ մասերից, որոնցից յուրաքանչյուրում առկա է ժխտական կապակցություն: Առաջինում ժխտվում է *հատել* բայով արտահայտված գործողությունը *(չի հատում),* հաստատվում *գրավել*-ը *(գրավում է):* Չեն ժխտված *չի հատում* ստորոգյալի լրացումները և ենթական՝ *Եվ արդեն հիմա նա գանձ* (չի հատում): Չժխտված այս բոլոր անդամները՝ իրենց լրիվ ծավալով, վերաբերում են կից բաղադրիչներում առկա ստորոգյալին *(գրավում է),* ինչպես՝ *Եվ հիմա արդեն նա գանձ է գրավում:* Ճիշտ այդպես նաև *ձեռքը* խնդիրը, որ առաջին

[80] *Մանուկ Աբեղյան,* նշվ. աշխ., էջ 666:

բաղադրիչի ստորոգյալի լրացումն է (չի կտրում *ծեռքեր*), հատկացվում է երկրորդ բաղադրիչի ստորոգյալին (*այլ վարծում է ծեռքեր*): Հմմտ. նաև՝

Պայծառ լույսի շողերը, անցնելով ամպի մշուշի միջով, ծովի մակերևույթը չէին լուսավորում, այլ սքողում էին մի նուրբ շղարշով (ԱԾ):

բ) Ժխտվում է միայն *ստորոգյալը*՝ իր լրացումներով, այսինքն՝ առաջին բաղադրիչից ըստ էության մնում է միայն ենթական (իր լրացումներով, եթե կան): Հմմտ.

[Հայ իշխանը մտավ օտար, Զարդապարար, շքեղ մի բանտ.] Չը ընկճվեց, ինչպես մռայլ կախված մի ամպ, Այլ աչքերի հուրը ամուր հառեց գալիք վաղվա լույսին (ԿՋ): [Մենք էլ ազատվենք մեր ոխ ու քենի ցածր զգացումից, Որ] դրանով իսկ չնսեմանանք անգամ մեր ներսում, Այլ մնանք մեր վեհ հպարտության հետ (ՊՍ):

Երկու օրինակներում էլ ժխտված են առաջին բաղադրիչների ստորոգյալները՝ իրենց բոլոր լրացումներով:

Մասնակի ժխտական հարաբերությունը առավելապես հանդիպում է այն նախադասություններում, որոնց առաջին բաղադրիչի ստորոգյալը բաղադրյալ է: Հմմտ.

Մենք այլևս մեր ընթրիքի *տերը չէինք*, այլ կրակ մուրացողներ (ԱՎ):

Այս և նման կառույցներում սովորաբար զեղչվում է երկրորդ բաղադրիչի ստորոգելիական հանգույցը, և առաջին բաղադրիչի դիմավոր բայ-հանգույցը սկսում է վերաբերել նաև երկրորդին: Ըստ որում՝ թեև առաջին բաղադրիչի հանգույցը արտահայտված է լինում ժխտական խոնարհմամբ, սակայն երկրորդում այն ընկալվում է դրական խոնարհմամբ, որով և ստեղծվում է ժխտական և հաստատական հարաբերությունը: Հմմտ.

[Նրա հայացքում կար պաղ անտարբերություն,] կարծես սյունի վրայից նայողը Անդոն *չէր*, այլ անմարմին մի խրտվիլակ (ԱԲ): Շրջանը նեղ ընկերական *չէր*, այլ հասարակական (ԱԾ), այսինքն՝ [սյունի վրայից նայողը] *խրտվիլակ էր*, [շրջանը] *հասարակական էր*:

Առաջին բաղադրիչում կիրառվող *ոչ թե* շաղկապը կարող է նաև տեղաշարժվել: Այդ դեպքում ժխտումը սահմանափակվում է այդ շաղկապի գրաված դիրքով: Ժխտվում են այդ շաղկապին անմիջապես հաջորդող միավորները: Հմմտ.

Քշողը *ոչ թե* հայրս է, *այլ մեր հարևանի տղա Ալեքը* (ՍՋ): Շաղկապը իր ենթադրվող տեղում՝ նախադասության սկզբում, զետեղելու դեպքում կստացվեր բոլորովին այլ կառույց՝ *Ոչ թե քշողն է հայրս, այլ մեր հարևանի տղա Ալեքը*: Նախկին իմաստը աղճատված է (մեր հարևանի տղա Ալեքն է հայրս): Նման աղճատումից խուսափելու համար պետք է բառերի վերադասավորում կատարվեր առաջին բաղադրիչում (*Ոչ թե հայրս է քշողը*... և այլն):

Ժխտումը կարող է վերաբերել ենթակային: Հմմտ.

Ոչ թե *ես* եմ մեղավոր, այլ *նա*: Այս կառույցը առաջինը նկատել ենք ոչ թե *մենք*, այլ *Մ. Աբեղյանը*: Երկու նախադասություններում էլ ժխտված են առաջին բաղադրիչների ենթակաները:

ժխտումը կարող է վերաբերել նաև լրացումներին: Հմմտ.

Ոչ թե *արտաքին* ժպիտով (որ ամեն մարդ կարող է ունենալ), այլ *ներքին* ժպիտով պետք է ընդունել մարդկանց (ԱԻ): [Ծանր կանգնած ես այն մեծ նժարին, Որ] ծանր է կշռում ո՛չ թե *արկերով*, ո՛չ թե ավերման *կրքով* կատաղի, ո՛չ թե մայրերի *արցունքով* աղի, Այլ երջանկության մշտական *հրով* (ՊՍ):

Առաջին նախադասության մեջ ժխտված է որոշիչը (ոչ թե *արտաքին* ժպիտով), երկրորդում՝ միջոցի խնդիրները (ոչ թե *արկերով*, ոչ թե *կրքով* և այլն):

Այս և նման կառուցվածքն ունեցող նախադասությունները դադարում են բարդ լինելուց և վերածվում բազմակի անդամներով պարզ նախադասությունների:

Ժխտական հարաբերություն արտահայտող նախադասության թե՛ առաջին բաղադրիչը, թե՛ երկրորդը, թե՛ երկուսը միասին կարող են, առանձին վերցրած, ունենալ բարդ կազմություններ, այսինքն՝ բարդացված լինել համադաս կամ ստորադաս այլ բաղադրիչներով: Հմմտ.

ա) *Առաջին եզրը՝ բարդացված.*

Որդեսեր և հասկացող մայրը, *որքան էլ առողջ ոտքեր ունենա*, յուր հետևից քարշ չի տալ մանուկին, այլ ընդհակառակն, կհարմարեցնի յուր քայլերը տղայի դողդոջուն քայլիկներին (Մ):

բ) *Երկրորդ եզրը՝ բարդացված.*

Նրանք աստղեր չեն, այլ դեղին ու սպիտակ գառնուկներ, *որոնք, ծիերից խրտնած, փախչում են, և զրնգում են նրանց պղնձյա զանգակները* (ԱԲ):

դ) *Երկու եզրերը՝բարդացված.*

Եվ այդ ո՛չ թե նրա համար էր, *որ իմ նյութական ուժը չէր բավում՝ ամբողջ շինությունը ավարտելու*, այլ նրա համար [էր], *որպեսզի նրանք հասարակական գործի համար զոհաբերություն անելը սովորեին* (Մ):

2. ՏՐՈՀԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 213. *Տրոհական կոչվում է այն կապակցությունը, որի բաղադրիչներում արտահայտված գործողություններից, եղելություններից, երևույթներից միայն մեկն է համապատասխանում իրականությանը, մյուսը կամ մյուսները անիրական են:*

Ունի իմաստակառուցվածքային հետևյալ հատկանիշները:

1. Բաղադրիչների իմաստային հարաբերությամբ տրոհական կապակցությունը հարում է ժխտական կապակցությանը: Այս հարաբերակցությունը դրսևորվում է նրանով, որ երկու կառույցներում էլ բաղադրիչները փոխադարձաբար ժխտում են միմյանց: Այս օրինաչափությունը երկուսի համար էլ ընդհանուր է: Սակայն առկա են թե՛ իմաստային, թե՛ ձևակազմական որոշակի տարբերություններ:

Ժխտական և տրոհական կապակցությունների իմաստային տարբերությունն այն է, որ առաջին կառույցում ժխտումը և հաստատումը հստակ են. պարզորոշ երևում է, թե ո՛ր բաղադրիչում կա ժխտում, որո՛ւմ՝ հաստատում: Երկրորդ՝ տրոհական կապակցության մեջ հստակ ու պարզորոշ է միայն այն, որ հարակցված բաղադրիչներից միայն մեկում է հաստատվում մի գործողություն, եղելություն, մյուսում կամ մյուսներում առկա է ժխտում: *Բայց թե ո՛ր բաղադրիչում է ժխտումը, որո՛ւմ՝ հաստատումը, սա անհայտ է:* Այլ կերպ ասած՝ առկա է *«կամ...կամ»*-ի հարաբերություն: Հմմտ.

ա) Շախմատը ո՛չ թե մարզածև է, այլ արվեստ (է): Հստակորեն տարբերակված են ժխտում և հաստատում արտահայտող բաղադրիչները:

բ) Շախմատը կա՛մ մարզածև է, կա՛մ արվեստ (է): Բնավ պարզ չէ, թե որտե՛ղ է ժխտումը, որտե՛ղ՝ հաստատումը, ո՛րն է իրական, ո՛րը՝ անիրական: Իրական է միայն այն, որ բաղադրիչներից մեկում ասվածը անիրական է:

2. Ժխտական և տրոհական կապակցությունների ձևակազմական տարբերությունը այն է, որ առաջին կառույցում կապակցությունը իրացվում է ժխտական շաղկապով (տե՛ս § 212), երկրորդում՝ տրոհական (տե՛ս ստորև):

Այսպիսով՝ տրոհական կապակցությունը բնութագրվում է նրանով, որ հարակցված բաղադրիչներում արտահայտված գործողություններից, եղելություններից, երևույթներից միայն մեկն է իրական, և այդ մեկի իրական լինելը բացառում է մյուս բաղադրիչում կամ բաղադրիչներում նշված գործողության և այլնի իրական լինելը և ընդհակառակը: Ըստ էության՝ առկա են գործողություններ, եղելություններ և սրանց հատկանիշները, որոնք փոխադարձաբար բացառում են իրար:

3. Տրոհական կապակցությունը իրացվում է *կամ, կամ թե, և կամ, կամ թե չէ, թե* մենադիր, *կամ...կամ, ոչ այն է...ոչ այն է (թե) կրկնադիր շաղկապներով, մերթ...մերթ, երբեմն...երբեմն* մակբայներով:

Այս կապակցությունը կարող է ունենալ թե՛ փակ և թե՛ բաց շարքեր: Ըստ որում՝ շարքերի տեսակը պայմանավորված է, մի կողմից՝ հաղորդվող նյութի բովանդակությամբ, մյուս կողմից՝ շաղկապների բնույթով: *Կամ, կամ թե, կամ թե չէ, ոչ այն է...ոչ այն է, թե* շաղկապները գոյացնում են փակ շարքեր. կրկնադիր *կամ...կամ* շաղկապը՝ և՛ բաց, և՛ փակ շարքեր:

Հմմտ. *կամ, և կամ* մենադիր շաղկապներով փակ շարք.

Նրանք ի լուր ամենքի պետք է հայտնեն ճշմարտությունը կամ հեռանան առհավետ (ԳԹ): [Նա զավակն է նրա, այն խեղճ հայի որդին,] Որին սպանեցին իր անկողնում *եվ կամ* խաչեցին սեփական իր տան պատին (ՊՍ):

Փակ շարք կարող է կազմվել նաև կրկնադիր *կամ...կամ* շաղկապով, եթե իրար հակադրվում են և իրար բացառում սոսկ երկու գործողություններ, եղելություններ: Այս դեպքում թե՛ առաջին, թե՛ երկրորդ բաղադրիչները սկսվում են *կամ* շաղկապով, որով ընդգծվում է ժխտական հարաբերությունը բարդության երկու եզրերում:

Հմմտ. [Երկընտրանքը տարօրինակ թվաց Ավուն]: *Կա՛մ* քսան ռուբլի տուգանք՝ անտառից փայտ գողանալու համար, *կա՛մ էլ* Սթնածորի մի արջ սպանել (ԱԲ):

Թե շաղկապը կապակցում է առավելապես ուղղակի կամ անուղղակի հարցում արտահայտող բաղադրիչներ՝ տրոհական ժխտմամբ: Երկու դեպքում էլ հարցումը ունի վարկածային (հիպոթետիկ կամ հիպոթեզային) բնույթ, որով ընդգծվում է կից բաղադրիչներում նշված գործողություններից, եղելություններից ո՛րը իրական, ո՛րը անիրական լինելու անորոշությունը: Հմմտ.

ա) *Անուղղակի հարցում.*

[Լույս հայացքի խորքում անհուն՝ վառված սիրո կրակն անշեջ, Եվ ո՞վ կասի՝] կրա՞կն է շատ, *թե՞* սրբությունն իր անարատ (ՀՄ): [Ու չիմացավ՝] գինո՞ւց էր, *թե՞* հնձանն էր տաք (ԱԲ): [Ու չեմ իմանում՝] փրկե՞լ ենք իրար, *Թե՞* ամեն ինչից զրկել ենք իրար (ՀՍ):

բ) *Ուղղակի հարցում.* Մարդկանց աղմո՞ւկ էր, *թե՞* փողոցներով անցնում էին բեռնած ֆուրգոններ (ԱԲ): Քնա՞ծ է, *թե՞* մտքերի մեջ է խորասուզված (ՀՍ): Լա՞ց լինես, թե՞ ծիծաղես նման դժբախտության վրա (ՄԽ):

Սակավ կիրառություն ունի *թե* շաղկապով տրոհական կապակցությունը՝ առանց հարցման: Այսպիսի նախադասություններում սովորաբար դրսևորվում է երկընտրանքի վերաբերություն զուգորդության եզրերում առկա գործողությունների, եղելությունների հանդեպ: Երկընտրանքային ժխտական հարաբերությամբ կապակցված բաղադրիչները առավելապես հանդես են գալիս որպես բազմաբաղադրիչ նախադասության եզրեր: Հմմտ.

Պողոս Պետրոսյանին կընտրեն նախագահ, *թե* նախագահ կընտրվի *Պետրոս Պողոսյանը, որևէ նշանակություն չունի. միայն թե* ազնվորեն ծառայի երկրին (Ռ):

Կամ...կամ կրկնադիր շաղկապը կարող է կապակցել նաև *բաց շարքեր* կազմող կառույցների բաղադրիչներ: *Կամ* շաղկապը կրկնվում է յուրաքանչյուր հատվածի կա՛մ սկզբում, կա՛մ նախադասության՝ տրամաբանական շեշտը կրող անդամից առաջ: Հմմտ.

Կամ հակառակորդը հոգնում էր, կամ նրան բաց թողնում՝ շունչ քաշելու, կամ բարի մարդիկ ազատում էին Ասոյին նրա փայտի հարվածներից (ՆՉ):

Երկվության, անորոշության իմաստ է արտահայտում նաև *ոչ այն է (թե)...ոչ այն է (թե)* կրկնադիր շաղկապը: Հմմտ.

[Թաց ու խոնավ եղանակ է]. ոչ այն է՝ անձրև է գալիս, ոչ այն է՝ ձյուն [է գալիս]: Կերպարանքը նրա *ոչ այն է թե* կարծես Նոր ծաղկատար դարձավ, *Ոչ այն է թե* հանկարծ ընդմիշտ պեպենոտվեց (ՊՍ):

Ի տարբերություն մյուս շաղկապներով կապակցված կառույցների, որտեղ շարահյուսական դադարը գոյանում է միայն բաղադրիչների սահմանագծում, *ոչ այն է (թե)...ոչ այն է (թե)* շաղկապով կապակցված նախադասություններում նման դադար ստեղծվում է նաև շաղկապից անմիջապես հետո: Դադարը երկու բաղադրիչների միջև, այսպիսով, լինում է երկու ան-

գամ, մեկ՝ համեմատաբար մեծ դադար գոյանում է առաջին բաղադրիչի ավարտին, մեկ՝ ավելի փոքր դադար՝ շաղկապի վերջում: Այս երկրորդ դադարը գրավոր խոսքում վերարտադրվում է տրոհության նշանով՝ բութով (՝):

§ 214. Ժխտական հակադրությունը տրոհական կապակցության մեջ միատարր ու միաձշանակ չէ, որքանով որ միատարր ու միաճշանակ չէ այդ կապակցությունն իրացնող շաղկապների իմաստային կառուցվածքը: Փոխադարձ ժխտման հարաբերությունը կարող է ունենալ իմաստային մի քանի նրբերանգներ, որոնք ամփոփվում են հիմնականում երեք ենթախմբերում՝ ա) *լիակատար տրոհում*, բ) *մասնակի տրոհում*, գ) *մեկնական տրոհում:*

Ա. *Լիակատար տրոհումը* հատկանշվում է նրանով, որ հարաբերակից եզրերում արտահայտված գործողությունները, եղելությունները իրենց լրիվ ծավալով փոխադարձաբար ժխտում են իրար՝ հաստատելով մեկի՝ իրական, մյուսի կամ մյուսների՝ ոչ իրական լինելը: Հմմտ.

Կա՛մ ժանտախտն ինձ կտանի, կա՛մ սառնամանիքը կփայտացնի ինձ, կա՛մ ուղեփակոցը կջախջախի գանգս (ԱՊ):

Այս բարդ համադասական նախադասությունները բնորոշվում են կազմության զուգահեռականությամբ, որն արտահայտվում է բաղադրիչների բայ-ստորոգյալների եղանակաժամանակային միատեսակությամբ, այսինքն՝ լիակատար համաձայնությամբ, շարահյուսական նվազագույն միավորների շարադասության համանմանությամբ կամ նույնականությամբ: Այս հատկությունները ցայտուն երևում են վերի օրինակում, որտեղ երեք բաղադրիչների բայ-ստորոգյալներն էլ դրված են պայմանական եղանակի ապառնի ժամանակաձևով, նախադասության մյուս անդամները շարադասված են գրեթե նույն սկզբունքով. բոլոր բաղադրիչները սկսվում են ենթակայով, թեև դա պարտադիր պայման չէ:

Բ. *Մասնակի տրոհումը* հատկանշվում է նրանով, որ հարաբերակից եզրերում արտահայտված գործողությունները, եղելությունները իրենց լրիվ ծավալով փոխադարձաբար չեն ժխտում իրար, այլ անհամատեղելի են խոսքային որոշակի իրադրության մեջ:

Սա *իրադրական* տրոհում է, որտեղ հարաբերակից գործողությունները, եղելությունները, չժխտելով իրար, կատարվում են կա՛մ միաժամանակ, կա՛մ տարբեր ժամանակներում՝ հաճախ փոխարինելով միմյանց: Հմմտ.

Տարբեր ժամանակահատվածներում կատարվող գործողություններ.

Պառկում էր ծիրանու տակ կամ քնում ժայռի շվաքում, կամ էլ մեջքի *վրա դառնում, ոտքերը ծգում հսկա մկրատի պես* (ԱԲ):

Նկատելի է, որ ոչ մի ժխտում չկա, բոլոր գործողություններն էլ կատարվել են իրապես, բայց ոչ միաժամանակ, այլ հաջորդաբար, փոխեփոխ, մերթ՝ այս, մերթ՝ այն: Այլ օրինակ.

Ոմանք ստեպ-ստեպ փակ դռների բանալիի անցքով նայում էին դեպի մահամերձի սենյակը *կամ* ականջ էին դնում՝ ճգնելով մի բան տեսնել *կամ* լսել (ԱՇ):

Այսինքն՝ «փակ դռների բանալիի անցքով» փոխեփոխ «նայում էին» կամ «ականջ դնում»: Երկու գործողություններն էլ իրապես կատարվել են, բայց ոչ միաժամանակ: Այսինչ պահին *այս* է կատարվել, այնինչ պահին՝ *այն:* Ժխտական տրոհումը ունի այս տեսանկյունը: Այլ օրինակ.

Լուսերեսը տնտեսության մեջ օգնում էր մորը *կամ թե չէ* նրա համար գիրք էր կարդում (ՀԹ):

Միաժամանակյա գործողությունները, եղելությունները մասնակի տրոհական հարաբերությամբ բնորոշվում են նրանով, որ ներկայացվում են տվյալ բաղադրիչում արտահայտված բովանդակության համեմատ՝ առանց ժխտելու մյուսի բովանդակությունը: Հմմտ.

Վերից վար իջնող նեղ մի կածան, ոլոր-մոլոր ձգվելով, կորչում էր ձորի աղբյուրի մոտ փարթամորեն աճած խոտերի մեջ *կամ* վերընթաց բարձրանում դեպի լեռան ստորոտի բացատը (ՎԱ):

Նշանակում է՝ արահետը միաժամանակ այսինչ տեղում *կորչում էր*, այնինչ տեղում՝ *բարձրանում:* Ժխտական տրոհումը վերաբերում է գործողության տարածական հատվածներին:

Նկատելի է, որ հակադիր եզրերում առկա գործողությունները փոխադարձաբար չեն ժխտում իրար, ոչ էլ կատարվում են փոխեփոխ, հաջորդաբար, այլ միաժամանակ: Կածանը մի կողմից *իջնում-կորչում էր* խոտերի մեջ, մյուս կողմից՝ *բարձրանում դեպի լեռան ստորոտի բացատը:* Փոխադարձ բացասումը *մասնակի է* ու *իրադրական, ժամանակային, տարածական* և այլն: Բայ-ստորոգյալներն էլ դրված են միևնույն սահմանական եղանակի անցյալ անկատարով:

Գ. *Մեկնական տրոհումը* հատկանշվում է նրանով, որ երկրորդ բաղադրիչում ճշտվում, ավելի մտույգ ձևակերպում է ստանում նախորդ բաղադրիչում արտահայտված որևէ միավոր:

Իրենց այս հատկությամբ մեկնական տրոհում արտահայտող կառույցները հարում են բաղհյուսական բարդ համադասական նախադասության մի տեսակին՝ *մեկնական* կապակցությանը, բայց չեն նույնանում նրա հետ, քանի որ տարբեր են դրանց ձևակազմական յուրահատկությունները, նաև իմաստները: Մեկնական տրոհմամբ կապակցված բաղադրիչներից երկրորդը սկսվում է *կամ* շաղկապով, որին հաջորդում է մեկնական իմաստ ունեցող համապատասխան մի բառակապակցություն, որպիսիք են՝ *ավելի ճիշտ, այլ խոսքով, ուրիշ խոսքով, այլ կերպ ասած* և այլն, ապա հայտնվում է առաջին բաղադրիչում պարունակվող բովանդակության հոմանիշը: Այսպես է կառուցվում խոսքը հատկապես այն դեպքում, եթե խոսողին կամ հեղինակին թվում է, թե իր միտքը առաջին բաղադրիչում սխալ կամ ոչ այնքան հստակ է ձևակերպված, ուստի և այն ճշտում, նորովի է ձևակերպում կամ հստակեցնում է երկրորդ բաղադրիչով: Հմմտ.

Նիկոլայը ճամփորդական հագուստով էր կամ, *այլ կերպ ասած՝ տաբաքի փողքերը մտցրել էր երկարաճիտ կոշիկների մեջ, սերթուկի վրայից ծիգ կապել կաշվե լայն գոտին* (ԼՏ): Եվ այսպես ես ծախված էի կամ, *ավելի ճիշտ ասած, ես քղթախաղի մեջ կլուբում տանուլ էի տվել* (ՆԴ):

Մերթ...մերթ կրկնվող մակբայներով սկսվող համադաս բաղադրիչնե-

րում սովորաբար արտահայտվում են փոխեփոխ կատարվող կամ մեկը մյուսին փոխարինող գործողություններ, եղելություններ: Ժխտական տրոհումը կարող է վերաբերել ենթականերին, ստորոգյալներին, այլևայլ լրացումներին:

*Հատկանշական է, որ այս կառույցի նախադասությունների՝ **մերթ...մերթ, երբեմն...երբեմն** մակբայներով տրոհված մասերը, առանձին վերցրած, իրենց կազմում կարող են ունենալ համադասական կամ ստորադասական կապակցություններ: Հմմտ.*

*Ա. **Համադասական կապակցությամբ.***

Աղստևի ալիքները մերթ ուռչում, բարձրանում էին ու խուլ վշշոցով իրար վրա փլչում, մերթ գալիս մոտենում բլրի ստորոտին (Մ):

Այս նախադասության երկու մասերը առանձին-առանձին ներկայացնում են միավորական կապակցություններ, որոնցից առաջինը կազմված է երեք, երկրորդը՝ երկու բաղադրիչներից:

*Բ. **Ստորադասական կապակցությամբ.***

Փոփոխվում է ընդմիշտ նա ամեհի Այն թշնամու ձեռքով՝ դաժան ու բազմադեմք, Որ մերթ մի արքա էր ասորական (...), Մերթ մի հույն էր անտիկ՝ Մագաղաթի հետև թաքցրած իր թրով, Մերթ՝ փղերով զինված կրակապաշտ պարսիկ, Որը քանի՜ անգամ ջանաց մոխրացնել Մեր ինքնության հուրը իր ատրուշաններով (ՊՍ):

*Բազմաբաղադրիչ այս նախադասության տրոհական հարաբերությամբ կապակցված բաղադրիչներից մեկը ստորադաս եզր է իրեն նախորդած հատվածի համար (... Այն թշնամու ձեռքով՝ դաժան ու բազմադեմք, **որը մերթ մի արքա էր ասորական...**), մյուսը գերադաս եզր՝ իրեն հաջորդող հատվածի համար (...Մերթ՝ փղերով զինված կրակապաշտ պարսիկ, **Որը քանի՜ անգամ ջանաց մոխրացնել...**):*

__Երբեմն...երբեմն__ կրկնվող մակբայներով ևս արտահայտվում են փոխեփոխ կատարվող գործողություններ, եղելություններ, միայն թե այդ մասնատումը կատարվում է ժամանակի մեջ: Հմմտ.

*Օ՜, դու բարբարո՛ս, խելագա՛ր, ցավո՛տ, **երբեմն**՝ իմաստուն, **երբեմն**՝ գազան (ԵՉ): [Ամենից զարմանալին ուղևորների համար այդ եղեգնուտներն էին, որ] **երբեմն** բռնում էին ահագին տարածություններ՝ ափերի երկարությամբ, **երբեմն** նոսրանալով՝ գրեթե անհետանում (ՍՋ):*

Ինչպես կարելի էր նկատել բերված օրինակներից, կապակցող բառերը՝ շաղկապները, շաղկապական բառերը, մակբայները, ունեն իրենց կայուն դիրքը, առավելապես դրվում են տրոհական հարաբերություն արտահայտող բաղադրիչի սկզբում, որով և պայմանավորվում է ամբողջ կառույցի տիպային ու ձևային հատկությունը:

*Տրոհական կապակցությունը, թեև հազվադեպ, բայց կարող է իրացվել նաև **շարահարությամբ:** Կապակցության եզրերը առանց սպասարկու բառերի կարող են կապակցվել մասնավորապես բազմաբաղադրիչ նախադասություններում, այն էլ՝ **ուղղակի** կամ **անուղղակի հարցում** արտահայտելիս: Նման կառույցներում առաջին բաղադրիչները կապակցվում են շարա-*

*հարությամբ, վերջինը՝ **թե** շաղկապով, որը ըստ էության փակում է շարքը:* Հմմտ.

[Ո՞վ գիտի՝] պարկում շնալի՞ր չկար, Ա՞ղ էր հարկավոր ոչխարի համար, ուզեց զոքանչի ծվածեղ ուտել, *Թե՞* նշանածին շատ էր կարոտել [, Ոչխարը թողել, գնացել էր տուն] (ՀԹ):

9. *Կամ...կամ, կամ, թե* և տրոհական այլ շաղկապներով կարող են կապակցվել նաև *ենթականեր,* ինչպես և *լրացումներ:* Հմմտ.

Ռազմաճակատ պետք է գնայինք կամ *ես,* կամ կրտսեր *եղբայրս* (ԲՀ): Ա՜խ, եթե հիմա կարողանայի ես ձայնըս պոկել կոկորդից իմ խեղճ և Օգտագործել իբրև խարազան՝ Չգիտեմ, թե ում *մեջքին կամ դեմքին* (ՊՍ): Հայ զենքի աստված հայաստանասեր *Տիգրանի՞ց* խոսեմ, *թե՞ Մայր Աթիից* [,որ մայրն է հազար ու մեկ տաճարի] (ՀՇ) և այլն:

Նման կառույցները, սակայն, չի կարելի համարել բարդ նախադասություններ, քանի որ տրոհումը վերաբերում է ենթականերին կամ լրացումներին, բայց ո՛չ ստորոգումային միավորներին: Առաջին դեպքում առկա է բազմակի ենթականերով պարզ նախադասություն, երկրորդ և երրորդ նախադասությունները ևս պարզ են՝ հարստացված բազմակի լրացումներով:

3. ՀԱԿԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 215. *Հակադրական կոչվում է այն կապակցությունը, որի բաղադրիչներում արտահայտված գործողությունները, եղելությունները, երևույթները ներկայացվում են հակադրության հիմունքով:*

Ունի իմաստակառուցվածքային հետևյալ հատկանիշները:

1. Իր բաղադրիչներում արտահայտված իմաստների հարաբերությամբ հակադրական կապակցությունը հարում է մի կողմից՝ *ժխտական,* մյուս կողմից՝ *տրոհական* կապակցություններին: Ընդհանրությունը երեք կառույցների համար էլ ներհակական հարաբերությունն է, որը առաջին դեպքում դրսևորվում է ժխտման ձևով, գոյացնելով ժխտական կապակցություն, երկրորդ դեպքում՝ տրոհման ձևով, որով գոյանում է տրոհական կապակցություն, երրորդ դեպքում՝ հակադրությամբ, որը ձևավորում է հակադրական կապակցություն:

Կապակցությունը իրացվում է համանուն շաղկապներով՝ *բայց, իսկ, սակայն, մինչ, մինչդեռ, այնինչ, և սակայն, եթե...ապա, հապա, բա* (ժողովրդախոսակցական) և այլն:

Հակադրական կապակցությամբ կառույցները ներկայացնում են *փակ շարք:* Դրանք կազմված են հակադրվող երկու մասերից կամ բևեռներից: Բևեռներից յուրաքանչյուրը կարող է արտահայտված լինել մեկական պարզ նախադասությամբ, և դա ամենատարածված տեսակն է, կարող է նաև բարդացված լինել համադասությամբ կամ ստորադասությամբ: Այս պարագայում գոյանում են փակ շարքի *երկբևեռ բազմաբաղադրիչ բարդ նախադասություններ,* որոնց բևեռները, առանձին վերցրած, պարունակում են համադասական կամ ստորադասական կապակցություն: Նման կառույց-

ներում հակադրական հարաբերությունը դրսևորվում է երկու բևեռների միջև: Հմմտ.

Ա. *Երկբաղադրիչ բարդ նախադասություններ:* Սպասում էին մահամերձի մահին, իսկ նա դեռ չէր մեռնում (ԱՇ): Անցել են դարեր, դարեր, իսկ իր կամքը դեռ խոսում է (ԵՉ):

Բ. *Բազմաբաղադրիչ բարդ նախադասություններ՝* համադասությամբ կամ ստորադասությամբ:

Տարիքավոր տղամարդը, որ ըստ էության իշխան էր, ընթանում էր առաջից, իսկ երիտասարդը, որը նրա թիկնապահն էր, հետևում էր նրան (ՍԳ): Քննադատել կարող է ամեն ոք, միայն դրա համար պետք է ունենալ պատրաստություն և ճաշակ, իսկ պատրաստությունը չունեն մեզանում շատերը, չունեն և ճաշակ (ԱՇ) և այլն:

2. Բաղադրիչների կապակցությունը առավելապես իրացվում է *սպասարկու բառերով,* հազվադեպ՝ նաև *շարահարությամբ:*

Սպասարկու բառերը նշված հակադրական շաղկապներն են և *ընդհակառակը(ն)* շաղկապական բառը:

Հակադրական, ինչպես նաև մյուս շաղկապները մենիմաստ չեն: Նրանք համատեղում են այլևայլ նշանակություններ՝ կախված գործողությունների, եղելությունների, դրանց հատկանիշների բնույթից ու բովանդակությունից: Սակայն, որպես կապակցության բառական ցուցիչներ, դրանք ժամանակի ընթացքում ձեռք են բերել նաև բավականաչափ վերացարկված իմաստներ, ինչը թույլ է տալիս համապատասխան կապակցությունները քննելու ո՛չ թե ըստ այս կամ այն շաղկապի արտահայտած այս կամ այն իմաստի[81], այլ ըստ բաղադրիչների իմաստային հարաբերության: Այս հարաբերության բնույթն էլ հենց կանխորոշում է ամբողջ նախադասության կառուցվածքը:

Հակադրական հարաբերությունը բնորոշվում է նրանով, որ կապակցության երկու եզրերում զուգադրվում են գործողություններ, եղելություններ, իրողություններ, որոնք այլընտրանքային սկզբունքով հակադրվում են միմյանց՝ առանց, սակայն, բացառելու կամ սահմանափակելու մեկը մյուսի իմաստը:

Հակադրությունը կարող է ընդգրկել բարդության եզրերը՝ *ամբողջությամբ* կամ *մասնակիորեն* [82]: Ըստ այդմ ստանում ենք՝ ա) *լիակատար հակադրություն* և բ) *մասնակի հակադրություն:*

Ա. *Լիակատար հակադրություն:* Սա բաղադրության երկու եզրերի ամբողջական հանդիպադրությունն է, որ ընդգրկում է բոլոր անդամները անխտիր: Հմմտ.

---

[81] Այսպես է վարվում, օրինակ, Վ. Առաքելյանը, որ բարդ համադասական նախադասությունները քննում է՝ ըստ շաղկապների արտահայտած բառիմաստների, ավելի ստույգ՝ բառաքերականական իմաստների: Տե՛ս նրա Հայերենի շարահյուսություն, հ. Բ, էջեր 295-354:

[82] Այս մասին տե՛ս նաև *Ս. Սրբահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան,* Հայոց լեզու, հ.Բ, էջ 332 և հջ.:

Բանաստեղծները մահանում են, իսկ երգը, երգը, երգը միշտ մնում է (ԳՄ): Քար է եղել նրանց շքեղ կրծքի տակ, Իսկ ես, ավա՜ղ, սիրտ եմ կարծել, սիրելի՛ս (ՍԿ): Եվ ուզում ես խոսել ինչ-որ ուրիշ լեզվով, Բայց կորչում է ասես հայերենը քո ծոխ (ՊՍ): Ի՞նչ եմ եղել ես կյանքում՝ հարսանքավոր ու քավոր, Մինչ ամենքից ավելի ինձ էր օջախ հարկավոր (Ն.տ.) և այլն:

Բերված օրինակներում բարդությունների եզրերը միմյանց հակադրված են ամբողջությամբ: Այս կառույցը հատկանշվում է նրանով, որ զուգորդության եզրերում չկան ընդհանուր, կրկնվող կամ մեկը մյուսին փոխարինող անդամներ: Չկան նաև իրար հակասող, իրար բացառող գործողություններ, եղելություններ: Պարզապես առկա են այլընտրանքային գործողություններ, երևույթներ:

Լիակատար հակադրություն արտահայտող բաղադրիչները կարող են կապակցվել նաև *եթե...ապա* զուգադիր շաղկապով, որ, սակայն, սահմանափակ կիրառություն ունի, քանի որ հատուկ է գրքային ոճին: Հմմտ.

Եթե ամռանը Երևանում անտանելի շոգ է լինում, *ապա* Վարդենիսում այդ ամիսներին միշտ զով է: *Եթե* ես միշտ նախընտրում էի հանգստանալ Սևանի ափին, *ապա* եղբայրս գերադասում էր արձակուրդն անցկացնել լեռներում:

Ավելի ևս սակավ է պատահում *շարահարական* կապակցությունը այս կարգի նախադասություններում: Այն հատուկ է բանաստեղծական խոսքին և ունի որոշակի ոճաստեղծ հատկություն: Հմմտ.

Խորհուրդներով իմ խելոք խելք հավաքած գնացին քանի՜-քանի՜սը կյանքում, ես էլի գի՛ժ մնացի (ՊՍ):

Նկատելի է, որ այս կառույցներում թեև բառերի ու բառակապակցությունների կրկնություն չկա, չկան նաև ընդհանուր անդամներ, սակայն գործողությունները, եղելությունները կատարվում են ժամանակի միևնույն կտրվածքում, այլ կերպ ասած՝ առկա է բաղադրիչների եղանակաժամանակային համաձայնություն: Սա այս կապակցությունների տիպաբանական կարևոր հատկություններից մեկն է: Այլ օրինակներ.

Կյա՛նք, դու ես վառում արևները երկինքներում և սեր՝ մեր սրտում, սակայն դժխեմ մահը մարում է արևները և սերերը պայծառ (ՍԻ): Թափել է արևն Իրանի իմ հոգում Շիրազի վարդեր, Բայց տխուր Նաիրյան քամին իմ սրտում թախիծ է բարդել (ԵՉ): Եվ այնպես հեշտ, այնպես խնդուն Մատնում ես դու ինձ աշխարհին, Մինչ դողում է, որպես երդում, Քո անունն իմ շուրթերին (ՍԿ):

Լիակատար հակադրական հարաբերություն արտահայտող նախադասությունները աչքի են ընկնում բաղադրիչներում բովանդակած իմաստների յուրօրինակ հականիշությամբ: Դրանք սովորական հականիշներ չեն (լավ → վատ, լավություն → վատություն, լավանալ → վատանալ և այլն): Դրանք բառական կամ բառակապակցական արտահայտություն ստացած ինքնատիպ հակադրություններ են: Հմմտ. վերի օրինակներում՝ *«Դու վառում ես արևները → մահը մարում է արևները», «արև → թախիծ», «Այնպես խնդուն մատնում ես դու ինձ աշխարհին → Դողում է քո անունն իմ շուրթերին»* և այլն:

Այսպիսի հակադրությունը կարելի է կոչել հրադրական, քանի որ, առանձին վերցրած, բնագրից դուրս արև և թախիծ և նման իմաստներով միավորներ բառական հականիշներ չեն: Դրանք բառական որոշակի շրջապատում են միայն և որոշակի կառույցի նախադասություններում են հիմք դառնում հակադրական կապակցության:

Լիակատար հակադրական հարաբերություն արտահայտող նախադասությունների բաղադրիչները հաճախ կառուցվում են համանման շարադասությամբ՝ կազմելով հանդիպադրվող զուգահեռ ձևեր: Զուգահեռականությունը դրսևորվում է հատկապես ենթակաների, ստորոգյալների, երբեմն նաև այլ անդամների որոշակի դասավորությամբ: Հմմտ.

Ջաղացպանն իր կնոջ հետ կգնա ներքին կամրջով, իսկ մայր ու աղջիկ կիջնեն գետի վրա և քարերի վրայով կանցնեն գետը (ԱԲ): Նրանք տուն էին մտնում, իսկ մենք ծլվլում էինք դեպի ծիթհանքը՝ մեր խաղերի իրիկվա տեղը (Ն.տ.): Քամին՝ քո չքնաղ համբույրը շրթին, Ծիծաղում էր ու շուրջը թևածում, Իսկ թարթիչներըս բիբերիս վրա Արցունքե կապույտ քող էին գործում (ՌԴ):

Դիտելի է, որ բոլոր կառույցների առաջին եզրերը սկսվում են ենթակայով: Բոլոր երկրորդ եզրերը նմանապես սկսվում են ենթակայով, որը անմիջապես հաջորդում է շաղկապին՝ դրանով իսկ ընդգծելով հակադրությունը ենթակաների միջև, դառնալով տրամաբանական շեշտի կրողը (հմմտ. *ջաղացպանը → մայր ու աղջիկ, նրանք → մենք* և այլն):

Բ. *Մասնակի հակադրություն:*

1. Սա բաղադրության երկու եզրերի ո՛չ ամբողջական հանդիպադրությունն է: Այն չի ընդգրկում բոլոր անդամները:

Առավելապես հակադրվում են ենթակաները, ստորոգյալները, ստորոգյալի լրացումները և լրացման լրացումները:

2. Մասնակի հակադրությունը ենթադրում է երկու բևեռներում որոշակի անդամների նույնություն: Հմմտ.

Թոռնուհիս սովորում է գեղարվեստի ակադեմիայում, իսկ թոռնիկս՝ դպրոցում:

Հակադրությունը վերաբերում է ենթականերին (*թոռնուհիս* և *թոռնիկս*) և տեղի պարագաներին (*գեղարվեստի ակադեմիայում* և *դպրոցում*): Ընդհանուր է ստորոգյալը *(սովորում է)*, որ չկրկնվելու համար, ոճական նկատառումներով զեղչվել է երկրորդ բաղադրիչում:

Տղան նկարում է կտավի վրա յուղաներկով, հարսը՝ թղթի վրա՝ ջրաներկով:

Այստեղ ևս ստորոգյալների հակադրություն չկա, հակադրվել են ենթակաները, տեղի պարագաները և միջոցի խնդիրները: Այլ մի օրինակ.

Տանիքը ծածկված է թիթեղով, իսկ պատշգամբն ամեն կողմից՝ վարից վեր՝ սղոցանախշ տախտակներով (ՍՋ):

Հակադրության նյութ կարող են դառնալ նաև այլ անդամներ: Հմմտ. *ենթակա* և *ուղիղ խնդիր.*

Վահագնը քաջություն էր պահանջում, Աճահիտը՝ արհեստ, իսկ Աստղիկը՝ սեր և բանաստեղծություն (Ր):

Բաղադրության եզրերում կարող են լինել բաղադրյալ ստորոգյալներ: Ստորոգելիների հակադրության դեպքում զեղչվում է երկրորդ եզրի հանգույցը, ինչպես՝

Կրթությունը խիստ ազնիվ է, *վայելուչ*, իսկ խոսվածքը՝ *սրտառուչ* (Ն.տ.): Ես շռայլ էի, իսկ նա՝ *խնայող*, ես խոհեմ էի և հանդուգն, իսկ նա՝ *պաղարյուն* (ՂԱ): Նրա հայրը մենակ էր ու չքավոր, իսկ Մոսիենք՝ *շատվոր ու հարուստ* (ՆՋ) և այլն:

Ինչպես դժվար չէ նկատել, պարզ ստորոգյալները զուգադրվում են իրենց լրիվ ծավալով, ավելի ստույգ՝ բայ-ստորոգյալի միևնույն եղանակն ու ժամանակն են ընկալվում երկրորդ բաղադրիչում, ինչ որ առկա է առաջին եզրում: Ստորոգյալը բաղադրյալ լինելու դեպքում զուգորդվում են հանգույցները՝ պահպանելով եղանակաժամանակային կարգային իմաստները:

3. Զուգորդության առաջին եզրում գոյականով արտահայտված այս կամ այն անդամը երկրորդ բաղադրիչում կարող է փոխարինվել դերանվամբ: Հմմտ.

Ես հույս ունեի հանդիպելու *ընկերոջս* իր *ծննդավայրում՝ Գորիսում*, իսկ *նա այնտեղից* վաղուց հեռացել, մեկնել էր Եվրոպա: Աղմուկի վրա նա շտապ իրեն նետեց *բակը*, իսկ *այնտեղ* արդեն ոչ ոք չկար և այլն:

4. Մասնակի հակադրությամբ կապակցված որոշ կառույցներ հարում են միավորական համադասական նախադասություններին: Դրանք այն բաղադրություններն են, որոնց երկու եզրերի ենթակաները նույնն են և արտահայտված են առաջին եզրում, իսկ երկրորդում՝ զեղչված: Հմմտ.

Այն ժամանակ մահը պոեզիա, լիրիկա էր, իսկ այժմ՝ իրականություն, առաջդ կանգնած ահավոր սարսափ (ԱԻ):

Այսպիսի կապակցություններում, սակայն, գերիշխում է, եթե չասենք՝ ակնհայտ է հակադրական հարաբերությունը, որը ունի նաև կառուցվածքային ու ձևակազմական որոշակի արտահայտություն: Ուստի սրանք ևս - պետք է դիտարկվեն որպես մասնակի հակադրությամբ և ոչ թե միավորական հիմունքով ձևավորված համադասական նախադասություններ:

Այսպիսով՝ հակադրական հարաբերությամբ կապակցված բաղադրիչներում հակադրվել կարող են և՛ ենթակաները, և՛ ստորոգյալները, և՛ լրացումները:

4. ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 216. *Սահմանափակման կոչվում է այն կապակցությունը, որի բաղադրիչներից երկրորդում արտահայտված գործողությունը, եղելությունը, երևույթը չեն մակաբերվում նախորդ բաղադրիչում ասվածից, այլ չափավորում, սահմանափակում են նրա բովանդակությունը:*

Ունի իմաստակառուցվածքային հետևյալ հատկանիշները:

1. Այս նախադասությունների բաղադրիչների միջև ևս առկա է իմաստների հակադրություն, որով և նրանք հարում են հակադրական կապակ-

ցությանը՝ ներկայացնելով ներհակական հարաբերությամբ կապված կառույցների մի տեսակը: Ներհակությունը, սակայն, այստեղ ունի յուրօրինակ արտահայտություն: Հակադրական հարաբերության հետ մեկտեղ նկատվում է եզրերի իմաստների անհամապատասխանություն: Երկրորդ բաղադրիչում ասվածը իր ներքին տրամաբանությամբ չի բխում նախորդ բաղադրիչում նշված գործողությունից, եղելությունից և իր տեղը զիջում է ներհակ ուղղությամբ ընթացող գործողությունների, եղելությունների:

2. Բաղադրիչները կապակցվում են *բայց, բայց և, բայց և այնպես, սակայն, և սակայն, սակայն և, այսուամենայնիվ, այդուամենայնիվ, այնուամենայնիվ, այսուհանդերձ, այդուհանդերձ, այնուհանդերձ, մինչ, մինչդեռ, միայն, միայն թե* և այլ շաղկապներով:

Այս կառույցները ունեն կայուն շարադասություն: Սահմանափակման հարաբերությունը դրսևորվում է երկրորդ բաղադրիչով: Առաջին բաղադրիչը նշում է այն գործողությունը, եղելությունը, որոնց իմաստը սահմանափակվում է երկրորդում:

Շարահարական կապակցությունը չի գործում այստեղ:

Հատկանշական է, որ հարաբերությունների բնույթը օրինաչափորեն որոշվում է շաղկապներով: Հաճախ միևնույն բաղադրիչները կարող են կապակցվել թե՛ միավորական, թե՛ ներհակական շաղկապներով, որոնք էլ կանխորոշում են կապակցության տեսակը: Հմմտ.

Ա. Ես միշտ հավատացել եմ մարդկանց, *և դա եղել է իմ թերությունը:*

Բ. Ես միշտ հավատացել եմ մարդկանց, *իսկ դա եղել է իմ թերությունը:*

Գ. Ես միշտ հավատացել եմ մարդկանց, *բայց (սակայն, և սակայն) դա եղել է իմ թերությունը:*

Առաջին կառույցում առկա է բաղհյուսական կապակցություն՝ *մակաբերական* հարաբերությամբ, երկրորդ կառույցում՝ ներհակական կապակցություն՝ *հակադրական* հարաբերությամբ, երրորդ կառույցում՝ նույնպես ներհակական կապակցություն, բայց արդեն *սահմանափակման* հարաբերությամբ:

Ներհակական շաղկապներից սահմանափակման իմաստով առավելապես կիրառվում են *բայց (և), սակայն (և), միայն (թե)* շաղկապները: Մյուսների հաճախականությունը փոքր է: Ըստ որում *բայց (և)* շաղկապը սահմանափակման իմաստով, մյուսների համեմատությամբ, միջին, կարելի է ասել՝ չեզոք դիրք է գրավում: *Սակայն (և սակայն)* շաղկապի իմաստային կառուցվածքում սահմանափակումը բավականաչափ ուժեղ է արտահայտված, *միայն (թե)* շաղկապը ամենից ավելի ուժգին է շեշտում սահմանափակման բովանդակությունը:

3. Ըստ զուգորդության եզրերի արտահայտած իմաստների փոխհարաբերության բնույթի՝ սահմանափակումը ունենում է մի քանի արտահայտություններ:

Ա. Սահմանափակում բացառման հիմունքով: Այս կապակցությունը բնորոշվում է նրանով, որ երկրորդ եզրը ինչ-որ չափով, ինչ-որ ձևով կամ հատկանշով բացառում է առաջին եզրում արտահայտված գործողությունը, եղելությունը, իրողությունը կամ հակասում դրանց: Հմմտ.

Դարձյալ նորանոր փերթեր կտրեց, *և սակայն աղավնին ավելի ու ավելի ծանր էր կշռում* (ԱԻ)։ Կյանքս կմարի՝ հին, չնչին մի կայծ քո ոսկե հրում, *Բայց պիտի վառվի՛ սիրտըս մոխրացած քո բոլոր գալիք արշալույսներում* (ԵՉ)։ Երկու հարյուր տարի ես զնգալ եմ ուզում, *բայց լռած եմ, ինչպես ցամաք ջրհոր* (ՍԿ)։

Եթե հեղինակը «երկու հարյուր տարի զնգալ է ուզում», պետք է որ «զնգա», սա՛ է տրամաբանությունը։ Սակայն երկրորդ բաղադրիչում խախտվում է այս տրամաբանությունը, քանի որ նրանում առկա գործողությունը հակասում է դրան։

Բ. Սահմանափակում զիջման հիմունքով։ Չուգորդված բաղադրիչների իմաստների անհամապատասխանությունը կարող է հանգեցնել նրան, որ երկրորդ եզրում գործողությունը, եղելությունը կատարվեն մի տեսակ՝ զիջողաբար։ Այն գործողությունը կամ եղելությունը, որ արտահայտված է առաջին բաղադրիչում, երկրորդում չունի իր տրամաբանական շարունակությունը, կարծես յուրովի զիջում է արվում այլ մի գործողության, իրողության, հմմտ.

Իմ ուսանողները հաճախ ուշանում են դասերից, *սակայն ես նրանց դիտողություն չեմ անում* [, որովհետև գիտեմ, որ շատերը հեռու գյուղերից են գալիս]։ Դիլան դային էլ կին առավ, *բայց հիշողության մեջ հավիտյան անջինջ մնաց Սոնան, հնձանը, լաջվարդ շապիկը* (ԱԲ)։ Որսս հաջող չէր, *սակայն բավականություն էի ստանում ծառերի վրա և տերևների մեջ վայրի պտուղներ գտնելով* (ՎԱ)։

Դիտելի է, որ զիջման ներհակությունը ավելի ևս ընդգծվում է, երբ եզրերից մեկի բայ-ստորոգյալը արտահայտված է լինում դրական, մյուսինը՝ ժխտական խոնարհմամբ։ Հմմտ.

Սրբերը նրա համար *ընտրում են* ամենաքաղցր պտուղները, բայց նորից *չի անցնում* նրա բերանի դառնությունը (ԱԻ)։ Այդ գիշեր երկար *սպասում էի* Թուսյանին, սակայն նա *չէր երևում* (ՆՂ)։ Կրակոցից ծառի ճյուղերից ճյուն *թափվեց*, բայց իմ վառոդը *չխանձեց* ոչ մի աղվեսի մորթի (ԱԲ)։

Հատկանշական է, որ այս նախադասությունները շատ դեպքերում կարող են վերածվել ստորադասական կառույցների, եթե բաղադրիչների կապակցությունը իրացվի *թեև... բայց (սակայն), թեպետ... բայց (սակայն)* և նման զուգադիր շաղկապներով։ Հմմտ.

Թեև (թեպետ, թեպետև) որսս հաջող չէր, բայց (սակայն) բավականություն էի ստանում ծառերի վրա և տերևների մեջ վայրի պտուղներ գտնելով։ *Թեև (թեպետ, թեպետև) սրբերը նրա համար ընտրում են ամենաքաղցր պտուղները, բայց (սակայն)* նորից չի անցնում նրա բերանի դառնությունը։

Գ. Սահմանափակում՝ բացատրության, լուսաբանման, ճշգրտման հիմունքով։ Սահմանափակման ներհակությունը դրսևորվում է նրանով, որ երկրորդ բաղադրիչում առկա գործողությունը, իրողությունը յուրովի լուսաբանում կամ ճշգրտում են նախորդ եզրի բովանդակությունը։ Հմմտ.

Նրա սիրած գիրքը «Կայծերն» էր, *բայց ամենալավը «Բուլղար ավազակապետի պատմությունն» էր* (ԱԲ)։ Ամռանը մենք հաճույքներ շատ ու-

նենք, *բայց ամենալավ հաճույքը գետում լողանալն է* (ՍՋ)։ Ճուտ եմ ասում, *բայց մի վառեկի չափ բան էր՝ ծածկված աղվամազով և նոր բուսած փետուրներով* (ՎԱ)։

§ 217. Սահմանափակման հարաբերությամբ բնորոշվող նախադասությունները արտաբերվում են ձայնային որոշակի ելևէջումով. առաջին եզրի վերջին միավորն արտասանելիս ձայնի տոնայնությունը փոքր-ինչ իջնում է, և գոյանում է դադար, բայց ոչ այնքան տևական, որ ազդարարի նախադասություն ավարտը։ Երկրորդ եզրը արտաբերվել սկսում է միանգամից բարձր տոնայնությամբ, քանի որ ներհակական հարաբերություն արտահայտող սպասարկու բառերը թեև տրամաբանական շեշտի կրողը չեն, սակայն օրինաչափորեն արտաբերվում են ընդգծված կերպով։

Երկրորդ բաղադրիչում տրամաբանական շեշտի տակ ընկած միավորը սովորաբար առաջ է գալիս և հաջորդում շաղկապին։ Տե՛ս վերի օրինակները, այլև՝

Բոլորը մտածում են, խորասուզված են, բայց *ոչինչ* չեն կարող իմանալ [. կասկածը անտանելի է] (ԱԻ)։ Ու սիրտըս տված մահու անուրջին՝ մահ էի տենչում, բայց *տեսա՛* հանկարծ քո դեմքը վերջին Այս աղջամուղջում (ԵՉ)։ Ու թող ո՛չ ոք գերեզմանիս մոտ չգա, Միայն թե *դու՛* շիրմիս ճամփան հիշեիր (ՎՏ)։

5. ՊԱՅՄԱՆԱՀԱԿԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 218. *Պայմանահակադրական կոչվում է այն կապակցությունը, որի բաղադրիչների իմաստային կառուցվածքում, ներհակությունից բացի, առկա է նաև պայմանահետևանքային հարաբերություն։*

Ունի կառուցվածքային և իմաստային հետևյալ հատկանիշները։

1. Կապակցությունն իրացվում է *եթե ոչ, ապա թե ոչ, այլապես, թե չէ* շաղկապներով և *հակառակ դեպքում, հակառակ պարագայում* շաղկապական բառերով։

Շարահարական կապակցությունը այս կառույցներում բացակայում է։

2. Բնորոշվում է նրանով, որ առաջին բաղադրիչում հայտնվում է մի գործողություն, եղելություն, իրողություն, որոնք յուրովի ընկալվում են իբրև մի պայման, որից իբրև հետևանք կատարվում է մեկ այլ գործողություն, եղելություն՝ երկրորդ բաղադրիչում։

Նախադասությունն արտաբերվում է ձայնային որոշակի վերուվարումով։ *Առաջին բաղադրիչի* վերջում ձայնի տոնը փոքր-ինչ իջնում է, գոյանում է շարահյուսական մի փոքր դադար, ապա շաղկապի կամ շաղկապական բառակապակցության վերջին ձայնավորը շեշտվելով՝ արտասանվում է ձայնատոնի զգալի բարձրացումով։ Ըստ էության, կարելի է ասել՝ երկրորդ բաղադրիչի տրամաբանական շեշտի կրողը հենց պայմանահետևանքային իմաստ արտահայտող շաղկապն է կամ շաղկապական կապակցությունը։

3. Օրինաչափական հատկություն է այն, որ եթե առաջին բաղադրիչի բայ-ստորոգյալը արտահայտված է *դրական* խոնարհմամբ, իբրև պայման դիտվում է գործողության, եղելության *չկատարվելը*. եթե *ժխտական* խո-

նարհմամբ է, պայման է հանդիսանում գործողության, եղելության *կատարումը:* Հմմտ.

Ինձ բնավ դու *չես սիրում, թե չէ* [գնա՛, գնա,] *մորդ սիրտը բե՛ր* (ԱԻ):

Առաջին եզրի բայ-ստորոգյալը ժխտական խոնարհմամբ է կիրառված (չես սիրում), ուստի պայման է հանդիսանում գործողության կատարումը (*սիրում ես = եթե սիրում ես*): Դե՛, արա՛գ. *վազի՛ր* տուն, *եթե ոչ մայրիկը շատ կանհանգստանա:*

Առաջին բաղադրիչի բայ-ստորոգյալը դրված է դրական խոնարհմամբ (*վազի՛ր*), այդ իսկ պատճառով պայմանը գործողության չկատարելն է (*չվազես = եթե չվազես*):

Այս առանձնահատկությամբ էլ հենց բնորոշվում է պայմանահետևանքային հարաբերությունը:

4. Պայմանահետևանքային հարաբերությամբ կապակցված նախադասությունները կազմում են փակ շարքի կառույցներ: Դրանք երկբևեռ նախադասություններ են: Առաջին բևեռը արտահայտում է պայման, երկրորդը՝ դրա առկայությամբ կամ բացակայությամբ պայմանավորված հետևանքը կամ հետևությունը: Ինչպես տիպաբանական այլ կառույցներում, այստեղ ևս բևեռներից մեկնումեկը կամ երկուսը միաժամանակ կարող են բարդացված լինել համադասությամբ կամ ստորադասությամբ: Հմմտ.

Ա. *Համադասությամբ բարդացված կառույց: Փա՞ռք աստծո, գարնան հետ և փայփայած հաղթանակը եկավ, և առատ ու բարի աննման ծիրն տեղաց, այլապես երաշտ կլիներ, և հաղթանակն էլ այնպես չէր տոնվի* (ՄԳ):

Բ. *Ստորադասությամբ բարդացված կառույց. Աղջիկը, որ ամուսնանում է, իբրև օժիտ պետք է բերի իր սերը,* թե չէ ուրիշ հարստություն իմ թոռանը պետք չէ (ԳԹ): Անպատճա՛ռ արի, *այլապես կկարծեմ, որ ներողացած ես ինձանից* (ՆԴ):

5. Պայմանահակադրական ներհակություն արտահայտող շաղկապները իրենց շարահյուսական-գործառական դերով նույնական են, այսինքն՝ գոյացնում են նույն կարգի հարաբերություններ: Տարբեր է, սակայն, դրանց ոճական արժեքը:

Նորմավորված գրական լեզվին հատուկ են *եթե ոչ, ապա թե ոչ, այլապես* շաղկապները և *հակառակ դեպքում, հակառակ պարագայում* շաղկապական կապակցությունները: Առավելապես ժողովրդախոսակցական լեզվում են կիրառվում *թե չէ,* մասամբ նաև *ապա թե չէ* շաղկապները:

Ապա բառով բաղադրված շաղկապները (*ապա թե ոչ, ապա թե չէ*) թե՛ գրական, թե՛ ժողովրդախոսակցական լեզվում կիրառվելիս ավելի ևս զորեղացնում են պայմանահակադրական հարաբերությունը: Հմմտ.

Սաքոն իհարկե չտեսավ Մարգարին բազմության մեջ, *ապա թե ոչ* երբեք այդպիսի անխոհեմ գործ չէր բռնիլ (ՊՊ):

Այլ օրինակներ՝ այլ շաղկապներով.

Սամվելը փոքր-ինչ խմած էր, *եթե ոչ* նա երբեք սովորություն չուներ կատակներ անել յուր դայակի հետ (Ր): Ճիշտ է, աֆիշների վրա ժապիճով եմ գրվում, բայց այդ ոչ թե նրա համար, որ ուզում եմ ինձ ռուս ցույց տալ,

այլապես կգրվեի Իվանով կամ Սիդորով, այլ նրա համար միայն, որ Չափինյան ազգանունը ինչպե՞ս գրես ռուսերեն (ՆԴ)։ Էլ մի՛ խոսեցնի, թե աստված սիրես, *թե չէ* մի ղաչաղ կդառնամ ես էլ (ՀՃ)։

Հակառակ դեպքում, հակառակ պարագայում շաղկապական կապակցությունները առավելապես հատուկ են գիտական և գիտահրապարակախոսական ոճին, սակավ են կիրառվում գրական-գեղարվեստական խոսքում, ավելի ևս նվազ չափով՝ ժողովրդախոսակցական լեզվում։ Հմմտ.

Պոեզիան ոչ թե հայեցում է, այլ մաքառում, ճշմարտության զենք, *հակառակ դեպքում* բանաստեղծից չի պահանջվի իմացական ջիղ և մաքառման ոգի (Ե. Չարենցի մասին, ՍԱ)։ *Երկար ժամանակ* գրականագիտության մեջ, ո՛չ մեզանում, ո՛չ էլ Արևմուտքում, ժանրերի համակողմանի տեսություն ստեղծելու փորձեր գրեթե չեն արվել, *հակառակ պարագայում* ժանրերի պրոբլեմին չէր հատկացվի երկրորդական տեղ, այն չէր ստորադասվի մեթոդի և ոճի հարցերին (ՍԳ)։

Ծանոթություն: Ոմանք պայմանահակադրական հարաբերությամբ կապակցված նախադասությունների բայ-ստորոգյալների եղանակաժամանակային կիրառությունների հնարավորությունները սահմանափակում են՝ կարծելով թե այդպիսիք արտահայտվում են միայն այսինչ եղանակի այսինչ ժամանակածևով։ «Որպես կանոն, – կարդում ենք «Ժամանակակից հայոց լեզու, բարդ նախադասություն» գրքում, Եր., 1984, էջ 59 և հջ., – (պայմանահակադրական հարաբերություն նշող նախադասությունների) բաղադրիչ նախադասություններում ստորոգյալներն արտահայտվում են ապառնի ժամանակ ակնարկող բայածևերով»։ Այս դատումը սխալ է։ «Որպես կանոն» դրանք կարող են արտահայտվել այլևայլ եղանակների թե՛ ներկա, թե՛ անցյալ, թե՛ ապառնի ժամանակածևերով։ Այդ են փաստում վերը քննված բնագրային վկայությունները։

ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

§ 219. *Բարդ ստորադասական կոչվում է այն նախադասությունը, որի բաղադրիչները, կապված լինելով ստորադասական հարաբերությամբ, քերականորեն անհամարժեք են, մեկը լրացում է, մյուսը՝ լրացյալ:*

Ունի կառուցվածքային հետևյալ հատկանիշները:

1. Բարդ ստորադասական նախադասության շարահյուսական նվազագույն արտահայտությունը *երկբաղադրիչ* կառույցն է:

Ստորադասական հարաբերությունը բաղադրիչների միջև քերականական, ավելի ստույգ՝ շարահյուսական կարգ է, որ բնորոշվում է բովանդակության և արտահայտության հակադրամիասնությամբ:

Բովանդակությունը երկու բաղադրիչներից մեկի շարահյուսական *իշխողականությունն* է (*դոմինացիան*), ի հակակշիռ մյուսի, որը իշխողի (դոմինանտի) հանդեպ գտնվում է շարահյուսորեն *կախյալ* վիճակում. դա իշխվողն է:

Արտահայտությունը իշխողի և իշխվողի շարահյուսական հարաբերության դրսևորման ձևն է, այսինքն՝ բաղադրիչների կապակցության եղանակներն ու միջոցները, ձևակազմությունը՝ իր ընդհանուր ամբողջության մեջ:

2. Քերականորեն իշխող բաղադրիչը կոչվում է *գլխավոր* (կամ *գերադաս*) նախադասություն (եզր. բաղադրիչ), իշխվողը՝ *երկրորդական* (*ստորադաս* կամ *կախյալ*) նախադասություն (եզր. բաղադրիչ):

Գլխավոր և երկրորդական բաղադրիչների հարաբերությունը համեմատական է պարզ նախադասության մեջ գործառվող լրացման և լրացյալի հարաբերությանը: Իբրև լրացյալ հանդես է գալիս գլխավոր նախադասությունը, իբրև լրացում՝ երկրորդականը: Լրացյալի և լրացման հարաբերությունը քերականական բնավորություն ունի և չի շոշափում բաղադրիչների կարևորությունը կամ անկարևորությունը: *Գլխավոր (գերադաս) նախադասություն* և *երկրորդական (ստորադաս, կախյալ) նախադասություն* հասկացությունները միայն կարգային (կատեգորիալ) իմաստ ունեն և սոսկ նշում են յուրաքանչյուրի շարահյուսական դերը բարդ նախադասության, որպես մի կուռ ու ամբողջական կառուցվածքի մեջ:

Ինչ վերաբերում է դրանց արտահայտած իմաստներին, կարելի է ասել, որ անշուշտ բուն ասելիքը մեծավ մասամբ բովանդակում է գլխավոր նախադասությունը, բայց դա պարտադիր չէ: Սակավ չեն այն կառույցները, որտեղ գլխավորը գրեթե ոչինչ չի ասում, և հիմնական բովանդակությունը պարփակված է հենց կախյալ բաղադրիչում: Հմմտ.

Երնե՞կ Նրան, ով որ ինձ պես գիտե տանջվել սիրուց էսպես (ժող.):

Գլխավոր նախադասությունն է՝ *Երնեկ* (լինի) *Նրան*, որը ընդամենը դրսևորում է խոսողի կամ հեղինակի կամային-զգացական վերաբերությունը այն փաստի հանդեպ, որ արտահայտված է կախյալ բաղադրիչում: Բուն ասելիքը ամփոփված է երկրորդ բաղադրիչում, որն էլ երկրորդական նախադասությունն է:

Սակայն ասվածից բնավ չի բխում, որ եթե երկրորդ բաղադրիչն է բուն *իմաստի կրողը, ապա նա այդ իմաստը կարող է արտահայտել նաև ինքնուրույնաբար*: Այդ իմաստը երկրորդ բաղադրիչը կարող է արտահայտել միայն այն դեպքում, եթե հանդես է գալիս որպես լրացում առաջին բաղադրիչի (*Երնե՞կ Նրան*), ինչպես որ է՝ բնագրում:

Բուն ասելիքը կարող է արտահայտված լինել նաև գլխավոր նախադասության մեջ, որ, ինչպես նշվեց, առավել օրինաչափական է: Հմմտ.

Եթե ուզեն, *կամքով արի և արևի հրով վառված՝ Ինչե՞ր միայն չեն կատարի ամբոխները խելագարված* (ԵՉ):

Սակայն վերն ասվածից ևս չի բխում, թե գլխավոր այդ իմաստը գերադաս նախադասությունը կարող է արտահայտել նաև *ինքնուրույնաբար*: Անկախ նրանից, թե ո՛ր բաղադրիչում է արտահայտված բուն ասելիքը, ո՛րն է ածանցյալը, և որտե՛ղ է իմաստի ծանրության կենտրոնը, երկու բաղադրիչները միասին ներկայացնում են մի կուռ, անքակտելի ամբողջություն, որ կոչվում է *բարդ ստորադասական նախադասություն*:

3. Քերականորեն կախված լինելով գլխավոր բաղադրիչից՝ երկրորդական նախադասությունը իմաստային-լրացական տարբեր հարաբերություններով է կապվում նրա հետ, որը և կանխորոշում է ամբողջ բարդության կառուցվածքը և մասերի ձևակազմական արտահայտությունները:

§ 220. Հայերենին բնորոշ են լրացական երեք կարգի հարաբերություններ:

Ա. *Կախյալ նախադասությունը լրացնում է գլխավոր եզրի այս կամ այն որոշակի անդամին:* Սա գերադաս և ստորադաս բաղադրիչների շարահյուսական հարաբերության ամենից ավելի տարածված և ամենաօրինաչափ արտահայտությունն է: Հմմտ.

Քամին նավթի և խանձված մսի հոտը փչում էր դեպի *սարերը*, ուր կանգնած վրա գիշերվա ցողն էր կաթում (ԱԲ): Ինձ *թվում է*, թե ընդհանուր տետրի տողերից կայտառ վրնջում է Ցոլակը (Ն.տ.):

Ստորադաս բաղադրիչները համապատասխանաբար լրացնում են (դեպի) *սարերը* տեղի պարագային (որոշիչ) և *թվում է* ստորոգյալին (ենթակա):

Բ. *Կախյալ նախադասությունը լրացնում է գլխավորի մի խումբ անդամների կամ* այսինչ *որոշակի բառակապակցության:* Այս կառույցը ևս բավականաչափ տարածված է, թեև իր հաճախականությամբ զիջում է առաջինին: Հմմտ.

Դա *հրաժեշտի վերջին համբույրն* էր, որ մայրը դրոշմեց որդու արյունոտ ճակատին (ԳԹ): Այդ երեկո նայում եմ *մայրիկի սպիտակ, գեղեցիկ ձեռ-*

քերին, որոնք կրում են ասեղով աշխատելու հին հետքերի ազնվությունը (ԱՎ): Այնքան *շատ էի հոգնել*, որ ոտքերս հազիվ էի քարշ տալիս (ԴԴ):

Ստորադաս բաղադրիչները համապատասխանաբար վերաբերում են *հրաժեշտի վերջին համբույրը, մայրիկի սպիտակ, գեղեցիկ ծեռքեր* և *շատ էի հոգնել* բառակապակցություններին:

Գ. *Կախյալ նախադասությունը լրացնում է գլխավոր նախադասությանը՝ իր ընդհանուր ամբողջության մեջ:* Հմմտ.

Դռան փեղկը լավ չէր փակված, որով և խոսակիցներին տեսնելու և միևչև անգամ նրանց դիմաշարժը դիտելու բացվածք էր մնում (Մ):

Ստորադաս եզրը վերաբերում է գլխավոր բաղադրիչին՝ իր լրիվ ծավալով (*Դռան փեղկը լավ չէր փակված*):

ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

§ 221. Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչների կապակցությունը իրացվում է երկու եղանակով՝ ա) *սպասարկու բառերով* և բ) *առանց սպասարկու բառերի*:

Սպասարկու բառերով կապակցությունը, ինչպես նշվեց (§182), կոչվում է *նշույթավոր* կամ *զոդվածական*, առանց սպասարկու բառերի կապակցությունը՝ *աննշույթ* կամ *շարահարական*:

1. Կապակցության նշյալ եղանակներից յուրաքանչյուրը ունի իր արտահայտության միջոցները:

Նշույթավոր կամ զոդվածական կապակցության մեջ իբրև նշույթ կամ զոդ հանդես են գալիս ստորադասական շաղկապները և հարաբերականները, որ նույնանուն դերանուններն են: Սրանք բառական միջոցներ են՝ սպասարկու բառեր, որոնք կապակցում են գլխավոր և երկրորդական նախադասություններ:

Ստորադասական շաղկապները լինում են *մենադիր* և *զուգադիր*:

Մենադիր շաղկապներն են՝ *որ, թե, եթե, մինչ, մինչև, մինչև որ, մինչդեռ, հենց* (*որ*), *նախքան, որպեսզի, որովհետև, թե չէ, թե ինչ է, ինչ է թե* (վերջին երեքը հատուկ են ժողովրդախոսակցական լեզվին), *զի, վասնզի, քանզի* (սրանք էլ կիրառվում են խոսքին պատմական երանգ հաղորդելու միտումով):

Զուգադիր շաղկապներն են՝ *եթե...ապա,-թեկուզ* (և)... *բայց* (*սակայն*), *թեև... բայց* (*սակայն*), *չնայած* (*որ*)...*բայց* (*սակայն*), *քանի որ...ուստի* (և), *որովհետև...ուստի* (և) և այլն:

2. Բոլոր շաղկապները ստորադաս բաղադրիչում ունեն իրենց կայուն տեղը: Մենադիր շաղկապներից միայն *թե չէ*-ն է, որ դրվում է կախյալ նախադասության վերջում: Հմմտ.

Առաջին քարավանով հայրենադարձվողները գնացքից իջնում էին *թե չէ*, ծնկի էին գալիս՝ համբուրելու հայրենի հողը:

Մնացած բոլոր մենադիր շաղկապները դրվում են երկրորդական նախադասության սկզբում՝ անկախ սրա շարադասությունից: Հմմտ.

Ա. *Վերջադաս երկրորդականի սկզբում.*

Քո աննձն էլ միևչև անգամ նրան է պատկանում, ***քանի որ*** նրա ձեռքի տակ ես գտնվում (Ր):

Բ. *Առաջադաս երկրորդականի սկզբում.*

Թե կուզես, ծամի՛ր սեփական լեզուդ (ՊՍ):

Գ. *Միջադաս երկրորդականի սկզբում.*

Տեսնելով, *որ* տեղից չի շարժվում, թիկունքից զգուշորեն մոտեցա գազանին (ՎԱ):

Շաղկապի դիրքի փոփոխությունը շեղում է գրական նորմայից և յուրաքանչյուր մասնավոր դեպքում պետք է պատճառաբանված լինի ոճաբանորեն: Հմմտ.

Մշուշը *հենց որ* ցրվի, գնալն ավելի հեշտ կլինի (ԲՀ):

Կանոնարկված ձևերն են՝ *Հենց որ մշուշը ցրվի*, գնալն ավելի հեշտ կլինի, Գնալն ավելի հեշտ կլինի, *հենց որ մշուշը ցրվի* և կամ՝ Գնալը, *հենց որ մշուշը ցրվի*, ավելի հեշտ կլինի:

3. Ջուգադիր շաղկապների առաջին եզրը դրվում է երկրորդական նախադասության սկզբում, երկրորդ եզրը՝ գլխավորի: Հմմտ.

Թեպետ շատ դիմանկարներ կան սրտիս պատկերասրահում, *սակայն* փոքրաթիվ են այն նկարները [, որոնք հավատքի դավանանք են եղել ինձ համար դեպի մարդը] (ՎՓ):

Ջուգադիր շաղկապների թե՛ առաջին, թե՛ երկրորդ բաղադրիչը, թե՛ երկուսը միասին կարող են տեղաշարժվել, և դա նմանապես կլինի շեղում գրական նորմայից, քանի որ ի վերջո ոճական ամեն մի հնարանք այլ բան չէ, քան շեղում կանոնարկված համակարգից: Հմմտ.

Շատ դիմանկարներ կան *թեպետ* սրտիս պատկերասրահում, փոքրաթիվ են, *սակայն*, այն նկարները [...] և այլն:

4. Նշույթավոր կապակցություն են ստեղծում բոլոր *հարաբերականները* կամ, նորագույն դասակարգմամբ՝ *հարցահարաբերական դերանունները*[83]:

Դրանք են՝ *ով, ինչ, ինչպես, ինչպիսի, ինչքան, երբ, որ, որքան, որչափ, որտեղ, ուր*, մասամբ նաև՝ *որպիսի և ինչչափ:* Վերջին երկուսը արդեն հնացել են և շրջանառությունից հետզհետե դուրս են գալիս:

Հարաբերականները ևս ունեն իրենց կայուն տեղը և օրինաչափորեն դրվում են կախյալ բաղադրիչի սկզբում, թեև երբեմն, դարձյալ ոճական նկատառումներով, կարող են տեղաշարժվել: Հմմտ.

Ա. *Իր կայուն դիրքում.* Աղջիկը ձեռքերը խաչել է, *ինչպես* թևերը ծալում է սառած թռչունը (ԱԲ): *Երբ* իմ գնդակը սուլել է փախչող այծյամների հետևից, ճչացել եմ ես մանկան բերկրանքով (ՎԱ):

Բ. *Տեղաշարժված.* Վերև նետած քարը *ինչքան* ավելի վար է ընկնում, այնքան ավելի սաստկանում է նրա թափը (ԱԻ):

---

[83] Տե՛ս *Ա.Գ. Աբրահամյան*, ժամանակակից գրական հայերեն, եր., 1981:

5. Բոլոր հարաբերական բառերը կարող են բաղադրվել *որ* ստորադասական շաղկապով, որը, սակայն, զուրկ է կապակցական դերից: Կապակցությունն իրացնում է հարաբերականը: Հարաբերականին վերջից զուգադրվող *որ* շաղկապը կոչվում է *բարմատար*[84]:

Հմմտ.

Ինչքան որ հուր կա իմ սրտում, բոլորը՝ քեզ... (ԵՉ):

Շաղկապներով կապակցված նախադասությունը կոչվում է *շաղկապական*, հարաբերականներով կապակցվածները՝ *հարաբերական*[85]:

Շաղկապական և հարաբերական կախյալ նախադասությունները ունեն թե՛ ընդհանրություն, թե՛ տարբերություններ: Ընդհանրությունն այն է, որ երկու կառույցներում էլ կապակցությունն իրացվում է սպասարկու բառերով, այսինքն նշույթավոր է: Ավելի զգալի են, սակայն, տարբերությունները, որոնք հանգում են հետևյալին:

Ա. Բացի *որ* և *թե* շաղկապներից, որոնց իմաստը խիստ վերացարկված է, և որոնք կարող են կապակցել շարահյուսական այլևայլ գործառույթներով բնորոշվող կախյալ նախադասություններ, մնացած շաղկապները գերազանցապես մենիմաստ են և արտահայտում են իրենց խոսքի մասին հատուկ բաշխական այլևայլ հարաբերություններ: Շաղկապների բաշխական նշանակությունը բնորոշվում է նրանով, որ դրանք թեև զուրկ են նյութական իմաստից, սակայն ունեն շարահյուսական իմաստատարբերակիչ արժեք: Շաղկապի ընտրությունը արդեն իսկ կանխորոշում է կախյալ նախադասության իմաստը, հաճախ՝ նաև լրացական բնույթը: Հմմտ.

Ես ինձ լավ եմ զգում, *հենց որ օրերը տաքանում են.* կախյալ բաղադրիչը ժամանակի պարագա է, որտեղ արտահայտված գործողությանը հաջորդում է գերադաս եզրի գործողությունը:

Ես ինձ լավ եմ զգում, *մինչև օրերը տաքանում են.* կախյալը ժամանակի պարագա է, սակայն նրանում արտահայտված գործողությունը նախորդում է գերադասում նշված գործողությանը:

Ես ինձ լավ եմ զգում, *եթե օրերը տաքանում են.* կախյալը պայմանի պարագա է:

Ես ինձ լավ եմ զգում, *քանի որ (որովհետև) օրերը տաքանում են.* կախյալը պատճառի պարագա է:

Թեև օրերը տաքանում են, բայց (սակայն) ես ինձ լավ չեմ զգում. կախյալը զիջման պարագա է:

Բ. Հարաբերականները նախ և առաջ դերանուններ են, որով և պայմանավորված է նրանց խոսքամասային իմաստը: Դրանք ունեն նյութական իմաստ և արտահայտում են ընդհանուր, չտարբերակված առարկաներ, հատկանիշներ և հատկանիշների հատկանիշներ: Իրենց *այս* վերացարկված, չտարբերակված իմաստը նրանք մուծում են կախյալ նախադասութ-

[84] Այս գիտանվանումը, ինչպես և շատ այլ գիտանվանումներ, կազմել և առաջինը շրջանառության մեջ է դրել Մ.Աբեղյանը: Տե՛ս նրա Հայոց լեզվի տեսություն, էջ 610 և հջ.:

[85] Այս դասակարգումը ևս առաջինը կատարել է Մ. Աբեղյանը. տե՛ս նշվ. աշխ., էջ 609:

յան մեջ, որով և վերջինս ստանում է «ընդհանուր անորոշ կամ ընդհանրացական նշանակություն»[86]:

Գ. Շաղկապները, նյութական իմաստից զուրկ լինելով, կատարում են *սոսկ* կապակցական դեր և չեն դառնում նախադասության անդամ, մինչդեռ հարաբերականները ունեն երկակի գործառույթ. նրանք կապակցում են բարդ նախադասության բաղադրիչներ և միաժամանակ հանդես են գալիս որպես կախյալ նախադասության լիարժեք անդամ՝ դառնալով ենթակա, խնդիր, պարագա և այլն:

6. *Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչների կապակցության մյուս եղանակը շարահարությունն է*: Սա աննշույթ կապակցություն է, որի մեջ սպասարկու բառեր չեն օգտագործվում: Շարահարությունը առավելապես հատուկ է ժողովրդախոսակցական լեզվին, որտեղից էլ այն թափանցում է գրական-գեղարվեստական, մանավանդ չափածո խոսքի մեջ:

Շարահարական կապակցության դեպքում, անշուշտ, բաղադրիչների շարահյուսական հարաբերությունները միշտ չէ, որ այնպես հստակ են դրսևորվում, ինչպես զոդվածական կապակցության մեջ: Բայց և այնպես շատ ու շատ կառույցներում նման հարաբերությունները տարբերակվում են որոշակիորեն, առանց երկվության:

> ***Ծանոթություն***: Կապակցության այս եղանակը հանդիպում է աշխարհի շատ լեզուներում: Այն գալիս է վաղնջական ժամանակներից, այնքան հին է, որ ոմանց կարծիքով՝ նույնիսկ նախորդել է առհասարակ համադասության և ստորադասության շարահյուսական կարգերին: Ծագումով լեհ ֆրանսիացի հայտնի լեզվաբան Ս.Կարցևսկին, օրինակ, *համադասության և ստորադասության* քերականական կարգերի գոյացումը կապում էր շարահարության հետ: «Համադասությունը և ստորադասությունը, – գրում էր նա, – ծագում են շարահարական կապակցությամբ նախադասություններից»[87]:
>
> Որոշ թեությամբ, բայց նույն միտքն է զարգացնում նաև Ա. Պեշկովսկին: «Շարահարությունը, – ասում է նա, – ամենայն հավանականությամբ ավելի հին է և՛ համադասությունից, և՛ ստորադասությունից: Հին ժողովրդական և հանապազօրյա խոսակցական լեզվում մենք ամեն քայլափոխի շարահարական կապակցության ենք հանդիպում այնպիսի նախադասություններում, որտեղ ժամանակակից զուտ գրական խոսքը հրամայաբար պահանջում է շաղկապներ»[88]:

7. Շարահարական կապակցության հիմնական միջոցներն են հընչերանգը և բաղադրիչ-նախադասությունների բայ-ստորոգյալների եղանակաժամանակային որոշակի կիրառությունները:

Վերն արդեն ասվեց (§ 187), որ որոշ աննշույթ կառույցներում ձայնային համապատասխան ելևէջավորումը՝ զուգորդված բաղադրիչների բայ-ստորոգյալների եղանակաժամանակային որոշակի գործառույթներով, ինք-

---

[86] Տե՛ս *Սամուկ Արեղյան*, նշվ. աշխ., էջ 609-610:

[87] Տե՛ս ***S.Karcevski***, Du dualisme asymetrique du signe lingvistique, CF, s. XIV.

[88] ***А.М. Пешковский***, Русский синтаксис в научном освещении, М., 1956, стр. 474.

նին գոյացնում է ստորադասական կապակցություն՝ զանազան հարաբերություններով:

Գրավոր խոսքում նվազում է հնչերանգի դերը, քանի որ այն դժվար է վերարտադրել կետադրական նշանների թերակատարության պատճառով: Այս դեպքում ավելի ևս կարևորվում է բայ-ստորոգյալների՝ հավելյալ կերպով շարահյուսական հարաբերությունների բնույթը որոշելու դերը:

§ 222. Գերադաս և ստորադաս նախադասությունների կապակցությանը նպաստող այլ միջոցներ ևս կան: Դրանք կապակցական *օժանդակ միջոցներ* են, որոնք ավելի սերտ են դարձնում բաղադրիչների իմաստային և շարահյուսական կապը՝ նպաստելով բարդ ստորադասական կուռ ու կառուցիկ նախադասության ստեղծմանը:

1. Օժանդակ միջոցներից մեկը ձևական անդամն է գլխավոր նախադասության մեջ՝ *հարաբերյալը:* Սա այն անդամն է, որին ըստ էության հարաբերում, որի վերացարկված, չտարբերակված բովանդակությունը տարբերակում ու որոշակիացնում է կախյալ նախադասությունը: Հարաբերյալը, կարելի է ասել, երկրորդական նախադասության մի տեսակ «պատգամավորն» է գլխավորի մեջ:

Իբրև հարաբերյալ գործառվում են *նա, նրանք, ինքը, իրենք, այն, այնչափ, այնպես, այնպիսի, այնտեղ, այնքան* և այլ դերանուններ: Այս դերանուններից նրանք, որոնք հոլովվում են, կարող են հանդես գալ թե՛ ուղղական և թե՛ թեք հոլովներով: Հմմտ.

Ինչպես որ օձն է քարը ականջները խցկում, Որ չլսի ձայնը ճարտար թովչի, *Այնպես* էլ դու, արքա՛, դու խցկեցիր ունկդ, Դու փակեցիր, արքա՛, լսողությունը քո... (ՎԴ): Եվ *այն* հասկացա, որ դրամի պես մաշվել են արդեն բառերը բոլոր (ՊՍ): Թող մոտենա՛ իմ սեղանին *նա*, ում ձեռքը կոշտացել է մուրճից, բահից ու եղանից (Ն.տ.): Սիրիր *նրա՛ն*, ով բարի է, առաքինի ու գեղեցիկ (ԵՌ):

Հարաբերյալը, արտահայտված լինելով անձնական և ցուցական դերանուններով, պահում է իր խոսքամասային իմաստը և նշում ընդհանուր, չտարբերակված անձ (*նա, նրանք* և այլն), իր, իրողություն (*այն, նա*), որակական և քանակական հատկանիշներ (*այնպիսի, այնքան, այնչափ*), հատկանշի հատկանիշ (*այնպես,այնքան, այնչափ*) և այլն:

Իր հենց այս ընդհանուր, չտարբերակված իմաստի պատճառով հարաբերյալը յուրովի խնդրում է կամ պահանջում իր իմաստի որոշակիացում, բովանդակության բացահայտում: Այդ դերն էլ կատարում է ստորադաս նախադասությունը: Տե՛ս վերի օրինակները, այլև՝

Եվ դրա վրա *այնքան* վիճեցին, որ գործն իսկական կռվի հասցրին (ՂԱ):

Երբ հեղինակն ասում է՝ Եվ դրա վրա *այնքան* վիճեցին, մնում է անորոշ ու անհասկանալի, թե որքա՞ն վիճեցին: *Այնքան* հարաբերյալը պահանջում է իր իմաստի քանձրացում: Եվ կախյալ բաղադրիչն էլ հենց կոչված է քանձրացնելու *այնքան* հարաբերյալի իմաստը. *Այնքան* վիճեցին, որ գործն իս-

կական կռվի հասցրին և այլն: Ըստ որում՝ թեև հարաբերյալը գրեթե ոչինչ չասող ձևական անդամ է գլխավոր բաղադրիչում, բայց յուրովի պարտադրում է կախյալ եզրի առկայությունը՝ դրանով իսկ սերտացնելով կապը երկու գերադաս և ստորադաս բաղադրիչների միջև:

. ***Ծանոթություն.*** Որոշ քերականներ անհիմն կերպով նեղացնում կամ ընդարձակում են հարաբերյալի արտահայտության սահմանները: Գ.Լ.Գարեգինյանի «Ժամանակակից հայոց լեզու. բարդ նախադասություն» աշխատության մեջ կարդում ենք. «Հարաբերյալները (հարաբերյալ բառերը) ցուցական, երբեմն նաև անորոշ դերանուններով արտահայտված այն բառերն են, որոնք օգտագործվում են գերադաս նախադասության մեջ, և որոնց չտարբերակված նյութական բովանդակությունը բացահայտվում է ստորադաս նախադասությամբ» (էջ 30):

Այստեղ հարաբերյալի սահմանները մի կողմից՝ նեղացված են, մյուս կողմից՝ ընդարձակված: *Անձնական երրորդ դեմքի* դերանունները հարաբերյալների շարքից հանված են, *ցուցական բոլոր դերանունները*, առանց շարքերի տարբերակման, և *անորոշ դերանունները* դիտված են որպես հարաբերյալ: Երկու մոտեցումներն էլ սխալ են ու մերժելի: Ցուցական դերանուններից *միայն երրորդ* շարքն է դառնում հարաբերյալ, ինչպես և անձնական դերանուններից *միայն երրորդ դեմքը*.

Այն տեսակետը, որ միայն երրորդ շարքը (և երրորդ դեմքն) է հարաբերյալ դառնում, հեշտությամբ ապացուցվում է փոխակերպումով: Բարդ նախադասությունը փոխակերպելիս գլխավորում առկա երրորդ շարքի կամ երրորդ դեմքի դերանունը օտարվում է (հասկանալի է, եթե հարաբերյալ է), նրա տեղը գրավում է կախյալ նախադասության փոխակերպված տարբերակը, մինչդեռ առաջին և երկրորդ շարքերի դերանունները մնում են անփոփոխ: Հմմտ.

1. Կարդա՛ *այն* նամակը, որ ուղարկված է գյուղից: – *Կարդա՛ գյուղից ուղարկված նամակը*.

2.Կարդա՛ *այդ* նամակը, որ ուղարկված է գյուղից: – *Կարդա գյուղից ուղարկված այդ նամակը*.

3. Կարդա՛ *այս* նամակը, որ ուղարկված է գյուղից: – *Կարդա՛ գյուղից ուղարկված այս նամակը*.

Դժվար չէ նկատել, որ *այս* և *այդ* դերանունները, ինչպես որ կային նախնական տարբերակում, այնպես էլ առկա են փոխակերպված նախադասության մեջ: Դուրս է ընկել միայն երրորդ շարքի *այն* դերանունը, որը հենց է՛ հարաբերյալ:

Ճիշտ այդպես հարաբերյալ չեն *մի, մի քանի, որոշ* անորոշ, այլև՝ որոշյալ՝ *բոլոր, ամեն* և այլ նման դերանունները: Հմմտ.

Կարդա՛ *մի* (*մի քանի*) նամակ, որ ուղարկված է (են) գյուղից: – Կարդա՛ գյուղից ուղարկված *մի* (*մի քանի*) նամակ:

Կարդա՛ *բոլոր* նամակները, որոնք ուղարկված են գյուղից: – Կարդա՛ գյուղից ուղարկված *բոլոր* նամակները և այլն:

2. Իբրև կապակցության օժանդակ միջոց են ծառայում նաև ստորադաս և գերադաս բաղադրիչներում եղած *ընդհանուր անդամները*. Ընդհանրությունը, ինչպես և համադասական կառույցներում, կարող է ունենալ երկու արտահայտություններ:

Ա. Բաղադրիչներից մեկում առկա անդամը *զեղչվում է* մյուսում և ընկալվում է զորությամբ: Այդպես շատ հաճախ ենթական է զեղչված լինում գերադաս կամ ստորադաս եզրերից մեկում, որով գոյանում են յուրօրինակ *միավորական նախադասությունների* ստորադասական հարաբերությամբ: Հմմտ.

Եվ, իրոք, *աքլորը* թեև շատ էր անհանգստացած իր ընտանիքի վիճակով, բայց շարունակ իրեն պահում էր վտանգի սահմաններից դուրս (ՎԱ): Երբ որ *ջուրը* վարարում է (...), թույլտվություն չի վերցնում իրեն հսկող ճեղ քարափից (ՊՍ):

Ենթակաները *(աքլորը, ջուրը)* ընդհանուր են գերադաս և ստորադաս բաղադրիչներում, որով ավելի ևս սերտանում է կապը դրանց միջև:

Ձեղչված անդամը վերականգնելու դեպքում կստացվեն անհարթ կառույցներ, ինչպես՝ *Աքլորը* թեև շատ էր անհանգստացած (...), բայց *աքլորը* շարունակ իրեն պահում էր վտանգի սահմաններից դուրս, և այլն:

Բ. Բաղադրիչներից մեկում առկա որևէ միավոր մյուսում *փոխարինվում է* այլ մի խոսքի մասով: Այդպես *գոյականական* անդամը կից եզրում փոխարինվում է *դերանվամբ*: Հմմտ.

Եթե ժամանակին *հսկաներ* են ապրել, իհարկե այդ ծորերը *նրանց* համար հասարակ *անուններ* են եղել (ԱԲ): Թեև *գետը* կորել էր աչքիցս, բայց դեռ երկար-երկար լսվում էր *նրա* մոլեգին շաչյունը (ՍԽ):

Կախյալ բաղադրիչներում կիրառված *գետը* և *հսկաներ* գոյականները գերադաս եզրերում փոխարինվել են *նա* և *նրանք* դերանուններով (*գետը* → *նրա* շաչյունը, *հսկաներ* → *նրանց* համար): Փոխարինման այս օրինաչափությունը ևս հայտնի չափով օժանդակում է գերադաս և ստորադաս բաղադրիչների կապակցության սերտությանը:

3. Կապակցությանը օժանդակող միջոց է նաև *շարադասությունը*: Շարահյուսական այս իրողությունը ընդգրկում է ոչ միայն գերադաս և ստորադաս բաղադրիչների շարադասությունը, այլև հաճախ՝ այդ իսկ բաղադրիչների համապատասխան անդամների դիրքը և դասավորության հաջորդականությունը: Նաև իր բաղադրիչների դիրքով և նրանց միավորների անհրաժեշտ շարադասությամբ է ձևավորվում բարդ նախադասությունը՝ իբրև ամբողջական ու ավարտուն շարահյուսական միավոր:

Բարդ ստորադասական նախադասության շարադասությունը քննելիս ելակետ է ծառայում գերադաս բաղադրիչը, որի հանդեպ ստորադաս եզրը կարող է գրավել տարբեր դիրքեր: Նրա գրաված այդ դիրքերը երեքն են: Ա. Ստորադաս բաղադրիչը կարող է *նախորդել* գերադասին, բ. գերադաս եզրը կարող է *ընդմիջվել* ստորադաս բաղադրիչով, գ. ստորադաս եզրը կարող է *հաջորդել* գերադասին: Ըստ այդմ ստանում ենք՝ *նախադաս, միջադաս* և *վերջադաս* (*հետադաս*) կախյալ նախադասություններ:

Կախյալ նախադասության՝ գերադասի հանդեպ գրաված այս երեք դիրքերը պայմանավորված են թե՛ իմաստային, թե՛ կառուցվածքաշարահյուսական գործոններով:

Իմաստային գործոնը կախյալ բաղադրիչի արտահայտած բովանդակության հարաբերությունն է գերադասին: Կառուցվածքաշարահյուսական գործոնները այդ հարաբերության արտահայտության եղանակներն են ու միջոցները: Այս երկու իրողությունները կարող են հանդես գալ առանձին-առանձին և կամ միասնաբար:

§ 223. Համադրելով այդ գործոնները՝ կարող ենք նկատել բարդ ստորադասական նախադասության բաղադրիչների շարադասության երկու կարգի դրսևորումներ՝ ա. *պարտադիր* և բ. *կամընտիր* (*ֆակուլտատիվ*):

Ա. *Պարտադիր շարադասությունը* ենթադրում է գերադաս և ստորադաս բաղադրիչների կայուն, անփոփոխ և անտեղաշարժելի դասավորություն:

1. *Պարտադիր նախադաս* դիրք են գրավում բոլոր այն կախյալ նախադասությունները, որոնք կապակցվում են զուգադիր շաղկապներով՝ *թեև...բայց* (*սակայն*), *թեպետ և ... բայց* (*սակայն*), *եթե...ապա* (*հապա*), *քանի որ...ուստի* և այլն: Հմմտ.

Եթե մարդիկ հնարավոր են համարում զրպարտել առանց որևէ հիմքի, հապա ինչե՞ր չեն անի [, եթե նկատեն այս փաստը] (ՆՉ): *Թեպետ կույր չեմ բնավ*, սակայն շուրջս նայում [ու չեմ տեսնում ոչինչ] (ՊՍ): *Որովհետև պետք էր գնալ իշխանների մոտ*, ուստի Արտակը վեր կացավ (ԴԴ) և այլն:

Ոճական, տաղաչափական, տրամաբանական շեշտադրության կամ այլ նկատառումներով ստորադաս բաղադրիչի որևէ անդամ կամ բառակապակցություն տեղաշարժվելով կարող է ընկնել զուգադիր շաղկապի առաջին բաղադրիչից առաջ: Հմմտ.

Երեկոյան դեմ նրանք թեև դեռ աղոտ են, բայց շարժվում են (ԱԲ): *Օ՜, Վարդապետ* (...) *մեռած* թեպետ, բայց և անթաղ (ՊՍ), այսինքն՝ թեպետ մեռած ես, բայց և անթաղ ես և այլն:

2. *Պարտադիր նախադաս* դիրք է գրավում ժողովրդախոսակցական ոճին հատուկ *թե չէ* շաղկապով կապակցվող բաղադրիչը, որ արտահայտում է ժամանակի հարաբերություն: Հմմտ.

[Գորտին] *դնում է անկողնու վրա թե չէ*, մին էլ էն է տեսնում [ես գորտի կաշին տրաքեց] (ՀԹ):

3. *Պարտադիր վերջադաս* դիրք են գրավում *ստորոգելիական, հետևանքային, ամբողջ գլխավորին լրացնող* ստորադաս բաղադրիչները: Հմմտ.

Սա թերևս նրանցից էր, *որոնց տեսել էի մարգարտազարդ զգեստով «Ջազբանդ» պարասրահը մտնելիս* (ԱՎ): Օրական հիսուն-վաթսուն գլանակ էր ծխում, *որից գիշերները չէր կարողանում քնել* , և այլն:

Բ. *Կամընտիր շարադասությունը* բաղադրիչների դասավորության այն կարգն է, ըստ որի կախյալ նախադասությունը ազատորեն տեղաբաշխվում է *գլխավորից առաջ, գլխավորից հետո* կամ *նրա միջում:*

Կամընտիր շարադասությունը ունի երկու արտահայտություն՝ *մասնակի* և *լիակատար.* Մասնակի կամընտիր շարադասությունը բնորոշվում է նրանով, որ կախյալ բաղադրիչի տեղաշարժվելու հնարավորությունը սահմանափակ է. առկա երեք դիրքերից կարող է գրավել երկուսը միայն: Կախյալը կարող է հաջորդել գերադասին կամ թափանցել նրա մեջ, որով կգոյանան վերջադաս կամ միջադաս կախյալ նախադասություններ:

Մասնակի կամընտրությամբ շարադասվում են այն կախյալ նախադասությունները, որոնք կապակցվում են գերադաս բաղադրիչի առավելապես գոյականական անդամի կամ գոյականական դերանվամբ արտահայտված

որևէ անդամի հետ: Դրանք նշում են լրացյալի որակական, քանակական, ստացական-հատկացական որևէ հատկանիշ կամ բացահայտում նրա էությունը: Հմմտ.

Վերջադաս դիրքով. 1. Մթնածորում այժմ էլ թավուտ անտառներ կան, *ուր ոչ ոք ոտք չի դրել* (ԱԲ): 2. Ցավ կար նրանց սրտում, *որոնք բահ ու քլունգով արագ փորում էին խոր փոսեր* (Ն.տ.): 3. Ակամա կուսակցական պայքարի մեջ մտա նաև ես, *որ այդքան հեռու էի կանգնած քաղաքականությունից:*

Միևնույն կախյալ նախադասությունները՝ *միջադասված.* Թավուտ անտառներ, *ուր ոչ ոք ոտք չի դրել*, այժմ էլ կան Մթնածորում: 2. Նրանց սրտում, *որոնք բահ ու քլունգով արագ փորում էին խոր փոսեր*, ցավ կար: 3. Նաև ես, *որ այդքան հեռու էի կանգնած քաղաքականությունից*, ակամա մտա կուսակցական պայքարի մեջ, և այլն:

Լիակատար կամընտրությամբ շարադասվում են առավելապես *խնդրային* և *պարագայական* հարաբերություններ արտահայտող կախյալ նախադասությունները: Այստեղ հեղինակը կամ խոսողը ի զորու է կատարելու լիակատար ընտրություն՝ հնարավոր բոլոր երեք տարբերակներից վերցնելով ցանկալին: Նման ընտրությունը թույլ է տալիս հատուկ շեշտադրել այս կամ այն միավորը, բառակապակցությունը, կախյալ կամ գերադաս նախադասությունները, անհատականացնել խոսքը, ոճավորել, երանգավորել այն: Հմմտ.

Բնագրային տարբերակներն են. 1. *Ում որ հաղթել չէր կարողանում*, Շողոմելով կանչում էր նա (ՀԹ): 2. Ես կուզեի հարազատ ընկեր լինել նրանց, *որոնք մոռացված են բանտերում անել* (ՎՏ): 3. Ես շուռ տվեցի կյանքի ավազե ժամացույցը, *որպեսզի հետ-հետ քայլելով՝ միանամ իմ սիրառատ մանկությանը* (ԱՎ):

Փոփոխված տարբերակներն են. 1. ա. Շողոմելով կանչում էր նա, *ում որ հաղթել չէր կարողանում*, բ. Նա, *ում որ հաղթել չէր կարողանում*, կանչում էր շողոմելով: 2. ա. *Որոնք մոռացված են բանտերում անել*, նրանց կուզեի ես հարազատ ընկեր լինել, բ. Նրանց, *որոնք մոռացված են բանտերում անել*, կուզեի ես հարազատ ընկեր լինել: 3. ա. *Որպեսզի հետ-հետ քայլելով՝ միանամ իմ սիրառատ մանկությանը*, ես շուռ տվեցի կյանքի ավազե ժամացույցը, բ. Ես, *որպեսզի հետ-հետ քայլելով՝ միանամ իմ սիրառատ մանկությանը*, շուռ տվեցի կյանքի ավազե ժամացույցը:

Կամընտրանքը անշուշտ վերաբերում է նաև բաղադրիչների շարահյուսական նվազագույն միավորներին՝ նախադասության անդամներին, որոնք կարող են շարադասվել նաև այլ կերպ, քան են բերված տարբերակներում: Դա և՛ս անհատական կամքի արտահայտություն է:

§ 224. Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչները կապակցվում են *կայուն կաղապարներով*, որոնք դրսևորվում են վերը քննված եղանակներով ու միջոցներով:

Հիմքում ունենալով ստորադասական հարաբերության արտահայտ-

ման բոլոր եղանակներն ու ձևերը՝ ստանում ենք շարահյուսական կապակցության հետևյալ կաղապարները:

Ծանոթություն: Կաղապարները նշվում են՝ անկախ բաղադրիչների դասավորման հատկությունից: Առկա սպասարկու բառերը նշվում են իրենց անվանումներով, բացակա բառերը՝ *զրո* բառով:

1. *Հարաբերյալ → հարաբերական.* -- Օ,՞ կույր է *ճա, ով* չի տեսնում երկինք հասած կրակը թեժ (ԵՉ): Վերջին եկողները վերցնում էին *այն, ինչ* առաջինները չէին վերցրել՝ անարժեք լինելու պատճառով (ԱԲ):

2. *Զրո → հարաբերական.* -- Տունը , *ուր* ապրում էր Հասոն, գտնվում էր գյուղի ծայրին (Վրթ. Փ.): *Երբ* կռացավ՝ ոտքն ասպանդակի մեջ դնելու, Ասյայի զգեստի տուտը բարձրացավ [, և Սաքանի աչքին ընկավ նրա սպիտակ շորը] (ԱԲ):

3. *Հարաբերյալ → շաղկապ* – [Տկլո՞ր էր Սալբին, շոր չկա՞ր հագին, թե՞] *այնքան* էր թրջվել, *որ* շորը չէր շոշափվում (ԱԲ): Այդ *նրանից* է, *որ* Արարատը այդպես պարպված է, Այդ *նրանից* է, *որ* Արարատի ճամփան փակված է (ՍԿ):

4. *Զրո → շաղկապ.* -- Սկզբում այդ հեռագիրն ինձ այնքան էլ չազդեց, *որովհետև* արդեն նախապատրաստված էի (ՆԴ): Եվ թվում է ինձ, *թե* մեր մարմինը ո՛չ թե հողից է, այլ արցունքներից (ՈԴ):

5. *Շաղկապ → շաղկապ (զուգադիր շաղկապ).* -- *Եթե* իմ ամուսինն է, *ապա* անպատճառ ինձ համար է գործում այդ բարբարոսությունը (Ր): *Թեպետև* մեր խառնվածքը անհաստատ չէ այդ աստիճան (...), *բայց* ամեն ինչ իր պահն ունի (ՊՍ):

6. *Հարաբերյալ → զրո.* -- Հենց *էն* եմ տեսնում՝ մութն, անգետ մարդիկ, էլ մենք ենք մեջտեղ տանջվում ամեն օր (ՀԹ): *Այնպես* ես խոսում՝ մարդ բան չի հասկանում:

7. *Զրո → զրո* . -- Բայց դու հասկացի՛ր՝ այդ ինչ-որ մեկից փրկել եմ քեզ (ՀՍ): Մի լա՛վ զննիր՝ այս տունը մյուս կողմով դեպի մի ուրիշ փողոց ելք չունի՞ (ՀՍՅԵ):

Այս յոթ կաղապարները կիրառական տեսակետից համարժեք չեն: Գրական հայերենում առավել մեծ հաճախականություն ունեն առաջին հինգը, վերջին երկուսը առավելապես հանդիպում են ժողովրդախոսակցական լեզվում, մասամբ նաև գրական-գեղարվեստական աղբյուրներում:

ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

§ 225. Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչների հարաբերությունը գերազանցապես համեմատական է պարզ նախադասության շարահյուսական նվազագույն միավորների հարաբերությանը:

Միայն բայ-ստորոգյալի վերապահությամբ՝ պարզ նախադասության

բոլոր անդամները ըստ էության կարող են փոխարինվել ստորադաս նախադասությամբ, ներառյալ՝ ստորոգելին: Այդ իսկ պատճառով կախյալ բաղադրիչների տիպաբանական դասակարգման խնդիրը լուծելիս շարահյուսագետները այն ուղղակիորեն կապում են պարզ նախադասության միավորների հարաբերությունների տարբերակման հետ:

Շարահյուսագիտության պատմության մեջ կախյալ նախադասությունները առաջին անգամ այս հիմունքով առանձնացրել է Ա.Խ. Վոստոկովը: Ըստ նրա՝ «Մեկ բառով արտահայտված որևէ որոշիչ կամ խնդիր, որպես ենթակայի կամ ստորոգյալի լրացում, կարող է փոխարինվել առանձին ստորադաս նախադասությամբ»[89]:

Այսպիսով՝ առաջին անգամ կախյալ նախադասությունը դիտվում է իբրև *պարզ նախադասության որևէ անդամի իմաստային ծավալում:*

Այս ըմբռնումը իր հետագա զարգացումը ստացավ Ֆ.Ի. Բուսլաևի աշխատություններում: Նա ավելի զարգացրեց իր նախորդի մշակած տեսությունը և հստակություն մտցրեց նրա առաջադրած սկզբունքների մեջ: Ֆ. Բուսլաևը որոշակիորեն սահմանեց բարդ ստորադասական նախադասության բաղադրիչների դասակարգման գիտական հիմունքները: «Պարզ նախադասության *յուրաքանչյուր անդամ*,– գրում էր նա,– *բացի ստորոգյալից, կարող է արտահայտվել կախյալ նախադասությամբ*»[90]:

Ա.Խ. Վոստոկովի և Ֆ.Ի. Բուսլաևի մշակած այս տեսությունը, որ կոչվեց *քերականատրամաբանական* կամ *կառուցվածքատրամաբանական,* դարձավ շարահյուսագիտական հետագա բոլոր ուսումնասիրությունների հիմքը: Այն ընդունվեց նաև հայ քերականագիտության մեջ:

Ստորադասական կապակցությունը բարդ նախադասության մեջ ճիշտ այդ հիմունքով է դասակարգում Ստ. Պալասանյանը[91], ավելի ուշ՝ նաև Մ. Աբեղյանը[92]:

Սա գործառական (ֆունկցիոնալ) դասակարգում էր, որ հիմնված էր կախյալ բաղադրիչի՝ գերադաս նախադասության հանդեպ ունեցած շարահյուսական հարաբերության բնույթի և դրա դրսևորման ձևերի անբաժանելիության սկզբունքի վրա:

§ 226. Ստորադասական կապակցությունը ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է ո՛չ միայն ճանաչել կախյալ նախադասության գործառական հատկությունը, այլև այդ հատկության արտահայտման շարահյուսական ձևակազմությունը: Այլ կերպ ասած՝ հարկ է հաշվի առնել գլխավոր և կախյալ նախադասությունների ո՛չ միայն իմաստային հարաբերությունները, այլև այդ հարաբերությունների ձևավորման եղանակներն ու միջոցները: Եթե այդ հարաբերությունները դիտարկենք որպես լեզվական համապա-

---

[89] ***А.Х. Востоков,*** Русская грамматика, М., 1842, стр. 224.

[90] ***Ф.И. Буслаев***, Опыт исторической грамматики русского языка, М., 1858, стр. 212. Ընդգծումը մերն է – Ա.Պ.:

[91] *Ստ. Պալասանեան*, Ընդհանուր տեսութիւն արևելեան նոր գրաւոր լեզուի հայոց, Թիֆլիս, 1870, այլև Քերականութիւն մայրենի լեզուի, Տփղիս, 1894, էջ 225:

[92] *Մանուկ Աբեղյան,* Հայոց լեզվի տեսություն, էջ 603:

տասխան օրինաչափության բովանդակություն, ապա դրանց քերականական արտահայտությունն էլ կլինի հիշյալ բովանդակության նյութական ձևը:

Այսպիսով՝ քննությունը կատարվում է բովանդակության և ձևի անխախտ միասնության հիմունքով: Սա կառուցվածքաիմաստային կամ կառուցվածքատրամաբանական դասակարգման ելակետային սկզբունքն է:

Առաջնորդվելով այդ սկզբունքով՝ ստանում ենք երկու կարգի բարդ ստորադասական նախադասություններ՝ ա) պարզ նախադասության անդամներին հարաբերակցող կախյալ նախադասությամբ բարդ նախադասություններ (պարզ *ստորոգյալի* վերապահությամբ) և բ) պարզ նախադասության անդամներին չհարաբերակցող կախյալ նախադասությամբ բարդ նախադասություններ:

Կախյալ բաղադրիչները անվանվում են՝ ըստ գերադաս նախադասության հանդեպ ունեցած հարաբերության:

Ա. ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՀԱՐԱԲԵՐԱԿԻՑ ՍՏՈՐԱԴԱՍ ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

1. ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 227. *Ենթակայական կախյալ նախադասությունը վերաբերական կերպով արտահայտում է որևէ առարկա կամ անձ, որին հատկանիշ է ստորոգվում գերադաս բաղադրիչի ստորոգյալի միջոցով:*

Իր կազմում ենթակայական կախյալ բաղադրիչ ունեցող նախադասության կառուցվածքային հատկանիշներն են.

1. Գլխավոր բաղադրիչում ենթական բացակայում է, քանի որ այն արտահայտված է որպես առանձին՝ ենթակայական կախյալ նախադասություն: Համմտ.

Պատահում էր, *որ ծմռան գիշերներին մեզնից մեկնումեկը, հանկարծ զարթնելով, գլուխը հանում էր վերմակի տակից* (ԱԲ): [Նրա կախ ընկած լեզուն արնոտ էր:] Երևում էր, *որ լիզել էր վերքի արյունը* (Ն.տ.):

2. Գլխավոր բաղադրիչում առկա է ձևական ենթակա՝ հարաբերյալ: Կախյալ նախադասությունը նյութականացնում է հարաբերյալի իմաստը՝ որոշակի բովանդակություն հաղորդելով նրան: Իբրև հարաբերյալ կիրառվում են անձնական երրորդ դեմքի և ցուցական երրորդ շարքի առարկայանիշ դերանունները (*նա, նրանք, ինքը, իրենք, այն*), որոնք որպես ենթակա օրինաչափորեն կիրառվում են ուղղական հոլովով: Համմտ.

Ով որ քեֆի չի նստել Թումանյանի պալատում, Նա չի տեսել դեռ խնդում [. աշխարհ չի տեսել] (ՎՏ):

Ծանոթություն: Այն դերանունը, հոլովի կարգից զուրկ լինելով հանդերձ, ձևական ենթակա է դառնում՝ նշանակելով մի բան անող կամ լինող առարկա, երևույթ: Համմտ.

Նրան հուզում էր և *այն, որ հայրը դրա համար իր կամ քրոջ կարծիքը չի հարցրել* (ՍՋ): Չի ներվում և *այն, ինչը կոչվում է առավելություն* (ՊՍ):

3. Գերադաս բաղադրիչում կիրառվող հարաբերյալի ընտրությունը պայմանավորում է ստորադաս նախադասության բովանդակությունը: Եթե գլխավոր բաղադրիչում գործառվում է *այն* հարաբերյալը, կախյալ եզրը իրանիշ իմաստ է ստանում, անձնանիշ իմաստ է ստանում, եթե կիրառվում է *նա* հարաբերյալը: Տե՛ս վերի օրինակները:

4. Կապակցությունը լինում է *նշույթավոր* և *անշույթ* կամ *շարահարական*.

Իբրև նշույթ օրինաչափորեն օգտագործվում են *որ* և *թե* շաղկապները և *որ(ը), ով, ինչ* հարաբերականները:

Իրենց խոսքամասային բովանդակության համեմատ՝ *որ* շաղկապը արտահայտում է հաստատական, *թե*-ն՝ ավելի թեական-երկբայական իմաստ: Հմմտ.

Թվում է, *որ* դու տխրությամբ անքուն ինձ ես որոնում աղոտ աշխարհում (ՎՍ): Թվում էր, *թե* հաղթանդամ հեծյալը նստած էր մի սև մտրուկի (ՋԹ):

Միևնույն *թվում է* (*էր*) գերադաս նախադասությանը ստորադասված երկու կախյալ նախադասություններից *թե*-ով կապակցվածը արտահայտում է ավելի հավանական գործողություն, *որ*-ով կապակցվածը՝ համեմատաբար ստույգ:

Եթե կախյալ բաղադրիչը արտահայտում է անուղղակի հարցում, այն կապակցվում է *թե* շաղկապով: Հմմտ.

Արդյոք իմացվե՞ց, *թե* այն սոսկալի արյունոտ գործը որի՛ արածն էր (ՎՍ): Մինչև հիմա էլ նրա համար խրթին հանելուկի պես անլուծելի էր մնում, *թե* ի՛նչ եղավ Արևիկը (ՍԽ):

Որ(ը), ով, ինչ(ը) հարաբերականներով և *որ, թե* շաղկապներով կապակցվելու դեպքում գերադաս բաղադրիչում հարաբերյալի կիրառությունը կամընտիր է:

Այն կարող է լինել, կարող է նաև չլինել: Ոճական նկատառումներով հարաբերականի ծայրին կարող է դրվել նաև *որ* թարմատար շաղկապը: Հմմտ.

Ով որ եկավ, ստացավ մի քաս գինի ինձանից [. Միայն ինքըս չըմպեցի իմ սեփական հնձանից] (ՊՍ):Խաչեն էր *նա, որ* աղբյուրից ջուր առավ (ՀՇ): Պարզվեց, *որ* ներքնահարկում պահվող ոսկով լի տոպրակներն անգործ մարդկանց վառ երևակայության ծնունդ են (ԱՇ): Այդպես էլ չիմացվեց, *թե* ե՛րբ են վերադարձվելու ավանդատուների գումարները [և վերադարձվելո՞ւ են] (Ավանգ.):

§ 228. Ենթակայական կախյալ նախադասություն է ձևավորվում մասնավորապես հետևյալ դեպքերում:

1.Գերադաս բաղադրիչի *բայ-ստորոգյալը չեզոք սեռի է* (նաև *կրավորակերպ չեզոք սեռի*), որ արտահայտում է եղելություն, իրողություն, վիճակ

և կառուցվածքաիրադրական հանգամանքներով պայմանավորված՝ կիրառվում է միայն եզակի երրորդ դեմքով՝ վերածվելով միադիմի բայի: Այդպիսիք են՝ *լինել, թվալ, պատահել, մնալ, երևալ, պարզվել, դուրս գալ, արժե*(նալ) և այլ նման բայեր: Այս կարգի բարդ նախադասությունների գերադաս բաղադրիչները սովորաբար համառոտ են լինում՝ կազմված միայն բայ-ստորոգյալից, երբեմն նաև մեկ-երկու լրացումից: Հմմտ.

Եղավ, որ չինական մի նահանգ ապստամբեց դաժան նահանգապետի կեղեքումների դեմ (ԱԻ): [Ապա մի ահագին կապ գոյացավ օձի վզին և] *երևում էր*, թե ինչ տանջանքով է նա կուլ տալիս որսը (ՎԱ): *Երևում էր*, որ արդեն ավարտում ենք հաստոցի հավաքման գործը (ՍԽ): *Մեզ մնում է* մեկ մեխին խփենք, մեկ՝ պայտին (ԱԲ): *Դուրս է գալիս*, որ մեր թափած քրտինքը իզուր է անցել: *Եվ արժե*, որ հայ ժողովուրդը երբեմն-երբեմն էս հարազատ, գեղեցիկ ու մեծ անուններն հանդես բերի (ՀԹ):

2. Գերադաս բաղադրիչի բայ-ստորոգյալը *ասացական, հասկացական, կամային* կամ *զգացական* իմաստ արտահայտող *կրավորակերպ չեզոք սեռի* բայ է, որ նույնպես կիրառվում է եզակի երրորդ դեմքով՝ խոսքային տվյալ իրադրության մեջ դառնալով միադիմի: Այդպիսի բայերից են՝ *ասվել, հայտնվել, հաղորդվել, պատմվել, իմացվել, հասկացվել, հայտարարվել, գրվել, ենթադրվել, կարգադրվել, հրամայվել, պարտադրվել, հաստատվել* և այլն: Հմմտ.

Պրիստավի և բոլոր ժողովրդի ներկայությամբ *հաստատվեց*, որ դու պարապում ես անխիղճ վաշխառությամբ (Մ): *Կարգադրվեց*, որ այդ էլ կատարվի (ՆՋ): Պարզ *լսվում էր*, որ այնտեղ՝ անտառում, դարավոր կաղնիները ճակատում էին հողմի դեմ (ԱԻ): Արդեն *հաղորդվել է*, որ հարավային քամիները օդի տաք հոսանքներ են բերել Հարավային Կովկաս (Երկ.) և այլն:

Այս նախադասությունների կառուցվածքային հատկանիշներից է և այն, որ եթե գերադաս բաղադրիչի բայերից օտարվի *վ* ձևույթը, այսինքն՝ եթե վերականգնվի ներգործական սեռի կարգը, դրանք այլևս միադիմի չեն լինի, և կախյալ եզրերը կդառնան խնդիր: Հմմտ.

Կարգադրեցի (*կարգադրեցիր, կարգադրեց*), որ այդ էլ կատարվի: Պարզ *լսում եմ* (*լսում ես, լսում է*), որ այնտեղ՝ անտառում, դարավոր կաղնիները ճակատում էին հողմի դեմ, և այլն:

3. Գերադաս բաղադրիչի ստորոգյալը *բաղադրյալ է*՝ կազմված *գնահատողական* արժեքով օժտված ածական մի վերադրից և հանգույցից: Այստեղ ևս գլխավոր բաղադրիչը առավելապես կազմված է լինում միայն ստորոգյալից: Լրացումներ եթե լինում էլ են, ապա՝ խիստ հազվադեպ: Հանգույցը *է* բայն է, որ կիրառվում է միայն եզակի երրորդ դեմքով՝ այդ կառույցում ևս դառնալով միադիմի: Իբրև հանգույց կարող են կիրառվել նաև մի քանի վերացական բայեր՝ *լինել, դառնալ, համարվել, հանդիսանալ* և այլն: Որպես վերադիր հանդես են գալիս հետևյալ ածականները՝ *հետաքրքրքիր* (*հետաքրքրական*), *հիանալի, զարմանալի, լավ, վատ, գեղեցիկ, տգեղ, չքնաղ, չնաշխարհիկ, հասկանալի, անհասկանալի, ճշմարիտ, ակներև, պարզ, որոշակի, անորոշ, ցավալի, հայտնի, անհայտ, նախընտրելի, գերադասելի, ցանկալի* և այլն:

Կապակցությունն իրացվում է նույն կաղապարներով, որոնք հատուկ են բայական պարզ ստորոգյալ ունեցող գերադաս բաղադրիչով կառույցներին: Հմմտ.

Հետաքրքրական է, թե քանի՞ եղբայր ունի իմ քույրը (ՀԽ): Ինչ *լա՜վ է*, Սո՛մա, որ կյանքի հոգուն հիմա եմ հասել: Ինչ *լա՜վ է*, Սո՛մա, որ քո կրակում վառվում եմ ես էլ (ԵՉ): *Պարզ էր*, որ աներոջ մահը մազի չափ անգամ չէր խլրտում նրա ազգակցական զգացումների ևիրիը (ԱԾ): Իսկ մեզ *հարկավոր էր*, որ արթնանա ոգին, որ մաքրվի մարդը թույնից, դավից, քենից (ՌԴ):

4. Գերադաս բաղադրիչի ստորոգյալը *բաղադրյալ է*՝ կազմված *գոյական վերադրից* և հանգույցից: Իմաստային տեսակետից այս կառույցները ունենում են երկու արտահայտություններ:

Ա. Գերադաս բաղադրիչը նշում է *որևէ փաստ, որը որպես դրություն, իրադրություն, վիճակ կամ իրավիճակ* վերագրվում է կախյալ նախադասությանը: Հմմտ.

Բնությունից որոշված հավերժական օրենք է, որ անգղերը աղավնիներ պիտի ուտեն (ԱԻ): *Նրանց բոլորի թաքուն ցանկությունն էր*, որ ձին ճեղքեր զինվորների շղթան [և հրեղեն հրաշքի պես աներևույթանար] (ԱԲ): *Դոգ չէ*, որ մեր օրերն անցան տենդի պես [. Կյանքը դարձավ անմխիթար զառանցանք] (ԵՉ):

Բ. Գերադաս բաղադրիչի վերադիրը արտահայտում է *գործող անձի կամ իրի հոգնակիություն*, իսկ երկրորդականի ստորոգյալը՝ *գործողության հոգնակիություն*՝ շարունակաբար, կրկնողաբար կատարվելու իմաստով: Հմմտ.

Փայտ էր, որ կոտրվում էր դժբախտ մարդու ոսկորների վրա (ՎԹ): *Առվակներ էին*, որ վազում էին անկողնի կողքերից (ՆԴ): *Ձորք էր*, որ եկավ, *զենք էր*, որ կուտակվեց, և այլն:

Այս նախադասությունները հարաբերակից են պարզ նախադասությամբ արտահայտված համապատասխան կառույցներին, որպիսիք են՝ *Ձորք եկավ, զենք կուտակվեց* և այլն: Ենթադրվում է, որ առաջինները ծագել են հենց պարզ նախադասություններից՝ հավելադրության միջոցով: Ենթական վերածվել է ստորոգելիական վերադրի, հանգույցի և շաղկապի հավելում է կատարվել, ինչպես՝ *Ձորք եկավ → Ձորք էր, որ եկավ*[93]: Երկու կառույցների միջև առկա է իմաստային որոշակի տարբերություն: Մինչդեռ պարզ նախադասության մեջ չի ընկալվում ո՛չ ենթակայի, ո՛չ ստորոգյալի հոգնակիություն, բարդ կառույցում նշվում է, որ, դիցուք, *շատ ձորք եկավ, անընդհատ եկավ, շատ զենք կուտակվեց* և *անընդհատ կուտակվեց:*

5. Ենթակայական կախյալ նախադասություններում արտահայտված գործողության, եղելության որոշակի *ժամանակը* կամ նրա *սկիզբը* կարող է դրսևորվել գերադաս բաղադրիչում: Վերջինս նման կառույցներում կազմված է լինում բաղադրյալ ստորոգյալից, որի ստորոգելին ժամանականիշ

---

[93] Տե՛ս *Ս.Գ. Աբրահամյան, Վ.Դ. Առաքելյան, Վ.Ս. Քոսյան*, Հայոց լեզու, հ. Բ, էջ 360, *Ս.Գ. Աբրահամյան, Ն.Ս. Պառնասյան, Հ.Ս. Օհանյան, Խ.Գ. Բադիկյան*, ժամանակակից հայոց լեզու, հ. 3, էջ 624:

մի գոյական է կամ ժամանակի մակբայ, հանգույցը՝ եակաև բայի ներկա կամ անցյալ ժամանակի եզակի երրորդ դեմքը, երբեմն նաև *լինել* բայը՝ տարբեր եղանակաժամանակայինկիրառություններով: Գլխավոր նախադասությունը ներկայացնում է հենց այդ բաղադրյալ ստորոգյալը (երբեմն իր լրացումներով, եթե կան), որ նշում է այն ժամանակահատվածը, որի ընթացքում կատարվել կամ կատարվում են ենթակայական նախադասությամբ արտահայտված գործողությունը, եղելությունը: Հմմտ.

Երեկ էր, որ լսեցի ուրախաբեր այդ լուրը: *1988 թ. դեկտեմբերին էր,* որ տեղի ունեցավ կործանարար երկրաշարժը: Հեռագրասյուները կանգնեցնելու օրն էր հենց, որ Մազութի Համոն անսպասելի կերպով վերադարձավ քաղաք (ԵՉ) և այլն:

6. 1 - 5 կետերում նշված կառույցներում բաղադրիչների շարադասությունը կայուն է: Կախյալ նախադասությունը հաջորդում է գերադասին: Դրանք հետադաս երկրորդականներ են (տե՛ս վերի օրինակները):

§ 229. Բացի վերը քննված կառուցվածքայինկաղապարներից (տե՛ս § 228, 2, 3, 4), բաղադրիչների կապակցությունը կարող է իրացվել նաև այլ միջոցներով:

Ա. Ենթակայական կախյալ նախադասությունները, թեև հազվադեպ, կարող են կապակցվել նաև *երբ* (*որ*) հարաբերականով և *եթե* շաղկապով: *Երբ* (*որ*)-ով կապակցվելու դեպքում ստորադաս բաղադրիչը ստանում է ժամանակի պարագայի երանգ, *եթե*-ով կապակցվելիս՝ պայմանի պարագայի: Հմմտ.

Բայց առանձնապես հետաքրքրական էր, *երբ բժիշկն էր գալիս* (ՍՉ): Մեծ զվարճալիք էր, *երբ Մարանը գնում էր ավազանի ափը* (ՎԹ): Զարմանք էլ չէր, *եթե մյուս օրը (...) գիշերվա կարպետը, քաղիքի մեջ փաթաթած, տանում էին քաղաք՝ չինովնիկի տունը* (ԱԲ): Ուրիշ բան է, *եթե սովից խելագար մի գել, իրեն կորցրած, գցի վտանգի մեջ* (ՅԹ) և այլն:

Բ. Որոշ գերադաս բաղադրիչներում իբրև հարաբերյալ կարող է կիրառվել *այնպես* դերանունը, որի դեպքում կախյալ նախադասությունը ստանում է ձևի պարագայի երանգ: Հմմտ.

Ինձ *այնպես* թվաց, թե գրկել է իր սիրածին և սավառնում է երկնքում (ԱԻ): *Այնպես* էր թվում, թե մառախուղը այս սար ու ձորից հեռացողը չէ [և արեգակը այլևս չի հայտնվելու] (Մ), և այլն:

Թե՛ Ա և թե՛ Բ կետերում նշված կախյալ նախադասությունները, սակայն, ո՛չ *ժամանակի* պարագա են, ո՛չ *պայմանի*, ո՛չ էլ *ձևի*, այլ *ենթակայական* են, քանի որ վերառված կերպով և տրամաբանորեն նշում են այն իրողությունը, երևույթը, որոնց որոշակի հատկանիշ է վերագրվում գերադաս բաղադրիչի ստորոգյալի միջոցով:

Ենթակայական նախադասությունը կարող է կապակցվել նաև *շարահարությամբ:* Կապակցության այս եղանակը հատուկ է մասնավորապես կենդանի խոսակցական լեզվին, որտեղից էլ թափանցում է գրական-գեղարվեստական խոսքի մեջ: Այն զգալի տարածում ունի հատկապես չափածոյում: Ահա մի քանի նմուշ.

Տաս տարի է՝ *մաճ իմ գալի փադիշահի շահիրի պես* (ՍՆ)։ Պատահում է՝ *սիրտըդ լցվում ու չի լալիս ժամանակին, Ամպը անձրև է խոստանում Ու չի տալիս ժամանակին* (ՀՍ)։ Սինչև անգամ լավ է ավելի՝ *բառերն իրար հետ կապ իսկ չունենան, Քան թե չունենան կշիռ ու արժեք* (ՊՍ), և այլն։

Հաճախ շարահարությամբ են կապակցվում այն կախյալ նախադասությունները, որոնք սկսվում են հարցական դերանվամբ կամ առանց դրա՝ արտահայտելով անուղղակի հարցում։ Հմմտ.

[Մեկը, մոտիկ ընկած, մեռնում էր երևի.] *Կի՞ն էր, տղամա՞րդ էր, երեխա՞* անհայտ էր (ԵՉ)։ Հետաքրքիր է՝ *ի՞նչ է մտածում կոնկիկը* (ԲՀ)։ [Մենք կարող ենք ապրել և մեռնել,] իսկ *ի՞նչ են նրանք կարող* դեռ հայտնի չէ (ՀՍՅԵ), և այլն։

Կապակցությանը օժանդակող միջոց է նաև *շարադասությունը*։ Սա ընդհանուր առմամբ կամընտիր է, բայց կան նաև որոշակի օրինաչափություններ՝ կապված կախյալ նախադասության արտահայտած իմաստի, տրամաբանական շեշտի և այլ գործոնների հետ։

1.*Հարաբերյալ → հարաբերական* կաղապարով կապակցվելու դեպքում կախյալ բաղադրիչը շարադասվում է թե՛ նախադաս, թե՛ հետադաս։ Այդպես է շարադասվում նաև *հարաբերյալ → շաղկապ* կաղապարով կապակցությունը (տե՛ս § 273, 2-ի օրինակները)։

2.Կախյալ նախադասությունը նախադասվում կամ միջադասվում է մասնավորապես այն ժամանակ, երբ տրանաբանական շեշտի կրողն է։ Առաջին դեպքում կախյալ բաղադրիչի համապատասխան բառը արտաբերվում է հատուկ շեշտադրությամբ, նրան հաջորդում է հարաբերյալով սկսվող գլխավոր եզրը։ Հմմտ.

Ով սիրել չգիտե, նա չի կարող նաև ատել։

Երկրորդ դեպքում գլխավոր բաղադրիչը ընդմիջվում է հարաբերյալից հետո, և հարաբերյալը արտաբերվում է հատուկ շեշտադրությամբ։ Նրան անմիջապես հաջորդում է երկրորդական նախադասությունը, որ հյութականացնում է հարաբերյալի իմաստը, ապա կրկին շարունակվում է գերադասը։ Հմմտ.

Նա, *ով սիրել չգիտե*, չի կարող նաև ատել։ Նա, *ով գերի չէ իր կրքերին*, տեղ ունի իմ սրտի մեջ, սրտիս սրտի մեջ (ՎԾ)։ Պահակներից նա, որ կես արշինանոց բերան ուներ, կացնի բութ ծայրով խփում էր կենդանու ճակատին (ԱԲ) և այլն։

Ծանոթություն: Հարաբերականը կիրառվում է այլևայլ հոլովներով՝ իր շարահյուսական գործառույթի համեմատ։ Հմմտ. Փողոցներից դեպի տները քաշվեցին նրանք, *որոնց* համար զենքը ծանր բեռ էր (ԱԲ)։ Իսկ նրանք, *ում* սիրտը լի էր արիությամբ, որոշել էին չհանձնվել, և այլն։

2. ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 230. *Ստորոգելիական կախյալ նախադասությունը վերառված կերպով արտահայտում է այն հատկանիշը, որը վերագրվում է գլխավոր նախադասության ենթակային:*

Իր կազմում ստորոգելիական կախյալ բաղադրիչ ունեցող նախադասության կառուցվածքային հատկանիշներն են:

1. Գերադաս բաղադրիչը չի ունենում պարզ ստորոգյալ, քանի որ վերջինս չի կարող փոխարինվել կախյալ նախադասությամբ:

Գերադաս նախադասության մեջ առկա է լինում բաղադրյալ (անվանաբայական) ստորոգյալ, որի ստորոգելին հանդես է գալիս որպես հարաբերյալ: Սրա իմաստն էլ հենց նյութականացնում է կախյալ նախադասությունը:

2. Իբրև հարաբերյալ կիրառվում են անձնական երրորդ դեմքի և ցուցական երրորդ շարքի դերանունները՝ *նա, նրանք, ինքը, իրենք, այն, այնպիսին, այնքան, այնչափ*, ինչպես նաև՝ *նույնչափ, նույնքան* և այլ դերանուններ:

3. Կապակցությունը լինում է նշույթավոր: Ստորոգելիական նախադասությունները շարահարությամբ հազվադեպ են կապակցվում: Իբրև նշույթ օգտագործվում են *որ, թե* շաղկապները և *որ, ով, ինչ*, հազվադեպ՝ *ինչպիսին, որպիսին, ինչպես, որքան, որչափ, ուր, որտեղ* դերանունները: Բոլոր հարաբերականներին կարող է կցվել *որ* թարմատարը (*որը որ, ով որ* և այլն):

Կապակցական կաղապարներն են՝ *հարաբերյալ → շաղկապ և հարաբերյալ → հարաբերական՝ նա → որ, նա → ով* (*որ*) , *նրանք → որ, նրանք → որոնք* (*որ*), *նրանք → ովքեր* (*որ*), *այն թե, այն → որը* (*որ*), *այն → ինչ* (*որ*), *այնքան → որ, այնքան → որքան* (որ), *այնպիսին → ինչպիսին* (*որ*), *այնտեղ → ուր* (*որ*), *այնտեղ → որտեղ* (*որ*), և այլն:

Կապակցության կաղապարի ընտրությունը պայմանավորված է ստորոգելիական կախյալ նախադասության արտահայտած իմաստով: Ըստ այդմ գոյանում են իմաստային հետևյալ խմբերը՝ իրենց կապակցական համապատասխան եղանակներով ու ձևերով:

1. Կախյալ նախադասությունը արտահայտում է առարկայական իմաստ: Այն նշում է մի գործողություն, եղելություն, իրողություն, որ վերագրվում է գերադաս բաղադրիչի ենթակային: Սա ունի իմաստակառուցվածքային երկու տարատեսակներ:

Ա. Եթե կախյալ նախադասությունը վերառված կերպով *անձ* է ակնարկում, կապակցությունը իրացվում է *նա* (*նրանք*) → *ով* (*ովքեր*), *նա* (*նրանք*) → *որ* (*որը որ, որոնք որ*) կաղապարներով: Հմմտ.

Ես նա եմ նաև, որ տարբերում է պաչը համբույրից [, ինչպես սիրողին՝ սիրահարվածից] (ՊՍ): Այսինքն՝ *Ես պաչը համբույրից տարբերողն եմ*, այլ կերպ ասած՝ *Ես այսինչ անձն եմ*: Այլև՝ Ուսուցիչը *նա՛ է, ով սովորեցնում է*: Ուսուցիչը *նա՛ է, ումից սովորում են*: Հայրենասերը *նա է, ով իր գրպանի պարունակությունից ինչ-որ բաժին է հանում ինչ-որ կարիքավորի*, այլ *նա,*

որ իր արյունն է նվիրաբերում հայրենիքի փրկության գործին: Այսինքն՝ *հայրենասերը իր գրպանի պարունակությունից բաժին հանողը չէ,* այլ *իր արյունը նվիրաբերողը:*

Երեք կառույցներում էլ ստորոգելիական կախյալ նախադասությունները անձն են մատնանշում:

Բ. Եթե կախյալ նախադասությունը վերառված կերպով *առարկա, իրողություն, երևույթ* է ակնարկում, կապակցությունը իրացվում է *այն* (հազվադեպ՝ *նա*) → *որ, այն* → *ինչ, այն* → *թե* կաղապարներով: Հմմտ.

Հայրենասիրությունը *այն* է, *որ հայերը ամենուր իրար պատկանեն և միասին՝ հայրենիքին* (ԱԻ): Իմ երկիրն *այն* է, *որ գտնվել է բիբլիական Արարատ լեռան ստորոտում՝ առասպելական դրախտի տեղում* (ԳԷ): Նրա համար այդ տունը այսօր *այն* էր, *ինչ որ հավատացյալի համար՝ եկեղեցին* (ԳՄ):

Բերված օրինակներում կախյալ նախադասությունները արտահայտում են առարկայացված գործողություններ, իրողություններ, որոնք նույնպես ունեն առարկայական իմաստ: Դրանք, ինչպես և նախորդ կետում նշվածները, առարկայական բովանդակություն են տալիս *նա* (*նրանք*), *այն* հարաբերյալներին:

2. Կախյալ նախադասությունը արտահայտում է *հատկանշի* կամ *հատկանշի հատկանշի* իմաստ: Սա ևս ունենում է իմաստային երկու խմբեր:

Ա. Եթե կախյալ նախադասությունը արտահայտում է *որակական* կամ *քանակական* հատկանիշ, այն կապակցվում է *այնքան* → *որ, այնքան* → *որքան* (*որ*), *այնչափ* → *որչափ* (*որ*), *նույնքան* → *որքան* (*որ*), *այնպիսին* → *որ, այնպիսին* → *ինչպիսին* (*որ*) և նման կաղապարներով:Այսպես կապակցվելու դեպքում կախյալ բաղադրիչը արտահայտում է հատկանշի որակական կամ քանակական բնութագիրը՝ *նույնության* կամ *տարբերության* տեսանկյունով:

Որակական կամ *քանակական* հատկանիշներ:Հմմտ.

Իմ տեսածը *այնպիսին* է, *ինչպիսին* դու պատկերացնել չես կարող: Տան վաճառքից ստացված գումարը *այնքան* էր, *ինչքան* անհրաժեշտ էր հայրենիքը լքելու համար (Ռ):

Բ. Կախյալ նախադասությունը կարող է արտահայտել նաև *հատկանշի հատկանշի* իմաստ: Այս դեպքում այն ստանում է պարագայական բովանդակություն՝ նշելով *պատճառի, հետևանքի, ձևի, ժամանակային, տարածական, նպատակային* և այլ իմաստային երանգներ՝ մնալով, սակայն, որպես ստորոգելի:

Կապակցությունն իրացվում է *այնպես* → *ինչպես* (*որ*), *այն* → *որ, այն* → *եթե, այն* → *երբ, նրանից* → *որ, այն* → *որտեղ* և նման կաղապարներով: Հմմտ.

Արամի սխալը *այն* կլիներ, *եթե նա լքեր քեզ այս ծանր օրերին* (ԱՎ): Հայրդ էլի *այնպես* է, *ինչպես որ կար* (ՆՂ): Անտանելին Հակոբ պապի համար *այն* է, *երբ իր մոտ սուտ են խոսում* (ԱՎ): Այդ *նրանից* է, *որ մեր այսօրվա ոգուն այլևս չի կարող լինել պատյան Ո՛չ Տերյանի բարբառը նվագում,*

ո՛չ Նարեկի մրմունջը մագաղաթյա (ԵՉ)։ Իմ ուզածը իսկապես *այն* է, *որ դու չտխրես*։ Իմ երկիրը *այն* է, *որտեղ գետերը դարեր շարունակ իրենց բաշը ժայռերին են խփել* (ԳԷ)։

3. Գերադաս բաղադրիչի հարաբերյալը կարող է ունենալ *հոլովակապային* արտահայտություն։ Այս դեպքում կախյալ նախադասությունը կարող է ստանալ թե՛ *պարագայական*, թե՛ *խնդրային* երանգավորում։ Կապակցվում է՝ *Նրա համար →որ, Նրա* (*Նրանց*) *մասին → որ, այն մասին → որ* (*թե*) և նման կաղապարներով։ Կախյալ նախադասությունը ըստ էության նյութականացնում է կապվող բառի (կապի խնդրի) իմաստը։ Փոխակերպված տարբերակում կապը պահպանվում է անփոփոխ։ Հմմտ.

Այդ *Նրա համար* էր, որ չարը խափանվի (Ր)։ Փոխակերպելիս ստացվում է՝ Այդ *չարը խափանվելու համար էր* կառույցը, որտեղ *համար* կապը իր ծավալուն խնդրով նպատակային իմաստ ունի։ Այլև՝ Խոսքը *Նրա մասին* էր, *ով* որ ամենից բարձր էր խոսում [, մինչդեռ պետք է լռեր]։ Խոսքը *այն մասին էր, որ* կուսակցական հողի վրա իմ քեռին սպանել էր իմ հարազատ հորը (ԳՍ)։ Օֆելյայի բողոքը *այն մասին չէ՛, թե* Համլետն անբարեսեր է դարձել, այլ անտարբեր (ԹՈՒ)։

4. Գրքային կամ բարձր ոճին է հատուկ *ո՛չ այլ ինչ → եթե ո՛չ, ո՛չ այլ ինչ → քան, ո՛չ այլ ոք → եթե ո՛չ* կաղապարներով կապակցությունը։ Սա բնորոշվում է նրանով, որ բացառման սկզբունքով գերադաս բաղադրիչում օտարվում են ընդհանուր, չտարբերակված առարկան, երևույթը, իրողությունը (*ո՛չ այլ ինչ*) կամ անձը (*ո՛չ այլ ոք*), ստորադաս բաղադրիչում *եթե ո՛չ* բաղադրյալ շաղկապի օգնությամբ ներկայացվում են տարբերակված առարկան, երևույթը, իրողությունը կամ անձը։

Ստորադաս բաղադրիչի ստորոգյալը ևս բաղադրյալ է լինում՝ առավելապես զեղչված հանգույցով։ Հմմտ.

Այդ թանգարան կոչվածը *ո՛չ այլ ինչ էր, եթե ո՛չ* հասարակ մի *խուց* [, ուր պահում էին եկեղեցու սպասքներ] (Մ)։ Դա *ո՛չ այլ ոք էր, եթե ո՛չ* հռոմեական փառաբանված եռապետ և զորավար *Կրասուսը* (ՎԼ), և այլն։

5. Ստորոգելիական կախյալ նախադասությունը ունի համեմատաբար կայուն շարադասություն։ Ըստ որում՝ նաև գերադաս նախադասությունը պահում է անդամների կայուն դիրք։ Վերջինս ավարտվում է հանգույցով, որին նախորդում է հարաբերյալը, հաջորդում է կախյալ բաղադրիչը (տե՛ս վերի օրինակները)։ Տեսականորոն հնարավոր է նաև *նախադաս* դիրք, որ, սակայն, օրինաչափ չէ և խիստ հազվադեպ է պատահում։ Հմմտ.

Մինչև ուր որ քշեր-տաներ, իր աշխարհի սահմանն էն էր (ՀԹ)։ *Ով խիղճը դեռ չի կորցրել*, իմ ընկերը նա՛ է։

6. Գերադաս բաղադրիչի ձևական բաղադրյալ ստորոգյալի հանգույցը սովորաբար լինում է *եմ* էական բայը (տե՛ս քննված նմուշները)։ Հազվադեպ այն կարող է դրսևորվել նաև *լինել, դառնալ* և նման վերացական բայերով։ Հմմտ.

Այդ միջոցը այն *պիտի լինի*, որ կոչվում է ձգտում (ՆԳ)։ Ես այն *եմ եղել*, Ինչ որ եղել եմ [. Չեմ հասել երբեք քո որոնածին, Քո որոնածը աննյութեղեն էր, Իսկ ես՝ հողեղեն, հողոտ, հողածին] (ՀՍ)։

§ 231. Ստորոգելիական կախյալ նախադասությունները հազվադեպ կարող են կապակցվել նաև *շարահարությամբ*: Այսպիսի կապակցությունը լինում է երկու տիպի կառույցներում:

Ա. Հայերենում կա մի բայ՝ *նշանակել*, որը իր բուն իմաստին զուգահեռ արդեն ստացել է կիրառական նոր արժեք: Այն կարող է գործածվել որպես գերադաս նախադասության հանգույց՝ խնդրելով ստորոգելի, որ արտահայտվում է ստորադաս բաղադրիչով: Սա թերևս միակ կառույցն է, որտեղ գերադաս եզրում հարաբերյալ կարող է թե՛ լինել, թե՛ չլինել: Կապակցվում է երեք հնարավոր կաղապարներով. ա) (դա) *այն է նշանակում, որ*..., բ) (դա) *նշանակում է, որ*..., գ) (դա) նշանակում է (Ø)[94]: Այս վերջինն էլ հենց շարահարությունն է: Հմմտ.

[Դե, եթե իրոք այդպես է,] *նշանակում է* ինքը նորից աղմուկի մեջ կընկնի (ՍԽ): [Գինեվաճառները երդվում էին, որ իրենց գինին անարատ է: Ինչքան սրտառուչ էին երդվում,] *նշանակում է* այնքան առատ էին ջուր խառնել գինուն (Ն.տ.):

Բ. Կա մի կառույց, որ հարաբերակից է այս բաժնի 4-րդ կետում քննված նախադասություններին՝ *ոչ այլ ինչ է, եթե ոչ* կաղապարով: Ըստ այսմ այս բառաշղթայից պահպանվում է միայն *ի՞նչ է* ստորոգյալը, որը ստանում է հարցական ծայներանգ: Նույնի համաբանությամբ կիրառվում է նաև *ո՞վ է* ստորոգյալը: Կառույցը բնորոշվում է նրանով, որ գերադաս բաղադրիչը հռետորական հարցի բնույթ ունի: Նրա ստորոգյալը բաղադրյալ է՝ հարցական դերանվամբ արտահայտված վերադրով (*ո՞վ, ի՞նչ* և այլն), որը յուրովի կատարում է հարաբերյալի դեր: Կախյալ նախադասությունն էլ *ոչ այլ ինչ է, եթե ոչ* տրված հռետորական հարցի պատասխանը, որ գերադաս բաղադրիչի հետ կապվելով շարահարությամբ դառնում է նրա համար ստորոգելի: Ինչպես՝ *ոչ այլ ինչ է, եթե ոչ* կաղապարով կապակցված կառույցներում, այստեղ ևս ստորադաս բաղադրիչում հանգույցը զեղչվում է: Հմմտ.

Մեր ապրուստն *ի՞նչ է, մի կտոր չոր հաց* [, էն էլ հըրեն հա՛, երկընքից կախած] (ՀԹ): Բարեկամն *ի՞նչ է, լավիդ նախանձող, քայլիդ խուզարկու, բամբասող, ագահ* (ԱԻ): Եվ *ո՞վ են* մարդիկ, *աղվեսների հոտ, եսամոլ անհուն, ուրացող, մատնիչ* (Ն.տ.) և այլն:

Այս նախադասությունները ևս ընկալվում են վերը նշվածների պես: Հմմտ.

Մեր ապրուստն *ի՞նչ է – մի կտոր չոր հաց* = Մեր ապրուստը *ոչ այլ ինչ է, եթե ոչ մի կտոր չոր հաց*: Այդպես նաև մյուսները:

---

[94] Բայ-ստորոգյալի եղանակաժամանակային կիրառությունը գրեթե ազատ է, թերևս բացառությամբ *հրամայական* եղանակի: Հմմտ. *Դա կնշանակի, որ*..., *Դա պետք է նշանակի, որ*... և այլն:

ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

§ 232. Բարդ ստորադասական նախադասության համակարգում առանձնանում են այն կառույցները, որոնց ստորադաս եզրը լրացնում է գերադաս եզրի գոյականով արտահայտված կամ գոյականաբար գործածված որևէ անդամի: Այս խմբի մեջ են մտնում նաև այն բարդ նախադասությունները, որոնց ստորադաս բաղադրիչը լրացնում է գլխավորի առարկայանիշ, այդ թվում անձնանիշ որոշ դերանունների[95]:

Գոյականական անդամի լրացում կախյալ նախադասությունները մեկ խմբի մեջ են միավորվում ո՛չ միայն իրենց ձևական-կառուցվածքային հատկանիշներով, մասնավորապես նրանով, որ լրացնում են գոյականին, այլև իրենց բովանդակությամբ: Այդ բոլոր նախադասությունները ներկայացնում են գերադաս բաղադրիչի գոյականական անդամի կայուն կամ փոփոխական, իրական կամ մտացածին, որակական կամ քանակական, ժամանակային կամ տարածական, ստացական և այլ նման հատկանիշներ կամ բացահայտում նրա էությունը, ո՛վ կամ ի՛նչ լինելը:

Ըստ այս իմաստների և դրանց արտահայտման շարահյուսական եղանակների ու միջոցների՝ գոյականական անդամի լրացում կախյալ նախադասությունները լինում են՝ ա. *որոշչային*, բ. *բացահայտչային*, գ. *հատկացուցչային*.

1. ՈՐՈՇՉԱՅԻՆ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 233. *Որոշչային կախյալ նախադասությունը լրացնում է գերադաս բաղադրիչի գոյականական որևէ անդամի՝ նշելով նրա հատկանիշը:*

Ունի իմաստակառուցվածքային հետևյալ հատկությունները:

Ստորադասական կապակցության մեջ որոշչային կախյալ նախադասությամբ բարդ նախադասությունները ամենամեծ հաճախականությունն ունեն և աչքի են ընկնում իրենց իմաստային բազմաճոխությամբ ու կապակցական ձևերի հարստությամբ:

Ինչպես որևէ բառով կամ բառակապակցությամբ դրսևորված պարզ որոշիչը, որոշչային երկրորդական նախադասությունները ևս հանդես են գալիս իբրև որոշյալի իմաստային ծավալիչներ: Որոշյալի իմաստը ծավալվում է նրան հատուկ կամ խոսքային որոշակի իրադրությամբ իբրև այդպիսին ընկալվող որևէ հատկանշի ցուցադրությամբ:

Ի տարբերություն պարզ որոշչի, որոշչային կախյալ նախադասությունները, օժտված լինելով ստորոգումային հատկությամբ, որոշյալի հատկա-

[95] Թե հատկապես ո՛ր դերանուններին են լրացնում, կնշվի համապատասխան բաժնում:

նիշները բացահայտում են որևէ գործողության, եղելության, դրության, վիճակի հարաբերությամբ, որով ավելի ևս հարստանում է նրանց, ինչպես և ամբողջ բարդ նախադասության իմաստային կառուցվածքը:

Որոշչային կախյալ նախադասությունները գերադասի հետ կապակցվում են *զոդվածով* և *շարահարությամբ:*

1. Իբրև զոդ կամ սպասարկու բառ օգտագործվում են *որ* (*ը*), *որպիսի* (հնացած), *ինչ, ինչպիսի, ինչքան, որքան, երբ, որտեղ, ուր* հարաբերականները և *որ,* մասամբ՝ *թե* շաղկապները:

Գերադաս բաղադրիչում կարող է առկա լինել հարաբերյալ՝ արտահայտված ցուցական երրորդ շարքի հատկանշանիշ դերանուններով, որպիսիք են՝ *այն, այնպիսի, այնքան, այնչափ, այնտեսակ* (հազվադեպ), այլև *նույն, նույնպիսի, նույնքան, նույնչափ* դերանունները, որոնք շարքերի հակադրություն չունեն:

Ըստ այդմ կարող են գոյանալ կապակցական հետևյալ կաղապարները. ա. *զրո → շաղկապ,* բ. *զրո → հարաբերական,* գ. *հարաբերյալ → շաղկապ, դ. հարաբերյալ → հարաբերական:* Հմմտ.

Ա. *Զրո → շաղկապ.* Նախ աղջիկ էիր դու մի հասարակ, *որ* դեմս ելար օրերում դժնի (ԵՉ): Նրանց վախը, *թե* հանկարծ ժամանակից շուտ կընկճեմ սիրային պատմությունների մեջ, ինձ մղում էր թափանցելու հասուն մարդկանց գաղտնիքների մեջ (ԱԻ):

Բ. *Զրո → հարաբերական.* [Չկար ժամանակ, չկար նաև միտք:] Կար շնչառություն, որ շատ էր նման օվկիանոսների տուրևառության (ՊՍ):

Գ. *Հարաբերյալ → շաղկապ.* Այդ խոսքի վրա դահլիճում *այնպիսի* մի աղմուկ բարձրացավ, *որ* նախագահողը ստիպված ընդհատեց նիստը:

Դ. *Հարաբերյալ → հարաբերական.* Մենք հիշում ենք *այն* օրերը, *երբ* որսորդները վայրի բադ էին խփում ներկա կրկեսից քիչ ներքև՝ Հրազդանի կամրջի տակ (ՎԱ):

2. Որոշչային կախյալ նախադասության կապակցության մեջ ամենաարտադրողականը *որ* հարաբերականն է: Սրանով կապակցված կախյալ բաղադրիչները որոշյալի հատկանիշը կարող են բնութագրել իմաստային ամենատարբեր երանգավորումներով: Այս հարաբերականը կախյալ նախադասության մեջ կարող է հանդես գալ թե՛ *որոշյալ,* թե՛ *անորոշ* առումով, *եզակի* և *հոգնակի* (*որոնք*), թե՛ *ուղղական,* թե՛ *թեք* հոլովներով: Այն թվով համաձայնում է գերադաս բաղադրիչի որոշյալի հետ: Հմմտ.

Ա. *Եզակի թվով, ուղղական հոլովով, անորոշ առումով.* Ես այլ բան չէի, քան մի ապակի, *որ* թափանցիկ է [, լույսը չի բեկում] (ՊՍ):

Բ. *Եզակի ուղղական հոլովով, որոշյալ առումով.* Դա խաբեություն է, *որը* այսօր վրդովում է ինձ (ԱՎ):

Գ. *Եզակի թվով, թեք հոլովով.* Ո՞ւր է այն թշվառ թռչունների չուն, *որով* իմ բախտն էր գուշակում գնչուն (ՌԴ):

Դ. *Հոգնակի թվով, ուղղական և թեք հոլովներով.* Բնական խոռոչներ են, *որոնք* գնում են քաղաքի տակը (ԱԲ): Կհալածվեն տգիտությունը և այն

շահագործող պաշտոնյաները, *որոնց* պատճառով շատ ջերմ սրտեր են սառել (Մ):

Որ հարաբերականի եզակի թվի անհոդ ուղղականը արտաքուստ նույնանում է համանուն շաղկապի հետ: Պարզելու համար կապակցության հարաբերական թե շաղկապական լինելը պետք է նկատի ունենալ հետևյալը:

Բոլոր այն կառույցներում, որտեղ գերադաս բաղադրիչի որոշյալը *եզակի թվով* է կիրառված, կապակցությունը *հարաբերական* է, իմա՝ *որ* նշույթը հարաբերական դերանուն է և կատարում է երկու դեր՝ ա. նախադասության անդամ է (առավելապես՝ ենթակա կամ ուղիղ խնդիր), բ. կապակցում է գերադաս և ստորադաս նախադասությունները: Տե՛ս երկրորդ կետի ա. ենթակետը: Բոլոր այն կառույցներում, որտեղ գերադաս բաղադրիչի որոշյալը *հոգնակի թվով* է կիրառված, *որ*-ը շաղկապ է:Դա կարելի է դիտարկել հետևյալ օրինակում.

Եվ *կույսեր, որոնց* ծոցի մեջ լուսե Լուսնի լույսն անգամ ծածուկ չէր հոսել, *Որ* երկչոտ էին, ինչպես եղջերուն, *Որ* անմյութ էին, ասես հորինված Մի հովվերգական վեպի էջերում (...), Օֆելյայի պես այժմ ցնորված՝ խելագարվածի իրենց ճիչերում Դարձյալ մոռանալ չէին կարենում այն դժոխքը սև (ՊՍ):

Այստեղ ունենք *կույսեր → որոնք* (*որոնց*) կաղապարը, որ հարաբերական կապակցություն է, քանի որ որոշյալը և հարաբերականը համաձայնեցված են թվով, իսկ շարունակության մեջ առկա են *կույսեր → որ* կաղապարով երկու կապակցություններ, որտեղ *որ*-ը շաղկապ է որոշյալի հետ թվային անհամաձայնության պատճառով, և կապակցությունը շաղկապական է:

Կապակցության այս և վերը՝ առաջին կետում, նշված միջոցների բազմազանությամբ էլ պայմանավորված է որոշչային կախյալ նախադասությունների իմաստային պեսպիսությունը:

§ 234. Որոշչային կախյալ նախադասությունները գերադաս եզրի գոյականական անդամի հատկանիշները կարող են բնութագրել իմաստային բավականաչափ հարուստ երանգավորումներով, որոնց ընդհանրությունների ու տարբերությունների հաշվառմամբ կարելի է նկատել երկու խումբ:

1. Առաջին խումբը կազմում են գերադաս բաղադրիչի գոյականական անդամի *որակը, քանակը, որպիսությունը, բուն էությունը* շոշափող կախյալ նախադասությունները: Սրանք կարելի է կոչել *բուն որոշչային* կախյալ նախադասություններ: Հմմտ.

Ես իմ ազգի անունով խոստանում եմ ձեզանից զենքով գնացող յուրաքանչյուր անհատին *այնչափ հող, որ ինձ կամ իմ ազգի յուրաքանչյուր անհատին պիտի բաժին ընկնի* (ՄՆ): Եվ պահակները շտապեցնում էին գյուղացիներին, *որոնք փոսեր էին փորում՝ հիվանդ տավարը վառելու* (ԱԲ): Որտեղի՞ց հապա նրա արյունը օտարիս սրտում՝ Իմ սրտում, *որ քեզ սիրում է այսպես՝ Աստվածաշնչյան այնտեսակ սիրով, որ* [երբ իր բառե շապիկն է հագնում,] Թվում է այսօր հեթանոսական, նույնիսկ անպարկեշտ (ՊՍ) և այլն:

2. Մյուս խումբը կազմում են այն որոշչային կախյալ նախադասությունները, որոնք գերադաս բաղադրիչի գոյականական անդամի հատկանիշը բացահայտում են *պարագայական հարաբերությամբ*: Ի վերջո սրանք ևս գոյականի հատկանիշ են արտահայտում, բայց ունեն պարագայական երանգ: Սրանք իրենց հերթին ստորաբաժանվում են մի քանի ենթախմբերի:

Ա. *Տարածական հարաբերություն* արտահայտող որոշչային կախյալ նախադասություններ: Սրանք այն կախյալ բաղադրիչներն են, որոնք մասնավորեցնում կամ որոշակիացնում են գլխավոր նախադասության տեղանիշ մի գոյականի իմաստը: Կապակցվում են *ուր, որտեղ* հարաբերականներով: Գերադաս բաղադրիչում, հատկապես ընդգծելու համար տեղանիշ գոյականը, հաճախ կիրառվում են *այն, այնպիսի* հարաբերյալները: Հմմտ.

Ադամ, բեռնավորված ծանրալի զամբյուղներով, վերջալույսին հասավ *այն* լճակը, *ուր Լիլիթ անհամբեր սպասում էր Ադամին* (ԱԻ): Հանդարտ ու խուլ աղմուկը, որ ելնում էր ճահճուտներից, թփերից, *որտեղ ծտերն էին ճկում* (...), նինջի նման իջնում էր գյուղի վրա (ԱԲ): Առաջին անգամ իմ հայրենիքում, *ուր հոսում էին արնահուն գետեր*, Այս այգաբացի երգը զրնգում իմ բարձրաշառաչ երգն է ավետել (ԵՉ):

Այս նույն կաղապարով են կապակցվում և տարածական հարաբերություն արտահայտող այնպիսի կախյալ բաղադրիչներ, որոնք վերաբերում են ո՛չ տեղանիշ որևէ գոյականի: Վերջինս հենց այդպիսի կապակցության շնորհիվ խոսքային որոշակի իրադրութայն մեջ ձեռք է բերում տարածական իմաստ: Հմմտ.

Վա՜յ տամ այն *գանգին, ուր ծմեռում է խելքը արջի պես* (ՊՍ): *Գանգը* տեղանիշ գոյական չէ. այն ծավալային, ասել է թե՝ տեղանիշ իմաստ է ձեռք բերել խոսքային որոշակի շրջապատում, որոշակի կառուցվածքի նախադասության մեջ:

Բ. *Ժամանակային հարաբերություն* արտահայտող որոշչային կախյալ նախադասություններ: Սրանք այն կախյալ բաղադրիչներն են, որոնք մասնավորեցնում կամ որոշակիացնում են գլխավոր նախադասության ժամանականիշ որևէ գոյականական անդամի իմաստը: Կապակցվում են *երբ* հարաբերականով: Այստեղ ևս գերադաս եզրում հաճախ կիրառվում են *այն, այնպիսի* հարաբերյալները, որոնք շեշտադրում են *ժամանականիշ* լրացյալը: Հմմտ.

Շատ պարզ եմ հիշում *այն* օրերը, *երբ որոշեցի Չորագյուղ գնալ* (ԱԲ): Դու ճամփա ելար մի առավոտ, *երբ մութ էր, ամպ էր ու մառախուղ* (ԵՉ): Վաղ այգաբացի այն պահն էր, *երբ ավելի շատ շաղված միտք կա գլխում, քան բերանում՝ խոսք* (ՎԽ):

Գ. *Հետևանքային հարաբերություն* արտահայտող որոշչային կախյալ նախադասություններ: Սրանք այն կախյալ նախադասություններն են, որոնք արտահայտում են գերադաս բաղադրիչի որոշյալի այս կամ այն հատկանշից բխող հետևանքը: Այդպիսով՝ որոշյալի հատկանիշը բացահայտվում է հետևանքային հարաբերությամբ: Կապակցությունը իրացվում է *որ* շաղկապով: Գերադաս բաղադրիչում կարող են կիրառվել *այն, այնպիսի* հարաբերյալներ: Հմմտ.

Հանգամանքները նրան գցել էին մի *այնպիսի* վիճակի մեջ, *որ ինքն ա-կամայից դարձել էր գայլ* (Ր)։ Ասա մի ե՛րգ, *որ կհովացնի մեր դարդոտ սրտերը* և այլն։

Դ. *Նպատակային հարաբերություն* արտահայտող որոշչային կախյալ նախադասություններ։ Սրանք այն կախյալ նախադասություններն են, որոնք դրսևորում են որոշյալի այս կամ այն հատկանշից բխող նպատակային ուղղվածությունը։ Կապակցվում են *որ* շաղկապով։ Ինչպես նախորդ կառույցներում, այստեղ ևս կարող են հանդես գալ *այն, այնպիսի* հարաբերյալները։

Կախյալ նախադասության նպատակային հատկանիշը դրսևորվում է մասնավորապես նրանով, որ նրա բայ-ստորոգյալը կիրառվում է ըղձական եղանակով՝ իր երկու ժամանակաձևերով։ Ասվածը կարելի է դիտարկել վերը՝ գ. կետում վկայված օրինակով։ Հմմտ.

1. Ասա մի ե՛րգ, որ *կհովացնի* մեր դարդոտ սրտերը և 2. Ասա մի ե՛րգ, որ *հովացնի* մեր դարդոտ սրտերը։

Առաջինում կախյալ նախադասության բայ-ստորոգյալը ենթադրական եղանակով է կիրառված, երկրորդում՝ ըղձական։ Առաջին կախյալ նախադասությունը արտահայտում է *հետևանքային* հարաբերություն, երկրորդը՝ *նպատակային*։ Այլ օրինակներ.

Ո՞հ, էլ չունիմ ես մայր անգին, *որ ինձ սիրեր, փայփայեր, որ իմ խղճուկ, անտեր կյանքին քև ու քիկունք նա լիներ* (ԱԾ)։ Պակասում էր միայն մի լուսապսակ, *որ*, յուր մեջ ամփոփելով այդ հողաստեղծ արարածին, *դարձներ նրան երկնային* (Մ)։ Եվ գոյություն չուներ (...) պետական կամ հասարակական մի հիմնարկ, *որ խնամեր խեղթերին* (ՎԹ)։

Ե. *Համեմատության հարաբերություն* արտահայտող որոշչային կախյալ նախադասություններ։ Սրանք այն կախյալ նախադասություններն են, որոնք գերադաս բաղադրիչի լրացյալի հատկանիշը դրսևորում են այլ մի առարկայի, իրողության, երևույթի համանման մի հատկանշի հետ բաղդատելով։ Կապակցությունն իրացվում է *ինչ, ինչպես, ինչպիսի, որպիսի* հարաբերականներով։ Գերադաս բաղադրիչում սովորաբար կիրառվում են *այն, այնպիսի, նույն, նույնպիսի* հարաբերյալները։ Սրանց առկայությունը, սակայն, կամընտիր է։ Դրանցով ավելի ևս շեշտվում է բաղդատությունը, որ առկա է կախյալ նախադասության մեջ։ Հմմտ.

Այս գործողությունը մահմեդականների մեջ *նույն* նշանակությունն ունի, *որպիսին քրիստոնյաների մեջ՝ երես խաչակնքելը* (Ր)։ Կանգնած էին նյարդերի *այն* բացառիկ լարված վիճակում, *ինչպիսի վիճակ ապրում է զինվորը թշնամու վրա գրոհելուց վայրկյաններ առաջ* (ՎԱ)։ [Որի] հատակում կա անտանելի *նույնպիսի* մի բան , *ինչպես ավազը՝ մեր կոշիկի մեջ* (ՊՍ) և այլն։

§ 235. Որոշչային կախյալ նախադասությունը կարող է լրացնել գերադաս բաղադրիչի գոյականաբար կիրառված հատկանշանիշ մի բառի։ Հատկանշանիշ խոսքի մասով արտահայտված անդամը միաժամանակ դրսևորում է թե՛ առարկան, թե՛ նրա հատկանիշը։ Առարկան դրսևորվում է չտար-

բերակված կերպով, դա պարունակողն է, հատկանիշը՝ տարբերակված կերպով. դա էլ պարունակելին է: Ահա այս պարունակողի կամ չտարբերակված առարկայի, իրողության, երևույթի հատկանիշն է բացահայտում նշված կախյալ նախադասությունը: Հմմտ.

Իմ գերեզմանը թող լինի *հեռվո՛ւմ, ուր մահացել եմ շշուկ, երգ ու ծայն* (ՎՏ): Այսինքն՝ *հեռու մի տեղ, հեռու վայրում* և այլն: Եվ *առաջինը, որ հանդիպեց քեզ ճանապարհիս,* քո ահավոր այն խեղճ պոետն էր, այն սրտաբեկ, տխուր պոետը արևավոր (ԵՉ):

Գերադաս բաղադրիչում փոխանվանաբար կիրառված անդամը իր հերթին կարող է ունենալ հոգնակի բացառականով լրացում: Նման դեպքերում կախյալ նախադասությունը լրացնում է ամբողջ բառակապակցությանը, որի գերադաս եզրում գոյականաբար կիրառված միավորն է: Հմմտ.

Էս պատճառով էլ գյուղի *երեխաներից շատերը, որոնց ծնողները չէին կարող տարեկան երեք ռուբլի տալ,* մնացին դուրս (ՀԹ):

Այս կարգի կառույցների գերադաս բաղադրիչում սովորաբար հարաբերյալ չի կիրառվում (տե՛ս վերի օրինակները): Գործնականում, սակայն, նաև փոխանվանաբար կիրառված անդամի կողքին կարող է հարաբերյալ դրվել: Հմմտ.

Կարո՞ղ եք ցույց տալ ինձ մի *այնպիսի անգետի, որն իրեն ամենագետ չհամարեր:*

Որոշչային կախյալ նախադասությունը ունի համեմատաբար կայուն շարադասություն: Այն առավելապես լինում է *հետադաս* կամ *միջադաս:* Հետադասությունը և միջադասությունը պայմանավորված են շարահյուսական որոշակի գործոններով:

1. Գերադաս բաղադրիչում հարաբերյալ չլինելու դեպքում, նրա անդամների շարահյուսական հարաբերությունները չխախտելու համար, որոշյալի գրաված դիրքը պայմանավորում է որոշչային կախյալ նախադասության շարադասությունը:

Ա. *Եթե որոշյալը գերադաս եզրի սկզբում է տեղադրված* կամ *միջում,* կախյալ նախադասությունը, անմիջապես հաջորդելով նրան, գրավում է *միջադաս* դիրք: Հմմտ.

Սմբատը, *որ վաղուց նման հանդեսներ չէր տեսել,* անցնում էր սենյակից սենյակ [և հետաքրքրությամբ դիտում] (ԱԾ): Ծաղիկը, *որ գործընկերների համար պարզապես Ֆլորա է,* միակ հայուհին է բեմում (ԳԹ): Մի թափառական նկարիչ, *որ հրաշքով փրկվել էր թուրքական յաթաղանից,* օտար ափերում իր հայրենիքը կտավի վրա պատկերել էր մի մեծ քարի ու ջրի կաթիլի տեսքով (ՋԲ):

Բ. *Եթե որոշյալը գերադաս բաղադրիչի վերջին անդամն է,* ստորադաս եզրը *հետադասվում է:* Հմմտ.

Նա գրկած ուներ թավշամորթ մի *կատու, որին շոյում էր անընդհատ ժամանակ կարծելու համար* (ԱԻ): Բոլորը միանման արտահագուստ ունեն՝ ռետինե *վերնազգեստ, որ ջուր չի բաց թողնում* (ՍԽ): Գնացել էր «բարով մնաս» ասելու քարե *հեծյալին, որ, մոլեգին նժույգը սանձած, Եվրոպայի դաժան մշուշների միջից նայում էր դեպի Հայաստան* (ԽԴ):

2. Գերադաս եզրում հարաբերյալի առկայության դեպքում որոշյալը կարող է տեղաշարժվել, և որոշչային նախադասությունը կարող է անմիջապես չհաջորդել լրացյալին: Հմմտ.

Եվ *այնպիսի գրքեր* ես գիտեմ, *որ համրերի նման անհաղորդ են և աղջիկների նման՝ սեթևեթ* (ԵՉ): *Նույն մարտիկն* են նրանք մեր փոքորկոտ կյանքում, *ինչ երեկ են եղել* (ՊՍ):

3. Հարաբերյալի բացակայության դեպքում ևս որոշյալը կարող է տեղաշարժվել, միայն թե պետք է պահպանվի լրացում-լրացյալի շարահյուսական հարաբերությունը: Հմմտ.

Եվ այս *երգերը* իմ կարմիր, ա՜խ, այս *երգերը* իմ կարմիր, *որ երգում է անափոփ սիրտըս կրակում*, Ինչպե՞ս պիտի արդյոք հնչեն (...) իմ ավերակ, իմ որբ երկրում (ԵՉ): Իմ սրտում *ասեղներ* կան, *որոնք օր ու գիշեր գործելով՝ հորինում են տառապանքի դեղին, դեղնամշուշ մի երգ* (ՌԴ):

§ 236. Որոշչային կախյալ նախադասությունները գերադաս բաղադրիչի հետ կարող են կապակցվել նաև *շարահարությամբ*: Կապակցության այս եղանակը գրական կանոնարկված լեզվին հատուկ չէ, այն հազվադեպ պատահում է ժողովրդախոսակցական լեզվում, ավելի ևս հազվադեպ՝ գրական աղբյուրներում:

Կապակցությունն իրացվում է երկու կաղապարով:

Ա. *Հարաբերյալ → գրո՛ւ:* Այսպես կապակցվում են այն կախյալ նախադասությունները, որոնք սկսվում են երկբայական վերաբերականով, արտահայտում են անուղղակի հարցում և որոնք նյութական բովանդակություն են հաղորդում գերադաս բաղադրիչում առկա հարաբերյալին: Հմմտ.

Բայց Սամվելին սկսեց անհանգստացնել *այն* միտքը, *արդյոք այդ անփորձ, պարզամիտ մանուկը իրեն չէ՞ր խանգարի* (Ր): Այժմ սարսափեցնում էր նրան *այն* մտածությունը՝ *մի՞թե որդին հակառակ պիտի գնար յուր սրտագին բաղձանքներին, մի՞թե արդեն կատարված կամ կատարվելու գործերը դեմ էին նրան* (ն.տ.):

Բ. *Ջրո՛ → գրո՛:* Այս կապակցությունը հատուկ է առածական-ասացվածքային ոճին, որտեղից էլ թափանցում է գրական, մասնավորապես չափածո երկերի մեջ: Հմմտ.

Մարդ կա՝ *հազար արժե*, մարդ կա՝ *մին չարժե* (ժող. առած):

Շարահյուսական միևնույն կառուցվածքն ու կապակցական միևնույն կաղապարն ունեն նաև հետևյալ օրինակները.

Ճամփա կա՝ *ծով է տանում*, ճամփա կա՝ *այգի*, ճամփա կա՝ *ափ է հանում նավակն իմ կյանքի* (ՀԾ): Մարդ կա՝ *աշխարհն է շալակած տանում*, Մարդ կա՝ *ելել է շալակն աշխարհի* (ՊՍ):

2. ԲԱՑԱՀԱՅՏՉԱՅԻՆ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 237. *Բացահայտչային կախյալ նախադասությունը լրացնում է գերադաս բաղադրիչի գոյականական որևէ անդամի՝ նշելով նրա էությունը՝ ով կամ ինչ լինելը:*

Ունի իմաստակառուցվածքային հետևյալ հատկանիշները:

Ի տարբերություն որոշչային կախյալ նախադասությունների՝ բացահայտչային նախադասությունները խիստ սահմանափակ կիրառություն ունեն: Նրանք չունեն նաև առաջիններին հատուկ իմաստակառուցվածքային և կապակցական եղանակների բազմազանությունը: Բացահայտչային նախադասությունները բնորոշվում են նրանով, որ, պայմանավորված ստորոգման առկայությամբ, լրացյալի էությունը դրսևորում են առավել ծավալուն նկարագրությամբ:

Ինչպես պարզ բացահայտիչը, այնպես էլ բացահայտչային կախյալ նախադասությունները, ըստ էության այլ բան չեն, քան բացահայտյալի իմաստային կրկնությունը՝ այլ արտահայտությամբ, մեկը՝ մի բառով կամ բառակապակցությամբ, մյուսը՝ կախյալ նախադասությամբ:

Բացահայտչային երկրորդական նախադասությունները հարաբերակից են որոշչային նախադասություններին և շատ հաճախ միևնույնում են նրանց հետ: Համմտ.

Նեսոն, *որ իմ մանկության ընկերն էր*, կարող էր ինձնից մեծ բանաստեղծ դառնալ (ՀԹ):

Ընդգծված կախյալ նախադասությունը թե՛ հատկանշային (որոշչային) իմաստ է արտահայտում, թե՛ բացահայտչային: Եվ սրանցից ո՛չ մեկը առաջնային չէ: Կարելի է ասել, որ երկու իմաստներն էլ հավասարապես առկա են: Հատկանշային իմաստը հիմք ունենալով՝ այն կընկալվի որպես որոշիչ կախյալ նախադասություն և կփոխակերպվի հենց որպես այդպիսին. → *Իմ մանկության ընկեր* Նեսոն...: Բացահայտչային, այսինքն՝ լրացյալի ով կամ ինչ լինելը բացահայտող իմաստի վրա շեշտը դնելով՝ այն կդիտվի որպես բացահայտիչ կախյալ նախադասություն և կփոխակերպվի հենց որպես այդպիսին. → Նեսոն՝ *իմ մանկության ընկերը*...:

Ասվածից, սակայն, չի կարելի բխեցնել, թե գոյականական անդամի այս կարգի լրացում հանդիսացող բոլոր կախյալ նախադասությունները հավասարապես և՛ որոշիչ են, և՛ բացահայտիչ: Կան թվով ո՛չ այնքան շատ կառույցներ, որտեղ որոշչային և բացահայտչային կախյալ նախադասությունները հստակորեն տարբերակվում են:

Որոշչային և բացահայտչային կախյալ նախադասությունների տարբերակման գործում էական նշանակություն ունեն գերադաս եզրի լրացյալի և ստորադաս եզրի ստորոգյալի բառաքերականական արտահայտությունները: Գերադաս եզրի լրացյալը կարող է արտահայտվել՝ ա. *գոյականով* և բ. *գոյականական իմաստ ունեցող այլ խոսքի մասերով*.

Ա. *Բուն գոյականին* լրացնող ստորադաս եզրով կառույցները ունենում են հետևյալ հատկանիշները:

1. Ստորադաս բաղադրիչի *ստորոգյալը բաղադրյալ է՝ գոյական* վերադրով և *է* էական բայ-հանգույցով: Գերադաս բաղադրիչի լրացյալը մի այնպիսի գոյական է՝ հասարակ կամ հատուկ անուն, որ *գոյականով արտահայտված որոշիչ չի ընդունում*: Հմմտ.

Հատուկ անուն. Մասիսը, որ պատմական Հայաստանի ամենաբարձր սարն էր, այժմ գտնվում է գերության մեջ:

Կախյալ բաղադրիչը բացահայտիչ է, և նրա շարահյուսական փոփոխակն է՝ Մասիսը՝ *պատմական Հայաստանի ամենաբարձր սարը*...: Կախյալ բաղադրիչը չի կարող փոխակերպվել իբրև որոշիչ, քանի որ արդի հայերենում այնքան էլ օրինաչափ չէ (...) *սար Մասիս* կապակցությունը, ավելի օրինաչափ է *Մասիս սար* (կամ, ինչպես նշվեց, Մասիսը՝ ... սարը...) արտահայտությունը:

Հասարակ անուն. Ստավորականությունը, որ մեր հասարակության սերուցքն է, կարիք ունի ջերմ հոգատարության: Կախյալ բաղադրիչը բացահայտիչ է, և նրա շարահյուսական փոփոխակն է՝ Ստավորականությունը՝ *մեր հասարակության սերուցքը*...: Կախյալ նախադասությունը և այստեղ չի կարող փոխակերպվել որպես որոշիչ, քանի որ կունենանք՝ (...) *սերուցք մտավորականություն* մերժելի կապակցությունը:

2. Ստորադաս բաղադրիչի ստորոգելին *հոգնակի թվով* գոյական է՝ ուղղական հոլովով: Հմմտ.

Ուսանողները, որ մեր երիտասարդության լավագույն *ներկայացուցիչներն* են, ունեն փայլուն ապագա:

Կախյալ բաղադրիչը բացահայտիչ է, և նրա շարահյուսական տարբերակը կլինի՝ Ուսանողները՝ *մեր հասարակության լավագույն ներկայացուցիչները*...: Կախյալ նախադասությունը և այստեղ չի կարող փոխակերպվել որպես որոշիչ, քանի որ հոգնակի գոյականը մեկ այլ հոգնակի գոյականի համար չի կարող որոշիչ լինել. (...) *ներկայացուցիչներ ուսանողներ* կապակցությունը ևս խորթ է արդի հայերենին, բայց օրինաչափ է՝ Ներկայացուցիչներ Պողոսը և Պետրոսը:

3. Ստորադաս բաղադրիչի ստորոգելին *գոյականաբար կիրառված հատկանշանիշ բառ* է՝ առավելապես ածական կամ թվական: Հմմտ.

Վաղարշակը, *որ զավակներից <u>կրտսերն</u> էր, անչափահաս լինելով, ռազմաճակատ չգնաց* (Ն): Որդիս, *որ դիմանկարի արվեստում <u>առաջինն</u> էր,* վերցրեց իմ ազգանվան միայն վերջին յան-ը [և իր կտավների վրա սկսեց ստորագրել՝ Յան]: Երկու կառույցներում էլ կախյալ բաղադրիչները բացահայտիչ են: Դրանց փոփոխակներն են՝ Վաղարշակը՝ *զավակներից կրտսերը*..., Որդիս՝ *դիմանկարի արվեստում առաջինը*...: Իբրև որոշիչ փոխակերպելիս կստացվի՝ Դիմանկարի արվեստում *առաջինը եղող* որդիս... անբարեհունչ կապակցությունը:

4. Գերադաս բաղադրիչի լրացյալը *.ենք, անք, ոնք, ունք* ածանցներով բաղադրված, տոհմի, գերդաստանի տարբերակված կամ չտարբերակված իմաստ արտահայտող գոյական է (Գրիգորենք, Վարդանանք, մերոնք, ձերոնք), ստորադաս բաղադրիչի ստորոգելին՝ նույնպես գոյական՝ եզակի *թե հոգնակի թվով*: Հմմտ.

Մերոնք (ձերոնք, Գրիգորենք), որ հին գյումրեցիներ էին, ցրվեցին երկրով մեկ: Կախյալ բաղադրիչը բացահայտիչ է, քանի որ *մերոնք, ձերոնք, Գրիգորենք և նման կազմությամբ գոյականները սովորաբար որոշիչ չեն առնում:*

Բ. Բացահայտիչ կախյալ նախադասությունը կարող է լրացնել գերադաս բաղադրիչի գոյականական իմաստ արտահայտող այլ խոսքի մասի, մասնավորապես *դերանվանը:* Իբրև լրացյալ հանդես են գալիս անձնական առաջին և երկրորդ դեմքի (*ես, մենք, դու, դուք*) և առարկայանիշ ցուցական առաջին և երկրորդ շարքերի դերանունները (*սա, սրանք, դա, դրանք*): Այս դերանուններին լրացնող կախյալ նախադասությունները բացահայտչային են այն պարզ պատճառով, որ դրանց բովանդակությունը կարող է բացահայտվել առարկայական, բայց ո՛չ հատկանշային իմաստով: Այդ դերանուններից ո՛չ մեկը, իր խոսքամասային հատկությամբ պայմանավորված, չի կարող ընդունել որևէ որոշիչ, բացահայտիչ՝ կարող է: Այդ է պատճառը, որ դրանց լրացնող նախադասությունները անվերապահորեն բացահայտչային են՝ անկախ իրենց կազմում եղած ստորոգյալի՝ բաղադրյալ կամ պարզ լինելուց: Հմմտ.

Ես, որ լցված եմ բառերով, հանց մրգերով ծանրած աշուն, Հազարագանձ հայոց լեզվի տերն եմ, այլև բարապանը (ՍԿ): *Սա, որ ծառա է և պարտավոր է ծառայել մեզ միշտ,* Մեզ է դարձրել իր անարգ ծառան (ՊՍ):

§ 238. Բացահայտչային կախյալ նախադասության մի տեսակ է նաև *պարագայական մասնավորեցնող բացահայտիչը:* Այս կարգի կախյալ նախադասությունները բնորոշվում են նրանով, որ լրացնում են գերադաս բաղադրիչում կիրառված *ժամանակային կամ տեղային* որևէ բառի, առավելապես գոյականի, *տեղի* կամ *ժամանակի* մակբայի, որոնք կատարում են ժամանակի կամ տեղի պարագայի դեր: Այս կարգի կախյալ բաղադրիչները սահմանափակում, մասնավորեցնում ու որոշակիացնում են գերադաս բաղադրիչում առկա ժամանակի կամ տեղի պարագաների իմաստները: Հմմտ.

Ա. *Ժամանակային գոյականին* լրացնող մասնավորեցնող պարագայական բացահայտիչ կախյալ նախադասություն: *Իրիկնապահին, երբ անց էին կենում սարերը,* Մի անգամ էլ երևաց իրենց գյուղը հեռու մշուշում (ՀԹ): Եվ մի *գիշեր, երբ Բաղդադը քուն էր մտել Տիգրիսի նոճիածածկ ափերի վրա,* Գաղտնի հեռացավ քաղաքից (ԱԻ):

Բ. *Ժամանակային մակբային* լրացնող մասնավորեցնող պարագայական բացահայտիչ: Քիչ *հետո, երբ շունչը տեղը բերեց,* պառկած տեղից նայեց և կրակ տեսավ սրահի մեջտեղում (ՎԽ): Վաղ *առավոտյան, երբ լուսաբացի կաթնամշուշը դեռ շոյում էր տանիքները,* նա բախեց հայրենական տան դուռը, բայց բացող չեղավ (Ն.տ.):

Գ. *Տեղային մակբային* լրացնող մասնավորեցնող պարագայական բացահայտիչ:

Ու նայում ես դեպի *ցած, ուր դաշտերն են մրափում* (ՎՏ): Պիտի լինեմ *ամենուրեք, որտեղ իմ կարիքը դեռ կզգան:*

Հարկ է նշել, որ ժամանականիշ գոյականին լրացնող այս կարգի նախադասությունները կարող են ընկալվել նաև որպես որոշիչ: Դրանք որոշակիորեն որոշչային իմաստ են ձեռք բերում մասնավորապես այն դեպքում, երբ գերադաս բաղադրիչի ժամանականիշ գոյականին կցվում է *այն* (*այնպիսի*) հարաբերյալը: Հմմտ.

Եվ *այն* գիշեր, *երբ Բաղդադը քուն էր մտել Տիգրիսի նոճիածածկ ափերի վրա...:* Ընդգծված հատվածը արդեն որոշիչ է, քանի որ նյութականացնում է առկա *այն* հարաբերյալի իմաստը:

§ 239. Բացահայտչային կախյալ նախադասությունը գերադաս եզրի հետ կապակցվում է միայն *նշույթով:* Շարահարական կամ աննշույթ կապակցություն չկա: Բուն բացահայտչային կախյալ նախադասության կապակցությունը իրացվում է *որ* շաղկապով և *որ*(*ը*), մասամբ՝ *ով* (*որ*) հարաբերականներով:

Կառուցվածքային օրինաչափություն է նաև այն, որ գերադաս բաղադրիչում երբեք չի կիրառվում հարաբերյալ:

Եթե գերադաս բաղադրիչում անձնական առաջին և երկրորդ դեմքերի և ցուցական առաջին և երկրորդ շարքերի դերանուններով արտահայտված լրացյալը փոխարինենք երրորդ դեմքի և երրորդ շարքի դերանուններով, դրանք անմիջապես կվերածվեն հարաբերյալների, և կախյալ նախադասությունը այլևս բացահայտիչ չի լինի, այլ կստանձնի շարահյուսական այն գործառույթը, որ ունի հարաբերյալը: Հմմտ.

Ես, որ հայտնի լալկան էի, կարկամել-մնացել էի արտասուքիս գեղձերի մեջ սառած արցունքներով (ԱՎ): Կախյալ նախադասությունը բացահայտչային է, քանի որ լրացնում է առաջին դեմքի *ես* դերանվանը: Այն այդպիսին կմնա նաև այն պարագայում, եթե առաջին դեմքի դերանունը փոխարինենք երկրորդ դեմքով, ինչպես՝ *Դու, որ հայտնի լալկան էիր...:* Բայց եթե այդ *ես* և *դու* դերանունները փոխարինենք երրորդ դեմքի դերանվամբ, բուն ենթական, որպիսին է բնագրային վկայության մեջ (նաև նրա տարբերակում) կվերածվի ձևական ենթակայի՝ արտահայտված հարաբերյալով, և կախյալ նախադասությունը կլինի ենթակայական: Այլ մի օրինակ.

Այս երեկո հիշել եմ *ձեզ, ձեզ, որ անցաք ու հող թողիք* (ՍԿ): Կախյալ նախադասությունը լրացնում է գերադաս բաղադրիչի՝ անձնական դերանվան երկրորդ դեմքով արտահայտված ուղիղ խնդրին և բացահայտիչ է: Եթե այս ուղիղ խնդիրը արտահայտենք երրորդ դեմքի դերանվամբ, այն կվերածվի հարաբերյալի, կդառնա ձևական անդամ, և կախյալ նախադասությունը կլինի ուղիղ խնդիր (տե՛ս § 244 և հջ.) և ո՛չ թե բացահայտիչ: Հմմտ.

Այս երեկո հիշել եմ *նրանց* (*նրանց*), *որ անցան ու հող թողին:* Կախյալ նախադասությունը ուղիղ խնդիր է:

Մասնավորեցնող պարագայական բացահայտիչը կապակցվում է նաև *երբ, ուր, որտեղ* հարաբերականներով, առաջինը՝ ժամանակային, երկրորդը և երրորդը՝ տարածական (տեղի) իմաստներով:

Շարադասությունը համեմատաբար կայուն է: Բացահայտչային կախյալ նախադասությունը առավելապես ունենում է *միջադաս* դիրք: Այն սովո-

րաբար ընդմիջում է գերադաս նախադասությունը և անմիջապես հաջորդում բացահայտյալին: Գերադաս բաղադրիչն էլ մեծավ մասամբ սկսվում է հենց բացահայտյալով, եթե այն կատարում է մասնավորապես ենթակայի գործառույթ: Հմմտ. վերի օրինակներից շատերը, այլև՝

Ես էլ, *որ մանկությունից լսել եմ նրա կանչը*, շա՞տ բան եմ հասկացել (ԵՉ): [Օրերս անցան իրար հետևից կամ իրար հեծած.] *Ես, որ իշխողն եմ նրանց ընթացքի*, գլորվեցի ցած (ՌԴ):

Բացահայտյալից առաջ կարող է շարադասվել կոչականը: Հմմտ.

Ո՛վ մռայլ *Դանթե*, դու, *որ Վիրգիլիոսի հետ այցելեցիր դժոխքի կրակե և կպրե մշուշները*, դու, *որ տեսար աստվածային պատժով պատժվածների հավիտենական տանջանքները*, ի՞նչ կասես [, թե իմը տեսնես] (ՀՇ):

Բավականաչափ հաճախված է նաև հետադասությունը: Նախորդ շարադասության նման այստեղ ևս կախյալ բաղադրիչը անմիջապես հաջորդում է բացահայտյալին, որը պետք է որ լինի գերադաս բաղադրիչի վերջում: Հմմտ.

Այս երեկո հիշել եմ *ձեզ, Ձեզ, որ բացվող հոգուս վրա անմեղ սիրո մի ցող բողիք* (ՍԿ): Խոսի՛ր, Հայաստա՛ն, *դու, որ դարերի տանջանք ես տեսել և տարիների խնդությունմիայն* (ԳԷ):

Բացահայտչային կախյալ նախադասությունը խիստ հազվադեպ կարող է նաև նախադասվել, որ օրինաչափ չէ: Հմմտ.

Որ այս կարգի որսորդությամբ զբաղվում էին ազնվականները, դա հաստատվում է հիշածս զարդաքանդակներով (ՎԱ):

Ծանոթություն: Որոշ քերականներ բացահայտյալ են համարում անձնական դերանվան բոլոր երեք դեմքերը (տե՛ *Ս.Գ. Աբրահամյան, Ն.Ս. Պառնասյան, Հ.Ա. Օհանյան, Խ.Գ. Բադիկյան*, ժամանակակից հայոց լեզու, հ. 3, էջ 464 (այս գրքի բարդ ստորադասական նախադասության բաժինը գրել է Ն.Ս.Պառնասյանը), այլև *Վարագ Առաքելյան*, Հայերենի շարահյուսություն, հ. 2, էջ 155):

Ն.Ս. Պառնասյանը վկայակոչում է այսպիսի օրինակ՝ *Նա, որ մի ամիս առաջ իր իշխանության տակ հազիվ ուներ մի աղախին*, այժմ կանգնած էր մի ամբոխի գլուխ (ԱԸ): Վ. Առաքելյանի օրինակները նույն կառուցվածքն ունեն. *Նա, որ սպանեց իր թագավորին, նա, որ անարգեց իմ մորը, որ ներս խոթվեց իմ ընտրության և հույսերի մեջ*... (ՀՇ): Այս կարգի կախյալ նախադասությունները երկու հեղինակներն էլ համարում են բացահայտչային: Նույն հեղինակները բերում են նաև այսպիսի օրինակներ. Օ՜, կույր է *նա, ով չի տեսնում երկինք հասած կրակը քեզ* (ԵՉ): Մի՞թե դու կարծում ես, թե *նա* է միայն բանաստեղծ, *ով վարժվել է հանգերով ոտանավոր գրել* (ՆԴ). *Ն. Ս. Պառնասյան*, նշվ. աշխ., էջ 622: Սրիկա է *նա, ով հայր է լինում* (ԱԻ), Սրիկա է *նա, ով հայր չի լինում* (ՀՇ). *Վ. Առաքելյան*, նշվ. աշխ., էջ 115:

Դժվար չէ նկատել, որ առաջին և երկրորդ խմբերի կառույցները նույնն են: *Որ* հարաբերականի փոխարեն *ով*-ի կիրառությունը չի փոխում բաղադրիչների շարահյուսական հարաբերությունները: Խնդիրն այն է, սակայն, որ երկրորդ խմբի նախադասությունները երկու հեղինակներն էլ համարում են *ենթակայական*, իսկ *նա* դերանունը՝ *հարաբերյալ*: Նույն կառույցի կախյալ նախադասությունները չեն կարող միաժամանակ լինել և՛ ենթակայական, և՛ բացահայտչային: Քանի որ *նա*-ն հարաբերյալ է և կատարում է ենթակայի դեր, ինչը չեն ժխտում և հեղինակները, ուրեմն և քննված կախյալ նախադասությունները ենթակայական են և ո՛չ թե բացահայտչային:

3. ՀԱՏԿԱՑՈՒՑՉԱՅԻՆ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 240. *Հատկացուցչային կախյալ նախադասությունը լրացնում է գերադաս բաղադրիչի գոյականական որևէ անդամի՝ նշելով նրա հատկանիշը ստացականության հարաբերությամբ:*

Ունի իմաստակառուցվածքային և կիրառական հետևյալ հատկանիշները:

Ի տարբերություն որոշչային, մասամբ նաև բացահայտչային կախյալ նախադասությունների, հատկացուցիչ երկրորդական նախադասությունները ունեն սահմանափակ կիրառություն: Զուրկ լինելով նախորդների ձևակազմական ու իմաստային բազմազանությունից՝ նրանք չեն դրսևորում նաև պարզ հատկացուցիչներին բնորոշ իմաստային երանգավորումները:

Ստացականությունը հատկացուցչային նախադասությունների մեջ դրսևորվում է մտային մի քանի հարաբերություններով:

1. *Պատկանելության հարաբերություն:* Կախյալ նախադասությունը կարող է արտահայտել այն անձը, որին պատկանում է, որի սեփականությունն է հանդիսանում գերադաս բաղադրիչում արտահայտված հատկացյալի նշածը: Հմմտ.

Իբրև սերմացու օգտագործում էին *նրանց* ցորենը, *ովքեր կամովին հրաժարվում էին գյուղատնտեսական աշխատանքներից* (ՄԳ): Մի պահ սկսեցին պետականացնել նաև *նրանց* անասունները, *ովքեր տասը ոչխարից և երկու կովից ավելի ունեին:*

2. *Մասի և ամբողջի հարաբերություն:* Կախյալ բաղադրիչը նշում է որևէ առարկա, երևույթ, իրողություն, որի որպես թե մի մասը վերառված կերպով ընկալվում է գերադաս եզրի հատկացյալը: Հմմտ.

Ջիգյարին գյուլլա դիպչի, *քեզ ով որ սիրի, աղջի՛կ* (ՀՄ): Սրտիս մեջ ծփում է ալիք առ ալիք Արյունը նրանց, *որ ելել եմ սեգ, գնում եմ դեպի կյանքը գալիք* (ԵՉ):

3. *Վերաբերության հարաբերություն:* Կախյալ նախադասությունը վերառված կերպով արտահայտում է մի գործողություն, եղելություն, դրություն, վիճակ, որին վերաբերում է գերադաս բաղադրիչի հատկացյալի նշածը: Հմմտ.

[Իսկ նա տվածս ուրացավ: Ասաց՝ չես տվել:] Վկա չկա, *որ տվել ես* (ՎԽ): Այսինքն՝ *տալու վերաբերյալ վկա չկա:* Այլ մի օրինակ՝ Այս մի թասն էլ՝ *նրանց* կենաց, *ովքեր կյանքում՝ թեկուզ ծանր կարիքի մեջ ու զրկանքում, ընդունում են ու տանում են հազար հարված, բայց մնում են էլի կյանքին սիրահարված* (ՊՍ):

4. *Ծագման* կամ *սերման հարաբերություն:* Կախյալ նախադասությունը արտահայտում է այն անձը, հազվադեպ՝ իրը, իրողությունը, երևույթը, ումից սերվել կամ ինչից գոյացել է գերադաս բաղադրիչում արտահայտված հատկացյալի նշածը: Հմմտ.

Ես երազում եմ նրա գալուստը, *ում պետք է ահս գգվի ազահ* (ԵՉ): Ոգի է տալիս ու թափ ներշնչում ինձ կրկին այն մեծ պայքարը նրանց, *որոնց*

դժվարին, բայց հաղթական չուն երգել եմ իմ երգով հուրհուրան (Ն.տ.): Միաժամանակ զավակն եմ նրա, *Որ դեռ չի ծնվել աշխարհի վրա* (ՌԴ):

Նշված հարաբերությունները, սակայն, միշտ չէ, որ հստակ տարբերակված են: Շատ հաճախ իմաստային տարբեր երանգներ կարող են միահյուսված հանդես գալ: Որոշ կախյալ նախադասություններ կարող են ընկալվել միաժամանակ և՛ վերաբերության հարաբերությամբ, և՛ մասի ու ամբողջի: Հաճախ վերաբերության իմաստը կարող է համատեղել պատկանելության հարաբերությունը և այլն: Երբեմն և՛ պատկանելության, և՛ վերաբերության, և՛ սերման կամ ծագման իմաստները կարող են համատեղվել միևնույն կառույցի մեջ, և միայն խոսքային իրադրությամբ հնարավոր է լինում տարորոշել այսինչ մասնավոր բովանդակությունը: Հմմտ.

[Վա՛յ, կանչեց Օհան, էդ քո խոսքը չէր.] Էդ ով քեզ ասավ, *լեզուն պապանձվեր* (ՀԹ):

Կախյալ նախադասությունը նշում է ամբողջը, որի մասն է կազմում գերադաս բաղադրիչի հատկացյալը (լեզուն): Բայց սա կարող է ըմբռնվել նաև որպես վերաբերական հարաբերություն, որին վերաբերում է լեզուն (*քեզ աստղին վերաբերող լեզուն*): Կամ՝

Սա նրա նկարն է, *ով հայտնի դեմք է արդեն արվեստի աշխարհում:* Կախյալ բաղադրիչը կարող է արտահայտել միաժամանակ երեք տարբեր իմաստներ.

Ա. *Պատկանելություն.* Սա նրա նկարն է (*նկարը, անկախ հեղինակությունից, պատկանում է նրան*), ով արդեն հայտնի դեմք է արվեստի աշխարհում:

Բ. *Վերաբերություն.* Սա նրա նկարն է (*նկարում պատկերված է նա*), ով արդեն հայտնի դեմք է...:

Գ. *Ծագում, սերում.* Սա նրա նկարն է (*նկարի հեղինակը նա է, նկարը ստեղծված է նրա կողմից*), ով արդեն հայտնի դեմք է ...:

§ 241. Նշված իմաստային հարաբերություններից կախյալ նախադասությունների մեջ համեմատաբար տարածվածը վերաբերության բովանդակությունն է: Այս կարգի կախյալ բաղադրիչ ունեցող գլխավոր նախադասության մեջ սովորաբար որպես հատկացյալ կիրառվում են թվով ո՛չ այնքան շատ մի քանի բուն գոյականներ կամ բայանուն գոյականներ, որպիսիք են՝ *ապացույց, խորհուրդ, հույս, հավատ, հարկ, անհրաժեշտություն, պատճառ, նշան, կարծիք, առիթ* և այլն: Սրանց լրացնող կախյալ նախադասությունները կարող են ընկալվել իբրև հատկացուցիչ մասնավորապես այն դեպքում, երբ գերադաս բաղադրիչում առկա է հարաբերյալ՝ հատկացուցչային իմաստով: Հմմտ.

Նրա անհրաժեշտությունը չկա, *որ դուք անպայման լայն անցքեր փորեք պայթեցման համար* [, ընդ, բայց խոր անցքերը ժայռի մեջ ավելի լավ արդյունք են տալիս] (ՍԽ):

Կախյալ նախադասությունները իբրև հատկացուցիչ են ընկալվում նաև այն ժամանակ, երբ գերադաս բաղադրիչում բացակայում է հարաբերյալը: Հմմտ.

[Սեդրակը սուլում է կրկին:] Դա նշան է, *որ կարող ենք իջնել ծորը* (ՍԶ): Եվ այդ պատճառ է լինում, *որ նա փախչի ինձնից* (ՎԹ): [Ես ընկերներիս, որ հարևան նավակում էին, պատմեցի տղայիս ենթադրությունների մասին,] և դա առիթ եղավ, *որ կատակի ու ծաղրի նյութ դառնա նրա ասածը* (ՎԱ):

Այս կարգի կախյալ նախադասությունները կարող են դիտվել նաև որպես որոշիչ: Պատճառն այն է, որ փոխակերպելիս կախյալ բաղադրիչի բայստորոգյալը արտահայտվում է անորոշ դերբայի սեռական-տրական հոլովով, որով դրսևորվում է նաև որոշիչը: Հմմտ.

Բանագնացների լռությունը նշան էր, *որ հաշտության պայմանները ընդունում են անվերապահորեն* (ՎԼ): Կարող է փոխակերպվել այսպես՝ Բանագնացների լռությունը *հաշտության պայմանները անվերապահորեն ընդունելու* նշան էր: Բայց քանի որ *նշան* գոյականի լրացումը (ընդունելու) պատասխան է ո՛չ թե *ո՞ր, ի՞նչ, ինչպիսի՞* (*որպիսի՞*), այլ *ինչի՞* հարցի, ուստի և կախյալը հատկացուցչային նախադասություն է, ինչպես՝ *Ինչի՞* նշան էր – *ընդունելու* նշան էր և ո՛չ թե *ի՞նչ, ինչպիսի՞* (*որպիսի՞*) նշան էր:

Հատկացուցչային կախյալ նախադասության կապակցությունը *նշույթավոր* է: Իբրև սպասարկու բառեր օգտագործվում են *որ, ով, ինչ,* հարաբերականները և *որ, թե* շաղկապները: Գերադաս բաղադրիչում հաճախ առկա է լինում ձևական անդամ՝ հարաբերյալ՝ արտահայտված անձնական երրորդ դեմքի դերանվան սեռական հոլովով, եթե եզակի է (նրա) և սեռական-տրական հոլովով, եթե հոգնակի է (նրանց):Իբրև հարաբերյալ կիրառվում են նաև ցուցական դերանվան երրորդ շարքի համանման ձևերը՝ նույն հոլովներով (նրա, նրանց):

Այս դերանունները իրենց նյութական բովանդակությունը ստանում են կախյալ նախադասությունից: Եթե կախյալ նախադասությունը անձ է ակնարկում, կապակցությունը իրացվում է առավելապես *ով* (*որ*), երբեմն՝ *որ* (*ը որ*) հարաբերականներով. իր, իրողություն, երևույթ նշելիս կիրառվում են *որ* և *թե* շաղկապները, *որ* (*ը որ*), *ինչ* (*որ*) հարաբերականները: Տե՛ս վերի օրինակները:

Հատկացուցչային կախյալ նախադասությունները շարադասվում են բոլոր երեք հնարավոր տարբերակներով՝ *նախադաս, միջադաս, հետադաս:* Սակայն քանի որ կախյալ բաղադրիչները սովորաբար կցվում են հատկացյալին կամ հարաբերյալին, այդ իսկ պատճառով նրանց շարադասությունը հաճախ պայմանավորված է լինում հենց այդ հատկացյալի ու հարաբերյալի՝ գլխավոր բաղադրիչում գրաված դիրքով: Սրան համապատասխան ստացվում են միջադաս և հետադաս կախյալ նախադասություններ: Հմմտ.

Ա. *Միջադաս.* Հայացքը նրանց, *ում պիտի որ դու, ըստ հին օրինաց, եղբայր կոչեիր կամ աջըդ տայիր, կամ աջ պաչեիր,* Հայացքը նրանց դաղում է հիմա (ՊՍ): Եվ սիրտը նրա, *որին անգթորեն, առանց խղճի խայթի տրորել էին,* կորցրել էր և հավատը ամեն ինչի հանդեպ (ԱՎ):

Բ. *Հետադաս.* Զարթնեց հույսը, *թե շուտով նորից կառնեն մանգաղն ու գերանդին* (ԱԲ): Այդ օրը ես սիրով կանցնեի նրանց կողմը, *ովքեր գովերգում են պարզ անծրևանոցը կամ անջրանցիկ թիկնոցը՝ երկնքի արցունքներից մեզ պաշտպանողներին* (ԱՎ):

Գ. Երբեմն տրամաբանական շեշտի, կախյալ նախադասության մեջ արտահայտված իմաստը հատկապես ընդգծելու կամ այլ նկատառումներով հատկացուցչային բաղադրիչը *նախադասվում է:* Հմմտ.

Ով Նրա անունը կտա, գլուխը կտրել կտաս (ՀԹ): *Ովքեր խարույկի մոտ էին նստած,* նրանց դեմքերը լուսավորված էին [, և երևում էր խոր ու անթափանց մտահոգություն] (ՀՍՅԵ):

Հատկացուցչային կախյալ նախադասությունները գերադաս բաղադրիչի հետ սովորաբար չեն կապակցվում առանց սպասարկու բառերի՝ շարահարությամբ:

ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

§ 242. *Գերադաս բաղադրիչի՝ բայով արտահայտված որևէ անդամի լրացնող նախադասությունները կոչվում են բայական անդամի լրացում կախյալ նախադասություններ:*

Այս ստորադաս նախադասությունները հարաբերակցում են պարզ նախադասության բայական անդամի լրացումներին: Ինչպես պարզ նախադասության մեջ, այնպես և բարդ նախադասություններում կախյալ բաղադրիչները կարող են դրսևորել երկու կարգի հարաբերություններ՝ *խնդրային* և *պարագայական:*

Ինչպես արդեն նշվել է (տե՛ս § 227-229), գերադաս բաղադրիչի բայական անդամի լրացում է դառնում նաև *ենթակա* կախյալ նախադասությունը, որը բայական մյուս լրացումներից տարբերվում է թե՛ իր ենթակայական գործառույթով ու դրսևորած իմաստով, թե՛ նրանով, որ կապակցվում է բացառապես միայն դիմավոր բային կամ, որ նույնն է, *բայ-ստորոգյալին:* Մինչդեռ մյուսները կարող են լրացնել գերադաս բաղադրիչի ո՛չ միայն դիմավոր բային, այլև՛ անդեմ բայով, ավելի ստույգ՝ անկախ դերբայներով արտահայտված որևէ անդամի:

Բայական անդամի լրացումները, պայմանավորված իրենց լրացական հարաբերությունների բնույթով, ստորաբաժանվում են երկու խմբի՝ *խնդրային* և *պարագայական* կախյալ նախադասությունների:

ԽՆԴՐԱՅԻՆ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 243. *Խնդրային կախյալ նախադասությունները վերաբերված կերպով նշում են մի գործողություն, իր, իրողություն, երևույթ, որոնք իրենց այս կամ*

այն գործառույթով մտնում են գերադաս բաղադրիչի բայական անդամի արտահայտած գործողության ծիրի մեջ:

Բայի խոսքամասային արժույթի հետ կապված՝ խնդրային կախյալ նախադասությունները հանդես են գալիս կա՛մ որպես *բայասեռի*, կա՛մ որպես *բայիմաստի* լրացումներ: Բայասեռի լրացումները առնչվում են *ներգործականև կրավորական* սեռերին: Ներգործական սեռի խնդիր է *ուղիղ խնդիրը*, կրավորական սեռի խնդիր է *ներգործման խնդիրը:* Այսուս խնդիրներն առնելու ունակության տեսակետից բայի սեռը չեզոքացվում է, և կարևորվում է ու վճռական դառնում *բայիմաստը:*

Թեև ներգործող խնդիրը բայասեռի խնդիր է, բայասեռի լրացում, սակայն իր արտահայտած բովանդակությամբ, ամբողջ բարդության մեջ ունեցած շարահյուսական դերով ավելի առնչվում է անուղղակի խնդիրներին, քան ուղիղ խնդրին: Այս իսկ պատճառով ավանդական քերականագիտության մեջ, ինչպես և սույն դասագրքում, ներգործող խնդիրը տեղաբաշխվում է անուղղակի խնդիրների մեջ:

Խնդրային կախյալ նախադասությունները, այսպիսով, լինում են՝ *ուղիղ խնդիր* և *անուղղակի խնդիր:*

Ա. ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 244. *Ուղիղ խնդիր կախյալ նախադասությունը լրացնում է գերադաս եզրի ներգործական սեռի խնդրառու բայիմ՝ վերաբված կերպով նշելով այն իրը, իրողությունը, անձը, որոնք իրապես և տրամաբանորեն ընկալվում են իբրև գործողությունը կրողներ* (*գործողության օբյեկտներ*):

Ունի իմաստակառուցվածքային հետևյալ հատկանիշները:

Գործողությունը կրելու կամ ներգործվելու հատկությունը քերականական կարգ է: Խնդրառու բայի արտահայտած գործողությունից ներգործվելը կարող է լինել *իրապես շոշափելի* ու *առարկայական*, բայց կարող է նաև *այդպիսին չլինել:* Հմմտ.

Ա. *Առկա է շոշափելի, առարկայական ներգործություն.* Նրանք տալիս են գյուղացուն այն, *ինչ որ պետք է նրա համար*, և փոխարենը առնում են այն, *ինչ որ գյուղացին հեռու տեղեր տանելու և վաճառելու համար արգելքներ ունի* (Ր): Փղի նման մտնելով ապակեղենի խանութը՝ ջարդեց ու փշրեց, *ինչ որ պատահեց* (ԴԴ):

Տալ, առնել, ջարդել, փշրել բայերի իմաստների հետ կապված՝ կախյալ նախադասությունները նշում են վերաբված առարկաներ, իրողություններ, որոնք առարկայապես, ուղղակիորեն ներգործվում են խնդրառու բայերի արտահայտած գործողություններից: Կրելով գործողությունը՝ նրանք կարող են իրական կամ երևակայական, մտացածին փոփոխության ենթարկվել, կարող են նաև չենթարկվել: Էականը այն է, որ ներգործությունը իրական է:

Բ. *Շոշափելի, առարկայական ներգործություն չկա:* Կարելի է ասել՝ առհասարակ ներգործություն չկա: Մարդի՛կ, հիշեցե՛ք նրանց, *որ ընկած՝ արդարության խոսքը շուրթերին, գնացին անդարձ* (ԳԹ):

Հիշել բայի իմաստը չի ենթադրում որևէ ներգործություն: Ում որ հիշում ենք կամ չենք հիշում, կարող են մինչև իսկ չիմանալ, թե իրենց հիշում ենք կամ չենք հիշում, առավել ևս, եթե «ընկել-գնացել են անդարձ» և այլևս չկան: Սակայն միևնույնն է, թե՛ առաջին, թե՛ երկրորդ կետերում նշված և թե՛ ընդհանրապես ուղիղ խնդրի գործառույթ ունեցող բոլոր նախադասությունները քերականորեն դիտվում են որպես կրող առարկա, որ պարտադրված է գերադաս բաղադրիչի խնդրառու բայի ներգործական սեռով:

Ըստ գերադաս բաղադրիչի բայ-լրացյալի արտահայտած *իմաստի՝* կախյալ նախադասությունները ստորաբաժանվում են հետևյալ խմբերի:

1. *Նախադասություններ, որոնք լրացնում են նյութական, առարկայական (ֆիզիկական) գործողություններ նշող խնդրառու բայերի:* Այս նախադասությունները վերաբերում են այնպիսի բայերի, որոնց գործողությունը իրացնելու կամ չիրացնելու համար, եթե բայը ժխտական խոնարհման է, անհրաժեշտ են կրող առարկաներ, իրողություններ, երևույթներ: Այդպիսի բայերից են՝ *տալ, վերցնել, առնել, ընտրել, կառուցել, քանդել, արտադրել, սպառել, փչացնել, խորտակել, նորոգել, վերանորոգել, նվագել, շարել, ջարդել, ջարդ ու փշուր անել, այրել, մոխրացնել, մոխիր դարձնել, հավասարեցնել, չենացնել, շեն դարձնել, ստեղծել, ճոխացնել, ճոխ դարձնել, լցնել, պարուրել, դատարկել, գտնել, կորցնել, շահել, տանուլ տալ, քամուն տալ, ազատականացնել* և այլն: Հմմտ.

[Դուք չծանոթացրիք մեզ մարդկանց պահանջներին] և չտվեցիք այն, *որ պետք է հանգիստ ու բախտավոր ապրելու համար* (Ր): Եվ այսպես ազատականացրին այն, *ինչ նոր մի անունով կոչվում է շուկայական հարաբերություն:*

Նշված բայերի մեջ կան և այնպիսիք, որոնք կարող են ստանալ ո՛չ միայն առարկայանիշ, այլև անձնանիշ իմաստով լրացումներ: Սա պայմանավորված է նրանով, թե ի՛նչ իմաստ է արտահայտում կախյալ բաղադրիչը, և ինչպե՛ս է իրացվում կապակցությունը: Հմմտ. *Ընտրել, վերցնել* բայերը:

Ա. Ընտրի՛ր (վերցրո՛ւ) այն, *ինչ որ քեզ դուր է գալիս → առարկայանիշ* իմաստով:

Բ. Ընտրի՛ր (վերցրո՛ւ) նրան, *ով որ քեզ դուր է գալիս → անձնանիշ* իմաստով:

2. *Նախադասություններ, որոնք լրացնում են կամային իմաստ արտահայտող խնդրառու բայերի:* Այդպիսի բայերից են՝ *կամենալ, ուզենալ, պահանջել, կարգադրել, հրամայել, հորդորել, խնդրել, աղերսել, որոշել* և այլն:

Կամային իմաստներով օժտված խնդրառու բայերի նշած գործողության ոլորտում ևս կարող են գտնվել այնպիսի կախյալ նախադասություններ, որոնք արտահայտում են բնական իրողություններ, երևույթներ, բայց կարող են լինել նաև այնպիսիք, որոնք նշում են անձի հետ կապված գործողություններ, եղելություններ: Հմմտ.

Ես պահանջում եմ, *որ վաղվանից ամեն մի չիճ իմ մեծ տերության մեջ* [,ուր էլ լինի,] *հանճի այդ ծանր, սև գլխարկները և սպիտակ, թեթև գլխարկներ դնի* (ԱԻ): Ես կկամենայի, *որ դուք հանեք ձեր այդ գլխարկն ու ծեռնոցները* (ՆԴ): Ես ուզում եմ, *որ տարափը տեղա արտի, ոչ թե իզուր՝ ծովի վրա:* Ես ուզում եմ, *որ քարափը քարայծ պահի, ոչ թե օձեր ու մողեսներ:* Ես ուզում եմ, *որ կարապը ոչ թե մեռնի, Որ կարապը ապրի՝ երգով* (ՊՍ):

3. *Նախադասություններ, որոնք լրացնում են զգայական իմաստ արտահայտող բայերի:* Այդպիսի բայերից են՝ *սիրել, հարգել, ատել, տեսնել, նկատել, արգահատել, արհամարհել, լսել, շոշափել, հոտոտել, համտեսել, համտես անել* և այլն: Զգայական իմաստ արտահայտող այս բայերին լրացնող ստորադաս նախադասությունները ևս կարող են հավասարապես դրսևորել թե՛ առարկայի, իրողության, երևույթի, թե՛ անձի հետ առնչվող գործողություններ, իրողություններ: Հմմտ.

[Հայ-հա՛յ, մոտիկ տեղից եկա,] Տե՛ս *որտեղի՛ց կգամ հիմի* (ՀԹ): Մեզ հաճելի է դիտել, *թե ինչպես նրանք թռչում են փրփուրի վրայով, կորչում ջրվեժի փոշու մեջ* (ԱԲ):

4. *Նախադասություններ, որոնք լրացնում են ասացական իմաստով բայերի:* Այդ բայերից են՝ *ասել, գոչել, հայտնել, հաղորդել, հարցնել, պատասխանել, պատմել, հայտարարել* և այլն:

Այս կարգի նախադասությունների իմաստային բնորոշ հատկությունը այն է, որ յուրովի ներկայացնում են *ուրիշի ուղղակի* կամ *անուղղակի* խոսքը: Հմմտ.

Ա. *Ուրիշի ուղղակի խոսք.* Կիրիլ Կարպիչը, բռնելով որդու ձեռքը, հանդիսավորությամբ մոտեցավ Մարկ Իվանիչին և ասաց. -- *Ահա՛ քո փեսան* (Մ): [Երբ թագավորը հրաժեշտ տվեց իշխանին,] բոլորը միաբերան գոչեցին. -- *Բարի ճանապա՛րհ, արքա՛* (ՍՋ):

Բ. *Ուրիշի անուղղակի խոսք.* Ասում են՝ *իբրև խարույկի վրա ջահել ըմբոստի մի սիրտ են վառել* (ՀՇ): Հնաբնակները պատմում էին, *որ Կապուտջիղ լեռան ստորոտից դեպի ծորը սողացող ծնաբուքը երբեմն կլանում էր խրճիթների ծրագները և սկսում ոռնալ դիվային ծայնով* (ՍԽ):

5. *Նախադասություններ, որոնք լրացնում են հասկացական-իմացական իմաստով բայերի,* որպիսիք են՝ *իմանալ, ըմբռնել, հասկանալ, կռահել, մտածել, մտաբերել, միտք անել, խորհել, հիշել, գուշակել, ճանաչել* և այլն:

Սրանց լրացնող կախյալ նախադասությունները նշում են այնպիսի գործողություն, եղելություն, իրողություն, երևույթ, որ ըմբռնվում, հասկացվում, կռահվում, գուշակվում է գերադաս բաղադրիչի ենթակայի կողմից: Հմմտ.

Նուներ մորաքրոջս պատմածից ես հիշում եմ հատկապես այն, *որ մեր տան դիմացի զորանոցի ռուս զինվորները մեզ հետ ապրանքափոխանակություն էին կատարում* (ՎԱ): Ես ըմբռնեցի, *որ* [եթե ունես թռցնող թևեր,] *չես զգա երբեք ծանրությունը քո:* Եվ այն հասկացա, *որ դրամի պես մաշվել են արդեն բառերը բոլոր* (ՊՍ):

§ 245. Ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների կապակցությունը լինում է *նշույթավոր* և *անշույթ*:

1. *Նշույթավոր* կապակցությունը իրացվում է *որ, թե* շաղկապներով և *ինչ* (*ը*), *որ* (*ը*), *ով* հարաբերականներով, որոնց կարող է հավելվել *որ* թարմատարը:

2. Գերադաս բաղադրիչում կարող է առկա լինել *հարաբերյալ*: Իբրև հարաբերյալ կիրառվում են անձնական երրորդ դեմքի դերանվան եզակի տրականը կամ հոգնակի սեռական-տրականը (*նրան, նրանց*), եթե գերադաս բաղադրիչի գործողության ոլորտում գտնվում է անձ: Իսկ եթե այդ նույն գործողությունը վերաբերում է որևէ առարկայի, իրողության կամ առարկայացված մեկ այլ գործողության, օգտագործվում են ցուցական երրորդ շարքի *այն* և *նրանք*, ինչպես և *նույնը, միևնույնը* դերանունները, բոլորը միայն ուղղական հոլովով:

Հարաբերյալի գործածությունը գրեթե կամընտիր է՝ կապված տրամաբանական շեշտի, հեղինակային նախասիրության, բանաստեղծական խոսքում՝ նաև չափ ու կշռույթի և այլ գործոնների հետ (տե՛ս վերի օրինակները): Սակայն կարող են լինել նաև այնպիսի կառույցներ, որտեղ հարաբերյալի առկայությունը անհրաժեշտ է: Այսպես՝ եթե գերադաս նախադասության մեջ կան անդամներ, որոնք կապակցվում են *ո՛չ թե... այլ, ... այլ ո՛չ թե, ո՛չ միայն... այլև* շաղկապներով, գերադաս եզրում հարաբերյալը պետք է առկա լինի, այլապես կախյալ նախադասությունը ճիշտ չի ձևավորվի: Հմմտ.

Երեխան սիրում է *ո՛չ միայն* իր ծնողներին, *այլև նրանց*, ովքեր հոգատարությամբ են շրջապատում իրեն: Երեխան սիրում է *ո՛չ թե* ծնողներին, *այլ նրանց*, ովքեր...: Կամ՝ Երեխան սիրում *է ո՛չ միայն նրան(ց), ով(քեր)*... և այլն:

Հարաբերյալը սովորաբար կիրառվում է նաև այն գերադաս բաղադրիչներում, որտեղ խնդրառու բայը ունի բազմակի ուղիղ խնդիրներ, որոնցից վերջինը արտահայտված է ստորադաս նախադասությամբ: Հմմտ.

Չէր խնայում հայրենիքը լքած ընկերներին ու բարեկամներին և *նրանց, ովքեր եվրոպական սրճարաններում նստած՝ արցունքներ էին թափում ազգի համար* (ՀՔ):

3. *Նյութական-առարկայական* գործողություններ նշող բայերին լրացնող կախյալ նախադասությունները կապակցվում են *որ(ը), ով, ինչ(ը)* հարաբերականներով: Գերադաս բաղադրիչում հարաբերյալը այստեղ ևս կամընտիր է կամ պարտադիր՝ վերը (§ 245, 2) նշված կառույցի պահանջներին համապատասխան: Հմմտ. վերի օրինակները, այլև՝

Հովնանը մի կերպ շամփուրին շարեց, *ինչ մնացել էր սիգից* [, բայց այնպես, որ ծուկ կազմեն՝ գլխից մինչև պոչ] (ՈՀ): Եվ Մաքոն, կարծես ի պատասխան բոլորի, պոկում է գետնից *նրան, որ կողքանց կանգնած էր իր առջև* [, ապա խլում նրա հրացանը] (ՍՍ):

4. *Համայիհն* իմաստ արտահայտող խնդրառու բայերին լրացնող կախյալ նախադասությունները առավելապես կապակցվում են *որ* շաղկապով: Գերադաս բաղադրիչում սովորաբար հարաբերյալ չի լինում:

Նկատելի է, որ այս խմբի կախյալ բաղադրիչների բայ-ստորոգյալները հաճախ դրվում են *ըղձական եղանակով, որով* դրանք ստանում են նպատակային հարաբերության երանգ: Տե՛ս վերի օրինակները, § 244, 2, այլև՝

[Եկել էր քաղաք,] ինձ խնդրել, *որ օգնեմ* (ՀԹ): Հրամայեցիր, *որ պատրաստ լինենք կռվելու՞, թե՞ նահանջելու* (ՎԼ):

5. *Զգացական* իմաստ արտահայտող խնդրառու բայերին լրացնող ստորադաս նախադասությունները կապակցվում են *որ, թե* շաղկապներով և *ով, ինչ(ը)* հարաբերականներով: Հարաբերյալների առկայությունը գերադաս եզրում կամընտիր է: Եթե կախյալ բաղադրիչը վերառված անձ է ակնարկում, կապակցությունը իրացվում է *որ(ը)* (*որոնք*), *ով* (*ովքեր*) հարաբերականներով, որոնց գերադաս բաղադրիչում կարող են զուգորդվել հարաբերյալները: Եթե իր, երևույթ է նշում, կապակցվում է *որ, թե* շաղկապներով և *ինչ(ը)* հարաբերականով, իսկ գերադաս եզրում կարող է կիրառվել *այն* հարաբերյալը: Տե՛ս վերի օրինակները (§ 244, 3), այլև՝

Բայց նորից սիրել *նրան, ով խաղում է ուրիշի նվիրական զգացմունքների հետ* (...), ավա՜ղ, սիրելի՛ս, ես չեմ կարող (ՆԴ): Նորընծան զգաց *այն, ինչ ծանոթ է խրոնիկ հիվանդություն ունեցողին* (ԱԲ): [Նա կրկին վեր կացավ] և այս անգամ գնաց տուն՝ տեսնելու, *թե Նունուֆարը տոպրակները կարկատո՞ւմ է դեռ* (ՍՋ): Տեսե՞լ եք, *թե ինչպես փոթորկի պահին ծառի ճյուղերը իրար են զարկվում* (ՍԵ) և այլն:

6. *Հասկացական-իմացական,* այլև *ասացական* իմաստ արտահայտող բայերին լրացնող կախյալ նախադասությունները կապակցվում են գրեթե նույն կաղապարներով, որոնք հատուկ են զգացական բովանդակությամբ խնդրառու բայերի լրացումներին: Տե՛ս վերի օրինակները (§ 245, 5), այլև՝

Անուն առ անուն հիշում էին *նրանց, ովքեր զոհվել կամ անհետ կորել էին* (ՍՍ): Չեմ ուզում ասել, *ինչ դեռ ինքս էլ չգիտեմ* (ՎԳ): Նա գիտեր, *որ այլադավան ժողովուրդները կույր ատելություն և քամահրանք չունեն միմյանց աստվածների նկատմամբ* (ՀՍՅԵ): Իսկ քահանան պատմում էր, *որ գերմանացիք ուրիշ տեսակ խաչապաշտ են* (ԱԲ) և այլն:

7. *Թե* շաղկապով սովորաբար կապակցվում են *թեականություն* կամ *անուղղակի հարցում* արտահայտող կախյալ նախադասությունները: Հմմտ.

Մի կարմրաքարցու հանդիպելիս [,եթե հարցնեին գյուղի անցուդարձից,] նա պատասխանում էր, *թե քաչալ Սայիմ դեռ բոստանում է* (ԱԲ): Մենք չգիտենք, *թե ո՛ր երկրներում էր առևտուր անում հայոց վաճառականը* (Ր): [Այս ինն օրում այնքան բան տեսա, որ] չգիտեմ, *թե ո՛րը նկարագրեմ* (ՀՀ):

8. Երբեմն ուղիղ խնդիր կախյալ նախադասությունը կապակցվում է նաև *երբ, որտեղ* հարաբերականներով: Այսպես կապակցված կախյալ նախադասությունները թեև ուժեղ խնդրառության շնորհիվ պահում են իրենց լրացական խնդրային հարաբերությունը, բայց նաև ձեռք են բերում *ժամանակի* կամ *տեղի պարագայի* երանգներ: Հմմտ.

Սիրում եմ, *երբ խելոք հարցեր են տալիս,* չեմ սիրում, *երբ հենց այնպես՝ ձևի համար են հարց տալիս:* [Չևաթուղթը (անկետան) գրեթե լրացված էր,] ուստի և ես լրացրի, *որտեղ լրացված չէր.*

Երբեմն գերադաս բաղադրիչում *այն*-ի փոխարեն կիրառվում են *այնքան, այնչափ, այնպես* հարաբերյալները, որոնք կախյալ նախադասությանը հաղորդում են *չափի ու ծևի պարագաների* երանգներ: Հմմտ.

Բայց իմ կարծ խելքով *էնքանն* եմ տեսնում՝ *ապրիլ չի լինիլ էսպես ամեն օր* (ՀԹ): Շատերը *այնպես էին կարծում, թե իրենց մշակած հողը հենց իրենց է պատկանում* (Ն):

§ 246. Ուղիղ խնդիր կախյալ նախադասության կապակցությունը կարող է լինել նաև *աննշույթ*: Սա շարահարական կապակցություն է, որ առավելապես տարածված է ժողովրդախոսակցական լեզվում, որտեղից էլ մուծվում է գրական-գեղարվեստական խոսքի մեջ: Հմմտ.

Տեսանք՝ *ահեղ էն ծորում Ոնց էր լալիս ու գոռում Մարոյի հայրն ալևոր, մայրը ճչում սգավոր* (ՀԹ): Ես կարծում եմ՝ *պաղն ավելի լավ ես զգում ամռան շոգին, Դողն ավելի լավ ես զգում ծմռան բքին* (ՊՍ):

Հազվադեպ՝ գերադաս բաղադրիչում կարող է առկա լինել հարաբերյալ: Հմմտ.

[Դատարանը սուտ չի խոսիլ,] բայց դու *այն* ասա՝ *այս մարդում 131 ռուբլի՞ ես տվել* (Մ): Հենց *էն* եմ տեսնում՝ *մութն, անգետ մարդիկ, էլ մենք ենք մեջտեղ տանջվում ամեն օր* (ՀԹ):

1. Շարահարությամբ կապակցվում են մասնավորապես *ասացական, հասկացական* իմաստով բայերին լրացնող այն կախյալ նախադասությունները, որոնց կազմում կա որևէ *հարցական* դերանուն, որով էլ հենց դրանք արտահայտում են անուղղակի հարցում: Հմմտ.

[Քաշում են տանից, քաշում են դռնից,] Ու չես իմանում՝ *<u>ով</u> կողմը թռչես* (ՀԹ): *<u>Որտեղի՞ց</u> էր գալիս այդ թախիծը* նա չգիտեր (ՀԽ): *<u>Ո՞վ</u> է օգնում նրանց, <u>որտեղի՞ց</u> է նրանց ուժը՝ չէր կարողանում կռահել* (ՍԽ) և այլն:

2. Բացառապես շարահարությամբ է կապակցվում ուղիղ խնդրի գործառույթով հանդես եկող *ուրիշի ուղղակի խոսքը*: Այնպես որ կապակցությունը լիապես աննշույթ է: Տե՛ս վերի օրինակները (§ 244, 4, Ա), այլև՝

Ու Փառանձեմ տիկինը ծնկածալ (...) ձայնում էր ահեղ երկինքն ի վեր *–Տապարով եմ զարկել պարանոցին քո սեգ, Այս ինչքա՞ն է խորունկ վերքդ, Գնե՛լ* (ՎԴ): *–Հնության հոտ է գալիս,* – ասաց Հովհաննը (ՈՀ): [Եթե քո տան ծառայության հանդեպ անհավատարիմ եմ եղել,] *գլուխս կտամ,* – պատասխանում է Հուսոն (ՍՍ): Այս մասին տե՛ս նաև «Ուրիշի ուղղակի և անուղղակի խոսք» գլուխը:

§ 247. Ուղիղ խնդիր կախյալ նախադասությունները մեծավ մասամբ կիրառվում են հետադաս դիրքով: Տե՛ս վերի օրինակներից շատերը: Հմմտ. նաև՝

Բայց ես գիտեի, *որ մեռնում է նա* [, ով որ քեզ սիրի] (ԵՉ): Առհասարակ ձայնից նկատում էի, *որ չափազանց ուրախ տրամադրության մեջ էր* (ՆԴ): Մենք չգիտենք, *որ լճափին մնացած այդ տղան ո՛չ միայն երկնքի նշաններից, այլև բնազդներով է հասկանում մոտալուտ վտանգը* (ՎՍ) և այլն:

Քիչ չեն նաև այն նախադասությունները, որոնցում կախյալ բաղադրիչը նախադաս է: Վերը քննված կառույցներում կան այդպիսիք: Կախյալ եզրը նախադասվում է մասնավորապես այն դեպքում, երբ արտահայտում է անուղղակի հարցում՝ իր կազմում ունենալով կամ չունենալով հարցական դերանուն, կապակցությունն էլ շարահարական է: Հմմտ.

Ա. *Հարցական դերանվամբ. <u>Ի՞նչ</u> էր հայ կինը, որպես ամուսին, <u>ի՞նչ</u> էր նա, որպես մայր, <u>ի՞նչ</u> դեր էր խաղում, որպես ընտանիքի և հասարակության անդամ* մենք չգիտենք (Ր): *<u>Ո՞վ</u> էր նա իսկապես և <u>ինչո՞ւ</u> միայնակ դեպի ժայռերի գահավանդն էր առաջնորդում*, թագուհին չիմացավ (Մ):

Բ. *Առանց հարցական դերանվան. Եղա՞վ դատաստան այս վերջինի համար, թե՞ չեղավ*, մենք չգիտենք (Լ): *Արդյոք իմ խե՞ղճն է սկսում խառնվել, արդյոք սե՞րն է խճճում իմ մտքերը*, չգիտեմ (ՀՍՅԵ) և այլն:

Նույնպիսի շարադասություն կարող է լինել նաև համանման զոդվածական կապակցությամբ կառույցներում: Հմմտ.

Թե ի՛նչ է նրանց վերջնական նպատակը, և ո՛ւր են տանում երկիրը, ո՛չ ոք չի կարող կռահել:

Սակավ դեպքերում կախյալ նախադասությունը կարող է նաև միջադասվել: Հմմտ.

Էն էլ, *որ ես իմ վառ սրտով ու կարոտով սիրեցի*, Քամուն կտամ [, Կմոռանամ ամեն մի հարց ու կերթամ] (ԵՉ):

Բ. ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 248. *Անուղղակի խնդիր կախյալ նախադասությունները լրացնում են գերադաս բաղադրիչի խնդրառու բային՝ վերաբված կերպով նշելով նրա գործողության ոլորտում գտնվող և այդ գործողության հետ անուղղակիորեն կապված անձ, իր, իրողություն, երևույթ:*

Անուղղակի խնդիրները ստորաբաժանվում են երկու ենթատեսակի: Առաջին ենթատեսակը ներկայացնում է գերադաս բաղադրիչի բայ-լրացյալի *սեռի խնդիրը*, երկրորդը՝ *բայիմաստի խնդիրները:*

Սեռի խնդիրը *ներգործող* խնդիրն է, որ լրացնում է կրավորական սեռի բայերին, մյուսները *բայիմաստի խնդիրներ են, որոնց գործառույթի մեջ լրացյալի բայասեռի քերականական կարգը չեզոքացված է:*

ՆԵՐԳՈՐԾՈՂ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 249. *Ներգործող անուղղակի խնդիրը վերաբված կերպով նշում է այն անձը, իրը, իրողությունը, որոնց գործողությունը կրողը գերադաս բաղադրիչի ենթական է:*

Այս խնդիրը էությամբ գերադաս նախադասության բնական և տրամաբանական ենթական է, որ քերականորեն ձևավորվել է իբրև ներգործող խնդիր: Իսկ այդ նույն բաղադրչի քերականական ենթական այլ բան չէ, քան բնական և տրամաբանական կրող առարկան (անձը): Իմաստային և շարահյուսական այսպիսի հարաբերությունը պայմանավորված է գերադաս բաղադրիչի խնդրառու բայի սեռային կարգով, ավելի ստույգ *կրավորական սեռի* պահանջով: Ասվածը որոշակի կարելի է դիտարկել հետևյալ երկու տարբերակներով, որոնց գերադաս բաղադրիչներում բայ-ստորոգյալները արտահայտված են տարբեր սեռերով:

Ա. *Կրավորական. Դու ամենից շատ քննադատվեցիր* նրա կողմից, *ով ամենից քիչ էր հասկանում այդ հարցից.*

Բ. *Ներգործական.* Քեզ ամենից շատ *քննադատեց* նա, *ով ամենից քիչ էր հասկանում այդ հարցից.*

Կախյալ նախադասությունը երկու կառույցներում էլ ունի նույն ձևավորումը: Երկուսի մեջ էլ այն նշում է գերադաս բաղադրիչում առկա գործողության կատարողին, այսինքն՝ իրական ու բնական ենթական, սակայն առաջինում շարահյուսորեն ձևավորվել է որպես *ներգործող խնդիր*, իսկ երկրորդում *ենթակա* է նաև շարահյուսորեն:

Այսպիսով՝ ներգործական կառուցվածքի գերադաս նախադասության մեջ քերականական և տրամաբանական կամ բնական ենթակաները նույնանում են, կրավորական կառուցվածքի նախադասության մեջ՝ ոչ:

Ներգործող խնդիր կախյալ նախադասությամբ բարդ նախադասությունները այնքան էլ մեծ հաճախականություն չունեն և քիչ թե շատ հանդիպում են գրական-գեղարվեստական աղբյուրներում: Առօրյա կենդանի խոսքում գրեթե չեն կիրառվում:

Ունեն կառուցվածքային հետևյալ հատկանիշները:

1. Գերադաս բաղադրիչի խնդրառու բայը *կրավորական* սեռի է:

2. Կապակցությունը *նշույթավոր* է: Կախյալ բաղադրիչը կապակցվում է *ով, որ* (*ը*), *ինչ* (*ը*) հարաբերականներով և *որ* շաղկապով:

3. Գերադաս բաղադրիչում կիրառվում է հարաբերյալ, որի իմաստը նյութականացնում է կախյալ նախադասությունը: Եթե կախյալ նախադասությունը վերաբերում է անձի, իբրև հարաբերյալ օգտագործվում է անձնական երրորդ դեմքի *նա* (*նրանք*) դերանվան բացառական հոլովը (*նրանից, նրանցից*) կամ *նրա* (*նրանց*) *կողմից* հոլովակապային կապակցությունը: Եթե կախյալ բաղադրիչը ակնարկում է իր, իրողություն, երևույթ, որպես հարաբերյալ գործառվում է ցուցական երրորդ շարքի համանուն դերանվան գործիական հոլովը *նրանով: Համմտ.*

Արհամարհված ու ծաղրված էր նաև *նրանցից, ովքեր իր շնորհիվ էին բարձր դիրքի հասել:* Խեղճ ու կրակ, ծեռ ու ոտից ընկած ծերունին արդարացվեց միայն *նրանով, որ դատարանը նրան ի վերջո ճանաչեց անմեղսունակ* (Ն): Մարդկանց առօրյա հոգսերը հաճախ անուշադրության են մատնվում *նրանց* իսկ *կողմից, ում հենց իրենք են նստեցրել բարձրագույն աո-*

յանների բարձրաթիկնոց աթոռներին: Շունը մարդուց ավելի է գերադասված *նրանց կողմից, որ կոչվում են մարդ ու աստված* (ՊՍ):

Կախյալ բաղադրիչը սովորաբար գրավում է հետադաս դիրք: Տե՛ս վերի օրինակները:

ԲԱՅԻՄԱՍՏԻ (ԲՆՈՒԹՅԱՆ) ԽՆԴԻՐ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 250. *Անուղղակի խնդիր կախյալ նախադասությունների երկրորդ խումբը առնչվում է գերադաս բաղադրիչի խնդրառու բայի իմաստին և կոչվում է բայիմաստի խնդիր,* ավանդական անվանումով՝ *բնության խնդիր:*

Բայի սեռի քերականական կարգը այս խնդիրների ձևավորման և իմաստաքերականական հարաբերությունների արտահայտման տեսակետից որևէ նշանակություն չունի: Նման խնդիրները կարող են լրացնել թե՛ ներգործական, թե՛ կրավորական և թե՛ չեզոք սեռերի բայերին: Խնդրի դրսևորած շարահյուսական բովանդակությունը, ձևավորումը և կապակցական հատկությունները առավելապես պայմանավորվում են գերադաս բաղադրիչի բայ-լրացյալի բառային իմաստով:

Պետք է նշել նաև, որ կախյալ նախադասություններով արտահայտված անուղղակի խնդիրները շատ սակավ են թե՛ տեսակային և թե՛ քանակական հատկությամբ և իրենց հաճախականությամբ երբեք չեն կարող համեմատվել պարզ նախադասության մեջ կիրառվող անուղղակի խնդիրների հետ:

Ժամանակակից հայերենում գործառվում են բայիմաստի հետևյալ անուղղակի խնդիր ստորադաս նախադասությամբ բարդ նախադասությունները:

1. ՀԱՆԳՄԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 251. *Հանգման անուղղակի խնդիր երկրորդական նախադասությունը վերաբերական կերպով նշում է այն անձը, իրը, իրողությունը, ում կամ ինչին հանգում է գերադաս բաղադրիչի խնդրառու բայի արտահայտած գործողությունը կամ եղելությունը:*

Ունի իմաստակառուցվածքային հետևյալ հատկանիշները:

1.Հանգման խնդիր ստացող բայերը արտահայտում են բազմազան իմաստներ՝ առարկայական-ֆիզիկական գործողություններից ու եղելություններից սկսած՝ մինչև զգայական, մտավոր ու կամային գործողություններ: Բառային իմաստների այսպիսի բազմազանությունը, սակայն, բնավ չի խանգարում, որ նրանք իրենց խնդրառական արժույթով միավորվեն մեկ խմբի մեջ և դառնան մեկ և նույն կառույցի բարդ նախադասության գերադաս եզրի լրացյալ, որի լրացումն է հանգման խնդիրը:

Հանգման խնդիր կախյալ նախադասությունները կարող են լրացնել այնպիսի բայերի, որոնք արտահայտում են՝

Ա. *Առարկայական գործողություններ,* ինչպես՝ *մոտենալ, բախվել, դիպչել, կպչել, հանգել, միանալ, ծուլվել, փաթաթվել, հանդիպել, հանդիպադրվել, այցելել* և այլն: Հմմտ.

[Հովհաննը մտածում էր, որ ափ հասնելուն պես նավակը կքաշի ցամաք և] կփաթաթվի նրանց, *ովքեր այլևս հույս չունեին իրեն կենդանի տեսնելու* (ՌՀ):

Բ. *Զգայական* կամ *կամային գործողություններ,* ինչպես՝ *վստահել, դիմել, ենթարկվել, հպատակվել, դիմադրել, ընդդիմանալ, հակառակվել, դեմ դուրս գալ, ընտելանալ, վարժվել, հարմարվել, համակերպվել, նմանվել, հակվել, հնազանդվել, սիրահարվել, լսել* (մեկի), *անսալ, օգնել, օժանդակել* և այլն: Հմմտ.

Ինչպե՞ս չվստահեին նրան, *որին միակամ ու միաձայն ընտրել էր ողջ ժողովուրդը:*

Գ. *Ասացական* իմաստներ՝ *ասել, հայտնել, հաղորդել, հարցնել, գրել, պատմել, զեկուցել, հարց ու փորձ անել* և այլն, որոնցով խոսքը, ասելիքը հասցեագրվում է մեկին: Հմմտ.

Հեքիաթներդ պատմիր նրա՛ց, *ովքեր զարմանալու ունակությունը դեռ չեն կորցրել:*

Դ. Ներգործական սեռի բայերից *ցն* ածանցով կամ *տալ* բայի հարադրությամբ կազմված պատճառական բայերը պահանջում են միաժամանակ երկու խնդիր, որոնցից մեկը ուղիղ խնդիր է, մյուսը՝ հանգման խնդիր: Նման բայեր են՝ *հասկացնել, հիշեցնել, կարդացնել, սովորեցնել, գրել տալ, նորոգել տալ, դիտել տալ* և այլն: Հմմտ.

Գրեթե բոլոր հեռուստաալիքներով ամեն տեսակի բռնություններ, սրտածմլիկ տեսարաններ, արյուն ու հրդեհ *են դիտել տալիս* նրանց,*ովքեր դպրոցական տարիքից դեռ շատ հետո պիտի դուրս գան:*

§ 252. Կապակցությունը կարող է իրացվել հետևյալ կերպերով:

1. Կիրառվում են *ով, որ* (*ը*), *ինչ* (*ը*) հարաբերականները և *որ, թե* շաղկապները: Գերադաս բաղադրիչում սովորաբար գործառվում է հարաբերյալ՝ արտահայտված անձնական դերանվան երրորդ դեմքի եզակի կամ հոգնակի տրական հոլովով: Սա կարող է ընկալվել նաև որպես ցուցական դերանուն: Հարաբերյալը գործածվում է հատկապես հարաբերական կապակցության մեջ: Հմմտ.

Ես հասա *նրան, ինչին ձգտում էի:* Արքայական թագն ու ծիրանին հանձնեցին *նրան, ով բոլորովին արժանի չէր հայոց գահին բազմելու:*

Շաղկապական կապակցության դեպքում գերադաս բաղադրիչում հարաբերյալ սովորաբար չի լինում: Հմմտ.

[Աննա մորաքույրս հրեց դուռը, սակայն] չհետևեց, *որ դուռը լրիվ փակվի* (ՍԿ):Ես ինքս կօգնեմ, *որ դու հավաքես միտքդ ցանուցիր* (ՍԿ): Ուզում եմ հավատալ, *որ ինչ-որ տեղ դուք կաք դեռ իմ արյան անքավելի մեղա-*

գործներ (ՌԴ): Ես չեմ կարող հավատալ, *թե դու մեզ ընդհանրապես մոռացել ես:*

Ստորադաս բաղադրիչի բայ-ստորոգյալը հաճախ արտահայտվում է ըղձական եղանակով: Կախյալ եզրը այդ դեպքում ստանում է նպատակային հանգ: Տե՛ս շաղկապական կապակցությամբ առաջին օրինակը:

2. Եթե գերադաս բաղադրիչում օգտագործվում են *գալ, հենվել, արշավել, գրոհել, հարձակվել* և նման իմաստներով խնդրառու բայեր, ապա դրանց զուգորդվում է հարաբերյալ հոլովակապային արտահայտությամբ, ինչպիսիք են՝ *նրա* (*նրանց*) *վրա, նրա* (*նրանց*) *դեմ, ընդդեմ նրա* (*նրանց*), *նրա* (*նրանց*) *համար* և այլն: Հմմտ.

Գիշերով կրկին գրոհեցին *նրանց վրա* (*դեմ*), *ովքեր երեկվա թեժ կռվից հետո դեռևս չէին միավորել իրենց ուժերը:* Կգա՞ս, կգա՞ս, իբրև փառաբանում ու փառք *նրանց համար, որոնք դյուցազնորեն, ներկա կյանքով հարուստ ու գալիքով հպարտ նահատակվել են* (ՊՍ):

3. Կապակցությունը, թեև քիչ դեպքերում, կարող է իրացվել նաև *շարահարությամբ,* որ ավելի հատուկ է ժողովրդախոսակցական լեզվին: Հմմտ.

Սպասում էր՝ *արդյոք յուր տերը կբարեհաճե՞ր ջուր պահանջել* (Ր): Բայց նայի՛ր՝ *ինչքան զվարթ է, ինչպես նոր է ու միշտ անհատնում* (ԵՉ): Հավատում են [եթե մեկնումեկը նեղն ընկնի՝] *մյուսն իր կյանքի գնով կփրկի նրան* (ՍԽ):

Կան կառույցներ, որոնց գերադաս բաղադրիչը ստացել է դարձվածային արժեք. ստորադաս եզրն էլ կապակցվում է շարահարությամբ: Հմմտ.

[Հազիվ էր զսպում հեկեկանքը,] մազ էր մնում՝ *ծառս լիներ տեղում ու գլուխը ծեծեր* (ՍԽ): Աստված վկա՝ *առանց հարցնելու կարող եմ ասել* [, որ հայրս գալիս է] (Ր): [Բայց թե իմ գլխին փորձանք գա մի օր,] ես օրը վկա՝ *սրանից կգա* (ՀԹ):

4. Կախյալ նախադասությունը սովորաբար հետադասվում է: Տե՛ս վերի օրինակները: Ոճական, տրամաբանական շեշտի կամ այլ նկատառումներով կախյալ նախադասությունը կարող է միջադասվել, նույնիսկ նախադասվել: Հմմտ.

Նրան, *ով չահել էր առաջին մրցանակը,* շնորհվեց նաև դրամական պարգև: *Ով չահել էր առաջին մրցանակը,* նրան շնորհվեց նաև դրամական պարգև:

Դարձվածային արժեք ունեցող գերադաս բաղադրիչը սակավ դեպքերում ինքը կարող է տեղաբաշխվել ստորադաս նախադասության մեջ, երբ մանավանդ առկա է շարահարական կապակցություն: Հմմտ.

Մուտքի մոտ կանգնած մի կին *քիչ էր մնում* գետնին գլորվեր [, երբ մի մարդ բռնեց նրա թևից] (ՀԽ): [Սիրել է խանը աղջկան, սիրել է գաղտնի իր հոգում,] Այնպես կին, *Ղուրանը վկա* , Չի եղել նույնիսկ Չաննաթում (ԳՍ), այսինքն՝ *Ղուրանը վկա է, որ* այնպես (այնպիսի) կին չի եղել նույնիսկ Չաննաթում (դրախտում):

2. ԱՆՁԱՏՄԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 253. *Անջատման անուղղակի խնդիր կախյալ նախադասությունը վերաոված կերպով նշում է այն անձը, իրը կամ իրողությունը, որ ելակետ է ծառայում գերադաս բաղադրիչի խնդրառու բայի արտահայտած գործողության:*

Ունի իմաստակառուցվածքային հետևյալ հատկանիշները:

Կախյալ նախադասությունը կարող է արտահայտել այլևայլ հարաբերություններ՝ պայմանավորված գերադաս բաղադրիչի խնդրառու բայի բառային իմաստներով: Անջատման խնդիր են ստանում մի շարք բայեր:

1. Այնպիսիք, որոնք նշում են *առարկայական գործողություններ՝* անկախ իրենց սեռային կարգից: Դրանցից են՝ *հեռանալ, փախչել, անջատել, բաժանել, պոկել, զրկել, թաքցնել, հափշտակել, բռնագրավել,* նաև վերջիններիս կրավորականները՝ *անջատվել, բաժանվել, պոկվել, զրկվել* և այլն:

2. *Ծագման, գոյացման, առաջացման* և նման իմաստներ արտահայտող բայեր: Դրանցից են՝ *առաջանալ, գոյանալ, ծագել, ծնվել, սերել (սերվել), կազմվել* և այլն: Հմմտ.

Իր ուժերի նկատմամբ կասկածը ծնվեց *նրանից, որ երեկ ակոսի մեջ ծնկները կքոտեցին:* Օձը թույն է գոյացնում *նրանից, ինչից մեղուն՝ մեղր:*

3. Բայեր, որոնք արտահայտում են *ասացական-հասկացական իմաստներ,* ինչպիսիք են՝ *իմանալ, տեղեկանալ, լսել, հարցնել* և այլն: Հմմտ.

Իսկական ճշմարտությունը հաճախ իմանում ենք *նրանցից, ովքեր ամենից շատ են ուզում թաքցնել այն:*

4. Բայեր, որոնք արտահայտում են *հոգեկան այլևայլ վիճակներ:* Դրանցից են՝ *վախենալ, երկյուղել, ահաբեկվել, զգուշանալ, խուսափել, սարսափել, նողկալ, զզվել, ծանծրանալ, ամաչել, քաշվել, ապշել, շվարել* և այլն: Հմմտ.

Խուսափի՛ր և զգուշացի՛ր հատկապես *նրանցից, ովքեր շողոքորթում են քեզ:*

§ 254. Կապակցությունը մեծ մասամբ *նշույթավոր է:* Կապակցության բառական միջոցներն են՝ *ով, որ (ը), ինչ(ը)* հարաբերականները և *որ, թե* շաղկապները:

Գերադաս բաղադրիչում կարող է կիրառվել նաև հարաբերյալ՝ արտահայտված անձնական երրորդ դեմքի և ցուցական երրորդ շարքի համանուն դերանունների բացառական հոլովով (*նրանից, նրանցից*):

Գերադաս բաղադրիչի խնդրառու բայի նշած գործողությունը կարող է վերաբերել՝ ա. *անձի,* բ. *իրի, իրողության* կամ մեկ այլ *գործողության:*

Ա. Եթե վերաբերում է *անձի,* օգտագործվում են՝ *նրանից (նրանցից) → ով (ովքեր)* կամ *նրանից (նրանցից) → որը (որոնք)* կապակցական կաղապարները:

Բ. Եթե վերաբերում է *իրի, իրողության* կամ մեկ այլ *գործողության,* կապակցությունն իրացվում է առավելապես *որ,* մասամբ *թե* շաղկապներով,

երբեմն և *ինչ* հարաբերականով: Հարաբերյալի առկայությունը գերադաս եզրում կամընտիր է:

Կախյալ նախադասությունը սովորաբար գրավում է հետադաս դիրք: Տե՛ս վերի օրինակները: Այլև՝

Ապշեցին, շվարեցին, *թե Քրիստոս ինչպես գոց դռներով սրահին մեջ մտավ* (ԱՄ): Ես վախենում էի, *որ կզարթնես դարձյալ, Զարթնող այս գարնան հետ կգաս նորից* (ՍԿ):

Կախյալ նախադասությունը կարող է նաև միջադասվել: Հմմտ.

Եվ առանց քաշվելու, *որ ինքը գտնվում է ո՛չ թե փողոցում, այլ թագավորի պալատում,* սկսում է կոկորդովը մեկ գոռալ (ՀԹ):

Անջատման կախյալ նախադասությունը սակավ դեպքերում կապակցվում է նաև շարահարությամբ: Հմմտ.

Շատ եմ վախենում՝ *Պարսկաստան կանչվենք* (ԴԴ): Ես վախենում եմ, շատ եմ վախենում (...)՝ *Հանկարծ իմ մահով խախտվի համակշռված այս վիճակը քո* (ՊՍ):

3. ՄԻՋՈՑԻ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 255. *Միջոցի անուղղակի խնդիր ստորադաս նախադասությունը վերառված կերպով նշում է այն անձը, իրը, իրողությունը, որոնք իբրև միջոց, գործիք են ծառայում գերադաս բաղադրիչի խնդրառու բայի արտահայտած գործողության, եղելության կատարման համար:*

Ունի իմաստակառուցվածքային հետևյալ հատկանիշները:

Կախյալ նախադասությունը կարող է արտահայտել այլևայլ հարաբերություններ, որոնք բխում են գերադաս բաղադրիչի խնդրառու բայի իմաստից:

1. Միջոցի խնդիր ստանում են բոլոր երեք սեռերի այնպիսի բայեր, որոնք արտահայտում են *առարկայական գործողություններ, ինչպես՝ գնալ, գալ, ճանապարհվել, մեկնել* (*գնալ, ճամապարհվել*), *ուղևորվել, գրել, կոտրել, կտրել, ջարդել, որսալ, որս անել, շարել, կառուցել, քանդել, բացել, ծածկել, փակել, տաշել, ծակել, զարդարել, լցնել, դատարկել* և այլն: Հմմտ.

Մեղրի կարասը կարելի է ավելի շուտ դատարկել նրանով, *որ մեկ, թե կուզ և հսկա արջի փոխարեն մեկ միլիոն մժեղ թողնես վրան* (ՌՅ): Կեղծ ոսկեդրամը իսկականից տարբերում էր նրանով, *ինչով որ ընդունված էր վաճառականների շրջանում՝ ատամների տակ փորձելով կարծրությունը:*

2. Բայեր, որոնք նշում են *հոգեկան-հուզական տրամադրություն* ցուցադրող գործողություններ, վիճակներ, ինչպիսիք են՝ *բավարարվել, բավականանալ, գայթակղել, գոհանալ, գոռոզանալ, զմայլվել, զվարճանալ, հետաքրքրել, հիանալ, հրապուրել, հրճվել, մխիթարել, մտահոգվել, մտատանջվել, շահագրգռել, պարծենալ* և այլն: Հմմտ.

Իսմայիլը առայժմ բավականացավ նրանով, *որ որոշեց մի պահ իրեն հանձնել քնի փրկարար անզգայությանը* (ՀՄ):

Միջոցի խնդիր կախյալ նախադասության կապակցությունը *նշույթավոր է:* Իրացվում է *որ, թե* շաղկապներով և *որ* (*ը*), *ով* (*քեր*) , *ինչ* (*եր*) հարաբերականներով:

Գերադաս բաղադրիչում կարող է կիրառվել հարաբերյալ՝ արտահայտված անձնական երրորդ դեմքի կամ ցուցական երրորդ շարքի համանուն դերանունների գործիական հոլովով (*նրանով, նրանցով*): Տե՛ս վերի օրինակները: Հարաբերյալը կարող է ունենալ նաև հոլովակապային արտահայտություն. կիրառվում է *միջոցով* կապական բառը՝ իր խնդրով (*նրա, նրանց միջոցով*): Հմմտ.

Ինչո՞ւ հարցը չլուծեցիր *նրանց միջոցով, ովքեր, քո կարծիքով, կարող էին լուծել* (ՁԽ):

Առավել արտադրողական են կապակցական հետևյալ կաղապարները:

1. Եթե գերադաս բաղադրիչի խնդրառու բայը արտահայտում է առարկայական գործողություն, կապակցությունն իրացվում է *որ* շաղկապով կամ *ինչ* դերանվամբ, իսկ հարաբերյալի կիրառությունը կամընտիր է: Տեսականորեն վերը՝ առաջին խմբում նշված բոլոր բայերը ունենալով գերադաս եզրի լրացյալ՝ կարելի է ձևավորել այսպիսի կաղապարով կառույց՝ *խնդրառու բայ → ինչով....*՝ Հմմտ.

Գնա՛ ինչով կարող ես:
Եկ, ինչով կարող ես:
Ճանապարհվի՛ր, ինչով կարող ես:
Մեկնի՛ր, ինչով կարող ես:
Կոտրի՛ր, ինչով կարող ես:

Եվ այսպես՝ մինչև բայացանկի վերջին բայը՝ *Դատարկի՛ր, ինչով կարող ես:*

2. Եթե գերադաս բաղադրիչի խնդրառու բայը արտահայտում է *հոգեկան-հուզական* տրամադրություն դրսևորող գործողություն, վիճակ, այդ բաղադրիչում սովորաբար առկա է լինում հարաբերյալ, իսկ ստորադաս եզրը կապակցվում է վերոհիշյալ սպասարկու բառերից որևէ մեկով: Տե՛ս վերի օրինակը, այլև՝

Կերպարի այդպիսի մեկնաբանությունը շատերին հետաքրքրում էր *նրանով, որ Փափազյանը Օթելլոյի մեջ ընդգծում էր ո՛չ թե Վենետիկի մեծ զորավարին, այլ մեծ սիրահարին* (Ն): Հպարտանում էր հատկապես *նրանցով, ովքեր* (*որոնք*) *ժամանակին իրեն աշակերտելով՝ այժմ դարձել էին վրձնի մեծ վարպետներ:*

Թե շաղկապով կապակցությունը սակավ է հանդիպում: Այն կիրառվում է մասնավորապես, երբ կախյալ եզրը թեական երանգ ունի: Հմմտ.

Այսպես ամենքին մտաբերեց՝ խաբելով ինքն իրեն, *թե իր նման հրաշքով կենդանի են մնացել* (ՎԹ):

§ 256. Միջոցի խնդիր կախյալ նախադասությունը կարող է լրացնել գերադաս բաղադրիչի նաև *բաղադրյալ ստորոգյալին*, որի ստորոգելիճն *որակական ածական* է: Նման լրացում ստանում են այն ածականները, որոնք պարզ նախադասության մեջ ունակ են առնելու գործիական հոլովով ձևավորված խնդիր: Այդպիսի ածականներից են՝ *մեծ, հպարտ, ուրախ, գոհ, իրավացի, արդար, մեղավոր* և այլն: Հմմտ.

Մենք *մեղավոր* ենք *նրանով, որ հավատացել ենք նրանց սուտ ու պատիր խոստումներին:* Իմ օրերում երգը միայն *նրանով* էր *մեծ* ու *անգին, որ բորբոքում, հուր էր տալիս դեռ չկուփված, չեկած կյանքին* (ԵՉ): Ես շատ *գոհ* էի, *որ կարող էի անցյալի միջոցով բացատրել ներկան* (ԱՎ) և այլն:

Միջոցի խնդիր կախյալ նախադասությունը սովորաբար լինում է *հետադաս:* Տե՛ս բերված օրինակները: Ոճական կամ այլ նկատառումներով կարող է նաև *նախադասվել* կամ *միջադասվել*: Հմմտ.

Նրանով, *որ ակադեմիկոս որդի ունի,* հաճախ էր պարծենում: *Ինչով որ կարող ես,* զբաղվի՛ր:

4. ՎԵՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 257. *Վերաբերության անուղղակի խնդիր կախյալ նախադասությունը վերառված կերպով արտահայտում է այն անձը, իրը, իրողությունը, որին վերաբերում է գերադաս բաղադրիչի խնդրառու բայի արտահայտած գործողությունը.*

Ունի իմաստակառուցվածքային հետևյալ հատկանիշները:

Վերաբերության խնդիր առավելապես ստանում են *ասացական-մտածական* իմաստ արտահայտող ներգործական, կրավորական, մասամբ նաև չեզոք սեռի բայեր, որպիսիք են՝ *ասել* (*ասվել*), *հայտնել* (*հայտնվել*), *հաղորդել* (*հաղորդվել*), *հայտարարել* (*հայտարարվել*), *գրել* (*գրվել*), *հարցնել, զեկուցել* (*զեկուցվել*), *հարցում անել, հարց ու փորձ անել, զրուցել, մտածել, միտք անել, համոզել* (*համոզվել*), *վիճել, լուր տարածել, տեղեկանալ, տեղեկացնել* և այլն: Հմմտ.

Այս մարդը համոզված էր, *որ ժառանգության մի որոշ մասը պիտի ստանա իր կինը* (ԱԾ): Դարձյալ վիճում էին, *թե ով է շատ աշխատել, ով շատ կերել* (ՍՋ):

Վերաբերության խնդիր կախյալ նախադասության կապակցությունը առավելապես *նշույթավոր* է: Կապակցվում է *որ, թե* շաղկապներով և *որ(ը), ով, ինչ* հարաբերականներով: Գերադաս բաղադրիչում կարող է գործառվել հարաբերյալ՝ արտահայտված անձնական երրորդ դեմքի կամ ցուցական երրորդ շարքի համանուն դերանվան բացառական հոլովով, երբեմն՝ հոլովակապային կառույցով՝ *այն մասին, նրա* (*նրանց*) մասին: Հմմտ.

Լուր տարածվեց *այն մասին, թե հանգուցյալը կտակել է դնել դրանք իր դագաղի մեջ* (ԱԾ): [Ես միշտ ուզում էի՝] պապս խոսեր *նրանց մասին,*

որոնք կռվել էին Անդրանիկի դրոշի տակ (ՍՍ): Հերոսապատում բաներ էին պատմում հատկապես Անդրանիկից, որոշ բաներ էլ՝ *նրանից, որը մեծ զորավարի գրագիր-թարգմանիչն էր* [. Անդրանիկը ռուսերեն չգիտեր] (Ն.տ.):

Գերադաս բաղադրիչում հաճախ հարաբերյալ չի գործառվում, եթե լրացյալը արտահայտված է լինում՝ *համոզվել, հավատացած (լինել), սխալվել, խելք խելքի տալ* և նման իմաստներով բայերով: Հմմտ.

Որքա՜ն ծանր էր մի կին մարդու համար *համոզվել, թե ինքը դժբախտ է արդեն* (Մ): Հետո հավաքվեցին Թորոսի հեռու-մոտիկ կանայք և սկսեցին *խելք խելքի տալ, թե ի՛նչ դարման անեն* (ՆԴ): Հովհաննը *հավատացած էր, որ ահա ուր որ է հասնելու են ափ* (ՈՀ):

Կապակցությունը, թեև ո՛չ այնքան հաճախադեպ, կարող է իրացվել նաև *շարահարությամբ*: Այսպիսի կապակցություն հիմնականում լինում է հետևյալ դեպքերում:

Ա. Գերադաս բաղադրիչում կիրառվում է *հարաբերյալ*: Հմմտ.

[Ավելի լավ է՝] պատմիր *այն մասին՝ չվախեցա՞ր ամեհի գազանի դեմ մեն-մենակ դուրս գալուց:*

Բ. Ստորադասի սկզբում դրվում է մի *վերաբերական:* Հմմտ.

Բայց Վինիկիոսը մտածում էր այն մասին՝ *արդյոք Քիլոնը սուտ չի՞ խոսում* (ՀՍՅԵ):

Գ. Կախյալ նախադասությունը կարող է սկսվել *հարցական դերանվամբ* և արտահայտել անուղղակի հարցում: Հմմտ.

Մի՞թե քարսրտություն չէր լինի հարցուփորձ չանել, չտեղեկանալ՝ *ի՞նչ է նրանց պատահում, ինչպե՞ս են ապրում, ինչպե՞ս է նրանց առողջությունը, և որտե՞ղ են բնակվում* (*ՀՍՅԵ*):

Կախյալ նախադասության շարադասությունը մեծ մասամբ հետադաս է: Տե՛ս վերի օրինակները: Հազվադեպ գործածվում է նաև *միջադասությունը*, երբ մանավանդ գերադաս եզրը սկսվում է հարաբերյալով: Հմմտ.

Այն մասին, թե իսկապես հավատարի՞մ եմ մնացել իմ ուխտին, ոչ ոք չհարցրեց: *Նրանց մասին, ովքեր մութ ու ցրտի դաժան տարիներին չլքեցին հայրենի բնօրրանը,* քիչ մարդ է մտածում (Ն):

Եթե գերադաս բաղադրիչում գործածվում է ներգործական սեռի ասացական-մտածական խնդրառու բայ, և բացակայում է հարաբերյալը, ստորադաս բաղադրիչը կարող է ընկալվել և՛ որպես սեռի՝ ուղիղ խնդիր , և՛ որպես բայիմաստի՝ վերաբերության խնդիր: Հմմտ.

Հայտնեցին, *որ գալու է*: Ընդգծված կախյալ նախադասությունը կարող է դիտվել և՛ որպես ուղիղ խնդիր (Հայտնեցին *ի՞նչը → գալը*), և՛ որպես վերաբերության խնդիր (Հայտնեցին *ինչի՞ մասին → գալու մասին*):

Եթե գերադաս եզրում գործառվում է ասացական-մտածական խնդրառու բայ, որ կրավորական սեռի է, և բացակայում է հարաբերյալը, ստորադաս նախադասությունը կարող է ընկալվել և՛ որպես ենթակա, և՛ որպես վերաբերության խնդիր: Հմմտ.

Հայտնվեց, *որ գալու է:* Ընդգծված բաղադրիչը կարող է ընկալվել և՛ որպես ենթակա (Հայտնվեց *ի՞նչ → գալը*), և՛ որպես վերաբերության խնդիր (Հայտնվեց *ինչի՞ մասին → գալու մասին*):

ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ԿԱԽՅԱԼ ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 258. *Պարագայական կախյալ նախադասությունները վերառված կերպով դրսևորում են գերադաս բաղադրիչի բայ-լրացյալի արտահայտած գործողության կամ եղելության հանգամանքներն ու հատկանիշները:*

Պարզ պարագաների համեմատությամբ՝ պարագայական նախադասությունները գերադաս եզրի լրացյալի նշած գործողության կամ եղելության հանգամանքներն ու հատկանիշները արտահայտում են առավել հարուստ նրբերանգներով, բազմազանությամբ ու ճոխությամբ:

Հիմք ունենալով իմաստային այդ հարաբերությունների ընդհանրություններն ու տարբերությունները՝ պարագայական կախյալ նախադասությունները ստորաբաժանվում են երկու ենթախմբի, որոնք են՝ ա. *հանգամանքային հարաբերություններ* դրսևորող և բ. *հատկանշային հարաբերություններ* դրսևորող նախադասություններ:

Ա. ՀԱՆԳԱՄԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՐՍԵՎՈՐՈՂ ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 259. *Այս կախյալ նախադասությունները վերառված կերպով արտահայտում են գերադաս եզրի բայ-լրացյալի նշած գործողության, եղելության, իրողության այլևայլ հանգամանքներ՝ տարածական, ժամանակային, պատճառահիմունքային, զիջական և այլ հարաբերություններով:*

1. ՏԵՂԻ ՊԱՐԱԳԱ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 260. *Տեղի պարագա կախյալ նախադասությունը վերառված կերպով նշում է այն տեղը, որտեղ կատարվում է գերադաս բաղադրիչի բայ-լրացյալի արտահայտած գործողությունը կամ եղելությունը:*

Ունի իմաստակառուցվածքային հետևյալ առանձնահատկությունները:

Կապակցությունը նշույթավոր է. իրացվում է միայն *ուր* (*որ*) և *որտեղ* (*որ*) հարաբերականներով: Գերադաս բաղադրիչում կարող է լինել հարաբերյալ՝ արտահայտված *այնտեղ* ցուցական դերանվան ուղղական (հայցական), բացառական և գործիական հոլովներով կամ *դեպի այնտեղ, մինչև այնտեղ* հոլովակապային կառույցներով: Հմմտ.

Ուր նրանք են սավառնում, *սիրտս էլ հետները* այնտեղ *է ճախրում* (ԱԻ): Նա ծնվել էր *այնտեղ, ուր կաճ լեռներ ժայռոտ, ուր կաճ քարափներ, կիրճեր* (ՊՍ):

Տեղի պարագա կախյալ նախադասությամբ կարող են արտահայտվել տարածական այլևայլ հարաբերություններ, որոնք պայմանավորված են գերադաս բաղադրիչի բայ-լրացյալի բառային իմաստով:

1. *Բուն տեղի պարագա:* Կախյալ նախադասությունը ցույց է տալիս այն տեղը, տարածությունը, որի շրջանակներում, ներսում, միջում, մակերեսին և այլն կատարվում է գերադաս բաղադրիչի բայի նշած գործողությունը: Այդպիսի բայերին լրացնող պարզ տեղի պարագաները սովորաբար արտահայտվում են տեղանիշ մակբայներով, մակբայական որոշ դերանուններով, գոյականի ներգոյական հոլովով կամ հոլովակապային կառույցներով: Եթե գերադաս բաղադրիչում հարաբերյալ կա, այն դրվում է ուղղական (հայցական) հոլովով՝ ներգոյականի նշանակությամբ: Գերադաս բաղադրիչում սովորաբար կիրառվում են այսպիսի բայեր՝ *ծնվել, ապրել, բնակվել, լինել, կանգնել, նստել, քայլել, պառկել, հոգնել, հանգստանալ, աշխատել, պարապել, խաղալ, ուրախանալ, մահանալ* և այլն: Հմմտ.

Որտեղ տիրում է թշվառությունը, այնտեղ ավելի մեծ թվով զոհեր է տանում մահացությունը (Ր): [Գնա՛, քարավա՛նըս, ինձ հետդդ քա՛րշ տուր օտար, ամայի ճամփեքի վրա,] *Որտեղ կհոգնիս,* գլուխս վա՛ր դիր ժեռ քարերի մեջ, փշերի վրա (ԱԻ):

2. *Ուղևորման* կամ *ժամանման տեղի պարագա:* Կախյալ նախադասությունը նշում է այն տեղը, դեպի որը ուղղվում է գերադաս բաղադրիչի բայ-լրացյալի արտահայտած գործողությունը: Կիրառվում են այնպիսի բայեր, որոնք լայն առումով նշում են որևէ շարժում, որ ուղղվում է որևէ կետից դեպի մի այլ կետ, մի տեղից այլ մի տեղ: Նման բայերից են՝ *գնալ, հասնել, ժամանել, ուղևորվել, ուղարկել* (*ուղարկվել*), *մեկնել, վերադառնալ, վերադարձնել* (*վերադարձվել*), *տանել* (*տարվել*) և այլն:

Կախյալ նախադասությունը նշում է նաև **այն տեղը, որտեղ** ավարտվում է այդ շարժումը, գործողությունը:

Հարաբերյալը գերադաս եզրում, եթե կա, դրվում է ուղղական (հայցական) հոլովով կամ հոլովակապային կառույցով՝ *դեպի այնտեղ:*

Ստորադաս բաղադրիչը կապակցվում է *ուր*, երբեմն նաև *որտեղ* հարաբերականներով, եթե կախյալ բաղադրիչի բայը պահանջում է *բուն տեղի պարագա:* Հմմտ.

Հանցագործին նրա ոտքերը սիրում են տանել *այնտեղ, որտեղ նա մարդ է սպանել* (ՊՍ): *Սպանել* բայը պահանջում է բուն տեղի պարագա, ուստի և կիրառվել է *որտեղ* հարաբերականը: *Ուր կգնաս դու, այնտեղ* կգամ և ես: Երկու բաղադրիչների բայերն էլ նշում են ուղևորման իմաստներ (*գնալ, գալ*), ուստի և կապակցությունը իրացվել է *այնտեղ → ուր* կաղապարով: Այլ օրինակներ.

Այդ ճանապարհը տանում էր *ո՛չ այնտեղ, ուր նա ուզում էր հասնել* (ՆՋ): Ճանապարհի լայն ժապավենը մխրճվել էր *այնտեղ, ուր դեռ պահպանվել էին դեղնամամուռ հնությունները* (ՈՀ) և այլն :

3. *Ելման տեղի պարագա.* Կախյալ նախադասությունը նշում է այն տեղը, որտեղից սկսվում է գերադաս բաղադրիչի լրացյալի արտահայտած գործողությունը: Կապակցությունը նախորդների հետ նույնական է, միայն թե հարաբերյալը դրվում է բացառական հոլովով (*այնտեղից*): Իբրև գերադաս բաղադրիչի լրացյալ կիրառվում են երկրորդ կետում նշված, ուղևոր-

ման իմաստ արտահայտող շատ բայեր՝ *գնալ, գալ, հեռանալ, հեռացնել, վերադառնալ, վերադարձնել* (*վերադարձվել*), *ժամանել, ուղարկել* (*ուղարկվել*), այլև այնպիսիք, որոնք պահանջում են բացառական հոլովով պարզ տեղի պարագա և պատասխանում են *որտեղի՞ց* հարցին: Հմմտ.

Եկավ *որտեղի՞ց → գյուղից* (որտեղ աշխատում էր). Եկավ *այնտեղից, որտեղ աշխատում էր:*

4. *Ուղեկցման* (*անցման*) *տեղի պարագա:* Կախյալ նախադասությունը նշում է այն տեղը, որի միջով անցնում է գործողությունը:

Կապակցությունը նույնն է նախորդների հետ, միայն թե հարաբերյալը դրվում է գործիական հոլովով, որն էլ կախյալ նախադասությանը հաղորդում է ուղեկցման կամ անցման հարաբերության իմաստ: Գերադաս բաղադրիչում իբրև լրացյալ գործածվում են այնպիսի բայեր, որոնք ունակ են ստանալու գործիական հոլովով արտահայտված պարզ տեղի պարագա: Թե՛ ուղևորման, թե՛ ելման, մինչև անգամ բուն տեղի պարագա վրացում ստացող շատ բայեր կարող են պահանջել նաև ուղեկցման իմաստով պարագա: Հմմտ.

Գնալ, գալ, վազել ա. *որտե՞ղ → այնտեղ → անտառում* (բուն տեղի պարագա), բ. *դեպի որտե՞ղ → դեպի այնտեղ → դեպի անտառ* (ուղևորման տեղի պարագա), գ. *որտեղի՞ց → այնտեղից → անտառից* (ելման տեղի պարագա), դ. *որտեղո՞վ → այնտեղով → անտառով* (ուղեկցման տեղի պարագա): Այնպես որ կախյալ նախադասության իմաստային երանգը ուղղակիորեն բխում է գերադաս բաղադրիչի լրացյալի բայիմաստից և հարաբերյալի հոլովական ձևավորումից: Հմմտ.

Մենք քայլում էինք այնտեղով, որտեղ մարդկային ոտք դեռ չէր դիպել:

§ 261. Ինչպես արդեն նշվել է (տե՛ս § 234, 1), *որտեղ, ուր* հարաբերականներով կարող են կապակցվել նաև այնպիսի կախյալ նախադասություններ, որոնք լրացնում են գերադաս բաղադրիչի ո՛չ թե բայական անդամին, այլ գոյականով արտահայտված կամ գոյականաբար առնված որևէ անդամի: Այսպիսի ստորադաս բաղադրիչները թեև տարածական հարաբերություններ են դրսևորում և ունեն պարագայական իմաստային երանգ, սակայն իրապես որոշիչներ են և չպետք է շփոթվեն տեղի պարագայի հետ: Հմմտ.

(...) Հող ու ջրի պղպջակներ էր պայթեցնում ահեղ դեպի վեր, երկի՜նք, *Որտեղ Հիսուսը, նստած հոր աջում, ինքնին մեծացավ արդեն մեկ տարով* (ՊՍ): Մեր առաջին ճիչը անլսելի դարձավ *այն* խուլ կռիվներում, *ուր թշնամին իբրև դժնատեսիլ ահեղք կախվել էր մեր անմեղ օրոցքների վրա* (և.տ.):

Ինչպես դժվար չէ նկատել, նման դեպքերում գերադաս բաղադրիչում հարաբերյալը, եթե կա, արտահայտվում է երրորդ շարքի հատկանշանիշ ցուցական դերանուններով, որպիսիք են՝ *այն* (տե՛ս վերի օրինակը), *այնպիսի*, այլև *նույն, նույնպիսի* դերանունները:

Գերադաս նախադասության մեջ հաճախ կարող է առկա լինել մի տեղանիշ մակբայ՝ *առաջ, դիմաց* (*ը*), *մոտ, դուրս, վերև, ներս, ներքև, հեռու, ամենուր, ամենուրեք* և այլն, որոնց կարող է լրացնել կախյալ նախադասությունը՝ կապակցվելով *ուր* կամ *որտեղ* հարաբերականներով: Հմմտ.

Նա տխուր հայացքը հառեց ներքև, *որտեղ ընկած էր ջարդված արծաթիկը* (ԹՄ)։ *Ամենուրեք, ուր ոտք էինք դնում,* տեսնում էինք նույն պատկերը, և այլն։ Այս և նման կառույցներում կախյալ եզրը ո՛չ թե որոշիչ է կամ տեղի պարագա, այլ մասնավորեցնող պարագայական բացահայտիչ (տե՛ս § 202, Ա, Բ, Գ)։

Տեղի պարագա կախյալ նախադասության *շարադասությունը* կամընտիր է։ Կախված է հեղինակային նախասիրությունից, տրամաբանական շեշտից, ոճական և նման գործոններից։ Կախյալ նախադասությունը կարող է լինել՝

Ա. *Հետադաս.* տե՛ս վերի համապատասխան օրինակները, այլև՝

Ամեն զգացող ձև ապավինել էր իր շնչին և ծվարել, *ուր որ կարողացել էր* (ԱԻ)։

Բ. *Նախադաս.* տե՛ս վերի համապատասխան օրինակները, այլև՝

Ուր աներեւ արքան չի մտնիլ կռվով, Ղոնաղ է աշուղն իրեն սազի հետ (ՀԹ)։ [Չէ, այդ ես էի, ես էի նման արևածաղկի,] *Որտեղ դու* (էիր), այնտեղ իմ գլուխն էր ակամա հակվում (ՊՍ)։

Գ. *Միջադաս.* Այսպիսի շարադասության դեպքում գերադաս նախադասությունը սովորաբար սկսվում է հարաբերյալով, որին հաջորդում է ստորադաս եզրը, ապա նախադասությունը եզրափակում են գերադաս բաղադրիչի մյուս անդամները։ Հմմտ.

Այնտեղ, ուր հին մարագներն են, առավոտ կանուխ հավաքվում են մշակները (ԱԲ)։ *Այնտեղ, որտեղ դուք ինձ չեք համզգա, Այնտեղ, որտեղ ինձ չեք համաձայնի,* Չշտապեք [, խնդրե՛մ,] իսկույն համարել ուղեղի քաղհան կամ սրտի բորբոս (ՊՍ) և այլն։

2. ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 262. *Ժամանակի պարագա կախյալ նախադասությունը վերառված կերպով նշում է գերադաս բաղադրիչի լրացյալի արտահայտած գործողության կամ եղելության կատարման ժամանակը։*

Ունի իմաստակառուցվածքային և գործառական հետևյալ առանձնահատկությունները։

Ժամանակակից հայերենում բավականաչափ լայն կիրառություն ունեն ժամանակի պարագա կախյալ նախադասությունները և աչքի են ընկնում թե՛ իրենց իմաստային բազմաճոխ երանգներով, թե՛ կապակցական եղանակների ու միջոցների բազմազանությամբ։

Ժամանակի բովանդակությամբ կախյալ նախադասությունը գերադաս բաղադրիչի դիմավոր բայի լրացում է՝ անկախ նրա՝ պարզ ստորոգյալ, թե բաղադրյալ ստորոգյալի հանգույց լինելուց։ Իր կազմում այսպիսի լրացում ունեցող բարդ նախադասության գերադաս և ստորադաս եզրերի միջև գոյանում են ժամանակային այլևայլ հարաբերություններ, որոնք բխում են

այդ բաղադրիչների արտահայտած բո՛ւն իսկ իմաստներից, դրանց կապակցական միջոցներից, շատ հաճախ՝ նաև բառաքերականական այլ գործոններից, մասնավորապես՝ որոշ մակբայների, այլ բառերի ու բառակապակցությունների կիրառություններից, ինչպես նաև բայ-ստորոգյալների եղանակաժամանակային մասնակի կամ լիակատար համաձայնեցումից:

Կապակցությունը լինում է *նշույթավոր* և *աննշույթ:*

Նշույթավոր կապակցությունը իրացվում է *երբ* (*որ*), *քանի* (*որ*) հարաբերականներով և *հենց, հենց որ, մինչ, մինչև, մինչև որ, մինչդեռ, նախքան, որ, քանի դեռ, թե չէ* շաղկապներով:

Իբրև հարաբերյալ գերադաս բաղադրիչում հաճախ կիրառվում է *այն ժամանակ* հոլովակապային կառույցը:

Թեև գերադաս նախադասության ստորոգյալը, արտահայտված լինելով դիմավոր բայով, արդեն իսկ ունենում է ժամանակի, հասկանալի է՝ նաև եղանակի քերականական կարգեր, սակայն կախյալ նախադասությունը ճշգրտում, որոշակիացնում է գործողության կատարման ժամանակը, ժամանակահատվածի այսինչ ու այնինչ պահը:

Այսպիսով՝ ստեղծվում է գերադաս և ստորադաս բաղադրիչների բայ-ստորոգյալների նշած գործողությունների, եղելությունների հարաբերակցություն՝ կատարման ժամանակի տեսանկյունով:

Բաղադրիչների դիմավոր բայերի ժամանակների հարաբերակցությունը կարող է ունենալ երկու հիմնական արտահայտություն՝ *համաժամանակություն* և *տարաժամանակություն:*

1. *Համաժամանակությունը* ենթադրում է գերադաս և ստորադաս բաղադրիչների բայ-ստորոգյալների նշած գործողությունների, եղելությունների ժամանակների տևողության զուգադիպություն: Զուգադիպությունը իր հերթին կարող է լինել *լիակատար* և *մասնակի:*

Ա. *Լիակատար համաժամանակությունը* արտահայտվում է նրանով, որ գերադաս բաղադրիչի բայ-լրացյալի նշած գործողության կամ եղելության ժամանակը իր տևողությամբ *լիապես* համաձայն է կախյալ նախադասության բայ-ստորոգյալի արտահայտած գործողության կամ եղելության կատարման ժամանակահատվածին, այսինքն՝ երկու գործողությունները կատարվում են միաժամանակ, ժամանակային միևնույն հատվածում:

Այս կառույցի էական առանձնահատկությունն այն է, որ երկու ստորոգյալները ունենում են միևնույն եղանակաժամանակային կիրառությունները, որը, սակայն, երբեմն կարող է խախտվել (տե՛ս ստորև բերվող օրինակները):

Կապակցությունը սովորաբար իրացվում է *երբ* (*որ*), *քանի* (*որ*) հարաբերականներով, *քանի դեռ, մինչ, մինչդեռ* շաղկապներով: Գերադաս եզրում կարող է առկա լինել *այն ժամանակ* հարաբերյալը: Հմմտ.

Նույնիսկ *այն ժամանակ, երբ տատս ինձ կշտամբում էր,* [ինձ այնպես էր թվում [, որ սայլերի ամեն մի անիվն արձագանքում է իմ հոգու անհուն թախիծին] (ՎԹ): Ու միշտ, *քանի որ կա շահ ու գերի, ստրուկ ու տեր,* չի լինելու երկրի վրա ո՛չ շիտակ խոսք, ո՛չ կյանք, ո՛չ սեր (ՀԹ): Օ՜, դո՛ւ, կարո՞ղ եմ

արդյոք երբևէ մոռանալ ես քեզ, *քանի իմ մեջ հնչում է թեկուզ չնչին մի էջ մեր կյանքից անցած այնքա՜ն բեկբեկ* (ԵՉ):

Բ. *Մասնակի համաժամանակությունը* բնորոշվում է նրանով, որ գերադաս և ստորադաս բաղադրիչների բայ-ստորոգյալների նշած գործողությունները կամ եղելությունները ժամանակային առումով զուգորդվում են մասնակիորեն. մեկը հարատև է, շարունակվող, մյուսը՝ ո՛չ: Ժամանակային այսպիսի հարաբերակցությունը դրսևորվում է հատկապես այն կառույցներում, որտեղ բաղադրիչներից մեկում նշվում է տևական, շարունակական, մյուսում՝ միանգամյա, այսինչ պահին, այսինչ րոպեին, ժամին կամ օրը կատարվող գործողություն:

Կապակցությունը իրացվում է *երբ* (*որ*) հարաբերականով և *մինչ, մինչդեռ* շաղկապներով: Հմմտ.

Երբ Կարոն պատրաստվում էր դուրս գալ, Մարիամը վազեց նրա մոտ (Ր): Եվ ամեն բան նա վերջացած էր համարում, *երբ իրեն-իրեն խոսելով՝ ներս մտավ սև շորերով բարի պառավը՝ բազազի մերը* (ՀԹ): Տակավին տատանվում էր նա՝ փախչելու ապարանքից, *երբ մի օր եկավ չնաշխարհիկ պարուհին* (ԱԻ):

2. *Տարաժամանակությունը* արտահայտվում է նրանով, որ գերադաս և ստորադաս բաղադրիչների բայ-ստորոգյալների նշած գործողությունների, եղելությունների իրական ժամանակները չեն զուգադիպում: Երկու գործողությունները, եղելությունները կատարվում են հաջորդաբար, ժամանակային առումով *մեկը հաջորդում է մյուսին:*

Հաջորդման հարաբերությունը ինքնին պայմանավորում է նաև *նախորդման* հարաբերություն: Քանի որ գերադաս բաղադրիչի բայ-լրացյալի գործողության, եղելության ժամանակը որոշվում է ստորադաս եզրով, ուստի և այն կարող է *նախորդել* վերջինիս կամ *հաջորդել:* Ելակետը, այսպիսով, ստորադաս բաղադրիչի բայ-ստորոգյալի գործողության կատարման ժամանակն է: Դրան համապատասխան էլ գոյանում են երկու հարաբերություններ՝ ա. *նախորդման* և բ. *հաջորդման:*

Ա. *Նախորդման հարաբերություն:* Սրա էությունը այն է, որ նախ կախյալ նախադասության բայ-ստորոգյալի նշած գործողությունն է կատարվում, ապա գլխավոր: Ըստ որում՝ երկու եզրերի բայերի եղանակաժամանակային քերականական կարգերը այստեղ էական նշանակություն չունեն: Դրանք մինչևիսկ կարող են լիապես նույնական լինել: Հմմտ.

Հենց որ ինձ տեսնում է, ոտքի *է կանգնում*: Հենց որ ինձ *տեսնում էր*, ոտքի *էր կանգնում*: Հենց որ ինձ *տեսավ*, ոտքի *կանգնեց*:

Կարող են բայական ժամանակները նույնը լինել, իսկ եղանակները՝ ո՛չ, ինչպես՝ Հենց որ ինձ *տեսնի*, ոտքի *կկանգնի* և այլն:

Կապակցությունն իրացվում է *երբ* (*որ*), հարաբերականով և *հենց որ, որ, թե չէ* շաղկապներով: Վերջինս ավելի հատուկ է ժողովրդախոսակցական լեզվին:

Եթե կապակցվում է *հենց, հենց որ, որ, թե չէ* շաղկապներով, նշվում է գերադաս բաղադրիչի այնպիսի մի գործողություն, որը *անմիջապես, ի-*

կույն ևեր հաջորդում է ստորադաս եզրում նշված գործողությանը: Տե՛ս վերի համապատասխան օրինակները, այլև՝

Ու *հենց չողաց ցոլքն արևի,* անտես, անհետ չքացան (ՀԹ)*: Էս որ լսեցիին,* դես ու դեն ցրված Տղերքը ճեպով ծորը ներս մտան (Ն.տ.): *Որ կանչեց,* նրա ձենից ահավոր դղրդոդ-դղմբդղմբոցն ընկավ սար ու ձոր (Ն.տ.):

Երբ հարարաբերականով կապակցվելու դեպքում չի ընդգծվում գերադաս բաղադրիչի բայ-ստորոգյալի նշած գործողության անմիջական հաջորդումը ստորադաս եզրի գործողությանը, այլ արտահայտվում է հաջորդում՝ ընդհանուր նշանակությամբ, ընդհանրապես հաջորդում: Հմմտ.

Երբ հիմա տարիներ անց, հիշողությանս մեջ կենդանանում են այդ տառապյալ, գունատ դեմքերը, սիրտս լցվում է մի անհուն սիրով դեպի նրանց (ԱԻ): *Երբ ես հին աշխարհը մտա ես տաղով, սազով քամանչով* [, Ի՞նչ պիտի անի աշխարհում ես անմիտ, անճարը], ասին (ԵՉ):

Կախյալ նախադասության՝ նախորդման հարաբերություն արտահայտելու դեպքում գերադաս եզրում հարաբերյալ չի կիրառվում: Տե՛ս վերի օրինակները:

Բ. *Հաջորդման հարաբերություն:* Սա բնութագրվում է նրանով, որ կախյալ բաղադրիչի բայ-ստորոգյալի նշած գործողությունից, եղելությունից առաջ կատարվում է գերադաս նախադասության գործողությունը:

Այստեղ ևս, ինչպես նախորդման հարաբերության դեպքում (տե՛ս նախորդ կետը), բարդության երկու եզրերի բայերի եղանակաժամանակային քերականական կարգերը էական նշանակություն չունեն: Թե՛ ստորադաս, թե՛ գերադաս բաղադրիչների բայերը կարող են արտահայտվել միևնույն եղանակի միևնույն ժամանակաձևով, և, սակայն, կարող է առկա լինել հաջորդման հարաբերություն: Հմմտ.

Մինչև որ մեծացել եմ, ինչե՞ր եմ քաշել (ՄԱ): Երկու ստորոգյալներն էլ կիրառվել են սահմանական եղանակի ներկա վաղակատարով, բայց նախադասության կառուցվածքից և բաղադրիչների ներքին տրամաբանական կապից հստակորեն երևում է, որ գերադաս նախադասության մեջ նշված գործողությունը նախորդել է ստորադաս եզրում արտահայտված գործողությանը:

Գերադաս բաղադրիչի բայ-ստորոգյալը քերականորեն մինչևիսկ կարող է դրվել մի ապառնի ժամանակաձևով, իսկ ստորադաս եզրինը՝ անցյալ, և սակայն առաջինի գործողությունը ժամանակային առումով դարձյալ կարող է նախորդել երկրորդին: Հմմտ.

Պետք է *<u>հասնենք</u>* հարսանյաց հանդեսին, *<u>քանի դեռ հարսին չեն քերել տուն</u>:* Ստորադաս եզրի բայ-ստորոգյալը կիրառված է վաղակատար ներկայով, որ անցյալ ժամանակածև է, իսկ գերադասի ստորոգյալը՝ հարկադրականի ապառնիով, որ ապառնի ժամանակածև է, սակայն, միևնույնն է, նախադասության կառուցվածքից ընկալվում է, որ գերադաս բաղադրիչի գործողությունը իրապես նախորդում է կախյալ նախադասության մեջ նշված գործողությանը:

Այսպիսով՝ հաջորդման հարաբերությունը դրսևորվում է ո՛չ թե և ո՛չ այնքան բայ-ստորոգյալների եղանակաժամանակային քերականական

կարգերով, որքան բաղադրիչների արտահայտած ներքին բովանդակությամբ և ողջ բարդության կառուցվածքային հատկանիշներով:

Կապակցությունն իրացվում է *մինչ, մինչև, մինչև որ, քանի, քանի դեռ, շաղկապներով և երբ (որ)* հարաբերականով:

Այլ օրինակներ.

Նա չի հանգստանա, *մինչև որ հայրենիքի ռազմական վարկը չվերականգնվի, մինչև որ մի սոսկալի վրեժ չառնվի* (ԱԾ): Եվ Լիլիթ խաղում էր գոհարներով, սփռում էր վարսերի մեջ և նորից հավաքում, *մինչև լիալուսինը բարձրացավ ծառերի հետևից և լուսավորեց դրախտի ամեն թուփ ու մացառ* (ԱԻ): Դեռ պիտի այսպես քայլես, *մինչև երգերը քո դեռ չերգած, Մինչև մոխիրը սիրտդ այրեն, Մինչև սրտում քո չմնա էլ Հույզի, կրքի ու հրի մի կայծ, մինչև մարի հար Ու դառնա Քար քո սի՛րտը, սի՛րտը...* (ԵՉ):

§ 263. Ժամանակի պարագա կախյալ նախադասության կապակցությունը գերադասի հետ կարող է իրացվել նաև *առանց նշույթի՝ շարահարությամբ:* Սա առավելապես հատուկ է ժողովրդախոսակցական լեզվին, բայց հանդիպում է նաև գրական-գեղարվեստական աղբյուրներում:

Սպասարկու բառերի բացակայության դեպքում բաղադրիչների կապակցությունը իրացվում է «ներքին զորությամբ», այսինքն՝ գերադաս և ստորադաս եզրերի արտահայտած բովանդակությունների բնույթով, բայ-ստորոգյալների եղանակաժամանակային ձևերի որոշակի կիրառությամբ և, որ նույնքան կարևոր է, ձայներանգով կամ հնչերանգով:

Շարահարությամբ կապակցված կախյալ նախադասությունները չեն դրսևորում հարաբերությունների այն բազմազանությունը, որ հատուկ է նշույթավոր կապակցությանը, հաճախ լրացական գործառույթով էլ անխառն չեն, համատեղում են պարագայական և այլ, մասնավորապես պայմանի պարագայի իմաստային երանգներ:

1. Կախյալ շարահարությամբ կառույցի ստորադաս եզրի բայ-ստորոգյալը հաճախ ձեռք է բերում *հարաբերական* (ռելյատիվ) իմաստներ, որոնք զգալիորեն տարբերվում են նրա բուն եղանակաժամանակային նշանակություններից: Այսպես՝ սահմանական եղանակի անցյալ կատարյալը, դառնալով կախյալ եզրի ստորոգյալ, կարող է արտահայտել ո՛չ թե անցյալում կատարված-ավարտված գործողություն, այլ մի ապառնի ժամանակահատվածում կատարվելիք գործողություն: Նախադասությունը, որտեղ գործածված է այդ բայը, կարող է ընկալվել որպես ժամանակի պարագա կախյալ բաղադրիչ՝ նախորդման հարաբերությամբ: Հմմտ.

[Գողն էլ՝ մի կոնից, գելն էլ՝ մյուս կոնից,] *Աչքդ <u>թեքեցիր</u>* բանիդ տերը չես (ՀԹ):

Թեքեցիր բայը, որ դրված է սահմանականի անցյալ կատարյալով, արտահայտում է ըղձական ապառնու իմաստ և նշանակում է՝ *հենց (որ) [աչքդ] թեքես*, երբ (*որ*) *[աչքդ] թեքես, որ [աչքդ] թեքես*: Այս իմաստներով կախյալ եզրը ժամանակի պարագա է: Բայց այն համատեղում է նաև պայմանի երանգ և կարող է նշանակել նաև՝ *եթե* կամ *թե [աչքդ] թեքես*, որ արդեն պայմանի պարագա է: Այս նախադասության մասին տե՛ս նաև § 187, 1, 2:

. 2. Ստորադաս բաղադրիչի բայը կարող է կիրառված լինել նաև իր եղանակաժամանակային բուն իսկ նշանակությամբ: Բաղադրիչների դասավորությունը, ձայնային ոլորումները և եզրերի մտային կապի բնույթը ձևավորում են կախյալ շարահարությամբ նախադասություն, որի ստորադաս եզրը կա՛մ անխառն ժամանակի պարագա է, կա՛մ ժամանակի պարագա՝ պայմանի որոշ երանգով: Հմմտ.

Տեսավ [չեն գալի, դուռ բաց չեն անում]՝ ինքն էլ մեկնըվեց քաղքի մեյդանում (ՀԹ): *Ես եմ գնում*՝ կարասը լիքը օծ է դառնում, *սրանք են գնում*՝ ոսկի (Ն.տ.): *Ճեղք էր բացվում քնի և արթնության միջև*՝ իսկույն մտաբերում էր Նանարին (ՎԽ):

3. Շարահարական կապակցություն կարող է ստեղծվել նաև այն դեպքում, եթե ստորադաս եզրի բայ-ստորոգյալը կրկնվում է միաժամանակ դրական և ժխտական խոնարհմամբ՝ գոյացնելով յուրօրինակ զուգադրական հարադրություն, որի առաջին եզրը կիրառված է դրական խոնարհմամբ, երկրորդը՝ ժխտական: Հմմտ.

Լույսը *բացվեց-չբացվեց* սկսվեց ամպրոպը: *Եկավ-չեկավ*՝ բարձրացավ ամբիոն և սկսեց իր քարոզը, և այլն:

Նշույթավոր կապակցությամբ ժամանակի պարագա կախյալ նախադասության շարադասությունը առավելապես ազատ է, կամընտիր: Միայն *թե չէ* շաղկապով կապակցվելու դեպքում կախյալ բաղադրիչը սովորաբար նախադաս է: Տե՛ս վերը, այլև՝

Հողը լցրեց թե չէ, աչքերը փակվեցին (ԱԻ): *Նրա ժառանգը գահ նստեց թե չէ*, հրամայեց [մեծ փառքով ու շուքով թաղեն իր աշխարհակալ հորը] (Ն.տ.):

Ստորադաս եզրը կարող է լինել թե՛ նախադաս, թե՛ միջադաս և թե՛ հետադաս, ինչը պայմանավորված է բաղադրիչների իմաստային հարաբերություններով, տրամաբանական շեշտադրությամբ: Վերջին տեղը չի գրավում նաև հեղինակային նախասիրությունը:

Շարահարական կապակցության դեպքում ստորադաս եզրը օրինաչափորեն նախադասվում է: Տե՛ս վերի օրինակները, այլև՝

Խոսքը բերանից դուրս եկավ՝ չի թողնի՝ սառչի, կկատարի (ՎԱ): Այլ օրինակներ՝ *Երբ փոթորիկ էր լինում և մրրիկ*, նա տեսնում էր Լիլիթին՝ իր մոտով շեշտակի անցնելիս, և *երբ կայծակն էր ճեղքում երկինքը*, Լիլիթի հրեղեն սերն էր այդ (ԱԻ): Եվ կլինի նա երկա՜ր, երկա՜ր, *քանի դեռ հինը մենք չենք քանդել* (ԵՉ) և այլն:

§ 264. Որոշ կախյալ նախադասություններ, որոնք կապակցվում են *երբ* (*որ*) հարաբերականով, կարող են լրացնել գերադաս բաղադրիչի ո՛չ թե բայ-ստորոգյալին, այլ ժամանականիշ մի գոյականի: Հմմտ.

[Թվում է, թե] մոռացված մի անկյուն է այն *օրերից, երբ դեռ մարդը չկար, և բրածո դինոզավրը նույնքան ազատ էր զգում իրեն, ինչպես արջը՝ մեր օրերում* (ԱԲ): Սայլերի ճռճռոցն սկսվում էր շատ կանուխ՝ գարնանային մշուշի այն կախարդական *ժամերին, երբ քունն այնքան էր քաղցրանում*

[, որ դառնում էր անդիմադրելի] (Ն.տ.): Ապրիլի մի առավոտ *օր, երբ լռահավի որս էի անում Ռեհանլուի ճահիճներում,* ուշադրությունս գրավեց եղեգնուտի ափին կանգնած մի բադ (ՎԱ):

Այսպիսի կախյալ նախադասությունները ո՛չ թե ժամանակի պարագա են, այլ որոշիչ:

Գերադաս բաղադրիչում կարող են լինել ժամանակի մի մակբայ, բառակապակցությամբ արտահայտված ժամանակի մի պարագա, *անգամ* կապով ձևավորված մի անդամ, որոնց *երբ* հարաբերականով կապակցվում է կախյալ նախադասությունը: Գոյանում են՝ *երեկ, երբ..., ժամը երեքին, երբ... ամսի երեքին, երբ..., ամեն անգամ, երբ..., մի քանի անգամ, երբ...* և նման կաղապարներով կառույցներ: Այս դեպքում էլ ունենում ենք ո՛չ թե ժամանակի պարագա, ո՛չ էլ որոշիչ, այլ *մասնավորեցնող պարագայական բացահայտիչ* կախյալ նախադասություն: Հմմտ.

Եվ *ամեն անգամ, երբ գալիս են թոռնիկներս,* տունը լցվում է մի անպատմելի ուրախությամբ: *Ամեն անգամ, երբ նայում եմ նրա գունատ, նիհարած դեմքին և անկենդան աչքերին,* վշտից ու կարեկցությունից սիրտս ճմլվում է (ՆՂ): Եվ *հիմա, երբ հիշում եմ մեր փողոցը,* ամենից ավելի իմ աչքի առաջ պատկերանում են իմ մանկության ընկերները՝ շները (ՎԹ):

Փոխակերպելիս ստացվում են՝ *Ամեն անգամ՝ թոռնիկներիս գալու ժամանակ..., եվ հիմա՝ մեր փողոցը հիշելիս...* և այլն:

3. ՊԱՏՃԱՌԻ ՊԱՐԱԳԱ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 265. *Պատճառի պարագա կախյալ նախադասությունը վերաբերված կերպով նշում է գերադաս բաղադրիչի բայ-լրացյալի արտահայտած գործողության, եղելության, իրողության պատճառը.*

Ունի իմաստակառուցվածքային հետևյալ հատկանիշները:

Կախյալ նախադասությամբ դրսևորվող պատճառականության իմաստները բավականաչափ բազմազան են: Այդ բազմազանությունը պայմանավորված է մի կողմից՝ կապակցական կաղապարներով ու միջոցներով, մյուս կողմից՝ բաղադրիչների իմաստային ներքին կապի բնույթով: Իրենց իմաստային բազմերանգությամբ հանդերձ՝ պատճառի պարագա երկրորդական նախադասությունները բնութագրվում են երկու հիմնական նշանակություններով. ա. արտահայտում են այն *իրական պատճառը,* որից որպես հետևանք կատարվում է գերադաս բաղադրիչի բայ-ստորոգյալի նշած գործողությունը կամ եղելությունը. բ. արտահայտում են այն *կամային-անհատական, իրավական* կամ *տրամաբանական հիմունքը,* որից իբրև հետևություն բխում է գերադաս եզրի գործողությունը կամ եղելությունը:

Պատճառական կախվածությունից բխող գործողությունը *հետևանք* է, *հիմունքայինի* կախվածությունից բխող գործողությունը՝ *հետևություն:* Իմաստային այս յուրահատկությամբ էլ առանձնանում են պատճառականություն արտահայտող կախյալ եզրերը: Հմմտ.

ժամանակը ծանր էր անցնում, *որովհետև քաղցած էինք* (ՎԱ)։ Կախյալ բաղադրիչը արտահայտում է գերադաս եզրում նշված գործողության իրական պատճառը։

Եվ *որովհետև ես եմ ստեղծել ժամանակ-տարածությունը,* ուրեմն ես հզոր եմ մահից (ԱԻ)։ Կախյալ նախադասությունը արտահայտում է գերադաս բաղադրիչում նշված եզրակացության տրամաբանական հիմունքը։

Երկու կառույցներում էլ ստորադաս նախադասությունները արտահայտում են պատճառականություն, բայց իմաստային տարբեր հարաբերություններով՝ իրական կամ բնական պատճառ և անհատական-կամային կամ տրամաբանական հիմունք։

Սակայն միշտ չէ, որ պատճառն ու հիմունքը և հետևանքն ու հետևությունը սահմանազատվում են հստակորեն։ Շատ կառույցներում պատճառն ու հիմունքը համատեղում են։

§ 266. Կապակցությունը կարող է լինել *նշույթավոր* և *անշույթ*։

Իբրև նշույթ օգտագործվում են միայն շաղկապներ, առավելապես՝ *որովհետև, որ* և *քանի որ* շաղկապները։ Գերադաս բաղադրիչում հաճախ լինում է հարաբերյալ՝ արտահայտված հոլովակապային կառույցներով՝ *այն պատճառով, նրա համար։* Սրանց իմաստը որոշակիացվում է կախյալ նախադասություններով։ Հարաբերյալի առկայության դեպքում ստորադաս եզրը կապակցվում է *որ* շաղկապով, որով գոյանում են *այն պատճառով, որ..., նրա համար, որ...* կաղապարներով կազմություններ։ Այսպիսի կապակցության դեպքում կախյալ եզրը դրսևորում է ավելի պատճառականության, քան հիմունքայնության իմաստ։ Հմմտ.

Այն պատճառով, *որ առատ ծյուն էր եկել,* խզվել էր կապը գյուղերի միջև (Ն)։ Անդրանիկը մռայլվել էր նրա համար, *որ հուսահատություն էր նկատել զինվորների դեմքերին* (ՍՍ)։ Իմ հայ ժողովուրդ, իմ բարձրանո՛ւն, ես սիրում եմ քեզ նրա համար, *որ դու խաժամուժ այս աշխարհում ազնիվ ես ապրել կյանքդ դժվար* (ՍԿ)։

Իբրև հարաբերյալ երբեմն կիրառվում է նաև ցուցական երրորդ շարքի դերանվան եզակի թիվը՝ բացառական հոլովով (*նրանից*)։ Հմմտ.

Նրանից, որ մազազուրկ գլխի գագաթից մինչև ճակատը իջնում էր ծյուղավոր խոր սպի, միշտ գլխարկով էր մաս գալիս (ՌՀ)։

Պետք է ասել, որ առաջին երկու հարաբերյալները՝ *այն պատճառով, նրա համար,* կանոնական են, երրորդը՝ *նրանից,* ո՛չ այնքան օրինաչափ, կարելի է ասել՝ պարականոն։ Բացառական հոլովով այդ կառույցում անխառն պատճառականություն կամ թեկուզ հիմունքայնություն չի արտահայտվում։ Ավելի շատ առկա է խնդրային իմաստ։ Ինչ վերաբերում է *որ* շաղկապին, այն խիստ բազմիմաստ է, և նրա մեջ պատճառականության հարաբերությունը թույլ է արտահայտված։ Ուստի և *նրանից, որ...* կաղապարով կապակցված կառույցներում պատճառականության հարաբերության հետ մեկտեղ առկա է լինում նաև խնդրային երանգ։

Որ շաղկապով կապակցվելու դեպքում, ինչպես կարելի է նկատել և բերված օրինակներից, գերադաս եզրում սովորաբար հարաբերյալ է լի-

նում: Սակայն բավականաչափ հաճախված է նաև զուտ *որ* շաղկապով, առանց հարաբերյալի կապակցությունը, եթե մանավանդ պատճառականության հարաբերությունը որոշակի է: Հմմտ.

Նրանք անիծում էին իրենց բախտը, *որ չէին կարողանում լիովին վայելել մեծ մարդու ներկայությունը* (ԴԴ): Անտառապահը հարվածում էր նրան և զայրանում, *որ Դիլան դային փախցրել էր նրա զարկած միրհավը* (ԱԲ) և այլն:

Եթե կապակցությունն իրացվում է *որովհետև* կամ *քանի որ* շաղկապով, գերադաս բաղադրիչում հարաբերյալ սովորաբար չի կիրառվում: Հմմտ.

Եվ ճաշակեցե՛ք ու թաթախվեցե՛ք հավատացյալի երեխայական միամտությամբ, *որովհետև մեր հարստությունը վըշտերը չեն լոկ* (ՊՍ): Ոչ ոք իրավունք չուներ ձեռք տալու մուրաբային, *որովհետև դա վերապահված էր միմիայն իմ նախաճաշերին* (ԱՎ): Վերջիվերջո նրանք կընկճեն ինձ, *քանի որ ունեմ այնպիսի հզոր դաշնակից* [, որպիսին է դանդաղ, բայց հաստատուն քայլերով մոտեցող ծերությունս] (ՎԱ):

Գրական հայերենում կանոնական է նաև *մանավանդ* (*որ*), *նամանավանդ* (*որ*) շաղկապներով կապակցությունը: Սրանցով կապակցվող կախյալ բաղադրիչները արտահայտում են յուրահատուկ իմաստներ: Նման կապակցությունը յուրովի հուշում է, թե տվյալ պատճառը ավելի կարևոր է ու էական, քան այն պատճառը, որ ենթադրաբար եղել է (լինում է կամ լինելու է): Հմմտ.

Բայց աստված մնացել է զարմացած, *մանավանդ որ* մի անգամ նկատել է [, որ մի գյուղում այրի պառավի մեկուճար տղան մեռնում է, ամբողջ գյուղը մնում է անտարբեր այդ մոր սգին] (ԱԻ): Այսինքն՝ ինչ-որ պատճառով «աստված մնացել է զարմացած», բայց «զարմանալու» ավելի կարևոր պատճառը այն է, որ «մի անգամ նկատել է» մոր սգին՝ ամբողջ գյուղի անտարբեր լինելը:

Այլ օրինակներ.

Բայց չեն կարող խլել լավատեսի իմ ժպիտը, այո՛, ի՛մ ժպիտը, *նամանավանդ որ* (...) *ժպիտի ինչ-որ մի տեսակն է նաև անմահ քմծիծաղը* (ՊՍ): Միտք չուներ հետածգելու, *նամանավանդ որ Իշխանի ասելիքը վաղուց ասված էր* [և նամակի ձևով առաքված Կորխորի տնօրենին] (ՈՅ) և այլն:

Ժողովրդախոսակցական երանգ ունեն՝ *չէ՞ որ, ինչ է թե, թե ինչ է* շաղկապները: Սրանք գրական-գեղարվեստական աղբյուրներում կիրառվում են ոճական որոշակի նկատառումներով:

1. *Չէ՞ որ* շաղկապը ունի հարցական հնչերանգ, որով կախյալ նախադասությունը ստանում է ճարտասանական հարցի բնավորություն՝ հեղինակային հորդորական որոշակի վերաբերմունքով: Հմմտ.

Անուն չուներիր դու այն ժամանակ, *Չէ՞ որ*, սիրելի՛ս, դեռ այն ժամանակ Ո՛չ երջանկություն, Ո՛չ կարոտ, ո՛չ սեր և ո՛չ տխրություն չունեին անուն (ՊՍ):

2. *Ինչ է թե, թե ինչ է* շաղկապները, կապակցական դերից զատ, իրենց իմաստային կառուցվածքում պահում են նաև ցայտուն արտահայտված գնահատողական արժեք, որի էությունը խոսողի կամ հեղինակի քամահրա-

կան վերաբերությունն է կախյալ նախադասությամբ արտահայտված պատճառի կամ հիմունքի հանդեպ: Իբր՝ *դա ի՞նչ պատճառ է* կամ *ի՞նչ հիմունք, սուտ ու փուտ պատճառ է* և այլն: Հմմտ.

[Պոկված անտառից՝ մենակ ու մռայլ մի ծառ է ցցվել բարձունքի վրա.] Ինչպե՞ս չի սիրում անտառը նրան, ինչպե՞ս է ծաղրում, քրքջում վրան, *ինչ է թե հսկան Այս թզուկների կամքին ու կյանքին Չի կարողանում իրեն ենթարկել, Ինչ է թե նրանք չեն կարողանում Իրենց ներվածքում սրան բանտարկել* (ՊՍ): [Եթե որդին տրտում երգով իր ծնողի մահն է սգում, Աղաչում եմ՝] Մի՛ ընդհատեք, *ինչ է թե նա ... լավ չի երգում* (Ն.տ.):

3. Գրական-գեղարվեստական աղբյուրներում, մանավանդ չափածոյում պատճառի կախյալ նախադասությունը երբեմն կապակցվում է նաև *քանզի* շաղկապով, որը ոճական որոշակի երանգ է հաղորդում խոսքին: Հմմտ.

Քեզ արևը պիտի լինի հաղթանակի շքանշան, *Քանզի կուրծքդ մի երկինք է՝ Քո մեծ սրտով իմաստության* (ՀԾ): Բայց ների՛ր, վարպե՛տ, ների՛ր պատանուս, *քանզի ես պիտի քեզ առաջնորդեմ, Քանզի այս միակ՝ իրոք դժոխքի Դժնաքայլ ուղին, ավա՜ղ, ես գիտեմ* (Ն.տ.): Ննջի՛ր, ուրեմն, սուրբ շիրիմիդ տակ, *Քանզի արթուն ես մեր հոգիներում* (ՊՍ):

4. Պատճառի հարաբերություն արտահայտող կախյալ նախադասությունը կապակցվում է նաև *զի* շաղկապով, որ թեև հնացած է, բայց երբեմն հանդիպում է որոշ հեղինակների խոսքում: Այն ևս ունի ոճաստեղծ արժեք: Հմմտ.

Վերաքննությամբ պիտի մեզ ներես [, եթե խոսում ենք քանդակ-արձանից,] Զի կան արձաններ [,որ կուռք չեն դառնում] (ՊՍ):

5. Չափածոյում երբեմն կապակցական դեր է կատարում *վասնզի* շաղկապը, որ հատուկ է արևմտահայերենին: Արևելահայերենում այն պարակաոնո է և հենց դրանով էլ ստանում է ոճական արժեք: Հմմտ.

(...) Աստծուն նույնիսկ հայհոյողները Շա՜տ ավելի են գերադասելի, *վասնզի Նրանց բարկացրել է ինքը հավատը՝ խոցված-արյունոտ, Այրվող-ապտակված, Ցաված-ծչացող, Մանուկ հավատը* (ՊՍ):

§ 267. Պատճառի պարագա կախյալ նախադասությունը երբեմն կապակցվում է նաև *շարահարությամբ*, որը նույնպես ավելի հատուկ է ժողովրդական լեզվին, քան գրական հայերենին:

Շարահարական կապակցությամբ պատճառահիմունքային հարաբերություն կարող է արտահայտվել հետևյալ կառույցներում:

1. Բարդության եզրերի բայ-ստորոգյալները ունենում են իմաստային աղերս, հոմանիշներ են, իսկ երբեմն նույնիսկ կարող են կրկնել մեկը մյուսին՝ կիրառվելով, սակայն, տարբեր եղանակաժամանակային ձևերով: Ըստ այսմ՝ երկրորդ եզրի բայ-լրացյալի նշած գործողությունը կամ եղելությունը կատարվում է ավելի վաղ, քան առաջինի գործողությունը կամ եղելությունը: Բնական է, որ պատճառը ժամանակային առումով նախորդում է հետևանքին: Մի բանի պատճառ լինել նախ և առաջ նշանակում է նրանից

առաջ լինել՝ հենց ժամանակի հոսքում: Անշուշտ, բարդության բաղադրիչների միայն բայ-ստորոգյալների եղանակաժամանակային կիրառությունը չէ, որ գոյացնում է պատճառահիմունքային հարաբերություն, այլև, որ նույնքան կարևոր է, այդ բաղադրիչների արտահայտած իմաստների ներքին-տրամաբանական կապը: Հմմտ.

Էլ մի՛ ուշացնի, *ես շատ եմ կացել*, էլ մի՛ լացացնի, *ես շատ եմ լացել* (ՀԹ):

Ուշացնել և *կենալ* բայերը իմաստային որոշակի առնչություն ունեն. տարբեր են սեռերը: *Լացացնել* և *լացել* բայերը կրկնում են միմյանց, եթե դարձյալ չհաշվենք սեռային տարբերությունը: Երկրորդ եզրերը (ես շատ եմ կացել, ես շատ եմ լացել) նշում են կատարված-ավարտված գործողություններ, որոնց հիմունքով կամ հիմնավորմամբ կատարվում է հետևությունը, որ ժամանակային առումով հաջորդում է ստորադաս եզրում նշված գործողությանը (էլ մի՛ լացացնի, *քանի որ ես շատ եմ լացել, արդեն լացել եմ*): Այլ օրինակներ.

Սասմա՛ն քույրեր, բարո՛վ մնաք, *բարություն եք արել ինձ* (Ն.տ.): [Քնքուշ ձեռներով աչքերս սրբի՛ր,] Մի՛ թող ինձ լալու, *ես շատ եմ լացել* (ԱԻ) և այլն:

2. Երկրորդ եզրում հայտնվում է մի իրողություն (դրություն, իրավիճակ, փաստարկ), որից իբրև հետևություն բխում է առաջին եզրի գործողությունը կամ եղելությունը: Երկրորդ եզրի ստորոգյալը սովորաբար բաղադրյալ է: Հմմտ.

Եկե՛ք կրակին ու արևին երկրպագությո՛ւն տվեցեք, *դրանք են ձեր աստվածները* (Ր): [Նրա անբախտ շիրմի վրա պաղ ջո՛ւր ածա աղբյուրի,] Դու էլ գնա՛, նոր սե՛ր արա, *էսպես է կարգն աշխարհի* (ՀԹ):

Այս և նման կառույցներում թեև որոշակիորեն նկատվում է պատճառահետևանքային կամ հիմունքահետևանքային հարաբերություն, սակայն ստորադասական կապակցությունը թույլ է արտահայտված: Այդ է պատճառը, որ արտաբերության ժամանակ բաղադրիչների միջև գոյանում է սովորականից ավելի տևական դադար, որ գրավոր խոսքում արտահայտվում է ստորակետով կամ միջակետով: Տե՛ս վերի օրինակները, այլև՝

Այստեղ՝ այս ձորակում, երևի, հանգիստ առան հուղարկավորողները. առջևի լանջը շատ ցից է ու դիք (Լ):

Պատճառի կամ հիմունքի հարաբերություն արտահայտող կախյալ նախադասության շարադասությունը կամընտիր է: Գլխավոր բաղադրիչի հանդեպ այն կարող է գրավել երեք տարբեր դիրքեր՝ *նախադաս, միջադաս* և *վերջադաս:*

1. Ինչպես նշվեց վերը (§ 267, 1), քանի որ պատճառը և հիմունքը ժամանակային առումով նախորդում են հետևանքին կամ հետևությանը, ուստի և լեզվի ներքին տրամաբանությամբ սկզբից ներկայացվում է հիմունքը կամ պատճառը, ապա հետևանքը կամ հետևությունը: Այդ իսկ պատճառով ավելի մեծ հաճախականություն ունի *նախադաս* դիրքը: Հմմտ. վերի օրինակները, այլև՝

Որովհետև չունենք այսքան հանդգնություն, որովհետև համբերահաստ ու բարկացած արուներ չենք, որովհետև սեր խաղացող աղջկան մենք Չե՛նք զորելու նստեցրնել մեր ծնկներին, (...) Որովհետև երազել է տալիս մութը, իսկ երազել մենք չենք ուզում, Շո՛ւտ վառեցե՛ք լույսերն ամեն (ՊՍ):

Եվ քանի որ ես բաց դուռ եմ դարձյալ, Եվ քանի որ ես բաց աչք եմ կրկին, Եվ քանի որ ես բաց ականջ եմ դեռ, անցյալը գալիս-կանգնում է իմ դեմ՝ Հարազատների պատկերներ ծեռքին (ՌԴ):

2.Պատճառահիմունքային հարաբերություն դրսևորող կախյալ նախադասությունը ո՛չ սակավ դեպքերում կիրառվում է նաև *հետադաս* դիրքով: Հմմտ. վերի օրինակներից շատերը, այլև՝

Դարբնի տղան էլ լուռ էր, *որովհետև ոչ ոք սիրտ չուներ նրան լսելու* (ԱԲ): Իմ հա՛յ ժողովուրդ, (...) ես սիրում եմ քեզ նրա համար, *որ քրտինքով հացըդ քամել, որ վաստակել ես, չես թալանել, որ ազատել ես, որ չես գերել, որ կառուցել ես, չես ավերել* (ՍԿ): Արեգա՛կ, քեզ մեղա՛, *քանզի ո՛չ դու կարգիմ արեգակ եղար, Ո՛չ էլ ես կարգիմ արևապաշտ եղա* (ՌԴ):

3. Կախյալ բաղադրիչը կարող է նաև *միջադասվել*: Նման շարադասություն ձևավորվում է երկու դեպքերում.

Ա. Եթե գերադաս բաղադրիչում *առկա է հարաբերյալ:* Այդպիսի կառույցում գերադաս բաղադրիչը սկսվում է հարաբերյալով և ընդմիջվում կախյալ նախադասությամբ: Ստացվում են՝ *Այն պատճառով, որ..., Նրա համար, որ...* կապակցական կաղապարներով սկսվող կառույցներ, որոնցում կախյալ նախադասությունը միջադաս է: Հմմտ.

Նրա համար, որ ուներ ընդամենը մեկ ուղևոր, չվերթը հետածգեց մինչև նոր ուղևորների հայտնվելը: *Այն պատճառով, որ իր փայլով աչք կուրացնող արևը հագիվ թե ուժ ուներ մեղմելու քամու բերած սառնությունը,* երեխաները տաք էին հագնված (ՌՀ):

Բ. Եթե կախյալ բաղադրիչը լրացնում է *ո՛չ թե բայ-ստորոգյալին,* այլ *դերբայով* արտահայտված մի *անդամի*: Հմմտ.

Պոչերն սպառնագին խաղացկուն, գերագույն զգոնություն ու լարում դարձած, *որովհետև մի չնչին շարժումն անգամ կարող էր կործանարար ու վերջնական լինել,* մեխվել էին դեմ-հանդիման՝ քշտած մռութների միջից ժանիքները մերկացրած (ՀՓ):

4. ՆՊԱՏԱԿԻ ՊԱՐԱԳԱ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 268. *Նպատակի պարագա կախյալ նախադասությունը վերառված կերպով ընդում է գերադաս բաղադրիչի բայ-լրացյալի արտահայտած գործողության, եղելության նպատակը:*

Ունի իմաստակառուցվածքային հետևյալ առանձնահատկությունները:

Իր արտահայտած իմաստով նպատակի պարագան ընդհանրություններ ունի պատճառահիմունքային պարագայի հետ: Դա դրսևորվում է նրա-

նով, որ նպատակի պարագան համատեղում է թե՛ պատճառը, թե՛ հիմունքը: Այն, սակայն, էապես տարբերվում է պատճառի պարագայից նրանով, որ միևչդեռ վերջինս ցույց է տալիս մի գործողության իրական, բնական պատճառը կամ տրամաբանական հիմունքը, նպատակի պարագան արտահայտում է ցանկալի պատճառը կամ ցանկալի հիմունքը: Գերադաս բաղադրիչի գործողությունը, եղելությունը ըստ էության կատարվում են նրա համար, որ իրականանա այսինչ ցանկալի հիմունքը, ցանկալին դառնա իրական:

Նպատակի պարագա կախյալ նախադասությամբ կապակցության դեպքում ստորադաս եզրում արտահայտված գործողությունը օրինաչափորեն հաջորդում է գլխավոր եզրում նշված գործողությանը, միևչդեռ պատճառահետևանքային հարաբերություն դրսևորող կախյալ բաղադրիչի բայստորոգյալի նշած գործողությունը, որպես կանոն, նախորդում է գերադաս եզրում առկա գործողությանը: Այս իրողությունը ունի նաև իր քերականական ձևավորումը: Նպատակի պարագա կախյալ նախադասության բայստորոգյալը կանոնավորապես, անփոփոխ կերպով կիրառվում է ըղձական եղանակի ապառնի կամ անցյալի ապառնի ժամանակաձևերով՝ առաջինի գերակայությամբ:

Գերադաս եզրի բայ-լրացյալը սովորաբար լինում է *պարզ ստորոգյալ* և գործնականորեն կարող է արտահայտվել եղանակաժամանակային բոլոր ձևերով: Հմմտ.

Գնում եմ տուն, որ մի քիչ հանգստանամ: *Գնալու եմ* տուն, որ մի քիչ հանգստանամ: *Գնացել եմ* տուն, որ մի քիչ հանգստանամ: *Գնամ* տուն, որ մի քիչ հանգստանամ: *Կգնամ* տուն, որ մի քիչ հանգստանամ: *Պետք է գնամ* տուն, որ մի քիչ հանգստանամ: *Գնա* տո՛ւն, որ մի քիչ հանգստանաս, և այլն:

§ 269. Կապակցությունը լինում է *նշույթավոր* և *աննշույթ:*

Նշույթավոր կապակցությունը *շաղկապական* է: Կախյալ նախադասությունը հարաբերականներով չի կապակցվում:

Գրական հայերենում նպատակային հարաբերությունը առավել որոշակիորեն, անխառն արտահայտողը *որպեսզի* շաղկապն է, որ լայնորեն կիրառվում է թե՛ գրական-գեղարվեստական աղբյուրներում, թե՛ գիտահրապարակախոսական երկերում, թե՛ մամուլում: Հմմտ.

[Ռուսաստանը ցանկանում էր իր դիրքերն ամրապնդել Կովկասում, իսկ] Պարսկաստանը ձգտում էր ետ խլել իր կորցրած տարածքները, *որպեսզի լծի տակ պահի Անդրկովկասի ժողովուրդներին* (ՀԺՊ): Իսկ դու՛ք, բարիներ՛ը, սնուցում եք ինձ ուրի՞շ մի գինով, *որպեսզի սիրո անհագ ծարավից ես չնվաղեմ* (ՊՍ): Աներևակայելի չափերով հարկվում են բոլոր մեծ ու փոքր եկամուտները, *որպեսզի փակվի երկրի տարեկան բյուջեի ճեղքվածքը* (Առավ.):

Նպատակային հարաբերություն է արտահայտում նաև *որ* ընդհանրական շաղկապը, որի կիրառման ոլորտը ավելի լայն է և, բացի վերը նշվածից, ընդգրկում է նաև ժողովրդախոսակցական կենդանի լեզուն: Հմմտ.

Քեզ կանչում եմ, *որ Տորոգես մեր վայելքը վաղանցուկ* (ՀԹ)։ Տո՛ւր ինձ քո ոգին, *որ ես շառաչեմ, որ ես դադարեմ հանդարտ խոսելուց* (ՀՍ)։ Հիմք ընդունելով մարդկային գոյության ափերի անորոշությունը՝ ռեալիզմի ջատագովները օգնության են կանչում անտեսանելի ոգիներին, *որ Նրանց մասնակցությամբ բացատրեն իրականության օրինաչափությունները* (ՍԱ) և այլն։

Ժողովրդախոսակցական լեզվում նպատակային կախյալ նախադասությունը կապակցվում է նաև *թե, թե ինչ է, ինչ է թե, չլինի թե* շաղկապներով ու շաղկապական բառերով։ Սրանք կենդանի լեզվից թափանցում են նաև գրական-գեղարվեստական խոսքի մեջ։ Հմմտ.

Հազար մանեթ չուներ, *թե տար, հոգին ազատ աներ* (ՀԹ)։ Ես խոսքի միջուկը մեր Վանին, հորթի հետևից վազելով, եկավ, որ մեր մոտից անց կենա, *թե ինչ է (ա) հորթի առաջը կտրի ու վրեն նստի* (Մ)։ Շորերի ծալքերը հետախուզում էր, *թե չլինի մի բան թաքցրած տանեն* (ԱՍ)։

Հարկ է նշել, որ *թե ինչ է, ինչ է թե* շաղկապական բառերով կապակցված նախադասությունները նպատակային հարաբերության հետ մեկտեղ դրսևորում են նաև խոսողի կամ հեղինակի կամային-արհամարհական վերաբերությունը գործողության կամ եղելության հանդեպ, իբր թե *արժե՞ այդ* նպատակն իրագործելու համար կատարել գերադաս եզրում նշված գործողությունը։ Հմմտ. նաև՝

Եվ ամբողջ կյանքում նրանք մշտապես մի բան են անում՝ դիմակ են դնում, դիմակ են հանում, *Ի՞նչ է թե իրենց դեմքը չտեսնեմ ավելորդ անգամ* (ՊՍ)։

Կախյալ նախադասության մեջ արտահայտված գործողության, եղելության նկատմամբ ժխտողական, բացասական վերաբերմունքը ավելի ընդգծված է երևում *չլինի թե, թե չլինի* շաղկապական բառերով կապակցված կառույցներում։ Հմմտ. վերի օրինակներից մեկը (ԱՍ), այլև՝

Սփրթնած աղջիկը վազեց ցած ու ննջարան ընկնելով՝ դուռը ամուր փակեց, *չլինի թե իրեն նկատեն* (ՀՄ)։

Գերադաս բաղադրիչում հաճախ կիրառվում է հարաբերյալ՝ հոլովական ձևերով կառույցով՝ *Նրա համար, այն նպատակով*։ Հարաբերյալի առկայության դեպքում կապակցությունը իրացվում է *որ* շաղկապով, և նպատակային հարաբերությունը արտահայտվում է ավելի որոշակի ու ընդգծված կերպով։ Ստացվում են *Նրա համար, որ..., այն նպատակով, որ...* կաղապարներով կապակցություններ։ Հմմտ.

Այդպես ես քեզ կյանք տվի *այն նպատակով, որ իմ կյանքը քո երկնառաք սրով կարճանա* (ԱԻ)։ Այս հեռագիրը տվել էր երևի *Նրա համար, որ այլևս չծանծրացնեմ իրեն նոր նամակներով ու հեռագրերով* (ՆԴ)։

§ 270. Կախյալ նախադասությունը սովորաբար լրացնում է գերադաս եզրի պարզ ստորոգյալին (տե՛ս վերի օրինակները), բայց հաճախ կարող է վերաբերել նաև բայական բաղադրյալ ստորոգյալի դերբայական բաղադրիչին կամ դերբայով արտահայտված որևէ անդամի։ Հմմտ.

Ստիպված էի ամբողջ ուժով *գոռալու, որպեսզի էլեկտրական շարժիչի հռնդյունի միջով ձայնս տեղ հասնի* (ԱՎ)։ Հանելով ակնոցները, *որ լավ տեսնի այցելուին,* ծնկաբուծական վարչության պետը ճաղատ գլխով մի մարդ, անսքող հետաքրքրությամբ հայացքը ուղղեց դռան կողմը (ՌՀ)։

Կախյալ բաղադրիչը հաճախ լրացնում է գերադաս եզրի ո՛չ միայն բայ-լրացյալին՝ առանձին վերցրած, այլև բայական բառակապակցությանը՝ սրա լրիվ ծավալով։ Այս դեպքում ստորադաս նախադասությունը արտահայտում է ո՛չ միայն այն սոսկական նպատակը, ինչն իրագործելուն ուղղված է գերադաս եզրի գործողությունը, այլև այդ գործողությունը այսինչ ձևով, այսինչ ժամանակ, այսինչ չափով, այսինչ բանով կամ բանի վրա և այլն կատարելու մտադրություն։ Հմմտ.

Որպեսզի մեզ համոզի, հայուհին առաջ քաշեց վերջին փաստարկը (ԱՎ)։ Այսինքն՝ համոզելու համար հայուհին ո՛չ թե սոսկ կատարեց այսինչ գործողությունը՝ *առաջ քաշեց,* այլ կատարեց այդ գործողությունը հատկապես հանդեպ այսինչ խնդրի, որը նույնպես արտահայտված է բառակապակցությամբ՝ *վերջին փաստարկը։* Այլ կերպ ասած՝ կախյալ եզրը լրացնում է ամբողջ բայական ծավալուն բառակապակցությանը՝ *առաջ քաշեց վերջին փաստարկը* (որպեսզի համոզի մեզ)։ Հմմտ նաև՝

Նա դողդոջուն ձեռքերով վայրկենապես կառչեց մահճակալից, *որ վայր չընկնի* (ՆԴ)։

Այսինքն՝ վայր չընկնելու համար նա ո՛չ թե լոկ կառչեց, այլ *կառչեց մահճակալից* և *կառչեց դողդոջուն ձեռքերով։* Այլ օրինակ՝

Ասես մի օր կերտել են քեզ, *որ մարմարե քո տեսքով Աննաս տեղչի, անհագ սիրո արծա՛ծ դառնաս, Արարա՛տ* (ՍԿ) և այլն։

Կախյալ նախադասությամբ դրսևորվող նպատակը կարող է լինել նաև անիրական, անիրագործելի կամ անցանկալի։ Խոսողը կամ հեղինակը կարող է նաև քամահրական վերաբերմունք ունենալ դրա նկատմամբ։ Նման կամային վերաբերություն արտահայտող կախյալ բաղադրիչները սովորաբար կապակցվում են *ինչ է թե, թե ինչ է շաղկապներով* (տե՛ս § 269), այլև *թե* շաղկապով, որին երբեմն հաջորդում կամ նախորդում է *իբր* (*իբրև*) վերաբերականը՝ *իբր* (*իբրև*) *թե, թե իբր* (*իբրև*)։ Հմմտ.

Քոթուկը պոկեց ու [ոնց որ մարդը խտտի,] խտտեց-բերեց, *թե վրաս գցի* (ՀԹ)։ Վառեց մոմը՝ *թե իբր սառած-փետացած մատները վրան տաքացնի* (ՀՄ)։ Փրփրուն ալիքները, փարվելով ողորկ խճերին, վերադառնում էին հետ՝ *իբր թե իրենց եղբայրներին ավետեն* [, որ ափն այլևս վանող չէ] (ՌՀ)։

Նպատակի կախյալ նախադասությունը կարող է կապակցվել նաև *շարահարությամբ։* Կապակցության այս եղանակը բավականաչափ տարածված է թե՛ կենդանի խոսակցական լեզվում, թե՛ գրական-գեղարվեստական աղբյուրներում։

Եթե բացակայում են շաղկապները, գերադաս եզրում նույնպես չեն գործում հարաբերյալներ։ Կապակցությունն իրացվում է «ներքին զորությամբ», բաղադրիչների իմաստների ներքին տրամաբանական կապով, բայստորոգյալների եղանակաժամանակային որոշակի գործառույթներով և հնչերանգային ձևավորմամբ։ Հմմտ.

Ես գերի հո չե՞մ *ամենքի քեֆի հետևից թռչեմ* (ՀԹ)։ Նստեց մի քարի *մի քիչ շունչ առնի* (ԱԲ)։ Իսկ ուժ ունե՞ն *դիմադրեմ* [, –հարցրեց բեկը] (ՍԽ) և այլն։

Նշելի է, որ շարահարական կապակցության մեջ էական դեր են խաղում նաև գերադաս բաղադրիչի արտահայտած իմաստն ու ձևավորվածությունը։ Այսպես։ Եթե գլխավոր եզրը արտահայտում է հրաման, կոչ, հորդոր անելու կամ չանելու մի բան, և նրան հաջորդող բաղադրիչում առկա է ըղձականի ապառնիով դրված մի ստորոգյալ, ապա դա ո՛չ այլ ինչ է դրսևորում, քան նպատակային հարաբերություն։ Հմմտ.

Զարկեցե՛ք, դարբիննե՛ր, կռանը սալին, Զարկեցեք կռա՛նը *շղթայքն ամրանան, անիծյալ արքայի կապանքն ամրանան* (ՀՀ)։ Իմ բարի՛ ճամփա, տա՛ր ինձ, կորցըրո՛ւ *Չըքվեմ, տանջանքըս մարդիկ չիմանան* (ԱԻ)։ Խմե՛նք ի փառըս թագավորի՝ *Մեզ խաղաղության մեջ պահի* (ՍՋ)։

Շարահարական կապակցության դեպքում, ինչպես նշվեց, էական է նաև հնչերանգի դերը։ Գերադաս բաղադրիչը, որ այսպիսի կապակցության մեջ նախորդում է ստորադասին, արտաբերվում է բարձրացող տոնայնությամբ, ապա ստեղծվում է տևական մի դադար, որից հետո ստորադաս եզրը *հնչում է մարող (իջնող) ձայներանգով*։

Նպատակի պարագա կախյալ նախադասությունների շարադասությունը համեմատաբար ազատ է, թեև գերակշռում է հետադաս դիրքը։

1.Հետադաս դիրք ունեցող կախյալ նախադասությունները կարող են կապակցվել վերը ներկայացված բոլոր նշույթներով, նաև շարահարությամբ, նաև այն դեպքում, երբ գերադաս բաղադրիչում առկա է հարաբերյալ։ Տե՛ս վերի օրինակները, այլև՝

Բանաստեղծին թողեց մենակ, մեն ու մենակ իրեն պես, *որ իրեն պես մտիկ անի ամեն մեկին ու կյանքին* (ՀԹ)։ Անհայրենիք, վզի կապը կորցրած անտեր շների նման կծկվում էինք այդ փոքրիկ երջանկությունների շուրջբոլորը, *որպեսզի համարձակ դիմագրավենք աշխարհի անորոշ վաղվան* (ԱՎ)։ Ավետիքը շարունակ աչք էր ածում շուրջը, *թե հովիկներ երևան, հոտ տեսնի մակաղած* (ՎԽ)։

2. Եթե հարկ է լինում հատկապես ընդգծել գերադաս բաղադրիչի գործողության նպատակադրումը, կախյալ եզրը նախադասվում է և կապակցվում *որպեսզի* շաղկապով։ Հմմտ.

Որպեսզի ես որբ չմնամ, Քո ջիրմի մոտ, քո կողքին *մի տե՛ղ պահես* [, մինչև ես գամ], *մի տեղ պահես* ինձ համար (ԱԻ)։

3. Ավելի սակավ հաճախականություն ունի կախյալ նախադասության միջադաս դիրքը։ Այսպիսի շարադասություն պատահում է հիմնականում հետևյալ դեպքերում.

Ա. Եթե հարկ է ընդգծել գերադաս նախադասության բայ-ստորոգյալի ինչ-որ լրացում, որի հետ առնչվում է նաև ստորադաս բաղադրիչը, ապա վերջինս դրվում է հենց այդ լրացումից հետո, որով և միջադասվում է։ Հմմտ.

Զգույշ, *որ չարքնացնի մուշ-մուշ քնած երեխաներին,* դուրս եկավ սենյակից։

Բ. Եթե ստորադաս բաղադրիչը լրացնում է ո՛չ թե դիմավոր բային, այլ դերբայական մի անդամի, կարող է միջադասվել: Հմմտ.

Ոտքերի թաթերի վրա քայլելով, *որ չարթնացնի մուշ-մուշ քնած երախաներին,* դուրս եկավ սենյակից:

Գ. Եթե գերադաս նախադասությունը սկսվում է հարաբերյալով, նրան անմիջապես հաջորդում է կախյալ եզրը, որով գոյանում է միջադասություն: Հմմտ.

Միայն նրա համար, *որ ապացուցի արևմտահայերի դատի պաշտպանության գաղափարի իրավացիությունը,* Անդրանիկը, մոռանալով իր ով լինելը, իր կոչումն ու աստիճանը, տաք բռնկումով ապտակել է, պոկել ուսադիրներ, քքել-հեռացել (ՍՍ):

5. ՊԱՅՄԱՆԻ ՊԱՐԱԳԱ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 271. *Պայմանի պարագա կախյալ նախադասությունը վերառված կերպով նշում է այն պայմանը, որի առկայությամբ միայն կարող է կատարվել գերադաս բաղադրիչի բայ-լրացյալի արտահայտած գործողությունը կամ եղելությունը:*

Ունի իմաստակառուցվածքային հետևյալ հատկանիշները:

Ստորադաս և գերադաս եզրերում արտահայտված գործողություններ, եղելություններ ըստ էության գտնվում են պայմանահետևանքային հարաբերության մեջ: Պայմանի առկայությունը ենթադրում է հետևանքի գոյություն:

Պայմանը դրսևորվում է ստորադաս բաղադրիչով, հետևանքը՝ գերադաս:

Պայմանի կախյալ նախադասությունները արտահայտում են իմաստային որոշակի երանգներ, որոնք կարելի է ստորաբաժանել երկու ենթախմբի:

Ա. *Ներունակային (պոտենցիալ) պայման,* որ ենթադրվում է, սպասելի է, նույնիսկ ցանկալի, ուրեմն և նրա հետևանքը կարող է իրականանալ ներունակությամբ: Հմմտ.

Եթե խնամիները գան, աչքներիս վրա կընդունենք ու կպատվենք: *Եթե այդ առարկայի գործում ինձ օգնես,* ապա կյանքում չեմ մոռանա քեզ (ՍԽ): *Եթե ծագ ունենար,* ապա հասկանալի կլիներ այս մայր թռչունի արարքը (ՎԱ):

Բ. *Իրական պայման,* որ իրապես եղել է (կա ու կլինի), ուրեմն և նրա հետևանքն էլ իրապես եղել է (լինում է ու կլինի): Հմմտ.

Եթե խաբել եմ ակամայից ուրիշներին, ապա նախ և առաջ ինքս ինձ եմ խաբել (ՎՓ): *Թե չծնվեր մեծ Կոմիտասն իմաստուն,* Հայ ժողովուրդն այսքան անուշ չէր լինի, *Թե չլիներ հայ ժողովուրդն աշխարհում,* Կոմիտասն էլ այսքան անուշ չէր լինի (ՀՇ):

§ 272. Պայմանահետևանքային հարաբերություն արտահայտող բարդ նախադասությունների բաղադրիչների կապակցությունը կարող է լինել *նշույթավոր* և *անշույթ*:

1. Իբրև նշույթ կիրառվում են *եթե, եթե...ապա, եթե...ուրեմն, թե* (*որ*), *որ* շաղկապները, հազվադեպ՝ նաև *երբ* (*որ*) հարաբերականը:

2. Գերադաս բաղադրիչում կարող է առկա լինել հոլովակապային արտահայտությամբ հետևյալ հարաբերյալներից որևէ մեկը՝ *այն դեպքում, այն պարագայում, այն ժամանակ:* Սրանց հաճախականությունը, սակայն, շատ փոքր է:

3. Պայմանի կախյալ նախադասությունները իրենց ճնշող մասով *նախադաս* են: *Այսպիսի դիրքը պայմանավորված է նրանց արտահայտած իմաստային հարաբերությամբ, պայմանի և հետևանքի իրադրական հատկությամբ:* Նախ պետք է կատարվի պայմանը, ապա միայն նրան կարող է հետևել հետևանքը: Հմմտ.

Եթե բարձրանար ամպի վրա, Լառ Մարգարը հեռու սարերի հետև պահված իրենց գյուղը կտեսներ (ԱԲ): *Թե կուզես,* լռի՛ր, *թե կուզես,* ոռնա՛, *թե կուզես,* ծամիր սեփական լեզո՛ւդ (ՊՍ):

Պայմանի կախյալ նախադասությունը սակավ դեպքերում կարող է նաև *հետադասվել:* Նման շարադասումը բխում է խոսողի կամային վերաբերմունքից: Գերադաս բաղադրիչում նշվում է մի գործողություն կամ եղելություն, որ անվերապահորեն կատարվել է, կատարվում է կամ ենթակա է կատարման, բայց հետո, կարծես զիջումով, ներկայացվում է նաև պայմանը: Հմմտ.

Արևից խանձված դեմքի վրա սրածայր քիթը երկար կտուցի էր նման, *եթե սպիտակած բեղերը չլինեին* (ԱԲ): Օ՜, Դանթե՛, և ի՞նչ, կսոսկար հոգիդ, *թե որ տեսնեիր հեղեղումը ժանտ* (ՀՇ): Սրափը երևի դեռ այդպես շարունակվեր, *եթե հանկարծ մոտակայքում չպայթեր մահակի անսպասելի հարված ստացած շան աղեխարշ կաղկանձը* (ՀՄ):

Ավելի ևս սակավ է պատահում պայմանի նախադասության *միջադաս* դիրքը: Նման շարադասություն լինում է սովորաբար հետևյալ կառույցներում:

Ա. Գերադաս եզրը սկսվում է հարաբերյալով: Սրան անմիջապես հաջորդում է կախյալ բաղադրիչը, որով և ստացվում է միջադաս շարադասություն: Եվ քանի որ հարաբերյալը, ինչպես նշվեց, խիստ սակավ է օգտագործվում, բնականաբար հազվադեպ է պատահում նաև միջադասությունը: Հմմտ.

Այն դեպքում միայն, *եթե ազատվեն գրքերը,* ինքը կվերադառնա մենաստան [, միայն թե ազատվեն գրքերը] (ՊԴ): Միայն այն դեպքում, *եթե ոստիկանությունը թերանա,* հարկ կլինի կտրուկ միջոցներ ձեռնարկել՝ չվճարվող դրամը հավաքելու համար (ՀՄ):

Բ. Գերադաս եզրը սկսվում է որևէ միջանկյալ բառով, կոչականով և այլն, որին հաջորդում է կախյալ նախադասությունը՝ դառնալով միջադաս: Հմմտ.

Կնի՛կ, ա՛յ կնիկ, *թե որ բախտ ունենամ,* մեծ մարդ կդառնամ (ԱԻ):

4. Պայմանահետևանքային հարաբերություն արտահայտող բաղադրիչների բայ-ստորոգյալները եղանակաժամանակային ձևավորմամբ պայմանավորված են մեկը մյուսով: Եվ դա հասկանալի է, քանի որ առկա է գործողությունների, եղելությունների իրական հաջորդականություն: Սակայն այդ հաջորդականությունը միշտ չէ, որ ստանում է նաև բառաքերականական ձևավորում: Շատ հաճախ գերադաս և ստորադաս եզրերի բայ-ստորոգյալները կարող են արտահայտված լինել միևնույն եղանակով ու ժամանակածևով, և, սակայն, հաջորդականությունը պահպանվում է անխախտ կերպով: Հմմտ.

Եթե ջուր *եղել է*, ծառերը *ջրել եմ:* Եթե ջուր *լինում է*, ծառերը *ջրում եմ:* Եթե *կլինի* ջուր, ծառերը *կջրեմ:* Այլև՝ *Եթե խոհեմությունն ու շրջահայաց դատողությունը ինձ մեկուսի են պահել* այդ բռունցքի վարքագծից, մարդիկ *կարծել են* [, թե վեհերոտ եմ] (ՎՓ):

Նկատելի է, որ գերադաս և ստորադաս եզրերի բայ-ստորոգյալները ունեն եղանակաժամանակային միևնույն ձևավորումը, ինչը, սակայն, նրանց չի խանգարել՝ արտահայտելու գործողությունների հաջորդականություն իրական ժամանակի մեջ, այսինքն՝ նախ՝ պայմանը, ապա՝ հետևանքը:

Դրանով հանդերձ՝ ավելի օրինաչափ ու համեմատաբար տարածված է ստորադաս եզրի բայ-ստորոգյալի կիրառությունը *ըղձական* եղանակի ապառնիով (կամ անցյալի ապառնիով), գերադաս եզրինը՝ *պայմանական* եղանակի ապառնիով (կամ անցյալի ապառնիով): Հմմտ.

Ո՞վ ցած *կբերի* նրան թռչելիս, թե *չլինին* կինն ու գինին (ՀԹ): Թե *չէորանայինն* հայ մայրերի ու որբ մանկանց արցունքները, այժմ ջրասույզ *կաներին* հայոց վշտի դեմ ողջ երկրագունդը (ԱՇ): Եթե *ունենար* որևէ հնար, խեղճ տիրամայրը իրեն *կփրկեր* (ՊՍ):

Գերադաս և ստորադաս բաղադրիչների կապակցության համար վերը նշված նշույթներից (§ 272, 1) ամենից ավելի կիրառվում է *եթե* մենադիր շաղկապը: Այն գործնականորեն գործառվում է խոսքային բոլոր ոլորտներում՝ թե՛ ժողովրդախոսակցական լեզվում, թե՛ գրական-գեղարվեստական, թե՛ գիտահրապարակախոսական աղբյուրներում: Հմմտ. վերի օրինակներից շատերը, այլև՝

Եթե ուզեն, արեգակներ կշպրտեն երկինքն ի վեր, *եթե ուզեն*, կամքով արի ու արևի հրով վառված՝ ինչե՞ր միայն չեն կատարի ամբոխները խելագարված (ԵՉ):

Եթե շաղկապը ոճավորման նկատառումներով կարող է տեղավորվել կախյալ բաղադրիչի ո՛չ թե սկզբում, այլ միջում: Հմմտ.

Եվ դու մեռնեիր երևի ինձ հետ Անծրևից հյուծված և հրակարոտ, Այն փոթորիկը *եթե* չցնցեր, Եվ մրրիկը այն *եթե* չխանձեր Քո դեմքը իր ջինջ, կենսատու հրով (ԵՉ):

Երբ անհրաժեշտ է լինում պայմանահետևանքային հարաբերությունը հատկապես ընդգծել, գերադաս եզրում կիրառվում է հարաբերյալ: Հմմտ.

Նա կմասնակցեր նախագահական ընտրություններին միայն *այն դեպքում, եթե ունենար ժողովրդի քվեն* (ԳԹ): *Եթե կբաժանվի այժմյան կնոջից,*

իրավունք ձեռք կբերի ամուսնանալու մի հայ աղջկա հետ, այն ժամանակ նոր կնոջից եղած զավակները կհամարվեն օրինական ժառանգներ (ԱԸ):

Դիտելի է, որ եթե իբրև հարաբերյալ կիրառվում է *այն ժամանակ* հոլովակապային կապակցությունը, կախյալ եզրը ձեռք է բերում ժամանակային երանգ: Սակայն, շնորհիվ այն բանի, որ *եթե* շաղկապի իմաստային կառուցվածքում ուժեղ ու ընդգծված է պայմանի հարաբերությունը, կախյալ եզրը շարունակում է մնալ պայմանի պարագա:

Նվազ չափով է գործածվում *եթե...ապա* զուգադիր շաղկապը, որը ավելի հանդիպում է գիտահրապարակախոսական բնույթի գործերում, քան գեղարվեստական գրականության մեջ: Հմմտ.

Եթե մարդը ծգտում է կատարելության, ապա նա դժվարին փորձությունների միջով էլ կանցկացնի հավատի ու սոցիալական առաջադիմության դրոշը (ՍԱ):

Ինչպես նշված է վերը, *եթե...ապա* շաղկապով կարող են կապակցվել նաև ներհակական բարդ համադասական նախադասության հակադրական հարաբերությամբ կապված բաղադրիչները: Տե՛ս § 180,181, այլև՝

Եթե մարդիկ Ասիայում ինձ եվրոպացի են համարում, ապա Եվրոպայում ո՛չ ոք չմոռացավ [,որ ես ասիացի եմ] (ՎՓ):

Եթե շաղկապի հնչյունափոխված տարբերակն է *թե*-ն, որը, ինչպես արդեն ասվել է, կապակցում է այլևայլ լրացական հարաբերություններ արտահայտող կախյալ բաղադրիչներ՝ *ենթակա, խնդիր, որոշիչ, պարագաներ* և այլն: Սակայն այդ շաղկապի խորքային իմաստում դեռևս առկա է նրա նախնական, ծագումնաբանական նշանակությունը՝ պայմանի բովանդակությունը, ինչը լայն հնարավորություն է տալիս կապակցելու պայմանի կախյալ նախադասություններ: Նման կապակցությունը հանդիպում է առավելապես ժողովրդախոսակցական լեզվում, որից և անցել է գրական-գեղարվեստական, մասամբ նաև հրապարակախոսական խոսքին: *Թե*-ն հաճախ հանդիպում է *որ* թարմատարի հետ՝ կազմելով *թե որ* բաղադրյալ շաղկապը:

Եթե շաղկապի նման *թե*-ն ևս օրինաչափորեն դրվում է ստորադաս բաղադրիչի սկզբում, բայց երբեմն ոճական կամ այլ նկատառումներով կարող է կիրառվել նաև միջում: Այս շաղկապով կապակցվելու դեպքում գերադաս եզրում հարաբերյալ չի օգտագործվում: Կախյալ բաղադրիչը ավելի շարադասվում է նախադաս, քան միջադաս կամ հետադաս: Հմմտ.

Թե կյանք ես փնտրում անաշխատ ու հեշտ, (...) անցի՛ր, մի՛ խմիր (ՍԿ)*: Թե որ լույսի խտղտանք չզգար փակ կոպերին,* աչքերը բացել չէր կարողանա (ՀՓ): *Ու հողմերը թե գան, ինձ խլեն քո ձեռքից,* ես կարթնանամ, ծա՛ռ իմ, կըորոտանք մեկից (ՌԴ):

Պայմանի կախյալ նախադասությունը ո՛չ քիչ դեպքերում կապակցվում է *որ* շաղկապով: Նման կառույցները առավելապես բնորոշ են կենդանի խոսակցական լեզվին: Կիրառվելով գեղարվեստական երկերում՝ դրանք խոսքին հաղորդում են բնաշխարհիկ շունչ: Այն ևս օրինաչափորեն դրվում է կախյալ եզրի սկզբում, բայց ինչ-որ նպատակով կարող է դրվել և միջում: Հմմտ.

Բայց որ աշխարհում ժառանգ ունենանք, մենք էլ նրանով անմեռ կմնանք (ՀԹ)։ *Բա որ էդպես բլբուլ ես դառել,* ո՞վ պիտի սեղան սարքի հյուրերի համար (ԲՎ)։ [Թշերից արյուն ու լույս է կաթում.] *Մատով որ խփես,* խալ կվերցնի (ՄԽ)։

Կապակցությունը երբեմն կարող է իրացվել նաև *երբ* (*որ*) հարաբերականով։ Սա կախյալ նախադասությանը հաղորդում է ժամանակային որոշ երանգ, և ինչ-որ չափով մթագնում է պայմանահետևանքային հարաբերությունը։ Հմմտ.

[Ո՞վ իմանա՝ ո՛ւր ընկանք, Քանի՞ օրվա հյուր ընկանք.] *Մերն ու սիրտս էլ երբ չկա,* կրակն ընկանք, զո՛ւր ընկանք (ՀԹ)։ [Մոսի՛ ջան, մոսի՛, գլխովըդ շուռ գամ, Ինձ մի՛ սպանիլ, ինձ թո՛ղ ես անգամ,] էլ չեմ սիրիլ ես, *երբ դու չես ուզում,* էլ չեմ կանչիլ ես նրան երազում (Ն.տ.)։ Բառեր չկային և ինչի՞ էր պետք բառը, *երբ այդ ծորում ամեն ինչ ասում էր որդու մասին* (ԱԲ)։

Վերջին շրջանում բավականաչափ տարածում է գտել պայմանի կախյալ նախադասության կապակցությունը *պայմանով որ* բառերով։ Հմմտ.

Կգամ, *պայմանով որ* դու էլ գաս։ Սա պարականոն կազմություն է։ Այն ծագել է *Կգամ (այն) պայմանով, որ դու էլ գաս* կառույցից։ Կախյալ բաղադրիչը այստեղ լրացնում է գերադաս եզրի ո՛չ թե բայական անդամին, այլ գոյականական, և ո՛չ թե պարագա է, այլ հատկացուցիչ կամ, որ թերևս ավելի ճիշտ է՝ որոշիչ։ Կգամ *ի՞նչ պայմանով* → *գալու պայմանով*։ Նախապես կապակցվել է *որ* շաղկապով։ Ավելի ուշ գերադաս և ստորադաս եզրերի միջև մշտապես առկա շարահյուսական դադարի նվազման հետևանքով դադար է սկսել գոյանալ *որ* շաղկապից հետո, որով վերջինս միացել է *պայմանով* բառաձևին՝ առաջացնելով սխալ մի կազմություն՝ *պայմանով որ*։ Սա, սակայն, հետզհետե տարածում է ստանում, մանավանդ գրքային ոճի մեջ։ Հմմտ. նաև՝

Մեսրոպին գյուղ են ուղարկում՝ *պայմանով որ մի նավակ գտնելուն պես իսկույն վերադառնա* [Գևորգ Չաուշը վերջին շնչում էր] (ՍՍ)։

Նման արտաբերումը և գրավոր խոսքում համապատասխան տրոհումը մերժելի է, խորթ գրական հայերենին։ Տրոհումը պետք է լինի *պայմանով* բառաձևից հետո։ Եվ դա ապացուցվում է նրանով, որ *պայմանով* բառաձևը կարող է ստանալ լրացում՝ *այն պայմանով, որ...,* իսկ սա արդեն *հարաբերյալ* → *շաղկապ* կաղապար է, որի մասին խոսվեց, այլև՝ *մեկ պայմանով, որ..., երկու պայմանով...,* և այլն *Պայմանով* բառաձևը այստեղ շաղկապ չէ այն պարզ պատճառով, որ շաղկապը լրացում չի ստանում։

§ 273. Կապակցությունը կարող է լինել նաև *աննշույթ*։ Ինչպես ժամանակի, նպատակի, պատճառի և այլ կախյալ նախադասություններ, պայմանի պարագան ևս կարող է կապակցվել շարահարությամբ։ Նման կապակցությունը շատ տարածված է թե՛ կենդանի խոսակցական լեզվում, թե՛ գրական-գեղարվեստական աղբյուրներում, մանավանդ բանաստեղծության մեջ։

Կապակցության բառական միջոցների բացակայության դեպքում բարդության եզրերի միջև կապ է ստեղծվում, և պայմանահետևանքային

հարաբերություն է գոյանում լեզվական մի քանի գործոններով, որոնցից առանձնանում են հատկապես հետևյալները՝ *բաղադրիչների տրամաբանական ներքին աղերսը, շարադասությունը, բայ-ստորոգյալների եղանակաժամանակային որոշակի կիրառությունները և հնչերանգը:*

1. Իմաստային առումով՝ բաղադրիչների միջև պետք է ո՛չ միայն պայմանահետևանքային իրական կապ լինի, այլև այդ կապը պետք է արտահայտված լինի լեզվի ներքին տրամաբանությամբ, որպեսզի չստացվի անկապ, անտրամաբանական նախադասություն:

2. Շարահարական կապակցության դեպքում կախյալ եզրը օրինաչափորեն *նախադաս է*. այլ մի դասավորություն չկա: Հմմտ.

[Ես հո պստիկ չեմ,] *մի տարի էլ անցնի* բեղերս դուրս կգան (Ր): *Հորում լինեք քառսուռ գազ խոր, թե ջաղացի քարի տակին,* Կելնեն ձեր դեմ, ինչպես էսօր, Սասմա Դավիթ, Թուր Կեծակին (ՀԹ):

3. Պայմանահետևանքային հարաբերություն արտահայտող բաղադրիչների աննշույթ կապակցության մեջ զգալի դեր ունեն *բայ-ստորոգյալների եղանակաժամանակային որոշակի կիրառությունները:* Պայմանը, ինչպես նշվեց, առանձին շեղումները՝ մի կողմ, օրինաչափորեն նախորդում է հետևանքին. ստորադաս եզրում նշված գործողությունը նախորդում է գերադաս բաղադրիչում արտահայտված գործողությանը: Սա պետք է ունենա իր բառաքերականական ձևավորումը: Ուստի և ստորադաս եզրի բայ-ստորոգյալի եղանակաժամանակային այս կամ այն ձևը հայտնի չափով պայմանավորում է նաև գերադաս եզրի ստորոգյալի եղանակն ու ժամանակը: Միակ բայ-եղանակը, որով չի կիրառվում ստորադաս եզրի ստորոգյալը, *հրամայական* եղանակն է: Մնացած բոլոր եղանակների գրեթե բոլոր ժամանակածևերով կարող է արտահայտվել ստորադաս բաղադրիչի ստորոգյալը: Սրա եղանակաժամանակային արտահայտությունն էլ թելադրում է գերադաս եզրի ստորոգյալի բայ-եղանակի և ժամանակածևի այսինչ գործառույթը: Էական պայմանն այն է, որ գերադաս եզրի գործողությունը պետք է իրական ժամանակի մեջ հաջորդի ստորադաս եզրում արտահայտված գործողությանը, եղելությանը: Եթե մինչևիսկ երկու եզրերի բայ-ստորոգյալները ունենում են եղանակաժամանակային միևնույն կիրառությունը, միևնույնն է, գործողությունների հաջորդականությունը չի խախտվում: Այսպիսով՝ ստացվում են բայերի եղանակաժամանակային հետևյալ մոտավոր կաղապարները.

Սահմանականի ներկա → սահմանականի ներկա, սահմանականի ներկա → նույն եղանակի ապառնի, անցյալ → անցյալ, սահմանականի ներկա → պայմանականի կամ *հրամայականի ապառնի, ըղձականի ապառնի → պայմանականի ապառնի* և այլն: Հմմտ. վերի օրինակները, այլև՝

Կամենո՞ւմ ես ինձ մխիթարել, *ցո՛ւյց տուր* [,թե ո՛ր ճանապարհով կարող եմ ես ավելի լավ վրեժխնդիր լինել իմ թշնամուն] (Մ): *Ունե՞ս՝ աշխատիր* կրկնապատկե՛լ, եռապատկե՛լ, տասնապատկե՛լ (ԱՇ): [Ով կեցել եք, զե՛նք կապեցեք,] Ձենք *եք կապել՝ ձի՛ քամբեցեք,* Ձի *եք քամբել՝ ելե՛ք, հեծե՛ք* (ՀԹ): [Ուղտից ձին տարբերվում է նրանով, որ եթե վրայից տերն ընկնի, ձին

կանգ կառնի, իսկ ուղտը կանգնել չունի, գնում է.] *վրայից բեռ ընկնի՝ կշարունակի* գնալ, տերն *ընկնի* դարձյալ *կշարունակի* (ՍԳ) և այլն:

4. Ամեն մի ամփոփ միտք, արտահայտված լինի պարզ թե բարդ նախադասությամբ, կենդանի խոսքում ձևավորվում է ծայնային որոշակի ոլորումներով: Ձայնային որոշակի ոլորումը բարդ նախադասությունը արտաբերելիս, մանավանդ եթե նրա եզրերը կապակցված են առանց նշույթի, ստանում է մի երկրորդ, ո՛չ պակաս նշանակություն: Ինչպես նշվել է վերը (§ 187, 1, 2), այն ո՛չ միայն նպաստում է բաղադրիչների կապակցությանը, կապակցության սերտությանը, այլև հաճախ կանխորոշում դրանց հարաբերությունների տեսակն ու բնույթը: Ձայներանգը ըստ էության ստանում է գործառական (ֆունկցիոնալ) արժեք:

Պայմանահետևանքային հարաբերություն դրսևորող կառույցների հնչերանգը բնորոշվում է նրանով, որ առաջին եզրի կամ կախյալ նախադասության ավարտին ծայնատոնը ո՛չ թե իջնում է՝ միտելով մարելու, այլ բարձրանում է՝ միտելով նախազգուշացնելու հետևանքի մասին, որը արտահայտված է լինում հենց գերադաս նախադասության մեջ: Հնչերանգը չի փոխվում նաև շարադասությունը փոխելիս: Դիցուք, եթե կախյալ եզրը հետադաս է, գերադաս բաղադրիչի արտաբերման վերջում բարձրացող տոնը և որոշ դադարը ազդարարում են պայմանի առկայության մասին, որը դրսևորվում է հետադասված կախյալ նախադասությամբ: Գրավոր խոսքում ձայներանգի բնույթը նշվում է համապատասխան կետադրությամբ, որը, ինքնին հասկանալի է, լիապես չի կարող վերարտադրել կենդանի խոսքի ելևէջավորումը:

Պայմանահետևանքային հարաբերություն արտահայտող բաղադրիչների ստորոգյալները մեծավ մասամբ պարզ են լինում: Տե՛ս վերի օրինակները: Սակայն քիչ չեն հաճախված նաև այն կառույցները, որոնց գերադաս կամ ստորադաս նախադասություններից մեկնումեկում, նույնիսկ երկուսում միաժամանակ պատահում են անվանաբայական բաղադրյալ ստորոգյալներ: Նման պարագայում բայ-հանգույցները և մյուս, վերը նշված գործոնները ապահովում են պայմանահետևանքային հարաբերության դրսևորումը: Ստորոգյալները բաղադրյալ կարող են լինել թե՛ *նշույթավոր* և թե՛ *անշույթ* կապակցություն ունեցող, պայմանահետևանքային հարաբերություն արտահայտող նախադասություններում: Նման հարաբերություն կարող է առկա լինել անգամ միակազմ նախադասությունների մեջ: Հմմտ.

Ա. *Ստորադաս եզրի ստորոգյալը՝ բաղադրյալ, կապակցությունը՝ շարահարական. Պոե՞տ ես՝* դու այսօր պիտի մաքառես (ԵՉ): *Սպարապե՞տ ես՝* ճա՛րը գտիր (ՍԽ):

Բ. *Երկու բաղադրիչների ստորոգյալները՝ բաղադրյալ, կապակցությունը՝ շաղկապական. Եթե փորը թափուր է, և ափն է դատարկ,* Ապա գլուխը լեփ-լեցուն է միշտ ոճիր-նախճիրով (ՊՍ): *Եթե դեռ ոմանց համար Մոսկվան հիմա մի փարոս է միայն անմար,* Վաղն իսկապես պիտի դառնա հանգրվան (Ե.տ.):

Գ. *Գերադաս բաղադրիչը միակազմ, կապակցությունը շաղկապական.* Իսկ ինչո՞ւ քնել, եթե թռչնային նրանց քունն անգամ լեցուն է ահով ու զարհուրանքով (Ն.տ.):

Դ. *Երկու եզրերը միակազմ, կապակցությունը շաղկապական. Եթե կանգ առնել,* ապա կանգ առնել գետերի ափին, աղբյուրների մոտ (Ն.տ.) և այլն:

6. ՋԻՋՄԱՆ (ՀԱԿԱՌԱԿ ՊԱՅՄԱՆԻ ԿԱՄ ՀԱԿԱՌԱԿ ՀԻՄՈՒՆՔԻ) ՊԱՐԱԳԱ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 274. *Ջիջման (հակառակ պայմանի կամ հակառակ հիմունքի) պարագա կախյալ նախադասությունը վերաբերված կերպով նշում է այն իրական կամ ենթադրյալ պայմանը կամ հիմունքը, որին հակառակ կատարվում է գերադաս եզրի բայ-լրացյալի արտահայտած գործողությունը կամ եղելությունը:*

Ունի իմաստակառուցվածքային հետևյալ հատկանիշները:

1. Այս կարգի կախյալ բաղադրիչը արտահայտում է մի գործողություն, եղելություն կամ իրողություն, որը հիմք, պատճառ կամ պայման է հանդիսանում՝ արգելելու գերադաս եզրում նշված գործողությունը կամ խանգարելու, խոչընդոտելու նրա իրականացմանը:

Այդ արգելքը, խանգարիչ հանգամանքը, սակայն, այնքան զորեղ կամ հիմնավոր չեն, որ թույլ չտան՝ իրականացնելու գերադաս եզրում նշված գործողությունը:

Գերադաս նախադասությունն էլ արտահայտում է այն գործողությունը կամ եղելությունը, որ կատարվում է՝ հաղթահարելով նշված խոչընդոտը կամ արգելքը:

Ջիջման նախադասությունը, այսպիսով, ուղղակիորեն առնչվում է պայմանի և պատճառահիմունքային հարաբերություններ դրսևորող կախյալ բաղադրիչներին: Այն նշում է, այսպես ասած՝ հաղթահարված, «բանի տեղ չդրված» մի գործողություն, եղելություն, հանգամանք, որոնք որպես իրական կամ ենթադրյալ մի պայման, պատճառ կամ տրամաբանական մի հիմունք պետք է որ կասեցնեին գերադաս եզրի գործողությունը, բայց ի զորու չեն եղել՝ անելու այդ:

Ըստ այդմ՝ գերադաս եզրում արտահայտված գործողությունը իրապես և տրամաբանորեն հակասում է ստորադաս բաղադրիչում առկա գործողությանը կամ եղելությանը: Ստացվում է, որ այս վերջին՝ ստորադաս նախադասության մեջ արտահայտված գործողությունը, եղելությունը մի տեսակ զիջումով են կատարվում, ինչ-որ զիջում են անում գլխավոր բաղադրիչի գործողությանը, հանդուրժում են այն, իբր՝ *ի՞նչ անենք, թող կատարվի:* Հմմտ.

Թեև ձայները չեն մեռնում բնավ, բայց նրանց կյանքն էլ ակնթարթ է լոկ (ՈԴ): Եթե «ձայները *չեն մեռնում* բնավ», նրանց կյանքն էլ չի կարող «լոկ ակնթարթ» լինել: Մեկը հակասում է, ներհակ է մյուսին: Ուստի և հակա-

սությունը, ներհակությունը հաղթահարվում է զիջումով՝ գոյացնելով զիջման պարագա կախյալ նախադասություն:

Զիջման հարաբերությունը, ինչպես նշվեց, կարող է վերաբերել իրական պատճառին կամ հիմքին, ենթադրվող պայմանին, տրամաբանական հիմունքին: Այս և այլ իմաստային երանգները դրսևորվում են կապակցական հատուկ եղանակներով ու միջոցներով, որոնց մասին կխոսվի ստորև:

Այս կախյալ նախադասություններում առկա զիջման հարաբերությունը կարող է՝ ա. *զուգակցվել խոսողի կամային վերաբերությամբ* և բ. *չզուգակցվել:*

Ա. Կան կառույցներ, որոնցում խոսողը որոշակի կամային վերաբերմունք է արտահայտում ստորադաս եզրում նշված գործողության, եղելության իրականացման վերաբերյալ: Արտահայտում է *հաստատակամություն* բոլոր հնարավոր և անհնար միջոցներով հաղթահարելու այն արգելքը կամ խոչընդոտը, որ խանգարում է՝ իրականացնելու գերադաս եզրում նշված գործողությունը: Հմմտ.

Որքան էլ որ ապրեմ, այդ վիրավորանքը ես երբեք չեմ մոռանա: Բայց անկարող են այլևս ապրել Լռին խավարում, *Ինչքան էլ դրանք թվան ապահով* (ՊՍ):

Բ. Կան կառույցներ, որոնցում կախյալ նախադասությամբ արտահայտված գործողության, եղելության հանդեպ խոսողի վերաբերմունքը *բացակայում է* կամ *չեզոքացված է:* Պարզապես նշվում է մի գործողություն կամ եղելություն, որը որպես արգելակող հանգամանք հաղթահարվել է գերադաս նախադասության մեջ նշված գործողությամբ:Հմմտ.

Արցունք չերևաց նրա՝ ցավից կծկվող դեմքի վրա, *թեև ծայրը խուլ հեկեկանքից դողում էր* (ԱԲ): *Թեպետ կույր չեմ բնավ,* Սակայն շուրջը նայում ու չեմ տեսնում ոչինչ (ՊՍ):

2. Կապակցությունը գերազանցապես *նշույթավոր* է, հազվադեպ՝ նաև *աննշույթ:*

Իբրև նշույթ օգտագործվում են՝ ա. *շաղկապներ,* բ. *հարաբերականներ.*

Ա. *Շաղկապական կապակցությունը* իրացվում է մենադիր *թեև, թեկուզ* (*և*), *չնայած* (*որ*) և զուգադիր՝ *թեև...բայց* (*սակայն*), *թեպետ* (*և*)... *բայց* (*սակայն*), *թեպետ* (*և*)... *այսուամենայնիվ* (*այնուամենայնիվ*), *չնայած* (*որ*) ... *բայց* (*սակայն*), *թեկուզ* (*և*) ... *բայց* (*սակայն*) և նման շաղկապներով: Զուգադիր շաղկապների երկրորդ եզրերը դրվում են գերադաս բաղադրիչների առավելապես սկզբում, երբեմն՝ միջում:

Բ. *Հարաբերական կապակցությունը* իրացվում է *ինչ, ինչքան, որքան, ուր, որտեղ, երբ, ինչպես* (*ոնց*) հարաբերական դերանուններով, որոնց ծայրին հավելվում է *էլ* վերաբերականը: Ստացվում են՝ *ինչ էլ, ինչքան էլ, որքան էլ, ուր էլ, որտեղ էլ, ինչպես* (*ոնց*) *էլ* նշույթներ:

Հարաբերականներով կապակցությունը բնութագրվում է հետևյալով: Ստորադաս եզրը արտահայտում է այն վերջին հնարավոր և անհնար գործողությունը, եղելությունը, իրողությունը, սրանց այլևայլ հատկանիշները, որոնք ներունակությամբ կարող են կասեցնել գերադաս եզրի գործողութ-

յունը և, սակայն, իրապես ի վիճակի չեն անելու այդ: Իրենց դրսևորած բառիմաստների համեմատ՝ *ինչքան* (*էլ*), *որքան* (*էլ*), *ինչպես* (*էլ*), *ոնց* (*էլ*) հարաբերականները շեշտադրում են զիջական կախյալ նախադասության մեջ արտահայտված գործողության *քանակական* և *որակական* հատկանիշները, *ուր* (*էլ*), *որտեղ* (*էլ*) հարաբերականները՝ *տարածական* հատկանիշը, *երբ* (*էլ*)-ը՝ ժամանակային, *ինչ* (*էլ*)-ը՝ ենթակայական և խնդրային հարաբերություններ: *Ոնց* (*էլ*)-ը հատուկ է ժողովրդախոսակցական լեզվին: Հմմտ.

Ուր էլ լինեմ, չեմ մոռանա ես ողբածայն երգերը մեր (ԵՉ): *Ինչքան էլ լեն դուքաններում ռանգ-ռանգ մրգեր ըլին շարած*, Անմահական մրգերի տեղ Շահնշահի բաղն է էլի (Ն.տ.): *Ինչ էլ պատահի*, նա ի՛մ ուզածը կանի: *Տղան ինչպես էլ լիներ, պետք է ամուսնանար իր ընտրած աղջկա հետ* (ՍՍ) և այլն:

3. Շարադասությունը համեմատաբար կայուն է: Մենադիր շաղկապով կապակցվելու դեպքում կախյալ եզրը սովորաբար նախադասված է, բայց կարող է նաև հետադասվել: Տե՛ս բ. կետի երկու օրինակները, այլև՝

Թեկուզ և ծեռքդ գրչից էլ գրկեմ, Դու, միևնույնն է, պիտի որ երգես (ՊՍ): Հայտնվի՛ր, *թեկուզ ես գրկվեմ կյանքից* (ՎԳ):

Զուգադիր շաղկապով կապակցվելու դեպքում ստորադաս եզրը օրինաչափորեն նախադասվում է: Շաղկապի առաջին բաղադրիչը տեղադրվում է ստորադաս եզրի սկզբում, երկրորդը՝ գերադասի սկզբում: Ստորադաս բաղադրիչի շաղկապը, սակայն, ոճական նկատառումներով, տրամաբանական շեշտի և այլ հանգամանքներով պայմանավորված, կարող է տեղափոխվել առաջ՝ ընդհուպ մինչև երկրորդ եզրի շաղկապին հասնելը՝ գոյացնելով՝ ...*թեև → բայց...*, *թեպետև → բայց*... կաղապարներով կապակցություններ: Հմմտ.

Թեև օգոստոսը նոր էր սկսվել, բայց լեռնային այդ գյուղում աշունն արդեն ցույց էր տալիս իր բոլոր գույները (ՍՋ): *Մենք թեպետ վայելչագրության տետրակի վրա գլխահակ ենք, բայց* գիտենք [, որ նա դեպի մեզ է գալիս] (ԱԲ): *Փափուջյանի առաջարկը նրան այնքան էլ դուր չեկավ թեպետ, բայց* վարչության պետը շատ խնամքով էր նախապատրաստել իր առաջարկը (ՌՅ) և այլն:

Ինչ (*էլ*), *ինչպես* (*էլ*), *ուր* (*էլ*), *որտեղ* (*էլ*) և նման հարաբերականներով կապակցվելիս կախյալ եզրը սովորաբար նախադասված է: Տե՛ս վերի օրինակները: Սակայն ինչ-ինչ նկատառումներով գերադաս բաղադրիչի ինչ-որ անդամ կարող է ընկնել ստորադաս բաղադրիչից առաջ, որով վերջինս կդառնա միջադաս: Տե՛ս վերի օրինակներից մեկը՝ Տղան, *ինչպես էլ լիներ...*, այլև՝ Արեգակը, *ինչ էլ անես*, լուսաբացին կծագի և մայրամուտին մայր կմտնի:

Սակավ կառույցներում կախյալ բաղադրիչը պատահում է նաև վերջադաս դիրքով: Այս պարագայում առավել ընդգծվում է գերադաս եզրի չկատեգված գործողությունը կամ եղելությունը: Հմմտ.

Բայց դարձյալ չենք կարող մերժել նրա բարեկամությունը, *որքան էլ կեղծ լիներ* (Ր): Չեմ դավաճանի իմ Նվարդին, *որքան էլ դյութես, Օ՜, Շամիրա՛մ* (ՎՏ):

§ 275. Բաղադրիչների իմաստային հարաբերությունը պայմանավորում է նաև բայ-ստորոգյալների եղանակաժամանակային որոշակի գործառույթը:

Ա. Շաղկապական կապակցությունը սահմանափակում չի մտցնում եղանակների ու ժամանակների կիրառության մեջ, թեև միշտ ենթադրվում է որոշ համաձայնություն: Ասենք՝ ստորադաս եզրի *սահմանական եղանակով* արտահայտված ստորոգյալի դիմաց՝ գերադասում *նույն եղանակով* կիրառված ստորոգյալ, *ներկայի* դիմաց՝ *ներկա, անցյալի* դիմաց՝ *անցյալ*, վերջինս՝ իր տարբեր ժամանակաձևերով: Հմմտ.

Թեպետ անձամբ չի տեսել նրանց, բայց լսել ու կարդացել է նրանց մասին (Մ): *Թեպետ մեր խառնվածքը անհաստատ չէ այդ աստիճան ու դժվար է ելնում հունից*, բայց ամեն ինչ իր պահն ունի (ՊՍ):

Ստորադաս եզրում *ըղձականի ապառնիի* դիմաց՝ գերադաս եզրում՝ *պայմանականի* կամ *հարկադրականի ապառնի* և կամ *հրամայական եղանակ*, որ նույնպես ապառնի է: Հմմտ.

Մի կամ երկու մարդուց ոհմակը չի վախենա, *թեկուզ հրացան ունենան* (ՀԹ): *Թեկուզ և արար աշխարհ գա վրան*, կերթա դեմուդեմ ու տուր չի տալ իրան (ն.տ.): *Թեկուզ և անցնես գիրկն անէության*, վճռի՛ր, մի՛ սոսկա վտանգից մահվան (ՎԳ) և այլն:

Բ. Հարաբերական կապակցությունը որոշակի սահմանափակություն է մտցնում բայ-ստորոգյալների եղանակաժամանակային կիրառության մեջ: Ստորադաս եզրը սովորաբար ունենում է ըղձական եղանակով դրված բայ-ստորոգյալ, առավելապես՝ ապառնի, գերադաս եզրում լինում է պայմանականի կամ հարկադրականի ապառնի: Տե՛ս վերի օրինակները, այլև՝ *Ուր էլ փախչես*, ինքդ քեզնից չես փախչի:

Գ. Շաղկապական կառույցներում բայ-ստորոգյալների արտահայտած գործողությունները կարող են լինել թե՛ համաժամանակյա, թե՛ տարաժամանակյա: Տե՛ս վերի օրինակները, այլև՝

Տարաժամանակյա. Թեկուզ Ասյան հակառակեց, ամանը վերցրեց [, որ ինքը ջուր լցնի ձեռքին], բայց կինը մերժեց (ԱԲ):

Համաժամանակյա. Չնայած հոգնությունից այտերս փոս էին ընկել, այնուամենայնիվ դեմքս շողում էր (ԱՎ):

Հարաբերական կապակցություններում հիմնականում լինում է *տարաժամանակյա* հարաբերություն, ըստ որում՝ գերադաս եզրի գործողությունը օրինաչափորեն հաջորդում է ստորադաս բաղադրիչում նշված գործողությանը: Տե՛ս վերի օրինակները: Ընդսմին նման հարաբերությունը կարող է քերականորեն արտահայտված էլ չլինել: Ստորադաս եզրի բայ-ստորոգյալը կարող է դրված լինել, դիցուք, մի ապառնի ժամանակով, գերադաս եզրինը՝ ներկա, բայց միևնույնն է, վերջինս ժամանակային առումով հաջորդում է ապառնի ժամանակաձևով արտահայտված բայ-ստորոգյալի նշած գործողությանը: Հմմտ.

Ինչքան էլ սուր սիրտըս *խոցեն* արյունաքամ վերքերը մեր, էլի ես որբ ու արնավառ Իմ Հայաստան յարն *եմ սիրում* (ԵՉ):

Խոցեմ բայը կիրառված է ըղձականի ապառնիով, որ քերականորեն նշում է սահմանականի ներկային (*սիրում եմ*) հաջորդող գործողություն, բայց միևնույնն է, բարդ նախադասության բաղադրիչների ներքին տրամաբանական իմաստը հուշում է, որ նախ կատարվելու է ստորադաս եզրի գործողությունը, ապա միայն՝ գերադաս, այսինքն՝ Ինչքան էլ *խոցեմ → սիրելու եմ* (*կսիրեմ, պիտի սիրեմ*)։ Գերադաս եզրի բայը պարզապես կիրառված է հարաբերական նշանակությամբ. իմաստն է՝ Ինչքան էլ *խոցեմ, սիրելու եմ։*

§ 276. Հարկ է նշել, որ *թեև...բայց* (*սակայն*)*,թեկուզ և ... բայց* (*սակայն*), *թեպետ և... բայց* (*սակայն*) և նման զուգադիր շաղկապներով կապակցվող կառույցները իրենց բաղադրիչների իմաստային հարաբերությամբ սերտորեն առնչվում են ներհակական համադասական նախադասությունների մի տեսակին՝ սահմանափակման կապակցությանը (տե՛ս § 216, 2, Բ)։

Խնդիրն այն է, որ սահմանափակման կապակցությունը ևս հաճախ ձևավորվում է *բայց* և *սակայն* համադասական շաղկապներով, որոնք հիշյալ զուգադիր շաղկապների երկրորդ եզրն են։ Այս շաղկապները դրսևորում են ընդգծված *ներհակության* իմաստ, որը հայտնի չափով մուծվում է *զիջական* հարաբերությամբ բարդ նախադասությունների մեջ։ Դրանով էլ հենց վերջիններս զիջման հարաբերության զուգընթաց բովանդակում են նաև *հակադրության* իմաստ։ Այդ է պատճառը, որ զիջման կախյալ նախադասությունների սկզբում դրվող *թեև, թեպետ* և նման մյուս շաղկապները օտարելիս ստորադասական հարաբերությունը վերածվում է համադասության՝ ներհակական կապակցության սահմանափակման ենթատեսակի։ Հմմտ.

Ստորադասական կապակցություն. Թեկուզ թուղթը շատ փոքր էր ու հասարակ, բայց ամենամեծ ռումբն էլ այդպիսի աղմուկ չէր հանի Մրոցում (ԱԲ)։

Համադասական կապակցություն՝ սահմանափակման երանգով. Թուղթը շատ փոքր էր ու հասարակ, բայց ամենամեծ ռումբն էլ այդպիսի աղմուկ չէր հանի Մրոցում։

Սակայն քանի որ *թեև, թեպետ* և նման շաղկապների իմաստային կառուցվածքում բավականաչափ զորեղ է զիջականության ստորադասական հարաբերության նշանակությունը, *բայց* և *սակայն* համադասական շաղկապները ի վիճակի չեն չեզոքացնելու դրանք։

Համադասական այդ շաղկապները, չխախտելով ստորադասական հարաբերությունը, միաժամանակ ընդգծում են ներհակական իմաստը բաղադրիչների միջև։ Դա երևում է նրանից, որ եթե օտարենք զուգադիր հիշյալ շաղկապների երկրորդ եզրը՝ *բայց* (*սակայն*) համադասական շաղկապը, զիջականության իմաստը կպահպանվի անխախտ, կնվազի կամ կչեզոքանա ներհակական հարաբերությունը։ Հմմտ.

Թեկուզ թուղթը շատ փոքր էր ու հասարակ, ամենամեծ ռումբն էլ այդպիսի աղմուկ չէր հանի Մրոցում։ Այլև՝ *Թեպետև երկար ժամանակ պառկած էի,* քուն չէր գալիս աչքերիս (ՀՓ)։

Բայց, սակայն համադասական շաղկապներին գերադաս եզրում կարող են զուգորդվել զիջականության երանգը սահմանափակող՝ *այսուամե-*

Նայնիվ, այդուամենայնիվ, այնուամենայնիվ շաղկապները: *Բայց* շաղկապին կարող են հաջորդել նաև *և այնպես* բառերը, որոնք ընդգծում են զիջական երանգը: Հմմտ.

Չնայած այդ հուզմունքները ծանր, շատ ծանր են լինում, բայց այնուամենայնիվ մի անբացատրելի թեթևություն են տալիս (ՆԴ): *Թեկուզ Սալբին գլխաշորը երեսին էր քաշել, բայց և այնպես* նրա կարմրելը Արզումանը նկատեց (ԱԲ): *Եվ չնայած արևն այդքան մոտ է թվում, բայց և այնպես* բոլոր տարին նրա (լեռան - Ա.Պ.) վրա ձյուն կա ու կա (ՊՍ):

Այսուամենայնիվ, այդուամենայնիվ, այնուամենայնիվ շաղկապների առկայության դեպքում *բայց, սակայն* շաղկապները կարող են օտարվել: Հմմտ.

Չնայած ոտքս ցավում է, այնուամենայնիվ քայլում եմ, նույնիսկ կարողանում եմ վազել:

Զիջման կախյալ նախադասությունները կարող են կապակցվել նաև *որ, թե, թե որ, եթե* շաղկապներով, որոնք, սակայն, ինքնին վերցրած, զիջականության բովանդակություն չեն դրսևորում: Զիջականության իմաստը կախյալ նախադասության մեջ մուծվում է *էլ* վերաբերականով, որ հաջորդում է ստորադաս եզրի՝ տրամաբանական շեշտի տակ գտնվող անդամին: Հմմտ.

Որ ծեծեն էլ, տնից դուրս չի գա: [Է՛ծ է, էլի.] *որ եղանով էլ խփես*, բան չի պատահի [ՍԽ]: [Պատճառը հայտնի չէ մեզ,] *եթե հայտնի էլ լինի*, հորինված է ու անարդար (Ն.տ.):

Այս կարգի կախյալ նախադասությունները զիջական իմաստը դրսևորում են *հակառակ պայմանի* երանգով: Գերադաս եզրում նշված գործողությունը կատարվում է կամ չի կատարվում՝ հակառակ ենթադրվող պայմանի: Այս կառույցները ավելի հատուկ են կենդանի խոսակցական լեզվին:

Զիջման կախյալ նախադասությունը, թեև հազվադեպ, ժողովրդախոսակցական կենդանի լեզվում կարող է կապակցվել նաև առանց նշույթի՝ շարահարությամբ: Պատահում են հետևյալ կապակցությունները:

էլ վերաբերականի բառիմաստով պայմանավորված՝ հաճախ *որ, թե, եթե* շաղկապները (տե՛ս նախորդ կետը) կարող են օտարվել՝ գոյացնելով կախյալ շարահարություն՝ զիջական հարաբերությամբ: Հմմտ.

Վատ էլ ըլի լավի տեղ անց կկենա (ԱԱ): *Լեզու իմանար էլ՝* նա պիտի լռեր (ԱԲ): [Մենք հինավուրց այս աշխարհը այնպես մտանք, որ] *կորչենք էլ՝* միշտ կմնանք պատմության մեջ (ՊՍ):

Այս կառույցներում կախյալ եզրը սովորաբար նախադաս է:

Բ. ՀԱՏԿԱՆՇԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՐՍԵՎՈՐՈՂ ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 277. *Այս կախյալ նախադասությունները վերառված կերպով արտահայտում են գերադաս եզրի բայ-լրացյալի նշած գործողության, եղելության այլևայլ հատկանիշների որակական և քանակական հարաբերություններով:*

Ըստ այսմ ստացվում են 1. *ձևի* և 2. *չափի պարագա* կախյալ նախադասություններով կապակցություններ:

1. ՁԵՎԻ ՊԱՐԱԳԱ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 278. *Ձևի պարագա կախյալ նախադասությունը վերառված կերպով նշում է, թե ինչպե՞ս, ի՞նչ եղանակով ու ձևով է կատարվում գերադաս եզրի բայ-լրացյալի արտահայտած գործողությունը կամ եղելությունը:*

Ունի իմաստակառուցվածքային հետևյալ առանձնահատկությունները:

Ձևը ըստ էության որակական հատկանիշ է կամ հատկանշի հատկանիշ: Որակական հատկանիշ արտահայտող կախյալ նախադասությունը կարող է լրացնել գերադաս եզրի թե՛ դիմավոր բային, թե՛ անդեմ, հատկապես անորոշ դերբային: Հմմտ.

Ինձ *կմոտենաս* այնպես, *որ ոչ ոք չնկատի:* Պետք է ինձ *մոտենալ* այնպես, *որ ոչ ոք չնկատի:*

Նշելի է, որ դիմավոր բայը արդեն իսկ ունի եղանակի քերականական կարգ, որով դրսևորվում է խոսողի վերաբերմունքը գործողության, եղելության հանդեպ, այսինքն՝ այն, թե գործողությունը, եղելությունը, ըստ խոսողի, ինչպե՞ս են կատարվում՝ ստուգապե՞ս, ենթադրաբա՞ր, անհրաժեշտաբա՞ր, հրամայաբա՞ր և այլն: Այլ կերպ ասած՝ դիմավոր բայը կամ բայ-ստորոգյալը արդեն իսկ ինքնին նշում է գործողության, եղելության ինչպե՞ս կատարվելը: Չնաբանական այս կարգը, սակայն, բնավ չի խանգարում, որ դիմավոր բայը լրացվի այլ մի բառով, բառակապակցությամբ կամ նախադասությամբ, որոնք ցույց կտան գործողության կամ եղելության կատարման ձևը, եղանակը:

Այսպիսով՝ ձևի պարագա կախյալ նախադասությամբ լրացուցիչ կերպով, առավել հանգամանորեն, այլ մի գործողության կամ եղելության համեմատությամբ բացահայտվում է գերադաս բաղադրիչի դիմավոր կամ անդեմ բայի նշած գործողության կամ եղելության ինչպե՞ս կատարվելը:

1. Կապակցությունը առավելապես *նշույթավոր* է. *աննշույթ* կապակցություն հազվադեպ է պատահում: Իբրև նշույթներ կիրառվում են՝ *ինչպես, որպես, ոնց հարաբերականները, որ* շաղկապը, *ասես* (*թե*), *կարծես* (*թե*), *իբր* (*թե*), *իբրև* (*թե*), *որպես* (*թե*) շաղկապական բառերը:

Որպես հարաբերականը հատուկ է հյուսիսափայլյան շրջանի հայերենին:

Այժմ այն հնացած է և կիրառվում է իբրև կապ: Հմմտ.

Որպես մեր բարի դրացիքը կամենան, այնպես կանեմ (Ր):

Ոնց հարաբերականը առավելապես գործածվում է ժողովրդախոսակցական լեզվում, որտեղից և թափանցում է գրական-գեղարվեստական երկերի մեջ: Հմմտ.

Եվ *ոնց սկսվեց,* այնպես էլ գնաց (ՊՍ):

Ինչպես, ոնց, որպես հարաբերականներին կարող է հավելվել *որ* թար-

մատարը՝ գոյացնելով՝ *ինչպես որ, ոնց որ, որպես որ* հարադրական կազմությունները:

2. Գերադաս եզրում հաճախ կիրառվում է *այնպես* հարաբերյալը, որի իմաստը որոշակիացվում է կախյալ նախադասությամբ:

§ 279. Չևի պարագա կախյալ նախադասությունները գերադաս բաղադրիչի բայ-լրացյալի նշած գործողության որակական հատկանիշը կարող են արտահայտել իմաստային այլևայլ երանգավորումներով: Հիմք ունենալով այդ երանգավորումների ընդհանրություններն ու տարբերությունները՝ կախյալ նախադասությունները կարելի է ստորաբաժանել երեք ենթախմբերի՝ ա. *բաղդատության* կամ *համեմատության*, բ. *նպատակի*, գ. *հետևանքի*:

Ա. *Բաղդատության հարաբերությամբ* կախյալ նախադասությունները գերադաս եզրի բայ-լրացյալի նշած գործողության կատարման ձևը ցուցադրում են համեմատության հիմքի վրա: Գերադաս եզրում արտահայտված գործողությունը, եղելությունը համեմատության մեջ են դրվում ստորադաս եզրում նշված գործողության, եղելության հետ:

Ամբողջ բարդությունը, ըստ էության, արտահայտում է երկու գործողությունների, եղելությունների համեմատություն, որտեղ համեմատելին ներկայացված է ստորադաս եզրով, համեմատվողը՝ գերադաս: Համեմատությունը իր հերթին կարող է ունենալ երկու դրսևորում՝ նայած այն բանին, թե կախյալ բաղադրիչում համեմատելի ինչպիսի՝ գործողություն կամ եղելություն է ներկայացված: Դրան համապատասխան ստացվում են՝ 1. *համարժեքության* և 2. *անհամարժեքության* հարաբերություններ:

1. *Համարժեքության հարաբերությունը* դրսևորվում է նրանով, որ գերադաս եզրում նշված գործողությունը, եղելությունը որակապես, էությամբ համարժեք են ստորադաս բաղադրիչում արտահայտված գործողությանը, եղելությանը: Համարժեքությունը կարող է ունենալ այլևայլ դրսևորումներ: Իբրև գերադաս և ստորադաս եզրերի ստորոգյալներ կարող է կիրառվել միևնույն բայը՝ միևնույն եղանակի նույն կամ հարաբերակից մի ժամանակածևով, իսկ համեմատության հիմքում կարող են դրվել բայ-ստորոգյալների ենթակաները, այլևայլ խնդրային լրացումներ, պարագայական զանազան հարաբերություններ արտահայտող լրացումներ: Հմմտ.

Գգվեցիր դու ինձ գգվանքով քնքուշ, ինչպես լուսնահար աղջիկն *է գգվում*: [Քնարդ եղավ անզոր ու անուժ] Եվ *բեկվեց*, ինչպես ուռին *է բեկվում* (ԵՉ):

Նկատելի է, որ համարժեքության հիմքում ընկած բայ-ստորոգյալները նույնական են, միայն թե մեկ ենթակայի գործողության ձևը դրսևորվում է մեկ այլ ենթակայի համանման գործողության հետ համեմատվելով: Այլ օրինակ.

(...) Ո՛չ մի ժանիք ինձ *չի բաժանի* իմ անդուլ դարից, Ինչպես ո՛չ մի ուժ ինձ *չի բաժանի* Իմ շռնդալից պայծառ քնարից (Ս.տ.):

Այստեղ ևս համեմատության հիմքում ընկած բայ-ստորոգյալները նույնական են: Տարբեր ենթականերին այստեղ գումարվել են շարահյուսական

միևնույն գործառույթը, սակայն բառական տարբեր արտահայտությունն ունեցող խնդիրներ. *Ո՛չ մի ժանիք* չի բաժանի *դարից → Ո՛չ մի ուժ* չի բաժանի *քնարից:* Հմմտ. նաև՝

Հարյուր տարի հետո էլ մարդիկ իրենց սխրալի գործերը *պիտի գրեն* ավազի վրա՝ հետնորդներին պատմելու համար, ինչպես հարյուր տարիներ առաջ *գրել են* [, եվ հողմը լիզել է նրանց]: (...) Միևնույն ձյունը *պիտի գա,* ինչպես *գալիս է* այսօր, ինչպես *եկել է* հարյուր տարի մեզնից առաջ: Այս միևնույն լուսնի շողերի տակ զույգերը *փսփսում են,* ինչպես *փսփսացել են* հարյուր տարիներ առաջ (ԱԻ): [Մայրեր, մանուկներ մերկացան իրենց արդուզարդերից,] *Հագամ* քուրծ, ինչպես *հագնում են* զրահ (ՊՍ):

Համարժեքության հարաբերությունը կարող է դրսևորվել նաև այն դեպքում, երբ բաղադրիչների ստորոգյալները արտահայտված են տարբեր բայերով, բայց ունեն իմաստային աղերս կամ պարզապես հոմանիշներ են: Հմմտ.

Ուզում եմ քեզ այնպես *երգել* (...), Այնպես, ինչպես *չի գովերգել* դեռ ո՛չ մի մայր իր զավակին (ՍԿ):

2. *Անհամարժեքության հարաբերությունը* արտահայտվում է նրանով, որ ստորադաս եզրում ներկայացված համեմատելի գործողությունը, եղելությունը ինչ-որ բանով նման են գերադաս եզրում ասվածին, ինչ-որ ձևով կամ հատկանշով հիշեցնում են այն, բայց չեն նույնանում նրա հետ: Հմմտ.

Ինչպես երկու հոտ խառնվում են իրար [, երբ մակաղելու են քշում,] այնպես էլ վերևի գյուղից եկած բազմությունն ու Կարմրաքարի փողոցներում սպասողները իրար անցան (ԱԲ): Եվ *ինչպես օրը օրացույցից անհնարին է նետել մի կողմ,* այդպես անունը քո աղմկող հար մնալու է օրերին կից (ԵՉ):

Համեմատությունը կարող է ձևավորվել որպես հեղինակի պատկերավոր մտածողության արդյունք: Համեմատելի գործողությունը հաճախ կարող է լինել խիստ չափազանցված, անիրական կամ անիրականանալի, մտացածին, միևնույն ֆանտաստիկ:

Նման անհամարժեքությունը մեղմելու, գործողությունների, իրողությունների համեմատելիությունը հավանական դարձնելու, թվացյալ նմանությանը իրական երանգ տալու համար ստորադաս նախադասության սկզբում գործառվում են՝ *կարծես* (*թե*), *ասես* (*թե*), *իբր* (*թե*), *իբրև* (*թե*), *որպես* (*թե*) շաղկապական բառերը: Հմմտ.

Մոխրագույն ամպերը ծխի նման բարդ-բարդ վեր էին ելնում, *կարծես միթխարի կրահողի բերած էին բացել* (ԱԲ): Երազի մեջ երեխան ժպտում էր, *որպես թե ինքը արևի մոտ է արդեն* (ԱԻ): [Նստեց, անուշ երգեր ասավ, ...] Եվ պես ասավ՝ *ասես ուներ երկնքի ալմասը ծեռին* (ԵՉ):

Թե՛ համարժեքության, թե՛ անհամարժեքության բաղադրատական հարաբերություն արտահայտող կախյալ նախադասությունները առավելապես կապակցվում են՝ *այնպես → ինչպես* կաղապարով կամ առանց հարաբերյալի, միայն հարաբերականով, որին կարող է հարադրվել *որ* թարմատարը: Ժողովրդախոսակցական ոլորտում կարող է կիրառվել նաև *ոնց* (*որ*) հարաբերականը:

Անհամարժեքության հարաբերություն դրսևորող կախյալ բաղադրիչները կապակցվում են նաև՝ *այնպես → ոնց* (*որ*), *այնպես → ասես* (*թե*), *այնպես → կարծես* (*թե*), *այնպես → իբր* (*թե*), *այնպես → իբրև* (*թե*), *այնպես → որպես* (*թե*) կաղապարներով, հաճախ՝ առանց առաջին եզրի՝ հարաբերյալի:

Իմաստային այս երանգներն ունեցող և հիշյալ եղանակներով կապակցվող կախյալ նախադասությունների շարադասությունը ազատ է, թեև տիրապետում է հետադաս դիրքը: Տե՛ս վերի օրինակները:

Բ. Կախյալ բաղադրիչը ունակ է դրսևորելու նաև *նպատակի հարաբերություն:* Այս դեպքում, նշելով գերադաս եզրի գործողության, եղելության կատարման եղանակը, ստորադաս նախադասությունը միաժամանակ ցուցադրում է, թե ինչո՛ւ, ի՛նչ նպատակով հատկապես ա՛յդ և ո՛չ թե մեկ ուրի՛շ ձևով է կատարվում հիշյալ գործողությունը: Այլ կերպ ասած՝ գերադաս եզրում նշված գործողությունը, եղելությունը այսինչ ձևով են կատարվում մասնավորապես այսի՛նչ նպատակին հասնելու համար: Համմտ.

Բա մի կտոր շաքարի համար էնպես կտան, *որ ատամը պռոշումը թաղվի՞* (ՍՋ): Լիներ, այնպե՞ս լիներ, *որ որոտար ամպրոպ մի խենթ, Տեղատարափ լիներ ծորում, շանթի շառաչ ու լույսի տենդ* (ՈԴ):

Վերջին օրինակում կախյալ բաղադրիչները ունեն որոշ ենթակայական երանգ, որը, սակայն, տեղի է տալիս՝ զիջելով *այնպես* հարաբերյալի մեջ բավականաչափ ուժեղ արտահայտված ձևի պարագայի իմաստին:

Չհանպատակային հարաբերություն բովանդակող այս կախյալ նախադասությունները ունեն կառուցվածքային կուռ, կարելի է ասել՝ անփոփոխ կաղապար: Կապակցությունն իրացվում է միայն *որ* շաղկապով: Գերադաս եզրում օրինաչափորեն կիրառվում է *այնպես* հարաբերյալը, որով ստացվում է *այնպես → որ* կապակցական կաղապարը: Ստորադաս եզրը ունի կայուն հետադաս դիրք և միայն ըղձական եղանակով ձևավորված բայ-ստորոգյալ:

Գ. Չնի պարագա կախյալ նախադասությունը կարող է ունենալ նաև *հետևանքի երանգ:* Իմաստային տեսակետից այս կառույցները բնորոշվում են նրանով, որ կախյալ եզրը գերադաս բաղադրիչում նշված գործողության, եղելության կատարման ձևը ցույց տալու հետ միասին ընկալվում է նաև որպես ադ նույն գործողության կամ եղելության ազդեցության հետևանք: Սրանով համատեղվում են ձևը և հետևանքը, ավելի ստույգ՝ գերադաս եզրում նշված գործողության ազդեցության հետևանքը դիտվում է որպես ձև:

Կապակցական կաղապարը նույնական է, ինչ որ նպատակային երանգով օժտված կախյալ նախադասություններինը՝ *այնպես → որ:* Շարադասությունը նույնպես կայուն է. ստորադաս բաղադրիչը օրինաչափորեն հետադասված է: Կառուցվածքային միակ տարբերությունը թերևս այն է, որ գերադաս և ստորադաս նախադասությունների բայ-ստորոգյալները սովորաբար համաձայնում են եղանակաժամանակային քերականական կարգերով: Համաձայնությունը մեծավ մասամբ լիակատար է, երբեմն՝ նաև մաս-

նակի՝ հարաբերական, ասենք՝ *անցյալ կատարյալի* դիմաց՝ *անկատար անցյալ* և այլն: Կախյալ նախադասության բայ-ստորոգյալը ըղձական եղանակով չի արտահայտվում, այլապես կստացվի նպատակի հարաբերություն: Հմմտ.

Եվ նույնիսկ նրա օդը շնչելիք *ապականեցին* շուրջբոլոր այնպես, որ նա շնչելիս, օդի փոխանակ, ՍաՌրած ապակու փշրանք *էր* կարծես բռնի *կուլ տալիս* (ՊՍ): Ահռելի հողմի ուժից քշված ալիքներն այնպես *էին շտապում* դեպի մեզ, որ իրար շալակ *էին բարձրանում* (ՎԱ): Եվ մահը այնպես *աՀեղ* և *կործանիչ* հայացք *ձգեց* աչքերի անհույս ու զարհուրելի անդունդներից, որ մազ *մնաց* [Անանդան հալվեր] (ԱԻ):

Ինչպես ցույց է տալիս վերջին օրինակը, կախյալ նախադասությունը կարող է լրացնել գերադաս եզրի՝ ածականով արտահայտված մի անդամի՝ նշելով հատկանշի հատկանիշ, այսինքն՝ մի հատկանշի արտահայտման ձևը:

Դիմավոր բայերի համաձայնությունը պահպանվում է նաև այն դեպքում, երբ ստորոգյալներից մեկը պարզ է, մյուսը՝ բաղադրյալ: Նման պարագայում հանգույցն է համաձայնում բայ-ստորոգյալի հետ: Հմմտ.

Ամեն ինչ այնպես *անդորր է ու կույս*, որ *չեմ հավատում* կարմիր երազին (ԵՉ):

§ 280. *Չևի պարագա կախյալ նախադասությունը հազվադեպ կարող է* կապակցվել նաև առանց բառական միջոցների՝ շարահարությամբ: Կախյալ շարահարությամբ այս կառույցները ունենում են հետևյալ հատկանիշները:

1. Գերադաս եզրում առկա *այնպես* հարաբերյալը լրացնում է ո՛չ թե անմիջապես բայ-ստորոգյալին, այլ նրա՝ պարզ ձևի պարագային: Կախյալ եզրն էլ, որ ունի ընդհանրական իմաստ և արտահայտում է հետևանքային հարաբերություն, կապակցվում է շարահարությամբ: Հմմտ.

Այնպես արագ է խոսում՝ *մարդ բան չի հասկանում:*

2. Գերադաս եզրում առկա է *այնպես* հարաբերյալը. ստորադաս բաղադրիչը ներկայացված է միայն *թվալ* բայով, եղանակաժամանակային կիրառությամբ համաձայնեցված է գերադաս եզրի բայ-ստորոգյալին: *Թվալ* բայի խոնարհված ձևերով արտահայտված ստորոգյալը իր հերթին ունի ենթակայական կախյալ մի նախադասություն, որ կարող է կապակցված լինել թե՛ շաղկապով, թե՛ շարահարությամբ: Իսկ ինքը՝ *թվալ* (*թվում է, թվում էր*) բայը նախորդ եզրի հետ կապակցվում է շարահարությամբ: Կախյալ եզրը հետադաս է: Հմմտ.

Այնպես է երգում, *թվում է*, թե ծայնը խզված է: *Այնպես* արագ էր վազում՝ *թվում էր* ուր որ է շնչակտուր կլինի: *Այնպես* էր վիճում, կռվում նրանց հետ, *թվում էր*, թե կանգնած էին իր առջև և անծնատուր չէին լինում (ՀՔ):

Կախյալ նախադասության մեջ հաճախ կարող են զեղչվել որոշ անդամներ, որոնք նույնական են գերադաս բաղադրիչի համապատասխան անդամների հետ: Դրանք ընդհանուր անդամներ են: Նման ընդհանուր անդամներ, դրանց հետ կապված և լրացումներ կարող են զեղչվել հատկա-

պես բաղդատական հարաբերություն արտահայտող ստորադաս նախադասություններում: Կախյալ բաղադրիչի ստորոգյալը ևս կարող է զեղչվել, եթե ենթակաները երկու եզրերում տարբեր են: Հմմտ.

Ինչպես արծիվ սավառնում ես երկնքում (ժող.երգ): Այսինքն՝ *Ինչպես արծիվն է սավառնում երկնքում*, սավառնում ես երկնքում: Այլև՝ [Ինչպես մի հեղեղ վեր կենար հանկարծ, երկնքի մթնած ամպերից իջներ,] *Ինչպես փոթորիկ սաստիկ սրընթաց*, Գյուղից սլացան մի խումբ կտրիճներ [ՀԹ]: Այսինքն՝ Ինչպես փոթորիկն է սաստիկ սրընթաց սլանում...:

2. ՉԱՓԻ ՊԱՐԱԳԱ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 281. *Չափի պարագա կախյալ նախադասությունը վերառված կերպով նշում է, թե ի՛նչ չափով, որքա՛ն են կատարվում գերադաս եզրի լրացյալի արտահայտած գործողությունը, եղելությունը կամ որքա՛ն է լրացյալի հատկանիշը:*

Ունի իմաստակառուցվածքային հետևյալ բնութագրերը:

Այս կախյալ նախադասությունները հարաբերակից են ձևի պարագա նախադասություններին, որքանով որ երկուսն էլ արտահայտում են գերադաս եզրի լրացյալի նշած գործողության, եղելության, որևէ հատկանշի հատկանիշ: Տարբերվում են նրանով, որ առաջինը դրսևորում է *որակական*, իսկ երկրորդը՝ *քանակական հատկանիշ՝ չափը, քանակությունը, աստիճանը* և այլն:

Չափի պարագա կախյալ բաղադրիչով բարդ նախադասությունների կապակցությունը նշույթավոր է: Կախյալ եզրը կապակցվում է *ինչքան, ինչ-չափ, որքան, որչափ, քանի* (*դեռ*), *ինչ* հարաբերականներով և *որ, մինչև* (*որ*), *քան* շաղկապներով:

Գերադաս եզրում կիրառվում են *այնքան, այնչափ, նույնքան, նույնչափ* հարաբերյալները:

Ինչպես ձևի պարագա կախյալ նախադասությունները, չափի պարագան ևս բնորոշվում է իմաստային բազմազանությամբ: Նրա բովանդակային տարատեսակությունը իր հիմնական դրսևորումներով ուղղակիորեն առնչվում է ձևի պարագա ստորադաս նախադասությունների արտահայտած իմաստներին, միայն թե գործողության ձևի փոխարեն ներկայացվում են չափը, աստիճանը: Հմմտ.

Այնպես պիտ ծեծենք, որ հիշի հոր հարսանիք և *Այնքան պիտ ծեծենք, որ հիշի հոր հարսանիք: Այնպես հետաքրքիր էր պատմում իր անցյալի մասին, որ բոլորը հափշտակված լսում էին* և *Այնքան հետաքրքիր էր պատմում իր անցյալի մասին, որ բոլորը հափշտակված լսում էին:* Առաջին կախյալ եզրերը նշում են գործողության կամ նրա հատկանշի որակական հատկությունը, երկրորդները՝ քանակական:

Ինչպես երևում է բերված օրինակներից, չափի (նաև ձևի) պարագա կախյալ նախադասությունը կարող է լրացնել գերադաս եզրի թե՛ բայական

անդամին, լինի դիմավոր թե անդեմ, թե՛ հատկանշանիշ այլ մի բառի, հատկապես ածականի (Այնքան *պիտ ծեծենք*, որ..., Այնքան պետք է *ծեծել*, որ...և Այնքան *հետաքրքիր է պատմում*, որ ...):

Իր այս հատկության շնորհիվ կախյալ բաղադրիչը կարող է լրացնել գերադաս եզրի հատկանշանիշ շատ անդամների՝ ձևի պարագային (տե՛ս վերի օրինակներից երկրորդը), ստորոգելիական վերադրին, որոշչին, հենց չափի պարագային և այլն: Հմմտ.

Այնքան *շատ* ես խոսում, *որ ծանձրացնում ես* (լրացնում է *շատ* չափի պարագային). Այդ երաժշտությունը այնքան *դյութիչ* է, *որ մարդ ուզում է անվերջ լսել* (լրացնում է *դյութիչ* ստորոգելիական վերադրին), Այնքան *դյութիչ* երաժշտություն է, որ մարդ ուզում է անվերջ լսել (լրացնում է *դյութիչ* որոշչին) և այլն:

§ 282. Չափի պարագա կախյալ նախադասությունները գերադաս եզրի լրացյալի քանակական հատկանիշը կարող են արտահայտել իմաստային այլևայլ երանգավորումներով: Հիմք ունենալով իմաստային այդ երանգավորումների ընդհանրություններն ու տարբերությունները՝ կախյալ բաղադրիչները կարելի է ստորաբաժանել չորս ենթախմբերի՝ ա. *բաղդատության*, բ. *նպատակային*, գ. *հետևանքային*, դ. *ժամանակային*:

Ա. *Բաղդատության հարաբերությունը* բնութագրվում է նրանով, որ կախյալ նախադասությունը գերադաս եզրի՝ բայով կամ հատկանշային իմաստ բովանդակող այլ մի խոսքի մասով արտահայտված հատկանշի քանակական հատկանիշը ցուցադրում է *համեմատության* սկզբունքով: Ինչպես բաղդատության հարաբերությամբ ձևի պարագա կախյալ բաղադրիչ ունեցող կառույցներում՝ այստեղ ևս ամբողջ բարդությունը էությամբ ներկայացնում է երկու գործողությունների, եղելությունների, երևույթների համեմատություն, որտեղ համեմատելին արտահայտված է ստորադաս եզրով, համեմատվողը՝ գերադաս: Համեմատության հիմքը քանակական հատկանիշն է:

Ելնելով բաղդատության բնույթից՝ գոյանում են իմաստային երկու կարգի խմբեր՝ 1. *հավասարության բաղդատական* և 2. *անհավասարության բաղդատական հարաբերություններ*:

1. *Հավասարության բաղդատական հարաբերությունը* հատկանշվում է նրանով, որ գերադաս եզրում նշված գործողությունը, եղելությունը, սրանց որևէ հատկանիշ իր քանակական կազմով ճիշտ և ճիշտ համեմատական է ստորադաս բաղադրիչում արտահայտված գործողության, եղելության, սրանց որևէ հատկանշի չափին կամ աստիճանին: Այսինքն՝ քանակական հատկանիշը երկու եզրերում նույնական է, մեկինը մյուսի համեմատությամբ առավել չէ կամ նվազ: Հմմտ.

Ինչքան կուզե, տանե քամին [, Ծովեմեն ավազ չի պակսիլ] (ՍՆ): *Ինչքան տարիքս առաջ է գնում, Ինչքան անցնում են օրերս անփույթ*, Այնքան հոգուս մեջ ամեն ճեղք լցնում, Դու ես քանձրանում, իմ հայ ժողովուրդ (ՍԿ):

Այս կարգի կառույցներում գերադաս և ստորադաս եզրերի բայ-ստորոգյալները սովորաբար համաձայնում են եղանակաժամանակային քերա-

կանական կարգերով: Համաձայնությունը կարող է լինել *լիակատար*, ինչպես երկրորդ և երրորդ օրինակներում, որտեղ թե՛ գերադաս, թե՛ ստորադաս բաղադրիչների բայ-ստորոգյալները արտահայտված են սահմանականի նույն ժամանակածևով: Կարող է լինել նաև *մասնակի* համաձայնություն, ասենք՝ բայ-եղանակները տարբեր լինեն, համաձայնությունը կլինի միայն ժամանակի տևողության մեջ: Այդպիսի մասնակի համաձայնություն կա առաջին օրինակում, որտեղ ստորադաս եզրի բայ-ստորոգյալը դրված է պայմանականի ապառնի ժամանակածևով,գերադաս եզրինը՝ ըղձականի ապառնի (Ինչքան *կուզե → տանե*...):

Երկու եզրերի ստորոգյալներն էլ կարող են լինել բաղադրյալ: Այս դեպքում հանգույցներն են համաձայնում եղանակով ու ժամանակով: Հմմտ.

[Ինչ մեզ է վիճակվել,] *որքան ծանր է, դժվար*, նույնքան թանկ է, անգին (ՊՍ): *Ստամբուլը որքան քո քաղաքն է*, նույնքան իմն է նաև) [. Դեռ հին Բյուզանդիոնից այնտեղ փայլն է մնում մեր հանճարի] (Ն.տ.):

Ստորոգյալները բաղադրյալ լինելու դեպքում կախյալ կամ գերադաս եզրում հաճախ զեղչվում է հանգույցը: Հմմտ.

Իսկ Խորենացու հետ այնքան ծանոթ էր, *որչափ մի հմուտ քարոզիչ* (Ր): *Ինչքան գետնի երեսին է*, նույնքան գետնի տակ (ժող.): [Ցպարտ եմ ես, որ] քեզ համար թանկ է եղել թանաքն այնքան, *որքան կարմիր քո արյունը* (ՊՍ):

2. *Անհավասարության բաղդատական հարաբերությունը* բնութագրվում է գերադաս և ստորադաս եզրերում նշված գործողության, եղելության, դրանց մի հատկանշի քանակական տարբերությամբ, միմյանց համեմատությամբ առավել կամ պակաս լինելով: Խախտված է երկու բաղադրիչներում դրսևորված գործողությունների, դրանց հատկանիշների քանակական համաչափությունը: Ընդսմին՝ առավելական կամ նվազական հարաբերությունը կարող է դրսևորվել թե՛ գերադաս եզրում, թե՛ ստորադաս: Էականը անհամապատասխանության առկայությունն է, որն արտահայտվում է կապակցական հատուկ միջոցներով, բաղադրիչների ներքին տրամաբանական աղերսով, հաճախ գերադաս կամ ստորադաս եզրում *ավելի, շատ, քիչ, նվազ, պակաս, սակավ* և նման մակբայներ կիրառելով: Հմմտ.

Վերև նետած քարը ինչքան ավելի վար է ընկնում, այնքան սաստկանում է նրա թափը, ամենից ներքև գտնվողին ավելի ուժգին է հարվածում, քան ավելի վերև գտնվողին (ԱԻ): *Քանի Մարուքն ու Սարուկը շատ էին վիճում*, այնքան նրանցից յուրաքանչյուրը *ավելի* ու *ավելի* էր համառում (ԱԸ): Ես ոգով հիմա պինդ եմ *ավելի, Ավելի* տոկուն, *քան էի առաջ* (ԵՉ):

Երկու եզրերում նշված գործողությունների, եղելությունների քանակական անհավասարության հարաբերությունը կարող է ձևավորվել գերադաս եզրում կիրառված *այնքան* (*այնչափ*) հարաբերյալից առաջ դրվող *ոչ* ժխտական մասնիկի օգնությամբ: Հմմտ.

Մինչդեռ նորը, խնդրեմ, իբրև արվեստագետ և իսկական, և մեծ՝ խոսում է *ոչ* այնքան, *որքան ցույց է տալիս* (ՊՍ): Այսինքն՝ Նորը *քիչ է խոսում, ավելի շատ ցույց է տալիս:*

Բաղդատության հարաբերություն արտահայտող կախյալ նախադասությունները կապակցվում են *ինչքան, որքան, որչափ, ինչչափ* (հազվադեպ), *քանի* հարաբերականներով և *քան* շաղկապով: Գերադաս եզրում կարող է կիրառվել *այնքան, այնչափ, նույնքան, նույնչափ* հարաբերյալներից մեկնումեկը:

Կախյալ բաղադրիչը ունենում է երկու դիրք՝ *նախադաս* և *հետադաս*. Տե՛ս վերի օրինակները: Միջադասություն սովորաբար չի լինում, թեև ոճական և այլ ինչ-ինչ նկատառումներով կախյալ եզրը կարող է միջադասվել: Հմմտ.

Երեխան, *որքան մայրն արագացնում էր քայլերը*, այնքան ավելի ամուր էր կառչում նրա փեշերից (ԱՎ):

Բ. Չափի պարագա կախյալ նախադասությունը կարող է դրսևորել նաև *նպատակային հարաբերություն*: Արտահայտելով գերադաս եզրում նշված գործողության, եղելության կատարման քանակական հատկությունը՝ ստորադաս բաղադրիչը միևնույն ժամանակ ցույց է տալիս, թե ինչո՛ւ, ի՛նչ նպատակով հատկապես ա՛յդ և ո՛չ թե մեկ ուրի՛շ չափով է կատարվում հիշյալ գործողությունը կամ եղելությունը: Հմմտ.

Գոնե համարձակ լիներ այնքան, *որ անահ նայեր շուրջը, նայեր վերև* (ՎԽ):

Քանականպատակային հարաբերությամբ բնորոշվող կախյալ բաղադրիչով բարդ նախադասությունները ունեն կառուցվածքային բավականաչափ կուռ ու անփոփոխ կաղապար: Կապակցությունն իրացվում է միայն *որ* շաղկապով. գերադաս եզրում կանոնիկ կերպով կիրառվում է *այնքան, այնչափ, նույնքան, նույնչափ* հարաբերյալներից մեկնումեկը:

Ստացվում է *այնքան → որ*, (*այնչափ → որ* և այլն) կապակցական կաղապարը:

Շարադասությունը նույնպես կայուն է: Ստորադաս եզրը հաջորդում է գերադասին: Որոշակի օրինաչափություն է առկա նաև երկու եզրերի բայ-ստորոգյալների եղանակաժամանակային կիրառության մեջ: Համեմատաբար ազատ է գերադաս եզրի բայ-լրացյալի եղանակի ու ժամանակի ընտրությունը: Ստորադաս եզրի ստորոգյալը, սակայն, արտահայտվում է միմիայն *ըղձական* եղանակով: Ուստի և գերադաս եզրի բայ-ստորոգյալը պետք է նշի մի գործողություն, որը *նախորդում է* (*նախորդել է* կամ *պետք է նախորդի*) ստորադաս բաղադրիչում դրսևորված գործողությանը, եղելությանը: Նման նախորդում է ենթադրվում նաև այն դեպքում, եթե գերադաս նախադասության ստորոգյալը նույնպես դրված լինի ըղձական եղանակով: Տե՛ս վերի օրինակը (ՎԽ): Հմմտ. այլ ժամանակաձևերով՝

Ու մեր մանկությունը *անցավ* և մանկածև, բայց ո՛չ յուրովի այնքան, այնքան տարբեր սակայն, *որ հին սերունդներին թվար գուցե ո՛չ մանկություն բնավ* (ՊՍ): Այդ կանոնն անհայտ *պետք է մնար* այնքան, *որ ի վերջո հայտնագործվեր աստվածաբանական գիտության կողմից* (ՋՄ):

Այսպիսով՝ ինչ-որ նպատակի հասնելու, այն իրական դարձնելու միջոցով ներկայացվում է գերադաս եզրում նշված գործողության, եղելության կատարման չափը:

Գ. Չափի պարագա կախյալ նախադասությունը կարող է բովանդակել նաև *հետևանքային հարաբերություն:*

Այս կառույցները բնորոշվում են նրանով, որ ստորադաս նախադասությունը գերադաս եզրում արտահայտված գործողության, եղելության կատարման կամ որևէ հատկանշի քանակությունը ցուցադրում է իբրև այդ նույն գործողության, եղելության կամ հատկանշի ազդեցության հետևանք: Ըստ այդմ՝ չափը և հետևանքը համատեղված են: Գերադաս նախադասության մեջ արտահայտված եղելության կամ գործողության ազդեցությունը ընկալվում է իբրև չափ ու քանակություն:

Կապակցական կաղապարը նույնական է, ինչ որ առկա է նպատակային երանգ ունեցող կախյալ նախադասություններում, այն է՝ *այնքան (այնչափ, նույնքան, նույնչափ)* → *որ:* Շարադասությունը ևս նույնն է. ստորադաս եզրը հետադաս է:

Բառաքերականական տարբերակիչ հատկանիշը, որ նպատակի հարաբերությունը փոխարկում է հետևանքայինի, ստորադաս եզրի բայ-ստորոգյալի ձևավորումն է: Հմմտ.

Ընդերքի մեջ խորանում են այնքան, որ *հասնեն* ստորգետնյա ջրային հոսանքին (Կենս. դասագ.): Ստորադաս եզրի բայ-ստորոգյալը դրված է ըղձական եղանակով, և այդ եզրը արտահայտում է նպատակային հարաբերություն:

Ընդերքի մեջ խորանում են այնքան, որ *հասնում են* ստորգետնյա ջրային հոսանքին: Գերադաս և ստորադաս եզրերի բայ-ստորոգյալները ունեն եղանակաժամանակային համաձայնություն. երկուսն էլ դրված են սահմանականի ներկայով: Ստորադաս բաղադրիչը արդեն դրսևորում է հետևանքային հարաբերություն:

Գերադաս և կախյալ նախադասությունների բայ-ստորոգյալների այդ համաձայնությունը երբեմն *լիակատար* է, երբեմն էլ՝ *մասնակի*, ասենք՝ *անցյալ անկատարի դիմաց՝ վաղակատար* և այլն: Հմմտ.

Սթնշաղի կախարդական ժամերին քունն այնքան էր քաղցրանում, *որ դառնում էր անդիմադրելի* (ԱԻ): Իսկ երբեմն էլ մուրճով այնքան էր ծեծում, *որ խոփը կորցնում էր ձևը* (ԱԲ): Երկինքն այնքան էր մթնել, *որ Մեծ արջը աստ չեկ քարափին նստել, իր թաթերն էր լիզում* (ՎԴ):

Կախյալ բաղադրիչը թե՛ նպատակային, թե՛ հետևանքային հարաբերություններ դրսևորելիս կարող է լրացնել գերադաս եզրի ո՛չ պարզ, այլ բաղադրյալ ստորոգյալին, ավելի ստույգ՝ սրա ածական վերադրին: Այս դեպքում գերադաս եզրում նշված հատկանշի քանակությունը պայմանավորված կլինի ստորադաս եզրի արտահայտած նպատակային կամ հետևանքային հարաբերությամբ: Հմմտ.

Բայց ես, իհարկե, այնքան *միամիտ* չէի, *որ թողնեի* [, որ կաքավին հոշոտող այդ զզվելի սողունը հանգիստ մարսի իր ավարը] (ՎԱ): Այնքան *մեծ* է հայության վիշտն ու տառապանքը, *որ մեծությունը չափելու համար տիեզերքի անհունությունն ու խորությունը պետք է առնել* (ԱԻ): Ու այնքան *փոքր* է հողը ոտքիդ տակ, իսկ դու՝ այնքան *հոծ* ու *ծյուղատարած, որ պտուղներդ դարեր շարունակ* (...) *թափվել են հեռվում՝ օտար ճամփեքին* (ՍԿ):

Դ. Չափի հարաբերությունը հաճախ կարող է ստանալ *ժամանակային երանգավորում:* Այս իմաստն արտահայտող կախյալ նախադասությունը ունենում է բովանդակային երկու տարբերակներ.

1. Նշում է ժամանակի *այն տևողությունը, որի ընթացքում* կատարվում է գերադաս եզրի բայ-ստորոգյալի արտահայտած գործողությունը կամ եղելությունը: Ստացվում է գերադաս և ստորադաս եզրերում նշված գործողությունների, եղելությունների կատարման միաժամանակություն՝ քանակական հարաբերության ընդգծումով: Կապակցությունն իրացվում է *քանի (դեռ)* հարաբերականով: Ստորադաս եզրը կարող է թե՛ նախադասվել, թե՛ հետադասվել: Հմմտ.

Քանի ուժերս չեն սպառվել, դեռ այնքան էլ կաշխատեմ: Կաշխատեմ այնքան, *քանի դեռ ուժերս չեն սպառվել: Քանի իր աներևույթ դատավորը ստիպում էր պատմել գլխով անցածը և ներկայացնում էր իր դատավճիռը,* այնքան Հովհանը լսում էր նրան ակնածանքով, չէր հակառակվում, բայց և ոչինչ չէր անում՝ նրա լուռ պահանջները ի կատար ածելու (ՌՀ):

2. Քանակական հարաբերությամբ նշում է այն *ժամանակամիջոցը, մինչև որը* կատարվում է գերադաս եզրում արտահայտված գործողությունը: Այստեղ գերադաս բաղադրիչի գործողությունը նախորդում է ստորադաս եզրում արտահայտված գործողությանը: Կապակցությունն իրացվում է *մինչև (որ)* շաղկապով: Ստորադաս եզրը սովորաբար հետադաս է: Հմմտ.

Գարեգինը (Նժդեհ) Սոֆիայի զինվորական դպրոցում սովորում է այնքան, *մինչև որ սկսվում է Բալկանյան պատերազմը* (ՍՍ): Ես մատներս խառնեմ լուսնի վարսերի մեջ այնքան, *մինչև ծուլվեմ ու դառնամ լույս* (ՌԴ):

Հարկ է նշել, որ այս կառույցները որոշակիորեն հիշեցնում են ժամանակի պարագա կախյալ նախադասությամբ բարդ նախադասություններ և կարող են շփոթվել նրանց հետ: Շփոթը կանխվում է *այնքան* հարաբերյալով, որ նման դեպքերում կիրառվում է գերադաս եզրում: Այդ հարաբերյալն էլ հենց, ըստ էության, ժամանակի պարագա կախյալ նախադասությունը փոխարկում է *ժամանակի տևողության չափի պարագայի:* Հմմտ.

Բայց ամեն մեկը *այնքան* ճառեց, *մինչև որ հարցը բավական սառեց* (սառավ) (ՊՍ):

Կախյալ բաղադրիչը չափի պարագա է՝ ժամանակի տևողության քանակության իմաստով, քանի որ այն նյութական բովանդակություն է տալիս գերադաս եզրում առկա *այնքան* հարաբերյալին: Եթե հարաբերյալը օտարենք, կախյալ նախադասությունը կվերածվի ո՛չ այլ ինչի, քան հենց ժամանակի պարագայի: Հմմտ.

Բայց ամեն մեկը ճառեց, *մինչև որ հարցը բավական սառեց* (սառավ):

Կախյալ եզրը չափի պարագա է մնում նույնիսկ այն դեպքում, երբ գերադաս բաղադրիչում իբրև հարաբերյալ կիրառվում է ո՛չ թե *այնքան* դերանունը, այլ *այնքան ժամանակ* կապակցությունը: Հմմտ.

Լույսը բարի է, և բարին լույս է ... *այնքան ժամանակ, Քանի դեռ սրտերն այդ «բարի լույս»-ը, Դարերո՛վ մաշված այդ «բարի լույս»-ը Լսում են կարծես առաջին անգամ Եվ ամեն անգամ փշաքաղվում են տաք փա-*

դաքշանքից (ՊՍ)։ Կախյալ երկու բաղադրիչները ո՛չ թե ժամանակի պարագա են, այլ ժամանակի տևողության չափի պարագա։

ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՉՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՂ ՍՏՈՐԱԴԱՍ ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 283. Ինչպես նշվել է վերը (§ 225), կախյալ նախադասությունները մեծավ մասամբ առնչվում են գերադաս եզրի՝ մեկ բառով արտահայտված որևէ անդամի, ո՛չ քիչ դեպքերում՝ նաև բառակապակցությամբ արտահայտված անդամի՝ լրացնելով կամ ընդարձակելով դրանց իմաստները ստորոգումային միավորներով։ Դրանք պարզ նախադասության անդամներին (բացառյալ պարզ ստորոգյալը) հարաբերակից կախյալ նախադասություններն են։

Կան նաև այնպիսի ստորադաս բաղադրիչներ, որոնք լրացնում են գերադաս եզրի ո՛չ թե որևէ բառի կամ բառակապակցության, այլ հենց այդ իսկ գերադաս նախադասությանը՝ *իր լրիվ ծավալով*։ Գերադաս նախադասությունը, ըստ էության, իր ամբողջ ծավալով հանդես է գալիս որպես լրացյալ, որի լրացումն է ստորադաս եզրը։

Այս կարգի բարդ նախադասությունները ստորաբաժանվում են երկու ենթատեսակի՝ 1. կառույց՝ *հետևանքի պարագա կախյալ նախադասությամբ*, 2. կառույց՝ *ամբողջ գլխավորին լրացնող կախյալ նախադասությամբ*։

1. ՀԵՏԵՎԱՆՔԻ ՊԱՐԱԳԱ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 284. *Հետևանքի պարագա կախյալ նախադասությունը արտահայտում է մի գործողություն կամ եղելություն, որն ընկալվում է իբրև գլխավոր նախադասության մեջ ասվածի հետևանք կամ հետևություն։*

Ունի իմաստակառուցվածքային հետևյալ առանձնահատկությունները։

Հետևանքի կախյալ բաղադրիչով բարդ նախադասություններում ըստ էության արտահայտվում է *պատճառահետևանքային հարաբերություն*։ Այս տեսակետից նման կառույցները որոշակիորեն հարաբերակցում են մի կողմից՝ *պատճառի պարագա*, մյուս կողմից՝ *ձևի և չափի պարագա*, մասամբ նաև *որոշչային* կախյալ նախադասություններով բարդ նախադասություններին։ Սակայն դրանք և՛ իրենց կառուցվածքային հատկանիշներով, և՛ բաղադրիչների արտահայտած իմաստային հարաբերություններով էապես տարբերվում են նրանցից։

Առաջինից տարբերվում են նրանով, որ մինչդեռ պատճառի պարագա կախյալ բաղադրիչով բարդ նախադասություններում հետևանքը կամ հետևությունը դրսևորված է լինում *գերադաս*, պատճառը՝ *ստորադաս* եզրում, իսկ հետևանքային կախյալ եզրով բարդ նախադասություններում պատճառը արտահայտված է լինում հենց *գլխավոր* բաղադրիչում։ Տարբեր է նաև կապակցության եղանակը (տե՛ս § 234, Գ, § 279, Գ, § 282, Գ)։ Հմմտ.

Պատճառի պարագա, հետևանքը՝ գերադաս եզրում. Ես բովանդակ գիշեր աչքերս չպիտի փակեմ, *Քանի որ ամեն կերպ հիմա քո տեղն է բռնել կամենում մի ծանոթ պառաված օրիորդ Այս կպչուն անքնությունը* (ՊՍ):

Հետևանքի պարագա, պատճառը՝ գերադաս եզրում. Թոռնիկդ անշուշտ ապաքինվում է, *որ տրամադրությունդ այդքան բարձրացել է* (ԱՎ):

Չևի և չափի պարագա, մասամբ նաև որոշչային կախյալ եզրերով նախադասություններում ևս կարող են արտահայտված լինել պատճառահետևանքային հարաբերություններ: Սրանք ևս ունեն թե՛ իմաստային և թե՛ կապակցական եղանակների տարբերություններ:

Չևի պարագա կախյալ նախադասության մեջ հետևանքային երանգը պայմանավորված է գերադաս եզրում արտահայտված գործողության, եղելության հատկապես *այսպե՛ս, այսի՛նչ ձևով* կատարելով, իսկ չափի պարագա կախյալ նախադասության նույն հետևանքային իմաստը կախված է գերադաս եզրում նշված գործողության, եղելության հատկապես *այսքա՛ն, այսի՛նչ չափով* կատարելուց (տե՛ս § 279, Գ, § 282, Գ):

Հետևանքային կախյալ նախադասությունը իմաստային այսպիսի կախում չունի գերադաս եզրում նշված գործողության, եղելության կատարման որակական կամ քանակական հատկանշից:

§ 285. Կապակցվում է *որ, այնպես որ* շաղկապներով, *որ* հարաբերականի բացառական հոլովով (*որից*) և նույն հարաբերականով կազմված կապակցություններով՝ *որի հետևանքով, որի պատճառով:*

Շարադասությունը կայուն է: Ստորադաս եզրը հետադաս է:

Գերադաս եզրում հարաբերյալ չի կիրառվում:

Ստորադաս եզրը կարող է ցույց տալ ամբողջ գլխավոր նախադասության մեջ արտահայտվածի հետևանքը: Տե՛ս վերի օրինակը, այլև՝

Այդ է պատճառը՝ որոգայթը հին, *որ ես սրտիս եմ վերադարձ կանչում* [, երբ որ երգեր եմ գրում աստղային, Եվ այդ նույն ցավն է իմ ... լուսնահաչում] (ՌԴ): Նրա մեջ խոսում է թորգոմյանական ջիղը, *այնպես որ ոչի՛նչ և ո՛չ մեկին չի զիջի* (ՌՀ):

Կախյալ նախադասությունը, սակայն, ո՛չ սակավ դեպքերում կարող է նշել մի այնպիսի հետևանք, որի պատճառը ոչ թե ամբողջ գլխավոր եզրում արտահայտվածն է, այլ նրանում դրսևորված մի գործողություն և սրա հատկապես *այսի՛նչ հատկանիշը:* Հմմտ.

Նա երեկ երեկոյան *շատ ուշ* վերադարձավ, *որի պատճառով հյուրերին չկարողացավ տեսնել* (եթե *ուշ* վերադառնար, գուցե և կարողանար տեսնել, բայց չի տեսել, որովհետև *շատ ուշ* է վերադարձել):

Սարալանջի ձեր ընտրած հատվածը *խիստ* քարքարոտ *է, այնպես որ բահ ու բրիչը հազիվ թե ձեզ օգնեն* (ՍԽ): Եթե միայն քարքարոտ լինի, բահ ու բրիչը գուցե և օգնեն, բայց չեն կարող օգնել, քանզի *խիստ* քարքարոտ է և այլն: Հմմտ. նաև՝

Այդ տեսակ թղթակցությունները գլխավորապես ստացվում են *քաղաքային փոստով, որից երևում է* [, որ նրանց հեղինակներն ապրում են նույն քաղաքում] (Մ):

Թեև հետևանքը կապվում է ամբողջ գերադաս եզրում ասվածի հետ, բայց հատկապես ընդգծված է *քաղաքային փոստով* ստացվելու հանգամանքը:

Հետևանքի հարաբերություն գոյանում է մասնավորապես այն կառույցներում, որտեղ հեղինակը կամ խոսողը գերադաս բաղադրիչով հավաստիական կամ հռետորական հարց է տալիս որևէ գործողության կամ եղելության, իրողության պատճառի մասին՝ յուրովի ժխտելով կամ հերքելով ենթադրյալ պատճառը, որից իբր թե ստացվել է կախյալ եզրում նշված հետևանքը: Հմմտ.

Ինչ էի արել քեզ, *որ երջանկությանս բարձրությունից ինձ այնպես հանկարծ ցած գցեցիր* (ՆԴ):

Այսինքն՝ *ոչինչ չէի արել քեզ...:*

Ո՞վ է մեղավոր, *որ այդքան խորն ես խրվել ճահճի մեջ* (ԳԹ): Ի՞նչ եմ արել ես, *որ տերը տնտեսությունս իմ ձեռքից վերցնում է* (ՆԿ) և այլն:

Հարկ է նշել, որ *այնպես որ* բաղադրյալ շաղկապով կապակցվող ձևերը նորություն են հայոց լեզվում: Վաղ շրջանի աշխարհաբարում նման կապակցություն գոյություն չուներ: Դասական հեղինակների երկերում ևս այդպիսի կառույց չի հանդիպում: Այն ձևավորվել է հետևանքի երանգով ձևի պարագա կախյալ նախադասությունների այն տարատեսակից, որտեղ *այնպես* հարաբերյալը դրվում էր գերադաս բաղադրիչի վերջում, որին հաջորդում էր *որ* շաղկապով սկսվող կախյալ եզրը՝ կապակցվելով *այնպես → որ* կաղապարով, ինչպես՝

Լճի վրա սառույցը բավականաչափ բարակել էր ու ճաքճքել *այնպես, որ այլևս նրա վրա չէր կարելի քայլել ապահով կերպով* (ՍՍ):

Այստեղ ունենք հետևանքի երանգով սովորական ձևի պարագա կախյալ նախադասություն, որից առաջ առկա է շարահյուսական որոշակի դադար: Հետագայում այդ դադարը վերանում է, ավելի ճիշտ՝ տեղափոխվում է *այնպես* հարաբերյալից առաջ, իսկ վերջինս, կորցնելով հարաբերյալի իր դերը, առանց դադարի միանում է *որ* շաղկապին՝ ձևավորելով *այնպես որ* բաղադրյալ շաղկապը: Հետևանքի հարաբերությամբ ձևի պարագա կախյալ նախադասությունն էլ վերածվում է բուն իսկ հետևանքի պարագայի: Հմմտ.

Լճի վրա սառույցը բավականաչափ բարակել էր (...), *այնպես որ այլևս նրա վրա չէր կարելի քայլել ապահով կերպով:*

Այժմ այս կառույցը բավականաչափ տարածված է գրական-գեղարվեստական աղբյուրներում, մասնավորապես թարգմանական գործերում:

Ծանոթություն: Որոշ քերականներ հետևանքի կախյալ նախադասություններ են համարում այնպիսիք, որոնք կից բաղադրիչի հետ կապակցվում են *ուստի, ուստի և, հետևապես, հետևաբար, ուրեմն, ուրեմն և* և նման շաղկապներով (տե՛ս *Վարագ Առաքելյան,* Հայերենի շարահյուսություն, հ. Բ, էջ 249 և հջ., *Ս.Գ. Աբրահամյան, Ն.Ս. Պառնասյան, Հ.Ս. Օհանյան, Խ.Գ. Բադիկյան,* Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, էջ 761 և հջ., *Գ.Լ. Գարեգինյան,* Ժամանակակից հայոց լեզու, Բարդ նախադասություն, էջ 285 և հջ.): Նկատի են առնվում այսպիսի օրինակներ. Դա մեծ օգնություն կլիներ հողից պակաս Այգեձորի համար, *ուստի այդ առաջարկը շատերը*

պաշտպանեցին (ՎԱ): Մի ոտք չունեմ, *ուստի ձեր երկուսի փոխարեն երեքն ունեմ* (ՊՍ):

Պետք է ասել, որ հետևանքային հարաբերություն արտահայտող շաղկապները *համադասական* և ո՛չ թե *ստորադասական* են: Դրանք համադասական են համարել ավանդական քերականագիտության այնպիսի նշանավոր ներկայացուցիչներ, ինչպիսիք են Ստ.Պալասանյանը, Հ.Թումանյանը, մասնավորապես Մ.Աբեղյանը (տե՛ս *Ստ. Պալասանեանց*, Ընդհանուր տեսութիւն արևելեան նոր գրաւոր լեզուի հայոց, Թիֆլիս, 1870, *Հ. Թումանեանց*, Հայոց աշխարհաբար լեզուի համառօտ համաձայնութիւն, Թիֆլիս, 1911, *Մանուկ Աբեղյան*, Հայոց լեզվի տեսություն, էջ 642 և հջ.), որոնց և հետևել է տողերիս հեղինակը:

Ի դեպ՝ նույն այդ շաղկապները համադասական են համարվել նաև ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի հրատարակած ժամանակակից հայոց լեզվի բուհական դասագրքում (տե՛ս *Մ.Ե. Ասատրյան*, Ժամանակակից հայոց լեզու. Շնաբանություն, եր., 1983, էջ 425):

Այսպիսով՝ հիշյալ շաղկապներով կապակցվում են ո՛չ թե հետևանքի կախյալ բաղադրիչներ, այլ բաղհյուսական համադասական կապակցության մի տեսակը կազմող մակաբերական նախադասություններ (տե՛ս § 206):

2. ԱՄԲՈՂՋ ԳԼԽԱՎՈՐ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆԸ ԼՐԱՑՆՈՂ ԿԱԽՅԱԼ ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 286. *Այն երկրորդական նախադասությունը, որը լրացնում է ողջ գերադաս բաղադրիչին և ո՛չ թե մի բառով կամ բառակապակցությամբ արտահայտված որևէ անդամի և մեկնում է նրա բովանդակությունը հավելյալ տեղեկությամբ կամ բացատրությամբ, կոչվում է ամբողջ գլխավոր բաղադրիչին լրացնող:*

Ունի իմաստակառուցվածքային հետևյալ բնութագրերը:

Այս կարգի ստորադաս նախադասությունները շփման որոշակի եզրեր ունեն *հետևանքային հարաբերություն* արտահայտող նախադասությունների հետ և շատ հաճախ նրանց նման նշում են գերադաս եզրում դրսևորված մի գործողության, եղելության, իրողության հետևանքը, դրանցից բխող հետևությունը, եզրակացությունը:

Կապակցությունը նշույթավոր է: Կապակցվում են միայն *որ* (*ը*), *ինչ* (*ը*), հազվադեպ՝ նաև *որպիսի* հարաբերականներով: Շաղկապներով չեն կապակցվում: Գերադաս եզրում հարաբերյալ չի կիրառվում: Շարադասությունը կայուն-անփոփոխ է. կախյալ եզրը օրինաչափորեն հետադասված է: Հմմտ.

Կիսակառույց հրապարակում երկու կարմրավուն ավտոմեքենաներ էին կանգնած, *ինչը մեղմում էր առավոտյան պաղ քամու, նոթոտ երկնքի և ամայի փողոցների օտարությունը* (ՌՀ): Ռուբենը բնազդորեն արձակեց օձիքի կոճակները, *որից շունչը տեղն ընկավ* (ՀՍ): Անդրանիկն ու Չաուշը մերժում են եվրոպական դիվանագետների՝ Սասունը թողնելու առաջարկությունը, *ինչն արժանանում է Պաշտպանական խորհրդի հավանությանը* (ՍՍ):

Նշելի է, որ ամբողջ գլխավոր նախադասությանը լրացնող նախադասությունների շարահյուսական հարաբերությունը գերադաս եզրին անխառն չէ: Այն որոշակիորեն համատեղում է համադասական կապակցության տարրեր: Հարաբերակցում է բաղհյուսական բարդ համադասական նախադասությունների մակաբերական կապակցությամբ կառույցներին: Դա է պատճառը, որ հեշտությամբ կարելի է *և* համադասական շաղկապի հավելում կատարել *որ* (*ը*), *ինչ* (*ը*) հարաբերականներից առաջ կամ հետո՝ առանց խաթարելու իմաստը կամ կառուցվածքը: Հմմտ.

Ռուբենը բնազդորեն արձակեց օձիքի կոճակները, *որից և* շունչը տեղն ընկավ: Մինչև իսկ կարելի է օտարել *որից* հարաբերականը՝ պահպանելով միայն *և* շաղկապը՝ առանց իմաստը խաթարելու: Հմմտ.

Ռուբենը բնազդորեն արձակեց օձիքի կոճակները, *և շունչը տեղն ընկավ:* Այստեղ, սակայն, արդեն առկա է անխառն համադասական կապակցություն:

Այս կառույցի նախադասությունները, ինչպես և հետևանքի հարաբերություն դրսևորող որոշ կախյալ նախադասություններ, համեմատաբար ուշ գոյացություններ են. հատուկ են առավելապես գրավոր խոսքին և գրքային ոճի դրոշմ են կրում:

ԲԱԶՄԱԲԱՂԱԴՐԻՉ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

§ 287. Շարահյուսական և իմաստատրամաբանական այն բոլոր հարաբերությունները, դրանց դրսևորման բառաքերականական, շարադասական և հնչերանգային իրակությունները, որոնք քննվեցին վերը, հատուկ են բարդության ևվազագույն կառույցներին՝ երկբաղադրիչ նախադասություններին: Սակայն թե՛ ժողովրդախոսակցական լեզվում, թե՛ մանավանդ գրական-գեղարվեստական և գիտահրապարակախոսական աղբյուրներում կիրառական մեծ հաճախականություն ունեն այն նախադասությունները, որոնք ընդգրկում են երեք և ավելի բաղադրիչներ: Սրանք էլ հենց ե՛ն բազմաբաղադրիչ բարդ նախադասությունները:

Բազմաբաղադրիչ նախադասությունները բնորոշվում են նրանով, որ որքան էլ դրանք ծավալուն լինեն, որքան էլ շատ լինեն բաղադրիչները, սրանց միջև եղած քերականական հարաբերությունները դույզն-ինչ չեն տարբերվում երկանդամ նախադասություններին հատուկ հարաբերություններից: Նույնական են նաև կապակցական եղանակները, միջոցները: Բազմաբաղադրիչ նախադասությունը այսպիսով երկանդամ կամ նվազագույն կառույցի ծավալումն է մեկ, երկու կամ ավելի լրացուցիչ բաղադրիչներով:

Երկբաղադրիչ և բազմաբաղադրիչ նախադասությունների բաղադրիչների միջև եղած շարահյուսական հարաբերությունների նույնության հիմունքով էլ դասակարգվում են բազմաբաղադրիչ կառույցները: Ըստ այսմ գոյանում են՝ ա) *բազմաբաղադրիչ համադասական* և բ) *բազմաբաղադրիչ ստորադասական նախադասություններ*:

Ա. ԲԱԶՄԱԲԱՂԱԴՐԻՉ ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

§ 288. *Բազմաբաղադրիչ բարդ համադասական է կոչվում այն նախադասությունը, որը իր կազմում ունենում է երեք կամ ավելի համադաս բաղադրիչներ կամ երկու կամ ավելի այնպիսի համադաս բաղադրիչներ, որոնցից մեկը, երկուսը կամ բոլորը բարդացված են ստորադասությամբ:*

Ունի իմաստակառուցվածքային հետևյալ հատկանիշները:

Բազմաբաղադրիչ նախադասությունների բաղադրիչների կապակցությունը, ինչպես նշվեց, հար և նման է երկբաղադրիչ նախադասությունների կապակցությանը:

Բազմաբաղադրիչ բարդ համադասական նախադասությունները հատկանշվում են բաղադրիչների արտահայտած հարաբերությունների բազմաձևությամբ և կառուցվածքային պեսպիսությամբ: Ըստ այդմ դասակարգ-

վում են՝ ա) *բաղադրիչների իմաստային հարաբերության հիմունքով*, բ) *բաղադրիչների կառուցվածքային արտահայտության հիմունքով*:

Ա. Ըստ բաղադրիչների դրսևորած *իմաստների հարաբերության* լինում են՝ 1. *նույնաբնույթ* և 2. *տարաբնույթ*: Երկու դեպքում էլ ենթադրվում է երեք և ավելի բաղադրիչների առկայություն:

1. *Նույնաբնույթ* բազմաբաղադրիչ բարդ համադասական նախադասության տարբերակիչ հատկությունն այն է, որ բաղադրիչներից յուրաքանչյուրը մյուսների հանդեպ գտնվում է իմաստային և շարահյուսական միևնույն հարաբերության մեջ: Այլ կերպ ասած՝ անկախ բաղադրիչների քանակից՝ նրանց միջև առկա է լինում համադասական կապակցությանը հատուկ հարաբերություններից միայն մեկը, դիցուք՝ բաղհյուսական կապակցության տարատեսակներից՝ *միայն միավորականը, միայն հավելականը*, ներհակական կապակցության տարատեսակներից՝ *միայն տրոհականը* և այլն: Հմմտ.

Սուրող քամու մետաղ փողը զրնգում էր, թավալ գալիս բլրան կողին եվ իր դողը տանում-նետում ծառ ու բույսին (ԿՋ): Երբեմն կարկուտն է ջարդել նրան, երբեմն քարերն են քերծել դեմքը, երբեմն ցուրտը և արևը խանձել են նրա կուրծքը (ԱԲ):

2. *Տարաբնույթ* բազմաբաղադրիչ բարդ համադասական նախադասության տարբերակիչ հատկությունը այն է, որ բաղադրիչների միջև լինում են իմաստային և շարահյուսական տարբեր հարաբերություններ: Սրանք սովորաբար երկբևեռ կառույցներ են: Ըստ որում՝ բևեռներից մեկում կարող է լինել մեկ պարզ նախադասություն, մյուսում՝ երկու կամ ավելի. ասել է թե՝ երկրորդ բևեռը իր հերթին կարող է ներկայացնել մի համադասական կապակցություն՝ երկու կամ ավելի եզրերից բաղկացած: Ճիշտ այդպես նաև առաջին բևեռը կարող է կազմված լինել երկու կամ ավելի համադաս բաղադրիչներից:

Համադասական հարաբերությունների տարբերությունը շոշափում է բևեռները կազմող եզրերը: Բևեռների միջև դրսևորվում է համադասական մի որոշակի հարաբերություն, բևեռները կազմող բաղադրիչների միջև՝ *մեկ այլ* հարաբերություն: Հմմտ.

Քնարի, սրնգի ներդաշնակությունը, հյուսվելով և ոլորվելով մարմարյա սյուներին, բարձրանում է վեր, բայց չի հասնում խանի ականջին, չի փոթորկում քարացած հոգին նրա (ԱՀ):

Նախադասությունը կազմված է երկու բևեռներից, որոնց միջև առկա է ներհակական հարաբերություն՝ սահմանափակման կապակցությամբ: Առաջին բևեռը ընդգրկում է մեկ պարզ նախադասություն [Քնարի, սրնգի ներդաշնակությունը (...) բարձրանում է վեր], երկրորդ բևեռը՝ երկու բաղադրիչ, որոնց միջև առկա է բաղհյուսական հարաբերություն՝ միավորական կապակցությամբ (բայց չի հասնում խանի ականջին, չի փոթորկում քարացած հոգին նրա): Կառույցում համատեղված են ներհակական և բաղհյուսական կապակցություններ:

Ահա համանման **մեկ այլ կառույց.**

Մի անգամ Մարգարը փորձեց խոսել որդու մասին, բայց պառավը փղձկաց, գոգնոցի ծայրով աչքերը սրբեց և շատ պինդ գրկեց Թորոսիկին (ԱԲ): Միակ տարբերությունը այն է, որ երկրորդ բևեռը կազմված է ոչ թե երկու, այլ երեք բաղադրիչներից (բայց պառավը փղձկաց, գոգնոցի ծայրով աչքերը սրբեց և շատ պինդ գրկեց Թորոսիկին):

Ճիշտ նույն սկզբունքով *առաջին բևեռը կարող է ունենալ երկու կամ ավելի բաղադրիչներ, երկրորդը՝ մեկ*: Հմմտ.

Հեռուն՝ Մաստասի գագաթին, դեռ ձյունը համառում էր, դիմադրում անհանգալու վտանգի մեջ եղող տարերքի նման, բայց արևը հաղթանակում էր ծաղկավառ, կանաչավուն դաշտում (ՎԹ):

Համատեղված են միավորական և հակադրական կապակցությունները:

Երկու բևեռներն էլ կարող են կազմված լինել *երկու և ավելի բաղադրիչներից*՝ իմաստային այլևայլ տարատեսակներով: Հմմտ.

Սևաչյա ու ծովաչյա փերիների հայացքների հուրն ու նետերը ճառագայթում են ամեն կողմ, տարափի պես թափվում խանի վրա, համբույրների ու հրապույրների ոստայն են հյուսում նրա շուրջը, բայց պողպատյա վահան է դարձել խանի սիրտը, և ոչ մի նետ չի խոցում նրան, ոչ մի կրակ չի ջերմացնում նրան (ԱԻ):

Այստեղ հանդիպադրված են սահմանափակման հարաբերությամբ կապակցված երկու բևեռներ, որոնցից առաջինում կան երեք բաղադրիչներ՝ միավորական կապակցությամբ, երկրորդում ևս երեք, որոնցից երկրորդը առաջինի հետ կապված է մակաբերական հարաբերությամբ, երրորդի հետ՝ հավելական:

Այսպիսով՝ միևնույն նախադասության մեջ փոխեփոխ համատեղված են միավորական, սահմանափակման, մակաբերական և հավելական հարաբերություններ:

Բ. Բազմաբաղադրիչ բարդ համադասական նախադասության *կառուցվածքային արտահայտությունը* շոշափում է բաղադրիչներից յուրաքանչյուրի *կազմությունը*: Ըստ այդմ ստացվում են հետևյալ երկու տարատեսակները:

1. *Բաղադրիչներից յուրաքանչյուրը ներկայացնում է մեկ պարզ նախադասություն.* բոլորը միմյանց հետ հարաբերակցում են շարահյուսական համարժեքության սկզբունքով՝ անկախ եզրերի միջև եղած իմաստային երանգավորումներից: Տե՛ս վերը այս բաժնում առկա բոլոր օրինակները, այլև՝

Արդեն մեռել էր նա, բայց նորից շաչում էին քարերը և բլրանում նրա վրա (ԱԻ): Նեղոսն ի վար ցոլք է նետել ճերմակ մարմարն ապարանքի, Եվ ցոլքն ի վեր օրորվելով մի մակույկ է լողում դանդաղ, Ու մակույկից երգ է գալիս (ՎԴ): Լույսի խտղտանք զգաց փակ կոպերին, սակայն աչքերը չբացեց, դեռ թափառում էր մանկության ծանոթ վայրերում, քայլում կանաչի վրա ոտաբոբիկ, անհոգ ու աննյութեղեն (ՀՄ):

Կառուցվածքային այս հատկությամբ են բնորոշվում Ա կետում քննված բոլոր նախադասությունները՝ իրենց երկու ենթատեսակներով:


2. *Բաղադրիչներից մեկը, երկուսը* կամ *բոլորը բարդացված են ստորադասական կապակցությամբ*: Բարդացված եզրը ըստ էության ներկայացնում է շարահյուսական բարդ, ավելի ստույգ՝ բարդ ստորադասական մի կառույց՝ բազմաբաղադրիչ նախադասության ներսում: Նման բարդացումը, սակայն, բնավ չի ազդում բազմաբաղադրիչ նախադասության եզրերի համադասական հարաբերությունների վրա, չի փոխում դրանց իմաստային երանգավորումները, շարահյուսական կապակցության բնույթը: Հմմտ.

Ինչ-որ թաքուն մի ուժ՝ բնազդական ու հնօրյա հուշի նման, *որի գոյության մասին ինքն էլ չգիտեր*, հաստատուն ու ամուր ձեռքով նրան քաշում էր առաջ և տանում ժամանակի խոր ու անտեսանելի հունի միջով, և նա մարդկանց մեջ քայլում էր հպարտ, անկոտրում ու գեղեցիկ (ՍՍ): Երեք համադաս եզրերից առաջինը բարդացված է ստորադասությամբ՝ որոշչային կախյալ նախադասությամբ:

§ 289. Այս նույն սկզբունքով բաղադրիչներից յուրաքանչյուրը կարող է իրենից ներկայացնել մի ստորադասական կապակցություն՝ բարդ ամբողջի շրջանակներում: Հմմտ.

Եթե ուզում ես, որ կյանքդ երկար տևե, դանդա՛ղ, ծա՛նր բարձրացիր, իսկ *եթե ուզում ես հասնել քո կյանքի բաղձանքներին*, արա՛գ բարձրացիր, և *եթե գոհ կլինես բախտիդ*, կա՛նգ առ (ԱԻ):

Այստեղ երեք համադաս եզրերից յուրաքանչյուրը՝ ա) *դանդա՛ղ, ծա՛նր բարձրացիր*, բ) *արա՛գ բարձրացիր* և գ) *կա՛նգ առ*, ունի իրեն ստորադասված մի նախադասություն, որոնք են՝ 1. *եթե ուզում ես* (որ կյանքդ երկար տևե), 2. իսկ *եթե ուզում ես հասնել քո կյանքի բաղձանքներին* և 3. *եթե գոհ կլինես բախտիդ*: Այստեղ պակաս հետաքրքրություն չի ներկայացնում և այն, որ առաջին համադաս բաղադրիչին ստորադասված եզրը իր հերթին ունի իրեն ստորադաս մի նախադասություն՝ 1ա *որ կյանքդ երկար տևե*: Նախադասությունն ունի գծային հետևյալ պատկերը[96]:




Նույն սկզբունքով բաղադրիչներից մեկը կամ մի քանիսը կարող են ունենալ ո՛չ թե մեկ, այլ մեկից ավելի ստորադաս եզրեր, որոնք համադաս են իրար: Հմմտ.

(1) Ով սիրտ ունի, (2) ում ոտքի ջլերը պինդ են, (3) իջնում է կեռմաններով, (4) թափահարում թթենին, (5) և քարերի վրա թափվում է սպիտակ, սև ու կարմիր թութը (ԱԲ):

Գծապատկերը հետևյալն է.

---


[96] Քառակուսիները նշում են բարդ նախադասության բաղադրիչ պարզ նախադասությունները, հորիզոնական գիծը՝ համադասական հարաբերությունը, ուղղահայաց կամ վերից վար իջնող ճառագայթաձև շեղ գիծը՝ ստորադասությունը, որի վերին մակարդակում գերադաս եզրն է, ստորին մակարդակում՝ ստորադաս:



Դիտելի է, որ այստեղ համադասական հարաբերություն կա և ստորին ստորադաս եզրերի մակարդակում: Սակայն այս բազմաբաղադրիչ նախադասությունը համադասական է ոչ թե նրա համար, որ ունի միմյանց համազոր երկու ստորադաս բաղադրիչներ, այլ նրա համար, որ վերին մակարդակում է առկա համադասական հարաբերություն:

Բազմաբաղադրիչ բարդ համադասական նախադասություն կարող է գոյանալ նաև այն դեպքում, երբ իրար համադասված են միայն երկու բաղադրիչներ, որոնցից մեկը կամ երկուսն էլ ունեն ստորադաս եզրեր: Հմմտ.

(1) Շոգից ու հոգնությունից ծանրանում են իմ կոպերը, (2) և (3) երբ փակում եմ աչքերս. (2) լսում եմ հազարավոր գերանդիների խշշոց, նույնիսկ հասկերի վայր ընկնելը (ԱԲ): Գծային պատկերն է՝



Այլ մի օրինակ՝ (1) Միտք եմ անում, միտք (2) ու չեմ հասկանում՝ (3) Ով է մեղավոր (ՀԹ): Գծապատկերը նույնն է նախորդի հետ:

Ինչպես նշվեց վերը, թե՛ համադասական, թե՛ ստորադասական կապակցությունները իրացվում են ճիշտ այնպես, ինչպես երկբաղադրիչ նվազագույն կառույցներում: Դա երևում է նաև բերված բնագրային վկայություններից, որտեղ կան թե՛ նշույթավոր կապակցություններ՝ իրենց երկու տարատեսակներով՝ շաղկապական և հարաբերական, թե՛ աննշույթ՝ շարահարական կապակցություններ:

Բ. ԲԱԶՄԱԲԱՂԱԴՐԻՉ ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

§ 290. *Բազմաբաղադրիչ բարդ ստորադասական է կոչվում այն նախադասությունը, որն իր կազմում ունենում է մեկ գլխավոր և երկու կամ ավելի ստորադաս բաղադրիչներ կամ որի երկու կամ ավելի գլխավոր նախադասությունները միաժամանակ լրացվում են միևնույն կախյալ բաղադրիչով կամ բաղադրիչներով:*

Ունի իմաստակառուցվածքային հետևյալ բնութագրերը:


Բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասությունների բաղադրիչների միջև կարող են լինել շարահյուսական այն բոլոր հարաբերությունները, որոնք հատուկ են երկանդամ թե՛ համադասական, թե՛ ստորադասական նախադասություններին՝ անշուշտ ստորադասության պարտադիր առկայությամբ: Ըստ որում՝ կառուցվածքային տեսակետից եզրերի միջև կարող է լինել միայն ստորադասական հարաբերություն, կարող է լի-

նել նաև ստորադասական հարաբերություն՝ բարդացված համադաս բաղադրիչ(ներ)ով: Հմմտ.

(1) Ուզում եմ, (2) որ այս անզարդ տողերը մնան այնքան, (3) որքան կմնա մեր քարափը (ԱԲ):


Այստեղ առկա երեք բաղադրիչներից երկրորդը ստորադասված է առաջինին, երրորդը՝ երկրորդին: Կառույցը բնորոշվում է միայն ստորադասական հարաբերությամբ. համադասության չկա:

Գծային պատկերն է՝




(1) Ով դեմդ գա, (2) տուր անխնա, (3) որ խելքի գա (ՎԳ):

Այստեղ առկա երեք բաղադրիչներից առաջինը և երրորդը ստորադասված են երկրորդին: Այս կառույցը ևս բնորոշվում է միայն ստորադասությամբ: Գծային պատկերն է՝



(1) Տուր ինձ քո ոգին, (2) որ ես շառաչեմ, (3) որ ես դադարեմ հանդարտ խոսելուց, (4) Ինձնից խոսելիս քեզնից չամաչեմ, (5) Ինձնից չամաչեմ քեզնից խոսելիս (ՀՍ):

Երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ բաղադրիչները միմյանց հետ կապված են համադասությամբ, առաջին եզրի հետ՝ ստորադասական հարաբերությամբ: Կառույցը բնորոշվում է թե՛ ստորադասությամբ, թե՛ համադասությամբ: Գծապատկերն է՝



Այս նախադասությունը իր հիմքով ստորադասական է, բայց ունի համադասությամբ կապակցված ստորադաս եզրեր: Նրանում առկա հինգ բաղադրիչներից չորսը համադաս են, բայց համադասությունը ստորին մակարդակում է, ուստի և ամբողջ բարդությունը մնում է ստորադասական կառույց:

Բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասության եզրերի կապակցությունը նույնպես իր ընդհանուր արտահայտություններով նույնական է երկբաղադրիչ նախադասությունների կապակցության հետ, թեև

կան նաև լրացուցիչ օրինաչափություններ, որոնց մասին կխոսվի համապատասխան կառույցների քննության ընթացքում:

Այս նախադասությունների դասակարգման հիմքում ընկած է ստորադաս եզրերի՝ միմյանց և գլխավոր եզրի կամ եզրերի հանդեպ ունեցած շարահյուսական հարաբերությունների բնույթը՝ ստորադասությունը և համադասությունը: Ստորադաս բաղադրիչների լրացական հարաբերությունը և համադաս եզրերի իմաստային տարատեսակությունը, ինչպես և կապակցական եղանակներն ու միջոցները չեն շոշափում դասակարգման հիմունքները:

Ելակետ ունենալով բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասության եզրերի միջև եղած շարահյուսական հարաբերությունների ընդհանրություններն ու տարբերությունները՝ նկատում ենք հետևյալ տարատեսակները՝ 1. *ենթաստորադասությամբ*, 2. *համասեռ ստորադասությամբ* (*համաստորադասությամբ*), 3. *անհամասեռ ստորադասությամբ*, 4. *հանրաստորադասությամբ* կապակցություններ:

1. ԵՆԹԱՍՏՈՐԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ


§ 291. *Ենթաստորադասությամբ կապակցության մեջ գլխավորին ստորադասված նախադասությունը իր հերթին ունենում է ստորադաս մի բաղադրիչ:*

Ունի կառուցվածքային հետևյալ հատկանիշները:

1. Ստորադաս բաղադրիչին ստորադասված եզրը *ենթաստորադաս* նախադասություն է: Սա ենթաստորադասության պարզագույն արտահայտությունն է: Հմմտ.


(1) Տղան ամաչելուց այնպես էր շփոթվել, (2) որ չգիտեր, (3) թե գլուխը որտեղ թաքցնի (ԱԲ): (1) Հիմա ոչինչ չեմ ուզում, բացի մահից, (2) քանի որ հույս ունեմ, (3) որ նրա մեջ կգտնեմ հանգիստ (ԱԻ): (1) Եվ ճի՞շտ ենք անում, (2) երբ մեզ վարժում ենք չմտածելուն, (3) ինչ է թե հանկարծ սխալ չգործենք (ՊՍ):

Երեքի գծապատկերն էլ նույնն է՝



2. Ենթաստորադասությունը ստորադասական հարաբերության դրսևորման մի բաց շղթա է, որի օղակների՝ իբրև բաղադրիչների միջև առկա է հաջորդական ստորադասություն: Բաղադրիչներից մեկը գլխավորն է, որն ունի իրեն ստորադաս մի նախադասություն, սա էլ իր հերթին բարդացված է մի բաղադրիչով՝ իրեն իսկ ստորադաս, և այսպես շարունակ, անշուշտ՝ ոչ

մինչև անսահմանություն: Բազմաստիճան ստորադասության լավագույն նմուշ է Հ. Թումանյանի ծանոթ բանաստեղծությունը, որ դարձել է դասագրքային օրինակ: Նրա վերջին նախադասությունն է՝ (1) *Ես էլ էն վարպետ Օհանը*, (2) *Որ մորթել է էն աքլորին*, (3) *Որ զարթեցրել է էն տերտերին*, (4) *Որ պսակել է էն տղին*, (5) *Որ ուզել է էն աղջկան*, (6) *Որ կթել է էն կովին*, (7) *Որ հարու է տվել էն շանը*, (8) *Որ գզել է էն կատվին*, (9) *Որ բռնել է էն մկանը*, (10) *Որ կերել է էն ցորենը*, (11) *Որ պահված է տանը*, (12) *Որ չինել է վարպետ Օհանը:* Գծապատկերն է՝



Ծանոթություն: Այս կառույցը և ընդհանրապես բազմաբաղադրիչ նախադասությունները քննելիս հարկ է կատարել գիտաբառերի (տերմինների) արտահայտած իմաստների ճշգրտում: Բազմաբաղադրիչ կառույցները վերլուծելիս օգտագործվում են *գլխավոր, գերադաս* և *ստորադաս, երկրորդական, կախյալ նախադասություն (բաղադրիչ, եզր)* գիտաբառերը՝ որպես որոշակի քերականական կարգերի արտահայտիչներ: Ինչպես սույն դասագրքում, այնպես և այլուր *գլխավոր նախադասություն (բաղադրիչ, եզր)* գիտաբառի փոխարեն հաճախ կիրառվում է *գերադաս նախադասություն (բաղադրիչ, եզր)* բառանվանումը: Նման փոխարինումը երկվություն կամ շփոթ չի առաջացնում երկբաղադրիչ ստորադասական կապակցության մասին խոսելիս, այն ընդունելի է նաև ո՛չ ենթաստորադասությամբ բարդացված բազմաբաղադրիչ նախադասությունները հետազոտելիս: Ընդունելի չէ, սակայն, ենթաստորադասությամբ կապակցված նախադասությունների բաղադրիչները տրոհելիս: Խնդիրն այն է, որ ենթաստորադասություն ունեցող կառույցներում լինում է միայն մեկ գլխավոր եզր, իսկ գերադաս եզրերը առնվազն երկուսն են կամ ավելի:

Այսպիսի և ընդհանրապես բոլոր տեսակների բարդ ստորադասական նախադասություններում գլխավոր եզրը այն բաղադրիչն է, որը ունի ստորադաս եզր: Գերադաս եզրը ևս այն բաղադրիչն է, որ ունի ստորադաս եզր, որի նկատմամբ գերադաս է: Գլխավոր եզրը, սակայն չի կարող լինել ստորադաս, մինչդեռ գերադաս եզրը կարող է: Ուրեմն ամեն մի գլխավոր նախադասություն նաև գերադաս նախադասություն է, մինչդեռ ամեն մի գերադաս նախադասություն չէ, որ գլխավոր է: Գերադաս նախադասություններից միայն մեկը՝ այսինքն է գլխավոր. քանի որ մյուսները նաև ստորադաս են, իսկ բարդության վերջին բաղադրիչը սոսկ ստորադաս է՝ առանց գերադաս լինելու: Ըստ Հ. Թումանյանի օրինակի՝ ունենք տասնմեկ գերադաս եզրեր՝ առաջինից մինչև տասնմեկերորդը՝ ներառյալ, բայց առկա է լոկ մեկ գլխավոր նախադասություն՝ առաջինը՝ *Ես էլ՝ էն վարպետ Օհանը:* Երկրորդից մինչև տասնմեկերորդը միաժամանակ հաջորդաբար և՛ գերադաս են, և՛ ստորադաս: Գերադաս են՝ հաջորդի, ստորադաս են նախորդի նկատմամբ:

Ավանդական քերականագիտության մեջ, ինչպես և ռուս շարահյուսագետների աշխատություններում, ստորադասության հաջորդականությունը բնութագրելու համար, սկսած երրորդ բաղադրիչից, օգտագործվում են *երկրորդական կարգի երկրորդական նախադասություն, երրորդական կարգի երկրորդական, չորրորդական կարգի երկրորդական նախադասություն* և այլն գիտաբառերը: Տե՛ս *Գուրգեն Սևակ,* Հայոց լեզվի շարահյուսություն, եր., 1952, համապատասխան գլուխը, այլև՝ ***Н.М. Шанский, А.Н. Тихонов, А.В. Филиппов, С.И. Небыкова, Д.И. Изаренков,*** Современный русский литературный язык, Л., 1988, էջ 643 և հջ.:

Հ. Թումանյանի օրինակում 12-րդ բաղադրիչը կլինի տասնմեկերորդական կարգի երկրորդական նախադասություն:

3. Թեև ենթաստորադասությամբ կառույցները ներկայացնում են բաց շարքեր (տե՛ս նախորդ կետը), սակայն ոճական-արտահայտչական տեսակետից այնքան էլ նպատակահարմար չէ նախադասությունը ծանրաբեռնել հաջորդական ստորադասություն գոյացնող երեք-չորս օղակներից ավելի: Հ. Թումանյանը անշուշտ իրեն կարող էր թույլ տալ մտքերը շարադրել տասներկու բաղադրիչներից բաղկացած բազմաստիճան ստորադասական նախադասությամբ: Բայց, ինչպես ասում են, այն, ինչ ներելի է Զևսին, ներելի չէ... ուրիշներին:

4. Հաջորդական ստորադասությամբ բաղադրված նախադասությունների եզրերի կապը ընդհանուր առմամբ նշույթավոր է. տե՛ս վերի օրինակները: Շարահարությունը խիստ հազվադեպ է պատահում, թեև տեսականորեն որոշ բաղադրիչներ կարող են նաև այդպես կապակցվել: Սա սովորաբար լինում է այն դեպքում, երբ շարադասության բերումով երկու շաղկապ հաջորդում են իրար: Նման նախադասության առաջին շաղկապը կարող է զեղչվել՝ առաջացնելով շարահարություն: Հմմտ.

Պարզվեց՝ եթե մեկ կիլոմետր ևս խորանանք, ծուկը կառատանա (ՎԱ):


Եթե *որ* շաղկապը չօտարվեր, կստացվեր՝ Պարզվեց, *որ եթե* ... կառույցը՝ երկու ստորադասական շաղկապների կից կիրառությամբ, որ այնքան էլ ցանկալի չէ:

5. Միագիծ բազմաստիճան ստորադասությունը, որտեղ առաջին եզրին ստորադասվում է երկրորդը, երկրորդին՝ երրորդը և այդպես՝ հաջորդաբար, *հաճախ ստեղծում է որոշ միապաղաղություն, միօրինակություն*: Դրանից խուսափելու համար ստորադաս բաղադրիչներից մեկը կամ մյուսը երբեմն միջադասվում է կամ նախադասվում, որով թեև դարձյալ ստացվում է ենթաստորադասություն, բայց ոչ միագիծ, այսինքն՝ ոչ հերթական հաջորդականությամբ: Դա մասամբ մեղմում է միօրինակության տպավորությունը: Հմմտ.

(1) Եվ (2) եթե երգով ես ասում եմ, (3) թե ես այլ եմ հիմա, (4) այլևս այն չեմ, (1) նշանակում է նոր հուն եմ մտել՝ ավելի խորունկ, ավելի անշեղ (ԵՉ):

Առաջին՝ գլխավոր նախադասությունը, սկսվել է *և* շաղկապով, հենց այդտեղ էլ ընդմիջվել է՝ իր մեջ առնելով երկրորդ՝ իրեն ստորադասված բաղադրիչը, որը իր հերթին ունի երկու ենթաստորադաս եզրեր:

Գծապատկերն է՝



§ 292. Ենթաստորադասությունը հաճախ բարդացվում է համադասությամբ, որով երկու կամ ավելի համադաս բաղադրիչներ միաժամանակ դառնում են ենթաստորադաս նախադասություններ: Դրանով բարդության տեսակային հատկանիշը չի փոխվում, քանի որ, միևնույնն է, պահպանվում է ենթաստորադասությունը: Հմմտ. վերի օրինակը, այլև՝

(1) Թվաց, (2) թե հացի շորը դիտմամբ վեր գցեց, (3) որ կռանա (4) և մի քիչ ավելի կանգնի (ԱԲ): Գծապատկերը նույնն է նախորդի հետ: (1) Ուսուցիչը նորից պահանջեց, (2) որ նա միանա խմբին, (3) որովհետև Անդոյի ձայնը զիլ է (4) և քաղցր (ն.տ.): Սա ևս ունի միևնույն գծային պատկերը:

Ստորադաս եզրերը կարող են ունենալ լրացական նույնական գործառույթներ, որ ենթադրել է տալիս նաև կապակցության եղանակի ու միջոցի նույնություն: Հմմտ.

Չեթենի զգեստ հագած երեք զաբթիենները նրան հրեցին դեպի ծորապռունկը, *ուր* տարածված էր մարդու և աստծու աչքից հեռու մի ծորակ, *ուր* անվրդով իր ջրերն էր առաջ մղում գետակը (ՀՀ): Ո՞վ է այն փոքրիկ մարդը, *որ* անշտապ զբոսնում է դարպասի առջև, *որ* երբեք չի փակվում (ՈՀ):

Երկու օրինակներում էլ թե՛ ստորադաս, թե՛ ենթաստորադաս եզրերը որոշչային կախյալ նախադասություններ են՝ կապակցական համանման միջոցներով՝ *ուր* և *որ* հարաբերականներով, ինչը ստեղծում է ինչ-որ միատեսակություն: Ցանկալի է խուսափել դրանից:

Ստորադաս եզրերը կարող են ունենալ նաև լրացական տարբեր գործառույթներ՝ կապակցական տարբեր եղանակներով ու միջոցներով: Դա լայն հնարավորություն է տալիս նաև բաղադրիչները ազատ կերպով տեղաշարժել այնպես, ինչպես թույլ է տալիս դրանց լրացական բնույթը: Ստորադաս և ենթաստորադաս եզրերի լրացական բնույթի և կապակցական ձևերի տարբերությունն ու շարադասության ազատությունը լիովին փարատում են սպասելի միապաղաղությունը, նախադասությունը դարձնում կուռ ու կառուցիկ: Հմմտ.

(1) Երբ որ լսում եմ շշուկից մի չար, (2) թե ինչ-որ մի տեղ ինչ-որ մի որդի Լքել է իր մոր սիրտը վշտարդար, (3) ուզում եմ փնտրել-գտնել չար որդուն (ՀՇ):

Ստորադաս բաղադրիչը ժամանակի պարագա է, ենթաստորադաս նախադասությունը՝ ուղիղ խնդիր: Տարբեր են նաև կապակցող սպասարկու բառերը՝ ***երբ (որ)*** հարաբերական և ***թե*** շաղկապ: Ստորադաս եզրը (1) նախադաս է, նրան հաջորդում է ենթաստորադաս նախադասությունը (2), կառույցը եզրափակում է գլխավոր բաղադրիչը (3):

Այլ օրինակներ.

Եվ իմացե՛ք, ուրեմն, *որ ոչ մի աշխատանք տքնաջան չէ այնքան, որքան հոգու հերկը* (է տքնաջան) (ԵՉ): Այնքան կարևոր և պատվավոր զբաղմունք է եղել բազեի որսորդությունը հայ թագավորների համար, որ նրանք անհրաժեշտ են համարել հատուկ նախարարություն հիմնել, որի հիմնական խնդիրը բազեներով որսորդություն կազմակերպելն է եղել (ՎԱ):

2. ՀԱՄԱՍԵՌ ՍՏՈՐԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ (ՀԱՄԱՍՏՈՐԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ) ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ


§ 293. *Համասեռ կամ համաստորադաս են կոչվում այն կախյալ նախադասությունները, որոնք, միմյանց հանդեպ համադաս լինելով, շարահյուսական միևնույն հարաբերությամբ լրացնում են գերադաս եզրի նույն անդամին կամ ամբողջ գերադաս բաղադրիչին:*

Ունեն իմաստակառուցվածքային հետևյալ բնութագրերը:

1. Համասեռ ստորադասությամբ կապակցված նախադասությունների նվազագույն կառույցը ունենում է երեք բաղադրիչներ, որոնցից մեկը գլխավորն է, մյուս երկուսը համադաս են իրար և ստորադաս՝ առաջինին: Հմմտ.

(1) Մի նայելուց հասկանում էր, (2) թե ո՛ր կովն է գիշերն անհանգիստ եղել, (3) ո՛րն է շատ քաղցած (ԱԲ): (1) Հետո դերձակ Վանեսը չէր սիրում, (2) որ գինեվաճառը ինքն էլ երբեմն կերուխում էր սարքում (3) ու երկարաճիտ կոշիկներ հագնում (ՍՋ):


Երկու կառույցներում էլ երկրորդ և երրորդ եզրերը համասեռ են և լրացնում են համապատասխանաբար՝ *հասկանում էր* և *չէր սիրում* բայ-ստորոգյալներին: Երկուսի էլ գծային պատկերը նույնն է՝



2. Ստորադաս եզրերի թիվը կարող է նաև երկուսից ավելի լինել: Նման կառույցները զգալի հաճախականություն ունեն մասնավորապես գրական-գեղարվեստական աղբյուրներում, որտեղ հարկ է լինում գերադաս բաղադրիչի որևէ անդամի կամ ամբողջ գլխավոր եզրի իմաստը ընդարձակել ստորոգումային երեք և ավելի միավորներով: Հմմտ.

(1) Շավարշը մի պահ միայն ուզում էր ձին բաց թողնել հետևից՝ վախենալով, (2) որ կինը կանէանա, (3) կտեսլանա հանկարծ, (4) կցնդի, (5) կդառնա գարնանային մշուշ, (6) ու կմնան լոկ ինքն ու ձին՝ գյուղամիջին ահից խրխնջացող (ԵՉ):

Այստեղ համասեռ ստորադասությամբ կապակցված բաղադրիչների թիվը արդեն հինգն է՝ երկրորդից մինչև վեցերորդը: Գծապատկերն է՝



3. Ստորադաս եզրերը կարող են արտահայտել այն բոլոր լրացական հարաբերությունները, որոնք հատուկ են բարդ ստորադասական նախադասություններին: Կարող են լինել, օրինակ՝ ենթակա, ստորոգելի, որոշիչ, խնդիր, պարագա՝ իրենց տարատեսակներով և այլն: Վերևի երեք օրինակներից առաջինում և երկրորդում ստորադաս բաղադրիչները կատարում էին ուղիղ խնդրի, երրորդ օրինակում՝ անջատման խնդրի շարահյուսական գործառույթ: Հմմտ. նաև՝

1. Ի՞նչ լավ կլիներ, որ ծամփի քարերից գիշերով վերցներ, պառավի գերեզմանի վրա դներ (ԱԲ): 2. Տվեք ինձ իմ շուրթերը, որ ձեզ համար գտնեմ բառեր անգտնելի, հնչյունները դարձնեմ կախարդական ճյուղեր Եվ գտած իմ բառերը ծաղիկների նման կախեմ այդ ճյուղերից (ՌԴ): 3. Երբ ուրիշ կլինեն օրերն արդեն, Երբ ցնդած լինեմ ցնորքի պես, Բիբերիդ խոնավ ճանապարհով Ես անակնկալ կմտնեմ ներս (Ե.տ.):

Առաջին օրինակում կախյալ բաղադրիչները ենթակայական են, երկրորդում՝ նպատակի պարագա, երրորդում՝ ժամանակի պարագա:

4. Ստորադաս եզրերը միմյանց նկատմամբ կարող են ունենալ իմաստային գրեթե այն բոլոր հարաբերությունները, որոնք հատուկ են համադասական կապակցություններին: Դրանք կարող են լինել բաղխյուսական և ներհակական կապակցություններ՝ իրենց տարատեսակներով՝ միավորական, մասնական, հավելական, մակաբերական, մեկնական, ժխտական, տրոհական, հակադրական և այլն: Տե՛ս վերի օրինակները: Հմմտ. նաև հետևյալ բնագրային վկայությունները:

(1) Թվում էր, (2) որ մինչև մահ կապրի այդ ժայռերի վրա, (3) կցանի կորեկ, (4) աշնանը կիջնի ծորերը, (5) կհավաքի միրգ և ցախ (ԱԲ):

Երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ բաղադրիչները ներկայացնում են միավորական կապակցություն. բոլորը միասին ենթակայական հարաբերությամբ ստորադասված են առաջինին:

(1) Քարեր, հին քարեր՝ վաղուց մոռացված, անանուն, անգիր, ննջում են այնտեղ, (2) ուր լռությունն է իշխում անհաստատ, (3) Ու հուշն է թռչում՝ հավիտյան անթև (ՌԴ):

Այստեղ տեղի պարագայի գործառույթով հանդես եկած երկրորդ և երրորդ բաղադրիչների միջև առկա է հավելական կապակցություն: Այսպես կարող են արտահայտվել նաև այլ համադասական հարաբերություններ:

§ 294. Համաստորադասությամբ հարաբերակցվող կառույցների բաղադրիչների կապակցությունը շփման եզրեր ունի երկբաղադրիչ բարդ համադասական և ստորադասական նախադասությունների եզրերի կապակցական եղանակների հետ: Ստորադաս նախադասություններից առաջինը գերադասի հետ կապակցվում է սովորաբար այնպես, ինչպես կկապակցվեր երկբաղադրիչ նախադասության ստորադաս եզրը գլխավորի հետ: Համադաս եզրերը միմյանց հետ կապակցվում են համադասությանը հատուկ եղանակներով ու միջոցներով: Սակայն համադաս եզրերից երկրորդը և հաջորդները, եթե կան, գտնվում են երկակի կապակցության մեջ. մի կողմից՝ նրանք ստորադասական հարաբերությամբ կապակցված են գերադաս բաղադրիչի հետ, մյուս կողմից՝ համադասական հարաբերությամբ՝ կից եզրի կամ եզրերի հետ: Այս իրողությունը պարտադրում է կապակցական լրացուցիչ եղանակներ ու միջոցներ: Նշելի է հատկապես հետևյալը:

Ա. Առաջին ստորադաս եզրը գերադասի հետ կապակցվում է ստորադասական շաղկապով կամ հարաբերականով: Գերադաս եզրում հարաբերյալի առկայությունը կամընտիր է: Ստորադաս եզրերը միմյանց հետ կապակցվում են՝ իրենց արտահայտած իմաստային հարաբերություններին

բնորոշ ձևերով, ասենք՝ միավորական կապակցության դեպքում՝ միավորական շաղկապներով, հաճախ՝ շարահարությամբ: Առաջին ստորադաս եզրի շաղկապի կամ հարաբերականի կապակցական դերը տարածվում է նաև մյուս համասեռ բաղադրիչների վրա: Հմմտ.

[Լիներ,] (1) այնպե՞ս լիներ, (2) որ ինքը հնձվոր լիներ, (3) նրանց արտը հնձեր, (4) Սոնան հաց բերեր իրեն, (5) շապիկը քրտներ, (6) և քրտնած նստեր նրա կողքին (ԱԲ):

Այստեղ առաջին ստորադաս եզրը գերադասի հետ կապվել է *որ* ստորադասական շաղկապով, որի կապակցական դերը տարածվել է նաև երրորդից վեցերորդ ստորադաս բաղադրիչների վրա, իսկ վերջիններս միմյանց հետ կապակցվել են շարահարությամբ, բացի վերջին՝ վեցերորդ եզրից, որ նախորդի հետ կապակցվել է *և* շաղկապով: *Այս* շաղկապը, *այսպիսով*, փակել է համադաս եզրերի շարքը:

Բ. Համաստորադաս եզրերի կարևորությունը մեկիկ-մեկիկ ընդգծելու, նաև ոճական-արտահայտչական նկատառումներով հաճախ այդ բաղադրիչներից յուրաքանչյուրը գերադասի հետ կապակցվում է առանձին-առանձին՝ համապատասխան շաղկապով կամ հարաբերականով: Ըստ որում՝ կապակցության եղանակն ու միջոցը օրինաչափորեն պետք է նույնական լինեն, քանի որ բարդության ստորադաս եզրերը նույնական են, նույնաբնույթ: Հմմտ.

Ես ուզում եմ, *որ* կարապը ոչ թե մեռնի, *որ* կարապը ապրի՝ երգով (ՊՍ): Ես կանչում եմ բոլոր նրանց, *Ովքեր* գիտեն փայլատակել կարմիր գինու թնդությունից (...), *Ովքեր* գիտեն վիշտն ու ցավը ետ վանելու, Կյանքում լավը և առողջը հավանելու, Գեղեցիկը և վսեմը դավանելու հարգն ու կարգը (Ն.տ.):

Ինչ վերաբերում է ստորադաս բաղադրիչների՝ միմյանց հետ կապակցվելու եղանակին, ապա այն կարող է լինել թե՛ նշույթավոր՝ դրանց միջև եղած իմաստային հարաբերությունները դրսևորող կաղապարներով, թե՛ աննշույթ՝ շարահարությամբ:

Նշույթի օգտագործման դեպքում ստացվում է կապակցական երկու բառերի զուգորդում. համադասական շաղկապին անմիջապես հաջորդում է ստորադասական շաղկապը կամ հարաբերական դերանունը: Հմմտ.

(1) Նրանք ասում են, (2) *որ ես հոգնել եմ*, (3) *Որ ես շեղել եմ ուղիղ ուղին*, (4) *Որ մեր պայքարը հոգիս լքել է*, (5) *Եվ* ես ընտրել եմ ուրիշ ուղի (ԵՉ): Երկրորդ, երրորդ և չորրորդ եզրերից ամեն մեկը, առանձին վերցրած, գերադաս եզրի հետ (*Նրանք ասում են*) կապակցվել է *որ* շաղկապով, երկրորդ, երրորդ և չորրորդ համադաս եզրերը միմյանց հետ կապակցվել են շարահարությամբ, հինգերորդ եզրը՝ չորրորդի հետ՝ *և* շաղկապով: Այս *և* շաղկապից հետո *որ* շաղկապի առկայության դեպքում կստացվեր *և որ* կաղապարով կապակցություն, որի մասին նշվեց վերը: Հմմտ.

Նրանք ասում են, *որ ես հոգնել եմ (...) և որ ես ընտրել եմ ուրիշ ուղի*.

Հմմտ. նաև՝

Երբ հոգնած է եղել, և երբ խաբվել է սիրուց, Ու՞մ գրկում է հեծեծել, Մա՛յր իմ անուշ ու անգին (Ն.տ.):

Կապակցական եղանակների տեսակետից վերջին օրինակի միակ տարբերությունը ստորադաս եզրի՝ գերադասի հետ հարաբերականով կապակցվելն է, որով ստացվել է *և երբ* կաղապարը:

§ 295. Ստորադաս եզրերը ոչ միայն միմյանց հետ, այլև հաճախ գերադասի հետ կարող են կապակցվել շարահարությամբ, որ առավելապես հատուկ է ժողովրդախոսակցական լեզվին, բայց պատահում է նաև գրական-գեղարվեստական աղբյուրներում: Հմմտ.

Դուրսը ցուրտ ծմեռ է, սակայն հոգուդ մեջ ամառ է՝ ասիճ (ԵՉ): Երկու ստորադաս բաղադրիչները միմյանց հետ կապակցվել են *սակայն* հակադրական շաղկապով, գերադաս եզրի հետ՝ շարահարությամբ:

Վերջապես՝ ստորադաս եզրերը թե՛ միմյանց հետ, թե՛ գերադասի հետ կարող են կապակցվել շարահարությամբ: Հմմտ.

Մենք չգիտենք՝ *ինչպե՞ս էր ապրում հայոց չինականը, ի՞նչ տեսակ հարաբերությունների մեջ էր յուր տերերի հետ* (Ր): *Իմ թափառ կյանքում, մարդ ի՞նչ իմանա՝ չե՞մ նստել, թախծել այդ քարի վրա* (ԱԻ): Իսկ ես հանձն եմ առնում ցույց տալ քեզ, ազնի՛վ տրիբուն՝ *ուր է փախել, որտեղ է թաք կացել նա* (ՀՍՅԵ):

Համասեռ ստորադասությամբ նախադասությունները ունեն նաև իրենց շարադասական առանձնահատկությունները: Գերադասի հանդեպ նրանց գրաված դիրքը պայմանավորված է նրանց արտահայտած իմաստային հարաբերությունների բնույթով, մասամբ նաև տրամաբանական գործոնով: Վերջին տեղում չէ և հեղինակային նախասիրությունը: Ստորադաս եզրերը կարող են լինել հետադաս: Սա առավել տարածված օրինաչափությունն է: Կարող են լինել նախադաս (տե՛ս վերի օրինակները):

Հազվադեպ պատահում են նաև միջադասված համաստորադաս նախադասություններ: Հմմտ.

(1) Ամռան շոգին, (2) *երբ արևն այնքան մոտ է,* (3) *ջերմությունը՝ շատ,* (4) *երբ շները շոգից տան ստվերում պառկում են,* (5) *լեզուն հանած՝ թնչին տալիս,* (1) առվի եզերքին միշտ էլ կարելի է տեսնել Լառ Սարգարին՝ ոտքերը մինչև ծնկները բաց, բահն ուսին (ԱԲ):

Հինգ բաղադրիչից բաղկացած այս նախադասության երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ համաստորադաս եզրերը միջադասված են: Ըստ էության՝ համասեռ ստորադասությամբ կապակցված չորս պարզ նախադասություններ ընդմիջել են գերադաս բաղադրիչը, թափանցել նրա մեջ:

Այստեղ բնորոշ օրինաչափությունն այն է, որ *համաստորադաս եզրերը իրարից հեռանալ չեն կարող.* չի կարող, դիցուք, համասեռ կախյալ բաղադրիչներից մեկը լինել նախադաս, մյուսը կամ մյուսները՝ միջադաս կամ վերջադաս:

3. ԱՆՀԱՄԱՍԵՌ ՍՏՈՐԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 296. *Անհամասեռ են կոչվում այն կախյալ նախադասությունները, որոնք շարահյուսական տարբեր հարաբերություններով լրացնում են ամբողջ գլխավոր բաղադրիչին, նրա մեկ կամ ավելի անդամներին և կամ նույն հարաբերությամբ լրացնում են տարբեր անդամների:*


Ունեն իմաստակառուցվածքային հետևյալ առանձնահատկությունները:

1. Անհամասեռ ստորադասությամբ կապակցված նախադասության ընդհանուր կառույցը ունենում է երեք բաղադրիչ, որոնցից մեկը գերադաս եզրն է, երկուսը՝ ստորադաս: Հմմտ.

(1) *Երբ ծիերը վարգով գնում էին,* մտածում էր, *թե ահա շուտով կհասնեն* (ՍԳ): (2) Հետո, *երբ նոր-նոր հասունացող աղջիկ էր,* զգում էր տղամարդկանց անբացատրելի լպիրշ նայվածքները, *որոնցից ուզում էր փախչել-կորչել* (ՀՄ): (3) Եվ *քանի որ մարել էին սիրո և հույսի բոլոր շողերը,* իրեն հանձնում է բաքոսի իշխանությանը, *որով դառնում է անուղղելի հարբեցող* (ՀՍՅԵ): (4) Նա լավ էր ճանաչում Հասմիկին, *որ հետո դարձավ իր հարսը,* և նրա հորը, *որ հայտնի թղթաբույծ էր:*

Առաջին օրինակում անհամասեռ նախադասություններից մեկը ժամանակի պարագա է, մյուսը՝ ուղիղ խնդիր. երկուսն էլ լրացնում են գերադաս եզրի բայ-ստորոգյալին: Երկրորդ օրինակում առաջին ստորադաս եզրը մասնավորեցնող պարագայական բացահայտիչ է և լրացնում է գերադաս եզրի՝ *հետո* ժամանակի պարագային,երկրորդ եզրը որոշիչ է և լրացնում է նույն եզրի *նայվածքները* ուղիղ խնդրին: Երրորդ օրինակում երկու անհամասեռ ստորադաս բաղադրիչները լրացնում են ամբողջ գլխավոր նախադասությանը: Չորրորդ օրինակում երկու ստորադաս եզրերն էլ որոշչային բնույթ ունեն, բայց լրացնում են գերադաս նախադասության երկու տարբեր, տվյալ դեպքում՝ բազմակի անդամներին՝ *Հասմիկին* և *հորը* ուղիղ խնդիրներին:

Բոլոր չորս նախադասությունների գծապատկերը նույնն է՝



2. Հիմքում ունենալով անհամասեռ կախյալ նախադասությունների լրացական բնույթը՝ դրանք կարելի է ստորաբաժանել երկու ենթատեսակների՝ ա) *նույնաբնույթ* և բ) *տարաբնույթ* ստորադաս եզրերի:

Ա. *Նույնաբնույթ* անհամասեռ կախյալ նախադասությունները ունենում են լրացական միևնույն բնույթը, որով նրանք յուրովի հիշեցնում են համասեռ ստորադասությունը: Սակայն էապես տարբերվում են վերջինից: Միևնույն նույնաբնույթ համասեռ բաղադրիչները լրացնում են գերադաս եզրի *միևնույն անդամին,* իբրև անհամասեռ նույնաբնույթ նախադասությունների լրացյալներ հանդես են գալիս գերադաս եզրի *տարբեր անդամներ:* Լրա-

ցումների շարահյուսական հարաբերությունների բնույթը թեև նույնն է, սակայն տարբեր են լրացյալները:

Նման նույնաբնույթ անհամասեռ լրացումներ են դառնում հատկապես որոշչային կախյալ նախադասությունները, որոնք լրացնում են գերադաս եզրի՝ գոյականներով արտահայտված բազմակի նույնական կամ ոչ բազմակի՝ տարատեսակ անդամներին: Տե՛ս վերի օրինակներից չորրորդը, այլև՝

Սի՞թե սա այն Անտոնիոն չէ, որին ճանաչում էր ամեն մի վենետիկցի, այն պատանի ջութակահարը, *որ միջնադարյան տրուբադուրի նման շրջում էր քաղաքից քաղաք, փողոցից փողոց՝ պատուհանների տակ նվագելով սերենադներ* (ՆԴ): Տեղը, *ուր կանգ էր առել կառքը*, գյուղամիջով անցնող խճուղին էր, *որ դեղնագույն ժապավենի նման ակոսում էր սևահողը* (Մ): Շապին-Գարահիսարը, *որ հինավուրց բերդաքաղաք է*, մտնում է Փոքր Հայքի Նիկոպոլիս գավառի մեջ, *որի բերդապարիսպը ծգվում է մի քանի կիլոմետր դեպի լեռները* (ՍՍ):

Բայական անդամի լրացումները ևս, լինելով նույնաբնույթ, կարող են դառնալ անհամասեռ ստորադաս բաղադրիչներ: Նման կառույցներում նույնաբնույթ եզրերից մեկը սովորաբար լրացնում է բայ-ստորոգյալին, մյուսը՝ դերբայով արտահայտված մի անդամի: Հմմտ.

Իմանալով, *որ ինձ կսպասեն*, հայտնեցի, *որ մի փոքր կուշանամ*: Երկու ստորադաս եզրերն էլ ուղիղ խնդիր են, սակայն մեկը լրացնում է *իմանալով* դերբայական անդամին, մյուսը՝ *հայտնեցի* բայ-ստորոգյալին: Այլ օրինակ՝

Պառկելով չոր խոտերի վրա, *թե ինչ է ջարդված ոսկորներին մի քիչ հանգստություն տա*, հրացանն ու փամփշտակալը դրեց կողքին, *որ պատրաստ լինի ամեն մի անակնկալի* (ՍՍ): Այստեղ երկու ստորադաս եզրերն էլ նպատակի պարագա են, բայց անհամասեռ, քանի որ լրացնում են բայական տարբեր անդամների:

Բայական անդամի նույնաբնույթ անհամասեռ լրացում հանդիսացող նախադասությունները, ի տարբերություն որոշչային կախյալ բաղադրիչների, այնքան էլ հաճախված չեն ժամանակակից հայերենում:

Բ. *Տարաբնույթ անհամասեռությունը* բնորոշվում է նրանով, որ գերադաս եզրը լրացվում է շարահյուսական տարբեր գործառույթներ ունեցող կախյալ բաղադրիչներով:

Ըստ գերադաս եզրի համապատասխան անդամների նկատմամբ ունեցած շարահյուսական հարաբերությունների բնույթի՝ այս կառույցները ունենում են երկու տարատեսակություն՝ գլխավոր նախադասության՝ 1) *միևնույն անդամին* և 2) *տարբեր անդամներին* լրացնող տարաբնույթ կախյալ բաղադրիչներով նախադասություններ:

1. Գերադաս նախադասության *միևնույն անդամին* լրացնող տարաբնույթ կախյալ բաղադրիչների տարբերակիչ առանձնահատկությունը այն է, որ նրանք համապատասխան անդամի իմաստը ծավալում են երկու կամ ավելի լրացական, ոչ համանման հարաբերություններ դրսևորող ստորոգումային միավորներով:

Այս կարգի տարաբնույթ կախյալ նախադասությունները օրինաչափորեն լրացնում են գերադաս եզրի բայական անդամին, ավելի ստույգ՝ բայ-ստորոգյալին: Եվ դա հասկանալի է. գերադաս եզրի գոյականական միևնույն անդամը միաժամանակ չի կարող լրացվել որոշչային և հատկացուցչային, հատկացուցչային և բացահայտչային կամ որոշչային և բացահայտչային կախյալ բաղադրիչներով: Բայ-ստորոգյալները անշուշտ կարող են լրացվել այլևայլ հարաբերություններ արտահայտող կախյալ եզրերով: Այսպես՝ միևնույն բայ-լրացյալը իր ներգործական սեռի կամ բայիմաստի թելադրանքով կարող է ստանալ, ասենք, մի ուղիղ կամ անուղղակի խնդրի գործառույթ ունեցող կախյալ նախադասությամբ արտահայտված լրացում և մի պարագա՝ նույնպես ձևավորված որպես ստորադաս նախադասություն: Կամ կարող է միաժամանակ լրացվել ենթակա և դարձյալ ուղիղ խնդիր կամ անուղղակի խնդիր, ենթակա և մի ինչ-որ պարագա կախյալ նախադասություններով և այլն:

Հմմտ. *ենթակա* և *խնդիր*՝ ուղիղ թե անուղղակի: *Ով որ եկավ*, հարգանքի տուրք մատուցեց նրան, *որի անունն իսկ արգելված էր արտասանել: Ով որ ծայն էր խնդրում*, հայտնում էր նույնը, *ինչ որ արդեն գիտեինք գիշերվա պաշտոնական հաղորդագրությունից*:

Ենթակա կամ *խնդիր* և *պարագա*. *Որ նրանք տնից հեռանում են*, նրանց թվում է, *թե շատ մոտ է ցնորքի այդ աշխարհը* (ԱԲ): *Ներս է մտնում թե չէ*, հիշեցնում է, *որ ժամանակն է ճանապարհ ընկնելու* (ՀԹ):

Կիրառական համեմատաբար ավելի մեծ հաճախականություն ունեն այն նախադասությունները, որոնց գերադաս եզրի բայ-ստորոգյալը լրացվում է տարբեր լրացական բնույթի պարագայական կախյալ բաղադրիչներով: Հմմտ.

1. *Քանի որ գարունն այստեղ շատ վաղ է գալիս*, եղանակը այնքան էր տաքացել, *որ մինչև անգամ լուսամուտները բաց էինք արել* (ՆԴ): 2. *Թե խեմք լեզուս անունդ տա*, ես կսեղմեմ ատամներով, *որ հնչյուն իսկ չշինջա* (ՍԿ): 3. *Մինչ սա դիմացից կմոտենար*, Հեյդարը թեթևորեն առաջ ոստնեց, *որ բացի կառքի դռնակը* (ՀՄ):

Առաջին օրինակում զուգորդված են *պատճառի* և *չափի*, երկրորդում՝ *պայմանի* և *նպատակի*, երրորդում՝ *ժամանակի* և *նպատակի* պարագաներ:

2. Գերադաս բաղադրիչի ոչ միայն *նույն* անդամը, այլև *տարբեր* անդամներ կարող են լրացվել տարաբնույթ անհամասեռ կախյալ նախադասություններով: Սրանով վերանում է որոշ այն կաշկանդվածությունը, որ մասամբ առկա է լինում միևնույն անդամին, տվյալ դեպքում՝ բայ-ստորոգյալին լրացնող անհամասեռ նախադասություններ կառուցելիս: Այս պարագայում գերադաս եզրի ցանկացած անդամ կարող է լրացվել այլևայլ կախյալ բաղադրիչներով, որոնք լրացական տարբեր հարաբերություններով գոյացնում են անհամասեռ ստորադասությամբ բարդ նախադասություններ: Միևնույն կառույցում կարող են համատեղվել ենթակայական, որոշչային, խնդրային, պարագայական և այլ կարգի անհամասեռ ստորադաս նախադասություններ: Սա օրինաչափ երևույթ է և վկայում է արդի հայերենի

շարահյուսական ճկունությունը, կառուցվածքային մեծ հնարավորությունները: Հմմտ.

1. *Քանի որ դու այնքան սիրում ես այդ աղավնուն*, փոխարենը տուր քո մարմնից այնքան միս, *որքան կշռում է աղավնին* (ԱԻ): 2. Մի անգամ, *երբ հեռու հյուսիսում ուսանողական մեծակյաց սենյակումս, փակված դիսերտացիայիս վերջին գլուխներն էի գրում*, մի նամակ ստացա, *որի մեջ ապշեցուցիչ անողոքությամբ գրում էր ինա*... (ՆԴ): 3. Քարոնը, *որ ստորերկրյա այս խավարի տիրակալն է*, քեզ նշան է անում, *որ պառկես քարե թախտին* (ԴԴ):

Առաջին և երկրորդ օրինակների գերադաս բաղադրիչները լրացվել են պարագայական և որոշչային, երրորդինը՝ որոշչային և հատկացուցչային կախյալ նախադասություններով:

§ 297. Անհամասեռ ստորադասությամբ բաղադրիչների կապակցությունը գերադաս եզրի հետ իրացվում է ճիշտ նույն կաղապարներով, որոնք հատուկ են երկբաղադրիչ բարդ նախադասություններին: Ստորադաս եզրերը, ըստ իրենց ունեցած լրացական հարաբերության բնույթի, կապակցվում են ստորադասական համապատասխան շաղկապներով կամ հարաբերականներով:

Գերադաս եզրում կառույցի թելադրանքով սովորաբար կիրառվում է *միայն մեկ հարաբերյալ*, թեև ստորադաս եզրերը թվով առնվազն երկուսն են, հաճախ՝ նաև ավելի: Հարաբերյալը, եթե կա, վերաբերում է կախյալ եզրերից միայն մեկին: Մյուսին կամ մյուսներին չի կարող վերաբերել, քանի որ լրացական գործառույթները տարբեր են: Տե՛ս վերի օրինակները, այլև՝

Եվ *երբ Լառ-Մարգարը նայում էր ծիրանի ծյուղերի արանքից*, նրա ծերացած աչքերին *այնպես* էր թվում, *թե հավքը լազուրի վրա միայնակ սահող ամպի կտորի հետ է խաղում* (ԱԲ): *Ինչքան էլ ուզում է չհիշել*, միշտ հիշում է *այն* առավոտը,*երբ իր գրկի մեջ հանգավ իր խարտյաշ երեխան՝ սոված մոր ստինքների չորանալուց* (ԴԴ):

Շարահարական կապակցությունը այս կարգի կառույցներում խիստ հազվադեպ է. բաղադրիչներից մեկը թերևս կարող է կապակցվել առանց բառական միջոցների: Հմմտ.


(1) Երբ ես հին աշխարհը մտա ես տաղով, սազով, քամանչով, (2) *Ի՞նչ պիտի անի աշխարհում էս անմիտ-անճարը*՝ (3) ասին: Առաջին ստորադաս բաղադրիչը երրորդ՝ գերադաս եզրի հետ կապակցվել է *երբ* հարաբերականով, երկրորդը՝ շարահարությամբ:

Անհամասեռ ստորադասությամբ նախադասությունը կարող է բարդացված լինել համադասությամբ կամ ստորադասությամբ: Այս դեպքում ևս գործում են կապակցական նույն ձևերը, որ հատուկ են համաստորադասությամբ կամ ենթաստորադասությամբ կազմված նախադասություններին: Հմմտ.

Ա. *Համաստորադասությամբ* բարդացված կառույց. (1) Դու, (2) *որ նշածև սև աչքեր ունես և ունքեր կեռման*, (3) *Որ գեղեցիկ ես Արայի նման*,


(1) խորհե՞լ ես արդյոք, (4) *թե ինչքան էր պետք քո հին հայրերին Զոհաբերություն, ոգի և գորով* (ՍԿ):

Նկատելի է, որ երկրորդ և երրորդ բաղադրիչները համասեռ են և բացահայտչային հարաբերությամբ կապակցված են առաջին՝ գերադաս բաղադրիչին, որին ստորադասված է նաև մի չորրորդ բաղադրիչ՝ խնդրային գործառույթով: Այսպիսով՝ չորրորդ եզրի հանդեպ անհամասեռ հարաբերության մեջ են գտնվում միաժամանակ երկու ստորադաս նախադասություններ՝ երկրորդը և երրորդը: Գծապատկերն է՝



Բ. *Ենթաստորադասությամբ* բարդացված կառույց. (1) Ուրեմն, ո՞վ գալիքի երգասաններ, (2) *Որքան էլ վեհ լինի ձեր ներկան*, (1) Չմոռանաք, (3) *որ դուք պիտի սերմեր ցանեք*, (4) *Որ լինեն դարից ձեր երկար* (ԵՉ):

Այստեղ անհամասեռ ստորադասությամբ կապակցված են երկրորդ և երրորդ բաղադրիչները, որոնցից վերջինը իր հերթին ունի ստորադաս մի նախադասություն: Գծային պատկերն է՝



§ 298. Անհամասեռ ստորադասությամբ նախադասություններին հատուկ են շարադասական որոշակի օրինաչափություններ, որոնք զգալիորեն տարբերվում են երկբաղադրիչ բարդ ստորադասական նախադասության շարադասությունից: Եթե երկբաղադրիչ կառույցներում կախյալ եզրի դիրքը ճշտող մասով կամընտիր է, հաճախ պայմանավորված նրա լրացական բնույթով, երբեմն նաև հեղինակային նախասիրությամբ, ապա նույնը չի կարելի ասել անհամասեռ ստորադաս բաղադրիչների դասավորության մասին:

Քանի որ ստորադաս եզրերը միմյանց հետ չեն աղերսվում ո՛չ իմաստով, ո՛չ քերականորեն, ուստի և բարդության բոլոր պարզ նախադասությունների միջև պետք է ստեղծվի այնպիսի հաջորդականություն, որը կապահովի յուրաքանչյուր կախյալ եզրի կապը ամբողջ գերադասի կամ նրա այս ու այն անդամի հետ:

Դիտելի են շարադասական հետևյալ արտահայտությունները:

1. *Նույնաբնույթ* անհամասեռ կախյալ նախադասությունները, լինեն դրանք գոյականական թե բայական անդամի լրացումներ, սովորաբար շարադասվում են՝ առաջինը՝ միջադաս, երկրորդը՝ վերջադաս: Տե՛ս վերի օրի-

նակները (§ 296, Ա), այլև՝

Սայրս, *որ սկզբում միշտ լաց էր լինում*, այժմ կարծես հաշտվել է իր դրության հետ, *որը, սակայն, ոչ մի հույս չի ներշնչում* (ՆԴ)։

2. *Տարաբնույթ* անհամասեռ նախադասություններից մեկը սովորաբար նախադասվում է, մյուսը՝ հետադասվում։ Տե՛ս վերի օրինակները (§ 296, Բ), այլև՝

Ով նստեց աթոռի վրա (...), օրենքի ուժով պարտավոր է նա հիշել, *որ ինքը երկոտանի է, այն էլ՝ բարձրագույն* [Եվ ոչ մի դեպքում իրավունք չունի վերստին դառնալ նոր չորքոտանի, Առավել ևս՝ չորքոտանու ծորտ] (ՊՍ)։ *Թե աչքերս քեզ որոնեմ*, ես կփակեմ մութ կոպերով, *Որ աշխարհում քեզ չտեսնեմ* (ՍԿ)։

3. Եթե կախյալ եզրերից մեկը իմաստային, կապակցական և այլ գործոնների բերումով պետք է նախորդի երկրորդ անհամասեռ բաղադրիչին, սակայն նախադասվել չի կարող իր լրացական բնույթի պատճառով, միջադասվում է։ Հմմտ.

Հայրը, *որ ջրկիրությամբ էր զբաղվում*, խեղդվեց-մնաց բքի մեջ, *երբ ինքը տասը-տասներկու տարեկան աղջիկ էր* (ՀՄ)։ Ես, *որ աստծուն Աստվածատուր եմ կոչում*, Ես՝ խեռորեն խռովարար-խռովիչ, Աստվածամերժ-աստվածարկու մի չաստված, Ասում եմ ձեզ (...), *Որ երկնքում իրոք չկան աստվածներ* [. Նրանք վաղու՞ց երկրի վրա են բազմած] (ՊՍ)։

4. Հազվադեպ երկու անհամասեռ բաղադրիչներն էլ կարող են նախադասվել, և այս պարագայում նրանք անմիջապես հաջորդում են իրար, ինչը այնքան էլ օրինաչափ չէ։ Հմմտ.

Երբ խալխի անսիրտ քեֆերին ես անուշ իմ տաղերն ասի, Ամառվա մրգերի նման համեղ է քո բառը՝ ասին (ԵՉ)։

4. ՀԱՆՐԱՍՏՈՐԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

§ 299. *Հանրաստորադաս է կոչվում այն կախյալ նախադասությունը, որը միաժամանակ լրացնում է երկու կամ ավելի համադաս նախադասությունների կամ նրանց համապատասխան անդամների։*


Ունի իմաստակառուցվածքային հետևյալ բնութագրերը։

1. Հանրաստորադասությամբ կապակցության նվազագույն կառույցը եռաբաղադրիչ այնպիսի նախադասություն է, որի կազմում առկա են թե՛ համադասական, թե՛ ստորադասական հարաբերություններ։ Այդպիսի հարաբերություններ, ինչպես տեսանք (§ 293), գոյանում են նաև համաստորադասությամբ կազմված նախադասություններում։ Հանրաստորադասության և համաստորադասության միջև, սակայն, կա կառուցվածքային էական տարբերություն։ Համաստորադասությամբ կառույցներում համադասությունը ստորին, ավելի ստույգ՝ ստորադասության մակարդակում է, հանրաստորադասությամբ կապակցության մեջ՝ վերին, ավելի ստույգ՝ գերադասության մակարդակում։ Ուրեմն առկա են երկու համադաս նախադասություններ, որոնց, եթե կարելի է այսպես ասել, «երկու տիրոջ ծառայի» սկզբուն-

քով ստորադասված է մեկ նախադասություն: Հմմտ.

(1) Եթե արևը չխոնարհվեր դեպի մայրամուտ, (2) *նա առանց հոգնության երկար կմնար այդ դիրքով* (3) *և չէր հագենա մրգերը քաղած և արդեն դեղնող ծառերի սոսափից* (ԱԲ): (1) Ինչքան որ սիրտդ տա, (2) *սաղարթի՛ց խոսիր* (3) *ու վարդի՛ց խոսիր մայիսյան* (ՊՍ):

Այս երկու նախադասությունների երկրորդ և երրորդ բաղադրիչները կապակցված են համադասությամբ, առաջին եզրերը առանձին-առանձին ստորադասված են երկրորդ և երրորդ բաղադրիչներին: Այսպես՝ երկրորդ օրինակում ունենք՝ *Ինչքան որ սիրտդ տա* կախյալ նախադասությունը, որը լրացնում է՝ *Սաղարթի՛ց խոսիր* գերադաս եզրին: Երկուսը միասին, առանձին վերցրած, կազմում են ստորադասական կապակցությամբ երկբաղադրիչ նախադասություն՝ *Ինչքան որ սիրտդ տա*, սաղարթի՛ց խոսիր: Բայց ընդգծված կախյալ եզրը բնագրային վկայության մեջ հավելյալ կերպով լրացնում է նաև *(Ու) վարդից խոսիր մայիսյան* նախադասությանը՝ ինչպես՝ *Ինչքան որ սիրտդ տա, վարդի՛ց խոսիր մայիսյան:* Հեղինակային օրինակի և մեր տրոհած տարբերակների իմաստները նույնական են, որպես՝ թե ասվեր՝ *Ինչքան որ սիրտդ տա, սաղարթի՛ց խոսիր, և ինչքան որ սիրտդ տա, վարդի՛ց խոսիր մայիսյան:* Սակայն միտքը ձևակերպվել է ոչ թե այսպես, ըստ որում՝ ապաշնորհ, այլ շնորհալի արտահայտությամբ, ինչպես որ է՝ բնագրում: Ստացվել է հաներաստորադասությամբ կառույց: Բերված երկու օրինակներն էլ ունեն նույն գծապատկերը՝




2. Հաներաստորադասությունը ենթադրում է *համագերադասության* առկայություն: Համագերադասությունը *հակամիշտ է* համաստորադասության: Հակադրության հիմքում ընկած են համադասության երկու՝ վերին և ստորին մակարդակները: Համագերադասությամբ կապված երկու (կամ ավելի) համադաս նախադասությունները գերադաս են համապատասխան բաղադրիչի հանդեպ, որով և գտնվում են կառույցի վերին մակարդակում, համաստորադասությամբ կապված երկու (կամ ավելի) համադաս նախադասությունները ստորադաս են համապատասխան բաղադրիչին, դրանով իսկ գտնվում են կառույցի ստորին մակարդակում:

3. Ընդհանուր ստորադաս կամ հաներաստորադաս բաղադրիչը կարող է լրացնել ոչ միայն երկու, այլև թվով ավելի գերադաս եզրերի: Հմմտ.


(1) Երբ որ խոփն ակոսներն արտի մեջ շարում է, (2) Զարթնում են, (3) խորհում են, (4) խոկում են լեռները: (1) Երբ ծարավն արտի մեջ հնձվորին վառում է, (2) Հևում են, (3) շիկնում են, (4) շոգում են լեռները (ՀՍ): (1) Երբ որ Պապից պատասխան չէր ստանում, (2) Թորոսիկը խռովկան էր դառնում, (3) շրթունքը կախում, (4) նայում սայլի վրայից գլխիվայր կախած հավերին (ԱԲ):

Երեք նախադասություններում էլ առաջին եզրերը միաժամանակ լրացնում են երկրորդ, երրորդ և չորրորդ բաղադրիչներին և ձևավորում են համանման քերականական հարաբերություններ: Բոլոր երեք կառույցները ունեն նույն գծային պատկերը՝



Հմմտ նաև՝


(1) Ու վերքերը դառնում են երգ, (2) Ու երգերը դառնում են վերք, (3) Ու սրտերը՝ ծանր մի քար, (4) Երբ գինվոր են տանում յարին (ՊՍ): Գծապատկերն է՝




4. Կառույցի ստորին մակարդակում ևս կարող է աճել բաղադրիչների թիվը: Այդ դեպքում ստացվում են երկու, հազվադեպ՝ ավելի հանրաստորադաս նախադասություններ: Հմմտ.

(1) Հաճախ էինք կռանում թամբից, (2) գրկում ծիու վիզը, (3) *որպեսզի կախ ընկած ծյուղերը չքերծեին մեր դեմքը*, (4) *և փշերը չծակծկեին* (ԱԲ): (1) Ինչպե՞ս չի սիրում անտառը նրան, (2) Ինչպե՞ս է ծաղրում, (3) քրքջում վրան, (4) *Ինչ է թե հսկան Այս թզուկների կամքին ու կյանքին Չի կարողանում իրեն ենթարկել*, (5) *Ի՞նչ է թե նրանք չեն կարողանում իրենց ճեղվածքում սրան բանտարկել* (ՊՍ):

Առաջին օրինակում համագերադաս են առաջին և երկրորդ եզրերը, հանրաստորադաս՝ երրորդը և չորրորդը. երկրորդ օրինակում համագերադաս են առաջին, երկրորդ և երրորդ եզրերը, հանրաստորադաս՝ չորրորդը և հինգերորդը: Գծապատկերներն են՝

1. 

2. 

5. Գերադաս բաղադրիչների միջև տիրապետողը բաղհյուսական կապակցությունն է՝ միավորական ենթատեսակով: Տե՛ս վերի վկայությունները: Հանրաստորադաս բաղադրիչը կարող է արտահայտել լրացական գրեթե այն բոլոր հարաբերությունները, որոնք հատուկ են կախյալ նախադասություններին: Կարող է հանդես գալ ենթակայի, որոշչի, խնդրի, պարագաների գործառույթներով:

§ 300. Ըստ ստորադաս բաղադրիչի՝ գերադասների նկատմամբ ունեցած հարաբերությունների՝ հանրաստորադասությունը լինում է՝ ա) *նույնաբնույթ* և բ) *տարաբնույթ:*

Ա. *Նույնաբնույթ* հանրաստորադասությունը բնութագրվում է նրանով, որ կախյալ եզրը կամ եզրերը երկու կամ ավելի գերադաս բաղադրիչներին լրացնում են շարահյուսական միևնույն հարաբերությամբ, ասենք՝ կա՛մ են-թակա են, կա՛մ խնդիր, կա՛մ պարագա՝ որոշակի իմաստային երանգով և այլն: Սա հանրաստորադասությամբ կառույցների համեմատաբար տարածված տարատեսակն է: Այն բավականաչափ կիրառվում է և՛ գրական-գեղարվեստական աղբյուրներում, և՛ հրապարակախոսության մեջ: Վերը վկայված բոլոր օրինակները այդպիսիք էին: Հմմտ. նաև՝

Այն էլ զգացի, ցավով զգացի, *որ կտրվելուց հետո է միայն երևում ծառի բուն հաստությունը* (ՊՍ):

Ընդգծված հանրաստորադաս բաղադրիչը երկու գերադաս եզրերին էլ լրացնում է ուղիղ խնդրի գործառույթով: Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ լրացնում է գերադաս եզրերի բայ-ստորոգյալներին, որոնք հանդես են եկել որպես ոճական կրկնություն (*զգացի*): Այլ մի օրինակ՝

(1) *Երբ տխրում եմ ես,* (2) Կոպերս դառնում են թավշե, (3) Աչքերս դառնում են թավշե, (5) Ու թավիշ արցունք է կաթում օրերիս տխրության վրա (ՌԴ):

Առաջին բաղադրիչը երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ եզրերին լրացնում է նույնական հարաբերությամբ՝ որպես ժամանակի պարագա կախյալ նախադասություն:

Բ. *Տարաբնույթ* հանրաստորադասությունը բնորոշվում է նրանով, որ ստորադաս եզրը (կամ եզրերը) գերադաս եզրերին առանձին-առանձին լրացնում է շարահյուսական տարբեր հարաբերություններով, այլ կերպ ասած՝ միաժամանակ համատեղում է և՛ այսինչ, և՛ այնինչ գործառույթները: Հարաբերությունների՝ նման տարատեսակությունը պայմանավորված է համագերադաս նախադասությունների բայ-լրացյալների իմաստային կառուցվածքով ու սեռային քերականական կարգով, այլև հարաբերյալների (անշուշտ, եթե կան) շարահյուսական գործառույթով: Հմմտ.

[Օ՜, թատերական դիմակներ հագած իրերն այս բազում...] (1) Ես համոզված եմ, (2) ես հաստատ գիտեմ՝ (3) *նրանք ինձանից վախենում-քաշվում-ամաչում են միշտ* [, Ինչպես մերկ կինը՝ անսպասելի հայացքից օտար] (ՊՍ):

Երրորդ՝ հանրաստորադաս եզրը միաժամանակ լրացնում է առաջին և երկրորդ բաղադրիչների բայ-ստորոգյալներին: Վերջիններիս քերականական սեռերը տարբեր են. մեկը կրավորակերպ չեզոք սեռի է, մյուսը՝ ներգործական: Այդ իսկ պատճառով կախյալ եզրը դարձել է առաջինի բայիմաստի, երկրորդի բայասեռի լրացում: Առաջինի համար վերաբերության խնդիր է, երկրորդի համար՝ ուղիղ խնդիր: Այլ մի օրինակ.

(1) *Այնպես* խաղաղ ես աշխարհին նայում, (2) Եվ *այնքա՜ն* մերն ես, (3) մոտիկ, (4) մտերիմ, (5) *Ասես չեն բերել քեզ դավ ու արյուն,* (6) *Քեզ չեն բաժանել քո որդիներից* (ՍԿ):

Այստեղ հանրաստորադասությամբ կապակցված երկու բաղադրիչներ կան՝ հինգերորդը և վեցերորդը: Երկուսն էլ երկբնույթ են. միաժամանակ և՛ ձևի պարագա են, և՛ չափի: Նման տարաբնույթ գործառույթը պայմանավորված է տարբեր գերադաս եզրերում տարբեր հարաբերյալների առկայությամբ: Առաջին եզրում առկա է *այնպես* հարաբերյալը, և նրա համար հինգերորդ և վեցերորդ հանրաստորադաս բաղադրիչները ձևի պարագա են: Երկրորդ եզրում գտնում ենք *այնքան* հարաբերյալը, որը ներունությամբ վերաբերում է նաև երրորդ ու չորրորդ բաղադրիչներին՝ *մոտիկ* (*ես այնքան*), *մտերիմ* (*ես այնքան*): Իր իմաստի թելադրանքով այս հարաբերյալը խնդրում է չափի պարագա, որով պայմանավորված է նույն հինգերորդ և վեցերորդ բաղադրիչների կիրառությունը որպես չափի պարագա:

Հարաբերյալների արտահայտած իմաստները այնքան կարևոր են նման կառույցի նախադասություններում (նաև այլ կառույցներում), որ միևնույն հանրաստորադաս եզրում կարող են համատեղվել ոչ միայն բայական իրարից տարբեր լրացումներ, այլև գոյականական անդամի և բայական անդամի լրացումներ: Հմմտ.

(1) *Այնպիսի* վարպետությամբ էր պարում (2) և *այնպես* էր հմայել բոլորին, (3) որ [երբ պարն ավարտվեց], դահլիճը, ասես հիպնոսացած ու կախարդված, դեռ բավական տևական մի միջոց քար լռության մեջ էր:

Երրորդ ստորադաս բաղադրիչը, լրացնելով առաջին եզրում կիրառված *վարպետություն* գոյականին, դարձել է նրա որոշիչը, լրացնելով երկրորդ եզրի *հմայել էր* բայ-ստորոգյալին, դարձել է նրա ձևի պարագան: Նման կառույց է գոյացել շնորհիվ այն բանի, որ համագերադաս բաղադրիչներում առկա են երկու միանգամայն տարբեր հարաբերյալներ՝ *այնպիսի* և *այնպես:* Մեկը պահանջում է որոշիչ, մյուսը՝ ձևի պարագա կախյալ նախադասություն:


§ 301. Բազմաբաղադրիչ նախադասությունները կարող են բարդացված լինել ոչ միայն համասեռ, այլև անհամասեռ հանրաստորադաս կախյալ նախադասություններով: Նման կառույցներում հանրաստորադաս եզրերը միմյանց հետ չեն կապվում ո՛չ իմաստով, ո՛չ քերականորեն, այլ առանձին-առանձին կապակցվում են երկու կամ ավելի համադաս եզրերի: Հանրաստորադաս բաղադրիչներն էլ իրենց հերթին կարող են ունենալ ենթաստորադաս եզրեր: Ստացվում է ճյուղավորված ու ճոխ մի կառույց՝ բաղադրիչների շարահյուսական հարաբերությունների պեսպիսությամբ: Հմմտ.

(1) *Ինչպես որ օձն է քարը ականջները խցկում,* (2) *Որ չլսի ծայնը ճարտար թովչի,* (3) Այնպես էլ դու, արքա՛, դու խցկեցիր ունկդ, (4) Դու փակեցիր, արքա՛, լսողությունը քո, (5) *Որ չլսես խրատն աստվածային* (ՎԴ):


Այստեղ գերադաս կամ համագերադաս են 3-րդ և 4-րդ բաղադրիչները (*Այնպես էլ դու, արքա՛, դու խցկեցիր ունկդ, (4) Դու փակեցիր, արքա՛, լսողությունը քո*): Այս երկու գլխավոր բաղադրիչներին ստորադասված են երկու կախյալ նախադասություններ, որոնք միմյանց հետ որևէ առնչություն

չունեն և շարադասությամբ ևս անջրպետված են իրարից հենց գլխավոր եզրերով: Նախադասված կախյալ բաղադրիչը ձևի պարագա է (*Ինչպես որ օձն է քարը ականջները խցկում*), հետադասված բաղադրիչը՝ նպատակի պարագա (*Որ չլսես խրատն աստվածային*): Առաջին ստորադաս եզրը իր հերթին բարդացված է ենթաստորադասությամբ (*Որ չլսի ծայնը ճարտար թովչի*):

Նման բազմաստիճան ստորադասությունը՝ համատեղված համադասության հետ, թվում է, պետք է խճողեր միտքը, սակայն հեղինակը ասելիքը այնքան հստակ է ձևակերպել, որ երկվություն կամ թյուրըմբռնում բնավ չի առաջացնում: Չկա նաև դույզն-ինչ մեղանչում շարահյուսական որևէ օրինաչափության դեմ: Գծային պատկերն է.




Սիա համանման մեկ այլ օրինակ՝ գերադաս բաղադրիչներից առաջ և հետո շարադասված երկու իրարից անկախ ստորադաս եզրերով, որոնցից մեկը ժամանակի պարագա է, մյուսը՝ ձևի. (1) Բայց (2) *երբ կատարվի տեն-չանքը նրանց*, (1) Նրանցից ոմանք (կամա թե անկամ, ուրախ թե տրտում) Կուղեկցեն իմ դին, (3) Եվ ինձ հետ մեկտեղ կթաղվեն անգամ, (4) *Ինչպես որ անցած դարերում հին-հին Հոմանի, ծառա, ծորտ էին թաղում Իրենց վախճանված տիրոջ հետ մեկտեղ* (ՊՍ): Գծապատկերն է՝



Հաջորդաստորադաս բաղադրիչը կարող է լրացնել ոչ միայն երկու կամ ավելի գլխավոր, այլև երկու կամ ավելի ստորադաս նախադասություններին: Այս դեպքում համագերադաս բաղադրիչները կգտնվեն ոչ թե վերին, այլ ստորին մակարդակում, և կգոյանա միաժամանակ նաև ենթաստորադասությամբ բարդացված կառույց: Հմմտ.

(1) Այն օրն են միայն բանաստեղծ դառնում, (2) *երբ հասկանում են*, (3) *հանկարծ ըմբռնում*, (4) *որ իրենց գործը այն չիշն է միայն*, (5) որ ծովն է նետում նավորդը մեռնող՝ փրկություն հայցող տողով մի քանի (ՊՍ):

Այստեղ հանրաստորադաս եզրը [(4) *որ իրենց գործը այն շիշն է միայն*] լրացնում է ոչ թե գլխավոր նախադասությանը, որն է՝ (1) *Այն օրն են միայն բանաստեղծ դառնում*, այլ սրան համաստորադասված երկու բաղադրիչներին՝ (2) *երբ հասկանում են*, (3) *հանկարծ ըմբռնում*: Այսպիսով՝ հանրաստորադաս եզրը իր հերթին նաև ենթաստորադաս է միաժամանակ: Ըստ որում՝ այդ ենթաստորադաս եզրն էլ իր հերթին լրացված է իրեն ենթաստորադաս մի բաղադրիչով՝ (5) *որ ծովն է նետում նավորդը մեռնող...*: Արդյունքում միևնույն կառույցում համատեղված են համաստորադասությունը (2-րդ և 3-րդ եզրերը), հանրաստորադասությունը (4-րդ եզրը) և բազմաստիճան ենթաստորադասությունը (4-րդ և 5-րդ եզրերը): Գծապատկերն է՝



§ 302. Հանրաստորադասությամբ բարդացված կառույցներում բաղադրիչների կապակցությունն իրացվում է առավելապես նշույթներով: Շարահարությունը, եթե կա, գործում է միայն համագերադաս բաղադրիչների միջև: Վերջիններս իրար հետ կարող են կապակցվել նաև համադասական շաղկապներով՝ ըստ միմյանց նկատմամբ ունեցած իմաստային հարաբերությունների բնույթի:

Ստորադաս եզրի հետ նշույթավոր կապակցությունն իրացվում է ըստ նրա արտահայտած լրացական հարաբերությունների տեսակի՝ համապատասխան ստորադասական շաղկապներով կամ հարաբերականներով: Տե՛ս վերի օրինակները:

Կառույցը ունի բաղադրիչների դասավորության որոշակի օրինաչափություն: Ժամանակի, պայմանի, տեղի, չափի, ձևի պարագա հանրաստորադաս նախադասությունները սովորաբար նախադասված են: Տե՛ս վերի օրինակները: Պատահում են նաև կառույցներ, որտեղ երկու իրար հետ չկապված պարագայական տարաբնույթ հանրաստորադաս նախադասություններից մեկը նախադասվում է, մյուսը՝ հետադասվում: Հմմտ.

(1) Երբ կարդում էին, (2) խորին ուշադրությամբ կապույտ, պսպղուն աչքերը կտնկեր ընթերցողի աչքերին (3) և այնպես կենդանի զմայլանքով կլսեր չինական, հնդկական բանվորների գործադուլների, քաղաքացիական կռիվների մասին, (4) այնպես վառ տպավորությամբ կհամակվեր այդ ամենով, (5) որ կարծես այդ բոլորը կատարվում էին իրենց գյուղում (ԴԴ):

Առաջին հանրաստորադաս եզրը, որ ժամանակի պարագա է, նախադասված է երկրորդ, երրորդ և չորրորդ համադաս բաղադրիչներին, որոնց


հետադաս դիրքով լրացնում է նաև մեկ ուրիշ՝ հինգերորդ բաղադրիչը՝ ձևի պարագայի գործառույթով: Համմտ. նաև հետևյալ օրինակները.

Երբ իջնի գիշերը, ու անցած հուշերը, Անցածի փշերը դառնորեն խոցեն, Որբ, մենակ կգաս դու և կերգես քո սերը, Որ վերջին մեր սերն է աշխարհում գուցե (ԵՉ): Երբ ծյունի փաթիլը մերկ ծառին թառում է, Սրսում են, դողում են, տոկում են լեռները (ՀՍ): Ու երբ նայեց հայոց արքան արծաթացած, Շղարշներն ալիքվեցին, ծածանվեցին ու երբ ընկան, Կանգնեց այնտեղ Կլեոպատրան, որ մերկանդամ մի հրաշք էր հրաշալի, ինչպես կինը միայն (ՎԴ):

Խնդրային հարաբերությամբ կապակցված հանրաստորադաս եզրերը սովորաբար հետադասվում են: Տե՛ս վերի համապատասխան կառույցները, այլև՝

(1) Եվ ասում եմ (2) ու հիշեցնում վերստին, (3) որ աստծուն էլ, այդ միամիտ Աստծու՞ն, (4) եթե երեք սուտ աղոթքով դու դիմես, (3) Ապա չորրորդ սուտ աղոթքով չես խաբի (ՊՍ):

Այստեղ ուշագրավն այն է, որ հանրաստորադաս եզրը ընդմիջված է մի միջադաս ենթաստորադաս եզրով (4): Նախադասության գծային պատկերն է՝



§ 303. *Պարբերույթը բազմաբաղադրիչ նախադասություն է, որ հատկանշվում է բաղադրիչների իմաստային, կշռույթային ու հնչերանգային արվեստավոր ու ներդաշնակ կառուցվածքով:*

Ունի բառաքերականական հետևյալ առանձնահատկությունները:

1. Սկսած իր բաղադրիչների քանակից՝ բարդ նախադասությունը կարող է պարբերույթի բնավորություն ստանալ, եթե կազմված է լինում հանդիպադրվող *երկու զուգադիր* կամ *հակադիր* մասերից: Պարբերույթը, այսպիսով, *երկմասնյա* կառույց է: Նրա երկու մասերը, սակայն, միևնույն արժեքը չունեն: Թեև դրանք գտնվում են փոխպայմանավորվածության մեջ, բայց այս «փոխադարձ անհրաժեշտությունը արտահայտված պիտի լինի առաջին մասի մեջ, որ իր ձևով ու դրությամբ պիտի ակնարկի երկրորդ մասին, իբրև իր էական լրացմանը»[97]:

2. Նշված երկու մասերը ունեն արտասանվածքի որոշակի ձևավորվածություն: Հնչերանգային դրվածքով առաջին մասը բնորոշվում է աստիճանական ամբարձումով, երկրորդ մասը՝ կտրուկ խոնարհումով: Երկու մասերը իրարից բաժանվում են հնչյուններից զերծ մի ժամանակահատվածով, որ կոչվում է *շարահյուսական դադար:* Վերջինս գրավոր խոսքում արտահայտվում է տրոհության համապատասխան նշաններով, առավելապես ստորակետով, մասամբ՝ բութով կամ միջակետով:

3. Հակադրվող կամ զուգադրվող մասերից առաջինը, որ հիմնականն է, օրինաչափորեն պետք է ներկայացնի մի բարդ կառույց՝ ամբողջ բարդ նախադասության սահմաններում, բարդություն՝ բարդության մեջ:

Առաջին մասը կարելի է կոչել պարբերույթի *հիմնամաս* կամ *առաջնային մաս:* Սրա էական հատկություններից մեկն այն է, որ, ինչպես նշվեց, իմաստով առկախ է, ուստի և պահանջում է երկրորդ մասի առկայություն, որով լրացվում է առաջին մասի իմաստը: Երկրորդ մասը կարելի է կոչել *երկրորդային հիմնամաս:* Առաջնային հիմնամասի մյուս հատկությունն այն է, որ պարտադիր կերպով պետք է ունենա ենթամասեր, որոնք կոչվում են պարբերույթի *անդամներ:*

Առաջին հիմնամասի այդ անդամները որպես կանոն պետք է ունենան կշռույթավոր կառուցվածք, լինեն համասեռ, նույնաբնույթ, իմաստային և շարահյուսական ձևավորվածությամբ՝ մերձավոր կամ, որ ավելի ցանկալի է, բառաքերականական տարբեր արտահայտություններով, բայց բովանդակությամբ՝ մերձավոր:

Համասեռ անդամները աստիճանական կարգով, հաջորդաբար պետք է բացահայտեն տվյալ հիմնամասի ենթաթեմայի բովանդակությունը՝ դրանով իսկ հետզհետե սրելով մտային լարվածությունը: Դա էլ հենց մեծացնում է իմաստային և քերականական առկախությունը պարբերույթի երկու հիմնամասերի միջև:

---

[97] *Մ. Աբեղյան,* Հայոց լեզվի տեսություն, էջ 674: Պարբերույթի մասին ավելի մանրամասն տե՛ս նաև *Վարագ Առաքելյան,* Հայերենի պարբերույթը, Եր. 1967:

Երկրորդային հիմնամասի կազմությունը կամընտիր է. այն կարող է ներկայացնել ստորոգումային մեկ միավոր, այսինքն՝ լինել միանդամանի: Կարող է իր կազմում ընդգրկել նաև մեկից ավելի անդամներ: Այս հիմնամասը ամբողջացնում, եզրափակում է պարբերույթը:

§ 304. Պարբերույթի երկու հիմնամասերի միջև առկա են լինում շարահյուսական միևնույն հարաբերությունները, որոնք հատուկ են երկբաղադրիչ բարդ նախադասություններին, այսինքն՝ *համադասություն* կամ *ստորադասություն:* Ըստ այսմ՝ պարբերույթները լինում են՝ ա) *համադասական* և բ) *ստորադասական:*

Ա. *Համադասական նախադասություններից* պարբերույթ են կազմում թե՛ բաղհյուսական, թե՛ ներհակական հարաբերություններով զուգորդված հիմնամասեր ունեցող կառույցները: Բաղհյուսական հարաբերության տարատեսակներից առավելապես գործում է մակաբերական կապակցությունը, ինչպես նաև՝ «հավելական կապակցությունից՝ *ոչ միայն ... այլև* (*այլ նաև* – Ա.Պ.) շաղկապով կազմվածները»[98]:

Ներհակական հարաբերություններից մեծ հաճախականություն ունեն մասնավորապես հակադրական և սահմանափակման կապակցությունները: Հիմնամասերի անդամները կարող են կապակցվել միավորական, հավելական և այլ հարաբերություններով, համապատասխան շաղկապներով, շաղկապական բառերով կամ շարահարությամբ: Հմմտ.

(1) Ծերանում ենք, Պարույր Սևակ, = ծերանում ենք, սիրելի՛ս, = Ծերանում ենք, // (2) Սակայն կարծես դարձյալ խելքի չենք գալիս (ՊՍ)[99]:

Պարբերույթի առաջին հիմնամասը կազմված է երեք անդամներից՝ կապակցված շարահարությամբ, երկրորդ հիմնամասը՝ մեկ անդամից, որ առաջինի հետ կապակցված է ներհակական հարաբերությամբ: Կառուցվածքաիմաստային ներդաշնակությունը ընդգծվում է առաջին հիմնամասի երեք անդամներում միևնույն բայ-ստորոգյալի (*ծերանում ենք*) կրկնությամբ: Առաջին և երկրորդ անդամները ունեն կոչական՝ տարբեր արտահայտություններով (*Պարույր Սևակ* և *սիրելի՛ս*), երրորդը չունի, ինչը համամասնությանը հաղորդում է բազմերանգություն: Այլ օրինակ.

Կերթար, մի ժամի չափ մաև կգար բոլոր անկյունները՝ քաղաքի կշեռքի տակ, ծմերուկների, սեխերի, վարունգների, մածունների շուրջը, կհարցներ բոլորի գինը, հետո կանցներ մսագործի խանութների առջևով, կանգ կառներ, բոլոր մսերը աչքով դիտելուց հետո ներս կմտներ, ձեռքով կտնտղեր մսերի կակուղ, յուղոտ մասերը, // բայց ափսո՜ս, բարիքով լի աշխարհում՝ ամեն ինչ՝ բանկ, կրակի գին, ինչպե՞ս գներ (ԴԴ):

Այս պարբերույթի առաջին մասը ունի յոթ համասեռ, համանման, կառուցվածքային և իմաստային մերձավորությամբ բնորոշվող անդամներ, որոնք թեև տարբեր են ծավալով, բայց նույնական են թեմատիկ նյութի

---

[98] *Մ. Աբեղյան*, հիշ. աշխ., էջ 674:

[99] Ուղղահայաց զուգահեռ գծերը տրոհում են պարբերույթի հիմնամասերը, հորիզոնական զուգահեռ գծերը՝ հիմնամասերի անդամները:

զարգացման տեսակետից, դրանով իսկ ստեղծում են մտքի հետզհետե սաստկացող, աստիճանական լարվածություն, որն իր գագաթնակետին է հասնում վերջին՝ յոթերորդ անդամի վերջում, որին հաջորդում է հանգուցալուծումը, այսինքն թե, ասենք՝ այդ բոլորը տեսավ, շոշափեց, հավանեց, հետո ի՞նչ: Հետո եկողը հենց այդ երկրորդ մասն է, որ պատասխան է տալիս առաջինի՝ առկախ մնացած մասի արտահայտած իմաստին. *Բայց ափսո՜ս, բարիքով լի աշխարհում՝ ամեն ինչ՝ քանկ, կրակի գին, ինչպե՞ս գներ:* Երկրորդ հիմնամասը եռանդամ է, որի առաջին և երկրորդ անդամները կապակցված են միավորական հարաբերությամբ, երրորդը նախորդների հետ՝ մակաբերական:

Առաջին հիմնամասի բոլոր յոթ անդամները կապակցված են միավորական հարաբերությամբ, բոլորը միասին՝ երկրորդ հիմնամասի հետ՝ սահմանափակման հարաբերությամբ: Անդամների կապը իրացված է շարահարությամբ, հիմնամասերի կապը՝ *բայց* ներհակական շաղկապով: Կշռույթավոր ու ներդաշնակ կառույց է սա: Հմմտ. նաև՝

Կարող էի ես աշխարհում ապրել հազար տարի առաջ,
Կարող էի և չծնվել, և չլինել ամենևին.
Կարող էի և չլսել ծառի շրշյուն, ծովի շառաչ,
Չողջունել, չգուրգուրել, չկարոտել այս արևին.
Կարող էի աշխարհ գալ ես նաև հազար տարի հետո
Ուրիշ տեսակ հողի վրա, ուրի՜շ տեսակ աստղի ներքո, //
Բայց երբ էլ որ աշխարհ գայի, ինձ լոկ մի կյանք պիտի տրվեր,
Օրորոցից մինչև շիրիմ մի ճանապարհ պիտի փռվեր,
Միակ հուշն իմ ապրած կյանքի լոկ երկու թիվ պիտի լիներ,
Եվ արանքում՝ բարակ մի գիծ (ՀՍ):

Առաջին հիմնամասը բաղկացած է չորս անդամներից, որոնցից յուրաքանչյուրը սկսվում է բայական բաղադրյալ ստորոգյալի նույնական եզրերից առաջինով (*կարող էի*): Թեմատիկ տարրը զարգացնում են ստորոգյալների երկրորդ եզրերը, որոնց իմաստը ծավալվում է այլևայլ լրացումներով և լրացումների լրացումներով՝ առաջացնելով մտային համապատասխան լարվածություն, որ առաջին հիմնամասի ձևավորման նախապայմաններից մեկն է: Մեկ նախապայման ևս կա. բոլոր անդամները համասեռ են: Դրանք կապակցված են միավորական հարաբերությամբ, ձևավորված են կառուցվածքային միևնույն կաղապարով, կապակցված՝ շարահարությամբ:

Երկրորդ հիմնամասը ընդգրկում է հինգ բաղադրիչ, որոնց շարահյուսական հարաբերությունները, սակայն, տարբեր են առաջինից: Այստեղ առկա են և՛ համադասություն, և՛ ստորադասություն: Երկրորդից մինչև հինգերորդ եզրերը միմյանց հետ կապված են համադասական կապակցությամբ, ավելի ստույգ՝ բաղհյուսական կապակցության հավելական տարատեսակով. սրանց բոլորին միաժամանակ ստորադասված է *երբ էլ որ աշխարհ գայի* գիջման պարագա կախյալ նախադասությունը, որ գոյացրել է *հանրաստորադասությամբ* ենթակառույց: Երկու հիմնամասերի միջև առկա է համադասական հարաբերություն՝ սահմանափակման ենթատեսակով:

Սիա ևս մի համադասական պարբերույթ, որի երկու հիմնամասերից յուրաքանչյուրը բարդացված է ստորադասական կապակցություններով:

Դեռ ոչ մի ժամանակ նրա շարժումներն անպես զգաստ չէին եղել, ինչպես այդ օրը, դեռ ոչ մի ժամանակ նրա հայացքն այնպես սառը չէր եղել, ինչպես այդ օրը, վերջապես՝ դեռ ոչ մի ժամանակ նրա ձայնն այնպես հանդարտ և միակերպ չէր եղել, ինչպես այդ օրը, – // իսկ այդպես լինում են միայն մահվան դատապարտվածները, որոնք արդեն հաշտված են լինում իրենց դրության հետ և սպասում են նշանակյալ ժամին, երբ իրենք աշխարհիս մեջ այլևս գոյություն չպետք է ունենան (ՆԴ):

Սա բաղկացած է ներհակական հարաբերությամբ կապված երկու հիմնամասերից, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է անավարտ բազմաբաղադրիչ մի նախադասություն՝ պարբերույթի սահմաններում: Առաջին մասը եռանդամ է: Անդամներից ամեն մեկը բարդացված է բաղդատության երանգով ձևի պարագա կախյալ բաղադրիչով, որի ստորոգյալը զեղչված է գերադաս եզրի ստորոգյալի հետ նույնական լինելու պատճառով [...*ինչպես այդ օրը (էին եղել)*]: Երկրորդ մասը բարդացված է համաստորադասությամբ (վերջին բաղադրիչը): Առաջին հիմնամասի անդամները ունեն իմաստային մերձակցություն: Դրանք հաջորդաբար զարգացնում են ու ամբողջացնում հակադրության համար հիմք ծառայող թեմատիկ տարրը: Նկատելի չափով պահպանված են նաև երեք անդամների կառուցվածքային նույնությունը և ծավալային համամասնությունը, որոնք ապահովում են ասույթի կշռույթավոր ընթացքը նաև արձակ խոսքում:

Բ. Պարբերույթի երկու հիմնամասերի միջև կարող է լինել նաև *ստորադասական հարաբերություն:* Ստորադասական պարբերույթի հիմնամասերի ձևավորման սկզբունքը քիչ բանով է տարբերվում համադասական կառույցի պահանջներից, եթե նկատի չունենանք երկու մասերի միջև եղած լրացում-լրացյալի հարաբերությունը: Այստեղ ստորադաս հիմնամասը ներկայացնում է համասեռ ու միաբնույթ կախյալ բաղադրիչներ: Սրանք ունենում են շարահյուսական կապակցության նույնական եղանակներ ու միջոցներ, բայ-ստորոգյալների եղանակաժամանակային նույնական կամ մերձավոր կիրառություններ և թեմատիկ նյութի աստիճանական ծավալումով ստեղծում են հետզհետե սաստկացող մտային ու զգացական լարվածություն, որը իր հանգուցալուծումն է ստանում գերադաս հիմնամասում: Վերջինս եզրափակում է պարբերույթը՝ վերջնականապես բացահայտելով հեղինակային ասույթի բուն էությունը: Այստեղ ևս ենթադրվում է անդամների սահուն, համաչափ, կշռույթավոր ու ներդաշնակ շարժում: Հմմտ.

Երբ որ բացվին դռներն հուսո,
Երբ մեր երկրեն փախ տա ձմեռ,
Չքնաղ երկիրն մեր Արմենիո
Երբ փայլե յուր քաղցրիկ օրեր,
Երբ որ ծիծառն յուր բույն դառնա,
Երբ որ ծառերն հագնին տերև, //
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա՝
Աշխարհ, որ ինձ ետուր արև (ՆՌ):

Բաղկացած է երկու՝ գերադաս և ստորադաս հիմնամասերից: Ստորադաս մասը ներկայացնում է հինգ նույնաբնույթ ու նույնակազմ համաստորադաս անդամներ՝ ժամանակի պարագայի շարահյուսական գործառույթով: Գերադաս մասը, առանձին վերցրած, մի ստորադասական կապակցություն է՝ որոշչային կախյալ նախադասությամբ (... *որ ինձ ետուր արև*): Միակ, ո՛չ այնքան էական շեղումը պարբերույթի կանոնական կառույցից երրորդ անդամի *երբ* հարաբերականի տեղաշարժն է տողամեջ՝ փոխանակ տողասկզբում լինելու, ինչպես մյուս չորս անդամներինը:

Այլ մեկ օրինակ, կարելի է ասել՝ անթերի.

Եթե քո շնչից չի ջերմանալու
Վշտի պաղ հողմից մրսած մի սիրտ,
Եթե քեզ վրա չի զայրանալու
Քո ծաղկած հողի ոսոխը բիրտ,
Եթե քեզանով չի զովանալու
Սիրո բողբոջը շոյող մի ձեռք, //
Իզուր ես կյանքում բախտ որոնելու,
Լավ է՝ հավիտյան լռես, իմ ե՛րգ (ՀՍ):

Ստորադաս հիմնամասը բաղկացած է ձևակազմական միևնույն արտահայտություններն ունեցող երեք նույնասեռ անդամներից՝ պայմանի պարագայական գործառույթով: Գերադաս մասը ներկայացնում է բաղհյուսական մի կապակցություն՝ մակաբերական իմաստային հարաբերությամբ: Վերջին եզրը իր հերթին ունի ստորադաս մի բաղադրիչ՝ ենթակայական գործառույթով:

Պարբերույթի ոչ միայն գերադաս, այլև ստորադաս հիմնամասը հաճախ ունենում է ստորոգումային մեկից ավելի միավորներով բարդացված անդամներ, որոնց ենթաբաղադրիչները (պարզ նախադասությունները) կարող են կապակցված լինել թե՛ համադասությամբ, թե՛ ստորադասությամբ: Հատույթավորումը այդ դեպքում կատարվում է անդամների կապակցման ձևական միջոցներով՝ շաղկապների կամ շաղկապական բառերի օգնությամբ: Վերջիններս ազդարարում են յուրաքանչյուր անդամի սկիզբը:

Հանգավոր խոսքում տողավերջի որոշակիորեն հերթագայվող հանգը մատնանշում է նաև անդամի ավարտը: Այսպիսի խոսքում անդամները բնորոշվում են նաև ծավալային ներդաշնակությամբ, անդամամասերի ընդգրկած ռիթմական միավորների համաչափությամբ ու կանոնավոր ընթացքով: Հմմտ.

(...) Երբ հոտն էլ սուրճի նրան հիշեցնում
Եվ քո գունազարդ քնի փոխարեն
Անքնություն է փռում սպիտակ,=
Երբ աստղերն իրենց կլորակ սանրով
Մազերդ են սանրում, իսկ դու վերստին
Շոյանքի սովոր քո մազերի մեջ
Նույն հանգստարար մատներն ես զգում... //

Միշտ, ամեն անգամ պաշարում է քեզ
Նույն զգացումը անճեղք ու անդուռ, =
Եվ հասկանում ես, որ մարդ, ի վերջո,
Նորից չի սիրում, սիրում է կրկի՜ն (ՊՍ):

Այստեղ ևս ստորադաս հիմնամասը ընդգրկում է ռիթմական, հնչերանգային և կառուցվածքային հատկանիշների նույնականությամբ բնորոշվող երեք անդամներ՝ ժամանակի պարագայի շարահյուսական գործառույթով: Համաստորադաս եզրերը, սակայն, ունեն տարբեր կազմեր: Առաջին անդամը ունի ստորոգումային մեկ միավոր: Երկրորդ անդամը համադասական մի կապակցություն է՝ միավորական հարաբերությամբ: Երրորդ անդամը նույնպես համադասական մի կապակցություն է, բայց հակադրական տարատեսակով: Չորրորդը, կամ, ավելի ստույգ՝ երկրորդ հիմնամասի առաջին անդամը, նմանապես մենաստորոգումային կազմություն է, իսկ հինգերորդը *կրկին* բարդացված է համաստորադասությամբ (*Եվ հասկանում ես,որ մարդ, ի վերջո, Նորից չի սիրում, սիրում է կրկի՜ն*): *Կրկին* ասելով՝ նկատի է առնված այն, որ այդ նույն անդամը արդեն իսկ ունի երեք համաստորադաս լրացումներ, որոնք պարբերույթի առաջին երեք անդամներն են: Բոլոր անդամները զարգանում են հնգավանկ բարդ ոտքերով, ինչը առաջ է բերում հնչյունային դաշնակ, կանոնավորում կշռույթը:

§ 305. Պարբերույթը իր երկու հիմնամասերով ներկայացնում է մի կուռ ու կառուցիկ ամբողջություն: Եվ քանի որ այդ երկու հիմնամասերի միջև եղած հարաբերությունը կա՛մ *համադասական* է, կա՛մ *ստորադասական* (տե՛ս § 304), ուստի և պարբերույթը հարաբերակցում է երկբաղադրիչ համադասական կամ ստորադասական նախադասություններին: Դրան համապատասխան էլ նրա հիմնամասերը կապակցվում են կա՛մ համադասական շաղկապներով, կա՛մ ստորադասական շաղկապներով ու հարաբերական դերանուններով: Հիմնամասերի կապակցությունը հազվադեպ կարող է իրացվել նաև շարահարությամբ. անդամների աննշույթ կապակցությունը հաճախադեպ է:

Ստորադասական պարբերույթի առաջին հիմնամասը սովորաբար ընդգրկում է համաստորադաս կախյալ բաղադրիչները, երկրորդ մասը՝ գերադաս եզրը կամ եզրերը: Տե՛ս վերի օրինակները:

Պարբերույթը խոսքը դարձնում է արտահայտիչ, հուզաթաթավ, հանդիսավոր ու վսեմ: Այդ իսկ պատճառով նրա կիրառական ոլորտը ընդգրկում է առավելապես գրական-գեղարվեստական աղբյուրները, մասնավորապես՝ չափածոն, մասամբ նաև հրապարակախոսությունը, որտեղ պահանջվում են քաղաքական սուր պաթոս, ազդեցիկ ու ներգործող ոճ:

ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՊԱՐԶԵՑՈՒՄ (ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ)

§ 306. *Բարդ ստորադասական նախադասության պարզեցումը (փոխակերպումը) կախյալ բաղադրիչի փոխարինումն է մեկ բառով կամ բառակապակցությամբ արտահայտված, ստորոգումային միավոր չհանդիսացող անդամով:*

Միտքը, նրա իմաստային երանգները չհաշված, կարելի է արտահայտել թե՛ երկստորոգումային, թե՛ մենաստորոգումային շարահյուսական կառույցներով: Օրինակ՝

(1) Ո՞վ է տեսել, որ քարտեզը կոկորդ սեղմող մի ծեռք լինի (ՍԿ): (2) Ո՞վ է տեսել քարտեզի՝ կոկորդ սեղմող մի ծեռք լինելը:

Երկու նախադասությունների առարկայական բովանդակությունը նույնն է, սակայն տարբեր են արտահայտության եղանակները: Նույն (գրեթե նույն) միտքը առաջին տարբերակում ձևավորվել է երկու ստորոգումային միավոր ունեցող նախադասությամբ, որի եզրերից մեկը գերադաս է, մյուսը՝ ստորադաս, երկրորդ տարբերակում՝ մեկ:

Բարդ ստորադասական նախադասությունը, այսպիսով, *պարզեցվել է* կամ, նորագույն տերմինաբանությամբ, *փոխակերպվել* պարզ նախադասության: Իմաստով նույնական հիշյալ երկու նախադասությունները հայոց լեզվամտածողության դրսևորման երկու տարբեր ձևեր են, որոնք իրարից անկախ և իրար կողքի հավասարապես գոյակցում են լեզվում և չեն բացառում մեկը մյուսին: Նայած հեղինակային նախասիրությանը, հաճախ խոսքային իրադրությունից ելնելով՝ հոմանիշային զուգահեռ այդ ձևերից մերթ մեկն է կիրառվում, մերթ՝ մյուսը: Փոխակերպումը, ուրեմն, ոճական արժեք ունի, այդ իսկ պատճառով սովորաբար ուսումնասիրվում է ոճաբանության մեջ, որպես հռետորական արվեստի արտահայտչաձևերից մեկը[100]:

Լեզվի տեսության մեջ փոխակերպումը հետազոտվում է այնքանով, որքան որ անհրաժեշտ է՝ լուսաբանելու կախյալ նախադասության կառուցվածքային ինչ-ինչ առանձնահատկություններ, այլև, որ բնավ երկրորդական չէ, խորացնելու բարդ ստորադասական նախադասության շարահյուսության ուսուցումը:

§ 307. Բարդ ստորադասական նախադասությունը և նրա փոխակերպված տարբերակը թեև մտքի արտահայտման զուգահեռ ձևեր են, որոշ իմաստով՝ նույնական, բայց այդ նույնությունը բացարձակ չէ, այլ հոմանիշային, որով և պայմանավորված է դրանց կառուցվածքային և ոճական տարարժեքությունը: Փոխակերպումը, սակայն, ունի մի անխախտ պայման՝ այն, որ կախյալ բաղադրիչը և նրա փոխակերպված տարբերակը պետք է ունենան շարահյուսական միևնույն գործառույթը, լինեն շարահյուսական

---

[100] Այս մասին տե՛ս նաև *Մ. Աբեղյան,* Հայոց լեզվի տեսություն, էջ 603, *Գ. Գարեգինյան,* Ժամանակակից հայոց լեզու, բարդ նախադասություն, էջ 344:

հոմանիշներ, ասենք՝ ենթական պիտի մնա ենթակա, ստորոգելին՝ ստորոգելի, որոշիչը՝ որոշիչ և այլն:

Հարկ է նշել, որ փոխակերպել կարելի է ոչ բոլոր ստորադասական կապակցությունները: Ըստ այսմ ստորադասական բարդ նախադասությունները ներկայացնում են *փոխակերպման չենթարկվող և փոխակերպման ենթարկվող* կառույցներ:

§ 308. *Փոխակերպման չենթարկվող* կառույցներ: Բարդ ստորադասական նախադասության համակարգում զգալի թվով կառույցներ կան, որոնք փոխակերպման ենթակա չեն: Դա պայմանավորված է քերականական և իմաստային չորս գործոններով, որոնք են՝ 1. գերադաս և ստորադաս եզրերի *կապակցության եղանակն ու միջոցը*, 2. կախյալ եզրի *լրացական հարաբերությունը*, 3. *իմաստային նրբերանգների կորուստը*, 4. *ոճական - արտահայտչական անհարթությունը:*

1. Կան կապակցության որոշ ձևեր, որոնք արգելք են դառնում փոխակերպման:

Այն բարդ նախադասությունները, որոնց կախյալ եզրը, անկախ իր շարահյուսական գործառույթից, գերադասի հետ կապակցվում է *ուր* կամ *որտեղ* հարաբերականներով, ենթակա չեն փոխակերպման: Այս հարաբերականներով, ինչպես նշվել է (§ 233, Ա, Բ, Գ), կապակցվում են որոշչային որոշակի կարգի և տեղի, մասամբ նաև գիջման պարագա կախյալ նախադասությունները: Ո՛չ առաջինը, ո՛չ երկրորդները չեն փոխարինվում մի բառով կամ բառակապակցությամբ արտահայտված անդամով: Հմմտ.

Մեր քարպփի է, մեր խավար ծորը, *որտեղ ոչինչ չի երևում* (ԱԲ): Առաջին անգամ իմ հայրենիքում, *ուր հոսում էին արնահուն գետեր*, Այն այգաբացի երգը գրնգուն իմ բարձրաշառաչ երգն է ավետել (ԵՉ): *Որտեղ կատվին պատահում է*, վեր է թռչում, վրա վազում (ՀԹ): Նա ծնվել էր այնտեղ, *ուր կան լեռներ ժայռոտ* (ՊՍ):

Առաջին և երկրորդ կախյալ նախադասությունները որոշչային գործառույթ ունեն, երրորդը և չորրորդը՝ տեղի պարագայի: Այդ բարդ նախադասություններից ոչ մեկը փոխակերպման ենթակա չէ:

Փոխակերպում թույլ չեն տալիս այն կապակցությունները, որոնք իրացվել են *ինչ, որ* և *ով* հարաբերականների *թեքված* ձևերով (սեռական-տրական, բացառական և այլ հոլովներով): Հմմտ.

Իսկ ատոմյան ռու՞մբը, *որով կամենում են ահաբեկել, անդարձ թաղել նոր խաղաղված աշխարհի հանգիստը* (ՊՍ): Այս նա՛ է խոսում, *ում հաղթական ծայնի արձագանքը դեռ չի մարել գոթական շենքի կամարների տակ սուր* (Ն.տ.):

Բացառություն են կազմում.

Ա. Այն կառույցները, որոնց ստորադաս եզրը կապակցվել է թեք հոլովով դրված և *ուղիղ խնդրի* շարահյուսական գործառույթ ունեցող նույն հարաբերականներով, ինչպես՝ Ընտրիր նրան, *որին (ում) կհավանես:* Փոխակերպված տարբերակն է՝ Ընտրիր *հավանածիդ* (կամ *հավանածդ*):

Բ. Այն նախադասությունները, որոնց կախյալ եզրը կապակցվել է *հատկացուցչի* դեր կատարող հարաբերականով և ունի բաղադրյալ ստորոգյալ՝ *ածական վերադրով*, ինչպես՝ Լեռան գագաթը կարող է բարձրանալ միայն այն լեռնագնացը, *որի սիրտն ու թոքերը առողջ են:* Լեռան գագաթը կարող է բարձրանալ միայն *սիրտն ու թոքերը առողջ* լեռնագնացը:

Փոխակերպման ենթակա չեն այն կառույցները, որոնց եզրերը կապակցող հիշյալ հարաբերականները *կապի խնդիր* են (*ում համար..., որի համար..., ում մասին..., որի մասին, ինչի մասին, ում մեջ...* և նման կաղապարներով): Հմմտ.

Նրան շրջապատել էին քաջակորով զինակիցները, *որոնց մեջ առաջին տեղը բռնել էին հաղթահասակ Սահակ Պարթևը և ջլապինդ Մեսրոպ Տարոնացին* (Ր):

2. Չեն փոխակերպվում այն նախադասությունները, որոնց կախյալ բաղադրիչը իր քերականական գործառույթով *չի հարաբերակցում* պարզ նախադասության որևէ անդամի: Այդպիսի կախյալ բաղադրիչները երկուսն են՝ ա) *հետևանքի պարագա* և *բ) ամբողջ գերադաս եզրին լրացնող ստորադաս նախադասությունները:* Հմմտ.

[Տեսա՞ր, որ նրան ատում է Մոսին, Չեն ուզում, տեսա՞ր, նրան հերն ու մերդ:] Դու քանի՞ գլուխ ունիս քո ուսին, *որ վեր ես կենում Փախչում նրա հետ* (ՀԹ): Այդ վեճերի միջոցին երբեմն հիշում են իմ շաքար ուտելը, *որից ես ամաչում եմ սաստիկ* (ՍՋ): Առաջին կառույցում կախյալ եզրը հետևանքի պարագա է, երկրորդում կախյալ բաղադրիչը լրացնում է ամբողջ գերադաս եզրին: Կառույցներից ոչ մեկը չի փոխակերպվում:

3. Պարզ նախադասության չեն վերածվում այն բարդ ստորադասական նախադասությունները, որոնց փոխակերպված տարբերակում *չեն պահպանվում* ելակետային կառույցներում առկա իմաստային երանգավորումները: Այսպես. որոշչային կախյալ նախադասությամբ բարդ նախադասությունները ըստ մեծի մասին փոխակերպվում են՝ չհաշված սույն բաժնի առաջին կետում նշվածները: Սակայն կան նաև որոշչային այնպիսի նախադասություններ, որոնց՝ համապատասխան բառով կամ բառակապակցությամբ դրսևորված անդամով փոխարինվելուն խոչընդոտում է ոչ թե կապակցական եղանակը, այլ իմաստային երանգների անխուսափելի կորուստը: Այդպիսիք են *հետևանքային* և *նպատակային* երանգներով օժտված որոշչային կախյալ նախադասությունները (տե՛ս § 233, Գ և Դ կետերը): Հմմտ.

Եղբոր մթագնած հայացքում այնպիսի վճռականություն, այնպիսի դաժանություն կար, *որ Սուրիայիկ թվաց* [, թե նա հոգեկան լուրջ հիվանդ է] (ԳՍԹ): Ով էնպիսի մի սուտ ասի, *որ ես ասեմ* [սուտ է...] (ՀԹ):

Առաջին որոշչային կախյալ բաղադրիչը ունի հետևանքային, երկրորդը՝ նպատակային երանգ: Ոչ մեկը չի կարող փոխարինվել որոշչային գործառույթ ունեցող համապատասխան բառով կամ բառակապակցությամբ, քանի որ կանհայտանան նպատակային և հետևանքային իմաստային երանգները:

Ճիշտ այդ նույն հիմունքով չեն փոխակերպվում այն բարդ նախադա-

սությունները, որոնց ստորադաս եզրերը ձևի կամ չափի պարագաներ են՝ միևնույն *հետևանքային* կամ *նպատակային* երանգներով: Հմմտ.

1. Ամեն ինչ այնպես անդորր է ու կույս, *Որ չեմ հավատում կարմիր երազին* (ԵՉ): 2. Եվ մի անգամ ինձ այնպես չես նայում (...), *որ այսպես լքված չզգամ ինձ* (ՊՍ): 3. Իսկ երբեմն էլ մուրճով այնքան էր ծեծում, *որ խոփը կորցնում էր իր ձևը* (ԱԲ): 4. Բայց մենք իհարկե այնքան միամիտ չէինք, *որ հավատայինք նրա սուտ խոստումներին:*

Առաջին և երկրորդ օրինակներում կախյալ բաղադրիչները ձևի պարագաներ են՝ համապատասխանաբար հետևանքային և նպատակային երանգներով. երրորդ և չորրորդ նախադասություններում ստորադաս եզրերը չափի պարագաներ են՝ նույնպես հետևանքային և նպատակային հարաբերություններով: Չորս կառույցներից և ո՛չ մեկը չի կարելի փոխակերպել, քանի որ պարզեցված տարբերակներում չեն արտահայտվի ո՛չ հետևանքային, ո՛չ նպատակային հարաբերությունները: Հմմտ.

Եվ մի անգամ ինձ չես նայում՝ *ինձ այսպես լքված չզգալու պես (նման):* Ակնհայտ է, որ նպատակային երանգը չի պահպանվել: Կամ՝ Իսկ երբեմն էլ մուրճով ծեծում էր *խոփը իր ձևը կորցնելու չափ:* Այստեղ էլ հետևանքային երանգն է կորել: Կրկին կարդանք բնագիրը. Իսկ երբեմն էլ մուրճով այնքան էր ծեծում, *որ խոփը կորցնում էր իր ձևը:* Դժվար չէ նկատել, որ ընդգծված հատվածը նշում է գերադաս եզրի բայ-ստորոգյալի արտահայտած գործողության կատարման քանակական հատկանիշի հետևանքը, այսինքն՝ *այնքան էր ծեծում, որի հետևանքով խոփը կորցնում էր իր ձևը:* Իմաստային այս երանգն է ահա, որ չի պահպանվել փոխակերպված տարբերակում:

4. Բարդ ստորադասական նախադասությունը չի կարող փոխակերպվել, եթե արդյունքում ստացվում է ոճական և արտահայտչական տեսակետից անհարթ մի կառույց: Այսպես՝ ենթակայական կախյալ նախադասությամբ շատ կառույցներ փոխակերպվում են, բայց հաճախ կարող են ստացվել ոճական անհարթություններ: Այդպիսիք են, օրինակ, գերադաս բաղադրիչում *թվալ* բայով կազմված ստորոգյալ ունեցող նախադասությունները, ինչպես՝

Հեռվից նայողին *թվում էր, որ ո՛չ թե ժամիարն է քաշում զանգերը, այլ զանգերն են ծգում նրա թևերը, նախ՝ աջ, ապա՝ ձախ* (ԱԲ):

Փոխակերպման հնարավոր տարբերակ է՝ Հեռվից նայողին թվում էր *ո՛չ թե ժամիարի՝ զանգերը քաշելը*...: Ոճական նման անհարթության պատճառով պետք է խուսափել համապատասխան կառույցների փոխակերպումից:

Արտահայտչական տեսակետից նման ոչ ցանկալի կառույցներ կարող են գոյանալ նաև լրացական այլ հարաբերություններ ունեցող բարդ նախադասությունների փոխակերպումից, ինչը արգելք է հանդիսանում դրանց պարզեցմանը:

§ 309. *Փոխակերպման ենթարկվող կառույցներ:* Բարդ ստորադասական նախադասությունը փոխակերպելիս կախյալ բաղադրիչը ունենում է

երեք տարբեր դրսևորումներ:

1. *Վերածվում է մեկ բառով արտահայտված անդամի:* Հմմտ. *Ինչ որ ցանես,* այն կհնձես (ժող. առած): → Կհնձես *ցանածդ: Ինչ որ տեսա,* ինձ բնավ չզարմացրեց: → Ինձ բնավ չզարմացրեց *տեսածս:* Պոկեցի այն ծաղիկը, *որ ամենահոտավետն էր:* → Պոկեցի *ամենահոտավետ* ծաղիկը:

2. *Վերածվում է անվանական* (գոյականական, ածականական) *բառակապակցությամբ արտահայտված* համապատասխան անդամի: Հմմտ.

Վախթանգը, *որ իմ ուսանողական տարիների ընկերն էր,* շատ վաղ հրաժեշտ տվեց կյանքին: → Վախթանգը՝ *իմ ուսանողական տարիների ընկերը* ... կամ *Իմ ուսանողական տարիների ընկեր* Վախթանգը ...: Հայր սուրբը իրեն գցեց մարագը, *որ լի էր փախստականներով ու հիվանդներով* (ՂԴ): → Հայր սուրբը իրեն գցեց *փախստականներով ու հիվանդներով լի* մարագը :

3. *Վերածվում է բայական բառակապակցությամբ,* այսինքն՝ *դերբայական դարձվածով* արտահայտված անդամի: Հմմտ. Մի՞թե ձեզ հայտնի չէ, *որ նրա մայրը մեռել է հոգեկան հիվանդների ապաստարանում* (ՆԴ): → Մի՞թե ձեզ հայտնի չէ *նրա մոր՝ հոգեկան հիվանդների ապաստարանում մեռնելը:* [Մասրենին] Բոց է բրթռուն, *որ բռնկվել է գարնան կայծակից* (ՎԴ): → [Մասրենին] *Գարնան կայծակից բռնկված* բոց է բրթռուն:

Հարկ է նշել, որ այնքան էլ ճիշտ չէ, եթե չասենք՝ սխալ է բավականաչափ տարածված այն տեսակետը, թե կախյալ նախադասությունը փոխակերպելիս միշտ ստացվում է դերբայական դարձված: Դերբայական դարձվածը վերածման արդյունքում ստացված երեք հնարավոր փոփոխակներից մեկն է միայն, նշված երեք տարբերակներից երրորդը:

§ 310. Բարդ ստորադասական նախադասությունները փոխակերպելիս կատարվում են կառուցվածքային որոշակի փոփոխություններ:

1. *Երկստորոգումայինի* կառույցը վերածվում է *մենաստորոգումայինի* կառույցի, որ նշանակում է, թե բարդ նախադասությունը դառնում է պարզ նախադասություն: Սրա՝ համառոտ թե ընդարձակ լինելը կախված է կախյալ բաղադրիչի, ինչպես նաև գերադաս եզրի ծավալից: Հմմտ.

Ինչ որ կորցրել էի, գտա: → *Կորցրածս գտա:* Վերածվեց պարզ համառոտ նախադասության: *Ինչ որ կորցրել էի երեկ՝ երեկոյան, գտա այսօր:* → *Երեկ՝ երեկոյան, կորցրածս գտա այսօր:* Վերածվեց պարզ ընդարձակ նախադասության:

2. *Օտարվում է* կապակցության *բառական միջոցը՝ շաղկապը* կամ *հարաբերականը,* հարկավ, եթե կա: Եթե կա *հարաբերյալ,* այն ևս օտարվում է: Հմմտ.

Զգաց, *որ իր ազատ հոգին գերի է դարձել:* → Զգաց *իր ազատ հոգու՝ գերի դառնելը:* Օտարված է շաղկապը: Վերջին եկողները վերցնում էին *այն, ինչ առաջինները չէին վերցրել՝ անարժեք լինելու պատճառով* (ԱԲ): → Վերջին եկողները վերցնում էին *առաջինների՝ անարժեք լինելու պատճառով չվերցրածը:* Օտարվել են հարաբերյալն ու հարաբերականը:

3. Որոշակի փոփոխության է ենթարկվում կախյալ բաղադրիչի *ստորոգյալը:* Փոփոխության տարատեսակությունը պայմանավորված է կառուցվածքային երկու գործոններով՝ ա) գերադաս և ստորադաս եզրերի *կապակցության եղանակով,* բ) *ստորոգյալի տարատեսակով՝* պարզ թե բաղադրյալ լինելով:

Ա. *Եթե կապակցությունն իրացված է շաղկապով,* կախյալ եզրի դիմավոր բայը՝ լինի պարզ ստորոգյալ թե բաղադրյալ ստորոգյալի հանգույց, փոխարինվում է *անորոշ դերբայով* և ստանում իր գործառույթին համապատասխան հոլովը կամ դառնում կապի խնդիր: Ըստ որում՝ պարզ ստորոգյալը վերածվում է *միևնույն բայի սերող ձևի՝ անորոշ դերբայի:* Հանգույցը փոխակերպման ժամանակ ունենում է երկու դրսևորում: Եթե արտահայտված է *է (եմ)* էական բայով, փոխարինվում է *լինել* անորոշ դերբայով. եթե արտահայտված է վերացական կոչված որևէ բայով, փոխարինվում է նույնի անորոշ դերբայով: Հմմտ.

[Պետք էր տեղահան անել քարը,] Բայց պարզվեց, *որ դա այնքան էլ հեշտ չէր* (ԴԴ): → Բայց պարզվեց *դրա այնքան էլ հեշտ չլինելը:* Ամեն ինչ անում էր, *որ իր որդուն վաճառական դարձնի* (ԱԻ): → Ամեն ինչ անում էր *իր որդուն վաճառական դարձնելու համար:*

Ճիշտ այս նույն սկզբունքով են փոխակերպվում նաև այն կառույցները, որոնց բաղադրիչները կապակցված են *շարահարությամբ,* և սպասելի նշույթը *շաղկապ է* և ոչ թե *հարաբերական:* Հմմտ.

Այսուհետ ինձ համար միևնույնն է՝ *դու հո՛ղ կփորես, թե՝ կոմբինատ կկառուցես* (ՍԽ): → Այսուհետ ինձ համար միևնույնն է *քո՝ հո՛ղ փորելը, թե կոմբինա՛տ կառուցելը:*

Բ. *Եթե կապակցությունն իրացված է հարաբերական դերանվամբ,* ստորադաս եզրի դիմավոր բայը՝ 1) *փոխարինվում է անկախ դերբայներից որևէ մեկով,* 2) կամ *օտարվում է:*

1. Եթե ստորոգյալը *պարզ է,* կախյալ նախադասության շարահյուսական գործառույթի և այդ իսկ եզրի ստորոգյալի եղանակաժամանակային կիրառության համեմատ՝ դիմավոր բայը վերածվում է *անորոշ, անկատար երկրորդ (համակատար), ապառնի (ապակատար) երկրորդ, հարակատար* և *ենթակայական* դերբայներից որևէ մեկի:Հմմտ.

Օ՜, կույր է նա, *ով չի տեսնում երկինք հասած կրակը թեժ* (ԵՉ): → Օ՜, կույր է *երկինք հասած կրակը թեժ չտեսնողը:* Կախյալ բաղադրիչը ենթակայական է, նրա *Չի տեսնում* բայ-ստորոգյալը կիրառված է սահմանական եղանակի ներկա ժամանակածևով, ուստի և փոխարկվել է ենթակայական դերբայի: Ժխտական խոնարհումը արտահայտված է դերբայի ծայրին դրված *չ* մասնիկով (*չտեսնողը*) :

Նա, *ով չի տեսել արևածագը Ծիրնկատարից,* թող երբե՛ք չասի [, թե ինքը ապրել է աշխարհում] (ԽԴ): → *Ծիրնկատարից արևածագը չտեսածը* թող երբեք չասի...: Նույն գործառույթն ունեցող կախյալ եզրի բայ-ստորոգյալը՝ *չի տեսել,* կիրառված է սահմանականի վաղակատար ժամանակածևով, ուստի և փոխարինվել է հարակատար դերբայով:

Եվ տոթին, *երբ մեղուներն* էին խմբերով իջնում առվակի ափերին, Բոլոր -քարի մոտ նստած երկու ծերունի լսում էին թափվող ջրի ձայնը և բարակ զնգոցը (ԱԲ): → Եվ տոթին՝ մեղուները՝ *առվակի ափերին խմբերով իջնելիս* ...: Կախյալ բաղադրիչը մասնավորեցնող պարագայական բացահայտիչ է՝ ժամանակային իմաստով, նրա բայ ստորոգյալը դրված է սահմանական եղանակի անցյալ անկատար ժամանակաձևով, ուստի և փոխարինվել է անկատար երկրորդ դերբայով (*իջնելիս*) և այլն:

2. *Եթե ստորոգյալը բաղադրյալ է,* և հանգույցը՝ *է (եմ) էական բայը,* վերջինս սովորաբար օտարվում է, իսկ ստորոգելին ստանձնում է այն գործառույթը, ինչ որ ունի ամբողջը կախյալ եզրը: Հմմտ.

Գործը հանձնարարվեց այն սպային, *որը մասնագիտությամբ կապավոր էր* (ԲՀ): → Գործը հանձնարարվեց *մասնագիտությամբ կապավոր* սպային:

Ստորոգելին *ածականով* արտահայտված լինելու դեպքում մնում է անփոփոխ, եթե կախյալ եզրը հատկանշային, ասենք՝ որոշչային իմաստ ունի. իսկ եթե խնդրային իմաստ ունի, կիրառվում է փոխանվանաբար՝ ստանալով անհրաժեշտ հոլովը: Հմմտ.

Գործը հանձնարարվեց այն սպային, *որը կոչումով ամենակրտսերն էր:* → Գործը հանձնարարվեց *կոչումով ամենակրտսեր* սպային: Գործը հանձնարարվեց նրան, *ով կոչումով ամենակրտսերն էր:* → Գործը հանձնարարվեց *կոչումով ամենակրտսերին* և այլն:

Եթե բաղադրյալ ստորոգյալի հանգույցը արտահայտված է վերացական մի բայով, այն օրինաչափորեն պահպանվում է և փոխարինվում համապատասխան անկախ դերբայներից մեկնումեկով՝ ճիշտ այնպես, ինչպես պարզ ստորոգյալի դեպքում: Հմմտ.

Գործը հանձնարարվեց այն սպային, *որը մասնագիտությամբ կապավոր էր համարվում* (*էր հանդիսանում* և այլն): Փոխակերպված տարբերակն է՝ Գործը հանձնարարվեց *մասնագիտությամբ կապավոր համարվող* (*հանդիսացող* և այլն) սպային: Գործը հանձնարարվեց նրան, *ով կոչումով ամենակրտսերն էր համարվում: ...Կոչումով ամենակրտսերը համարվողին* և այլն:

Բաղադրյալ ստորոգյալի *է (եմ)* էական բայով արտահայտված հանգույցը օրինաչափորեն փոխարինվում է *լինել* բայի անհրաժեշտ դերբայական ձևերով, *եթե դրված է լինում ժխտական խոնարհմամբ* (*չէ* կամ *չեմ*): Դերբայը ստանում է *չ* ժխտական մասնիկը: Հմմտ.

Գործը հանձնարարվեց այն սպային, *որը կոչումով ամենակրտսերը չէր:* → Գործը հանձնարարվեց *կոչումով ամենակրտսերը չլինող (չեղող)* սպային: Գործը հանձնարարվեց նրան, *ով կոչումով ամենակրտսերը չէր:* → Գործը հանձնարարվեց *կոչումով ամենակրտսերը չլինողին (չեղողին):*

§ 311. Բացի ստորոգյալից, որ ենթարկվում է որոշակի փոփոխությունների, և կապակցական բառական միջոցից, որ օտարվում է, կախյալ նախադասության մնացած բոլոր անդամները անխախտ կերպով պահպանում

են իրենց շարահյուսական գործառույթը: Ասել է թե՝ ինչ գործառույթ որ ունեցել են կախյալ բաղադրիչում, անփոփոխ կատարում են նաև նրա փոխակերպված տարբերակում: Գործառույթը պահպանելով անփոփոխ, սակայն, երկու միավորներ կարող են ենթարկվել ձևակազմական փոփոխություններ: Դրանցից մեկի՝ ստորոգյալի մասին արդեն խոսվեց: Ասվածին պետք է հավելել ևս երկու բան:

1. Կախյալ նախադասության իմաստային երանգները փոխակերպված տարբերակում հնարավորինս ճիշտ դրսևորելու համար դերբայական անդամի կողքին, ըստ անհրաժեշտության, ավելացվում է մի կապ կամ կապական բառ՝ համապատասխան բառիմաստով: Հմմտ.

Անտառի բացատում, մեջքը՝ հաստարմատ ծառին՝ նստել է Սարգիսը, *որ մի քիչ հանգստանա* (ԴԴ): Ընդգծված բաղադրիչը կարող է վերածվել երեք հնարավոր տարբերակների՝ 1) ...Նստել է Սարգիսը՝ *մի քիչ հանգստանալու:* 2. ...Նստել է Սարգիսը *մի քիչ հանգստանալու համար:* 3. ...Նստել է Սարգիսը՝ *մի քիչ հանգստանալու նպատակով:* Նպատակի պարագան առաջին տարբերակում արտահայտված է հոլովված բառով (անորոշի սեռական-տրական հոլովով), երկրորդ և երրորդ տարբերակներում՝ հոլովակապային կառույցներով (*հանգստանալու համար // նպատակով*):

Այլ օրինակներ.

Հենց որ բացվում է գարունը, քրդերը իրենց կոներով (վրաններ) և հոտերով բարձրանում են լեռները (ԱԻ): → *Գարունը (գարնան) բացվելուն պես* ... քրդերը բարձրանում են լեռները: Բայց ո՛չ՝ Գարունը *բացվելիս* կամ *բացվելու ժամանակ...*, քանի որ *հենց որ* շաղկապը արտահայտում է գործողության անմիջական, կարելի է ասել՝ ակնթարթային հաջորդում իրական ժամանակի մեջ, մինչդեռ անկատար երկրորդ դերբայը (*բացվելիս*) և *ժամանակ* կապական բառը՝ իր կապի խնդրի հետ միասին (*բացվելու ժամանակ*) արտահայտում են գործողության միաժամանակություն: Ուստի և կախյալ նախադասության ժամանակային իմաստը համեմատաբար ճիշտ է դրսևորում *պես* կապը՝ իր խնդրի հետ միասին:

[Խոսե՞մ, ի՞նչ խոսեմ:] Զարմանքից, ապշությունից, անսպասելիությունից լեզու մնացե՞լ է, *որ խոսեմ* (ՆՂ): → Լեզու մնացե՞լ է *խոսելու համար:* Այստեղ ևս ուրիշ տարբերակ չի կարող լինել, քան այն, որ կա, այլապես իմաստային նրբերանգների կորուստը անխուսափելի է:

Կան նախադասություններ, որտեղ փոխակերպված տարբերակում հոլովակապային կառույցը պարտադիր է: Այդպես փոխակերպվում է *պայմանի պարագա* կախյալ նախադասությունը: Հմմտ.

Եթե կամուրջը պայթեցնենք, հոգեբանությունը միանգամայն կփոխվի թե՛ այս, թե՛ այն կողմում (ԴԴ: → *Կամուրջը պայթեցնելու դեպքում...: Եթե ունենար որևէ հնար,* խեղճ Տիրամայրը իրեն կփրկեր (ՊՍ): → *Որևէ հնար ունենալու դեպքում* ... և այլն:

2. Չևակազմական երկրորդ հնարավոր փոփոխությունը առնչվում է կախյալ բաղադրիչի ենթակային: Պարզեցված տարբերակում այն կարող է ունենալ երեք արտահայտություններ:

Ա. Կարող է *մնալ անփոփոխ* ուղղական հոլովով՝ դառնալով դերբայի կամ ածականի ենթակա: Հմմտ.

Հենց որ մեքենան շարժվեց, վարորդը հարցրեց՝ ո՞ւր: → *Մեքենան շարժվելուն պես ...:*

Բ. Կարող է արտահայտվել *սեռական-տրական հոլովով՝ Մեքենայի շարժվելուն պես...*, կամ հենց *սեռական* հոլովով, եթե արտահայտված է այդ հոլովն ունեցող ութ դերանուններից որևէ մեկով[101], ինչպես՝ *Ես ներս մտա քե չէ,* էդգար թոռնիկս թռավ գիրկս: → *Իմ ներս մտնելուն պես ...:*

Գ. Դերանվամբ արտահայտված ենթական կարող է փոխարինվել *ստացական* հոդով, որ դրվում է դերբայի ծայրին, ինչպես՝ *Ներս մտնելուս պես...* (փոխ.՝ *Իմ* ներս մտնելուն պես...), կամ՝ Պատմությունը, *որ ես լսեցի այսօր,* շատ տխուր էր: → *Այսօր լսածս* պատմությունը շատ տխուր էր և այլն:

Ածականի ենթական գոյանում է այն դեպքում, եթե կախյալ բաղադրիչի ստորոգյալը բաղադրյալ է՝ ածական ստորոգելիով: Հմմտ.

Ծերուկը, *որի մի ոտքը կաղ էր,* քայլում էր բոլորից արագ: → *Մի ոտքը կաղ* ծերուկը... և այլն:

§ 312. Եթե բարդ ստորադասական նախադասությունը փոխակերպելիս ստացվում է դերբայական դարձված, ապա վերջինս պարզեցված տարբերակում իր լրիվ ծավալով կատարում է շարահյուսական այն դերը, ինչ որ ունի նրա գերադաս՝ դերբայական անդամը՝ առանձին վերցրած: Դերբայական դարձվածը նախադասության մեկ անդամ է՝ անկախ իր կազմիչ միավորների քանակից: Հմմտ.

Լուսինը քմահաճությամբ թաքնվում էր սև փոքրիկ ամպերի տակ, *որոնք իրենց աննման կողքերին էին միայն ցուցադրում հրաշալի արծաթագույնով* (ՆԴ): → Լուսինը քմահաճությամբ թաքնվում էր *միայն իրենց աննման կողքերը հրաշալի արծաթագույնով ցուցադրող* սև փոքրիկ ամպերի տակ: Ընդգծված ծավալուն դերբայական դարձվածը նախադասության մեկ անդամ է՝ որոշիչ, քանի որ նրա գերադաս եզրը՝ *ցուցադրող,* առանձին վերցրած, որոշիչ է: Իսկ՝ սա որոշիչ է այն պատճառով, որ սերող տարբերակում կախյալ նախադասությունն է որոշիչ:

Բարդ նախադասության պարզեցման ժամանակ դերբայական դարձվածի կազմիչ միավորների շարադասությունը կարող է պահպանվել, կարող է նաև ենթարկվել փոփոխության՝ դրանց շարահյուսական հարաբերությունները ճշտորեն վերարտադրելու, այլև, որ բնավ անէական չէ, խոսքը սահուն ու արտահայտիչ դարձնելու համար (տե՛ս վերի օրինակը՝ փոփոխված շարադասությամբ):

Ինքը՝ ամբողջ դերբայական դարձվածը, ևս պարզեցված տարբերակում կարող է ունենալ տարբեր դիրքեր՝ պայմանով, որ հաշվի առնվեն նշյալ երկու իրողությունները:

---

[101] Արդի հայերենում, ինչպես նշվել է, միայն ութ դերանուններ ունեն սեռական հոլով: Դրանք են՝ ես, դու, նա, մենք, դուք, ինքը, սա, դա:

Իր՝ դերբայական դարձվածի անդամները ևս տարրալուծելի են: Դրանք, սակայն, վեր են լուծվում շարահյուսական հատույթավորման ո՛չ թե առաջին, այլ երկրորդ ստորին մակարդակում: Առաջին մակարդակում առանձնացվում են նախադասության անդամները, երկրորդ մակարդակում՝ դերբայական դարձվածի անդամները, որոնք կոչվում են *կողմնակի:* Դրանք են՝ *ենթական, ստորոգելին, խնդիրները* ու *պարագաները* իրենց տարատեսակներով:

§ 313. Դերբայական դարձվածը իր հերթին իր ներսում կարող է ունենալ մեկ կամ ավելի դերբայական դարձվածներ: Դա կարող է արդյունք լինել հետևյալ երկու իրողության.

Ա. Փոխակերպման ենթակա կախյալ նախադասության մեջ *արդեն իսկ կա* մեկ (կամ ավելի) *դերբայական դարձված,* որը նույնությամբ առկա է մնում նաև պարզեցված տարբերակում, և ստացվում է դերբայական դարձված՝ դարձվածի մեջ: Հմմտ.

Եվ գիշերները, երբ ցուրտը փախցնում էր *ամենուրեք վխտացող* խուժանների քունը, Հայրոն պատմում կամ բացատրում էր շատ կենսական բաներ (ԴԴ): Այստեղ կախյալ նախադասության մեջ առկա է *ամենուրեք վխտացող* դերբայական դարձվածը: Այն անփոփոխ կպահպանվի, եթե այդ կախյալ բաղադրիչն էլ վերածենք դերբայական դարձվածի, ինչպես՝ Եվ գիշերները՝ *ցուրտը ամենուրեք վխտացող խուժանների քունը փախցնելուց հետո,* Հայրոն պատմում կամ բացատրում էր շատ կենսական բաներ: Այլև՝ Նա իրեն պատկերացնում էր *որպես մեծն Պոմպեոսի լեգեոնների վրա գրոհող* հայոց արքայից արքայի հեծյալ, որ, *պոկվելով իր հեթանոս կուռքերից,* քշվել էր գետի մեջ՝ *մկրտության ջուր ստանալու նոր առաքինության և սիրո Աստծուց* (ՀՓ): Այս նախադասության մեջ արդեն իսկ առկա են երեք դերբայական դարձվածներ, որոնցից մեկը գերադաս բաղադրիչում է, երկուսը՝ ստորադաս եզրում (*Մեծն Պոմպեոսի լեգեոնների վրա գրոհող, Պոկվելով իր հեթանոս կուռքերից* և *մկրտության ջուր ստանալու նոր առաքինության և սիրո Աստծուց*): Հասկանալի է, որ փոխակերպման ժամանակ կպահպանվեն երեքն էլ, որոնց կգումարվի չորրորդը, որ իր մեջ կներառի վերջին երկուսը: Այսպես՝ Նա իրեն պատկերացնում էր *որպես Մեծն Պոմպեոսի լեգեոնների վրա գրոհող* հայոց արքայից արքայի՝ *իր հեթանոս կուռքերից պոկվելով՝* նոր՝ *առաքինության և սիրո Աստծուց մկրտության ջուր ստանալու համար գետի մեջ քշված* հեծյալ:

Բ. Փոխակերպման ենթակա կախյալ նախադասությունը *իր հերթին ունի ստորադաս մի (կամ ավելի) բաղադրիչ:* Այս դեպքում կստացվի երկաստիճան (եռաստիճան, քառաստիճան) փոխակերպում: Նախ կփոխակերպվի ամենաստորին բաղադրիչը՝ ենթաստորադաս եզրը: Ստորադաս եզրը այսպիսով արդեն իսկ կունենա դերբայական դարձված (անշուշտ, եթե փոխակերպման արդյունքում գոյանում է դերբայական բառակապակցություն): Հաջորդ վերին աստիճանում այս կախյալ բաղադրիչը փոխակերպելիս, հասկանալի է, կունենանք իր ներսում արդեն իսկ դերբայական դարձված

ունեցող մի ավելի ծավալուն դերբայական դարձված: Այլ կերպ ասած՝ կունենանք մի պարզ ընդարձակ նախադասություն, որի մի անդամը դրսևորված է այնպիսի դերբայական դարձվածով, որի անդամներից մեկը նույնպես դերբայական դարձված է: Այս կառույցը հարաբերակցում է նախորդ կետում քննված կառույցին: Հմմտ.

Ես էն մուկն է, *որ կերել է էն ցորենը, որ պահված է էն տանը* (ՀԹ): Ստորին աստիճանից սկսած՝ առաջին աստիճանի փոխակերպմամբ կստանանք՝ *Ես էն մուկն է, որ կերել է էն տանը պահված ցորենը:* Կախյալ եզրը ստացավ դերբայական դարձված *(էն տանը պահված):* Հաջորդ աստիճանում, ընդգծված կախյալ բաղադրիչը վերածելով դարձվածի, կունենանք՝ *Ես էն տանը պահված ցորենը կերած* մուկն է:

Բարդ ստորադասական նախադասությունը պարզ նախադասության վերածելիս պետք է զգույշ լինել՝ մտքի խճողումից, ոճական անհարթությունից կամ խրթնաբանությունից խուսափելու համար: Նախադասությունը ցանկալի չէ ծանրաբեռնել չորս-հինգ դերբայական դարձվածներով, ճիշտ այնպես, ինչպես չի կարելի ծանրաբեռնել նույնքան և ավելի կախյալ բաղադրիչներով: Դա կարող է նվազեցնել արտահայտչականությունը, նաև, որ պակաս էական չէ, ընկալման ճշտությունը:

Չպետք է նաև մոռանալ, որ նման փոխակերպումները հետապնդում են զուտ ուսուցողական -մեթոդական, երբեմն նաև հետազոտական նպատակներ: Իսկ գրական-գեղարվեստական կամ գիտահրապարակախոսական աղբյուրներում այդ զուգահեռ կառույցներից՝ չփոխակերպված և փոխակերպված տարբերակներից մեկը կամ մյուսը նախընտրելը լեզվական ճաշակի, նախասիրության, անհատական լեզվամտածողության հարց է:

Մյուս կողմից՝ չի կարելի կախյալ նախադասության գլխավոր նախադասության որևէ անդամի փոխարինելու քերականական օրինաչափությունը ըմբռնել նաև ծագումնաբանորեն և ուղղագիծ դատողությամբ կարծել, թե նախապես լեզվում իշխում էին պարզ նախադասությունները, որոնց մեկ կամ մի քանի անդամներ, հետագայում «փոխարինվելով» երկրորդական նախադասությամբ, առաջացրել են բարդ ստորադասական նախադասություններ, կամ, մյուս կողմի վրա շուռ տալով հարցը, ի հակառակն դատել և դերբայական դարձվածը համարել «կրճատված» կախյալ նախադասություն[102]:

> *Ծանոթություն:* Մանուկ Աբեղյանը, որ ամենից ավելի խորը և գիտականորեն է քննել փոխակերպման էությունն ու նրա հետ կապված օրինաչափությունները, զգալի վերապահությամբ ընդունում է վերածման նաև մեկ այլ տարբերակ: Նա հնարավոր է համարում կախյալ բաղադրիչի բայ-ստորոգյալը փոխարինել *բայանուն գոյականով:* Նրա կարծիքով «երկրորդական խոսքի բայը կարելի է բայական անվան (բայանուն գոյականի – Ա.Պ.) փոխել, երբ խնդիրներ չունի, կամ եթե խնդիրներ ունի, բայական անունն ուղղական կամ հայցական հոլովով է դրվում. այդ ժամանակ խնդիրները բայական անունից հետադաս են մնում: Օրինակ՝ Այն գիշերը, *երբ Քրիստոս ծնվում է... – Քրիստոսի ծննդյան (ծնվելու)* գիշերը:

---

[102] Տե՛ս մեր «Կախյալ շարահարությամբ բարդ նախադասությունները արդի հայերենում» գիրքը, էջ 52:

Այն օրը, *երբ նա մեռավ... – Նրա մահվան (մեռնելու)* օրը: *Երբ որ Քրիստոս համբարձավ... – Քրիստոսի համբարձումից (համբառնելուց) հետո:* Ինձ հայտնեցին, *որ նա հրաժարվում է պաշտոնից* – Ինձ հայտնեցին *նրա հրաժարումը պաշտոնից*» (տե՛ս նրա «Հայոց լեզվի տեսություն» աշխ.-ը, էջ 604-605):

Հետևելով Մ. Աբեղյանին՝ փոխակերպման նման եղանակ, արդեն առանց վերապահության, ընդունում է նաև Գ. Գարեգինյանը, որը իր «Ժամանակակից հայոց լեզու. բարդ նախադասություն» գրքում գրում է. «Պարզ ստորոգյալը կարող է փոխանակվել բայանվամբ, ինչպես՝ Հեռվից նկատեցի, որ նա *վազում է* (...նրա *վազքը*), որ *խաղում է* ինքնամոռաց (...նրա ինքնամոռաց *խաղը*) և այլն: Երբ *վերադարձա*, ամբողջ պաշարն անվնաս գտա (= *վերադարձիս*)...» (էջ 345):

Մ. Աբեղյանը, որի շարահյուսական համակարգը, կարելի է ասել, անխոցելի է, այս խնդրում այնքան էլ ճիշտ չէ: Կախյալ նախադասության *դիմավոր բայը չի կարող փոխարինվել բայանուն գոյականով:* Այս դրույթի փաստարկներից մեկը լավագույնս ձևակերպել է նույն ինքը՝ Մ. Աբեղյանը, որ ընդգծել է. «Դերբայներն իբրև բայահաղորդ բառեր՝ ունին բայական սեռ և առնում են նույն խնդիրներն, ինչ որ բայերը. բացի այդ՝ հաճախ ցույց են տալիս և ժամանակ: Ուստի պարզելու ժամանակ երկրորդական խոսքի բայը փոխվում է, նայելով նշանակության, այս կամ այն դերբայի, որ և պահում է բայի խնդիրներն ու նույնիսկ ենթական՝ իբրև ենթակայական սեռական կամ կողմնակի ենթական» (էջ 604):

Երկրորդ փաստարկը այն է, որ բայը, լինի դիմավոր թե անդեմ, գործողությունը արտահայտում է *ընթացքի մեջ*, այսինքն՝ *ընթացքային* գործողություն. բայանուն գոյականը ցույց է տալիս գործողությունը *քարացած վիճակում, քարացած գործողություն, որպես առարկա,* ուստի և կախյալ նախադասությունը փոխակերպելիս չի կարող փոխարինել դերբային:

Երրորդ փաստարկը, որ բխում է նախորդներից, այն է, որ փոխակերպման ժամանակ, ինչպես նշվեց վերը, որպես անխախտ պայման, օրինաչափորեն պետք է պահպանվեն դարձվածի մեջ մտնող բոլոր միավորների շարահյուսական հարաբերությունները: Մինչդեռ դերբայը բայանունով փոխարինելու դեպքում բայական լրացումները վերածվում են գոյականական լրացումների, ինչպես իր իսկ Գ. Գարեգինյանի վկայակոչած օրինակներում. Հեռվից նկատեցի, որ *նա* վազում է – ... *նրա վազքը,* ...որ խաղում է ինքնամոռաց – ...*նրա* ինքնամոռաց *խաղը* և այլն: Ակնհայտ է, որ ...*որ նա վազում է* բաղադրիչում *նա*-ն ենթակա է և այդպիսին պետք է մնա նաև փոխակերպված տարբերակում (*նրա* վազելը), մինչդեռ առաջադրված տարբերակում այն հատկացուցիչ է *վազք* գոյականի (*նրա* վազքը):

Նույն սկզբունքով՝ *խաղում է ինքնամոռաց* նախադասության մեջ *ինքնամոռաց* մակբայը ձևի պարագա է, այնինչ վերածված տարբերակում որոշիչ է (*ինքնամոռաց* խաղ): Իսկ եթե *խաղում է* բայի կողքին դնենք մի ուղիղ խնդի՞ր՝ ...որ նա *շախմատ* է խաղում ինքնամոռաց: Այս դեպքո՞ւմ ինչպես պետք է փոխակերպել՝ գոյականական բառակապակցության, չէ՞ որ ոչ մի բայանուն չունի բայասեռի քերականական կարգը. ինչպես և բայական մյուս կարգերը, և չի կարող ստանալ ուղիղ խնդիր:

Այստեղ է, որ կհանդիպենք կառուցվածքային մի խոչընդոտի, որը հաղթահարվել չի կարող ոչ մի հակափաստարկով:

Ստացվում է, որ կախյալ բաղադրիչի դիմավոր բայը կա՛մ կարող է օտարվել (տե՛ս § 310, 3, Բ), կամ փոխարինվել անկախ դերբայներից որևէ մեկով:

§ 314. *Նախադասությունների կապակցությունը խոսքաշարում կիրառված, թեմատիկ տարրով, ներքին իմաստով, տրամաբանորեն ու շարահյուսորեն միմյանց հետ կապված առանձին պարզ կամ բարդ նախադասությունների կապակցությունն է:*

Այս բաժինը էությամբ շարահյուսական աստիճանակարգության (հիերարխիայի) ուսումնասիրության բարձրագույն դրսևորումն է: Դրանից այն կողմ արդեն սկսվում է բնագրի խոսքային (տեքստաբանական) քննությունը:

Նախադասությունը, պարզ լինի թե բարդ, արտահայտում է ավարտուն ու ամբողջական միտք: Այն, սակայն, իբրև հաղորդակցական հիմնական միավոր լինելով հանդերձ, առանձին վերցրած, չի կարող բացահայտել խոսողի կամ հեղինակի ասելիքի թեմայի ողջ բովանդակությունը: Խոսքային ընդհանուր շղթայում գոյանում են ներքին տրամաբանական իմաստներով ու քերականորեն կապակցված, միևնույն թեմատիկ նյութի ենթաթեմաների (միկրոթեմաների) աստիճանական զարգացումը դրսևորող ամբողջական ու ավարտուն նախադասությունների ինչ-որ չափով մեկուսացած խմբեր: Այդ խմբերից յուրաքանչյուրը ներկայացնում է մի շարահյուսական բարդ ամբողջություն (ՇԲԱ)[103]:

---

[103] Շարահյուսական այս իրողության վրա առաջինը ուշադրություն են դարձրել ռուս քերականները: Сложное синтаксическое целое (ССЦ) հասկացությունը առաջինը շրջանառության մեջ է դրել Ն.Ս. Պոսպելովը անցյալ դարի 40-ական թթ. (տե՛ս Современный русский литературный язык, под. ред. П.А. Леканта, М., 1982, էջ 378):

Շարահյուսական բարդ ամբողջությունը, սակայն, իբրև լեզվական միավոր, տարբեր հեղինակների կողմից տարբեր կերպ էր ըմբռնվում: Այդ անվան տակ հասկանում էին «վերխոսքային ամբողջություն» (Լ.Ա. Բուլախովսկի), «արձակ (ոչ բանաստեղծական) տուն» (прозаическая строка, Գ.Յա. Սոլգանիկ) և այլն: Շարահյուսական բարդ ամբողջության գիտական ըմբռնումը հետագա աշխատություններում հետզհետե ճշգրտվում է: Ժամանակակից աշխատություններում այն սահմանվում է այսպես. «Շարահյուսական բարդ ամբողջությունը կառուցվածքային-իմաստաբանական և հաղորդակցական առավել ծավալուն միավոր է, որ առանձնանում է բնագրի կազմում և կարող է գործառվել ինքնուրույնաբար» (տե՛ս Современный русский литературный язык, под ред. Н.М. Шанского, Ленинград, 1988, էջ 655):

Իսկ Լ.Ս. Լոսևայի դիպուկ ու պատկերավոր ձևակերպմամբ «Շարահյուսական բարդ ամբողջությունը մանրակերտ մի պատում է (рассказ в миниатюре) իր նախաբանով, գործողությունների զարգացմամբ և վերջաբանով» (տե՛ս նրա "Как строится текст" աշխատությունը, М., 1980, էջ 63):

Հայ լեզվաբանության մեջ այս հարցը առաջին անգամ քննության առարկա է դարձրել Ս.Գ. Աբրահամյանը: Թեև նա չի օգտագործել «շարահյուսական բարդ ամբողջություն» գիտաբառը, բայց ընդարձակելով շարահյուսության ըմբռնման սահմանները՝ նրա մեջ ներառել է մի նոր, ցարդ չեղած բաժին: Այս բաժինը նա կոչեց «նախադասությունների կապակցություն», որ էությամբ այլ բան չէ, քան շարահյուսական բարդ ամբողջի մասերի կապակցություն: Այս նոր բաժնի տեսական հիմնավորումը գտնում ենք նախ՝ նրա «Ժամանակակից հայերենի քերականություն» աշխատության մեջ, Եր., 1975, ապա նույն թվականին հրատարակված «Հայոց լեզու» բուհական դասագրքի Բ հատորում և

Կարդանք բնագրային հետևյալ հատվածը՝ համարակալելով նախադասությունները: (1) Մատվեին սայլով բերել էին քաղաք: (2) Նրան մտցրին դպրոցից քիչ հեռու առաջին պատահած տունը և պառկեցրին: (3) Տանտերը և ընտանիքը ո՛չ մի ձևով չարտահայտեցին իրենց վերաբերմունքը եկողներին: (4) Միայն մի կին՝ բակի տնվորներից, կաթ բերեց վիրավորի համար: (5) Մատվեի ընկերը՝ եգորը, որ նստել էր հատակին, նկատեց, որ այդ կինը համարյա չխոսեց տանտիրոջ ընտանիքի հետ: (6) Տանտիկինը՝ բարձրահասակ ու գեղեցիկ մի կին, հանկարծ մոտեցավ կաթ բերող կնոջը և խիստ նկատողություն անելով, որ չի կարելի կաթն ուղղակի կաթսայով տալ վիրավորին՝ բաժակ բերեց և լցնելով կաթը՝ ինքը տարավ և դուրեկան ժպիտով տվեց վիրավորին: (7) Կաթ բերողը քմծիծաղ տվեց միայն և մեկ-մեկ նայելով վիրավորին և մյուսներին՝ հեռացավ (ԴԴ):

Հատվածը բաղկացած է յոթ ավարտուն ու ամփոփ, ինքնուրույն նախադասություններից: Այստեղ կան և՛ պարզ, և՛ բարդ նախադասություններ, ըստ որում՝ բավականաչափ ծավալուն (օրինակ՝ վեցերորդը): Այս յոթ նախադասություններից, սակայն, միայն առաջինն է, որ ունի համեմատաբար անկախ միտք: Մյուս բոլոր նախադասությունները մտային այնքան սերտ առնչակցություն ունեն, որ մեկի իմաստը անհնար է հասկանալ առանց մյուսի, ավելի ստույգ՝ երկրորդից սկսած՝ ոչ մեկի իմաստը լիովին չի ըմբռնվի առանց նախորդ նախադասության մեջ արտահայտված գործողության, եղելության, իրողության, դրանց հատկանիշների և այլնի հետ կապակցելու: Այսպես՝ երկրորդ նախադասությունը սկսվում է *Նրան* դերանվամբ (ուղիղ խնդիր), որի ով լինելը անհասկանալի կմնար, եթե առաջին (նախորդ) նախադասության մեջ չլիներ *Մատվեյի* մասին ակնարկը: Ուրեմն *Նա*-ն Մատվեյն էր: Երրորդ նախադասությունը սկսվում է *տանտերը* ենթակայով: Հասկանալի չէր լինի, թե տանտերը ո՛ր տան տերն է, եթե նախորդ նախադասության մեջ նշված չլիներ, որ Մատվեյին բերեցին *առաջին պատահած տունը:* Ուրեմն *տանտերը* ասելով՝ հեղինակը նկատի ունի *առաջին պատահած տան տիրոջը:* Ճիշտ այդպես նաև վերջին՝ յոթերորդ նախադասության մեջ եղած ակնարկը՝ թե «*կաթ բերողը քմծիծաղ տվեց*», կարող է ըմբռնվել միայն նախորդ նախադասության մեջ նշված այն մտքով, որ «տանտիրուհին բաժակ բերեց և լցնելով կաթը՝ ինքը տարավ և դուրեկան ժպիտով տվեց վիրավորին»: Ուրեմն ուրիշի բերած կաթը տանտիրուհին տալիս է վիրավորին «դուրեկան ժպիտով», կարծես թե ինքն է լավություն անում, և դա բավական չէ, «խիստ նկատողություն» է անում կաթ բերողին կաթը կաթսա-

---

մեկ տարի անց՝ 1976 թ. հրատարակված «Ժամանակակից հայոց լեզու» ակադեմիական քերականության երրորդ հատորում: Այս երկու գրքերում տվյալ թեմային վերաբերող համապատասխան գլուխների հեղինակը ինքն է:

Ավելի ուշ այս հարցին անդրադարձել է և Գ. Գարեգինյանը («Ժամանակակից հայոց լեզու. բարդ նախադասություն», էջ 361 և հջ.): Լեզվական այս իրողությունը նա կոչել է *բարդ շարահյուսական ամբողջություն,* որ ռուսերենի сложное синтаксическое целое գիտաբառի բառացի պատճենումն է, որ այնքան էլ ճիշտ չէ: Հայերեն ավելի ճիշտ արտահայտությունն է՝ *շարահյուսական բարդ ամբողջություն:*

յով հիվանդին տալու համար: Այս պատճառով էլ *«կաթ բերողը քմծիծաղ տվեց»*:

Այսպիսով դժվար չէ նկատել, որ երկրորդից սկսած բոլոր նախադասությունները գործողությունների հաջորդականությամբ, այլև պատճառահետևանքային հարաբերությամբ կապված են միամյանց հետ, ավելի ճիշտ յուրաքանչյուր հաջորդը նախորդի հետ: Սա ըստ էության մի փոքրիկ պատում է *նախաբանով, թեմատիկ նյութի* կամ *այուժեի տրամաբանական զարգացմամբ* և *հանգուցալուծումով:* Ամբողջ ասույթը այլ բան չէ, քան մի շարահյուսական բարդ ամբողջություն, որի մեջ բնորոշ գծերով բացահայտված է «մարդկային հոգեբանությունը»: Սա էլ հենց է՝ թեմատիկ ընդհանուր նյութի բաղադրամասը (ենթաթեման):

Շարահյուսական բարդ ամբողջությունը կազմող նախադասությունները կապակցվում են միմյանց հետ քերականական գրեթե այն բոլոր միջոցներով, որոնք կիրառվում են երկբաղադրիչ բարդ նախադասություններում: Կապակցության ձևերի նույնությունը կամ մերձավորությունը ենթադրում է նաև նախադասությունների միջև եղած իմաստակառուցվածքային հարաբերությունների նույնություն կամ մերձավորություն: Սակայն, այսուհանդերձ, ՇԲԱ-ում առավելապես ձևավորվում են համադասական կապակցություններին բնորոշ միավորական, հավելական, մակաբերական, մեկնական, բաղդատական, տրոհական, հակադրական և այլ նման իմաստային հարաբերություններ: Ստորադասական կապակցություններից պատահում են պատճառահետևանքային, զիջական, նպատակային, հիմունքային և այլ հարաբերություններ:

Նախադասությունների կապակցությունը իրագործում է՝ 1. հիմնականում համադասական շաղկապներով և շաղկապական բառերով, 2. բառական միևնույն միավորները տարբեր նախադասություններում կիրառելով նույն կամ տարբեր գործառույթներով, 3. գոյականները, ածականները, թվականները, մակբայները փոխարինելով համապատասխան դերանուններով, 4. բայ-ստորոգյալների եղանակաժամանակային որոշակի, մեծ մասամբ համաձայնեցված կամ մերձավոր իմաստներով կիրառությամբ, 5. շարահարությամբ, 6. շարադասությամբ:

Անշուշտ, այս բոլոր միջոցները մեկ բարդ ամբողջի մեջ միաժամանակ չեն արտահայտվում: Տարբեր է նաև այս միջոցների դերը կապակցության մեջ: Այսպես եթե շաղկապները անմիջաբար կապակցում են կից նախադասությունները, ապա համապատասխան շարադասությունը ապահովում է գործողությունների, եղելությունների տրամաբանական հաջորդականությունը և զարգացման դինամիկան շարահարական կապակցության դեպքում: Շարադասությամբ են պայմանավորված նախադասությունների միջև ի հայտ եկող քերականական-իմաստային վերը նշված հարաբերությունները, իսկ նախորդ հատվածում առկա գոյականական, ածականական, թվականական, մակբայական անդամը հաջորդ նախադասության մեջ դերանվանական անդամով փոխարինելը ավելի է սերտացնում կապը և այլն:

Շարահյուսական բարդ ամբողջության կառուցվածքային հատկանիշները քննելիս թերևս ամենադժվար խնդիրը նրա սահմանների որոշումն է:

Այս խնդիրը լուծելու համար պետք է նկատի ունենալ հետևյալը: ԾԲԱ-ն օրինաչափորեն բաղկացած է լինում երեք մասերից: Առաջին մասը, որ ամենակարևորն է, հենց առաջին նախադասությունն է, քանի որ նրանով է սկսվում բարդ ամբողջությունը: Սա էությամբ այլ բան չէ, քան ***ենթաթեմայի անվանումը,*** յուրօրինակ մի վերնագիր, որը սկզբից ևեթ ակնարկում է, թե հետագա շարադրանքը ինչի մասին է լինելու: Երկրորդ մասը ներկայացնում է ***թեմատիկ նյութի աստիճանական զարգացումը:*** Այն կարող է ընդգրկել մեկ կամ ավելի նախադասություններ: Երրորդ մասը, որ յուրահատուկ վերջաբանի դեր է խաղում, ազդարարում է ***թեմայի ներկայացման ավարտը*** կամ նախազգուշացնում նրա շարունակելի լինելը:

Նկատի ունենալով իմաստակառուցվածքային այս երեք հատկանիշները և այն, որ շարահյուսական բարդ ամբողջությունը առավելապես գրավոր պատումին հատուկ իրողություն է, նրա սկիզբը սովորաբար համարվում է նոր տողից սկսված նախադասությունը: Եթե հաջորդ նոր տողից սկսված նախադասությունը դիտենք որպես մի նոր բարդ ամբողջության սկիզբ, կստացվի, որ ԾԲԱ-ն ընդգրկում է մի նոր տողից մինչև հաջորդ նոր տողը ընկած բնագրային ամբողջ հատվածը: Ավելացնենք, որ տողերով դատել կարելի է միայն գրավոր խոսքի հիման վրա, այն էլ՝ ոչ միշտ: Գրավոր խոսքը կարող է լինել արձակ կամ չափածո: Արձակ խոսքում ԾԲԱ-ի սահմանները հեշտությամբ առանձնացվում են, իսկ չափածոյում՝ ոչ: Այստեղ գործում են կառուցվածքային այլ օրինաչափություններ ևս՝ պարզ ու բարդ ռիթմական ոտքեր, հատածներ, տողատում, տնատում, տաղաչափական այլ իրողություններ, որոնք նույնպես պետք է հաշվի առնվեն շարահյուսական այդ միավորի սահմանները որոշելիս:

Բանավոր խոսքում ևս կարող է գոյանալ ԾԲԱ: Այս դեպքում նրա սահմանները որոշվում են վերը նշված իմաստակառուցվածքային երեք գործոններով:

§ 315. Գրավոր խոսքում շարահյուսական բարդ ամբողջությունը մասամբ առնչվում է նաև պարբերության հետ (նոր տողից մինչև նոր տող):

Պարբերությունը չպետք է շփոթել պարբերույթի հետ: Վերջինս, ինչպես նշվեց վերը (§ 303, 1, 2), մեկ բազմաբաղադրիչ նախադասություն է՝ իր բնութագրական որոշակի հատկանիշներով, այնինչ պարբերությունը պատումի կոմպոզիցիոն հատույթավորման միջոց է:

Շարահյուսական բարդ ամբողջության և պարբերության առնչակցությունը սահմանափակվում է նրանով, որ երկուսն էլ գրավոր խոսքում գրավում են մեկ նոր տողից մինչև հաջորդ նոր տողը ընկած հատվածը (նկատի չունենք չափածո խոսքը): Այդ ամբողջ տարածությունը, սակայն, կարող է գրավել ընդամենը մեկ նախադասություն, պարզ թե բարդ՝ էական չէ: Այդ դեպքում կունենանք պարբերություն, բայց չենք ունենա ԾԲԱ: Վերջինս կարող է գոյանալ միայն երեք և ավելի նախադասությունների շղթայական կապակցությամբ, որտեղ առկա են վերը նշված կառուցաստեղծ գործոնները:

Ահա թեմատիկ տարրերով իրար հետ կապված, իրար հաջորդող չորս պարբերություններ, որոնցից յուրաքանչյուրը ընդգրկում է մեկական նախադասություն:

Ահա նրանք ուսերն առան լիքը պարկերը և դանդաղ, դեղնկոտ քայլերով հեռանում են շուկայից, դառնում են ... տուն:

Սողում են չքնաղակերտ քաղաքի պողոտաներով, ուր վարարում, հոսում է կյանքը. գնում են՝ սողալով *ճարտարապետության հրաշքների տակով*, ապարանքների մարմարիոնների առջևից:

Անսիրտ հարստությունը, զայրացուցիչ լիությունը, անընդունելի պերճանքը հորդում է դուրս հոյակապ տներից, վաճառատներից, բանկերից, պայթում է, պոռթկում է, ծփում, բայց մարդիկ աղեգալար սողոսկում են:

Գնում են տուն, աղքատության արվարձանները, ուր անմարդկային չքավորության ճախճախուտի մեջ վխտում են անթիվ այրեր, կանայք, երեխաներ՝ խոցոտ մորթերով, վիրավոր աչքերով (ԱԻ):

Այս չորս նախադասություններից յուրաքանչյուրը մի պարբերություն է, բայց ո՛չ մեկը նրանցից, ո՛չ էլ բոլորը միասին չեն ներկայացնում շարահյուսական բարդ ամբողջություն: Դրանք զարգացնում են ու նորանոր կողմերով բացահայտում թեմատիկ տարրը, բայց չունեն թեմայի ազդարարը և ամփոփում-ավարտը: Այլ կերպ ասած՝ պատումի մեջ առկա է ՇԲԱ-ն ձևավորող հատկանիշներից միայն մեկը՝ երկրորդը՝ թեմատիկ նյութի աստիճանական զարգացումն ու ծավալումը, իսկ առաջինն ու երրորդը՝ մուտքն ու ամփոփումը (նախաբանն ու վերջաբանը) չկան:

Ասվածից, սակայն, չի բխում, թե շարահյուսական բարդ ամբողջությունը պարտադիր պետք է ամփոփվի մեկ պարբերության մեջ, ինչպես սույն բաժնում բերված առաջին օրինակում (Մատվեյին սայլով բերել էին քաղաք...): Այն կարող է ընդգրկել մեկից ավելի պարբերություններ՝ պայմանով, որ ապահովվեն իմաստակառուցվածքային երեք անխախտ հատկանիշները՝ մուտքը կամ թեմատիկ նյութի անվանումը, թեմայի աստիճանական բացահայտումը և ամփոփումը կամ եզրափակումը:

Ահա մեկ օրինակ, որ բաղկացած է երեք պարբերությունից:

Հարությանը բոլորովին կոտրվել էր: Իշխանուհու արտասանած յուրաքանչյուր խոսք սուր դաշույնի նման, կարծես, մաս-մաս էր անում նրա սիրտը:

Այդ ժամանակ իշխանուհին յուր վշտալից, աղերսող հայացքով, յուր աղեկտուր ձայնով և, վերջապես, յուր դառնագին հեկեկանքով այնքա՜ն գեղեցիկ, այնքա՜ն անմեղ, այնքա՜ն սիրելի էր թվում նրան, որ նա պատրաստ էր իսկույն նեթ ընկնելու նրա առաջ և ասելու. – Ո՛չ, մենք երբեք չենք բաժանվիլ միմյանցից. *ես հավիտյան քոնն եմ և, բացի քեզանից, աշխարհիս* մեջ ինձ համար այլևս ոչ ոք գոյություն չունի:

Բայց նա այդ չարեց, կարողացավ իրեն զսպել՝ հասկանալով, որ այդ խոսքերից մինչև այդ րոպեն յուր գործ դրած բոլոր ջանքերը կարող էին բոլորովին ապարդյուն անցնել (ՆԴ):

Այստեղ շարահյուսական բարդ ամբողջության մեջ շոշափվող թեման ներկայացված է առաջին պարբերության հենց առաջին նախադասությամբ՝ *Հարությանը բոլորովին կոտրվել էր:* Թեմատիկ տարրերի աստիճանական լուսաբանումը սկսվում է առաջին պարբերության մեջ, ծավալվում է երկրորդում՝ մինչև վերջին նախադասությունը: *Բայց* շաղկապով սկսվող վերջին ծավալուն նախադասությունը եզրափակում է պատումը: Մուտքը, որ կարելի է համարել այս փոքրիկ պատումի խորագիրը, իմաստավորել է ՇԲԱ-ն կազմող երկրորդ և երրորդ մասերով:

§ 316. Ո՛չ քիչ դեպքերում մեկ պարբերության մեջ կարող են ընդգրկվել երկու կամ ավելի ՇԲԱ-ներ: Նման կառույցը պայմանավորված է նրանով, որ նույն թեմատիկ նյութը մեկ և նույն պարբերության մեջ գտնվող ՇԲԱ-ներում բացահայտվում և ամբողջանում է ենթաթեմաներով:

Կարդանք հետևյալ պարբերությունը, որտեղ առկա են երկու շարահյուսական բարդ ամբողջություններ: Սրանք առանձնացված են ուղղահայաց զուգահեռ գծերով:

Երբեք նա իր ձեռքը չէր զարկել սրտին: Երբեք նա չէր նայել իր ներքին աշխարհը քննական հայացքով, երբեք իր առանձնության մեջ չէր խոսել իր հոգու հետ: Չափազանց ամուր էր կառչած նրա միտքը շոշափելիին, նյութականին, որպեսզի կարողանար լուսո գեթ մի աղոտ շող ծգել հոգեկանի վրա: Սարդկային վշտերն ու տվայտանքները իրենց հազարավոր ձևերով ու գույներով շարեշար անցել էին նրա աչքերի առաջ՝ առանց դիպչելու նրա հոգու որևէ թելին, սրտի որևէ լարին: Գրանիտյա ժայռ էր նա այն անհատակ օվկիանոսի ափին, որ կոչվում է կյանք, այնքան կարծր, որ ո՛չ մի ալեկոծություն չէր կարող նրան մաշել: // Չկար նրա համար որևէ գրավիչ, որևէ հուզիչ բան, բացի այն բոլորից, որ կապ ուներին նրա անձնական երջանկության հետ: Նույնիսկ իր մերձավորների բախտը գնահատում էր իր անձի և հանգստության չափով: Երբ նրա կինը կամ զավակները հիվանդանում էին, նա աշխատում էր տնից փախչել որևէ պատրվակով: Հիվանդը նրան անհանգստացնում էր (ԱԶ):

Առաջին նախադասությամբ ազդարարվում է առաջին շարահյուսական բարդ ամբողջի բուն թեման, այն է՝ *«Նրա»* *գլխավոր հերոսի* (Սիմոն Սեֆերյանի) կերպարի *բնութագրությունը:* Թեմատիկ նյութի տիպային բովանդակությունը լուսաբանվում է երկրորդ և հաջորդ նախադասություններում: Դրանցով պարզվում է, թե ի՛նչ նկատի ունի հեղինակը՝ ասելով՝ *«ձեռքը չէր զարկել սրտին»:* Բնութագիրը ծավալվում է ու աստիճանաբար զարգանում: Այստեղ պազրվում են կերպարի հիմնական գծերը: *Գրանիտյա ժայռ էր նա...* նախադասությամբ տրվում է «նրա» բնավորության որոշակի հատկությունների ամփոփ գնահատականը: Բայց թեման ունի ենթաթեմա, որ ներկայացված է երկրորդ ՇԲԱ-ի առաջին նախադասությամբ: Ենթաթեման ևս «նրա» կերպարի բնութագրությունն է, բայց արդեն ուրիշ՝ երջանկության մասին ունեցած ըմբռնման հայեցակետով: Այս ենթաթեմայի աստիճանական խորացմամբ բացահայտվում են կերպարի ներքին էության նորանոր

կողմեր: Իսկ վերջին նախադասությունը՝ *«հիվանդը նրան անհանգստացնում էր»*, ամփոփում է ու հանրագումարի բերում գլխավոր հերոսի հոգեկան կերտվածքի մարդկային, ավելի ճիշտ՝ անմարդկային հատկանիշների նկարագրությունը:

Շարահյուսական բարդ ամբողջությունը կարող է ձևավորվել նաև չափածո խոսքում: Նրա սահմանները, սակայն, չեն կարող որոշվել պարբերության հատկանիշներով: *Նոր տող* հասկացությունը բանաստեղծության մեջ կամ պոեմում բնավ չի առնչվում պարբերության հետ: Տողը կամ, ավելի ստույգ՝ բանաստողը, ինչպես և բանաստունը, հատածը, ոտքերը՝ իրենց բազում տարատեսակներով, ռիթմական միություններ են, որոնք թելադրված են չափաբերական խոսքի տեսակային-կառուցվածքային բնավորությամբ: Ուրեմն նախադասությունը նոր տողից սկսելը չի ազդարարում ՇԲԱ-ի սկիզբը կամ ընդհանրապես նրա գոյությունը բանաստեղծական այս կամ այն հատվածում:

Չափածո խոսքում շարահյուսական բարդ ամբողջություն է ձևավորվում այն պարագայում, եթե միտքը արտահայտվում է վերը հիշատակված եռամասնյա կառուցվածքային համապատասխան գործոնների շղթայական հաջորդականությամբ: Այստեղ արդեն էական չէ, թե այդ երեք իմաստային-շարահյուսական իրակություններից յուրաքանչյուրը բանաստեղծական տողերի տեսակետից ինչ տարածություն կունենա, բաղկացած կլինի մեկ առանձին տողի՞ց, առանձին-առանձին երկատողերի՞ց (դիստիքոս), եռատողերի՞ց (տերցին), քառատողերի՞ց, թե՞ ավելի ծավալուն բանաստներից:

Ահա ինը տողից կազմված մի բանաստուն, որ ներկայացնում է մեկ շարահյուսական բարդ ամբողջություն:

Օ՜, թատերական դիմակներ հագած իրերն այս բազում...
Ես համոզված եմ, ես հաստատ գիտեմ,
Նրանք ինձանից վախենում-քաշվում, ամաչում են միշտ,
Ինչպես մերկ կինը՝ անսպասելի հայացքից օտար:
Եվ ամբողջ կյանքում նրանք մշտապես մի բան են անում՝
Դիմակ են դնում, դիմակ են հանում,
Ի՜նչ է թե իրենց դեմքը չտեսնեմ ավելորդ անգամ:
Եվ նրանք, գիտեմ, մահս են ցանկանում,
Որպեսզի ապրեն... առանց դիմակի... (ՊՍ):

Առաջին բանաստողը, որ միակազմ մի նախադասություն է, անվանում է թեման: Թեմատիկ նյութի բովանդակությունը հետզհետե ծավալվում ու այլևայլ բնութագրումներով հարստանում է՝ սկսած երկրորդ տողից մինչև յոթերորդը՝ ներառյալ: Պատումը եզրափակող նախադասությունը գրավում է վերջին երկու բանաստողը: Սա էլ եռամասնության երկրորդ հատվածից բխող ընդհանրացումն է, որով ավարտվում է շարահյուսական բարդ ամբողջությունը:

Նախադասությունների կապակցությունը, ինչ ասել կուզի, չի ավարտվում ՇԲԱ-ների մեջ մտնող միավորների կապակցությամբ: Մեկ շարահյուսական բարդ ամբողջությանը հաճախ հաջորդում են շարահյուսական այլ միավորներ, որոնք նույնպես կարող են լինել ՇԲԱ-ներ, բայց կարող են նաև չլինել այդպիսիք, այլ ներկայացնել խոսքային շղթայի այլ բնույթի օղակ-

ներ: Սրանք, սակայն, արդեն դուրս են գալիս շարահյուսական ուսումնասիրության ոլորտից և թևակոխում են խոսքային (բնագրային, տեքստաբանական) հետազոտությունների բնագավառը:

ՈՒՐԻՇԻ (ՄԵՋԲԵՐՎՈՂ) ԽՈՍՔ

§ 317. Խոսողը կամ հեղինակը բանավոր կամ գրավոր խոսքում ինչ-ինչ նկատառումներով հաճախ մեջբերում է կատարում այլոց կամ անցյալում իր իսկ ասածից կամ գրածից:

Նման մեջբերումը կոչվում է *ուրիշի խոսք* կամ *մեջբերվող խոսք:*

Ուրիշի խոսքը ունի իմաստակառուցվածքային երկու տարատեսակներ՝ ա) *ուղղակի խոսք* և բ) *անուղղակի խոսք:*

Ա. ՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔ

§ 318. *Ուղղակի խոսքը ուրիշի, նաև իր սեփական խոսքի վերարտադրությունն է բառացի, առանց կառուցվածքային, բառական, հնչերանգային, ոճական և բառաքերականական այլ հատկանիշների փոփոխության:*

Դա բարդ կամ պարզ նախադասության, պարբերույթի, շարահյուսական բարդ ամբողջության տեսքով արդեն ձևավորված պատրաստի միավոր է, որ վկայակոչվում է հեղինակի կողմից՝ որպես իր մտքի, շարադրանքի բաղկացուցիչ մաս, որպես իր իսկ սեփական դատողությունը՝ երբևէ ասված կամ գրված, որևէ լրացուցիչ փաստարկ կամ գրական կերպարի շուրթերից հնչած խոսք և այլն: Հմմտ.

1. Իմ սիրելի՛ Հռիփսիմե: Չեմ հիշում՝ որ բանաստեղծն է ասում՝ «թշվառությունը մենակ չի գալիս», և դա ճիշտ է (ՆԴ): 2. Հիշո՞ւմ եք, անցյալ հունիսին ըսի. – Թուրքերը Կովկաս պիտի արշավեն. դուք ինչո՞վ պիտի պաշտպանեք ձեզ, ձեր զավակները և ձեր պատիվը (ՍՍ): 3. – Կանե՛մ,– բացականչեց Դավիթը: – Իմ հայրը հո գիտե՞ր անել: Պապս արե՞լ է... Ե՛ս էլ կանեմ: Հո գիտե՞ս ինչպես հայրս հինգ ռուբլու դատ սկսեց գերմանացի Հայզերի դեմ, որը գանգատ տվեց, թե հաշվի մեջ հայրս պակաս է վճարել իրեն: Հո գիտե՞ս, որ վերջին հազար ռուբլին ծախսեց դատարաններում և տարավ իր դատը, իր խոսքը, որ ինքը վճարել է լրիվ (ԴԴ):

Առաջին օրինակում հեղինակը իր միտքը հայտնում է ինչ-որ բանաստեղծի դիպուկ ձևակերպմամբ: Երկրորդում հեղինակը բառացի հիշատակում է իր իսկ նախկինում ասած խոսքը: Երրորդում գրողը խոսեցնում է գրական կերպարին:

Ուղղակի խոսքը գործածվում է առավելապես գրական աղբյուրներում:

Ունի կառուցվածքային և կիրառական հետևյալ հատկանիշները:

1. Ուրիշի ուղղակի խոսքը ենթադրում է *հեղինակային խոսքի առկայություն:* Այն օրինաչափորեն զուգորդվում է հեղինակային նախադասությամբ: Վերջինիս մեջ պարտադիր պետք է լինեն ձևակազմական երկու գործոններ: 1) Պետք է տրվի մեջբերվող խոսքի *հեղինակի անունը.* հատուկ թե

հասարակ գոյականով, թե դերանվանմբ դրսևորված լինի՝ էական չէ: 2) Իմաստային -շարահյուսական որոշակի անցումով պետք է կիրառված լինի *ասացական*, երբեմն նաև *իմացական-մտածական* իմաստով կամ սրանց մերձավոր նշանակությամբ մի բայ՝ դիմավոր թե անդեմ: Տե՛ս վերի օրինակները, որտեղ առաջինում ուրիշի խոսքի հեղինակը բանաստեղծն է, ասացական բայը՝ *«ասում է»*: Երկրորդում ասացական բայն է՝ *«ըսի»*, իսկ խոսքի հեղինակային պատկանելությունը երևում է նշյալ բայի դեմքից (*առաջին դեմք*), որ նշանակում է, թե խոսողը ինքն իր ասածից է մեջբերում կատարում: Երրորդում ուրիշի խոսքի հեղինակը Դավիթն է, իսկ ասացական իմաստով բայինն փոխարինել է նշանակությամբ հոմանիշ մի այլ բայ՝ *«բացականչեց»*:

Հեղինակային նախադասության մեջ կիրառվող ասացական բայերից են՝ *ասել, արտասանել, բարբառել, գոչել, հայտնել, հարցնել, պատասխանել, պատմել, վերապատմել, վրա բերել, հայտարարել, առարկել, գրել, կարդալ, շարադրել, վերաշարադրել, խոսել* և այլն:

Ասացական իմաստով բայերի փոխարեն, եթե մասնավորապես մեջբերում է արվում սեփական մտքերից, կարող են գործածվել իմացական-հասկացական կամ մտածական նշանակությամբ բայեր, որպիսիք են՝ *մտածել, միտք անել, մտորել, խորհել, գիտենալ, հիշել, կռահել* և այլն: Տե՛ս վերի օրինակները, այլև՝

– Դատարկ խոսք է ասածդ, – խստությամբ *վրա բերեց* ուրիշը, –ուրախ լինենք, քե՛ֆ անենք, ամեն տարի ողջ, առողջ (ԱԻ): – Ինչու՞ ես ինձ այդպես նայում, քույրի՛կ, – *հարցրեց* նա՝ լռությունը խզելով (ՆԴ): – Ինչու՞ պիտի չդիմանա, – *առարկում է* Սաթոն հանգիստ, – Պարտիական մարդ է, ա՛յ քիր, դու էդ մեկը լա՞վ իմանաս (ՊՍ): Երբ Շապուհ արքան նստում էր սեղան (...), *Բարբառում էր* կենացն առաջին. – Թող ճերմակածիս գինի՝ վայելի, թող ճերմակածիս արբենա՝ գինով (ՎԴ) և այլն:

2. Հեղինակային խոսքում ասացական-իմացական իմաստով բայերին կարող են փոխարինել մերձավոր նշանակությամբ բայեր, ինչպիսիք են՝ *ավելացնել, դիմել, կրկնել, երեքկնել, հարել, նշել, նկատել, գտնել, հոխորտալ* և այլն: Հմմտ.

Ուստահ երգեց, և ողջ խումբը, բոլորը *կրկնեցին* նրա երգած տողերը. – Դե՛հ, սիրո՛ւն կաքավ, բռնե պա՛րը բոլորի, Մեր թշնամին պարի հետքում մոլորի (ԱԻ): [Անտոնիոսը] կանգնեց հայոց արքայի դեմ և *հոխորտաց* ցասումնալից. – Հանդգնեցի՞ր, ստո՛ր արքա, հանդգնեցի՞ր, ստրո՛ւկդ ենեց, հանդգնեցի՞ր իմ կամքի դեմ ու թագուհու (ՎԴ) և այլն:

3. Առանձին կառույցներում՝ հեղինակային խոսքի մեջ, ստորոգյալը կարող է չունենալ վերը նշված ասացական-մտածական կամ սրանց մերձավոր իմաստներ: Բայ-ստորոգյալը իր լրացումներով, հարկավ, եթե կան, կարող է նշել ուրիշի խոսքը մեջ բերելու եղանակը, հեղինակի տրամադրությունը, հոգեկան վիճակը այդ խոսքն ասելու պահին, այլև վերաբերմունքը այդ իսկ խոսքի հանդեպ: Ստացվում է մոտավորապես այսպիսի կառույց. *այսինչը այսինչ բանը ասաց այսինչ ձևով, նպատակով, գոհ* կամ *դժգոհ,*

դրվատելով թե հեգնելով ասածը և այլն: Սակայն հեղինակային նախադասության մեջ բացակայում է հենց այդ *«ասաց»* բայը: Հմմտ.

Կեսուրը՝ Թորոսի կինը, հանկարծ *դարձավ* հարսին. –Աղջի Սոնա՛, գնա՛ դուն էլ մե՛ջ մտիր, ի՞նչ անենք, գիտեմ, մոռանալու բան չէ, էի, աղջի՛կս, աշխարհքի կարգն էս է (ԱԻ): Այսինքն՝ *դարձավ հարսին ասելով* կամ *և ասաց:*

Ռուբենը չմտածեց երկար և հուսահատորեն *կարճ կտրեց.* – Կանչի՛ր՝ գա (ԴԴ): Նա, թավշե ծաղիկը ձեռքը վերցնելով, *ծիծաղում ու ցույց էր տալիս.* –Վարդապե՞տը, վարդապե՞տը, գլխին՝ վեղար, կունճիկ-մունճիկ գնում է վանք (Ն. տ.): – Անհասկացո՞ղ,–*ծիծաղում էր Սպարտակը,* – ես կարևոր բան եմ հարցնում, իսկ դու ավանի կենսագրությունն ես պատմում (ՍԽ): – Չէ՛, ջա՛նս, չէ՛,– Հեղինեն *իմաստալից աչքը ճպեց,* – դե ես ոնց որ անպոչ գդալ, այս անգամ էլ մեջտեղ մտա (ՊՍ), որպես թե՝ *իմաստալից աչքը ճպելով՝ ասաց* և այլն:

4. Ուրիշի ուղղակի *խոսք չի գոյանում,* եթե հեղինակային նախադասության մեջ *չկա ասացական-հասկացական իմաստով* կամ դրան *հոմանիշ մի բայ* և ոչ էլ մի ձևով արտահայտված *ակնարկ* ուրիշի խոսքի մասին: Արտաքուստ ուրիշի ուղղակի խոսքը հիշեցնող նման նախադասությունները վերածվում են հեղինակի խոսքի կամ դառնում նրա խոսքի շարունակությունը՝ ուրիշի խոսք չլինելով: Հմմտ.

– Որտե՞ղ են ապրում քամիները: – Պալատների մեջ: Եվ անշուշտ մե՛ր իսկ ռունգերում: – Որտե՞ղ է մեռնում լռությունը: – Քարոզների մե՛ջ: Եվ բռնադատված մե՛ր իսկ ունկերում: – Որտե՞ղ է պահված արյունը մեր տաք: Մեր հին թշնամու եղունգների տակ, Սկրատի՛ կարոտ կեռ եղունգներում (ՊՍ):

Ուրիշի ուղղակի խոսք չի ձևավորվում նաև այն դեպքում, երբ երրորդ դեմքով տարվող հեղինակային պատումին նոր նախադասությամբ առերևույթ հաջորդում է մի խոսք՝ ուղղված խոսակցին, բայց բառական որևէ ակնարկ չկա ո՛չ ասելու և ո՛չ էլ ասողի մասին: Հմմտ.

Արոնը ջութակ նվագել էր սովորում Վարշավայի կոնսերվատորիայում: Հայրը՝ Դավիթը, որ շուկայի մի փոքրիկ ծակուռում հին նոտաներ էր գնում-վաճառում, շատ էլ հավան չէր նրա այդ գործին:

– Ինչացու՞ են այդ տզտզոցներդ: Խելքս դրանցից բան չի կտրում: Միջակությունը արժեք չունի: Եթե մի բան չես դառնում, ուրի՛շ գործի անցիր: Եվ հետո՝ ես քեզ չեմ կարող կոնսերվատորիայում պահել: Գլխիդ ճարը տե՛ս:

Եվ դարձավ կնոջը.

– Խոսի՛ր, համոզիր դու՛ էլ (ԴԴ):

Այստեղ ուրիշի ուղղակի խոսք է միայն վերջին նախադասությունը՝ *խոսի՛ր, համոզի՛ր...,* որը անմիջապես հաջորդում է հեղինակային խոսքին՝ *եվ դարձավ կնոջը,* և կապված է նրա հետ քերականորեն: Ինչ վերաբերում է՝ *«Ինչացու՞ են այդ տզտզոցներդ...»* հատվածին, այն ուրիշի խոսք չէ, այլ ոճական յուրօրինակ հնարանքով կառուցված հեղինակային խոսք՝ *«Արոնը ջութակ նվագել էր սովորում, իսկ հայրը հավան չէր նրա այդ գործին»* թե-

մատիկ նյութի զարգացումը՝ հոր շուրթերով: Իբր թե հայրն է ասում, և իրապես էլ հայրն է ասում, և ասում է հենց որդուն՝ Արոնին: Բայց կառուցվածքային տեսակետից դա որևէ նշանակություն չունի, քանի որ հեղինակը չի ասում՝ *ասում է* կամ նման մի բան: Հեղինակային խոսքի սկիզբն ավարտվում է, ինչպես տեսանք, [հայրը] *«շատ էլ հավան չէր նրա այդ գործին»* նախադասությամբ, որտեղ ոչ մի ակնարկ չկա դրան հաջորդող ենթադրյալ ուրիշի խոսքի մասին: Պարզապես չկա հեղինակային խոսքը ուրիշի խոսքին կապակցող բառական օղակը:

Ասվածից, սակայն, չի կարելի եզրակացնել, թե հեղինակի խոսքում պարտադիր պետք է առկա լինի ասացական-մտածական իմաստով կամ հարակից՝ վերը նշված նշանակություններով մի բայ: Որոշ կառույցներում այն կարող է բացակայել: Դա կարող է լինել հատկապես գրավոր, այն էլ գիտական ոճի աղբյուրներում, որտեղ հեղինակը իր միտքը՝ դրույթը, դատողությունը, վերլուծությունը, ընդհանրացումը ձևակերպում է ուրիշի դրույթը, դատողությունը կամ հատվածներ ուրիշի դրույթից, վերլուծությունից ներառելով իր խոսքի մեջ:

Ներառված մասը վերածվում է ուրիշի ուղղակի խոսքի միայն երեք պայմանների առկայությամբ՝ ա) մեջբերված լինի *կատարելապես անփոփոխ* կերպով, բ) *առնված լինի չակերտների մեջ*, գ) հեղինակային նախադասության մեջ կամ տողատակի ծանոթագրությամբ *նշվի պատկանելությունը:* Հմմտ.

Հայերենի կանոնարկված շարադասությամբ ամեն լրացում «դրվում է իր լրացյալից առաջ» (Մ. Աբեղյան):

Սա մի պարզ ընդարձակ նախադասություն է, որի մեջ կա և՛ հեղինակային խոսք, և՛ ուրիշի ուղղակի խոսք: Հեղինակային, տվյալ դեպքում՝ տողերիս գրողի խոսքը ամբողջական նախադասությունն է, որի միտքը հարըստացված ու հիմնավորված է ուրիշ մի հեղինակի ինչ-որ դրույթի պատառիկով: Իսկ այդ պատառիկն էլ այլ բան չէ, քան ուրիշի ուղղակի խոսք, որ դարձել է հեղինակի, այսինքն՝ մեր խոսքի շարունակությունը: Ում խոսքը լինելն էլ նշված է փակագծում (Մ. Աբեղյան):

Մեկ այլ, ավելի ծավալուն օրինակ, այլ կառուցվածքով:

Գրաբարում բայը ունի երեք եղանակ՝ սահմանական, հրամայական, ստորադասական: Ստորադասական եղանակը, *ինչպես իրավացիորեն նկատում է Ա. Աբրահամյանը,* «նշանակությամբ համապատասխանում է աշխարհաբարի ըղձական, պայմանական և հարկադրական եղանակներին: Իսկ թե որ դեպքում որ եղանակին է համապատասխանում, որոշվում է բայի գործածությամբ տվյալ բնագրում» (տե՛ս նրա «Գրաբարի ծեռնարկը», Եր., 1976, էջ 106): Այստեղ ևս հեղինակի (այսինքն՝ մեր) խոսքի անմիջապես շարունակությունն է ուրիշի ուղղակի խոսքը: Կա անմիջական նշում ուրիշի խոսքի հեղինակի մասին, կա նաև նշում, որ նա այդ միտքը *ասել է,* այսինքն՝ ասացական-բայ լրացյալ (*նկատում է*): Առկա է նաև ասույթի աղբյուրը՝ փակագծված: Այն կարող էր տարվել նաև տողատակ՝ որպես ծանոթագրություն:

§ 319. Ուղղակի խոսքը ամենից ավելի հաճախված է երկխոսություններում: Այստեղ այն հանդես է գալիս իբրև հեղինակային պատումի ծավալման, կերպարի մտածողության, հոգևոր կերտվածքի բնութագրության, լեզվական անհատականացման միջոց: Երկխոսության մեջ թեև աշխատում են ուղղակի խոսքի կառուցվածքային ընդհանուր օրինաչափությունները, բայց կան նաև որոշակի նրբություններ, որոնք կապված են գրական երկի սեռային առանձնահատկությունների հետ:

Երկխոսությունները կիրառվում են հիմնականում երկու՝ էպիկական և դրամատիկական սեռերի ժանրերում: Հեքիաթի, պատմվածքի, առասպելի, վիպագրության, նորավեպի, վիպակի, վեպի ժանրերը դժվար է պատկերացնել առանց շարադրանքի մեջ ներհյուսված երկխոսությունների: Իսկ դրամատիկական սեռի գործերը կառուցված են հենց միայն երկխոսությունների հիմքի վրա:

Էպիկական սեռի ժանրերում երկխոսությունները բնորոշվում են նրանով, որ հեղինակային խոսքի հետ կապվում են ո՛չ այնքան ասացական իմաստ արտահայտող բայերի միջոցով, որքան ասելու եղանակը, ձևը կամ նման հանգամանքներ նշող բայերի օգնությամբ: Եվ դա հասկանալի է: Ոճական տեսակետից բնավ խրախուսելի չէ երկու կամ ավելի զրուցակիցներից յուրաքանչյուրի արտասանած ամեն մի խոսքից, նախադասությունից, ռեպլիկից առաջ կամ հետո նշել՝ *ասաց, հարցրեց, պատասխանեց* և նման բայական միավորներ: Ուստի և դրանց փոխարեն կիրառվում են այնպիսի բայեր, որոնք պարզապես ակնարկում են ուրիշի ուղղակի խոսքի առկայությունը: Սրանք էլ հենց այդ խոսքը կապակցում են հեղինակային նախադասությանը: Իսկ թե ինչպիսի բայեր են օգտագործվում նման կառույցներում, դա արդեն կապված է խոսքային ընդհանուր շղթայի, իրադրության, հեղինակային գրելաոճի, նախասիրության և այլ հանգամանքների հետ: Հմմտ.

Քերմանշահցի վաճառական Հյուսեյնը թիկն է տալիս իր հակերին:

– Դա տրտունջի ձայն չէ, – *համրիչի հետ ծանր-ծանր շարեց նա,*– ուղտը այդ ձայնը հանում է և՛ անբեռ ժամանակ, և՛ չոքած, և՛ կուշտ: Այդ ձայնը, – *ծուխը ներս քաշեց Հյուսեյնը,*– մի ձայն է, հենց այնպես, անիմաստ:

– Բայց մի բան ուզում է, – *փորձում է լեզվաբանը:*

Համրիչները՝ չակ-չուկ.

– Ուղտը լուռ կենդանի է, չի տրտնջում: Օրեր, շաբաթներ, ամիսներ կընթանա, ո՛չ կեր կպահանջի, ո՛չ խմելիք, ո՛չ հանգիստ, սակավապետ է ու լուռ (ԴԴ):

Այս հատվածում հեղինակային նախադասություններն են՝ *«Համրիչի հետ ծանր-ծանր շարեց նա», «ծուխը ներս քաշեց Հյուսեյնը», «փորձում է լեզվաբանը»* և *«համրիչները՝ չակ-չուկ»:* Ինչպես դժվար չէ նկատել, այստեղ չկան այնպիսի բայեր, որոնք նույնիսկ հեռավոր կերպով բովանդակեին ասացական կամ մտածական իմաստներ: Եվ, սակայն, խոսքային ընդհանուր հյուսվածքում գոյացել են հեղինակային նախադասությունների հետ իմաստային-քերականական աղերս ունեցող, հնչերանգորեն ձևավորված ուղղակի խոսքեր:

Երկխոսության մեջ, մանավանդ, եթե մասնակիցների թիվը երկուսից ավելի է, և ուրիշի ուղղակի խոսքերը կարճ են ու համառոտ կամ ռեպլիկի բնույթ ունեն, պարտադիր չէ, որ յուրաքանչյուրը դրանցից ուղեկցվի հեղինակային նախադասությամբ: Վերջինս, դրվելով առաջին ուղղակի խոսքից առաջ, կարող է վերաբերել և հաջորդներին: Հմմտ.

Այսուս զինվորների դեմքերն էլ մի քիչ իստակվեցին: ***Սկսեցին փսփսալ.***

– Գիշերը մնո՞ւմ ենք:

– Կարելի է, որ մնանք:

– Մի քիչ դինջանանք:

– Բա՞:

– Չյուսը ուշացել է: Ամա թե որ գա, կնստի (ԴԴ):

Այստեղ երկխոսությունը կազմող նախադասությունները ուրիշի ուղղակի խոսքեր են, որքանով որ առկա են հեղինակային նախադասությունը (***Սկսեցին փսփսալ***) և վերջինիս շարահյուսական-հնչերանգային կապը նրանց հետ:

6. Ուղղակի խոսքը կարող է ունենալ տարբեր կազմություններ՝ տարբեր արտահայտություններով: Կարող է կազմված լինել պարզ համառոտ կամ ընդարձակ, միակազմ կամ երկկազմ նախադասություններից, նույնիսկ մեկ բառից, անգամ ձայնարկությունից: Տե՛ս վերի օրինակը՝ – *Բա՞*: Այն կարող է արտահայտված լինել բարդ նախադասությամբ՝ իր անխտիր բոլոր տարատեսակներով: Կարող է կազմված լինել մեկ կամ ավելի պարբերություններից, մեկ կամ ավելի շարահյուսական բարդ ամբողջություններից: Ծավալը ուղղակի խոսքի ձևակազմական հատկանիշ չէ:

Ինչպես նշվեց, ուրիշի ուղղակի խոսքը հեղինակային խոսքի յուրօրինակ շարունակությունն է՝ կառուցվածքային ինքնատիպ արտահայտությամբ: Այն քերականորեն կապված է հեղինակային նախադասությանը և նրա հետ միասին, իմաստային, հնչերանգային ավարտվածություն ստանալով, ձևավորվում է որպես շարահյուսական մեկ միավոր, ինքնատիպ մի բարդ նախադասություն՝ բաղադրիչների ստորադասական հարաբերությամբ: Իբրև գերադաս եզր հանդես է գալիս հեղինակային նախադասությունը. ստորադաս եզրը ներկայացնում է ուղղակի խոսք: Սրա շարահյուսական գործառույթը պայմանավորված է նրանով, թե գերադաս եզրի ո՛ր բառին է լրացնում: Ճնշող մասով լինում է ուղիղ խնդիր, քանի որ հեղինակային խոսքում իբրև լրացյալ կիրառվող բոլոր ասացական բայերը ներգործական սեռի են: Տե՛ս վերի համապատասխան օրինակները:

Եթե բայի սեռը փոխված է կրավորականի, ուղղակի խոսքը կունենա ենթակայական կախյալ նախադասության բնավորություն: Հմմտ.

– Սա մեր տունն է, Սվե՛տա: Մե՛րը, այսինքն՝ իմն ու քոնը, – *լսվում էր* հեռվից՝ միջանցքում (ՍԽ):

Ուրիշի խոսքը իր լրիվ ծավալով այստեղ հեղինակային նախադասության մեջ կիրառված *լսվում էր* բայի ենթակայի դերն է կատարում:

Հեղինակային խոսքի կառուցվածքի հետ կապված՝ ուղղակի խոսքը կարող է ունենալ նաև որոշչային կամ բացահայտչային գործառույթներ: Սա

լինում է այն դեպքում, երբ ուրիշի խոսքը քերականորեն և իմաստով կապվում է հեղինակային խոսքում առկա ո՛չ թե ասացական բայի, այլ *գոյականական* մի անդամի հետ: Հմմտ.

Ջերմ վիճաբանության ժամանակ ասաց նա մի *դարձված.*

– Կմեռներ նա քաղցից, եթե ես նրան ձեռք չկարկառեի (ԱՇ):

Ուրիշի խոսքը այստեղ հստակ չտարբերակվող որոշչային կամ բացահայտչային լրացում է հեղինակային նախադասության մեջ առկա *դարձված-ը* գոյականի:

– Մայրի՛կ, մայրի՛կ, – մի քանի անգամ *ծայն* արձակեց որդին (Ն. տ.):

– *Մայրի՛կ, մայրի՛կ* կոչականները, որ ուրիշի ուղղակի խոսք են, հեղինակային նախադասության մեջ կիրառված *ծայն* գոյականի բացահայտիչն են, որպես թե ասեր՝ *Մի քանի անգամ ծայն արձակեց* (կամ *արձակեց ծայն*)՝ *մայրի՛կ, մայրի՛կ:* Բայց այս օրինակում արդեն ուրիշի ուղղակի խոսք չկա. այն տարրալուծվել է հեղինակային խոսքի մեջ: Սա էլ սովորական պարզ ընդարձակ նախադասություն է:

7. Ինչպես նշվեց, հեղինակային նախադասության մեջ ասացական կամ իմաստով դրան հարաբերակից բայ-լրացյալ կարող է և չլինել: Այդ դեպքում ուրիշի խոսքը ունի որոշակի խնդրային արժեք և ընկալվում է իբրև հեղինակային խոսքում չկիրառված, բայց սպասելի ասացական բայի լրացում: Տե՛ս վերի համանման կառույցները, այլև՝

– Երբե՞ք, – *ձեռքը քափ տվեց Չախար Հակոբիչը,*– դուք այդ ի՞նչ եք ասում, մեզ կախման մեջ դնենք ուրիշների՞ց (ԱԽ):

Երևում է, որ ընդգծված հեղինակային խոսքում չկա ասացական որևէ բայ՝ *ասաց* (*բացականչեց, գոչեց, խոսեց* և այլն), բայց այն ներունակությամբ ընկալվում է, և ուրիշի խոսքը հենց այդ չեղած, բայց սպասելի, աներևույթ կամ ներունակային բայի լրացումն է, որպես թե՝ – Երբե՞ք..., – *ասաց Չախար Հակոբիչը՝ ձեռքը քափ տալով...* կամ *Չախար Հակոբիչը քափ տվեց ձեռքը՝ ասելով.* – Երբե՞ք...:

Կարող են լինել նաև այլ տարբերակներ, բայց այսպիսի ընդհանուր կառուցվածքով:

Նման կազմություն ունեն նաև այն ուրիշի ուղղակի խոսքերը, որոնց սկզբում դրվում է *թե* շաղկապը: Այստեղ ևս հեղինակային խոսքում բացակայում են ասացական բայեր, որոնց յուրովի փոխարինում է *թե* շաղկապը, իբր՝ *ասում է, թե...*:

Այս շաղկապը, սակայն, այստեղ կորցրել է իր կապակցական դերը և ձեռք է բերել զուտ ձևակազմական նշանակություն: Հմմտ.

Մի օր սա եկավ, *թե՝ Չոբան Չատին Ոչխարը թաքուն իմ հանդն է քաշել* (ՀԹ): Կամ՝ [Հենց էն գլխից, մեր պապերից բռնած, էսպես եկել է, էսպես էլ կերթա, նոր բան չկա...] Բարեկամս՝ *թե՝ Նոր բանը չէ գլխավորը: Բանը բախտավոր լինելու մեջ է* (ԱԻ):

Ուրիշի ուղղակի խոսքի կառուցման այս եղանակը հատուկ է առավելապես ժողովրդախոսակցական լեզվին, որտեղից և թափանցում է գրական աղբյուրների մեջ:

Ենթադրվում է, թե նման կառույցներում նախապես եղել է ուրիշի անուղղակի խոսք, այսինքն՝ ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն, որի լրացրել է գերադաս եզրի մի ասացական բայի: Վերջինիս զեղչումով և *թե* շաղկապի պահպանումով ուրիշի անուղղակի խոսքը վերածվել է ուղղակի խոսքի, ինչպես՝ *Բարեկամս ասաց* (*հայտնեց* և այլն), *թե* նոր բանը չէ գլխավորը...// *Բարեկամս՝ թե՝* նոր բանը չէ գլխավորը և այլն:

§ 320. Հեղինակային նախադասությունը և ուրիշի ուղղակի խոսքը, կազմելով շարահյուսական մի կուռ ամբողջություն, կապակցվում են քերականորեն և ինչերանգային ավարտվածությամբ: Քերականական կապակցությունը օրինաչափորեն շարահարական է: Շաղկապները կամ հարաբերականները այստեղ չեն գործում: Հարաբերյալ ևս չի կիրառվում հեղինակային նախադասության մեջ: Հնչերանգի բնույթը կախված է մեջբերվող խոսքի՝ հեղինակային խոսքի նկատմամբ գրաված դիրքից:

Ուրիշի ուղղակի խոսքը կարող է գտնվել՝ ա) *հեղինակային նախադասությունից առաջ*, բ) *նրա միջում* և գ) *հեղինակային նախադասությունը կարող է առնել իր մեջ:*

1. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ ԳՏՆՎՈՂ ՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔ:

– Գիտե՞ս՝ ինչ նորություն կա, – չարաճճի ծոր տվեց Մարուսյան (ԴԴ): – Ես ձեզ համար սուրճ կպատրաստեմ, – ասաց Ֆաթիմա խանումը՝ վեր ելնելով տեղից (ՀՓ):

Նախադաս կիրառվելու դեպքում ուղղակի խոսքը սովորաբար գրվում է նոր տողից՝ սկզբում ունենալով անջատման գիծ կամ առնվում է չակերտի մեջ: Հեղինակի խոսքից բաժանվում է ստորակետով և անջատման գծով: Եթե չակերտների մեջ է, ստորակետն ու անջատման գիծը դրվում են փակված չակերտից հետո: Եթե հեղինակային խոսքում կա ասացական բայ, այն շարադասվում է ուղղակի խոսքից անմիջապես հետո: Այսպիսի շարադասության դեպքում հնչերանգային կապը բավականաչափ զգալի է. երկու հատվածների միջև գոյանում է շարահյուսական փոքրիկ դադար, և հեղինակային խոսքը սկսվում է ավելի ցածր տոնայնությամբ, քան ուրիշի խոսքի ավարտին էր:

2. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ԳՏՆՎՈՂ ՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔ:

Ապա տխուր ասաց.

– Չեմ թաքցնի, Սպիրիդոնովն ինձ դուր է գալիս, բայց ես երբեք չեմ մոռանա, որ քո ամուսինն եմ (ԱԸ):

Չայն է վերցնում Անդրանիկը և մասնավորապես նշում. «Դաշնակիցները պիտի ճանչնան Հայաստանի անկախությունը. այսպես է Պողոս Նուբարը հեռագրած մեզի» (ՍՍ):

Պատանյակն հուրհեր վիպեց, ասաց.

– Եվ գնել գեղեցիկ էր հույժ, և մոգիչ՝ Փառանձեմը՝ դուստրը քաջ Անդովկա (ՎԴ):

Այսպիսի շարադասության դեպքում հեղինակային նախադասությու-

նից հետո դրվում է միջակետ, իսկ ուրիշի խոսքը սկսվում է նոր տողից՝ սկզբից ունենալով անջատման գիծ, կամ առնվում է չակերտների մեջ՝ առանց գծի: Երկրորդ դեպքում այն կարող է սկսվել թե՛ տողամիջից, թե՛ նոր տողից:Այս կառույցում հեղինակային նախադասության ասացական բայը դրվում է ամենավերջում՝ ուրիշի խոսքից անմիջապես առաջ:

Երբ մեջբերվող խոսքը գտնվում է հեղինակային խոսքից հետո, երկու հատվածների միջև գոյանում է ավելի տևական շարահյուսական դադար, և կապը եզրերի միջև զգալիորեն թուլանում է՝ մարելու աստիճանի, բայց, հասկանալի է, չի մարում, այլ ընդհատվում է, այլապես կգոյացնի երկու անկախ նախադասություններ:

3. ՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔԻ ՄԻՋՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ:

– Դու ինձ չես հասկանում, մայրի՛կ,– *բացականնչեցի ես խղճահարված ու անտանելի տանջանքով:* – Ես բարկանում եմ ո՛չ թե քեզ վրա, դու ինձ ի՞նչ ես արել, իմ խե՛ղճ մայրիկ, այլ բարկանում եմ... ի՛նձ վրա, միայն ի՛նձ վրա, հիմարությա՛ս վրա, բնավորությա՛ս վրա, մտածմունքների՛ս վրա, տանջանքների՛ս վրա... (ՆԴ):

– Եթե դու ինչ-որ ճշմարտություններ ես պաշտպանում՝ մի ուրիշի պաշտամունքը ոտքի տակ տալով, ապա հաջողություն չես ունենա,– *և մի փոքր հապաղելով՝ ավելացրեց.* – ծեծը գլխիցդ անպակաս լինի (ՈՒ):

Հնչերանգային ձևավորմամբ այս կառույցի առաջին մասը հիշեցնում է հեղինակային նախադասությունից առաջ դրվող խոսքը, երկրորդ մասը՝ հեղինակային նախադասությունից հետո դրվող խոսքը: Առաջին մասի արտասանությունը սկսվում է բարձրացող հնչերանգով, վերջում փոքր-ինչ իջնում և ընդհատվում է: Գոյանում է հնչյուններից զերծ մի փոքրիկ միջոց, որից հետո քիչ ավելի ցածր տոնայնությամբ արտաբերվում է հեղինակի խոսքը: Ձայնային տոնայնության ո՛չ այնքան մեծ տարբերությունը և շարահյուսական ո՛չ տևական դադարը բավականաչափ սերտ են դարձնում առաջին և երկրորդ մասերի կապակցությունը: Ուղղակի խոսքի երկրորդ մասը արտաբերվում է նույն տոնայնությամբ, ինչով ավարտվել էր առաջին մասը, բայց ավելի մեծ դադարից հետո: Այս հանգամանքը թուլացնում է կապը հեղինակային նախադասության և նրան հաջորդող խոսքի միջև: Ձայնային ելևէջավորմամբ և կապակցության սերտության աստիճանով այս հատվածը հար և նման է հեղինակային նախադասությունից հետո գտնվող ուղղակի խոսքին:

Քանի որ ուղղակի խոսքը ընդմիջվում է հեղինակային նախադասությամբ, վերջինիս բայ-լրացյալը միաժամանակ չի կարող մերձենալ երկու հատվածներին: Ուստի և այն դրվում է կա՛մ հեղինակային խոսքի սկզբում՝ անմիջապես հաջորդելով ուղղակի խոսքի առաջին հատվածին, կա՛մ վերջում՝ անմիջապես նախորդելով երկրորդ հատվածին:

Նայած ուղղակի խոսքի բովանդակությանն ու բնույթին՝ այն սկսվում է նոր տողից, անջատման գծով, կամ առնվում է չակերտների մեջ: Վերջին դեպքում չակերտը փակվում է ամենավերջում: Հեղինակային խոսքի սկզբում դրվում է ստորակետ-գիծ, իսկ վերջում՝ կա՛մ ստորակետ-գիծ, կա՛մ

միջակետ-գիծ, կա՛մ վերջակետ-գիծ՝ նայած ուրիշի խոսքի կառուցվածքին: Վերջակետ-գիծ դրվում է այն դեպքում, եթե ուղղակի խոսքի առաջին հատվածը ավարտուն նախադասություն է:

4. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՍՔԻ ՄԻՋՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔ:

Երեխայական պարզամտությամբ բացականչեց.

– Ինչքան լավ պատմեցիք: Գիտե՞ք ես հայերեն լավ չգիտեմ, որովհետև մեր տանը հայերեն ոչ ոք չի խոսում, հորս խոսելն էլ ի՞նչ հայերեն է: Դրա համար եմ ձեզ հետ ռուսերեն խոսում, – *ավելացրեց իսկույն մի տեսակ տխրությամբ* (ՆՂ):

Եվ Վազգենը մեկ-մեկ ներկայացրեց.

– Ահա այս չարաճճին՝ Սուրենը, հիդրավլիկ ինժեներ է: Սրան 1915 թվին ռուս-տաճկական ֆրոնտից բերել եմ՝ հանելով գետից, ուր նրան նետել էր հոգնած, փախստական մայրը: Ինչպես տեսնում եք, իմունիտետ ունի ջրից և հաղթում է ջրին: Սա Տիգրանն է՝ նույնպես նախկին որբ: Սա եկել է՝ եզան մեջքին նստած. նրան հանել եմ Լենինականի երկրաշարժի ժամանակ մի տան փլվածքի տակից, դրա համար էլ գեոլոգիա է ուսումնասիրում: Ահա սա էլ վիճակագիր է՝ ընկեր Լեոնիձե,– *վերջացրեց իր ծանոթությունը Վազգենը* (ԴԴ):

Այսպիսի կառույց սովորաբար գոյանում է այն դեպքում, երբ մեջբերվող խոսքը կազմված է լինում երկու և ավելի անկախ, ավարտուն նախադասություններից: Ստացվում է՝ *հեղինակային նախադասություն՝ գումարած երկու կամ ավելի նախադասություններով ձևավորված մեջբերվող խոսք, գումարած կրկին հեղինակային նախադասություն* կաղապարով կազմված արտահայտություն: Այստեղ կառուցվածքային նորություն, կարելի է ասել, չկա: Պարզապես իրար են կցված հեղինակային նախադասությանը հաջորդող և հեղինակային նախադասությանը նախորդող երկու ուղղակի խոսքեր՝ շարահյուսական մեկ ընդհանուր կառույցի մեջ: Եթե իրար հաջորդող մեջբերվող խոսքերը ներկայացնում են միայն երկու նախադասություն, տրոհումը երկու՝ հետադաս և նախադաս հատվածների, որևէ դժվարություն չի ներկայացնում: Իսկ եթե դրանց թիվը երեք է և ավելի, այդ դեպքում տրոհումը դժվարանում է: Եվ քանի որ սրանք էությամբ նույնական են մեջբերվող հետադաս և նախադաս խոսքերով կառույցներին, ունենում են հնչերանգային նույն ձևավորումը, ինչ որ նախորդները: Կետադրությամբ ևս չեն տարբերվում նախորդներից:

§ 321. Հեղինակային խոսքը սովորաբար շարադրված է լինում *երրորդ դեմքով*, և դա հասկանալի է: Էպիկական պատումները օրինաչափորեն տարվում են երրորդ դեմքով: Բայց լինում են նաև բացառություններ՝ դարձյալ կապված գրական սեռի ու ժանրի և, որ նույնքան էական է, հեղինակային նախասիրության հետ: Այսպես, օրինակ, Նար-Դոսի «Աննա Սարոյան» վիպակը ծայրից ծայր շարադրված է ո՛չ թե երրորդ, այլ առաջին դեմքով: Նրանում անշուշտ կան մեջբերվող խոսքեր, և՝ բավականաչափ շատ:

Ասվածից, սակայն, չի բխում, թե այս և նման պատումներում հեղինակային նախադասությունը պարտադիր պետք է շարադրված լինի առաջին դեմքով: Այդպես ևս շարադրվում է, բայց դա չէ էականը, այլ այն, որ հեղինակը հանդես է գալիս որպես գործող անձ, գործողությունների մասնակից՝ սյուժետային գծի զարգացման մեջ իր վճռական դերով: Այստեղից էլ՝ իր անմիջական մասնակցությունը երկխոսություններին, որտեղ նա միշտ և անխտիր հեղինակային նախադասության հեղինակն է, հաճախ՝ նաև մեջբերվող խոսքի հեղինակը: Այս դեպքում է ահա, որ խոսքը կառուցվում է ո՛չ միայն *այսինչը ասաց այսինչին* սկզբունքով, որ բխում է երրորդ դեմքով շարադրանքի էությունից, այլև՝ *ես ասացի, Ա-ն ինձ ասաց, Ա-ն քեզ ասաց* կամ՝ *դու ինձ ասացիր* և նման դերանվանական ու բայադիմային ձևերով: Դիմային նման բազմազանությունը կարող է արտահայտվել անձնական տարբեր դեմքերի դերանուններով, այլև ստացական հոդերով: Հմմտ.

– Տեսա՞ր, – կտրեց նրա կցկտուր խոսքը *բարեկամս*, – մատաղ իր ոտքովն է եկել:

– Ես մատաղ լինեմ *ձեզ* (այսինքն՝ *հեղինակային խոսքի հեղինակին* և *նրա բարեկամին* – Ա.Պ.), – դարձավ ինձ երիտասարդը, – ես շատ կխնդրեմ: Ո՛չ, թույլ չեմ տա... ես գիշեր իմ հյուրն եք, չէ՛, չեմ թողնի (ԱԻ): Կամ՝

– Գրիգո՛ր, ինչու՞ այսօր այսպես ես խոսում, – չկարողանալով դիմանալ՝ *հարցրի* կարճ լռությունից հետո:

– Ինչու՞, – արտասանեց քնքշորեն, նայեց *աչքերիս* և մի տեսակ օտարոտի կերպով ժպտաց: – Որովհետև պետք է ... մեռնեմ, – ավելացրեց հանդարտ ձայնով, բայց վերջին բառն արտասանեց այնքան կամաց, որ հազիվ լսեցի (ՆԴ) և այլն:

Ինչպես դժվար չէ նկատել, երկխոսության կողմերից մեկը հեղինակն է, ավելի ստույգ՝ հեղինակային խոսքի հեղինակը:

Ուրիշի ուղղակի խոսքը, ինչպես նշվեց (§ 319, 6), կարող է բաղկացած լինել մեկ բառից, բառակապակցությունից, պարզ համառոտ կամ ընդարձակ, միակազմ կամ երկկազմ նախադասությունից, այլև՝ բարդ նախադասությունից՝ իր բոլոր տարատեսակներով, նախադասությունների կապակցությունից: Նման օրինակներ վկայված են վերը:

Հեղինակային խոսքը ևս կարող է ունենալ կառուցվածքային բազմատեսակություն: Սակայն իր ամբողջ բազմազանությամբ հանդերձ՝ նա ունենում է ձևակազմական *մեկ բնութագրող հատկանիշ՝ երկկազմ նախադասություն է:* Ենթական արտահայտված լինի թե ո՛չ, դա նշանակություն չունի: Նշանակություն չունի նաև այն, թե նրա ասացական կամ իմաստով նրան մերձավոր բայը արտահայտված է լինում դիմավո՞ր, թե՞ անդեմ ձևով: Այլևայլ տեսակցություններով քննված բոլոր կառույցներում հեղինակային խոսքը երկկազմ նախադասություն էր:

Նշելի է նաև այն, որ հեղինակային նախադասության ասացական իմաստի դիմավոր բայը առավելապես կիրառվում է *սահմանական եղանակի անցյալ կատարյալ* ժամանակածևով (*ասաց, հարցրեց, բացականչեց, դիմեց, հարեց* և այլն): Տե՛ս վերի բոլոր օրինակները, այլև՝

– Նրան է սիրում կինը ամենից շատ, ով ամենից շատ սիրում է իրեն կնոջը,– *համառեց* Սյոման գրգռված (ԴԴ):

– Հաց է՞լ չունես, – *ասաց* նա այնպիսի տոնով, որ կարծես հանցանք էի գործել (ԳՄ):

– Չեզ, երևի, – *հարցրի* ես նրան, – Ռուսաստանի՞ց են այստեղ տեղափոխել:

– Ճիշտ այդպես է, պարոն շտաբս-կապիտան,– *պատասխանեց* ուրախ (ՄՀ):

Սակավ դեպքերում է միայն, որ հեղինակային նախադասության ասացական-մտածական իմաստով բայը կիրառվում է այլ եղանակաժամանակային ձևերով: Քիչ թե շատ հանդիպում է սահմանականի ներկան: Հմմտ.

– Գուրգե՛ն, մայրիկ էլ չի կարող քայլել, – *ասում է* մայրս և լալիս է:

– Իմն էլ էստեղ պրծավ, – *ասում է* տատս, – դուք գնացե՛ք..., – ու սողում է դեպի գետը (ԳՄ):

Ինչ վերաբերում է ուղղակի խոսքին, ապա նրա բայ-ստորոգյալը կարող է կիրառվել բոլոր եղանակների բոլոր ժամանակաձևերով՝ նայած խոսքային իրադրությանը, գործողությունների, եղելությունների իրադրաժամանակային հարաբերությանը և այլն:

Տե՛ս վերի օրինակները:

§ 303. Ուրիշի ուղղակի խոսքը կիրառվում է նաև *դրամատիկական* (թատերական) սեռի գործերում: Ըստ որում՝ այս սեռը ներկայացնող բոլոր ժանրերի երկերը կառուցված են հենց միայն ուրիշի ուղղակի խոսքի սկզբունքով: Այստեղ հեղինակի խոսքը ունի յուրահատուկ կառուցվածք: Այն կատարելապես տարբերվում է էպիկական և քնարական (քնարերգական) սեռերի ստեղծագործություններում կիրառվող ձևերից, որոնց մասին խոսվեց ցայժմ:

Թատերգական երկը գրվում է ո՛չ թե կամ ո՛չ այնքան ընթերցելու, որքան բեմի վրա ներկայացնելու համար: Ուրեմն գրվում է դիտելու և ունկընդրելու համար: Դեպքերը զարգանում, կերպարները բնութագրվում են հանդիսատեսի աչքի առաջ՝ իրենց իսկ խոսքի միջոցով: Հեղինակային միջամտությունը (խոսքը) սահմանափակվում է նրանով, որ պարզապես նշում է կերպարի անունը, և էական չէ՝ հատու՞կ, թե՞ հասարակ գոյականով է արտահայտված: Փոխանակ գրելու՝ *այսինչը ասաց*, պարզապես անվանվում է *այսինչը:* Իսկ թե ո՛ւմ է ուղղվում խոսքը, դա արդեն երևում է բեմահարթակի վրա՝ կենդանի կերպով: Թատերգության մեջ ուրիշի ուղղակի խոսքը հիմնականում ներկայացվում է երկխոսությունների ձևով, մասամբ նաև՝ որպես մենախոսություն (մոնոլոգ):

Երկխոսությունը այստեղ, ինչպես և այլ սեռերի գործերում, բնավ չի ենթադրում անպայման հենց երկու անձանց միջև ընթացող խոսակցություն: Խոսողն է, որ միայն մեկն է (եթե, հարկավ, նույն բառը, նախադասությունը և այլն խմբով, միասին չեն ասում կամ վանկարկում): Խոսակիցը, որին ուղղված է խոսքը, կարող է լինել մեկը: Խոսակիցներ կարող են լինել նաև մի

քանի հոգի կամ մի ամբողջ բազմություն՝ զանգվածային տեսարաններում: Հմմտ. մի փոքրիկ հատված Վ. Շեքսպիրի «Ռիչարդ Երկրորդ» ողբերգությունից: Բեմական այս տեսարանում գործում են չորս կերպարներ:

Յորք – Ահա՛ և արքան: Հե՛ զ վարվեք նրա ջահելության հետ. կայտառ մտրուկին զայրացնելը խիստ աղետալի է:

Թագուհի – Ինչպե՞ս է ազնիվ մեր հորեղբայրը:

Ռիչարդ – Ինչպե՞ս ես, ա՛յ մարդ: Ինչպե՞ս է իրեն զառամ Գոնտն զգում:

Գոնտ – Օ՛, այդ անունը որքա՞ն պատշաճ է ինձ այս վիճակում: Ջառամ Գոնտ, իրավ: Տարիքս ինձ այսպես դարձրեց ուժասպառ: Քնած Անգլիային երկար հսկեցի: Իսկ հսկողը միշտ ուժասպառվում է (ՎՇ):

Մեկ այլ օրինակ.

Չարենց – Օ՛, կա, եղել է, միշտ կլինի Պենելոպեի վարքն աներկդիմի, իր գեղեցկության խիզախումն անահ:

Փիրապ – Բայց չէ՞ որ նրա և զորավարն էր Բացառիկն՝ ինքը. Ի՞նչ է կյանքը այս թշվառ գոյության եվ միլիոնավոր նմաններինը, Որոնց կրծում է իրենց փոքրության բռնակալությունն ու ճղճիմ կիրքը:

Մեկ ուրիշը – Օ՛, եթե իմ կինն իմանա սրանց խոսքերը կծու, խոսքեր, որոնց մեջ Ես արյան դեռ թարմ հետքեր եմ տեսնում, Կխելագարվի խեղճը տանջանքից:

Մի բանտարկյալ – Չի եղել մեկը աշխարհքիս վրա դեռ մինչև հիմի, Որ ձերբազատվի սեփական մեղքի գազանի ճանկից (ՌԴ):

Թատերգության մեջ ուրիշի ուղղակի խոսքը կարող է դրսևորվել նաև *մենախոսության* ձևով: Այստեղ այն հասցեագրված է դահլիճին (հանդիսատեսին) կամ, եթե գրված է ընթերցելու համար՝ ընթերցողին: Հաճախ այն ուղղված է հենց իրեն՝ ասողին: Հմմտ.

Պեպո – Գնա՛, Պեպո՛, գետի՛նը լիզե, խալխի վուտներուն պա՛չ արա, նրանց վուտի ցե՛խը լկե... Ո՞վ իս դուն, ի՞նչ իս դուն. ի՞նչ մարթահիսաբումն իս դուն... Ի՞նչ անուն ունիս դուն: Եփոր գուզին, վուտի տակ կու գցին քիզ, վրետ կու ման գան, գետնի հիդ կու հավսրին: Դուն խո մարդ չիս... (ԳՍԵժ):

Թատերգական երկում ուրիշի խոսքից առաջ նշվող անվանումը, որ հենց հեղինակային խոսքն է, կարող է ուղեկցվել որոշ բացատրություններով՝ ուղղված դերակատարին: Դա նշագրություն է (ремарка)՝ ելքի, մուտքի, խոսքը ում ուղղելու, մարմնի կեցվածքի, շարժուձևի, ձայնի երանգի և այլնի մասին: Նշագրությունը վերաբերում է այսինչ որոշակի խոսողին և ակնարկ է պարունակում նրա խոսելու ձևի, որևէ հատկության կամ խոսքի հասցեատիրոջ մասին. այն դառնում է հեղինակային խոսքի բաղադրիչ: Հմմտ.

Իշխան Հենրի (*Նկատում է Ֆալստաֆին՝ գետնին պառկած, և դիմում է նրան*) – Ա՜հ, հին ծանոթս է: Մի՞թե վիթխարի այս մսագունդը Անզոր էր մի քիչ կյանք պահել իր մեջ: Գնաս բարո՛վ: Չե՛կ, դու արժանավոր բոլոր այրերից թանկ եղար սրտիս: Ես քո կորուստը

կարող էի ողբալ սաստիկ դառնագին, եթե կառչեի ունայն պատրանքին (ՎԾ):

Այստեղ նշագրությունը փակագծված նախադասությունն է:

Բ. ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔ

§ 324. *Անուղղակի խոսքը ուրիշի ուղղակի խոսքի վերաշարադրանքն է՝ բովանդակության էության պահպանմամբ:*

Ուրիշի անուղղակի խոսքը զգալիորեն տարբերվում է ուղղակի խոսքից: Ուղղակի խոսքը անուղղակի խոսքի վերածելիս տեղի են ունենում կառուցվածքային փոփոխություններ: Ստացվում է սովորական բարդ ստորադասական նախադասություն՝ հիմնականում *ուղիղ խնդիր,* ո՛չ քիչ դեպքերում՝ նաև *ենթակայական, որոշչային* կամ *բացահայտչային* կախյալ բաղադրիչ(ներ)ով: Կապակցությունը իրացվում է *որ* կամ *թե* շաղկապով կամ *շարահարությամբ:*

Հեղինակային խոսքը մնում է անփոփոխ, սակայն կորցնում է նախկին համեմատական անկախությունը, քանի որ դառնում է սովորական մի բարդ ստորադասական նախադասության գերադաս եզր, որին լրացնում է մի (կամ մի քանի) կախյալ բաղադրիչ: Ուղղակի խոսքը ենթարկվում է շարահյուսական որոշակի փոփոխությունների: Առաջին և հիմնական փոփոխությունը այն է, որ նա ևս դառնում է մեկ ընդհանուր բարդ նախադասության բաղադրիչ, տվյալ դեպքում՝ բարդ ստորադասական նախադասության ստորադաս եզր: Կառուցվածքային փոփոխություն է կատարվում նույնիսկ այն դեպքում, երբ ուղղակի խոսքը վերապատմվում է նույնությամբ՝ առանց դույզն-ինչ փոփոխության: Հմմտ.

Ոմանք կատակեցին՝ ասելով. – Գալոն գիշերը տանը չի քնել (ՎԾ):

Անուղղակի խոսքի վերածելիս կստացվի երկու տարբերակ՝ 1) *Ոմանք կատակեցին՝* ասելով, *որ (թե) Գալոն գիշերը տանը չի քնել:* 2) *Ոմանք կատակեցին՝* ասելով՝ *Գալոն գիշերը տանը չի քնել:* Նկատելի է, որ առաջին տարբերակում կատարվել է միայն կապակցող բառի՝ *որ (թե)* շաղկապի հավելում, իսկ երկրորդ տարբերակում այդ էլ չկա. կապակցությունը շարահարական է: Այս տարբերակը թեև իր արտաքին արտահայտությամբ նույնական է ուղղակի խոսքին, բայց ունի կառուցվածքային տարբերություն: Սա կախյալ շարահարությամբ բարդ նախադասություն է՝ համապատասխան հնչերանգային ձևավորմամբ, բաղադրիչների շարահյուսական որոշակի հարաբերությամբ: Ուրիշի անուղղակի խոսքը, այսպիսով, նույնիսկ այն դեպքում, երբ իր բառական կազմով չի տարբերվում ուղղակի խոսքից, կառուցվածքով, բաղադրիչների կապակցության սերտության աստիճանով և հնչերանգային ձևավորվածությամբ էապես տարբերվում է:

Ուրիշի ուղղակի խոսքը անուղղակի խոսքի փոխակերպելիս պետք է նկատի ունենալ հետևյալը:

1. *Ոչ բոլոր* ուրիշի ուղղակի խոսքերն են, որ հեշտ ու դյուրին *փոխակերպվում են:* Գրեթե չեն փոխակերպվում այն խոսքերը, որոնք ներկայացնում են ճարտասանական հարց, բացականչական նախադասություններ են, ընդգծված հուզական երանգ ունեն կամ ծանրաբեռնված են զգացական, կոչական, բնածայնական ձայնարկություններով, որոշ, մասնավորապես պատասխանական վերաբերականներով: Առավելապես չեն փոխակերպվում, եթե այս հատկանիշներից մի քանիսն են առկա ուղղակի խոսքում: Փոխակերպումը նման պարագաներում կլինի բռնադատված ու բռնազբոսիկ, և անխուսափելի կլինեն իմաստային և կամային-զգացական վերաբերությունների կորուստները: Հմմտ.

Արամը վերից վար մի ակնարկով ընդգրկեց Արշակի սրտաշարժ դրությունը ու ասաց. – Վա՜յ, Արշակ, *դու՞ն* ես, *ծո՛,* ի՞նչ կըննես, *ու՞ր* ես, *ինչպե՞ս* ես (ԱԻ):

Նախադասությունը ծանրաբեռնված է երկու ձայնարկությամբ (*վա՜յ, ծո*) և մեկ կոչականով (*Արշա՛կ*), որոնք խոսքային հատուկ հենք (կոլորիտ) են ստեղծում, և եթե փոխակերպենք՝ դրանք օտարելով, ուրիշի խոսքի շատ երանգներ կկորչեն: Հմմտ. Նաև՝ Իրիցկինը վախով թե հետաքրքրությամբ նայեց նրան մի քիչ էլ և կմկմաց. – Տերտե՛ր *ջան,* հիմի ի՞նչ պիտի լինի, *հը՞,* ասա... (ԴԴ):

Թե՛ զգացական, թե՛ կոչական, թե՛ բնածայնական ձայնարկություններ կան, որոնք հայտնի չափով նպաստում են խոսքի ոճավորմանը, և դրանք օտարել՝ նշանակում է կորցնել բառի, բառակապակցության, նախադասության բույրն ու հրապույրը, իսկ առանց օտարելու՝ փոխակերպումը անհնարին է: Տե՛ս վերի օրինակները, այլև՝

– Ապտակն այն տեսակ կանայք են տալիս, որոնք ոչինչ չունեն կորցնելու, – ավելացրեց նա: – *Այ,* օրինակ, փողոցում մոտենում ես մի հանրածանոթ թեթևաբարո կնոջ և առաջարկություն անում: Թե որ քիթդ դուր չեկավ, մեկ էլ տեսար՝ տարավ ու բերեց – *շրը՞խկ* (ՆԴ): Այս վերջին նախադասության ոճաստեղծ բառը հենց այդ անմեղ *շրը՞խկ* բնածայնական ձայնարկությունն է, և այն, ի՛նչ ասել կուզի, չի կարելի հենց այնպես դուրս նետել: Իսկ առանց դուրս նետելու էլ չի փոխակերպվի:

2. Հաճախ նախադասության կառուցվածքը և նրանում կիրառված բառերի քերականական ձևերը արգելք են դառնում փոխակերպման: Հմմտ.

Հետո տնեցիներին հրահանգեց.

– Ամենից պետքական բանե՛րը վերցրեք, տեսե՛ք, ճամփին կմնա՛ք (ԴԴ):

Այստեղ ուրիշի խոսքում առկա երեք բաղադրիչներից առաջին երկուսը կապված են պայմանահակադրական, երրորդը՝ երկրորդի հետ՝ խնդրային հարաբերությամբ: Երկրորդ եզրը իր բայիմաստից զատ ունի և վերաբերական-կամային արժեք և միաժամանակ նշանակում է՝ *եթե ոչ, հակառակ դեպքում, այլապես* և այլն: Մյուս կողմից՝ այն նախ և առաջ դիմավոր բայ է՝ ստորոգյալ, այդ իսկ պատճառով չի կարող զեղչվել կամ փոխարինվել նշածս շաղկապներից մեկնումեկով (*հակառակ դեպքում*-ը շաղկապական կապակցություն է):

3. Չեն փոխակերպվում այն ուղղակի խոսքերը, որոնք կազմված են հենց միայն կոչականներից, ձայնարկությունից կամ կոչականից ու ձայնարկությունից, կամ միակազմ նախադասություններ են, դարձվածային կապակցություններ, որոնք ունեն բայերի եղանակաժամանակային կայուն, անփոփոխ կիրառություն և այլն: Հմմտ.

– *Վա՛յ, մամա՛,* – գոռաց Աղալոն ու լաց եղավ (ԱԾ): – *Ի՛մ, օձի՛ զավակ,* –գոչեց Տեր-Ավետիսը՝ մոտենալով Ավետին (Ն.տ.): – *Արևի՛դ մեռնեմ, իմ աչքի լույս,* ո՞վ ես դու և ինչու՞ ես վիրավորվել, – հուզված հարցնում է անծանոթը (ՍՍ): –*Թողնե՛լ*: Դու՛րս արի, – կարգադրում է Պերևերզևը՝ աչքերը ինքնաթիռներին գամած (ԲՀ):

Կոչականները, ձայնարկությունները, դարձվածային միավորները, միակազմ նախադասությունը (*թողնել*) և բառաքերականական այլ հատկանիշներ արգելք են դառնում վկայակոչված ուղղակի խոսքերը անուղղակի խոսքի վերածելու:

4. Փոխակերպման ենթակա չեն այն ուղղակի խոսքերը, որոնց հեղինակային նախադասության մեջ *բացակայում են ասացական բայերը,* և նշվում են ուղղակի խոսքը ասելու, արտասանելու եղանակը, ձևը, տոնայնությունը և այլն: Հմմտ.

Եվ հանկարծ մի վճռական շարժումով բախ տվեց իրեն. – է՛, քննելու ժամանակն է: Թե չէ՝ մին էլ տեսար, աչքդ բաց ես անում՝ ելույթ է (ԴԴ): – Ո՞վ, – *կարծես բարկանում է Կուզման,* – երեք եղբայր ենք: Ա՛յ, Իվանը ավստրիական ֆրոնտում էր, Երոպկան՝ գերմանական ֆրոնտում: Երկուսն էլ սպանված են: Ի՞նչ տուն, տնտեսությունը քանդվեց-գնաց (Ն. տ.): – Ծիծաղում ես ինձ վրա, չէ՞, – *ժպիտը տխրում է նրա շրթունքներին* (ԲՀ) և այլն:

5. Միևնույն այս հիմունքով անուղղակի խոսքի չեն փոխակերպվում նաև դրամատիկական սեռի ժանրերում կիրառված ուղղակի խոսքերը՝ երկխոսությունները: Տե՛ս վերը, այլև՝

Սոմերսեթ – Եվ ով չի ուզում ի սեր այդ հույսի պայքարի ելնել, թող տա՛նը քնի ու թե բվի պես ցերեկն արթնանա, մարդիկ զարմանքից կծաղրեն նրան:

Թագուհի Մարգարիտ – Շնորհակալությու՛ն, ազնի՛վ Սոմերսեթ, սիրելի՛ Օքսֆորդ:

Ուելսի իշխան – Ընդունե՛ք ինձնից շնորհակալություն, ով ուրիշ ոչինչ դեռ չի կարող տալ (ՎԾ) և այլն:

6. Դժվար է փոխակերպվում կամ գրեթե չի փոխակերպվում ծավալուն ուղղակի խոսքը, որ բաղկացած է լինում մի քանի նախադասություններից, եթե մանավանդ դրանց բայ-ստորոգյալները ունենում են դիմային տարբերություններ, ասելիքը հասցեագրված է լինում տարբեր անձանց, նրանցում կիրառված անձնական դերանունները ունենում են տարբեր դեմքեր, գոյականները կամ այլ անդամներ՝ տարբեր դեմքերի ստացական հոդեր և այլն: Հմմտ.

– Հոգու՛դ սատկեմ, Մարգարյա՛ն, սպասի՛ր, – հանկարծ ամբողջ կրծքով առաջ նետվեց Թուսյանը՝ ասելով, – էքստրա *քո՛*կենացը խմեմ շատ

տեղին *նկատողության* համար: Ճիշտ է, թեև *ուտել-խմելս* մի քիչ թանկ կնստի *քեզ*, բայց պետք է ներես հանուն *մեր* բարեկամության նորոգման (ՆԴ): Կամ՝

Մայրը գրում էր.

«Իմ սիրելի՛ Վասյա. նստած եմ սեղանի առջև ու չգիտեմ, թե ինչ գրեմ քեզ: Նախ և առաջ՝ մեր մասին: Այսօր դպրոցի բարձր դասարանի աշակերտներին զինեցին: Նրանք այնքան փոքր են, որ հրացանը կրում են որպես ծանրություն: Բայց զինեցին: Մենք լաց էինք լինում, իսկ նրանք ծիծաղում էին: Ես նայում էի նրանց ու լաց էի լինում քեզ համար, քո ընկերների համար, այդ երեխաների համար, որ դեռ չեն հասկանում, թե ինչ է պատերազմը: Ես մայր եմ ու չգիտեմ, թե ինչ ասեմ քեզ: Եթե ասեմ՝ *գլուխդ պահի՛ր*, չի լինի, որովհետև ուրիշներն էլ մայր ունեն, իսկ հայրենիքը վտանգի մեջ է: Եթե ասեմ՝ *մի՛ խնայիր քեզ*, դարձյալ չի լինի, որովհետև ես մայր եմ, իսկ դու իմ որդին ես...» (ԲՀ):

Վերջին օրինակը, բացի նրանից, որ խիստ ծավալուն է և իր մեջ ներառել է մի քանի առանձին, անկախ նախադասություններ, ինքն իսկ իր մեջ ունի երկու այլ ուղղակի խոսքեր զուգակցված հեղինակային նախադասություններով (1. Եթե ասեմ՝ *գլուխդ պահի՛ր*, – չի լինի, որովհետև ուրիշներն էլ մայր ունեն: 2. Եթե ասեմ՝ *մի՛ խնայիր քեզ*, – դարձյալ չի լինի, որովհետև ես մայր եմ, իսկ դու իմ որդին ես):

Այս հանգամանքը է՛լ ավելի է դժվարացնում, կարելի է ասել՝ անհնարին է դարձնում փոխակերպումը:

Ինչպես նկատվեց վերը, ուղղակի խոսքը, հատկապես եթե ծավալուն է, մի քանի անգամ կարող է ընդմիջվել հեղինակային խոսքով, որը այլևայլ տեսանկյուններով կբնութագրի խոսողի հոգեկան վիճակը, ձայնի տոնայնությունը, շարժուձևը և այլն: Հմմտ.

Գնդապետը սուր նայեց Բաբախանովիչին ու ասաց.

– Ասում ես՝ չե՞ն սպանի իրար: Կսպանե՞ն: Իրենց սեփական հորը, մորը, քրոջը կծախեն. կսպանեն: Խուժաններ են, – *գնդապետը արդեն գոռում էր*, – խուժաններ են նրանք, մերոնք, բոլորը, чо'рт возьми, բա՛ց թողեք դրանց վաղը, – *դաժանորեն ծիծաղեց, հետո հանկարծ դառնությամբ* – թո՛ղ ամեն բան, Բաբախա՛նովիչ, – *սկսեց սեղանին թակել*, – ճղե՛ք Կոնստանտինոպոլ, լսու՞մ ես: Կոնստան-տինոպոլ (ԴԴ):

Այս և նման կառույցների ուղղակի խոսքերը ևս չեն կարող արտահայտվել անուղղակի կերպով:

7. Ուղղակի խոսքը, ինչպես նշվեց, կարող է ընդգրկել երկու կամ ավելի անկախ, ավարտուն նախադասություններ, նույնիսկ՝ մի շարահյուսական բարդ ամբողջություն (ՇԲԱ): Այն չի կարող արտահայտվել անուղղակի կերպով, քանի որ անուղղակի խոսքը հեղինակային նախադասության շարունակությունը պիտի լինի: Հմմտ. վերի օրինակները, այլև՝

Ալթունբաշյանը անմիջապես հաղորդեց «Մարս» անունով լրագրին՝ անկասկած ի գիտություն ապագա պատմագրի.

– Հայ հոգևորականությունը միշտ հայ ժողովրդից անբաժան է եղել

նրա վշտի և ուրախության օրերում: Մենք ենք փրկել ձեզ դարեր շարունակ փորձանքներից: Մենք էլ կփրկենք այժմ և հավիտյանս հավիտենից (ԱԾ):

Ուրիշի ուղղակի խոսքը այստեղ բաղկացած է երեք անկախ նախադասություններից, որոնք չեն կարող միավորվել մեկ նախադասության մեջ և փոխակերպվել անուղղակի խոսքի՝ դառնալով հեղինակային, այսինքն՝ գլխավոր նախադասության լրացում, տվյալ պարագայում՝ ուղիղ խնդիր: Եթե երեքի փոխարեն ուղղակի խոսքը ներկայացներ միայն մեկ նախադասություն, դիցուք՝ առաջինը կամ մյուսներից մեկնումեկը, ապա հեշտությամբ կվերածվեր ուղղակի խոսքի: Հմմտ. առաջինը՝ *...Ալթունբաշյանը հաղորդեց..., որ հայ հոգևորականությունը միշտ հայ ժողովրդից անբաժան է եղել նրա վշտի և ուրախության օրերում:*

Գ. ՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔԻ

§ 325. *Ուրիշի ուղղակի խոսքը շատ դեպքերում կարող է վերածվել անուղղակի խոսքի:* Վերածման կամ փոխակերպման բնութագրական հատկանիշներն են.

1. Փոխակերպման ժամանակ ուղղակի խոսքի բովանդակությունը վերաշարադրվում է հեղինակի կամ խոսողի կողմից՝ որպես իր իսկ խոսքի շարունակությունը: Այն ներառվում է *հեղինակային* նախադասության մեջ՝ ձևավորելով բարդ ստորադասական նախադասություն: Հեղինակի խոսքը փոխարկվում է գլխավոր նախադասության, ուղղակի խոսքը՝ կախյալ բաղադրիչի: Նայած թե գերադաս եզրը ինչ ձևավորում ունի, և նրա ասացական-մտածական խնդրառու բայը ինչ սեռի է, կախյալ նախադասությունը ստանում է երեք կարգի լրացական հարաբերություններ՝ ա) *խնդրային (ուղիղ խնդիր),* բ) *ենթակայական* և գ) *որոշչային* կամ *բացահայտչային:* Կապակցությունն իրացվում է *որ* կամ *թե* շաղկապով, բացառված չէ նաև շարահարությունը: Գերադաս եզրում հարաբերյալ չի կիրառվում:

Ա. Եթե գերադաս բաղադրիչի բայ-լրացյալը *ներգործական* սեռի է, կախյալ բաղադրիչը ստանում է *ուղիղ խնդրի* գործառույթ: Հմմտ.

1. – Որտեղի՞ց *գիտես,* որ ես Գևուշի տանն եմ եղել, – *հարցրեց* Հովհաննը:

2. – Ես ևս այնտեղ էի, – պարզ անմիջականությամբ *ասաց* Իշխանը (ՈՀ):

Առաջին նախադասության փոխակերպված տարբերակն է՝ *Հովհաննը հարցրեց, թե որտեղից գիտե, որ ինքը Գևուշի տանն է եղել:* Երկրորդի տարբերակն է՝ Իշխանը պարզ անմիջականությամբ ասաց, *որ ինքը ևս այնտեղ էր.*

Բ. Եթե հեղինակային խոսքի ասացական-իմացական իմաստով բայ-լրացյալը *կրավորական* սեռի է, ուղղակի խոսքը վերածվում է *ենթակայական* կախյալ բաղադրիչի: Հմմտ.

Դատական վճռի մեջ երդվյալ ատենակալների կողմից *գրված էր.* «Արդարացվում է հանցակազմի բացակայության պատճառով» (ԹՍ): Փոխա-

կերպելիս կստացվի՝ Դատական վճռի մեջ երդվյալ ատենակալների կողմից գրված էր, *որ արդարացվում է հանցակազմի բացակայության պատճառով:*

Գ. Եթե հեղինակային խոսքի ասացական-մտածական բայ-լրացյալը, լինի ներգործական սեռի թե կրավորական, արդեն իսկ *ունի ուղիղ խնդիր* կամ *ենթակա*, ուղղակի խոսքը փոխակերպվելիս դառնում է *որոշիչ* կամ *բացահայտիչ* այդ իսկ ուղիղ խնդրի կամ ենթակայի համար: Հմմտ.

Երդվյալ ատենակալների կողմից գրված էր հետևյալը. «Արդարացվում է հանցակազմի բացակայության պատճառով»: Փոխակերպված տարբերակն է՝ Երդվյալ ատենակալների կողմից գրված էր հետևյալը, *որ արդարացվում է հանցակազմի բացակայության պատճառով:*

Կամ՝ Երդվյալ ատենակալները գրել էին հետևյալը. «Արդարացվում է հանցակազմի բացակայության պատճառով»: Փոխակերպվում է այսպես՝ *Երդվյալ ատենակալները գրել էին հետևյալը, որ...:*

Թե՛ առաջին և թե՛ երկրորդ տարբերակներում ուղղակի խոսքը փոխակերպվել է բացահայտչային կախյալ նախադասության:

2. Եթե ուրիշի ուղղակի խոսքը ներկայացված է բարդ նախադասության տեսքով, փոխակերպվելիս պահպանվում են բարդության բաղադրիչների շարահյուսական հարաբերությունները: Արդյունքում ստացվում է կա՛մ ա) *համաստորադասությամբ*, կա՛մ բ) *ենթաստորադասությամբ* կապակցություն:

Ա. *Համաստորադասությամբ կապակցություն.*

1. Բաղիրյանը [սկզբում շփոթվեց, բայց շուտով հավաքեց իրեն և] ասաց.

– Ջղային է, և տրամադրությունն էլ այսօր լավ չէ (ՆԴ):

2. *– Պատիվն է, պատիվը,*– բացականչեց Գոքորը պաթոսով,– *ամենաթանկը մարդուս պատիվն է* (ՈՀ):

3. Անդրանիկը մռայլված ասաց.

–Չկա սարերու Ասլանը, անտեր են մնացել Սասունն ու Մուշը (ՍՍ):

Փոխակերպված տարբերակներն են՝ 1. (...Շուտով հավաքեց իրեն և) ասաց, *որ ջղային է, և տրամադրությունն էլ այսօր լավ չէ:* 2. Գոքորը պաթոսով բացականչեց, *որ (թե) պատի՞վն է, պատի՞վը, որ (թե) ամենաթանկը մարդուս պատիվն է:* 3. Անդրանիկը մռայլված ասաց, *որ չկա սարերու Ասլանը, (որ) անտեր են մնացել Սասունն ու Մուշը:* Ընդգծված բաղադրիչները կապակցված են համաստորադասությամբ:

Բ. *Ենթաստորադասությամբ կապակցություն.*

1. *– Թե էսպես պիտի լիներ իմ մեռնելը, ես հոժար եմ,* – ասաց հիվանդը (ԴԴ): 2. Մազերը թիկունքին թափած այդ կիսամերկ մարդը գլխատվելուց առաջ հանդարտ ձայնով շշնջաց.

– Իմ նախորդ և ուսուցիչ Կարվեասը ասում էր, որ բոլոր մարդիկ, որպես աստծու ծառաներ, հավասար պետք է լինեն (ՀՓ):

Փոխակերպված տարբերակներն են. 1. Հիվանդը ասաց, *որ եթե էսպես պիտի լիներ իր մեռնելը, ինքը հոժար է* (կամ՝ *...որ ինքը հոժար է, եթե...*): 2. ...Հանդարտ ձայնով շշնջաց, *որ իր նախորդ և ուսուցիչ Կարվեասը ասում*

էր, որ բոլոր մարդիկ, որպես աստծու ծառաներ, հավասար պետք է լինեն:

3. Ուրիշի ուղղակի խոսքը անուղղակի խոսքի փոխելիս որոշակի կառույցներում որևէ փոփոխություն չի կրում: Հեղինակային խոսքը դառնում է գլխավոր նախադասություն, ուղղակի խոսքը՝ կախյալ բաղադրիչ, որ կապակցվում է վերը նշված (§ 325, 1) ձևերից որևէ մեկով: Հմմտ.

Դավթյանը, աչքերը պատուհանի մթությանը հառած, մտածում էր.

– Կտրիճ լինելը դեռ քիչ է. դաշնակցականների շտաբում նստած է Ասատուրովը՝ դենիկինյան գնդապետ, և նա պահակներ կլինի դրած կամուրջի վրա (ԴԴ):

Փոխակերպված տարբերակը. Դավթյանը (...) մտածում էր, որ կտրիճ լինելը դեռ քիչ է. դաշնակցականների շտաբում նստած է Ասատուրովը, և նա պահակներ կլինի դրած կամուրջի վրա:

4. Ինչպես նշվել է (§ 320, Ա, Բ, Գ, Դ), հեղինակային խոսքը ուղղակի խոսքի հանդեպ կարող է գրավել տարբեր դիրքեր: Կարող է նախադասվել, միջադասվել, հետադասվել և այլն: Տարբեր այս դիրքերից փոխակերպման ժամանակ գործում է միայն մեկը: Հեղինակային նախադասությունը, որ դառնում է բարդության գերադաս եզր, օրինաչափորեն դրվում է կախյալ եզրից առաջ, այլ կերպ ասած՝ կախյալ բաղադրիչը միշտ հետադաս է: Հմմտ.

1. *Հեղինակային խոսքը՝ միջադասված.*

– Էդ է, – ասում է նա բարձրաձայն, – իմ ձեռքիս ու ոտքիս վերջին գործը (ԴԴ): Փոխակերպված տարբերակն է: Նա բարձրաձայն ասում է, որ էդ է իր ձեռքի ու ոտքի վերջին գործը:

Հեղինակային խոսքը՝ հետադասված.

– Տակավին մի առանձին պահանջ ճանապարհորդության մենք չենք զգում, – լրջորեն ասաց Հարությանը (ՆԴ): Փոխակերպված տարբերակն է. Հարությանը լրջորեն ասաց, որ տակավին մի առանձին պահանջ ճանապարհորդության իրենք չեն զգում:

Եթե հեղինակային խոսքը ուղղակի խոսքից առաջ է, պահպանվում է նույնությամբ: Տե՛ս վերի համապատասխան օրինակները: Այլև՝

Բորիս Սակվիճն ի լուր բոլորի ասաց.

– Պատերազմից հաղթանակով եկածներին են այսպես շուքով դիմավորում (ՍԽ): Փոխակերպված տարբերակն է. Բորիս Սավկինն (...) ասաց, որ պատերազմից հաղթանակով եկածներին են այսպես շուքով դիմավորում:

Հեղինակային խոսքում, որ դառնում է գլխավոր նախադասություն, նույնպես կատարվում են փոփոխություններ շարադասության մեջ: Հիմնական փոփոխությունը այն է, որ նրա ասացական-մտածական բայ-լրացյալը դրվում է նախադասության վերջում՝ կախյալ բաղադրիչից անմիջապես առաջ: Հմմտ.

«Այսպես ապահով է»,– մտածում էր նա՝ նայելով իր օգնականին (ԴԴ):

Փոխակերպված տարբերակն է՝ նայելով իր օգնականին՝ նա մտածում էր, որ այսպես ապահով է:

5. Ամեն մի պատում՝ բնության նկարագրություն, սյուժետային գծի զարգացում, իր մեջ ներառած և կերպարների երկխոսությունների բնու-

թագրումները և այլն, սովորաբար տարվում են երրորդ դեմքով: Հեղինակային նախադասությունը ևս պատում է: Այդ իսկ պատճառով փոխակերպված տարբերակում գերադաս նախադասության բայ-ստորոգյալը առավելապես արտահայտվում է երրորդ դեմքով: Տե՛ս վերի օրինակների ճնշող մասը: Սակայն պատումը կարող է տարվել և առաջին կամ, որ համեմատաբար քիչ է պատահում, նաև երկրորդ դեմքով: Ուստի և ուրիշի ուղղակի խոսքը անուղղակի խոսքի վերածելիս միշտ պետք է նկատի ունենալ, թե ում է պատկանում ուղղակի խոսքը:

Այն կարող է պատկանել երկխոսությանը բնավ չմասնակցող մի երրորդ անձնավորության: Սա ամենամեծ հաճախականություն ունեցող ձևն է: Այն կարող է պատկանել խոսակցին, որ խոսում է մի երրորդ անձի կամ հենց հեղինակի հետ: Այն կարող է պատկանել նաև իր իսկ հեղինակին, որ խոսում է խոսակցի կամ մեկ այլ երրորդ անձնավորության հետ (իբր հեռակա կարգով): Այդ իսկ պատճառով ուղղակի խոսքը անուղղակի դարձնելիս նրանում կիրառված դիմավոր բայերի, այլևայլ կիրառություններով հանդես եկող անձնական ու ցուցական դերանունների, ստացական հոդերի դեմքերն ու շարքերը որոշելիս հիմք պետք է ունենալ, թե ով է խոսողը և ինչ հարաբերության մեջ է գտնվում հեղինակի հետ: Օրինակ՝ եթե պատումը տարվում է առաջին դեմքով, և ուրիշի ուղղակի խոսքն էլ նրան է պատկանում, փոխակերպված տարբերակում նույն հարաբերությունը պետք է պահպանվի: Հմմտ.

– Ես Աննան եմ, – բացականչեցի (ՆԴ): → ***Բացականչեցի, որ ես Աննան եմ:***

Նման կառույցներում ուղղակի խոսքի բայ-ստորոգյալը պետք է ունենա նույն դեմքը, ինչ որ ունի հեղինակային նախադասության մեջ: Տե՛ս վերի օրինակը, այլև՝ *– Ես Աննան եմ, – բացականչեցիր.* → ***Բացականչեցիր, որ դու Աննան ես:*** *–Ես Աննան եմ, – բացականչեց նա:* → ***Նա բացականչեց, որ ինքը Աննան է:***

Դիմային նույն հարաբերությունը պետք է պահպանվի պատումը երկրորդ կամ երրորդ դեմքով շարադրելու դեպքում ևս:

Եթե ուղղակի խոսքում կան անձնական կամ ցուցական դերանուններով արտահայտված, ստացական կամ դիմորոշ հոդերով տարբերակված այլևայլ անդամներ, անուղղակի խոսքում դրանք պետք է նշեն նույն հարաբերությունը հեղինակի հանդեպ, ինչ որ ունեցել են նախնական, չփոխակերպված տարբերակում: Հմմտ.

– Ծանոթացեք ***կնոջս*** հետ,– ասաց Գևորգը (ՍԽ): → Գևորգը ասաց, որ ծանոթանամ ***իր կնոջ*** հետ: – ***Սրանց*** կտանեմ մեր տուն,– ասացի տղային՝ բռնելով աղջկա ձեռքը (ԴԴ): → Բռնելով աղջկա ձեռքը՝ տղային ասացի, որ ***սրանց*** կտանեմ մեր տուն: ***Մենքս*** ողջ և առողջ ենք, – ասաց Նունեն (ՆԴ): → Նունեն ասաց, որ ***իրենք ամենքը*** ողջ և առողջ են: Եվ դառնալով Ալինային՝ ավելացնում է. – ***Ես*** այլևս չեմ կարող անհանգստացնել ***ձեր*** հարգելի ամուսնուն, որ ***հորս*** բարեկամն է (ԱԸ): –Եվ դառնալով Ալինային՝ ավելացնում է, որ ***ինքը*** այլևս չի կարող անհանգստացնել ***նրա*** հարգելի ամուսնուն, որ ***իր*** հոր բարեկամն է, և այլն:

§ 326. Բացի հրամայական եղանակից, ուղղակի խոսքում կիրառված բայերի մնացած բոլոր եղանակաժամանակային ձևերը պահպանվում են անփոփոխ: Տե՛ս վերի օրինակները, այլև՝ *սահմանական եղանակով.*

– Փախստական է, – ասացի ես, – հայ է, մրսում է, տուն չունի (ԴԴ): → Ես ասացի, որ փախստական է, հայ է, մրսում է, տուն չունի:

Ըղձական եղանակով. Մանուկներից մեկը, երբ տեսավ, որ դրանք դատաստանի են դիմում, նրանց հետևից կանչեց. – Եզնատերը համրանա՜, եզնատերը համրանա՜ (ՂԱ): → Մանուկներից մեկը (...) կանչեց, թե (որ) եզնատերը համրանա՜...:

Պայմանական եղանակով. – Ես հատկապես կխնդրեմ ազատել ինձ այդ հարկադրանքից, որը չափազանց ծանր կլինի ինձ համար, – ուղղակի աղերսելով ասացի ես (ՆԴ): → Ես (...) ասացի, որ հատկապես կխնդրեմ ազատել ինձ այդ հարկադրանքից, որը չափազանց ծանր կլինի ինձ համար:

Հարկադրական եղանակով. – Այդպես էլ պետք է լինի, – ասաց Ռուբենը անվրդով, – այդպես էլ պետք է շարունակվի մեկ-երկու օր, բայց ինչ գնով էլ լինի, պետք է սնունդ տալ (ՀՓ): → Ռուբենը անվրդով ասաց, որ այդպես էլ պետք է լինի, այդպես էլ պետք է շարունակվի մեկ-երկու օր..., և այլն:

Հրամայական եղանակի բայը, հայտնի է, կիրառվում է հրամայական նախադասություններում: Եթե ուղղակի խոսքը հրամայական նախադասություն է, անուղղակի խոսքի փոխարկելիս զրկվում է հրամայական (հորդորական և այլն) հնչերանգից, վերածվում է պատմողական նախադասության, և նրա բայ-ստորոգյալը արտահայտվում է ըղձական եղանակով, երկրորդ դեմքը փոխվում է երրորդ դեմքի:

Փոխակերպումը ունի երկու տարատեսակներ.

Ա. Եթե հեղինակային նախադասության մեջ ակնարկով կամ որոշակիորեն նշվում է, թե ում է ուղղված խոսքը, այն պահպանվում է նույնությամբ: Հմմտ.

Խեղճ աղքատը, ճարը հատած, ձայն էր տալիս վեր՝ *Աստծուն.* – Խղճա՛, փրկի՛ր, ա՛ռ հոգիս (ՀԹ): → Խեղճ աղքատը, ճարը հատած, ձայն էր տալիս վեր՝ *Աստծուն,* որ խղճա, փրկի, առնի հոգին: – Հանգի՛ստ, անվրդո՛վ, լա՛յն մտածեցեք,– օրորուն ձայնով ասաց բժիշկը հիվանդին, – կյանքից մի՛ հագեցեք, մահից էլ մի՛ խուսափեք (ԴԴ): → Բժիշկը (...) հիվանդին ասաց, որ հանգիստ, անվրդով, լայն մտածի, կյանքից չհագենա, մահից էլ չխուսափի: Գևորգին թվաց, թե նա կատակ է անում, սակայն հանդիպելով նրա լուրջ, նույնիսկ նեղացած հայացքին, բարկանալով ասաց. – Վե՛րջ տուր խելառությանդ, հենց հիմա գնա՛ ու մնա՛ հարսնացուիդ մոտ (ՍԽ): → (...) Բարկանալով ասաց, որ վերջ տա իր խելառությանը, հենց հիմա գնա ու մնա իր հարսնացուի մոտ:

Բ. Եթե հրամանի հասցեատերը արտահայտված է ուղղակի խոսքում որպես կոչական, փոխակերպված տարբերակում վերածվում է կա՛մ ենթակայի, կա՛մ հանգման խնդրի: Վերջին դեպքում այն տեղափոխվում է հեղի-

նակային նախադասության մեջ՝ դառնալով նրա շարունակությունը: Հմմտ.

Սեղանակիցներից մեկը ընդհատեց՝ ասելով. – Համեստություն մի՛ արեք, երիտասա՛րդ պարոն, ավելացրեք և՝ հարստություն (ԱՇ): → 1. Սեղանակիցներից մեկը ընդհատեց՝ ասելով, որ երիտասարդ պարենը համեստություն չանի...: 2. Սեղանակիցներից մեկը ընդհատեց՝ ասելով երիտասարդ պարոնին, որ համեստություն չանի...: Անտոնիոսը մարտակառքով սուրաց կրկին, կանգնեց հայոց արքայի դեմ (...), Չհոխորտաց, այլ չշնջաց. – Գլուխ թեքիր, գոռո՛զ արմեն, Անսա՛ խոսքիս, գլուխ թեքիր (ՎՊ): Փոխակերպված տարբերակներն են՝ 1. Անտոնիոսը (...) չհոխորտաց, այլ չշնջաց գոռոզ արմենին, որ գլուխ թեքի, անսա իր խոսքին, գլուխ թեքի: 2. Անտոնիոսը (...) չհոխորտաց, այլ չշնջաց, որ գոռոզ արմենը գլուխ թեքի, անսա իր խոսքին, գլուխ թեքի:

§ 327. Եթե ուղղակի խոսքը հարցական նախադասություն է, փոխակերպվելիս վերածվում է պատմողական նախադասության՝ կորցնելով հարցական ծայներանգը: Ըստ այդմ՝ անուղղակի խոսքը արտահայտում է հարցի բովանդակությունը՝ պատմողաբար: Բաղադրիչների կապակցությունը այս կառույցում իրագործվում է ***թե*** շաղկապով, երբեմն, ըստ հարկի ու ոճական նպատակադրության՝ նաև շարահարությամբ: ***Որ*** շաղկապը չի աշխատում:

Փոխակերպման եղանակը պայմանավորված է հարցական նախադասության բառաքերականական ձևավորմամբ և ունի երկու հիմնական արտահայտություններ:

Ա. Հարցական հնչերանգը և նախադասության հարցական բնույթը *պայմանավորված են հարցական դերանվան առկայությամբ:* Սա հարցական ուղղակի խոսքի և ընդհանրապես հարցական նախադասության կիրառական ամենից մեծ հաճախականություն ունեցող դրսևորումն է: Նման կառույցը փոխակերպելիս ուղղակի հարցումը վերածվում է անուղղակի հարցման: Պահպանվում է հարցական դերանունը, որ արտասանվում է ավելի բարձր տոնայնությամբ, քան նախադասության մյուս անդամները, բայց ո՛չ այնքան բարձր, որ վերածվի ուղղակի հարցի: Հմմտ.

– Մի օր հարցրի Սիրանույշին. – Ինչու՞ ես այդ տղային այդպես հալածում (ԱՇ): Փոխակերպվում է այսպես. Մի օր հարցրի Սիրանույշին, թե ինչու՛ է այդ տղային այդպես հալածում: Այլև՝ – Մեր կողմերում ո՞վ իր քրոջը կամ կնոջը կթողնի՝ ծովը մտնելու,– վրդովված հարցրեց Փափուջյանը (ՈՅ): → Փափուջյանը վրդովված հարցրեց, թե իրենց կողմերում ո՛վ իր կնոջը կամ քրոջը կթողնի՝ ծովը մտնելու:

Այլև՝ շարահարությամբ. Փափուջյանը վրդովված հարցրեց՝ ո՛վ իր քրոջը կամ կնոջը իրենց կողմերում կթողնի՝ ծովը մտնելու:

Բ. Հարցական բնույթի ուղղակի խոսքում *բացակայում է հարցական դերանունը:* Այն ևս վերածվում է պատմողական նախադասության՝ կորցնելով հարցական ծայներանգը: Ստորադաս եզրը գլխավորի հետ կապակցվում է ***թե*** շաղկապով, հազվադեպ՝ նաև *շարահարությամբ:* Շարադասու-

թյամբ հետադաս է: Գերադաս եզրի բայ-լրացյալը սովորաբար շարադասվում է ստորադաս եզրից անմիջապես առաջ: Կախյալ բաղադրիչում կատարվում է *արդյոք* վերաբերականի հավելում, որով ակնարկվում է անուղղակի հարցումը: Այն դրվում է հարցվող բառից կամ բառակապակցությունից առաջ կամ հետո: Հարցվող բառը (բառակապակցությունը) արտաբերվում է ձայնային փոքր-ինչ ավելի բարձր տոնայնությամբ, որ մոտենում է հարցական հնչերանգին: Գրավոր խոսքում հարցվող բառը կամ բառակապակցության հարցվող բաղադրիչը ստանում է շեշտ: Հմմտ.

– Դուք ձեր կնոջ հե՞տ եք ճանապարհորդում, պարո՛ն Հարությյան, – հարցրեց օրիորդը (ՆԴ): Փոխակերպված տարբերակներն են. Օրիորդը պարոն Հարությյային հարցրեց, թե նա արդյոք իր կնոջ հե՛տ է ճանապարհորդում, կամ... ճանապարհորդում է արդյոք իր կնոջ հե՛տ: Այլև՝

Ես ասացի տանտիրուհուս, – Պոլի՛նա Նիկոլաևնա, դուք սիրու՞մ եք ինձ (ԱԵ): → Ես ասացի Պոլինա Նիկոլաևնային, թե նա ինձ սիրու՛մ է արդյոք, կամ... արդյոք ինձ սիրու՛մ է: *Դուք* ենթակայի թիվը փոխակերպված տարբերակում (արդյոք սիրում է ինձ) փոխվել է եզակիի (*նա*), քանի որ, այսպես ասած, ոճական կամ քաղաքավարական հոգնակի է, բովանդակությամբ՝ եզակի: Այլ օրինակներ.

– Դուք ռուսերեն չգիտե՞ք,– հարցնում է ինձ հրամանատարը (ԲՀ): → Հրամանատարը ինձ հարցնում է, թե ես ռուսերեն չգիտե՛մ արդյոք, կամ Հրամանատարը ինձ հարցնում է՝ արդյոք ես ռուսերեն չգիտե՛մ և այլն:

Ինչ վերաբերում է հարցական ուղղակի խոսքում կիրառվող կոչականներին, անձնական և ցուցական դերանուններին, ստացական հոդերին և բայի դեմքին, դրանք փոխակերպված տարբերակում ստանում են նույն արտահայտությունները, որոնք հատուկ են նախորդ կետում քննված կառույցներին:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԱ - *Արիգ Ավագյան*
Արփ. Ա - *Արփիար Արփիարյան*
ԱԲ - *Ակսել Բակունց*
Ազգ - *«Ազգ» լրագիր*
Աի, Ավ.Իս. - *Ավետիք Իսահակյան*
ԱԽ - *Աթաբեկ Խնկոյան*
ԱԾ- *Ալեքսանդր Ծատուրյան*
ԱՄ - *Աստվածաշունչ մատյան հին և նոր կտակարանաց*
ԱՇ, Շ - *Ալեքսանդր Շիրվանզադե*
ԱՋ - *Անտոն Չեխով, թարգմ.*
ԱՊ - *Ալեքսանդր Պուշկին,թարգմ.*
Առավ. - *«Առավոտ» լրագիր*
ԱՍ - *Աճառիտ Սահինյան*
ԱՎ - *Անրի Վերնոյ, թարգմ.*
Ավանգ. - *«Ավանգարդ» լրագիր*
ԱՎՈ - *Ալեքսանդր Վարպետյան, Ոգեկոչ[1], 1991:*
ԲՀ - *Բաղիշ Հովսեփյան*
ԲՎ - *Բոգդան Վերդյան*
ԳԲ - *Գարեգին Բես*
Գար. - *«Գարուն» հանդես*
Գէ - *Գևորգ Էմին*
ԳԹ - *«Գրական թերթ» լրագիր*
ԳԼ - *Գարեգին Լևոնյան*
ԳՄ - *Գուրգեն Մահարի*
ԳՇ - *Գուսան Շահեն*
ԳՍԵ - *Գեղամ Սարյան, Երկեր, 1976*
ԳՍԹ - *Գարեգին Սևունց, Թեհրան, 1967:*
ԳՍԵժ - *Գաբրիել Սունդուկյան, երկ. ժող.*

Դաս. - *Դասագրքերից*
ԴԴ - *Դերենիկ Դեմիրճյան*
Դպ. - *«Դպրություն» լրագիր*
ԴՎ - *Դանիել Վարուժան*
ԵԵ - *«Երեկոյան Երևան» լրագիր*
Եթեր - *«Եթեր» լրագիր*
ԵՀ - *«Երևանի Համալսարան» լրագիր*
ԵՉ - *Եղիշե Չարենց*
Երկ. - *«Երկիր» լրագիր*
ԵՕ - *Երվանդ Օտյան*
ԶԲ - *Զորի Բալայան*
ԶԴ - *Զարգանդ Դարյան*
ԶԽ - *Զորայր Խալափյան*
ԷՋ - *Էդվարդ Ջրբաշյան*
Էջմ. - *«Էջմիածին» հանդես*
ԹՄ - *Թոմաս Ման, թարգմ.*
ԹՆժ - *Թելադրությունների նյութերի ժողովածու*
ԹՈԹ, ՎԹ - *Վահան Թոթովենց*
ԹՈՒ - *Հ. Թումանյան, Ուսումնասիրություններ:*
ժԱ - *ժող. առած*
ժե, ժող. - *ժող. երգ*
Իրավ. - *«Իրավունք» լրագիր*
Լ - *Լեո*
ԼՍ - *Լիպարիտ Սարգսյան*
LS - *Լև Տոլստոյ, թարգմ.*
ԽԱ - *Խաչատուր Աբովյան*
ԽՂ - *Խաչիկ Դաշտենց*
ԿԲ - *Կիմ Բակշի*
ԿՋ - *Կոստան Զարյան*
Հեռ. - *Հեռուստահաղորդում*
ՀԹ - *Հովհաննես Թումանյան*
ՀԺՊ - *Հայ ժողովրդի պատմություն, պր. 7, 1960:*

[1] Տարբեր հեղինակների անվան և ազգանվան սկզբնատառերը զուգադիպելու դեպքում տրվում են նաև երկերի խորագրերը:

ՀԽ - *Հուսիկ Խանդամուրյան*
ՀԿ - *«Հայաստանի կոմունիստ» լրագիր*
ՀՀ, Հ. Հովհ. - *Հովհաննես Հովհաննիսյան*
ՀՀ - *«Հայաստանի Հանրապ.» լրագիր*
ՀՋ - *«Հայրենիքի ծայն» լրագիր*
ՀՄ - *Համլետ Մովսիսյան*
ՀՇ - *Հովհաննես Շիրազ*
ՀՍ - *Համո Սահյան*
ՀՍՅԵ - *Հենրիկ Սենկևիչ, Յո երթաս, թարգմ.*
Հուշ. - *Հուշագրություններից*
ՀՔ - *Հրաչյա Քոչար*
ՂԱ - *Ղազարոս Աղայան*
Մ - *Մուրացան*
ՄԱ - *Մանուկ Աբեղյան*
ՄԳ - *Մուշեղ Գալշոյան*
ՄԼ - *Միխայիլ Լերմոնտով, թարգմ.*
ՄԽ - *Մկրտիչ Խերանյան*
ՄՆ - *Միքայել Նալբանդյան*
ՄՊ - *Մկրտիչ Պեշիկթաշլյան*
Ն - *«Նորք» հանդես*
ՆՂ - *Նար-Դոս*
ՆՋ - *Նահրի Զարյան*
ՆԿ - *Նոր կտակարան*
ՆՄ - *Նամսեն Միքայելյան*
ՆՈ - *Նահապետ Ռուսինյան*
ՇՈ - *Շոթա Ռուսթավելի, թարգմ.*
Շեք., ՎՇ - *Վիլյամ Շեքսպիր, թարգմ.*
ՇՈ - *Շմավոն Թորոսյան*
Ո - *«Ոգնի» հանդես*
ՊՋ - *Պերճ Զեյթունցյան*
ՊՂ - *Պատվական Ղուկասյան*
ՊՊ - *Պերճ Պռոշյան*
ՊՍ - *Պարույր Սևակ*
Ջ - *Զիվանի*
ՋՄ - *Ջոշ Սաք-Դաուել, թարգմ.*
Ռ - *Ռադիոհաղորդում*
ՌՂ - *Ռազմիկ Դավոյան*
ՌՅ - *Ռ. Համբարյան*
ՌՊ - *Ռաֆայել Պատկանյան*
Ս - *Սարմեն*
ՍԱ - *«Սովետական արվեստ» հանդես*
ՍԱԵՉ - *Ս. Աղաբաբյան, Ե. Չարենց, երկու հատորով, 1973, 1977:*
ՍԳ - *«Սովետ. գրականություն» հանդես*
ՍԵ - *Ս. Եղիազարյան*
ՍՋ - *Ստեփան Զորյան*
ՍԽ - *Սերո Խանզադյան*
ՍԿ - *Միլվա Կապուտիկյան*
ՍՆ - *Սայաթ-Նովա*
ՍՊՄ - *Ստենդալ, Պարմի մենաստանը, թարգմ.*
ՍՍ - *Սուր. Սահակյան*
ՍՍՅԳ - *Սերգեյ Սարինյան, Հայոց գրականության երկու դարը, 1989:*
Ստ. Կուրտ. - *Ստեփան Կուրտիկյան*
ՎԱ - *Վախթանգ Աճառյան*
ՎԲ - *Վիկտոր Բալայան*
ՎԲԲ - *Վալերի Բրյուսով, Բանաստեղծութ., թարգմ.*
ՎԳ - *Վոլֆգանգ Գյոթե, թարգմ.*
ՎՂ - *Վահագն Դավթյան*
ՎԶ - *Վերա Զվյագինցևա, թարգմ.*
ՎԹ - *Վահան Թոթովենց*
ՎԼ - *Վալենտին Լեսկով, թարգմ.*
ՎԽ - *Վիգեն Խեչումյան*
Վ. Հար. - *Վաղարշակ Հարությունյան*
ՎՀ - *Վաչագան Հովհաննիսյան*
ՎՄ - *Վահան Միրաքյան*
ՎՇ - *Վիլյամ Շեքսպիր*
ՎՊ - *Վարդգես Պետրոսյան*
ՎՍ - *Վիլյամ Սարոյան*
ՎՏ - *Վահան Տերյան*

Վրթ. Փ.
ՎՓ } – *Վրթանես Փափազյան*

Վ. Փափազ.
ՎՓԵ } – *Վահրամ Փափազյան, Երկեր, հինգ հատորով, 1979-1984:*

Ր
Րաֆ. } – *Րաֆֆի*

ՔԹ - *Քրիստափոր Թափալցյան*
ՕԲ - *Օննրե դը Բալզակ, թարգմ.*
ՖԽԺ - *Ֆիզիկայի խնդիրների ժողովածու, 8-10-րդ դաս. համար, 1994:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ 3
ԼԵՋՎԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ ԵՎ ԿԱՊԱՊԱՐՆԵՐ 3

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ 5
ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ 7
ԿԱՊԵՐ 9
ՇԱՂԿԱՊՆԵՐ 11
ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ 12
ՀՆՉԵՐԱՆԳ 23
ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՇԵՇՏ 25

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ 28
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ 28
ԱՌԴՐՈՒԹՅՈՒՆ 29
ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆ (ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՎԱՐՈՒՄ) 30
ԱՐԺՈՒՅԹ 34
ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՋՈՂՈՒՄ 36

ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ 38
Բառակապակցությունների դասակարգումը 40
Ոչ վերաիմաստավորված բառակապակցություններ 41
Վերաիմաստավորված՝ կայուն բառակապակցություններ 44
ՇԱՐՈՒՅԹ 46

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ. ՆՐԱ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ 48
Հաղորդակցական ֆունկցիա 49
Ստորոգում 50
Եղանակավորում 52
Ժամանակի կարգ 53
Դեմքի և թվի քերականական կարգեր 53
Շարադասություն 55
Հնչերանգ 55

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ
ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ 59
Երկկազմ և միակազմ նախադասություններ 59
Լրիվ և թերի նախադասություններ 60
Հաստատական և ժխտական նախադասություններ 63
Պարզ և բարդ նախադասություններ 66

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՀՆՉԵՐԱՆԳԻ 68
ՊԱՏՄՈՂԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ 68
ՀԱՐՑԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ 69

ՀՐԱՍԱՅԱԿԱՆ (ՀՈՐԴՈՐԱԿԱՆ) ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ 73
ԸՂՋԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ 78
ԲԱՑԱԿԱՆՉԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ 80

ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ 83
ԴԻՄԱՎՈՐ ՄԻԱԿԱԶՄ (ԱՆԵՆԹԱԿԱ) ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ 84
ԱՆՊԵՍ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ 84
ԲԱՌ-ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ 87

ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 89
ԵՆԹԱԿԱ 91
ՍՏՈՐՈԳՅԱԼ 94
Բայական ստորոգյալ 99
Անվանաբայական ստորոգյալ 102
Ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը 107
Ենթակայի և ստորոգյալի շարադասությունը 111
Բայական և անվանաբայական ստորոգյալների բաղադրիչների շարադասությունը 113

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ 115

ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ 115
ՈՐՈՇԻՉ 115
Որոշչի և որոշյալի կապակցությունը 122
Որոշչի և որոշյալի շարադասությունը 124

ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ 127
Հատկացուցչի իմաստային հարաբերությունները 128
Հատկացուցչի և հատկացյալի կապակցությունը 129
Հատկացուցչի և հատկացյալի շարադասությունը 130

ԲԱՑԱՀԱՅՏԻՉ 131
Սովորական (բուն) բացահայտիչ 132
Մասնական բացահայտիչ 134
Մասնավորող (պարագայական) բացահայտիչ 135
Բացահայտչի և բացահայտյալի կապակցությունը 137
Բացահայտչի և բացահայտյալի շարադասությունը 138

ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ 139
ԽՆԴԻՐՆԵՐ 140
Սեռի խնդիրներ 140
Ուղիղ խնդիր 144
Ներգործող խնդիր 145
Բնության խնդիրներ 145
Հանգման խնդիր 145
Սատուցման խնդիր 146
Անջատման խնդիր 148

Միջոցի խնդիր 149
Վերաբերության խնդիր 150
Սահմանափակման խնդիր 150
Համեմատության (բաղդատության) խնդիր 151
Բաղկացության խնդիր 151
Խնդիրների շարադասությունը 152

ՊԱՐԱԳԱՆԵՐ 154
Բուն պարագաներ և պարագայական խնդիրներ 155
Տեղի պարագա 157
Ժամանակի պարագա 158
Չևի պարագա 160
Նպատակի պարագա 162
Պատճառի պարագա 163
Հիմունքի պարագա 163
Հակառակ հիմունքի (զիջման) պարագա 163
Պայմանի պարագա 164
Չափ ու քանակի պարագա 165
Միասնության պարագա 165
Ընդհանրական պարագաներ 166
Պարագաների շարադասությունը 167

ԱՆՎԱՆԱԲԱՅԱԿԱՆ (ԲԱՂԱԴՐՅԱԼ) ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԽՆԴԻՐ ԵՎ ՊԱՐԱԳԱ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ 168

ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾ ԵՎ ԿՈՂՄՆԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐ 171
Դերբայական դարձվածի կետադրությունը 178

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԿԻ (ՀԱՄԱԴԱՍ) ԱՆԴԱՄՆԵՐ 181

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏՐՈՀՎՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ 183
ԿՈՉԱԿՆ 183
Կոչականի քերականական կարգերը 186
Կոչականի շարահյուսական կառուցվածքը և արտահայտությունը 187
Կոչականի ոճական արժեքը 190
Կոչականի հնչերանգը, շարադասությունը և կետադրությունը 193

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏՐՈՀՎՈՂ ԱՅԼ ԱՆԴԱՄՆԵՐ 194

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԿԻՑ ՄԻԱՎՈՐՆԵՐ 197

ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆՆԵՐ, ՄԻՋԱՆԿՅԱԼ ԲԱՌԵՐ 197

ՉԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 199

ՆԵՐԴՐՅԱԼ ԲԱՌԵՐ, ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ 200

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԸՍՏ ՀՈԼՈՎՆԵՐԻ (ՀՈԼՈՎՆԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ) 201
Ուղղական հոլովի կիրառությունը (բուն ուղղական, ուղղական-հայցական) 203
Սեռական (տրական) հոլովի կիրառությունը 204
Բացառական հոլովի կիրառությունը 206
Գործիական հոլովի կիրառությունը 208
Ներգոյական հոլովի կիրառությունը 209

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ
Ընդհանուր բնութագիր 211
Համադասությունը և ստորադասությունը բարդ նախադասություններում 216
Բարդ նախադասության բաղադրիչների շարահյուսական հարաբերությունների դրսևորման եղանակներն ու միջոցները 220

ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ 229
Բարդ համադասական նախադասության բաղադրիչների կապակցության եղանակներն ու միջոցները 232
Բարդ համադասական նախադասության դասակարգման սկզբունքները 237

Ա. ԲԱԳԱՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ 238
1. Միավորական կապակցություն 239
2. Հավելական կապակցություն 242
3. Մեկնական կապակցություն 246
4. Մակաբերական կապակցություն 248
5. Մասնական կապակցություն 251
6. Բաղդատական կապակցություն 253

Բ. ՆԵՐՀԱԿԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ 255
1. Ժխտական կապակցություն 255
2. Տրոհական կապակցություն 258
3. Հակադրական կապակցություն 264
4. Սահմանափակման կապակցություն 268
5. Պայմանահակադրական կապակցություն 271

ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ.
Կառուցվածքային ընդհանուր բնութագիրը 274
Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչների կապակցության եղանակներն ու միջոցները 276
Բարդ ստորադասական նախադասության դասակարգումը 285

ՊԱՐՋ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՀԱՐԱԲԵՐԱԿԻՑ ՍՏՈՐԱԴԱՍ ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ 287
1. Ենթակայական կախյալ նախադասությամբ կապակցություն 287
2. Ստորոգելիական կախյալ նախադասությամբ կապակցություն 293

ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ընդհանուր բնութագիր 297
1. Որոշչային կախյալ նախադասությամբ կապակցություն 297
2. Բացահայտչային կախյալ նախադասությամբ կապակցություն 304
3. Հատկացուցչային կախյալ նախադասությամբ կապակցություն 309

ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ընդհանուր բնութագիր 312
Խնդրային կախյալ նախադասությամբ բարդ նախադասություններ 312
Ա. Ուղիղ խնդիր կախյալ նախադասությամբ կապակցություն 313
Բ. Անուղղակի խնդիր կախյալ նախադասությամբ բարդ նախադասություններ 319
Ներգործող անուղղակի խնդիր կախյալ նախադասությամբ կապակցություն 319
Բայիմաստի (բնության) խնդիր կախյալ նախադասությամբ կապակցություն 321
1. Հանգման անուղղակի խնդիր կախյալ նախադասությամբ կապակցություն 321
2. Անջատման անուղղակի խնդիր կախյալ նախադասությամբ կապակցություն 324
3. Միջոցի անուղղակի խնդիր կախյալ նախադասությամբ կապակցություն 325
4. Վերաբերության անուղղակի խնդիր կախյալ նախադասությամբ կապակցություն 327

ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ԿԱԽՅԱԼ ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ 329

Ա. ՀԱՆԳԱՄԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՐՍԵՎՈՐՈՂ ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ 329
1. Տեղի պարագա կախյալ նախադասությամբ կապակցություն 329
2. Ժամանակի պարագա կախյալ նախադասությամբ կապակցություն 332

3. Պատճառի պարագա կախյալ նախադասությամբ կապակցություն 338
4. Նպատակի պարագա կախյալ նախադասությամբ կապակցություն 343
5. Պայմանի պարագա կախյալ նախադասությամբ կապակցություն 348
6. Զիջման (հակառակ պայմանի կամ հակառակ հիմունքի) պարագա կախյալ նախադասությամբ կապակցություն 355

Բ. ՀԱՏԿԱՆՇԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՐՍԵՎՈՐՈՂ ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ԿԱԽՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ 360
1. Չևի պարագա կախյալ նախադասությամբ կապակցություն 361
2. Չափի պարագա կախյալ նախադասությամբ կապակցություն 366

ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՉՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՂ ՍՏՈՐԱԴԱՍ ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ 372
1. Հետևանքի պարագա կախյալ նախադասությամբ կապակցություն 372
2. Ամբողջ գլխավոր նախադասությանը լրացնող կախյալ բաղադրիչով կապակցություն 375

ԲԱԶՄԱԲԱՂԱԴՐԻՉ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ընդհանուր բնութագիր 377
Ա. Բազմաբաղադրիչ բարդ համադասական նախադասություն 377
Բ. Բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասություն 381
1. Ենթաստորադասությամբ կապակցություն 383
2. Համասեռ ստորադասությամբ (համաստորադասությամբ) կապակցություն 387
3. Անհամասեռ ստորադասությամբ կապակցություն 391
4. Հաջորդադասությամբ կապակցություն 396

ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ 404
ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՊԱՐԶԵՑՈՒՄ (ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ) 410
ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ 422
ՈՒՐԻՇԻ (ՄԵՋԲԵՐՎՈՂ) ԽՈՍՔ 429
Ա. Ուղղակի խոսք 429
Բ. Անուղղակի խոսք 442
Գ. Ուղղակի խոսքի փոխակերպումը անուղղակի խոսքի 446

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 453

ՊԱՊՈՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ
ԲԱԴԻԿՅԱՆ ԽԱՉԻԿ ԳԱԲՐԻԵԼԻ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական ձեռնարկ

Հրատ. խմբագիր՝ Դ.Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Վ.Ջ. ԲԴՈՅԱՆ
Համակ. շարվածքը՝ Դ.Ջ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Լ.Ա. ՎԱՆՅԱՆ
Համակ. ձևավորումը՝ Լ.Ա. ՎԱՆՅԱՆ

Հանձնված է շարվածքի 21.05.03 թ.: Ստորագրված է տպագրության 30.07.03թ.: Չափսը՝ $60\times84^{1}/_{16}$: Թուղթ օֆսեթ: Հրատ. 28,0 մամուլ: Տպագր. 29,0 մամուլ = 26,97 պայմ. մամուլ: Պատվեր 96: Տպաքանակ 500:

Երևանի համալսարանի հրատարակչություն
Երևան, Ալ. Մանուկյան 1:

Երևանի համալսարանի «Ռոտապրինտ» տպագրական արտադրամաս
Երևան, Ալ. Մանուկյան, 1